Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Չորս գրքով

ԳԻՐՔ

II

«Հայագիտակ»
ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63 3 (2Հ)
Ս 504

Սիմոնյան Հ.
Ս 504 ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ
Եր.: «Հայագիտակ», 2003
764 էջ:

Աշխատության մեջ համակողմանիորեն քննության են առնված առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին Հայաստանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

Երկրորդ գիրքը ընդգրկում է 1906թ. օգոստոս - 1907թ. հուլիս ժամանակահատվածը:

Ս. 0503020913 / 786(01) -2003 2003 ԳՄԴ 63.3 (2Հ)

1513 99930-870-9-2
©«Հայագիտակ»

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Թեև ռուսական մեծ հեղափոխությունն աստիճանաբար գնում էր դեպի անկում, բայց ազատագրական շարժումը երկրում 1906թ. ամռան սկզբից կարճատև վերելք ապրեց:

Չնայած դաժան ռեպրեսիաներին, գործադուլային ալիքն ընդգրկեց արդյունաբերական մի շարք խոշոր կենտրոններ: Հուզումներն ընդգրկեցին բանակը: Ինչ վերաբերում է գյուղացիությանը, նա թոթափում էր իր միամիտ հավատը ցարի նկատմամբ և դառնում էր երկիրը դեպի նոր ուղի մղող, դեպի պետական ու հասարակական կյանքի նոր ձևեր տանող ամենակարևոր գործոններից և գլխավոր շարժիչ ուժերից մեկը: Նրա պարզած դրոշի վրա գրված էր՝ «Հող և ազատություն»:

1906թ. ամռանը ագրարային շարժումը լայնորեն ծավալվեց նաև Կովկասում: Առաջվա պես այն համառ ու կազմակերպված էր Թիֆլիսի և Քութայիսի շրջաններում: Այդ տեղերում գյուղացիները հերոսական կռիվ էին մղում որոշակի առաջադրելով «Ամբողջ հողն ու ամբողջ ազատությունը» լոզունգը:

Ինչ վերաբերում է Երևանի, Բաքվի, Գանձակի նահանգներին, ապա դրանցում գյուղացիությունը առաջվա պես լիովին դուրս էր մնացել հեղափոխական հակացարական պայքարից՝ կառավարության թափած ջանքերով: Այդ նահանգներում հրապարակը բռնել էին ոչ թե հեղափոխական, այլ ազգային-հեղափոխական (հայերի կողմից) և ազգային-պահպանողական (թուրքերի կողմից) ուժերը:

Բոլշևիկյան «Կայծը» գրում էր, որ թուրք և հայ գյուղացիությունը փոխանակ համերաշխությամբ կռվելու հողի ու ազատության համար, զբաղված են կոտորածներով: Դա սոսկալի է: «Դա մի ընդհանուր չարիք, ընդհանուր դժբախտություն է թե՛ իր ծագումով և թե՛ հետևանքներով: Հայ-թուրքական կոտորածը մի էջ է այն մեծ ողբերգության մեջ, որ ներկայումս ապրում է Ռուսաստանը»[1]:

Թերթը նշում էր, որ հայ գյուղացիությունը, որ իրենից ներկայացնում է հզոր ուժ, կարող է կովկասյան կռվի մեջ վճռական դեր ունենալ: «Կայծը»

[1] «Կայծ», N 24, 7 հունիսի 1906թ.:

հայ բոլշևիկների անունից դիմում էր հայկական գավառների մտավորականության գիտակից մասին.

«Արթնացրե՛ք զանգվածներին, կազմակերպեցե՛ք նրանց առանց ազգի ու կրոնի խտրության, համախմբեցե՛ք նրանց հեղափոխական բանակի շուրջը՝ կռվելու համար Ռուսաստանի գյուղացիության ընդհանուր լոզունգի տակ: Որքան մեծ լինի [հեղափոխության] ուժը, այնքան մոտ կլինի հաղթությունը, այնքան շուտ կլինի վախճանն ամեն մի սադրանքի ու կոտորածի ...»[1]:

Հեղափոխության ալիքների բարձրացմանը զուգընթաց, ոճրագործ բռնակալությունը նորից ամեն տեղ շարժում էր իր մութ ուժերը, ամեն տեղ, ուր հընար ուներ, զինվորական կոշիկի տակ էր առնում իշխանությունների դեմ ուղղված փոքր ընդվզումն իսկ, միմյանց դեմ հանում հպատակ ազգերը՝ նպատակ ունենալով եղբայրասպան արյան մեջ խեղդել արյունաքամ և ուժասպառ ժողովրդի բողոքի ձայնը:

1906թ. ամռան սկզբից Թուրք-հայկական հարաբերությունները Կովկասում նորից սրվեցին: Շուշիից, Երևանից, Ղարսից, Սուրմալուից հուսահատ աղաղակներ էին լսվում վերահաս վտանգի մասին:

«Դրոշակը» գրում էր.

«Որպիսի՜ դժոխք է ստեղծվել մեր դժբախտ երկրում, ինչե՜ր չտեսավ խեղճ ժողովուրդը վերջին տարիներին, և դեռ, ո՞վ գիտե, ինչ սարսափներ են պահված նրա համար սրանից հետո: Միայն հայ ժողովուրդը չէ, իհարկե, որ նահատակվում է այդ սարսափներից: Ինքը՝ Թուրք մասսան ... նույնքան տուժում ու տանջվում է, որքան և հայ ժողովուրդը»[2]:

Արդեն Թուրքերը ամեն առիթով նույն բանն էին կրկնում. «Շեյթանի* տունը Աստված քանդի. բոլորը նրա արածն է»: Բայց այդ դժգոհությունից ու անեծքից նրանք այն կողմ չէին անցնում:

Ընդհարումները թեժանում էին շատ ծանր ու վտանգավոր ժամանակ. քոչվորները ցրված էին զանազան սարերում, իսկ երկրագործ ժողովուրդը պարտավոր էր աշխատել իր դաշտերում՝ քաղ անել, հունձ անել, խրձերը կալերը տեղափոխել: Ո՛չ մեկը և ո՛չ մյուսը չէին կարող մեկուսանալ, քաշվել իրենց վրաններն ու տները: Նրանք պետք է աշխատեին, բայց երկուսի վրա էլ մահացու վտանգ էր կախված. մեկի վրա՝ լեռներում, մյուսի վրա՝ դաշտերում:

Առավել անտանելի էր հայ գյուղացիների վիճակը: Անցած տարվա աշնանացանը կատարվել էր կիսատ-պռատ, իսկ 1906-ի գարնանը վարելահողերի մեծ մասը մնացել էին առանց հերկելու. պատճառներն էին՝ սերմացուի պակասը կամ բացակայությունը և դաշտում աշխատելու վախը: Հազարավոր բերաններ դեռ ամռանը հաց էին խնդրում, իսկ ի՞նչ էր լինելու ձմռանը:

---

[1] **«Կայծ»**, N 28, 16 հունիսի 1906թ.:
[2] Նույն տեղում, N 24, 7 հունիսի 1906թ.:
* Շեյթան ասելով նկատի ունեին ցարին, կառավարությանը:

Ի՞նչ անեին գյուղացիները: Նրանց մի մասը տանը չունենալով ապրուստի և աշխատանքի միջոցներ՝ դուրս էր եկել գյուղից և պանդխտության մեկնել քաղաքներ: Մյուս մասը նույնպես ուզում էր գնալ, բայց անկարող էր հայրենի գյուղի անապահովության պատճառով:

Գյուղական համայնքներն արգելում էին, որ երիտասարդները հեռանան, քանզի գյուղերը ենթակա էին նոր հարձակումների վտանգի, իսկ առանց ինքնապաշտպանական ուժերի աղետն անխուսափելի էր:

Բայց ինչպե՞ս մնան, ինչպե՞ս տուն ու ընտանիք պահեն, ինչո՞վ վճարեն տուրքերը – այս հարցերը տանջահար էին անում գյուղացիությանը, բայց նա պատասխան չէր գտնում:

Ակնհայտ էր, որ ինչպես երիտասարդությանը գյուղերում պահելու հարցը, այնպես էլ գյուղական զանգվածներին հետաքրքրող ուրիշ շատ հարցեր հնարավոր կլիներ լուծել, եթե երկու ժողովուրդները կարողանային դուրս գալ կործանիչ կռվից:

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐ

Հայկական կողմը վաղուց էր պատրաստ կռիվը դադարեցնելուն: Հայ քաղաքական ուժերը հարևանին խաղաղության ձեռք մեկնելու առիթը բաց չէին թողնում: 1906թ. սկզբներից Թուրքերի կողմից նույնպես գնալով ավելի ու ավելի հաճախ էին լսվում հաշտության ձայներ[1]: «Ուշացած, բայց ցանկալի քայլեր» վերնագրով առաջնորդող հոդվածում «Արշալույս» թերթը գրում էր.

«Երբեմն Բաքվից, երբեմն Շուշուց, Երևանից և բոլոր այն տեղերից, ուր բռնկված է Թուրք-հայկական շարժումը, ուր երկու կատաղի, անհաշտ թշնամիների նման միմյանց դեմ բանակած են հայ և Թուրք հարևանները – այդ տեղերից գալիս են մխիթարիչ տեղեկություններ:

Մտերմական ժողովներ են գումարվում խառը, երկու ազգերի կողմից էլ կազմվում են գրական, թատերական երեկույթներ, ուր ներկա են լինում թե՛ հայեր և թե՛ Թուրքեր, տեղի են ունենում համատեղ խորհրդակցություններ, մի խոսքով՝ պարզ և ակնհայտ հաշտության տրամադրություններ են արտահայտվում կյանքում առանց համբույրների, առանց թատերական արտաքին շուքի»[2]:

Ովքեր էին այդ մերձեցման հեղինակները: Դրանք մեծ մասամբ ժողովրդի միջից դուրս եկած գիտակից տարրերն էին, որոնց համար չկային ոչ անմիտ թշնամություն, ոչ արյուն, ոչ հաղթություններ – այլ կային ժողովուրդների շահեր, երկրի խաղաղ կուլտուրական զարգացում, մոտալուտ ապագայի հուսալի հեռանկար, ապագա, որ այնպես ոտնատակ էր տրվել:

---

[1] **«Խարիսխ»**, N 10, 14 հուլիսի 1907թ.:
[2] **«Արշալույս»**, N 30, 9 փետրվարի 1906թ.:

Թեև մերձեցման տենդենցը դեռևս թույլ էր, համարյա աննշմարելի, բայց այն խորանալու բացահայտ միտում ուներ: Դա, ի վերջո, հանգեցրեց այն բանին, որ արդեն 1906թ. կեսերին շատ տեղերում համերաշխության գաղափարը որդեգրել էին ոչ քիչ թվով թուրքեր:

Հայկական մամուլը հարևաններին փորձում էր հասկացնել, որ կառավարության «հաշտեցման» մեթոդները, զինվորական պատժիչ արշավախմբերի միջոցով իրականացվող «խաղաղարար» գործողությունները պետք չեն ո՛չ հայերին և ո՛չ էլ թուրքերին:

Ռուսական մամուլի պահպանողական օրգանները, հատկապես փոխարքայության "Кавказ" թերթը, 1906-ի առաջին կեսին բազմիցս գրեցին, թե Կովկասում արդեն խաղաղություն է տիրում շնորհիվ զինվորական արշավախմբերի: Այդ կեղծիքը մերկացնում էին հայկական թերթերը: «Ալիքը» գրում էր, որ պատժիչ արշավախմբերն իրենց գազանություններով. սպանություններով և ոմբակոծումներով ավելի ու ավելի վատթարացրին վիճակը: Զինվորական ո՞ր արշավախումբն է «խաղաղություն» հաստատել, - հարց էր տալիս «Ալիքը». «Վիվերնի՞ արշավախումբը, Ֆրեյլիխի՞նը, որոնք քարուքանդ արեցին և պղծեցին Վարանդան, Լևիցկո՞ւ, որի ձեռքից արյուն-արցունք լացեց Ղազախը...»[1]: «Անհրաժեշտ է, վերջապես, որ հայ և թուրք աշխատավոր մասսաները համերաշխության ձեռք մեկնեն իրար անմիջապես, առանց միջնորդների»[2]:

Հենց այդ «միջնորդներն» են, որ ամեն անգամ խափանում են երկու ժողովուրդների հնարավոր հաշտությունը: «Եթե կան բարեկամներ, - շեշտում էր թերթը, - այդ մենք ենք՝ Ռուսաստանում ապրող բոլոր աշխատավորներս: Մեր փրկությունն ամենից առաջ ներկա կարգերի ոչնչացման մեջ է: Իսկ այդպիսի ոչնչացման միակ հզորագույն գրավականը բոլոր ժողովուրդների՝ սրանց թվում հայերի և թուրքերի համերաշխ գործակցությունն է»[3]:

Հենց առանց միջնորդների համերաշխության մի օրինակ տվեցին Լոռվա հայ և թուրք գյուղացիները 1906թ. հուլիսի վերջերին:

«Ալիք» թերթում այդ առթիվ լույս տեսած հոդվածի հեղինակը պատմում էր, որ զանազան գյուղերից հավաքված պատվիրակների մի խումբ, բաղկացած 60 ձիավորներից, Թիֆլիսից կրկին հայրենի Լոռի եկած Հովհաննես Թումանյանի և Մ.-ի* ղեկավարությամբ դուրս գալով Դսեղ գյուղից, մեկնեց Ղազախի և Լոռվա սահմանների վրա տարածվող սարերը՝ հանդիպելու այնտեղ իջևանած ղազախեցի թուրք քոչվոր գյուղացիներին:

Լորուտ գյուղից վաղ առավոտյան ձիավորների խումբը ուղղություն վերցրեց դեպի Զաթինդաղ սարը: Առջևից գնում էր նրանցից մեկը՝ բարձր բռնած

[1] «Ալիք», N 81, 5 օգոստոսի 1906թ.:
[2] Նույն տեղում, N 75, 29 հուլիսի 1906թ.:
[3] Նույն տեղում, N 81, 5 օգոստոսի 1906թ.:
* Չհաջողվեց պարզել ով լինելը, անուն-ազգանունը:

սպիտակ դրոշակը՝ ի նշան համերաշխության և խաղաղության: Ընդառաջ եկան մի քանի թուրք ձիավորներ, որոնք, բարի գալուստ մաղթելով, հայ պատգամավորներին հրավիրեցին իրենց վրանները: Զանցած կես ժամ, ընդարձակ տափարակի վրա հավաքվեցին 200-ից ավելի քոչվորներ: Հայ գյուղացիները սրանց հայտնեցին իրենց առաքելության մասին, ապա նրանց բացատրեցին, թե որքան կարևոր է երկու դարավոր հարևան ժողովուրդների խաղաղ գոյակցությունը և որքան կործանիչ է նրանց կռիվը: Նրանք մատնացույց էին անում արյունահեղության բուն դրդիչներին: Թուրք գյուղացիները լսում էին լարված ուշադրությամբ և հավանություն տալիս հայ հարևանների մտքերին: Չէ՞ որ բոլորի աչքի առաջ էր ավերակ, հրդեհի մատնված երկիրը՝ հազարավոր զոհերով, տնտեսական կյանքի քայքայումով:

Հայ գյուղացիների ձիավոր պատվիրակությունն, այնուհետև, այցելեց Խանբուլաղ, Տոլբաթլի, Սարիբուլաղ սարերի թուրք քոչվորներին, որոնք մեծ մասով հասարակ աշխատավոր գյուղացիներ էին՝ Ղազախից, Սալահլուից, Ղայմախլուից: Կային նաև բեկեր ու աղալարներ, որոնք իրենց հեռու էին պահում եկած հայերից, բայց նրանց մեջ կային և շիտակ, ազնիվ մարդիկ, որոնք հենց սկզբից ամբողջ հոգով դեմ էին եղել հայերի հետ ընդհարումներին:

Նրանցից մեկը՝ Իսմայիլ աղան, որն ուներ բազմաթիվ հայ բարեկամներ, ասում էր. «Մեր ժողովրդի դժբախտությունն այն է, որ տգետ է ու խավար, չի տարբերում իր բարեկամին թշնամուց և հենց այդ պատճառով շատ հեշտությամբ ենթարկվում է սադրանքների»[1]:

Լսելով հայերի գալու մասին՝ շրջակա և նույնիսկ հեռավոր օբաներից քոչվորները՝ որը ոտքով, որը ձիով, շտապում էին նրանց մոտ:

Սարիբուլաղում մի հասարակ թուրք գյուղացի հայ պատվիրակներին խոստովանում էր. «Այո՛, կառավարությունը հրդեհ գցեց մեր երկիրը: Մենք՝ թուրքերս և հայերդ, դարեր շարունակ ապրել ենք մի ընդհանուր հայրենիքում, միևնույն հողի զավակներ ենք, մեր շահերն ընդհանուր են, ուստի առիթ չունենք միմյանց արյունը թափելու: Հիմա մենք հասկացել ենք, որ համերաշխ պիտի ապրենք»[2]:

Նրան ձայնակցելով՝ մի ուրիշ քոչվոր հայերին պատմում էր, որ անցյալ՝ 1905թ. ամռանը Գանձակից Սարիբուլաղի քոչվորների մոտ էր եկել մի կրթված թուրք երիտասարդ և, զրույցներ վարելով, ասում էր, թե հայերը Կովկասում թագավորություն ստեղծելու և թուրքերին ստրկացնելու որևէ ծրագիր չունեն, որ հայ հեղափոխականները միայն ձգտում են Կովկասի բոլոր ժողովուրդների համար ձեռք բերել ազատություն և այդ նպատակով կռվում են բուրժուաների, բեկերի, աղալարների դեմ անխտիր՝ լինեն նրանք թուրք թե հայ: Եկած հայ պատվիրակներից մեկի այն հարցին, թե «դուք ինչպես էիք

[1] «Ալիք», N 75, 29 հուլիսի 1906թ.:
[2] Նույն տեղում:

ընդունում այդ երիտասարդի խոսքերը», Թուրք գյուղացին պատասխանել էր. «Մենք չհասկացանք նրան, համարեցինք խռովարար և, բռնելով, հանձնեցինք պրիստավին: Հիմա մենք դառնագին ողբում ենք մեր այդ հանցանքի համար: Մենք անմեղ մարգարեի քարկոծողներ եղանք»[1]:

Տաթևի վանքի վանահայր Մելիք Թանգյանը վկայել է 1906թ. ամռանը Զանգեզուրի Թուրքերի կողմից հաշտության մի շարք փորձերի մասին:

« ... Թուրքական խմբեր էին, որ գալիս էին Տաթևի վանքը, - պատմել է նա: - Հաշտություն էին խնդրում, իմ միջնորդությանն էին դիմում, անիծում էին իրենց խաներին, որոնք կոտորածների պատճառ էին եղած, անիծում էին, որ զուր տեղը կռվեցրին երկու հարևան ժողովուրդներին»[2]:

Թուրքերի ներկայացուցիչներից մեկի հետ իր հանդիպումը վանահայրը ավելի մանրամասն է ներկայացրել: «Մի օր, - ասել է նա, - Թուրքերի մեծերից Նշանավոր Իլդիրիմ բեկ Սուլթանովը, ըստ սովորականի, եկավ մոտս, և սկսեցինք խոսել մեր շրջանի կացության ու կատարված իրադարձությանց մասին: Իլդիրիմ բեկը սահուն հայերենով խոստովանեց հետևյալը, որ հիշատակում եմ բառացի.

«Տունը քանդվի դաշնակցության, էդ ի՞նչ սարսափելի կազմակերպություն է, որին ենթարկվեցին բոլոր հայերը: Ախր հայը մարդու լսող չի, միմյանց հակառակ են, բայց արի տես, թե ինչպես իսկույն հնազանդվեցին, ինչպես դաշնակցությունը կարողացավ զենքեր բերել: Ես տեսա, որ մեր Թուրքերի և քրդերի բանը բուրդ է, շատ վատ է, [ուստի] ես էլ սկսեցի նրանց կազմակերպել: Դաշնակցական կոմիտեի նման Թուրք-քրդական մի կոմիտե կազմեցի՝ 7 հոգուց բաղկացած: Մինչև անգամ 1000 ռուբլի էլ փող հավաքեցինք զենք գնելու համար, բայց, դժբախտաբար, մեր կոմիտեի անդամները փողերը կերան, զենք չբերին, այժմ եկել և ինձնից են ուզում փողերը ...»[3]:

Հաշտության առանձին նշաններ էին երևում նույնիսկ այն վայրերում, ուր նախորդ ողջ ժամանակաշրջանում հարևանների թշնամությունը ունեցել էր ամենածայրահեղ դրսևորումներ:

Այդ տեսակետից բնորոշ էին Նախիջևանի արյունարբու խաների, բեկերի, աղալարների ու մոլլաների միջավայրում նկատվող փոփոխությունները: Այստեղ հայերը աննկարագրելի հանդգնությամբ ավերներ էին սփռում չորս կողմը, և այդ էր պատճառը, գրել է Վահան Փափազյանը, որ «թաթար խաները և մոլլաները սարսափած՝ արդեն փորձեր կը կատարեին հաշտություն միջնորդելու: «Մենք մեղավոր չենք, մեր տգետ ժողովուրդը խաբուեցավ չեյթանեն, հին դրացիներ ենք, դադրեցնենք եղբայրասպան և աննպատակ այս սպանդը»,- այսպես սկսան խոսիլ, երբ հարուածը կերան: Անոնց մեջեն անկեղծ էր

[1] **«Ալիք»**, N 75, 29 հուլիսի 1906թ.:
[2] **Միքայել Վարանդեան**, Մուրատ (Սեբաստացի Ռազմիկին կեանքն ու գործը), «Հայրենիք» տպարան, Պոսթըն, 1931, էջ 115-116:
[3] Նույն տեղում:

կալուածատեր Փանահ խանը, հին անուանի գերդաստանեն, որ ընտանեկան լավ հարաբերություններ կը պահեր միշտ Երևանի հայ հայտնի ընտանիքներու հետ: Հաշտութեան բանակցություններուն նախաձեռնողը ան էր միշտ»[1]:

Շուշիից Թիֆլիս ուղարկած մի Թղթակցության մեջ ցույց էր տրված Թուրքերի արարքներում նկատվող փոփոխությունները: «Մեր անխելք հարևանները, - ասված էր այնտեղ, - կամաց-կամաց խելքի են գալիս: Նրանք վերջ ի վերջո կարծես ուզում են իմանալ իրենց չարն ու բարին»[2]: Թղթակցության մեջ բերված էին կոնկրետ օրինակներ. «Այսօր հայոց ու Թուրքաց բազարները մի անսովոր կենդանություն էին ներկայացնում: Թոփխանան լցվել է ծեր ու ջահել Թուրքերով: Ամիսների ընթացքում խորթացած «ալրշ-վերիշը» սկսվեց. - տանձ, խնձոր և այլ մրգեղեններ անցան Թուրքական մասերը, իսկ նավթ ու շաքար՝ հայկականը: Ուրախության արտասուքները սրբելով՝ հարևան թշնամիներն արագ-արագ անցնում էին մի խանութից մյուսը, մի թաղից մյուսը, ողջունում էին միմյանց, հարցնում իրար քեֆից-հալից: Քաղաքի ամեն անկյունում ծեր ու ջահել քաղցր զրուցում էին իրենց տարեկիցների հետ, ամեն մեկն առանց երկյուղի իր հանցանքն էր խոստովանում»[3]:

Թուրքերից մեկը բարձրաձայն իր մտքերը հետևյալ կերպ էր արտահայտել. «Վերջապես ճանաչեցինք մեր իսկական դուշմանին. մեր աչքով տեսանք, թե ով էր մեր այս չեն քաղաքը ավերակ ու մոխիր դարձնողը: Ալլա՛հը վկա, կարմրում ենք, երբ մտաբերում ենք մեր ասածներն ու արածները. առանց պատճառները խորը քննելու մեծ ու փոքր, բեկ ու ռահաթ միաբերան գոռում էինք, թե «մեր աշխարհում կատարվող բոլոր զուլումների ու արյան պատճառները հայերն են՝ իրենց խմբերով ու կոմիտեներով հանդերձ»: Հիմա մենք խելքի ենք եկել, բավական է այլևս: Հայե՛ր, դուք էլ խելքի եկեք: Բավական է, տնաքանդ եղանք ռուս չինովնիկների և գեներալների գրպանները լցնելով: Իսկ մեր շահօգուտն ի՞նչ եղավ. միայն այն, որ իրարու միս կերանք, քանդեցինք, քանդվեցինք ու վերջն այս օրին մովջաթ եղանք*: Իսկ մեզ կռվացնողները հեռվում նստած ծիծաղում են»[4]:

Հայկական մամուլը սրտանց ողջունում էր Թուրքերի մի, թեկուզ փոքր, մասի մոտ նկատվող հոգեփոխության առաջին նշանները[5]: «Ժամանակ» թերթի թղթակիցը շեշտված ուրախությամբ նշում էր, որ, վերջապես, «կոտորածների երկու զոհերը այսօր Զանգեզուրում և Ղարաբաղում բնազդորեն մոտենում են, փոխադարձաբար հասկանում իրար և, անշուշտ, նաև՝ կարեկցում»[6]:

[1] **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 432:
[2] **«Ալիք»**, N 80, 4 օգոստոսի 1906թ.:
[3] Նույն տեղում:
* Այսինքն՝ այս օրին հասանք:
[4] **«Ալիք»**, N 80, 4 օգոստոսի 1906թ.:
[5] Տե՛ս **«Նոր խոսք»**, N 11, 13 սեպտեմբերի 1906թ.:
[6] **«Ժամանակ»**, N 6, 10 հունվարի 1907թ.:

Հայկական ուրիշ թերթեր նույնպես անդրադառնում էին հաշտության տարտամ ու անհամարձակ փորձերին և հարևան Թուրքերին կոչ էին անում ավելի համարձակ գնալ հաշտության ճանապարհով:

Թշնամի կողմերի առաջին բարի շփումներն Արիանդայի այն թելն էր, որը խաղաղության կարող էր հասցնել երկու ժողովուրդներին: Բայց Թուրքերի մի մասի մոտ հանդես եկած հաշտության ցանկությունը, ցավոք, չդարձավ լայնածավալ շարժում: Հայերի խաղաղության ձգտումները, Թուրքերին բազմիցս արած հաշտության կոչերը նրանց ղեկավարությունը մեկնաբանում էր որպես հակառակորդի ուժասպառության, կռիվը շարունակելու նրա անկարողության ակնհայտ արտահայտություն:

Թեև 1905Թ. ամառվանից սկսված ընդհարումների ժամանակ Թուրքերը մեծ մասամբ տանուլ էին տալիս, բայց նրանց ղեկավարությունն իր սրտում շարունակում էր փայփայել հայերին, ի վերջո, հաղթելու իղձը: Հենց այդ ղեկավարությունն էր, որ որոշեց մի անգամ ևս սանձազերծել լայնածավալ կռիվ ամբողջ Անդրկովկասով մեկ:

Բայց այդպիսի ծրագրի իրագործումն այլևս անհնարին էր մի շարք պատճառներով. 1) Հայ մարտիկների թիվը այլևս չէր գիջում զինված Թուրքերի թվին, 2) Հայերն ունեին այնքան զենք, որով կարելի էր հետ մղել հակառակորդի ամենազանգվածային հարձակումները, 3) Թշնամու զինյալների բարոյականին մեծապես գերազանցում էր հայ մարտիկների բարոյական ոգին, 4) Կռիվների ընթացքում հայ քաղաքական գործիչները և հրամանատարական կազմը Հ.Յ. դաշնակցության ղեկավարությամբ հանդես էին բերում ավելի բարձր կազմակերպվածություն ու հնարամտություն, սառնասրտություն ու բանիմացություն, քան հակառակորդի ղեկավար կազմը, 5) Չնայած ցարիզմը՝ Թուրք ջարդարարների հովանավորը, հակահարձակման էր անցել հեղափոխության դեմ, բայց նա դեռ Թույլ էր լիակատար հաղթանակ տանելու համար, հետևապես՝ ի վիճակի չէր լայնամասշտաբ աջակցություն ցույց տալ Թուրք ջարդարարներին:

Թեև այս պատճառները և ուրիշ հանգամանքներ ևս 1906-ի ամռանն անհնարին դարձրին հայերի դեմ Թուրքերի նախատեսած ծավալուն գործողությունները, բայց վերջիններիս, այնուամենայնիվ, հաջողվեց կրկին արիերգարդային կատաղի կռիվներ սանձազերծել Երևանի և Գանձակի նահանգներում:

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԸ

1905Թ. ամռան սկզբներից Թուրք-հայկական ընդհարումները թևակոխեցին եզրափակիչ փուլ:

Պետական դումայի փակման լուրն Անդրկովկաս հասնելուն պես՝ այստեղ սկսեցին պտտվել ամենահամառ չշուկներ Թուրք-հայկական նոր ընդհարումների անխուսափելիության մասին: Դալիք վտանգի դեմ բոլորը՝ Թուրք Թե հայ, տարերային մղումով սկսեցին ռազմական պատրաստություններ տեսնել:

ՎԵՐՋԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ: ԴԵՊՔԵՐԸ ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՎԱՌՈՒՄ

Ամռան սկզբին առաջին ընդհարումը տեղի ունեցավ Երևան քաղաքում: Այս անգամ էլ նախահարձակը Թուրքերը եղան:

1906Թ. մայիսի 27-ին Երևանի շուկայում առաջացած մի վիճաբանությունից հետո Թուրքերը, հանելով սառը զենքերը, անխոս ու անաղմուկ անցնում են հայերի մոտով և դաշունահարում: Կարճատև այդ սպանդի ժամանակ սպանվում է 13 և վիրավորվում 7 հայ: Ուշքի գալով՝ հայերը սկսում են պաշտպանվել ատրճանակներով, որի ընթացքում սպանվում է 7 և վիրավորվում 4 Թուրք: Ընդհարման ժամանակ սպանվում են նաև մեկ մոլոկան և մեկ հրեա[1]:

Այդ դեպքից մի քանի օր անց՝ հունիսի 8-ին, Երևանում տեղի է ունենում կարճատև, ընդամենը մեկ ժամ տևած, ուժգին հրացանաձգություն, որի հետևանքով սպանվում է 10 մարդ, որից 5-ը՝ Թուրք, 3-ը՝ հայ, մեկ քուրդ և մեկ հրեա: Վիրավորվում է 19 հոգի՝ 13 Թուրք և 6 հայ[2]:

1906Թ. հունիսի 9-ին, առավոտյան ժամը 11-ին, քաղաքում նորից վերսկսվեց ընդհարումը[3], դարձյալ սովորական տեղից՝ Մեյդանից: Ինչպես միշտ, այս անգամ էլ նախահարձակները Թուրքերը եղան: Դեռ վաղ առավոտից շարժում էր նկատվում Թուրքերի մեջ. նրանց ջանբեզարները, մտրակներ ձեռքներին, շրջում էին խանութների շարքերը և ամբարտավան կերպով դուրս կանչում Թուրքերին՝ հրամայելով առևտուր չանել հայերի հետ:

Կռիվն սկսվեց երկու կողմից ուժգին հրացանաձգությամբ, որը տևեց մեկ ժամի չափ: Այդ օրը զոհերի թիվը, բարեբախտաբար, քիչ եղավ: Հայերից սպանվեց 5, Թուրքերից՝ 7 հոգի[4]:

Հաջորդ օրը՝ հունիսի 10-ի լուսաբացին, նորից սկսվեց ուժգին հրացանաձգություն՝ Կոնդի հայերի և Թուրքերի միջև, որը Թույլ արձագանքներ ունեցավ Շհար և Դամբրուլաղ Թաղերում:

---

[1] **Ա-ԴՕ**, Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906Թ.), էջ 62:
[2] Նույն տեղում: Երևանի 1906Թ. մայիսի 27-ի ընդհարման մասին տե՛ս նաև **«Մշակ»**, N 114, 28 մայիսի, N 115, 30 մայիսի 1906Թ.:
[3] Տե՛ս **«Մշակ»**, N 126, 11 հունիսի, N 127, 12 հունիսի, N 131, 17 հունիսի 1906Թ.:
[4] **«Դրոշակ»**, N 7(173), հուլիս, 1906, էջ 104:

Այս անգամ իշխանությունները կտրուկ միջոցների դիմեցին: Ստրաժնիկներն սպանեցին երկու թուրք հրացանաձիգների և ձերբակալեցին մի քանիսին՝ խլելով նրանցից հրացանները:

Հաջորդ օրերին առանձին դեպքեր տեղի չունեցան, լուռ էր թե՛ քաղաքում և թե՛ շրջակայքում: Շուկայում մեռելային լռություն էր: Հայերը մի քանի ժամով հատ-հատ բացում էին խանութները և կրկին կողպում, իսկ թուրքերն իրենց խանութներն ու կրպակները չէին բացում:

Քաղաքում տագնապ էր ու անորոշություն: Հրացանները լուռ էին: Հունիսի 10-ի ընդհարումը վերջինն էր Երևանում:

1906թ. հունիսի 19-ին տեղի ունեցավ Երևանի նահանգային հաշտարար հանձնաժողովի նիստը, որին մասնակցում էին հանձնաժողովի անդամներ՝ նահանգապետի ներկայացուցիչ Կովալևը, Գրիգոր Տեր-Խաչատրյանը, Ալաքպեր Խմայիլովը, Էլո Հարությունովը, Ռուստամ խան Մամեդբեկովը, Միր Աբաս Միր Բաբաևը, Հասանբեկ Աղաևը, Խ. Կասումբեկովը, Կ. Մ. Ալիևը[1]:

Հանձնաժողովի նիստը հաստատեց մշակված այն պայմանները, որոնց հիման վրա պետք է հաստատվեին կայուն խաղաղ հարաբերություններ Երևան քաղաքի թուրք և հայ համայնքների միջև: Ընդունվեց 16 կետից բաղկացած հանձնարարական - որոշում, որի կետերից էին՝ զենք կրողը պետք է ունենա իշխանությունների թույլտվությունը, մնաս կրած քաղաքացին փոխհատուցում է ստանում նրա հաշվին, ով պատճառել է մնասը, հայ և մուսուլման քաղաքապահները (городовой) կես տարով փոխարինվում են չեզոք ազգությունների ներկայացուցիչներով՝ նրանց աշխատավարձը բարձրացնելով ամսական մինչև 25 ռուբլի, զենք գտնելու նպատակով դադարեցվում են խուզարկությունները փողոցներում և հասարակական վայրերում. քաղաքի կենտրոնում ժամանակավորապես փակվում են բոլոր թեյարանները, խանութները, տրակտիրները, գինետները, հաստատվում են զինվորական պոստեր համապատասխան տեղերում (նշվում էր 17 պոստ), քաղաքը բաժանվում է ոչ մեծ շրջանների՝ բնակչության կողմից ընտրված մարմիններով, որոնց կարևոր խնդիրներից պետք է լինեն խաղաղության պրոպագանդը և միջնորդության իրականացումը բնակչության և իշխանությունների միջև և այլն[2]:

Մոտավորապես այդ օրերին ծանր վիճակ էր ստեղծվել Սուրմալուի գավառի հայկական մի քանի գյուղերում: Այդ գավառն ընկած էր Երևանի նահանգի հարավարևմտյան մասում: Այն հյուսիսային և արևելյան կողմերից հարում էր Էջմիածնի և Երևանի գավառներին, իսկ արևմտյան և հարավային կողմերից ամբողջ գծի երկարությամբ սահմանակից էր Թուրքիային:

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 270, թ. 10:
[2] Նույն տեղում, թ.թ. 5-9:

Սուրմալուի բնակչության ընդհանուր թիվը 89 հազար էր, որից 27 հազարը (30%-ը) հայեր էին, մնացած 62 հազարը՝ թուրքեր և քրդեր: Գավառի 229 գյուղերից հայաբնակ էին 23-ը, իսկ մի քանի թուրքաբնակ գյուղերում բնակվում էին նաև հայեր: Զուտ հայաբնակ գյուղերից էին Կողբը, Խալֆալուն, Գյուլլուջան, Խոշխաբարը, Իգդիրը, Բլուրը, Փանիկը, Էվզիլարը, Ալիջանը, Դաշբուրունը և այլն[1]:

Սուրմալուի գավառում մթնոլորտը չիկացել էր դեռ 1905թ. գարնանը՝ Նախիջևանի և Երևանի մայիսյան դեպքերից հետո: Բայց ամբողջ մեկ տարի այդ մթնոլորտը ծնունդ չտվեց մասսայական ընդհարման, չնայած տեղի էին ունենում առանձին սպանություններ և կողոպուտներ: Դրա պատճառն այն էր, որ, ինչպես արդեն ասվել է, ռուսական իշխանությունները պարզ տեսնում էին, թե տաճկական կողմը ինչպես է առիթներ փնտրում գավառում ապակայունացնելու վիճակը՝ այնտեղ ուղարկելով թուրք ու քուրդ հրոսակներ, և թե տեղի քրդերն ու թուրքերը ինչպես են գրկաբաց ընդունում իրենց հավատակիցներին: Հայ բնակիչների և ռուս վարչակազմի շահերն այստեղ համընկան, և երկուսն էլ միջոցներ ձեռնարկեցին փակելու համար հրոսակների ճանապարհը: Պատահական չէ, որ այս գավառում վարչակազմն ինչ-որ տեղ նույնիսկ փայփայում էր հայերին:

1906թ. հունիսի 2-ին Բլուր գյուղի մի քանի հայեր Հախմահմուդ գյուղի մոտ ենթարկվում են թուրքերի հարձակմանը և տալիս 3 զոհ: Դրան ի պատասխան, Բլուր և Զաքրլու գյուղերի մոտերքում հունիսի 3-ին հայերը հարձակվում են թուրքերի վրա և սպանում 10 հոգու: Այդ դեպքին հաջորդում է Ցայջի գյուղում խմբված ավելի քան 100 զինված թուրքերի և քրդերի հարձակումը Ալիղամար հայ գյուղի վրա: Լուրն Իգդիր հասնելուն պես, հունիսի 4-ին ուղարկվում է կազակների մի ջոկատ, որը հրաման էր ստացել կրակ բացել նախահարձակների վրա՝ լինեն դրանք թուրքեր, քրդեր թե հայեր: Տեղ հասնելով՝ կազակները ականատես են լինում, թե թուրքերն ու քրդերը ինչպես են անխնա հրացանային կրակի տակ առել հայերին: Հնչում են կազակների համազարկերը, և անշնչացած գետին ընկնում 7 հրոսակ, իսկ 14-ը վիրավորվում են[2]:

Թեև այդ դեպքից հետո շարունակվեցին երկուստեք անհատական սպանությունները, բայց մասսայական ընդհարումներ այնպես էլ գավառում չեղան, քանի որ երկու կողմին զսպում էր կազակների սարսափը:

Խաղաղ էր Թիֆլիսի նահանգը, եթե չհաշվենք Բորչալուի գավառը, որի հայկական գյուղերում անհանգիստ էին: Բորչալուում նորից գործի էր անցել գավառի «տերը»՝ տեղի ազնվականության (բեկեր, աղալարներ) պարագլուխ Հուսեին բեկ Եղիգարովը: Նրան անվանում էին «չար ոգի»: Թուրքերը բաղ-

[1] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 137-138:
[2] Նույն տեղում, էջ 139: Իգդիրի դեպքերի մասին տե՛ս նաև «Մշակ», N 123, 8 հունիսի, N 124, 9 հունիսի 1906թ.:

միջս դիմել էին փոխարքայության գլխավորներին՝ նրան գավառից հեռացնելու խնդրանքով, բայց նրանց բոլոր դիմումները մնացել էին անհետևանք: Եվ ահա նա մարդիկ էր ուղարկել քոչատեղերը և քոչվորներին պատվիրել սովորականից շուտ իջնել սարերից ու պատրաստվել հայերի հետ սպասվող նոր կռիվների[1]:

Բարեբախտաբար Հուսեին Եղիգարովի նկատմամբ ատելությամբ լի Թուրքերն ունկնդիր չեղան նրա պահանջներին ու կոչերին և չգնացին հարևան հայկական գյուղերի վրա:

ՇՈՒՇԻՆ ԴԱՐՁԵԱԼ ՀԱՂԹԱԿԱՆ

Հայ-Թուրքական ընդհարումների եզրափակիչ էտապի ամենակատաղի կռիվները տեղի ունեցան 1906թ. հուլիսի 12-22 -ը Շուշիում:

Թեև 1905թ. օգոստոսին Շուշիի Թուրքերը ծանր պարտություն էին կրել իրենց իսկ սանձազերծած ընդհարման ընթացքում, բայց նրանց ուղեղից դուրս չէր գալիս քաղաքը գրավելու միտքը:

Եվ որպեսզի նոր ծագելիք կռվի մեղքը բարդեն հայերի վրա, Շուշիի Թուրք ղեկավարությունը մեկը մյուսի հետևից հեռագրեր էր ուղարկում փոխարքային, Պետերբուրգ՝ կառավարությանը և բարձրաստիճան ուրիշ պաշտոնյաների՝ աղմուկ բարձրացնելով, թե քաղաքի հայերը պատրաստվում են Թուրքերի դեմ մեծ կռվի:

Շուշիի և ողջ Ղարաբաղի հայության դեմ իրենց վճռական գործողությունների իրականացումը Թուրքերի ղեկավարները հարմարեցրել էին 1906թ. քոչի հետ:

Հարյուր հազարավոր անասունների հետ հարթավայրերից զովասուն ու խոտառատ սարերը բարձրացող բոլոր քոչվորները, մեծից փոքրը, զինավառ էին և այդ պատճառով՝ սովորականից ավելի հանդուգն ու լկտի:

Քոչն անցնում էր քաղաքի միջով՝ դեպի յայլաղները: Հայկական մասով ապահով անցնելու համար թե՛ քաղաքում և թե՛ դրսում նշանակվել էին պահապաններ, որոնք խիստ հսկում էին և միաժամանակ հայերին արգելում մոտենալ քոչվորներին, որևէ բան գնել նրանցից, որպեսզի որևէ աննշան դիպված առիթ չլինի զանազան անախորժությունների: Այլ խոսքով, հայերն ամեն հընար ու միջոց գործադրում էին անմիտ ընդհարումներից խուսափելու համար:

Մինչ նախիրներն ու հոտերը բարձրանում էին սարերը, հազարավոր զինված Թուրքեր, ըստ իրենց ղեկավարների մշակած ծրագրի, կտրեցին Շուշի տանող բոլոր ճանապարհները, դիրքեր բռնեցին քաղաքի վրա իշխող բարձունքներում և բոլոր կողմերից օղակի մեջ առան քաղաքը՝ այն մեկուսացնելով շրջապատի հայկական գյուղերից:

Միաժամանակ քաղաքի Թուրքերը բոյկոտ էին հայտարարել հայերի դեմ և նրանց ապրանք չէին վաճառում[1]:

Մայիսի 19-ին Շուշիից Թիֆլիս ուղարկած հեռագրերից մեկում ասված էր. «... Դրությունը լարված է: Չնայած դրան, քոչը գնում է, թեև՝ անվստահ. հայերը չեն դիպչում: Դեպի Եվլախ գնալն ռիսկի բան է: Շատ մարդ սիրտ չի անում տնից դուրս գալ: Պրովոկացիան ուժգնորեն առաջ է գնում: Քաղաքն անտեր է: Ոստիկանությունը մարդասպաններին թողած՝ հեղափոխականներ է որոնում»[2]:

Իսկ հեղափոխական ղեկավար գործիչներ, իսկապես որ, քաղաքում քիչ չէին: Գարնան կեսերին այդտեղ էր եկել Ռոստոմը և Վարդանի հետ ձեռնարկել հայության պաշտպանության կազմակերպման հետ առնչվող մի շարք խնդիրների լուծումը: Ռոստոմին հատկապես մտահոգել էր հայերի կրակային հզորության մեծացման հարցը: Դա էր պատճառը, որ նա ամենից առաջ ձեռնարկեց հայ պաշտպանների զինանոցը ինքնաշեն ռումբերով համալրելը՝ օգտվելով այն բանից, որ այդ ժամանակ քաղաքում էին գտնվում ռմբային գործի հմուտ վարպետներ:

1906թ. հունվարին Թավրիզից Կովկաս էր անցել 24-ամյա Կոստյա (Կոստի) Համբարձումյանը և ամռան սկզբին մեկնել ծննդավայր Շուշի, ուր հայրենակիցները հևիհև պատրաստություններ էին տեսնում դիմագրավելու Թուրքերի նոր հարձակմանը: Ռմբաշինության մեջ հմտացած լինելով Թավրիզում Շուշի գալուց հետո նա Վարդանին առաջարկում է օգտագործել իր ձեռք բերած գիտելիքները: Այստեղ էր Ամերիկա գնացած և ռմբաշինության արհեստին վարժված խարբերդցի զինագործ Կարոն[3]: Վերջապես, ի բարեբախտություն հայերի, քաղաքում էր ռումբեր պատրաստող հայտնի վարպետ Բուլղարացի Պետոն, որը մի խուլ թաղի արհեստանոցում ոչ միայն ռումբեր էր պատրաստում, այլև երիտասարդներին սովորեցնում էր իր արհեստը[4]:

Այդ ռմբագործ վարպետները, հատկապես Կարոն ու Պետոն, անգնահատելի ծառայություն մատուցեցին շուշեցի հայ մարտիկներին՝ պատրաստելով հարյուրավոր ռումբեր:

Ինչ վերաբերում է Ռոստոմին, ապա Շուշիում եղած ժամանակ նա ամբողջովին զբաղված էր սեփական նախագծերով հրթիռներ պատրաստելու և իր ձեռքով փորձարկումներ կատարելու գործով: Նրա անմիջական օգնականն էր Կոստի Համբարձումյանը:

---

[1] «Ալիք», N 82, 6 օգոստոսի 1906թ.:

[1] «Մշակ», N 126, 11 հունիսի 1906թ.:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց.3, գ. 95, թ.9:
[3] «Հայրենիք», N 9-10 (438), 1962, էջ 43:
[4] Նույն տեղում, N 11, նոյեմբեր, 1958, էջ 82-83:

Եղիշե Իշխանյանը, որը ականատես և մասնակից է եղել Ռոստոմի պատրաստած հրթիռների փորձարկումներին, այդ մասին հետևյալ տեղեկությունն է թողել մեզ. «Հրթիռները գլխավորապես հրդեհ առաջացնելու համար էին: Հրթիռն ուներ մոտ 40-45 սանտիմետր երկարություն և 8-10 սանտիմետր տրամագիծ. պատրաստված էր հաստ թիթեղից, գմբեթաձև էր, սուր ծայրով, որին **վեղար** անունն էին տվել: Հրթիռի ծայրին մոտ տեղավորում էին պայթուցիկ և վառող նյութերը: Հորիզոնական դրությամբ հենակետի վրա զետեղելուց ու հետևի մասում գտնվող պատրույգը վառելուց հետո հրթիռը ուժգին փչչոցով սուրում էր մոտ 1000 քայլ տարածություն դեպի նշանակետը, և երբ պատրույգի կրակը հասնում էր պայթուցիկ մասին, այդ մասը պայթում էր ռումբի պես, և եթե հրդեհ էլ չէր առաջացնում, ապա շատ մեծ տպավորություն էր թողնում: Իսկ երբ հաջողվում էր հրդեհ առաջ բերել, սարսափի ազդեցություն էր թողնում թուրքերի վրա»[1]:

Հրթիռի փորձարկումները Ռոստոմը և այդ գործում նրա օգնական Կոստին կատարում էին ոչ միայն Շուշիում, այլև մերձակա Վարանդայի Սարգատին կատարում էին ոչ միայն Շուշիում, այլև մերձակա Վարանդայի Սարգատին կատարում էին, որ Ռոստոմի կնոջ՝ Լիզայի ծննդավայրն էր: Պայթեցումները կատարվում էին վերջինիս եղբոր՝ Իլիկո Մելիք-Շահնազարյանի տան ընդարձակ բակում[2]:

Ավելի քան երկու ամիս Շուշիում մնալուց հետո Ռոստոմը Գանձակի գծով, որ այդ ժամանակ հաղորդակցության միակ քիչ թե շատ ապահով ճանապարհն էր հայ ուղևորների համար, անցնում է Թիֆլիս*, կենտրոնատեղին Հ.Յ. դաշնակցության արևելյան բյուրոյի, որի անդամներից էր նաև ինքը:

Այդ ամենը չէր կարող աննկատ մնալ: Իշխանությունները շարունակ բնակիչներից պահանջում էին իրենց հանձնել հեղափոխականներին՝ «Բոլոր չարիքների պատճառներին»: Եվ դա ազդեցություն էր գործում ժողովրդի վրա: Իշխանությունները հենց դրան էլ ձգտում էին՝ նպատակ ունենալով պառակտում գցել ժողովրդի և հեղափոխականների միջև ու ամբոխին բերել այն համոզման, որ եթե մարդիկ երես դարձնեն հեղափոխականներից, ապա կառավարությունն անմիջապես խաղաղություն կշնորհի բոլորին:

Հայ գործիչները չէին կարողանում ազատ գործել՝ վախենալով ձերբակալումից, և այդ հանգամանքը մեծ վնաս էր հասցնում նախատեսված ձեռնարկներին: Գործիչները, փախստական դրության մեջ, չէին կարողանում կատարել իրենց առջև կանգնած խնդիրներն ամբողջ ծավալով:

---

[1] **«Հայրենիք»**, N 9-10 (438), 1962, էջ 43:

[2] Նույն տեղում, էջ 43-44:

* Ռոստոմի մեկնումով վերջանում է նաև նրա օգնականի՝ Կոստայի «հրթիռային» գործունեությունը: Հ.Յ.Դ. Ապառաժի (Ղարաբաղի) կենտրոնական կոմիտեն նրան ուղարկում է Ղափանի շրջան՝ որպես կուսակցական գործիչ: Ընտրված լինելով այդ կ. կոմիտեի անդամ՝ դաշնակցության ապագա խոշոր գործիչը Սամուել Ծածկանունով շրջում է Զանգեզուրի շրջանից շրջան՝ Գենվազ, Ղափան, Սիսիան, բուն Զանգեզուր՝ ամենուր թողնելով բարի հիշատակ:

Խժդժություններ կատարելով՝ թուրքերը կարծում էին, թե արդեն վճռված է Շուշվա հայերի ճակատագիրը: Դրանից ոգևորվելով՝ նրանք ձեռնարկեցին մշակած ծրագրի հաջորդական գործադրությունը՝ սկսելով զանգվածային հարձակումներ Շուշիից կտրված հայկական բնակավայրերի վրա, թալանի և ավերի ենթարկեցին դրանք, պաշարեցին Խալֆալուն, Շուշիքենդը, Ղարաղշլաղը և այլ գյուղեր: Դրանցից փախած հայերի մեծ մասը ապաստան գտավ Շուշի քաղաքում ծանրացնելով պարենային տագնապը: Իրենց հերթին հայերը դիմում էին փոխադարձ գործողությունների: Միայն հունիսի առաջին շաբաթվա ընթացքում Շուշիի շրջանի տարբեր վայրերում սպանվել էր 12 թուրք: Դա առիթ էր տվել մուտակա քոչվորներին, որոնք ցրված էին լեռներում ու բռնած էին բոլոր ճանապարհները, հավաքել իրենց վրանները և գնալ քիչ ավելի հեռու ու ավելի համախմբվել: Դրա շնորհիվ լեռների որոշ մասն ազատվեց զինված քոչվոր թուրքերից:

Շուշիի շրջանում տեղի ունեցած դեպքերը հեղափոխական խմբերին ստիպեցին դուրս գալ սպասողական վիճակից, քանի որ այդպես էին պահանջում տեղական հանգամանքները: Հայերը ցանկություն չունեին դիմել անհատական սպանությունների, բայց, տարաբախտաբար, ստիպված էին նույնությամբ պատասխանել թուրքերի գործողություններին:

Ղարաբաղյան հայկական ուժերի հրամանատար Վարդանը հայ մարտիկներին մշտապես պատվիրում էր լինել զուսպ, հակառակ կողմի համար չստեղծել կռվի պատրվակներ:

Հայկական կողմի այդ կեցվածքը սխալ ըմբռնվեց թուրքերի կողմից. ընդհարումից խուսափելու հայերի ճիգերը նրանք դիտեցին որպես թուլության նշան և դիմեցին նոր ամբարտավան գործողությունների:

Թուրքերի լկտի գործողությունները Վարդանին ստիպեցին հրաժարվել որդեգրած մարդասիրական կեցվածքից և փոխել հակառակորդի հետ վարվելու գործելաձևը:

Հ.Յ. դաշնակցության արևելյան բյուրոյին ուղարկած 1906թ. հունիսի 9-ի թվակիր նամակում Վարդանը ասպատակիչ թուրք քոչվորների մասին գրում էր. «Այս սրիկաների համար մեծահոգությունը նշանակություն չունի ... լրբանում են և քաջալերվում ..., ենթադրելով, որ հայերը չափազանց վախենում են ... »[1]:

Եվ հայերը սկսեցին հարվածին պատասխանել հարվածով՝ հետևելով «ակն ընդ ական» պատգամին:

Հուլիսի 12-ի առավոտյան թուրքերը սպանեցին Սահակ Միրզայան անունով մի շուշեցի զինվորի, երբ նա քնած էր: Սպանության տեղը գնացին դատախազը, նրա օգնականը, քննիչը, ոստիկաններ: Այնտեղ հավաքվեց նաև հայերի մի բազմություն: Երբ պաշտոնյաները վերջացրին իրենց գործը և

---

[1] **Միքայել Վարանդեան**, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 77:

հեռացան, հանկարծ թուրքերի քաղաքամասից որոտացին հրացաններ, և գրնդակներ տեղացին խմբված հայերի վրա: Բազմությունը վայրկենապես ցրվեց՝ իր հետ տանելով Սահակի դիակը: Հայ մարտիկները մտան դիրքերը և թուրքերին պատասխանեցին փոթորկալի հրացանային կրակով:

Եվ այսպես, տասն ամսվա հարաբերական խաղաղությունից հետո Շուշի քաղաքում երկրորդ անգամ բռնկվեց անողոք ու արյունալի կռիվ:

Կռվի նախօրյակին թուրքերը մի շարք առավելություններ ունեին, որոնցից հատկապես կարևոր էին երկուսը. 1. Նրանք նախապես զբաղեցրել էին քաղաքն օղակող համարյա բոլոր բարձունքները, իսկ քաղաքի ներսում կարևոր դիրքերը, որոնք հինգն էին՝ Խանին Աղջկա, Գեովհար աղայի, աղա Իրզի, Դիքտանկուրուի և Հաջի Վալիևի տները: Դրանցից Խանին Աղջկա դիրքը կրակի տակ էր պահում Ղումլուղի թաղը, Գեովհար աղայի դիրքը՝ Հին հանգստարանի թաղը, իսկ մյուս երեք դիրքերը՝ հայոց քաղաքամասի կենտրոնը: Հատկապես անառիկ էր աղա Իրզի դիրքը, որն ամիսների ընթացքում վերածվել էր կատարյալ ամրոցի, 2. Հասցրել էին առատորեն համալրել զենքի ու զինամթերքի պաշարները, որի շնորհիվ զենքի տակ ունեին 1000-ից ավելի մարդ՝ հայերի 700 զինյալի դիմաց:

Չնայած թուրքերի այդ առավելություններին, հայերը կարողացան հենց սկզբից իրենց ձեռքը վերցնել կռվի նախաձեռնությունը[1]:

Քաղաքում տեղակայված զորքի մի մասը, Ջերնյավսկու ղեկավարությամբ, բանակել էր թուրքական քաղաքամասում, մյուսը՝ Գոլոշչապովի հրամանի տակ՝ հայկականում:

Հուլիսի 12-ի առավոտվանից, մինչև ցերեկվա ժամը 3-ի կողմերը ռուս զորքը բռնել էր հայերի կողմը: Պատճառն այն էր, որ հայերի դեմ ուղղված թուրքերի կրակից պատահաբար զոհվել էր երկու ռուս զինվոր: Գոլոշչապովի հրամանով թնդանոթային կրակի տակ առնվեցին թուրքական դիրքերը:

Բայց դա երկար չտևեց: Հայերը բուռն հարձակման անցան թուրքական քաղաքամասի վրա՝ նախապես արձակելով Ռոստոմի պատրաստած հրթիռներից, որոնք իրենց դղրդյունով ու պատճառած հրդեհներով սարսափ տարածեցին թուրքերի մեջ: Հարձակումը հատկապես ուժգին էր Ղումլուղի թաղից: Ընդամենը երկու ժամում հայերը թուրքական թաղերում գրավեցին բազմաթիվ ամրացված կետեր, ինչպես նաև աղա Իրզի անառիկ դիրքը, որ թուրքերն իրենց ձեռքով հրդեհել էին և հեռացել:

Այս արագ հաջողությունը իրարանցում առաջ բերեց քաղաքի վարչական և զինվորական իշխանությունների մոտ: Այլևս հայերին աջակցելու մասին խոսք լինել չէր կարող:

Հայերի հարձակումը կանգնեցնելու և թուրքերին օգնելու նպատակով գեներալ Գոլոշչապովը վրացի սպա Մաչավարիանիի ղեկավարությամբ զորք ուղարկեց վերջիններիս քաղաքամաս: Մի քանի ուժգին համազարկերով զորամասը հայ մարտիկներին ստիպեց թողնել թուրքերից գրաված դիրքերը և վերադառնալ քաղաքի իրենց մասը: Մաչավարիանին այնուհետև հրաման տվեց կրակ տեղալ հայերի դիրքերի վրա: Նրա անխոհեմ հրամանը թանկ նստեց զորամասի և հենց իր վրա: Հայ մարտիկները ստիպված պատասխանեցին կրակով, որի հետևանքով սպանվեց ևս երկու ռուս զինվոր: Դա հրամանատարի նկատմամբ զայրույթ առաջացրեց զինվորների մեջ, որոնք առանց հրամանի թողեցին դիրքերը և քաշվեցին, իսկ սպան խոհեմություն ունեցավ անհետանալու:

Այսպիսով, հայերի դեմ ուղարկած զորքը չկատարեց այն խնդիրը, որ նրա առջև դրել էր գեներալ Գոլոշչապովը:

Օգտվելով ռուսական զորամասի խուճապից՝ հայ մարտիկները նորից առաջ շարժվեցին և մտան քաղաքի թուրքական մասը, ապա ներխուժեցին ու խորացան թաղերի խորքերը: Դանակը հասել էր ոսկրին. թշնամուն դաս տալու համար հայ զինյալները չէին խնայում իրենց: Նրանց հետ էին արևմտահայ հայդուկներ՝ մշեցի Ավոն, Միսաքը, Հարութը, որոնք ամենավտանգավոր տեղերում էին և իրենց հմուտ գործողություններով ու ոգեշունչ կոչերով մարտիկներին մղում էին նորանոր սխրագործությունների:

Այս պայմաններում Գոլոշչապովը հայերի համար անհասկանալի հրաման արձակեց, և թնդանոթները կրակի տակ առան թուրքերի քաղաքամասը:

Հուլիսի 12-ի ժամը 5-ին հայ մարտիկները շրջապատեցին պարսկահպատակ աղա Իրզի և Ֆատալի Միրզի կողք կողքի գտնվող տները: Այդ երկու դիրքերում ամրացած թուրքերը հույս էին ունեցել այդտեղից ներխուժել և հրդեհել հայկական թաղերը, բայց կատարվեց հակառակը: Ժամը 6-ից սկսած՝ հրդեհը լափում էր աղա Իրզի դիրքը: Այդ տունն այրելուց հետո հայ հրդեհաձիգների խմբերն սկսեցին կրակի տալ թուրքերից գրաված բոլոր տները:

Բանն այն է, որ հայերը մեկ տարում թուրքերից սովորել էին շատ բան՝ թալան, վրիժառություն, իսկ հիմա էլ՝ հրդեհաձգություն: Այլ խոսքով, նրանք թշնամու դեմ կռվում էին նրա իսկ մեթոդներով:

Թուրքերի օրինակով հայերը ստեղծել էին հրդեհաձիգների մի քանի խմբեր, որոնք ունեին նավթի ամաններ և այլ պարագաներ: Խմբերի խնդիրն էր՝ թուրքական թաղերում հրդեհել որքան հնարավոր է շատ տներ ու խանութներ:

Հայկական քաղաքամասում ստեղծվել էին նաև հրդեհաշեջների խմբեր, որոնք ամրացված էին թաղերի որոշակի հատվածների, և որոնց նպատակն էր արագ հանգցնել ծագած հրդեհները: Խմբերն իրենց ձեռքի տակ ունեին երկու հրդեհաշեջ պոմպային մեքենաներ, ջրով և ավազով լի տակառներ, դույլեր, քանդելու գործիքներ՝ բահեր, քլունգներ, լոմեր և այլն:

Հայկական քաղաքամասում գերազանց էին կազմակերպված սանիտարական, տնտեսական, տեղեկություններ հաղորդելու և մյուս ծառայությունները:

[1] Տե՛ս **«Ալիք»**, N 77, 1 օգոստոսի 1906թ.:

Ամեն թաղում կային սանիտարական խմբեր՝ իրենց պատգարակներով և առաջին օգնության դեղերով: Ստեղծված էին վիրակապական կետեր, ուր մշտապես հերթապահում էին վիրակապեր և վիրակապուհիներ:

Մեծ ուշադրություն էր դարձված մարտիկների սննդի կարգավորմանը: Ամեն թաղում ժողովրդի կողմից ընտրված էին տնտեսվարներ, որոնք զինվորների ու կամավորների համար կազմակերպել էին թաղային ճաշարաններ: Տնտեսվարի տրամադրության տակ գտնվողները հիմնականում կանայք ու ծերուններ էին, որոնք ժամանակին կռվողներին հասցնում էին տաք կերակուր, ջուր, թեյ և այլն: Կռվողների հանգստյան համար ձեռնարկված էին միջոցներ, և հոգնածները հերթով դադար էին առնում: Փամփուշտ բաժանելու համար կարգված էին հատուկ մարդիկ :

Անխափան գործում էր սուրհանդակային կապը: Սուրհանդակները կենտրոնից կարգադրություններ էին տանում շրջանները՝ շուտափույթ տեղեկություններ հաղորդելով կռվի ընթացքի մասին և այնտեղից կարևոր տեղեկություններ բերելով քաղաք[1]:

Մի խոսքով, հայերի մոտ կարգապահությունը կատարյալ էր, մանավանդ առաջին օրը, երբ դեռ գավառից օժանդակ ուժեր չէին եկել:

Հուլիսի 12-ի լույս 13-ի գիշերը հրացանաձգությունը շարունակվեց նույն ուժգնությամբ: Մինչև լուսաբաց հայերի կողմից կռվում էր 115 զինվոր և մոտ 200 թաղային կամավոր[2]:

Հուլիսի 13-ի վաղ առավոտյան հրացանաձգությունը թուլացավ և ցերեկը համարյա դադարեց:

Այդ օրը, կեսօրն անց, գավառից Շուշիի հայերին օգնության եկավ 120 մարդ: Համալրում ստանալուց հետո, երեկոյան ժամը 8-ին, նրանք նոր հարձակում ձեռնարկեցին, որի նպատակն էր ճեղքել թուրքերի երկրորդ պաշտպանական գիծը և հասնել Շեյթան-բազար: Հայերի գիշերային հարձակման թափը կատարյալ հուսահատության էր մատնել թուրքերին, որոնք մի քանի հատվածներում օրհասական ճիգերով ու քաջությամբ մի կերպ կարողացան կանգնեցնել հարձակվողների առաջխաղացումը:

Թուրքերի դրությունը հատկապես ծանրացավ կեսօրի մոտերքը, երբ հայկական քաղաքամասից սկսեցին գործել թնդանոթները, որոնցից 5-ը շուշեցի զինագործ վարպետներից մեկի ձեռքի գործն էր՝ 3-ը երկու դյույմանոց, 2-ը՝ երեք: Բացի այդ, հայկական քաղաքամասում կար ավելի խոշոր դյույմի երկու թնդանոթ[3]:

Ամբողջ գիշեր կրակում էին նաև ռուս զինվորները, որոնց մի մասը Դերբենտյան գնդի սպա Ջերնյավսկու ղեկավարությամբ գտնվում էր թուրքական

[1] «Դրոշակ», N 8(174), օգոստոս, 1906, էջ 135-136:
[2] Նույն տեղում, էջ 136:
[3] Նույն տեղում:

մասում և օգնում էր թուրքերին, իսկ մյուս մասը, գալով հայկական քաղաքամաս, գնդակներ էր արձակում թուրքերի վրա:

Ի վերջո չկարողանալով դիմանալ հայերի գրոհներին՝ թուրքերը լքեցին Շեյթան - բազարը, և մեծ թվով ընտանիքներ խուճապով խուժեցին բանտի պարիսպներից ներս: Հատկանշական է, որ այդ իրարանցման մեջ թուրքերը սկսել էին սոսկալի կողոպուտի ենթարկել իրենց իսկ հավատակիցների խանութներն ու տները:

Հուլիսի 13-ին թուրքական քաղաքամասում վառվում էին երեք թաղ, հարյուրից ավելի տուն, այդ թվում Ջաֆար բեկ և Ռասուլ բեկ Վեզիրովների հոյակապ տները և ուրիշ մեծ տներ: Ագուլեցոց եկեղեցուց ներքև այրվում էին Մամանլուի թաղը՝ մինչև Շեյթան - բազար, Թազա մահլու թաղը:

Հուլիսի 14-ի լույսը բացվեց, և հրացանաձգությունը դադարեց: Երկու օրվա կռվի ընթացքում թուրքերը մեծ կորուստներ էին կրել: Հայ երիտասարդների մարտական ոգին չափազանց բարձր էր, իսկ նրանց հանդգնությունը սահման չէր ճանաչում: Հրամանատարները նրանց հորդորում էին տեղիք չտալ չպատճառաբանված, ավելորդ զոհերի, բայց կարդացած քարոզներն արդյունք չէին տալիս:

Կռվի սկզբից հայ զինվորներն ու կամավորները կրակել էին մոտ 80.000 փամփուշտ:

Հուլիսի 14-ի առավոտյան թուրք երևելիներից մեկը՝ բժիշկ Մեհմանդարովը, մի աղերսագրով դիմում է գեն. Գոլոշչապովին և խնդրում միջնորդել հայերի հետ հաշտություն կնքելու համար:

Թեև հայերը քաջ գիտակցում էին, որ թուրքերն այդ քայլին դիմում են ժամանակ շահելու և դրսից օգնություն ստանալու հույսով, սակայն ընդառաջ գնացին և իրենց հերթին նրանց ներկայացրին 8 կետից բաղկացած պահանջներ, որոնց ընդունելու դեպքում միայն հնարավոր էին համարում կնքել հաշտության պայմանագիր: Այդ կետերից հատկապես կարևորվում էին՝. 1. Քանդել երկու դիրքեր՝ Դիքտանկուրուի և Գեովհար աղայի, 2. Վերացնել բոյկոտը, 3. Արգելել նոր խմբերի մուտքը քաղաք, 4. Վարձատրել Սահակ Միրզայանի ընտանիքին, որը եղել է սադրանքի առաջին զոհը, 5. Գանձակի նահանգից աքսորել բոլոր սադրիչներին:

Թուրքերը հայտնեցին, որ, բացի առաջինից, իրենք ընդունում են բոլոր պայմանները, բայց ձգձգում էին գրավոր պատասխանը: Հայերը պատրաստվեցին նոր հարձակման: Գեն. Գոլոշչապովը, տեղեկանալով այդ մասին, նրանց ներկայացրեց վերջնագիր՝ առաջ չգնալ, հակառակ դեպքում զորքը գործի կդնի իր տրամադրության տակ եղած բոլոր թնդանոթները և տակնուվրա կանի հայկական թաղերը:

Հուլիսի 14-ին և 15-ին փաստորեն զինադադար էր: Հայ մարտական խմբերի ղեկավարությունը քաղաքացիների միջոցով բանակցում էր հակառակ

կողմի հետ: Մյուս կողմից մարտիկները,օգտվելով դաղարից, հանգստանում էին. կարգի բերում զենքերը:

Տեսնելով, որ Թուրքերը տրամադիր չեն անկեղծորեն բանակցելու և հաշտության ձեռք մեկնելու, ինչպես նաև հաշվի չառնելով հայկական քաղաքամասը թնդանոթներով տակնուվրա անելու մասին գեն. Գոլոշչապովի սպառնալիքները, հայկական հրամատարությունը որոշեց հուլիսի 15-ի լույս 16-ի գիշերը նոր հարձակում սկսել և ինչ գնով էլ լինի ոչնչացնել ահարկու Դիքտանկուրուի դիրքը:

Գիշերվա ժամը 4-ին հայերի զինված խմբերից մեկն աննկատ մոտենում է Դիքտանկուրուի տանը, և մեծ դժվարությամբ անցք փորելով պատի տակ, այնտեղ տեղադրում է պայթուցիկ արկղ: Տան ներսում գտնվող Թուրքերը, նկատելով այդ, հրացաններով հրհրում են արկղը և հեռացնում անցքից: Մարտիկներին հաջողվում է նորից արկղը խցկել պատի մեջ և վառել պատրույգը: Դինամիտը պայթելով՝ հուժկու դղրդյունով մեծ անցք է բացում պատի վրա, որով մարտիկները խուժում են ներս: Զդիմանալով հայերի բուռն գրոհին՝ կենդանի մնացած Թուրքերը փախուստի են դիմում: Հայ հրդեհաձիգները, մարտիկների հետքերով մտնելով տուն, այն հրդեհի են մատնում: Հակառակորդը այս դիրքում տվել էր 40 սպանված[1]:

Դիքտանկուրուի դիրքի անկումից հետո Թուրքերը նորից հայերին դիմեցին հաշտության խնդրանքով: Հուլիսի 17-20-ը քաղաքում հանգիստ էր, և տարվում էին հաշտության բանակցություններ: Այդ ընթացքում Խալֆալուի վրայով քաղաք թափանցեցին շուրջ 300 զինված քրդեր և համալրեցին Թուրքերի շարքերը: Վերջիններիս նաև լուր էր հասել, թե հայերի զինամթերքն արդեն հատել է: Այս երկու հանգամանքը բարձրացրել էր նրանց տրամադրությունը, և նրանք որոշեցին նոր հարձակում կատարել ու վերագրավել աղա Իրզի և Դիքտանկուրուի դիրքերը, մանավանդ որ ստացել էին սպա Զերնյավսկու հավաստիացումը, որ ինքն իր զորամասով օգնության է գալու:

Սպա Զերնյավսկին հուլիսի 20 -ին Գոլոշչապովին խնդրեց թույլատրել հայ մարտիկներին հեռացնել աղա Իրզի այրված տնից և հանձնել Թուրք կողմներին: Գեներալը թույլ տվեց, գտնելով, որ այդ ամուր դիրքը Թուրքերին շատ է հարկավոր ինքնապաշտպանության համար:

Հուլիսի 21-ին, երեկոյան ժամը 7-ին, երբ պայմանավորվածության համաձայն աղա Իրզի դիմացի հայկական դիրքերից եկած անզեն մարդիկ խաղաղությամբ սկսել էին բանակցել Թուրքերի հետ, հանկարծ մի ազդանշանով կրակ բաց արին, որի արդյունքում սպանվեց մեկ հայ զինվոր, վիրավորվեցին երկուսը, ինչպես նաև մի քանի անզեն քաղաքացիներ: Հայերն անմիջապես դիրք բռնեցին. սկսվեց հրացանաձգություն, որը շարունակվեց ամբողջ գիշեր:

Հետ մղելով Թուրքերի կատաղի գրոհը՝ հայերը,առաջանալով, գտան

[1] Տե՛ս «Դրոշակ», N 8(174), օգոստոս, 1906, էջ 115:

կարասների մեջ լցված մի քանի փութ նավթ, որը նախատեսված էր հայերի տները հրդեհելու համար:

Հուլիսի 22-ի առավոտյան հրացանաձգությունը բոլորովին դադարեց, որովհետև Թուրքերը նորից էին հայերին դիմել հաշտության խնդրանքով:

Այդ վերջին օրվա կռվի ժամանակ հայերն ունեցան 24 սպանված և 102 վիրավոր[1]: Սպանված Թուրքերի թիվն անցնում էր 190-ից[2]:

Շուշիի Թուրքերի ջախջախիչ պարտության մասին[3] լուրն անմիջապես տարածվեց ամենուր:

Վլադիկավկազում բնակվող շուշեցի Թուրքերը փոխարքային ուղարկել էին իրենց և իրենց ցեղակիցների համար խիստ բնորոշ հետևյալ հեռագիրը.

«Շուշիից՝ մուսուլմանների վիճակի մասին ստացած լուրերը մեզ անպատմելի վիշտ պատճառեցին: Երևում է, որ գեներալ Գոլոշչապովը իր կազակները հայ խմբերին միացնելով, մեր մայրերին, քույրերին, հայրերին ու եղբայրներին թնդանոթի ու հրացանի է բռնել: Փոխարքա՛, սրանից քիչ ժամանակ առաջ, երբ հեղափոխության հեղեղը Ռուսիային իր հոսանքի՝ առաջն էր գցել, եթե մեր՝ մուսուլմանների հավատարմությունը ու շոյող անկեղծությունը չլիներ, հիմա Կովկասը ընդհարումների ու հեղափոխության կրակով հրդեհվել էր: Բայց մենք մեր այդ հավատարմության ու անկեղծության մեջ հաստատ մնալով, պահպանեցինք Կովկասը: Ափսո՜ս, ափսո՜ս: Այժմ այդ նույն զորքերը, նույն կառավարությունը իրենց այդչափ հավատարմություն ցույց տվող նույն մուսուլմանների դեմ ուղղեցին իրենց թնդանոթները: Արդյոք մեզ համար կլինի՞ սրանից դառն ու արհամարհական մի վարձատրություն»[4]:

Ինչպես տեսնում ենք, այս էլ որերորդ անգամ, Թուրքերը խոստովանում էին, որ գահի նկատմամբ իրենց հավատարմությամբ զսպել են հեղափոխական շարժումը Կովկասում: Այս նամակը կրկին հաստատում էր, որ անարդար և անմիտ էին Հ.Յ. դաշնակցության դեմ սանձազերծված հարձակումները, այդ թվում սոցիալ-դեմոկրատների կողմից, թե Թուրք-հայկական կռիվների մեղքի հիմնական բաժինն ընկնում է այդ կուսակցության վրա:

Մանր պարտություն կրելով Շուշի քաղաքում Թուրքերը հուլիսի վերջին և օգոստոսի կեսերին հարձակումներ կատարեցին Ղարաբաղի հայկական գյուղերի վրա:

Օգոստոսի սկզբներին Թուրքերը շրջապատեցին Ասկերանի Խանաբադ, Խրամորդ և Քարագլուխ գյուղերը, բայց հայերը կարողացան նրանց հետ շպրտել և մեծ կորուստներ պատճառել: Այդ գյուղերի զինված խմբերից սպանվել էր 12 հոգի, որոնց թվում ինքնապաշտպանության եռանդուն ղեկավարներից

[1] Ա-Դ0, Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 166:
[2] «Դրոշակ», N 8(174), օգոստոս, 1906, էջ 115:
[3] Շուշիի Թուրքերի կրած պարտությունների մասին տե՛ս «Մշակ», N 152, 15 հուլիսի, N 162, 29 հուլիսի 1906թ.:
[4] «Դրոշակ», N 8(174), օգոստոս, 1906, էջ 115, «Ալիք», N 74, 28 հուլիսի 1906թ.:

Արտեմ Տեր-Մարտիրոսյանը:

Հետ մղելով Թուրքերի հարձակումները՝ Ասկերանի հայ գյուղերի զինված խմբերը, շարունակելով հարձակումը, մտան հակառակորդի մի շարք գյուղեր և հրդեհեցին մոտ 200 տուն: Թուրքերն օգնություն խնդրեցին Աղդամից և Ղարաբաղի Թուրքական գյուղերից: Ստանալով օգնություն՝ Ղաջարի Թուրքերը, թվով 300 մարդ, հարձակվեցին Շիկեր հայ գյուղի վրա, բայց մեծ կորուստներով հետ մղվեցին: Հարձակման ենթարկվեց նաև Սոս գյուղը, և հետևանքը նույնը եղավ: Իրենց հերթին Նախիջևանիկ գյուղի վրա հարձակում գործեցին Աղդամի Թուրքերը, բայց հայերը նրանց քշեցին մինչև Աղդամի մոտ գտնվող Շելլի Թուրքական գյուղը:

Այսպիսով, Շուշիի 1906թ. հուլիսյան կատարյալ պատերազմը և Ասկերանի գյուղերում սանձազերծված կռիվները վերջացան հայերի լիակատար հաղթանակով: Ժողովուրդն այդ հաղթանակը տարավ իր օրինակելի կարգապահության, կռվի նկատմամբ սառնասիրտ վերաբերմունքի, զինվորների ու կամավորների տոկունության և անձնազոհության շնորհիվ:

ԹՈՒՐՔ - ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ԿՌԻՎԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

1905-1906 թթ. Թուրք-հայկական պատերազմի վերջին ակորդը 1906-ի ամռանը Զանգեզուրում տեղի ունեցած ընդհարումներն էին:

1906թ. հունիսի կեսերից Զանգեզուրի հայությունը մահվան ու կյանքի նոր մաքառման պատրաստության մեջ էր: Հուլիսի սկզբներից կռիվներն այս շրջանում սուր կերպարանք ստացան: Թուրք բեկերը, որոնք ստանձնել էին ավազակախմբերի ղեկավար դերը, սկսեցին ասպատակել հայկական գյուղերը: Տգետ խուժանը, գլխավոր չարիքը մոռացած, իր ցասումն ու թույնը թափում էր այնտեղ, ուր միայն զոհեր կային, բայց ոչ՝ հանցավորներ:

Սիսիանում Թուրքերը հարձակվում էին Ախլաթյան, Ալիլու, Տոլորս, Թազաքենդ հայ գյուղերի վրա, բայց, միշտ հակահարված ստանալով և կորուստներ կրելով, փախուստի էին դիմում: Նրանք կարողացան հաջողություն ունենալ միայն 60 տուն ունեցող Ղալաջուղում:

Հուլիսի 5-ին, միացած Հաջիսամլուից եկած և քոչվոր Թուրքերի մեծ բազմության հետ, Սիսիանի մի շարք գյուղերի զինված Թուրքերը բոլոր կողմերից պաշարեցին Ղալաջուղը: Գյուղի փոքրաթիվ երիտասարդները, մեծ կորուստների գնով, երկու օր շարունակ հերոսաբար դիմադրում էին տասնապատիկ ավելի զինված ամբոխին: Հայերը տվեցին 22 զոհ, թեև Թուրքերինը ավելին էր՝ 30[1]:

Հուլիսի 8-ին Թուրքերն ավելի մեծ ուժերով հարձակվեցին Ղալաջուղի վրա: Գավառապետը և տեղի ռուսական զորամասի հրամանատարը դիտորդի դերում էին: Սաստիկ և հուսահատ դիմադրությունից հետո հայերը նպատակահարմար գտան թողնել գյուղը և, իրենց հետ վերցնելով ինչ հնարավոր էր, ապաստանեցին մոտիկ Անգեղակոթում: Այստեղ, իրենց կարգի բերելուց հետո, ղալաջուղցիները միանալով տեղի ջոկատին հարձակվեցին և ավերեցին Փուլ, Արիքլու, Շուքիար և Մալիքլար Թուրքաբնակ գյուղերը: Այդ օրերին Սիսիանում տեղի ունեցան մեկ-երկու դեպք նույնպես, բայց այդտեղ եկած պատժիչ գունդն ակտիվ գործողություններով խաղաղեցրեց շրջանը[2]:

Բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) հյուսիսարևելյան հատվածում ընկած ինածախ ու Խոզնավար գյուղերը մշտական հարձակումների էին ենթարկվում Հաջիսամլուի ավազակախմբերի կողմից, որոնց ընդհանուր ղեկավարն էր մալիբեգլուցի հայտնի ավազակ Նաղին: Նրա զոհերն էին դարձել բազմաթիվ հայեր. Զարսլուի ձորում սպանել և թալանել էր գորիսեցի Ղուկաս բեկին և տեղացի երկու քրեհտարների, հարձակվելով Շուշիից եկող քարավանի վրա, սպանել էր քարաշենցի երկու մարդու, թալանել գորիսեցիներ Ս.Միրումյանի և Գ. Մինասյանի մանուֆակտուրային ապրանքը: Նաղին մասնակցել էր Սիսիանում տեղի ունեցած համարյա բոլոր կռիվներին: Որտեղ թալան, այնտեղ նա կամ իր մարդիկ:

Շուշիի հուլիսյան կռիվներին մասնակցելուց հետո Նաղին վերադառնում է Հաջիսամլու և կազմակերպում հարձակում Գորիսի շրջանի Ինածախ գյուղի վրա:

Ինածախի դիրքերի պաշտպանները լուր առնելով այդ մասին՝ կազմ ու պատրաստ սպասում են Թուրքերի մոտենալուն: Վերջապես գալիս է Նաղին՝ 100 ձիավորի գլուխ անցած: Հարձակում սկսելով՝ Թուրքերն ընկնում են փոթորկալի կրակի տակ, ապա՝ ծուղակի մեջ: Կռիվը տևում է շուրջ 8 ժամ: Հընչակյան և դաշնակցական տղերքը, ի վերջո, փախուստի են մատնում ավազակախմբին, որը կռվի դաշտում թողնում է 7 սպանված, որոնց թվում էր նաև Նաղին: Շրջապատման մեջ ընկնելով՝ նա անձնատուր չէր եղել, կռվել էր այնքան, մինչև որ հայ զինյալներից մեկի՝ Գրիգորի գնդակը վերջ էր տվել նրա կյանքին[3]: Հուլիսի 22-ին Զանգեզուրի գավառապետը Գորիսից հեռագրում էր Շուշի՝ գեներալ Գոլոշչապովին. «Բոլոր քոչատեղիները բռնված են զինված Թուրքերի խմբերով, որոնք օգնություն են սպասում Արաքսի կողմից»[4]:

Չնայած դրան, Թուրքերն, ի վերջո, դադարեցրին հարձակումները Գորիսի

---

[1] «Մշակ», N 165, 2 օգոստոսի 1906թ.:

[2] Սիսիանում 1906-ի հուլիս-օգոստոսին տեղի ունեցած արյունահեղ կռիվների մասին տե՛ս «Մշակ», N 171, 9 օգոստոսի 1906թ.:

[3] «Մշակ», N165, 2 օգոստոսի 1906թ:

[4] «Դրոշակ», N 8(174), օգոստոս, 1906, էջ 124:

շրջանի գյուղերի վրա, քանի որ համոզվեցին, որ անկարող են անպատիժ ասպատակել:

Բացառություն կազմեցին Տանձավեր և Աղվանիք գյուղերի Թուրքերը՝ հռչակավոր Սուլթանովների ղեկավարությամբ: Այս բեկերը, որ հայտնի էին իրենց արյունածարավ ավազակություններով, մեծաթիվ խուժանի գլուխն անցած՝ կատարում էին մեկը մյուսից լկտի ու հանդուգն «քաջագործություններ»: Անպատիժ մնալուց քաջալերված՝ «հերոսներն» իրենց հանցագործությունները հասցրել էին աններելի ծայրահեղության:

Օգոստոսի 1-ին Սուլթանովների ավազակախմբերը հարձակում գործեցին Տաթևի վրա, բայց, գյուղացիների կողմից հանդիպելով ուժգին դիմադրության, փախուստի դիմեցին՝ թողնելով մի քանի դիակ:

Օգոստոսի 7-ին այդ խմբերը նորից հարձակում գործեցին, այս անգամ Տանձատափ գյուղի բինաների վրա, այրեցին ու ավերեցին ամառանոցը:

Այլևս անհնարին էր համբերել: Հարկավոր էր դաս տալ ասպատակիչ թշնամուն, քանդել Սուլթանովների ավազակաբունը, վերջ տալ անպատիժ գողություններին ու սպանություններին:

Քանի որ Գորիսի հայկական զինված ուժերը զբաղված էին շրջանի արևելյան տարածքների պաշտպանությամբ և հնարավորություն չունեին մեկնել Տաթևի ենթաշրջան, այնտեղի վանքի վանահայր Ներսես Մելիք-Թանգյանը դիմում է Սիսիանը պաշտպանող Սեբաստացի Մուրատին և խնդրում օգնություն: Մուրատն անմիջապես արձագանքում է և հիմնականում արևմտահայ հայդուկներից բաղկացած 50 հոգանոց խմբով ժամանում Տաթևի վանք: Հաջորդ օրը նրա ձիավոր զինվորների թիվը հասնում է 200-ի[1]:

Օգոստոսի 8-ի առավոտյան Սեբաստացի Մուրադը, Տաթևի վանքից դուրս գալով, իր խմբով մոտենում է Տանձավեր և Աղվանիք գյուղերին, ուր բնակվում էին Սուլթանովները, և ուր կենտրոնացած էին նրանց գլխավոր ուժերը:

Մուրատն իր խումբը բաժանում է տասնյակների: Ավոն իր տասնյակով գրավում է գյուղի աջ կողմի բարձր դիրքը: Մի ուրիշ տասնյակ, Սմբատի ղեկավարությամբ, անցնում է գյուղի ձախ կողմը: Քեռին երկու տասնյակ զինվորներով շրջում էր մոտակա բարձունքների վրա, որպեսզի դրսից թուրքերն օգնության չգան: Մուրադը, իր հետ վերցնելով Դրոյի, Մկրտչի, Կնյազի, Կայծակ Առաքելի և Արսենի տասնյակները, մտավ գյուղ: Նա զինվորներին պատվիրել էր ձեռք չտալ կանանց, երեխաներին, ծերերին, փորձ չանել որևէ բան վերցնել որևէ տնից: Այս նախազգուշացումից հետո հնչում է պատերազմական փողը: Տասնապետերն իրենց խմբերով անմիջապես մտնում են գյուղ: Երկու գյուղում էլ հրդեհը սկսում է լափել տները: Իսկ դիմադրության փորձ անող ասպատակիչներն ընկնում էին մարտիկների գնդակներից:

[1] **Միքայել Վարանդեան**, *Մուրատ*, էջ 114:

Հատկանշական է, որ ավազակապետեր բեկերը, որոնք տեսականորեն ահ ու սարսափի մեջ էին պահում շրջակա հայկական բնակավայրերը, այդ նույն «քաջերը», չկարողացան անգամ փոքր-ինչ դիմադրել և անամոթաբար փախան՝ թողնելով տուն, տեղ, զենք ու ընտանիք: Արշավանքը վերջացավ, քանդվեց ավազակաբունը: Հայ զինյալները ոչ մի զոհ չտվեցին, նույնիսկ չվիրավորվեց որևէ մեկը[1], թուրքերից սպանվել էր 15 մարդ:

Մեկ ժամ չանցած՝ խմբերը հեռացան այրվող երկու գյուղերից՝ իրենց հետ տանելով վերցրած զենքերն ու փամփուշտները:

Կռիվը նոր էր դադարել, երբ օգնության հավար եկավ Ղափանից: Մուրատը, առանց հանգիստ տալու իր խմբին, ուղղություն վերցրեց դեպի Հանքեր:

1906թ. հունիսի վերջերից Ղափանի թուրքերը հայերի դեմ նոր կռվի լուրջ պատրաստություններ էին տեսնում: Ինչպես միշտ, գործի գլուխ էին պորտաբույծ ու ձրիակեր բեկերը: Նրանց թվում էին՝ տանձավերցի հայտնի ավազակապետեր Աբդուլալի, Շիրալ և Համիդ Սուլթանովները, Հանքերից հարավ ընկած տարածքների տեր արյունարբու Հասան Աբդուլ-օղլին, Իլդիրիմ բեկը, նրա որդի Շամիր բեկը և Խանլար բեկը՝ Բարգյուշատի կողմից, Մամադ Հասան բեկը՝ Խոջահանից, Աբդուլ Սամատ և Թիմուր բեկ Ջիվանշիրները՝ Զանգելանից, Աղալար բեկը՝ Ղարագյոզ գյուղից, փիրջավանցի Նազար բեկ Սուլթանովը, Նյուվադցի Բահրամ բեկ Մելիք Աբասովը, ալիդարացիներ Մաշադի Հասան Ղուլի բեկը և Բեգլար Միրզա-օղլին[2]: Սրանց աշխատանքները համակարգում էին Ղափանի փոստատան կառավարիչ Հաջիբեկ Մելիք-Շաֆիևը, որը տիրություն էր անում Վերին Ղափանում[3]:

Նշված անձանցից մի քանիսը աշխատում էին պղնձահանքերում: Օգտվելով շրջանում ստեղծված խառնակ վիճակից՝ սրանց հրահանգով կռաթաղցի թուրքերը հուլիսի կեսերից սկսեցին ճանապարհներին հանդիպած հայերին որսալ և անհետացնել:

Ռուս իշխանությունների առջև հայերին մեղադրելու նպատակով գավառի թուրքերը զանազան սադրանքներ էին ստեղծում: Ամենատարածված սադրանքներից մեկն այն էր, որ իրենց իսկ ձեռքով կատարած հավատակիցների սպանությունները հնարավորության դեպքում փորձում էին բարդել հայերի վրա:

Այսպես, Զեյվայի շրջակայքում թուրքերը հուլիսի 18-ին սպանել էին երկու բեկերի և դիակները բերել ու գցել հայերի սահմանը: Նրանք կատարում էին նաև մարդու մտքով չանցնող սադրանքներ: Մեղրու շրջանում Ալիդարա թուրք գյուղի բնակիչները լսելով, որ գավառապետը գալիս է, գերեզմանից հանել էին նոր մեռած թուրքի դիակ, տարել ու գցել էին հարևան հայ գյուղի

[1] **«Դրոշակ»**, *N 9(175), սեպտեմբեր,1906, էջ 137:*
[2] **Մատենադարան**, *Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ.26:*
[3] *Նույն տեղում, թ. 25:*

տարածքը: Նյուվադի մի թուրք գյուղացի հողային վեճի ժամանակ սպանել էր իր համագյուղացուն: Գալով գյուղ՝ հավար էր տվել, թե չիվանիձորցիները սպանել են իր հողի հարևանին, իսկ ինքը հազիվ կարողացել է փախչելով ազատվել: Նյուվադիի թուրքերը զինված դուրս են գալիս և պատրաստվում հարձակում գործել Շիվանիձորի վրա, բայց ականատես վկաները պարզում են եղելությունը և կանխում վերահաս կռիվը:

Հուլիսի վերջերից և օգոստոսի սկզբներից արյունալի դեպքեր տեղի ունեցան Ղափանի պղնձահանքերի շրջանում, որտեղ աշխատում էր շուրջ 1500 բանվոր՝ հայեր և թուրքեր:

Հանքերի շրջանում ընկած էին 6 հայ և բազմաթիվ թուրքաբնակ գյուղեր: Աստիճանաբար սարերից դեպի ձմեռանոցներն իջնող քոչվորները, ինչպես միշտ, իրենց ոչխարների հոտերով ու նախիրներով ոտնատակ էին տալիս հայերի արտերն ու այգիները, առիթ դառնում կռիվների:

Հուլիսի 31-ի գիշերը Պեխ (Բեխ) գյուղի յայլաղում թուրքերը սպանում են խդրանցի անասնապահ Ավագին, իսկ հաջորդ օրը քոչվորները Բարաբաթում գյուղի հողերով անցնելու ժամանակ, քշում են նրա նախիրը և փորձում արագ հեռանալ: Սակայն բարձրացրած հավարի վրա գյուղացիները կտրում են հափշտակիչների ճանապարհը: Սկսվում է ընդհարում, որի ժամանակ սպանվում են Հանքերի շրջանի Ղարաչիման գյուղից երկու թուրք, որոնցից մեկը գյուղի հրոսակախմբի պարագլուխներից՝ Ջավադ բեկի տղան էր:

Ղափանի երիտասարդները տեղի դաշնակցության ղեկավարներից պահանջում են ձեռնարկել պատասխան պատժիչ գործողություններ: Կազմակերպությունը ստեղծում է մի զինված խումբ, որի մեջ մտնում են չիկահողցի Պապիկը, ագարակցի Տիգրանը, ղարաբաղցի Ցապոնը: Խմբի առջև խնդիր դրվեց՝ զինված թուրքի հանդիպելիս զինաթափ անել:

Բարաբաթում գյուղի այգիներում խումբը հանդիպում է ղարաչիմանցի բեկեր Սափրիարին, Ջեմալին, Ասադուլլահին և Իսկանդարին: Սափրիար բեկի մոտ լինում է երկու հարվածանի որսորդական հրացան: Հայ մարտիկները նրանից պահանջում են հանձնել հրացանը, բայց բեկը մերժում է՝ զենքի դիմաց պահանջելով 200 ռուբլի: Մարտիկները փորձում են հրացանը խլել ուժով, բայց Սափրիարը գնդակ է արձակում, վիրավորում Պապիկին և փախչում: Տիգրանը և Ցապոնը կրակ են բացում և սպանում երեք հոգու, իսկ Իսկանդարը փախչում է դեպի Ղարաչիման՝ թուրքերին հայտնելու կատարվածի մասին: Ճանապարհին նա հանդիպում է հայտնի ավազակ Այլահկուլի Ջավադ բեկին, հենց նրան, որի որդին, ինչպես ասվեց, մի շաբաթ առաջ սպանվել էր Բարաբաթում գյուղի նախիրը հափշտակելիս: Որդու վրեժը առնելու համար, իր շուրջը համախմբելով զինված մի մեծ բազմություն, նա օգոստոսի 2-ին հարձակվում է «Սյունիք» գործարանի վրա: Գործարանը Ղափանի պղնձահանքերի շրջանի ամենամեծ ձեռնարկությունն էր: 150 հազար ռուբլի բալանսային արժեքով այդ ձեռնարկությունը պատկանում էր

Մելիք-Ազարյանին: Այստեղ աշխատում էր մի քանի հարյուր հոգի:

Գործարանի մոտ Այլահկուլին առաջինը հանդիպում է ձեռնարկության վետերան-մեխանիկ, վերին ագուլեցի Մինաս Խոջամիրյանցին և սպառնագին հարցնում, թե որտեղ է Սափրիարը: Տեղեկություն չունենալով Բարաբաթում գյուղում պատահած դեպքի մասին, Մինասն ասում է, որ ինքը ոչնչից տեղյակ չէ և, շուտ գալով, քայլերն ուղղում դեպի գործարան: Բեկը, կրակելով թիկունքին, սպանում է նրան և իր խմբով փախուստ տալիս[1]:

Մինասի սպանությունից մի ժամ չանցած, գործարանը շրջապատվում է հարյուրավոր թուրքերով՝ եկած մոտիկ ու հեռու գյուղերից՝ Խալաջից, Ղարագյոլից, Ինջավարից, Բայդաղից, Վերին ու Ներքին Գյավալուից, Գյոդակլուից, Աղբենդից, Բայդաղից, Թեջատինից, Մուրատխալլուից, Վերին և Ներքին Ղարաչիմանից, Սիզնաղից, Սեյիդլարից, Տարազուից, Ալադինից և այլ գյուղերից:

Ձեռնարկության վրա հարձակման պահին այնտեղ էր գտնվում գործարանի կառավարիչ Ֆետվաճյանը՝ ընդամենը 7 աշխատողի հետ: Շենքի ներսում գտնվողները հրացանային կրակով առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 9-ը անհավասար կռիվ են մղում և հերոսական դիմադրությամբ 13 ժամ արգելք լինում թուրքերի ներխուժմանը գործարան: Հրացանաձգության ժամանակ պաշարվածներից սպանվում է երկու հոգի՝ Զափնի գյուղացի Սամսոն Ոսկանյանը և խդրանցի Թադևոս Աբրահամյանը, իսկ թուրքերը տալիս են մոտ 40 զոհ, որոնց մեծ մասը Ղաթար գյուղի բնակիչներ էին:

Փամփուշտները սպառած լինելով և չկարողանալով այլևս դիմադրել՝ գործարանում պաշարված հինգ հոգին կարողանում են փախչել Բարաբաթում և ազատվել:

Մտնելով գործարան՝ թուրքերը կողոպտում են ինչ հնարավոր է, որից հետո քարուքանդ անում ու հրդեհում բոլոր շինությունները[2]:

«Սյունիք» գործարանի ոչնչացումը սարսափի մատնեց հանքերի բանվորությանը, որի մեծ մասը փախավ գյուղերը, իսկ մնացածները հրաժարվեցին դուրս գալ աշխատանքի:

Սադրանքներն ու սպանությունները հայերն անպատասխան չթողեցին: Միայն արդար պատիժն էր սանձահարում թուրքերի գրգռված ախորժակը:

Հաջորդ օրերին Հանքերի շրջանի հայ և թուրք գյուղերի միջև բռնկվեցին կատաղի կռիվներ, որոնցից ավելի շատ տուժեցին թուրքերը: Օգոստոսի 3-ին գործարանի հայ բանվորները հարձակվում են Հանքերի շուկայի վրա և թալանում թուրքերի խանութները, որոնց տերերը փախել էին մոտակա գյուղերը: Նույն օրը նրանք գրոհում են Քարխանա թուրք գյուղի վրա և շատերին սրի քաշում: Կռվում սպանվում է Բաղաբուրջ գյուղացի Խաչատուր Առաքելյանը: Օգոստոսի 4-ին հայերը գրոհում և հիմնահատակ ավերում են Ինջավարը (30

[1] **Մատենադարան**, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ. 87:
[2] Նույն տեղում, թ. 88:

տուն), Էմազլուն (40 տուն), Դաշնավը (10 տուն)[1]:

. Որպես պատասխան, Իսկանդարբեգլու, Խոջահան և Ջեբրաիլի գավառի Խալլըզ, Շոթանանու, Մափրազլու, Քերիմբեկլու գյուղերի Թուրքերը, Ադիլ Բեհբուդ, Աստուգ բեկ Սուլթանովների գլխավորությամբ, օգոստոսի 5-ի վաղ առավոտյան հարձակում են գործում Ղափանի արևելյան կողմում գտնվող Ղարաբաբա հայ գյուղի վրա: Ուժերն անհավասար էին, և հայերը, դիմադրելով 14 ժամ, երեկոյան ժամը 8-ին, թողնելով գյուղը, անցնում են Ագարակ: Կռվում Թուրքերից սպանվել էր 70 հոգի, հայերից զոհվել էին Թադևոս, Միխայիլ, Բեգլար, Հարություն, Ջհանգիր և Բալա Մելիք-Քարամյանները, Աբրահամ Հայրապետյանը, Անուշկա Աթաբեկյանը, օրիորդ Սաթենիկ Հաթամբեկյանը[2]:

Շրջակա գյուղերից օգնություն ստանալով՝ օգոստոսի 6-ին հայերը շարժվեցին Քարխանա, Ջիբլու, Խալաջ, Գեչի-Շաբադին, Ջուլլու գյուղերի վրա: Իբրև պատասխան, օգոստոսի 7-ի լուսաբացին Թուրքերը մեծ ուժերով խուժեցին Տանձաթափա՝Հարուստ հայ գյուղը: Ուժերն անհավասար էին, և ժողովուրդը, տալով 5 զոհ, գյուղից հեռացավ Ագարակ՝ Թուրքերին ձգելով իր ողջ ունեցվածքը: Նույն օրը քաջ ագարակցիք հարձակվում են Վերին Իմազլու (80 տուն), Ներքին Իմազլու (40 տուն), Սարալու (60 տուն), Խաշտափ (40 տուն), Ղայտարա (30 տուն) գյուղերի վրա և հիմնահատակ ավերում: Այդ կռիվներում հայերից սպանվեց միայն մեկ հոգի՝ ագարակցի Հովհաննես Աղախանյանը, իսկ Թուրքերը տվեցին մի քանի տասնյակ զոհ[3]:

Օգոստոսի 7-ի երեկոյան Արաքսի ափի հոսանքն ի վար գտնվող Բարթազ, Օրդաքլու, Ջանգելան, Փիրջիվան, Մինջիվան գյուղերի Թուրքերը Թեմուր բեկ, Աբդուլ Սամատ բեկ Ջիվանշիրների, Փարաջ բեկ Մինջիվանսկու, Աբասկուլի բեկ Սուլթանովի առաջնորդությամբ հարձակվում են Ներքին Հանդ, Սրաշեն, Շիկահող գյուղերի վրա: Թշնամին լավ զինված էր, քանի որ անընդհատ զենք էր բերում Պարսկաստանից: Հայերի ուժգին դիմադրությունը հաղթահարելով՝ Թուրքերին հաջողվում է մոտենալ Հանդին և ամրանալ գյուղի վրա իշխող բարձունքում: Սակայն գիշերը հայերին իր խմբով օգնության է հասնում արևմտահայ հայդուկ Կորյունը և ուժգին գրոհով Թուրքերին հանում դիրքերից, որոնք, զոհեր տալով, փախչում են եկած ուղղությամբ: Հայերից նահատակվում է Հանդեցի Մելքումը, վիրավորվում են մի քանի հոգի:

Թշնամուն քշելուց հետո անվեհեր Կորյունն իր խմբով հարձակվում է Քոլլու Ղշլաղ (30 տուն), Սանալու (30 տուն), Մթնաձոր (15 տուն), Ջուման (20 տուն) գյուղերի վրա և ավերում: Սպանվում են մեծ թվով Թուրքեր[4]:

---

[1] **Մատենադարան**, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ. 88:
[2] Նույն տեղում, թ.թ. 89-90:
[3] Նույն տեղում, թ. 90:
[4] Նույն տեղում, թ.թ. 92-93:

Նույնիսկ այդ ջախջախիչ պարտություններից հետո Թուրք բեկերը չեն հանգստանում և ավերիչ նոր կռվի են պատրաստվում Ղափանի հայության դեմ: Դա էր վկայում այն նամակը, որ Զանգիլանի հայտնի Իբրահիմ և Ռուստամ բեկերին ուղարկել էր Թիմուր բեկ Մինջիվանսկին: Նամակը, որ ընկել էր հայերի ձեռքը, հետևյալ բովանդակությունն ուներ.

« Սիրելի Իբրահիմ բեկ և Ռուստամ բեկ

Քանի որ հայերը, հարձակվելով Գյոդակլուի և նրա հարևան փոքր գյուղերի վրա, քանդել ու հիմնահատակ ավերել են, խնդրում եմ նամակս ստանալուն պես՝ ձեր և մեր զշլաղներից հավաքել բոլոր տղամարդկանց՝ իրենց ձիերով, իսկ ով ձի չունի՝ ոտքով: Ոչ մի տղամարդ չպիտի խուսափի վճռական կռվից: Կռիվը պիտի լինի համատեղ՝ ձերը և մերը: Պետք է գնալ մինչև վերջ: Թուղթս ստանալուն պես՝ պատասխանը սուրհանդակի միջոցով ուղարկեք մեզ՝ Աղալար բեկի անունով: Մենք մեր մարդկանցով պատրաստ ենք:

Թիմուր Ջիվանշիր Աբդուլսամատ Փարաջ Մինջիվանսկի»[1]:

Պարզ էր, որ նոր, էլ ավելի մեծ վտանգ էր կախվելու Ղափանի վրա: Բայց Թուրքերի ծրագիրը խափանվեց:

Աղվանիք և Տանձավեր գյուղերի տերեր Սուլթանովների ավազակաբունը հիմնահատակ ավերելուց հետո, Սեբաստացի Մուրադը, առանց հանգիստ առնելու, իր 200 հոգանոց խմբից վերցնում է 20 արևմտահայ զինվորների և Կայծակ Առաքելի հետ շտապում է Ղափան՝ Թուրք հորդաներին ջախջախիչ հարվածներ տալու և շրջանի հայ գյուղերի համար ստեղծված վտանգը վերացնելու նպատակով:

Ներսես վրդ. Մելիք-Թանգյանը վկայել է, որ Մուրատի երևալը և հայդուկների ներկայանալը Ղափան «այնքան անակնկալ կերպով կատարվեց, որ ժողովուրդը մի րոպե երազ էր կարծում»[2]:

Ժամանելով Ղափան՝ Մուրադը պարզեց, որ տվյալ պահին Ղափանի համար գլխավոր վտանգ է ներկայացնում շուրջ 80 տուն ունեցող Թուրքաբնակ Ղաթար գյուղը, որն ընկած էր «Ղաթար» պղնձահանքի վերևում* Սայադ-դաշ լեռան թեք լանջին, իսկ առջևում խոր ձոր էր՝ հանքային բազմաթիվ փորվածքներով[3]:

Ղաթարի Թուրք բնակչությունը հանքերի ամբողջ շրջանում հայտնի էր իր ասպատակություններով: Հուլիսի վերջերին դաթարցի ավազակախումբը հարձակվել էր Բեխ գյուղի վրա, հետո այնտեղից շուռ գալով, կտրատել «Սյունիք» գործարան տանող հեռախոսաթելերը՝ այն դրսի աշխարհից մեկուսացնելու դիտավորությամբ: Այդ գործողությունը «Սյունիքի» վրա հարձակվելու ծրագրի մի մասն էր:

---

[1] **Մատենադարան**, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ. 93:
[2] **Միքայել Վարանդեան**, Մուրատ, էջ 114:
* Ղափանի պղնձահանքերի շրջանը հայտնի էր նաև այդ գյուղի անունով՝ «Ղաթար»:
[3] **«Հայրենիք»**, N 2 (394), դեկտեմբեր, 1958, էջ 73:

Ղաթարի ավազակախմբին միացել էին Թարաքամա ձիավորներ, որոնց մշտական պարապմունքը նույնպես ավազակությունն էր: Սրանք եկել և ժամանակավորապես տեղավորվել էին Ղաթարում՝ նրանց համար պատրաստած մոտ 80 վրաններում: Միացյալ ուժերով ղաթարցիներն ու Թարաքամա Թուրքերը ասպատակում էին աջ ու ձախ, աղետներ բերում հայկական գյուղերի գլխին:

Թուրքերի հարձակման հաջորդ թիրախ էր դարձել Հարևան Կավարտ գյուղը: Նրանք որոշում էին ընդունել մեծաթիվ ուժերով պաշարել գյուղը և այդ նպատակով օգնության էին կանչել շրջակա Փարիջան, Փուրուզլու, Մեհրալլու, Սալդաշ, Աղքենդ, Սուրալու Թուրք գյուղերից բավական թվով մարդկանց: Դրանից բացի, Ղաթար էին եկել հանքերում բանող պարսկահպատակ բանվորներ և քոչվորների նորանոր ձիավոր խմբեր[1]:

Իմանալով իրենց վրա ղաթարցիների առաջիկա հարձակման մասին՝ կավարտցիները պատրաստվեցին դիմադրության: Հաշվարկելով իրենց հնարավորությունները՝ նրանք, սակայն, եկան այն համոզման, որ միայնակ անկարող են պաշտպանվել, ուստի դիմեցին Հարևան հայկական գյուղերի օգնությանը:

Մուրադը շտապում է Կավարտ՝ նպատակ ունենալով կտրել թշնամու ճանապարհը և գյուղն ազատել ավերումից: Կավարտ են գալիս նաև Հարևան հայկական գյուղերից, և ստեղծվում է մի ամուր բռունցք: Նա վճռում է չսպասել Թուրքերի հարձակմանը, այլ նախահարձակ լինել և քանդել ավազակների բույնը: Իր խմբին միացնելով կավարտցիներից մի քանիսին՝ նա շարժվում է Ղաթարի վրա:

Կռիվն սկսվելուց մեկ օր առաջ՝ օգոստոսի 11-ին, «ռուս Հայրենասերների»՝ հանքերում գտնվող խմբի անդամներից մի սադրիչ՝ Կուլիկ ազգանունով*, գնում է Ղաթար՝ Թուրքերին օգնության: Ավելին, վերջիններս նրան ընդունում են իբրև իրենց ղեկավար: Կուլիկը կազմում է կռվի պլանը, նրա ցուցումով գիշերը գյուղի շուրջը դիրքեր են փորվում:

Օգոստոսի 12-ի առավոտյան, դեռ լույսը չբացված, մոտենալով Ղաթարին, Մուրատի խումբը բոլոր կողմերից պաշարում է գյուղը:

Թուրքերի ղեկավարներն ամբողջ գիշեր ժողովի էին նստել, քննել Կավարտի վրա հարձակման ծրագիրը և նշանակել գրոհի պահը՝ օգոստոսի 12-ի ցերեկվա ժամը 10-ը:

Բայց թշնամու մտադրությունը կանխվեց: Շուրջ 30 հոգի հաշվող մարտիկների փոքրաթիվ խումբը Մուրադը բաժանեց երեք մասի: Մի մասը, որի կազմի մեջ էին Սմբատը, Վահանը և տեղացի մի քանի ուրիշ մարտիկներ,

[1] Տե՛ս «Դրոշակ», N 1 (179) , հունվար, 1907, էջ 5-8:

* Գրականության մեջ Կուլիկը սխալմամբ ներկայացված է որպես Բաքվից ուղարկված կազանցի թաթար, մասնագիտությամբ՝ անասնաբույժ:

գրավեց գյուղի դիմացի ամուր դիրքը: Մի ուրիշ տեղում ամուր դիրք բռնեցին Ստեփանն ու Ալեքսանը՝ տեղացի մարտիկների հետ: Մուրադը մնացած 16 զինյալների հետ պիտի ներխուժեր գյուղ:

Թվում էր, թե Մուրատի՝ իր էությամբ խելահեղ ծրագիրը անիրագործելի է: Չէ՞ որ երեք տասնյակ մարտիկների դիմաց մի քանի հարյուր զինված Թուրքեր էին:

Հրամանատարը քաջ գիտակցում էր, թե ինչ աներևակայելի գործ է ձեռնարկում, և թե ինչպիսի վտանգի տակ է դնում մարտիկների կյանքը: Ուստի նա որոշեց իմանալ, թե արդյո՞ք 16 հոգու մեջ կան այնպիսիները, որոնք, գիտակցելով ահռելի վտանգը, կուզեին հրաժարվել մարտի մեջ մտնելուց: Մուրատի հարցին բոլորը միակամ պատասխանեցին, որ իրենք քաջ գիտակցում են վտանգի մեծությունը, բայց նաև գիտակցում են իրենց պարտքը հարազատ ժողովրդի հանդեպ, գիտակցում են կատարվելիք գործի կարևորությունը: Նրանք պահանջեցին բոպե առաջ խուժել Ղաթար և Թուրքերից վրեժխնդիր լինել՝ կատարած անլուր չարագործությունների համար:

Դրանից հետո Մուրադը իր ընկեր-մարտիկներին հիշեցրեց նրանց ասպետական պարտքը՝ ձեռք չտալ Թույլերին, կանանց, երեխաներին, ծերերին*:

Հրամանատարի նշանով դիրքերից սկսվեց հրացանային ուժգին կրակ, ապա հաջորդ ակնթարթին Մուրատն իր խմբով խուժեց գյուղ: Սկսվեց սոսկալի կռիվ, որը տևեց մի ամբողջ օր:

Մեկուկես տարի տևած Թուրք-հայկական պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում Ղաթարի կռիվը հայերի կողմից մղած ամենահերոսական կռիվներից մեկն էր, եթե ոչ՝ ամենահերոսականը:

Երկու կողմից գնդակների ճարճատյունը, կանանց և երեխաների սրտակեղեք, աղեկտուր ճիչն ու ողբը, արյունռուշտ ավազակապետերի «Եա՛ Ալի» գոռում-գոչումները, հայ հերոս մարտիկների հանդուգն, արիասիրտ, անվեհեր հարվածները իսկական պատերազմական դաշտ էին ստեղծել: Թուրքերի տներից կարկտի պես տեղում էր գնդակների տարափ, բայց դա չէր կանգնեցնում Մուրատի մարտիկներին, որոնք սլանում էին դեպի գյուղի ներքևի խիտ բնակեցված մասը: Թուրքերը սարսափի մեջ էին: Ճեղքելով նրանց շարքերը՝ Մուրատը սուրում էր առաջ: Նրա հետ էին Ավոն, Մկրտիչը, Կայծակ Առաքելը, Դրոն՝ իր տղաներով:

* Ներսես վրդ. Մելիք-Թանգյանը վկայում է, որ Մուրադը Թուրքերից «ոչ մեկին չէր դիպչում, չէր վնասում մինչև որ առիթ չտային իրենք՝ Թուրքերը: Մուրադը և իր օգնականները ո՛չ մի տեղ հարձակողական կռիվ չեն սկսել, - մեր կռիվները եղան միշտ պաշտպանողական: Հարձակողականի ձեռնարկում էին այն ժամանակ միայն, երբ վտանգը մեծ էր լինում: Մուրադը կռիվների ժամանակ բնա՛վ չէր Թույլատրում, որ յուր մարտիկները Թուրք կին կամ երեխա սպանեին: Նա մեծահոգի էր թշնամու անմեղ կանանց և երեխաների հանդեպ» (**Միքայել Վարանդեան**, Մուրատ, էջ 118):

Թուրքերի ղեկավարները սկզբում հայերի անակնկալ հարձակումից շվարել և կորցրել էին գլուխները: Որոշ ժամանակ անց ուշքի գալով՝ նրանք իրենց ենթականերով կենտրոնացան բարձր տներում և, ուժեղ դիրքեր գրավելով, սկսեցին նեղել հայ մարտիկներին:

Մարտում առաջինը զոհվեց տեղացի քաջ զինվոր շիկահողցի Պապինը: Թշնամու գնդակը խոցել էր նրա սիրտը, և հերոսը չէր հասցրել նույնիսկ ընկերներին մի խոսք ասել:

Մահաբեր գնդակը հասավ նաև Անդրանիկի ու Հրայրի հանդուգն ու հերոս նախկին զինվորներից Կալոյին: Զունկնդրելով ընկերների թախանձագին խնդրանքին՝ նա, դիրքից դուրս թռչելով, հասակով մեկ վազեց առաջ, որպեսզի միայնակ մխրճվի թուրքերի դիրքը: Մեռնելիս Կալոն հասցրեց հազիվ շշնջալ և արևմտահայ ընկերներին խնդրել չմոռանալ իրեն ու անտեր չթողնել իր ընտանիքին, երկու երեխաներին:

Կռվի տաք ժամանակ վիրավորվեցին Կայծակ Առաքելը, Քուրդ Խեչոն (իգդիրցի), Եղիշեն՝ երեքն էլ արևմտահայ ազատագրական պայքարի նշանավոր մարտիկներ: Տեսնելով իրենց ընկերոջ՝ Կալոյի մահը, նրանք նույնպես դուրս եկան դիրքերից և, մոռանալով իրենց անձը, աջ ու ձախ կրակ էին տեղում թուրքերի վրա: Թե քաջության ինչպիսի հրաշքներ էին գործում նրանք, բավական է բերել Կայծակ Առաքելի օրինակը. Թշնամու գնդակը մտել էր նրա որովայնի մեջ, ծորում էր հերոսի արյունը, բայց նա դրանից հետո էլ հինգ ժամ անդադար շարունակում էր կռվել:

Կռիվը գնալով թուրքերի համար դառնում էր օրհասական: Նրանք կռվում էին քաջությամբ, բայց տալիս էին մեծ կորուստներ:

Կեսօրին, երբ Մուրադը պատում էր յուրայինների դիրքերը և խրախուսում կռվող ընկերներին, վազելով նրա մոտ եկան մի քանի պարսկահպատակ թուրքեր, որոնց ընտանիքները մնացել էին գյուղում: Նրանք հայ հրամանատարին խնդրեցին իրենց կանանց ու երեխաներին դուրս բերել գյուղից: Մուրադը մարտիկներին կարգադրեց դադարեցնել կռիվը: Ավելին, նա մարտիկներից առանձնացրեց երկու հոգու, որոնք, մի տեղ հավաքելով տեղացի և դրսից եկած կանանց, երեխաներին, ծերերին, ինչպես նաև պարսկահպատակ մշակներին, նրանց ուղեկցեցին մոտակա ապահով Շահարջիկ թուրքական գյուղը: Կանանց, ծերերի ու երեխաների մի մասը, որ փակվել էր մզկիթում, առայժմ ապահով զգալով, չմիացավ գյուղից դուրս եկողներին: Մուրադը մարտիկներին խստիվ պատվիրեց մոտ չգնալ մզկիթին:

Երբ հայ զինվորներն իրենց պարտքը կատարելուց հետո վերադառնում են Շահարջիկից, Աբդուլ Սամատ բեկ և Թեմուր բեկ Ջիվանշիրների կարգադրությամբ նրանց մարդիկ խուժում են այնտեղ, թալանում պարսկահպատակ ողորմելի աղքատներին և սպանում նրանցից մի քանիսին՝ զաթարցիների կրակին չմասնակցելու համար: Այդ քստմնելի դեպքը առաջ բերեց խիստ թշնամություն պարսկաստանցի և Սյունիքի թուրքերի միջև:

Քանի դեռ կռիվը չէր վերսկսվել, Մուրադը թուրք տղամարդկանց առաջարկեց հանձնել զենքերը և անձնատուր լինել՝ խոստանալով խնայել նրանց կյանքը: Խորհրդակցելու և պատասխանելու համար թուրք կռվողներին նա տվեց չորս ժամ ժամանակ: Ի վերջո թուրքերը մերժեցին: Մուրատն իր առաջարկը կրկնեց երկու անգամ ևս և երկու անգամն էլ մերժում ստացավ: Թուրքերը հույսը դրել էին իրենց դիրքերի անմատչելիության և ուժերի գերակշռության վրա: Մեծ զոհեր տալուց հետո էլ թուրք կռվողներից դեռ մնացել էր ավելի քան 120 հոգի: Սկզբում սրանց մեծ մասը հակված էր հանձնելու զենքերը, բայց այդ բանին արգելք եղավ Կուլիկը՝ թուրքերին կոչ անելով կրռվել մինչև վերջին փամփուշտը:

Դիրքից դիրք իրար խրախուսելով՝ թուրքերը հանկարծ կրակ բացեցին հայ մարտիկների վրա: Առաջին պահին իրենց անզգուշության պատճառով զոհ գնաց մոտակայքում գտնվող վեց հայ գյուղացի:

Մուրադը մարտիկներին հրաման արձակեց՝ ռումբերով ու դինամիտով պայթեցնել թուրքերի դիրքերը: Մարտիկներն ընդհուպ մոտեցան մեծ տներին: Պայթեցնելով դիրքերը՝ հայ զինյալները երեկոյան դեմ անվախ ներս խուժեցին ամեն կողմ: Հերոսաբար կռվում էին բոլորը, բայց իրենց քաջությամբ աչքի ընկան հատկապես Գևորգը, Վահանը և Օսկանը:

Կարճ ժամանակում Թշնամու բոլոր դիրքերն ավերակ դարձան: Հուսահատ թուրքերը գնդակների տարափի տակ սկսեցին փախչել տարբեր ուղղություններով: Հայ մարտիկները գրավեցին ամբողջ գյուղը, որը վառվում էր հրդեհի բոցերի մեջ: Միակ շինությունը, որ չէր մատնվել կրակի՝ մզկիթն էր: Մուրադը խիստ պատվիրել էր չայրել:

Այս կատաղի կռվի ժամանակ զինվորները երբեք չմոռացան թույլերի մասին հրամանատարի պատվերը, ամեն կերպ աշխատեցին չվնասել կանանց ու երեխաներին: Կռվից հետո հայ մարտիկները կրակների միջից ազատեցին դեռ գյուղում մնացած շուրջ 50 կնոջ ու երեխայի, որոնց գիշերը պահելուց հետո օգոստոսի 13-ի առավոտյան ուղարկեցին մոտակա թուրքական գյուղը:

Մուրատի ռազմագիտական ձիրքի և մի բուռ արևմտահայ հայդուկների ու տեղացի քաջերի ոգևորիչ անձնվիրության շնորհիվ էր, որ հաջողվեց հաղթել Ղաթարի բազմաքանակ թուրքերին և գրավել գյուղը:

Կռիվը դադարեց երեկոյան ժամը 8-ին: Թուրքերն այդ օրը տվել էին 300-ից ավելի սպանված[1]: Նրանց մեջ էր Կուլիկը:

Հայերից սպանվել էր 11 հոգի: Բացի տաճկահայ զինվոր Կալոյից և շիկահողցի քաջ Պապինից, զոհվել էին՝ բարաբաթումցի Նիկոլայ Տեր-Մաթևոսյանը, բաղաբուրջցի Խանգանոս Իսրայելյանը, առաջաձորցի Խաչատուր և Անդրի Թումանյանները, գյուտկումցի Պետրոս Պետրոսյանը, կավարտցի Մարգար

[1] «Հայրենիք», N 2(394), դեկտեմբեր, 1958, էջ 73:

Մկրտչյանը, նորաշենցի Թումանյանցը, չափնեցի Բախչի Փիրյանը և մի ուրիշը, որի անունն ու ազգանունը չհաջողվեց պարզել:

Տասն և հինգ ժամ գրեթե անընդհատ կռվելուց հետո, սոված ու հոգնած մարտիկներն իջան դիրքերից: Ղաթարի հաղթական կռիվը դեռ հանգստություն չբերեց Ղափանի շրջանին:

Դեռ չէր վերջացել Ղաթարի կռիվը, երբ թուրքերը բոլոր կողմերից շրջապատեցին Քաջարանը: Հայերը երեք օր համառ դիմադրություն ցույց տվեցին և թշնամուն արգելք եղան խուժելու գյուղ: Կռվի երրորդ օրը Մեղրիի և Հանքերի կողմից օգնության եկան երկու տասնյակ երիտասարդներ և, թիկունքից հանկարծակի հարձակում գործելով թուրքերի վրա՝ նրանց փախուստի մատնեցին մեծ կորուստներով:

Այնուհետև օգնության եկած երիտասարդների հետ Քաջարանի հայերը համատեղ ուժերով ներխուժեցին Օխչի, Աթկրզ, Աջրլու, Փիրդավուդան, Շաբադին, Առջազուր և Բողաջը թուրք գյուղերը և ավերեցին:

Օխչի ձորի ընդհարումների ընթացքում թուրքերը տվեցին 100-ից ավելի զոհ: Զոհեր ունեցան նաև հայերը՝ 10 հոգի:

Նույն օրերին ոչ մեծ ընդհարումներ տեղի ունեցան Հանքերի շրջանից դեպի հարավ, Բասուտ գետի հովտում ընկած հայկական 6 գյուղերի՝ Շիշկերտի, Կիմանցի, Ծավի, Հանդի, Շիկահողի և Սրաշենի շուրջը: Հայերը միշտ հաղթական էին[1]:

Օգոստոսի 14-ին մեծ թվով թուրքեր հարձակում գործեցին Ղափան-Բարգյուշատի հովտում գտնվող 35 տնից բաղկացած Ուջանիս գյուղի վրա: Թեև հայերը համառորեն դիմադրում էին, բայց ուժերը խիստ անհավասար էին: Ուջանիսցիները պատրաստվում էին թողնել գյուղը, երբ հարևան Ագարակ գյուղից օգնության հասած ուժերը, միանալով տեղի պաշտպաններին, հակահարձակման անցան և թուրքերին հալածելով՝ դուրս քշեցին գյուղի դաշտերի սահմաններից:

Հաքարուի, Բարգյուշատի և Ղարաբաղի կողմերից եկած խուժանը տեղացի թուրքերի հետ օգոստոսի լույս 15-ի գիշերը նորից հարձակվում է Ուջանիս գյուղի վրա և գրավում նրա բոլոր կողմերում գտնվող դիրքերը: Այդ ժամանակ գյուղում էր գտնվում 7 հոգանոց մարտիկների խումբը՝ դաշնակցական Հայրիկի գլխավորությամբ: Սրանց միանում են գյուղացիները և համատեղ հակահարձակման անցնում երկու հազարի հասնող թշնամու վրա և նրան, մեծ կորուստներ պատճառելով, հետ մղում: Հայերը տալիս են 2 սպանված և 9 վիրավոր:

Ընդհարումներ տեղի ունեցան նաև Հանքերի շրջանից արևմուտք՝ Օխչի գետի վերին հոսանքում, ուր բազմաթիվ թուրք գյուղերի հարևանությամբ գտնվում էր հինգ հայ գյուղ՝ Քաջարանը, Հանդը, Քրդիկենցը, Մազրան և Փուրխուտը:

Օգոստոսի 22-ին Ուջանիսի վրա տեղի է ունենում թուրքերի երրորդ հարձակումը: Հաքարուի, Բարգյուշատի և Ղարաբաղի կողմերից նրանք ստացել էին նոր համալրում. բացի այդ՝ մոտ 1500 ձիավոր, Ռահիմ և Ալի խաների առաջնորդությամբ, Պարսկաստանից խուժել էին Ղափան և միացել Ուջանիսի վրա հարձակման նախապատրաստվող թուրքերին: Սկսվում է կռիվը, և թշնամին սկզբում նեղում է գյուղի պաշտպաններին: Բայց ամենակրիտիկական րոպեներին, արևը ծագելիս, օգնության է հասնում Սեբաստացի Մուրադը՝ իր խմբով: Դաժան կռվին չդիմանալով՝ թուրքերն սկսում են լեղապատառ փախչել: Հայերը տալիս են 5 զոհ և 13 վիրավոր: Ասում էին, թե եկած թուրքերի կեսը չէր վերադարձել: Զանգեզուրի նոր նշանակված փոխգավառապետ Միտկևիչի վկայությամբ՝ Ուջանիսի կռվում թուրքերի միայն սպանվածների թիվն անցել էր 600-ից[1]:

Անդրկովկասում թուրք-հայկական ընդհարումների սկիզբը Բաքվի 1905-ի փետրվարյան կոտորածն էր, ուր հանկարծակիի եկած հայերը հազիվ կարողացան պաշտպանվել: Ընդհարումները վերջացան Ուջանիսի կռվով, որտեղ հայերը պաշտպանության մասին մտածել անգամ չէին ուզում և **հերոսական խոյանքով փակեցին Անդրկովկասի պատմության արյունալի էջը:**

Սիսիանից Մուրատի Տաթև գալուց և այնտեղից Ղափան գնալուց հետո անցել էր ընդամենը մեկ ամիս, բայց Սյունիքի և Արցախի պատկերն ամբողջովին փոխվել էր: Գյուղերի միջև սկսվեց հաղորդակցություն, ճանապարհները բացվեցին, ազատ երթևեկ էր կատարվում դեպի Շուշի, Եվլախ, Բաքու, Թիֆլիս և այլ վայրեր: Զանգեզուրցին երախտապարտ էր արևմտահայ զինվորներին: Մելիք-Թանգյանը հետևյալ բնորոշ փաստն է հաղորդել. «Հիշում եմ, երբ ինքնապաշտպանության մի խումբ՝ 100 զինված մարտիկ, գնում էր հարևան գյուղին օգնության՝ բազմահազար թուրք ամբոխին քշելու համար. հայ կանայք թափվում էին փողոցները և, հուզված ձայնով, արցունքը աչքերին, կանչում էին. «Ձեր կյանքին մեռնեմ, որտեղի՞ց եկաք, մի երկու ամիս առաջ գայիք՝ ի՞նչ կլիներ...»»[2]:

Թեև Զանգեզուրի ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարը դաշնակցությունն էր՝ իր անձնվեր գործիչներով, հերոսական խմբապետերով և մարտիկ-հայդուկներով, բայց գավառի հնչակյան մարտիկները նույնպես հերոսական բազմաթիվ գործերի հեղինակներ դարձան: Ինքը՝ դաշնակցական Միքայել Վարանդյանը, հաճույքով էր արձանագրում այդ իրողությունը: «Հնչակյաններն էլ, - գրել է նա, - որոնք թեև քիչ էին, բայց, այնուամենայնիվ, իրենց բարոյական և զինական մասնակցությունը ցույց տվին և միացան

[1] «Դրոշակ», N 9(175), սեպտեմբեր, 1906, էջ 138:

[1] «Դրոշակ», N 2(180), փետրվար, 1907, էջ 26:
[2] Միքայել Վարանդյան, Մուրատ, էջ 114-115:

Հ.Ց. դաշնակցության՝ պաշտպանելու համար Ղարաբաղ-Զանգեզուրի հայության կյանքը, պատիվն ու գույքը: Այս միացյալ, եղբայրական կուռ ջանքերի շնորհիվ էր, որ վերահաս բնաջնջումից ազատվեցին Սյունիքը, Շուշին, Նախիջևանը, Մեղրին և այն բոլոր վայրերը, որոնց մեջ ծնունդ էին առել հայ-թուրքական արյունալի ընդհարումները»[1]:

ԴԱՌԸ ՊՏՈՒՂՆԵՐ

1906թ. օգոստոսի 22-ին դադարեցին թուրք-հայկական ընդհարումները: Դադարեցին, բայց իրենց հետևից թողեցին արյուն ու արցունք, ավեր ու աղքատություն: Ժողովրդի առջև կանգնել էր անհուն վիշտը՝ իր բոլոր սքեմներով:

Երբ անցավ մղձավանջը, երբ լարված կրքերը հանդարտվեցին, այնժամ «մարտնչող երկու կողմերն էլ զգացին, թե որքա՜ն սխալներ են գործել, որքա՜ն անմեղ զոհերի պատճառ են դարձել»[2], - գրում էր դաշնակցության «Խարիսխ» թերթը:

Երկիրը ողողվել էր հայի և թուրքի արյունով, և մարդկային կորուստներն անդարմանելի էին:

Թե՛ թուրքերը և թե՛ հայերը հողին էին հանձնել հազարավոր կյանքեր: Զարդերը չէին խնայել կին ու տղամարդ, ծեր ու երեխա: Երկուսն էլ իրենց մտերիմներին կորցրած սգավորներ էին, երկուսն էլ՝ դժբախտ:

Հայոց ժողովրդական դիմադրությունը շատ հերոսական էջեր գրեց, բայց նա իր շարքերից տվեց նորանոր նահատակներ, որոնք կսկիծով լցրին հայության սիրտը: Ժողովրդի պաշտպանության զոհասեղան բարձրացան թանկագին կյանքեր՝ սգի մեջ թողնելով իրենց հարազատներին ու ազգակիցներին, նաև՝ մշտնջենական երախտագիտության զգացում թողնելով իրենց հայրենակիցների՝ երկյուղած հարգանքով լեցուն սրտերում:

Զոհերը գնացին, իսկ ապրողներին մնաց տեսնել անօրինակ ավերումների, կողոպուտների, հրդեհումների, մարդկային պատվի, խղճի ու գաղափարների դեմ բարբարոսական արարքների հետևանքները և ողբալ դառնագին: Խորտակվել էին բյուրավոր մարդկանց հույսերն ու իղձերը, ապրելու փափագն այն կարճատև շրջանում, որ կոչվում էր կյանք:

Մահմեդականները, որոնք սկզբում իրենց հաղթող էին համարում, հետո համոզվեցին, որ ազգերի թշնամությունից օգուտ չունի ոչ ոք, և մեկի դժբախտությունն ու սնանկությունը դառնում է աղետ նաև մյուսների համար:

Ահռելի էին գործված ավերները արդյունաբերության մեջ:

[1] Միքայել Վարանդեան, Մուրատ, էջ 115:
[2] «Խարիսխ» (Թիֆլիս), N 10, 14 հուլիսի 1907թ.:

Վիթխարի մնաս էր կրել Բաքվի նավթարդյունաբերությունը: Աղետն այստեղ այնպիսի ընդարձակ ծավալ էր ստացել, որ մնասը դարձել էր ընդհանուր և իր ծանրությունն էր դրել քաղաքի բոլոր ազգությունների, ազգաբնակչության բոլոր խավերի վրա:

Անհաշիվ էին հատկապես հայ նավթարդյունաբերողների և մյուս մեծահարուստների կորուստները: Հայ հարուստներից շատերը հեռացան քաղաքից և հաստատվեցին ուրիշ վայրերում Պետերբուրգում, Մոսկվայում, Պյատիգորսկում և այլուր:

Ինչ վերաբերում է թուրք խոշոր կապիտալիստներին, ապա նրանք նույնպես կոտորածներից ու ավերներից ոչինչ չշահեցին: Սխալ դուրս եկան նրանց այն հաշիվները, թե, քաղաքի և նավթային շրջանների հայերին ջարդելով, կամրապնդեն իրենց տնտեսական դիրքերը:

Դա տեղի չունեցավ: Ավելին, իրենց գործողություններով նրանք ըստ էության փութացրին հեղափոխական շարժումը, որը, վերջին հաշվով, իրենց մահն էր:

Մեծ մնաս կրեց թուրք միջին և մանր բուրժուազիան, որը տնտեսապես մեծ չափով կախված էր հայ բուրժուազիայից:

Բաքվի թուրքերի մի նշանավոր մասը տնատերեր էին: Կոտորածներից առաջ այդ տներում բնակվում էին մեծ թվով հայեր, որոնք փետրվարյան դեպքերից սկսած՝ կամ բոլորովին հեռացան քաղաքից և կամ տեղափոխվեցին քաղաքի մյուս, ավելի ապահով մասերը: Հայերի օրինակին մասամբ հետևեցին և մյուս քրիստոնյաները: Թուրքերի տները դատարկվեցին, քանի որ դրանք վարձել ցանկացողների թիվը խիստ նվազեց: Բնակարանների վարձերի կտրուկ էժանացումը մեծապես խփեց տնատերերի եկամուտներին:

Մինչև կոտորածները թուրքերի ձեռքին էր առևտրի մի քանի ճյուղերի գերակշիռ մասը, օրինակ՝ մթերքի, կանաչեղենի և մրգի վաճառքը, մսի հայթայթումը, շրջիկ մանր առևտուրը: Եվ, անկասկած, հայերը, իբրև սպառողներ, մեծ օգուտ էին տալիս թուրք առևտրական դասակարգին: Բայց կոտորածներից հետո, երբ հայերի երթևեկությունը դժվարացավ քաղաքի այն մասերում, ուր գտնվում էին թուրքերը, համապատասխանաբար դժվարացավ նաև նրանց առևտուրը հայերի հետ:

Անկասկած, թուրքերի համար ստեղծված նոր պայմանները բնավ մխիթարական չէին. նրանց համար ամենևին օգտակար չեղավ ոչ Բաքվի հայկական մասի ավերումը և ոչ էլ ընդհանրապես քաղաքի հայկական տարրի հետ թշնամանալը:

Մեծ ավերածությունների ենթարկվեց Անդրկովկասի ուրիշ վայրերի արդյունաբերությունը և հանքագործությունը: Հանքերն ու գործարանները կանգ էին առել Ղափանում: Դրա գլխավոր պատճառները հիմնականում երկուսն էին. 1. Ճանապարհների անապահովության պատճառով կանոնավոր չէին ստացվում պայթուցիկ նյութեր և այլ անհրաժեշտ ապրանքներ, մյուս

կողմից, Ղափանում արդյունահանված պղինձը հնարավոր չէր ուղարկել Եվլախ՝ գնացքներին բեռնելու համար, 2. Փոստ-հեռագրական աշխատողների պարբերաբար տեղի ունեցող գործադուլների պատճառով ժամանակին փող չէր ստացվում հանքերը և գործարանները աշխատեցնելու համար:

Նույնը վերաբերում էր Գետաբեկի և այլ վայրերի հանքարդյունաբերությանը:

Արդյունաբերական վայրերում կատարված աննախադեպ ավերմունքների գլխավոր հետևանքը գործազրկությունն էր:

Տասնյակ հազարավոր հայ բանվորներ, հատկապես Բաքվի նավթահանքերում, զրկվել էին աշխատանքից: Ամեն մի աշխատանք ունեցող բանվորի կողքին պատսպարվում էր մի քանի անգործ: Ցուրաքանչյուր հանրակացարանում կուտակված էր 50-100 գործազուրկ բանվոր, որոնք մի կերպ քարշ էին տալիս իրենց գոյությունը: Շատերն էլ, որոնք զրկված էին և՛ աշխատանքից, և՛ հանրակացարանից, մնում էին բակերում ու փողոցներում բաց երկնքի տակ: Օրերով, շաբաթներով ու ամիսներով սրանք աշխատանք էին խնդրում, բայց շարունակ լսում էին նույն պատասխանը՝ «գործ չկա»:

Իրենց թշվառ գոյությունը Բաքվում քարշ տվող հայ բանվորների մեծ զանգվածներ, ինչպես արդեն քանիցս նշվել է, հեռացել էին իրենց գյուղերը՝ ապրուստի միջոցներ գտնելու հույսով:

Օրինակ, Բաքվում գտնվող զանգեզուրցի բանվորները մտածում էին հայրենի վայրեր վերադառնալով աշխատանք գտնել Ղափանի պղնձահանքերում: Բայց այնտեղ էլ աշխատանքի ձևերն այնքան պրիմիտիվ էին, շահագործումն՝ այնքան դաժան, միաժամանակ աշխատավարձն այնքան չնչին, որ թափած քրտինքը համարյա մնում էր անարդյունք: Պղնձի արդյունահանումը գտնվում էր նահապետական վիճակում, չկար գործարանային օրենք, աշխատանքի անվտանգության հսկողություն, հիվանդանոց, դեղատուն: Տաժանակիր աշխատանքի դիմաց բանվորների օրավարձը կազմում էր 30-40 կոպեկ:

Ղարաբաղում կային մետաքսեղենի ձեռնարկություններ, որտեղ բանում էին կանայք և օրական ստանում 5-35 կոպեկ, բայց ընդհարումների պատճառով աշխատանքի այդ ասպարեզը նույնպես խիստ կրճատվել էր:

Նախքան ընդհարումները նույն Ղարաբաղում, Զանգեզուրում և այլ վայրերում աշխատանքի աղբյուր էին քրեհտարությունը և սայլապանությունը, բայց ընդհարումներից հետո հայերը դրանցից էլ էին զրկվել, իսկ թուրքերը մենաշնորհ էին դարձրել Աղդամի ճանապարհը:

Չնայած դրան, քաղաքներից փախած հայ բանվորության մեծ զանգվածներ վերադառնում էին հարազատ վայրեր՝ մի կերպ գոյատևելու:

Կոտորածները մեծապես քայքայեցին նաև Բաքվի թուրք բանվորությանը, որը տուժեց ոչ պակաս, քան հայ բանվորները: Նա զրկվեց աշխատանքից ու ապրուստի միջոցներից և հայ բանվորների նման ստիպված էր վերադառնալ գյուղ՝ գրպանում ունենալով միայն գրոշներ:

Անբուժելի հարված ստացավ **գյուղացիությունը**՝ հայ թե թուրք:

Ամբողջովին ավերվել էր ավելի քան 250 գյուղ, որից շուրջ 120-ը հայաբնակ, 130-ը՝ թուրքաբնակ: Գյուղերում տուժած ընտանիքների թիվը կազմում էր շուրջ 15 հազար, որից 7 560-ը հայ և 7120-ը թուրք ընտանիք[1]:

1907թ. փետրվարի 10-ին Թիֆլիսում, կովկասյան գյուղատնտեսական ընկերության դահլիճում Սիմոն Զավարյանը կարդացել էր դասախոսություն՝ նվիրված 1906թ. հոկտեմբերին Ղարաբաղ և Զանգեզուր կատարած իր ճանապարհորդությունից ստացած տպավորություններին: Նա եղել էր Ջիվանշիրի, Շուշիի, Զանգեզուրի և Գանձակի գավառներում, ամենուրեք տեսել ծանր պատկեր:

Ս. Զավարյանը նշում էր, որ առանց այն էլ վերջին տարիներին գյուղացին հազիվ էր ծայրը ծայրին հասցնում, իսկ ընդհարումները նրան անդունդի դուռը հասցրին: Մեծ չափերի էր հասնում հողի պակասը, գյուղացին միջին թվով ուներ 3/4 դեսյատին վարելահող, որը ստացել էր դեռ 20 տարի առաջ, իսկ այժմ բոլորովին չէր բավականացնում հոգալու ընտանիքի նվազագույն կարիքները: Դրա պատճառով դեռ մինչև ընդհարումները հայ գյուղացին ստիպված էր ապրուստի ուրիշ աղբյուրներ գտնել: Օրինակ՝ անհրաժեշտ պարենի 1/4-1/2 մասը Զանգեզուրի գյուղացիությունը բերում էր թուրքաբնակ տափարակներից: Բայց ընդհարումները նրան լիովին զրկել էին այդ աղբյուրից:

1905թ. երաշտի պատճառով շատ տեղերում դաշտերից նույնիսկ սերմացու չէր ստացվել: Եթե դրան ավելացնենք այն, որ ընդհարումների պատճառով թուրք-հայկական սահմաններում ցանքսեր չէին արվում, ապա պատկերը լիովին պարզ կլինի: Ղարաբաղում և Զանգեզուրում թե՛ հայերի և թե՛ թուրքերի մոտ ցանքսերը կրճատվել էին 1/3-ով, իսկ առանձին տեղերում 40-60%-ով: Շատ գավառներում հայ գյուղացիները ոչ միայն վար ու ցանքս չէին կատարում, այլև ցանածը չէին կարողանում հավաքել: Թուրքերը շատ հայ գյուղերից տարել էին քաշող ուժը, քշել անասունների նախիրներն ու ոչխարների հոտերը: Բայց մնացածն էլ հայերը պահել չէին կարողանում:

Կռիվները դադարելուց հետո էլ ալան-թալանի երկյուղից գյուղացին ստիպված էր ոչխարի հոտը և բոլոր մյուս անասունները պահել գյուղում: Գյուղերի դատարկ մարագները, անհարմար քարանձավները վերածվել էին փարախների՝ հոտը տեղավորելու համար: Անասնակեր չլինելու պատճառով գյուղացիները ստիպված ձյունապատ դաշտերն էին քշում ոչխարները և երեկոյան քաղցած հետ բերում:

1906թ. վերջերից վրա հասավ մի ուրիշ դժբախտություն՝ անասունների մասսայական անկում, մի բան, որ լրացրեց արհավիրքների պակասը:

Անդրադառնալով թուրք-հայկական ընդհարումների գործած ավերներին՝

---

[1] **Ա-Դ.Օ.**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 402:
[2] **«Մշակ»**, N 38, 20 փետրվարի 1907թ.:

«Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարը գրում էր.

«Դժբախտ ենք երկուսս էլ՝ թե մենք հայերս և թե մեր դրացի Թուրքերը: Տուժողը վերջ ի վերջո մենք երկու դրացիներս ենք:

Թուրքե՞րն արդյոք կավերեն մեր գյուղերը, թե՞ մենք կավերենք նրանցը, կառավարությունը կը ոմբակոծե հայերի, թե՞ Թուրքերի գյուղերը՝ հետևանքը նույնն է. ավեր, ավեր և ավեր մեր երկրի զանազան մասերում:

Զոհվում են մարդիկ, կորչում են հարստություններ, քայքայվում են տընտեսություններ և ամայի անապատ է առաջանում այնտեղ, ուր մի ժամանակ եռում էր կյանքը, և մարդիկ փոքր ի չատե ուղիներ էին հարթում իրենց ապագա բարօրության համար: Մարած հոգիները, կորած միլիոնները և քայքայված տնտեսությունները զոհաբերություններ չեն մի որևէ բարձր գաղափարի համար, որ մենք հաշտվենք դրա հետ: Դրանք կորուստներ են, բացարձակ կորուստներ»[1]:

Այդ ամենի հետևանքով գլուխ բարձրացրեց սովը, որը հատկապես մոլեգնում էր այն գավառներում, որտեղ ընդհարումները սաստիկ էին եղել: Սովն ավելի աղետալի էր, դրա դեմ կռվելը՝ ավելի դժվար, քան հարձակումների դեմն առնելը: Թուրք բեկերն իրենց ղեկավարած հարձակումների պատճառած աղետների պակասը լրացնում էին հայերին հաց չվաճառելու բոյկոտով, իսկ իշխանությունները դրանց ավելացնում էին բազում դժվարություններ ու հալածանքներ:

«Հացի գները գիշատիչ, սատանայի նման կանգնած են չքավոր դասակարգի գլխին, որը չ'գիտե, թե ինչ կերպ պահպանե իր գլուխը»[2], - գրում էր «Մշակը»:

Սովը համատարած էր Նախիջևան գավառում: Սյուգութլու գյուղացի Ալեքսան Սարգսյանը կաթողիկոսին գրում էր. «Նախիջևանում գերի բռնված մի Թուրք կնոջ կամեցել են սպանել, բայց Կարապետ հայր սուրբը, թույլ չտալով, ասել է, թե կնոջը կարելի է հայացնել, եթե հայերից մեկը ամուսնանա նրա հետ: Ես համաձայնություն տվեցի և, ընդհարումները վերջանալուց հետո, Թուրք կնոջս տարա Ալեքսանդրապոլ, որտեղ նրան մկրտեցին: Բայց հիմա երկուսով կանգնած ենք սովի դռանը: Աղաչում եմ օգնության հասեք ձեր ծառային»[3]:

«Ժամանակ» թերթը ընթերցողներին էր ներկայացնում Զանգեզուրում և Ղարաբաղում սովի գործած ավերների պատկերը.

«Ո՞ւմ սիրտը չէ կտրատվում այն զարհուրելի աղետների դիմաց, որոնց ենթակա է Զանգեզուրի և Ղարաբաղի հայ և Թուրք բնակչությունը: Սովը և նրա անբաժան ուղեկից հիվանդությունները ճարակում են երկու ժողովուրդների մեջ՝ ձգտելով կարծես լրացնել երեկվա սոսկալի մենամարտի արհավիրքները: Օգնության ճիգերը կաթիլներ են ծով Թշվառության մեջ, և ձեզ ճնշում է սեփական անզորության գիտակցությունը»[1]:

Զանգեզուրի ամենամեծ՝ Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղի սովահար բնակչության անունից համագյուղացի Տիգրան Սազանդարյանը օտարության մեջ գտնվող խնձորեսկցիներին «Մշակի» էջերում օգնության կոչ էր անում.

«Սովի ճիրաններում խեղդվող եղբայրներին օգնություն հասցրեք: Ես ձեզ եմ դիմում պարկը ձեռքին հայ մուրացող որբերի ու այրիների կողմից. ձեզ եմ դիմում արցունքն աչքերին լճացած որբի անունից. ձեզ եմ դիմում մերկ ու չիփլաղ գեղջկուհու կողմից... Ազնիվ մարդը դեպի իր եղբայրն ունեցած սերը նրա Թշվառության ժամանակ պիտի ցույց տա: Սոված եղբորն օգնել, հաց հասցնել է պետք: Շտապեցե՛ք, օտարաբնակ եղբայրներ»[2]:

Զանգեզուրից ստացված նամակների տեսության մեջ «Մշակը» գրում էր.

«Զանգեզուրի գավառի բոլոր անկյուններից հասնում են հուզիչ լուրեր՝ կապույտ հազ, ծաղիկ և Թոքերի բորբոքում հիվանդությունների մասին: Բրկ

Գյուղացիների ծանր կացությունից օգտվում էին վաշխառուները՝ սարսափելի տոկոսներով ծծում գյուղացու արյունը: Վերջինս այլ ելք չուներ. իր ընտանիքը սովից փրկելու համար նա դիմում էր վաշխառուին՝ պարտամուրհակով փող վերցնում, նրա խանութից ապառիկով գնում ցորեն կամ ապրանք: Աղքատ գյուղացին վաշխառուին վճարում էր ոչ միայն վերցրածի դիմաց, այլև 20-50% վերադիր:

Իսկ ի՞նչ էր անում կառավարությունը: Կազմվել էր 70 000 տուժածների ցուցակ: Այդ հիման վրա փոխարքան Պետերբուրգից խնդրել էր 500 000 ռուբլի նպաստ, բայց կառավարությանը հատկացրել էր 100 000 ռուբլի, այն էլ միայն նրանց, ովքեր զրկվել էին ամեն ինչից[1]: Ինչ խոսք, այդ «օգնությունը» չէր կարող դարման լինել ժողովրդի լայն բացված վերքերին: Դա մի կաթիլ ջուր էր շիկացած աղյուսի վրա:

Ավելին, կառավարությունը 1905-1907թթ. ծանրագույն պայմաններում գյուղացիներից հավաքեց պետական բոլոր հարկերը: Տուրքերի հավաքման ժամանակ գյուղացիների դանդաղկոտության դեպքում հետևում էին դաժան էկզեկուցիաներ, որոնք բոլորովին քայքայում էին գյուղերը:

Թուրք-հայկական ընդհարումներից հետո հասարակության համար ամենամեծ չարիքներից մեկն էր **անհատական և խմբային ավազակությունը:**

Լայնածավալ կայսրության ժողովուրդները տնքում էին քաղաքական ու տնտեսական անարխիայի ճիրաններում: Ժողովրդի հավատը վայելող և կամքն արտահայտող ուժի բացակայությունը Ռուսաստանում ստեղծել էին անտանելի պայմաններ միլիոնավոր մարդկանց համար:

Այդ հեղձուցիչ մթնոլորտը կայսրության ներքին նահանգներից հասնելով Անդրկովկաս՝ ստանում էր ավելի մեծ չափեր:

Կռիվները երևան էին հանել երկու ժողովուրդների մեջ եղած առավել բացասական գծերը՝ մեկի մոտ քիչ, մյուսի մոտ՝ շատ:

Հայկական դիմադրության ղեկավար գործիչները, արևմտահայ մարտիկները մեկուկես տարվա տենդագին կազմակերպական աշխատանքից ու դաժան կռիվներից հոգնած՝ ստիպված էին հեռանալ իրենց ամրացված շրջաններից:

Արևմտահայ մարտիկները տուն էին շտապում. կարոտել էին ընտանիքներին ու հարազատ վայրերին: Բայց նրանք այնպես էին մերվել ու հարազատացել արևելահայ արյունակից եղբայրների ու քույրերի հետ, որ վերջիններս նրանց ճանապարհում էին երախտագիտության արցունքներով:

Զանգեզուրի հայությունը իր բուռն երախտագիտությունն էր հայտնում արևմտահայ մարտիկներ Մուրատին, Քեռուն, Սեպուհին, Կայծակ Առաքելին, Ավետիսին, Կորյունին, Հաջի Գևոյին, Սորփեցի Գուրգենին, Ղասապ Արամին, Վարժապետին, Հասրաթին, Խեչոյին, Հայրիկին, Ենոքին..., նաև բոլոր տեղացի

[1] **«Մշակ»**, N 38, 20 փետրվարի 1907թ.:

խմբապետերին ու քաջարի կռվողներին, որոնք փայլուն կատարեցին տեղի հայության փրկության գործը:

Զանգեզուրից Սեբաստացի Մուրատի հեռանալուց հետո նրա նկատմամբ լեռնավայրի հայ բնակչության զգացմունքները տարիներ անց այսպես է արտահայտել Տաթևի վանքի վանահայր Ներսես վարդապետ Մելիք-Թանգյանը. «Մուրատի անվան ու գործերի հմայքը այնքա՜ն տարածվեց Զանգեզուրում, որ հայ ժողովուրդը մինչև այժմ էլ երախտագիտությամբ է հիշում այդ սքանչելի հերոսին և խոնարհվում է նրա պաշտելի հիշատակի առջև»[1]:

Բնութագրելով Մուրատի անձնական կյանքը Զանգեզուրում Մելիք-Թանգյանը հիացմունքով վերհիշել է, որ նա «մի ցայտուն, բնորոշ տիպ էր և ժողովրդական հերոս՝ բառիս լայն առումով: Նա ապրում էր գյուղերում պարզ, համեստ նիստ ու կացով»: Իրենց հրամանատարի նման էին բոլոր արևմտահայ մարտիկները, որոնք երբեք պահանջ չէին ներկայացնում որևէ մեկին, բավարարվում էին քչով, երբեմն միայն ցամաք հացով: «Բարոյական բարձր զգացումներով տոգորված մարդիկ էին այդ հայդուկները: Նրանք երկար ժամանակ ապրեցին Զանգեզուրում, բայց ոչ մի անբարոյական դեպքի առիթ չտվեցին: Գյուղացիները նրանց անունով էին երդվում և հիանում նրանց բարոյական մաքրության վրա»[2]:

Զանգեզուրի կռիվներից հետո հայ օրիորդները Մուրատին նվիրել էին ոսկյա և արծաթե մեդալիոններ, որոնց վրա փորագրված էին երախտագիտության ու սիրո ջերմագին խոսքեր՝ երբեմն ոտանավորով: Այդ մեդալիոններից մեկի վրա փորագրված էր.

Գնա՛ բլբուլ, մեր աշխարհից:
Սիրելի Մուրատին՝
Արաքսից
Մի ուրիշ մեդալիոնի վրա կարելի էր կարդալ.
Ուր որ գնաս, սիրտս քեզ հետ,
Քանի աշխարհում կյանք ունեմ:
Նվեր Մուրատին՝
Արմենուհուց[3]

Մուրատի հետ կամ նրանից հետո Սյունյաց երկրից մեկնեցին Կայծակ Առաքելը, Ավոն, Հաջի Գևոն, Սորփեցի Գուրգենը, Ղասապ Արամը, Վարժապետը, Հասրաթը ...

Շարուրի Խանլուխլար մեծ գյուղի և շրջակայքի պաշտպանության ղեկավար Սեյդո Պողոսը առաջին մեկնողներից էր: «Գյուղի հայությունը լաց ու շիվանով բաժանվեցավ իր ազատարարեն»[4], - գրել է ականատեսը: Բայց

[1] ***Միքայել Վարանդեան,*** *Մուրատ, էջ 119:*
[2] *Նույն տեղում, էջ 118:*
[3] *Նույն տեղում, էջ 122:*
[4] *Նույն տեղում:*

Պողոսը ձգտում էր օր առաջ լինել հայրենի եզերքում: «Հորի՞ մնամ հոտի, – ասում էր նա. – ընծի էրկիր պիտի ճամբեք ... էրթամ մըր աւեր Դուրան, մըր սարերուն հովին տակ պառկիմ երեսս շաղաթաթախ կանանչ խոտերուն քսիմ, մըր զուլալ ջոհվար ջըրերու մեջ լուացուիմ, զիմ ոչխարներուս աչքերը պագնեմ ... չըմ կինա մնացի՞ր ին ոչխար, զիմ «ղավալը» փչիմ ու փառք տամ Աստծոյ...»[1]:

Արիության և անձնազոհության անկրկնելի ապացույցներ տալուց հետո երեկվա ռազմադաշտերից հեռացան նաև արևմտահայ հայդուկներ Կոտոյի Հաջին և Առյուծ Ավագը՝ Դարալագյազից, Սմբատ Բորոյանը՝ Ղամարլուից, Ուսուլ Գրիգորը՝ Աղբաբայի շրջանից, Մուռ Դավոն՝ Կողբի շրջանից, Լորթոն, Ասլանը, Մուղսի Մուրադը՝ Նախիջևանից: Անվերջ շարան խմբապետերի ու զինվորների ...

Իրենց ամրացված շրջաններից դեկավար տարրի և անձնազոհ մարտիկների հեռանալով վերանում էր նրանց հմայքը և զսպող ուժը: Օգտվելով դրանից՝ գլուխ էր բարձրացնում հասարակության տականքը՝ գողերն ու ավազակները, որոնք իրենց շարքերը համալրում էին տարբեր ազգերից ու դասակարգերից՝ լինեին դրանք Թուրք, հայ թե այլազգի, աղքատ թե հարուստ:

Օր չէր լինում, որ Կովկասի զանազան ծայրերից՝ քաղաքներից ու գյուղերից, տեղեկություններ չգային ուրիշի գույքին տիրելու նպատակով թալանի, ավազակության մասին, որոնք, սոսկալի չափերի հասնելով, հյուծում էին հասարակական կյանքը:

Մեծ չափերով ծաղկող ավազակությունները և նման այլ հանցանքները տիրապետող կյանքի աննորմալ պայմանների հետևանք էին, սոցիալական երևույթներ էին, որոնք առաջացել էին ժողովրդական կյանքի անբնական զարգացումից՝ ժամանակաշրջանի քաղաքական, հասարակական ու տնտեսական խեղումներից: Ազգաբնակչությունը մի քանի տարիների ընթացքում այնքան էր քայքայվել, գործազրկությունն այն աստիճան խոշոր չափեր էր ընդունել, որ մի ժամանակ խաղաղ աշխատանքով ապրող մարդիկ այժմ հարկադրված էին դիմել բռնի միջոցների՝ քարշ տալու համար իրենց գոյությունը:

Գողերի ու ավազակների հիմնական զանգվածը հավաքագրվում էր նախկին մարտիկներից, որոնք, երկար ժամանակ ակամայից կտրված լինելով աշխատանքից, խորթացել էին դրանից, բայց ունենալով զենք, շարունակում էին այն գործածել՝ այս անգամ նաև սեփական ժողովրդին կողոպտելու համար: Նրանք արդեն դարձել էին ծանր բեռ բնակչության վրա, որն առանց այն էլ գտնվում էր անասելի նեղությունների մեջ: Շատ տեղերում ժողովրդի երեկվա պաշտպանն արդեն հանդես էր գալիս բռնացողի և կեղեքողի դերում: Երեկ նրա բաղձանքը բարբարոսի ձեռքից արյունակից եղբայրներին ու քույրերին փրկելն էր, այսօր նրա հոգում խոսում էր հափշտակության կիրքը:

[1] Կոմս, Խոնարհ հերոսներ, գիրք Դ, Պեյրութ, 1950, էջ 67-68:

1906թ. սեպտեմբերին Անդրանիկը «Ռազմիկ» թերթում տպագրեց «Բոլոր հայ յեղափոխական զինուորներուն» ուղղած մի կոչ, ուր մասնավորապես արտահայտում էր իր խոր ցավը զինվորների շարքերում տեղ գտած հանցանքի հասնող երևույթների առթիվ: Անդրանիկը գրում էր.

«Ցավով կ'իմանամ, որ տեղ-տեղ հայ զինուորը իր կոչումին բարձրութեան վրայ չի գտնուիր. այսպեսով պատճառ կը դառնաք, դու՛ք զինվորներ, որ թերթերուն մեջ ձեզ մեղադրեն, բան մը որ շատ անգամ կը ստանայ կուսակցական կերպարանք, քանի որ ձեզ առիթ բռնելով կը յարձակին կազմակերպութեան (դաշնակցութեան: – Հ.Ս.) վրայ: Զգուշացեք, յիշեցեք որ այդպեսով դուք կը նսեմացնեք մեր հերոսներու յիշատակը, ֆետայիի մաքուր անունը, և ձեր կազմակերպությունը կ'իյնայ ժողովուրդին աչքեն: Մանավանդ յիշեցե՛ք, որ դուք ժողովուրդին պաշտպանութեան համար է, որ զենք վերցուցած եք, և նոյն այդ ժողովուրդին բարօրութեան համար է, որ մեր ընկերներեն հարյուրներով հերոսաբար ընկան»[1]:

Հիրավի, ընդհարումների ժամանակ ինքնապաշտպանության կազմակերպման գործը համարյա ամբողջովին ծանրացած էր դաշնակցության վրա, ուստի զինված խմբերի մեջ ընդգրկված ամեն անհատ, եթե նույնիսկ որևէ առնչություն չուներ որևէ կազմակերպության հետ, իրեն համարում էր դաշնակցական: Այդպիսիներից ոմանք տեղն ընկած ժամանակ դաշնակցության անունով գործում էին զանազան անիրավություններ, աղաղակող հանցանքներ՝ դրանով իսկ արատավորում կազմակերպության անունը:

Ավազակությունն ու թալանը շարունակելով ծաղկել՝ մի սոսկալի չարիք էին դարձել մանավանդ գյուղացիության համար, չխոսելով այն մասին, որ կովկասյան ոստիկանությունը թե՛ անցյալում և թե՛ այդ ժամանակ իր մասն էր ունեցել այդ ավազակություններում: Եվ ահա, այժմ տեղական ադմինիստրացիան կորցրել էր գլուխը՝ խոստովանելով, որ այլևս անզոր է վերացնելու ավազակային և թալանի խմբերը, որոնք օրը ցերեկով ճանապարհների վրա հարձակվում էին մարդկանց վրա, գերում կամ կողոպտում:

Նույն երևույթները համաճարակի կերպարանք էին առել նաև Թուրքերի մեջ, մի տարբերությամբ միայն, որ դրանք նրանց մոտ զուգորդվում էին թայֆայականության հետ՝ իր բոլոր արհավրալից դրսևորումներով: Տարբեր խմբեր, որպես թշնամի բանակներ, իրար դեմ կանգնած, իսկական պատերազմ էին մղում: Թուրքական աշխարհում, համարյա ամեն տեղ, ջրի երես էին բարձրացել հասարակության տականքները, որոնք, չահագործելով տիրող տագնապը, պղտոր ջրում առատ ձուկ էին որսում:

Լոնդոնի "Fortnightly Review" հանդեսի 1906թ. փետրվարյան համարում տպագրած իր հոդվածում հայտնի հրապարակախոս Լուիջի Վիլլարին նկատել էր. «Կան ամբողջ Թուրքական գյուղեր, որոնք ուրիշ պարապմունք չունեն,

[1] «Ռազմիկ» (Թիֆլիս), N 93, 20 սեպտեմբերի 1906թ.:

բացի թալանից, իսկ իրենք՝ խաները, խիստ նմանվում են միջնադարյան ավազակ բարոններին»[1]:

Թիֆլիսում լույս տեսնող «Անկախ մամուլ» լրագիրը թուրքական «Իրշադ» թերթից թարգմանաբար տպագրել էր շարքային թուրք մարդկանցից մեկի հետևյալ խոսքերը.

«Մեր ժողովուրդն ի՞նչ դրության մեջ է: Մենք բոլորս թշնամի ենք դարձել միմյանց... Մեր ընտանիքներին ու զավակներին մշտական վտանգներից փրկելու համար երևի շուտով ստիպված կլինենք թողնել գործ ու աշխատանք և, մի-մի հրացան առած՝ հսկել նրանց վրա: Ժողովու՛րդ, չի կարելի այսպես ապրել: ... Մեր մեծամեծերն իրենց տներում հանգիստ նստած միայն մտածում են իրենց միլիոնների մասին, իսկ մեր մյուս առաջնորդներն էլ զբաղված են մարդասպանությամբ ու չարագործություններով: Ո՞վ պետք է մեզ օգնության հասնի, ո՞վ պետք է մտածի մեր մասին: Ո՛չ ոք: Մնում է, որ մենք մեր գլխի ճարն ինքներս տեսնենք»[2]:

Հայ և թուրք ավազակային հորդաները սովորաբար գործում էին յուրաքանչյուրն իր ցեղային միջավայրում: Զատվել էին հայ և թուրք ժողովուրդները, անջրպետ էր բացվել նրանց միջև, և հենց դրանից էլ օգտվում էին ավազակախմբերը՝ իրենց «արհեստը» գործածելով տեղում: Քիչ էր պատահում, որ թուրք ավազակախումբը ավարառության նպատակով գնար հայ գյուղի վրա, և հայ ավազակախումբը՝ թուրքի: Հայը հայի դեմ, թուրքը թուրքի դեմ, – այս էր տվյալ պահին ավազակային շայկաների նշանախոսքը: Պատահում էր նաև այսպես. եթե թուրք-հայկական ընդհարումների ժամանակ թուրքը թալանում էր հային, հայը՝ թուրքին, ապա այժմ թուրք ավազակը հայ ավազակի հետ նույն ավազակախմբում թալանում էր թուրքին, իսկ հայը թուրք ավազակի հետ՝ հային:

Հատկապես պարարտ հող էր ստեղծված թուրք ավազակների (դաշաղների) համար, որոնց հարյուրավոր խմբերը վխտում էին ինչպես թուրքաբնակ, այնպես էլ հայաբնակ գավառներում: Թուրքերի մոտ կային ավազակախմբեր, որոնցից յուրաքանչյուրում հաշվվում էր մի քանի հարյուր մարդ: Ղաչաղները միշտ զինված էին, և նրանք ավելի շուտ կյանքը կտային, քան իրենց զենքը: Վարելով փախստական կյանք՝ նրանք արագ մի տեղից մյուսն էին անցնում խիստ դժվարացնելով իրենց բռնելը:

Հայտնի դաշաղ Նաբուց հետո մեծ հռչակ էր ձեռք բերել դաշաղապետ Դալի-Ալին, որի ավազակախմբում տարբեր ժամանակներում հաշվվում էր 200-ից մինչև 500 մարդ՝ թուրք, քուրդ, հայ:

Դալի-Ալին Գանձակի նահանգում անուն էր հանել նախքան թուրք-հայ

[1] Մեջբերված է Մկ. Հովհաննիսյանի «Կովկասեան Վանդեան, թուրք-հայկական ընդհարումները, նրանց պատճառները» գրքից, Թիֆլիս, 1907, էջ 70:
[2] «Անկախ մամուլ», N 11, 13 դեկտեմբերի 1907թ.:

ընդհարումները: Նրան ձեռք գցելու համար իշխանությունների բազմիցս ձեռնարկած հետապնդումները զուր էին անցնում: Բախտի բերումով նա ավազակապետերից միակն էր, որ շուրջ 10 տարի հանդգնորեն, առանց ձերբակալվելու, շարունակում էր ասպատակությունները: Նա դարձել էր թուրք ավանդապաշտ ժողովրդի հերոսն ու պաշտամունքի առարկան: Թուրքերը, նույնիսկ հայերը, մի առանձին ակնածանքով ու փառաբանությամբ էին արտասանում նրա անունը, թեև այդ անվան հետ շաղախված էին արյուն, սուգ, արտասուք:

Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ Դալի-Ալին անցավ խուժանի գլուխը, բայց ոչնչով չարտահայտվեց նրա քաջությունը: Ուրիշ թուրք ասպատակիչների արածներն էլ ժողովուրդը վերագրում էր նրան:

Երբ վերջացան ընդհարումները, Դալի-Ալին քաշվեց մի անկյուն և սկսեց միառժամանակ հանգիստ ապրել՝ որոճալով իր նախկին «քաջագործությունների» փշրանքները: Իշխանությունների առաջ թուրք երևելիների միջնորդությամբ ներում ստանալուց հետո նա քաշվում է հայրենի գյուղ և նորից զենքի սպառնալիքներով շուտով դառնում շրջանի կատարյալ տերն ու տնօրենը: Անընդհատ ստանում էր անթիվ նվիրաբերություններ: «Ազգային հերոսը» շարունակում էր մնալ թուրք հասարակության ուշադրության կենտրոնում, նրա հպարտության առարկան: Ի վերջո, Դալի-Ալին խանդի հողի վրա իր ցեղակիցներից մեկի կողմից վրեժխնդրության զոհ է դառնում՝ թողնելով մեծ հարստություն և մոտ 40 կին:

Կային թալանչիների տասնյակ ուրիշ, ավելի փոքր խմբեր: Օրինակ՝ Ջավադի և Շուշիի գավառներում ասպատակություններ էր անում Ջավադի գավառի Աշղու գյուղացի Քելբալայ Քազումը՝ իր որդու՝ Շիրաստանի և երկու ընկերների՝ Քելբալայ Վալիի և Աղաբեկ Աբդուլլա բեկ օղլու հետ: Տարբեր ժամանակներում այդ ավազակախմբի մեջ ընդգրկվում էին նաև ուրիշներ: Խումբը գոյատևեց ավելի քան հինգ տարի, հասցրեց սպանել երկու տասնյակից ավելի մարդ, այդ թվում Շուշիի գավառապետ Ռոդիոն Լակոտաշին, և 1910թ. ապրիլին ոչնչացվեց ոստիկանության հետ ընդհարման ժամանակ[1]:

Պակաս բազմաքանակ չէին հայ ավազակախմբերը, որոնք ժողովրդի համար նույնքան վտանգավոր էին, որքան արտաքին ոսոխը:

Ղարաբաղի հայ բնակչության շրջանում իսկական չարիք էին դարձել և սարսափ ձգել ոճրագործ Ջումշուդը, հայտնի ավազակապետեր Հաթամ բեկ և Շամիր բեկ եղբայրները, իր գազանություններով հռչակ հանած Ջալալ բեկը: Կատարած մարդասպանությունների ու թալանների համար Ջումշուդը Շուշիում սպանվեց դաշնակցական տեռորիստի կողմից:

Ջալալ, Շամիր և Հաթամ բեկերը Արցախի Նախիջևանիկ գյուղից էին, Փիրումյան նշանավոր տոհմից: Տոհմն իր ժողովրդին տվել էր հիշարժան անուններ: Բայց, Փիրումյաններից սերվել էին նաև ոչ քիչ թվով ոճրագործներ,

[1] «Սուրհանդակ» (Թիֆլիս), N 97, 28 ապրիլի 1910թ.:

որոնք իրենց հանցանքների համար երբեք պատասխանատվություն չէին կրում, քանզի տոհմը բազում կապեր ուներ կառավարական շրջաններում, և այդ պատճառով հանցագործները միշտ մնում էին անպատիժ:

Մի անբարո ճիվաղ էր Ջալալ բեկը՝ գող և մարդասպան, որի ավազակությունների զոհերն ավելի շատ հայեր էին, քան թուրքեր, ուստի նրանից ավելի շատ սարսափում էին առաջինները: Ջալալի ավազակությունների ու մարդասպանությունների համբավը տարածվել էր Ղարաբաղից հեռու՝ սարսուռ պատճառելով ամենուր:

Բայց ավելի մեծ ոճրագործներ էին Հաթամ բեկը՝ Թալանի անհագ ծարավով մի անգութ մարդ, և նրա հրեշատիպ եղբայրը՝ Շամիրը: Երկուսն էլ արտակարգ քաջության և հնարքների տեր էին՝ ձիավարժ ու զինավարժ: Բայց այդ հատկությունները նրանք երբեք չծառայեցրին իրենց ժողովրդին, ընդհակառակը՝ ուղղեցին նրա դեմ:

Հաթամը հաստատվել էր Վարանդայի կենտրոնում Քյաթուկ գյուղում, և դժբախտություն էր դարձել շրջանի աշխատավոր գյուղացիության համար: Նրա ավազակախմբերի մեջ և՛ հայեր էին, և՛ թուրքեր, որոնք հավասար նվիրվածությամբ ծառայում էին իրենց ոճրածին պետին: Բայց գնալով եղբայրները ավելի ու ավելի էին հակվում դեպի թուրքերը:

Ի վերջո, հայ-թուրքական կռիվների վերջին շրջանում նրանք միացան թուրքերին և նրանց հետ կռվում էին հայ մարտական խմբերի դեմ: Բանն այնտեղ էր հասել, որ եղբայրների ավազակախմբերը սկսել էին լրջորեն վտանգել հայերի ինքնապաշտպանության գործին՝ հատկապես Վարանդայում:

Վարդանը և Հ.Ց. դաշնակցության Ապառաժի կոմիտեն մեկից ավելի անգամ հորդորեցին դավաճան եղբայրներին՝ հետ կանգնել ազգուրաց ճանապարհից, դադարեցնել կռիվն իրենց ժողովրդի դեմ և վերադառնալ խաղաղ, մարդավայել կյանքի: Բայց նրանք խուլ մնացին արված նախազգուշացումներին և շարունակեցին իրենց սև գործը: Կազմակերպությանն այլ բան չէր մնում, քան տեռորի ենթարկել նախ Հաթամին*, ապա և եղբորը՝ Շամիրին**:

Ազգուրացությունը դաժան հատուցում ստացավ: Եղբայրների ավազակախմբերը ցրվեցին:

---

* Հաթամ բեկին, որպես ազգուրաց դավաճանի, գնդակահարել էին դաշնակցական ահաբեկիչներ Այեքսան Սաղիրյանը և Գրիգոր Միրզաբեկյանը: Դաշնակցական գործիչ Արամայիսը (Մնակ Տեր-Դանիելյան) «Փշրանքներ» վերտառությամբ անտիպ հուշերում չբաժանելով Հաթամին «ազգուրաց դավաճան» տված գնահատականը, գրել է. «Սխալ էր նրան թուրքերին օգնող մեկը համարել: Հաթամը գող էր և չէր խնայում ո՛չ հային, ո՛չ թուրքին, բայց նա երբեք թուրքին չի օգնել հայերի դեմ: Իմ կարծիքով՝ այդտեղ մեծ դեր են խաղացել անձնական հաշիվները» (տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 150, ց. 1, գ. 25, թ. 81):

** Շամիր բեկի մասին Արամայիսը գրել է. «Նրան կախեցին ծառից՝ Քյաթուկի մոտ գտնվող անտառում, որովհետև ազգուրացը ոչ միայն իր երկու քույրերին կնության էր տվել թուրքերին, այլև ընդհարումների ժամանակ անցել էր Աղդամ, միացել թուրքերին և կռվել հայերի դեմ» (նույն տեղում):

Փիրումյանների տոհմի մյուս բեկերը ապրում էին իրենց գյուղում Նախիջևանիկում, ապրում էին սովորական կյանքով և «բեկ» տիտղոսից բացի, ուրիշ ոչինչ չունեին*:

Ղարաբաղցի հայ ավազակներից էր մեծ համբավ ձեռք բերած Ավետարանաց գյուղի ծնունդ, Մելիք-Շահնազարյանների հայտնի տոհմից Ասլան Մելիք-Շահնազարյանը: Ընդամենը 26-27 տարեկան ավազակը անխիղճ էր ու կատաղի, փառասեր ու խորամանկ, բայց հատկապես՝ քաջ: Ընդհարումների ժամանակ շատ է պատահել, որ ամենավտանգավոր պահերին Ասլանը կարողացել է անձնական խիզախությամբ փրկել դրությունը: Ընդհարումներից հետո նա իր խմբով մեծ «քաջությամբ» սկսեց հայերի ունեցվածքի թալանը: Ավազակապետը մեծ տուգանքներ էր դնում ոչ միայն առանձին ընտանիքների, այլև ամբողջ գյուղական համայնքների վրա:

Ասլանի հափշտակումները և հարստահարումները այնպիսի ծավալներ էին ընդունել, որ այլևս անհնար էր հանդուրժել նրա արարքները: Հ.Ց.Դ. Ապառաժի կ. կոմիտեն որոշեց նրան ահաբեկել: Իմանալով այդ մասին՝ Ասլանը չքացավ Ղարաբաղից: Միայն շատ տարիներ անց հայտնի դարձավ, որ նա անցել էր Մինչև Ասիա, որտեղ ավազակային մեծ գործողություն կատարելու համար ձերբակալվել էր և գնդակահարվել[1]:

Թուրքերից բաղկացած իր խմբով Զանգեզուրում, հատկապես Ղափանի կողմերում, ասպատակություններ էր անում հայ գյուղացի, անվանափոխ հայտնի ավազակ Իսմայիլ Աբաշ օղլին: Նա քշում էր հայերի նախիրն ու հոտը, կրակի մատնում խոտի դեզը, առևանգում գեղեցիկ աղջիկների: Ավազակը, որ ճանապարհներին սպանել էր բազմաթիվ հայերի, ի վերջո, ինքն էլ սպանվում է 1907-ի հունվարին, խանլըղեցի Աբբաս տանուտերի ձեռքով, այն պահին, երբ քշում էր վերջինիս տավարը[2]:

Ավազակապետերը ոչ միայն հարկեր էին դնում գյուղացիների վրա, այլև պատվերով ու բարձր վճարով կատարում էին անհատական սպանություններ՝ հագուրդ տալով այս կամ այն պատվիրատուի վրեժխնդրությանը կամ բավարարելով մրցակցին վերացնելու նրա ցանկությունը:

Այսպես, Շուշիի գավառի Ազոխ գյուղի հարուստներից Առաքել Պետրոսյանը, արյան վրեժ առնելու համար, հարևան Տող գյուղից Սամսոն Խաչատրյանին պատվիրել էր սպանել Թաղավարդ գյուղացի Մարտիրոս Ավագյանին, որը

---

* Արամայիսը այդ բեկերի մասին գրել է. «Գոնե իմ օրոք ես չեմ տեսել, որ գյուղացիներից մեկն ու մեկը նրանց որևէ տուրք տար կամ նրանց համար ձրի աշխատանք կատարեր. ընդհակառակը, գիտեմ, որ Բաշիր բեկին գյուղացիները վարձով բանեցնում էին իրենց արտերում, հունձի ժամանակ: Գյուղում իմ տեսած բոլոր Փիրումյան բեկերը նույն չարքաշ կյանքն էին վարում, ինչպես մյուս գյուղացիները, բավականանալով «բեկ» կոչումով, որ որոշ արտոնություններ էր տալիս իրենց» (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 150, ց.1, գ.25, թ. 81):

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 115, ց. 1, գ. 25, թ.թ. 68-69:

2 «Դրոշակ», N 2 (180), փետրվար, 1907, էջ 26:

և իրականացվել էր 1905թ. հուլիսի 18-ին[1]: Զանգեզուրի գավառում, Դորիս քաղաքից Շինուհայր գնալիս, Շաքարլու քոլում (անտառում) սպանվել էր այդ գյուղի տանուտեր Հայրապետ Շիրինյանը: Պատվիրատուն, որը նույն գյուղացի էր, նպատակ էր ունեցել զբաղեցնել տանուտերի պաշտոնը[2]:

Ավազակները միայն գավառներում չէին: Անդրկովկասի մեծ քաղաքներում վիճակն ավելի տագնապալից էր: Թիֆլիսում, օրինակ, նրանք «որս էին անում» փոխարքայի պալատից ընդամենը մի քանի քայլի վրա: Կողոպտվում էին ոչ միայն քաղաքացիներ, այլև ոստիկաններ ու զինվորներ, պետական ծառայողներ, քաղաքում հայտնված օտարերկրացի հյուրեր: Վերջիններս Կովկասից հեռանում էին հիասթափված, առանց այն էլ տեղի բնակչության մասին եվրոպական քաղքենու մոտ ստեղծված աննպաստ պատկերացմանը հավելում բացասական նոր գծեր:

Շվեյցարիայում բնակություն հաստատած մի հայուհի՝ Սաթենիկը, որը 1905թ. հոկտեմբերին եկել էր Թիֆլիս և այդտեղ ականատես եղել նոյեմբերյան կռիվներին, Լոզանում գտնվող իր ընկերոջը՝ Սիամանթոյին ուղարկած նամակում գրում էր.

«Սաստիկ դժգոհ եմ իմ Կովկաս գալու համար. ամեն մի հիմար բան ինձ վրա սոսկալի ազդում է: Կովկասը թողնելուց հետո ես երբևիցե հազիվ թե վերադառնամ այստեղ. այնքա՜ն զզված եմ այստեղից: ... Ո՛վ գիտե, թե էլի ինչեր պիտի պատահեն այստեղ. խառնակություններ, կոտորածներ, արյուն է, որ պիտի հոսի: Ո՞վ գիտի՝ ո՞ղջ պիտի մնամ արդյոք, որ Եվրոպա գամ, թե ես էլ պիտի ընկնեմ կոզակի կամ թուրքի կամ ավազակի սրեն. սարսափում եմ մահից»[3]:

Ավազակախմբերի բազմացումը և դրանց ոճրագործությունների ծավալների մեծացումը խորապես մտահոգում էր հայկական հասարակության բոլոր խավերին: Տարբեր քաղաքական հայացքների տեր մարդիկ, գաղափարական զանազան ուղղության մամուլի օրգաններ համերաշխ էին երևույթին տրված գնահատականում, դրա դեմ պայքարի համար առաջադրում էին նույնատիպ մեթոդներ:

«Ավազակության համաճարակը» վերնագրով հոդվածում դաշնակցության «Երկիր» թերթը գրում էր. «Կռիվն ավազակության դեմ հանդիսանում է ներկայիս ամենաստիպողական ու հրատապ պահանջը»[4]: Թերթը նշում էր, որ «պրոֆեսիոնալ ավազակները գլուխ են բարձրացրել գրեթե ամեն տեղ», մեծ չարիք են դարձել Անդրկովկասի բոլոր նահանգներում և իրենց «սխրագործություններով» հուսահատության դուռը հասցրել ազգաբնակչությանը[5]:

[1] ՀՀ ԳԿԳԱ, ֆ. 115, ց. 1, գ. 23, թ. 16:
[2] «Մշակ», N17, 25 հունվարի 1907թ.:
[3] ԳԱԹ, Սիամանթոյի ֆոնդ, N193, թ. 5,6:
[4] «Երկիր» (Թիֆլիս), N 32, 7 նոյեմբերի 1906թ.:
[5] Նույն տեղում:

Իսկ ո՞րն էր ելքը:

Դաշնակցության «Ալիք» թերթը այդ հարցին այսպես էր պատասխանում.

«Մնում է, որ հասարակական ակտիվ ուժերը հանդես գան և իրենց ձեռքը վերցնեն հասարակական ապահովության և անդորրության գործը: Եվ մենք համոզված ենք, որ այս դեպքում հասարակական ակտիվ ուժերը ավելի ընդունակ և ձեռնհաս կլինեն՝ լուծելու այն բարդ խնդիրները և վերացնելու այն չարիքներն ու ախտերը, որոնք հյուծում են ժողովրդին, խանգարում նրա ապահով գոյությանը»[1]:

Դիմելով նախկին հայ մարտիկներին, որոնք հիմա բռնել էին ոճրագործության ուղին, «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարը «Դեպի աշխատանք» վերնագրով հոդվածում նրանց կոչ էր անում վերադառնալ ստեղծագործ կյանքի և սեփական քրտինքով վաստակել հանապազօրյա հացը:

«Ձեր ինքնապաշտպանությունը, - գրում էր նա, - և ձեր դիմադրությունը ինքնըստինքյան շնորհակալության և երախտագիտության էին արժանի ժողովրդի կողմից: Եվ ժողովուրդը հերոսացրեց ձեզ, երգեց իր երգերում, օրհնեց իր աղոթքների մեջ և օժանդակեց իր միջոցներով:

Սակայն, վերջացնելով ձեր ժամանակավոր, հերոսական գործը՝ դուք պետք է նորից վերադառնայիք աշխատանքի կյանքին, բայց, ցավոք, այդ բանը դուք չարիք: Այդ սխալը պետք է շտապ ուղղել: Նորից պետք է դառնալ արդյունագործ տարր: Ամեն մի ուշացած օր աղետաբեր է թե՛ ժողովրդի և թե՛ այն գործի համար, որին դուք հարած եք:

Վերադարձեք դեպի ձեր գութանները: Վերադարձեք դեպի ձեր արհեստը և աշխատանքը:

Շտապեցե՛ք օր առաջ:

Դա է փրկարար ճանապարհը»[2]:

Բայց նման կոչերն ընդհանուր առմամբ անարդյունք էին մնում: Դեպի ստեղծագործ աշխատանքի էին վերադառնում քչերը, իսկ նրանք, ովքեր այլևս մտածել անգամ չէին ուզում աշխատելու մասին, շարունակում էին իրենց ասպատակությունները:

Ահա թե ինչու դաշնակցությունը հակվում էր դեպի ավազակախմբերը ոչնչացնելու տեսակետին:

1906թ. նոյեմբերի 21-ին Հ.Ց.Դ. Թիֆլիսի կենտրոնական կոմիտեն մի կոչով դիմեց Թիֆլիսի նահանգի գյուղացիությանը:

Շեշտելով, որ «ժողովուրդը հեծկլտում է տանջանքներից», կ. կոմիտեն ողջունում էր, որ համբերության բաժակը լցված ժողովուրդը տեղ-տեղ խիստ պատիժ է տալիս ոճրագործությունների հեղինակներին:

Սակայն ավազակներին տված մասնակի պատիժները չեն կարող դրու-

[1] «Ալիք» (Թիֆլիս), N 49, 27 հունիսի 1906թ.:
[2] «Մշակ», N 265, 7 դեկտեմբերի 1906թ.:

թյունը փոխել: Զարիքի դեմ կռիվը պետք է լինի կազմակերպված, ընդհանուր և որոշակի ծրագրով: «Տանջվողները պետք է ձեռք մեկնեն իրար և ուժգին հարված տան թշնամուն: Եթե ներկայումս կարելի չէ գլխավոր ոճրագործին՝ կառավարությանը տապալել, կարելի է վերջ տալ ժողովրդի մեջ գոյություն ունեցող գիշատիչ տարրերի արարքներին: Դրա համար հարկավոր է ոչ թե վհատվել ու ողբալ, այլ կազմակերպվել ու կատաղի կռիվ հայտարարել չարագործներին»:

Հ.Յ.Դ. կ. կոմիտեն վստահ էր, որ աշխատավոր գյուղացիությունը, որը միշտ խորշել է ավազակներից ու գողերից, որը կարողացել է պատվով դուրս գալ այն գեհենից, որի անունն է հայ-թուրքական կոտորած, այդ նույն գյուղացիությունը կարող է իր միջից արմատախիլ անել և այդ չարիքը: Դա էր պահանջում գյուղացու բարեկեցությունը և այն սուրբ գործը, որի համար նա այնքան արյուն էր թափել:

Հ.Յ. դաշնակցությունը հայտարարում էր, որ ինքը, միշտ լինելով աշխատող և դառը քրտինք թափող ժողովրդի պաշտպան, «չի կարող այս դեպքում էլ մնալ անտարբեր. նա ցույց կտա իր աջակցությունն այդ ժողովրդին: Թող լավ իմանան, ուրեմն, այդ գիշատիչ տարրերը, որ նրանց «քաջագործությունների» վերջը հասել է և թող օր առաջ ձեռք վերցնեն իրենց ոճրագործություններից: Աշխատավոր ժողովրդի արյան գնով մաքրվող ասպարեզը դրանց համար չէ»[1]:

1906-1907թթ. հայ մարտիկների գնդակներից ընկան տասնյակ ոճրագործներ: Խստագույն պատիժները սթափեցնող ազդեցություն ունեցան, և ավազակախմբերի շարքերը գնալով մեծապես նոսրացան:

Ավերածությունների, սովի, ավազակախմբերի, պատժիչ արշավախմբերի ու դաժան էկզեկուցիաների երկրում այլևս չէին ուզում ապրել շատերը: Մի կողմից, գրպանում առանց կոպեկի հայ բանվորները Բաքվից հազարներով վերադարձել էին հայրենի գյուղերը, մյուս կողմից, այդ գյուղերի բնակիչները տասնյակ հազարներով փախչում էին արդյունաբերական կենտրոններ՝ հիմնականում Անդրկովկասից դուրս: Երևանի, Թիֆլիսի նահանգներից, Ղարսի շրջանից արտագաղթողները գնում էին Հյուսիսային Կովկաս, Սև ծովի Ղրիմի ափերը, Ռուսաստանի կենտրոնական նահանգները: Հին Նախիջևանից, Գանձակի նահանգի հայկական գավառներից ու շրջաններից, Սիսիանից, բուն Զանգեզուրից, Ղափանից, Վարանդայից, Խաչենից, Ղազախից հեռացողները գնում էին բախտ որոնելու Անդրկասպյան երկրներում և հիմնավորվում էին Կրասնովոդսկ, Աշխաբադ, Տաշքենդ, Մերվ քաղաքներում: Երկու տարում (1906-1907) Զանգեզուրից և Ղարաբաղից հեռացել էր ավելի քան 100 000 մարդ: Միայն Վարանդայից 1906թ. առաջին ամիսներին գաղթել էր 10 000

[1] «Դրոշակ», N 12(178) , դեկտեմբեր, 1906, էջ 182:

հոգի[1]: 1905-1906թթ. Հին Նախիջևանի գավառից Անդրկասպյան երկիր էր մեկնել և հիմնավորվել 3 500 հայ[2]:

Հայ մարդկանց հարազատ հողից պոկում էր խաբուսիկ պատրանքը, թե հեռու տեղերում ինքն ապահով կլինի: Բայց նա գնում էր դեպի անհայտություն: Դա փախուստ էր նոր վտանգներից, դա սեփական անձը փրկելու միջոց էր լոկ, դա լքում էր գոյության կռվի ասպարեզը, ուր իր հայրենակիցները, անլուր տառապանքներ կրելով, շարունակում էին մշտամնաց կառչած մնալ հայրենի բնաշխարհին:

Անդրկովկասի հայկական գավառներից կատարվող զանգվածային գաղթը վտանգի տակ էր դնում այնտեղ մնացածների գոյությունը և ընդհանրապես մեծ սպառնալիք էր Ռուսահայաստանի համար:

«Ալիքը» ցավով նշում էր, որ փոխանակ թև տալու համագյուղացիներին, գաղթողները փոքրոգությամբ լքում են հայրենի բնակավայրերը և, դրանով իսկ, ազատ ասպարեզ են տալիս ավարառու ոհմակներին: Շեշտելով, որ հենց դա են ուզում հայ ժողովրդի թշնամիները, թերթը շարունակում էր.

«Քանի դեռ ուշ չէ, պետք է շուտափույթ միջոցներ ձեռք առնել ավերիչ գաղթը կանգնեցնելու համար:

... Այսօր ոճիր է հայ մարդու համար թողնել իր տունն ու օջախը և ապաստանել հեռու քաղաքներ: Դա նշանակում է խաղալ հետադիմության մարդասպան խաղը, անդրկովկասյան հայության համար դա նշանակում է բնաջնջում, մա՜հ»[3]: Թերթը գյուղերից փախած տղամարդկանց կոչ էր անում վերադառնալ հայրենի եզերք. «Զգաստացե՛ք, պանդուխտներ: Մտածեցեք, թե ինչ անբուժելի պատուհաս եք բերում ձեր զանգվածային փախուստով: Եղեռնը անարգել տարածում է իր թևերը մեր կիսակործան երկրի վրա. ձեր անբախտ հայրերն ու մայրերը, ձեր կանայք ու երեխաները աղիողորմ օգնություն են կանչում, վերադարձե՛ք, լցրեք անձնվերների շարքերը և դիմադրեցեք արհավիրքին, միշտ ղեկավարվելով ինքնապաշտպանության վսեմ պատգամով»[4]:

Նույնքան տագնապով լի էր Ղարաբաղի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսի՝ հայրենի օջախները լքած և քաղաքներում ապաստան գտած հայրենակիցներին ուղղված դիմումը, որով նրանց կոչ էր անում վերադառնալ ծննդավայրերը: «Սխալ ու մահաբեր է ձեր բռնած ճանապարհը, - ասված էր դիմումի մեջ: - Դուք կանգնել եք կորստյան եզերքի վրա, իսկ թշնամին շարունակում է իր դավադրությունները: ... Լավ իմացեք, որ վախկոտները, լալկանները և փախչողները պետք է տուժեն, անեծքն է նրանց համար պակված օրհնության փոխարեն, և անարգանքն ու նախատինքն է նրանց բաժինը: Քանի դեռ ուշ չէ, ետ դարձեք կորստաբեր ճանապարհից, շարունակեցեք ապ-

[1] «Ալիք», N 41,15 հունիսի 1906թ.:
[2] «Կովկասի լրաբեր» (Թիֆլիս), N 226, 11 հոկտեմբերի 1913թ.:
[3] «Ալիք» (Թիֆլիս), N 41, 15 հունիսի 1906թ.:
[4] Նույն տեղում:

ռել ձեր երկրում լի հույսերով, մաքառելով ու կռվելով ձեր ժողովրդին վտանգ սպառնացող թշնամու դեմ»[1]:

Իհարկե, այդ և նման կոչերը ազդեցություն էին թողնում հատկապես գյուղական երիտասարդության վրա: Երիտասարդների մեծ մասը, այնուամենայնիվ, գերադասում էր, թեկուզ կիսաքաղց, մնալ հայրենի գյուղերում և ավազակախմբերից պաշտպանել հարազատներին ու համագյուղացիներին:

Ազգամիջյան կռիվները մեծապես վատթարացրին կովկասյան թուրք և հայ ժողովուրդների փոխհարաբերությունները, նաև թունավորեցին երկրամասի կյանքը: Բայց հետևանքները դրանով չսահմանափակվեցին:

*Թուրք-հայկական ջարդերը այս կամ այն չափով երկու ժողովուրդների ազգամիջյան հարաբերությունների մեջ **ներգրավեցին նաև Անդրկովկասում ապրող մյուս ժողովուրդներին**: Բոլշևիկյան «Կայծը» գրում էր. «Կոտորածը մի սոսկալի դժբախտություն է մեր երկրի նաև այն ազգերի համար, որոնք, ըստ երևույթին, ոչ մի կապ չունեն այդ կոտորածի հետ»[2]:*

Թուրք-հայկական ընդհարումներից, իրենցից անկախ, տուժեցին նաև վրացիները: Ահավոր չարիք լինելով երկու ժողովուրդների համար՝ այդ ընդհարումները միաժամանակ նշանակալի մնասներ հասցրին Վրաստանին: «Մենք վստահ ասում ենք, - գրում էր «Կայծը», - որ եթե չլիներ հայ-թաթարական դժբախտ կոտորածը, Վրաստանը երբեք չէր ենթարկվի այն կատաղի ու անխնա ավերումին, որին նա ենթարկվեց 1905թ. դեկտեմբերյան ապստամբությունից հետո: Ավելին՝ Կովկասը երբեք այնքան խղճուկ դեր չէր կատարի դեկտեմբերյան ապստամբության ժամանակ, երբեք այնքան խայտառակ պարտություն չէր կրի, եթե չլիներ այդ դժբախտ կոտորածը»[3]:

Մյուս կողմից, պետք է նշել, որ թուրք-հայկական ընդհարումները մեծապես նպաստեցին Կովկասում վրաց բուրժուազիայի և ազնվականության մեծապետական նկրտումների ուժեղացմանը: «Կարելի է ասել, - գրել է Ա. Գյուլխանդանյանը, որ այդ ընդհարումների հետևանքով սկիզբ առավ վրացիների գերազդեցությունը կովկասյան ժողովուրդների քաղաքական կյանքի վրա և որ շարունակվում է մինչև օրս»[4]:

Այդ երկու արյունալի տարիներին էր, որ վերջնականապես ձևավորվեցին Անդրկովկասի երեք ժողովուրդների քաղաքական ձգտումները:

Ջարդերի դադարեցման մասին Ա.Գյուլխանդանյանը շարունակում էր իր խորհրդածությունները.

«Հայերը, վրացիները և թաթարները, կամենան թե ոչ, լինեն անկախ պետություններ թե տերիտորիալ կապերով միմյանց հետ կապված, ստիպված են միասին ապրել և հաճախ միասին վարել միանման քաղաքական գործունեություն, իսկ դա հնարավոր է միայն այն ժամանակ, երբ կովկասյան ժողովուրդների քաղաքական կյանքի վարիչները պետական հասունություն ու իմաստություն կունենան և անկեղծորեն կցանկանան չկրկնել նախկին սխալները, որոնք այնքան աղետաբեր եղան անխտիր կերպով բոլորի համար»[1]:

*Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ **խորացավ այն անվստահությունը, որ կար սոցիալ-դեմոկրատների և Հ.Ց. դաշնակցության միջև:***

Սոցիալ-դեմոկրատները դաշնակցության կռվելու ձևերն ու մեթոդները համարում էին թթու ազգայնականության դրսևորումներ, գտնելով, որ նրա գործողությունների միակ կանոնավոր եղանակը կլիներ հայ ու թուրք աշխատավոր մասսաների միջև համերաշխության հաստատումը՝ բուրժուազիայի և կառավարության դեմ կռվելու համար: «Սկզբում ընդհանուր ուժերով քանդենք Բաստիլիան, որից հետո ընդհանուր ուժերով կկործանենք թուրքական Վանդեան», - ասում էին նրանք:

Դաշնակցականները սոցիալ-դեմոկրատներին առարկելով ասում էին, որ գործերի դրությունն իրենց ստիպում է ամենից առաջ մտածել հայ ժողովրդի ինքնապաշտպանության մասին:

Խորացած անվստահությունն ու տարաձայնությունները լրագրական բանակռվի վերածվելով՝ ավելի սրեցին երկու կողմերի փոխհարաբերությունները:

*Վերջապես, թուրք-հայկական ընդհարումների տված ամենամեծ մնասներից մեկն այն եղավ, որ **հայերը և կովկասյան թուրքերը դուրս մնացին ռուսական** ողջ կայսրությանը փրկող **ազատագրական կռվից:** Հրահրելով ազգամիջյան կոտորածներ ու ջարդեր՝ ցարիզմը կարողացավ իր դեմ ուղղված համառուսաստանյան ժողովրդական շարժումից մեկուսացնել հայ և թուրք աշխատավոր զանգվածներին և դրանով իսկ մեծ հարված հասցնել հեղափոխության գործին Կովկասում:*

Այդ հարցին անդրադառնալով՝ «Դրոշակը» գրում էր. «Բայց «Դաշնակցության» գլխավոր կռիվը, ցավոք, կովկասյան թաթարների դեմ էր հեղափոխության օրերին: Այստեղ նա թափեց անբավ եռանդ, այդտեղ նա տվեց անգնահատելի զոհեր, որոնք արժանի էին ավելի բարձր, ավելի վսեմ մի գործի: Բախտի չարաշուք տնօրինություն: Չլիներ թուրք զանգվածների այդ հակահեղափոխական եղբայրադավ ըմբոստացումը՝ մենք ուրիշ կերպ կը ծառայեինք Կովկասի ազատագրության գործին, և փոքրիկ Գուրիան մենակ չէր պարզի զինված ապստամբության դրոշը...»[2]:

---

[1] **«Ալիք»** *(Թիֆլիս), N 50, 28 հունիսի 1906թ.:*
[2] **«Կայծ»**, *N 24, 7 հունիսի 1906թ.:*
[3] *Նույն տեղում:*
[4] **Ա. Գյուլխանդանեան**, *Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, Բաղուի առաջին ընդհարումները, էջ 9:*

---

[1] **Ա. Գյուլխանդանեան**, *Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, Բաղուի առաջին ընդհարումները, էջ 9:*
[2] **«Դրոշակ»**, *N 1(167), հունվար, 1906, էջ 3: Ժամանակին այն տեսակետն է արտահայտվել, որ եթե կովկասահայությունը ներքաշված չլիներ թուրք-հայկական 1905-1906թթ. ընդհարումների մեջ, այլ լայնորեն մասնակցեր համառուսաստանյան հեղափոխական շարժմանը, ապա Կովկասում նրա դիրքերն ու դերությունը միանգամայն ուրիշ կլիներին՝*

Արդյո՞ք Թուրք-հայկական 1905-1906թթ. կոտորածների խորշակը այլևս չի շաչելու կովկասյան երկնակամարում, ո՞րն է ազգային առճակատումները Անդրկովկասում վերջ տալու և երկրամասի ժողովուրդների միջև կայուն խաղաղություն հաստատելու ուղին, - այս հարցերը հուզում էին մարդկանց մտքերը և պատասխանի էին սպասում:

Հայ պահպանողականների տեսակետն այն էր, որ Թուրք-հայ թշնամանքը կարող է մեղմվել միայն ռուսական կառավարության խստությունների, կարգի պահապանների կողմից իրենց պարտականություններն անթերի կատարելու դեպքում, այլապես Թուրք-հայ նոր կոտորածներն ու ջարդերը անխուսափելի են գալիքում:

Հայ լիբերալները (հայ կադետներ, մշակականներ) գտնում էին, որ Թուրք-հայ նոր ջարդերին ու կոտորածներին վերջ տալու հիմնական պայմաններից մեկը Թուրք ժողովրդի մշակութային հետամնացության հաղթահարումն է, առանց որի միշտ մնալու է հայերի հետ Թուրքերի ընդհարման վտանգը: Նրանց համար սփոփիչ էր, որ Ադրբեջանի Թուրքերի շրջանում գնալով ավելի ու ավելի հաճախ են լսվում զգաստ ձայներ, կոտորածները դատապարտող ելույթներ: Այդ տեսակետից 1906թ. կեսերից առանձնանում էր Բաքվի «Հայաթ» թերթը:

Հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների (Հնչակ, դաշնակցություն) համոզմունքն այն էր, որ երկու ժողովուրդներին հնարավորին չափ պետք է բաժանել իրարից, այսինքն՝ պետք է կատարվի համապատասխան սահմանաբաժանում, դրանից բխող իրավունքներով հանդերձ: Հայերն ու կովկասյան Թուրքերը պետք է ունենան որոշակի տարածքներ և ինքնավար ապրելու իրավունք:

«Հետևապես, - գրում է Ռուբեն Խան-Ազատը, - չափավորելով մեր սպասելիքները, գիտակից լինենք մեր ապագա անելիքներին ու չմտածենք, թե մեր ազատագրության գործն արդեն վերջացած է: Նա դեռ նոր է սկսվում»[1]:

Ինչ վերաբերում է հեղափոխական սոցիալ-դեմոկրատներին (բոլշևիկ և մենշևիկ), ս.դ. բանվորական հայ կազմակերպությանը և սոցիալիստ-հեղափոխականներին, ապա սրանք բոլորը գտնում էին, որ Անդրկովկասում երբեք չի հաջողվի հաշտություն հաստատել, քանի դեռ տապալված չէ ցարիզմը:

Բոլշևիկյան «Կայծը» նշում էր. «Միմյանց կոտորելով երբեք չի կարելի

ամուր և ապահով: Բայց քանի որ այդպես չի եղել, ուստի, ըստ այդ տեսակետը կրողների, կովկասահայության հետագա անհաջողությունները բացատրվում են հենց դրանով, այն է՝ հայ ազգայնական կուսակցություններին հաջողվել էր Թուրք-հայկական ընդհարումների մեջ ներքաշել հայության մեծ զանգվածների, իսկ հայ բոլշևիկները չէին կարողացել դրան արգելք հանդիսանալ, մեկը մյուսի հետևից զիջել էին իրենց դիրքերը և մեծապես թուլացել: Դրա հետևանքով 1917-1921թթ. նրանք չնչին ազդեցություն ունեին Ռուսաստանի կառավարության վրա, իսկ Կովկասում մեծապես զիջում էին վրացիներին ու Թուրքերին: Այսպես կարծողները նույնիսկ Բրեստի ճակատագրական դեպքերը ինչ-որ չափով կապում էին Թուրք-հայկական կռիվների հետ:

1 **«Մշակ»**, N 95, 5 մայիսի 1906թ.:

վերջ տալ կոտորածներին: Քանի դեռ գոյություն ունի բռնակալությունը, ժողովուրդների անմեղ արյունը կհոսի ծովի պես՝ դժբախտացնելով ու ամայացնելով երկիրը: Եղբայրասպան կոտորածները կվերջանան միայն այն օրը, երբ կհաղթանակի Ռուսաստանի մեծ հեղափոխությունը»[1]: Ուստի երկու ժողովուրդները պետք է հասկանան կոտորածի ամբողջ կործանարար լինելը և միացնեն իրենց ուժերը արյունարբու միապետության տապալման համար:

Բայց այս ընդհանուր տեսակետի կողքին Թուրք-հայկական հակասությունների և հնարավոր նոր ընդհարումների մասին այդ կազմակերպություններից յուրաքանչյուրը նաև ուներ իր ուրույն, մյուսներից տարբերվող, մոտեցումները:

Այսպես, բոլշևիկները շեշտը դնում էին հայ և Թուրք ծայրահեղ նացիոնալիզմի դեմ պայքարի անհրաժեշտության վրա: Միաժամանակ գտնում էին, որ նացիոնալիզմի գաղափարախոսությունն անհնարին է կասեցնել առանց տապալելու ոչ միայն ցարիզմը, այլև բուրժուազիային: Ցանկություն ունենալ, որ Անդրկովկասում վերջ գտնեն կռիվները, միաժամանակ կողմնակից լինել ազգայնության գաղափարին, ասում էին բոլշևիկները, նշանակում է փորձել կրակը հաշտեցնել նավթի հետ: Ցանկանալ, որ վրացի ազնվականն ու մահմեդական հողատերը կամ կապիտալիստը հաշտվեն հայ բուրժուայի հետ, նշանակում է անհեթեթ հույսեր փայփայել: Եթե անգամ երբևիցե հաշտություն կայանա այս պայքարող ուժերի միջև, այն կլինի ոչ ավելին, քան կարճատև զինադադար»[2]:

Այստեղից հետևում էր, որ նրանք, ովքեր անկեղծորեն ցանկանում էին հաշտություն, ովքեր ուզում էին ստեղծված դժոխքի փոխարեն տեսնել մարդկային կացություն, պետք է հրաժարվեին բուրժուազիայի հետ հույս կապելու բոլոր երազներից: Անհրաժեշտ է երկրի ազգաբնակչության մեջ գտնել այն տարրը, որին օտար էր ազգայնական կռիվը, որը եթե նույնիսկ մասնակցում էր այդ կռվին, ապա միայն այն պատճառով, որ դեռ չէր կարողացել ըմբռնել յուր միջավայրի ճիշտն ու սխալը, դեռ չէր կարողացել իրեն անջատել անցյալի կաշկանդիչ ազդեցությունից:

«Հայ և Թուրք աշխատավոր զանգվածների շահերը նույնն են, և կոտորածն իր ամբողջ զարհուրելի ծանրությամբ ընկած է հավասարապես երկու կողմերի վրա»[3], - գրում էր «Կայծը»: Ուստի հենց աշխատավորներն են ի վիճակի հաշտություն հաստատելու: Պրոլետարները եղբայրներ են ոչ թե կեղծ հայտարարություններով, այլ ամենօրյա այն պայքարի մեջ, որ նրանք մղում են ամեն ազգի պատկանող բուրժուազիայի դեմ:

Կոտորածների հիմնական պատճառը համարելով ծայրահեղ նացիոնալիզմը՝

---

1 **«Կայծ»**, N 24, 7 հունիսի 1906թ.:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում:

բոլշևիկները, այդ թվում նաև հայ բոլշևիկները, մերժում էին պանիսլամիզմի գաղափարը Թուրք-Հայկական ընդհարումների մեջ, գտնելով, որ դա նացիոնալիստների կողմից արհեստականորեն բարձրացրած հարց է՝ իրենց գործունեությունը քողարկելու համար:

Ի տարբերություն բոլշևիկների՝ ս.դ. բանվորական հայ կազմակերպությունը («սպեցիֆիկներ») ոչ միայն չէր մերժում պանիսլամիզմի դերը Թուրք-Հայկական ընդհարումների մեջ, այլև գտնում էր, որ այն խաղացել է դիվային դեր սկզբից մինչև վերջ:

«Սոցիալիստ» թերթը գրում էր. «Եթե թաթար ժողովրդից հեռու չմղենք համիսլամիզմը, ապա կնմանվենք ծիծաղաշարժ այն քրմերին, որոնք, բարձրանալով Վեզուվի գագաթը, նստել էին նրա բերանի մոտ, աղոթում էին, որպեսզի իրենց աստվածը վերջ տա հրաբխի ժայթքումներին»[1]:

Թուրք-Հայկական նոր ընդհարումները բացառելու հնարավորությունների մասին ս.դ. բանվորական հայ կազմակերպության մյուս բոլոր տեսակետները լիովին համընկնում էին բոլշևիկների տեսակետների հետ:

Ինչպես բոլշևիկները, «սպեցիֆիկները» նույնպես չեշտում էին, որ իր վիճակով հայ պրոլետարիատը, ինչպես ռուս, այնպես էլ մյուս բոլոր ազգերի պրոլետարիատի պես դեմ է կապիտալիստական կարգերի գոյությանը, նրա համար ամենևին քաղցր չէ իր ազգության պատկանող հարստահարիչների ճնշումն ու շահագործումը, ինչպես այլազգի բուրժուազիայինը: Ովքեր անկեղծորեն ցանկանում են երկու ժողովուրդների հաշտություն, պետք է հեռանան բուրժուազիայից և կանգնեն պրոլետարիատի կողքին: Հեղափոխական ուժերը պետք է կարողանան մերձեցում ստեղծել բովանդակ Անդրկովկասում: «Սոցիալիստը» գրում էր.

«Հեղափոխական ուժեր կան մեր մեջ, վրացիների մեջ, նույնիսկ մահմեդականների մեջ: Դրանց մի մասը դեռ չի կտրվել բուրժուազիայից, բայց անպայման կհեռանա նրանից: Միայն հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, միայն կազմակերպված պրոլետարիատը կարող են մերձեցում ստեղծել»: Թերթը կոչ էր անում.

«Զարկեցե՛ք, ուրեմն, մուրճերը, ընկերնե՛ր, փշրեցե՛ք պրոլետարիատի գիտակցությունը կաշկանդող շղթաները, նրան ցույց տվեք այսօրվա ազգայնական կռիվների պատճառները: Բոլորը պետք է իմանան, թե ինչպես են բանվորները իրենց կյանքը մաշում նկուղների ու գետնափոր կացարանների խավարում, ինչպես են քրտինք թափում հանուն կապիտալիստների գրպանների ուռճացման: Գնացե՛ք և ճշմարտությամբ բացեք նրանց աչքերը: Եթե լուսավորվեն խավարի մեջ տապակվող շահագործվող աշխատավոր բազմությունների մտքերը, ապա նրանք հոծ խմբերով կկանգնեն բուրժուազգայնական անջատումների դեմ: Այնժամ բուրժուաների կողմից տարածված ատելության և թշնամանքի թանձր խավարի միջով նրանք իրենց ձեռքերը կմեկնեն միմյանց և կգոչեն. «Կորչի՛ ազգայնական պայքարը, կեցցե՛ պրոլետարիատի միջազգային համերաշխությունը»: Սոցիալիստորեն կազմակերպված պրոլետարական զանգվածները կլինեն այն ուժերը, որոնք ոչ թե կխնդրեն հաշտություն, այլ կստիպեն, որ հաշտություն լինի և այն լինի ընդմիշտ»[1]:

Ինչ վերաբերում է սոցիալիստ-հեղափոխականներին, ապա ինչպես բազմաթիվ ուրիշ հարցերում, այս հարցում նույնպես նրանք համերաշխ էին Հ.Ց. դաշնակցության տեսակետներին, միաժամանակ քննադատում էին բոլշևիկներին այն բանի համար, որ սրանք մերժում էին պանիսլամիզմի խաղացած ոճրագործ դերը Թուրք-Հայկական ընդհարումների մեջ, ինչպես նաև կոտորածների մեղքը շատ դեպքերում հավասարապես բաժանում էին Թուրքերի և Հայերի միջև:

Որքան էլ տարօրինակ է, **Թուրք-Հայկական ընդհարումները**, իրենց մարդկային և նյութական ահավոր կորուստներով, **ունեցան նաև դրական հետևանքներ**: Անդրադառնալով 18 ամիս տևած կռիվների ընթացքում առաջացած դրական երևույթներին, դաշնակցական նշանավոր գործիչ Մալխասը (տրապիզոնցի Արտաշես Հովսեփյան) գրել է.

«... Կասկածից դուրս է, որ այդ կռիվները... զարմանալի կերպով ուղղեցին Հայու կորցած մեջքը և ուժգին թափով մը նպաստեցին ազգային գիտակցության արթնացման Կովկասի մեջ»[2]:

Կովկասահայության ազգային գիտակցության արթնացման վկայություններից էին.

1. Հայերի նկատմամբ իշխանությունների բացահայտ անբարյացակամության և կովկասյան Թուրքերի ատելության պայմաններում Հայ ժողովուրդը ստիպված էր դեմ կանգնել անակնկալ վտանգին՝ ապավինելով միայն ինքն իր ուժերին[3]: Ինքնավստահության զարմանալի կորովով նա կուրծք տվեց թշնամուն:

2. Ընդհարումները համերաշխության ոգի արթնացրին և միասնական կամք կոփեցին Հայության մեջ: Ցրված գրեթե ամբողջ Կովկասում, առանց ներքին անմիջական կապի, ամբողջ Հայությունը կռիվների ընթացքում անխտիր մի միասնական ճակատ կազմեց: Իր երկարատև պատմության ընթացքում ժողովուրդը շատ քիչ անգամ էր ի հայտ բերել այդպիսի միասնականություն: «Բաթումեն մինչև Բաքու, Զաքաթալաեն մինչև Երևան, - Նշել է Մալխասը, - Հայությունը սերտ միություն մը կազմեց, բարոյական մեծ ուժ մը, որ ներքին ազգային շաղախով մը կապեց այդ ցրուած հատուածները: Այդ հատուածները՝ մեկուսացած իրարմե՝ հազիվ թե արժեք մը ունենային, բայց

[1] **«Սոցիալիստ»**, N 9, 9 (22) օգոստոսի 1905թ.:

[1] **«Սոցիալիստ»**, N 9, 9 (22) օգոստոսի 1905թ.:
[2] **«Հայրենիք»**, N 8 (92), հունիս, 1930, էջ 84:
[3] Տե՛ս **Ա. Ամուրեան**, Հայ դատ: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, էջ 73:

ձեռք-ձեռքի տուած՝ դարձան անխորտակելի ուժ մը, որին դեմ ի զուր, գրոհ տուին թաթարական ուժերը, ավելի բազմաթիվ, ավելի պատրաստուած, ավելի ընդունակ զենքի գործածութեան»[1]:

3. Մինչև Թուրք-հայկական ընդհարումները՝ տնտեսական հողի վրա հայը վեր էր կանգնած իր դրացիներից՝ վրացիներից և Թուրքերից, բայց որպես ինքնուրույն ազգային տարր նրանց հետ համահավասար հողի վրա չէր, նրանց զիջում էր հատկապես ռազմավարությամբ: Եթե եկեղեցական կալվածքների գրավման ժամանակից կիսով չափ ռուսացած հայությունը ազգային զարթոնքի փայլուն օրինակ տվեց, ապա Թուրք-հայկական կռիվները լրացուցիչ միջոց դարձան նոր ավիշ ներարկելու ազգային գիտակցությանը, այն արժեքավորելու գործնականորեն: Այդ երկու ազդակները մեծապես հեղաշրջեցին կովկասահայ կյանքը, վերագնահատեցին հայի դերը Կովկասում: Ձեռք բերած բարոյական այդ նոր արժեքով փրկվեց հայի պատիվը: Մալխասի խոսքերով ասած՝ «Բարձրացավ կովկասահայի առնական ոգին և դիմադրական կարողությունը»[2]: Թուրքությունը պատկառանքով լցվեց դեպի երեկվա չարչի համարված հայ հարևանը: Նրա երկու գլխավոր հարևանները՝ Թուրքերը ու վրացիները, ստիպված էին այլևս լրջորեն հաշվի նստել նրա հետ: «Հայերը, - գրում էր Բոստոնի «Հայրենիք» Թերթը, - ցույց տուին օտարներուն, թե՝ իբր ճարպիկ վաճառական ու վաշխառու ճանցված ժողովուրդը գերազանցապես քաղաքակրթիչ տարր մըն է, տարիներու ստրկական բեռին տակ իր մարտական ուժն ալ պահած»[3]: Դա արժեքավորեց հային, ամրացրեց նրա դիրքը Կովկասում, «չեչտեց անոր գոյութեան անվիճելիությունը և արժեքը այդ երկրի մեջ և վճռականությունը ապրելու, եթե նոյնիսկ չ՝ուզեն, որ ինքը ապրի»[4]: Այդ էր պատճառը, որ հայ ժողովրդի կյանքով օտարներն ավելի մեծ հետաքրքրություն սկսեցին հանդես բերել: Դառն իրողություն է, չեչտում էր «Հայրենիք» Թերթը, որ «քաղաքակրթությունը շղթայված կը մնայ տակավին Թնդանոթի անիվներուն և «լուսավորված» ազգերը ամենեն ավելի ռազմերգեն կ՝ախորժին»[5]: «Հայը ճանաչուեցավ իր դրկիցներեն ոչ միայն [որպես] մաճկալի ու արշինի ժողովուրդ, այլ և զենքի»[6]: Եթե ապրում ես դաշնակիցների մեջ, տարրական խոհեմությունը պահանջում է ինքդ էլ կողքիդ դաշույն ունենաս կապած:

«Անգամ մը Նախիջևանցի պարսիկ քելպելայի մը հետ կառքով կ՝անցնեինք հայկական գյուղի մը մեջեն, - վերհիշել է Մալխասը: - Գյուղի երեխաները, փայտե հրացաններով զինուած, պատերազմ կը խաղային: Քելպելան, մորուքը շփելով, մտահոգ դեմքով մը ինձ դարձավ. «Աշխարհքը կարծես ծուռ է»: «Այո՛, ըսի, աշխարհքը շտկուեր է»»[1]:

4. Աննախընթաց սերտ գործակցություն առաջ եկավ տաճկահայ և կովկասահայ հատվածների միջև: «Մինչև հայ-թաթարական կռիվները, - նկատել է Մալխասը, - կովկասահայը տաճկահայուն վրա կը նայեր, որպես սահմանի մյուս կողմը գտնուող իր խեղճ ազգակիցներու վրայ, որոնց հարկ էր օգնել և որոնց համար պետք էր գործել, նուիրել ու զոհաբերել: Անոնք, տաճկահայերը, Հայաստանի բնիկ ժողովուրդն էին, անզոր ու ստրկացած, որոնց պետք էր ուսուցանել, պետք էր առաջնորդել, կորով ներշնչել, օրինակ՝ տղամարդու նման ըմբոստանալու, ծառանալու բռնակալութեան դէմ: Տեսակ մը բարոյական խնամակալութիւն, որու հիմքը կը կազմէր այն հանգամանքը, որ յեղափոխական շարժումները ստեղծուած էին տաճկահայու ազատագրման համար, իսկ կովկասահայերը, որպէս առաջնորդ, կամ երկրի գործիչ, ու զինուոր, կ՝երթային հոն, Երկիր, իրենց բաժին մասնակցութիւնը ունենալու, իրենց պարտքը կատարելու համար հանդէպ իրենց եղբայրակիցներուն:

Հայ-թաթարական կռիվները եկան այս ոչ ցանկալի ըմբռնողութիւնը հիմնովին փոխելու: Այլևս միայն մէկ կողմը չէր որ կուտար միշտ, այլ եւ պարագայի համեմատ կուտար ու կը ստանար, առաջ բերելով հատուածներու բարոյական արժէքի հաւասարեցում»[2]:

Թուրք-հայկական ընդհարումների դադարեցումը և երկու կողմերի միջև հաշտության կայացումը, ինչպես ցույց տվեց կյանքը, ժամանակավոր էր: Թեև հրդեհի բոցերը հանգել էին, բայց դեռ մխում էր դառը ծուխը, և մոխրի տակ անթեղված կրակը վաղ թե ուշ նորից էր բոցավառվելու:

Դեռ երկար պիտի գլորվեր մարդկային առաջադիմության անիվը:

ԹՈՒՐՔ - ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Սույն աշխատության նախորդ գլուխներում տարբեր առիթներով ցույց է տրված, թե ինչպես 1905թ. առաջին կեսին Կովկասի, Ռուսաստանի և Եվրոպայի հասարակական միտքը քննում ու լուսաբանում էր Բաքվի փետրվարյան կոտորածների պատճառները, կանխատեսում հնարավոր հետևանքները: Հետագայում նույնպես, մինչև Թուրք-հայկական ընդհարումների ավարտը և դրանից հետո, հասարակայնության ուշադրությունն ու հետաքրքրությունը շարունակում էր գամված մնալ 1905թ. փետրվար - 1906թ. օգոստոս ժամանակաշրջանում կովկասյան արյունալի դեպքերին: Տարբեր երկրների մամուլի

1 «Հայրենիք», N 8 (92), Հունիս, 1930, էջ 84:
2 Մալխաս, Ապրումներ, հատ. Ա, էջ 431:
3 «Հայրենիք» Թերթ (Բոստոն), N 7 (449), 15 փետրվարի 1908թ.:
4 Մալխաս, Ապրումներ, հատ. Ա, էջ 431:
5 «Հայրենիք» Թերթ (Բոստոն), N 7 (449), 15 փետրվարի 1908թ.:
6 Մալխաս, Ապրումներ, հատ. Ա, էջ 431:

1 Մալխաս, Ապրումներ, հատ. Ա, էջ 432:
2 «Հայրենիք», N 8 (92), Հունիս, 1930, էջ 85:

օրգաններ, քաղաքական ու հասարակական գործիչներ բացահայտում և քննում էին պատերազմի պատճառները, վերլուծում արդյունքները, ենթադրություններ անում գալիքին թողած ժառանգության մասին:

Ռուսաստանի և ուրիշ երկրների վերլուծաբանները տարբեր կերպ էին մեկնաբանում Կովկասում ընդհարումների պատճառները: Դրանք, որպես կանոն, քննության էին առնվում ոչ թե ամբողջության մեջ, այլ՝ առանձին-առանձին, այսինքն՝ պատճառը համարելով կամ մեկը, կամ մյուսը: Պատճառների թվում առանձնացվում էին հայերի և թուրքերի տնտեսական ու սոցիալական առանձնահատկությունները, մահմեդականների և քրիստոնյաների կրոնական անհանդուրժողականությունը, հայերի և թուրքերի ցեղային առանձնահատկությունները, երկու ազգերի քաղաքական հայացքների տարբերությունները, հայերի ազգայնամոլությունը և այլն: Իրականում թուրք-հայկական դրման տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական պատճառների մի հյուսվածք էր:

Վերլուծաբանների մեծ մասը թե՛ Ռուսաստանում և թե՛ Եվրոպայում թուրք-հայկական կոտորածների գլխավոր պատճառը համարում էր ***տնտեսականը:***

"Московские Ведомости" *թերթը նշում էր, թե ողբերգության հիմնական պատճառը պետք է փնտրել այն բանում, որ հայը տնտեսապես բարեկեցիկ է, իսկ թուրքը՝ զրկված ու թշվառ*[1]*: Նույն միտքը Պետերբուրգի* "Новости" *թերթը արտահայտում էր 1905թ. N 55-ում:*

Ըստ որում, նման գնահատականի հարցում համարյա միակարծիք էին ցարական բռնակալության պաշտպան մամուլը, վրաց և թուրք ազնվականության տեսակետներն արտահայտող մամուլի օրգանները, նաև հայ պահպանողականների և լիբերալների մի մասը:

Թուրք-հայկական ընդհարումների պատճառը զուտ տնտեսական էին համարում նաև կովկասաբնակ մի շարք ռուս և այլազգի հրապարակախոսներ: Բաքվի փետրվարյան կոտորածից հետո իրենց հրապարակումներում նրանք փաստում էին, որ թուրքերի գործողությունները ծնունդ են նրանց հարստահարված վիճակի, հետևանք՝ քաղաքային թուրք բնակչության մոտ սկսված պրոլետարացման: Այդ հրապարակախոսները կովկասյան իրականության վրա արհեստականորեն պատվաստում էին արևմտյան և ռուսաստանյան կյանքի իրողությունները՝ չխորանալով երկրամասում ապրող ժողովուրդների պատմական զարգացման առանձնահատկությունների մեջ: Եթե այդ իրողություններն արտահայտող ֆորմուլաների համաձայն Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում կատարվող կողոպուտների ու սպանությունների պատճառը ապրուստի միջոցներից զրկված լինելն է, այսինքն՝ մարդկանց պրոլետարացման պրոցեսը, այստեղից եզրակացություն, որ նույն մոտեցումով պիտի բացատրել նաև Կովկասում տեղի ունեցող կոտորածներն ու թալանը:

[1] **"Московские Ведомости"**, 21 апреля 1905г.

Տնտեսական պատճառի վրա ամենից շատ ծանրանում էին հատկապես եվրոպացիները:

Եվրոպական մամուլը Բաքվի փետրվարյան անմիտ ողբերգությանն ուրիշ բացատրություն չուներ, բացի տնտեսական հակամարտությունը մատնացույց անելուց: Ըստ որում, այս դեպքում էլ հայերը ներկայանում էին որպես շահի ու կեղեքման տենչանքով բռնված, էությամբ վաշխառու և առևտրական մի տարր, հետևապես՝ տնտեսապես ինքնաբավ ժողովուրդ, իսկ թուրքերը՝ ճնշված, աղքատ ու տառապյալ:

Ի տարբերություն եվրոպական պաշտոնական պահպանողական մամուլի ծուռ ու շիլ մեկնաբանությունների՝ ազատական և սոցիալիստական մամուլը, որն ընդհանուր առմամբ ճիշտ էր ներկայացնում Անդրկովկասում ծավալված դեպքերը, անողոքաբար մերկացնում էր կոտորածների մեջ ցարական կառավարության դերը, բայց կոտորածների պատճառներին անդրադառնալիս՝ նույնպես ծանրանում էր տնտեսական ֆակտորի վրա:

*Նույնիսկ Ժորեսի «Ցումանիտեն», տպագրելով «Դրոշակի» խմբագրության՝ քաղաքակիրթ մարդկությանն ուղղած կոչը և համերաշխվելով կոչի հիմնական հարցադրումներին, հարկ էր համարել խմբագրության կողմից ավելացնել, որ «մեր հայ ընկերները, այնուամենայնիվ, չպետք է ուրանան, որ թուրքերը դժգոհ լինելու պատճառներ ունեն, քանի որ հայերը [նավթաբեր] հողի առաջին գրավողներն են (*Les Premiers occupants*), որ նրանց (թուրքերին) զրկել են»: Մեղմ ու քաղաքավարի այս ձևակերպման մեջ հայը կրկին ներկայացվում էր որպես թուրքերի հողերին տեր դարձած շահագործող տարր:*

Հիմնական պատճառ համարելով տնտեսականը՝ եվրոպական սոցիալիստական միտքը կովկասյան իրադարձությունների մասին դատում էր նմանությունների, զուգահեռների մեթոդի կիրառմամբ:

Սոցիալիստական գաղափարախոսության համաձայն, ազգամիջյան ընդհարումները առաջանում են տնտեսական հողի վրա հատկապես բազմազգ երկրներում: Որպես դասական օրինակ, սոցիալիստները հաճախակի մատնացույց էին անում Ավստրո-Հունգարիան, որտեղ երկարատև թշնամական հարաբերությունների մեջ էին ավստրիական գերմանացիները և մաջարները:

Ցարական Ռուսաստանում և եվրոպական երկրներում սանձազերծված հակասեմիտիզմը նույնպես, սոցիալիստների մեծ մասի կարծիքով, հետևանք էր տնտեսական մրցակցության, որի արդյունքում հրեական կապիտալը միշտ հաղթող էր դուրս գալիս՝ իր հետ բերելով ատելություն հրեա ժողովրդի նկատմամբ:

Բավարարվելով միայն նմանության մեթոդի կիրառմամբ, պնդելով, որ մարդը նույն էակն է երկրագնդի բոլոր մասերում նույն բնազդներով ու ախորժակով, սոցիալիստներից շատերը փորձում էին կովկասյան կյանքն իր առանձնահատկություններով խցկել կանոնակարգված բանաձևերի մեջ:

Նման մոտեցումն ի վերջո հանգեցնում էր այն եզրակացության, որ, իբր,

ցարիզմի և իսլամական վիժվածքների հարուցած արյունալի ջարդերի մեջ հավասարապես հանցավոր են (կամ հանցավոր չեն) և՛ հայը, և՛ թուրքը, բայց եթե երևույթը, այնուամենայնիվ, քննության առնվի խորությամբ, ապա պարզ կդառնա, որ պատասխանատվության հիմնական բեռը ընկնում է «տնտեսապես ուներ» հայության ուսերին: Տնտեսական տեսությունների անտեղի ու երբեմն անհեթեթ կիրառումներով անգիտակցաբար վարագուրվում է ոճիրը, մի կողմ է թողնվում ոճրագործների հոգեբանությունը, նրանց բարբարոսական բնավորության դրսևորումները, որոնք արդյունք են տվյալ ժողովրդի պատմական զարգացման առանձնահատկությունների:

Իհարկե, եթե ջարդերի պատճառների խորհրդածություններն ու մեկնաբանությունները մնային միայն տեսության շրջանակներում, ապա նույնիսկ ամենադոգմատիկ մոտեցումները, որքան էլ դրանք հեռու լինեին իրականությունից, իրենցից վտանգ չէին ներկայացնի, բայց քանի որ կոտորածների պատճառների մասին նման կարծիքներն անմիջապես լայն արձագանք էին գտնում, ուստի դրանք գործնական կյանքում խաղում էին խիստ բացասական դեր: Դոգմատիկ մոտեցումներով խնդիրը քննող հրապարակախոսներն ըստ էության արդարացնում էին կոտորածների կազմակերպիչ ցարական իշխանություններին և համիսլամականներին, փոքրացնում նրանց հանցավորության չափը:

Ակնհայտ է, որ Կովկասում թուրք-հայկական ընդհարումները չէր կարելի բացատրել միայն տնտեսագիտական տեսություններով ու մոտեցումներով, թեև, մյուս կողմից, սխալ կլիներ լիովին անտեսել տնտեսական գործոնի դերը: Անժխտելի է, որ վերջինս կարևոր տեղ ուներ խնդրո առարկա պատճառների թվում:

Անդրկովկասյան թուրքերի իշխող տարրերը՝ խաները, բեկերը, աղալարները, որոնք ռուսական տիրապետության տակ էլ պահպանել էին վաղեմի առանձնաշնորհումներն ու ավատապետական իրավունքները, շարունակում էին իրենց ձեռքում պահել երկրամասի հիմնական հողատարածքները: Նրանք տեր էին Նախիջևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Գանձակի, Շամախու, Զանգեզուրի գավառների ինչպես թուրքաբնակ, այնպես էլ հայաբնակ հարյուրավոր գյուղերի՝ լայնածավալ ու արգավանդ հողերով: Խաներն ու բեկերը դաժանորեն շահագործում, հարստահարում էին ինչպես թուրք, այնպես էլ հայ գյուղացիներին: Հայ շինականը նույնքան հողազուրկ էր ու չքավոր, նաև՝ ավելի հալածված, քան իր հարևան մուսուլման գյուղացին:

Անդրադառնալով այդ հանգամանքին՝ «Դրոշակը» գրում էր.

«Թուրք մասսայի հակահայկական զգացումներն ու գործողությունները չեն կարող բխել հայի տնտեսական ճնշումներից այն պարզ պատճառով, որ նա, թուրք մասսան, չէր կարող իրականության մեջ տեսնել այդ ճնշումները: Իր ծայրահեղ տգիտության ու կուրության մեջ անգամ նա տեսնում է, որ գավառներում լայնատարած և լավագույն հողերը պատկանում են իր կրոնակից աղաներին, որոնք իշխում են ֆեոդալական իշխանությամբ՝ ճնշելով և՛ հայ, և՛ թուրք հողագործին: Այո՛, անտարակույս, թուրք ամենահետին գեղջուկն անգամ պարզ տեսնում է, որ հայ աշխատավորը նույնքան ««սեփականատեր» է, նույնքան «հողատեր», որքան ինքը»[1]:

Գտնելով, որ այդ բանը նորից ապացուցելու կարիք չկա, քանզի արդեն հազար ու մեկ անգամ դա հաստատել են բազում ձեռնհաս անհատականություններ, «Դրոշակը», այնուամենայնիվ, ավելորդ չի համարում վկայակոչել "Петербургские Ведомости" թերթի 1905թ. N 272-ում լույս տեսած հայտնի կովկասագետ, պրոֆեսոր Նիկողայոս Մառի հոդվածը, ուր գիտնականը շեշտում էր, որ հայ գյուղացիությունն ավելի մեծ չափերով է աղքատ, քան նույնիսկ Գուրիայի (Վրաստան) ծայրահեղ աղքատ ժողովուրդը: Նույն վիճակի մեջ էր նաև մուսուլման աշխատավոր ժողովուրդը, շեշտում էր Մառը, որը «մինչև օրս հեծելով հեծում է համակրոն ֆեոդալների ծայրահեղ ճնշման տակ»:

Հիշատակելով Մառի այդ հոդվածը՝ «Դրոշակը» գրում էր. «Խոշոր կալվածատիրությունն իբրև դասակարգ (Grossgrunolbeitzum) գոյություն ունի ոչ թե հայերի, այլ թուրքերի մեջ և, հետևապես, ագրարային աշխարհում ժողովրդական զանգվածների վրա ճնշում կարող է լինել ոչ թե հայ, այլ թուրք տարրի կողմից»[2]:

Ինչ վերաբերում է արդյունաբերությանը, ապա այստեղ նույնպես թուրքերն ունեին որոշակի դիրքեր:

Ապշերոնյան թերակղզում նավթի հսկայական պաշարների հայտնագործումից հետո, 19-րդ դարի 80-ական թվականներից սկսած, խոլական հևքով այստեղ գործունեություն ծավալեց ռուսական և միջազգային ֆինանսական կապիտալը: Բաքվի նավթարդյունաբերությունն այնպիսի հզոր զարգացում ապրեց, որ մեկ-երկու տասնամյակի ընթացքում գրավեց եվրոպական շուկաները:

Միաժամանակ Անդրկովկասի տարբեր գավառներից, Ռուսաստանից ու Պարսկաստանից դեպի Ապշերոն ձգվեցին տասնյակ հազարավոր թշվառներ՝ մի կտոր հաց վաստակելու համար:

Ի վիճակի չլինելով սեփական ուժերով գործ սկսել՝ թուրքերը եվրոպացի, ռուս, հայ, հրեա և ուրիշ ազգերի դրամատերերին վաճառում էին իրենց պատկանող նավթաբեր հողերը (տափերը): Անցած քառորդ դարում Բաքվում և նրա շրջակայքում կենտրոնացել էր մեծ թվով հայություն՝ դրամատերեր ու աշխատավորներ: Հայերից ձևավորվել էր նավթարդյունաբերողների մի պատկառելի խավ, որը արագաքայլ առաջադիմությամբ իր ձեռքն էր առել նավթաշխարհի տնտեսական կարևոր լծակների զգալի բաժինը: Հայկական կապիտալը թափանցում էր ավելի ու ավելի ստվար թվով արդյունաբերական,

[1] «Դրոշակ», N 13(166), դեկտեմբեր, 1905, էջ 199:
[2] Նույն տեղում:

առևտրական, բանկային ու այլ հաստատություններ: Հայերը գրավել էին նաև կարևոր պաշտոններ. գլխավորապես նրանց ձեռքում էին այնպիսի խոշոր հիմնարկություններ, ինչպիսին էին՝ նավթարդյունաբերողների խորհուրդը, տեխնիկական ընկերությունը, բորսային մարմինները և այլն: Դրան գումարվում էին կրթության և ընդհանրապես լուսավորության բնագավառում հայերի ձեռք բերած տպավորիչ նվաճումները: Թուրքական վաղեմի տիրապետության կենտրոններից մեկում «եկվոր» հայը մեկը մյուսի հետևից բացում էր դպրոցներ, բարեգործական ու այլ հասարակական հիմնարկներ, հիմնում էր մամուլ, ստեղծում մտավոր մթնոլորտ, գրավում էր ազատ պրոֆեսիաների՝ ինժեներների, բժիշկների, փաստաբանների ընդարձակ ասպարեզը: Մի խոսքով, հայը հանդիսանում էր առաջադիմության մի խթան, անդուլ, բեղմնավոր գործարարության ներկայացուցիչ:

Հայկական կապիտալն ամուր դիրքեր էր գրավել Բաքվում և շրջանում, բայց այդքանը միայն: Միամտորեն թե չարակամությամբ տարածվում էր այն առասպելը, թե Բաքվի համարյա ամբողջ արդյունաբերությունը կենտրոնացած է հայերի ձեռքում, և որ նավթաշխարհի բուրժուազիայի մեծ մասը բաղկացած է հայ դրամատերերից: Իրականում Բաքվի շրջանում կար հայկական ընդամենը երկու խոշոր նավթային ընկերություն՝ Մանթաշյանը և Կասպիականը, որոնց կողքին գոյություն ունեին ավելի խոշոր ֆիրմաներ՝ Նոբելի և Ռոտշիլդի ընկերությունները: Նավթային աշխարհում հայերի ձեռքին գտնըվող արդյունաբերությունը, ներառյալ նավթի հանույթը, կազմում էր ընդհանուր արդյունաբերության հազիվ մեկ երրորդը[1]:

Ինչ վերաբերվում է թուրքերին, ապա Բաքվի բուրժուազիայի մեջ նրանց թիվը հայերից պակաս չէր, եթե ոչ՝ ավելին: Հայ կապիտալին պատկանող նըշված երկու խոշոր ընկերության դիմաց թուրք կապիտալն ուներ նույնքան խոշոր երկու ընկերություն: Բաքվում և շրջանում թուրք տարրի ձեռքում էին գտնվում վաճառականությունը և համարյա ամբողջ մանր առևտուրը, վարձով տրվող տների մեծ մասը: Նրանց ոչ ոք չէր արգելում ստվար ներկայացուցչություն ունենալու նաև առևտրական և բանկային հաստատություններում, բորսային մարմիններում, նավթարդյունաբերողների խորհրդում կամ տեխնիկական ընկերությունում: Բայց բանն այն էր, որ թուրք տարրը դժվարությամբ էր դուրս գալիս իր կյանքի ավանդական կերպից: Եթե ակտիվ, շարժուն ու նախաձեռնող հայկական կապիտալը համարձակորեն նետվում էր նորանոր ձեռնարկների մեջ, ապա թուրքերի կապիտալի շարժը և շրջապտույտը անհամեմատ դանդաղ էր ընթանում՝ հիմնականում նրանց կրթական ու կուլտուրական մակարդակի խիստ ցածր լինելու պատճառով:

Թուրք կրեսոսները, որոնք արևելյան անշարժության կնիքն էին կրում, իրենց ամրակուռ սնդուկների մեջ ամբարած պահում էին նաև հայոց աշխատանքով ստեղծած դրամական ահռելի հարստություններ, որոնց համեմատ չնչին էր հայերի դրամագլուխը: Այդ հարստությունների մեծ մասը շարունակում էր մնալ որպես գանձ՝ մրափելով անշարժ ու անհեռանկար, կամ բռնված սոսկ վաշխառուական գործառնություններով՝ հանդիսանալով էապես սպեկուլյատիվ մի ուժ՝ հակառակ նորագույն կապիտալիզմի տնտեսագիտական օրենքների:

Այսպիսով, թուրք խոշոր բուրժուազիան, որ հանգամանքների հաջող դասավորությամբ հին օրերում կարողացել էր ձեռք գցել որոշ կապիտալ, իբրև ոչ քաղաքակիրթ, հետամնաց տարր, չէր կարող մրցակցել ավելի ձեռներեց, ավելի եվրոպականացած հայ բուրժուազիայի հետ և, բնական է, որ, ճնշվելով՝ տեղի էր տալիս նրա առաջ:

Ասիական բնազդներով դաստիարակված թուրք բուրժուազիայի համար անտանելի էր, երբ Բաքվում, որ նա իր «սեփական քաղաքն» էր համարում, տեր ու տնօրինություն էին անում օտարները: Զէ՞ որ այնտեղ նրա ցեղակիցները թվով գերազանց էին, նաև դա այն տեղն էր, որտեղ ինքը կերպավորվել էր իբրև բուրժուազիա: Եկվոր հայը, թուրք բուրժուազիայի պատկերացմամբ, իր ձեռքից խլել էր ասպարեզը, տիրացել նավթային արդյունաբերության շուրջ 30 տոկոսին, իրեն բաժին թողել միայն 5 տոկոսը:

Այդ ամենն առաջ էր բերում իրենց նավթառատ հողերն օտար «գյավուրներին» վաճառած բնիկ թուրք վերնախավերի դժգոհությունն ու վրդովմունքը, որոնք հատկապես ուղղվում էին հայ կապիտալիստների դեմ: Անկարող լինելով դիմանալու վերջիններիս հետ խաղաղ մրցակցությանը՝ ուշացումով նավթի հոտն առած և արդեն նրա արժեքն իմացող թուրք վերնախավն սկսեց ատամ կրճտացնել նրանց վրա, ովքեր ձեռներեցությամբ ու ճարպկությամբ տեր էին դարձել Ապշերոնի հարստությունների զգալի մասին: Վրեժխնդրության քենը թուրք կապիտալիստի միջից ելք էր որոնում: Այդ է պատճառը, որ իշխանությունների ոճրագործ ագիտացիան անմիջապես պարարտ հող գտավ թուրք կապիտալիստների շրջանում: Սրանք մտածում էին իրենց հաշիվները մաքրել Բաքվի հայ տարրի հետ և դա անել ցարական կառավարության օգնությամբ: Իշխանությունների հովանին օդ ու ջրի պես անհրաժեշտ էր նրանց, քանզի ազատ պայմաններում, տնտեսական եռուն կռվում նրանք անկարող էին մրցակցել: Թուրք բուրժուազիայի ատամների կրճտոցը կարելի էր նկատել այդ բուրժուազիայի ոտքերը լվացող և ջուրը թանաք դարձնող «հրապարակախոսների» հոդվածներում:

Ինչպես ամենուրեք բազմազգ երկրների, այնպես էլ Բաքվի, Բաթումի, Թիֆլիսի պայմաններում տնտեսական հողի վրա ջրի երես էին ելնում այն բոլոր հակասությունները, որոնք հետևանք էին կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացման: Այդ հակասությունների թվում, կապված Անդրկովկասում թուրք-հայկական բախումների հետ, հարկ է առանձնացնել երկուսը.

[1] Տե՛ս "Братская помощь", էջ 258:

ա) Բուրժուական դասակարգի տարբեր ազգային խմբավորումների ներսում եղած հակասությունները, բ) Ամբողջությամբ վերցրած բուրժուական դասակարգի և բազմազգ բանվորության միջև գոյություն ունեցող հակասությունները:

Բուրժուական դասակարգի ներսում հակասությունները հատկապես անգիջում բնույթ էին կրում տարբեր ազգային խմբավորումների առկայության պայմաններում:

Ցարական իշխանությունների ամենօրյա տենդագին գործունեության պայմաններում Անդրկովկասի բուրժուական դասակարգի մեջ 19-րդ դարի վերջին արդեն ձևավորված էին տարբեր ազգերի դրամատերերի անտագոնիստական համախմբումներ: Արդյո՞ք հնարավոր էր մեղմել տարբեր շահեր ունեցող բուրժուական այլազան ազգադրոշմ համախմբումների միջև գոյություն ունեցող կատաղի հակասությունները և միաժամանակ հետաձգել ազգերի բախումը: Հարցը բացասական պատասխան ուներ. տարբեր ազգերի կապիտալիստական համախմբումների շահերը երբեք չէին կարող մերձենալ այն հասարակական-տնտեսական կարգերի պայմաններում, որ կար ցարական Ռուսաստանում: Հենց այդ կարգերի խրախուսանքով ու հովանավորությամբ էին տեղի ունենում միջհամախմբային կատաղի բախումները:

Բնականորեն առաջանում է մի ուրիշ հարց ևս. եթե ցարական ռեժիմի փոխարեն Ռուսաստանում լիներ դեմոկրատական հանրապետություն, արդյո՞ք հնարավոր կլիներ Անդրկովկասում արմատախիլ անել միջհամախմբային կատաղի մրցակցությունը, հետևապես նաև՝ կանխել ազգամիջյան ընդհարումների հնարավորությունները:

Այս հարցը նույնպես բացասական պատասխան ուներ: Անշուշտ, դեմոկրատական հանրապետության մեջ միջհամախմբային հակասությունները չէին ընդունի այն այլանդակ ձևերը, ինչ ցարական ռեժիմի պայմաններում, բայց նրանում նույնպես անհնարին կլիներ ոչնչացնել նշված հակասությունները: Դեմոկրատական հանրապետության պայմաններում իրենց գոյությունը շարունակելու էին հայ, վրացի, թաթար, ռուս և ուրիշ ազգերի փոխադարձաբար միմյանց ժխտող համախմբումները՝ իրար հակասող ձգտումներով և շահերով:

Ս.դ. բանվորական հայ կազմակերպության ղեկավարներից Ղազար Տեր-Ղազարյանը (Լեո) կազմակերպության «Սոցիալիստ» թերթում գրում էր.

«Եթե իրավ է, որ այսօր հայ կապիտալի դեմ մղած կռվի հետևանքներն ենք վայելում, և այդ կռվի նյութը մատակարարողը այդ իսկ կապիտալի զարգացումն է, եթե իրավ է, որ այդ զարգացումը դեռ չի կանգնել՝ չը նայած յուր դեմ լարած բոլոր որոգայթներին, ես չեմ հասկանում, թե ինչու այդ կռիվը պիտի յուր վախճանը գտնե հանրապետության ծոցում. չէ՞ որ կապիտալը, ազատվելով ներկա ռեժիմի բոլոր կապանքներից, պիտի ավելի համարձակորեն քայլե, ավելի համարձակորեն քայքայե հին արդյունաբերության եղանակները: Զեմ տեսնում նույնպես, թե որ ուժը կարող կը լինի տնտեսական

գերիշխանությունը խլել հայ բուրժուազիայի ձեռքից և տալ մի ուրիշի: Բայց եթե այդպես լինի, ապա հայ բուրժուազիան կմտնե այն դրության մեջ, որում այժմ գտնվում է մի ուրիշ ազգի թույլ և անզոր բուրժուազիան: Սրանով կը փոխվեն դերակատարները, բայց ոչ դրամը, որ կունենա նույն բովանդակությունը: Իսկ եթե ազատ քաղաքական պայմաններում հայ ազգային բուրժուազիան պիտի ավելի ուժեղանա, որի ձեռքում այժմ արդեն ուժ կա, պարզ է, որ այն ավելի շանսեր կունենա հաղթող հանդիսանալու ապագայում: Ուստի ռամկավար հանրապետությանը վերագրել իր հետ առնչություն չունեցող հատկություններ, նշանակում է մոռանալ, որ այդ հանրապետությունը բուրժուական կառավարման մի կատարյալ ձև է, ուրիշ ոչինչ»[1]:

Անշուշտ, դեմոկրատական հանրապետություններում մարդիկ, դասակարգերը, ազգությունները ավելի ազատ են, բայց ավելի ազատ են նաև բուրժուական այլևայլ ազգային խմբավորումներն իրենց մրցակցային պայքարի մեջ:

Ինչ վերաբերում էր, ամբողջությամբ վերցրած, բազմազգ բուրժուական դասակարգի և բազմազգ բանվորության միջև եղած հակասություններին՝ Անդրկովկասում Թուրք-հայկական կոտորածների ու ջարդերի ժամանակ, ապա այդ հակասությունների վերաճումը ազգամիջյան ընդհարումների անխուսափելի էին: Իսկ ընդհարումները տեղի էին ունեցել ոչ թե ժողովուրդների կամքով, այլ նրանց կամքին հակառակ, կապիտալի տերերի ցանկությամբ: Կոտորածների պայմաններում ավելի դյուրությամբ էր փորվում ու խորանում այն խրամատը, որը շահագործողներին անջատում էր բուրժուազիայից:

Թուրք, հայ և ցանկացած ազգային բուրժուազիայի, որպես դասակարգի, շահերը տրամագծորեն հակառակ էին ոչ միայն այլազգի, այլև իր իսկ ազգի աշխատավորների շահերին:

Բոլշևիկյան «Կայծ» թերթը գրում էր. «Ցարական կառավարությունն իր քաղաքականությունը զուգակցում է Թուրքական բուրժուազիայի ու կալվածատերերի և հայկական նավթարդյունաբերող ու առևտրական բուրժուազիայի շահերի հետ, բայց երկու դեպքում էլ տառապողը եղել են հայ և թյուրք աշխատավոր զանգվածները: Օգտագործելով տիրապետող դասակարգերի միջև գոյություն ունեցող թշնամությունը, ցարական կառավարությունը ոստիկանական ապարատի միջոցով ինքն է կազմակերպել ազգային կոտորածը, ընդհուպ մինչև թշնամի լագերներին զենք մատակարարելը: Սադրանքի հիմնական նպատակն է՝ խանգարել աշխատավորների դասակարգային համերաշխության գործին»[2]:

Բեկերի, աղալարների, մոլլաների, թուրք արդյունաբերողների, մուսուլմանական «ինտելիգենցիայի» մշտական մտահոգությունը ոչ թե մուսուլման գյուղացիների ու բանվորների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումն էր,

---

[1] **«Սոցիալիստ»** *(Ժրնև), N 9, 9 (22) օգոստոսի 1905թ.:*
[2] **«Կայծ»**, *N 24, 7 հունիսի 1906թ.:*

այլ ուրիշների ունեցվածքը թալանելու, հայ սերունդների վաստակին տեր դառնալու համար ամբոխի գազանային բնազդների գրգռումը:

Հարատև արյունալի դրամայի և կովկասյան ավազակությունների կազմակերպման մեջ գլխավոր դերակատարը մուսուլմանական վերնախավն էր՝ իր համիսլամական հովերով և կովկասյան նորանոր տարածքներում իր բացարձակ գերիշխանությունը տարածելու ձգտումով՝ թիկունքում ունենալով Թուրքիայի հզորությունը, Իրանի աջակցությունը և ռուսական միապետության համակրանքն ու հովանավորությունը:

Իրենց հերթին հայ նավթարդյունաբերողների, խոշոր վաճառականների, հողատերերի ու վաշխառուների մշտական մտահոգությունը ոչ թե հայ բանվորների ու գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումն էր, այլ իրենց շահույթների բազմապատկումը: Նավթային արդյունաբերության մեջ հայ բանվորությունը ենթակա էր նույնպիսի դաժան շահագործման, ինչպես մուսուլման բանվորները: Հայ բանվորներին որևէ առավելություն չէր տալիս այն հանգամանքը, որ նավթարդյունաբերողների թվում զգալի էին հայ կապիտալիստները, որոնց համար միևնույն էր, թե ով իրենց համար կապահովի առասպելական շահույթները՝ հա՞յ, թե՞ մուսուլման բանվորները:

Թուրք և հայ նավթատերերի կողմից նավթարդյունաբերության մեջ աշխատող բանվորների անմարդկային շահագործմանը գումարվում էր նրանց գլխին եկած հավելյալ դժբախտությունը՝ հայ նավթատերերի նկատմամբ թուրք վերնախավի հոգում ուռճացող նախանձն ու խուլ ատելությունը աստիճանաբար վերաճում էին բացահայտ թշնամության և ուղղվում հայ բանվորության ու ընդհանրապես հայության դեմ:

Ահա թե ինչու Անդրկովկասում հնարավոր չեղավ կանխել երկու ազգերի կործանարար բախումը:

Սոցիալ-տնտեսական պայմանների ու հարաբերությունների այս թռուցիկ վերլուծությունից պարզ երևում է, որ Անդրկովկասում թուրք-հայկական ընդհարումների պատճառներից հատկապես տնտեսականը զատելը և պատճառների թվում այն հիմնական համարելը տեսականորեն հիմնավորված չէր: Եվ միանգամայն ճիշտ էր նկատում "Бакинские Известия" լրագիրը, որը Բաքվի ջարդերի հաջորդ օրը գրում էր.

«Կասկածից դուրս է, որ Բաքվի դեպքերի աստառը չի կարելի որոնել հայերի և թուրքերի սոցիալական և տնտեսական հարաբերությունների շրջանում: Ինչպես առևտրական, նույնպես և արդյունաբերական բնագավառներում Բաքվի հայ-թուրքական ազգաբնակչության շահերը չունեն ընդհարման կետեր, ուստի սոցիալ-տնտեսական հարաբերությունների հողի վրա չէր կարող ծագել կրքերի ու արյունարբու հակումների այս սարսափեցնող բռնկումը, որ երևան եկան փետրվարի 6-9-ի ողբերգության մեջ»[1]:

[1] **"Бакинские Известия"**, 10 февраля 1905г.

Ռուսաստանի և Եվրոպայի հասարակական կարծիքը Անդրկովկասում թուրք-հայկական ընդհարումների տնտեսական պատճառը միակը կամ հիմնականն էր համարում առաջին շրջանում Բաքվի փետրվարյան կոտորածներից հետո մինչև Նախիջևանի արյունալի դեպքերը:

Եթե Բաքվի կոտորածները լայն արձագանք էին գտել ամբողջ Ռուսաստանում ու արտասահմանում, ապա թուրք-հայկական ընդհարումների հետագա ընթացքը այլևս նույն հետաքրքրությունը չէր առաջացնում: Եվ դա հիմնականում երկու պատճառով. 1) Կովկասահայության անօրինակ ճգնաժամին զուգադիպել էին միջազգային քաղաքականության ծանրակշիռ խնդիրներ, որոնք շղթայում էին հանրային ուշադրությունն իրենց հրատապ այժմեականությամբ, 2) Ամենօրյա արհավիրքներից կարծրացել էին մարդկանց նյարդերը. ռուս-ճապոնական պատերազմ, եվրոպական տերությունների միջև գնալով խորացող անլուծելի հակասություններ, օսմանյան բռնատիրության տակ հեծող ժողովուրդների չդադարող հալածանքներ ու հարստահարումներ, Ռուսաստանում ծայր առած հեղափոխություն և ցարիզմի արյունալի ոճիրներ: Սրանք էին հիմնական պատճառներն այն բանի, որ կովկասյան դժոխքի մասին ամենազգայուն հրապարակումներն անգամ այլևս չէին հուզում կամ քիչ էին հուզում տարբեր ազգերի մարդկանց:

Նման պայմաններում վերլուծաբանները կովկասյան դեպքերն սկսեցին քննության առնել ավելի սառնասրտորեն, առանց զգացմունքներին չափից ավելի տուրք տալու: Դրան հաջորդեց այն, որ երկրամասում ծավալված հետագա իրադարձությունները թելադրեցին թուրք-հայկական ընդհարումների տնտեսական պատճառը մղել հետին պլան:

Թուրքական ջարդերի ալիքը տարածվել, հեղեղել էր նաև Անդրկովկասի այն գավառները, ուր չկար հայկական բուրժուազիա և հայ կապիտալիզմ, ուր տեր էր թուրք կալվածատերը, աղայական դասակարգը:

Տնտեսական պատճառների մեկնաբանները մի պահ չվարած էին, երբ Երևանյան նահանգում, հատկապես նրա Նախիջևանյան գավառում, տարածվեց անօրինակ խժդժությունների ու ջարդերի փոթորիկը: Ածխացած դիակներ, թալանված տներ, ավերակ գյուղեր, արյուն, արտասուք, հարևանը հարևանի դեմ, երկրացին չոքած երկրացու կրծքին - ահա ողբերգական պատկերը հայ և թուրք խառը բնակչությամբ վայրերում: Բազմաթիվ բացահայտումները ցույց տվեցին համիսլամականների ունեցած դերը հայ բնակչության ջարդերի մեջ, ապացուցեցին, որ Թուրքիան չի հրաժարվել Անդրկովկասի թուրքաբնակ գավառները Ռուսաստանից կլլելու, հայկական տարածքները զավթելու և նրա հայ բնակչությանը վտարելու, իսկ Իրանը՝ Նախիջևանի գավառին տիրելու մտքից:

Բայց դա բոլորը չէր: Նրանք ուզում էին այն երևույթի պատասխանը գտնել, թե ինչու բեկերից ու աղալարներից կեղեքված ու հարստահարված թուրք գյուղացին հարձակվում, կողոպտում, սպանում է իրեն պես հարստա-

հարված հայ գյուղացուն, հրդեհում և ոչնչացնում նրա ունեցվածքը: Նրանք տեսան ու համոզվեցին, որ անցյալի խորհրդավոր խավարի ծոցից բարձրացել է թուրք բովանդակ բնակչությունը, որը, սկսած իր առաջնորդներից մինչև գյուղացիները, դիմել է խուժադուժ գործողությունների և սարքում է արյունոտ նախճիրներ: Հայի երեկվա հաշտ ու մտերիմ բարեկամներն անգամ, նրա հետ աղ ու հաց կիսողները, նրա ընտանեկան օջախի «քիրվաները» հորդայական մի զարհուրելի բնազդով ու մոլեգին աշխարհավեր վրեժխնդրությամբ ծառացել էին խաղաղ ու անմեղ հարևանի վրա:

Այլ խոսքով, շատերը համոզվեցին, որ թուրք-հայկական ընդհարումների հիմնական պատճառները պետք է փնտրել ոչ թե տնտեսական կամ սոցիալական, այլ **ազգային-ցեղային հոգեբանության մեջ**, մուսուլմանական գաղափարախոսությունների ոլորտներում, քաղաքական մարզում:

Ցեղային, հոգեբանական, կուլտուրական պատճառների վերլուծությանը առաջինը ձեռնարկեցին եվրոպացիները: "The Times", "Frankfurter Zeitung" և այլ ազդեցիկ թերթեր վեր էին հանում թափանցիկ իրողությունը, որը թելադրում էր, թե թուրքը մի տեսակ անախրոնիզմ է իր միջավայրում:

Լոնդոնի "The Times" լրագիրը 1905թ. սեպտեմբերի 25-ին ուղղակի գրում էր թուրքի «գիշատիչ բնազդների» (the Predatory instincts of the tatares) մասին, որոնք, նրա կովկասյան թղթակցի կարծիքով, «ռուսական կառավարության ոճրագործ քաղաքականության հետ» եղել են «աղետների գլխավոր պատճառները»:

"Matin"-ի թղթակից Գաստոն Լերրուան, որը նույնպես հատուկ առաքելությամբ գնացել էր թուրք-հայկական պատերազմի թատերաբեմ, 1905թ. սեպտեմբերի 22-ի նամակով հետևյալն էր գրում. «Անդունդ է բաժանում երկու ցեղերը... Հակադիր ազգակցություններ, ներհակ բնազդներ և քաղաքակրթության մի իդեալ, որին մեկը հետապնդում է, իսկ մյուսը ետ է մղում... Թաթարները հանձնառու են պատժելու մի ազատամիտ, հակամիապետական ժողովրդի, որն իր իդեալով իսկ՝ ահարկու մի ուժ է բռնապետական կառավարության դեմ»[1]:

Եվրոպական հասարակայնությանը կովկասյան ընդհարումներին նվիրված մի ուշագրավ ուսումնասիրություն ներկայացրեց Վիլլարին՝ «Հուր և սուր Կովկասում» ("Fire and Sword in the Caucasus") խորագրով: Վերլուծելով կովկասյան արյունալի անցքերը՝ հեղինակը գրում էր. «Դա մի մասն է այն կռվի, որ ժամանակակից քաղաքակրթությունը մղում է ասիական բարբարոսության դեմ...»[2]:

Գերմանացի գրող, հայ ժողովրդի ազնիվ բարեկամ տիկին Իլզե Ֆրապանը

[1] Մեջբերված է՝ **Միքայել Հովհաննիսյան**, Կովկասեան Վանդեան, էջ 67:
[2] Մեջբերված է՝ **Միքայել Վարանդեան**, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, հրատ. Բ, էջ 56:

իր հոդվածներից մեկում Կովկասում թուրք-հայկական կոտորածների գլխավոր մեղավորը համարում էր Նիկոլայ II-ին և նշավակում նրան:

Վաղ թե ուշ ցարը կանգնելու է մարդկության դատի առջև, - գրում էր տիկին Ֆրապանը: - Նա իրեն համարում է ինքնակալ, բայց ավելի թշվառական է, քան վերջին ստրուկը, համարում է կայսրության ժողովուրդների հովանավոր, բայց իրականում գայլ է՝ հոտը հոշոտող: Նա այն մարդն է, որ մարեց հազարավոր դժբախտ հպատակների արևը: Նա է, որ Կովկասում հայերի ու քրիստոնյաների համար ստեղծեց ստոր ու անարգ մի թշնամի՝ ֆանատիկոս թուրքը: Որպիսի՜ դժբախտ կռիվ է մղում հայությունը բռնակալության ձեռքին ապուշ գործիք դարձած թուրքության դեմ»[1]:

1905թ. վերջերին Փարիզի «Սոսիեթե Սեվանթի» հյուրանոցի սրահում տեղի ունեցավ հայանպաստ մեծ միտինգ: Սկզբում հայտարարվել էր, որ միտինգը կայանալու է Ժան Ժորեսի նախագահությամբ, բայց հիվանդության պատճառով նա չկարողացավ ներկայանալ, նախագահեց նախկին մինիստր Կամիլ Պելտան:

Միտինգում ելույթներ ունեցան Կամիլ Պելտան, Պրեսանսեն, Վիկտոր Բերարը և Պիեռ Քիյառը:

Անդրադառնալով կովկասյան անցքերին՝ Պրեսանսեն քննադատեց Վիտտեի կառավարությանը և Ռուսաստանում տիրող անիշխանությունը, խարանեց մտավորականության և աշխատավոր դասակարգերի դեմ գործադրած վայրագ դաժանությունները: Ինչպես նրա, այնպես էլ մյուս հռետորների ելույթները տոգորված էին հայ ժողովրդի նկատմամբ ջերմ համակրությամբ և զգացումներով:

Միտինգի միաձայն ընդունած բանաձևում ասված էր.

«Մենք հայտնում ենք մեր սոսկումը Բաքվում, Թիֆլիսում, Երևանում... տեղի ունեցող ջարդերի առթիվ, որոնք բարբարոս կառավարությունը և հակահեղափոխական բյուրոկրատիան փրկելու գերագույն ճիգեր են»[2]:

1906թ. վերջերին Փարիզում լույս տեսավ գրող ու գիտնական Լյուդվիգ դը Կոնտանսոնի "Les Armenies Caucase" («Կովկասի հայերը») գրքույկը: Հեղինակը գրում էր.

«Այն բռնությունների մեջ, որոնք արյունոտում են Ռուսաստանը, Կովկասում տեղի ունեցող բռնություններն ամենասոսկալին են: Բացի ընդհանուր հեղափոխությունից, այստեղ կա և մի առանձին, հին ցավ, այն նույնը, որ 1895 թվականին առաջ բերեց Հայաստանի կոտորածները, և որով Եվրոպան այն ժամանակ չկարողացավ զբաղվել: Այդ ցավը, գոնե այժմ, պետք է դարմանել, եթե չենք ուզում ապագային ավանդել նոր գազանություններ»:

Այնուհետև փորձելով բացատրել այդ ցավի իսկական պատճառները՝ Կոն-

[1] **«Դրոշակ»**, N 6 (172), Հունիս, 1906, էջ 83-84:
[2] Նույն տեղում:

տանսոնը ճշմարիտ ուրվագծում էր Հայկական դատի և Ռուսահայաստանի պատմությունը, անդրադառնում հայերի նկատմամբ ռուսաց պետության բռնած դիրքին՝ Պետրոս Առաջինից սկսած, ցույց էր տալիս, թե ինչպես Դոնդուկով-Կորսակովի՝ Կովկասում իշխանության գալու օրից սկսած՝ դեպի վատը փոխվեց ռուսական արքունիքի քաղաքականությունը, որի նպատակն էր հայերին տկարացնել՝ մուսուլման թուրքերին նրանց հակադրելու միջոցով, ինչպես թուրքական սուլթանը թուրքահայերին տկարացնելու նպատակով նրանց դեմ էր հանում քրդերին»:

Անցնելով Կովկասում կոտորածների պատմությանը՝ սկսած 1905թ. փետրվարի 6-ից, դը Կոնտանսոնն իր աշխատությունը վերջացնում էր այն համոզմամբ, որ Կովկասում կարող է խաղաղություն հաստատվել միայն այն դեպքում, եթե Ռուսաստանն ունենա զորեղ իշխանություն, որը կարողանա անկողմնակալ քաղաքականությամբ հավասարակշռություն ստեղծել հայերի և թուրքերի միջև: Ժամանակն է, նշում էր Կոնտանսոնը, որ Ռուսաստանը, խրատված վերջին դեպքերից, վերադառնա, վերջապես, հայերի նկատմամբ նախկին առողջ քաղաքականությանը, մյուս կողմից, հաստատակամություն ցույց տա և անողոքաբար պատժի բոլոր նրանց, ովքեր իրենց ձեռքերը թաթախում են հարևանի արյան մեջ: Եվ դա պահանջում է հենց իր՝ Ռուսաստանի շահը: Ռուսաստանը, դրանով իսկ, ցույց կտա, որ ինքը դավանում է արդարության և մարդասիրության իդեալներ, և դա, անկասկած, առաջ կբերի նրա նկատմամբ քաղաքակիրթ աշխարհի համակրությունը:

1906թ. Կովկաս էր եկել անգլիացի հրապարակախոս Լուիջի Վիլլարը, որը, հավաքելով հավաստի տեղեկություններ, Լոնդոնի «Վեստմինստեր Գազետ» թերթի մի քանի համարներում թուրք-հայկական ընդհարումների մասին տպագրել էր մի հմտալից և խիստ հետաքրքրական ընդարձակ հոդվածաշար, ուր ճշմարտացի նկարագրել էր իրողությունները, արդարացի համարել կովկասահայության կրվը, միաժամանակ բացահայտել ցարական իշխանությունների տմարդի արարքները:

Կովկասյան դեպքերը ճիշտ էին մեկնաբանում և ջարդերի հիմնական պատասխանատուն ռուսական կառավարությանն էին համարում գերմանական մամուլի մի շարք օրգաններ, մասնավորապես՝ "Vossische Zeitung", "Berliner Tageblatt", "Leipziger Tageblatt" թերթերը[1]:

Ռուսական հասարակական միտքը, հետևելով եվրոպականին, 1905թ. երկրորդ կեսից նույնպես թեքվում էր այն տեսակետին, որ թուրք-հայկական կոտորածների պատճառների թվում գլխավոր տեղերից մեկը պետք է հատկացնել ցեղային-հոգեբանական ֆակտորին: Հարկավոր էր անդրկովկասյան իրադարձությունների ողջ սարսափը, որպեսզի ռուսներն իրենց աչքերը բացեին հայկական վշտի վրա և հասկանային այն պետական չարիքը, որ իր

[1] Տե՛ս «Արշալույս», N 15, 22 հունվարի 1906թ.:

մեջ կրում էր Կ.Պոլսից սնուցած կովկասյան ողբերգությունը:

Ռուսական դեմոկրատական ուղղության թերթերն իրենց թղթակիցների բերանով այլևս չէին բավականանում կրկնել ցարական իշխանությունների մեղսակցության մասին հանրահայտ ֆրազները, այլ արյունոտ պրոբլեմի վերլուծության մեջ գնում էին ավելի հեռու՝ տնտեսական ու քաղաքական պատճառներից դուրս տեսնելով նաև մտավոր, հոգեբանական, ցեղային-կուլտուրական պատճառներ: Ռուսական մամուլի օրգաններ "Русь", "Новости", "Право", "Биржевые Ведомости" և ուրիշ թերթեր ու հանդեսներ հասարակայնությանը մատնացույց էին անում մինչ այդ ստվերի տակ մնացած հոգեբանական ֆակտորներ, ծանրանում էին թուրք ժողովրդի առանձնահատկությունների վրա:

Թերթերը գրում էին, որ ռուս հասարակությունը միամտաբար թուրքերի անցյալն անդարձ է համարել, բայց հիմա, երբ Կովկասի մի ծայրից մյուսը հեղեղված է սարսափներով, նա զարհուրանքով տեսնում է, որ ողջ ծավալով զարթնել են նրանց անցյալի բնազդները, թևեր է առել ավարառության տենչը: «Թուրքերի հոգեբանության հիմքերը խարսխված են դարերի գիշերվա մեջ»[1], - գրում էր ռուս հասարակական գործիչներից մեկը:

Թուրքերի ցեղային հոգեբանության և նկարագրի տիպիկ արտահայտություններից մեկը նրանց միջավայրում մարդասպանությունը որպես սովորական երևույթ մամուլի կողմից դիտարկելն էր:

Հայտնի է, որ մարդկային կյանքի արժեքը շատ ավելին է գնահատվում քաղաքակրթված, քան զարգացման ցածր աստիճանների վրա գտնվող ժողովուրդների մոտ: 1905թ. տվյալներով յուրաքանչյուր մեկ միլիոն բնակչից տարեկան սպանվել է՝ Իտալիայում 96,9 մարդ, Իսպանիայում 76,7, Ավստրալիայում 24,4, Շվեյցարիայում 12,9, Դանիայում 12,4, Գերմանիայում 10,7, Իռլանդիայում 5,6, Անգլիայում 5,6, Շոտլանդիայում 5,0[2]:

"Тифлисский Листок"լրագրի 1906թ. N121-ում մարքսիստ Ֆիլիպովը լույս էր ընծայել «Անդրկովկասյան ազգաբնակչության ոճրականության մասին» վերնագրով ուշագրավ հոդվածը, որտեղ հեղինակը համեմատական սկզբունքով ցույց էր տալիս մարդասպանության պատկերը ըստ ազգային միջավայրի: Նա գրում էր, որ քրեական ոճիրները, այդ թվում մարդասպանությունը միանգամայն տարբեր կերպ են ընկալվում երկրամասի տարբեր ազգերի կողմից: Տվյալ դեպքում քաղաքակրթական ցածր աստիճանի վրա գտնվող անդրկովկասյան թուրքը, վրեժխնդրության հողի վրա կատարած սպանությունը ոչ միայն չի համարում ոճրագործություն, չեշտում էր Ֆիլիպովը, այլև դիտում է որպես առաքինություն:

[1] **"Право"**, 19 декабря 1906г.
[2] Տե՛ս **Միքայել Հովհաննիսյան**, Կովկասեան Վանդեան, էջ 82:

Տվյալները քաղելով Անդրկովկասի նահանգների ու շրջանների ամենամյա տեսություններից, Ֆիլիպովը ներկայացնում էր սպանվածների թիվն ըստ առանձին նահանգների: Պարզվում է, որ Բաքվի նահանգում 1904թ. սպանվել է 468 մարդ, Գանձակի նահանգում 905: Այդ երկու նահանգներում թուրքերը կազմում էին բնակչության բացարձակ մեծամասնությունը (Գանձակի նահանգում մոտ 61%, Բաքվի նահանգում մոտ 60%): 1893-1902թթ. ընկած ժամանակամիջոցում յուրաքանչյուր տարի մարդասպանների ձեռքով միջին թվով զոհվել է Բաքվի նահանգում 289, Գանձակի նահանգում 450 մարդ:

Ինչ վերաբերում է Երևանյան նահանգին, որտեղ բնակչության մեծամասնությունը հայեր էին, իսկ թուրքերը կազմում էին մոտ 38%-ը, տասը տարվա ընթացքում (1893-1902) այստեղ սպանվել էր 1304 մարդ կամ միջին հաշվով յուրաքանչյուր տարի՝ 130 մարդ:

Զանազան ոճիրների համար այդ տարիներին Երևանի նահանգում ազատազրկման կամ մահապատժի էր դատապարտվել 2801 մարդ, որից 1739-ը (կամ 63%-ը) եղել են մահմեդականներ: Հոդվածագիրն ընդգծում էր, որ տեղի ունեցած բոլոր ոճիրների մեծագույն թվի հեղինակ լինելով հանդերձ, նրանք աչքի են ընկնում հատկապես սպանությունների, վերքեր հասցնելու, ավազակությունների մեջ:

Յոթ տարվա ընթացքում (1897-1904) Երևանի նահանգում դատապարտված 1165 մարդասպաններից 879 հոգին կամ 75,5% -ը մահմեդական է: Նույն ժամանակամիջոցում մարդկանց ծեծելու ու վերքեր հասցնելու համար դատապարտվել էր 151 հոգի, որոնցից 113-ը, այսինքն՝ 74%-ը մահմեդական: Ավազակության համար դատապարտվել էր 48 մարդ, որից 39-ը կամ 81%-ը դարձյալ մահմեդական: Իսկ դրա դիմաց Երևանյան նահանգի ողջ բնակչության 3/5 մասը կազմող քրիստոնյա բնակչությանը բաժին էր ընկնում հազիվ 1/4-ը այն ոճրագործների, որոնք դատապարտվել էին մարդասպանության և 1/5-ը ավազակության համար:

Թուրք-հայկական ընդհարումների պատճառների բացատրության ընթացքում ռուսական մեկնաբանները 1905թ. վերջերից սկսեցին ավելի ու ավելի հաճախակի անդրադառնալ **հայ ազգային կուսակցությունների դերին**: Նրանցից շատերը փնտրում էին նոր բացատրություններ, որոնք ընդգրկում էին ընդարձակ ներկնապնակ՝ համակրանքի ու հակակրանքի խառնուրդով:

Վերցնենք սոցիալ-դեմոկրատների օրինակը: ՌՄԴԲԿ բոլշևիկյան թևի շատ ներկայացուցիչներ և մենշևիկների գերակշիռ մասը, որոնք Բաքվի փետրվարյան կոտորածների բացատրությունը սկզբնական շրջանում փնտրում էին միայն ու միայն տնտեսական պատճառների մեջ, ընդհարումների հետագա ընթացքում հայացքներն ուղղել էին նաև ուրիշ՝ քաղաքական, պատմական, էթնիկական և նույնիսկ կուլտուր-էթնիկական բնույթի պատճառների կողմը: Գնալով նրանք ավելի ու ավելի էին հակվում այն տեսակետին, որ ցարական միապետության կողմից լայն հովանավորություն և բազմակողմանի աջակցություն ստացող մուսուլմանական ռեակցիայի դեմ կովկասահայության պայքարն ըստ էության հեղափոխական կռիվ է՝ ռուսական հեղափոխական կռվի մի մասը:

Դրա հետ միասին, սոցիալ-դեմոկրատները շարունակում էին տուրք տալ հայկական ազգային հեղափոխական կազմակերպությունների ու կոմիտեների ազգայնականության ու ծայրահեղականության մասին տեսակետներին:

Պետք է նկատել, որ այդ հարցում սոցիալ-դեմոկրատների գնահատականները որոշ չափով տարբերվում էին իրարից: Խոսքն այն մասին է, որ եթե Կովկասից դուրս հրատարակվող ռուսալեզու սոցիալ-դեմոկրատական, հատկապես բոլշևիկյան թերթերն այդ մեղադրանքը ներկայացնում էին դեպքից դեպք, ապա Կովկասի սոցիալ-դեմոկրատները* և նրանց մամուլի օրգանները ավելի հետևողականորեն առաջադրում էին այն մեղադրանքը, թե թուրք-հայկական ընդհարումների մեջ եթե ոչ վճռորոշ, ապա կարևոր դեր են ունեցել հայ ազգային հեղափոխական կոմիտեներն իրենց ազգայնամոլությամբ և ծայրահեղական գործելակերպով:

Նշելով, որ Հ.Յ. դաշնակցությունն իր խիտ ցանցով պատել է Անդրկովկասի հայաբնակ գավառները և իր հետևից տանում է հսկայական զանգվածներ, կովկասյան բոլշևիկները գտնում էին, որ մեծ աղետի գլխավոր նախաձեռնողներից մեկը հենց այդ կուսակցությունն է:

Վրաց սոցիալ-դեմոկրատները, հատկապես մենշևիկները, դաշնակցությանը մեղադրում էին այն բանում, որ նա, բարձրացնելով ազգային դրոշը, իր շուրջն է համախմբել հայության հիմնական զանգվածները, հատկապես գյուղացիությանը, որի պատճառով էլ հենց նրանք մասնակցություն չեն ունենում հեղափոխական շարժմանը:

Այսպես էր ասված վրաց «Սոցիալ-դեմոկրատ» թերթի մի հոդվածում, որը թարգմանաբար տպագրվել էր ռուսերեն "Социал-Демократ" շաբաթաթերթի 1905թ. N8-ում, այնտեղից էլ անցել սոցիալիստ-հեղափոխականների "Революционная Россия" թերթի մեջ:

Հոդվածում նշված էր, որ վրաց սոցիալ-դեմոկրատները որոշել են «անդադար կռիվ մղել սեփական նացիոնալիզմի դեմ և ոչնչացնել նրան իր արմատում», իսկ հայ սոցիալ-դեմոկրատների առաջնահերթ խնդիրը պետք է լինի անողոք պայքարը դաշնակցության և հայ ազգային մյուս կուսակցությունների դեմ, որոնք ազգամիջյան ընդհարումների գրգռողներն են:

Ազգային դրոշակներ չպետք է պարզել, ազգի անունով չպետք է խոսել ու գործել, պետք է հանդես գալ միայն դասակարգի անունից – այս էր "Социал-Демократ" թերթի հոդվածագրի եզրակացությունը:

Անդրադառնալով այս հոդվածին՝ «Դրոշակը» շեշտում էր, որ «ազատ

* Ընթերցողին կրկին հիշեցնենք, որ այն ժամանակ բոլշևիկները և մենշևիկները Կովկասում բաժանված չէին և գտնվում էին ՌՄԴԲԿ միասնական կազմակերպությունների մեջ:

տրամաբանությունն ըմբռնում է կամայական ու բռնազբոսիկ նման ֆորմուլաների դեմ»: Այդ առողջ տրամաբանությունն ասում է, որ կարելի է սոցիալիստ լինել և միաժամանակ լինել ամենաջերմ պաշտպանը իր ազգի իրավունքների ու անկախության, կարելի է ամենաուղղափառ մարքսիզմ դավանել և որոշ դեպքերում, երբ վտանգ է սպառնում ազգին, նրա ազատ ու նորմալ զարգացմանը, հրապարակ գալ ազգային դրոշի ու նշանաբանի տակ: Հայ դաշնակցականը նույնքան իրավունք ունի փաստաբանելու իր ազգության դատը, որպիսի իրավունքով մի Բեբել կամ մի Պրեսանսե պատրաստակամություն կհայտնեն զենքը ձեռքին ասպարեզ նետվելու՝ յուրաքանչյուրն իր հայրենիքը պաշտպանելու համար: «Հայ դաշնակցականը նույնքան իրավունքով կարող է սիրել իր լեզուն, երկիրը, պատմությունը, որքան իրավունքով մի էնտրազիժան սոցիալիստ Ֆերրի կարող է բացականչել. ««Ես շատ եմ սիրում իմ մեծ հայրենիքը՝ Իտալիան, և ես կրում եմ զվարթ սրտով բոլոր զրկանքներն ու փոթորիկները՝ հանուն հայրենիքի այդ սիրուն...»: Այդ է հրահանգում իսկական, չխեղաթյուրված սոցիալիզմը»[1]:

Դաշնակցության վրա դնելով կտրուկ գործողություններով թուրք ամբոխին գրգռելու մեղքը՝ Կովկասի բոլշևիկները գտնում էին, որ այդ կուսակցությունն իր գործունեության ընթացքում հայ ժողովրդի համար որևէ դրական օրինակ չի տվել, ավելին, ժողովրդի զինման ու ինքնապաշտպանության ուղղությամբ գործնականում ոչինչ չի արել, որ եթե ինչ-որ բան էլ արվել է, ապա արել են ուրիշ կազմակերպություններ: Բոլշևիկյան մամուլը գրում էր, որ փետրվարյան ընդհարումների ժամանակ Բաքուն պաշտպանել են բոլոր ազգություններից կազմված կամավորական խմբերը, որ դաշնակցության միջամտությունը միայն խանգարել է գործին, և եթե նրա զինված ջոկատների փոխարեն հնարավոր լիներ հրապարակ բերել, ասենք, 100 ռուս բանվորներից կազմված միայն մի ջոկատ, ապա զինված ռուս բանվորների երևալը փողոցներում կունենար ավելի գործուն քաղաքական նշանակություն և հայ բնակիչների ապահովության տեսակետից ավելի շատ բան կտար, քան տվել են դաշնակցական զինված խմբերը, որոնց երևալը փողոցներում միայն գրգռել և կռվի է հանել մուսուլմանների նորանոր զանգվածներ՝ պատճառ դառնալով նորանոր կոտորածների ու ավերումների:

Դաշնակցական ընդդիմախոսների այն հարցումին, թե, ի վերջո, ինչն է պատճառը, որ սոցիալ-դեմոկրատները Բաքվի կոտորածի ժամանակ, ի տես հայ բնակչության խողխողումին, իրենց դրսևորեցին իբրև սոսկ սրտացավ ականատեսներ՝ փոխանակ ստեղծելու և հրապարակ բերելու գոնե մեկ զինված ջոկատ, սրանք պատասխանում էին, թե այդ բանն անելու համար իրենք զենք չեն ունեցել: Բոլշևիկյան մամուլը գրում էր, որ եթե Բաքվում և այլուր ռուս բանվորները մնացել էին կրավորական դիրքում, ապա այդ բանում մեծ

[1] «Դրոշակ», N 13(166), դեկտեմբեր, 1905, էջ 198:

չափով մեղավոր են իրենք՝ դրոշակյանները, որոնք շատ միջոցներ ու շատ զենք ունեին, բայց կղզիանում էին ռուսներից, չէին օգնում ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեին՝ ռուս բանվորներից զինված խմբեր կազմակերպելու գործում, իսկ այդ կոմիտեն միջոցներ չունենալով՝ ոչինչ չկարողացավ անել իր կոպեկներով:

Իսկ այն հարցին, թե արդյո՞ք եղել է մի դեպք, երբ սոցիալ-դեմոկրատները կոտորածներին միջամտելու ցանկությամբ դիմած լինեն հայ հեղափոխական կոմիտեներին՝ զենք ստանալու խնդրանքով, նրանք պատասխանում էին, թե, սոցիալիստական համոզմունքներից ելնելով, իրենք չեն կարող հայից ստացած զենքով սպանել շահագործվող ու խաբված թուրք աշխատավորին, ինչպես և՝ չեն կարող թուրքից ստացած զենքով կրակել հայ բանվորի վրա:

Ինչ վերաբերում է թուրք-հայկական ընդհարումների մեջ հայ ազգային կուսակցությունների դերի գնահատմանը՝ եվրոպական սոցիալիստական մամուլի ու գործիչների կողմից, ապա նրանց տեսակետները շատ ավելի մոտ էին ռուսալեզու սոցիալ-դեմոկրատական մամուլի օրգաններում արտահայտված կարծիքներին, քան կովկասյան և հատկապես հայ սոցիալ-դեմոկրատների տեսակետներին:

Հետաքրքիր է, որ հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների մասին ռուս սոցիալ-դեմոկրատների տեսակետները առանձին կողմերով մոտենում էին ռուսական հետադեմ մամուլի տեսակետներին:

Հայ կուսակցությունների դեմ իրենց ամբաստանություններով ու գրգռումներով աչքի էին ընկնում ռուսական հետադեմ մամուլի երկու առաջատար օրգանները՝ "Новое Время"-ն և "Московские Ведомости"-ն: Այդ թերթերը հոգնեցնելու չափ կրկնում էին, թե հայ հեղափոխական կազմակերպությունները որդեգրել են արմենիզմի ուլտրաազգայնամոլական գաղափարախոսությունը, որի քարոզների նպատակն է Անդրկովկասի հայաբնակ գավառներն անջատել Ռուսաստանից, ստեղծել իրենց անկախ պետությունը, ապա զենքի ուժով այդ պետությանը միացնել նաև Կովկասի բուն մուսուլմանաբնակ հողերը, աստիճանաբար իրենց բնակավայրերից դուրս մղել ազատ ու խեղճ թուրք բնակչությանը: Ըստ որում, "Новое Время"-ն մտահոգված էր ոչ միայն Ռուսաստանի, այլև օսմանյան կայսրության ամբողջականության պահպանմամբ, գրելով, թե «հայկական կուսակցությունների սադրիչ ու քայքայիչ գործողությունները, բարեբախտաբար, առաջ են բերում ոչ միայն թուրք ազգաբնակչության, այլև օսմանյան պետության հակազդեցությունը»:

Շանթ ու որոտ թափելով Հ.Յ. դաշնակցության վրա՝ "Московские Ведомости" թերթը 1905թ. N 244-ում թուրք-հայկական ընդհարումների պատճառների քննությանը նվիրած հոդվածում գրում էր, որ «թուրքերը տառապող կողմն են», որ հայ նացիոնալիստները «ցեխոտել են ուզում Ռուսաստանի ավանդաբար հավատարիմ հպատակ երեք և կես միլիոն Կովկասի թուրք բնակչությանը»: Թերթի կարծիքով, հայ ազգայնամոլ կոմիտեները, մշտապես խախտում են պետության անդորրությունը, սպառնում կայսրության ամբող-

ղականությանը: Հենց այդ անկատողական հայերն են, որ ներկայումս Կովկասում իրենց իսկ սարքած արյունահեղության մեղքը ճգնում են գցել ռուսական կառավարության վրա»:

Թուրք-հայկական հակամարտության սխալ մեկնաբանությունները, հատկապես այն մեղադրանքը, թե հայկական շարժումը տոգորված է մոլեռանդ ազգայնականությամբ, որոշ շրջաններում ստեղծում էին աննպաստ, նույնիսկ՝ թշնամական տրամադրություններ դեպի հայությունը և նրա մղած պայքարը:

«Հայության երդվյալ թշնամիները, – գրում էր «Դրոշակը», – չեն կարող հանդուրժել առհասարակ հայկական շարժում հասկացությունը և ինչպես որ հայ կապիտալիզմի մեջ տեսնում են համայնակուլ մի հրեշ, որ մի օր պիտի նվաճե բովանդակ Կովկասը, այնպես էլ հայ շարժման մեջ նրանք կարծես ընդնշմարում են մի չարաղետ սկզբունք՝ ուղղված ոչ միայն բյուրոկրատիայի, այլև իրենց բոլորի դեմ: Ահա մի ողբալի մտավիճակ, որ պակաս դեր չէ խաղում հայ մարդու դժբախտությունների մեջ»[1]:

Հայկական հեղափոխությանը և հանուր հայությանը վարկաբեկող այդ թյուրիմացությունները ճարպկորեն կարողանում էին շահագործել թուրք բուրժուազիայի և մահմեդական ֆանատիկոսության գաղափարախոսները: Նրանք ահազանգ էին հնչեցնում «հայ հարստահարիչ դրամագլխի» ոտնձգությունների դեմ, տարածում էին առասպելներ հայկական կոմիտեների դավերի, նրանց երևակայական շահատակությունների մասին, կասկածամիտ և հայատյաց ռուս բյուրոկրատիայի առջև մշտապես շեշտում էին «հայկական սեպարատիզմը», հայ հեղափոխականի «անկատողական», «ազգայնամոլ» ձգտումները:

Այն ժամանակ, երբ Ռուսաստանի և Կովկասի ժողովուրդները, հանձին իրենց առաջադեմ տարրերի՝ հասարակական նոր իդեալներով տոգորված, ընդառաջ էին գնում հեղափոխությանը, այդ նույն ժամանակ կովկասյան թուրք «ինտելիգենցիան» իր ժողովրդի գլուխ կանգնած, նրա կեղեքիչ տարրերի՝ բեկերի ու մոլլաների հետ ձեռք ձեռքի տված, հանդիսանում էր ռեակցիայի հզոր պատվար՝ միշտ ապավեն հոգևոր և աշխարհիկ բռնակալությանը:

Ազգամիջյան արհավրալի և բնաջնջող պատերազմն անգամ թուրք ժողովրդի միջից առաջ չբերեց կարող, ազդեցիկ և գաղափարական անհատների գեթ մի փոքրաթիվ խումբ, որը գիտակցեր արյունալի կռվի դժոխային սարսափները և ողջ անմտությունը, ուժգին բողոքներով և եռանդուն քարոզներով աշխատեր կանգնեցնել հարազատ ամբոխի կույր վրեժխնդրության տարերային սլացքը:

Թուրք «մտավորականներից» էր Հաջի Զեյնալ Աբդին Թաղիևը, որը խոշոր նավթարդյունաբերող էր: Նրա միջոցներով էր հրատարակվում պանիսլամական, ազգայնական "Каспий" թերթը: Նա իր ցեղակիցներին տալիս էր

[1] «Դրոշակ», N 13(166), դեկտեմբեր, 1905, էջ 197:

բարեգործական մեծաքանակ նվերներ, պահում քաղաքի միակ թուրքական օրիորդաց դպրոցը և այլն: Թուրք միլիոնատերը կոտորածների գլխավոր կազմակերպիչներից մեկն էր, որին «բաց նամակով» դիմել էր Բաքվի հայ խոշոր առևտրականներից մեկը՝ Աղաբեկ Զուստուզյանը:

Թաղիևին առաջարկելով ջանքեր գործադրել վերականգնելու համար «երկու ազգերի հին բարեկամությունը»՝ «Բաց նամակի» հեղինակը գրում էր.

«Կորցրած բանը պիտի կորցրած տեղը փնտրել: ...Կովկասի խաղաղության բանալին հենց ձեր աչքի առաջ կորավ Բաքվում, ու այնտեղ էլ պիտի փնտրել այդ բանալին: Այդ բանալին աներևույթ և սգավոր էակի նման պտտվում է "Каспий" լրագրի խմբագրության անդամների շուրջը և վախենում է ասպարեզ գալ Հասան բեկ Մելիքովի, Աղաևի և այլոց առաջ: Ո՞ր չար սատանան միտք հղացավ պղտորելու այն խաղաղությունը, այն համերաշխությունը, որ կար հայի ու թուրքի միջև: Բաքվում գտնվող շատ տոհմավոր ու հարուստ թուրքեր անիծում են այն օրը, երբ ձեր մեջ առաջ եկան երկու ջուխտ և մի կենտ ուսումնականներ, որոնք, իրենց անբախտ ազգի ղեկավար դերը ստանձնելով, հարկավոր ընդունակությունը, հեռատեսությունը և զգուշությունը չունեցան ձեր ազգին անսայթաք առաջ մղելու դեպի ուսում, դեպի գիտություն ու առաջադիմություն»[1]:

Այնուհետև Նամակագիրը նշում էր, որ հայերը լավ գիտեն, թե Թաղիևը քանի՜-քանի՜ միլիոններ է նվիրաբերել իր ժողովրդի կրթության կազմակերպմանը, բայց արդյունքը եղել է չնչին, որովհետև «ձեր ուսումնականները ոչ միայն չհասկացան Ձեզ, այլև չըմբռնեցին ժամանակի պահանջը: Ատելություն և գժտություն սերմանելով՝ նրանք ավերի ու թշվառության գիրկը նետեցին երկու հարևան ժողովուրդներին՝ կարծելով, թե դրանով բարիք են անում իրենց ազգին[2]:

Ա. Զուստուզյանը նկատում էր, որ "Каспий" թերթի խմբագրությունը Թաղիևը հանձնել է զանազան արկածախնդիրների, ինչպիսիք են՝ Զարդոբի Հասան բեկ Մելիքովը, օսմանյան ագենտ Շուալի զադեն, մոլեռանդ հայատյաց ու կարճատես քաղաքագետ Ահմեդ Աղաևը և ուրիշներ, որոնք թույն են սրսկում թուրք ընթերցողի մեջ: «Տարիների ընթացքում նրանց ձեռքով ցանած չար սերմերն են, որ դառը պտուղներ տվեցին»[3], – շեշտում էր նա:

Տեղեկություններ կային, որ Թաղիևը Բաքվից բազմաթիվ հեռագրեր է ուղարկել փոխարքային, Շեյխ-ուլ-Իսլամին, դիմումներ է հղել Կովկասի մուսուլմաններին, որոնց շրջանում նրա հեղինակությունը հսկայական էր: Անդրադառնալով այդ իրողությանը՝ «Բաց նամակի» հեղինակը նշում էր, որ այդ հեռագրերն ու դիմումները պատիվ չեն բերում իրեն՝ Թաղիևին: Պետք չէ

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 280, թ.թ. 74-75:
[2] Նույն տեղում, թ.թ. 75-76:
[3] Նույն տեղում, թ. 80:

ապարդյուն հեռագրեր տալ ու դիմումներ հղել, այլ «հարկավոր է Բաքվում քանդել այն ավազը, որի մեջ հալվեց մեր խաղաղության բանալին, և ուր շարունակվում են նյութվել զանազան հրեշավոր ծրագրեր մեր՝ հայերիս դեմ»: Մեզ՝ երկու ազգերիս, «կփրկի ոչ թե իրար կոտորելու կիրքը, այլ համերաշխ գործավարությունը առաջադիմության ճանապարհին»[1]:

Հայերը մեծապես շահագրգռված էին ընդհանրապես մուսուլմանների և հատկապես թուրքերի կուլտուրական առաջընթացով, հուսալով, որ ժամանակի ընթացքում վերջիններս կ՝քաղաքակրթվեն, հետևապես կմարի կամ գոնե կնվազի նրանց ջարդարարական մոլուցքը:

Երբ մի քանի տարիներից ի վեր Բաքվում և Թիֆլիսում թուրք «մտավորականները» փորձեր էին անում ձեռնարկելու մի քանի կուլտուրական գործեր, այսինքն՝ երբ մահմեդականների համար բացվել էին երկսեռ դպրոցներ, Թիֆլիսում սկսել էր հրատարակվել «Շարքի Ռուս» թերթը, թուրքերեն տրվում էին ներկայացումներ, ստեղծվել էր բարեգործական ընկերություն և այլն, ապա հայերը ջերմորեն արձագանքում էին թուրքերի այդ քայլերին:

«Մշակը» գրում էր. «Մենք բոլորս ողջունում ենք մեր մահմեդական հարևանների կուլտուրական գործունեության այդ քայլերը, ցանկանալով, որ գործը կանգ չառնի սկզբնական փորձերի վրա, այլ աճէ և ընդարձակվի, առաջ բերելով օգտակար հիմնարկությունների մի ամբողջ ցանց մահմեդական ազգաբնակչության շրջանում: ... Մեր մահմեդական հարևանների առաջադիմությունը կարող է միայն ուրախացնել մեզ: Մենք հավատացած ենք, որ մեր երկիրը կարող է կանոնավոր և ընդարձակ զարգացում ունենալ միայն այն ժամանակ, երբ նրա մեջ ապրող բոլոր ազգերը կը սկսեն գործել քաղաքակրթական ասպարեզում համերաշխ, միահամուռ ուժերով»[2]:

Հեղափոխական փոթորիկը և թուրք-հայկական ընդհարումները ռուսական հասարակական մտքի առաջ դրեցին մի շարք ուրիշ հարցեր ևս, որոնք հրամայաբար պահանջում էին պատասխաններ: Ռուսական մամուլը, հասարակական-քաղաքական գործիչներն արտահայտում էին իրենց կարծիքը Կովկասի ապագայի, երկրամասում ռուսական տիրապետության հետագա ընթացքի մասին:

Սոցիալիստ-հեղափոխականների "Свободный Труд" թերթը իր հոդվածներից մեկում[3] անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք ռուսական կառավարությունը Կովկասում արել է այն ամենը, ինչ անհրաժեշտ էր անել, տալիս էր բացասական պատասխան: Կովկասը դարձել էր ռուսական, բայց այն չէր ձուլվել հաղթող երկրի հետ: Ռուսներն իրականացրին միայն Կովկասի ռազմական նվաճումը, բայց անզոր գտնվեցին այն պսակել բարոյական նվաճմամբ:

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 280, թ. 88:
[2] «Մշակ», N 4, 11 հունվարի 1905թ.:
[3] Հոդվածի թարգմանությունը տե՛ս «Մշակ», N 24, 2 փետրվարի 1906թ.:

«Իսկ ի՞նչ պետք է անեին ռուսները Կովկասը նվաճելուց հետո, - նորից հարց էր տալիս հոդվածագիրը, - ի՞նչ պետք է անեին նրանք, իսկապես, որպեսզի այն հոգեբանորեն դառնար Ռուսաստանի հարազատ գավակը: Դրա համար անհրաժեշտ էր կայսրության շրջանակներում Կովկասին տալ իսկական ազատություն, լավ օրենքներ, բարեխիղճ գործիչներ, բարի վարք, լուսավորություն, իսկական հավատ: Ցավոք, դրանցից ոչ մեկը Կովկասը չստացավ, որովհետև այդ բարիքներից ոչ մեկը Ռուսաստանը չուներ, եթե երբեմն էլ ուներ, ապա՝ կիսատպռատ: Մենք Կովկասին տվինք միայն այն, ինչ ունեինք՝ վատ օրենքներ, վատ կառավարություն, վատ պաշտոնյաներ, վատ վարք ու բարքեր: Մենք Կովկաս եկանք ոչ թե մեր առաքինություններով, այլ մեր ախտերով»[1]:

Թերթը ցավով նշում էր, որ մենք՝ ռուսներս, հենց առաջին օրից, փոխանակ եղբայրանալու կովկասյան ժողովուրդների հետ, սկզբից ևեթ անվստահություն տածեցինք նրանց հանդեպ: Մենք գահի դեմ գրգռեցինք նույնիսկ այն ազգերին, ինչպես օրինակ՝ հայերին, որոնք իրենք էին մեզ դիմել մտնելու մեր հովանավորության ներքո:

Փոխանակ եղբայրանալու տեղական ժողովուրդների հետ, ցավով նշում էր թերթը, մենք պահպանեցինք Կովկասը նվաճելու ժամանակ ունեցած թշնամությունը նրանց նկատմամբ: Մենք ոչ միայն տիրացանք նրանց նյութական հնարավորություններին, այլև փորձեցինք լուծ դնել նրանց դարավոր բարոյական արժեքների վրա: Հպարտ ու ազատասեր մարդկանց մենք հաղթեցինք մեր զենքի գերազանցությամբ, բայց մենք ոչինչ չարեցինք, որ նրանք հաշտվեն իրենց պարտության հետ և ցանկանան կամավոր ձուլվել մեզ: Մենք համարյա ոչինչ չարեցինք, որպեսզի խելացի կերպով շահագործենք այդ երկրի բնական հարստությունները, չկարողացանք գոնե հարստանալ ինքներս և այդ հնարավորությունը թողեցինք օտար եվրոպացիներին:

Բայց, որ ամենասարսափելին է, շարունակում էր հոդվածագիրը, մեր անմիտ քաղաքականությամբ խորացրինք թշնամությունը մի կողմից կովկասյան ազգերի միջև, մյուս կողմից՝ ողջ Կովկասի ազգերի և Ռուսաստանի միջև:

Ինչպես տեսնում ենք, "Свободный Труд" թերթը արձանագրում էր մի շարք անվիճելի ճշմարտություններ, դրա հետ միասին ընկնում էր ակնհայտ չափազանցությունների մեջ՝ Կովկասի բոլոր ազգությունները դիտում որպես մի ամբողջություն, մոռանում, որ արևելահայությունը Ռուսաստանում ստացել էր տնտեսական ու կուլտուրական առաջադիմության բարենպաստ հնարավորություններ և, իր հերթին, ուժերը ներածին չափով, նպաստում էր ոչ միայն Կովկասի տնտեսական զարգացմանը, այլև որոշակի ներդրում ուներ կայսրության տնտեսության մեջ, նրա մշակույթը մերձեցել էր ռուս մեծ ժողովրդի մշակույթին և շարունակում էր բարերար ազդակներ ստանալ հետագա

[1] Տե՛ս «Մշակ», N 24, 2 փետրվարի 1906թ.:

զարգացման համար:

Ինչ վերաբերում է կոտորածների մեջ կառավարության խաղացած դերին, ապա հենց սկզբից Ռուսաստանի և Եվրոպայի դեմոկրատական մամուլը մատնացույց էր անում ցարիզմի ազգահալած քաղաքականությունը: Ռուսաստանում տեղի ունեցող հասարակական շարժման արձագանքները, բնականաբար, չէին կարող չարտահայտվել ժողովրդական զանգվածների տրամադրությունների վրա: Ուստի բավական էր մի կայծ, որպեսզի քաղաքական դաշտը բռնկվեր ու դառնար ամեն ինչ լափող հրդեհ: "Бакинские Известия" թերթը շեշտում էր, որ այդպիսի կայծի դեր է կատարել շովինիստական մամուլի կողմից անդրկովկասյան զանգվածների միջավայրում պատվաստված մոլորությունը: Այդ մամուլը մարդատյաց գաղափարների քարոզով ապականել է մարդկանց մտքերն ու զգացմունքները, և նրանք, այդ մարդիկ, այլևս անկարող են ինքնուրույն քննել ու վերլուծել իրենց շրջապատող երևույթները, հետևապես հեշտությամբ զոհ են գնում շովինիզմի բացած որոգայթներին[1]:

Հայ բոլշևիկների «Կայծ» թերթը գրում էր, որ «Կովկասի գաղութային նվաճման ողջ ժամանակաշրջանում ցարիզմի ազգային քաղաքականությունը կառուցվել է «բաժանիր ու տիրիր» սկզբունքի վրա»: Այդ քաղաքականությունը դրոշ դարձրած կառավարությունը, «խաղալով թուրքերի և հայերի ազգային հակասությունների վրա, կարողացավ աշխատավոր մասսաներին ներքաշել ազգամիջյան կռվի մեջ»[2]:

Ազատական մամուլի օրգաններից շատերը հակված էին այն մտքին, թե թուրք-հայկական ընդհարումների պատճառներից մեկը կառավարման մեջ տեղական իշխանությունների ոչ բանիմաց լինելն է: "Рассвет" թերթը գրում էր.

«Շատ մեծ տարակուսանք են առաջացնում Անդրկովկասում տեղի ունեցող դեպքերը: Հավանաբար այնտեղի ղեկավար ոլորտներում չկա առողջ մտածողություն, որը պետք է հատուկ լինի պետական գործիչներին»[3]:

Մոտավորապես նույնպիսի կարծիք էին հայտնում նաև ինքնակալության երդվյալ պաշտպաններից շատերը, ինչպես, օրինակ՝ Վ.Պոգոժևը իր «Կովկասյան ուրվագծեր» հայտնի աշխատության մեջ[4]:

Այդ օրերին ցարիզմի ակտիվ պաշտպանությամբ հանդես էր գալիս Լև Տոլստոյը: Անգլիական «Թայմս» թերթը տպագրել էր նրա ընդարձակ նամակը Ռուսաստանի հասարակական տրամադրությունների և դրանց նկատմամբ իր վերաբերմունքի մասին: Նամակը ջերմ արձագանք գտավ Ռուսաստանի խավարամիտ ուժերի կողմից, միաժամանակ արժանացավ ռուսական հեղափոխականների, ազատասիրական ուժերի և արտասահմանյան մամուլի խիստ քննադատությանը:

[1] "Бакинские Известия", 10 февраля 1905г.
[2] «Կայծ», N 24, 7 հունիսի 1906թ.:
[3] "Рассвет", N104, 25 июня 1905г.
[4] В.П. Погожев, Кавказские очерки, стр. 412.

Իր նամակում մեծ գրողը դատապարտում էր Ռուսաստանում սկսված հեղափոխությունը, հետևապես օբյեկտիվորեն դատապարտում էր հեղափոխական հայությանը և պաշտպանության տակ առնում ցարիզմի պաշտպան կովկասյան թուրքերին: Դա պատահական չէր: 1890-ական թվականներին և դրանից հետո մի քանի առիթներով Լև Տոլստոյը բացասական վերաբերմունք էր արտահայտել թուրքահայոց ազատագրական շարժման նկատմամբ և ահա այժմ առիթը բաց չէր թողել նշավակելու ռուսահայոց ազատագրական շարժումը: Նա հանցավոր էր համարում այն միջոցները, որոնց դիմում էր ազատասիրական շարժումն իր նպատակին հասնելու համար: Իսկ այդ նպատակն անհիմն ու խաբուսիկ էր Տոլստոյի համար: Նա քարոզում էր, որ մարդու թշվառությունների պատճառը չպետք է փնտրել քաղաքական վերնաշենքերի կազմվածքների մեջ: Մարդը պետք է ներքնապես կատարելագործվի, որպեսզի կարողանա հասնել կատարյալ երջանկության: «Քաղաքական վերածնությունը ոչինչ է. հարկավոր է բարոյական վերածնություն»[1], - գրում էր նա:

Միապետության պաշտպանների դեմ հանդես էին գալիս ռուս լուսավոր դեմքերը, որոնք բացահայտում էին հայերի նկատմամբ ցարիզմի վարած դաժան քաղաքականությունը, հասարակությանը մատուցում ճշմարտությունը:

Ռուս գերազնիվ մտավորական **Ալեքսանդր Վալենտինովիչ Ամֆիտեատրովը** իր «Հայկական հարցը» գրքում բացահայտում էր հայերի նկատմամբ թուրքերի ատելության պատճառները, դրանցից նշելով, տնտեսականն ու կրոնականը, բայց գլխավորը համարելով օրգանականը՝ ժառանգականն ու ցեղայինը: Այնուհետև նա քննության էր առնում ռուսական կայսրության մեջ հայերի հետապնդումների պատճառները: Որքան էլ ցավալի է, գրում էր նա, այդ հետապնդումները տեղի են ունեցել ռուս մտավորականության լռակյաց թողտվության պայմաններում: Գոնե այժմ ռուս մտավորականությունը իրավունք չունի մի կողմ քաշվելու և դիտելու, թե իր երկրում մի ժողովուրդ ինչպես է անպատիժ հոշոտվում, իրավունք չունի հանդես չգալու հետադիմականության, պահպանողականների, պանսլավոնիզմի և հատկապես ռուսականացման բիրտ քաղաքականության դեմ: Այդ ուժերը իսկական պատերազմ են հայտարարել հայությանը՝ որպես հեղափոխական ուժի: Ամֆիտեատրովը առաջադիմական գործիչներին խորհուրդ էր տալիս՝ հայերի գլխին եկած հերթական արհավիրքների ժամանակ առաջվա նման չրավարարվել անկիրք պաշտպանության սառնությամբ, պետք չէ առանց չնչին իսկ խանդավառության հայերի նկատմամբ համակրանք արտահայտել՝ այն դիտելով որպես ընդհանուր մարդասիրական ծառայության պարտք: Հարկավոր է հայությանը պաշտպան կանգնել սրտի անկեղծ թելադրանքով, ռուսական դեմոկրատական

[1] «Մշակ», N 49, 19 մարտի 1905թ.:

ավանդույթների կրողներին արժանի հանդգնությամբ ու կրքով[1]:

Ալեքսանդր Ամֆիտեատրովին արձագանքում էր հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Ցուրի Վեսելովսկին: Ռուս ժողովրդի այդ լուսավոր զավակը նույնպես իր ժողովրդի մտավորականությանը կոչ էր անում կանգնել տառապած հայ ժողովրդի կողքին, ամոքել նրա վերքերը:

Վեսելովսկին երկար տարիներ ջանք չէր խնայել ռուս հասարակությանը ծանոթացնելու հայ ժողովրդի, նրա կյանքի բնորոշ հանգամանքների, հատկապես հայոց գրականության հետ: Դեռևս Բաքվի ջարդերից առաջ, 1905թ. հունվարին "Новое Обозрение" *թերթում նա տպագրել էր մի հետաքրքիր հոդված[2], ուր ցույց էր տվել, թե ինքը որքան մեծ դժվարություններ է հաղթահարել իր առջև դրած նպատակը իրագործելու համար: Սրանից 10-15 տարի առաջ հեշտ չէր այդպիսի քայլեր անելը, - գրում էր նա: Այն ժամանակ թե՛ հասարակության շրջաններում և թե՛ մամուլի խմբագրություններում հետաքրքրություն չկար դեպի հայերը: Խոսքը, իհարկե, այն շրջանների մասին չէ, որոնք լցված էին կատաղի թշնամությամբ դեպի այդ տառապյալ, բայց երբեք բախտավոր ապագայի նկատմամբ հավատը չկորցնող ժողովուրդը և առհասարակ դեպի բոլոր օտարազգիները: Նույնիսկ առաջավոր, ազատամիտ խավերում անկարելի էր որևէ հետաքրքրություն արթնացնել հայ ազգի, նրա կյանքի, նրա գրականության նկատմամբ: Նախապաշարմունք, անգիտություն և անմիտ, անհիմն, մի տեսակ մեքենական ատելություն դեպի հայությունը - ահա ինչ կարելի էր տեսնել ամեն տեղ:*

««Արմեաշկա» բառը, - գրում էր Ցու. Վեսելովսկին, - «ջհուդ» բառի պես թվում էր, թե պիտի ընչված լիներ կրթված, կուլտուրական մարդկանց բառարանից... Որքան վիրավորական և ցավալի էր լսել այդ բառն այն մարդկանց բերանից, որոնք անպայման գիտեին, թե ինչ են անում և ինչու են անում»[3]:

Մի հոդված, մի որևէ թարգմանություն տպել տալու համար պետք էր երկար ժամանակ դռներ ծեծել, խնդրել, համաձայնել ամեն տեսակ ստորացուցիչ պայմանների: Պարզ երևում էր, որ ներկայացված հոդվածը խմբագիրն ընդունում է ակամա, մի կերպ տեղի տալով, իբրև մի անհետաքրքրական բան, որ կարելի էր լույս աշխարհ հանել միայն ճարահատյալ, չարաթներ ու ամիսներ պահելուց հետո:

Այսպես էր դրությունը տարիներ առաջ, շարունակում էր Վեսելովսկին, բայց հետզհետե, համառ աշխատանքով, ռուս գրականության մեջ կարելի եղավ մտցնել տեղեկությունների և փաստերի մի հարստություն հայ ժողովրդի, նրա պայքարի ու կյանքի մասին: Թուրքահայերի դժբախտությունները, նրանց անլուր տառապանքները եկան արյունի և արտասուքի իրականության

[1] **А. В. Амфитеатров**, Армянский вопрос, стр.40-58.
[2] *Թարգմանությունը տե՛ս* ***«Մշակ»****, N 8, 15 հունվարի 1905թ.:*
[3] *Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 249:*

լեզվով ուշադրություն և գթություն հայցելու: Վերաբերմունքն սկսեց կամաց-կամաց փոխվել: Ահագին ծառայություն մատուցեց Հանգուցյալ Ջանշյանի «Եղբայրական օգնություն» ժողովածուն: Ռուս հասարակությունն սկսեց հասկանալ հայերին, ճանաչել նրանց, և դրա հետևանքով այդ հասարակության առաջավոր շերտերում ստեղծվեց համակրանք: Այժմ այլևս դրությունն այն չէ, ինչ 10-15 տարի առաջ, կրկնում էր Վեսելովսկին, և դա միաբարական հանգամանք է: Բայց պե՞տք է արդյոք բավականանալ այդքանով: «Իհարկե ոչ», - գրում էր նա և ավելացնում: - Չպետք է կարծել, թե ամեն ինչ արդեն արված, վերջացած է, թե նախկին վերաբերմունքն անդառնալի կերպով անցել է ավանդությունների կարգը և նոր աշխատանքների, «ներկա հայերի» հետ ծանոթացնելու նոր փորձերի կարիք այլևս չկա...

Մի՞թե չի պատահում, որ այժմ էլ, չհաշվելով առանձին բացառիկ օրինակները, հանդիպել հին անվստահության խիստ արտահայտությունների: Մի՞թե բոլոր, նույնիսկ իրենց ազատամիտ համարող օրգաններում, հայոց գրականության վերաբերյալ հոդվածները միշտ համակրանքով և ուրախությամբ են ընդունվում: Եվ երբ բանն այսպես է, կարելի՞ է այժմ ձեռքերը ծալած նստել, անձնատուր լինել լավատես մտքերին, վճռել, թե նախկին հայատյացությունից մի հիշողություն է միայն մնացել: Պետք է շարունակել, պետք է աշխատել անշեջ եռանդով»:

Պրոֆեսորներ Մ. Կովալևսկու և Ի. Իվանյուկովի խմբագրությամբ, և մի շարք նշանավոր գրողների մասնակցությամբ, 1906թ. փետրվարից սկսել էր լույս տեսնել "Страна" *թերթը, որի հիմնական նպատակներից մեկը լինելու էր երկրում բարեփոխումների օգտին լայն պրոպագանդը:*

Թերթի առաջին համարի առաջնորդողում ***Մաքսիմ Կովալևսկին*** *այսպես էր ներկայացնում իր և իր համախոհների քաղաքական նպատակները.*

«Մենք դեմ ենք սահմանադիր ժողովին, որ ընկալվում էր իբրև անցյալի հետ լիակատար խզման նշանաբան: Մենք ցանկանում ենք, որ Ռուսաստանը մնա միապետություն, բայց մնա սահմանադրական միապետություն՝ ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա: Մենք պաշտպան ենք պետական միության գաղափարին, բայց միևնույն ժամանակ՝ ազգությունների համահավասար իրավունքների գաղափարին, մենք պաշտպան ենք շրջանային լայն ինքնավարության, որ որոշ դեպքերում նույնիսկ ունենա տեղական օրենքներ հրատարակելու իրավունք: Մենք ակնկալում ենք, որ տեղական շահերի հզոր պաշտպանությունը կստանձնի երկրորդ պալատը՝ բաղկացած քաղաքների և զեմստվոների ներկայացուցիչներից: Մենք կարծում ենք, որ ժողովրդական ներկայացուցչությունը պետք է ամենամոտ հերթական հարց դարձնի գյուղացիների և բանվորների կյանքի բարելավումը»[1]:

[1] **"Страна"**, *N* 1, 1 февраля 1906г.

Այսպիսի հայացքներ ունեցող մարդը չէր կարող պաշտպան չկանգնել չարի ու անբարոյականության զոհերին:

Մաքսիմ Կովալևսկին, հայ ժողովրդի այդ մեծ բարեկամը, որը մի քանի տարի անց, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո էլ, մինչև մահ, հանդես էր գալու ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի ջերմ պաշտպանությամբ, իր հոդվածներով անարգանքի սյունին էր գամելու երիտթուրք ոճրագործներին, այդ նույն Կովալևսկին, դեռ Բաքվի 1905թ. փետրվարյան կոտորածների օրերին, ճշտել էր իր վերաբերմունքը Անդրկովկասում թուրք-հայկական ընդհարումների հանդեպ և "Страна"-յի բազմաթիվ համարներում տպագրած իր հոդվածներով մերկացնում էր սուլթանիզմի ու պանիսլամիզմի խաղացած դիվային դերը խաղաղ հայ բնակչության ջարդերի մեջ, մշտապես շեշտում հայերի դիմադրության անխուսափելի և օրինական լինելը:

Բայց այդ ամենը չէր կարող սփոփանք լինել դժբախտության մեջ հայտնված հայության համար, չէր կարող գեթ ամենափոքր չափով կազդուրիչ լինել ժողովրդի արյունահոս վերքերին, մանավանդ որ ռուսական կառավարությունը որևէ նշանակություն չէր տալիս մամուլի արձագանքներին, մտավորականների ու հասարակական գործիչների բողոքներին: Հասարակական կարծիքի տրամադրությունները, իր հասցեին արտահայտած ցասումը ռուս ինքնակալի համար որևէ նշանակություն չունեին: Հայը ինքը պետք է տեր կանգներ իր կյանքին ու պատվին: Դա կյանքի անողոք ու հրամայական դասն էր:

ԵՐԿՈՒ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԵՐԵՎՈՒԹԹՆԵՐ

Դեպքերով ու իրադարձություններով հարուստ 1906 թվականի հայ քաղաքական կյանքում իրենց նշանակությամբ աննկատ չմնացին երկու իրողություն՝ ռուսահայկական նոր համագումարը և հայկական դեմոկրատական կուսակցության ստեղծումը:

Նիկոլայ II-ի 1905թ. հոկտեմբերի 17-ի հրովարտակով Ռուսաստանին «շնորհված» «սահմանադրության» համաձայն, կայսրության տարբեր ազգերը իրավունք էին ստացել իրենց պահանջները ներկայացնել Պետերբուրգ՝ հնարավորության սահմաններում դրանց այս կամ այն ձևով «լուծում տալու համար»:

Տրված հնարավորություններից ելնելով՝ ռուսահայերը նույնպես որոշեցին մշակել ու ներկայացնել իրենց պահանջները: Այդ նպատակով առաջացավ նոր համագումար հրավիրելու խնդիրը:

Նախապես ստեղծվեց համագումարի նախապատրաստման ու հրավիրման նախաձեռնող մարմին (կոմիտե), որը նաև պետք է ի մի բերեր և ձևակերպեր

հայության քաղաքական պահանջները:

Ռուսահայերի նոր համաժողովը հրավիրվեց Թիֆլիսում և իր նիստերն անցկացրեց քաղաքային վարչության սրահում: Պատգամավորները, որոնց թիվը 50 էր, եկել էին ոչ միայն Կովկասի զանազան հայաբնակ շրջաններից, այլև Մոսկվայից, Պետերբուրգից, Ռոստով-Նախիջևանից և Ռուսաստանի այն վայրերից, որտեղ համախումբ ապրում էր հոծ հայություն (Հյուսիսային Կովկաս, Ղրիմ և այլն):

Համագումար էին եկել հայ քաղաքական մտքի համարյա բոլոր հոսանքների ներկայացուցիչները, բացի սոցիալ-դեմոկրատներից, որոնք հայտարարել էին բոյկոտ: Բոլշևիկները ցույց էին տալիս, թե ինչպիսի մեծ խախտումներով են կատարվում պատգամավորների ընտրությունները: Համագումար էին գնում մարդիկ, որոնք ընտրված չէին: Դրանցից էին, օրինակ, Գարեգին Խաժակը կամ Արշալույս Մխիթարյանը: Առաջինը հենց համագումարի բացման օրը Թիֆլիսի վանքի բակում հրավիրել էր միտինգ, ճառ արտասանել և հայտարարել, թե ինքը համարում է, որ այստեղ արդեն ընտրված է «Հայ ժողովրդի պատգամավոր»: Մխիթարյանն իր ծննդավայրից բերել և համագումարի քարտուղարություն էր ներկայացրել մի հաստատագիր այն մասին, որ ինքն ընտրվել է գյուղական համայնքի կողմից: Համագումարը հարգեց և՛ մեկի, և՛ մյուսի պատճառաբանությունը[1]:

Անցնելով իր աշխատանքներին՝ համագումարը մանրամասն քննարկեց հայ ժողովրդի քաղաքական պահանջների հարցը:

Ամենակարևոր քաղաքական հարցը վերաբերվում էր Ռուսաստանի ապագա վարչաձևին: Երկար ու տաք վիճաբանություններից հետո պատգամավորները եզրահանգեցին, թե Ռուսաստանը պետք է ունենա «ներկայացուցչական ժողով»:

Հայերի երկրորդ պահանջը թելադրված էր նրանով, որ իրենց քաղաքական ռեալ իրավունքները խիստ սահմանափակված են: Բանն այն է, որ հոկտեմբերի 17-ի մանիֆեստով թեև Ռուսաստանի բոլոր քաղաքացիների համար իրավականորեն հռչակված էր իրավունքների հավասարություն, բայց գործնականում այդ սկզբունքը չէր պահպանվում: Պատգամավորները բազմաթիվ օրինակներով ցույց էին տալիս, որ Կովկասում իշխանությունները, շարունակելով հին քաղաքականությունը, առաջվա պես հայերին չեն վերցնում պետական ծառայության: Նրանք, ովքեր ցանկանում են անցնել պաշտոնավարության, որպես կանոն, ուղարկվում են աշխատանքի կայսրության հեռավոր նահանգները, իսկ Կովկաս պաշտոնավարելու են գալիս ռուսներ: Դա նշանակում էր, որ Կովկասում դռները փակ են այնտեղ պետական պաշտոն ունենալ ցանկացող հայերի համար: Նրանք կարող էին զբաղվել ազատ պրոֆեսիաներով (մասնավոր բժշկությամբ, մասնավոր դասեր տալով), կամ ծառայել ոչ պետական

[1] Տե՛ս «Հայրենիք», N 8(116), հունիս, 1932, էջ 130:

հիմնարկություններում:

Երրորդ պահանջը վերաբերում էր հայ զինվորների ծառայության վայրին: Պատգամավոր Թոփչյանը նշում էր, որ այժմ էլ զորակոչված հայ զինվորները ծառայելու են ուղարկվում Ռուսաստանի խորքերը՝ հյուսիսային և հյուսիս-արևմտյան նահանգները, Պովոլժիե, Սիբիր և այլուր, ուր կլիմայական պայմաններն աննպաստ էին կովկասցիների համար: Այդ էր պատճառը, որ զորացրված հայ զինվորներից շատերը տուն էին վերադառնում չափազանց հյուծված կամ թոքախտով հիվանդ:

Համագումարը քննության առավ դպրոցների վիճակը: Ահարոնյանը պահանջում էր հայ թեմական դպրոցներում կրճատել ռուս տեսուչների թիվը, թուլացնել հաստատված խիստ վերահսկողությունը ուսումնական գործընթացի վրա: Պատգամավորները իշխանությունների առջև հարց էին բարձրացնում չսահմանափակել դպրոցների ֆինանսավորումը հայ եկեղեցու կողմից, արգելքներ չհարուցել դպրոցների նվիրատուների առջև, այլ խրախուսել նրանց:

Մյուս կարևոր հարցը վերաբերում էր գյուղատնտեսությանը: Հանդես գալով Խաժակն ասում էր, որ շարունակվում է Կովկասի ռուսացման գործընթացը, որի արտահայտություններից է ռուս տարրի գնալով ավելացող թիվը հայկական գավառներում: Վիճակագրական կոնկրետ օրինակներով նա ցույց էր տալիս, որ հայկական գավառների շատ վայրերում լավագույն հողերը առաջվա պես հատկացվում են Ռուսաստանի ներքին նահանգներից գաղթած մոլոկաններին և դուխաբորներին: Այդպիսին էր վիճակը Կարսի շրջանում, Ալեքսանդրապոլի գավառում, Սևանա լճի եզերքին և այլ տեղերում:

Գյուղացիական հարցը քննարկելիս համագումարը հանգամանորեն անդրադարձավ ոռոգելի ջրի հետ կապված դժվարություններին և առաջարկեց կատարելագործել ջրային օրենքը՝ այն համապատասխանեցնելով Կովկասի պայմաններին: Ալ. Քալանթարը բարձրացրեց արոտավայրերի պաշտպանության հարցը և անհրաժեշտ գտավ առաջարկել կառավարությանը՝ ընդունել այնպիսի օրենքներ, որոնք բացառեին ցանքերի ու արոտավայրերի ավերումը քոչվորների կողմից:

Վերջապես, պատգամավորները պահանջեցին խնդիր հարուցել իշխանությունների առջև՝ Կովկասում բարձրագույն և միջնակարգ դպրոցներ բացելու համար:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, սույն համագումարում կովկասահայերի պահանջները ձևակերպվել էին երեք հիմնական կետերով. ա) հայերի իրավունքները գործնականորեն հավասարեցնել ռուս և վրացի քաղաքացիների իրավունքներին, բ) բարելավել գյուղացիների տնտեսական դրությունը, գ) հայ լուսավորության և մշակույթի զարգացման համար ստեղծել տանելի պայմաններ:

Ընդունած որոշման մեջ ոչ մի խոսք չկար ինքնավարության, առավել ևս՝ Ռուսաստանից անջատվելու մասին*: Ալ. Խատիսյանը գրել է. «Այդպիսի պահանջ գոյություն չուներ մտքերու մեջ անգամ: Քաղաքական գործիչներն ու կուսակցությունները իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էին տաճկահայկական վիլայեթների վրա»[1]:

Համագումարի աշխատանքներն ավարտելուց հետո կազմվեց ընդունված որոշման արձանագրությունը, որի տակ ստորագրեցին տարբեր քաղաքական ու հասարակական կազմակերպությունների ղեկավար անձինք, խոշոր արդյունաբերողներ, առևտրական ընկերությունների ներկայացուցիչներ, մշակույթի ու լուսավորության բնագավառի գործիչներ, թվով 1300 մարդ, որից հետո փաստաթուղթը ուղարկվեց Պետերբուրգ:

Համագումարը, իհարկե, որևէ կոնկրետ նշանակություն չունեցավ կովկասահայերի համար, բայց առաջին անգամ կողք կողքի բերեց տարբեր քաղաքական դավանանք ունեցող հայ մտավորականների, դրանով իսկ ցույց տվեց, որ հնարավոր է գլուխ բերել հայերի միությունը և կարելի է միասնաբար հանդես գալ համահայկական շահերի պաշտպանությամբ:

*
* *

Մյուս նշանակալի երևույթը **հայ սահմանադիր - ռամկավար (դեմոկրատական)** կուսակցության ստեղծումն էր:

Ողջ Ռուսաստանով մեկ ծավալվող ազատագրական շարժումը և նրա ազդեցության տակ հայ իրականության մեջ տեղի ունեցող բուռն իրադարձությունները հրամայաբար պահանջ առաջադրեցին ստեղծել ոչ հեղափոխական ազգային-քաղաքական մի կազմակերպություն՝ լեգալ ու պառլամենտական, որը զբաղվեր և՛ համապետական, և՛ ազգային-ժողովրդական հարցերով:

Նոր կուսակցության ստեղծման գաղափարն սկսեց գործնական ուղիներ փնտրել հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո: Արդեն 1906թ. մայիսին ազատական հայացքներ ունեցող մի խումբ մտավորականներ, հավաքվելով, սկսեցին մտքեր փոխանակել կուսակցության հիմնադրման ուղղությամբ

---

* Այդ նույն ժամանակ տեղի էր ունենում նաև վրացիների համագումարը, որն առաջադրել էր ավելի կտրուկ պահանջներ: Վրացիները ձգտում էին ողջ Ռուսաստանի համար ոչ թե «ներկայացուցչական ժողով» ունենալուն, այլ օրենսդիր պառլամենտ Վրաստանի համար: Համագումարում վրացի պատգամավորները առաջ էին քաշել ռուս եկեղեցուց վրաց ուղղափառ եկեղեցու բաժանման և մի շարք ուրիշ արմատական պահանջներ, որոնց իրականացումը, նրանց կարծիքով, վրաց ժողովրդին կնախապատրաստեր անկախության:

[1] **«Հայրենիք»**, N 8(116), հունիս, 1932, էջ 131:

տարվելիք աշխատանքների շուրջ: Հաջորդ ամսից խումբը ձեռնարկեց կոնկրետ քայլեր, որոնք պսակվեցին հաջողությամբ:

Հոկտեմբերի 29-ին կայացավ նախապատրաստական ժողով, որն ընտրեց 10 հոգուց բաղկացած հանձնախումբ՝ Ավ. Արասխանյան, Համբ. Առաքելյան, Ա. Մխիթարյան, Ս. Հարությունյան, Լ. Սարգսյան, Հ. Սպենդիարյան, բժ. Կ. Ստեփանյան, Քր. Վերմիշյան, Հ. Փիրուզյան և Ալ. Քալանթար: Հանձնախմբի խնդիրն էր՝ մշակել ստեղծվելիք կուսակցության ծրագրի նախագիծը[1]:

Իր մի քանի նիստում հանձնախումբը ուրվագծեց նոր կուսակցության ընդհանուր ուղղությունը և հավատամքը, նախանշեց նրա հիմնական ու ղեկավար սկզբունքները, իսկ ծրագրի մանրամասն մշակումը և ընդունումը թողեց կուսակցության ապագա համագումարին:

Ելնելով այդ մոտեցումից՝ հանձնախումբը կազմեց մի դեկլարացիա, որով ազդարարում էր հայ դեմոկրատական կուսակցության ստեղծման գործընթացի սկիզբը: Դեկլարացիայում ասված էր.

«Հայ ժողովուրդը, կազմելով Ռուսաստանի բազմամիլիոն ազգաբնակչության մասը և իր քաղաքական ու քաղաքացիական կյանքով կախված լինելով ընդհանուր-պետական կարգերից, ձգտելու է այն բանին, որ այդ ընդհանուր-պետական կարգերը դրվեն մարդկային ազատ զարգացմանը չխանգարող պայմանների մեջ: Այդպիսի պայմաններ կարելի է ստեղծել միմիայն Ռուսաստանում դեմոկրատական սկզբունքների կատարյալ իրականացման միջոցով: Ահա թե ինչու ներկայումս հայ ժողովուրդը նախ և առաջ պարտավոր է ամեն կերպ օժանդակել Ռուսաստանում դեմոկրատական-պառլամենտական օրինակարգ հաստատելուն»[2]:

Հայկական նոր կուսակցության հիմնադիր ժողովը տեղի ունեցավ Թիֆլիսում, 1906թ. նոյեմբերի 12-ին: Ժողովի աշխատանքներին հայ հասարակության զանազան խավերից մասնակցում էր 50 մարդ: Պատգամավորների քվեով ժողովի նախագահ ընտրվեց «Մշակ» թերթի տեսաբան Համբարձում Առաքելյանը:

Բանալով նիստը՝ ժողովի նախագահը պատմեց կուսակցության ստեղծման ուղղությամբ տարված աշխատանքների մասին և մասնավորապես կանգ առավ հոկտեմբերի 29-ին ստեղծված հանձնախմբի կողմից ընդունված ու տարածված դեկլարացիայի դրույթների վրա:

Համբ. Առաքելյանի բացման խոսքից հետո սկսվեց մտքերի փոխանակում:

Լրացնելով դեկլարացիայի մասին ժողովի նախագահի խոսքը՝ հանձնախմբի անդամ, պատգամավոր Ավ. Արասխանյանը ժողովականների ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ դեկլարացիայում արտացոլված են նաև հայ կյանքի դառն իրողություններից բխող՝ կովկասահայության ինքնապաշտպանության և թուրքահայության վիճակը բարվոքելու էական խնդիրները: Ելույթ ունեցողը նշեց, որ հանձնախմբի որոշմամբ ինքը լիազորված չէ հանգամանորեն քննության առնելու այդ երկու խիստ պատասխանատու հարցերը և որ դրանց մասին որոշում պետք է տա միայն ստեղծվելիք կուսակցության գալիք համագումարը՝ իրավիճակների խոր վերլուծության արդյունքում:

Իր ելույթում Քր. Վերմիշյանն ասում էր, որ նոր ծնունդ առնող դեմոկրատական կուսակցությունն իր խնդիրը պետք է համարի՝ կազմակերպել հայ ժողովրդի շիտակ, առաջադեմ ու կենդանի ուժերը և ակտիվ աջակցություն ցույց տալ Ռուսաստանի առաջադեմ քաղաքական կուսակցություններին՝ ամբողջ պետության մեջ ազատ և արդար կարգեր մտցնելու նպատակով:

Հանդես գալով՝ Ս. Հարությունյանը կանգ առավ այն հարցի վրա, թե նորաստեղծ կուսակցությունը Ռուսաստանի առաջադեմ քաղաքական կուսակցություններից որի՞ հետ կարող է լիակատար համաձայնության գալ՝ երկուստեք իրենց աշխատանքները համատեղելու համար: Եվ նա մատնացույց արեց ռուս սահմանադրական-ժողովրդավարական (կոնստիտուցիոն-դեմոկրատական) կուսակցությանը, որի ծրագիրը և գործելու մեթոդները լիովին համապատասխանում են հայ ազատականների գաղափարներին ու նպատակներին:

Իր ելույթը նույն խնդրին նվիրեց նաև պատգամավոր Ալ. Խաչատրյանը: Նա գտնում էր, որ հայ նորաստեղծ կուսակցությունը ռուս նշված կուսակցության հետ առայժմ պետք է հարի միայն սկզբունքային կետերով: Պատգամավորը կարևոր էր համարում համաձայնության գալ կադետական կուսակցության ղեկավարության հետ, որպեսզի Կովկասում նա աջակցի իրենց՝ Երկրորդ պետական դումայի ընտրություններին դումա ուղարկելու նաև հայ ազատականների ներկայացուցիչներին:

Կուսակցության ապագա գործունեության իրենց պատկերացումների մասին հանդես եկան նաև Հովհ. Ամիրխանյանը, Պ. Ղամբարյանը, Լ. Ղուլյանը, Ալ. Մելիք-Ազարյանը, Լ. Սարգսյանը և ուրիշներ:

Հիմնադիր ժողովը, ելակետ ունենալով վերոնշյալ դեկլարացիան և հիմք ընդունելով ռուս կադետական կուսակցության ծրագրի գլխավոր դրույթները՝ Կովկասի և կովկասահայության վերաբերյալ սահմանեց հետևյալ սկզբունքները.

1) Անդրկովկասում մտցնել ինքնավարություն և համաանդրկովկասյան սեյմ օժտված երկրամասի խնդիրների վերաբերյալ օրենսդրական ֆունկցիաներով, 2) Հայկական բոլոր հիմնարկությունները վերակազմակերպել ժողովրդավարական սկզբունքներով, 3) Ունենալով ազատ կուլտուրական ինքնորոշման իրավունք՝ կուսակցությունը պետք է նպաստի այնպիսի հաստատությունների ստեղծմանը և զարգացմանը, որոնք ի վիճակի լինեն պահպանել և զարգացնել հայ ժողովրդի լեզուն, գրականությունը, կուլտուրան, 4) Կուսակցությունը, իր գործունեությունը գլխավորապես ծավալելով Կովկասում, խնդիր պետք է ունենա առաջ մղել կովկասյան բոլոր ազգերի միջև գործակցություն և կուլտուրական միություն հաստատելու գաղափարը:

---

[1] *Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 267:*
[2] *Նույն տեղում, վավ. 275:*

Ժողովը նաև որոշում ընդունեց կազմակերպության ծրագրի վերաբերյալ, ըստ որի հայ դեմոկրատական կուսակցության ծրագրի մշակումը թողնվում էր նրա հետագա համագումարին, որը տեղի կունենա անմիջապես, երբ կկազմակերպվեն կուսակցության մասնաճյուղերը տարբեր քաղաքներում և հայաբնակ վայրերում:

Այնուհետև հիմնադիր ժողովն ընտրեց կուսակցության ժամանակավոր կենտրոնական բյուրո, հետևյալ կազմով՝ Ս. Հարությունյան, բժ. Կ. Ստեփանյան, Ալ. Քալանթար, Համբ. Առաքելյան, Հ. Սպենդիարյան, Քր. Վերմիշյան, Միք. Աթաբեկյան, բժ. Բ. Աղասարյան, Հ. Ղուկասյան, բժ. Գեորգբեգյան, Լ. Դանիելյան, բժ. Մ. Մովսիսյան:

Այսպիսով, 1906թ. աշնանը հայ ազգային-քաղաքական դաշտում իր տեղը գրաղեցրեց մի նոր քաղաքական կազմակերպություն: Ի տարբերություն հայ իրականության մեջ գործող **ազգային-հեղափոխական** երեք կուսակցությունների (արմենական, հնչակյան, դաշնակցական)՝ այս նոր կուսակցությունը **ազգային-ազատական** էր և արտահայտում էր հայկական հասարակության ոչ հեղափոխական շերտերի տրամադրություններն ու շահերը: Հայ սահմանադրական-ժողովրդավարական (դեմոկրատական) կուսակցությունը հայկական քաղաքական շրջաններում ընկալվում էր որպես ռուս կոնստիտուցիոն-դեմոկրատական (կադետ) կուսակցության անդրկովկասյան մասնաճյուղ:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԳՈԼԻՑԻՆՑԱՆ ՀԱՑԱՀԱԼԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԱԿՆՀԱՅՏ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Թուրք-հայկական ընդհարումներից հետո Ռուսաստանի կառավարական բարձր շրջաններում սկսվեցին մտքերի ակտիվ խմորումներ Կովկասում վարվող ռուսական քաղաքականության արդյունավետության հարցի շուրջ: Մասնավորապես քննարկվում էր այն հարցը, թե ճի՞շտ է արդյոք այն քաղաքականությունը, որ կովկասյան իշխանությունները քառորդ դար շարունակ վարել են հայության դեմ, մի քաղաքականություն, որ Կովկասի կառավարիչ Գոլիցինի իշխանության տարիներին ընդունել էր հրեշավոր կերպարանք:

Քննարկումների ու վիճաբանությունների ընթացքում ռուս բարձր պաշտոնեության շրջանում երևակվում էին թեր և դեմ կարծիքներ: Ըստ որում, հայության նկատմամբ գոլիցինյան քաղաքականությունը շարունակելու կողմնակիցները այդ շրջանում դեռ բացարձակ մեծամասնություն էին կազմում թե՛ Պետերբուրգում և թե՛ մանավանդ Կովկասի փոխարքայության վարչակազմում:

Այս տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում պարզել, թե ռուս բարձրաստիճան զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաներից ովքեր էին, որ առաջինը հանդես եկան կառավարության բացահայտ հակահայ քաղաքականությունից հրաժարվելու առաջարկներով:

Հայանպաստ քաղաքականություն որդեգրելու առաջին առաջարկները վերաբերում են 1906թ. երկրորդ կեսին, և դրանց հեղինակները երկուսն էին՝ գեներալ Շիրինկինը և ինքը՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը:

ԳԵՆԵՐԱԼ- ՄԱՑՈՐ ՇԻՐԻՆԿԻՆԻ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կովկասի 1905-1907թթ. պատմության լուսաբանմանը նվիրված վրացի, կովկասյան թուրք և հայ հեղինակների մի շարք հետազոտություններում ընթերցողը կարող է հանդիպել Շիրինկին ազգանվանը: Ըստ որում, բոլոր այդ աշխատություններում Շիրինկինը ներկայացված է ամենաբացասական գծերով՝ որպես դաժանաբարո մի մարդ: Կովկասի թուրք պատմաբանները նրան որակել են որպես թուրքերի ջարդարար, վրաց պատմաբանները՝ որպես վրացիների, հատկապես Գուրիայի ապստամբների դահիճ: Ռուս պատմական

գրականությունը նույնպես անտարբեր չի եղել այդ գործչի հանդեպ՝ նրան մեղադրելով ռուսական հեղափոխական կուսակցությունների կովկասյան կազմակերպությունների և երկրամասի ռուս առաջադեմ գործիչների հանդեպ անլուր բռնություններ գործադրելու մեջ: Բացառություն չեն կազմել ժամանակի հայկական մամուլի շատ օրգաններ (հատկապես 1905թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո), իսկ հետագայում՝ նաև հայ պատմաբաններ, որոնք Շիրինկինին միանշանակ որակել են որպես անուղղելի հայատյաց:

Կովկասի ոստիկանապետին, օրինակ, այսպիսի գնահատական է տվել դաշնակցության նշանավոր գործիչ Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունի).

«Պլևեյան դպրոցի աշակերտ, որ ուղարկվեց Պետերբուրգից իբրև պոլիցիական մասի կառավարիչ և այնտեղից մեր երկիրը բերեց ցավ, արյուն, սուգ և կոտորած: Նա է, որ լիազորություն, ավելի ճիշտ՝ մասնագիտություն ունի՛ լրտեսելու և դավեր սարքելու: Նա՝ որ այս անօրինակ ոճրի հենակետն է, թուրք ոստիկանների հովանավորը»[1]:

Բայց Շիրինկինը ոչ այս էր, ոչ այն: Նա սկզբում փոխարքա Վորոնցով-Դաշկովի երկու օգնականներից մեկն էր՝ քաղաքացիական գծով, որ այդ պաշտոնին նշանակվել էր 1905թ. մարտի սկզբներին, ապա որոշ ժամանակ անց՝ 1905թ. հունիսի 24-ին[2] նշանակվել էր Կովկասի ոստիկանական ուժերի պետ: Գեներալը ռուսական միապետությանը հավատարիմ նվիրյալ էր, նրա անձնուրաց պաշտպանը, Կովկասում ռուսական շահերին հետևողականորեն հետամուտ զինվորական գործիչ, ուստի այդ շահերի դեմ (իր ըմբռնումով) հանդես եկող ամեն մարդ, անկախ ազգային ու կրոնական պատկանելիությունից, ենթակա էր նրա մոլեգին զայրույթին՝ իր բոլոր հետևանքներով հանդերձ:

Գեներալ Շիրինկինը Կովկաս էր եկել հայության նկատմամբ խիստ տրամադրվածությամբ՝ նախապես գերի լինելով գոլիցինյան պաշտոնական տեսակետին: Բայց բավական էր եղել մի քանի ամիս, որպեսզի հայության մասին նրա պատկերացումները արմատապես փոխակերպվեին:

Արդեն 1905թ. օգոստոսին, թուրք-հայկական ընդհարումների սաստկացման օրերին, փոխարքային գրած հերթական զեկույցում, հայերի դեմ թուրքերի գործած չարիքները Շիրինկինը առաջին անգամ որակել էր որպես «արյունալի արարքներ» (“кровавые деяния”): «Այդպիսի տվյալներ ունեցող ժողովուրդը», գրում էր նա, չի կարող ակնկալել մեր պաշտպանությունը: Գեներալը շեշտում էր, որ կովկասյան թուրքերի լկտի արարքները թելադրված են նաև այն հանգամանքով, որ Կովկասի փոխարքայության նահանգներում մուսուլմանական շարժման մեջ ընդգրկված աստիճանավոր ոստիկանների բացարձակ մեծամասնությունը թաթարներ են, և ցավալի է, որ դա արդյունք է երկրամասի նախկին կառավարողների թուրքամետ քաղաքականության:

[1] «Դրոշակ», N 10 (163), հոկտեմբեր, 1906, էջ 152:
[2] Տե՛ս “Кавказский календарь на 1906 год”, էջ 242:

Զեկուցագրի վերջում Շիրինկինը Վորոնցով-Դաշկովին առաջարկ էր ներկայացնում քննարկել մուսուլման ոստիկանների թվի կտրուկ կրճատման հարցը[1]:

Ելնելով թուրք-հայկական ընդհարումների տրամաբանությունից՝ իր հայացքներն ամբողջովին վերանայած Շիրինկինը դեռ այն ժամանակ հանձին հայության Կովկասում տեսնում էր այն միակ ուժին, որի վրա պարտավոր է հենվել ռուսական պետությունը:

Որոշ փաստեր հուշում են, որ փոխարքան հավանություն էր տվել իր ոստիկանապետի – հայության հանդեպ ունեցած տեսակետի վերանայմանը: Դրա վկայություններից է նաև այս փաստը. 1905թ. սեպտեմբերի վերջերին Պետերբուրգում տեղի ունեցած նավթարդյունաբերողների խորհրդակցությունը գտել էր, որ, նախքան Բաքվի նավթահանքերում աշխատանքների վերսկսումը, անհրաժեշտ է այնտեղից հեռացնել մուսուլման ոստիկաններին: Խորհրդակցության ժամանակ ստացվել էր գեներալ Շիրինկինի հեռագիրը, որով նրա մասնակիցներին տեղյակ էր պահում, որ Բաքվի նավթահանքերում սկսվել է մուսուլման ոստիկաններին ռուսներով փոխարինելու գործընթացը[2]:

Հայության մասին իր որդեգրած նոր տեսակետը գեներալ Շիրինկինը 1906թ. ավելի հանգամանորեն շարադրում է **խիստ գաղտնի** մի գրության մեջ և ուղարկում Պետերբուրգ՝ ոստիկանական դեպարտամենտի պետին, լավ իմանալով, որ այն հայտնվելու է կառավարության ամենավերին շրջանակում:

Ըստ որում, ուղարկած գրության մասին նա տեղյակ չի պահում ինչպես փոխարքա Վորոնցով-Դաշկովին, այնպես էլ նրա երկու օգնականներին՝ Մալամային և Սուլթան Կրիմ-Գիրեյին: Դա պատահական չէ, քանզի նրանում դառը խոսքեր էին հասցեագրված նաև այս երեք բարձրաստիճան պետական գործիչներին:

Շիրինկինի գրությունը (մեքենագիր 15 էջ) վերնագրված է՝ «Հուշագիր Անդրկովկասի իրադարձությունների շուրջ»*:

Իր հուշագրում Շիրինկինն ամենից առաջ անդրադարձել է, այսպես կոչված, «հայկական անջատողականության» հարցին, ցույց տվել դրա հնարովի լինելը, որի հեղինակները «հետապնդում են ոչ միայն հակահայ, այլև հակառուս նպատակներ»:

[1] Տե՛ս **А. К. Дживелегов**, Армяне в России, Москва, 1906, էջ 44-45:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 45 (տողատակ): Նշենք, որ այս գործը գեներալ Շիրինկինը հանձնարարել էր իր տեղակալ Մ.Ն. Գուրովիչին, որը 1907-ին փոխարինեց նրան:
* Գեներալ Շիրինկինի «Հուշագիր Անդրկովկասի իրադարձությունների շուրջ» գրությունը պահպանվում է Պետերբուրգի Ռուսաստանի պետական պատմության արխիվի (Российский государственный исторический архив в Санкт-Петербурге – РГИА СПБ) ցարական ներքին քաղաքականության, մշակույթի և կենցաղի ենթաարխիվում (Ժանդարմական գործերի ֆոնդ, ց. 2, գ.2, N 1-15): Նշենք, որ փաստաթղթի վերջում արխիվային աշխատողների կողմից դրված է «1905թ. սեպտեմբեր» թիվը, այնինչ պետք է լիներ «1906թ. սեպտեմբեր», քանի որ վավերագրի բովանդակության մեջ ներառված են նաև 1905թ. սեպտեմբերից մինչև 1906թ. ապրիլը Անդրկովկասում տեղի ունեցած որոշ իրադարձություններ, որոնք առնչվել էին հայության հետ:

Իր այդ տեսակետի օգտին գեներալը բերում է մի շարք փաստարկներ և ամենից առաջ վկայակոչում 1905թ. մարտին Թիֆլիսում տեղի ունեցած Անդրկովկասի հայկական գավառների պատվիրակների համագումարի ընդունած որոշումը: Նա շեշտում էր, որ ազգային ինքնավարության հարցի առնչությամբ համագումարը դեմ է արտահայտվել այդ գաղափարին և դրա փոխարեն առաջարկել է ամբողջ Կովկասի համար բավարարվել փոխարքային կից օրինախորհրդակցական մի մարմին ունենալով:

Հայազգի պատվիրակները նույն կերպ են վարվել Մոսկվայում հրավիրված զեմստվոյական գործիչների համագումարում դարձյալ ինքնավարության մասին չներկայացնելով որևէ պահանջ:

Իրենց այդ հետևողական կեցվածքը հայերը դրսևորեցին նաև 1905թ. նոյեմբերին Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած Ռուսաստանի այլազգիների համագումարում: Վկայակոչելով Թիֆլիսյան իրենց համագումարի որոշումը՝ նրանք այստեղ էլ որևէ խոսք չասացին հայերի կողմից ինքնավարության պահանջի մասին: Դրա փոխարեն նրանք հայտարարեցին, որ Անդրկովկասում բնակչության տարանջատվածությունը ազգությունների սահմանազատման հնարավորություն չի տալիս, և շատ ավելի ձեռնտու է առավել չափով ապավինել հրավիրվելիք Պետական դումայի անաչառությանը, քան այս կամ այն ազգային գերակշիռ հավաքականության ինքնավար կառավարչություններին, որոնց իշխանության տակ ստիպված կլինեն հայտնվել այլ ազգությունների հատվածները:

Շիրինկինը հարց էր տալիս. «Եթե երկրամասի տարացեղ տեղական վարչակազմերի կողմից հնարված ամբաստանագրերի պատճառով հայերը միշտ համարվել են անջատողականներ, ապա ինչո՞ւ նրանք հնարավոր չհամարեցին իրենց համար ինքնավարություն պահանջել հենց այն ժամանակ, երբ այդ մասին կարելի էր բացեիբաց հայտարարել և հաջողություն ակնկալել, երբ, յուրաքանչյուր ազգություն, հիմք ու հնարավորություն ունենալով, այդ թվում վրացիներն ու իրենց թուրք անվանող անդրկովկասյան թաթարները, վճռականորեն ինքնավարության պահանջ դրեցին»[1]:

Պատասխանը պարզ էր. ամբողջ Անդրկովկասում հայ ազգությունն այնպես էր տարաբնակեցված մյուսների համեմատ, որ, բացառությամբ չորս գավառի, ամենուրեք թվաքանակով զիջում էր հարևաններին: Հենց դա է հիմնական պատճառը, գրում էր գեներալը, որ երկրամասում ազգային ինքնավարություն մտցնելը հայության համար հավասարազոր է մասնատման և հայաբնակ տարածքների նշանակալից մաս հարևանների իշխանությանը հանձնելուն, հարևաններ, որոնց անաչառությանն ապավինելու համար հայերը ոչ մի հիմք չեն տեսնում: Ես համոզված եմ, կրկին ու կրկին շեշտում էր Շիրինկինը, որ Կովկասում ազգություններին ինքնուրույնություն տալը կործանարար կլինի հայերի համար, և նրանք անխուսափելիորեն կընկնեն կովկասյան թուրքերի տիրապետության տակ, քանի որ վերջիններս ավելի բազմաքանակ են և գործում են Կ.Պոլսից եկած հրահանգներով:

Այնուհետև Կովկասի ոստիկանապետն իր հուշագրում անդրադառնում է հայության նկատմամբ ռուս կառավարության որդեգրած անհեռատես ու գահի համար խիստ վնասակար քաղաքականությանը:

Պատմական համառոտ էքսկուրս կատարելով՝ Շիրինկինը նշում էր, որ հայ ազգի նկատմամբ ռուսական կառավարության քաղաքականության մեջ կտրուկ փոփոխությունը կատարվել է Ալեքսանդր II կայսեր մահից և Կովկասից Միխայիլ Նիկոլաևիչ մեծ իշխանի հեռանալուց հետո:

Կառավարությանը թվում է, թե, ռուսների հետ միավորված լինելով ընդհանուր կրոնով և եկեղեցու ընդհանուր դրվածքով, վրացիներին արդեն կարելի է վերջնականապես ձուլված համարել Ռուսաստանի մեջ, իսկ կովկասյան թուրքերը, որպես մշակութապես հետամնաց, ներսը զանգված, քաղաքական ոչ մի ձգտում չեն դրսևորում և ապագայում նույնպես չեն դրսևորելու: Ուրեմն, միայն հայերն են, որ ինքնակառավարվող եկեղեցիով, ծխական-եկեղեցական դպրոցներով դեպի իրենց սևեռեցին կառավարության ուշադրությունը: Այդ յուրօրինակ հաստատությունների մեջ Կովկասի կառավարչությունը սկսեց ինչ-որ արտառոց բան տեսնել և ամենից առաջ տեսնել անջատողականության սաղմեր, որոնք աննկարագրելի ներդաշնակություն են հաղորդում ազգությունների թվացյալ ձուլման գործընթացին: Սակայն պատմությունն ապացուցեց, թե հայ ազգի հանդեպ դա ինչպիսի խոր մոլորություն էր, որի մեջ խրվել էր Կովկասի վարչակազմը: Հենց այդ վարչակազմի կողմից Պետերբուրգ հղած հաղորդումների հիման վրա է, որ բարձրագույն կառավարությունը սկսեց դատել և մինչև այժմ էլ դատում է հայ ազգության մասին:

Կառավարության կողմից հայերի նկատմամբ կոշտ քաղաքականություն որդեգրելու և անարդարացված հալածանքների մյուս պատճառն այն է, նշում էր Շիրինկինը, որ թուրքահայերի նկատմամբ մուսուլմանական կառավարության վայրենի հաշվեհարդարների առաջն առնելու նպատակով ռուսահայերը ձեռնարկում էին միջոցներ, հայացքներն ուղղել էին սահմանից այն կողմ, իսկ դա առատ նյութ էր մատուցում հակահայկական դրսևորումներին:

Հիրավի, Պետերբուրգում մտածում էին, որ եթե հայերը Թուրքիայում կարողանան ինքնավարություն ձեռք բերել, ապա նույն բանի համար պայքար կսկսեն նաև Կովկասի հայերը, և վերջնական արդյունքում օսմանյան կայսրությունից կանջատվի Թուրքահայաստանը, իսկ Կովկասից՝ Ռուսահայաստանը: Միացյալ Հայաստանի անկախության ուրվականը կատաղության էր մղում և՛ Աբդուլ Համիդին, և՛ Նիկոլայ II-ին:

Շիրինկինը գրում էր.

«Տեղական բազմացեղ ատիճանավորները, գերազանցապես հայերին թշնամի ազգություններից, ոգեշնչված ատելության զգացումով ու կարիերիս-

[1] РГИА СПБ, фонд жандармских дел, оп.2, д.2, л.2.

տական մղումներով, սկսեցին հալածական ազգի դեմ հորինել զրպարտությունն զրպարտության հետևից: Հորինվեց ու հայերին վերագրվեց մինչև Դոնի Ռոստով ընդգրկող Մեծ Հայաստանի քարտեզը: Հորինվածքը հիմնված էր Մեծ և Փոքր Հայաստանների աշխարհագրական բաժանման վրա, որը գոյություն է ունեցել դեռևս Ստրաբոնի ժամանակներից: Սադրանքը թեև նախատեսված էր անգետների համար, սակայն խոր արմատներ ձգեց»[1]:

Եվ հարվածը հարվածին հետևեց: Ոչ նորմալ մտավոր կարողություններով մի մարդու՝ իշխան Գոլիցինին կառավարչապետ նշանակվելու հետ՝ հայերի հալածանքը հասավ իր գագաթնակետին: Իրավաբանական քողի տակ եկեղեցական-ծխական դպրոցների, բարեգործական հաստատությունների փակումը, եկեղեցու ունեցվածքի բռնագրավումը, կառավարման ու տնօրինման իրավունքից զրկելը այդ կարծեցյալ պետական մարդու ձեռքի գործն էր: «Հնուց անտի պետությանը հավատարիմ հայ ազգն իր բոլոր շերտերով ցնցված էր անիրավացի վերաբերմունքից: Նրա արդարացի վրդովմունքն ու ընդվզումը, որը տարերայնորեն արտահայտվում էր եկեղեցական ունեցվածքը բռնազավթող հանձնաժողովների դեմ, նոր նյութ տվին կասկածանքի ու հալածանքի համար:

Դրան հաջորդած, երբեմն զենքի օգտագործմամբ ուղեկցվող, բռնաճնշումները մուսուլմանների մոտ նախ տարակուսանք առաջացրեցին, ապա հետևեց սոսկալի գիտակցումն այն իրողության, որ հայերն այլևս զրկված են ռուսական պետության հովանավորությունից և պաշտպանված չեն վերջինիս ուժով»:

Անդրկովկասյան թաթարների կամ, ավելի ճիշտ, Թուրքերի մուսուլմանական ընդհանուր մոլեռանդությունն ընդդեմ քրիստոնյաների, նշում էր գեներալը, ընդհանրապես, բարդանում է դեպի հայերն ունեցած յուրահատուկ ատելությամբ, մասամբ որպես մուսուլմանական երկրները քրիստոնեական պետությունների կողմից նվաճման, իսլամի ստորացման և իրենց ինքնուրույնության կորստի համար մեղավորների: Անդրկովկասի նվաճման գործում Թուրքիայի դեմ Ռուսաստանի հետագա պատերազմներում հայերի դերը մահմեդականները չեն կարողանում մոռանալ: Ճակատագրական իրադարձությունները ցանկալի պահ էին նախապատրաստել իսլամի ստորացման համար վրեժը ներկայումս հայերից լուծելու համար: Ապա հուշագրի հեղինակը գրում է, թե եթե նկատի ունենանք, որ նրանց նման ձգտումը սրբագործված է կրոնով, և որ նրանց համար ղուրանը պահպանել է նախասկզբնական թարմությունը, ապա կարելի է պատկերացնել թե, ռուս պետական այրերի կարճատեսության հետևանքով, իրադարձությունների ընթացքում ինչպիսի վտանգ էր կախվում հայ ազգի գլխին:

Իր միտքը հաստատելու համար գեներալը ղուրանից բերում է մի քանի հատվածներ.

[1] РГИА СПБ, фонд жандармских дел, оп.2, д.2, л.3.

«Երբ հանդիպում եք անհավատներին, ապա հատեք նրանց գլխից մինչև մարմինը, որ նրանք ընկնեն մահացու խոցված» (Ղուրան, գլ. 47, էջ4, Մեդինսկայա):

«Անհավատ են նրանք, ովքեր ասում են, թե Մարիամի որդի Մեսսիան հենց աստվածն է» (Ղուրան, գլ. 3, էջ114, Մեդինսկայա):

«Հավատացյալներ, անկեղծ բարեկամության մեջ մի մտեք ոչ մեկի՝ բացի ինքներդ ձեզ հետ» (Ղուրան, գլ. 45, էջ 76-77, Մեդինսկայա):

Շիրինկինը հաստատում էր, որ Անդրկովկասում մոլեգնող կոտորածների ժամանակ ղուրանի վերոհիշյալ պատվիրանների և սկզբունքների վրա հիմնված թուրքերի կրոնական մոլեռանդությունը արտահայտվեց ապշեցուցիչ հետևողականությամբ: Այդ չլսված հանցագործության հրահրողը և նախաձեռնողը հանդիսացավ իր հայատյացությամբ հռչակված իշխան Նակաշիձեն, որը, գեներալի խոսքերով ասած, կաթվածահար էր արել ոստիկանությանն ու զորքին՝ նրանց վերածելով տեղի ունեցող սարսափելի զանգվածային հանցագործությունների հանդիսատեսի: Միաժամանակ այդ ոճրագործ մարդու գլխավորած վարչակազմը ամեն ինչ անում էր հայերի ինքնապաշտպանական գործողություններում գտնելու դատապարտելի արարքներ և կոտորածների ամբողջ մեղքը բարդելու նրանց վրա: Ծավոք, Բաքվում կատարված ոճրագործությունների հեղինակները ոչ մի պատիժ չստացան, և հենց այդ անպատժելիությունը ազդանշան հանդիսացավ ջարդերի հետագա ծավալման համար Անդրկովկասի բոլոր նահանգներում:

Այնուհետև Շիրինկինը անդրադառնում է Ելիզավետպոլի, Երևանի, Թիֆլիսի նահանգներում տեղի ունեցած կոտորածներին և դրանց ամբողջ մեղքը վերագրում թուրքերին ու կովկասյան փոխարքայության վարչակազմին:

Դրան հետևում են գեներալի կատարած խորհրդածությունները կոտորածների մեջ պանիսլամիզմի ունեցած չարաշուք դերակատարության մասին: Նա նշում է, որ պանիսլամական միտումներն ու քարոզչությունը ամենաբարենպաստ հող են գտել Կովկասի թուրքերի մոտ: Զանգվածների շարքերում անփոփոխ կերպով պահպանվող մուսուլմանական մոլեռանդությունը ամբողջ ուժով բորբոքվում է պանիսլամիստների և պանթուրքիստների կողմից: Վարչակազմը իշխանությունների աչքի առջև թույլ տվեց ամբողջ քրիստոնեական աշխարհի դեմ թշնամաբար տրամադրված, մոլեռանդ թաթարական ամբոխի մոբիլիզացումը, որը փաստորեն արդեն տիրապետող է երեք նահանգներում, քանի որ հայ ազգաբնակչության օազիսները իրենցից ներկայացնում են թաթարական տիրապետման սահմաններում պաշարված բնակավայրեր:

Շիրինկինը ցավով արձանագրում է, որ, պանիսլամիստների, ավելի ճիշտ՝ պանթուրքիստների կողմից ղեկավարվող «թաթար մոլեռանդ ամբոխը, հիշյալ նահանգները թրքացնելու նպատակով, դիմում է իսլամի սկզբնական ժամանակների ձևերին՝ սրի ու կրակի է մատնում դեռևս «անհավատ» հայերին, որոնց տեղական վարչակազմը ոչ միայն չի պաշտպանում, այլև ինքն է նրանց

մատնում խառնամբոխի ձեռքը: Ղուրանի պատվիրանները կատարվում են ապշեցուցիչ ճշգրտությամբ: Ամենուր թաթարները հարձակվում են «Ցա Մուհամմեդ, յա Ալի» ճիչերով, կրոնական դրոշներով, բացեիբաց հայտարարելով, որ իրենց կողմից հայերին «սրբազան պատերազմ» է հայտարարված: Այնտեղ, ուր նրանք գերում են անպաշտպան, դիմակայելու անընդունակ բնակչությանը՝ բռնի կերպով ընդունել են տալիս իսլամը»[1]:

Նշելով, որ քրդական հեծելազորը բազմիցս Թուրքիայից և Պարսկաստանից թափանցել է Անդրկովկասի տարածքները և առանձին դեպքերում մասնակցել իրենց ճանապարհին ամեն ինչ ամայացնող տեղի մուսուլմանական հակահայկական շարժմանը, Շիրինկինը գտնում է, որ եթե այդ շարժումը շարունակվի (իսկ դրա համար տեղական վարչակազմը բոլոր հիմքերն ու լիակատար երաշխիքներ տալիս է), ապա ողջ քրդական հեծելազորը կհայտնվի երկրամասում, և այդ հրդեհն արդեն իսկապես դժվար կլինի հանգցնել:

Կովկասում պանիսլամական և պանթուրքական շարժման ծավալման հիմնական պատճառը համարելով երկրամասի բարձրագույն վարչակազմի վարած տհաս քաղաքականությունը, հատկապես կառավարիչ Գոլիցինի կատարած ավերները՝ Շիրինկինը շեշտում էր, որ նրա հեռանալուց հետո էլ ըստ էության ոչինչ չի փոխվել, քանի որ շարունակվում է հայերի նկատմամբ չպատճառաբանված դաժանությունների և մուսուլմաններին սիրաշահելու ու պաշտպանելու անհեռատես քաղաքականությունը: «Նորին մեծության փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովը փաստորեն ղեկավարվում է իր օգնական, Ղրիմի խաների հետնորդ Սուլթան Կրիմ-Գիրեյի և հայտնի թուրքամոլ, մուսուլման գեներալ Ալիխանովի կողմից»[2]:

Կոնկրետ փաստերով ներկայացնելով Անդրկովկասի իրադարձությունները՝ գեներալն այդ փաստերից կատարում էր տխուր եզրահանգումներ՝ Կովկասի փոխարքայության վարչակազմի գործունեության մասին.

Ա) Կովկասի բարձրագույն իշխանությունը ոչ միայն անընդունակ է գտնըվել հասկանալու ռուսական պետության համար մուսուլմանական աշխարհի սահմանագծում գտնվող հայ ազգի նշանակությունը (մոռանալով կամ չիմանալով այդ ժողովրդի խաղացած դերը Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու գործում և հետագա պատերազմներում), այլ անգամ ոտնատակ է տվել ռուսական իշխանության փառքն ու հեղինակությունը, որոնք նախկինում անխոցելի էին կայսրության ասիական ծայրամասի ողջ բնակչության և հատկապես մուսուլմանների պատկերացումներում:

Բ) Երկրամասի բարձրագույն վարչակազմը չսթափվեց նույնիսկ այն ժամանակ, երբ ակնհայտ դարձավ, որ բնական պայմանների բերումով միայն հայ

[1] РГИА СПБ, фонд жандармских дел, оп.2, д.2, л.11.
[2] Նույն տեղում:

ազգի շահերն են համընկնում բուն ռուսականին, որ այն պահին, երբ բոլոր ազգությունները լուրջ պահանջներ էին դրել ինքնորոշման մասին, դրա համար հիմք ունենալով թե ոչ, միայն հայ ազգն էր, որ ոչ մի առանձին ազգայնական հարց առաջ չքաշեց: Եվ զարմանալին այն է, որ նույնիսկ դրանից հետո փոխարքայության վարչակազմը շարունակում է վարել այնպիսի տհաս քաղաքականություն, որը անխուսափելիորեն տանելու է պետության բնական և պատմական դաշնակցի ոչնչացմանը և Անդրկովկասի սահմանային երեք նահանգների լիակատար թուրքացմանը: «Երբ Կովկասում լիովին կատարվի մուսուլմանների մոբիլիզացումն ու զինումը, - գրում է Շիրինկինը, - ապա այնտեղ տեղի կունենա շարժում, որի դեմ կկամրի Դաղստանի ապստամբությունը: Վարելով զարմանալի մարտավարություն՝ մուսուլմաններն առայժմ ոչնչացնում են **այն տարրը**, որը, նրանց անվրեպ համոզմամբ, մշտապես պետք է գտնվի իրենց նպատակների ճանապարհին և Անդրկովկասի պաշտպանների շարքերում»[1]:

Գ) Կովկասյան իշխանությունը ամենակրիտիկական պահերին անգամ արհամարհել է պետության ֆինանսական շահերը: Վարչակազմի բացահայտ թույլտվությամբ մուսուլմանները ոչնչացրել են բազում նավթահորեր, գինեգործական, մետաքսագործական, կաթի մշակման ձեռնարկություններ, պանրագործարաններ, հսկայական տարածքների վրա ավերել են գրեթե ամբողջ գյուղատնտեսությունը, և դա այն ժամանակ, երբ պետությունը ստիպված փոխառություններ է վերցնում արտասահմանում: Վարչակազմը ոչ միայն չի պատկերացնում պետության համար մուսուլմանական շարժման ամբողջ վտանգը, այլև իրեն հաշիվ չի տալիս այն բանում, որ լրիվ ամայացած երեք նահանգների մի քանի միլիոն բնակչությունը կորցնում է վճարունակությունը, վերածվում քաղցած պրոլետարիատի՝ երկար տարիներով բեռ դառնալով պետության վրա:

Դ) Եթե պետական իշխանությունը դրսևորվեր պատշաճ ուժով, մուսուլմանական շարժումը բոլորովին չէր ծագի: Եվ այժմ էլ դեռ կարելի է այն արագորեն ճնշել: Մինչդեռ կովկասյան բարձրագույն վարչակազմը մոլեռանդ թաթարական զանգվածների չլսված շարժման հանդեպ որդեգրել է բոլորովին այլ մարտավարություն՝ չպատժել զանգվածային չարագործությունների հեղինակներին, որոնց ղեկավարությամբ են կատարվում հարձակումները, ամբողջ քաղաքների ու գյուղերի ավերումները, հայ կանանց, երեխաներին, ծերերին կոտորելը: Բարձրագույն վարչակազմը բավարարվում է միայն չինծու միջոցներ ձեռնարկելով և պետական գումարներն աննպատակ ծախսելով:

Ե) Այդ ամենը հետևանք է այն բանի, որ Կովկասի բարձրագույն վարչակազմը, անտեսելով պետության շահերը, լիովին գտնվում է թուրքերի ազդեցության տակ: Արատավոր քաղաքականության հիմքում ընկած ճակատա-

[1] РГИА СПБ, фонд жандармских дел, оп.2, д.2, л.13.

գրական սխալների հետևանքով և իր իսկ որակական ցածր հատկանիշների պատճառով՝ փոխարքայության վարչակազմն ընդունակ չէ Կովկասում վերականգնելու կարգուկանոն ու օրենքի ուժը[1]:

Հուշագրի վերջում Կովկասի ոստիկանության պետը Պետերբուրգի կառավարական շրջաններին առաջարկում է դիմել կտրուկ քայլերի: Նա գրում էր.

«Անխուսափելի աղետը կանխելու համար, որը սպառնում է ոչ միայն Կովկասի հայ ազգաբնակչությանը, այլև կայսրության լավագույն երկրամասի ամբողջականությանը և Մերձավոր Արևելքում նրա պատմական առաքելությանը, անհրաժեշտ է անհետաձգելիորեն ձեռնարկել ամենավճռական միջոցներ»[2]:

Շիրինկինի կարծիքով, այդ միջոցների մի մասը առաջին հերթին պետք է արտահայտվեր հետևյալում.

1. Անմիջապես կարգադրել Կովկասի բարձրագույն վարչակազմին՝ անհապաղ ռազմական ուժով ճնշել զինված հարձակման ամեն մի փորձ, ում կողմից էլ որ այն լինի, և անմիջապես, ճնշելուց հետո, պատժել կոտորածների ու ջարդերի սադրիչներին: Անհապաղ ցրել և զինաթափել առանձին անցուղիներ ու բնակավայրեր գավթած թաթարական հրոսակախմբերին:

2. Նույն կերպ կարգադրել վարչակազմին՝ անհապաղ պաշտոնանկ անել և պատասխանատվության ենթարկել այն վարչական և ոստիկանական պաշտոնական անձանց, որոնք մերկացվել են կոտորածների ու ջարդերի թողտվության մեջ:

3. Խստագույն և անհետաձգելի պատիժ այն բեկերին, որոնք, բացեիբաց կազմակերպելով հրոսակախմբեր, հարձակումներ են կատարել և կատարում են քաղաքների ու գյուղերի խաղաղ բնակիչների վրա:

4. Պետերբուրգից գործուղված աստիճանավորների միջոցով, առանց տեղական վարչակազմի մասնակցության, խստագույն կարգադրություններով ու հրահանգներով հետաքննության և նախաքննության վարույթով պարզել Կովկասի վարչակազմի դերը երկրամաս ընդգրկած շարժման մեջ:

5. Նկատի ունենալով, որ վերոնշյալ շարժումը սպառնում է ռուսական պետականությանն ու Մերձավոր Արևելքում Ռուսաստանի քաղաքականությանը, անհրաժեշտ է դրա պատճառների ու դրդապատճառների հրատապ և անաչառ հետաքննություն: Այդ նպատակով պետք է Կովկաս գործուղվի հատուկ հանձնաժողով, որը կազմված կլինի բացառապես ռուսական ծագում ունեցող, ազգային համակրանքներից ու հակակրանքներից զերծ, միմիայն համապետական գաղափարներով տոգորված անձանցից:

6. Խաղաղ բնակչությանը պահպանելու համար տեղական պահեստայիններից կազմակերպել գյուղական պահնորդություն բացառապես ռուսական

[1] РГИА СПБ, фонд жандармских дел, оп.2, д.2, л.13.
[2] Նույն տեղում:

սպաների հրամանատարությամբ*:

7. Մուսուլմանական շարժմամբ բռնկված շրջաններում տեղական ծագմամբ բոլոր պաշտոնատար անձանց անմիջապես պաշտոնանկություն՝ սկսած ամենաստորին ոստիկաններից, վերջացրած բարձրագույն վարչականով, փոխարինելով նրանց ռուսներով, բայց ոչ՝ կովկասյան վարչակազմից:

8. Պետության անվտանգության և երկրամասի շահերից ելնելով՝ խուսափել բարձրագույն զինվորական և վարչական պաշտոններում տեղական ծագմամբ անձանց նշանակումից[1]:

Այսպիսով, Կովկասի ոստիկանապետ գեներալ-մայոր Շիրինկինը Ռուսաստանի վերջին 20-25 տարիների պատմության մեջ ցարական բյուրոկրատիայի բարձր պաշտոնյաների թվում առաջինն էր, որ համարձակություն ունեցավ անկողմնակալ մոտեցմամբ իրերը կոչել իրենց անունով: Նա բացահայտ հանդես եկավ Կովկասում կառավարության վարած անհեռատես քաղաքականության դեմ, պաշտպանության տակ առավ հայությանը և, հատկապես, նրա մղած գոյամարտը կովկասյան թուրք-թաթարական հորդաների դեմ:

Ռուս բյուրոկրատիայի ականջին հնչած Կովկասի ոստիկանապետի բողոքը տարակուսանք առաջ բերեց երկրի կառավարական բարձրագույն ոլորտներում: Կառավարությունը պատրաստ չէր կատարել Շիրինկինի արմատական առաջարկությունները: Չնայած դրան, ռուս հայրենասեր գեներալի ծառայողական հուշագիրն աննկատ չանցավ: Պետերբուրգյան պաշտոնական շրջաններում աստիճանաբար, համարյա աննկատ, կովկասահայության հանդեպ ձևավորվում էին նոր տրամադրություններ, երևում էին առաջին ազատ նշանները, որ մոտենում է գոլիցինյան հայատյաց քաղաքականությունից պաշտոնապես հրաժարվելու և հայանպաստ (հետևապես՝ ռուսանպաստ) քաղաքականություն որդեգրելու ժամանակը:

Շիրինկինյան տրամադրությունները առաջին հերթին իրենց աստիճանական դրսևորումները ստացան Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի քաղաքականության մեջ:

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԻԿՈԼԱՅ II-ԻՆ

1907թ. փետրվարի 26-ին լրանալու էր երկու տարին, ինչ Նիկոլայ II-ի հրամանագրով վերականգնվել էր Կովկասի փոխարքայությունը և կոմս Վորոնցով-Դաշկովը նշանակվել էր փոխարքայի պաշտոնում՝ ստանձնելով Կովկասում անդորրություն հաստատելու պարտականությունը:

* Նշենք, որ այդ միջոցը բազմիցս առաջարկվել էր գեներալ Շիրինկինի կողմից, բայց Սուլթան Կրիմ-Գիրեյի ջանքերով փոխարքան միշտ մերժել էր:
[1] РГИА СПБ, фонд жандармских дел, оп.2, д.2, л.13.

Այդ կապակցությամբ, ընդունված կարգի համաձայն, փոխարքան պետք է զեկուցագիր ներկայացներ ցարին՝ անցած ժամանակաշրջանում իր կատարած աշխատանքների մասին:

1906թ. աշնանը Վորոնցով-Դաշկովի ստեղծած հանձնախումբը պատրաստեց զեկուցագրի ընդարձակ տեքստը: Փոխարքայի ստորագրելուց հետո այն ուղարկվեց ցարին, որը լույս տեսավ 1907թ. սկզբներին Պետերբուրգում[1]:

Զեկուցագիրը բաղկացած է 164 տպագիր էջի մեջ ամփոփված 7 գլուխներից՝ Հեղափոխական շարժում, Գյուղացիների կախվածության վերացում, Հողօգտագործման կարգավորում, Երկրամասի ռուսական գաղութացում, Տուրքադրում, Ժողովրդական լուսավորություն, Տեղական կառավարչության կազմակերպում:

Զեկուցագրի ներածական մասում փոխարքան նշում էր, որ ժամանակի առանձնահատուկ հանգամանքները իրեն ստիպել են պաշտոնավարության ժամանակ ուշադրությունը հիմնականում բևեռել երկրամասում տեղի ունեցող անիշխանական դրսևորումների դեմ պայքարին և միջոցներ ձեռնարկել թեկուզ հարաբերական անդորրը պահպանելու համար: Դա է պատճառը, գրում էր նա, որ ես հնարավորություն չեմ ունեցել «ձեռնամուխ լինել Վսեմությանդ կողմից իմ կառավարմանը վստահված երկրամասի հետագա խաղաղ վերափոխումների իրականացմանը», բայց, միաժամանակ, «այն հուզախառով վիճակը, որում այս երկու տարիներս գտնվում էր Կովկասի երկրամասը, լավագույնս բացահայտեց կովկասյան կարգերի անկատարությունը»: Ուստի «ինձ ժամանակին է թվում զեկուցել Ձերդ Մեծությանը Կովկասի երկրամասի վերափոխման ուղղությամբ առաջիկա գործունեությանս հիմունքների վերաբերյալ իմ նկատառումների մասին»[2]:

Հարկ չհամարելով ծանրանալ փոխարքայի զեկուցագրի ամբողջական բովանդակության վրա՝ մենք կանդրադառնանք փաստաթղթի միայն այն հատվածներին, որոնք անմիջականորեն առնչվում են կովկասահայության կյանքին:

Եթե ի մի բերելու լինենք հայության մասին զեկուցագրի տարբեր գլուխներում արտահայտված կարծիքները և կատարված առաջարկությունները, ապա դրանք կարելի է խմբավորել երեք պրոբլեմների մեջ՝ հեղափոխական շարժման մեջ կովկասահայության ներգրավման պատճառները, հայ-թաթարական ընդհարումներում հայերի «մեղքի բաժինը» և քոչի խնդիրը:

Փոխարքան գրում էր, որ իր պարտականությունները ստանձնելու ժամանակվանից ի վեր՝ Կովկասից ամեն օր լուրեր էին ստացվում ապահովության և անդորրի խախտումների, խռովությունների, թալանի ու կողոպուտի և ընդհանրապես ամեն կարգի բռնությունների մասին: Ընդհանուր դժգոհության և

[1] "Всеподданнейшая записка по управлению Кавказским краем генерал-адютанта графа Воронцова-Дашкова", Государственная типография, С.-Петербург, 1907.
[2] Նույն տեղում, էջ 5:

անկարգությունների կապակցությամբ, երկրամասի առավել խոշոր կենտրոններում համարյա անընդհատ տարբեր ահաբեկչական գործողություններ էին կատարվում զինված հարձակումների, ռմբահարման և այլ ձևերով, որ ուղեկցվում էին վարչական և ոստիկանական պաշտոնեության սպանություններով կամ վիրավորումներով:

Իսկ այս պայմաններում ի՞նչ դիրք էր բռնել Կովկասի կառավարչապետությունը:

«Խելամիտ ու ինքնուրույն գործունեության անընդունակ տեղական վարչակազմը, - նշում էր Վորոնցով-Դաշկովը, - որ երկար տարիներ ի վեր ընտելացել էր պետերի հրամանների զուտ արտաքուստ, անծպտուն կատարմանը և նրանց ցանկությունների ընդառաջմանն այն իմաստով, որ իրավիճակը ներկայացվում էր նրանց համար ցանկալի տեսքով՝ խնամքով սքողում էին այն ամենը, ինչ կարող էր խաթարել ընդհանուր անդորրության կեղծ պատկերը:

Տեղական վարչակազմն, ահա, ի վիճակի չեղավ վերլուծել կատարվածի պատճառները, քանզի, կտրված լինելով տեղական շահերից, չարյաց արմատը տեսնում էր յուր ձախավեր ձեռնարկումներին ընդդիմանալու մեջ՝ խտացնելով առճակատման գույները և, գլուխ չհանելով իրական կյանքի երևույթները ծնող հանգամանքներից, դրանք բացատրում էր սոսկ այն իմաստով, ինչպես նախկինում նման երևույթները վերադասի կողմից մեկնաբանվել են պաշտոնական գրագրություններում»[1]:

Փոխարքան ցարին տեղեկացնում էր, որ այդ իրավիճակում Կովկաս գալու սկզբնական շրջանում ինքը ընդհարվել է հսկայական դժվարությունների հետ, բայց ձեռնարկել է հարկ եղած միջոցներ՝ վերականգնելու կարգը, միաժամանակ ջանք չի խնայել ուսումնասիրելու «անկարգությունները ծնող պատճառները»: Նա շեշտում էր, որ անցած երկու տարում իր գործունեության ընթացքում անշեղորեն հենվել է օրենքի վրա՝ ամեն կերպ դիմադարձելով հանրային անվտանգությանը և պետական կարգին սպառնացող երևույթներին, միաժամանակ վերացնելով հասարակության և պետության համար վտանգ ներկայացնող գործողությունների հանդեպ ավելորդ բռնաճնշումները:

Այդ ընդհանուր դատողություններից հետո Վորոնցով-Դաշկովն անցնում է կովկասահայության հետ առնչվող խնդիրներին:

«Իմ Կովկաս ժամանելուց գրեթե անմիջապես հետո, - գրում էր նա, - ես ստացա Ձերդ Մեծության Բարձրագույն բարեհաճ թույլտվությունը Հայ Գրիգորյանական եկեղեցուն վերադարձնելու իր ունեցվածքը և թույլատրելու հայ հոգևորականությանը բացելու դպրոցները: Ձեր կողմից հայերին արված այդ շնորհը, Տեր իմ, ինչպես հաստատեցին հետագա հանգամանքները, ունեցավ վերին աստիճանի կարևոր քաղաքական նշանակություն»[2]:

[1] "Всеподданнейшая записка...", стр.9.
[2] Նույն տեղում:

Հայոց եկեղեցու կարգ ու սարքին, ազգի ներսում նրա ունեցած ազդեցությանը ընդամենը երկու տարում հանգամանորեն տեղեկացված փոխարքան կայսրին հաղորդում էր, որ հայ ժողովուրդը, որը չի ճանաչում հոգևորականությանը որպես դաս և հոգևոր անձանց ընտրում է իր իսկ միջավայրից, զուտ պատմական նշանակություն ունեցող պատճառներով, նույնիսկ կրոնական հայացքներից անկախ, սերտորեն կապված է իր հոգևորականության շահերի հետ: Ուստի եկեղեցական ունեցվածքի բռնագրավումը և հանձնումը պետական տնօրինության՝ վիրավորել է ժողովրդի բարոյական զգացմունքը և նրան, գրեթե ազգովին, առանց դասերի և դիրքերի խտրության, նետել հեղափոխական շարժման մեջ:

Հայ հեղափոխական «դաշնակցություն» խմբակցությունը, որ ժամանակին կազմավորվել էր Թուրքահպատակ հայերին Թուրքիայի իշխանությունից ազատագրելու համար և Ռուսաստանում իրեն դրսևորել էր լոկ փողի հանգանակությամբ, զենքի գնմամբ և Թուրքիա ուղարկելու համար կամավորականների կազմավորմամբ, եկեղեցական ունեցվածքների բռնագրավումից հետո իր ազատագրական գաղափարների պրոպագանդման համար բարերեր հող գտավ նաև ռուսահայերի շրջանում: Բոլոր հայերի ընդդիմամբ ինքնուրույն Հայաստանի ստեղծման գաղափարը, որ նախկինում գուցե միայն ծագել էր առանձին անձանց մտքում, անմիջապես զգալի տարածում ստացավ Կովկասում: Ըստ վարչակազմի տվյալների, չկար հայ բնակչությամբ ոչ մի բնակավայր, որտեղ չգործեր «դաշնակցության» տեղական հատուկ կոմիտեն, իսկ հայերի համակրական վերաբերմունքը ամեն մի տեռորիստական գործողության նկատմամբ բոլորի համար այնքան ակնհայտ էր, որ անգամ հուզումները Քութայիսի նահանգում, ուր ընդհանրապես հայեր չկան, վերագրվեց հայերի նյութած դավերին, էլ չխոսելով վրացիների մասնակցությամբ քաղաքական սպանությունների առանձին դեպքերի մասին...

Հայերի հեղափոխական լինելու մասին կեղծ նախադրույթի ազդեցությամբ, որ հետևանք էր նրանց հոգևորականությունից եկեղեցական ունեցվածքի բռնագրավման, հայ զանգվածների մոտ իրոք հեղափոխական տրամադրություն էր ստեղծել: Սակայն տեղական վարչախումբը չէր ուզում տեսնել չարիքի հիմնական պատճառը և միայն պատժիչ գործողություններ էր իրականացնում ձերբակալելով և երկրամասից արտաքսելով այն բոլոր հայերին, որոնք բացահայտ դժգոհություն և անհամաձայնություն էին հայտնում ունեցվածքի բռնագրավման առթիվ և, այդպիսով, ավելի ու ավելի էին համալրում դժգոհ տարրերի շարքերը:

Իրեն հատուկ նրբանկատությամբ փոխարքան Նիկոլայ II-ին գովեստի խոսքեր էր ուղղում «իմաստուն քայլի»՝ հայ եկեղեցու կալվածքները հարքունիս գրավելու մասին 1903թ. հունիսի 12-ի իր իսկ հրատարակած հրամանագիրը հետ վերցնելու համար: Նա գրում էր. «Հայերի մասնակցությունը ահաբեկչական գործողություններին անմիջապես նկատելիորեն պակասեց, «դաշնակցության» ազդեցությունը, թեկուզև ոչ միանգամից, բայց, այնուամենայնիվ, անընդհատ սկսեց նվազել, և Դուք, **Ձերդ Մեծություն**, հայ ժողովրդի զանգվածում այժմ ունեք ռուսական կայսրության շահերին ծառայելու պատրաստ հպատակներ, ինչպես առաջներում Ասիական Թուրքիայով ռուս զորքերի առաջխաղացման ժամանակ ծառայում էին այսօրվա անդրկովկասյան հայերի նախնիները»[1]:

Փոխարքան նկատում էր, որ պետական գանձարանի օգտին հայ եկեղեցու գույքի ու կապիտալի բռնագրավմանը մասնակցություն ունեցած անձանց դեմ կատարված ահաբեկչական գործողությունները հայ ժողովրդի դեմ գրգռեցին ամբողջ կովկասյան պաշտոնեությանը: Հայերի նկատմամբ վարչախմբի գործողությունները Վորոնցով-Դաշկովը բնութագրում է կտրուկ ձևակերպումով՝ «թշնամական ու կողմնակալ»[2]:

Այնուհետև փոխարքան անցնում է հայ-թաթարական կոտորածների հարցին: Նա գտնում էր, որ ինքը հակված է կարծելու, թե դրանում նույնպես իր մեղքի մեծ բաժինն ունի Կովկասի նախկին վարչախումբը՝ իշխան Գոլիցինի գլխավորությամբ:

«Ինքնին հասկանալի է, - ցարին գրում էր Վորոնցով -Դաշկովը, - որ վարչախմբի այդ տրամադրությունները չէին կարող աննկատ մնալ Կովկասի այն ժողովուրդների ներկայացուցիչներից, որոնք երբեք հատուկ համակրանք չեն տածել հայերի հանդեպ, որպես տնտեսապես գերազանցող մի ազգի, որը մշտապես, առօրյա դրացիության մանրուքներում իսկ, զգալ է տվել իր գերազանցությունը, հատկապես տեղական մուսուլմանների հանդեպ, որոնք չէին կարող այդ դեպքում չհիշել իրենց նախնիների ունեցած պատմական թշնամանքը հայ բնակչության նկատմամբ[3]:

Միայն հայերի դեմ այդ թշնամական տրամադրությունները հաշվի առնելով է փոխարքան հնարավոր համարում բացատրել 1905թ. փետրվարին Բաքու քաղաքում տեղի ունեցածը և ողջ Կովկասը ճարակած պատերազմը:

Ընդհանրապես փոխարքան կոտորածների հիմնական մեղավորը համարում էր կովկասյան թուրքերին (Բաքու, Նախիջևան, Երևան,Ելիզավետպոլ), բայց միաժամանակ նշում էր, որ մի շարք տեղերում (Շուշի, Թիֆլիս և այլուր) առաջինը հայերն են սկսել կռիվը: «Ըստ գործի էության, հարկավ, կարևոր էլ չէ, թե ով է եղել բախումներն հրահրողը, - գրում էր Վորոնցով-Դաշկովը: - Կարևոր է այն, որ թույլ է տրվել դյուրավառ նյութի կուտակում պատրաստ առաջին իսկ կայծից բռնկվելու: Դժվար էր պայքարել ինձանից առաջ բռնկված ընդգետնյա հրդեհի դեմ և կանխել հսկայական տարածքում դրա անսպասելի արտավիժումը»[4]:

---

[1] **"Всеподданнейшая записка..."**, стр.10.
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 11-12:

Եթե կովկասյան թուրքերի պարագայում փոխարքան շեշտադրում էր նրանց հետամնացությունը և կրոնական մոլեռանդությունը, ապա հայերի դեպքում ընդգծում էր նրանց մի մասի կուրորեն ու անվերապահ ենթարկվելը դաշնակցություն կուսակցության հրահանգներին ու հրամաններին: Նրա կարծիքով, այդ կուսակցությունն էր պատճառներից մեկը հայ-թաթարական թշնամանքի խորացման, նրա ղեկավարությամբ գործող, հիմնականում թուրքահայերից կազմված զինված խմբերը հարձակումներ էին կատարում թաթարական բնակավայրերի վրա և անմեղ զոհերի պատճառ դառնում:

Ցանկությունն իրականության տեղ դնելով՝ փոխարքան ցարին գրում էր, թե դաշնակցությունն արդեն ինքն իրեն հեղինակազրկել է հայ ազգի աչքում, և հայերի զանգվածներն արդեն երես են թեքել նրանից՝ դատապարտելով նրա պայքարի եղանակները: Թեև հիմա էլ այդ կուսակցությունը փորձում է իր հետևից տանել ժողովրդին, նշում էր Վորոնցով-Դաշկովը, բայց քանի որ «հայկական ժողովրդական զանգվածը բացառապես վարակված չէ ինքնավարության ձգտումներով և կառավարությունից ոչ մի այլ բան չի ցանկանում, քան լոկ այն բարեհաճ վերաբերմունքը, որից նա օգտվում էր նախկին փոխարքաների օրոք և որի շնորհիվ նա Կովկասի մյուս ազգությունների համեմատ տնտեսապես ամրապնդվեց», ուստի նա խուսափում է իրեն լիովին հանձնել դաշնակցության կամքին[1]:

Ի լրումն դաշնակցության մասին արտահայտած կարծիքի, փոխարքան Նիկոլայ II-ին տեղեկացնում էր,որ այդ կուսակցության պայքարի տակտիկան ըստ էության թելադրվում է Արևմտյան Եվրոպայում ապրող հայ քաղաքական գործիչների մի խմբի կողմից, որը թուրքական լծից հայերի ազատագրության նպատակով ամեն ինչ անում է գրավելու Եվրոպայի ուշադրությունը և առաջացնելու միջազգային միջնորդություն: Բայց այդ տակտիկան, վնաս պատճառելուց բացի, թուրքահայերին ոչինչ չտվեց: Եվրոպայի կողմից միջազգային միջնորդություն առաջ բերելու դաշնակցության փորձերը թուրքերն ընկալեցին որպես իրենց կայսրության ներքին գործերին միջամտելու ձգտում, որի հետևանքը եղան վերջին չուրջ 15 տարիների ընթացքում հայերի սոսկալի ջարդերը Թուրքիայում:

Վորոնցով-Դաշկովը որոշ անհանգստություն էր հայտնում, որ Կովկասում դաշնակցության նշանակության անկման հետ բացառված չէ առավել արմատական գաղափարներով համակված սոցիալիստական հնչակ կուսակցության ազդեցության ուժեղացումը հայերի միջավայրում, կուսակցություն, որին փոխարքան բնորոշում է՝ «սոցիալ-դեմոկրատական, բայց ազգայնականության անորսալի երանգով, որը թույլ չի տալիս միավորվել այլ ազգությունների սոցիալ-դեմոկրատների հետ»: Քանի որ մինչ այժմ հնչակի ազդեցությունը, այնուամենայնիվ, ուժեղ չի եղել հայերի շրջանում, գրում էր Դաշկովը,

[1] **"Всеподданнейшая записка..."**, стр.12-13.

ուստի համոզված եմ, որ «Կովկասի վարչակազմի առաջիկա պայքարը նրա դեմ առավել հեշտ կլինի, քան նախկինում ամենազոր դաշնակցության դեմ»[1]:

Իր այդ հաստատ համոզումը փոխարքան փորձում էր ամրապնդել մի շարք փաստաթղթերով և ամենից առաջ նրանով, որ, իբր, հայ ազգը ամբողջությամբ առած, ունակ չէ ընկալելու սոցիալիստական գաղափարները:

« Բանն այն է, - գրում էր նա , - որ սոցիալիստական գաղափարներով հայերի մի մասի տարվածությունը սերտ կապի մեջ է համառուսական հեղափոխական շարժման հետ, իսկ դա նշանակալի չափով բացատրվում է այդ հայերի՝ ոչ միայն ռուսներից հետ չմնալու, այլև հնարավորինս նրանց գերազանցելու ձգտումով: Կենտրոնական Ռուսաստանում հանդարտության հաստատմամբ վերջ կգտնի այդ փոքրաթիվ հայերի հեղափոխականությունը, որը հիմա չի սպառնում ընդգրկել հայության զանգվածներին, քանի որ իր բնույթով հայն աշխատասեր է, ձգտում է կապիտալի կուտակման, գնահատում է սեփականությունը և բացարձակապես հակված չէ սոցիալիստական գաղափարների ընկալմանը[2]:

Չնայած մեծ աղետներին և անհամար այլ դժվարություններին, գրում էր փոխարքան, այնուամենայնիվ, 1906թ. ամռանը հայ-թաթարական կռիվները դադարեցին: «Պետք է հավատալ, որ երկու ժողովուրդներն էլ նշանակալի չափով հոգնել են փոխադարձ անմիտ թշնամանքից, հասկացել են այն դերի կործանարար լինելը, որ խաղացել են իրենց ղեկավարները՝ հետապնդելով անձնական շահեր»[3]:

Սակայն Վորոնցով-Դաշկովը համոզված չէր, թե հաստատված խաղաղությունը կայուն է լինելու: «Ցավոք, չի կարելի նաև վճռականապես վստահ լինել, ի դեպս բոլոր կովկասյան ազգություններին հատուկ արյան վրեժի առկայության, որ ապագայում չեն կրկնվի հայ-թաթարական թշնամանքի բռնկումները»: Չնայած դրան, նա ցարին հավաստիացնում էր, որ նոր «բախումների առանձին փորձերն անհապաղ կկասեցվեն իր վարչակազմի կողմից»[4]:

Անդրկովկասի հայության հետ սերտորեն առնչվող երրորդ կարևոր հարցը, որ տեղ էր գտել Վորոնցով-Դաշկովի հաշվետվության մեջ, ինչպես նշեցինք, վերաբերում էր քոչի խնդրին:

Այդ հարցը կարծես մի անլուծելի թնջուկ էր, որը միշտ լարված վիճակում էր պահում նստակյաց հողագործ հայերի և քոչվոր թուրք անասնապահների փոխհարաբերությունները:

Փոխարքան կայսրին հաղորդում էր, որ մեկ տարի առաջ Թիֆլիսում կայացած հայ-թուրքական համաժողովը հանգամանորեն քննության է ենթարկել քոչի հարցը, բայց այնպես էլ «մինչ այժմ որևէ լուծում չի գտնվել»: Նա

[1] **"Всеподданнейшая записка..."**, стр.16.
[2] Նույն տեղում, էջ 16-17:
[3] Նույն տեղում, էջ 12:
[4] Նույն տեղում, էջ 13:

հարցի դրական լուծումը տեսնում էր թուրքաբնակ տափաստանների ոռոգման և քոչվոր անասնապահներին իրենց հիմնական բնակության վայրերում ամրապնդելու մեջ:

«Ինքնին հասկանալի է, - գրում էր նա, - որ նախատեսված ծրագրի իրականացման համար մեծ աշխատանք կպահանջվի՝ անասնապահների կենցաղը կազմակերպելու, և մեծ ծախսեր՝ տափաստանների ոռոգման համար, սակայն ակնհայտ է, որ վաղ թե ուշ ստիպված կլինենք դիմել այդ միջոցին, քանի որ ներկայիս քոչվորությունը իրենից ներկայացնում է հովվական դարաշրջանի վերապրուկ՝ կուլտուրական երկրում անհանդուրժելի, իսկ ընդարձակ տափաստանները չպետք է իզուր կորչեն պետության համար: Որքան էլ բարդ թվան առաջարկվող միջոցառումները, դրանք, սակայն, հրամայական անհրաժեշտություն են երկրամասի ապագա կուլտուրական առաջընթացի համար: Դա է պատճառը, որ ես վճռեցի **Ձերդ Մեծության** բարձրագույն ուշադրությունը հրավիրել այդ կարևոր խնդրի վրա, ... նկատի առնելով դրանց բնակեցումը կուլտուրական տարրերով....»[1]:

Ավարտելով Կովկասում երկու տարվա ընթացքում տեղի ունեցած գլխավոր իրադարձությունների վերլուծությունը՝ Վորոնցով-Դաշկովը եզրահանգում էր, որ փոխարքայության վարչակարգը ծայրահեղորեն անկատար է, բայց արդեն ձեռնարկված են արմատական միջոցներ՝ իր նախաձեռնած խաղաղ վերափոխումները հաջողությամբ իրականացնելու համար: Այդ գործում, գրում էր նա, խիստ կարևորություն է ստանում երկրամասի ազգերի նկատմամբ ճիշտ, անկողմնակալ քաղաքականության մշակումն ու իրականացումը: Իսկ դա ամենից առաջ ձեռնտու էր հայ բնակչությանը, որը բոլորից շատ էր տուժել գոլիցինյան վարչակազմի հայատյաց խելացնոր գործելակերպից:

Վորոնցով-Դաշկովը չէր քննադատում ամբողջ քառորդ դար շարունակվող պետերբուրգյան բյուրոկրատիայի հայահալած քաղաքականությունը, ինչպես դա զարմանալի համարձակությամբ կատարում էր իր ոստիկանապետը՝ գեներալ Շիրինկինը: Կովկասում ստեղծված խառնակ վիճակը փոխարքան հիմնականում բացատրում էր Գոլիցինի իշխանության «վերջին երկու տարիներին» թույլ տված «անհանդուրժելի սխալներով»: Ըստ որում, Գոլիցինի մասին կազմած կարծիքը նա բարձրաձայն արտահայտում էր ոչ միայն իր շրջապատում, այլև օտարների ներկայությամբ: Այդ տեսակետից բնութագրական է 1906-ին Կովկաս եկած և իրեն տեսակցություն խնդրած անգլիացի հրապարակախոս Լուիջի Վիլարիի հետ ունեցած զրույցի ընթացքում նրա արտահայտած «Cette de'sastreuse politique de Galitzine ...»* բառերը[2]: Սակայն, ընդհանուր առմամբ Վորոնցով-Դաշկովի կողմից իրավիճակների քննադատությունը հար

[1] **"Всеподданнейшая записка..."**, стр. 66.

* «Գոլիցինյան աղետալի քաղաքականությունը...»:

[2] Տե՛ս **Միքայել Հովհաննիսյան**, Կովկասեան Վանդեան, էջ 72:

համահունչ էր Նիկոլայ II-ին սենատոր Կուզմինսկու ներկայացրած զեկուցագրում տեղ գտած աչառու բնորոշումներին, միայն այն էական տարբերությամբ, որ հայերի մասին փոխարքան միապետին ներկայացրել էր համեմատաբար զուսպ կարծիքներ, որոնք անկողմնակալության տպավորություն էին թողնում նրանց վրա, ովքեր ծանոթանում էին զեկուցագրի բովանդակությանը:

Հայերի նկատմամբ Կովկասի փոխարքայի բարյացակամ քաղաքականությունը կոնկրետ արտահայտություն էր ունենում հայ հայտնի մտավորականների, քաղաքական, հասարակական ու կրոնական գործիչների, արդյունաբերողների և խոշոր առևտրականների (Ա. Մանթաշյան, Ա. Էնֆիաջյան, Մ. Արամյան, Գ. Ադելխանյան, Ն. Կրասիլնիկով, Ն. Բոզարջյան և ուրիշներ) հետ ունեցած շփումներում, իսկ ոմանց հետ (Բ. Վերմիշյան, Ա.Խատիսյան և ուրիշներ) անձնական սերտ հարաբերություններ ուներ: Փոխարքան խորին հարգանք էր տածում ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հանդեպ:

1907թ. սկզբներին կոմս Վորոնցով-Դաշկովը և կոմսուհին այցելեցին Էջմիածին և հաղորդակցվեցին դարավոր հնություններին: Այցելության ժամանակ վեհափառ հայրապետը տեր և տիկին Վորոնցով-Դաշկովներին նվիրեց ս.Հակոբ Մծբնայ հայրապետի մասունքներից մի կտոր՝ ամփոփված ձեռակերտ խաչի մեջ: Այնուհետև, «որպեսզի այդ մասունքները երջանկություն բերեն փոխարքայի ընտանիքին», կաթողիկոսը նրանց շնորհեց օրհնության կոնդակ:

Թիֆլիս վերադառնալուց անմիջապես հետո փոխարքան իր նստավայրից հետևյալ շնորհակալական նամակն ուղարկեց Էջմիածին, կաթողիկոսին.

«**Ձերդ Սրբութիւն**, իմ և կնոջս անունից մատուցանում եմ մեր ի սրտէ շնորհակալութիւնը մեզ և մեր ընտանիքին ուղարկուած օրհնութեան համար: **Ս. Էջմիածին այցելելը** մեզ մեծ բաւականութիւն պատճառեց և ես բախտաւոր եմ, որ շուտով կկարողանամ Նորին Կայսերական Մեծութեան զեկուցանել Ձեզ հաւատացած հօտի Ձեր Սրբութեան կողմից վկայուած հաւատարիմ հպատակութեան մասին: Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետի նշխարների մասը կպահենք և յույս ունիմ, որ այս օրհնութիւնը իմ ամբողջ ընտանիքիս բախտաւորութիւն կբերէ և մեզ կարողութիւն կտայ մեր պարտքը կատարելու Ս.Գրքի պատուէրների համաձայն: Կոնդակի համար կրկին շնորհակալութիւն յայտնելով՝ յանձնում եմ ինձ և ընտանիքիս Ձեր սուրբ աղօթքին:

Ձեր խոնարհ ծառայ

ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎ »[1]:

Հետագա տարիներին, նույնիսկ ստոլիպինյան դաժան ռեակցիայի ժամանակ, Դաշկովը և նրա վարչակազմը, թեև դանդաղ, բայց աստիճանաբար կոնկրետ գործողություններով փոխում էին հայերի նկատմամբ վերաբերմունքը դեպի լավը:

[1] **«Արարատ»**, N 2, փետրվար, 1907թ.:

Սակայն, հարկ է ընդգծել, որ հայության հանդեպ նոր քաղաքականության որդեգրումը էժան չնստեց Կովկասի փոխարքայի վրա: Դեռ 1906թ. սկզբներին Պետերբուրգի սալոններում նրա անվան շուրջ տարածվել էին բամբասանքներ, որոնք, ի վերջո, հանգրվանեցին պետական ամենաբարձր մարմիններում և մամուլի ծայրահեղ հետադեմ օրգանների էջերում: Գլխավոր մեղադրանքն էր՝ Վորոնցով-Դաշկովը ավերում է Կովկասում իշխան Գոլիցինի ստեղծած «օրինակելի կարգ ու կանոնը» և դրանով իսկ նպաստում հեղափոխական ուժերի, ամեն տեսակ անիշխանականների անարգել քայքայիչ գործունեությանը: Փոխարքայի դեմ սկսված պայքարին գաղափարապես տոն էին տալիս ինքը՝ Գոլիցինը, Կոկովցևը և սինոդի նախկին օբեր-պրոկուրոր Պոբեդոնոսցևը՝ երեքն էլ Ռոմանովների գահի կատաղի պաշտպաններ և մոլի հայատյացներ:

Սակայն, Պետերբուրգի իշխանական բարձրագույն շրջաններում փոխարքայի՝ գնալով աճող հակառակորդների թիվը 1907-ի մարտ-ապրիլին պակասեց երկուսով:

1907թ. մարտի 10(23) -ին Պետերբուրգում վախճանվեց ռուս բյուրոկրատիայի չար ոգին՝ Պոբեդոնոսցևը:

Պոբեդոնոսցևի մահով ճորտատիրական-միապետական ռեժիմը կորցնում էր իր ամենամեծ ու հաստատուն սյունը, իր ամենախելոք ղեկավարին: Իր համոզմունքներով այդ մարդը շատ ավելի միապետական էր, քան էին իրենք՝ միապետները: Կես դարուց ի վեր նա թունավորում էր ողջ ռուսական կյանքը: Էությամբ լինելով ճորտատիրական-բռնապետական ռեժիմի մարմնացում, Պոբեդոնոսցևը ժողովրդական ազատագրական շարժումների ամենադաժան հակառակորդներից էր, եթե ոչ ամենադաժանը: Վերջին երկու ցարերի օրոք նա եղել էր կայսրության մեջ տեղի ունեցած բոլոր հետադեմ շարժումների, պոգրոմների ու հալածանքների թելադրիչը և խնկարկուն: Շատ ու շատ անգամ նա գահը փրկել էր անխուսափելի թվացող կործանումից, քանզի ամենահմուտ նավավարի նման միշտ հնար էր գտնում ռեժիմի ճեղքված նավը ազատել ժողովրդական ալեկոծ փոթորիկներից:

Պոբեդոնոսցևի մահվանից շատ չանցած, 1907թ. ապրիլին, վախճանվեց ռուս բյուրոկրատական վերնախավի առավել ռեակցիոն ներկայացուցիչներից իշխան Գոլիցինը, այն մարդը, որ ամբողջ մի տասնամյակ պատուհաս էր դարձել հայ ժողովրդի գլխին՝ ողբով ու կսկիծով լցնելով Կովկասի հայաբնակ գավառները, թույնով ապականել երկրամասի ներքին կյանքը: Նրա սադայելական զեկույցները, որոնցում հայությունը միշտ ներկայացվել էր որպես գահի վտանգավոր թշնամի, պատճառ էին դարձել հայ եկեղեցական կալվածքների ավազակային հափշտակության, իսկ ցանած չար սերմերից փարթամորեն աճել էին դառը պտուղներ, որոնցից առավել սոսկալին Կովկասում թուրք-հայկական արյունոտ դրաման էր՝ իր ավերիչ հետևանքներով:

Հազարավոր դժբախտացած ընտանիքների նզովքն ու անեծքն էին հետևում

Գոլիցինին՝ քանի նա կենդանի էր: Նրա մահվան ավետիքը Կովկասում առաջ չբերեց փոքր-ինչ ափսոսանք:

Սակայն Պոբեդոնոսցևի և Գոլիցինի մահվանից հետո չթուլացան Վորոնցով-Դաշկովի հակառակորդների սադրանքները: Աշխատության հետագա էջերում կտեսնենք, թե գոլիցինյան քաղաքականությունից հրաժարվելու փորձերի համար Վորոնցով-Դաշկովն ինչպիսի դաժան հարձակումների էր ենթարկվում երրորդ պետական դումայի շովինիստական խմբակցությունների, կառավարության ծայրահեղ հետադեմ անդամների և սևհարյուրակային ռուս «պատրիոտների» կողմից:

Սակայն սկսած հալածանքներով փոխարքայի հակառակորդներն անզոր եղան նրան պաշտոնազուրկ անել: Վորոնցով-Դաշկովի չափավոր ու հավասարակշռված գործողությունները մեծապես նպաստում էին Կովկասի քաղաքական կայունությանը, իսկ բախտորոշ ժամանակներում դա օդի ու ջրի պես անհրաժեշտ էր ցարական գահին: Բացի այդ, արքունիքում և կառավարության մեջ գնալով ավելանում էր նրանց թիվը, ովքեր արդեն համոզվել էին, որ բազմազգ Կովկասում ազգամիջյան թշնամանքի ու կռիվների բորբոքումը զանգվածներին հեղափոխական պայքարից հեռու պահելու արդյունավետ միջոց չէ, և որ թուրք-հայկական զինված առճակատման միջոցով հայ տարրի թուլացումը ոչ միայն չի բխում ռուսական պետության շահերից, այլև հակառակ է նրա հեռահար նպատակներին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱԼԵԲԱԽՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԽԱՌՆԱՇՓՈԹՈՒԹՑՈՒՆՆԵՐ ՀԱՑ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՆԵՐՍ

Մարդիկ հեղափոխական են դառնում ամենատարբեր դրդումներով ու պատճառներով, բայց իրենց նշանակությամբ այդ պատճառներից զատվում են երկուսը՝ հարազատ ժողովրդին օտարի լծից փրկելու անհագ ձգտումը և ազգի ներսում շահագործող դասակարգերի հարստահարումից հասարակության ունեզուրկ խավերին ազատելու փափագը՝ գոյություն ունեցող անարդարացի կարգերը վերացնելու միջոցով:

Հայ իրականության մեջ այդ երկու խնդիրների կատարմանը լծված էին զանազան գաղափարներ դավանող հեղափոխականներ՝ ընդգրկված քաղաքական տարբեր կուսակցությունների և հոսանքների մեջ:

1905-1907 թվականներին հայ ազգային բոլոր կուսակցությունները ներքին խոր տագնապ ապրեցին: Դրա հետևանքով նրանց շարքերում առաջ եկան խոր տարաձայնություններ, որոնք հանգեցրին անհաշտ առճակատումների, իսկ առանձին դեպքերում սպառնալիքի տակ դրեցին կուսակցությունների բուն իսկ գոյությունը:

Առաջացած տարաձայնությունների ու բախումների պատճառները հիմնականում երկուսն էին՝ 1. Ռուսական մեծ հեղափոխության նկատմամբ հայ հասարակական շերտերի տարբեր վերաբերմունքը, որն առաջ էր բերել մտքերի ու գաղափարների բուռն ալեկոծումներ, 2. Կուսակցությունների շարքերում ավանդական գաղափարներ կրողների և նոր հայացքներ դավանողների միջև սկիզբ առած սուր բախումները:

ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՑՐՔՆԹԱՑԸ

Հայ ազատագրական շարժման արյունոտ երկունքից ծնունդ առած հեղափոխական կազմակերպություններից ժամանակագրական կարգով առաջինը եղավ արմենական կուսակցությունը, որը միակ հայ մարտական ու ազգային կուսակցությունն էր, որ հղացված ու կազմված էր Հայաստանի հարազատ հողում: Արմենական շարժումը թուրքական բռնակալության դեմ սկիզբ առած հայ ժողովրդի պայքարում Վան-Վասպուրականի հայության անկոտրում կամքի փայլուն դրսևորումն էր:

Ռուսական մեծ հեղափոխությունն իր պտույտի մեջ առավ ոչ միայն թուրքահայոց ազատագրության նպատակով հրապարակ իջած ծննդով արևելահայ ազգային-հեղափոխական քաղաքական կազմակերպություններին, այլև բուն Արևմտահայաստանում ստեղծված արմենական կուսակցությանը:

Ինչ բերեց արմենականների շարքերին ռուսական հեղափոխությունը:

Մկրտիչ Փորթուգալյանը և նրա մի խումբ համախոհներն էին կանգնած 1875թ. Վանում արմենական կուսակցության ստեղծման ակունքներում:

Ավելի քան մեկ տասնամյակ կուսակցությունը վերընթացի մեջ էր: Կազմակերպության շարքերում էր կամ արմենական գաղափարների ազդեցության տակ էր գտնվում քաղաքի մտավորական երիտասարդությունը:

1895-1896թթ. հայկական կոտորածների ժամանակ տեղի ունեցավ նաև Վանի մեծ դեպքը, երբ 1896-ի հունիսին թուրքական կանոնավոր բանակի և քրդական անկանոն հեծելազորի դավադիր հարձակմանը և խժդժություններին Բարթուղիմեոս Առաքյալի վանքի մոտերքում զոհ գնաց Վանի ծաղիկ երիտասարդությունը:

1896 թվականը շրջադարձային եղավ արմենականության համար: Ղեկավարների մեծ մասից գրկված կազմակերպությունը այդ ժամանակվանից սկսած՝ աստիճանաբար կորցրեց իր ուժն ու դիրքերը: Գնալով նոսրացող շարքեր և հեռանկարի անորոշություն - այսպիսին էր կուսակցության վիճակը 20-րդ դարի նախաշեմին:

Այդ բախտորոշ ժամանակում Մկրտիչ Ավետիսյանին փոխարինողը եղավ ***Եղիշե Քոնտակճյանը****, որը, դառնալով արմենականների ղեկավար, մեծ ջանքեր էր գործադրում վերակազմակերպելու կուսակցությունը: Նրա հետ կազմակերպական եռանդուն աշխատանքի էին լծվել 1897-ին բանտերից ազատված Արմենակ Եկարյանը, Գրիգոր Պեզիկյանը (Շիկահեր), Ղևոնդ Խանջյանը, Եղիշե Կոնդակչյանը, Միքայել Նաթանյանը և ուրիշներ:*

Վանի դեպքերից հետո արմենականների մոտ էլ ավելի խորացավ այն գաղափարը, որ հայությունն իր հույսը միայն պիտի կապի իր հավաքական ուժի հետ: Ղեկավարներից ոմանք թերևս ինչ-որ չափով բացառություն էին համարում Ռուսաստանը՝ հույսեր կապելով նրա հետ: Ժողովներից մեկում հանդես գալով զեկուցումով՝ Ղևոնդ Խանջյանն՝ ասում էր.

«Հայկական ջարդերը հաստատեցին, թե եվրոպական պետություններու հակամարտությունները չեն թույլատրեր, որ մենք անոնց աջակցութեան վրայ

՝ Վան քաղաքի մեծ ու նահապետական տներից մեկը թուրք պաշտոնեության հետ լայն ծանոթություններ ունեցող Աճեմ-Խաչոյան աղա Սարգիսն էր: Դպրոցների տնօրեն և ուսուցիչ Ղևոնդ Խանջյանը 1897թ. ամուսնացել էր Սարգիս աղայի աղջիկներից մեկի հետ, և այս ամուսնությունից ծնվել էր Աղասի Խանջյանը՝ Խորհրդային Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի ապագա առաջին քարտուղարը:

յոյս դնելով՝ արկածախնդրություններ ընենք: Ինչ ալ ըլլայ, այսօր Ռուսիոյ քաղաքականությունը Կովկասի Հայութեան հանդեպ, եթե մենք յոյս մը պետք է ունենանք օտար պետութեան մը վրայ, այդ յոյսը մեզի դրացի Ռուսիոյ վրայ դնելու ենք»[1]:

1896-ին ստացած հարվածից հետո արմենական կազմակերպությունը չորս-հինգ տարի անց միայն, այսինքն՝ 20-րդ դարասկզբին, կարողացավ ինչոր չափով վերակառուցել իր կազմակերպական մեքենան, որը, սակայն, ի վիճակի չէր այլևս գործել նախկին արդյունավետությամբ:

Մտավոր ու երիտասարդ ուժերի կորստից հետո հնարավոր չեղավ պատրաստել նրանց փոխարինող սերունդ: Թեև դեպքից դեպք տեղի էին ունենում խմբերի և խմբապետերի ժողովներ, բայց դրանք այլևս չունեին նախկին նշանակությունը: Ինչ վերաբերում է զինական մարզանքներին, ապա դրանք դադարեցվել էին: Ժողովրդին զինելու աշխատանքները այլևս կանգ էին առել, քանի որ ընկած էր մարդկանց մարտական տրամադրությունը և, չկային նյութական միջոցներ: Կացությունը ճնշիչ էր հատկապես գյուղերում. հազարավոր գյուղացիներ, որոնք ջարդերից խուսափելով անցել էին Պարսկաստան, Կովկաս և այլուր, այժմ վերադարձել էին, բայց չէին կարողանում վերականգնել իրենց կողոպտված ու ավերված օջախները:

Զենքի ու զինավարժության խնդիրը մի կողմ թողած՝ կազմակերպությունը այժմ գործում էր միայն երկու ոլորտներում՝ տնտեսական և կրթական: Հատկապես դպրոցական գործում որոշ հաջողություններ եղան. վերականգնվում էր ավերված դպրոցների ու եկեղեցիների մի մասը, վերակազմավորվում էին ուսուցչական խմբերը:

Դաշնակցության Վանի կազմակերպությունը, որը ստեղծել էր Պետոն, նրա նահատակվելուց հետո շուրջ վեց տարի չէր գործում: 1902թ. Հ.Յ.Դ. ղեկավարությունը Վան ուղարկեց իր հավատավոր գաղափարական գործիչներից մեկին՝ Վարդգեսին (կարինցի Հովհաննես Սերենկյուլյան), որին վիճակվեց գլուխ բերել կազմակերպության վերականգնումը: Նրա գործունեության հաջողության պատճառներից մեկը արմենական կազմակերպության հետ սերտ հարաբերություններ հաստատելն էր: Վարդգեսը գտնում էր, որ գալիք մարտերի համար ժողովրդին պետք է նախապատրաստել լրջորեն, համբերատարությամբ ու զգուշությամբ, չպետք է ուժերը վատնել ցուցական գործողությունների վրա, որ հարկ է վերաքննել անցյալը, նախկինում գործած սխալները վեր հանել և ձախողանքներից դասեր առնել: Հայկական հասարակության երևույթներին նման մոտեցումը համընկնում էր արմենականների հեղափոխական գործունեության եղանակին, և դա էր պատճառը, որ Վարդգեսի գաղափարները և գործելակերպը ընդունելի եղան արմենականների համար: Աստիճանաբար

[1] **Արտակ Դարբինեան**, Հայ ազատագրական շարժման օրերեն (Ցուցեր 1890-են 1940), Փարիզ. 1947. էջ 110:

վերջիններիս մոտ տրամադրություն առաջացավ սերտ համագործակցություն հաստատել տեղի դաշնակցական կազմակերպության հետ: Ավելին, նրանք չէին բացառում երկու կազմակերպությունների միաձուլման հնարավորությունը[1], որը, նրանց կարծիքով, ուղի կհարթեր ընդհանրապես դաշնակցության ու արմենական կազմակերպության միավորման և ազգային հեղափոխական մեկ կուսակցություն ստեղծելու համար:

Բայց դա երկար չտևեց. 1904թ. սկզբին, իր թաքստոց-բնակարանում գտնվելու պահին, Վարդգեսը շրջապատվեց թուրք ոստիկանների կողմից և հրաձգության ժամանակ վիրավորվեց, ձերբակալվեց ու նետվեց բանտ:

Վարդգեսի ձերբակալումը խոչընդոտեց երկու ազգային կուսակցությունների հնարավոր միավորման տենդենցի զարգացումը: Ավելին, դրանից հետո տարբեր պատճառներով Վան-Վասպուրականում գնալով լարվեցին արմենականների ու դաշնակցականների փոխհարաբերությունները: Բանը հասավ արյունահեղ դեպքերի, որի պատճառներից մեկն այն էր, որ արմենական կազմակերպությունը իր դիրքերը շատ արագ զիջում էր դաշնակցությանը, որը Վանում և ողջ Վասպուրականում դառնում էր հիմնական քաղաքական ուժը: Ընդհանրացնելով դաշնակցական կազմակերպության կողմից Վան-Վասպուրականում 1904-1906թթ. տարած աշխատանքները՝ Վահան Փափազյանը գրել է. «1906-ին արդեն, մեր կազմակերպութիւնը դրուած էր հաստատուն յենարաններու վրայ: Մեզ հետ ունէինք գաւառի անարատ շինական տարրը, տեղական հին գործիչներու եւ մարտիկներու փորձառու եւ մոլեռանդ փաղանգը, նուիրուած երիտասարդութիւն եւ մտաւորական եւ հանրային գործունէութեան հասուն եւ պարկեշտ զանգուած մը»[2]:

Նույնը հաստատում էր Արմենակ Եկարյանը. «Դաշնակցությունը իր մարդերով և ազդեցությամբ՝ տիրապետած էր նաև ամբողջ Վասպուրականին: Մյուս կուսակցությունները շատ տկար էին: Դա դաշնակցության զորավոր շրջանն էր. ան իրմեն դուրս ուրիշ իշխանություն և հեղինակություն չէր ճանաչում: Ուստի և շատ անգամ կ՚ունենայինք ընդհարումներ դաշնակցական տղերոց հետ»[3]:

Քանի որ հնչակյաններն այնպես էլ չկարողացան Վանում արմատներ ձգել, ուստի արմենականների գլխավոր ընդդիմախոսները մնում էին դաշնակցականները: Երկուսի միջև չէր հաջողվում հաշտության եզրեր գտնել՝ միմյանցից տարբեր գործելակերպ որդեգրած լինելու պատճառով: Արմենական կազմակերպության անդամների ճնշող մասը մտավորականներ էին, իսկ Հ.Յ.Դ. տեղի կազմակերպության մեջ մտավորականներին մատների վրա կարելի էր հաշվել: Դաշնակցության շարքերում հիմնականում խոնարհ աշխա-

[1] Տե՛ս **Արտակ Դարբինեան**, Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 132:
[2] **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 246:
[3] «Ցուշեր **Արմենակ Եկարեանի**», Գահիրե, 1947, էջ 135-136:

տավորներ էին:

1905թ. առաջին կեսին Վանում տեղի ունեցան արմենականների և դաշնակցականների մի շարք միջկուսակցական ժողովներ, որոնց օրակարգում դրված հարցերը վերաբերում էին երկու կուսակցությունների ծրագրերին և պրակտիկ գործելակերպին:

Ժողովներն ընթանում էին բուռն վիճաբանությունների մթնոլորտում, ուր երկու կողմերը պարզում էին հարազատ ժողովրդի համար ստեղծված դժխեմ կացությունից դուրս գալու իրենց պատկերացումները: Արմենականները քննադատում էին դաշնակցությանը, վճռականորեն մերժում նրա պայքարի մեթոդները, նրան մեղադրում արկածախնդրության և այն բանի մեջ, որ վճիռներ կայացնելիս հաշվի չի նստում հասարակական երևույթների հետ: Լինելով հեղափոխականներ՝ նրանք, սակայն, գտնում էին, որ ստեղծված իրավիճակում շեշտը չպետք է դնել բռնի գործողությունների վրա, այլ հարկ է գործել խաղաղ միջոցներով՝ դպրոցներով, լուսավորությամբ, մշակույթով:

Դաշնակցականները, առարկելով, ասում էին, որ իրենք սկզբունքորեն դեմ չեն խաղաղ աշխատանքներին, բայց, ցավոք, դրանց համար չկան բարենպաստ պայմաններ, չկա կյանքի, գույքի, պատվի իրական ապահովություն, որ ամենուրեք տեղի են ունենում դաժան բռնություններ, ալան-թալան: Նախ պետք է հասնել բռնությունների և սպանությունների՝ եթե ոչ վերացմանը, ապա գոնե՝ մեղմացմանը, որից հետո միայն ձեռնամուխ լինել լուսավորական-մշակութային լայն աշխատանքների: Բռնություններին պետք է հակադրել բռնությունը, կազմակերպել և զինել զանգվածներին: Հենց դա է ելքը, - ասում էին նրանք:

Բազմաթիվ հանդիպումներից սպասված դրական արդյունքը չնչին էր. կողմերից յուրաքանչյուրը շարունակում էր ամուր կանգնած մնալ իր տեսակետի վրա: Կոմսը, Արամը, Սարգիսը և Վանի դաշնակցական մյուս ղեկավարները արմենականների հակադաշնակցական պայքարը համարում էին բնական՝ որպես տեղի հայ հասարակության մտածելակերպից բխող իրողություն: Ընդունելով նրանց կողմից դաշնակցության հախուռն քննադատությունը՝ Արամը միաժամանակ գտնում էր, որ արմենականների գոյությունը ոչ միայն մնասակար չէ դաշնակցության համար, այլև օգտավետ է այն իմաստով, որ նրանց քննադատության մեջ կան ճշմարիտ հարցադրումներ, առողջ մտքեր, որոնք չպետք է մերժել ու մի կողմ նետել, այլ պետք է հաշվի առնել և հնարավորին չափ շտկել սեփական թերությունները:

Արամի կարծիքով, պետք չէր արհեստականորեն սրել հարաբերությունները արմենականների հետ հատկապես այն պատճառով, որ նրանք, դաշնակցությանը մեղադրելով արկածախնդրության մեջ, մերժելով նրա կողմից կազմակերպվող ցույցերն ու զինված խմբերի կազմակերպումը, քննադատելով դրսից պրոպագանդիստներ և գործիչներ ներմուծելը, միաժամանակ իրենք ձեռք էին զարկում այդ բոլորին՝ և՛ զինված խմբեր էին պահում, և՛ պրոպագանդիստներ ու գործիչներ էին բերում դրսից, և՛ ցույցեր էին անում: Ավելին, երբ վիճակը բարդանում էր, արմենականները դաշնակցության տրամադրության տակ էին դնում իրենց միջոցները, հնարավորությունները, նույնիսկ՝ զինված խմբերը:

Ինչպես տեսնում ենք, երկուսի գոյությունը փոխադարձաբար ձեռնտու էր և՛ մեկին, և՛ մյուսին: Արշալույս Աստվածատրյանը գրում է, որ երբ դաշնակցությունն իր գործունեությունը սահմանափակում էր կամ ժամանակավորապես դադարեցնում, արմենականները հոգեվարք էին ապրում, իսկ երբ դաշնակցությունը վերսկսում էր գործել, նրանք նորից հարություն էին առնում[1]:

Իր հերթին Արամը, անդրադառնալով այդ երևույթին, գրում էր, որ այդպիսով «նրանց կեանք տուողը մեր գոյությունն ու գործունեությունն էր, իսկ մեր թուլությունը՝ նրանց մահը: Ուրեմն, արմենականների շահը պահանջում էր, որ Վանում միշտ ուժեղ և կազմակերպուած դաշնակցություն լիներ: Իսկ մեր շահը պահանջում էր, որ չափավոր և կասկածելի տարրերը մեզ մոտ չգային, և կյանքի ու հասարակական գործունեության մեջ որոշ չափով հավասարակշռություն մտներ»[2]:

Հեղափոխական պայքարի գործին խոչընդոտում էին ոչ միայն հայ քաղաքական կազմակերպությունների միջև եղած հակասությունները, այլև այն տարաձայնությունները, որոնք գոյություն ունեին այդ կուսակցությունների ներսում:

Այսպես, Վանի արմենականների շարքերում 1905-1906 թթ. տեղի ունեցան մի շարք ընդվզումներ: Դաշնակցական գաղափարների ազդեցության տակ արմենականներից շատերը սկսել էին խիստ քննադատաբար տրամադրվել իրենց կուսակցության ղեկավարության գործելակերպի նկատմամբ և հակվել դեպի դաշնակցությունը:

Դեպի դաշնակցություն էին գալիս հատկապես արմենական շարքայինները:

Վահան Փափազյանը նկարագրել է Վանում 15-20 հոգուց բաղկացած արմենական մի խմբի անցումը դաշնակցության կողմը:

Խմբի անդամների խնդրանքով Վահանը, որպես դաշնակցության Վան-Վասպուրականի լիազոր-ղեկավար, հանդիպում էր ունեցել բոլոր նրանց հետ, ովքեր եղել էին համեստ արհեստավորներ: Նրա հիշողության մեջ մնացել են խմբի անդամներից մի քանիսի անունները՝ Նալբանդ Նշան, ռես Մելիքի Նշան, դասաբ Արշակ, Մինաս Նազլուի Խաչիկ, Արարքցյան Միհրան, ջրաչ Պատուր, Քաջ Հովհաննես, Լորթո, Կանգուարցի Գեաբո, Ղազանչի Մելո, Նալբանդ Վահան:

«Մեր մեջ «ինտելիգենտ» վարժապետ չկա. պիթունս՝ ասնաֆ, կոչտ ձեռքե-

[1] Տե՛ս «Արամը», էջ 33:
[2] «Արամը», էջ 33:
՝ Բոլորս:

րով մարդիկ ենք», - այսպես է իր խոսքը սկսել խմբի ղեկավար, արմենական հին մարտիկ Նալբանդ Նշանը, որը Պնի Վահանի, Լորթոյի և Գեաբոյի հետ մասնակից էր եղել 95-96-ի դեպքերին և կարողացել էր ազատվել Բարթուղիմեոս վանքի մոտ տեղի ունեցած սպանդից: «Կը խոսեր դանդաղ՝ խոսքերը կշռելով. երբեմն միայն հայեացքը իր ընկերներու վրայեն կ'անցներ», - վերհիշել է Վահանը և ընթերցողին փոխանցել Նալբանդ Նշանի ասածը մոտավոր ճշտությամբ.

«Մենք խազար զօռով այբը-բէնից կանանք ջոկէ, համա մեր ջահելութիւնը ժողովրդի սիրուն տուինք... Կռուանք, արիւն թափինք, նպատակի մը խամար: Գիտես որ մենք պիթունս խին արմենական ենք: Մեզի համար Խայաստանի ազատութիւնը ու մեր ժողովրդի կեանքն ի թանգ. էն վախտը արմենականութիւնը գործ կը կատարէր, մեզի կռուիլ սորվրցուց, ազգի խամար զոհուել սորվրցուց: Համա հիմաք էն չի. խին արմենականութիւնը չմնաց. խին մարդիկ հրմէն վարժապետ ու վաճառական դարձան. ի՞նչ ասեմ ... «մասնաւոր մարդու» պէս կ'պարեն: Գործ չկայ ինոց մէջ: Մենք պիթունս գործ, զէնք ու ժողովուրդ սիրող մարդ ենք, աշխատիլ կ'ուզենք ազգի խամար...: Հիմի, լսեր ենք ու կը տեսնենք, որ դաշնակցութիւն կայ, գործ կ'անի, զէնք ունի, մարդ ունի. կ'ուզենք մենք էլ աշխատինք: Համա մենք քեռ-քեռրնա պեանի մէջ մտնող մարդ չենք, կը խասկնա՞ս. կ'ուզենք մեզի խասկցնես ձեր ծրագիր, ձեր ճամբախ, ձեր նպատակ, ձեր կանոնագիր... Թէ խելքերնիս կտրա՛ւ, աղէ՛կ, կուկեանք, կը գրուինք դաշնակցական, թէ չէ՛ այու աջ, մենք ձեախ...»[1]:

Հետևում է Փափազյանի պատասխանը. «Ի՞նչ կ'ուզեք հասկանալ, - հանդարտ ըսի ես: - Վերջին տարիները մեր դէմ եղած հալածանքը գիտէք. դաւաճանները կերան Վազգէնի եւ Վարդգէսի գլուխները: Կարճ այս միջոցին մէջ ինչ որ կրցանք ըրինք՝ ժողովրդի ինկած ոգին բարձրացնելու, կորով եւ հաւատ ներշնչելու համար: Մեզի համար թանգ են երիտասարդութիւնը եւ յեղափոխութեան մէջ թրծուած խոնարհ աշխատաւորութիւնը: Կրնաք հաւատալ, որ մենք վճռականօրէն ձեռնարկած ենք զինուորական եւ յեղափոխական կազմակերպութեան: Գործին փորձառու եւ, մանաւանդ, հաւատաւոր ու պարկեշտ տարրեր կը փնտրենք: Գործ չա՛տ կայ. մեր դուռը բաց է ձեր առջեւ, եթէ աշխատիլ ուզէք...»[2]:

Ապա խմբի անդամներին հետաքրքրում է՝ բավարար քանակի միջոցներ ու զենք ունի՞ դաշնակցությունը. եթե ժողովուրդը դարձյալ ապստամբի, նա աջակցություն կստանա՞ դրսի որևէ երկրից և այլն:

Խոսք է վերցնում նաև Պնի Վահանը: Տեղեկացնելով, որ «Մենք 15-20 հոգի ենք, բայց մեր ետևեն քանի մը տասնեակ լավ տղաներ ունինք», այնուհետև ուզում է իմանալ, որ «եթե բոլորս ձեզի գանք, ի՞նչ գործ կրնանք ունե-

[1] **Վահան Փափազեան**, *Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 246:*
[2] *Նույն տեղում, էջ 247:*

նալ ...»: Լինում է Փափազյանի պատասխանը.

« - Ի հարկէ, կ'ունենաք, մի՛ վախնաք. ոչ միայն անգործ չէք մնար, այլ ամբողջովին, թերեւս, հարկադրուած լինիք նուիրուիլ գործին...: Եւ, անշուշտ, երբ ձեր աշխատանքի արդիւնքը երեւայ, կ'երեւաք նաեւ դուք ... կը պատրաստուիք որոշ գործերու ղեկավարութեան համար: Ինչ որ իմ անկեղծ եւ ջերմ ցանկութիւնն է, կ'ուզեմ ներսէն ուժեր պատրաստել:

- Աղեկ, - եզրափակեց Նշանը, - ժամանակ տուր մեր մէջ խորհուրդ անենք: Քեզի ջուղապ կուտանք Արմենակի հետ»[1]:

Հանդիպումը զուր չանցավ: «Քանի մը օրեն, - պատմում է Փափազյանը,- Արմենակը լուր բերավ, որ համաձայնութեան եկած են: Դաշնակցութիւնը կարեւոր խումբ մը վաստկեցաւ, եւ ես շատ ուրախ էի: Հետագային այդ խումբը, որ «Սարէն - Զորէն» անունը առաւ, ամենակարեւոր վտանգաւոր գործերու լծուեցաւ եւ անվերապահ նուիրուածութեամբ կատարեց իր պարտականութիւնը»[2]:

Արմենականությունից դեպի դաշնակցություն գալու հոսքը գնալով ուժեղանում էր, արմենական կազմակերպությունը հալվում էր: «Գավառները մեր ձեռքին էին, - գրել է Ռուբենը, - մեզմե զատ ուրիշ կուսակցություն չկար հոն»[3]:

Խիստ մտահոգ, որ իրենց կազմակերպության մեջ չնչին է մտավորականների թիվը, Հ.Յ.Դ. Շամի (Վանի) ղեկավարները փորձեցին այդ բացը լրացնել տեղում արմենական մտավորականների հաշվին՝ նրանցից առավել համարձակներին փորձելով բերել դաշնակցության շարքերը: Փորձը հաջողություն ունեցավ:

1904-1906թթ. Վանում դաշնակցության մեջ մտան մեծ թվով արմենական մտավորականներ՝ Արամ Սաֆրաստյանը, Արմենակ Փոխարյանը, Հարություն Հյուսյանը, Հարություն Տեր-Թումասյանը և այլոք:

Սակայն մտավորականների մի մեծ հատված դեռ գտնվում էր դաշնակցության շարքերից դուրս: Դրանց մեջ զգալի թիվ էին կազմում էջմիածնի ճեմարանի շրջանավարտ կամ դեռ սովորող երիտասարդները, որոնց բացարձակ մեծամասնությունը թեև գտնվում էր դաշնակցության գաղափարական ազդեցության տակ, բայց շարունակում էր մնալ սպասողական վիճակում: Շամի և Լեռնապարի պատասխանատու ընկերները մեծ շահագրգռություն էին հանդես բերում ճեմարանականներին Հ.Յ.Դ. շարքերը բերելու համար: Ավելին, Լեռնապարի Իշխանը՝ վերջնագրի ձևով Շամի կ.կոմիտեի առաջ դրել էր բոլոր ճեմարանականներին կուսակցության մեջ ընդունելու պահանջը՝ նույնիսկ առաջարկելով նրանցից ոմանց ընտրել կ.կոմիտեի կազմում:

Շատ չանցած՝ արմենական ճեմարանավարտների բացարձակ մեծամասնությունն արդեն գտնվում էր դաշնակցության շարքերում: Նրանց թվում էին

[1] **Վահան Փափազեան**, *Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 248:*
[2] *Նույն տեղում:*
[3] **Ռուբեն**, *Հայ յեղափոխականի մը յուշերը, հատ. Բ, էջ 168:*

Համազասպ Բաղեշցյանը և Ղևոնդ Մելոյանը, որոնք դարձան Հ.Յ.Դ. Շամի կ.կոմիտեի անդամներ, Հայկակ Կոսոյանը, Արամ Շալջյանը, Արսեն Հացագործյանը, Միհրան Թերլեմեզյանը, Գևորգ Ճիտեճյանը, Կարապետ Բարսեղյանը, Մկրտիչ Ճիտեճյանը, Վահրամ Տեր-Պողոսյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը, փաստաբան Նշան Գալաճյանը, Արամ Կազոյանը, Տիգրան Թերլեմեզյանը, Իգնատիոս Հյուսյանը, Վարդան Պալդոշյանը** և ուրիշներ[1]: Համարյա բոլոր թվարկվածները վաճառականներ էին, որոնք դարձան վստահելի ու հավատարիմ, գործունյա և անձնուրաց ուժեր Հ.Յ.Դ. կազմակերպության համար:

Դաշնակցության հեղափոխական պրոպագանդայի ազդեցության տակ էին ընկնում նաև արմենականներին ենթակա դպրոցները՝ ուսուցիչներն ու աշակերտները:

Տարիներ անց վերհիշելով իր աշակերտական կյանքից մի դրվագ՝ վանեցի Հմայակ Մանուկյանը գրել է.

«Հայկազեան կենդրոնական վարժարանի բարձրագոյն դասարանի աշակերտ էի. դասընկերներուս հետ բռնկած էինք ըմբոստութեան սրբազան կրակով տիրող բոլոր կարգերուն դեմ՝ պետական-բռնապետական, ընկերային-տնտեսական, ընտանեկան-դպրոցական - բոլորը անխտիր մեր ցասումին առարկայ էին: Ու յեղափոխական գրականութեան և պրոպագանդի ազդեցութեան տակ առաջին ըմբոստութեան դրոշը պարզեցինք դպրոցական կարգուսարքին դեմ, յայտարարեցինք դասադուլ և դպրոցական կեանքը կանգնեցուցինք մեկ շարժումով: Զուր անցան բոլոր ջանքերը մեզ հնազանդութեան բերելու և միայն յեղափոխական Արամի միջամտությունը կրցավ վերջ դնել դասադուլին:

Արամ լուր տուավ մեզ, թե ցանկություն ունի տեսնուելու ըմբոստներուս հետ: Գիշեր մը հավաքուած մեր դասընկերներեն Բրուտեան Աբրահամենց[2] տունը՝ սրտատրոփ Արամին կը սպասեինք, երբ ներս մտավ ան երկու թիկնեղ զինուորներու հետ: Հրճուանքի անհուն սարսուր մը զգացի, որովհետև առաջին անգամ էր, որ կը տեսնեի հայ յեղափոխականը՝ սպառազինուած հայդուկներու հետ: Արամը ոգեշունչ և գեղեցիկ ճառով մը փառաբանեց մեր ըմբոստությունը, գնահատեց ընդվզումի այն կրակը սրբազան, որմե ծնած են բոլոր յեղափոխականները, և որմե կը ծագին բոլոր արշալույսները: Ղարաբաղի անպաճույճ բարբառով այն օրը Արամը մկրտեց մեր մեջ հայ յեղափոխությունը. անկե վերջ անիկա, Սարգսի հետ, եղավ վարպետ և ուսուցիչ Վասպուրականի նոր սերունդին»[1]:

Արմենական կազմակերպությունից հոսքը դեպի դաշնակցության շարքերը, որոշ չափով նաև դեպի հնչակյան կուսակցություն, ավելի արագ էր կատարվում Վան-Վասպուրականից դուրս՝ Տրապիզոնում, Կ. Պոլսում, Բուլղարիայում, Ամերիկայում, Կովկասում և հատկապես Պարսկաստանում:

Հ.Յ.Դ. Վրեժստանի (Ատրպատականի) կ. կոմիտեն 1904-1906 թվականների իր գործունեության մասին կուսակցության բարձրագույն մարմնին ուղարկած տեղեկագրում նաև անդրադարձել էր արմենականների Պարսկաստանի մասնաճյուղի վիճակին: Փաստաթղթում նշված էր, որ այդ մասնաճյուղը փաստորեն վերացել է: «Արմենականները այժմ գրեթե ոչ մի տեղ չկան. Մինարեթում եղածները լուծվեցին և մտան մեր շարքերը: Եղած անհատներն էլ առանձին կազմակերպություն չեն ներկայացնում: Շատ պարզ է՝ նրանց հետ պաշտոնական ոչ մի հարաբերություն չէինք կարող ունենալ»[2]:

Ռուսական մեծ հեղափոխության հետ միաժամանակ տեղի ունեցավ արմենական կազմակերպության գործունեության նոր աշխուժացում: Դրա պատճառը ոչ միայն հեղափոխությունն էր, այլև այն, որ «արմենականությունը, չնայած իր տուած անդարմանելի կորուստներուն, պահած էր իր փառավոր անցեալին հմայքը»[3]:

Հեղափոխության գաղափարները թափանցեցին Ռուսահայաստանում գործող արմենական փոքրաթիվ խմբերից ներս, որոնց թիվը 1905թ. չէր անցնում մեկ տասնյակից և որոնցում ընդգրկված էին գերազանցապես Կովկասում ապաստանած Վան-Վասպուրականցիներ: Դրանցից ամենամեծերը Ալեքսանդրապոլի և Երևանի խմբերն էին՝ յուրաքանչյուրում 10-12 մարդ:

Արմենականությունը, որի ազատագրական պայքարը խարսխված էր Թուրքահայության հնարավորությունների և ուժի վրա[4], այժմ, երբ ռուսական հեղափոխության օրերին թվում էր, թե ազգայինն անխուսափելիորեն տեղի է տալիս միջազգայնականությանը, երբ աշխատավոր դասակարգերի շահերը կարծես առաջնային էին դառնում ազգային շահերի համեմատ, և հարստահարված աշխատավոր զանգվածներն իրենց ազգային ազատագրությունը սկսում էին պայմանավորել սոցիալիստական գաղափարների հաղթանակով - այսպիսի հոգեփոխության պայմաններում չէին կարող չալեկոծվել Ռուսահայաստանում գործող արմենականների մտքերը: Գաղափարական տարընթա-

---

* Համազասպը կրտսեր եղբայրն էր նշանավոր արմենական գործիչ Գարեգին Բաղեշցյանի: Եղբոր գաղափարական ազդեցության տակ, նա դարձել էր արմենական, բայց, անցնելով դաշնակցության մեջ, գործեց առանց ուժերը խնայելու: Աշխատության հետագա շարադրանքում դեռ անդրադարձ կլինի նրա գործունեությանը, որպես Հ.Յ.Դ.Շամի կ. կոմիտեի անդամի, ինչպես նաև ցույց կտրվի, թե ինչպես ընտրվելով դաշնակցության 4-րդ համագումարի (Վիեննա) պատգամավոր, չկարողացավ մասնակցել նրա աշխատանքին և թոքախտից մեռավ Շվեյցարիայում:

** 1908թ. Դավոյի դավաճանության օրերին Պալդոշյանը, չդիմանալով ծեծի ու տանջանքի, մատնեց իր կուսակիցներից շատերին:

[1] **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 249-254:

[2] Ա. Բրուտյանը հետագայում դարձավ Վասպուրականի հնչակյանների ղեկավարը և սպանվեց Վանի ապրիլյան 1915թ. կռիվների ժամանակ, թուրքական բանտում:

[1] **«Արամը»**, էջ 453:

* Սարմաստի գավառ:

[2] **«Նյութեր ...»**, . հատ. Դ, էջ 234:

[3] «Ցուշեր **Արմենակ Եկարեանի**», էջ 135:

[4] Տե՛ս **Արտակ Դարբինեան**, Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 126:

ցությունը դարձավ անխուսափելի, և նրանք կամա թե ակամա սկսեցին կասկածի տակ դնել միայն Հայության ուժի վրա հենվելու իրենց կուսակցության մարտավարության ճշմարտացիությունը:

Հ.Ց.Դ. Վանի կազմակերպության ղեկավար Վ. Փափազյանը մեզ է փոխանցել հետևյալ բովանդակության զրույցը արմենական կուսակցության շարքային մի անդամի հետ: Վերջինս հարցրել է. «... Ի՞նչ միջոցներ ունիք, ի՞նչ կը մտածէք անել. Եվրոպայէն յոյսեր ունէ՞ք, որ նեղ վախտ տիւշմընի բերան չմնանք. Կովկասի կամ Եւրոպայի մէջ ունէ՞ք կազմակերպութիւն, որ ձեզ օգնի, զէնք, դրամ, մարդ ուղարկի»: «Երկրեն դուրս դաշնակցութիւնը շատ զորեղ և տարածուած կազմակերպութիւն է, - պատասխանել է Փափազյանը, - մենք անոնց կողմէ է, որ կուգանք, անոնց նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ է, որ գործի լծուած ենք: Մեր անմիջական ծրագիրն է՝ քարոզչութիւն, կազմակերպութիւն, խիստ կարգապահութիւն եւ ժողովրդի զինում: Իսկ թէ այդ բոլորը ինչի պիտի յանգի, դեռ անորոշ է ...: Եւրոպայի վրայ մենք ո՛չ վստահութիւն եւ ո՛չ ալ հաւատ ունինք ... Արդէն ատոր համար «անորոշ» է ըսի մեր նպատակը, որովհետեւ պէտք է սպասել քաղաքական նպաստաւոր շրջանի մը եւ հիմնովին պատրաստուիլ ոեւէ շարժում ընելէ առաջ»: Արմենականը շարունակել է. «Խելքս չի կտրի, որ խայութիւնը մենակ կարողանայ էսա զօռպա Թիւրք կառավարութեան դէմ Թոփ-Թուընքի, խազարաւոր ասքրի դէմ կայնի. անխելքութիւն է: Էն վախտ յաջողութիւն կ'ունենք, երբ յաջողինք խասկըցնել, որ Թիւրք ժողովուրդն էլ, քիւրտն էլ, ասորին էլ, եզիտին էլ, մեզ հետ յեղափոխութիւն անեն, թէ չէ՝ քեանի մը Թուանքով ու Փէտայինով պեան դուրս չի կեայ ...»: «Մենք ալ այդ կարծիքին ենք եւ այդ ուղղութեամբ է, որ կ'աշխատինք»[1], - վստահեցրել էր Փափազյանը:

1906թ. Ուրմիայից Վան հրավիրվեց և արմենականների ղեկավարությունը ստանձնեց չափավոր կրթությամբ, բայց շատ պարկեշտ ու եռանդուն գործիչ Երվանդ Քեռոյանը (Սեպուհ) : Կարճ ժամանակում նա կարողացավ ի մի բերել ցաքուցրիվ անհատներին ու քայքայված խմբերը, վերակառուցել շարքերը, հնարավորության սահմաններում ամրացնել կուսակցությունը, կազմակերպել ժողովրդի ինքնապաշտպանությունը թուրք-քրդական վայրագությունների դեմ: Կարելի է ասել, որ գոյության վերջին երեք տարիներին կազմակերպության շարքերի վերակազմավորման ու ամրապնդման գործում Սեպուհը խաղաց բախտորոշ դեր, այնպես, ինչպես Մկրտիչ Ավետիսյանը՝ կուսակցության ստեղծման գործում:

Ռուսական հեղափոխության սրընթաց զարգացումը, նրա առաջ քաշած լոզունգները, ապստամբների հերոսական խոյանքները մեծ տպավորություն էին թողել Սեպուհի վրա: Հեղափոխության ազդեցության տակ նա վերաքննում է ազատագրական շարժման մասին իր որոշ պատկերացումները և իր նոր

[1] Վահան Փափազյան, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 247-248:

տրամադրությունները մարմնավորում մի փաստաթղթի մեջ, որն արմենականների պատգամավորական ժողովում քննարկելուց և հավանության արժանանալուց հետո կուսակցության ղեկավարության անունից կցվում է կազմակերպության ծրագրին՝ որպես հավելված:

Հավելվածում շեշտվում էր այն գաղափարը, որ հայ ժողովրդի ազատագրությունը հնարավոր է զինված ապստամբության միջոցով: Միաժամանակ այդ դրույթը լրացվում էր այն տեսակետով, որ նախքան ապստամբություն բարձրացնելը՝ հայության քաղաքական ղեկավարները պարտավոր են լրջորեն հաշվի առնել իրենց ուժերն ու հնարավորությունները, չշտապել և իրադարձություններից առաջ չընկնել: Ազատագրական բախտորոշ կռվին պետք է ընդառաջ գնալ այնպես բազմակողմանիորեն նախապատրաստված, ինչպես գնում են Ռուսաստանի հեղափոխական ուժերը:

Եթե թուրքահայության ուժերն անբավարար են ապստամբություն բարձրացնելու և հաղթելու համար, այդ պայմաններում նա պետք է ձգտի իր ուժերին գումարել օսմանյան հակահամիդյան ընդդիմադիր ուժերին՝ առանց ազգային ու կրոնական խտրության: Այլ խոսքով՝ արևմտահայության ազատագրության հարցի լուծումը հավելվածը կապում էր համաօսմանյան կամ համաթուրքական հեղափոխության հետ: Այնտեղ ասված էր.

«Եթե դրացի ժողովուրդները՝ թուրքերը, քրդերը և այլ ազգեր, այն աստիճան անկեղծ գիտակցության հասած և յեղափոխուած լինին, որ հայ յեղափոխության գործակցիլ, այս ապացոյց է ինքնին թե հայերին հավասար իրավատեր են ճանաչում իբրև երկրին զավակ և որու համար գործնական երաշխիքներ պետք է տուած լինին անշուշտ: Այն ժամանակ անջատ հայկական հարցը իրականության մեջ լուծուած կը համարուի, և թրքահայ ժողովուրդը ուրախությամբ կ'աջակցի ընդհանուր ազատագրական գործին՝ ռամկավարական սկզբունքների հեռանկարով»[1]:

Փաստաթուղթը հաստատում էր, որ ռուսական հեղափոխության գաղափարները խորթ չեն արմենականներին, որ նրանք շատ բան ունեն վերցնելու այդ հեղափոխությունից: Փաստաթղթի հեղինակը նույնիսկ գիտակցել էր, որ իր բնույթով դեմոկրատական ռուսական հեղափոխությունը կարող է վերաճել ավելի արմատական սոցիալիստական հեղափոխության: Ավելին, Սեպուհի ձեռքով հավելվածում գրված է. «Ընկերային, սոցիալիստական հեղափոխությունը մեր իրականության հետ կապ ունեցող հեռավոր գաղափար է, որին պետք է ձգտենք ապագային, երբ որ քաղաքական կարգերի և տնտեսական պայմանների շնորհիվ առաջ կուգա մեր մեջ նոր հասարակություն՝ նման եվրոպական հասարակության, այսինքն՝ երբ սկսի աշխատանքի և կապիտալի պայքարը մեր մեջ»[2]:

[1] Արտակ Դարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 172-173:
[2] Նույն տեղում, էջ 171:

Հավելենք, որ Սեպուհը և նրա կազմակերպությունը Հ.Ց. դաշնակցությանը չէին ընդունում իբրև սոցիալիստական կուսակցություն: Նրանք Ռուսաստանում սոցիալիստական էին ճանաչում համառուսաստանյան հեղափոխության մեջ ղեկավար դեր ունեցող սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությանը[1]:

Թեև Սեպուհը և նրա համախոհները տարված են ռուսական հեղափոխության գաղափարներով, բայց Երկրի արմենականների շարքերը պատրաստ չէին դրանք ընդունելու: Հեղափոխության պարտությունը Է՛լ ավելի խորացրեց շարքերում եղած անվստահությունը, նաև առաջ բերեց ճեղքվածք ղեկավարության ներսում: Կարելի է ենթադրել, որ կուսակցության մեջ առաջ էր եկել հակադրություն մի կողմից ղեկավարության և շարքերի միջև, մյուս կողմից՝ հենց ղեկավար կազմում: Միաժամանակ չէր դադարում արմենականների վերջին խմբերի ձուլումը դաշնակցության մեջ: «Արմենականությունը ... գրեթե կմեռնի իր ծննդավայրին մեջ, - գրում էր Ռուբենը: - Հատ ու կենտ անհատներ միայն կը մնան, որոնք իբրև ավանդություն և յիշատակ կը պահեն այդ կուսակցութեան անունը»[2]:

Այս պայմաններում արմենական ղեկավար գործիչներ Գրիգոր Պեզիկյանը (Շիկահեր) և Գարեգին Բաղեշցյանը բանակցությունների մեջ մտան Մ. Փորթուգալյանի հետ՝ նպատակ ունենալով վերջինիս համոզել, որպեսզի նա ստանձնի արմենական կուսակցության ղեկավարությունը և «Արմենիան» դարձնի կուսակցության պաշտոնաթերթը: Այդ նպատակով Գ. Պեզիկյանը նույնիսկ մեկնեց Մարսել և անձամբ հանդիպեց Փորթուգալյանին, որը, սակայն, կտրականապես մերժեց ընդունել բերված առաջարկները:

Գ. Պեզիկյանը Մարսելից ձեռնունայն մեկնեց Բուլղարիա, որտեղ կային վանեցի արմենականներից կազմված մի քանի խմբեր: Նրան հաջողվում է խմբերը միավորել այնտեղ գործող «Հեղափոխական միության» հետ և ստեղծել մի նոր կազմակերպություն՝ «Գաղափարակցական միությունը»: Շուտով Եգիպտոսի վերակազմյալ հնչակյանների «Ազգ»-յան հատվածը «ջերմ փափագ է հայտնում միավորվելու «Գաղափարակցական միության» հետ»[3]: «Միության» մեջ մտան նաև ուրիշ արմենական և վերակազմյալ հնչակյան հատվածներ:

Այդ գործընթացը սկիզբ դրեց 15-ամյա պատմություն ունեցող արմենական կուսակցության ինքնալուծարմանը: Սեպուհի մահից հետո՝ (1908թ.) արմենական կազմակերպությունները Է՛լ ավելի թուլացան: Դրա հետևանքով տեղի ունեցավ արմենականների հետագա մերձեցում վերակազմյալ հնչակյաններին, որն, ի վերջո, հանգեց նրանց կազմակերպական միավորմանը*:

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՏԱՐԸՆԹԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՄ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՈՐԴԱԾ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հայության մեջ ծագած քաղաքական երկրորդ հոսանքը եղավ Հնչակյանությունը:

Հայ իրականության մեջ քաղաքական ոչ մի կազմակերպություն իր շարքերի միասնության պահպանման համար ստիպված չի եղել այնքան ջանք ու եռանդ գործադրել, ինչպես մեր առաջին ազգային-հեղափոխական կուսակցությունը՝ Հնչակը: Ձևավորման առաջին իսկ ամիսներին այս կազմակերպության մեջ սկիզբ առած ներկուսակցական տարաձայնությունները գնալով խորացան, և կազմակերպության տարբեր թևերի միջև սկիզբ դրվեց հարատև ներքին կռիվների: Պայքարը տևեց տասնամյակներ՝ կուսակցության անդամներից խլելով հսկայական միջոցներ ու ժամանակ, նյարդեր ու զոհեր:

Մենք այստեղ չենք անդրադառնա Հնչակյան կուսակցության ստեղծման և դրան հաջորդած 15 տարիների պատմությանը, կազմակերպության գաղափարախոսության առանձնահատկություններին, ազգայինի և սոցիալիստականի համատեղման նրա կուտակած փորձին և այլն: Միայն նշենք, որ իր հիմնադրումից (1887թ.) մինչև Զեյթունի հերոսամարտը (1896թ.) Հնչակյան կուսակցությունը փաստորեն հայ իրականության ամենաազդեցիկ քաղաքական ուժն էր: Այդ ինը տարիները ցույց տվեցին, որ Հնչակը կռվի դաշտ է իջել հարազատ ժողովրդի արյան կանչով և նրա ազատագրության համար պատրաստ է հետագա անդուլ մաքառումների:

Սակայն 1896թ. սկզբներին կազմակերպության ներսում տեղի ունեցավ առաջին ամենախոշոր ճգնաժամը: Կուսակցության շարքերում առաջացավ աջ ընդդիմադիր մի շարժում, որն ուղղված էր, այսպես կոչված, «ռուսահայ» հնչակյան կենտրոնի», այսինքն՝ Ավետիս ու Մարո Նազարբեկյան ամուսինների և նրանց կողմնակիցների դեմ:

---

[1] **Արտակ Դարբինեան**. Հայ ազատագրական շարժման օրերեն. էջ 173 (տողատակ):

[2] **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ.Գ, էջ 168:

[3] **Մ. Ավետեան**, Հայ ազատագրական ազգային հիսնամեայ (1870-1920), հուշամատեան և գոր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 59:

Սեպուհի սպանությունը այսպես է ներկայացրել Վ. Փափազյանը. «... Դավոյի դավաճանութեան յաջորդ օրերուն (1908թ .) ես Սեպուհի պահուած տունին կից տունի մը մեջ էի երեք զինուորներով և բոլորովին լուր չունեի, թե Սեպուհը քովի տունն էր: Ցանկարծ, փողոցեն և այգիեն պաշարուցեանք: Մատնուած էինք, կը կարծեի: Անմիջապես հարթ տանիքներու վրայեն ցատկելով հեռացանք: Վերջը լսեցինք հրացաններու պայթյուններ. արդեն ուշ էր ... Գիշերը միայն իմացանք, թե Սեպուհն է եղած դրացի տունին մեջ **բոլորովին մենակը...**: Կարծելով թե տունը կը պաշարուի, խեղճ տղան դուրս կը նետուի տունեն իր ատրճանակով ճամբայ բանալու յոյսով, բայց ոստիկաններու գնդակներեն կը սպաննուի: Այսպես վերջացավ այդ մաքուր երիտասարդի կեանքը...» (**Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 240-241):

* Երկու կազմակերպությունների միավորման գործընթացին կանդրադառնանք աշխատության հետագա էջերում:

Կովկասի հնչակյան ղեկավարները երկրամասի իրենց կազմակերպությունների խնդիրն էին համարում հետապնդելով Թուրքահայ դատը, միաժամանակ ընդգրկվել Ռուսաստանում թափ առնող դասակարգային կռվի մեջ, կանգնել երկրում ուժեր հավաքող ռուսական պրոլետարիատի կողքին, որն անզիջում պայքար էր սկսել ոչ միայն ցարիզմի, այլև կապիտալիզմի դեմ:

Հնչակյան ղեկավարության այդ ռազմավարությունը անընդունելի համարեցին Թուրքահայ այն հնչակ գործիչները, որոնք հետապնդում էին զուտ ազգային-հեղափոխական նպատակներ: Նրանք չեշտում էին, որ կուսակցությունը ստեղծվել է արևմտահայության ազգային ազատագրական պայքարը կազմակերպելու, այլ ոչ թե Կովկասում դասակարգային կռիվ մղելու կամ Թուրքահայաստան սոցիալիզմ մտցնելու համար: Ելնելով դրանից՝ առաջարկում էին հնչակի ծրագրից հանել սոցիալիզմի մասին դրույթը և ամբողջ ուժերը կենտրոնացնել ազգային ազատագրության պայքարի կազմակերպման վրա:

Կողմերը համատեղ գործելն անհնարին գտան, և, ի վերջո, ձևավորվեց նոր՝ վերակազմյալ հնչակյան կուսակցությունը, որն անզիջում պայքար սկսեց հին հնչակի դեմ:

Հետագա տարիներին երկուստեք մի շարք փորձեր եղան հնչակյան երկու կուսակցությունները միավորելու, բայց դրանք միշտ վերջանում էին անհաջողությամբ: Գնալով վերակազմյալները ավելի ու ավելի էին հեռանում հին հընչակից՝ գերազանցապես այն պատճառով, որ վերջինս գնալով ավելի ու ավելի էր հակվում դեպի ռուսական սոցիալ-դեմոկրատիան[1]:

ՌՈՒՍԱՀԱՅ ՀՆՉԱԿՑԱՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիային հակվելու ռուսահայ հնչակյանության տրամադրություններն իրենց ակնհայտ արտահայտությունը գտան «Վերածնություն» շաբաթաթերթում, որը 1903թ. հունիսի 14(27)-ից սկսեց լույս տեսնել Ռուչչուկում (Բուլղարիա)՝ Ա. Նազարբեկյանի ջանքերով և Բուլղարիայի հնչակյան մասնաճյուղերի միջոցներով:

Լինելով հնչակյան պարբերական՝ «Վերածնությունը», սակայն, իր բովանդակությամբ մեծապես տարբերվում էր «Հնչակից»: Նոր թերթի ուշադրության կենտրոնում Ռուսաստանի շարժումներն էին: Նրա առաջին իսկ համարների հոդվածներն ու նյութերը ցույց էին տալիս, որ հին հնչակը հակված է այդ շարժումներին մասնակցելը դիտել որպես հարազատ գործ: Թերթի խմբագիրը հուսախաբ եզրակացության էր հանգել Թուրքահայ շարժումների նկատմամբ: Նրան զբաղեցնում էր այն միտքը, թե «ինչպե՞ս անել, որ չափազանց զգուշավոր կերպով հնչակյան կուսակցության գործունեության ասպարեզը չուռ գա դեպի Կովկաս և Ռուսաստան»[1]:

Թերթն այն միտքն էր արծարծում, թե ցարական բռնապետության տապալումը մեծապես նպաստելու է մյուս արյունալի բռնապետության՝ աբդուլ-համիդյան ռեժիմի թուլացմանը: Ավելի առաջ գնալով՝ «Վերածնությունը» զարգացնում էր այն տեսակետը, թե հայերը միայնակ ի վիճակի չեն իրենց պայքարով ազատվել թուրքական բռնակալությունից, ուստի ամեն ինչ պետք է անեն ընդհանուր ճակատ կազմելու կայսրության մյուս ճնշված ազգերի հեղափոխական ուժերի, նաև՝ թուրք ժողովրդի առաջադեմ, հակասուլթանական տարրերի հետ:

«Վերածնությունը» հաճախ էր անդրադառնում հայ ժողովրդի պատմական ճակատագրին, խստորեն քննադատում թուրքիայի նկատմամբ մեծ տերությունների թողտվության քաղաքականությունը, դատապարտում էր եվրոպական դիվանագիտության կործանարար դերը Հայկական հարցում, ցույց էր տալիս, որ, առաջ քաշելով թուրքահայաստանում բարենորոգումներ մտցնելու պահանջը, Եվրոպան, դրանով իսկ, հետապնդում է միայն իր եսամոլ, շահադիտական նպատակները:

«Վերածնության» էջերում պարբերաբար լուսաբանվում էին նաև միջազգային բանվորական շարժման հարցեր, քննարկվում էին այդ շարժման հետ հնչակյան կուսակցության կապերի ամրապնդման հնարավոր եղանակներ և այլն: Թերթը կուսակցության շարքերում առաջացնում էր եվրոպական երկրների սոցիալիստական կուսակցությունների հետ հնարավոր մերձեցման տրամադրություններ:

«Վերածնությանը» ակտիվորեն թղթակցում էին ռուսահայ հնչակյան գործիչներից մի քանիսը: Զանազան կեղծ անուններով թերթին հոդվածներ էր ուղարկում Ռուբեն Խանազատը: Ակտիվ թղթակցում էր Սարգիս Կասյանը, որը Լայպցիգի առևտրական ինստիտուտն ավարտելուց հետո տեղափոխվել էր Բեռլին և սովորում էր տեղի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում: Այստեղից նա աշխատակցում էր «Հնչակին», բայց «Վերածնությունը» հրատարակվելուց հետո սերտորեն կապվեց դրա հետ, քանզի այն ավելի մոտ էր իր հոգուն, թերթի նյութերի զգալի մասը նվիրված էր գիտական սոցիալիզմի տեսության պրոպագանդմանը[2]:

«Վերածնության» առաջին 10-12 համարներում լույս տեսած նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց որոշ մասը չէր կարող հավակնել սոցիալ-դեմոկրատիայի չափանիշերին, իսկ առանձին հոդվածներում արտահայտված մտքերը շուտով կրկնելու էին նորաստեղծ սոցիալ-դեմոկրատական

---

[1] Տե՛ս «Հնչակյանների հարումը Ռուսաստանի հեղափոխությանը և սոցիալիզմին», վավերագրեր, «Նորք» հանդես, գիրք երկրորդ, 1922, էջ 313-314:

[1] «Հայրենիք», N 4(76), փետրվար, 1929, էջ 102:

[2] Տե՛ս Հ.Ն. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, գիրք առաջին, Հայպետհրատ, Երևան, 1963, էջ 20-21:

բանվորական հայ կազմակերպության գաղափարախոսները:

Այսպես, թերթի N 4-ում Ս. Կայանը գրում էր, որ «Վերածնությունը» «ըստ երևույթին խոստանում է զբաղվել զանազան երկրներում ցրված բոլոր հայ (ընդգծումը մերն է: - Հ.Ս.) բանվորների՝ ազատագրության սաղմերը բուսացնող, սոցիալիզմի անբիծ նպատակները իրականացնող մեր եղբայրակից այդ սեփականազուրկ դասակարգի շահերով, քանի որ «Վերածնությունը» նպատակ է դնում բարձրացնել նրանց միացման դրոշակը ...»[1]:

Ակնհայտ է, որ թերթը հանդես էր գալիս ոչ թե ընդհանրապես բանվորության, այլ «բոլոր հայ բանվորների» անունից:

1903թ. օգոստոսին Հնչակյան կուսակցության նազարբեկյանական կենտրոնն ընդունեց կազմակերպության շարքերին ուղղված «Նոր գործունեության մասին» փաստաթուղթը, որով հստակ ազդարարվում էր ռուսական սոցիալ-դեմոկրատների հետ միասնաբար գործելու կովկասահայ Հնչակյանների պատրաստակամության մասին: Փաստաթուղթ-կոչում ասված էր, որ «Ներկայումս Ռուսաստանում տիրող կարգերն անտանելի են և անհամապատասխան այդտեղ ապրող բոլոր ազգերի առաջադիմության պահանջներին», որ նման պայմաններում «անկարելի է Կովկասի հայերին պահել անշարժության և հնազանդության մեջ»: Իսկ դա թելադրում է կանգնել կովկասահայության գլուխ և նրա պայքարը միավորել Ռուսաստանի աշխատավորների պայքարին:

«... Այլևս անկարելի է կասեցնել սկսված շարժումը, որը օրըստօրե պիտի ստանա ավելի արագաքայլ ընթացք»: «...Մնում է, որ այդ շարժումը առաջ տարվի որոշ ծրագրով և ուղղությամբ, որ նա համառուսական շարժման մի մասը կազմե՝ համաձայն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ կուսակցության վերջին կոնգրեսի՝ մեջ ընդունած ծրագրի պահանջներին: Հնչակյան կուսակցության թե՛ մոտակա և թե՛ հեռավոր նպատակին հասնելու տեսակետից ռուսահայ հեղափոխությունը կազմում է այն հիմքը, որի վրա պիտի կառուցվի ամբողջ շենքը»[2]:

Այսպիսով, արևմտահայության ազատագրական շարժումը գլխավորելու նպատակով ստեղծված Հնչակյան կուսակցությունը, համենայն դեպս՝ կովկասահայերից բաղկացած նրա հատվածը, իր հույսն այժմ կապում էր ռուսական հեղափոխության հետ:

ՌՄԴԲԿ ղեկավար մարմինների հետ անմիջական կապեր հաստատելու ուղիներ որոնելով՝ կուսակցության այդ հատվածը միաժամանակ շարունակում էր աշխույժ չփումները եվրոպական սոցիալիստական շարժման հետ:

1903թ. սեպտեմբերի 11 -ին Դրեզդենում իր աշխատանքներն սկսած գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության համագումարին ներկա

[1] «Վերածնություն», N 4, 18 հուլիսի 1903թ.:
Նկատի ուներ ՌՄԴԲԿ II համագումարը (1903թ.):
[2] «Վերածնություն», N 37, փետրվար 24/ 8 մարտի 1904թ.:

գտնվելու համար հրավիրված էր նաև Հնչակյան կուսակցությունը: Նույն ամսին տեղի ունեցող Հնչակի չորրորդ պատգամավորական ժողովը շնորհակալական խոսք ուղղեց գերմանական սոցիալիստների համագումարին, որին ներկա գտնվելու համար Բեռլինից ուղարկեց Սարգիս Կայանին[1]:

1904թ. օգոստոսին Ամստերդամում պետք է բացվեր երկրորդ ինտերնացիոնալի հերթական կոնգրեսը, որին մասնակցելու համար նախապես հրավեր էր ստացել նաև Հնչակյան կուսակցությունը: Տարբեր պատճառներով կուսակցության ղեկավարությունն ի վիճակի չի լինում իր ներկայացուցչին ուղարկել կոնգրես, ուստի Նազարբեկյանը Գ. Վ. Պլեխանովին խնդրում է կոնգրեսում լինել նաև Հնչակյան կուսակցության ներկայացուցիչը: Պլեխանովը տալիս է իր համաձայնությունը*:

Կոնգրեսն իր աշխատանքներն սկսում է օգոստոսի 15-ին: Նախօրյակին Հնչակի կենտրոնը հղել էր հետևյալ նամակը.

«Սիրելի ընկերներ.

Հայ ս.-դ. Հնչակեան յեղափոխական կուսակցութեան կողմե կու գանք շնորհավորելու միջազգային ս.-դ. քոնկրեսը և կը ցանկանք կատարեալ յաջողութիւն:

Շատ կը ցավինք, որ անկարող ենք մեր յատուկ պատգամավորով մասնակցիլ քոնկրեսին, ինչպես նաև (ներկայիս գումարուող) Ռուսաստանի մեջ գործող ս.-դ. կուսակցութեան:

Ռուսաստանի ս.-դ. բանվորական կուսակցութեան պատգամավորներու հետ կատարելապես համաձայն ենք:

Մեր պատգամավորն է ընկ. Պլեխանով:

Կեցցե՛ միջազգային ս.- դեմոկրատիան:

Հնչակեան Հայ սոց. յեղ. կուս.
կենդրոնական վարչություն»[2]:

«Վերածնությունը» ողջունում էր եվրոպական առանձին երկրների սոցիալիստական կուսակցությունների և II ինտերնացիոնալի ղեկավարության կողմից Հնչակյան կուսակցության նկատմամբ ցուցաբերած ուշադրությունը և համոզմունք էր հայտնում, որ գնալով ամրապնդվելու են երկուստեք կապերը:

[1] Տե՛ս «Ցխնամեակ (1887-1937) սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան», Փրովիտենս, 1938, էջ 227:
* Նշենք, որ Հ. Ց. դաշնակցությունը նույնպես դիմել էր Գ. Վ. Պլեխանովին՝ խնդրելով լինել իր ներկայացուցիչը սոցիալիստների Ամստերդամի կոնգրեսում: Նախքան համաձայնություն տալը Պլեխանովը դիմում է Ա. Նազարբեկյանին և նրանից տեղեկություններ է ուզում դաշնակցության մասին: Վերջինս բացատրում է, որ այդ կուսակցությունը զուտ ազգային կազմակերպություն է և միանգամայն հեռու սոցիալիզմից: «Իմ բացատրությունից հետո,- ասել է Նազարբեկյանը, - Պլեխանովը ժխտողական պատասխան էր տվել, որից հետո դաշնակցականները սոցիալիստ-հեղափոխական Լազրևին և ուրիշներին էին դիմել և հաջողել էին իրենց ներկայացուցիչն ունենալ» («Հայրենիք» ամսագիր, N5 (77), մարտ, 1929, էջ110):
[2] «Պատմութիւն Ս.- Դ. Հնչակեան կուսակցութեան», հատ. Ա, էջ 290:

Սակայն, ինչպես ասվեց, «Վերածնության» հետաքրքրությունների կենտրոնում ռուսաստանյան հեղափոխական շարժումներն էին, իսկ մոտակա նպատակը հնչակյան կուսակցության մերձեցումն էր ՌՄՌԿ հետ:

1904թ. ապրիլին ՌՄՌԿ Կ.կոմիտեի հրատարակությամբ առանձին գրքույկով հայերեն լույս էր տեսել ՌՄՌԿ ծրագիրը՝ ընդունված երկրորդ համագումարում: «Վերածնության» N31-ում Նազարբեկյանը մանրամասն մեկնաբանել էր այդ ծրագիրը: Թերթի N48-ում, նորից անդրադառնալով ՌՄՌԿ ծրագրին, նա գրում էր. «Իբրև հայ սոցիալ-դեմոկրատ, պատկանող միևնույն երկրին, մենք հայտնեցինք մեր կատարյալ հավանությունը այդ ծրագրի նկատմամբ և առաջադրեցինք, իբրև անհրաժեշտ պայման, ռուսահայ սոցիալ-դեմոկրատիայի միացումն այդ կուսակցության հետ, իբրև որոշ ճյուղ նրա ընդհանուր կազմակերպության»[1]:

Թերթի էջերում կարելի է հանդիպել բազմաթիվ հաստատումների այն մասին, որ հնչակյան սոցիալիզմն այնքան էլ հեռու չէ ռուս իրավ մարքսիստների սոցիալիզմից, որ, հանձինս ՌՄՌԿ-ի, հին հնչակն ունի իր գաղափարական դաշնակիցը, և որ, եթե հարկ լինի, հնչակյանները պատրաստ են իրենց հնարավորությունները տրամադրել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիային:

«Վերածնությունը» հաստատ համոզմունք էր հայտնում, որ ՌՄՌԿ-ն ի վիճակի կլինի գլխավորելու երկրի ամենաառաջավոր դասակարգի՝ պրոլետարիատի և, առաջին հերթին, ռուս պրոլետարիատի ազատագրական կռիվը սոցիալիստական իդեալների հաղթանակի, արդարացի անդասակարգ հասարակարգի կառուցման համար:

Հարկ է նկատել, որ Նազարբեկը «Վերածնության» թերթում նշված հարցերը բարձրացնում էր խիստ զգուշությամբ, և դա հասկանալի է, քանի որ համոզված չէր, որ կուսակցության շարքերը կընդունեին իր նոր գաղափարները: Նա խուսափում էր կուսակիցներին պարզ ու հստակ ասել, թե ինքը հույս չունի հայկական դատի հաջողության վրա Թուրքիայում: Անշուշտ, նրան և նրա պես մտածող ղեկավար գործիչներին դավաճաններ կանվանեին, գուցե և քարկոծեին: «Ես չեմ ուզում շեշտակի դնել խնդիրը, - ասում էր Նազարբեկը, - որովհետև մերոնք կարող են չհասկանալ ինձ ու ենթադրել, թե ես երես եմ դարձնում Թուրքահայերի ազատագրության գործից»[2]: Ուրեմն, նախ անհրաժեշտ էր հող նախապատրաստել:

Հատկապես բոլշևիկյան գունավորում էր ստացել հնչակի Բաքվի կազմակերպությունը: Այստեղ բոլշևիկ-հնչակ հարաբերություններն այնքան էին սերտացել, որ միասնաբար մշակում և համատեղ իրականացնում էին կարևոր գործողություններ: Քաղաքի բոլշևիկյան և հնչակյան կազմակերպությունների մերձեցման գործում նշանակալի դեր էր կատարում ՌՄՌԿ Բաքվի կոմիտեի

[1] «Վերածնություն», N 48, 18(31) մայիսի 1904թ.:
[2] «Հայրենիք», N 5 (77), մարտ, 1929, էջ 109:

ղեկավար անդամներից մեկը՝ Այյոշա Ջափարիձեն: Նրա ջանքերի շնորհիվ էր նաև, որ Բաքվի բանվորների 1904թ. դեկտեմբերյան հայտնի գործադուլի կազմակերպման ու անցկացման ընթացքում քաղաքի հնչակյան կոմիտեն ամենասերտ գործակցության մեջ էր բոլշևիկների հետ: Նրանք համատեղ անցկացնում էին ժողովներ, միտինգներ ու երթեր, միասին կազմում էին և ձեռնարկատերերին ներկայացնում տնտեսական պահանջներ: Դեկտեմբերյան հայտնի գործադուլը վերջացավ բանվորների հաղթանակով, և դրա մեջ մեծ էր քաղաքի հնչակյան կազմակերպության դերը:

Բաքվի դեկտեմբերյան գործադուլի առթիվ «Հնչակ» թերթի առաջնորդողում ասված էր.

«Այո՛, Բաքվի հնչակյան կազմակերպություններն են, որ գործով ապացուցում են իրենց սոցիալ-դեմոկրատիզմը, որ միացած Ռուսաստանի ս.դ.բ. կուսակցության կազմակերպություններին, համերաշխաբար ու միասին մղում են մեծ գործադուլը և հնչեցնում իրենց սոցիալ-դեմոկրատական խոսքը: Այո՛, գործով է, որ Հնչակյան անունը գալիս և միանգամ ընդմիշտ կապվում է սոցիալ-դեմոկրատիային»[1]:

Բաքվի բոլշևիկյան և հնչակյան կազմակերպությունների կապերն ավելի սերտացան ռուսական հեղափոխության առաջին օրերից սկսած: 1905թ. մարտին Բաքվի հնչակյան «կենտրոնական» վարչությունը իր N1 շրջաբերականում գրում էր, որ անհրաժեշտ է է՛լ ավելի «համերաշխ գործակցություն մեր եղբայր Ռուսաստանի ս.-դ. բանվորական կուսակցության հետ»[2]: Այդ հարաբերություններն այնքան ջերմացան, որ հնչակյան ղեկավարները բոլշևիկների հետ բանակցություններ սկսեցին ՌՄՌԿ մեջ մտնելու համար: Նրանք համոզված էին, որ իրենց կուսակցությունը պատրաստ է դիմելու այդ վճռական քայլին և կազմելու նրա մի մասը, իհարկե, այն վերապահումով, որ կազմակերպությունը դիտվի իբրև ՌՄՌԿ-ի հայկական ճյուղ, մի բան, որ հակասում էր ռուսական ս.-դեմոկրատիայի կազմակերպական - կանոնադրական սկզբունքներին:

Ինչպես հետագա շարադրանքից կտեսնենք, մեծ ցանկություն ուներ ՌՄՌԿ-ի մեջ մտնել նաև այդ ժամանակ հրապարակ իջած ս.-դ. բանվորական հայ կազմակերպությունը («սպեցիֆիկներ»), որը, սակայն, ամեն անգամ հանդիպում էր ՌՄՌԿ Կենտկոմի կտրուկ մերժմանը: Ինչ վերաբերում էր նազարբեկյանական կամ հին հնչակին, ապա ՌՄՌԿ մեջ մտնելու նրա ցանկությանը ՌՄՌԿ Կենտկոմը, անձամբ Լենինը, արձագանքում էր ըմբռնումով և դրական վերաբերմունքով:

ՌՄՌԿ հետ միավորվելու նպատակով հնչակի նազարբեկյանական թևը 1904թ. պաշտոնական նամակով դիմեց նրա կենտկոմին: Այդ ցանկությունը

[1] «Հնչակ», N 1, հունվար, 1905թ.:
[2] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4045, ց.1, գ.69, թ.2:

Նամակում պատճառաբանված էր Նրանով, որ բոլոր գլխավոր հիմնահարցերում հնչակը համակարծիք է ՌՄՌԿ ծրագրային պահանջներին: Մայիսի 31-ին (հունիսի 13-ին) ՌՄՌԿ խորհրդի նիստում քննության առնվեց հնչակյանների դիմումը: Նիստը, որին ներկա էր Վ. Լենինը, միաձայն ընդունեց հետևյալ բանաձևը.

«Խորհուրդը հանձնարարում է կենտկոմին՝ համաձայնության գալ կուսակցության կովկասյան միության հետ՝ իր կազմում ընդունելու «Հնչակյանների» այն կազմակերպություններին, որոնք ցանկանում են մտնել կուսակցության մեջ: Դրա հետ միասին խորհուրդը հանձնարարում է կենտկոմին՝ առաջարկել կովկասյան միությանը իր ձեռքը վերցնել Բուլղարիայում հրատարակվող նրա օրգանը՝ երբ հնչակյան կուսակցությունը դա կառաջարկի»[1]:

Սակայն խորհրդի հանձնարարականի կատարումը ՌՄՌԿ Կենտկոմը ձգձգում էր, մինչդեռ հնչակյան ղեկավարությունը անհամբեր սպասում էր դրական պատասխանի:

Որքան Նազարբեկյան ամուսինները և նրանց համախոհները մոտենում էին ռուս սոցիալ-դեմոկրատներին, այնքան ուժեղանում էին նրանց դեմ հարձակումները հայ լիբերալների և դաշնակցականների կողմից: Այդ տեսակետից մեծ ակտիվություն էր հանդես բերում «Մշակ» թերթի խմբագիրներից Համբարձում Առաքելյանը: Լինելով ծայրահեղ հակադաշնակցական՝ նա լիովին համերաշխ էր դաշնակցական այն հոդվածագիրների հետ, որոնք դատափետում էին Նազարբեկյաններին և դեպի սոցիալ-դեմոկրատիա գնացող նրանց գաղափարակիցներին:

Համբարձում Առաքելյանը լույս էր ընծայել մի գրքույկ, ուր իրեն հատուկ սուր լեզվով քննադատել էր Ավետիս Նազարբեկին, ծանրանալով նրա անձնական կյանքի վրա, մասնավորապես մեղադրելով ընտանեկան ոչ բարոյական վարք դրսևորելու մեջ: Գրքույկը հոգեկան խոր հուզում էր պատճառել Նազարբեկին և առաջ բերել զայրույթի ալիք նրա ընկերների ու կուսակցական գաղափարակիցների շրջանում: Վերջիններս, իբրև պատասխան, Հ. Առաքելյանի դեմ ուղղված գրքույկ հրատարակեցին՝ «Անճարակ թզուկը» վերնագրով, որը մեծ աղմուկ հանեց ռուսահայ շրջանակներում:

Ա. Նազարբեկի այդ շրջանի անձնական կյանքին հաճախ էին անդրադառնում դաշնակցական մամուլի օրգանները, օգտագործելով այն հանգամանքը, որ նա բաժանվել էր Մարոյից և երկրորդ անգամ ամուսնացել միլիոնատեր Ալեքսանդր Մելիք-Ազարյանի դուստր Արֆենիի հետ*:

Սակայն «Մշակի» ու դաշնակության կողմից Ա. Նազարբեկյանի դեմ ուղղված և գնալով ուժգնացող քննադատությունները ի վիճակի չեղան կանգնեցնելու դեպի ռուս սոցիալ-դեմոկրատիա գնալու ռուսահայ հնչակյանների ձգտումը: Դա իր հստակ արտահայտությունն էր գտնում հատկապես Ավետիս Նազարբեկյանի այն հոդվածներում, որոնք 1903-1904թթ. տպագրվում էին ռուսական և եվրոպական մամուլում:

[1] **"Ленинский сборник"**, т. XV, Москва, 1924-1931гг. стр. 62.

* Նազարբեկի երկրորդ կնոջ մայրը, որը շատ վաղ էր մահացել, գրող Մերենցի աղջիկն էր, որը եղել էր բարձրաճաշակ գրականագետ և գրականության մեջ հայտնի է **Մենիկ** ծածկանունով:

ՆՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՆ ՀՆՉԱԿՈՒՄ

ՌՄՌԿ մեջ ընդունվելուց հետո, հնչակյանները հակված էին հարելու այդ կուսակցության մեջ ձևավորված բոլշևիկյան և մենշևիկյան երկու թևերից վերջինիս:

Կովկասում բոլշևիկներն ու մենշևիկները գտնվում էին նույն կազմակերպության մեջ՝ ղեկավար կենտրոն ունենալով ՌՄՌԿ կովկասյան միութենական կոմիտեն: Մենշևիկները քիչ թե շատ ամուր դիրքեր ունեին միայն Վրաստանում, գլխավորապես Թիֆլիսում: Բոլշևիկները Անդրկովկասում թվապես գերազանցում էին մենշևիկներին, ունեին անհամեմատ ավելի ամուր դիրքեր երկրամասի արդյունաբերական վայրերում և հատկապես՝ Բաքվում: Կովկասյան միութենական կոմիտեում նույնպես թելադրողը բոլշևիկներն էին, և այդտեղ ընդունված որոշումների մեծ մասն իրենց օգտին էր: Դա արտահայտվում էր նաև կուսակցական-կազմակերպական, կանոնադրական հարցերում: Բոլշևիկները որևէ շեղում չէին հանդուրժում կուսակցական կազմակերպությունների ստեղծման ինտերնացիոնալիստական սկզբունքից, լսել անգամ չէին ուզում ՌՄՌԿ մեջ ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ընդգրկման մասին: Կովկասյան մենշևիկները, բոլշևիկների օրինակով, ազգային սոցիալիստական կազմակերպությունների նկատմամբ նույնպիսի դիրքորոշում ունեին:

Այդ նույն ժամանակ Ռուսաստանում, հատկապես կայսրության կենտրոնական նահանգներում, բոլշևիկյան և մենշևիկյան կազմակերպությունները գործում էին զատ-զատ: Բոլշևիկներն անզիջում պաշտպանում էին կուսակցության կազմակերպական սկզբունքները, մենշևիկների մի մասը չէր բացառում ավտոնոմ վիճակ պահպանելու պայմանով, օրինակ՝ Լեհաստանի, Ֆինլանդիայի, նաև՝ Կովկասի ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ներգրավման հնարավորությունը:

Մենշևիկների այդ տեսակետը ընդունելի էր հնչակի համար, որը նույնպես ձգտում էր ՌՄՌԿ մեջ մտնելուց հետո այնտեղ պահպանել իր ինքնուրույն վիճակը[1]:

1904թ. մայիսի 31-ին ՌՄՌԿ խորհրդում հնչակյանների վերը հիշատակված դիմումի քննարկումը տեղի էր ունենում բոլշևիկյան և մենշևիկյան

[1] **«Թիանամեակ (1887-1937) սոց.-դեմ. հնչակեան կուսակցութեան»**, էջ 203:

տարանջատված թևերի միջև հակադրությունների սրման և կուսակցության պառակտման խորացման պայմաններում: Այս իրադրությունում ՌՄԴԿ մեջ հնչակի ընդունման նպատակով գործնական քայլերի ու միջոցների ձեռնարկման համար ո՛չ ժամանակ կար և ո՛չ էլ ցանկություն:

Իսկ հնչակյանները՝ թե՛ ղեկավարները և թե՛ շարքայինները, անորոշության մեջ սպասում էին պատասխանի: Ա. Նազարբեկյանը ստիպված էր դիմել մենշևիկների պարագլուխներից Մարտովին և պարզել, թե, ի վերջո, երբ է հնչակը ստանալու ՌՄԴԿ հետ միավորման մասին իր դիմումի պատասխանը: Մարտովը Նազարբեկին խորհուրդ է տալիս չշտապել, «առայժմ չմիանալ ոչ մի կուսակցության, այլ, ընդունելով ռուսաց սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ծրագիրն ամբողջությամբ, մնալ ինքնություն, սպասելով, մինչև որ բոլշևիկների ու մենշևիկների միջև ծագած տարաձայնությունները հարթվեն»[1]:

ՌՄԴԿ կենտրոնից պատասխան չստանալը, ինչ խոսք, պայմանավորված չէր միայն այդ կուսակցության երկու թևերի միջև եղած տարաձայնություններով: Իրականում պատճառն այլ էր. բոլշևիկյան ղեկավարներից շատերը համոզված չէին, թե հնչակյանները լիովին թոթափվել են ազգայնականությունից և, որպես դրա ցայտուն ապացույց, մատնացույց էին անում նրանց ակտիվ մասնակցությունը Թուրք-հայկական ընդհարումներին Կովկասում:

Գաղտնիք չէր, որ Թիֆլիսի 1905թ. նոյեմբերյան ընդհարումների ժամանակ հնչակյանների մարտական ջոկատները, դաշնակցական ուժերի հետ, անձնվեր կռվում էին թուրք ելուզակների դեմ[2]: Հնչակյան «Ապագա» թերթը, որի գաղափարական ուղղվածությունը բարձր էր գնահատել Ստ. Շահումյանը, ապա նաև՝ Վ. Լենինը, այնուամենայնիվ, չէր խուսափել Թուրք-հայկական ընդհարումների նկատմամբ իր վերաբերմունքը արտահայտելուց, որը չէր համընկնում ընդհարումներին տրված բոլշևիկյան գնահատականին: 1905թ. N 5-ում «Ապագան» գրել էր. «Մարդասպա՜ն այդ մուսուլմանները ...: Ողորմելի ու վայրենի տգետներ: ... Մուսուլման խուժանի ոճիրները զզվանքով ու զայրույթով են լցնում մեր սրտերը՝ **իբրև հայի**: ... Մեր պարտականությունն է հրավիրել **բոլոր հայերին** ինքնապաշտպան քաղաքության ...»[3]:

Հարկ է նշել, որ ՌՄԴԿ կենտրոնի հետ հնչակյան ղեկավարության բոլոր բանակցությունները կատարվում էին բացառապես հնչակյան կուսակցության մի քանի ականավոր գործիչների կողմից, իսկ կազմակերպության շարքայինները համարյա չէին մասնակցում դրան: Պատճառը պարզ էր. կուսակցությունը չէր կարողանում դուրս գալ այն խոր ճգնաժամից, որի մեջ գտնվում էր մի քանի տարի շարունակ: «Հնչակյան կուսակցության պառակտումից հետո, –

[1] Տե՛ս **«Նորք»**, գիրք երկրորդ, 1922, էջ 208:
[2] ՀՀ ՀԱԿԳԱ, ֆ. 4045, ց. 1, գ.100, թ.1:
[3] **«Ապագա»**, N 5, մարտ, 1905թ.:

գրել է Ռուբեն Խանազատը, – Թուրքիայում ոչ մի ակտիվ գործունեություն չէր ունեցել կուսակցությունը: Ամբողջ 8-9 տարի անգործության էր նա մատնված, և ոչ ոք չգիտեր, թե ի՞նչ կարելի է անել այնտեղ և ինչի՞ց պետք է սկսել»[1]:

Այդ վիճակի գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ հին հնչակի ղեկավարներից շատերը թե՛ Թուրքիայում և թե՛ Ռուսաստանում ձերբակալված էին, գտնվում էին բանտերում կամ աքսորավայրերում, իսկ նրանց մի մասն էլ ուղղակի քաշվել էր կենդանի գործից:

Այսպես, Գաբրիել Կաֆյանն աքսորվել էր հեռավոր Վոլոգդայի նահանգ, ուր մնացել էր 5-6 տարի և, ազատվելով 1902թ. սկզբներին, աշխատանքի էր ընդունվել Բաքվի՝ ապրանքներ տեղափոխող "Надежда" ընկերությունում: Մի քանի տարի բանտային կալանքի մեջ էր մնացել Ռուբեն Խանազատը, որն ազատվելուց հետո հաստատվել էր Թավրիզում և զբաղվում էր ուսուցչությամբ: Մուրատ Պոյաճյանը (Մնձն Մուրատ) Թուրքական բանտերում երկար տարիներ տառապելուց հետո ազատվել և աքսորվել էր աֆրիկյան Տրիպոլիս: Անձնվեր գործիչ Արամ Աչրկպաշյանը, գտնվելով Շապին-Գարահիսարում, ձերբակալվելու վտանգի տակ ամբողջ 11 տարի ցերեկները թաքնվել էր և միայն գիշերները ծպտյալ տնից տուն էր տեղափոխվել, մինչև որ կարողացել էր անցնել արտասահման:

Թվարկումը հարկ չկա շարունակելու, քանի որ բանտարկված և աքսորված հնչակյանների անուններն ամբողջ ցուցակներ են կազմում:

Ինչ վերաբերում է հնչակյան կուսակցության հիմնադիր Ա. Նազարբեկյանին, ապա նա փաստորեն հեռացել էր կենդանի կազմակերպական գործից և իրեն նվիրել էր զուտ տեսական աշխատանքի՝ «Վերածնություն», ապա և «Ապագա» թերթերում:

Սակայն 1903-1904 թվականներին վիճակը արագորեն սկսեց բարելավվել: Ռուսաստանում, մասնավորապես Կովկասում, ուժեղանում էին հնչակյան կազմակերպությունները: Հնչակի հմայքը Կովկասում մեծապես աճեց իշխան Գոլիցինի վրա կատարած տեռորից հետո: Այդ ակտը մեծ ոգևորություն էր առաջացրել կուսակցության շարքերում: Բաքվում հնչակյանների թիվն այնքան էր մեծացել, որ քաղաքի միասնական կազմակերպությունը ստիպված բաժանվել էր երեքի՝ Բաքու-Սև քաղաք, Բալախանի և Բիբի-Էյբաթ: Կտրուկ աճել էր հնչակյանների թիվը Ալեքսանդրապոլում և Երևանում: Շատ էին ուժեղացել կուսակցության Բաթումի ու Սև ծովի ափերի հին մասնաճյուղերը, ստեղծվել էին նորերը: Կովկասում միայն Թիֆլիսում էր, որ կուսակցության քաղաքային կազմակերպությունը դանդաղ էր զարգանում:

Ի տարբերություն Կովկաս-Ռուսաստանի՝ Տաճկաստանում հնչակյան կազմակերպությունները խիստ թուլացել էին: Դրա հիմնական պատճառն այն

[1] **«Հայրենիք»**, N 4 (76), փետրվար, 1929, էջ 102:

պայքարն էր, որ իրար դեմ մղում էին վերակազմյալ և ընկերավարական հնչակյանները, ապա նաև այն հանգամանքը, որ կուսակցության կենտրոնական վարչությունն անհրաժեշտ ուշադրություն չէր դարձնում Տաճկաստանում գտնվող հնչակյան կազմակերպությունների վրա:

Կ. Պոլսում կային հնչակյաններ, բայց չունեին կազմակերպություն: Սև ծովի Թուրքական ափերին լավ կազմակերպված էին միայն Օրդուի հնչակյանները, իսկ մյուս նավահանգիստներում չափազանց թույլ էին: Փոքր Հայքում կային լավ կազմակերպված մասնաճյուղեր, որոնք, սակայն, չգիտեին՝ գնալ վերակազմյալների՞, թե՞ սոցիալիստ հնչակյանների հետ: Թուրքիայի շատ նահանգներում հնչակյան մասնաճյուղեր բոլորովին չկային:

Հնչակի արտասահմանյան մասնաճյուղերից ամենաուժեղը ամերիկյանն էր: Այստեղ Սապահ-Գյուլյանի խմբագրությամբ լույս տեսնող «Երիտասարդ Հայաստան» թերթը դժվարին պայքարի մեջ էր վերակազմյալ հնչակյանների հետ, որը պահանջում էր շատ եռանդ ու զոհողություն:

Արտասահմանի մասնաճյուղերի շարքում աչքի էր ընկնում նաև Պարսկաստանի կազմակերպությունը, որի շարքերի աճի և մարտունակության բարձրացման գործում բացառիկ դեր էր կատարում Ռուբեն Խանազատը: Նրա ջանքերով 1903-1904թթ. ոչ միայն ամրապնդվեցին Թավրիզի, Մարաղայի, Ուրմիայի և այլ վայրերի մասնաճյուղերը, այլև նոր մասնաճյուղեր ստեղծվեցին Ռեշտում, Թեհրանում, Էնզելիում:

ՌՄԴԲԿ մեջ մտնելու հարցի ձգձգումը և երկար տևած սպասողական վիճակը հին հնչակում պատճառ դարձան նոր տարաձայնությունների: Պատկերը պարզ կլինի, եթե նկատի ունենանք, որ կազմակերպության թե՛ ղեկավարության մեջ և թե՛ շարքերում քիչ չէր կուսակցության այն անդամների թիվը, որոնք հենց առաջուց դեմ էին արտահայտվել երկու կուսակցությունների միավորմանը:

Խնդրի շուրջ գնալով խորացող հակասությունները սպառնում էին իր գործերը քիչ թե շատ կարգավորելու հակում դրսևորող կուսակցության մեջ առաջ բերել նոր բարդություններ:

Ստեղծված վիճակը թելադրում էր դիմել կանխարգելիչ քայլերի՝ կուսակցության մեջ տեղի ունեցող անբարենպաստ զարգացումները կանգնեցնելու համար:

Այդ նպատակով ամենից առաջ անհրաժեշտ էր ի մի հավաքել կուսակցության ղեկավար կադրերի գոնե մի մասը և վերականգնել կենտրոնի գործունեությունը:

Ռ. Խանազատը, որը բանտից ազատվելուց հետո անցել էր Թավրիզ և երկու տարի այնտեղ ուսուցչություն էր անում, կուսակցական ընկերների խորհրդով 1904թ. կեսերին Ժնևի և Փարիզի վրայով մեկնում է Լոնդոն՝ կազմակերպության կենտրոնի գործունեությունը աշխուժացնելու համար: Ճանապարհին նա կանգ է առնում Ինտերլակենում (Շվեյցարիա) և հանդիպում

Նազարբեկյանին:

«Հեղափոխականի հուշերից» իր հոդվածում Խանազատը վերհիշել է.

«Ինտերլակենում մնացինք ութ օր, և Նազարբեկի ու իմ միջև եղած խոսակցությունը շարունակ հնչակյան կուսակցության ունենալիք նոր գործունեության շուրջն էր դառնում: Մենք երկուսս էլ շատ ուրախ էինք, որ, միմյանցից ահագին հեռավորության վրա գտնվելով, ինքնաբերաբար միևնույն եզրակացության ու որոշման էինք եկել, այն է՝ որ պետք է մի առժամանակ մի կողմ թողնել Թուրքահայաստանի խնդիրը և ամբողջ թափով աշխատել Ռուսաստանի հեղափոխության գործերով»[1]:

Ա. Նազարբեկը Խանազատին խորհուրդ է տալիս՝ Լոնդոն հասնելով՝ ընկերների շրջանում անհրաժեշտ աշխատանք տանել՝ կուսակցության ապագայի մասին իրենց երկուսի համանման տեսակետների շուրջ նրանց համախմբելու համար: Նա միաժամանակ նպատակահարմար է գտնում կուսակցության կենտրոնը տեղափոխել Փարիզ, նաև այնտեղ բերել «Հնչակի» տպարանը: Քանի որ «Վերածնություն» թերթը դադարել էր լույս տեսնելուց, Նազարբեկը խոստանում է այսուհետև գրել «Հնչակում»:

Երբ Ռ. Խանազատը օգոստոսին հասնում է Լոնդոն, կուսակցության այնտեղի կենտրոնում միայն երեք հոգի էին՝ Սիմոն Տաշիրյանը (կովկասցի), Սեդրակ Բանվորյանը (Թավրիզցի) և Վարազդատը (Թուրքահայ): Կուսակցության գործերով Եգիպտոս էին գնացել կենտրոնի անդամներ Գրիգոր Վարդանյանը և Եփրեմ Կաճարյանը: Վերջինս Լոնդոն վերադարձավ Ռ. Խանազատի գալուց մեկ-երկու շաբաթ հետո, իսկ Գրիգոր Վարդանյանը Եգիպտոսից մեկնեց Կովկաս և այլևս չվերադարձավ Լոնդոն: Կենտրոնի մյուս անդամը՝ Արամ Աչըկպաշյանը նույնպես Լոնդոնում չէր:

Լոնդոնում գտնված երկու ամիսների ընթացքում Խանազատը, Նազարբեկյանի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն, կենտրոնի անդամներին զգուշորեն բացատրում է փոփոխված նոր իրադրության պայմաններում կուսակցության գործունեության արմատական վերակառուցման անհրաժեշտությունը: Խանազատը նույնիսկ նրանց առջև բացում է Նազարբեկի և իր համոզմունքի բովանդակությունը՝ ամբողջ կուսակցությունը ուղղել դեպի նոր գործունեություն:

Կենտրոնի անդամները անսպասելիորեն հեշտությամբ ընկալեցին այն միտքը, որ հնչակյան կուսակցությունը պետք է ակտիվ մասնակցություն ունենա ռուս-կովկասյան հեղափոխական շարժումներին, բայց նրանք չէին կարողանում ըմբռնել, թե ինչու կուսակցությունը մի տեղ պիտի ունենա ազգային, իսկ մյուս տեղում՝ սոցիալ-դեմոկրատական գործունեություն: Նրանց այդ տարակուսանքը չվերացավ նույնիսկ այն բանից հետո, երբ եկավ և կենտրոնին միացավ Արամ Աչըկպաշյանը: Թեև, ինչպես ասվեց, 11 տարի Շապին-

[1] **«Հայրենիք»**, N 5 (77), մարտ, 1929, էջ 109:

Գարահիսարում նա իրեն կամավոր բանտարկության էր ենթարկել, թաքստոցից դուրս գալով միայն գիշերները, բայց, այնուամենայնիվ, տեղյակ էր Թուրքիայի ներքաղաքական վիճակին: Այնտեղ արդյունավետ հեղափոխական գործունեություն ծավալելու հնարավորության մասին կենտրոնի անդամների կազմից ուղղված բոլոր հարցումներին նա որևէ հուսադրող պատասխան չէր տալիս: Ռ. Խանազատը գրել է. «Ընդհակառակը, Թուրքիայում տիրող իրերի դրությունը, հայերի դեմ տասնապատկված հալածանքները, գյուղից գյուղ անգամ տեղափոխվելու արգելքները, կոտորածների վախն ու սարսափը նա այնպես էր մեզ ներկայացնում, որ մենք ևս առավել համոզվում էինք, որ հայ ժողովրդին այնտեղ պետք էր անպայման միառժամանակ հանգիստ թողնել, սպասելով քաղաքական ավելի նպաստավոր պայմանների: Երբ Աչըկպաշյանին ասում էի, թե Թուրքիայում գործելու հնարավորություն չունենալով՝ մեր կուսակցությունը պետք է, որպես սոցիալիստական կուսակցություն, իր գործունեության ասպարեզը տեղափոխի Կովկաս-Ռուսաստան, նա պատասխանում էր. «Այդ գեշ չըլլար, բայց պետք չէ թուրքահայերն ալ բոլորովին երեսե ձգել»[1]:

1904թ. հոկտեմբերին Հնչակյան կուսակցության կենտրոնը Լոնդոնից տեղափոխվում է Փարիզ և գրասենյակը հաստատում քաղաքի Լատինական թաղամասում: Լոնդոնից Փարիզ են տեղափոխվում ու հաստատվում նույն թաղում նաև «Հնչակ» թերթի խմբագրությունը և տպարանը:

Վերջապես, պայմանավորվածության համաձայն, Փարիզ է գալիս Ա. Նազարբեկը իր երկրորդ կնոջ՝ Արֆենի հետ: Առաջվա պես Նազարբեկը չէր խառնվում կուսակցության գործերին, իրեն հեռու էր պահում կենտրոնից, միայն բավարարվում էր նրանով, որ «Հնչակի» համար գրում էր առաջնորդող հոդվածներ: Իր հուշերում Խանազատը նշել է. «Հուսախաբվելով Թուրքաց Հայաստանի գործունեությունից, նա փոխվել էր. ոչ առաջվա պես սիրում էր գործը, ոչ էլ առաջվա եռանդն ու աշխատասիրությունն ուներ: Նա խուսափում էր նույնիսկ հաճախ կենտրոնավայր գալուց»[2]:

Ռ. Խանազատը դա բացատրում էր երկու հանգամանքով. Նազարբեկի և մանավանդ նրա կնոջ վրա ծանր հետևանք էր ունեցել Կլաբանում տեռորիստի կատարած հարձակումը* և մահվանն այնքան մոտ լինելը. երկրորդ, Նազարբեկի վրա ուժգին ազդեցություն ուներ կինը:

Կրկին դառնանք Խանազատի հուշերին: «Ավետիսն այն անձնավորություններից էր, - գրել է նա, - որոնք իրենց սիրած կնոջ կերպարանքն են ստանում: Նրա առաջին կինը՝ Մարոն, իր շատ ու շատ պակասություններով հանդերձ, իսկական հին ռուս հեղափոխական կնոջ խառնվածքն ուներ. մինչև ուղեղի ծուծը նա դեմոկրատ էր, հոգով-սրտով նվիրված հեղափոխական գործին: Մարոյի հետ կապվելով՝ Ավետիսն ինքն էլ համակվել էր նույն դեմոկրատիկ-հեղափոխականի տեմպերամենտով ու հակումներով. ինչ որ բուրժուական ու արիստոկրատիկ էր, ատելի էր Ավետիսին:

Այժմ, միլիոնատեր Ալեքսանդր Մելիք-Ազարյանի աղջկա հետ միանալով՝ Ավետիսն ինքն էլ մի իսկական բուրժուայի տեսք էր ստացել՝ յուրացնելով բուրժուական շատ հակումներ: Արֆենին (կինը), ճիշտ է, չէր արգելում, չէր խանգարում Ավետիսին հեղափոխական գործերով զբաղվելու, բայց և Մարոյի նման նա չէր ստիպում նրան անպատճառ այս ու այն գիրքը կարդալու, այս և այն հոդվածն ու նամակը գրելու և ամբողջովին հեղափոխական գործին նվիրվելու:

Թեև Արֆենին, որպես մարդ և որպես կին, Մարոյից շատ մեծ առավելություններ ուներ (ավելի գեղեցիկ, ավելի բարի, վերին աստիճանի անկեղծ ու ազնիվ էր), բայց տիպար հայ բուրժուայի աղջիկ էր: Իր կրթությունը նա ստացել էր տանը, ֆրանսուհի և անգլուհի դաստիարակչուհիներից. հիանալի կերպով տիրապետում էր այդ երկու լեզուներին էլ, ինչպես և ռուսերենին: Գիտեր բավականին լավ և՛ հայերեն, որ սովորել էր մանկության տարիքում իր մորից..., լավ ծանոթ էր Ֆրանսիական և բոլոր եվրոպական թե՛ հին և թե՛ նոր գրականություններին...»[1]:

Այնուհետև հուշագիրը նշում էր, որ Արֆենին չէր սիրում հորը, խիստ քննադատաբար էր վերաբերվում նրա գռեհիկ վարք ու բարքին և իր այդ տրամադրությունը տարածում էր հայության, մանավանդ հայ մտավորականության վրա: «Երբ մի անգամ հարցրի նրան, թե հայ մտավորականներն ինչո՞վ են արժանացել իր ատելությանը, նա պատասխանեց. «Ես հայ մտավորականներից համարյա թե ոչ ոքի մոտիկից չեմ ճանաչել, բայց չէի կարողանում տանել, տեսնելով, թե ինչպես մեր ամենաականավոր համարված մտավորականները շարունակ քծնում էին գռեհիկ հորս՝ նրանից փող կորզելու համար»: Ջսիրելով ու արհամարհելով հայ մտավորականներին՝ Արֆենին չէր սիրում ընդհանրապես և հայերին: «Եթե մի ազգի մտավորականներն այդպես են, - ասում էր նա, - ի՞նչ պիտի լինի ամբողջ հայ ազգը»: Ահա այդպիսի մի կնոջ հետ էր կապել իր ճակատագիրը Ա.Նազարբեկը: Դեռ լավ է, որ նա իսպառ չէր խզել իր կապերը թե՛ հեղափոխությունից և թե՛ մարքսիզմից, ընդհակառակը՝ նա շատ ոգևորված էր Ռուսաստանի բանվորական շարժումներով, թեև բոլորովին չէր ձգտում այնտեղ գնալ ու այնտեղ աշխատել»[2]:

Եվ հենց ռուսական հեղափոխության գործին լիովին նվիրվելու, Ռուսաս-

---

[1] «Հայրենիք», N 6 (78), ապրիլ, 1929, էջ 107:
[2] Նույն տեղում, էջ 107-108:

* 1903թ. սեպտեմբերի վերջերին վերակազմյալների ղեկավարությունը Շվեյցարիա էր ուղարկել ահաբեկիչների՝ սպանելու Ավ. Նազարբեկյանին, թեև սա վաղուց քաշված էր կուսակցական գործերից և իր տիկնոջ հետ ապրում էր Կլաբանում: Հոկտեմբերյան մի երեկո, երբ ամուսինները դուրս էին եկել զբոսանքի, Նազարբեկի վրա հարձակվում է ահաբեկիչներից մեկը և դաշույնի հարվածներ հասցնում նրան, որոնք, բարեբախտաբար, մահացու չեն լինում:

[1] «Հայրենիք», N 6 (78), ապրիլ, 1929, էջ 108:
[2] Նույն տեղում:

տանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը մերձենալու և նրան ձուլվելու գաղափարը մեծ հեղափոխականին ուժ էր տալիս, նրան օգնում հաղթահարելու հոգեկան ապրումները:

Դա էր վկայում այն, որ 1905թ. հունվարի 1-ից Բուլղարիայի Ռուչչուկ քաղաքում Ա. Նազարբեկյանի խմբագրությամբ սկսեց լույս տեսնել «Ապագա» անունով նոր թերթը, որը փոխարինում էր «Վերածնության», տպագրվում էր երկու շաբաթը մեկ անգամ, «Վերածնության» մի համարի կրկնակի ծավալով, ութ էջից: Այն անմիջապես իր վրա գրավեց բարեկամների ու հակառակորդների ուշադրությունը: Թերթի առաջին համարի՝ Նազարբեկյանի հեղինակած առաջնորդողի, մյուս հոդվածների ու նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ խմբագիրն ընդհուպ մոտեցել էր ՌՄԴԲԿ գաղափարական և կազմակերպական սկզբունքների սահմանագծին: Առաջին համարի առաջնորդողը ազդարարում էր թերթի դավանանքը և ձգտումը, «Հայ սոցիալ-դեմոկրատական ուժերի միացումը Ռուսաստանի բոլոր ժողովուրդների միացյալ սոցիալ-դեմոկրատիայի դրոշի տակ»[1]: Թերթի հետագա 6 համարները նույնպես, որոնք լույս տեսան Փարիզում, նույն բանն էին ապացուցում: «Ապագան» քարոզում էր այն միտքը, որ Ռուսաստանի աշխատավոր դասակարգերը չեն կարող ազատագրվել ցարիզմի բռնություններից և բուրժուական դասակարգի հարստահարումից, եթե չկարողանան համախմբվել սոցիալ-դեմոկրատական կուսակցության բարձրացրած դրոշի շուրջ: Այդ դրոշը պետք է իր ձեռքը վերցնի նաև կովկասահայ բանվորությունը, եթե ուզում է դառնալ իր արդար վաստակի տերը: Նազարբեկը հայ բանվորներին կոչ էր անում մրտնել ռուսաստանյան ու միջազգային բանվորության շարքերը և իրենց սոցիալ-տնտեսական խնդիրները լուծել միջազգայնականության ուղիներում կապիտալի դեմ համատեղ, վճռական ու անզիջում կռվի միջոցով[2]:

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատները՝ թե՛ բոլշևիկները և թե՛ մենշևիկները, ջերմորեն ողջունեցին «Ապագայի» հրապարակ գալը:

1905թ. հունվարին Վ. Լենինին ուղարկած նամակին[3] Ս. Շահումյանը կցել էր նաև մի հոդված՝ «Հնչակյանների նոր օրգանը» վերտառությամբ, և նրան խնդրել տպագրության տալ: Հոդվածն արժանացել էր Լենինի հավանությանը և լույս էր տեսել ժնևում հրատարակվող բոլշևիկյան "Вперед" շաբաթաթերթի N 7-ում:

Շահումյանը նշում էր, որ «վերջերս լույս տեսավ հայերեն լեզվով «Ապագա» թերթը», որի «նպատակը սոցիալ-դեմոկրատական պրոպագանդան է Կովկասի հայ բանվորների մեջ»[4]: Նա չեշտում էր, որ հնչակյանների թերթն իր համերաշխությունն է հայտնում ՌՄԴԲԿ-ին, խոստանում է հայ բանվորնե-

[1] «Ապագա», N 1, 1(14) հունվարի 1905թ.:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Ստ. Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 58:
[4] Նույն տեղում, էջ 59:

րի շրջանում պրոպագանդել մյուս ազգերի բանվորների հետ միավորվելու գաղափարը, որը բխում է հնչակի կովկասյան կազմակերպությունների վերջին համաժողովի որոշումներից:

Վերջում Շահումյանը գրում էր. «Մենք ողջունում ենք «Ապագայի» երևան գալը, որը բանվորական շարժման մի նոր հաղթանակն ու նոր նվաճումն է Կովկասում, և հաջողություն ենք ցանկանում նրան նշված խնդիրների ամենաարագ իրագործման մեջ»[1]:

«Ապագայի» հրատարակման մասին Շահումյանը Լենինին գրում է նաև մայիսին (այդ նամակի առաջին էջը չի պահպանվել) ու մասնավորապես նշում. «Որքան կարելի է դատել առաջին համարից, նոր թերթը, իր ուղղության կայունության տեսակետից, նշանակալի քայլ է դեպի առաջ: «Վերածնության» խմբագրությունը լավ չէր պատկերացնում թերթում շոշափվող հարցերը և Նազարբեկի առաջնորդողների կողքին զետեղում էր նացիոնալիստական թղթակցություններ կուսակցությունից, ինչպես նաև այլ հեղինակների հոդվածներ: Այժմ թերթը խմբագրում է ինքը՝ Նազարբեկը, ընկերների հետ միասին»[2]:

Ա. Նազարբեկը և Ռ. Խանազատը 1905թ. սկզբներին Կովկասից Փարիզ եկած հնչակյան խոշոր գործիչ Գաբրիել Կաֆյանի, հայտնի գործիչներ Տիգրան Հարությունյանի (Արծիվ) և Սարգիս Քալաշյանի (Ահրիման) հետ երկար խորհրդակցություններ ունենալուց հետո հանգում են այն մտքին, որ հասունացել է կուսակցության արտակարգ պատգամավորական ժողով հրավիրելու և կատարված հարցերի պատասխաններն այնտեղ ստանալու ժամանակը:

Կուսակցության կենտրոնի անդամներ Ա. Նազարբեկը և Ռ. Խանազատը, համոզելով մյուս անդամներին, կենտրոնի անունից և իրենց ստորագրությամբ տեղական կազմակերպություններին են ուղարկում մի շրջաբերական, որի մեջ արտահայտում են իրենց մտահոգությունները և, միաժամանակ, առաջադրում են արմատական մի շարք պահանջներ:

Շրջաբերականում ասված էր, որ ժամանակին Թուրքիայի տնտեսական և սոցիալական պայմանները հնչակյան կուսակցությանը թելադրել են այնտեղ վարել զուտ ազգային գործունեություն՝ պայքարի իր ուրույն տակտիկայով: Բայց «հայության մի ստվար մասն ապրում է ռուսաց միապետության սահմաններում, որտեղ 2-3 տարուց ի վեր լուրջ հեղափոխական շարժումներ են սկսվել, որոնք գնալով ավելի ու ավելի զարգանում են: Այդ շարժումները ղեկավարող մարմինը ռուս. սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունն է: Իսկ հնչակյան կուսակցությունը, իր հիմնական սկզբունքներով լինելով սոց.-դեմ. կուսակցություն, չի կարող այդպիսի մի ժամանակ լոկ հանդիսատեսի դերի մեջ մնալ. նա պարտավոր է հենց իր հիմնական սկզբունքների

[1] Ստ. Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 61:
[2] Նույն տեղում, էջ 68:

մղումով ակտիվ գործունեության մեջ մտնել Կովկասում, Ռուսաստանում»[1]:

Փաստաթղթում նշվում էր, որ հնչակը, Թուրքիայից բացի, փաստորեն արդեն գործունեություն է ծավալել նաև Կովկասում և լայն առումով՝ Ռուսաստանում, ուստի պարտավոր է մշակել և Կովկասում ու Ռուսաստանում իրականացնել աշխատանքի միանգամայն նոր, Թուրքիայում ծավալած գործունեությունից բոլորովին տարբեր, ձևեր: Այս պայմաններում կուսակցության նույն կենտրոնը, նրա տպագիր պաշտոնաթերթը, բնականաբար, չէին կարող իրենց գործունեության մեջ զուգորդել միմյանցից տարբեր նպատակներ հետապնդող և տարբեր բնույթ ունեցող հեղափոխական այդ երկու շարժումները՝ առանց խոշոր հակասությունների մեջ ընկնելու և առանց մի երկրում ծավալած շարժումը մյուս երկրում ընթացող շարժմանը զոհելու:

Իսկ ինչպե՞ս լուծել այդ հակասությունը, ինչպե՞ս համատեղել ազգային ազատագրության համար Թուրքահայ ժողովրդի պայքարը դեմոկրատական կարգեր հաստատելու համար կովկասահայության սկսած պայքարի հետ:

Շրջաբերականը կուսակցության շարքերին ներկայացնում էր հարցի լուծման հետևյալ առաջարկը, որն իր մեջ ներառում էր երկու տարբերակ.

«Առաջին՝ հնչակյան կուսակցությունը բաժանվում է երկու որոշ ու ինքնուրույն կազմակերպությունների, մեկը՝ զուտ սոցիալ-դեմոկրատական՝ Կովկասում, Ռուսաստանում, իսկ մյուսը ազգայնական՝ Թուրքիայում: Նրանք ունենալու են իրենց հատուկ կենտրոնները և օրգանները, գործելու են միմյանցից անկախ և ինքնուրույն եղանակով, պահպանելով իրար միջև միմիայն **նյութական օժանդակության** կապ :

Երկրորդ՝ հնչակյան ազգայնական կուսակցությունն ամբողջովին նվիրվում է Թուրքահայ դատին, գործունեության միակ ասպարեզ ունենալով Թուրքաց Հայաստանը: Այդ կուսակցությունը չի խառնվում Կովկասի, Ռուսաստանի շարժումներին: Իսկ հնչակյան այն մասնաճյուղերը, որոնք, որպես սոցիալ-դեմոկրատներ, ձգտում են գործել Կովկաս-Ռուսաստանում, պետք է դադարեն հնչակյան լինելուց և միանան տեղական սոցիալ-դեմոկրատ կազմակերպություններին»[2]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Ավետիս Նազարբեկը, Ռուբեն Խանազատը և նրանց միացած Գրիգոր Վարդանյանը փաստորեն հանդես էին գալիս Կովկասում հնչակյան կուսակցության մասնաճյուղերի վերացման և դրանք ՌՄԴԲԿ մեջ ձուլելու պահանջով, չնայած դեռ չէր ստացվել այդ նպատակով ՌՄԴԲԿ ղեկավարության վերջնական համաձայնությունը:

Նազարբեկի և Խանազատի շրջաբերականը միատեսակ չընդունվեց կուսակցության մեջ: Հնչակի ղեկավար կազմի մեծ մասը հանդես եկավ իր իսկ՝ Նազարբեկի, և Խանազատի առաջարկի դեմ: Սապահ-Գյուլյանը, Սյունիքը,

[1] «Հայրենիք», N 7 (79), մայիս, 1929, էջ 147:
[2] «Պատմութիւն Ս. - Դ. Հնչակեան կուսակցութեան», հատ. Ա, Պեյրութ, 1962, էջ 291:

Սաքոն, Լազոն, Տաշիրը և մանավանդ Աչրկպաշյանը հանդես եկան բողոքներով և պահանջեցին կուսակցության գործունեությունը շարունակել նախկինի պես՝ նախկին նպատակներով և նախկին տակտիկայով: Իսկ դա նշանակում էր, որ կուսակցության գործունեության հիմնական դաշտն առաջվա պես պետք է լիներ Թուրքիան, նպատակը նույնը՝ օսմանյան բռնակալությունից Թուրքահայաստանի ազատագրությունը: Միաժամանակ հնչակյան մասնաճյուղերը շարունակելու էին գործել Կովկասում և ՌՄԴԲԿ տեղի կազմակերպությունների հետ դասակարգային պայքար էին մղելու բուրժուազիայի և նրա պաշտպան ցարական ինքնակալության դեմ՝ հանուն աշխատավորների սոցիալական ազատագրության, իհարկե՝ պարտադիր պահպանելով կազմակերպության ինքնուրույնությունը և չլքելով Թուրքահայոց դատը:

Շատ չանցած՝ պարզ դարձավ, որ նույն տեսակետներին են նաև հնչակի համարյա բոլոր Թուրքահայ անդամները, ինչպես նաև կովկասյան մի քանի մասնաճյուղեր: 1896թ. տեղի ունեցած բաժանումից ի վեր ո՛չ հին հնչակը և ո՛չ էլ վերակազմյալ հնչակյան կուսակցությունը չէին կարողանում գլուխ բարձրացնել ներկուսակցական անկայունությունից ու պարբերաբար տեղի ունեցող ցնցումներից: Ահա թե ինչու հնչակյանների շարքերը, լավ բան չսպասելով կուսակցության երկրորդ բաժանումից, հանդես եկան վերոհիշյալ շրջաբերականի դեմ:

Ահա այսպիսի իրադրության մեջ, 1905թ. սեպտեմբերին Փարիզում տեղի ունեցավ Հնչակյան կուսակցության **հինգերորդ պատգամավորական արտակարգ ժողովը**, որը տևեց ավելի քան մեկ ամիս:

Կենտրոնի բոլոր անդամները՝ Արամ (Գրիգոր) Աչրկպաշյանը, Սիմոն Տաշիրյանը, Եփրեմ Կաճարյանը, Ավետիս Նազարբեկը և Ռուբեն Խանազատը մի քանի տեղերից հեռագրերով կամ նամակներով պատգամավորական մանդատներ էին ստացել: Դրսից եկածներն էին՝ Սարգիս Քալաշյան-Ահրիմանը (Բաքվի ու Սիմֆերոպոլի մասնաճյուղերի կողմից), Արշակ Դավթյանը (Թիֆլիսից), Գրիգոր Վարդանյանը (Բաթումից), Մելիք Մարգարյանը (Հյուսիսային Կովկասից), Հակոբ Ղազարյան-Լազոն (Կովկասից), Արամ Շուշանյանը (Երևանից), Սիսակ Տեր-Սիմոնյանը (Շիրակի շրջանից), Ռուբեն Կարապետյանը (Ամերիկայից), Արամը (Ամերիկայի մի այլ շրջանից)[1]:

Այսպիսով, ժողովին ներկա էր 14 պատգամավոր, բայց քանի որ նրանց մեջ կային երկուական ձայնի իրավունք ունեցողներ, ուստի բոլոր ձայների ընդհանուր թիվը 18 էր:

Պաշտոնական նիստերը դեռ չսկսած՝ պատգամավորներն արդեն երկու մասի էին բաժանվել և սկսել բուռն, անզիջում վեճեր:

Վիճաբանությունների կենտրոնում կուսակցության երկվության հարցն էր: Նազարբեկյանին հետևող պատգամավորները մատնացույց էին անում

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 101, թ.2:

կուսակցության մեջ գոյություն ունեցող անլուծելի հակասությունը, գտնելով, որ հակասական սկզբունքների վրա խարսխված ցանկացած կուսակցություն, ի վերջո, կանգնում է իր տեղին հարմար որոշակի սկզբունքների վրա կամ բոլորովին փլուզվում է՝ որպես կյանքի իրական պահանջներին չհամապատասխանող մարմին:

Վճռականապես մերժելով հնչակյան կուսակցության երկվության տեսակետը՝ Սապահ-Գյուլյանի կողմնակիցներն ասում էին, թե «հավատափոխ քննադատները» ձգտում են կուսակցությունը ձուլել ՌՄԴԲԿ-ի մեջ, որպեսզի, այդպիսով, ձեռնթափ լինեն տաճկահայկական խնդրից: Անձամբ Սապահ-Գյուլյանը նշում էր. «Ասում են, թե կուսակցության մեջ երկվություն կա, քանի որ նա Կովկասում սոցիալիստ է, իսկ Տաճկահայաստանում՝ ազգայնական: Կա՞, իրոք, հնչակյան կուսակցության մեջ երկվություն: Մեր պատասխանն է՝ ոչ: Ոչ մեր դավանած սկզբունքների և ոչ էլ մեր քսանամյա գործունեության մեջ կա հակասություն: Մենք նացիոնալիստներ չենք եղած և չենք, Ռուսաստանի և Տաճկաստանի մեր գործունեության մեջ հակասություն չէ եղած և չկա: Երկու տեղում էլ մենք սոցիալիստներ ենք եղած և ենք»[1]:

Դեռ ժողովը սկսելուց առաջ ծավալված վիճաբանությունները ցույց էին տալիս, որ պատգամավորների մեծ մասը կողմնակից է շրջաբերականի դրույթներին:

Ժողովն սկսվեց՝ օրակարգում ունենալով երկու հարց. 1. Քննության առնել Նազարբեկի ու Խանազատի առաջարկները և ընդունել համապատասխան որոշում, 2. Ընտրել կուսակցության ղեկավար մարմնի՝ կենտրոնական վարչության նոր կազմ:

Նախքան ժողովի պաշտոնական բացումը ծայր առած վեճերը նոր թափ առան օրակարգի առաջին հարցի քննարկման ժամանակ: «Մարդիկ, - գրել է Ռ. Խանազատը, - խոսում-ճառում էին անվերջ, հաճախ չեղվելով նյութից, որպեսզի կարողանան միմյանց խոսք հասկացնել: Դա շատ տարօրինակ էր, բայց այլ կերպ չէր լինում, որովհետև կային այնպիսի պատգամավորներ, որոնք մինչև իսկ ծանոթ չէին հնչակյան կուսակցության ծրագրին»[2]:

Օրակարգային հարցի քննարկումը չափազանց ձգձգվում էր, իսկ վիճաբանությունների վերջը չէր երևում: Դրա հետևանքով առաջացել էր ջղային, նյարդայնացնող մթնոլորտ: Վեճերից հիասթափված երկու նազարբեկյանական պատգամավորներ (Սարգիս Քալաշյան և Արամ Շուշանյան) հեռացան համագումարից և վերադարձան Կովկաս: Նրանց հեռանալով նազարբեկյանական պատգամավորները մնացին փոքրամասնության մեջ, և դա ճակատագրական եղավ կուսակցության համար:

Հնչակյան կուսակցության որդեգրած ծրագրային դրույթների հետևողական պաշտպանությամբ հանդես էին գալիս Սապահ-Գյուլյանը և նրա կողմնակիցները: Կտրականապես մերժելով նոր ժամանակներում հնչակյան կուսակցության գործունեության մեջ արմատական փոփոխություններ կատարելու Նազարբեկի և Խանազատի առաջարկները՝ ընդդիմախոսները բերում էին մի շարք պատճառաբանություններ:

Նրանք գտնում էին, որ ընդունել Նազարբեկի և Խանազատի տեսակետները, նշանակում է կուսակցության հիմնական ուժերը տրամադրել Կովկասին, հետևաբար՝ լքել Թուրքահայոց դատը: Մեղադրում էին նաև այն բանում, որ նրանք կուրորեն ընդօրինակել են Թուրքահայոց դատի նկատմամբ հայ սոցիալ-դեմոկրատների տեսակետը, ըստ որի պետք է հրաժարվել այդ դատի լուծման համար մինչ այժմ անցած ուղուց և նրա ճակատագիրը սերտորեն շաղկապել օսմանյան կայսրության ժողովուրդների համընդհանուր հակասուլթանական պայքարին, որի հաղթանակի դեպքում միայն կարելի է հասնել Թուրքահայոց ազգային ազատագրությանը: Այդ տեսակետը նրանք համարում էին անիրագործելի, համենայն դեպս, առաջիկա տասնամյակներում և գտնում էին, որ Թուրքահայությունը, հրաժարվելով մասնակի ապստամբական գործողություններից, պետք է զինվի հիմնավորապես և նախապատրաստվի ընդհանուր զինված ապստամբության:

Ստեփան Սապահ-Գյուլյանը և նրա կողմնակիցները վճռականապես հանդես էին գալիս նաև Կովկասում հնչակի այն նոր դերակատարման գաղափարի դեմ, որ առաջարկում էին Նազարբեկը և Խանազատը, այն է՝ անընդունելի էին համարում կուսակցության կովկասյան մասնաճյուղերը ՌՄԴԲԿ մեջ ձուլելու առաջարկը: Նրանք չէին կասկածում, թե Կովկասում գործող հնչակյանները դրանից անմիջապես հետո պարտավոր են լինելու լքել Թուրքահայ դատը, որի համար ստեղծվել էր կուսակցությունը և պայքարի ճանապարհին տվել հազարավոր նահատակներ:

Սապահ-Գյուլյանը նշում էր. «Մենք քսան տարի գործել ենք Տաճկահայաստանում, երեք հարյուր հազար կոտորածի հետ տվել ենք և՛ մեր ամենաթանկագին ընկերները, - մենք այդ բոլորը մոռանանք և Կովկասի հայ պրոլետարիատին ձեռնպահություն քարոզենք, նրան ասենք, որ սահմանից այն կողմը իրեն համար ոչինչ չկա - մենք այդպիսի եղեռնագործություն չենք կարող գործել ...»[1]: Եթե հրաժարվենք կուսակցության առաքելությունից, ասում էր նա, ապա կարժանանանք ոչ միայն Թուրքահայության, այլև եվրոպական բարեկամների նախատինքին ու արհամարհանքին: «Մենք՝ որպես սոցիալիստներ, չենք կարող անտարբեր մնալ, երբ շատ երկրների մեջ գտնվող սոցիալիստներն անգամ ճիչ են բարձրացնում մի մարտիրոսվող ժողովրդի համար»[2]:

---

[1] «Հնչակ», N 2, փետրվար, 1907թ.:
[2] «Հայրենիք», N 7 (79), մայիս , 1929, էջ 148:

[1] «Հնչակ», N 2, փետրվար 1907թ.:
[2] Նույն տեղում:

Խոսք էր գնում այն մասին, որ ավելի քան 60 հազար Թուրքահայ տղամարդիկ, հիմնականում երիտասարդ ձեռքեր, եկել են Կովկաս, Ռուսաստան և չարքաշ աշխատանքով վաստակած գումարներն ուղարկում են Թուրքական գեհենում մնացած, սովի ճիրաններում տառապող իրենց հարազատներին: Պատգամավորական ժողովի օրերին «Երիտասարդ Հայաստան» թերթը գրում էր.

«Ի՞նչ կը ստեղծուեր, եթե ռուս սոց.-դեմ. կուսակցությունը հրահանգեր նաև նրանց, որ դասակարգային պայքարեն դուրս ո՛չ մեկ չարժումի մասնակցին: Այնատեն Ռուսաստան գտնուող տաճկահայությունը ոչ մեկ օգնություն պիտի կրնար տալ իր հարազատներուն: Անոնք պիտի լքեին տաճկահայ դատը, որ դատն էր իր ծննդավայր հայրենիքին, օճախն էր իր նախահայրերուն»[1]:

Հնչակն իր գործունեությունը Կովկասում պետք է շարունակի Նախկինի պես, - այս էր միտքը: Այսինքն՝ կովկասահայ հնչակյաններն ամեն ինչ անելու են աջակցելու Թուրքահայ ժողովրդի ազատագրական պայքարին, որին մասնակցություն են բերելու ռուսահայության բոլոր հատվածները և խավերը, այդ թվում նաև՝ ռուսահայ բուրժուազիան: Եթե վաղը կովկասյան իշխանությունը փորձի հայ ժողովրդից խլել նրա ազգային իրավունքները (դպրոց, եկեղեցի, կալված), բնական է, որ այդ իշխանության դեմ հանդես են գալու ոչ միայն հայ պրոլետարները, այլև հայ դրամատերերը[2]:

Այս միտքը հաստատելու համար բերվում էր նաև այն փաստը, որ Կովկասում Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ «Հայ բուրժուազիան և հայ պրոլետարիատը մեկ կողմ դրին, մոռացան իրենց դասակարգային շահերի խտրականությունը և միասին կանգնեցին հայ ժողովրդի գոյության սպառնացող վտանգին դեմ: Ի՞նչ կը լիներ հետևանքը վերջին թաթարական կռիվներուն, երբ հայ կազմակերպությունները բացառապես կախում ունենային ռուս. սոց.-դեմ. կազմակերպություններեն և նրանց մեջ ձուլուած լինեին»[3]: Ավելին, եթե հնչակը ձուլվի ՌՄՌԿ-ին, ապա նրանից կանջատվեն արտասահմանյան մասնաճյուղերը (Ամերիկա, Եգիպտոս, Լիբանան, Բալկաններ), որոնք կազմված են բացառապես Թուրքահայ պանդուխտներից և գաղթականներից՝ չխոսելով արդեն բուն Թուրքիայում ունեցած մասնաճյուղերի մասին:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ քննարկումները վերջանալուց հետո քվեարկության դրվեց բանաձևի երկու առաջարկը: Նազարբեկյանական երկու պատգամավորների հեռանալուց հետո նրանց համախոհները, ինչպես ասվեց, հայտնվել էին փոքրամասնության մեջ: Մեծամասնությունը գտավ, որ Նազարբեկի և Խանազատի առաջարկներն ընդունելու դեպքում կուսակցությունն անխուսափելիորեն կգնա դեպի լուծարում: Հարցը դրվեց, և ժողովը 8 ձայնով ընդդեմ 7-ի ընդունեց հականազարբեկյանական առաջարկը հետևյալ

[1] «Երիտասարդ Հայաստան», N 17, 13 սեպտեմբերի 1905թ.:
[2] «Պատմութիւն Ս.- Դ. Հնչակեան կուսակցութեան». հատ. Ա, էջ 292:
[3] Նույն տեղում:

ձևակերպումով. «Կովկասի մեջ պրոլետարական հեղափոխական գործունեություն, իսկ Թուրքահայաստանի մեջ պայքարիլ և ձեռք բերել քաղաքական դեմոկրատի՝ հիմնավորված մարքսեան սկզբունքներով»[1]: Դա նշանակում էր, որ կուսակցությունը, հարազատ մնալով իր ծրագրին, շարունակելու է գործել որպես մի ամբողջություն՝ ընդհանուր կենտրոնով, մի պաշտոնական օրգանով («Հնչակ»), մի ընդհանուր գանձարկղով: Կուսակցության առաջին խնդիրը Նախկինի պես մնում էր Թուրքահայոց դատի լուծումը, իսկ նրա կովկասյան կազմակերպությունները շարունակելու էին գործել սոցիալ-դեմոկրատական սկզբունքներով՝ համերաշխ ՌՄՌԿ տեղական կազմակերպությունների հետ: Դրանով իսկ պահպանվում էր կուսակցության երկյակ, հակասական վիճակը՝ անհարիր երկու տարբեր սկզբունքով ու դավանանքով:

Պատգամավորական ժողովն իր աշխատանքների ավարտից առաջ ընտրեց կենտրոնական վարչություն հետևյալ կազմով՝ Մուրատ Պոյաճյան (Մեծն Մուրատ)*, Վահան Մամիկոնյան**, Ստեփան Սապահ-Գյուլյան: Վերջինս նաև վարելու էր «Հնչակի» խմբագրի պաշտոնը***:

Ժողովը փրկեց կուսակցությունը, որը շարունակեց գործել իր պաշտոնական ծրագրով, նախկին գաղափարախոսությամբ ու տակտիկայով: Բայց հետագա պառակտումների դուռը չփակվեց:

Փոքրամասնության մեջ մնացածները, տեսնելով իրենց մտադրությունների ձախողումը, խմբովին թողեցին ու հեռացան պատգամավորական ժողովից, նախապես համագումարի նախագահությանը նամակով պատճառաբանելով, թե ինչու են հրաժարվում մասնակցել ժողովի հետագա աշխատանքներին[2]:

Փոքրամասնության այդ քայլը Սապահ-Գյուլյանը և նրա կողմնակիցները որակեցին որպես դասալքություն և հայտարարեցին, որ առաջվա պես իրենք աներեր գնալու են Թուրքահայության ազատագրության ճանապարհով:

«Ես մինչև վերջ հավատարիմ կը մնամ իմ ընդ գրկած դրոշիս - ու՛ր և ի՞նչ տեղ էլ որ լինեմ, իմ սիրելի գաղափարներիս պաշտպանը կը մնամ, - շեշտում էր Սապահ-Գյուլյանը: - ... Ես մոռացա ինձ, մոռացա կինս ու զավակներս՝ հասարակական գործի համար ...»[3]:

Իսկ ո՞ւմ հետ չէին իրենց հույսը կապում Սապահ-Գյուլյանը և նրա համա-

* «Ցիանամեակ (1887-1937) սոց.-դեմ. Հնչակեան կուսակցութեան», հատ.Ա, էջ 202-203: Մուրատ Պոյաճյանը կենտրոնական վարչության կազմում ընտրվեց հեռակա կարգով, քանի որ գտնվում էր Տրիպոլիի աքսորում:
** Վահան Մամիկոնյանը (Մ. Թախթաճյան), Հնչակյան անվանի գործիչներից էր, որը տարիներ շարունակ կուսակցական եռանդուն գործունեություն էր ունեցել Կովկասում, Ամերիկայում, Պարսկաստանում:
*** «Հնչակի» խմբագրի պաշտոնից Նազարբեկի հեռանալուց հետո, թերթը, մինչև Սապահ-Գյուլյանի նշանակումը, խմբագրել էին Երվանդ Պալյանը, Հմայակ Խուչպուլյանը, Սեդրակ Բանվորյանը:
[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4045, ց.1, գ. 96, թ.թ.1-8:
[2] Բերուզ Սապահ-Գիւլեան, Կենսագրութիւն Ս. Սապահ-Գիւլեանի, Ունիոն Սիթի, 1936, էջ 38:

խոհները, որպեսզի թուրքական բռնակալության դեմ կռիվը շարունակեն նախկինի պես: Հարցի պատասխանը տալիս էր ինքը՝ Սապահ-Գյուլյանը: «Եվրոպա, Թուրքիա և հայկական խնդիր» հոդվածում նա գրում էր, որ եթե հայերը իրենց պայքարում որևէ երկրից աջակցություն են ստանալու, ապա դա լինելու է Անգլիան, որի «քաղաքականությունը հարձակողական է, դեմ է status quo*-ն պահպանելուն», և որը միշտ «անկեղծ կերպով ձգտել է հայկական խնդրի լուծմանը»: Հաշվի չառնելով պատմական փորձը՝ նա ընթերցողներին ուզում էր համոզել, թե Անգլիան «ո՛չ մեզ խաբել է, ո՛չ իզուր հուսադրել և ո՛չ էլ մեզ իր խաղալիք դարձրել. իրողությունն այն է, որ անգլիական քաղաքական շահը կցվում, հարմարվում է հայկական շահին, և միշտ էլ Անգլիան կմնա մեր բարեկամը, հայկական խնդրի բարեհաջող լուծմանը աշխատող մեծ ազգ»[1]:*

Նազարբեկյանական պատգամավորները հենց Փարիզում հավաքվեցին առանձին խորհրդակցության՝ որոշելու համար իրենց հետագա անելիքները: Որոշվեց հնչակյան շարքերին ուղղված մի հատուկ կոչ հրատարակել և բացատրություն տալ կատարվածի մասին: Բայց անմիջապես բարձրացավ այն հարցը, թե ՌՄԴԲԿ հետ միանալիս ո՞ր թևին պետք է հարել՝ մենշևիկների՞ն, թե՞ բոլշևիկներին: Կարծիքները բաժանվեցին:

Երկար վիճելուց ու խորհրդակցելուց հետո, - գրել է Ռ.Խանազատը, - որոշեցինք հետևել Մարտովի մեզ տված խորհրդին, այն է՝ ընդունելով ռուսաց սոցիալ-դեմոկրատ բանվորական կուսակցության ծրագիրն ամբողջությամբ, մնալ ինքնուրույն, սպասելով մինչև որ համերաշխություն կստեղծվի բոլշևիկների և մենշևիկների միջև, որը և նրանց թույլ կտա հնչակի վերաբերյալ ընդունել ճիշտ որոշում[2]:

Ընդհանուր եզրակացության գալուց հետո հնչակից հեռացած ընկերները դիմեցին Ա. Նազարբեկին՝ խնդրելով կազմել կոչի տեքստը: Կարճ ժամկետում Նազարբեկը կատարեց ընկերների խնդրանքը և կազմեց փաստաթուղթը՝ «Մանիֆեստ հնչակյան մասնաճյուղերին» վերնագրով[3]:

Փաստաթղթում նկարագրված էր պատգամավորական ժողովի ընթացքը, վերհանված էին հարցերի քննարկման ընթացքում ծագած հակասությունները, շեշտված էր, որ ժողովում լիովին բացահայտված է, որ հնչակյան կուսակցության ծոցում գոյություն ունի երկու հոսանք՝ մեկը մյուսից բոլորովին տարբեր, մեկը մյուսին բացառող սկզբունքներով, աշխարհայացքով և գործունեությամբ: Ելնելով դրանից՝ մանիֆեստը Կովկասի հնչակյան մասնաճյուղերին կոչ էր անում դուրս գալ հնչակյան կուսակցությունից և միանալ

[1] **«Հնչակ»**, *N 7, 1907թ.:*
[2] **ՀՀ ՀԱԿՓԿԳԱ**, *ֆ. 4045, ց.1, գ. 91, թ.թ.1-3:*
[3] *Նույն տեղում, գ. 96, թ.թ.1-8:*

ՌՄԴԲԿ հետ[1]:

Մանիֆեստը ստորագրել էին Ավետիս Տեր-Սիմոնյանը, Ռուբեն Խանազատը, Ստեփան Եղիազարյանը, Գրիգոր Վարդանյանը և Արշակ Դավթյանը:

Այլևս Փարիզում մնալը ավելորդ համարելով՝ նազարբեկյանական պատգամավորները մեկնեցին Կովկաս:

Դրանից հետո ժողովը (սապահգյուլյանական ութ հոգին) ընդունեց նաև մի ուրիշ որոշում ելնելով այն բանից, որ թուրք-հայկական ընդհարումների ժամանակ կովկասահայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման ընթացքում հայ ազգային-հեղափոխական երկու կուսակցությունները՝ հնչակը և դաշնակցությունը, միևնույն ազգօգուտ գործն են կատարում, և որ այդ հողի վրա ստեղծվել են նախադրյալներ հետագայում նույնպես համատեղ գործելու, մյուս կողմից, նկատի առնելով, որ հայ կուսակցությունների միջև շարունակվում են անթույլատրելի հակասություններ, որոնք նույնիսկ հանգեցնում են եղբայրասպան դեպքերի, պատգամավորական ժողովը հանձնարարեց կուսակցության նորընտիր կենտրոնին՝ բանակցություններ սկսել դաշնակցության ղեկավարության հետ՝ համատեղ կարևոր համաձայնություններ կայացնելու համար[2]:

«Պարտություն կրած» պատգամավորները ավելի շուտ վերադարձան Կովկաս, քան կհասնեին ժողովի որոշումները: Այստեղ նրանք մեկը մյուսի հետևից հանդես եկան հայտարարություններով՝ հնչակյան կուսակցությունից դուրս գալու և ՌՄԴԲԿ-ի մեջ մտնելու մասին:

Այսպես, օրինակ՝ Սարգիս Քալաշյանը (Ահրիման), այդպիսի հայտարարություն տալուց բացի[3], դիմում հղեց իրեն պատգամավորական ժողով ուղարկած Բաքվի շրջանի կոմիտեի անդամներին՝ բացատրելով կատարած քայլի պատճառները, կոչ անելով հետևել իր օրինակին: Միաժամանակ նա շեշտում էր, որ, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության շարքերը մտնելով, ինքը և իր համախոհները քաջ գիտակցում են, որ ենթարկվելու են ավելի մեծ վտանգների ու ավելի դաժան փորձությունների: «Այո, սրանից հետո ծանր են մեր կռվի պայմաններն ու միջոցները, բայց մի՞թե դրանում մեղավոր ենք մենք: Բարբարոս ու անխիղճ կյանքը մեզ նետում է դու մարտադաշտը՝ կռվելու-կործանելու ներկա հասարակության բոլոր հակամարդկային

[1] **ՀՀ ՀԱԿՓԿԳԱ**, *ֆ. 4045, ց.1, գ. 91, թ.թ.1-3: Քանի որ «Մանիֆեստը» ստորագրած բոլոր գործիչները, բացի Նազարբեկից, պատրաստվում էին վերադառնալ Կովկաս, փաստաթուղթը հանձնվեց Ռ. Խանազատին՝ Թիֆլիսում այն տպագրության հանձնելու և այնտեղի ընկերների միջոցով հնչակյան բոլոր մասնաճյուղերին ցրելու համար: Բայց կոչը լույս չտեսավ, իսկ դրա մշակված ընագիրը Թիֆլիսում ընկավ ժանդարմների ձեռքը: Բարեբախտաբար Ռ. Խանազատը պահպանել էր փաստաթղթի սևագրությունը, որը տպագրության հանձնվեց տարիներ հետո:*
[2] *Տե՛ս Հնչակյան կուսակցության V պատգամավորական ժողովի նյութերը՝* **ՀՀ ՀԱԿՓԿԳԱ**, *ֆ. 4045, ց.1, գ. 90, թ.թ.1-12:*
[3] **ՀՀ ՀԱԿՓԿԳԱ**, *ֆ. 4045, ց.1, գ. 91, թ.թ.4-5:*

հիմքերը և կառուցվածքները, անդադար, անխնա, անձնազոհ կռիվ մղել երկու խոշոր հրեշների դեմ կապիտալի և պետության»[1]:

Ս. Քալաշյանի դիմումը հետագա շարունակություն ունեցավ: Շատ չանցած, 1905թ. նոյեմբերի 11-ին, Հնչակյան կուսակցության Բաքվի շրջանի կոմիտեն հայտարարեց կուսակցության շարքերից խմբովին դուրս գալու և ՌՄԴԲԿ-ին միավորվելու մասին: Հայտարարության մեջ անդրադարձ կատարելով վերջին մեկ-մեկուկես տարվա ընթացքում Բաքվի Հնչակյանների գործունեությանը՝ կոմիտեն հիշեցնում էր, որ 1904թ. սեպտեմբերին տեղի ունեցած կուսակցական կոնֆերանսը, քննարկելով կազմակերպության «Նոր գործունեության» մասին փաստաթուղթը, որը Հնչակյան շարքերին կոչ էր անում «Կովկասում գործել միայն ու միայն սոցիալ-դեմոկրատական հողի վրա», Բաքվի շրջանի Հնչակյանների ժողովը, ձայների մեծամասնությամբ, հավանություն էր տվել բանվորասոցիալիստական գծին և որոշել էր կապերը խզել հայ դատից և միանալ ՌՄԴԲԿ-ին: Դրան հակառակ, «բուրժուազգայնական» Հնչակյանները, չընդունելով ու չընդունելով դասակարգային սկզբունքը, իրենց իսկական գույնը ծածկել են «սոցիալիզմ» և «սոցիալ-դեմոկրատիզմ» դիմակների տակ և, հակառակ կոնֆերանսի որոշման, «ձգտում են պահպանել կուսակցության ամբողջականությունը՝ իր դուալիզմով ու հակասություններով հանդերձ»: Այդ հոսանքին հետևողներն ավելի ոգևորվեցին, երբ հինգերորդ արտակարգ պատգամավորական ժողովը նույնպես մերժեց «Նոր գործունեության» անցնելու հրատապ պահանջը: Նման իրավիճակում, երբ երկու հոսանքներից որևէ մեկը տրամադիր չէ զիջելու իր դիրքերը, արդեն ավելորդ է դառնում նրանց մնալը նույն կազմակերպության մեջ: Հետևապես, այնուհետև ասված էր հայտարարության մեջ, սոցիալ-դեմոկրատ Հնչակյանները հեռանում են կուսակցությունից և համալրում ՌՄԴԲԿ շարքերը[2]:

Սույն հայտարարությունից զատ, արդեն «Հնչակյան կուսակցության նախկին Բաքվի շրջանի կոմիտե» անվամբ նոյեմբերի 16-ին տպագրվեց ու տարածվեց հատուկ «Ազդ», որով, ավելի հակիրճ ու ավելի ըմբռնելի, շարքերին կոչ էր արվում չտատանվել, առանց ափսոսանքի հեռանալ կուսակցությունից և միանալ ՌՄԴԲԿ -ին[3]:

ՌՄԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեի օրգան "Кавказский рабочий листок" թերթը, տպագրելով Հնչակյանների Բաքվի կոմիտեի հայտարարությունը, ողջունեց ընդունած որոշումը և հույս հայտնեց, որ նրա օրինակին կհետևեն Հնչակի ուրիշ կազմակերպություններ ևս: «Այնտեղ, որտեղ կազմակերպությունները չեն կարող ամբողջությամբ միանալ ՌՄԴԲԿ-ին, - նշում էր թերթը, - մենք հրավիրում ենք առանձին սոցիալ-դեմոկրատ ընկերներին

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4045, ց.1, գ. 101, թ. 3:
[2] Նույն տեղում, գ. 103, թ. 5:
[3] Նույն տեղում, գ. 94, թ. 2:

խզել իրենց կապերը Հնչակյաններից և մտնել մեր կազմակերպությունները»[1]:

Քարիզից վերադարձած Հնչակյան պատգամավորներին հաջողվեց կարճ ժամանակում (բացի Բաքվից) ուրիշ տեղական բազմաթիվ կազմակերպություններում ևս որոշումներ ընդունել տալ իրենց տեսակետների օգտին: Դրանցից էին Երևանի, Շուշիի, Թիֆլիսի և այլ մասնաճյուղերը*:

1905թ. նոյեմբերի 17-ին Սիմֆերոպոլի Հնչակյան մասնաճյուղի անդամների ժողովը հանդես եկավ խմբովին Հնչակյան կուսակցությունից դուրս գալու և ՌՄԴԲԿ շարքերն անցնելու մասին որոշմամբ[2]: Նման որոշում ընդունեց նաև Երևանի 53 Հնչակյանների՝ դեկտեմբերի 18-ին տեղի ունեցած ժողովը[3]:

Փաստորեն Կովկասում միայն Սև ծովի ափերին գտնվող Հնչակյան մասնաճյուղերն էին, որ հարազատ մնացին կուսակցության ծրագրին, որովհետև նրանց թե՛ անդամները և թե՛ ղեկավարները հիմնականում տաճկահայեր էին:

Ռուսաստանից և Կովկասից դուրս գտնվող Հնչակյան մասնաճյուղերը չպառակտվեցին: Թեև հատ ու կենտ բաժանվողներ եղան, բայց հրաժարումները զանգվածային բնույթ չստացան:

Կուսակցության կենտրոնական տպագիր օրգանին՝ «Հնչակ» թերթին, վիճակված էր դժվարին պայքար մղել մի քանի ճակատների վրա՝ վերակազմյալների, դաշնակցականների, «սպեցիֆիկների» դեմ, հիմա էլ՝ նաև Նազարբեկյանների դեմ: Խմբագիր Սապահ-Գյուլյանին հաջողվեց մեծ համառությամբ ու փորձառությամբ կազմակերպության ծրագրային նպատակների շուրջ համախմբել հավատարիմ մնացած մասնաճյուղերը և, դրանով իսկ, մեծապես ամրապնդել իր դիրքերը կուսակցության մեջ**:

Հնչակյան կուսակցությանը վիճակվել էր անցնել արտակարգ դժվարին

[1] "Кавказский рабочий листок", N3, 1905г.
* 1904-1907թթ. ՌՄԴԲԿ մեջ մտած Հնչակյան բանվորներից ու մտավորականներից շատերը հետագա տարիներին աչքի ընկնող գործունեություն ծավալեցին բոլշևիկների շարքերում (Գաբո Սաղաթյան, Սիմոն Սուլթանյան, Պետրոս Մնացականյան, Մինաս Սարգսյան, Արտեմ Աղամալյան, Արամ Շուշանյան, Վարդան Բաղդասարյան և ուրիշներ): Նրանցից ոմանք Խորհրդային Հայաստանում զբաղեցրին պետական բարձր պաշտոններ (Սերգո Մարտիկյան, Աքանազ Մռավյան և ուրիշներ): ՌՄԴԲԿ մեջ մտած Հնչակյանների մի խումբ հարեց մենշևիկներին, իսկ մի ուրիշ խումբ հիշատակված Ս. Քալաշյանի (Ահրիման) գլխավորությամբ հետևեց անարխիստ-կոմունիստներին (տե՛ս Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, էջ 486):
[2] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4045, ց.1, գ. 97, թ. 2:
[3] ՎՀ ՊԿՊԱ, ֆ.5, պ/մ 23, թ. 13 և հակառակ երեսը:
** «Հնչակի» խմբագիր Սապահ-Գյուլյանը մի շարք առիթներով թերթի առաջնորդողներում նշել էր, թե կուսակցությունը բաժանելու ուղղությամբ, բախտի զարմանալի մի խաղով, Ա. Նազարբեկի կատարածը ոչնչով չի տարբերվում այդ ուղղությամբ վերակազմյալների թափած ջանքերից: Իր գրչով, խոսքով ու գործունեությամբ Սապահը, որ փաստորեն դարձել էր կուսակցության առաջին դեմքը, տարիներով պայքարեց տաճկահայկական դատի և կուսակցության ամբողջականությունը պահպանելու համար: Բայց բախտի նույնպիսի զարմանալի մի խաղով, ուղիղ երկու տասնամյակ հետո, 1924թ., կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովում նույն դերը կատարեց, ինչ կատարել էր Նազարբեկը 1905-ի հինգերորդ ընդհանուր պատգամավորական ժողովի օրերին:

ճանապարհ: Իր ստեղծման օրից սկսած՝ կազմակերպությունն ընդհարվել էր ոչ միայն օսմանյան բռնապետության պետական մեքենայի ահռելի ուժին, այլև ստիպված էր եղել անասելի դժվարին պայքար մղել իր ներսում առաջացած կենտրոնախույս ուժերի դեմ պահպանելու համար շարքերի միասնությունը:

Կուսակցության գործունեության ճանապարհի հիմնական խոչընդոտը այն մեծ հակասությունն էր, որ կար նրա որդեգրած սոցիալիստական գաղափարախոսության և թուրքահայության իրական հնարավորությունների միջև: Դավանած գաղափարների և իրական կյանքի այդ անհամապատասխանությունն էր, որ պարբերաբար ծնունդ էր տալիս ներկուսակցական վերիվայրումների ու խոր պառակտումների:

Չնայած դրան, կուսակցությունը շարունակում էր իր դժվարին ուղին, նրա ղեկավարները հանդես էին բերում հազվագյուտ տոկունություն և ազնիվ կեցվածք՝ իրենց մտածումների արտահայտման ու պաշտպանության ընթացքում:

Հնչակյան կուսակցությունը ծանր քննադատությունների է ենթարկվել իր ընդդիմախոսների՝ վերակազմյալների, դաշնակցականների, բոլշևիկների, «սպեցիֆիկների», հայ պահպանողականների ու լիբերալների կողմից, որոնք շատ առումներով եղել են անարդարացի:

1928թ. Թիֆլիսում գրած և ՀՕԿ-ի կողմից 1934-ին Փարիզում հրատարակած «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» հատորում (էջ 148) Լեոն հնչակի վրա էր բարդում անհուն չափերով ծանր մի պատասխանատվություն՝ նրան մեղադրելով երկու միլիոն թուրքահայերի ոչնչացման մեջ: Հայրենասիրությունը կամ ազգասիրությունը չփոթելով ազգայնամոլության հետ՝ նա հանգում էր անընդունելի եզրակացության՝ հայ ազգային-հեղափոխական կուսակցություններին, այդ թվում հնչակին, որակելով որպես ֆանատիկ ազգայնամոլական կազմակերպություններ:

ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼՆԵՐԸ ԾԱՆՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՋԵՎ

Ներկուսակցական պայքարն է՛լ ավելի սուր բնույթ էր ստացել վերակազմյալ հնչակյան կուսակցության մեջ:

Դեռևս 1901թ. վերակազմյալների ղեկավար Արփիար Արփիարյանը հեռացել էր կուսակցությունից: Կուսակիցները նրան մեղադրել էին այն բանում, որ նա հեղափոխության կենդանի գործը փոխարինել է գրական-ստեղծագործական հորինվածքներով, իրենից վանել կուսակցության կարող ուժերին[1]:

Չնայած դրան, կուսակցության գաղափարական սկզբունքներին հավատարիմ գործիչները շարունակում էին ջանքեր գործադրել կազմակերպության հետագա քայքայումը կանգնեցնելու և շարքերի միասնությունը պահպանելու ուղղությամբ:

Հին հնչակը ամուր արմատներ էր գցել Հայկական Կիլիկիայում: 1896թ. հնչակի պառակտումից և վերակազմյալ հնչակյան կուսակցության ստեղծումից հետո Կիլիկիայի հնչակների մեծ մասը աստիճանաբար անցավ վերջինիս շարքերը: Ավելին, վերակազմյալներն այստեղ իրենց այնքան ամուր էին զգում, որ խոստանում էին Թուրքական բռնակալությունից ազատագրել Կիլիկիան և ստեղծել հայոց անկախ պետություն: Դա երազային մի նպատակ էր, որ զբաղեցրել էր կիլիկիահայության շատ սերունդների մտածումները:

Գտնվելով Միջերկրականի եզերքին, ունենալով շատ նպաստավոր աշխարհագրական դիրք՝ անկախ Հայկական Կիլիկիան կարող էր ծովային ուղիներով կապվել տարբեր երկրների ու մայրցամաքների հետ, ակտիվ մասնակցություն բերել համաշխարհային առևտրին, արագորեն զարգանալ տնտեսապես: Այս հեռանկարը ոգեշնչել էր ոչ քիչ թվով թուրքահայ դրամատերերի, որոնք շահագրգիռ էին անկախ Կիլիկիայի հզորացմամբ, երազում էին նոր շուկաներ մտնել և առևտրական լայն ցանց ստեղծել: Դա էր պատճառը, որ Կիլիկիայի անկախության հեռանկարով ոգեշնչված մի խումբ մեծահարուստներ վերակազմյալներին տրամադրում էին զգալի գումարներ:

Բայց կուսակցությանն արվող նվիրատվությունները կտրուկ կրճատվեցին այն բանից հետո, երբ Ամերիկայից եկած վերակազմյալ ահաբեկիչներից մեկը 1905թ. Կ. Պոլսում սպանեց տեղի հայ մեծահարուստներից Արբիկ Ունճյանին: Դրան 1907թ. հաջորդեց ամերիկահայ հարուստ Հովհաննես Թավշանջյանի սպանությունը Նյու Յորքում: Եղան նաև ուրիշ մեծահարուստ հայերի սպանություններ: Ահաբեկչական ակտերը կատարվում էին այն պատճառաբանությամբ, թե զոհերը հրաժարվել են կուսակցությանը տալ պահանջված գումարը: Դեպքերը մեծ հուզում առաջ բերեցին Պոլսի հայ մեծահարուստ դասի մոտ, այն անմիջական անդրադարձ ունեցավ նաև կուսակցության շարքերում: Կուսակցությունը բաժանվեց սպանությունն արդարացնող և դատապարտող խմբավորումների, սկսվեց թայֆայական անզիջում պայքար:

Դեռ մինչև այդ դեպքերը կուսակցության մեջ հանդես էին եկել լուրջ տարաձայնություններ կազմակերպության մարտավարության, կուսակցական շինարարության և այլ հարցերի շուրջ, իսկ Ունճյանի սպանությունն ուղղակի անտանելի դարձրեց ներկուսակցական մթնոլորտը: Դրան գումարվել էին դրամական խոշոր չափերի զեղծումները, որ կատարել էին կուսակցության ղեկավար գործիչներ Ալեքսան Արզույանը (Վահե) և Ղևոնդ վրդ. Մարդուկեյանը:

Չնայած վերակազմյալ հնչակյան կուսակցության պառակտումը կանխելու ուղղությամբ ձեռնարկված քայլերին, սկսված ընթացքը կանգնեցնել չհաջողվեց: Կազմակերպությունը բաժանվեց միմյանց հետ առճակատող երկու թևերի, որոնք ամեն բոլոր պատրաստ էին իրարից զատվել:

[1] Տե՛ս Ա.Ս. Համբարյան, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908թթ.), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1999, էջ 122-123:

ԸՆԴԻՄԱԴԻՐ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Դաշնակցությունը ռուսական առաջին հեղափոխությանը դիմավորեց՝ իր թիկունքում ունենալով գաղափարական դժվարին պայքարի և հերոսական մաքառումների 15 տարիներ:

Հայաստանի ազատագրության գործին անմնացորդ նվիրումը, աներեր հավատը որդեգրած գաղափարներին, 1895-96թթ. և հետագա տարիների ինքնապաշտպանական կռիվների, Սասունի երկրորդ ապստամբության կազմակերպումն ու ղեկավարումը, ռուսական պետության կողմից հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման դեմ համաժողովրդական ըմբոստության գլխավորումը և բազմաթիվ ուրիշ գործողություններ ցույց էին տվել, որ դաշնակցությունը կենդանի գործի կուսակցություն է: Ժողովրդի հիմնական զանգվածները գնում էին նրա հետևից, և նա իրավամբ դարձել էր հայ իրականության ամենահզոր ու ներգործուն քաղաքական ուժը:

Սակայն 1905-1907 թվականներին Հ.Յ. դաշնակցությանը վիճակված էր ապրել ներքին ալեբախումների ու ցնցումների, խոր փոփոխությունների և արմատական վերափոխումների ժամանակաշրջան: Պահը բախտորոշ էր նույնիսկ կուսակցության ապագայի տեսակետից, քանի որ ներկուսակցական սուր հակասությունները Հ.Յ.Դ.-ին կանգնեցրել էին պառակտման ու կոտորակման վտանգի առջև:

Դաշնակցության շարքերում ստեղծված գաղափարական-քաղաքական ծանր կացության և հակասությունների առաջացման պատճառները տարբերություն էին: Այդ հակասությունները խմորվել էին նախորդ տարիներին և սպասում էին իրենց բնականոն լուծմանը, բայց կուսակցության ղեկավարությունը ժամանակին միջոցներ չէր ձեռնարկել ներկուսակցական կյանքում առաջ եկած դժվարությունները հաղթահարելու համար: Պատճառը հայտնի էր. մանավանդ Կովկասում դեպքերն այնքան արագ էին զարգանում և այնքան բուռն, որ ժամանակ չէր մնում նվիրվելու ներկուսակցական կյանքին:

Կուսակցությունը շարունակում էր գլխավորել արևմտահայության ազատագրական պայքարը: Ղեկավարելով Սասունի 1904թ. ապստամբությունը՝ միաժամանակ նա կովկասահայության շրջանում հսկայական ջանքեր էր գործադրում կազմակերպելով օգնություն ու աջակցություն թուրքական բռնակալության դեմ անհավասար կռիվ մղող ապստամբներին:

Այդ ամենը, բնականաբար, կլանել էր Հ.Յ.Դ. վերադաս մարմինների ողջ ուշադրությունը և ժամանակ չէր թողել մոտիկից ու հանգամանորեն զբաղվելու ներկուսակցական խնդիրներով:

Ներկուսակցական կնճիռներին գումարվեց «Կովկասյան նախագիծը», այսինքն՝ կուսակցության ծրագրի (1892թ.) վերամշակման նպատակով ստեղծված այն փաստաթուղթը, որն, ըստ էության, Հ.Յ.Դ. նոր ծրագրի ստեղծման հիմքը պիտի լիներ: Այդ փաստաթուղթը դարձավ կուտակված դժգոհությունների արտանետման և՛ առիթ, և՛ պատճառ: Այն իրենով նշանավորեց դաշնակցության ներսում կրքերի սկված փոթորկումների, անհամաձայնությունների ու տարընթաց առճակատումների մի նոր փուլ:

Հ.Յ. դաշնակցության շարքերում հակամարտ կողմերի պայքարի կենտրոնում կուսակցության գաղափարական-քաղաքական վերակողմնորոշման խնդիրն էր: Դեպքերի բերումով ազգային-հեղափոխական կուսակցությունը կարիք էր զգում ընդգծելու իր սոցիալիստական բնույթը, վերաքննելու ծրագիրը և ձեռնարկելու այն նոր խնդիրների կատարումը, որ առաջադրել էր կյանքը:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ (1892 Թ.) ՎԵՐԱՄՇԱԿԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ: «ԿՈՎԿԱՍՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ» ՀՐԱՊԱՐԱԿ ԴԱԼԸ: ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչո՞ւ էր առաջացել դաշնակցության առաջին ծրագիրը (1892թ.) վերամշակելու անհրաժեշտությունը: Ինչո՞ւ պահանջ առաջացավ նրանում ավելի հստակ, ավելի լրիվ ու մշակված արտացոլել սոցիալիստական գաղափարները: Չէ՞ որ չէին փոխվել հեղափոխական գործունեության պայմանները Թուրքահայաստանում, և շարունակվում էր սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականությունը: Օսմանյան կայսրության մեջ տեղի չէին ունեցել սոցիալ-տնտեսական արմատական փոփոխություններ, չէին թուլացել ազգամիջյան հակասությունները, հայության վիճակը ոչ միայն չէր թեթևացել, այլև նորանոր հարվածներ էր կրում առջևը չտեսնելով որևէ լուսավոր կետ:

Ապա ինչո՞ւ, իսկապես, անհրաժեշտություն ծագեց ունենալու վերամշակված, ըստ էության, նոր ծրագիր:

Առաջին. մեծապես փոխվել էր ռուսահայ ժողովրդական զանգվածների վերաբերմունքը դեպի սեփական ազգային արժեքները և սոցիալ-տնտեսական հարցերը: Նրանց քաղաքական և ազգային գիտակցությունը տարիներ առաջ գտնվում էր ստորին աստիճանի վրա, խաթարված վիճակում: Նրանք ռուսական տիրապետությանը, նույնիսկ գոլիցինյան մղձավանջի պայմաններում, համարում էին մեծագույն բարիք հայության համար: Ռուսականության պաշտամունքը կովկասահայ ունևոր ընտանիքներում հասել էր ազգային արժանապատվության ստորին աստիճանին:

Այդ երևույթը վերլուծելով՝ Արշակ Ջամալյանը հետևյալ դիտարկումն է արել.

«Իհարկէ, կարելի է ե՛ւ ռուսասէր լինել, ե՛ւ սեփական ազգային ճակատագրի նախանձախնդրութիւն ունենալ: Բայց խնդիրն այն է, որ ռուսահայության մէջ – մեր խօսքը ժողովրդական զանգուածների մասին է, անշուշտ – ոչ

միայն բացակայում էր այս նախանձախնդրութիւնը, այլ եւ նա չէր գգում ցարական բռնապետութեան ծանրութիւնը: Նրա մէջ դեռ այնքա՜ն թարմ էր պարսիկ ֆարրաշների եւ թուրք զաֆթիէների յիշողութիւնը...»[1]:

Ընդմիշտ այդպես մնալ չէր կարող: Ռուսահայության հոգեկան աշխարհը, նրա բարոյական նկարագիրը ընդամենը 10-15 տարում փոխվել էր արմատապես, փոխվել էր հզոր ուժով՝ հիմնականում թուրքահայ ազատագրական շարժման ազդեցությամբ:

Խոսելով ռուսահայ ժողովրդի ազգային զարթոնքի մասին՝ Արշակ Ջամալյանը, այնուհետեւ գրել է.

«Ռուսահայը, որ մինչեւ այդ շարժումները, լաւագոյն դեպքում, կարեկցութեամբ էր վերաբերւում թուրքահային, որի սրտամորմոք հառաչանքները լսում էին սահմանի միւս կողմից՝ սկսեց ոգեւորուել նրա յեղափոխական գործերով, որոնք, չափազանցուած արձագանքներով, բերնէ-բերան էին անցնում Արարատեան դաշտից մինչեւ Սիւնեաց լեռները: Ի՞նչ առասպել ասէք, որ չէր հիւսւում ռուսահայոց գիւղերում՝ Կարնոյ համեմատաբար աննշան ցոյցի եւ Կուկունեանի արշաւանքի մասին... Հապա Սասունի ու Զէյթունի ապստամբութիւնն՝ը, հապա օտտոմանեան բանկի գրաւումն ու Խանասորի արշաւա՞նքը, հապա Սերոբ փաշայի եւ Անդրանիկի կռիւնե՞ը: Սրանք մի-մի մուրճի հարուածներ էին ռուսահայ ժողովրդի գլխին ու կրծքին՝ նրա ազգային ոգին հրահրելու, նրա ազգային գիտակցութիւնը զարթեցնելու համար»[2]:

Թուրքահայ հեղափոխությունը հենց այն շաղախը եղավ, որ միավորեց հայ ժողովրդի երկու հատվածները, կերտեց նրանց միասնությունը, նպաստեց, որ հրապարակ գա ազգային միության գաղափարը:

Ռուսահայության ազգային զարթոնքի մեջ որոշ դեր խաղացին նաև գոլիցինյան հակահայ վայրագ հալածանքները, որոնք զուգադիպեցին թուրքահայ հեղափոխության ամենաեռուն շրջանին: Եվ եթե ռուսահայությունը տոկունությամբ և վճռականությամբ կարողացավ դիմագրավել այդ արհավիրքներին, եթե հատկապես կարողացավ կռվով հետ բերել ցարական կառավարության կողմից խլված կալվածքները, ապա այդ ամենի համար նա դարձյալ պարտական էր թուրքահայ հեղափոխության կենարար ազդեցության:

Երկրորդ. ռուսական հեղափոխությունը փոթորկվել էր երկրով մեկ, և, ինչպես բոլոր քաղաքական կազմակերպությունները, դաշնակցությունը նույնպես իր դիրքը պետք է որոշեր հեղափոխության և նրա նպատակների նկատմամբ: Դա անհետաձգելի էր նաև այն պատճառով, որ կայսրության ժողովուրդները Պետերբուրգի առջև դնում էին իրենց ազգային պահանջները և ակնկալում դրանց շուտափույթ լուծումը:

Տվյալ պահին ճակատագիրը Հ. Յ. դաշնակցության, որպես հայ իրականության մեջ գործող ամենաուժեղ քաղաքական կազմակերպության վրա էր դրել կովկասահայության պահանջների առաջադրման խնդիրը: Բայց թուրքահայ ազատագրական շարժումը ղեկավարելու համար ստեղծված կուսակցությունն արդյո՞ք կարող էր կատարել այդ դերը և, ընդհանրապես, վարել կովկասահայության գործերը:

Այս հարցին պետք է տրվեր անհետաձգելի պատասխան, այլապես ուշացման դեպքում կովկասահայությունը կդիմեր այլ կուսակցությունների, որպեսզի նրանց միջոցով կարողանար հեղափոխության նվաճումներից ստանալ իր բաժինը: Այդ նպատակով նա կարող էր նույնիսկ ազգային-հեղափոխական մի նոր կուսակցություն ստեղծել:

Իրադարձությունների նման զարգացման դեպքում դաշնակցությունը անխուսափելիորեն կմղվեր երկրորդական դիրքեր:

Այդ մտքի և հեռանկարի հետ չէր կարող հաշտվել դաշնակցությունը: Նրան այլ բան չէր մնում, քան պաշտոնապես հայտարարել, թե ինքը ոչ միայն թուրքահայության, այլև ռուսահայոց քաղաքական կուսակցությունն է: Իսկ դա նշանակում էր, որ կուսակցությունը պետք է վերամշակեր իր առաջին (1892թ.) ծրագիրն այնպես, որ նրա մեջ արտահայտվեին ոչ միայն թուրքահայոց ազգային ազատագրության, այլև ռուսահայոց քաղաքական և սոցիալական պահանջները:

Երրորդ. ցարական կառավարության կողմից հայ եկեղեցու կալվածքների բռնագրավումը դաշնակցությանն ակամայից մղեցին կովկասյան գործունեության: 1903թ. ամռանը կուսակցությունը Կովկասում կատարեց տեղական գործունեության առաջին քայլը՝ կանգնեց ժողովրդական բուռն բողոքների և հակակառավարական պայքարի գլուխ՝ վարելով շարժումը «Հայ ինքնապաշտպանության կոմիտեի» անվան տակ:

Այդ առաջին արված քայլը, սակայն, տվյալ պահին, սկզբունքային նշանակություն չունեցավ, քանզի որքան էլ կարևոր էր իբրև հեղափոխական գործ, բայց դեռ վկայություն չէր այն բանի, թե կուսակցությունը փաստորեն մի երեսով շրջվել է դեպի կովկասահայության պաշտպանությունը, որդեգրել տեղական գործունեություն: «Ինքնապաշտպանության կոմիտեն», այսպիսով, ծնունդ առավ հատուկ խնդրի առթիվ, սակայն եկեղեցական կալվածքների գրավման պատճառով առաջացած առճակատումները վերջանալուց հետո դադարեցրեց գործունեությունը՝ կատարելով ճակատագրով իր համար նախանշված դերը:

1904թ. հունվար-փետրվարին Սոֆիայում գումարված Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովն անհրաժեշտ համարեց ազդարարել, թե՝ «ընդունելով մեր կազմակերպության մասնակցությունը կովկասյան հեղափոխության կռվի մեջ, որոշեց այն վարել առայժմ ինքնապաշտպանության հողի վրա»: Առաջին անգամ այսպես էր ազդարարում Թուրքահայաստանի ազատագրության նպատակով շուրջ 15 տարի գերմարդկային ջանքեր գործադրած

[1] «Հայրենիք», N 12(108), հոկտեմբեր, 1931, էջ 105:
[2] Նույն տեղում:

կուսակցությունը:

Ավելորդ է ասել, որ ընդհանուր ժողովի այդ որոշումը համարյա ոչինչ չէր ավելացնում եղած փաստացի դրության վրա այն իմաստով, որ միապետության նոր ոտնձգությունների դեպքում առանց այդ որոշման էլ, անխուսափելիորեն կովկասահայության մեջ առաջ կբերեր նոր շարժում, նոր հակադարձում գուցե ավելի վճռական և ավելի արմատական:

Հակառակ դրան, ավելի գործնական էին մի երեսով դեպի Կովկաս շրջվելու անհրաժեշտության մասին ժողովում առանձին պատգամավորների համառ պնդումները, ինչպես նաև ժողովի ընդունած որոշման համապատասխան հանձնարարականը, որին կանդրադառնանք հետագա շարադրանքում:

Հ.Յ. դաշնակցության երրորդ ընդհանուր ժողովի ընդունած բանաձևի «ԺԳ. -Կովկաս» բաժնում ասված էր.

«Հ.Յ. դաշնակցությունը՝ ընդունելով հանդերձ, թե իր հիմնական նպատակը եղած է և այսօր ալ է՛ օսմանյան Հայաստանի պատմական դատը, ճանչված և վավերացուած միջազգային դաշնագրերով, չի կրնար անտես ընել հայ ժողովրդի մարդկային իրավունքներու բռնաբարումի ծանր դեպքերը, որոնք վերջերս տեղի ունեցած և սկսած են հաճախակի ըլլալ Թուրքիայեն դուրս ևս»[1]:

Ելնելով դրանից՝ ընդհանուր ժողովը սկզբունքով ընդունեց կովկասահայության ինքնապաշտպանության իրավունքը, կուսակցության ղեկավար մարմիններին վերապահելով համապատասխան մարտավարության մշակումը՝ ինքնապաշտպանության գործը առավել արդյունավետ առաջ մղելու համար: Ինքնապաշտպանության մարտավարությունը արտահայտություն էր գտել Կովկասի վերաբերյալ ընդունած բոլոր որոշումներում (բանավոր և գրավոր պրոպագանդայի, ահաբեկչության, ժողովրդական ցույցերի, զինված դիմադրության և այլն):

Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովի արձանագրություններում հանդիպում ենք նաև ավելի հեռուն գնացող ձևակերպումների, որոնք, ըստ էության, կուսակցության կողմից դասակարգային պայքարի խնդիրները շոշափող առաջին լուրջ հայտերն էին: Ժողովի բանաձևի «ԺԴ.-Կովկաս» բաժնում Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյին և Կովկասի կազմակերպություններին ցուցում էր տրված. «Դաշնակցական բանուորական խմբերը, այն գործարաններու սահմաններուն մեջ, որ անոնք կ'աշխատին, կը մասնակցին բոլոր բանուորական գործադուլներուն և շարժումներուն՝ երբ անոնք կապուած են բանուորներու ընդհանուր վիճակին հետ այդ գործերուն մեջ, իսկ ինչ կը վերաբերի գործարանական կեանքեն դուրս ցոյցերուն, որոնք կրնան առաջարկուիլ ուրիշ կուսակցություններու կողմե, բայց որոնց առիթներն ու նպատակը կրնան տարբեր ըլլալ, յուրաքանչյուր դեպքի համար մասնակցելու կամ չմասնակցելու խնդիրը կը վճռե պատասխանատու մարմինը»[*]:

Սա արդեն ոչ այլ ինչ էր, քան կուսակցության գործունեությունը նաև Կովկաս տեղափոխելու ուղղակի հայտ:

Դեպի կովկասահայ իրականությունը Հ.Յ. դաշնակցության կատարած շրջադարձի ճանապարհին կարևոր ուղենիշ եղավ 1904թ. դեկտեմբերին տեղի ունեցած Հ.Յ.Դ. կովկասյան մարմինների չորրորդ ռայոնական ժողովը[**], որը արտահայտելով շրջանային ժողովների տրամադրությունները՝ կուսակցության ղեկավար մարմինների առջև հարց էր բարձրացրել անհապաղ սկսել կովկասյան գործունեության հետ կապված տեսական խնդիրների մշակումը այն հաշվով, որպեսզի կուսակցության առաջիկա ընդհանուր ժողովը հնարավորություն ունենա քննարկելու և ընդունելու համապատասխան որոշում:

Չորրորդ. ռուսական հեղափոխությունը սկսվելուն պես, Հ.Յ. դաշնակցության առջև կանգնեց հեղափոխության նկատմամբ հստակ դիրքորոշում որդեգրելու խնդիրը: Կուսակցության անդամների մի մասը, որ կազմում էր փոքրամասնություն, գտնում էր, որ կազմակերպությունը չպետք է մասնակցություն ունենա հեղափոխությանը: Այս չափավոր դաշնակցականները ցարիզմի դեմ զինյալ ապստամբությունը համարում էին վաղաժամ և հավատացած էին, որ ապստամբությանը մասնակցելու դեպքում կուսակցությունը կգնա դեպի քայքայում, Ռուսաստանի հայ բնակչության նկատմամբ կուժեղանան բռնությունները, և դա այն դեպքում, երբ Ռուսիայի սահմաններում ապաստան են գտել և շարունակում են գտնել Թուրքական հալածանքներից փախած հազարավոր հայեր: Այս հոսանքի անդամները կանգնած էին կուսակցության հին ծրագիրն անփոփոխ Թողնելու տեսակետի վրա, այսինքն՝ դեմ էին կուսակցությանը կովկասյան գործերի մեջ ներքաշելուն, դեմ էին ռուսական պետության քաղաքական ներքին կյանքին խառնվելուն[1]:

Քանի որ դաշնակցության շարքերը տոգորված էին ցարիզմի դեմ պայքարի ճակատ հարդարելու բուռն տրամադրությամբ, ուստի կուսակցության չափավոր անդամների զգալի մասը, չհամակերպվելով այդ տրամադրությունը

---

[1] **«Նյութեր...»**, *հատ. Բ, 1973, էջ 119:*

---

[*] *Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովի որոշման համաձայն, 1904թ. վերջերին, կուսակցության կազմվածքում կյանքի էր կոչվել մի նոր ղեկավար մարմին՝ դաշնակցության խորհուրդը: Այն փոխարինել էր «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեին», որը հայտնի էր նաև «Հ.Յ.Դ. Կովկասի պատասխանատու մարմին» անունով: Դաշնակցության խորհուրդը կուսակցության ամենավերին (բարձրագույն) գործադիր օղակն էր, որին ենթակա էին Հ.Յ.Դ. բարձր ղեկավար մարմինները՝ արևելյան և արևմտյան բյուրոները: Խորհուրդը կոչված էր կոորդինացնելու բյուրոների գործունեությունը:*

[**] *Հ.Յ.Դ. ռայոնական ժողովները չպետք է չփոթել Հ.Յ.Դ. շրջանային ժողովների հետ: Ռայոնական ժողովը ներկայացնում էր մի քանի կ.կոմիտեների ենթակայության տակ գտնվող շրջաններ, իսկ շրջանային ժողովը՝ միայն կ.կոմիտեի ենթակա կազմակերպություններ: Այլ խոսքով, շրջանային ժողովը կարող էր գումարվել մեկ կ.կոմիտեի կողմից, իսկ ռայոնական ժողովը՝ բյուրոյի կողմից, որպես բազմաթիվ կ.կոմիտեների ներկայացուցիչների ժողով:*

[1] **«Նյութեր...»**, *հատ. Բ, էջ 330:*

ներին, դուրս եկավ կազմակերպությունից, միացավ «Մշակ» թերթի գաղափարական ուղղությանը հետևողներին, և կազմվեց «մշակականների» (հայ կադետներ) հոսանք հայ իրականության մեջ:

Սա առաջին մեծ հոսքն էր, որ ռուսական հեղափոխության օրերին տեղի ունեցավ Հ.Յ.Դ. շարքերից: Բնականաբար, դա լուրջ մտորումների տեղիք տրվեց կուսակցության ղեկավարության մեջ:

Կուսակցության անդամների մնացած՝ մեծ մասը, ընդհակառակը, պահանջում էր փոխել կազմակերպության ծրագիրը և հնարավորություն ստեղծել, որպեսզի Հ.Յ.Դ.-ն և ընդհանրապես հայերը հարեն Ռուսաստանի հեղափոխական շարժմանը, մասնակցեն զինված ապստամբությանը, որի միջոցով միայն հնարավոր կլինի հասնել հայության առջև կանգնած խնդիրների կատարմանը:

Հինգերորդ հրապարակ գալու ժամանակից (1890) սկսած մինչև 1905-1906թթ., այսինքն՝ ամբողջ 15 տարի, դաշնակցության գաղափարախոսության մեջ որևէ էական փոփոխություն չէր կատարվել: Այդ իսկ պատճառով կազմակերպության շարքերում նկատելի էր մտավոր անշարժություն ու գաղափարական կարծրացում: Նշված բացասական երևույթներն առայժմ չէին վտանգում ազգային-հեղափոխական կուսակցության գոյությանը, որը զարգանում ու աճում էր սովորական ու բնական ընթացքով՝ ինչպես հայ իրականության մեջ գործող քաղաքական մյուս կազմակերպությունները: Հ.Յ.Դ.-ն ուներ պարզ ու որոշակի նպատակներ, գաղափարական անձնազոհ ու կորովի առաջամարտիկներ, որոնք հետապնդում էին կուսակցության քաղաքականության անթերի իրականացում:

Սակայն հասարակական զարգացումն առաջ էր ընթանում անկասելի հևքով, տեղի էին ունենում արմատական փոփոխություններ նաև հայ ժողովրդի կյանքում: Նման պայմաններում դաշնակցության ներսում գաղափարական կարծրացման երևույթը դարձավ խիստ վտանգավոր նրա բուն իսկ գոյության համար:

Այս հանգամանքը բազմիցս տագնապով ընդգծում էին ինչպես կուսակցության ղեկավարներից ոմանք, այնպես էլ շարքային անդամներ:

Եվրոպայում սովորող դաշնակցական երիտասարդներին նկատի ունենալով՝ Բեռլինի համալսարանի ուսանող Արշակ Իսահակյանը (Ջամալյան) իր մի նամակում գրում էր, որ «Դաշնակցության մտքի անշարժությունը վատ է անդրադարձել մեր ուսանողության վրա», որ Եվրոպայում սովորող դաշնակցական երիտասարդները ակնհայտորեն հետ են մնում գաղափարական զարգացման տեսակետից, «հակված են մի տեսակ մտավոր ծուլության»: Դրա պատճառն այն է, նկատում էր նա, որ կուսակցությունն ինչպես հարկն է մտահոգված չէ իր անդամների գաղափարական աճի խնդիրներով: «Եվ երբ Ռուսաստանի շարժումների հետևանքով ամեն տեղ կուսակցության կյանքը փոթորկվեց, և տարբեր կուսակցություններն իրար դեմ ծառացան, այն ժամանակ ... նկատվեցավ, թե որքան հետ է մնացել մեր ուսանողությունը հասարակական

խնդիրներում»[1]: Նամակի հեղինակը մեծ անհանգստությամբ հարցնում էր, թե առաջիկայում դաշնակցությունն ինչպե՞ս է կատարելու իր առջև կանգնած ծանրագույն խնդիրները, երբ նրա ծրագիրը կարիք ունի լուրջ փոփոխությունների՝ հատկապես նրա տեսական մասը: Ահա թե ինչու, գրում էր նա, Եվրոպայում սովորող դաշնակցական ուսանողները կազմակերպվելու ոչ մի տրամադրություն չունեն: Եվ երբ խոսք է լինում կազմակերպվելու մասին, անմիջապես հարց են տալիս՝ «Հանուն ինչի՞ կազմակերպվենք. ո՞րն է այն ծրագիրը, որի շուրջ պետք է խմբվենք»: Եթե Հ.Յ.Դ. առաջիկա ընդհանուր ժողովին հաջողվեր «մի այնպիսի ծրագիր կազմել, որ բավարարություն տար դաշնակցական ուսանողությանը, - իր նամակում այնուհետև ասում էր Ա. Իսահակյանը, - ապա դա մի նոր դարագլուխ կը լինի ուսանողության համար, իսկ եթե այդ բանը չհաջողվեց, ապա հետևանքը պարզ է. նա կամաց-կամաց կ՚անջատվի դաշնակցությունից և կը խմբվի այն կուսակցությունների շուրջը, որոնք իրենց ծրագրերով ավելի՛ են համապատասխանում նրա հայացքներին և տրամադրություններին»[2]:

Դաշնակցության ներսում սկսված գաղափարական կարծրացումն ու մտքի անշարժացումն այնքան արագ ու բուռն էր կատարվում, որ իր հետ բերում էր մի ուրիշ վտանգ ևս՝ իբրև հետևանք կուսակցության շարքերի անսովոր աճի և անօրինակ հսկայական զարգացման:

Այդ փոթորկալից տարիներին դաշնակցությունն ըստ էության իր մեջ ամփոփել էր հայության մեծամասնության իղձերն ու ձգտումները՝ իրենց բոլոր ելևէջներով: Վերածվելով մի յուրատեսակ ընդարձակ «զինվորական պետության»՝ կուսակցությունը դեպքերի բերումով փաստորեն դարձել էր հայության ճակատագիրը վարող հիմնական ուժը՝ իր կրթական, դատական, ոստիկանական և այլ ֆունկցիաներով: Առանց չափազանցության կարելի է ասել, որ այդ ժամանակ կովկասահայության իրական կառավարիչը դաշնակցությունն էր, այլ ոչ թե ռուսական կառավարությունը, որն իր գլուխը կորցրել էր արտաքին ու ներքին անակնկալ խայտառակ պարտություններից:

Դաշնակցության մարմնի անբնական մեծածավալ զարգացումը անխուսափելիորեն իր հետ բերեց շարքերի որակական անկում: Թեև Հ.Յ.Դ.-ն 1905-1906թթ. պատվով էր տարել կովկասահայության ինքնապաշտպանության ծանր լուծը, բայց այդ ժամանակաընթացքում նրա մեջ թափանցել էին հազարավոր այլատարր ու գաղափարազուրկ մարդիկ, նաև՝ բախտախնդիրներ, որի հետևանքով կուսակցությունը կանգնել էր հեղափոխական բնույթն ու նպատակների պարզ գիտակցումը կորցնելու իրական վտանգի առջև և բռնվել էր քայքայման ցավով:

Այս պայմաններում, բնականաբար, պետք է առաջին գիծ մղվեին, մի կող-

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 340:
[2] Նույն տեղում:

մից, կուսակցության շարքերի զտման, մյուս կողմից՝ նրանում տարվող գաղափարական, տեսական աշխատանքների ուժեղացման պահանջները: Բացի այդ, ելնելով կյանքի առաջադրած խնդիրներից՝ անհրաժեշտ էր վերլուծել նորագույն հասարակական երևույթները, կատարել համապատասխան եզրահանգումներ և դրա հիման վրա փոփոխություններ մտցնել Հ.Յ.Դ. տեսության և քաղաքականության մեջ:

Վերջապես, վեցերորդ, ռուսական մեծ հեղափոխության հզոր ազդեցության տակ սոցիալիզմն ավելի հուժկու հոսանքով խուժել էր դաշնակցության դռներից ներս, որի հետևանքով, բավարարված չլինելով կուսակցության անդրանիկ (1892թ.) ծրագրով որդեգրած սոցիալիստական սկզբունքների գործադրության ընթացքով, դաշնակցականները, հատկապես երիտասարդները, պահանջում էին, որ նա իր գործունեությունը լիովին համապատասխանեցնի այդ սկզբունքներին:

1905թ. փետրվարին Կովկասում սկսված թուրք-հայկական կոտորածները կասկածի տակ էին դրել սոցիալիստական բնույթի մասին դաշնակցության ծրագրային հավաստիացումները, քանի որ նա ստանձնել էր, առանց դասակարգային տարբերության, հայ ազգաբնակչության պաշտպանության հիմնական դերակատարությունը: Այդ հանգամանքը թեև ծնունդ տվեց մեծ բարդությունների, բայց, որքան էլ տարօրինակ է, ռուսական հեղափոխության պայմաններում նրա շարքերում սոցիալիստական գաղափարներով տոգորվելու գործընթացը ոչ միայն կանգ չառավ, այլ նույնիսկ նոր թափ վերցրեց:

Ռուսական հեղափոխության օրերին սոցիալիստական գաղափարախոսությունն ամբողջ աշխարհում դարձել էր տիրական: Այդ պայմաններում դաշնակցությունը մի կողմ չկանգնեց ընդհանուր հոսանքից, այլ ուղ դրեց կովկասյան հեղափոխական գործունեության միջավայր, որը սոցիալիստական աշխատանքի տեսակետից ավելի նպաստավոր հող էր ներկայացնում, քան Թուրքահայաստանը: Դա պահանջում էր կուսակցության անդրանիկ ծրագրի մեջ սոցիալիստական կողմնորոշման կայուն հաստատագրում, նրանում եղած ձևակերպումների հստակեցում և հիմնավորապես հարմարեցում ժամանակի սոցիալիստական մտքի զարգացման մակարդակի հետ:

Թուրքահայ դատին նվիրյալ դաշնակցական երիտասարդ մտավորականության լավագույն ուժերը, որոնք դեռ ռուսական հեղափոխությունից մի քանի տարի առաջ չոլինիզմի և բուրժուական գաղափարների արդեն համոզված հակառակորդներ էին, այժմ, այդ հեղափոխության պայմաններում, գնալով դառնում էին ջերմ կողմնակիցներ միջազգային սոցիալիստական գաղափարների և դրանց ազդեցության տակ՝ հեղափոխական լայն ծրագրերի: Նրանք գտնում էին, որ դաշնակցությունն, ի վերջո, դառնալու է հայկական սոցիալիստական կուսակցություն և սերտորեն համագործակցելու է մյուս սոցիալիստական կուսակցությունների հետ, ավելին, լինելու է միջազգային սոցիալիստական շարժման հայկական ֆրակցիա:

Այս առնչությամբ նշենք մի հանգամանք ևս: Հ.Յ. դաշնակցության նախաձեռնությամբ և ծախսով 1900թ. նոյեմբերի 1-ից սկսած, ամիսը երկու անգամ, Փարիզում ֆրանսերեն լույս էր տեսնում հայոց դատին նվիրված «Pro Armenia» («Հայաստանի համար») թերթը, որի հրատարակմանը մասնակցում էին Ֆրանսիայի ամենանշանավոր դեմքերը՝ Կլեմանսոն, Ժորեսը և Անատոլ Ֆրանսը, Փրեսանսեն ու Քիյառը, Կոհիեն, Ժագլարը, Տընիս Քոշեն և այլք: Նրանց էին միացել ուրիշ երկրների քաղաքական և մշակութային նշանավոր գործիչներ՝ անգլիացի Ջեյմս Բրայսը, իտալացիներ Էնրիքո Ֆերրին, Կոստան և ուրիշներ: Թերթին աշխատակցում էին նշանավոր գիտնականներ, դիվանագետներ, պետական գործիչներ, պառլամենտականներ և, որ հատկանշական է՝ տարբեր գաղափարախոսությունների հետևողներ, քաղաքական տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ:

Թերթի բարեկամների թվում հատկապես շատ էին սոցիալիստները: Այս հանգամանքը չէր կարող որոշակի ազդեցություն չունենալ դաշնակցության գաղափարական վերակողմնորոշման, սոցիալիստական գաղափարների նկատմամբ հատկապես նրա ղեկավարության ընկալունակության աճի տեսակետից:

Պատահական չէր, որ դաշնակցությունն առիթից առիթ համակրանք էր արտահայտում եվրոպական սոցիալիստական շարժման նկատմամբ, յուր հրատարակություններում անդրադառնում սոցիալիստական Երկրորդ ինտերնացիոնալի գործունեությանը, ողջույններ հղում նրա կոնգրեսներին և ստանում ջերմ պատասխաններ:

Իր հերթին ցարական կառավարության կողմից հայկական եկեղեցական ունեցվածքի բռնագրավման օրերին Եվրոպայի սոցիալիստական շարժումը աներկբայորեն կանգնել էր հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության կողմը: Սոցիալիստական ինտերնացիոնալի բյուրոն և նրա մյուս ղեկավար մարմինները առիթը լավագույնս էին օգտագործում ռուսական միապետությանը մերկացնելու համար՝ նրան ներկայացնելով ոչ միայն որպես Եվրոպայի և Ռուսաստանի բանվորական շարժման ոխերիմ թշնամի, այլև որպես փոքր ժողովուրդների հալածիչ, նրանց տարրական շահերի ու մարդկային իրավունքների բռնադատիչ: Ինտերնացիոնալի ղեկավարությունը չէր հապաղում հայտարարություններով համակրանք արտահայտելու նորից լայնածավալ ջարդերի սպառնալիքի առջև կանգնած, բայց նաև պայքարող հայության նկատմամբ, պաշտոնական փաստաթղթերով ցույց էր տալիս ցարիզմի հրահրիչ ստոր դերը ազգամիջյան կոտորածներում:

Այնպես, որ իրադարձությունների ընթացքը նախորդ մի քանի տարիներին դաշնակցությանն ընդհուպ մոտեցրել էր մի սահմանագծի, որից այնկողմ անխուսափելի էր դարձել նրա կողմից սոցիալիստական գաղափարախոսության և գործելակերպի հստակ որդեգրումը:

Ահա պատճառների այն խումբը, որ ռուսական հեղափոխության առաջին իսկ ամիսներին հրապարակ քաշեց Հ.Յ.Դ. գործող ծրագրի արմատական

բարեփոխության և, ըստ էության, կուսակցության նոր ծրագրի ստեղծման պահանջը:

Դաշնակցության ներսում սկսվող վերակողմնորոշումների և բարեփոխումների կենտրոնում, թվարկած հարցերի թվում, առանձնանում են երկուսը. 1. Կովկասում կուսակցության գործունեության բնույթի ու բովանդակության հստակեցում, 2. Սոցիալիզմի գաղափարի ներմուծում կուսակցության գաղափարախոսության մեջ:

1905թ. սկզբներից կուսակցության առանձին կոմիտեներ, կազմակերպություններ ու անհատ գործիչներ Հ.Յ.Դ. արևելյան և արևմտյան բյուրոներին՝ հղած նամակներով պահանջում էին տալ նոր պայմաններում հատուկ սրություն ստացած և իրենց հուզող հարցերի պատասխանները: Ի՞նչ է, վերջապես, դաշնակցությունը՝ համազգայի՞ն, թե՞ հեղափոխական դասակարգային կուսակցություն: Ո՞րն է նրա ուղին՝ արևմտահայությա՞ն ազատագրությունը, թե՞ հայ կյանքի տնօրինությունն ամեն տեղ: Ինչպե՞ս հաշտեցնել ազգային ներքին հակամարտ շահերը: Ինչպե՞ս ներդաշնակել հայության մի մասի տընտեսական պահանջները նրա մյուս մասի ազատագրական շարժման հետ: Ի՞նչ դիրք բռնել ծավալվող ռուս հեղափոխության հանդեպ՝ հայկական շահերի սեղմ բնագավառից դուրս: Ինչպիսի՞ դիրքորոշում մշակել Անդրկովկասի աշխատավորության դասակարգային շարժման հանդեպ և այլն: Այս հարցերից բխում էին տակտիկական մի շարք այլ խնդիրներ. Ո՞րն է արևմտահայության ազատագրության բուն ուղին: Ի՞նչն է նրա և կովկասահայության կյանքի չարիքների արմատը: Որո՞նք են կուսակցության ուղեկիցները մեկ և մյուս երկրում: Ո՞րն է նրա գործելակերպն այստեղ ու այնտեղ և այլն, խնդիրներ, որոնց սրությունն աննախընթաց էր, իսկ լուծման հնարավորությունները մութ էին:

---

* Հ.Յ. դաշնակցությունը տվյալ ժամանակաշրջանում ընդգրկում էր պատմական Հայաստանի երկու մեծ մասերը՝ Տաճկահայաստանը և Ռուսահայաստանը, ճյուղավորումներ ուներ նաև Պարսկաստանի, Ամերիկայի, Եվրոպայի, Բուլղարիայի, Ռումինիայի ու Եգիպտոսի հայ գաղութներում: Կուսակցության շրջանային ղեկավար մարմինները կենտրոնական կոմիտեներն էին, որոնք միավորված էին երկու՝ արևելյան և արևմտյան բյուրոների մեջ: Արևելյան բյուրոյի նստավայրը Թիֆլիսն էր, արևմտյան բյուրոյինը՝ Ժնևը: Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյի շրջանն ընդգրկում էր՝ ա) Երկիր՝ Կիրասոն-Խարբերդ-Տիգրանակերտ գծից արևելք, բ) Կովկաս, Ռուսաստան և Պարսկաստան: Արևմտյան բյուրոյի շրջանը կազմում էր՝ ա) Փոքր Ասիա՝ Կիրասոն-Խարբերդ-Տիգրանակերտ գծից արևմուտք, բ) Բալկանյան թերակղզի, Ամերիկա, Եգիպտոս և ամբողջ արտասահմանը՝ բացառությամբ Ռուսաստանի և Պարսկաստանի («Նյութեր...», հատ. Գ, էջ 340-341): Ինչպես վերևում ասվեց, բյուրոների և կոմիտեների գործունեությունը, 1904թ. սկսած, կոորդինացնում էր կուսակցության խորհուրդը: Երկու բյուրոների առկայությունը թելադրված էր նրանով, որ Հայաստանը բաժանված էր տարբեր պետությունների միջև, իսկ հայ ժողովուրդը՝ ցրված, սփռված տարբեր տարածքներում: Երկու կենտրոնների (բյուրոների) ստեղծումը ճիշտ էր նաև անվտանգության առումով. եթե վտանգվեր մեկ բյուրոն, մյուսը կկարողանար ժամանակավորապես իր վրա վերցնել ողջ կուսակցության գործերի կառավարումը: Դաշնակցության ապակենտրոն կառուցվածքը, որը թելադրված էր հայկական իրականության առանձնահատկություններով, տանամյակների փորձով ապացուցեց իր կենսունակությունը:

Հիրավի, տեսության լույսն օդի ու ջրի պես անհրաժեշտ էր ճանապարհը շարունակելու և կյանքի այլազան ու առանձնահատուկ երևույթների լաբիրինթոսում ճիշտ կողմնորոշվելու համար: Միաժամանակ չէր կարելի մոռանալ, որ տեսությունն էապես վերացական բան է, որ այն զտված ու մաքրված է երևույթների հազարավոր մանր-մունր դրսևորումներից, որ իրականության մեջ հասարակական երևույթները շատ ավելի հարուստ են, բարդ ու կնճռոտ: Ահա թե ինչու պետք էր ուշի-ուշով հետևել կյանքի փոփոխություններին ու տրամադրություններին, ուսումնասիրել դրա առանձնահատուկ պահանջները և ըստ այդմ որոշել սեփական գործելակերպը:

Բոլոր նշանները ցույց էին տալիս, որ վերջնագծին է հասել Հ.Յ. դաշնակցության մարմնի անսովոր ու անբնական աճի ու զարգացման գործընթացը և վրա է հասել գաղափարական-տեսական նոր հիմնավորումներով կուսակցության մեջ որակական խոր փոփոխություններ կատարելու ժամանակը: Դաշնակցությունը երկունքի մեջ էր, որից շուտով ծնունդ էր առնելու նրա նոր որակը:

Հարություն Շահրիկյանի վկայությամբ, դեռևս 1904-ի կեսերին Բաքվում առաջին անգամ հղացել էր կուսակցության առջև հայտնված հրատապ խնդիրները քննության առնելու և դրա հիման վրա մի ծանրակշիռ փաստաթուղթ ստեղծելու գաղափարը: «Ահա այդ ժամանակ, - գրել է նա, - պահանջ զգացվեց Հ.Յ. դաշնակցության անունից մշակել ու կազմել մի նախագիծ, որը կովկասեան շրջանային ժողովում քննարկելուց հետո ներկայացվեր կուսակցության խորհրդին»[1]:

Ծագած հարցի շուրջ մի շարք գրություններ փոխանակվեցին արևելյան բյուրոյի և Ոսկանապատի կ.կոմիտեի միջև, որի արդյունքում համաձայնություն կայացավ՝ գալիք կովկասյան ռայոնական ժողովի քննության նյութ դարձնել առաջիկա տարիներին դաշնակցության գործունեության ծրագիրը:

«Բաղուի դերը մեր ազատագրական շարժման մեջ» ուսումնասիրության հեղինակ Աբրահամ Գյուլխանդանյանը պատմում է, որ գործի հաջողության համար որոշվեց ռայոնական ժողովին ներկայացնել երկու նախագիծ, որոնցից մեկը պիտի պատրաստվեր Բաքվում, մյուսը՝ Թիֆլիսում: Ոսկանապատի կ.կոմիտեն իր նախագծի մշակման գործը հանձնարարեց Լևոն Աթաբեկյանին և Աբրահամ Գյուլխանդանյանին, իսկ Մեծ Քաղաքի (Թիֆլիս) կ.կոմիտեն՝ Գարեգին Խաժակին[2]:

1905թ. սկզբներին Հ.Յ.Դ. կովկասյան ռայոնական ժողովը քննության առավ ներկայացված երկու նախագծերը և ընդունեց Թիֆլիսում կազմված փաստաթուղթը:

Ընդառաջ գնալով շարքերի պահանջներին՝ Հ.Յ. դաշնակցության խորհուր-

---

* Պետք է լիներ կովկասյան ռայոնական ժողով:

[1] «Հայրենիք», N 11 (191), սեպտեմբեր, 1938, էջ 96:

[2] Տե՛ս նույն տեղում, N 5 (149), մարտ, 1935, էջ 119-120:

դը 1905թ. ապրիլ-մայիսին իր նստավայրում ժնևում, քննարկեց Կովկասում կուսակցության գործունեության հերթական խնդիրները: Խորհրդի անդամներն իրենց ելույթների մեջ նշում էին, որ Հ.Յ.Դ. վերջին (երրորդ) ժողովից հետո Ռուսաստանում տեղի են ունեցել բուռն իրադարձություններ: Ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտության հետևանքով և հեղափոխական ընդդիմադիր տարրերի հարվածների տակ զգալիորեն թուլացել է ցարական միապետությունը, միաժամանակ անսպասելիորեն լայն ծավալ ու թափ են ստացել հեղափոխական շարժումները: Ռուսաստանում գնալով ընդլայնվող քաղաքական պայքարից Կովկասը, բնականաբար, չի կարող մի կողմ կանգնել, հետևապես չի կարող չեզոք դիտողի դերում մնալ նաև դաշնակցությունը: Իրադարձությունների արագ զարգացումը պահանջում է չսպասել հերթական ընդհանուր ժողովի հրավիրմանը, որտեղ կորոշվեն նոր իրադրության պայմաններում կուսակցության անելիքները, այլ անմիջապես պետք է ձեռնարկել համապատասխան միջոցներ, մանավանդ որ Հ.Յ.Դ. կովկասյան ռայոնական ժողովում առաջին անգամ պատգամավորները բարձրացրել են երկրամասում գնալով խորացող հեղափոխական դեպքերին կուսակցության մասնակցության անհրաժեշտության հարցը:

Դաշնակցության խորհուրդը 1905թ. մայիս-հունիսին տեսական լարված աշխատանք կատարեց՝ գործի մեջ ներգրավելով կուսակցության ամենակենսունակ գաղափարական ուժերին: Վերամշակելով հին ծրագրի սոցիալիզմին վերաբերող մասը՝ սրանք, անշուշտ, գիտեին, որ դրանից որևէ փոփոխություն չպետք է առաջանար կուսակցության թուրքահայկական գործունեության մեջ, քանի դեռ կանգուն է սուլթան Համիդի ռեժիմը Թուրքիայում: Եվ հետո՝ նրանց համար կուսակցական շիտակության և խղճի գործ էր այնպես անել, որ կովկասյան գործունեության ընձեռած պատեհությունները օգտագործվեն պահպանելու համար հայ ժողովրդի կյանքում սոցիալիստական պայքարի այն հիմնական գաղափարները, որոնք ավանդված էին դաշնակցության հիմնադիրների կողմից իբրև ծրագրային հավատո հանգանակ: Կարճ ժամկետում մշակվեց Կովկասում կուսակցության գործունեության ծրագրային մի նախագիծ[1], որն ուղարկվեց Հ.Յ.Դ. արևելյան և արևմտյան բյուրոներին և Հ.Յ.Դ. առանձին կենտրոնական կոմիտեների՝ նախնական քննարկման ու նախնական կարծիք հայտնելու համար:

Նախնական քննարկման ենթարկվելուց և խորհրդի կողմից վերջնական խմբագրումից հետո փաստաթուղթը Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոյի կողմից 1905թ. հունիսին առանձին գրքույկով լույս տեսավ ժնևում «Նախագիծ կովկասյան գործունեության» վերնագրով:

Ինչ բովանդակություն ուներ «Կովկասյան նախագիծը», ի՞նչ հարցեր էին

[1] Հ. Յ. դաշնակցության «Կովկասյան նախագծի» մասին տե՛ս **«Երկիր»** (Թիֆլիս), NN 29, 30, 31, 32, 33, 35, 46, 47, 1906:

բարձրացված փաստաթղթում, ի՞նչ լուծումներ էին առաջարկված:

«Կովկասյան նախագծի»՝ «Կովկասահայ խնդիր» նախաբանում արևմտյան բյուրոն նշում էր, որ Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովը, ընդունելով հանդերձ կովկասյան հեղափոխական կռվին դաշնակցության մասնակցության անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, որոշել էր այն առայժմ վարել զուտ ինքնապաշտպանության հողի վրա: Բայց ժողովից հետո եկած ժամանակաշրջանում (շուրջ 1,5 տարում), կովկասահայ կյանքում, ողջ Կովկասում և Ռուսաստանում տեղի են ունեցել խոշոր իրադարձություններ, որոնք Հ.Յ. դաշնակցությանը ակամայից կանգնեցրել են Կովկասում պայքարի նոր ճակատ հարդարելու հրամայականի առջև, այլ խոսքով, իրական կյանքը կուսակցությանը ստիպել է լինել զարգացող իրադարձությունների ակտիվ մասնակիցը:

Իրադարձություններից հետ չընկնելու համար, այնուհետև ասված էր նախաբանում, դաշնակցության խորհուրդը որոշել է կովկասյան շարժման հարցում **ինքնապաշտպանության** մարտավարությունից անցնել բուն **հեղափոխական** գործունեության:

Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոյի նախաբանից հետո պրակում զետեղված էր կուսակցության կովկասյան գործունեության ծրագրի նախագծի տեքստը:

Նախագիծն սկսվում էր այն հաստատումով, որ 20 տարուց ավելի է, ինչ Կովկասի հայության և ռուսական միապետության միջև, մերթ խուլ, մերթ բացահայտ, գնում է իսկական կռիվ, որի պատճառը հայ ժողովրդի, իբրև մի ուրույն կուլտուրական համայնքի դեմ ցարիզմի սանձազերծած վայրենի հալածանքն է:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո ռուսահայությունը ցույց էր տվել անուրանալի ունակություններ՝ տնտեսական և կուլտուրական ասպարեզներում ի հայտ բերելով մրցունակ ուժ: Այդ էր հիմնական պատճառը, որ մի քանի տասնամյակ շարունակ ցարիզմը հայությանը դիտում էր որպես առանձնապես վտանգավոր տարր իր տիրապետության համար Կովկասում և նրան անդադրում ենթարկում էր անզուսպ ու անպատիժ հարվածների՝ չստանալով արժանի հակահարված: Կովկասահայ երիտասարդությունը, տարված լինելով թուրքահայոց պայքարին օգնության հասնելու հոգսերով, հնարավորություն չուներ որևէ ձևով հակազդելու այդ ամենին:

Կովկասահայ երիտասարդության և հատկապես մտավորականության ձեռնպահ ու կրավորական կեցվածքն արմատապես ցնցելու և խախտելու եկավ մի ուժեղ շարժառիթ՝ ցարիզմի կողմից հայկական եկեղեցական գույքի հափշտակումը: Տասնյակ տարիների ընթացքում հայության մեջ խտացած ըմբոստության ոգին 1903թ. աշնանը ժայթքեց տարերային հուժկու ուժով: Կովկասահայության կյանքը միանգամից փոթորկվեց՝ արտահայտվելով թե՛ անզեն ելույթների և թե՛ զինված դիմադրության ձևով:

Հայկական շարժումը Կովկասում կարճ ժամանակամիջոցում շոշափելի ազդակ դարձավ՝ ամբողջ կայսրության մեջ ազատագրական կռվի բորբոքման տե-

սակետից, ունենալով իր զոհերն ու հերոսները, իր հուզիչ մարտիրոսությունը:

Ընդգծելով, որ հայկական շարժումը Կովկասում առաջ է գնում անդիմադրելի թափով և ստանում է հարատև ու ավելի հարձակողական բնույթ, «Նախագիծը», այնուհետև, հաստատում էր, որ «բռնկվելով մի այնպիսի ժամանակ, երբ չկար պատերազմ, երբ Պլևեի երկաթե ձեռքով բռնակալության մեքենան հասել էր վերջնական կատարելագործման, երբ լայնատարած կայսրության մեջ գերեզմանական անդորրություն էր՝ մերթ ընդ մերթ ընդհատված ուսանողական ու բանվորական խաղաղ ցույցերով կամ ահաբեկչական մասնակի փորձերով, շարժումն այժմ խրախուսվում է ազատագրական այն վիթխարի հոսանքից, որ այսօր բռնել է ամբողջ Ռուսաստանը, ամբողջ Լեհաստանը, Ֆինլանդիան, Կովկասը, և որ մտալուտ հաղթանակի խրոխտ գիտակցությամբ այդ շարժումը նախագծում է արդեն վաղվան հոյակապ ռամկավարական չենքը»[1]:

Այնուհետև նշվում էր, որ, ստանձնելով հայկական շարժման գլխավոր պատասխանատվությունը, Հ.Ց. դաշնակցությունը սերտ հարաբերությունների մեջ է մտել Ռուսաստանում և Կովկասում գործող հեղափոխական սոցիալիստական կազմակերպությունների հետ՝ ընդհանուր ազատագրական գործը համերաշխ ուժերով առաջ մղելու համար:

Այդ ամենն արձանագրելուց հետո «Նախագիծն» անդրադառնում էր Կովկասում հայկական շարժման գլխավոր նպատակներից մեկին՝ հասարակության մեջ սոցիալական արդարության հաստատման համար մղվող պայքարի խնդիրներին:

Հ.Ց. դաշնակցությունը ելնում էր այն իրողությունից, որ Ռուսաստանում և Կովկասում քաղաքական ազատ ռեժիմ հաստատվելուց հետո էլ աշխատավոր մարդը, **տնտեսական անհավասարության** պատճառով, չի կարող վայելել իր աշխատանքի բովանդակ իրավունքը: Կար ժամանակ, երբ տարբեր երկրների առաջադեմ մտածողները հաստատ հավատ ու համոզում ունեին, թե քաղաքական բռնապետական ռեժիմները տապալելուց հետո հասարակության բոլոր անդամները կստանան կատարյալ ազատություն, տիրապետող կդառնան հավասարության և եղբայրության սկզբունքները: Բայց հասարակության հետագա զարգացման ընթացքը դառն հիասթափություն առաջ բերեց այդպես մտածողների մեջ: Արևմուտքում ընկան բազմաթիվ միապետություններ, նրանց հետ միասին քայքայվեցին ավատապետական կարգերը, ասպարեզից հեռացավ ավատապետերի դասակարգը: Բայց այդ ամենը սփոփում չբերեց շահագործողներին: Բռնապետություններից քաղաքականապես ազատագրված և իրենց մոտ ռամկավարական կարգեր հաստատած երկրներում պահպանվեց ու հարատևեց շահագործումը՝ դարձյալ հենված տնտեսական անհավասարության ուժի վրա: Նախկին հողատեր ավատապետերին փոխարինեց մի

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 232:

ուրիշ դասակարգ՝ փողատերերի դասակարգը՝ բուրժուազիան: Աշխատավոր մարդկանց «կեղեքման մենաշնորհը վայրենի, բիրտ ուժից անցավ ավելի քաղաքակիրթ ուժի՝ կապիտալին»[1]:

Արևմտյան հասարակության մեջ առաջ եկան երկու մեծ ու հակոտնյա բանակներ՝ բուրժուազիա և պրոլետարիատ, որոնք թեև ազգի ու հայրենիքի հարցերում հիմնականում համերաշխ են, բայց ունեն տնտեսական տրամագծորեն հակառակ շահեր: Մեկը տեր է վիթխարի հարստությունների, մյուսը՝ զուրկ գոյության նվազագույն միջոցներից: Հենվելով իրենց ծագման, նյութական ուժի և պետության գործուն հովանավորության վրա՝ համեմատաբար փոքրաթիվ արտոնյալներն ամեն կերպ ձգտում են ամրապնդել հասարակության մեջ գերիշխող դիրքերը և հավերժացնել իրենց՝ իբրև իշխող ու կեղեքող դասակարգի տիրապետությունը:

Կապիտալիստական արտադրահարաբերությունները, մեծ զարկ տալով արտադրողական ուժերի աննախընթաց զարգացմանն ու քաղաքակրթության ընդհանուր առաջադիմությանը, միաժամանակ բացահայտում են բուրժուական հասարակության խոցելի կողմերը՝ տնտեսական ճգնաժամեր, գործազրկություն, վարձու աշխատանքի հրեշային շահագործում և այլն, որոնք ծանրորեն անդրադառնում են աշխատավոր դասակարգերի նյութական ու ֆիզիկական, մտավոր ու բարոյական կացության վրա:

Այսպիսով, ինչպես շեշտված էր «Նախագծում», արդի քաղաքակիրթ աշխարհի ընդհանուր պատկերն է՝ մի կողմից աշխատավոր զանգվածների քաղց ու մերկություն, մյուս կողմից՝ առասպելական հարստություններ, պերճանք ու վայելքներ: Այդ դրությունը անխուսափելիորեն պիտի տաներ և տարավ Աշխատանքի ու Կապիտալի միջև հակասությունների ուժեղ սրման, միաժամանակ՝ ստեղծված վիճակից ելք գտնելու միջոցների որոնման:

Սկզբում հանդես եկան մարդասեր խոշոր մտածողներ, որոնք փորձեցին հասարակական վտանգավոր կացությունը դարմանել՝ դիմելով հարուստ ու ազդեցիկ անհատների մարդասիրական զգացմունքներին, դրանով իսկ առաջարկելով սոցիալական խնդիրների խաղաղ լուծում: Դա սոցիալիզմի ուտոպիական շրջանն էր՝ զուր ջանքերով հանդերձ:

Բայց ստեղծված վիճակից դուրս գալու փնտրտուքները չդադարեցին. ասպարեզ եկան նոր սերնդի մտածողներ՝ տնտեսագետներ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ, որոնք, մերժելով ու անհնարին համարելով կապիտալիստական անարդար կարգերը խաղաղ ճանապարհով բարեփոխելու փորձերը, առաջ քաշեցին ու ջատագովեցին այդ կարգերի բռնի տապալման գաղափարը: Նրանք իրենց հիմնական հարվածն ուղղեցին կապիտալիստական հասարակության հիմքերին՝ մասնավոր սեփականությանը, ցույց տվեցին, որ կապիտալիզմը, կատարելով իր պատմական առաքելությունը, այժմ հասել է կատարյալ սնանկու-

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 232:

թյան և իր իսկ գոյությամբ դարձել է մեծագույն արգելք հասարակության բնական առաջադիմության ճանապարհին՝ «ստրկացնում է ամբողջ դասակարգեր, այլասերում է ամբողջ սերունդներ՝ նետելով նրանց թշվառության անդունդը»[1]:

Եվ ահա, մի կողմից, բանվոր դասակարգի և աշխատավոր մյուս զանգվածների գնալով աճող ատելությունը տիրող բուրժուական կարգերի հանդեպ, մյուս կողմից, աշխատավորության շահերի պաշտպանությամբ հանդես եկող մտավորականության երկարամյա աշխատանքը առաջ բերեցին այն մեծ շարժումը, որ հայտնի էր **սոցիալիզմ** անունով, իբրև հակադրություն կապիտալիզմի ու նրա ծնունդ բոլոր չարիքների: Սոցիալիստական այդ շարժումը տարածվեց անսովոր արագությամբ՝ իր մեջ առնելով բանվորների և գյուղացիների միլիոնավոր զանգվածներ:

«Սոցիալիստական շարժումը իր էությամբ միջազգային է, - ասված է «Նախագծում»: - Բոլոր երկրների աշխատավոր տարրերը՝ իբրև դառն ճակատագրի եղբայրակիցներ, միանում են, ձեռք ձեռքի տալով և գիտակ իրենց բարձր առաքելության, վստահ հաղթանակի վրա՝ կազմակերպված պայքարի ճանապարհով դիմում են դեպի մի սոցիալական կազմակերպություն՝, ուր չպիտի լինեն կեղեքողներ ու կեղեքվողներ, իշխաններ ու հպատակներ, ուր արդյունաբերության միջոցները, դրամագլուխը պիտի լինեն **համայնական**, ուր աշխատանքը, քաղաքակրթությունը և նյութական վայելքները հավասարապես բաժին պիտի լինեն յուրաքանչյուրին»[2]:

Նշելով, որ արևմտյան զարգացած երկրներում հենց այդ ուղղությամբ է առաջ ընթանում հասարակական էվոլյուցիան, «Նախագիծն» այնուհետև անդրադառնում էր կովկասյան և հատկապես կովկասահայ իրականությանը:

Կապիտալիստական ընդհանուր զարգացումից դուրս չմնաց Կովկասը, որտեղ նույնպես զարգացում ստացավ մեքենայական խոշոր արտադրությունը, որն իր հետևից բերեց հինավուրց տնտեսաձևերի կործանում և նորերի առաջացում, արհեստների անկում, գյուղական բնակչության գաղթ դեպի արդյունաբերական վայրեր: Ռուսական և եվրոպական կապիտալի ուժգին ներթափանցման հետևանքով Կովկասն իր բնական հարստություններով համեմատաբար կարճ ժամանակամիջոցում դարձավ ընդարձակ ու արգասավոր շահագործման վայր:

Արդյունաբերության զարգացման հետ միասին Անդրկովկասում ծնունդ առավ եվրոպական իմաստով փողատեր դասակարգը՝ **բուրժուազիան**, որը, յուրացնելով կապիտալիստական շահագործման բոլոր ձևերը, իր ձեռքը վերցրեց երկրամասի հարստությունների առյուծի բաժինը:

Բուրժուազիայի հետ միասին հրապարակ եկավ նաև Անդրկովկասի առավել ընչազուրկ դասակարգը՝ **պրոլետարիատը**: Այդ դասակարգը հիմնականում կազմված է երկրամասի մանր սեփականատեր գյուղացիներից և դեռևս լիովին չի համապատասխանում բառի բուն եվրոպական իմաստին: Իր նյութական, մտավոր, կուլտուրական վիճակով նա շատ ավելի թշվառ է, քան արևմտյան որևէ երկրի պրոլետարիատ: Դրա հետ միասին, աշխատող ժողովրդի մեծ զանգվածը մնում է տակավին գավառների մեջ՝ կապված իր հողին ու խղճուկ տնտեսությանը, ենթակա այլևայլ հարստահարիչների կամայականություններին:

Այնուհետև «Նախագիծը» տալիս էր Անդրկովկասի հայ իրականության պատկերը:

Երկրամասի տնտեսական զարգացմանը զգալի չափով զարկ տվեց հայ առևտրական տարրը: Հայկական կապիտալը թափանցեց տնտեսության համարյա բոլոր ոլորտները, նպաստեց նրա արդյունաբերության վերելքին: Ձևավորվեց հայկական բուրժուազիան՝ համառուսաստանյան բուրժուազիայի մի ջոկատը:

Դրա կողքին ընթանում էր Անդրկովկասի հայկական գավառների բնակչության արագ ունեզրկման գործընթացը: Ենթարկված լինելով կալվածատեր աղաների ու վաշխառուների անողոք կեղեքմանը՝ բազում հարկերի ծանրության տակ կքված հայ ընչազուրկ կամ ընդամենը մի թիզ հող ունեցող գյուղացիները ստիպված էին հեռանալ արդյունաբերական կենտրոններ, ուր վաստակը համեմատաբար բարձր էր, թեև աշխատանքը՝ տաժանակիր:

Կովկասի հայկական կյանքում շահագործողների և շահագործվողների միջև հակասությունները ծայրաստիճան չէին սրվում, որովհետև ցարիզմը հակահայ իր բիրտ քաղաքականությամբ համերաշխության էր մղում հայ ազգաբնակչության բոլոր խավերին, նրանց միջև ուժեղացնում էր ազգայնական կապերը՝ երկրորդական դիրքի վրա պահելով դասակարգային պայքարը:

Բայց այդ վիճակը մոտենում է իր վախճանին, - ասված էր «Նախագծում»: - Դասակարգային հողի վրա հայ իրականության մեջ նույնպես սկսվել է կռիվը, որը գնալով օրեցօր լայն ծավալ է ստանում ընդգրկելով ազգային կյանքի բոլոր ոլորտները:

Այնուհետև «Նախագիծն» ազդարարում էր, որ Հ.Յ.դաշնակցությունը, հավատարիմ իր ավանդական ոգուն, կանգնած է շահագործվող հայ բանվորության կողքին, հետևողականորեն հանդես է գալիս կապիտալի բռնատիրության դեմ, ուստի հետայսու կքարոզի սոցիալիստական գաղափարներ ու կպայքարի դրանց իրականացման համար: Գյուղում կուսակցությունը կռիվ կմղի կալվածատերերի ու վաշխառուների դեմ, իր դրոշի տակ կհամախմբի հողազուրկ ու սակավահող գյուղացիներին: Կուսակցությունը, «մերկացնելով մասնավոր տնտեսության բոլոր աննպաստ, բացասական կողմերը, պիտի աշխատե ժողովրդականացնել **համայնական** տնտեսության ձևերը, գյուղական կյանքին պատվաստել արդյունաբերող ու սպառող ընկերությունների արգասավոր սկզբունքը, որը ճանապարհ է հարթում դեպի ապագա մեծ, համայնա-

---

[1] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 233:
Նկատի ունի՝ **հասարակություն:**
[2] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 233:

կան, սոցիալիստական կազմակերպությունը»[1]:

Մեկնելով վերը շարադրված հիմնական հայացքները և աչքի առաջ ունենալով այն կարևոր հանգամանքը, որ հայ զանգվածների հետ միասին Անդրկովկասի մյուս ժողովուրդները նույնպես գտնվում են քաղաքական և տնտեսական համանման պայմաններում, և որ, հետևաբար, անդրկովկասյան բոլոր աշխատավորների հիմնական ձգտումները պետք է մեկ լինեն, Հ.Յ.դաշնակցությունը կովկասյան գործունեության իր նախագծում առաջադրում էր քաղաքական և տնտեսական մի շարք կարևորագույն պահանջներ:

Ինչպես տեսնում ենք, «Նախագիծը» դաշնակցությանն արդեն պարզորոշ կողմնորոշում էր դեպի դասակարգային պայքար և այդ հողի վրա իր գլխավոր նպատակներից մեկն էր համարում աշխատավորների ազատագրությունը շահագործումից ու կապիտալի բռնադատումից: Այլ խոսքով՝ կուսակցությունը գործնականորեն թեքվում էր դեպի սոցիալիզմ:

«Նախագծում» արծարծված գլխավոր հարցերից մյուսը պետական կառուցվածքի ֆեդերատիվ (դաշնակցային) ձևի նկատմամբ Հ.Յ. դաշնակցության որդեգրած սկզբունքի ծրագրային ամրագրումն էր:

Ամբողջությամբ առած, բազմազգ Ռուսաստանի և բազմազգ Անդրկովկասի պետական կառուցվածքի հարցի լուծման հնարավոր հեռանկարները 1890-ական թվականներից զբաղեցրել են ռուսահայ հասարակական միտքը: Այդ տարիներին հարցի տնտեսական մշակման ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել հայ ազգային հեղափոխական երկու կուսակցություններ: Ապագա դեմոկրատական Ռուսաստանի պետական կառուցվածքի խնդիրներին անդրադարձել են հնչակյան նշանավոր գործիչներ Ավետիս Նազարբեկյանը, Ռուբեն Բերբերյանը, Ռուբեն Խանազատը, Սապահ-Գյուլյանը: Հարցն իրենց աշխատություններում լայնորեն արծարծել են դաշնակցության նշանավոր տեսաբաններ Գարեգին Խաժակը, Եղիշե Թոփչյանը և Միքայել Վարանդյանը:

Հենց այստեղ պետք է հիշատակել, որ մինչ «Նախագիծը» դաշնակցությունը մասնակցել էր 1904-ի դեկտեմբերին (Փարիզում) և 1905-ի ապրիլին (Ժնևում) տեղի ունեցած ռուս հեղափոխական կուսակցությունների խորհրդաժողովներին, նրանց հետ կռել հանրածանոթ «Հեղափոխական դաշինքը», որում առաջադրված էր բազմազգ Ռուսաստանում պետական կառուցվածքի ֆեդերատիվ ձևի հաստատման անհրաժեշտությունը:

Ռուսական հեղափոխության ալիքների վրա իր ամբողջ կարևորությամբ սկսել էր արծարծվել ազգային խնդիրը: Բազմազգ կայսրության մեջ դա անխուսափելի էր: Թեև նախընթաց տասնամյակներին Կովկասում ռուսացման քաղաքականությունն ընդունել էր մեծ չափեր և ծայրահեղ դրսևորումներ, արձանագրել որոշակի հաջողություններ, սակայն ժողովուրդների ազգային

[1] «Նախագիծ կովկասեան գործունեութեան», Ժընև, 1906, էջ 12:

գիտակցությունն անկասելիորեն խորանում և բյուրեղանում էր:

Ազգային հարցով զբաղվող դաշնակցական տեսաբանների շարքը նոր պայմաններում համալրվեց երիտասարդներով՝ Արտաշես Ջիլինգարյան, Արշակ Ջամալյան, Սիմոն Վրացյան, Արտաշես Աբեղյան և ուրիշներ:

Ռուսաստանի ապագա վարչաձևի հարցը հրատապ էր դարձել, ինչպես երբեք: Ֆեդերացիայի գաղափարը գնալով խորանում էր և ձեռք էր բերում նորանոր կողմնակիցներ: Դաշնակցության համար այն գործնականորեն ամենակիրառելին էր Կովկասի պայմաններում: Դա նպատակահարմար էր համարվում, քանի որ այդ ժամանակ ռուսական կայսրության, առավել ևս Կովկասի, ազգություններից, ժողովուրդներից ու ցեղերից ոչ մեկը հանդես չէր գալիս Ռուսաստանից անջատվելու, քաղաքականապես անկախանալու կամ մի ուրիշ երկրի կազմի մեջ մտնելու պահանջով: Կայսրության ամբողջականության պահպանությունը ձեռնտու էր բոլոր այլազգիներին:

Ինչ վերաբերում է իշխող ռուս ժողովրդին, ապա նա ծայրահեղորեն զգայուն էր ու անհանդուրժող կենտրոնախույս ձգտման որևէ արտահայտության նկատմամբ: Ոչ մի ռուս կուսակցություն՝ սկսած ամենաձախակողմյան հեղափոխականից մինչև ամենաաջակողմյան հակահեղափոխականը, մտքով անգամ չէր անցկացնում, թե հնարավոր է կայսրությունից որևէ ժողովրդի անջատում: Այնպես որ, տրամագծորեն հակառակ քաղաքական գաղափարներ դավանող ուժերի՝ ցարական կարգերի ամենամոլի պաշտպանների (Պոբեդոնոսցև, Պուրիշկևիչ և այլոք) և նույն կարգերի ոխերիմ հակառակորդների (Լենին, Մարտով և այլոք) հայացքները նույնանում էին կայսրության ամբողջականության պահպանման հարցում:

Բոլոր ռուս կուսակցությունները կատաղի հակառակորդներ էին ոչ միայն այլազգիների քաղաքական անկախության, այլ նույնիսկ նրանց ազգային-տերիտորիալ ինքնավարության (ավտոնոմիա) պահանջին: Նույնիսկ Ֆինլանդիան և Լեհաստանը, որոնք կայսրության մեջ փաստորեն ունեին կիսանկախ վիճակ, ռուսական առաջին հեղափոխության օրերին իսկ, երբ ցարի գահը ուժգին երերվում էր, վճռականորեն չէին պահանջում ավտոնոմիա, քանի որ այդ մասին հարց բարձրացնելը կառավարության կողմից կդիտվեր որպես ըմբոստություն, հետևապես հղի էր անկանխատեսելի վտանգներով:

Ինչ վերաբերում էր երկրի մյուս ոչ ռուս ժողովուրդներին ու ցեղերին, ապա նրանք չէին կարող հավակնել նույնիսկ վարչակառուցվածքային ամենաստորին ձևերին: Նրանցից միայն մի քանիսը հազիվ «հասունացած» էին համարվում սովորական տեղական վարչական «ինքնակառավարման» համար (զեմստվո), որ կես դարուց ի վեր արդեն ունեին Ռուսաստանի ներքին նահանգներն ու գավառները: Կայսրության ոչ ռուս ժողովուրդներին ոչ միայն քաղաքական անկախության, այլ նույնիսկ ավտոնոմիա տալուն վճռականորեն դեմ էր հատկապես ՌՄԴԲԿ-ն՝ իր բոլշևիկյան և մենշևիկյան թևերով: Ճիշտ է, սոցիալ-դեմոկրատներն իրենց ծրագրում ազդարարել էին «ազգերի

ինքնորոշման» իրավունքը, բայց դա ձևական էր և գրված էր թղթի վրա մնալու համար: Սոցիալ-դեմոկրատիան, որն արտահայտում էր առանց ազգային խտրականության կայսրության բազմազգ բանվոր դասակարգի շահերը, դեմ լինելով երկրի ամբողջականության խախտմանը, հետևապես նաև՝ համառուսաստանյան պրոլետարիատի միասնականության քայքայմանը, նույնիսկ ավտոնոմիայի մեջ տեսնում էր իրական վտանգ: Պատահական չէ, որ և՛ բոլշևիկները, և՛ մենշևիկները ռուսական կայսրության բազմազգ պրոլետարիատի կատաղի թշնամիներ էին համարում բոլոր այն կուսակցություններին, որոնք հրապարակ էին գալիս ազգային-տերիտորիալ ինքնավարության որևէ պահանջով:

Ռուս կուսակցություններից միայն սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունն էր, որ իր ծրագրային դրույթներից մեկն էր համարել՝ Ռուսաստանի ապագա վարչակարգը տեսնել ֆեդերատիվ (դաշնակցային) հանրապետության ձևով: Սակայն ֆեդերացիայի հարցը ռուս էսէռների համար նույնպես առավելապես ուներ տեսական, քան գործնական քաղաքականության նշանակություն:

Այսպիսով, չխոսելով միապետական և սահմանադրական ռուս կուսակցությունների մասին, որոնց համար կայսրության մեջ ընդհանրապես գոյություն չուներ ազգային հարց, ռուս սոցիալիստները կամ բացարձակ հակառակորդներ էին ավտոնոմիայի և ֆեդերացիայի (սոցիալ-դեմոկրատ բոլշևիկներ և մենշևիկներ), կամ խնդիրը հրատապ նշանակություն չուներ իրենց համար (սոցիալիստ - հեղափոխականներ): Դա պատահական չէր. սոցիալիստներ լինելուց առաջ նրանք ռուսներ էին:

Իսկ ինչպիսի՞ն էին խնդրի դրսևորումները Կովկասում:

Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան, իբրև ռուսական սոցիալ-դեմոկրատիայի անբաժան մաս, բացարձակապես դեմ էր ավտոնոմիային և ֆեդերացիային: Խոսքը վերաբերվում է կովկասյան թե՛ բոլշևիկներին (որոնց մեջ շատ էին հայերը), թե՛ մենշևիկներին (որոնք գերազանցապես ներկայացված էին վրացիներով):

Ավտոնոմիային և ֆեդերացիային դեմ էր նաև հիմնականում Բաքվում կենտրոնացած սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը՝ Բախշի Իշխանյանի, Դավիթ Անանունու, Ղազար Տեր-Ղազարյանի, բժ. Իսախանյանի գլխավորությամբ:

Ինչ վերաբերում է հայ սոցիալիստ-հեղափոխականներին, ապա նրանք թվով քիչ էին, և նրանց համար այդ խնդիրը էական նշանակություն չուներ:

Կովկասում ֆեդերալիզմի սկզբունքի ջատագովներն էին երկու ուժեր՝ վրացիների մեջ սոցիալ-ֆեդերալիստների կուսակցությունը, հայերի մեջ՝ Հ.Յ.դաշնակցությունը:

Ինչ վերաբերում է կովկասյան թուրքերին, ապա նրանք դեռ չունեին կազմակերպված կուսակցություններ: Հատուկենտ անհատներ մտնում էին ՌՄԴԲԿ-ի կամ էսէռական կուսակցության Բաքվի կազմակերպությունների

մեջ, իսկ աշխատավոր զանգվածները քաղաքականորեն ծայրաստիճան անկազմակերպ էին:

Ի մի բերելով ասվածը, նկատում ենք, որ կովկասյան իրականության մեջ քաղաքական հողի վրա իրար դեմ կանգնած էին հիմնականում երկու կուսակցություններ՝ Հ.Յ. դաշնակցությունը և սոցիալ-դեմոկրատիան: Առաջինը ջերմ կողմնակից էր ֆեդերացիայի գաղափարին, երկրորդը՝ հետևողական հակառակորդ:

Վերևում նշվեց, որ 1904 և 1905 թվականներին Փարիզում և Ժնևում տեղի ունեցած ռուս հեղափոխական կուսակցությունների խորհրդաժողովներն առաջադրել էին ֆեդերացիայի պահանջը: Վերջին խորհրդաժողովի ավարտից հետո նրա մասնակիցներից մեկը՝ դաշնակցությունը, հայության քաղաքական նպատակների ծիրում ֆեդերացիայի պահանջ առաջադրեց նաև Թուրքիայի նկատմամբ: Այնպես որ, դաշնակցության կողմից «Նախագծում» ֆեդերացիայի սկզբունքի որդեգրումն արդեն նախապես արված քայլի պարզ շարունակությունը և զարգացումն էր՝ կարևորագույն լրացումով:

Իր դավանագրում առաջադրելով ֆեդերացիայի պահանջը՝ դաշնակցությունը, սակայն, **դեմ չէր արտահայտվում** անկախության գաղափարին: Ընդհակառակը, հայության երկու հատվածների նկատմամբ համանման պահանջների առաջադրումը լռելյայն գալիս էր գծելու և հարթելու այդ հատվածների **ամբողջացման** նույն ուղիները: Իսկ այդ ամբողջացումը կարող էր լինել և պիտի լիներ ոչ թե ռուսական կամ թուրքական, այլ միայն ու միայն հայկական իշխանության տակ:

Պատասխանելով այն հարցին, թե Կովկասում հեղափոխական կռվի միջոցով Հ.Յ. դաշնակցությունն ինչ գլխավոր նպատակ է հետապնդում, «Նախագիծը» շեշտում էր. «Նա ձգտում է դաշնակցային (ֆեդերատիվ) ռազմավարական մի կազմակերպության ամբողջ Անդրկովկասի համար՝ ամենալայն տեղական ինքնավարությամբ: Լինելով բացարձակ հակառակորդ ամեն տեսակ առանձնաշնորհումների, ազգայնական ամեն տեսակ գերիշխանության ու ճնշումների՝ դաշնակցությունը համոզված է, որ միմիայն այդպիսի ռազմավարական կազմակերպության մեջ՝ կովկասյան այլատարր, այլակրոն և այլաբարբառ ժողովուրդները կարող են ապահովված տեսնել իրենց ուրույն, ազատ ու անարգել առաջադիմությունն ու բարգավաճումը»[1]:

Ռուսաստանի, մասնավորապես Կովկասի ապագա պետական կառուցվածքի մասին դաշնակցության տեսակետն առաջադրելուց հետո, «Նախագիծն», այնուհետև, ներկայացնում էր խնդրի նկատմամբ կուսակցության կոնկրետ պատկերացումները:

Քաղաքական - Անդրկովկասը լինելու է դաշնակցային (ֆեդերատիվ) դեմոկրատական հանրապետություն՝ հիմնված ընդհանուր, հավասար, ուղղա-

[1] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 232:

կի և գաղտնի ձայնատվության վրա. դաշնակցային հանրապետության մեջ բոլոր ազգերն ու կրոնական համայնքներն օրենքի առջև հավասար են, վերացվում են բոլոր դասային և այլ կարգի առանձնաշնորհումները. Անդրկովկասը ազատ Ռուսաստանի դաշնակիցն է և նրա անբաժան մասը, նրա հետ սերտորեն կապված է ընդհանուր պետական ինքնապաշտպանության, դրամական համակարգի և ընդհանուր քաղաքականության խնդիրներում. բոլոր ներքին հարցերում վարչական, տնտեսական և այլն, Անդրկովկասն անկախ է. դաշնակցային հանրապետությունն ունի իր կենտրոնական պառլամենտը, որի նստավայրը Թիֆլիսն է. բնակչության յուրաքանչյուր 25 հազարի կողմից ընտրվում է պառլամենտի մեկ պատգամավոր. ընտրելու իրավունք ունի առանց սեռի խտրության 20 տարին լրացրած ամեն մի անդրկովկասցի. պառլամենտի որոշումների հիման վրա երկրի վարչական, տնտեսական և մշակութային բովանդակ քաղաքականությունը վարում է նախարարների պատասխանատու մարմինը. անհատի անձը և բնակարանը անձեռնմխելի են. հանրապետության մեջ ապահովված է մամուլի, խոսքի, խղճի, ժողովների ու հանրահավաքների, բանվորական արհեստակցական միությունների, գործադուլների կատարյալ ազատություն. ընդհանուր, պարտադիր ու ձրի սկզբնական կրթությունը կազմակերպվում է մայրենի լեզվով՝ յուրաքանչյուր ազգի կարիքներին ու զարգացմանը համապատասխան, միջնակարգ դպրոցները նույնպես մայրենի լեզվով են, իսկ մնացած գլխավոր տեղական լեզուները այդ դպրոցներում դասավանդվում են իբրև անհրաժեշտ առարկաներ. ռուսերենը, իբրև ընդհանուր պետական լեզու, պարտադիր է. դաշնակցային հանրապետության մեջ եկեղեցին անջատված է պետությունից, իսկ կրոնը անհատական խղճի գործ է. Անդրկովկասը բաժանվում է գավառների, որոնք վայելում են ամենալայն տեղական ինքնավարություն: Գավառների սահմանները գծելիս նկատի է առնվում ազգաբնակչության ցեղագրական և կուլտուրական կազմը՝ հնարավորին չափ միաձույլ համախմբումներ կազմելու համար. առանձին ազգային համայնքները գավառներում վայելում են ներքին ինքնավարություն. ազգաբնակչության կողմից ընտրվում է գավառային խորհուրդ՝ վերը նշված սկզբունքով, որն իր մարմիններով վարում է գավառի ներքին գործերը. համայնքի ու գավառի վարչակազմերում աշխատող բոլոր պաշտոնյաների համար պարտադիր է տեղական երկու գլխավոր լեզուների իմացությունը, իսկ դաշնակցային հանրապետության վարչակազմի պաշտոնյաների համար պարտադիր են անդրկովկասյան երեք գլխավոր ժողովուրդների (վրացիներ, հայեր, կովկասյան թուրքեր) լեզուները. բոլոր պաշտոնյաներն ընտրվում են ժողովրդի կողմից՝ վերը նշված ընտրական սկզբունքով. գավառների և Անդրկովկասյան դաշնության բարձրագույն դատավորներն անկախ են և անփոփոխելի (նրանց ընտրության սկզբունքները որոշում է Անդրկովկասի սահմանադիր ժողովը). դաշնակցային ընդհանուր դատարանում երեք գլխավոր լեզուները հավասար են (դատավորը պարտավոր է ապահովել այդ լեզուներով դատական վարույթնե-

ը). Անդրկովկասի ինքնապաշտպանությունը իրականացվում է ժողովրդական միլիցիայի միջոցով (որում ամեն մի առողջ քաղաքացի պարտավոր է որոշ ժամանակով ծառայել իբրև միլիցիոներ). ժողովրդական միլիցիան գործում է դաշնության սահմաններում, ենթակա է Ռուսաստանի ընդհանուր հրամանատարությանը, գործողության մեջ է դրվում միմիայն այն դեպքում, երբ վտանգ է սպառնում ընդհանուր պետության կամ Անդրկովկասյան դաշնության ազատությանն ու ամբողջականությանը. դաշնության սահմանադրությունը մասամբ կամ ամբողջությամբ փոխելու որոշումը կարող է միայն կայացնել Անդրկովկասի ինքնավար ժողովուրդը՝ ընդհանուր քվեարկությամբ և ձայների 2/3 -ի առավելությամբ: Սահմանադրությունը փոխելու առաջարկ կարող են անել նաև որոշ թվով քաղաքացիներ:

Տնտեսական - Անդրկովկասյան դաշնության մեջ իրականացվում է հողերի աստիճանական համայնացում. վերացվում են անուղղակի հարկերը, մտցրվում է պրոգրեսիվ տուրք եկամտի ու ժառանգության համար, հարկումից բոլորովին ազատվում են սահմանված նվազագույն չափից ցածր մանր եկամուտները. բանվորների համար օրենքով սահմանվում է 8-ժամյա աշխատանքային օր. սահմանվում է նվազագույն օրավարձ այլևայլ զբաղմունքների համար՝ քաղաքում և գյուղում. պետության և գործատերերի հաշվին մտցվում է պետական ապահովագրություն դժբախտ պատահարներից, հիվանդությունից, ծերությունից և անաշխատունակությունից. դաշնության տարածքում մարդիկ ունեն տեղափոխության և ցանկացած արհեստով զբաղվելու ազատություն. ստեղծվում են աշխատանքային բորսաներ, որոնք պիտի մասնակցեն բանվորական օրենսդրության մշակմանը. իրականացվում է աշխատանքի օրենսդրական հովանավորություն՝ գիտական, առողջապահական պահանջների համեմատ. վերացվում է գիշերային աշխատանքը՝ բացի այն արտադրություններից, որոնց տեխնիկական բնույթը թույլ չի տալիս ընդհատումներ: Անպայման վերացվում է կանանց ու երեխաների գիշերային աշխատանքը, իսկ 15-16 տարեկանների աշխատանքի տևողությունը սահմանափակվում է 6 ժամով, կիրակին հայտարարվում է ոչ աշխատանքային, լիակատար հանգստի օր. սահմանվում է բանվորական վերահսկողություն արտադրության վրա, վերահսկիչ-վերատեսչական մարմիններն ընտրվում են բանվորների կողմից*:

---

* Աստիճանաբար աճող:

** Անդրկովկասն իբրև միասնական վարչական միավոր տեսնելու Հ.Ց. դաշնակցության կողմից 1905թ. առաջարկվող այդ ծրագիրն առաջին անգամ կոնկրետ փորձության ենթարկվեց Ռուսաստանում 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո՝ հանձին անդրկովկասյան կոմիսարիատի իշխանության ստեղծման, որին փոխարինեց անդրկովկասյան սեյմի գլխավորած՝ Անդրկովկասի Ֆեդերատիվ Հանրապետությունը: Սակայն պետական այդ միավորը կենսունակ չեղավ և գոյատևեց շատ կարճ ժամանակ միայն, քանի որ դրա երեք հիմնական բաղադրիչ տարրերի՝ վրացիների, հայերի և կովկասյան թուրքերի շահերը խիստ տարբերվում էին իրարից, իսկ կովկասյան թաթարները, իրենց շահերը նույնացնե-

Ընդհանուր գծերով այսպես էր պատկերացնում դաշնակցությունը ապագա դեմոկրատական Ռուսաստանի և Անդրկովկասի պետական կառուցվածքը: Կուսակցությունը այդ սկզբունքը ամենանպատակահարմարն էր գտնում ամեն մի բազմազգ երկրի համար՝:

«ԿՈՎԿԱՍՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ» ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Հրատարակելով «Նախագիծը»՝ դաշնակցության խորհուրդը շուտափույթ կազմակերպեց դրա առաքումը բոլոր կ.կոմիտեների հասցեներով, որոնք պետք է կազմակերպեին փաստաթղթի լայն ու համակողմանի քննարկումը կոմիտեներում, ենթակոմիտեներում, խմբերում, ապա՝ Հ.Յ.Դ. շրջանային և ռայոնական ժողովներում: Այդ քննարկումների ընթացքում արվելիք դիտողություններն ու առաջարկությունները պետք է ուղարկվեին Հ.Յ.դաշնակցության առաջիկա ընդհանուր ժողովին՝ վերջնական վավերացում տալու համար:

«Կովկասյան նախագիծը», տեղ հասնելուց հետո, երկար ամիսներ լարված մթնոլորտում ու հանգամանորեն քննարկվում էր կուսակցության ներսում թեր, դեմ և ձեռնպահ արդյունքներով:

Որ «Նախագիծը» կարող էր Հ.Յ.Դ. շարքերում բուռն վիճաբանությունների առիթ դառնալ՝ կուսակցության ղեկավարները հնարավոր էին համարում, բայց ոչ մեկի մտքով չէր անցնում, թե փաստաթուղթը կարող է իսկական փոթորիկ առաջ բերել կազմակերպության ներսում, նաև՝ ալեկոծել կովկասահայ հասարակական միտքն ու քաղաքական կյանքը:

Դաշնակցության մամուլի բոլոր օրգաններն անխտիր, կուսակցության տեսաբանները, «Նախագիծը» պաշտպանող դաշնակցական նշանավոր գործիչները գրչով թե խոսքով, բեմերից թե ամբիոններից, ժողովներում թե հանդիպումների ժամանակ եռանդով պաշտպանում կամ մերժում էին փաստաթղթի այս կամ այն դրույթը:

Կուսակցության շարքերում «Նախագծի» քննարկման գործընթացը համընկավ նրա գործիչների սերնդափոխության հետ: Քաղաքական կյանքում գնալով ավելի ու ավելի բարձր էր հնչում դաշնակցական գործիչների **երկրորդ**

լով 1918թ. գարնանը Անդրկովկաս ներխուժած օսմանյան զավթիչների նպատակներին, թիկունքից հարվածներ էին հասցնում հայությանը:

Դաշնակցական տեսաբանները գտնում էին, որ Թուրքիայի ապագա դեմոկրատական հանրապետության պետական կառուցվածքի հիմքում նույնպես պետք է ընկնի ֆեդերացիայի սկզբունքը: Համաօսմանյան այդ ֆեդերացիայի մեջ Թուրքահայաստանը մտնելու էր ինքնավար հիմունքներով: Ինչ վերաբերում է հարցի հանդեպ հնչակի դիրքորոշմանը, ապա նա վճռականապես հանդես էր գալիս Հայաստանը Թուրքիայից անդառնալիորեն անջատելու պահանջով: Այդ պահանջն անսասան էր մնալու նույնիսկ այն դեպքում, եթե կայսրությունը ապագայում որդեգրեր պետական կառուցվածքի ֆեդերատիվ ձևը:

սերնդի ձայնը:

Այս նոր սերունդը առաջինի հարազատ զավակն էր, բայց տրամադիր էր հասարակական նոր զարգացումներին համապատասխանեցնել գաղափարական այն սկզբունքները, որոնք մեկ ու կես տասնամյակ առաջ դրվել էին կուսակցության կայացման գործընթացի հիմքում և այժմ կարիք ունեին որոշակի շտկումների ու բարեփոխումների: Այլ խոսքով՝ ռուսական հեղափոխությունը դաշնակցական գործիչների երկրորդ սերնդին էլ ավելի էր մոտեցրել հեղափոխականությանը՝ դասակարգային պայքարի տեսությանը և սոցիալիզմի գաղափարներին:

Հիշատակենք դաշնակցության նոր սերնդի նշանավոր ներկայացուցիչներից մի քանիսին՝ Արամ, Ռուբեն, Իշխան, Սարգիս Բարսեղյան, Զարդարյան, Սիամանթո, Վարուժան, Ա.Շահխաթունյան, Խաչատուր Կարճիկյան, Գարեգին Խաժակ, Եղիշե Թոփչյան, Սիմոն Վրացյան, Արտաշես Աբեղյան, Սարգիս Արարատյան, Արշակ Ջամալյան, Արսեն Միքայելյան, Արտաշես Չիլինգարյան, Սահակ Թորոսյան, Միհրան Թերլեմեզյան, Արմենակ Օխիկյան, Հմայակ Մանուկյան, Հակոբ Հարությունյան, Մկրտիչ Ցոթնեղբայրյան, Համազասպ, Դրո, Հայրապետ Պանիրյան, Տիգրան Ավետիսյան, Գասպար Հակոբյան, դոկտ. Ստեփանյան և շատ ուրիշներ:

Հիշատակված և չհիշատակված գործիչների մի մասը, տարիքի բերումով, ակտիվ մասնակցություն ունեցավ «Նախագծի» քննարկմանը, մնացածները, դարձյալ տարիքի բերումով, քաղաքական գործունեության ասպարեզ պիտի իջնեին ավելի ուշ՝ 5-6 տարի հետո:

Մի շարք կ.կոմիտեներ, իրենց բոլոր կազմակերպություններով հանդերձ, անվերապահորեն պաշտպանեցին «Կովկասյան նախագիծը»: Դրանք էին՝ Հ.Յ.Դ. Ապառաժի (Շուշիի), Այգեստանի (Գանձակ և շրջակայք), Շամի (Վասպուրականի), Դուրան-Բարձրավանդակի (Տարոն-Սասունի) կենտրոնական կոմիտեները:

Կուսակցության նշանավոր գործիչներից «Նախագիծը» հետևողականորեն պաշտպանում էին Ռոստոմը, Զավարյանը, Ահարոնյանը և ուրիշներ: «Նախագծի» ջերմ կողմնակիցներից էին անվանի հայդուկապետեր Գևորգ Չաուշը, Դումանը, Վարդանը, Քեռին, Սաքոն և ուրիշներ:

«Նախագծի» կողմնակիցներն իրենց ելույթներում բնորոշում էին **հայկական շարժումը**, նրա էությունն ու բնույթը, կանգ առնում թուրքահայ շարժման հիմնական կետերի վրա, պարզում նրա զարգացման փուլերը, ցույց տալիս այն տարբերությունները, որ կան դեմոկրատական հակումներով ներշնչված թուրքահայ աշխատավոր ժողովրդի և ավատական քրդության ու կրոնական ճորտության ենթակա թուրքերի միջև՝ Տաճկաստանում, ռուսահայության և ազնվապետական կարգերով տարված վրացիների ու մուսուլմանական մոլեռանդության գերի կովկասյան թուրքերի միջև՝ Կովկասում:

Կ.կոմիտեների մյուս մասը, ինչպես օրինակ՝ Նալբանդի (Նոր Նախիջևանի) և Ժլատի (Հյուսիսային Կովկասի), չկարողանալով կողմնորոշվել, չեզոք դիրք

բռնեց:

Հ.Յ.Դ. մի շարք կ.կոմիտեներին ենթակա կազմակերպություններում խնդրի վերաբերյալ միասնություն չկար: Այդ կազմակերպություններում դաշնակցականների մի մասը հետևողականորեն արտահայտվում էր «Նախագծի» օգտին, մյուս մասը նույնքան վճռականորեն հանդես էր գալիս փաստաթղթի դեմ: Այդպիսիք էին Վրեժի (Ատրպատականի), Մեծ Քաղաքի (Թիֆլիսի-Վրաստանի), Մրգաստանի (Երևանի) կ.կոմիտեներին ենթակա շատ կազմակերպություններ:

«Կովկասյան Նախագիծն» ունեցավ նաև իր անհաշտ քննադատները և անզիջում հակառակորդները:

«Նախագծի» քննարկման ընթացքում, որոշ տվյալներով, հանդես էին եկել 3000-ից ավելի դաշնակցականներ՝ ինչպես հայտնի գործիչներ, նմանապես և շարքայիններ[1]: Դեմ էին արտահայտվում հայտնի մտավորականներ Ա.Վռամյանը, Ռ. Զարդարյանը, Ս. Մինասյանը, Ավ. Իսահակյանը և ուրիշներ, անվանի ռազմիկներից շատերը, այդ թվում Սեբաստացի Մուրադը, Անդրանիկը, Սեպուհը:

«Նախագծի» շուրջ սկսված մի զրույցի ընթացքում, դիմելով Նախագծական Վ. Փափազյանին, Մուրատը ասել էր. « – Ինչ կ'ըսես աս վիճակին ... Տարիներով աշխատեցանք Երկրին համար, հիմա կը տեսնե՞ս, թե ինչ կ'ըսեն ... Սոցիալիստներ ենք եղեր, աշխարհի տէրտերը՝ մեզի են տուեր. անով պիտի զբաղինք. ֆապրիգաներու մէջ աշխատողներու շահերը պիտի պաշտպանենք եղեր. երկու ռուբլի տեղ հինգ ռուբլի պետք է շահին եղեր. բաղնիք, ընթերցարան, թատրոն պետք է պահանջենք եղեր. ա՞ս պիտի ըլլար մեր արյուն թափելու վերջը ...»[2]:

Փաստաթուղթը մերժեցին շատ խոշոր կազմակերպություններ՝ Հ.Յ.Դ. Բալկանի կ.կոմիտեն, Նավահանգստի (Բաթումի) քաղաքային կազմակերպությունը, Ամերիկայի Պատգամավորական ժողովը և այլն:

«Կովկասյան Նախագիծը» մերժող կազմակերպություններն իրենց ընդունած բանաձևերում շեշտում էին, որ փաստաթուղթը կազմելիս դաշնակցության խորհուրդը հաշվի չի առել հակառակ իրողություններն ու փաստարկները, խորությամբ չի վերլուծել հայությանը շրջապատող պայմանները, որի պատճառով հանգել է կյանքից կտրված եզրակացությունների: Նրանք նաև ընդգծում էին, որ «Նախագծի» դեմ Հ.Յ.Դ. արտասահմանյան ու անդրկովկասյան մարմինների հարուցած բուռն դժգոհությունը ինքնին ապացույց է, որ այն անհամապատասխան է դաշնակցության գլխավոր նպատակին ու հայկական հեղափոխության շահերին:

---

[1] **«Հայրենիք»**, N 2 (408), փետրվար, 1960, էջ 53:
Դարդերը:

[2] **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 419:

Քանի որ 1905թ. տեղի ունեցած քննարկումների ժամանակ կ.կոմիտեների ճնշող մասը, այնուամենայնիվ, արտահայտվել էր «Կովկասյան Նախագծի» օգտին, ուստի դրա դեմ հանդես եկող Հ.Յ.Դ. կազմակերպությունները, ինչպես 1905թ., նույնպես 1906թ. ընթացքում պաշտոնական գրություններով, համախոսականներով ու որոշումներով կրկին ու կրկին մերժում էին «Նախագիծը», միաժամանակ խիստ քննադատության տակ առնում դրա կողմնակիցներին, հատկապես Հ.Յ.Դ. կովկասյան կազմակերպություններին, որոնք փաստաթղթի առավել հետևողական ջատագովներն էին:

«Նախագծի» քննարկումների ընթացքում ի՞նչ հարցերի շուրջ էին տեղի ունենում աննախընթաց տարաձայնությունները, խմորումներն ու խլրտումները: Դրանք հիմնականում տեղի էին ունենում երեք խնդիրների շուրջ.

1. **Սոցիալիստական գաղափարախոսության և գործելակերպի որդեգրման խնդրի շուրջ**: Այս խնդիրը պարունակում էր մի շարք ենթահարցեր, այն է՝ կուսակցության գործունեությունը նաև Կովկաս տեղափոխելու նպատակահարմարությունը. Թուրքահայության ազատագրական պայքարի թուլացման հնարավորությունը. բանվորական շարժման մեջ մխրճվելու սահմանները. ռուսական պետության նկատմամբ վերաբերմունքը. Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունների հետ հարաբերությունները: Կովկասում սոցիալիստական գործունեության պայմանների համապատասխանությունը կուսակցության ծրագրային պատկերացումներին. հայ իրականության կողմից սոցիալիզմի ընկալունակության աստիճանը. դասակարգային պայքարի տեսության գործադրության սահմանները հայկական հասարակության մեջ:

2. **Ֆեդերացիայի գծով**: Նպատակահարմարության աստիճանը. իրագործման հնարավորությունները. սկզբունքի որդեգրման ազդեցությունը անկախության գաղափարի վրա:

3. **Տաճկահայ դատի գծով**: Հ.Յ.Դ. կովկասյան գործունեության անդրադարձը արևմտահայության ազատագրական պայքարի վրա. կուսակցության կառուցվածքի հավանական փոփոխությունը. Երկրում զինման գործի բարելավումը և առաջիկա ապստամբության վայրի ընտրությունը:

«Նախագծի» քննարկման ժամանակ կուսակցության անդամների միտքը գերազանցապես զբաղված էր **կովկասահայ դատով** կամ սոցիալիստական կողմնորոշման խնդրով:

Արդեն ասվել է, որ 1905թ. Ռուսաստանում սկսված մեծ հեղափոխությունն ընթանում էր սոցիալիստական գաղափարների և նշանաբանների ազդեցության տակ: Սոցիալիզմը հաղթարշավ էր կատարում երկրով մեկ և միլիոնավոր զանգվածների կողմից ընկալվում էր որպես դարաշրջանի ամենաառաջավոր գաղափար:

Հայ երիտասարդությունը նույնպես համակվել էր սոցիալիստական մտայնությամբ ու մղումներով և ռուսական սոցիալիզմի գաղափարների հմայքով ընդգրկվել էր համառուսաստանյան ազատագրական շարժման մեջ, հատկա-

պես հայկական գաղութային խոշոր կենտրոններում՝ Բաքվում, Թիֆլիսում, Ռոստովում, Մոսկվայում, Պետերբուրգում, ուր առանձնապես ուժգին էր հեղափոխության հորձանքը:

Դաշնակցության նշանավոր գործիչ Արտաշես Չիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան) պատկերավոր է ներկայացրել այդ օրերի երիտասարդության հոգեվիճակը, գրելով.

«Սոցիալիզմը մոդա էր: Ամոթ էր սոցիալիստ չլինել: Ամեն մեկ պատվավոր մարդ, որ պուրժուա կամ յետադեմ մակդիրը չէր ուզեր իր վրայ վերցնել, պետք է ինքզինքը սոցիալիստ հռչակեր: Եվ ո՞ր մտավորականը և մանավանդ երիտասարդը կրնար հանդգնություն ունենալ չհագնել սոցիալիստի զգեստը: Ամեն մարդ կը շտապեր իր վրայեն նետել ամեն գաղափար, որ կրնար վարկաբեկել կամ կասկածելի դարձնել զինքը իբրև ոչ բավականաչափ ուղղափառ հետևորդ սոցիալիզմի »[1]:

Իրոք, այլևս վեճ չկար սոցիալիստ լինելու կամ չլինելու մասին: Խոսքը միայն այն մասին էր, թե Ռուսաստանի սոցիալիստական կուսակցություններից որին պետք է հետևել: Այդ կուսակցություններից ամենաուժեղը երկուսն էին՝ սոցիալիստ-դեմոկրատականը և սոցիալիստ-հեղափոխականը (էս-էռ):

Հայ սոցիալիստ մտավորականները, հատկապես երիտասարդները, հարում էին սոցիալիստական այդ երկու կուսակցություններից որևէ մեկին:

Դաշնակցական մտավորականության ընտրությունն, ինչպես և պետք էր սպասել, ընկավ ռուս սոցիալիստ հեղափոխական (էս-էռ) կուսակցության վրա: Ա. Չիլինգարյանը ցույց է տվել, որ այդ երևույթի պատճառները մեկից ավելի էին և պայմանավորված էին դաշնակցության ձևավորման ու անցած ճանապարհի առանձնահատկություններով:

Ա) Դաշնակցության հիմնադիրները ժամանակին գտնվել են ռուս նարոդնիկության ուժգին ազդեցության տակ, իսկ Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը և էլի ուրիշներ հարել էին նարոդնիկների կազմակերպությանը: Նույնիսկ դաշնակցությունը ձևավորվելուց շատ տարիներ հետո, նրա ղեկավար գործիչները համակրանքով ու մեծ պատկառանքով էին արտահայտվում նարոդնիկական շարժման ղեկավար գործիչների մասին, շարժում, որի գաղափարների իրագործման համար պայքարի անմիջական ժառանգորդը սոցիալիստ- հեղափոխականների կուսակցությունն էր:

Բ) Սոցիալիստ-հեղափոխականները, ասել է թե՝ նոր ժամանակների նարոդնիկները, իրենց գաղափարների իրականացումը կապել էին **գյուղացիության** ազատագրական կռվի հետ: Նրանք գտնում էին, որ Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հիմնական ուժը գյուղացիությունն է, քանի որ նա է սոցիալիզմի գաղափարի կրողը, որ ռուս գյուղացին ինքը պատրաստի սոցիալիստ է, և դա բացատրում էին ռուսական գյուղացիական համայնքով:

[1] **«Հայրենիք»**, N 1, նոյեմբեր,1922, էջ 56:

Ռուսաստանում, ասում էին նրանք, բացի կալվածատիրական և վանքապատկան հողերից, հողի մյուս, մեծագույն մասը մասնավոր սեփականություն չէ, այլ պատկանում է գյուղի համայնքին և պարբերաբար ենթարկվում վերաբաժանման: Այլ խոսքով, ռուս գյուղացու մոտ չկա կամ համարյա չկա սեփականատիրական զգացում, այսինքն՝ նրա մոտ գերիշխում է կոլեկտիվիստականը:

Ռուս մարքսիստները կտրականապես մերժում էին այս բացատրությունը, գյուղացիությանը համարում հետադեմ դասակարգ՝ անընդունակ ինքնուրույն գնալու սոցիալիստական վերափոխումների: Չնայած դրան, հեղափոխություն քարոզող սոցիալիստ-հեղափոխականների հետևից գնում էին ոչ միայն գյուղացիական միլիոնավոր զանգվածներ, այլև հասարակական մյուս շերտերի աշխատավորական խավեր, մտավորականության հոծ ջոկատներ:

Ինչ վերաբերում է դաշնակցության գաղափարական ազդեցության տակ գտնվող հայ մտավորականությանը, ապա նրա զգալի մասը նույնպես հակում ուներ դեպի ռուս սոցիալիստ-հեղափոխական կուսակցության թե՛ տեսական և թե՛ կազմակերպական սկզբունքները: Դա միանգամայն բնական էր, քանզի այդ մտավորականությունը գերազանցապես սերվել էր գյուղից:

Գ) Ի տարբերություն ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատների՝ սոցիալիստ-հեղափոխականները պատմության մեջ մեծ տեղ էին հատկացնում ոչ թե կոլեկտիվին, այլ անհատին, հերոսին, նրա հետ կապում հեղափոխության հաջողությունը: Այստեղից էլ անհատական տեռորի մեծ կարևորությունը նրանց համար: Ինչպես նարոդնիկությունը, այնպես էլ նրա օրինական ժառանգ էսէռականությունը մինչ այդ տվել էին ցարական առավել անտանելի պաշտոնյաներին ահաբեկելու փայլուն օրինակներ: Այնպես որ, ամենայն իրավամբ կարելի է ասել, որ նարոդնիկ-էսէռ ահաբեկիչները դաշնակցական և հնչակյան ահաբեկիչների ուսուցիչներն էին շատ առումներով: Դա նույնպես պատահական չէր. հայ ազգային հեղափոխականները բնական հակում ունեին դեպի ռուս սոցիալիստ-հեղափոխականները:

Դ) Վերջապես, որոշ նշանակություն ուներ այն պարագան, որ դաշնակցության մեջ էին մտել կայսրության գաղութահայկական խոշոր կենտրոնների հայ կապիտալիստներ, որոնք հակված էին ազատական գաղափարների, և որոնց տնտեսական ու քաղաքական շահերը հակառակ էին բանվոր դասակարգի շահերին, դասակարգ, որի շահերի արտահայտիչը մարքսիստական կուսակցությունն էր՝ ՌՄՌԿ-ն:

Ճիշտ է, դաշնակցության մեջ կային նաև մարքսիստական մտայնություն և հակումներ ունեցող անհատներ, ինչպես, ասենք, Ռոստոմը, բայց կուսակցության մեջ գերիշխողը մնում էր այն հոսանքը, որ տեսականորեն ձգտում էր դեպի էսէռական սոցիալիզմ:

Ուստի միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչու Հ.Յ.Դ. կ.կոմիտեների, կազմակերպությունների և կուսակցության անդամների գերակշիռ մասը պաշտպանում էր «Նախագծի»՝ կովկասահայ դատի մասին հատվածը:

Այդպիսին էր, օրինակ, Արևմտահայաստանի Հ.Յ.Դ. ամենամեծ՝ Շամի (Վասպուրականի) կ.կոմիտեի որոշումը, ուր ասված էր.

«Նկատի ունենալով, որ ռուսական հեղափոխական շարժումների բուն պատճառները թաքնված են բյուրոկրատիկ կառավարության ռեժիմի մեջ, և որ միայն այդ ռեժիմի տապալումով է, որ համեմատորեն ազատ շունչ պիտի քաշեն բոլոր ճնշված տարրերը, ուստի անհրաժեշտորեն պետք է միանալ ռուս բոլոր հեղափոխական տարրերի հետ՝ ընդհանուր ուժով տապալելու բոլոր չարիքների արմատ՝ միապետական բյուրոկրատիկ կառավարությունը, մանավանդ եթե այդ բռնակալական ռեժիմի անկումով մահացու հարված կը տրվի ասիական բռնապետություններին»[1]:

Հանգամանորեն քննարկելով «Նախագիծը»՝ դրա նկատմամբ իր դրական վերաբերմունքն էր դրսևորել Դուրան-Բարձրավանդակի կազմակերպությունը, գալով հետևյալ եզրակացության.

«...Կովկասյան խնդիրը չինծու և արհեստական երևույթ չէ, այլ ունի իր լուրջ շարժառիթները: Ուստի կարծում ենք, որ կովկասյան գործը, եթե նույնիսկ մեզ և Սարուստանի՝ զանազան մարմիններին ցանկալի էլ չլինի, անհնար է կանգնեցնել: Մեր կարծիքով այդպիսի շարժումը ունի յուր ստիպողական պահանջը, ուրեմն և հարկավոր է »[2]:

Հ.Յ.Դ. Դուրան-Բարձրավանդակի կ.կոմիտեի կարծիքը խտացված ձևով արտահայտել էր Գևորգ Զաուշը՝ Կովկաս-Ռուսաստանի հայ զինյալներին հղած իր խոսքում: Քանի որ փաստաթուղթը, Զաուշի գրչին պատկանող, մեզ հասած հազվագյուտ փաստաթղթերից է, մենք այն հրատարակում ենք ամբողջությամբ (և առաջին անգամ).

«Սարուստանի զինուոր ընկերներին.

Սիրելիք.

Ցաւում ենք, արեան մէջ մկրտուած ընկերներ, որ դուք մոռացած Տաճկաստանի ու Կովկասի այս տագնապալի դրութիւնը, մոռացած ձեր ընկեր նահատակների վրէժը, ընկած էք այնպիսի ցնորքների յետև, որ կորստաբեր է երկար ու ձիգ տարիների ընթացքում ստեղծուած այն կազմակերպութեան, որի անունն է Դաշնակցութիւն. - ընկերներ, դուք պէտք է գիտնաք, որ ձեզ յաջորդող ընկերները, որ արեան ծովի մէջ լողացող նահատակ հայ ժողովուրդը, ձեր ճակատին պիտի դրոշմեն դաւաճանի սև անունը, եթէ դուք այնքան նեղ, այնքան կուսակցական լինիք, որ մոռանաք, կլանուիք միմիայն Կովկասեան կամ Տաճկահայ հարցով: Ձեզնից կոյր են նրանք, որ չեն ընդունում Տաճկաստանի գործի կարեւորութիւնը և Կովկասեան հարցի անհրաժեշտութիւնը, - դա դէմ է յեղափոխութեան, դա կոյր հոսանք է, որ արհամարհում են արեան մէջ

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 225:
Կովկաս, Ռուսաստան:
[2] «Նյութեր...», հատ. Դ, էջ 225:

խեղդուող ձեր ընկերները, մեզ թշուառներիս, կենդանի նահատակներիս հարկաւոր չեն նեղ կուսակցականներ, մեզ պէտք են յեղափոխականներ, որ ըմբռնում են ժամանակի պահանջները, որ մտածում են Տաճկահայ և Կովկասահայ ժողովրդեան վրայ հաւասարապէս: Ցաղողութիւն ենք մաղթում ազատութեան համար նահատակուող այն զինուոր ընկերներին, որ Դաշնակցութեան դրոշին, սկզբունքներին հաւատարիմ ընկնում են յանուն Հայութեան վիշտը իւր կրծքին: Իսկ մեր արիւնը թող անէծք լինի այնպիսիներին, որոնք կլանուած միմիայն Տաճկահայ կամ Կովկասահայ դատով, ուզում են քայքայել Դաշնակցութեան հոյակապ Կազմակերպութիւնը:

Ի.Դ. Դուրան-Բարձրավանդակի Կենդ.- Կոմիտէի

Գէորգ Զաուշ

Դուրան 1906թ. 17 հոկտեմբերի

Իսկականը կնքուած է իւր անձնական կնիքով»[1]:

Մոտավորապես նույն բովանդակությունն ունեին Հ.Յ.Դ. կովկասյան մարմինների ռայոնական, Այգեստանի (Գանձակի) շրջանային, Թավրիզի քաղաքային ժողովների ընդունած որոշումները:

Կովկասյան դատի՝ սոցիալիստական գաղափարների և դասակարգային պայքարի հարցերում դաշնակցական մտավորական դասի ոչ բոլոր ներկայացուցիչներն էին համակարծիք, որոնք ժխտում էին սոցիալիզմի գաղափարները կուսակցություն ներմուծելու նպատակահարմարությունը: Նրանք գտնում էին, որ սոցիալիզմը հայ իրականության համար այժմեական գործ չէ, այլ ժամանակաշրջանի գաղափարական հոսանքներից մեկը, որն ընդամենն ունի կրթիչ, դաստիարակիչ նշանակություն, այն էլ՝ մտավորական նեղ շրջանակների համար: Առավել ևս այդ գաղափարները չպետք է ուղեցույց լինեն դաշնակցության համար, որը հայ իրականության սոցիալ-տնտեսական ներկա պայմաններում գերազանցապես կատարում է ազգային ազատական (լիբերալ) գործ, քանի որ իր պատմական ծագումով, իր կատարած քաղաքական դերով, իրեն հարած ժողովրդական զանգվածների իշխող մտայնությամբ ու ձգտումներով եղել է և մնում է իրապես ազգային ազատական կուսակցություն՝ սոցիալիստական լինելով միայն իր գաղափարաբանությամբ: Նրանք համոզված էին, որ ազգային-ազատական տարրը դաշնակցության մեջ միշտ եղել է գերակշռող և այդպիսին էլ պիտի լինի, որքան ժամանակ հայ իրականության տնտեսական-սոցիալական և քաղաքական պայմանները հիմնովին փոխված չեն ի նպաստ բանվորական- սոցիալիստական շարժման:

Այստեղ շարադրված մտքերը պատկանում են Ա. Զիլինգարյանին, որը հեղինակել է մի շարք հոդվածներ՝ ուղղված «սոցիալիզմի բացիներով վարակված» իր կուսակից-սերնդակիցների հայացքների դեմ:

Ի մի բերելով դաշնակցության շարքերից ներս սոցիալիստական գաղա-

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց.1, գ. 43, թ.1:

փարների ներմուծման անհնարինության մասին տարբեր ժամանակներում արտահայտած իր տեսակետները՝ «Հայ քաղաքական մտքի դեգերումները» հայտնի աշխատության մեջ Արտաշես Չիլինգարյանը գրում էր.

«Մեր քաղաքական կյանքի մեջ իշխող գաղափարներու մեծագոյն մասը օտար միջավայրերու, բայց ոչ երբեք մեր հայրենիքի յետամնաց իրականութեան արդյունք և թելադրություն է:

Մեր մտավորականությունը, որ գերազանցապես սնուեր և մեծցեր է գաղութներու քաղաքական մթնոլորտին մեջ, ներշնչուեր է այդ օտար միջավայրերու առաջավոր գաղափարներեն, յաճախ անվերապահորեն յուրացուցեր է զանոնք և տիրական թափով մը մղուեր է հետապնդելու զանոնք նաև հեռավոր հայրենիքի տխուր պայմաններուն մեջ, առանց նկատի առնելու, թե որքա՞ն խորն է տարբերությունը օտար և հայրենի միջավայրերուն, և որքա՞ն ուրեմն խորթ ու ցնորական են մեր երկրի համար գաղութային մտայնությունները, գաղափարները, նշանաբանները, որպեսզի անոնք կարողանան իբրև հիմք ծառայել մեր քաղաքական ծրագիրներու համար»[1]:

Դաշնակցության ղեկավարության կովկասյան կողմնորոշման դեմ հանդես էին գալիս ոչ միայն անհատ գործիչներ, այլև մի շարք կ.կոմիտեներ և բազմաթիվ կուսակցական կազմակերպություններ:

Կրկին ու կրկին անդրադառնալով «Նախագծում» հիմնական տեղ զբաղեցնող կովկասահայ դատի խնդրին՝ Հ.Յ.Դ. Բալկանի կ.կոմիտեն դեկտեմբերին գումարեց արտակարգ շրջանային ժողով, որի ընթացքը ցույց տվեց, որ նրա կազմակերպությունները նախորդ շրջանային ժողովից հետո ավելի վճռականորեն են տրամադրված փաստաթղթի դեմ: Ժողովի ընդունած բանաձևում շեշտված էր, որ կովկասյան դատը անհամապատասխան է դաշնակցության գլխավոր նպատակին՝ հայկական հեղափոխության շահերին, որ կուսակցության շարքերն անտեղյակ են, թե այն ինչպես է բռնազբոսիկ կերպով մտել կուսակցության պայքարի ոլորտի և ուղղության մեջ՝ պատճառ դառնալով կուսակցության ներսում ներկա ցավալի ալեկոծությանը: Բանաձևում ընդգծված էր այն միտքը, որ Կովկասի գյուղացի, գործավոր թե զինվոր դաշնակցականների մեծ մասը հակառակ է «Նախագծին», բայց Հ.Յ.Դ. կովկասյան որոշ մարմիններ և առաջին հերթին ռայոնական ժողովը անհասկանալի համառությամբ և արհեստականորեն հետամուտ են փաստաթուղթն անպայման մուծելու դաշնակցության ծրագրի մեջ: «Ուստի, - կարդում ենք ժողովի արձանագրություններում, - մեր բողոքը կը հայտնենք Կովկասի մեր բոլոր բարձրը մարմիններու դեմ, որոնք, չնայած որ սոցիալական խնդիրը - եթե երբեք հարկ էր - կազմակերպության հետ և անոր անունին կապելու իրավունքը կը պատկաներ միայն և միայն ընդհանուր ժողովին, ցավալի համառութեամբ ուզեցին տակ տուին կազմակերպական այդ տարրական օրինապահությունն ու

[1] «Հայրենիք», N 1, նոյեմբեր, 1922, էջ 55:

կարգապահությունը՝ մինչ արևմտեան և արևելեան բյուրոները դեռ նոր՝ խնդիրը կազմակերպութեան մարմիններու ուշադրութեանը կը յանձնեին, որպեսզի այդ մասին իրենց կարծիքը տան ընդհանուր ժողովին, որի իրավասութեան կ'իյնար հարկ եղածը տնօրինել ու գործադրութեան դնել»[1]:

Հ.Յ.Դ.Նավահանգստի (Բաթումի) քաղաքային կազմակերպության 1905-1906թթ. տեղի ունեցած բոլոր ժողովներում, որոնցում քննվել է կովկասյան դատի խնդիրը, ելույթ ունեցողների մեծ մասը արտահայտվել է դրա դեմ:

Հարցի նկատմամբ Բաթումի կազմակերպության վերաբերմունքի տեսակետից անորոշ էր ժողովներից մեկում շարքային դաշնակցական Լ. Առաքելյանի մտորումները: Իր ելույթում նա շեշտում էր, որ եթե Հ.Յ.Դ.-ն ընդունի կովկասյան դատը, ապա կզրկվի ռուսահայ դրամատերերի, վաճառականների, բուրժուաների փողերից: Պարզ է, որ սրանք իրենց գումարներն այլևս չեն տա մի կազմակերպության, որը կանգնելով իրենց հակառակորդ բանակի՝ աշխատավորների գլուխ, պայքար կսկսի հարուստ դասակարգի դեմ նրան տապալելու համար: Ինչ խոսք, այդ դասակարգը չի ցանկանա սեփական ձեռքով փոռել իր գերեզմանը:

Այս պարագայում, այնուհետև ասում էր նա, միայն մի ելք կմնա՝ դիմել բռնի միջոցների՝ սպառնալիքի, մտրակի ու սրի միջոցով հայ հարուստներից փող կորզելու համար: Գուցե կ'գտնվեն մարդիկ, որոնք կարդարացնեն և այդ միջոցները, բայց դրանք, անարդար լինելով հանդերձ, չեն լինի գործնական, որովհետև կիրառելի չեն լինի տեսականորեն: Ոչ մի գաղափարական կազմակերպություն չի կարող հույս դնել մարդկանց ահաբեկման վրա, ոչ մի ազնիվ մարդ չի համաձայնի այդպիսի միջոցներով հավաքված փողերով բարի գործ կատարել:

Լ. Առաքելյանն իր ելույթը ավարտել էր հետևյալ խոսքերով. «Հենվելով զուտ աշխատավորական խավերի վրա՝ դաշնակցությունը անխուսափելիորեն իրեն կդատապարտի դրամական սնանկության: Կռվելով մյուս դասակարգերի դեմ նա կնոսրացնի իր շարքերը և արտաքին թշնամու դեմ-հանդիման կկլատի իր ուժը»[2]:

«Նախագծի» քննարկումների ընթացքում այսպիսի դատողություններ արվում էին նաև այլ կուսակցական կազմակերպություններում:

Կովկասյան դատի դեմ հանդես եկող դաշնակցականները գտնում էին, որ ներկայումս դաշնակցության համար երկու ճանապարհ կա. ա) կամ բոլորովին ձեռքերը լվանալ տաճկահայկական դատից և, տրորելով իր 15-ամյա գործունեությունը, կանգնել զուտ սոցիալիստական հողի վրա, մնալով ամեն տեղ տրնտեսական շահեր պաշտպանող գաղտնի կազմակերպություն. բ) կամ դեն ձգել իր վրայից այդ նոր հագած սոցիալիստի վերարկուն, գործել իբրև թուրքահայ-

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 178:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 112, ց. 2, գ. 66, թ. 2:

կական դատի պաշտպան՝ մղելով հեղափոխական-քաղաքական-ազգային կռիվ տաճիկ կառավարության դեմ: Միաժամանակ Տաճկահայաստանից դուրս, տարբեր երկրներում, կուսակցությունը կարող է հանդես գալ իբրև լեգալ կազմակերպություն, չխառնվելով այդ երկրների ներքին հակասություններին, առավել ևս՝ գաղտնի քաղաքական պայքարներին, այլ գործել զուտ օրինական, գերազանցապես կուլտուրական, հողի վրա:

Այդ ամենից նրանք եզրակացնում էին.

1. Դաշնակցությունը պետք է լինի զուտ ազգային-հեղափոխական կազմակերպություն, որը քաղաքական կռվի միջոցով աշխատելու է ձեռք բերել թուրքահայ ժողովրդի համար կյանքի, պատվի և գույքի ապահովություն:

2. Դաշնակցությունը չի զբաղվելու սոցիալիստական խնդիրներով և ոչ էլ մղելու է դասակարգային կռիվներ: Նա չի հիմնվելու որևէ դասակարգի վրա, այլ լինելու է վերդասակարգային կազմակերպություն:

3. Տաճկահայաստանից դուրս դաշնակցությունը կարող է դառնալ լեգալ կազմակերպություն:

«Նախագծի» քննարկումների ընթացքում թեժ վիճաբանություններ էին ծագում նաև **ֆեդերացիայի խնդրի** շուրջ:

Ֆեդերացիայի դեմ հանդես եկողների հիմական պատճառաբանությունն այն էր, որ ցարական իշխանությունների հակահայ քաղաքականության պայմաններում չափազանց վտանգավոր է կառավարության ձեռքը տալ նոր պատրվակ, որից օգտվելով, նա կուժեղացնի հալածանքները հայերի նկատմամբ: Ֆեդերացիայի խնդիրը, ասում էին նրանք, հուզում է նաև ավելի մեծ ու բազմաքանակ լեհ ժողովրդին, հուզում է ֆիններին: Թող սկզբից նրանք հրապարակ իջնեն իրենց պահանջով, իսկ փոքրաթիվ ռուսահայությունը պետք է հետևի իրադարձությունների հետագա զարգացմանը և սպասի հարմար պահի՝ իր համար նույնպես ինքնավարություն պահանջելու համար:

Ֆեդերացիայի կողմնակիցները գտնում էին, որ առանց ակտիվ պայքարի ոչ մի ժողովուրդ չի կարող հասնել իր նպատակներին, այդ թվում նաև՝ ինքնավարության:

«Նախագծում» ինքնավարության ու ֆեդերացիայի բաժինը գրված էր կուռ տրամաբանությամբ ու անխոցելի ինտելեկտուալ մակարդակով:

Մենք ենթադրում ենք, որ «Նախագծում» ֆեդերացիային վերաբերող բաժնի հեղինակները դաշնակցության երկու խոշոր տեսաբաններն են՝ Գարեգին Խաժակը և Եղիշե Թոփչյանը: Մեր այդ ենթադրությունը հիմնված է այն իրողության վրա, որ փաստաթղթի քննարկման ընթացքում նրանք, իբրև քաղաքական գործիչներ, կուսակցության լիդերներ, լրագրողներ ու հրապարակագիրներ, ֆեդերացիայի հարցի մասին բազմաթիվ անգամներ հանդես էին եկել մամուլի էջերում, հրապարակային ժողովներում և քաղաքական բանավեճերում հիմնավորելով «Նախագծի» ֆեդերացիայի գաղափարը, արծարծելով քաղաքական-տնտեսական հարցեր, հարթելով գործնական քաղաքականության նոր ուղիներ:

Ֆեդերացիայի վերաբերյալ դաշնակցության այդ երկու տեսաբանների աշխատությունների թվում հատկապես առանձնանում է Գարեգին Խաժակի «Դեպի ֆեդերացիա» տեսական լուրջ հետազոտությունը, որը լույս է տեսել 1906թ. Թիֆլիսում, «Ցառաջի» գրադարանի շարքում: Այդ տաղանդավոր մշակումը, մեր կարծիքով, նրա գրական վաստակների թվում ամենաարժեքավորն է, որը կյանքի հասունացած պահանջների արգասիք լինելով՝ կարևոր ներդրում է Կովկասում ֆեդերացիայի կիրառման հնարավորությունների հետազոտման բնագավառում:

Քննարկումները բուռն էին նաև **թուրքահայ դատի** շուրջ:

Քննադատները գտնում էին, որ կովկասյան ծրագիրն ընդունելուց հետո դաշնակցությունն աստիճանաբար կհեռանա թուրքահայկական դատից և, ի վերջո, կհրաժարվի դրանից:

Այդպես էին կարծում ոչ միայն թուրքահայ շարքային և ղեկավար, այլև կուսակցության կովկասահայ մտավորականության զգալի մասը: Նրանք պահանջում էին «Նախագծում» հստակ ձևակերպել այն միտքը, թե կուսակցությունը, ընդունելով կովկասյան ծրագիրը, դույզն անգամ չի նահանջելու թուրքահայ դատից:

Կովկասահայ դաշնակ ղեկավարներից Արտաշես Չիլինգարյանը, քննադատելով «Նախագծի» թուրքահայկական դատին վերաբերող մասը, գտնում էր, որ ինքը համոզված չէ, թե կուսակցությունը նախկինի պես կառչած է մնալու այդ դատին: Իր միտքը հաստատելու համար, նա, որպես փաստարկ, վկայակոչում էր կազմակերպության կողմից կովկասյան դատի որդեգրման իրողությունը:

«Հայ քաղաքական մտքի ղեգերումները» ուսումնասիրության մեջ նա նշել է.

«Թուրքահայությունը ցարդ կապված էր Կովկասեան Հայաստանի հետ՝ թուրքահայ դատի միջոցով: Հ.Յ.դաշնակցությունը տասնեակ տարիներու յամառ և տքնաջան աշխատանքով սորվեցուցեր էր կովկասահայ զանգուածները նայելու տաճկահայ դատի վրայ իբրև իրենց ամենեն հրատապ և կենսական հարցին վերայ. միաժամանակ Հ.Յ.դաշնակցությունը սորվեցուցեր էր տաճկահայ զանգուածները նկատել կովկասահայությունը ոչ միայն իր արյունակիցը, այլև իր հավատարիմ ու անձնուեր գործակիցը գոյութեան և ազատութեան մեծ պայքարին մեջ, զոր հայ մարտական կազմակերպությունը կը մղեր տաճկական հայասպան բռնակալութեան դեմ»[1]:

Ա. Չիլինգարյանը և կուսակցության մեջ իր նման մտածողները, որոնք սոցիալիզմի գաղափարների մուտքը դաշնակցությունից ներս աննպատակահարմար էին համարում Անդրկովկասի հետամնաց իրականության պայմաններում, առավելապես Թուրքահայաստանի դեպքում լիովին բացառում էին այն:

«Հ. Յ. դաշնակցությունը ընկերավարական գործունեության համար հող

[1] «Հայրենիք», N 11, սեպտեմբեր, 1923, էջ 139:

չունի Թուրքիոյ, հետևաբար նաև Հայաստանի մեջ, - գրում էր Ա. Ջիլինգարյանը, - որովհետև հոն չի կայ կապիտալիստական խոշոր տնտեսություն, չի կան անոր ստեղծագործ բովեն դուրս եկած արդյունաբերող դասակարգեր՝ ճարտարարուեստական բանուորության և պուրժուազի, չի կայ և չի կարող ըլլալ դասակարգային պայքար՝ սոցիալիստական իմաստով. մեկ խոսքով՝ չի կան առարկայական այն պայմանները, որոնց մեջ սոցիալիստական կազմակերպություն մը ի վիճակի ըլլայ իրագործելու Եվրոպայեն առնուած ընկերավարական ծրագիրները»[1]:

Դաշնակցական մամուլի առանձին օրգաններ ևս, որոնք քննադատում էին Անդրկովկասում գործելու կուսակցության մտադրությունը, գտնում էին, որ կազմակերպությունը առաջվա պես պետք է միայն ծառայի Թուրքահայ դատին: Այդպես էր գտնում, օրինակ, Թիֆլիսում լույս տեսնող Հ.Յ.Դ. օրգան «Ժամանակ» թերթը[2]: Դաշնակցական թերթի այս տեսակետը պաշտպանում էր հակադաշնակցական «Մշակը» իր 1906թ. 281 և 282 համարներում:

Սակայն «Նախագծում» Թուրքահայ դատի ձևակերպումները ճիշտ էր համարում կովկասահայ դաշնակցականների մեծամասնությունը, ինչպես նաև՝ Թուրքահայ դաշնակցական կազմակերպություններից շատերը: Վերջիններս միաժամանակ անտեղի և մնասակար էին համարում դաշնակցության այն ղեկավար և շարքային անդամների բարձրացրած տագնապը, թե կուսակցությունը բռնել է Թուրքահայ դատից աստիճանաբար հրաժարվելու ուղին:

1906թ. հոկտեմբերի վերջերին Թիֆլիսում համագումարի հավաքվեցին Կովկասում բնակվող Թուրքահայ դաշնակցականների ներկայացուցիչները: Երկար վեճերից հետո, հոկտեմբերի 30-ին, համագումարը հանդես եկավ մի հայտարարությամբ, ուր ասված էր, թե Թուրքահայկական դատից հրաժարվելու մասին խոսակցությունները կամա թե ակամա նպաստում են դաշնակցությանը արևմտահայության աչքում վարկաբեկելուն: Հայտարարության վերջում նշված էր. «Կովկասաբնակ տաճկահայ դաշնակցականների համագումարը սրանով կոչ է անում ամբողջ հայ հասարակության և, մասնավորապես, Կովկասի դաշնակցականներին՝ զգույշ մնալ այդ... պրոպագանդայից»[3]:

Դաշնակցության օրգան «Երկիր» թերթը տպագրել էր Թուրքահայաստանից ստացած մի շարք նամակներ, որոնց թվում նաև՝ Մուշ-Սասունի պատասխանատու մարմնի ներկայացուցիչ Գևորգ Չաուշի՝ «Ռուսաստանի զինուոր ընկերներին» ուղղված կոչը՝ իր իսկ ստորագրությամբ և կնիքով:

Զինվորներին հիշեցնելով Տաճկաստանի և Կովկասի տագնապալի դրությունը և դաշնակցության հանդեպ նրանցից շատերի բռնած կորստաբեր ընթացքը՝ Չաուշը գրում էր.

---

[1] **«Հայրենիք»**, N 1, նոյեմբեր, 1922, էջ 54:
[2] **«Ժամանակ»** (Թիֆլիս), N 9, 13 հունվարի 1907թ.:
[3] **«Դրոշակ»**, N 11, նոյեմբեր, 1906, էջ 176:

«Ընկերներ, դուք պետք է գիտնաք, որ ձեր յաջորդ ընկերները, արեան ծովի մեջ լողացող հայ ժողովուրդը ձեր ճակատին պիտի դրոշմեն դավաճանի սև անունը, եթե դուք այնքան նեղ, այնքան կուսակցական լինեք, որ մոռանաք, կլանվիք միմիայն կովկասեան կամ տաճկահայ հարցով: Ձեզնից կոյր են նը-րանք, որ չեն ընդունում տաճկահայի գործի կարևորությունը և կովկասեան հարցի անհրաժեշտությունը. դա դեմ է հեղափոխութեան, դա կոյր հոսանք է, որ արհամարհում են արեան մեջ խեղդուող ձեր ընկերները: Մեզ՝ թշվառներիս, կենդանի նահատակներիս, հարկավոր չեն նեղ կուսակցականներ, մեզ պետք են յեղափոխականներ, որ ըմբռնում են ժամանակի պահանջները, որ մտածում են տաճկահայ և կովկասահայ ժողովրդեան վրայ հավասարապես: Հաջողություն ենք մաղթում ազատության համար նահատակվող այն զինվոր ընկերներին, որ դաշնակցութեան դրոշին, սկզբունքներին հավատարիմ ընկնում են հանուն հայության: Իսկ մեր արյունը թող անեծք լինի այնպիսիներին, որոնք կլանված միմիայն տաճկահայ կամ կովկասահայ դատով, ուզում են քայքայել դաշնակցութեան հոյակապ կազմակերպությունը»:

«Կովկասյան Նախագիծը» կազմվեց և հրատարակվեց 1905-ի երկու-երեք ամիսների ընթացքում, բայց այն, ըստ էության, կուսակցության գաղափարական գործիչների տարիների մտավոր լարված աշխատանքի արդյունք էր և, լինելով այդպիսին, համահունչ էր դարի առաջադեմ գաղափարներին, եվրոպական սոցիալիստական շարժման նվաճումներին ու առաջադրված չափանիշերին, միաժամանակ արձագանք էր անդրկովկասյան ժողովուրդների սոցիալտնտեսական և քաղաքական պահանջներին, որ առաջադրում էր կյանքը:

Թեև «Նախագիծը» կուսակցության մեջ ստեղծեց դժգոհություններ ու հետագայում նրա շարքերում առաջ բերեց մեծ աղմուկ, բայց կարևոր դեր խաղաց կազմակերպության հետագա զարգացման տեսակետից:

Անդրադառնալով «Նախագծի» պատմական նշանակությանը՝ «Հայ անկախութեան գաղափարը մերձավոր անցեալին մեջ» հոդվածում Վահան Նավասարդյանը գրել է.

*«1905-ի «Կովկասեան Նախագիծը» ոչ միայն ընդարձակեց հայ մեծ քաղաքական կազմակերպութեան գործունեութեան գետինը, այդ թուից սկսած դաշնակցությունը ոչ միայն փոխուեց, մեծցավ ու ծավալուեց **քանակով**, իր գործի շրջանակների մեջ առնելով նաև ռուսական **Հայաստանը**, այլև փոխուեց **որակով**: **Թուրքահայ** դատը փոխարինուեց **համահայկական դատով**, իսկ համահայկական դատը Կովկասի մեջ է՛լ ավելի շերտավորուեց և դարձավ հայ **աշխատավոր** ժողովրդի դատ: ... Տարիները ի զուր չէին անցել դաշնակցութեան առաջավոր դեմքերի համար: Անդրանիկ համագումարից մինչև «Նախագիծը» տևող շրջանին ընդարձակուել էին դաշնակցութեան քաղաքական մտքի հորիզոնները, Թուրքահայութեան փոխարեն նրա մտածողութեան մեջ ցցուել էր ողջ հայությունը, իսկ Թուրքահայաստանի փոխարեն՝ ամբողջական Հայաստանը: Նա դարձել էր **համահայկական** կուսակցություն: Նրա հա-*

մար այլևս ռուսահայ նահանգները ևս Հայաստանի հողեր էին: Ծավալվում էր դաշնակցությունը՝ աննկատելիորեն դարբնելով հայ հողի և հայ ժողովրդի ամբողջականության գաղափարը»[1]:

Ինչպես տեսնում ենք, կուսակցության շարքերում «Նախագծի» քննարկումները տեղի էին ունենում ամենալայն ժողովրդավարական սկզբունքներով: Միանգամայն այլազան և տրամագծորեն հակառակ կարծիքներ էին հայտնում ոչ միայն տարբեր կ.կոմիտեներ, այլև նույն կ.կոմիտեի մեջ մտնող կազմակերպություններ, նույն կազմակերպությունների մեջ մտնող անհատներ:

«Նախագծի» շուրջ ծայր առած վեճերն ու տարաձայնությունները բնական էին և նույնիսկ՝ անհրաժեշտ: Փաստաթուղթը քննադատողների մեծամասնության նպատակն անկեղծ էր ու կառուցողական. մարդիկ ցանկանում էին իրենց կազմակերպությունը տեսնել ավելի համախմբված ու ավելի միասնական, ուզում էին տեսնել ավելի հզոր՝ գաղափարական բագաժով և կազմակերպական կառույցներով: Միայն այդ դեպքում կուսակցությունն ի վիճակի կլիներ կատարելու այն վիթխարի խնդիրները, որոնք կանգնած էին իր գործունեության, իր պայքարի ճանապարհին:

Բայց բանն այն է, որ «Նախագծի» բոլոր քննադատողները չէին, որ մտահոգ էին կուսակցության ամրապնդման խնդրով: Ընդհակառակը, ներկուսակցական պայքարի դժվարին ժամանակներ ապրող կազմակերպության մեջ շարունակվող հակասությունները, վերջիվերջո, հանգեցրին հերձվածի: Գաղափարական հողի վրա ձևավորվեցին ընդդիմադիր երկու խմբավորումներ, որոնք ծայր ձախից և ծայր աջից բացահայտ ու զորավոր պայքար սկսեցին կուսակցության նոր ծրագրի նախագծի, կազմակերպության ղեկավար մարմինների դեմ:

Ծայրահեղ ձախ թևը բռնեցին, այսպես կոչված, **անջատականները**, որոնք դեմ էին, որ դաշնակցությունն ունենա սոցիալիստական մշակված ծրագիր և սոցիալիստական պրակտիկ գործունեություն: Լինելով համոզված սոցիալիստներ՝ նրանք, սակայն, չէին հավատում, թե կուսակցությունն ի վիճակի կլինի Կովկասում, չխոսելով արդեն Թուրքահայաստանի մասին, պայքար ծավալել սոցիալիզմի համար: Նրանց հիմնական պահանջն էր՝ կուսակցությունը միայն ու միայն պետք է զբաղվի Թուրքահայոց դատով, որի համար էլ հենց նա ստեղծվել էր: Կովկասում սոցիալիստական գործունեությունը նրանք ուզում էին վերապահել իրենց:

Երկրորդ, ծայրահեղ աջ թևը բռնեցին, այսպես կոչված, **միհրանականները**, որոնք նույնպես պահանջում էին, որ դաշնակցությունը զբաղվի միմիայն Թուրքահայ դատով: Եվ որովհետև միամտորեն կարծում էին, թե սոցիալիստական գաղափարախոսությունն է պատճառը, որ դաշնակցությունը մխրճվել

[1] **«Հայրենիք»**, N 4 (16), փետրվար, 1924, էջ 83: (Մեջբերված հատվածի բոլոր ընդգծումները հոդվածի հեղինակինն են:)

է կովկասյան կամ ռուսահայկական գործերի մեջ, ուստի պահանջում էին, որ կուսակցությունն իր ծրագրի նախագծից ամբողջովին դուրս նետի սոցիալիզմին վերաբերող բաժինը:

Դաշնակցությունը, որ արդեն հիմնորեն որդեգրել էր այն տեսակետը, թե ինքն ամբողջ հայ աշխատավորության կուսակցությունն է և պարտավոր է «պաշտպանել հայ աշխատավոր զանգվածներուն բովանդակ շահերը՝ թե՛ տնտեսական-դասակարգային, թե՛ մարդկային-քաղաքական և թե՛ ազգային-մշակութական»՝ չէր կարող ընտրություն կատարել այս թևերի միջև: Նա պետք է գնար իր ուղիով՝ հաղթահարելով սեփական շարքերում ծնունդ առած ծայրահեղ աջ և ծայրահեղ ձախ, մեկը մյուսից վտանգավոր, հոսանքները:

Հարկ է հանգամանորեն ծանոթանալ դաշնակցության մեջ առաջացած երկու թևերի ներկայացուցիչների նպատակներին ու գործելակերպին:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿՑԱԿԱՆՆԵՐ: ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Բոլոր դարաշրջաններում և բոլոր աննպաստ պայմաններում հայ ժողովրդի ազգային բնազդը միշտ եղել է արտակարգ ուժեղ և անհաղթահարելի է եղել ազգային մարմինը քայքայելուն միտված կրոնական, քաղաքական, գաղափարական և բոլոր այլ տեսակի հոսանքների դեմ հանդիման: Հենց այդ կայուն ազգային հատկանիշն է եղել հայ ժողովրդի, իբրև էթնիկական ամբողջության, գոյապահպանման ամրակուռ վահանը:

Բայց և այնպես ժողովրդի պատմության բոլոր շրջափուլերում ի հայտ են եկել հայեր, մեծ մասամբ կրթված երիտասարդներ, որոնք կտրվելով իրենց ժողովրդի մայր զանգվածից, հատկապես օտար ափերում, հեշտությամբ ենթարկվում էին տարբեր ազգերի մշակութային խոր ազդեցությանը, ներգրավվում կրոնական զանազան դավանանքների ոլորտը և անխուսափելիորեն ենթարկվում ապազգայնացման: 19-րդ դարի 80-ական թվականներից սկսած՝ նույնը տեղի էր ունենում ռուսահայ երիտասարդության հետ, հատկապես այն երիտասարդների, որոնք բնակվում էին ռուսական կենտրոններում և ենթակա էին ռուսական, նախ լիբերալ, ապա և սոցիալ-դեմոկրատական մտքի ազդեցությանը:

Ռ. Դարբինյանը (Ա. Զիլինգարյան) «Ռուսական ճակատի վրա» իր հոդվածում նշում էր, որ ոչ միայն հայ երիտասարդությունը, այլև, լայն իմաստով, մտավորականությունը զարմանալի տկարություն էր հանդես բերում ապազգային գաղափարների հանդեպ և, աստիճանաբար կլանվելով ռուսական հզոր մշակույթի կողմից, օտարանում, հեռանում էր հայ քաղաքական կյանքից և սկսում էր ապրել Ռուսաստանի օրենքներով ու շահերով: «Մտավորականության այն մասը, - գրում էր նա, - որը դեռ կապված էր հայ ժողովրդի և հայ

իրականության հետ, սկսում էր հետզհետե ավելի հաճախ ներշնչվել ապազգային տրամադրություններով և տոգորվել ապազգային գաղափարներով ու մղումներով: Եվ եթե այդպիսի մտավորականներն այս կամ այն ազգային կուսակցության անդամներ էին, ապա փորձում էին ապազգային գունավորում տալ տվյալ կազմակերպություններին»[1]:

Հայ քաղաքական մտքի զարգացման մեջ սոցիալիստական ծայրահեղ գունավորումով ապազգային ուժեղ խմորումը սկսվեց 20-րդ դարի սկզբին, երբ Հ.Յ. դաշնակցությունից առաջին անգամ անջատվեց երիտասարդների մի խումբ, որի անդամները հետո մասամբ մտան ՌՄԴԲԿ-ի մեջ, իսկ մյուսները կազմեցին հայկական առանձին սոցիալ-դեմոկրատական կուսակցություն՝ ս.-դ. բանվորական հայ կազմակերպություն անունով:

Հետագա շարադրանքից կտեսնենք, թե ինչպես դաշնակցությունից անջատված այդ տարրերն անգիջում կռիվ սկսեցին նախկինում իրենց դավանած ազգային գաղափարների, ազգային գործելակերպի, ազգային նպատակների դեմ:

«Ազգային գաղափարը հետադեմ գաղափար է, ազգությունը՝ մի չարիք»,- ահա այն մտայնությունը, որով տարված էին ապազգայնացվողները: Սրանք ձգտում էին այդ մտայնությունը պատվաստել ամբողջ հայ հասարակության միջավայրում:

Արդեն նախորդ գլուխներից մեկում նշվել է, որ գտնվեցին նաև այնպիսի հայ սոցիալ-դեմոկրատներ, որոնք ազգային գաղափարը համարեցին «պանարմենիստական»՝ բուրժուական - իմպերիալիստական տեսակետ:

Ռուսահայ սերնդի մեջ ծայր առավ մի մտայնություն, որի համաձայն իրեն հեղափոխական, ձախ համարող ամեն մի մտավորական սկսեց խուսափել անգամ «ազգ», «ազգային» բառերը գործածելուց, եթե նույնիսկ նա իրականում կանգնած էր ազգային դատը պաշտպանելու տեսակետի վրա: Այդ երևույթը նկատվում էր ոչ միայն Հ.Յ.դաշնակցությունից անջատված տարրերի մեջ, այլ որոշ չափով նաև այդ կուսակցության շարքերում[2]:

Թեև Հ.Յ.Դ.-ից անջատված սոցիալ-դեմոկրատական խումբը սակավաթիվ էր, բայց նրա գաղափարական ազդեցությունը տարածվում էր անհամեմատ ընդարձակ շրջանակի վրա:

20-րդ դարի սկզբին Հ.Յ.Դ.-ում ծագած ապազգային խմորումը հարաճուն կերպով շարունակվեց մինչև 1905թ.:

Ռուսական առաջին հեղափոխության զարգացմանը զուգընթաց՝ ապազգային խմորումը ստացավ ավելի ծավալուն և ավելի սուր բնույթ: Այդ շարժման հետևանքը եղավ երկրորդ անջատումը Հ.Յ.Դ.-ից:

«Կովկասյան նախագծի» քննարկման ամենաթեժ շրջանում, 1906թ. գարնանը, Հ.Յ. դաշնակցության մեջ ձախ հայացքներ դավանող մի քանի երիտասարդներ, դժգոհ լինելով կուսակցությունից, անհնարին համարելով այլևս նրա դրոշի տակ շարունակելու «սոցիալիստական գործունեություն», միավորվեցին և իրենց հայտարարեցին «երիտասարդ դաշնակցականներ»: Ուշագրավ է այն, որ գրեթե բոլոր անջատվածները, չնչին բացառությամբ, չափազանց կարճ ժամանակ էին եղել դաշնակցության շարքերում, նրանցից շատերը՝ հազիվ մի քանի ամիս միայն: Նրանք դաշնակցության շարքերին մոտեցել էին այն ժամանակ, երբ մթնոլորտն ամբողջապես բռնկված էր հեղափոխական տրամադրությամբ, երբ ամեն մի երիտասարդի համար ամոթալի էր համարվում որևէ կուսակցության չհարելը, հեղափոխական գործերով չհետաքրքրվելը:

«Այդ շրջանում, - գրում էր Եղիշե Թոփչյանը, - Կովկասում գործող կուսակցություններից Հ.Յ. դաշնակցությունը գտնվում էր հմայքի աննախադեպ բարձրության վրա... Դա այն շրջանն էր, երբ իրենց դաշնակցական էին անվանում նույնիսկ կուսակցության հետ ոչ մի առնչություն չունեցող ոչ քիչ թվով անձինք»[1]:

Բայց, ահա, ոգևորության ու հմայքի շրջանին հաջորդել էր նոր՝ ռուսական հեղափոխության շրջանը՝ լի անակնկալներով: Նույն ժամանակ Կովկասում սանձազերծվել էին թուրք - հայկական ընդհարումները, և սոցիալիստական ծրագիր ունեցող դաշնակցությունը մխրճվել էր այդ կռվի մեջ, ստանձնել հայ ժողովրդի ինքնապաշտպանության ղեկավարությունը, կռիվ, որը ոչ թե դասակարգային էր, այլ մի ազգի կռիվ մյուսի դեմ:

Նման պայմաններում երիտդաշնակցականների շրջանում ծագում առան ազգամիջյան կռվի դեմ հանդես գալու տրամադրություններ: Նոր իրողությունը երկմտանք - տատանում և տարընթացություն առաջ բերեց նրանց շարքերում: Այս պայմաններում երիտասարդները տևական ժամանակ չէին կարողանում որոշել իրենց դիրքը. ի՞նչ անել, բաժանվել Հ.Յ. դաշնակցությունից և հեռանա՞լ նրանից: Այդ դեպքում ի՞նչ կստացվեր: Արդյո՞ք դա խելացի կլիներ, երբ իրենց թիվը չնչին էր: Արդյո՞ք հեռանալով՝ չէին նմանվի գեներալների՝ առանց բանակի: Մնա՞լ դաշնակցության մեջ և փորձել գործնական քայլերով նրան բերել «իրավ սոցիալիստական ուղու» վրա: Բայց դրանում ի՞նչ երաշխիք կարող էր լինել: Հերոսական անցյալ և կենսունակ ներկա ունեցող կուսակցության անդամներից քանի՞սն ունկնդիր կլինեն իրենց հորդորներին:

Երիտդաշնակցականների մտքերի երերման այս շրջանը համընկավ դաշնակցության շարքերում «Կովկասյան նախագծի» շուրջ առաջ եկած բուռն քննարկումներին, որոնք նպաստեցին նրանց հետագա համախմբմանը, խումբը գնալով համալրվեց նոր անդամներով:

Նույնիսկ այն բանից հետո, երբ խումբը վերաճեց նկատելի հոսանքի, երիտդաշնակցականները դեռ չէին մտածում կուսակցությունից անջատվելու մասին, այլ նպատակ ունեին օրինավոր միջոցներով պարզել իրենց հետաքրքրող

---

[1] **«Ցառաջ»** (Երևան), N 136, 30 հունիսի 1920թ.:
[2] Նույն տեղում:

[1] **«Խարիսխ»** (Թիֆլիս), N 13, 18 հուլիսի 1907թ.:

գլխավոր հարցերը. Ա) Արդյո՞ք դաշնակցությունն է հայ ժողովրդի իսկական իղձերի միակ արտահայտիչը, ինչպես ներկայացնում են կուսակցության ղեկավարներն ու տեսաբանները՝ դրանով իսկ կուսակցությունը նույնացնելով ազգի հետ: Մի՞թե դա հնարավոր է դասակարգերի բաժանված հասարակության մեջ: Բ) Դաշնակցությունը արդյո՞ք կարող է լինել իրավ սոցիալիզմ դավանող կուսակցություն, որի իսկական էությունը ազգայնականությունն է: Ինչո՞ւ կովկասահայ աշխատավորության դատը պետք է հասունացած խնդիր նկատել, Գ) Ի՞նչ դիրք է բռնելու դաշնակցությունը ռուսական հեղափոխության նկատմամբ: Դ) Կովկասում սոցիալիստական գործունեություն ծավալել ցանկացող կուսակցությունն արդյո՞ք կարող է դրան զուգակցել թուրքահայ դատը: Ինչո՞ւ արևմտահայության ազատագրության ուղիները պետք է հնացած նկատել ու փնտրել նորերը:

Հարկ չկա վկայակոչելու բանավոր պատճառաբանությունները՝ ժողովներում արտասանած ճառերն ու մեղադրանքները, որոնք արտաբերվում էին կրքերի կամ բուպեի ազդեցության տակ: Քննության առնենք այն գրվածքները, որոնք մեծ ազդեցություն գործեցին երիտդաշնակցականների շարքերում և արագացրին նրանց անջատման գործընթացը Հ.Յ. դաշնակցությունից:

Նշված հարցերի պատասխանն առաջինը փորձեց տալ երիտդաշնակցականների շարժման գլխավոր գաղափարախոս Արսեն Ամիրյանը*, որը հանդես էր գալիս «Ա. Մրավյան» ծածկանունով:

Երիտասարդ դաշնակցականների անդրանիկ հրատարակությունը եղավ 1906թ. գարնանը լույս տեսած Ա. Մրավյանի «Ժամանակ է սթափվելու» 53 էջանոց գրքույկը, որի մեջ ձևակերպված էին այն տրամադրությունները, որոնք արդեն տիրական էին դարձել երիտասարդների շրջանում: Դա դաշնակցության նորագույն սերնդի ձախակողմյան հոսանքի ձգտումների, խուլ դժգոհությունների ու բողոքների մի հավաքական արտահայտություն էր:

Գրքույկի փոքրիկ առաջաբանում Մրավյանը նշում էր. «Այն մտքերը, որ ես այստեղ այսպես հրապարակորեն արտահայտում եմ, ես ոչ միայն խորհել, մտածել եմ, այլև զգացել եմ մինչև հոգուս խորքերը, ապրել եմ այդ ամենը: Ես այն դուրս եմ բերել տանջանքների աշխարհից: Ճշմարտություններ ասելու ես հավակնություն չունեմ, բայց համոզված եմ խորապես, որ մենք գնում ենք ոչ այն ճանապարհով, որով պետք է ընթանայինք: Եվ ցանկալի կլիներ, որ մեր բոլոր ընկերները քննադատական հետադարձ հայացք գցեին անցած ուղու վրա և որոշեին, թե այսուհետև որն է մեր ճանապարհը»[1]:

Բովանդակային առումով գրքույկը կարելի է բաժանել երկու մասի:

Առաջին մասում հեղինակը թռուցիկ հայացք է նետում կովկասահայերի տնտեսական-մտավոր վերածնության շրջանին՝ սկսած 19-րդ դարի 60-ական թվականներից, երբ բարգավաճման ուղին էր բռնել հայ բուրժուազիան՝ գաղափարական պաշտպան ունենալով Գրիգոր Արծրունու լիբերալ դպրոցը: Դա նորածագ հայ բուրժուազիայի պայքարի ու անհաշտ մաքառման շրջանն էր՝ ընդդեմ կղերական սանձարձակ բյուրոկրատիայի, բեկության և մելիքության ֆեոդալական ուժերի:

Մրավյանը արծրունիական դպրոցին էր վերագրում նաև դաշնակցությունը՝ սկսելով նրանից, որ կուսակցության նախակարապետը «Մշակի» հրատարակիչ-խմբագիրն է: Մեջբերելով Արծրունու այն խոսքերը, թե՝ «Աստված մի արասցե, որ սոցիալիզմի թույնը մեր ժողովրդի մեջ բույն դնի»՝ գրքույկի հեղինակը նրան համարում էր հայ բուրժուազիայի շահերի պաշտպան, աշխատավոր հայ մարդկանց հոգսերից ու կարիքներից հեռու կանգնած մի մարդ[2]:

Գրքույկի երկրորդ մասը վերաբերվում է հեղինակի ապրած ժամանակաշրջանի իրականությանը: Նրա քննադատության օբյեկտը բացառապես Հ.Յ. դաշնակցությունն է:

Մրավյանը փորձում էր դիտարկել դաշնակցության դավանանքի բովանդակությունը, գրելով, թե կուսակցությունը «որոշ դավանանք չունի» և եթե ունի, ապա դա տարբեր գաղափարների հավաքածու է, որի նպատակն է «աշխատավոր մասսաներին ձեռքից բաց չթողնել»[3]:

Դեռ նախքան սույն աշխատության լույս ընծայումը, իրենց կազմակերպած բանավեճերի ժամանակ երիտդաշնակցականները եկել էին այն եզրակացության, որ անթույլատրելի է կուսակցությունը նույնացնել ազգի հետ: Ամփոփելով իր գաղափարակիցների կարծիքները՝ Ա. Մրավյանն ընդգծում էր, որ ազգը տարբեր դասակարգերի տնտեսական ու բարոյական շահերի բախման ասպարեզ է, ուստի անհնար է այդ շահերը հաշտեցնել ու զուգորդել մեկ

---

* Չնայած իր երիտասարդ տարիքին, Արսեն Ամիրյանը դաշնակցության մեջ արդեն հայտնի էր իր պրպտուն մտքով և կուռ տրամաբանությամբ: Նա բարձր և արժեքավոր նկարագրի տեր մարդ էր, բայց նրան ակնհայտորեն պակասում էր կազմակերպողի կարողությունը: Արսենի ավագ եղբայրը՝ Թադևոսը (Գիժ Թաթոս), Խանասորի Նիկոլ Դումանի զինվորներից էր, դաշնակցության խիզախ ու աննկուն մարտիկներից, որը, ցավոք, դեռևս իր արժանի գնահատականը չի ստացել հայ պատմագրության մեջ: Փոքր եղբայրը՝ Գրիգորը, սոց.-հեղափոխական (էս-էռ) էր: Արսենը միջնակարգ կրթությունը ստացել էր Բաքվում, ապա ուսում առել Մոսկվայի պետական համալսարանում: 1902թ. դեկտեմբերի 15-ին Մոսկվայում սպանված սեղանավոր Խաչիկ Ժամհարյանի գործով բանտարկվել էր, 1903-ին փոխադրվել Շուշիի բանտ, որտեղից ազատվել էր 1904թ. գարնանը և անցել Բաքու: Մտնելով դաշնակցության մեջ՝ Արսենը գլխավորել էր երիտդաշնակների շարժումը, ապա, դուրս գալով շարժումից, որոշ ժամանակ հարել էր էսէռներին, որոնցից հեռանալով, երկար տարիներ մնացել էր «միայնակ» հեղափոխականի դերում: 1918-ին մտել էր Լենինի կուսակցության մեջ, դարձել բոլշևիկ-տեսաբան, Բաքվի կոմունայի առաջնորդներից մեկը, կոմունայի "Бакинский Рабочий" պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր: 1918թ. Բաքվի 26 կոմիսարների հետ ընկել էր Անդրկասպյան երկիր, ուր սեպտեմբերի 20-ին Ստեփան Շահումյանի և մյուս ընկերների, այդ թվում իր եղբոր՝ Թադևոս Ամիրյանի հետ գնդակահարվել էր անգլիացիների կողմից:

---

[1] **Ա. Մրավեան**, Ժամանակ է սթափվելու, Բաքու, 1906, էջ 3:
[2] Նույն տեղում, էջ 34:
[3] Նույն տեղում, էջ 39-41:

կազմակերպության մեջ, քանզի անկարելի է, որ կուսակցության շարքերում լինեն նույն գաղափարով առաջնորդվող շահագործողներ ու շահագործվողներ, հեղափոխականներ և հակահեղափոխականներ: Աշխատության հեղինակը գրում էր.

«Դաշնակցությունը պետք է լինի միայն աշխատավորների դասակարգային կուսակցություն»[1], այնինչ նա մնում է գերազանցորեն ազգային կուսակցություն և իր շարքերի մեջ հանդուրժում է թե՛ գյուղացուն, թե՛ աշխատավորին, թե՛ բուրժուային, թե՛ տիրացուին և թե՛ տերտերին: Նշելով այդ բացառիկ իրողությունը՝ գրքույկի հեղինակը ենթադրում էր, որ դաշնակցությունը, հարելով ռուս հեղափոխության ընդհանուր գործին և իր պայքարը ներդաշնակելով Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխական կուսակցությունների հետ, իր շարքերից պետք է դուրս մղեր բոլոր անհարազատ տարրերին, բայց այդպես չեղավ: «Եվ ամենքը սիրահարված են տաճկահայ դատի վրա»: Ապա՝ «Եվ մանրուքի այն խանութպանը, որ ազգասիրություն է անում մուշտարիներ շատացնելու համար, և այն վաճառականը, որի իդեալը իր ձեռքի արշինն է, և այն վաշխառուն, որ իր կես տոկոսի համար կը զոհե ամբողջ ազգը, և այն նավթային կրեսոսը, որի համար տասը հազար տաճկահայերի գլուխը տասը փութ մազութի գին չունի...»[2], այդ բոլորը միասին մի կազմակերպության մեջ են նրանց հետ, ովքեր իրենց կյանքն են տալիս Տաճկահայաստանի ազատագրության համար: «Դաշնակցությունը պետք է դադարի միջդասակարգային նեխված հակառաջադիմական մի կազմակերպություն լինելուց: Դաշնակցությունը պետք է լինի միայն ու միայն աշխատավորների դասակարգային կուսակցությունը»[3]:

Մրավյանը քննադատելով «տաճկահայ դատը գործիք դարձրած» հայ բուրժուազիային՝ նրա հետ նույնացնում էր դաշնակցությանը: Ավելին, գտնելով, որ տաճկահայ դատը ինքնին բուրժուազիայի տենչանքների արգասիքն է, նա, այնուհետև, գրում էր.

«Մենք՝ կովկասահայ աշխատավորներս, չենք կարող օգնության ձեռք չմեկնել մեր տաճկահայ եղբայրներին, բայց միայն օգնություն. մենք իրավունք չունենք միջամտելու, խառնվելու նրանց ներքին գործերի մեջ, որովհետև... ծանոթ չենք երկրի կոնկրետ պայմանների հետ,... փչացնում ենք նրանց գործը,... կանգնում ենք սայթաքման այն քարի վրա, որը գլորում է թե՛ կովկասահայ աշխատավոր ժողովրդին և թե՛ տաճկահայերին կովկասահայ բուրժուազիայի գիրկը, որը դեպի կորուստ է տանում թե՛ մեզ, թե՛ նրանց»[4]:

Մրավյանը գտնում էր, որ թուրքահայությունը չի կարող իր ուժերով օսմանյան բռնակալությունից ազատագրվել, և դաշնակցությունը, գլխավորելով

[1] **Ա. Մրավեան**, Ժամանակ է սթափվելու, Բաքու, 1906, էջ 39:
[2] Նույն տեղում, էջ 48:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 38:

նրա ազատագրական պայքարը, պատճառ է դարձել անթիվ զոհերի: Այդ զոհերը ինչ-որ տեղ արդարացնելի են այն առումով, որ ժողովուրդն այլևս անկարող էր ապրել ստրկական վիճակում: Բայց այժմ իրավիճակը փոխվել է, արևմտահայության ազատագրության վառ հույսերը մարված են: Նա գրում էր.

«Մեղադրել դաշնակցությանը այդպիսի քաղաքականության համար, անմտություն է, ավելի ևս անմտություն է առանձին անհատներին մեղադրելը: Այդ քաղաքականությունը բխում է իր ժամանակի իրական պայմաններից: Այդ ձևով են ազատվել հույները, այդ ձևով են ազատվել բուլղարները, այդ ձևով էլ պետք է ազատվեն հայերը: Դա հետևողական մի եզրակացություն է քաղաքական այնպիսի պայմաններում, որոնք գոյություն են ունեցել մինչև վերջին տարիները»[1]:

Բայց այժմ քաղաքական պայմանները փոխվել են, փոխվել են նաև տեսակետները տաճկահայ դատի նկատմամբ, ասում էր Մրավյանը: Պայմանները փոխվել են, բայց թուրքահայերի և դաշնակցության գործելակերպը մնացել է նույնը:

«Տաճկահայերի ամենամեծ սխալը կայանում է Նրանում, - գրում էր նա, - որ նրանք իրենց բախտը կապում են միայն եվրոպական բուրժուազիայի տրամադրությունների և ոչ թե **Ռուսաստանի հետ**, որը իրավամբ նայում է սուլթանի վրա, որպես իր վասալի, և որը արդեն չափազանց թանկ գնով ապացուցել է, որ քանի գոյություն ունի ռուսական բռնապետությունը, Տաճկահայաստանը չպիտի երազե ազատության մասին»:

Այլ խոսքով, թուրքահայության ազատությունը կարող է վրա հասնել միայն Ռուսաստանի ազատությունից հետո:

«Ռուսաստանի հաղթական հեղափոխությունը ճակատագրորեն նույն ազդեցությունը պիտի ունենա հարևան պետությունների վրա (որոնց թվում Թուրքիայի և Պարսկաստանի), ինչ որ ունեցավ իր ժամանակին ֆրանսիական մեծ հեղափոխությունը Արևմտյան Եվրոպայի պետությունների վրա: Ահա թե ինչու Ռուսաստանի ազատագրումը նշանակում է և Տաճկահայաստանի ազատագրում: Եվ Տաճկահայաստանի ազատագրումը Ռուսաստանի ազատագրման միջոցով - ներկա պայմաններում միակ ուղիղ և անսայթաք ճանապարհն է»[2]:

Մրավյանի վերջնական կարծիքն այս հարցի մասին հետևյալն էր. «Տաճկահայաստանի ազատագրումը պետք է ձեռք բերվի ոչ այնքան Սասունի բանաստեղծական և գեղատեսիլ լեռների վրա, որքան Պետերբուրգի և Թիֆլիսի պրոզայիկ փողոցների վրա»: Հետևապես՝ հայ քաղաքական կյանքի ծանրության կենտրոնը Տաճկական Հայաստանից պետք է փոխադրվի Ռուսական Հայաստան, և այստեղ պետք է լուծվի ամեն բան:

«Տաճկահայերի դրությունը ոչ թե տասն անգամ, այլ գուցե հարյուր անգամ ավելի դժոխային է, քան կովկասահայերի դրությունը», - եզրակացնում

[1] **Ա. Մրավեան**, Ժամանակ է սթափվելու, էջ 37:
[2] Նույն տեղում, էջ 39:

էր Մրավյանը: - Եվ այդ է պատճառը, որ երկու տարվա ահեղ հայ-թուրքական պատերազմը [Կովկասում] խլեց ոչ ավելի, քան 2000 մարդ, մինչդեռ տաճկահայերը նույն[քան] ժամանակամիջոցում զոհ տվին մոտ 100 000 հոգի, եթե 300 000-ը չափազանցություն համարենք»[1]:

Ա. Մրավյանի եզրակացությունն այն էր, որ՝ ա) հայ քաղաքական ծանր լուծը դեպքերի բերումով ընկել է տաճկահայերի վրա, որ բ) կովկասահայությունն այդ շարժման մեջ գործոն մասնակցություն ունի 2-3%-ի չափով ու իր հոծ բազմությամբ, ըստ էության, չեզոքացած է Անդրկովկասի քաղաքական-հեղափոխական կյանքից, ուր նա զոհանում է «ժան համակրանքներով» «դեպի «ազգային դատը» Տաճկահայաստանում»[2]:

Մրավյանի դատողություններից ստացած ամբողջական տպավորությունը վկայում է, որ նա դեռ գտնվում էր մարքսիստ դառնալու կես ճանապարհին, դեռ չուներ մշակված ու հիմնավորված դավանանք: Այդ շրջանում նրան կարելի էր բնութագրել որպես մանրբուրժուական դեմոկրատական ձախակողմյան գաղափարների պրոպագանդիստ: Պատահական չէ, որ նա հաճախ էր ընկնում հակասությունների մեջ, դեռևս աղոտ էր պատկերացնում հայկական հասարակության դասակարգերի, շերտերի ու խավերի տարբերությունները, սոցիալիզմ ասելով՝ հասկանում էր բարեպաշտական ցանկությունների և իղձերի մի սրբազան պաշտամունք, մառախլապատ մի հեռահար նպատակ, ռոմանտիկական մի վառ ֆանտազիա և այլն:

Այդ ամենով հանդերձ, Մրավյանի «Ժամանակ է սթափվելու» գրքույկը լուրջ մտահոգություն պատճառեց դաշնակցությանը: Կուսակցության մամուլի համարյա բոլոր օրգանները անդրադարձան գրվածքին, հոդվածներով ու գրախոսություններով փորձեցին չեզոքացնել նրա ազդեցությունը շարքերի վրա, բայց դա չտվեց սպասած արդյունքը:

Ա. Մրավյանի երկրորդ քայլը եղավ 1907թ. Բաքվում «Դաշնակցության կրիզիսը» 64 էջանոց գրքույկի հրատարակումը[3]: Եթե առաջին գրքույկով Ամիրյանը դիմում էր դաշնակցական ընկերներին, ապա երկրորդն անմիջականորեն ուղղված էր դաշնակցության ազդեցության տակ գտնվող բանվորներին:

Հեղինակը գրում էր, որ «դարերից ի վեր հայկական համազգային անդորր լճի մեջ նետված քարերը իրար են անցել», որ «կովկասահայ բուրժուազիայի դասակարգային կուսակցությունը՝ դաշնակցությունը, կրիզիսի մեջ է», որ այդ կուսակցությունը քայքայվում է, և քայքայման ճարճատյունի միջից լսվում է «դիմումը դաշնակցական բանվորության»: Այդ բանվորությունը ցույց

* Նկատի ունի 1895-1896թթ. ժամանակաշրջանում Թուրքիայում իրականացված հայերի զանգվածային կոտորածները:

[1] Ա. Մրավեան, Ժամանակ է սթափվելու, էջ 45:
[2] «Վեմ», N 2, նոյեմբեր-դեկտեմբեր, 1933, էջ 94:
[3] Ա. Մրավեան, Դաշնակցութեան կրիզիսը, Բաքու, 1907: Կոնսպիրատիվ նկատառումներով գրքույկի վրա գրված է, թե այն տպագրվել է Վիեննայում:

է տալիս փրկության միջոցները և հուզված շեշտերով բոլորին կանչում է՝ ելե՛ք, ելե՛ք, առաջ գնացեք նոր ուղիներով...

Մրավյանը բազմաթիվ մեղադրանքներ էր ուղղում դաշնակցությանը. լինելով բուրժուական կուսակցություն, ըստ էության՝ մշակական կազմակերպություն, դաշնակցությունը ձգտում է իր թագավորությունը հաստատել հայ իրականության մեջ, նա շահագործում է տաճկահայ դատը, նրա արհեստակցական միությունները զուբատովյան կազմակերպություններ են, նա միշտ էլ հեռու է եղել հեղափոխությունից և այլն:

Մրավյանը գրում էր. «Մնված բուրժուական գաղափարների ծոցում դաշնակցությունը հենց սկզբից ևեթ տարված էր հայկական ինքնուրույն կառավարություն, ինքնուրույն պետություն կամ, ինչպես ժողովուրդն է ասում, հայոց թագավոր հաստատելու գերազանցապես բուրժուական գաղափարով»[1]:

Մի կողմ դնելով այն, որ ինքնուրույն պետություն և ինքնուրույն կառավարություն ունենալը ամեն մի հարգված ազգի երազանքն է, նշենք, որ այդ բնական պահանջը տարիներ շարունակ իրրև մեղադրանք էին ներկայացնում հայատյաց ռուս մամուլի պարագլուխները՝ Սուվորինները, Գրինգմուտները, Վելիչկոները: Տարբերությունն այն էր, որ սրանք ամբողջ հայ ազգին էին վերագրում «հայկական թագավորություն» հաստատելու տենչը, իսկ Մրավյանը՝ միայն դաշնակցությանը:

Անշուշտ, այս մեղադրանքը դաշնակցության հասցեին հարուցվում էր ոչ միայն հայ սոցիալիստների, այլև աջ ազատական մամուլի («Մշակ», «Մուրճ» և այլն) կողմից, որոնք շեշտում էին, որ այդ կուսակցությունը մի **զաղտնի կառավարություն** է հայկական կյանքում դրանով իսկ ռուս կառավարության ուշադրությունը հրավիրելով նրա վրա:

Բուրժուազիայի «դասակարգային օրգան»՝ «Ինքնուրույն կառավարություն» ասելով Մրավյանը նկատի ուներ դաշնակցության գործունեությունը 1903 թվականից, երբ վերջինիս ղեկավարությամբ «Հայ ժողովուրդը բոլոտի էր ենթարկում ռուսական կառավարչական հաստատությունները»[2] և սեփական միջոցներով կարգավորում իր գործերը:

Մրավյանը շեշտում էր, որ ռուսական հեղափոխության հաղթանակը փրկություն կարող է բերել ոչ միայն Կովկասի հայությանը, այլև ճանապարհ կհարթի Թուրքահայաստանի ազատագրության համար: «Տաճկահայաստանի ազատագրումը Ռուսաստանի ազատագրության միջոցով՝ ներկա անսայթաք ճանապարհն է»[3]: Այլ ուղի չկա: Առաջվա նման կործանարար է հույս կապել Եվրոպայի հետ: «... մենք չենք կամենում գնալ այն ճանապարհով, որը տանում է մեզ դեպի ողորմություն եվրոպական գծուծ ու ագահ բուրժուազիայից,

[1] Ա. Մրավեան, Դաշնակցութեան կրիզիսը. էջ 17:
[2] Նույն տեղում, էջ 18:
[3] Նույն տեղում. էջ 39:

որը տանում է մեզ դեպի նորանոր, դեպի անվերջ 300 000 զոհեր»[1]:

«Դաշնակցության կրիզիսը» գրքույկին կցված են հավելվածներ՝ ուղղված մասնավորապես Միքայել Վարանդյանի և "Кавказская Речь"-ի աշխատակից Բարսեղի դեմ, որոնք խիստ քննադատության էին ենթարկել Մրավյանի նախորդ՝ «Ժամանակ է սթափվելու» գրքույկը:

«Ցավելվածի» մեջ նորից քննադատելով դաշնակցության խայտաբղետ կազմը՝ Մրավյանը նշում էր. «Այն պայքարը, որ այժմ գոյություն ունի դաշնակցության մեջ - դա տաճկահայ և կովկասահայ դատերի պայքար չէ, այլ ազգայնական բուրժուազիայի և գիտակից սոցիալիստական բանվորության պայքարը...»[2]: Այստեղից նա բխեցնում էր եզրակացություն, որ պետք է միմյանցից բաժանել տաճկահայ և կովկասահայ դատերը: «.... Բաժանման այն հարցը, որ այսօր հրապարակի վրա է դրված, դա ոչ թե տաճկահայ դաշնակցության և կովկասահայ դաշնակցության բաժանման հարցն է, այլ բուրժուական դաշնակցության և սոցիալիստական դաշնակցության բաժանման հարցը: Տաճկահայ դատի բաժանման հարցը դժվար թե առաջ գար, եթե տաճկահայ շարժումը լիներ սոցիալիստական շարժում և ոչ թե համազգային մի գործ, որ գտնվում է հակասոցիալիստական տարրերի ղեկավարության տակ»[3]:

Հանդես գալով Մրավյանի գրքույկի դեմ Միք. Վարանդյանը գրում էր, թե, այդ տրամաբանությանը հետևելով, կարելի է «բուրժուազիայի դասակարգային օրգան» համարել և՛ կովկասյան սոցիալ-դեմոկրատիային՝ նրա գործունեության պատճառով Դուրիայում, լատիշական սոցիալիստներին, լեհական սոցիալիստական կուսակցությանը, որովհետև դրանք էլ իր ժամանակին ժողովրդական բոյկոտ էին ղեկավարում, դրանք էլ ունեցել են իրենց դրական ու բացասական կողմերը[4]:

Տարակուսանք էր առաջացնում Մրավյանի այն պնդումը, թե կովկասահայ բուրժուազիան է, որ ղեկավարել է դաշնակցությանը, որ նրա շահերից են թելադրված եղել Սասունի ապստամբությունը և տաճկահայ մյուս շարժումները:

Մրավյանը միաժամանակ նշում էր, թե հայ սոցիալիստների համար խորթ չէ թուրքահայ դատը, բայց դրա լուծման համար պայքարը ոչ թե պետք է գլխավորի հայ բուրժուազիան, այլ աշխատավորությունը: Նա գրում էր.

«Եթե կգա այն օրը, երբ ապստամբությունը Սասունի լեռներում կը թելադրվի տաճկահայ ժողովրդի և ոչ կովկասահայ բուրժուազիայի շահերից, երբ կարիք կը լինի թողնել Կովկասը՝ տաճկահայերի ազատագրությանը նվիրվելու համար, ապա այդ դեպքում գիտցած եղեք, որ մենք՝ աշխատավորներս, կը լինենք առաջինը, որ մի կողմ կդնենք մուրճն ու սալը և մի նոր խաչակրաց արշավանք կը սկսենք դեպի Տաճկաստան»[1]:

Բայց խնդիրն այն էր, թե այդ «կարիքը երբ կլինի» և մինչև այդ «երբ»-ի հասնելը ինչ կմնար տաճկահայ ժողովրդից:

Այդ հարցին Մրավյանի գրքույկը ուղղակի պատասխան չէր տալիս, սակայն հեղինակի մտքերը թելադրում էին, որ ինչպես անցյալում, այնպես էլ իր ապրած օրերում դաշնակցությունը միջամտությունը տաճկահայ շարժմանը միայն վնասներ է բերել, քանի որ շարժումը թելադրված է «կովկասահայ բուրժուազիայի շահերից», իսկ նման պարագայում բացառվում է վերջինիս դեմ կռվող կովկասահայ աշխատավորության մասնակցելը այդ շարժմանը:

«Խարիսխը» գրում էր. «Դրանից մի՞թե չէր կարելի անել այս եզրակացությունը. թո՛ղ տաճկահայ ժողովուրդը ճնշվի ու կեղեքվի ծայրահեղ բարբարոսության հարվածներից, թող արյան ու արցունքի մեջ թաղի իր հեծեծանքը, կյանքի ու գույքի անապահովությունը, ընտանեական պատվի ու սրբազան իրավունքների ոտնահարումը - այդ բոլորը դեռ բավարար չեն տաճկահայ հեղափոխության ըմբոստացման համար, քանի որ կովկասահայ բուրժուազիայի շահերն են դրա թելադրողը»[2]:

Ա. Մրավյանի երկու գրքույկները մանիֆեստի նշանակություն ունեցան երիտդաշնակցականների համար և ջերմորեն ողջունվեցին հակադաշնակցական ուժերի կողմից: Հավանություն տալով դաշնակցական երիտասարդների ելույթին՝ Ստ. Շահումյանը դա համարում էր դաշնակցության շարքերում պրոլետարական և բուրժուական տարրերի «ընդհարման նշան»[3]:

Բայց ոչ բոլոր երիտդաշնակցականներն էին ուզում դուրս գալ կուսակցությունից: Քանի որ նրանց հիմնական մասը բռնել էր դաշնակցության «բարեկարգման» ուղին, բոլշևիկ գործիչներից Ասքանազ Մռավյանը «Նոր խոսք» թերթում կուսակցության շարքերում մնացածների մասին գրում էր. «Սրտանց համակրելով ու քաջալերելով դրանց գիտակցության արթնացումը՝ մենք չենք կարող չնկատել, որ այդ պարոնները գիտակցում են միայն ճշմարտության կեսը, ճանապարհի կեսին են կանգ առնում: ... Դասակարգային պրոլետարական տեսակետի վրա կանգնելու համար շատ հին կուռքեր պիտի խորտակվեն»[4]:

ԱՆՋԱՏԱԿԱՆՆԵՐ: ԵՐԿՈՒ ԴԱՏԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Ա. Մրավյանի «Ժամանակ է սթափվելու» գրքույկը իր վրա գրավեց ոչ միայն երիտդաշնակցականների, այլև կուսակցության ղեկավարության ուշա-

---

[1] Ա. Մրավեան, Դաշնակցութեան կրիզիսը, էջ 50:
[2] Նույն տեղում, էջ 56:
[3] Նույն տեղում, էջ 55:
[4] «Ալիք» (Թիֆլիս), N 37, 10 հունիսի 1906թ.:

[1] Ա. Մրավեան, Դաշնակցութեան կրիզիսը, էջ 49-50:
[2] «Խարիսխ», N 20, 26 հուլիսի 1907թ.:
[3] Տե՛ս Ստ. Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 397:
[4] «Նոր խոսք», N 7, 3 սեպտեմբերի 1906թ.:

դրությունը: Հ.Յ. դաշնակցության ղեկավար մարմինները հենց սկզբից կռահեցին, թե Մրավյանի արտահայտած մտքերը որքան վտանգավոր են կուսակցության միասնության համար: Ահա թե ինչու կուսակցության գաղափարախոսները, հատկապես Գարեգին Խաժակը և Եղիշե Թոփչյանը (Վահե) տեսական լայն պայքար ծավալեցին այդ վտանգավոր հերձվածի դեմ: Ինչպես այս երկուսը, այնպես էլ դաշնակցական ուրիշ գործիչներ հանդես եկան բազմաթիվ հոդվածներով և առանձին հետազոտություններով՝ փորձելով չեզոքացնել այն խոր տպավորությունը, որ կուսակցության շարքերի վրա թողել էին Մրավյանի մտքերը և փաստարկները:

Իրենց հերթին երիտդաշնակցականները զանազան շրջաններում, հատկապես Բաքվում, որն իրենց կենտրոնն էր, և Թիֆլիսում, ժողովներ ու խորհրդակցություններ էին ունենում, որոնցում ամենայն մանրամասնությամբ քննության էին առնում Մրավյանի գաղափարները և դատողությունները: Այդ քննարկումներին մասնակցում էին նաև դաշնակցության մեծ թվով համակիրներ և սոցիալիստական զանազան ուղղություններ դավանող երիտասարդներ:

1906թ. սեպտեմբերին Թիֆլիսում տեղի է ունենում տարբեր գաղափարներ դավանող մի խումբ երիտասարդների ժողով, որին մասնակցում են նաև զգալի թվով երիտդաշնակցականներ՝ քաղաքի իրենց ղեկավարներով:

Ժողովը քննության է առնում Հ.Յ. դաշնակցության մեջ տիրող վիճակը, գաղափարական խմորումների պատճառները և հնարավոր հետևանքները, տեսական այն հարցերը, որոնց բարեհաջող լուծումը հնարավորություն կտար Հ.Յ.Դ. դրոշի տակ բերելու մեծ թվով սոցիալիստամետ երիտասարդների: Ժողովականների ուշադրության կենտրոնում էր հատկապես գտնվում Հ.Յ.Դ. «Կովկասյան նախագծի»՝ թուրքահայ դատի և կովկասյան գործունեության հարաբերությունների պարզաբանման հարցը:

Ուշագրավն այն էր, որ երբ կոնկրետ հարցերից հետո հերթը հասավ տեսականին, ժողովականները, դրանք լուսաբանելու և ձևակերպելու մեջ իրենց անպատրաստ համարելով, որոշում ընդունեցին այդ հարցերի քննությունը թողնել մի այլ անգամի, որպեսզի ձեռնհաս ընկերները նախապես հատուկ ռեֆերատներ պատրաստեն՝ հաջորդ հանդիպման ընթացքում դրանք հանգամանորեն քննարկելու համար:

Ահա հենց այդ ժողովում հանդես են գալիս երիտդաշնակցականներից մի քանի հոգի և հայտարարում, թե իրենք կամենում են լինել անարատ ու մաքուր քաղաքական գործիչներ և հետևողական սոցիալիստներ, ուստի նպատակ ունեն **անջատվել դաշնակցությունից** և ստեղծել իրենց ինքնուրույն կազմակերպությունը:

Այդ ժամանակվանից սկսած՝ «երիտդաշնակցական» շարժումը ստացավ

«**անջատական**»* շարժում անվանումը: Վերջինս եղավ առաջինի ուղղակի շարունակությունը՝ մտեցումների և շեշտադրումների որոշ տարբերություններով:

Սակայն ժողովին ներկա երիտդաշնակցականների փոքր մասը, կողմ լինելով երկու դատերի բաժանման տեսակետին, դեմ արտահայտվեց դաշնակցությունից կազմակերպչորեն անջատվելու տեսակետին: Սրանք, որ ստացան **բաժանողականներ** անվանումը, կուսակցությունից անջատվելը համարելով վնասակար, հանդես էին գալիս Հ.Յ.Դ. շարքերում ֆեդերատիվ սկզբունքներով երիտասարդ դաշնակցականների ինքնուրույնությունը ապահովելու պահանջով:

Այս երկու տարբեր կարծիքների շուրջ պայքարը շարունակվեց նշված ժողովից հետո նույնպես՝ Բաքվում, Թիֆլիսում և այլուր, ուր առաջացել էին երիտասարդ դաշնակցականների խմբեր[1]:

Անջատողականները, այսինքն՝ դաշնակցությունից հետևողականորեն անջատվելու կողմնակիցները, իրենց նպատակին հասնելու հույսով տոգորված, ճանապարհվում էին քաղաքից քաղաք, ժողովներ էին գումարում, իրենց մտքերը արծարծում զանազան շրջաններում և, օգտվելով իրենց նախկին կապերից, հաճախ իրենց կողմն էին գրավում անհատ բանվորների:

Բայց անջատականները շատ շուտով հիասթափություն ապրեցին: Հանուն անջատման նրանց ճառերն ու առաջարկները մնում էին «ձայն բարբառոյ յանապատի», առանց կարողանալու խախտել հայ զանգվածների հաստատուն հավատը դեպի դաշնակցությունը: Այնուամենայնիվ, ամիսների եռանդուն ջանքերի հետևանքով անջատողականները հազիվ կարողացան Թիֆլիսում մի քանի անհատների գրավել իրենց կողմը: Իսկ Բաքվում նրանց շուրջը համախմբվեցին մի քանի հարյուր, բացառապես ռուսահայ, բանվորներ, այն դեպքում, երբ նույն քաղաքում դաշնակցական կազմակերպված բանվորության թիվը հասնում էր շուրջ 7000-ի[2]: Անջատականների խմբեր սկսեցին գործել Շուշիում և Երևանում, մի քանի տասնյակ անհատ դաշնակցականներ Գանձա-

* Անջատական ղեկավար գործիչներից Վահան Մինախորյանը հետագայում գրել է, թե դաշնակցականները մեզ «անջատականներ» կոչեցին ոչ թե նրա համար, որ մենք **անջատվել ենք**, կամ **ուզում ենք բաժանվել** դաշնակցությունից՝ որով և «անջատվածներ ենք, այլ այն պատճառով, որ մեր հիմնական առաջադրությունը կովկասահայ և տաճկահայ դատերի **անջատումն** էր» («Վեմ» հանդես, N 2, նոյեմբեր-դեկտեմբեր, 1933, էջ 105): Այս բացատրությունը չենք կարող ընդունելի համարել, քանզի այդ տարիներին անջատականների դեմ դաշնակցական հեղինակների գրած թե՛ գրքույկներում և թե՛ հոդվածներում անջատականները միանշանակ հանդես էին գալիս որպես կուսակցության ներսում առաջացած հերձված, որը ձգտում էր կազմակերպությունից անջատվել: Մինախորյանը «տարածված թյուրիմացության» պատճառ էր համարում անջատականների առաջնորդ Ռիխարդի (Լ. Աթաբեկյան) «Ինչո՞ւ ենք անջատվում դաշնակցությունից» և անջատականների դեմ հանդես եկած Շահենի (Գեորգ Մելիք-Շահնազարյան) «Ինչո՞ւ չենք անջատվում դաշնակցությունից» զույգ գրքույկները (թեև վերջինս հետո անջատվեց կուսակցությունից և դաշնակցության գործով 1912թ. դատապարտվեց ցմահ աքսորի՝ Սիբիր): Անշուշտ, անջատականներն այդ անունով էլ կոչվել են՝ դաշնակցությունից անջատվելու համար:

[1] Տե՛ս «**Խարխախ**», N 15, 20 հուլիսի 1907թ.:

[2] Նույն տեղում, N 17, 22 հուլիսի 1907թ.:

կում, Ալեքսանդրապոլում և Բաթումում հայտարարեցին դաշնակցությունից դուրս գալու և անջատականներին միանալու մասին:

Եթե 1906թ. գարնանը ծնունդ առած երիտդաշնակցական շարժման ղեկավարը Ա. Մրավյանն էր (Արսեն Ամիրյան), ապա նույն թվականի աշնանը ձևավորված անջատական շարժման գաղափարախոսը և առաջնորդը դարձավ բժ. Լևոն Աթաբեկյանը (Ռիխարդ):

Լ. Աթաբեկյանը գործում էր Բաքվում և, կարելի է ասել, մինչև 1906թ. գարունը նրա շուրջն էր համախմբված քաղաքի դաշնակցական երիտասարդությունը: «Իր պարզ ու ընկերական վերաբերմունքով, հարցերի իր համբերատար, վերլուծող, պատճառաբանող բացատրություններով, իր անխոնջ աշխատանքների բերումով, իր կազմակերպական շեշտված ընդունակություններով նա արդեն գրավել էր այդ երիտասարդության սերն ու համակրանքը»[1], - գրել է Աթաբեկյանի համախոհ ու զինակից, անջատական շարժման ղեկավար գործիչներից Վահան Մինախորյանը: Դաշնակցական գործիչ Արտաշես Հովսեփյանը (Մալխաս) Լ. Աթաբեկյանին բնութագրել է որպես մաքուր ու չիտակ գաղափարական, որն անձնուրացաբար նվիրված էր հարազատ ժողովրդին՝ օժտված արտակարգ հիշողությամբ և խոր իմացականությամբ[2]:

1906թ. գարնանից, հանդիսանալով Հ.Յ.Դ.-ի մեջ առաջացած երիտդաշնակցական հոսանքի պարագլուխներից մեկը, նույն թվականի աշնանը Լ. Աթաբեկյանը դառնում է նրանց ճանաչված ղեկավարը: Նա գրեց գրքույկներ, հոդվածներով հանդես եկավ կովկասահայ մամուլի տարբեր օրգաններում և հատկապես անջատականների կողմից Բաքվում հրատարակվող «Անիվ»*, ապա և՝ «Շեփոր»** թերթերում ու 1908թ. լույս տեսած «Վերագնահատումներ»*** գրական-քննական ժողովածուի առաջին (և վերջին) գրքում:

Անջատականները համոզված էին, որ թուրքահայկական և կովկասահայ դատերը իրականում ոչ մի նմանություն չունեն: Այդ երկու դատերի միաժամանակյա լուծման համար մղվող պայքարը Լ. Աթաբեկյանը համարում էր ճակատագրական սխալ, գտնելով, որ երկու ճակատով պայքարի անհրաժեշտության հարցը տեսականորեն չի հիմնավորված: Նրա կարծիքով, դաշնակցությունը որքան շուտ հրաժարվի երկու դատերի զուգորդումից և Թուրքահայաստանում Կովկասից արհեստականորեն սոցիալիզմ պատվաստելու փորձերից, այնքան շատ կշահի ողջ հայությունը: Եզրակացությունը մեկն էր. հայ քաղաքական կյանքի ծանրության կենտրոնը պետք է Թուրքահայաստանից տեղափոխել Ռուսահայաստան և այստեղ լուծել ազգային հիմնական խնդիրները: Իսկ դա նշանակում է, որ դաշնակցությունը պիտի դառնա կովկասահայության կուսակցություններից մեկը: Դա մի պահանջ է, ասում էին նրանք, որ հրամայաբար առաջ է քաշել ռուսական հեղափոխությունը: Դա ապացույց էր այն բանի, որ անջատականությունը, իբրև շարժում, ուղղված էր, ըստ էության, ոչ այնքան դաշնակցության դեմ, որքան կովկասահայության հոծ բազմության անշարժ ու մեկուսացած դիրքի: Նրա հոգսը այդ անշարժությունը խախտելն էր և կովկասահայությանը համառուսաստանյան մեծ հեղափոխությանը գործուն մասնակից դարձնելը: Կովկասում ռուսական հեղափոխության մեջ տիրական էին դարձել վրացիները, հայերը մեծ մասամբ դուրս էին մնացել այդ շարժումից, իսկ կովկասյան թուրքերն ընդհանրապես այն գլխից հակահեղափոխական դիրքերի վրա էին: Զերծ մնալով համառուսաստանյան հեղափոխական շարժումներից՝ կովկասահայերը, իսկապես որ, մեկուսացել էին ոչ միայն երկրամասի հարևաններից, այլև ցարական բռնապետության դեմ կենաց ու մահու կռվի ելած ռուս մարտնչող ժողովրդից: Եվ հենց այժմ արդեն այդ չեզոքության հետևանքները զգալի էին ողջ հայության համար: Ինչպես տեսնում ենք, անջատականները մտածում էին հայերի քաղաքական դիրքերը Կովկասում մեծացնելու մասին: Նրանք համոզված էին, որ առանց ռուս միապետության տապալման անհնարին է նույնիսկ խոսել ռուսահայության ազատագրության մասին:

Իսկ թե ինչու կովկասահայ աշխատավորության դատը պետք էր հասունացած խնդիր նկատել, անջատականները դրա օգտին բերում էին վիճակագրական բազմազան տեղեկություններ: Անդրկովկասում, ասում էին նրանք, հայ բանվորությունն արդեն պատկառելի թիվ է կազմում 30 հազար շունչ: Հայ բանվորներն իրենց գրագիտության աստիճանով ցածր են կանգնած վրացի (գրագետ են 100-ի 91.7%-ը) և ռուս (գրագետ են 100-ի 79.1%-ը) բանվորներից: Նրանք ապրում և աշխատում են ամենադժնդակ պայմաններում, նրանց մեծամասնության ամսական աշխատավարձը միջինը կազմում է 20-25 ռուբլի: Աշխատանքի պայմանները հայ կապիտալիստներին պատկանող ձեռնարկություններում, որոնցում բանվորները համարյա ամբողջությամբ հայեր են, անհամեմատ վատ են այն ձեռնարկությունների պայմաններից, որոնք պատկանում են օտարներին: Իսկ այդ պայմանները փոխելու ամեն մի փորձ հանդիպում է հայ բուրժուաների կատաղի դիմադրությանը:

Անջատականները նաև քննության էին առնում կովկասահայ գյուղացիության սոցիալ-տնտեսական վիճակը, որից արտաբերում էին այն եզրահանգումը, թե այդ գյուղացիությունը նույնպես ընդգրկված է կապիտալիստական արտադրահարաբերությունների ոլորտը և պատրաստ է ընդունելու սոցիալիստա-

---

[1] «Վեմ» հանդես, N 2, նոյեմբեր-դեկտեմբեր, 1933, էջ 95-96:

[2] Տե՛ս Մալխաս, Ապրումներ, հատ. Ա, էջ 436:

* Բաքվի համապատասխան իշխանության կարգադրությամբ «Անիվ» թերթը 1908թ. փակվել է «մնասակար ուղղության համար»՝ «մինչև զինվորական դրության վերացումը» (տե՛ս «Շեփոր», N 1.10 օգոստոսի 1908թ.): Խմբագիրը Թիֆլիսի դատաստանական պալատի կողմից դատի էր ենթարկվել 129 հոդվածի II մասի հիման վրա՝ նույն թերթի N 10-ում զետեղված Զարմայրի «Մայիսի 1-ը» և Մոքռուշի «Մայիսի մինը» հոդվածների համար (տե՛ս «Շեփոր», N 3, 24 օգոստոսի 1908թ.):

** «Շեփորը» շաբաթաթերթ էր, որի հրատարակությամբ լույս ընծայվեցին 6-7 մեծ ու փոքր գրքույկներ:

*** «Վերագնահատումներ» ամսագիրը երկար կյանք չունեցավ նյութական պատճառներով և շուտով դադարեց:

կան նոր գաղափարներ, իհարկե, չմոռանալով, որ հայ գյուղացին նույնպես, ինչպես ռուս մուժիկը, բնածին սոցիալիստ է՝ իր բարքերով, գյուղական համայնքներից ժառանգած համայնական հոգեբանությամբ ու մտածելակերպով:

Հաշվի առնելով Արևելյան Հայաստանի գերակշիռ գյուղացիական կազմը և վկայակոչելով գյուղացիության, որպես դասակարգի, մասին Կարլ Մարքսի, Կաուցկու, Ֆրիդրիխ Հերցի, ինչպես և ռուս սոցիալ-դեմոկրատ և ռուս սոցիալիստ-հեղափոխական տեսաբանների արտահայտած գաղափարներն ու մտքերը՝ Լ. Աթաբեկյանը դրանցից բխեցնում էր իր ձևակերպումը սոցիալիզմ հասկացության մասին[1]:

Իր «Սոցիալիստական պրոբլեմներ» ընդարձակ հոդվածում, որը գրել էր Վահեի (Ե. Թոփչյան) «Անջատվածները» գրքի առիթով, Լ. Աթաբեկյանը գրում էր.

«Ժամանակակից սոցիալիզմը, թե իբրև մտածողություն, թե իբրև շարժում, արտահայտություն է մի բարձր կուլտուրայի և կարող է մասսաների մեջ խոր արմատներ ձգել միայն այն վայրերում, ուր գոյություն ունեն վերջնականապես զանազանավորված հասարակական խավեր, ուր արդյունաբերությունը կատարվում է ընկերակցորեն և հասարակականորեն, ուր տեխնիկան, գիտությունը և գեղարվեստը հասել են ամենաբարձր կատարելության»[2]:

Աթաբեկյանը հատկապես քննադատում էր Վահեի «Անջատվածները» գրքույկի այն հատվածը, ուր ասված էր, թե սոցիալիզմը ոչ այլ ինչ է, եթե ոչ «ճնշված, հարստահարված և իրավազուրկ դարձած մասսաների ազգային-կուլտուրական, ինչպես նաև տնտեսական դասակարգային շահերի պաշտպանությունը»[3]: Նա նշում էր, որ սխալ է սոցիալիզմը բնորոշել լոկ որպես չքավոր զանգվածների պաշտպանություն: Չքավորությունը հազարամյակների պատմություն ունի, իսկ սոցիալիստական շարժումը միայն 19-րդ դարի ծնունդ է:

Դաշնակցությանը Կովկաս բերելու նպատակահարմարությունը անջատականները փորձում էին հիմնավորել բարոյական ու գործնական մի քանի հիմքերով. 1) Թուրքահայկական դատը մոտ է հայության բոլոր հատվածներին, հատկապես երիտասարդությանը, 2) Թուրքահայերն իրենց հեղափոխական շարժման մեջ մենակ են, իսկ կովկասահայերը կարող են կոթնել Ռուսաստանի մի շարք ժողովուրդների ազատագրական շարժմանը, 3) Թուրքահայերն անզեն են, իսկ կովկասահայերը՝ բավականին լավ զինված և գտնվում են նյութական, քաղաքական անհամեմատ նպաստավոր պայմաններում, 4) Վերջապես, կովկասահայերը կարող են տասնյակ հազարավոր կռվող ուժեր դուրս բերել, այնինչ Թուրքահայ երիտասարդությունը, գրեթե ամբողջովին, պանդխտության մեջ է:

[1] «Վերագնահատումներ», N 1, 1908, էջ 66-74:
[2] Նույն տեղում, էջ 79:
[3] Վահե. Անջատականները, էջ 30:

Կովկասը դաշնակցության գործունեության հիմնական դաշտ համարող Լ. Աթաբեկյանը և նրա համախոհները գտնում էին, որ կովկասահայությունը պետք է բացառապես զբաղվի իր ընկերային խնդիրների լուծման, ամենից առաջ՝ տնտեսական դրության բարելավման հարցերով:

Սակայն այս պահանջի առաջադրումը չէր պատասխանում այն հարցին, թե անջատականները «տնտեսական բարելավումը» կովկասահայության որ շերտերի վրա էին տարածում: Չէ՞ որ «կովկասահայ» հասկացությունը ընդգրկում էր և՛ «տնտեսական կարիք» չունեցող հայ բուրժուաներին, և՛ ամեն կարգի մեծահարուստներին, և՛ Կովկասի հայ աշխատավորներին՝ ունեզուրկ ու թշվառ բանվորներին և գյուղացիներին:

Ուստի անջատականների առջև, անխուսափելիորեն, կանգնում էր «ազգ» և «դասակարգ» հասկացությունները սեփական բնորոշումներով բնութագրելու խնդիրը:

Լ. Աթաբեկյանը դեմ էր ազգի մարքսիստական ընորոշմանը, որ լիովին ընդունում էին հայ բոլշևիկները և սոց.-դեմ. հայ կազմակերպության անդամները (բացառությամբ Դ.Անանունու): Աթաբեկյանի կարծիքով, մարքսիստները պարզապես ուզում են մարդկանց ուղեղից հանել «ազգ» հասկացողությունը: Բայց նա չէր ընդունում նաև ազգի մասին ազգայնական ըմբռնումները, մասնավորապես՝ դաշնակցության պատկերացումները, գտնելով, որ Հ.Յ.Դ.-ն իդեալականացնում և բացարձակացնում է ազգը: Աթաբեկյանն ամուր կանգնած էր ռուս նարոդնիկների և, հատկապես, Լավրովի՝ ազգի և անհատի մասին տեսակետի վրա: Իր «Ազգություն և դասակարգ» գրքույկում նա գրում էր.

«Հարատև կենակցությունը և արյունակցությունը առաջացնում են մի շատ կարևոր երևույթ, որը կարելի է անվանել պսիխաֆիզիկական նմանություն: Ստեղծվում են մի շարք բոլորին ընդհանուր պսիխաֆիզիկական գծեր, բայց ավելի՝ պսիխիկական, քան ֆիզիկական: Պսիխիկական գծերը բազմանում և ամրանում են դարերի ընթացքում և ժառանգության ու մշակույթի միջոցով անցնում սերնդից սերունդ, և, այդպիսով, առաջ է գալիս պսիխաֆիզիկական մի նոր տիպ, մի կոլեկտիվ անհատականություն, որն ուժեղ կամ թույլ չափերով տարբերվում է այլ կոլեկտիվ անհատականություններից, և ինքը նման է միայն իրեն: Ազգության էությունն այդ անհատականության մեջ պետք է փնտրել»[1]:

Իր տեսության հիմքերով անջատական շարժումը ձգտում էր հենվել, սեղմ առումով, հայ գյուղի ու քաղաքի աշխատավորության վրա, իր բոլոր հույսերը կապում էր բացառապես աշխատավորության հաջողությունների, ունեզուրկ դասակարգերի քաղաքական գիտակցության բարձրացման հետ:

«Դասակարգի» բնութագրման դեպքում Լ. Աթաբեկյանը այդ հասկացությունը բխեցնում էր դասակարգի մասին ռուս սոցիալիստ-հեղափոխականնե-

[1] Ռիխարդ, «Ազգություն եւ դասակարգ». Երիտդաշնակների գրադարան, N 5, 1907, էջ 28:

րի պատկերացումներից: Այդ պատկերացումներն , իրենց հերթին, ածանցված էին ֆրանսիական սինդիկալիստների և գերմանական ռևիզիոնիստների արծարծած տեսակետներից: Դա նշանակում էր ժխտել սեփականատիրական հարաբերությունների վճռական դերը «դասակարգը» բնութագրելիս, այսինքն՝ սեփականության նկատմամբ վերաբերմունքը կամ, այլ խոսքով՝ արտադրական հարաբերությունները դասակարգի բնութագրման չափանիշ ընդունելը, որ կատարում էին մարքսիստները, և որը ժխտելով՝ Ա.Թաբեկյանը, իբրև դասակարգի բնորոշիչներ առաջ էր քաշում ազգի ընդհանուր հայրենիքի, ժողովրդի պատմության, նաև ոչ հասարակական (երկրի ընդերք, բնակլիմայական պայմաններ և այլն) գործոնները:

Առաջ քաշելով այն թեզը, թե կովկասահայությունը բացառապես պետք է զբաղվի իր ընկերային-տնտեսական դրության բարելավման հարցերով, անջատականներից ոմանք ավելի հեռու էին գնում: Թուրքահայերին Կովկասից նյութական և այլ կարգի օգնություն ցույց տալը նրանք համարում էին անընդունելի, գտնելով, որ տաճկահայ թշվառ եղբոր նկատմամբ հոգատարության գործը չպետք է բարդել առանց այն էլ նյութական անձուկ պայմաններից խեղդվող, տանջված ռուսահայ աշխատավորի՝ վզին, որը սեփական ծանր խաչը հազիվ է տանում: Եթե կա մի դասակարգ, որին պետք է ազատ թողնել հայկական դատը վարելու ծանրությունից, դա հենց այդ կեղեքվող ու քաղցած աշխատավոր դասակարգն է, որի մեջ պարարտ հող կարող է գտնել միմիայն զուտ տնտեսական շահերի կոիվը՝ ուղղված նրա անմիջական կեղեքիչների դեմ: Իր բազուկների աշխատանքով մի ամբողջ ընտանիք կերակրող աշխատավոր երիտասարդին կարելի կլինի ամենաշատը գործադուլներ ու բոյկոտներ սարքել տալ միայն իր տեղում և ոչ թե ուղարկել նահատակվելու Սասունի լեռներում: Երբ նա ի վիճակի չէ ունեցած չնչին գումարներով գոնե հաց ու պանրով կշտացնել իր երեխաներին, այդ պարագայում անխղճություն է նրանից պահանջել, որ այդ գումարի մի մասը տա ուրիշներին: Թե՛ առաջին և թե՛ երկրորդ դեպքում տանջված ու անճար աշխատավորը չի կարող օգտակար լինել Հ.Յ. դաշնակցությանը, թշվառ տաճկահայ եղբորը փրկելու համար չի կարող կուսակցության տրամադրության տակ դնել իր կյանքն ու կոպեկները՝ սեփական ընտանիքը նահատակվելու գնով:

Անջատականները համոզված էին, որ, իհարկե, առաջիկայում նույնպես կգտնվեն կովկասահայ երիտասարդներ, որոնք սրբազան գաղափարի ուժգին ազդեցության տակ հանձն կառնեն կատարել նորանոր կամավոր զոհաբերություններ, բայց փաստ է նաև, ասում էին նրանք, որ կովկասահայ հոծ զանգվածներն անտարբեր են տաճկահայության նկատմամբ, ուստի պատահական չէ, որ նրանք սահմանից այն կողմ գտնվող «եղբայրներին օգնելու» պատրվակով մնացին անբան ու անտարբեր Ռուսաստանում տեղի ունեցող դեպքերի հանդեպ: Սրանով, իհարկե, չենք ուզում ասել, նշում էին նրանք, թե աշխատավորը պիտի ապրի միայն իր ցավերի աշխարհում, սահմանափակվի ստամոքսի հոգսերով, փակի աչքերը շրջապատի անիրավությունների առաջ: Ո՛չ, իհարկե: Մենք ուղղակի պահանջում ենք, որ իր ուզած զոհաբերությունների մեջ նա ազատ լինի:

Անջատողականության ղեկավար գործիչներից Վահան Մինախորյանը տարիներ հետո վերհիշել է. «Դաշնակցության դերը Տաճկահայաստանի նկատմամբ մեզ պատկերանում էր օժանդակող կամ օգնող մարմնի ձևով: Վարելով գործոն կռիվ միապետության դեմ Կովկասում նա պետք է զոհանար արևմտահայության ինքնապաշտպանությանն օժանդակելու իր համեստ դերով Տաճկահայաստանում. օգնություն զենքով, դրամով, մտավորական և զինվորական անհատ ուժերով»[1]:

Իսկ ինչպե՞ս վարվել, եթե հնարավոր չլինի կատարել պատմական շրջադարձը, այն է՝ հայ հասարակական կյանքի ծանրության կենտրոնը Թուրքահայաստանից փոխադրել Կովկաս: Այս հարցին հետևում էր անջատականների հետևյալ պատասխանը. անհնարին է մի կուսակցության շրջանակներում միավորել մի կողմից թուրքահայերի ազգային ազատագրական պայքարի, մյուս կողմից՝ դասակարգային պայքարի ու սոցիալիզմի, այսինքն՝ աշխատավոր ժողովրդի ազատագրության խնդիրը: Այդ իսկ պատճառով, թերևս, կարելի է հայության երկու հատվածների դատերը իրարից անջատել ու վարել զատզատ, այսինքն՝ ունենալ երկու դաշնակցություն՝ մեկը Թուրքահայաստանի, մյուսը՝ Ռուսահայաստանի համար՝ համապատասխան ծրագրերով ու գործելակերպով, անշուշտ, երկու կուսակցությունների միջև որոշ կապի և փոխօգնության մի դրության ստեղծումով:

Ըստ անջատականների՝ Կովկասում ստեղծվելիք զուտ սոցիալիստական դաշնակցությունը, ելնելով երկու Հայաստանների՝ միմյանցից տարբեր առարկայական պայմաններից, ունենալով երկրամասի առանձնահատկություններից բխող համապատասխան ծրագիր ու գործելակերպ, պետք է դառնա տեղական հեղափոխական և դասակարգային պայքարի հիմնական կազմակերպիչ ուժը: Այդ դեպքում կուսակցությունը արագորեն կգնա դեպի ինքնամաքրում, իր շարքերը կազատի անհարազատ տարրերից և կդառնա մաքուր դասակարգային կազմակերպություն: Նա իր հիմնական նպատակը կհամարի կապիտալի ճնշումից աշխատավոր ժողովրդի ազատագրությունը և սոցիալիստական գաղափարների (նարոդնիկական ըմբռնմամբ) մարմնավորումը կյանքում: Միաժամանակ սերտ կապերի մեջ պետք է լինի ռուս սոցիալիստ-հեղափոխական (էս-էռ) կուսակցության հետ: Իսկ թե ինչ գործնական բնույթ կարող են ընդունել հեղափոխական-սոցիալիստական ռուսահայ և ազգային ազատա-

---

* *Աշխատավոր ասելով Լ.Աթաբեկյանը չէր պարզում, թե շահագործվող որ դասակարգին նկատի ունի՝ բանվորությա՞նը, թե՞ գյուղացիությանը:*

[1] *«Հայրենիք», N 10(273), հոկտեմբեր, 1948, էջ 87:*

գրական թուրքահայ շարժումները, ինչ փոխազդեցություն կարող են ունենալ երկուստեք – այդ խնդիրը պետք է թողնել ապագային:

Անջատականներն առանձնապես հաճախ էին շեշտում Կովկասում ստեղծվելիք նոր դաշնակցությունը «հին ախտերից» ձերբազատելու և մաքրելու անհրաժեշտությունը: Ներկայումս կովկասյան դաշնակցական դանդվածը «իր հսկայական և գորշ մեծամասնության մեջ ոչ գիտակից է, ոչ հեղափոխական է, և ոչ էլ կազմակերպված»,- գրում էր Լ. Աթաբեկյանը «Ինչո՞ւ ենք անջատվում Դաշնակցությունից» 23 էջանոց հայտնի գրքույկում, որ շարադրել էր «Մի գավառացի ընկերոջն ուղղված նամակի» ձևով և որում արծարծված էին այն պատճառները, որոնք երիտասարդ դաշնակցականներին դրդում էին անջատվել կուսակցությունից: Իբրև իր տեսակետի վկայություն նա «փաստարկում էր» «դաշնակցական մասսայի ձեռքով կատարված բարբարոսությունները [կովկասյան] թուրքերի և հայերի վրա», «այդ մասսայի թուրքատյացությունը և նրա անասելի սարսափը հեղափոխությունից»[1]:

Դաշնակցականները Աթաբեկյանին հարցնում էին. թուրք-հայկական ընդհարումների ժամանակ, երբ դաշնակցությունը ստիպված կռիվ էր մղում կովկասյան թուրք ելուզակների դեմ, ինչու՞ այն ժամանակ դուք չէիք բողոքում դաշնակցականների «բարբարոսությունների» դեմ, այլ, ընդհակառակը, քաջալերում էիք նրանց գործողությունները, քաղաքից քաղաք անցնելով գովաբանում ու հերոսացնում էիք այդ «բարբարոս մասսաներին»[2]:

Լավ, ասենք, դաշնակցությունն իր գործունեության ծանրության կենտրոնը Թուրքահայաստանից տեղափոխեց Կովկաս և, կանգնելով այստեղի հայության գլուխ, նրան տարավ համատուսաստանյան շարժման ուղիներով: Ենթադրենք հակացարական ազատագրական կռվի հաղթական ելքի դեպքում կովկասահայությունը ստացավ իրեն հասանելիք բաժինը: Պատկերացնենք, որ այդպես էլ կլինի: Իսկ թուրքահայությունը, թուրքահայ դա՞տը: Հայ ազգի արևմտյան հատվածին ի՞նչ ճակատագիր էին վերապահում անջատականները:

Նրանք գտնում էին, որ միայն Թուրքիայում գործելու համար նոր ստեղծվելիք դաշնակցության նպատակը պետք է մնա նույնը՝ արևմտահայության ազատագրությունը, բայց անցած 15 տարիների ընթացքում հարթած ուղիները համարում էին արդեն հնացած, առաջարկում էին փնտրել նոր ուղիներ, վերաքննել գլխավոր նպատակին հասնելու գործելակերպը, պայքարի մեթոդները:

Ամենից առաջ, ասում էին անջատականները, նոր ստեղծվելիք դաշնակցությունը պետք է իր հույսերն ամբողջովին կտրի եվրոպական կառավարությունների կողմից նախկինում տված խոստումներից, դադարեցնի նրանց հետ տարվող դիվանագիտական ջանքերը, քանի որ վերջին տասնամյակում հիմնավորապես փոխվել են Թուրքիայի և եվրոպական պետությունների փոխհարաբերությունները:

Նախկինում, 10-15 տարի առաջ, սուլթանյան կայսրության քրիստոնյա ազգերը դիվանագիտական հնարավորություններ ունեին եվրոպական կառավարությունների միջոցով ներազդելու թուրքական կառավարության վրա: Այժմ իրադրությունը արմատապես շրջվել է ի վնաս այդ ազգերի:

Այն ժամանակ եվրոպական պետությունների ներքին շուկաները լայն հնարավորություն ունեին սպառելու սեփական արտադրության ապրանքները, ուստի, այդ պայմաններում, եվրոպական դիվանագիտության համար դժվար չէր փոքր ազգերին «մարդասիրություն» ծախել և «ընդառաջել» նրանց ազատագրական տենչերին:

Սակայն, երբ խոշոր տերությունների ներքին շուկաներն այլևս սպառվել էին, և նրանք ի վիճակի չէին իրացնելու ուռճացած կապիտալիզմի հնարավորությունները, սկսվել է պայքար արտաքին նոր շուկաների համար, որը գնալով հասել է ծայրահեղ սրության: Թուրքիայի նման մեծ տերության մեջ շուկաներ, արտոնություններ, առանձնաշնորհումներ, կոնցեսիաներ ձեռք բերելը եվրոպական երկրների համար դարձել է կյանքի ու մահվան խնդիր: Դրությունն է՛լ ավելի է բարդացել, երբ գերմանական հողերը միավորվելուց հետո միացյալ Գերմանիան հանդես է գալիս լայնածավալ շուկաների տեր դառնալու անհագ ծարավով ու ձգտումներով:

Այս պայմաններում, ասում էին անջատականները, երբ մեծ տերությունները գաղութներ ձեռք բերելու և շուկաներ նվաճելու համար բռնած են իրար կոկորդից, միամտություն է կարծել, թե եվրոպական դիվանագիտությունը կարող է համաձայնություն գալ հայոց դատի շուրջ, եթե անգամ ցանկանա:

Անջատականները, այնուհետև, գտնում էին, որ թուրքահայ խնդիրներին նվիրված նորաստեղծ դաշնակցությունը պետք է դաս առնի մինչև այժմ կրած մեծ անհաջողություններից, հրաժարվի արդուլհամիդյան բռնակալության դեմ պայքարի մարտավարությունից, վերջ տա գենքով նրա դեմ կռվելուն, որդեգրի պայքարի միանգամայն ուրիշ միջոցներ:

«Ինչու՞ ենք անջատվում Դաշնակցությունից» գրքույկում Լ. Աթաբեկյանը գրում էր, որ մինչև այժմ ամբողջովին սխալ է եղել դաշնակցության և հընչակի կողմից կիրառվող բալկանյան ձևի ազատագրական շարժումը, ուստի պետք է հրաժարվել այդ սեպարատ շարժումից, միավորվել աբդուլհամիդյան ռեժիմի դեմ հանդես եկող մյուս ազգերի, առաջին հերթին՝ թուրք ժողովրդի ազատագրական շարժման հետ:

«Տաճկահայ խնդիրը, – գրում էր Աթաբեկյանը, – **տաճկական մեծ խնդրի բաղկացուցիչ մի մաս է** միայն: Հեռնթություն է կարծել, թե հայ ժողովուրդը, որը մինչև անգամ իր հայրենիքում փոքրամասնություն է կազմում, պիտի կարողանա սեփական ուժերով ազատագրվել: Հեռնթություն է կարծել, թե եվրոպական դիպլոմատները պիտի կամենան և տաճկահայ դատի երկու դույգ եվրոպական բարեկամները պիտի կարողանան նպաստել հատկապես տաճկահա-

[1] *Ռիխարդ*, Ինչո՞ւ ենք անջատվում Դաշնակցությունից. Բաքու. 1907. էջ 22:
[2] **«Խարխախ»**, N 30, 8 օգոստոսի 1907թ.:

յերի ազատագրության գործին (ընդգծումները մերն են: - Հ. Ս.)»[1]:

«Նախագծի» կողմնակիցների այն բուն և իրավացի առարկությունը, թե ո՞ւր են Թուրքիայում համընդհանուր հեղափոխության տվյալները, Լ. Աթաբեկյանը մեկ պատասխան ուներ. «Ուրիշ ճար չկա, նախամեծար է այդ ուղղությամբ աշխատել և սպասել, որովհետև հայ ժողովուրդը պիտի ազատուի տաճիկի հետ միասին կամ բնավ չպիտի ազատուի»[2]: Այս էր գրքույկի հեղինակի հավատո հանգանակը: «Բնավ» բառը նա գործածում էր աներեր վճռականությամբ:

Բայց ի՞նչ պետք էր անել Թուրքահայությունն ահավոր վիճակից փրկելու համար և ինչպե՞ս պետք էր անել: Այդ հարցերին Աթաբեկյանը տալիս էր հետևյալ պատասխանը.

«Տաճկահայ հեղափոխությունը՝ այդ պատճառով տաճկական հեղափոխության բաղկացուցիչ և ենթակա երևույթներից մեկը պիտի կազմի և չի կարող ունենալ որևէ սեպարատիստական (անջատական) նպատակ: Հայդուկային արշավանքների, անպատրաստ ապստամբությունների, դիպլոմատական ակնկալությունների և պառլամենտական հարցապնդումների քաղաքականությունը պետք է թողնել մի կողմ և ձեռնարկել անմիջապես միջազգային հեղափոխության կազմակերպություն Թուրքիայում»[3]: Այլ խոսքով, հայկական դատը դարձել է ընդհանուր Թուրքիայի դատ, ինչպես կովկասահայության խնդիրների լուծումը կապվել է Ռուսաստանի ազատագրական շարժման հետ:

Այստեղ կարևորն ու նորն այն էր, որ անջատականների գաղափարախոսը գտնում էր, թե հայկական շարժումը «չի կարող ունենալ որևէ՝ (ընդգծումը մերն է: - Հ. Ս.) սեպարատիստական նպատակ»:

Բայց արդյո՞ք դաշնակցությունն իր գոյության ընթացքում քիչ ջանքեր է թափել Թուրք ընդդիմադիր տարրերի հետ համերաշխ գործակցություն ստեղծելու համար, - Աթաբեկյանին հարցնում էին դաշնակցականները: Կուսակցությունն արել է առավելագույնը, բայց չի հասել ցանկալի արդյունքի:

Այս փաստերի դեմ չունենալով որևէ լուրջ առարկություն՝ անջատականները, այնուամենայնիվ, գտնում էին, թե Թուրք ընդդիմադիրների հետ իր բոլոր համագործակցական աշխատանքները դաշնակցությունը կատարել է «սեպարատիստական նպատակով»:

Նշանավոր անջատական Վահան Մինախորյանը, շատ տարիներ հետո վերաքննելով իր այդ ժամանակաշրջանի հայացքները, գրել է.

«Դաշնակցությունը չի ձգտել ամեն գնով Տաճկահայաստանում «Հայոց թագավորություն» ստեղծելու, ինչպես ենթադրում են անգործ մարդիկ: Նա չի որոճացել անպայման Հայաստանը Թուրքիայից անջատելու ծրագրեր:

[1] *Բիխարդ, Ինչո՞ւ ենք անջատվում Դաշնակցությունից, էջ 9:*
[2] *Նույն տեղում, էջ 15:*
[3] *Նույն տեղում, էջ 17:*

Բայց որ Թուրքիան Թուրքիա է, իսկ Հայաստանը՝ Հայաստան, որ նրանք իրենց «սեպարատ» կյանքն ու բախտը պիտի ունենան, որ Հայությունն ամեն տեղ՝ Թուրքիայից անկախ՝ իր ազգային ուրույն ձգտումներն ու իդեալներն ունի, և ամեն մարդ պետք է այդ իդեալներին ընդառաջ գնա, - այդ եղել է դաշնակցության քաղաքականության հիմքը Թուրք ընդդիմադիր հոսանքների նկատմամբ: Բնականաբար, ամեն անգամ, երբ սաստկացել են հալածանքները, «սեպարատ» ձգտումները աճել են, իսկ երբ թուլացել են ճնշումները, այդ ձգտումներն էլ նվազել են: Եվ այդ քաղաքականությունը չի եղել ինչ-որ գաղտնի դավադրություն Թուրք ընդդիմադիրների նկատմամբ, այլ ծրագրով, գրականությամբ, խոսքով ծանուցված, պարզաբանված տեսակետ ու վարքագիծ: Որով, ուրեմն, հարց կարող է լինել միայն այն մասին, թե ինչո՞ւ դաշնակցությունը «թույլ է տվել» իրեն մինչև իսկ այդ կարգի «սեպարատիզմ»»:

Լ. Աթաբեկյանի խոսքն ամենից առաջ ուղղված էր հայ ազատագրական շարժման «ակունքների», հին ուղիների դեմ («խենթություն է կարծել, թե եվրոպական դիպլոմատները պիտի կամենան ... նպաստել հատկապես տաճկահայերի ազատագրության գործին»): Այն ուղղված էր Մկրտիչ Խրիմյանի թե՛ կլոր սեղանի վրա դրված «ապուրի» և թե՛ այդ ապուրը «երկաթեայ շերեփներով» ճաշակելու դեմ: Քանի որ բուն խնդիրը սերտ կախման մեջ է Ռուսաստանի հեղափոխության հաղթությունից, գրում էր Աթաբեկյանը, տաճկահայկական շարժումը պետք է սահմանափակվի սոսկ կազմակերպչական ինքնապաշտպանողական խնդիրներով:

Երկու դատերի անջատման տեսության հետ սերտ կապ ուներ Թուրքահայ և ռուսահայ միջավայրերի տարբերության խնդիրը՝ իրենց քաղաքական - ընկերային հիմքերով:

Այս հարցը վրիպել էր Ա. Մրավյանի ուշադրությունից և իր գրքույկում չէր կատարել այդ տարբերությունների վերլուծություն: Չնայած դրան, անջատականները խնդրո առարկա այդ հարցը մանրազնին քննության առան լայն հարթության վրա՝ դարձնելով հրապարակային վեճերի նյութ: Եվ դա այն պատճառով, որ 1906-ի վերջին դաշնակցության շարքերում սկսել էր քաղաքացիություն ստանալ այն տեսակետը, թե սոցիալիստական շարժման համար տվյալներ կան նաև Թուրքահայաստանում, հետևապես երկու դատերի անջատման կարիքը չկա, ու երկու միմյանցից տարբեր տնտեսական զարգացման աստիճան ունեցող երկրների սոցիալիստական գործը կարելի է միասնաբար վարել չբաժանված դաշնակցության միջոցով:

Լ. Աթաբեկյանը և իր համախոհները վճռականապես մերժում էին դաշնակցության ղեկավարության այդ տեսակետը, որը նաև իր արտահայտությունն էր գտել Հ.Ց.Դ. «Կովկասյան նախագծում»: Անջատականների առաջնորդը Թուրքահայաստանի տնտեսական զարգացման ցածր աստիճանի, հետևապես այնտեղ սոցիալիստական աշխատանք կատարելու անհնարինության մասին իր տեսակետը հիմնավորելիս՝ դիմում էր հենց դաշնակցական հեղինակների

գրվածքներին՝ դրանցից քաղելով անհրաժեշտ տեղեկություններ: Նաև ուրիշ անջատականներ օգտագործում էին վիճակագրական տվյալներ Դ. Խաժակի «Հարկերը Տաճկահայաստանում», Ա. Դասպարի «Հայկական շարժում», Միք. Հովհաննիսյանի «Գորդեան հանգոյցը», «Դաշնակցությունը և նրա հակառակորդները» ուսումնասիրություններից, «Դրոշակի»՝ Թուրքահայությանը վերաբերվող բաժնից, գավառական թղթակցություններից և այլն: Նրանք ասում էին, որ այդ նյութերը ապացուցում են, որ Թուրքիայի միջավայրում ոչ մի պայման չկա սոցիալիստական աշխատանք կատարելու: Պատահական չէ, որ չնայած բոլոր փորձերին, Թուրքիայում այնպես էլ չստեղծվեց սոցիալիստական ուղղության որևէ, նույնիսկ աննշան, կազմակերպություն:

Լ. Աթաբեկյանը ասում էր, որ Թուրքահայաստանում ժամանակակից իմաստով չկա ո՛չ կապիտալ, ո՛չ տնտեսություն, չկան և դասակարգեր: «Տաճկահայաստանում սոցիալիզմը մի ուտոպիա է, իսկ մեզ մոտ՝ Կովկասում, դա մի անհրաժեշտություն է»[1], - գրում էր նա:

Անջատականները դաշնակ ղեկավարներին ու տեսաբաններին հարց էին ուղղում. ինչպե՞ս կարելի՞ սոցիալիստական պրոպագանդ սկսել, դասակարգային կռիվ մղել մի երկրում, ուր քրդի գնդակը խտրություն չի դնում հարստահարվածի և հարստահարողի միջև, ուր դասակարգերի անհավասարությունը նսեմանում է գաղթի և ավերածությունների մշանջենական կոչմարի տակ: Տաճկահայաստան կոչվող դժոխքում գործարանների և կապիտալիստական արդյունագործության հետք իսկ չկա, ընդհանուր, համատարած անապահովության և խժդժությունների պայմաններում առևտրական կյանքն իսպառ մարած է*:

Դաշնակցության տեսաբանները, պատասխանելով անջատականների հարցադրումներին, գրում էին, որ իրենք չեն ժխտում Թուրքահայաստանի և Կովկասի պայմանների միջև եղած տարբերությունները, բայց գտնում են, որ դրանք չեն կարող խոչընդոտ հանդիսանալ իրենց կուսակցության սոցիալիստական գործունեության համար: Իրենց համոզմունքի օգտին նրանք բերում էին մի շարք փաստարկներ:

Ա) Համաշխարհային կապիտալիզմն արդեն իր ուղղակի ու կողմնակի ազդեցությունը լայնորեն տարածել է օսմանյան կայսրության վրա՝ նրա մայրաքաղաքից սկսած մինչև հետ ընկած գավառները: Նրանք, մասնավորապես, օրինակ, վկայակոչում էին եվրոպական կապիտալներով երկրում հաստատված

[1] *Ռիխարդ, Ինչո՞ւ ենք անջատվում Դաշնակցությունից, էջ 15:*

Նույն միտքը Կովկասից հեռու, Մարսելում, արտահայտում էր Մ. Փորթուգալյանը. գրելով, թե հանուն սոցիալիզմի Թուրքիայում դասակարգային պայքար մղելը սիսիֆյան աշխատանք է, քանի որ այնտեղ չկան ոչ գործարաններ և ոչ էլ բանվորական մեծ համախմբումներ: «Թուրքահայաստանի և զարգացած երկրների ժողովուրդների վիճակն ու ցավերը այնչափ իրարմե տարբեր բաներ են, որ Թուրքահայաստանի հայն Եվրոպայի և Ամերիկայի գործավորներին գանգատած դառն վիճակը իր համար մեծ բախտավորություն մը կը համարի» («Արմենիա», 10 ապրիլի 1907թ.):

ծխախոտի «Regie» ընկերությունը, որը, բառիս ամենալայն իմաստով, շահագործում է աշխատավոր գյուղացիությանը ինչպես կայսրության տարբեր մասերում, այնպես էլ Թուրքահայաստանում: «Regie»-ն իր իշխանությանն է ենթարկել երկրի ողջ ծխախոտագործությունը, հիմնել է գործարաններ, որոնցում աշխատում են հազարավոր բանվորներ, Բ) Երկիր թափանցած եվրոպական զանազան ընկերություններ հիմնել են կոնցեսիաներ և իրենց կապիտալներով սկսել են երկաթուղաշինության, խճուղաշինության և այլ ձեռնարկներ: Արդեն կառուցվել են Սև և Մարմարա ծովերի ափերից սկսած մինչև կայսրության ներքին նահանգները երկարող Էրզրումի, Սրվազի, Անգորայի և այլ ժամանակակից խճուղիները, գործել են սկսել Բաղդադի հետզհետե երկարող՝ Մանիսայի, Այտընի, Կոնիայի երկաթուղիները, օրական երկրի նավահանգիստներ են մտնում և հեռանում օտար ընկերություններին պատկանող տասնյակ շոգենավեր, Գ) Կալվածատեր բեկերը, չեյխերն ու աղաները աշխատավոր գյուղացիությանը, այդ թվում Թուրքահայաստանում, հետզհետե դարձնում են կատարյալ պրոլետարներ, Դ) Նահապետական ձևի արդյունագործության մեջ նույնպես, ինչպես օրինակ՝ կտավագործության, շալագործության, գորգագործության մեջ տեղի է ունենում կենտրոնացում և աշխատանքի բաժանում, որի հետևանքով միևնույն հարկի տակ համախմբվում են հարյուրավոր աշխատավորներ, Ե) Հողի և ազատության հետ կապված խնդիրները արթնացրել և տիրող կարգերի դեմ ոտքի են հանել ոչ միայն հայ, այլ նաև Թուրք զանգվածներին: Որպես հակափաստարկ վկայակոչվում էր նաև այն, որ խոշոր տարբերություններ կան ոչ միայն Թուրքահայաստանի և Կովկասի միջև, այլև նույն Կովկասի տարբեր գավառների և քաղաքների միջև: Մի՞թե սոցիալ-տնտեսական պայմանների տեսակետից Բաքուն, Թիֆլիսը, Բաթումը կարելի է համեմատել, ասենք, Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի և Շուշիի հետ:

Այս և նման փաստարկներ բերելուց հետո դաշնակցության օրգան «Խարիսխ» թերթը գրում էր, թե անջատականների տրամաբանությամբ այնպես է ստացվում, որ սոցիալիստական կուսակցություններն իրենց գործողությունները անհապաղ պետք է դադարեցնեն Երևանի նահանգում, Կարսի մարզում, որովհետև իրենց սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանով դրանք մոտավորապես նույն վիճակում են, ինչպես, ասենք, Թուրքահայաստանի Կարինի կամ Վասպուրականի շրջանները: Դաշնակցության տեսաբանները հարց էին տալիս. ինչո՞վ է տարբերվում, օրինակ, ռուսական Բասենը Թուրքական Բասենից կամ Կարսը, Ալեքսանդրապոլն ու Երևանը՝ Էրզրումից, Մուշից ու Վանից: Ինչո՞ւ սահմանի այս կողմում հնարավոր է սոցիալիստական գործունեություն, իսկ սահմանի այն կողմում Թուրքաց Հայաստանում, ուր սոցիալ-տնտեսական նույնպիսի պայմաններ են, անհնարին է այդպիսի գործունեության ծավալումը[1]:

[1] **«Խարիսխ»**, *N 22, 28 հուլիսի 1907թ.:*

Թուրքիայում գործող Հ.Յ.Դ. կ.կոմիտեների մեծ մասը պաշտպանում էր կուսակցության կողմից Թուրքահայաստանում սոցիալիստական գործունեություն ծավալելու անհրաժեշտության մասին «Նախագծի» դրույթները, այսինքն՝ երկու դատերի գաղափարը:

Հ.Յ. դաշնակցության Դուրան-Բարձրավանդակի կազմակերպությունը այդ հարցի վերաբերյալ հետևյալ կարծիքն էր հայտնել.

«Միևնույն ժամանակ չեշտում ենք, որ այստեղ ևս հեղափոխությունն անհրաժեշտ է, որ այն ունի յուր լուրջ պատճառները, որ այն զանազան խելացընոր մարդկանց ագիտացիայի հետևանք չէ, այլ մի բնական երևույթ է, որ առաջ է եկել տաճկական ծանր և անտանելի ռեժիմից: Բացի դրանից, տաճկահայ հեղափոխությունը մի նոր երևույթ չէ, այլ ունի յուր անցյալը՝ ներկված հարյուր հազարավորների արյունով, սրբագործված հազար ու հազար նահատակների կյանքով»[1]:

Բաքվի Ստանիսլավսկայա և Կանտապինսկայա (Կանի - Թապինսկայա) փողոցների շրջանում գտնվում էր մի ընդարձակ շենք, որը դաշնակցության բազմամարդ հավաքույթների վայրն էր: Շենքի դահլիճում 1906-ի վերջերին հավաքվել էր մեծ բազմություն՝ կուսակցության ղեկավար ու շարքային անդամներ, անկուսակցական բանվորներ, նաև՝ ոչ քիչ թվով անջատականներ:

Բուռն վիճաբանություններ էին ծավալվել հավաքին ներկա Լ. Աթաբեկյանի կողմից առաջ քաշած երկու դաշնակցություն ունենալու հարցի շուրջ:

Շատերի թվում հավաքույթում հանդես գալով և դիմելով Աթաբեկյանին, Հարություն Շահրիկյանն ասել էր. «Դուք այստեղ պարզեցիք ձեր տեսակետները: Շնորհակալ ենք: Կան կարծիքներ, որոնք կարող են օգտակար լինել ընդհանուր գործին: Բայց թույլ տվեք հասկանալ, թե ի՞նչ է ձեր ուզածը: Դաշնակցությունը հիմնվել է տաճկահայ ժողովրդի ազատագրության նպատակով: Դուք այժմ մեր այդ հիմնական նպատակը դարձնում եք ակադեմիական մի հարց՝ խոստանալով «կարիքի դեպքում» և «հնարավորության սահմաններում» տաճկահայությանն «օգնել»: Դուք դեմ եք օգնության այն կերպերին, որ տեղի են ունեցել մինչև օրս Կովկասից. դեմ եք հայդուկային շարժման, դիվանագիտական ջանքերին և այլն: Բայց ի՞նչ եք առաջարկում: Համատաճկական հեղափոխությո՞ն, որի բաղկացուցիչ մասը պետք է կազմի հայկական դատը»[2]:

Հ. Շահրիկյանը զարմանք էր հայտնում անջատականների այն միամիտ հավատի նկատմամբ, թե օսմանյան կայսրության մեջ առաջանալու է համաթուրքական հեղափոխություն, որին պետք է ակտիվ մասնակցություն ունենան հայերը և հաղթանակից հետո ստանան իրենց հասանելիք ազատությունը: Նա Աթաբեկյանին և դահլիճում գտնվող մյուս անջատականներին հարցնում էր. «Ո՞վ կարող է հիշել ինձ Թուրքիո անցյալից մի հեղափոխական դեպք, որ արդյունք եղած լինի ներքին մղիչ ուժերի և ոչ թե քաղաքական արտաքին պայմանների կամ պալատական սադրանքների: Ոչ ոք: Եվ այժմ ո՞վ պետք է վարի այդ «համատաճկական հեղափոխությունը», ո՞ր մղիչ ուժերը...»[1]:

Հիրավի, Թուրքիայում այն ո՞ր ընդդիմադիր դասակարգերը կվարեին համաթուրքական հեղափոխություն, երբ երկրի տիրող թուրք բնակիչները, չընչին բացառություններով, շահագրգռված չէին որևէ հեղափոխությամբ, որը կթուլացներ իրենց դիրքերը: Դա բնական է, քանի որ օսմանյան պետության մեջ բոլոր թուրքերը հանդես էին գալիս որպես արտոնյալ ազգի ներկայացուցիչներ՝ դրանից բխող բոլոր առանձնաշնորհումներով ու արտոնություններով: Հենց դա նկատի ուներ Շահրիկյանը՝ շարունակելով իր դատողությունները: Նա, դարձյալ դիմելով Լ. Աթաբեկյանին, կանխատեսությամբ ասում էր.

«Դուք լավ գիտեք, որ Թուրքիո հեղափոխությունը հեռավոր ապագայի խնդիր է: Չգիտեք, միայն, որ հեղափոխված Թուրքիան կարող է մեզ ավելի մեծ պատուհասների ենթարկել, որովհետև բոլոր պայմաններում Թուրքը մընում է Թուրք: Դուք միայն միամտորեն կարծում եք, որ հայ ժողովուրդը Թուրքիայում կարելի է թողնել իր բախտին՝ մինչև այդ «երջանիկ» ապագան: Մենք քիչ-շատ ավելի իրազեկ ենք դրության, մենք գիտենք, որ մեր ժողովուրդը մաս-մաս կամ ամբողջությամբ կը բնաջնջվի ավելի առաջ, քան տեղի կ'ունենա իսկական ու փրկարար մի հեղափոխություն Թուրքիայում: Մեկնեցե՛ք այս դրությունից ու հայտնեցեք ձեր առաջարկները: Վստահ եղեք, որ դրանք պատգամների պես կ'ընդունվեն մեր կողմից: Կ'ընդունվեն, որովհետև խնդիրը դաշնակցության մեջ չէ և ոչ էլ մեր կամ ձեր կարծիքների մեջ: Խնդիրը դառնում է մի կատարյալ դժոխքի շուրջ, որի միջից, այս կամ այն ձևով, դուրս պետք է քաշել հայ ժողովուրդը... »[2]:

Հ. Շահրիկյանի ելույթը բուռն հավանություն գտավ դահլիճի մեծամասնության մոտ, իսկ Բաքվի ճանաչված դաշնակցական գործիչներից Մարգար Ավետիսյանը հայտարարեց, թե այդ ելույթի տակ կարող է ստորագրել կուսակցության անդամների 99%-ից ավելին: Նա չեշտում էր, որ փոխանակ խրմբվելու ընդհանուր նպատակների շուրջ, Լ. Աթաբեկյանն ու նրա կողմնակիցները ուզում են դաշնակցությանը պարտադրել նոր գաղափարախոսություն, նոր նպատակներ ու գործեր, փորձում են ստեղծել կռվի նոր ճակատներ, դրանով իսկ, կամա թե ակամա, նպաստում կազմակերպության ուժերի ցրմանը:

Ահա այսպիսի գաղափարներ ու մտքեր էին առաջադրում երիտդաշնակցականները և նրանց սկսած գործի անմիջական շարունակողները՝ անջատականները:

Հարկ է նշել, որ անջատականները, Լևոն Աթաբեկյանի գլխավորությամբ,

---

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 69:
[2] «Հայրենիք», N 11 (274), նոյեմբեր, 1948, էջ 63:

[1] «Հայրենիք», N 11 (274), նոյեմբեր, 1948, էջ 63:
[2] Նույն տեղում, էջ 64:

Է՛լ ավելի ձախ գնալով, 1907թ. վերջերից սկսած՝ իրենց քննադատության սլաքն ուղղել էին նաև Ա. Մրավյանին՝ դաշնակցության հանդեպ, իբր, մեղմ վերաբերմունք ունենալու համար:

Ե՛վ Մրավյանը, և՛ Աթաբեկյանը, 1906թ. լինելով երիտդաշնակցություն հոսանքի սկզբնավորողները և դրոշակակիրները, 1907թ. վերջերից հանդես բերեցին նկատելի տարաձայնություններ:

Լ. Աթաբեկյանը և նրա համախոհները Ա. Մրավյանի նկատմամբ ունեցած անհամաձայնությունները առավել ցայտուն դրսևորեցին վերջինիս կողմից Կ. Պոլսի «Սուրհանդակ» օրաթերթում «Մի միթինկի առթիվ» վերտառությամբ հոդվածը տպագրելուց հետո:

«Սուրհանդակում» Մրավյանը գրել էր, որ «այսօր դաշնակցությունը, մանավանդ Կովկասում, արդեն խորխորատներով է բաժանվում նախքան 1905 թվի դաշնակցությունից, թեև անցյալից դեռ շատ բան է մնում, թեև նա շատ հեռու է մի զուտ հետևողական աշխատավորական կուսակցություն լինելուց»: Աթաբեկյանական «Շեփոր» թերթը, քննադատելով Մրավյանի մտքերը, նշում էր, որ իրականում ոչ մի խորխորատ չկա հին ու նոր ժամանակների դաշնակցության միջև, և զուր է հոդվածագիրը «վարդագույն հույսերի մեջ օրորվում, թե դաշնակցությունը կարող է դառնալ «մի զուտ հետևողական աշխատավորական կուսակցություն»»[1]:

Դաշնակցության շարքերի զտման և կազմակերպությունը դեպի աշխատավորությունը թեքվելու Մրավյանի տեսակետը համարելով «պատրանք», «Շեփորը» գրում էր, որ նրա հոդվածում տեղ գտած մտքերը «մեզ իրավունք են տալիս ողջերթ մաղթելու դեպի Հ.Յ. դաշնակցության շարքերը, որից նա թյուրիմացաբար դուրս է եկել՝ մնալով հավատարիմ նրա սկզբունքային աշխարհայացքին, որ ազգային է և դեմոկրատական միաժամանակ ... «Սուրհանդակ» «ազգային» օրաթերթի հոդվածը պ. Մրավեանի ճանապարհն է հարթում դեպի մայր դաշնակցության գիրկը: Մենք գտնում ենք, որ դա դիպված չէ, այլ հոգեբանական անհրաժեշտություն ...»[2]:

Ավելորդ չէ ասել, որ դաշնակցության ղեկավարությունն անջատականների առաջնորդների, առավել ևս շարքայինների հանդեպ ցուցաբերում էր մեծ հանդուրժողականություն և իր կողմից նրանց նկատմամբ որևէ կազմակերպչական պատիժ չէր սահմանում, կուսակցությունից նրանց հեռացնելու համար հանդես չէր բերում նախաձեռնություն, մտածելով, որ տեղի ունեցողը արդյունք է ծայրահեղ ձախության հիվանդության, որն անցողակի է:

Խոսելով անջատականների կողմից կուսակցությանը հասցրած վնասի մասին՝ Հ.Յ.Դ. Բաքվի կազմակերպության ղեկավարներից Լ. Թադևոսյանն ասում էր.

[1] «Շեփոր», N 12, 2 նոյեմբերի 1908թ.:
[2] Նույն տեղում:

«Մեզ նման մի մեծ կուսակցության համար կարծիքների տարբերությունը բնական երևույթ է... Ես վստահ եմ, որ մեր երիտասարդները պառակտում սերմանելու նպատակ չունեն: Բայց նրանց ընթացքը, հակառակ իրենց իսկ ցանկության, կարող է այդպիսի հետևանքներ ունենալ: Եվ ահա մտածում եմ. ավելի լավ չէ՞ հավաքական ուժերով պայքար մղել մեր դժվարությունների դեմ թե՛ այստեղ, թե՛ Երկրում, քան ջլատել մեր ուժերը փոխադարձ պայքարների մեջ: Ո՞վ է, որ կարող է հակառակ լինել բոլոր բանավոր առաջարկներին, որոնք կարող են շտկել մեր թերությունները, լրացնել պակասը, վերաքննել ծրագիրը, գործելակերպը և այլն»[1]:

Ինչ խոսք, անջատականների շարժումն ընդհանուր առմամբ անցանկալի էր դաշնակցության համար, քանի որ կուսակցության անդամների մի որոշակի շրջանակում այն առաջ էր բերել մտքերի շփոթ, իսկ շատերի մոտ էլ կասկած էր հարուցել կուսակցության քաղաքական գծի ճշմարտացիության նկատմամբ, հատկապես այն բանից հետո, երբ 1907 թվականին նրանք կազմակերպչորեն բաժանվեցին դաշնակցությունից և մտան ռուս. սոց.-հեղափոխական (էս-էռ) կուսակցության մեջ[*]:

Եթե ժամանակի դաշնակցական մամուլը քննադատում էր անջատականներին, ապա առանձին դաշնակ հեղինակներ այդ քննադատությունը հասցնում էին ծայրահեղությունների: Նկատենք, սակայն, որ, մեր կարծիքով, անջատականությունը, որքան էլ տարօրինակ թվա, նաև, մի քանի առումներով, դրական նշանակություն ունեցավ դաշնակցության համար. ա) Այն մեծ թափ հաղորդեց տեսական գաղափարական աշխատանքին կուսակցության մեջ, բ) Զգալի աշխուժություն մտցրեց կովկասահայ անշարժ ու գաղջ քաղաքական կյանքի մեջ, գ) Սկսվեց արհեստակցական միությունների տենդագին շարժումը Բաքվի և Անդրկովկասի այլ վայրերի հայ բանվորության մեջ, դ) Սկիզբ դրվեց կոոպերատիվ շարժման կովկասահայ գյուղացիության շրջանում, ե) Նրպաստեց Հ.Յ.Դ. առաջիկա IV ընդհանուր ժողովում դաշնակցության համար սոցիալիստական ծրագրի ընդունմանը և կուսակցության կողմից սոցիալիստական բուռն գործելակերպի որդեգրմանը:

Հարկ է նկատել նաև, որ անջատականների շարքերում ընդգրկված էին, եթե ոչ բացառապես, ապա՝ մեծ մասամբ, մտավորական երիտասարդ դաշնակցականներ, որոնք ոչ միայն թշնամի չէին կուսակցությանը, այլև խորապես մտահոգ էին նրա ապագայով, միայն թե ուզում էին նրա գործունեությունն ուղղորդել իրենց պատկերացմամբ, ճիշտ հունով:

[1] «Հայրենիք», N 11 (274), նոյեմբեր, 1948, էջ 61:
[*] Կրկին նկատենք, որ մինչև անջատականների մտնելը էսէռական կուսակցության մեջ, այնտեղ հայերի թիվը մատների վրա էր հաշվվում: Դրանում գուցե դեր էր խաղում նաև այն հանգամանքը, որ էսէռական կուսակցությունը մարտական կուսակցություն լինելով, իշխանությունները դաժանորեն էին պատժում նրա ձերբակալված անդամներին, շատ ավելի խիստ, քան ձերբակալված սոցիալ-դեմոկրատներին:

Ի տարբերություն անձատականների ձախ հոսանքի՝ «Կովկասյան նախագծի» քննարկումների ընթացքում դաշնակցության շարքերում ձևավորվեց նաև մի ուրիշ՝ աջ ուղղության հոսանք, որի մեջ համարյա չկային մտավորականներ: Այդ հոսանքն ավելի բազմամարդ էր, նրա շարքերում հիմնականում Թուրքահայ դաշնակցականներ էին, սպառազեն հին հայդուկներ, որոնք այս անգամ, իսկապես, մեծ վտանգ էին ներկայացնում Հ.Յ.Դ. համար: Աջ դաշնակցականները պատրաստ էին զենքի ուժով կուսակցության ղեկավարությանը ստիպել հրաժարվելու «Նախագծից»:

Ահա թե ինչու էր այդ հոսանքը ավելի վտանգավոր:

ՄԻՀՐԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: ԱԽՏԱՆԻՇՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅ ՀԱՅԴՈՒԿՆԵՐԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Հ.Յ. դաշնակցության մեջ առաջացած ընդդիմադիր առավել վտանգավոր հոսանքը ձևավորվեց տաճկահայ հայտնի խմբապետ, բաբերդցի Միհրան Քեչիյանի շուրջ: Նրա գլխավորությամբ շարժումը հանդես եկավ կուսակցության ղեկավարության գործելակերպի դեմ ընդհանրապես և ղեկավարության մշակած «Կովկասյան նախագծի» դեմ հատկապես: «Նախագծի» սուր, անզիջում քննադատությունն աստիճանաբար փոխարկվեց խոր թշնամանքի:

Միհրանը քաջ ու ըմբոստ մարդ էր, որը տարիներ շարունակ եղել էր հայդուկային խմբերի շարքերում: Սակայն Մոսունի արշավանքից՝ վերադառնալիս, դաշնակցական աղբյուրների վկայությամբ, մի խումբ մարտիկներով ու զենքերով անձնատուր էր եղել ռուսական իշխանություններին: Երևանի բանտից դուրս գալուց հետո նա դիմել էր Նիկոլ Դումանին՝ պաշտոն ձեռք բերելու ակնկալությամբ, բայց մերժում էր ստացել: Դարձյալ նույն աղբյուրների վկայությամբ՝ Հ.Յ.Դ.-ից դժգոհ, նա գնացել էր Բաթում և կանգնել արդեն սկիզբ առած **հականախագծական** շարժման գլուխ:

Միհրանը հիշեցնում էր, որ Հ.Յ.դաշնակցությունը ստեղծվել է Թուրքահայերին օսմանյան բռնապետությունից ազատագրելու նպատակով և **միայն** նրանց դատին նվիրված մարտական կազմակերպություն է: Միհրանը կատաղի հակառակորդ էր հայերի կողմից Ռուսաստանում հեղափոխական աշխատանք կատարելուն և ցարիզմի դեմ սկսած կռվին մասնակցելուն: Նա երկյուղ էր կրում, որ, մխրճվելով Կովկասի գործերի մեջ, կուսակցությունը ստիպված կլինի լքել Թուրքահայոց դատը կամ, առնվազն, երկրորդական նշանակություն տալ դրան: Նա ասում էր նաև, որ դաշնակցությունը Կովկասում անելիք չունի, որ իրենց առջև կանգնած բոլոր խնդիրները կովկասահայերը պիտի լուծեն իրենց իսկ ուժերով, որ այդ խնդիրները որևէ առնչություն չունեն Թուրքահայոց դատի հետ, հետևապես առնչություն չունեն նաև դաշնակցության հետ*:

Այստեղից Միհրանը բխեցնում էր մի ուրիշ եզրահանգում՝ կուսակցությունը պետք է ազատել ռուսահայերից, նրանց դիկտատից, կազմակերպության ղեկավարությունը և ընդհանրապես ազատագրական շարժման ղեկը ամբողջովին պիտի անցնի Թուրքահայ գործիչներին:

Ահա Միհրանի և Սեպուհի երկխոսությունից մի հատված.

«**Միհրան.** – Զարիքը կուգայ անկէ, որ մեզ կառավարողները ռուսահայեր են, որ նստած փափուկ աթոռներու վրայ, կուզեն հեռուէն կառավարել մեզ եւ մեր շարժումները, առանց ճանչնալու Երկիրը, ոչ ալ մեր ժողովուրդը եւ անոր պահանջները**: Այս վիճակը չի զարմացներ զիս, որովհետև ռուսական ընկերավարական գաղափարները և ձեռնարկները անմիջապէս իրենց քովը տեղի

---

* 1904թ. հուլիսին խմբապետ Միհրանի գլխավորած 60 հոգուց բաղկացած «Մասիս» և Գայլ Վահանի (Մինաս Դոլբայան) գլխավորած «Արտավազդ» դաշնակցական խմբերը, անցնելով ռուս-տաճկական սահմանը, մտնում են Հայաստանի Բագրևանդի գավառ և հարձակվում Մոսուն հայկական գյուղի և Զոր կոչվող վայրի Թուրքական զորանոցների վրա: Թուրքական և ռուսական սահմանապահ զորքերը համատեղ շրջապատում են արշավախմբերին: Մի քանի ժամ տևած կռվի ընթացքում նահատակվում է հայ մարտիկների մեծ մասը: Սպանվում է նաև «Արտավազդ» խմբի հրամանատար Վահանը: Երկու խմբերից միայն չորս տասնյակ հոգու է հաջողվում փախչել ու ազատվել: Դրանց թվում էր նաև «Մասիս» խմբի հրամանատար Միհրանը՝ իր մարտիկների մի մասի հետ, որոնք վերադառնալով սահմանի ռուսական կողմը՝ հանձնվում են իշխանություններին:

* Դաշնակցական մամուլը և գրականությունը Միհրանին բնութագրել են խիստ բացասական գծերով՝ նրան որակելով որպես դավաճան (տե՛ս **Միքայել Վարանդեան**, Հ.Յ.Դաշնակցութեան պատմություն, հատ. Բ, էջ 164, **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 418 և այլն): Բայց ազատագրական շարժման Թուրքահայ գործիչների մի մասը ժամանակին և հետագայում նույնպես չի բաժանել բաբերդցի խմբապետին տված նման գնահատականը: Դաշնակցական որոշ գործիչներ,չարդարացնելով միհրանականությունը, այնուամենայնիվ, փորձ են արել բացատրել այդ հոսանքի առաջացման պատճառները: Օրինակ՝ Արտաշես Հովսեփյանը գրել է. «...Հարուստ անցեալով յեղափոխական կուսակցութիւն մը, որ մինչ այդ «Կռուեցէք, տղերք», «Լուսին չկար», «Կարկուտ տեղաց» էր երգած, ստեղծուած նոր դրութեան, նոր պայմաններու բերումով, պարտաւորուած էր **Խթերնասիոնալի** երգը սկսիլ հնչեցնել: Բնականաբար, առանց ներքին ցնցումի, մէկ օրէն միւսը ան չէր կրնար իւրացնել ընկերավարական նախագիծը, որ խորթ էր զանգուածին: ...Միհրանական շարժման երեւան գալը հետեւանք էր այն հիմնական մտածողութեան, որ **նախագծով**, դաշնակցութեան գործունէութիւնը կ'ընդգրկէր շատ աւելի լայն ասպարէզ մը, տաճկահայ դատին կը լծորդուէր **դասակարգային** պայքարը եւ **ռուսական քաղաքական յեղափոխութեան** մասնակցելու անհրաժեշտութիւնը: ...Այսպես լինելով հանդերձ, Միհրանական շարժման հետեւորդները կ'անտեսէին մէկ հանգամանք մը, սակայն: Անոնք անհեթեթօրէն կը պահանջէին կովկասահայերէն, որ չմտածեն իրենք իրենց մասին, չհետաքրքրուին իրենց սեփական ապագայով եւ կեանքով, միմիայն տաճկահայ դատը շալակնին առած, նուիրաբերեն անոր թ՛ւ մարդ թ՛ւ դրամ թ՛ւ ռազմամթերք թ՛ւ ամբողջ կեդրոնացած ուշադրութիւն (**Մալխաս**, Ապրումներ, հատ. Ա, էջ 439-440):

** Հարկանցիորեն նշենք, որ այս տեսակետը ամբողջովին պաշտպանում էին բոլշևիկները, գտնելով, որ հայ հեղափոխական շարժումը ռուսահայ քաղաքական գործիչների կողմից բռնությամբ փաթաթված է Թուրքահայերի շլինքին: Հետագայում այդպես էին մտածում նաև ռամկավարները: Արտակ Դարբինյանը գրել է. «Թուրքահայ դաշնակցականները սկզբեն մինչև վերջ ենթակա մնացին ռուսահայ դաշնակցականներուն, որոնցմէ յուրաքանչյուրը իբրև «չեֆ» մը կը ներկայանար անոնց» (**Արտակ Դարբինեան**, Հայ ազատագրական շարժման օրերեն (յուշեր 1890-էն 1940), էջ 60-ի տողատակ):

կ'ունենան, իրենց չահերը կը չօշափեն, ուրեմն բնական է, որ անոնք տարուին հոսանքէն և իրենց ցաւերով ապրին, բայց մենք ալ պետք է մենք մեզի մնանք եւ մեր ցաւերը եւ ընելիքնիս գիտնանք...

Սեպուհ. – Սև մտքեր ունիս... Պառակտել կ'ուզես մեր կուսակցութիւնը: Մոռացի՞ր արտահայտած միտքերդ և չիտակ քալէ: Ովքե՞ր են ռուսահայերը, որ կը կառավարեն քեզ եւ զիս: Երկրին մէջ քանի՞ ռուսահայ կայ. մատի վրա կը համրուին. Գուրգէ՞նը, կ'ըսես, որ ինկաւ մեր սուրբ հողին վրայ. Դումա՞նը, Վարդա՞նը, որոնք մեր օրհասական ժամին Երկիր մտան, Թումա՞նը, Թորգո՞մը, Իշխա՞նը, Արա՞մը, որ իրենց երիտասարդութիւնը եւ ասպարեզը զոհած՝ Երկիր էին եկած մեր ժողովուրդին համար...: Վե՛րջ տուր խաղերուդ, Միհրան, եւ մի՛ պղտորեր մեր կուսակցութեան ներքին կեանքը»[1]:

Պարզ էր, ուրեմն, որ Միհրանը գնում է նախ կուսակցության գոյություն ունեցող կառույցը քայքայելու, ապա կազմակերպությանը տիրանալու ճանապարհով:

Բաբերդցի խմբապետն իր ընկերների հետ Հ.Յ. դաշնակցության դրոշի տակ ակտիվ մասնակցություն էր ունեցել Կովկասում Թուրք-հայկական կռիվներին: Այդ կռիվների ժամանակ հայ մարտիկները մեկ հոգի, մեկ շունչ էին դարձել: Բայց ընդհանուր թշնամու դեմ մղած հաղթական կռիվներից հետո նույն մարտիկների շրջանում առաջ եկավ մի ներքին խլրտում, որ ծանր պառակտման բոլոր ախտանիշերն ուներ և սպառնում էր ջլատել Հ.Յ. դաշնակցության ռազմական ուժն ու բարոյական հեղինակությունը: Այդ նոր վտանգը բխեց ճիշտ այն «կովկասահայ-Թուրքահայ» հակադրանքից, որի մասին խոսք գնաց վերը:

Հայրենասեր, անձնազոհ հայդուկներն էին, որ կռիվների ժամանակ վերացրին այդ զուտ աշխարհագրական հակադրանք-երկվության սահմանները՝ հանուն հայ ժողովրդի ազգային-գաղափարական ամբողջության: Բայց, ահավասիկ, պարադոքսն այն էր, որ հենց իրենք, նույն հայդուկները, տոգորվեցին բուռն ցանկությամբ՝ վերահաստատելու իրենց ջանքերով արդեն վերացված ու լիովին չքանալու դատապարտված հարկադրանք-երկվությունը: Այդ վերահաստատման ախոյաններ դարձավ, առաջին հերթին, Թուրքահայ հայդուկների մի մասը:

Թուրք-հայկական ընդհարումների հատկապես առաջին շրջանում Միհրանը համարում էր, որ իր կռիվն ուղղված է միայն Թուրքերի դեմ, թեև հայտնի էր, որ նրանց գրգռողն ու զինողը ցարական իշխանություններն էին: Խմբապետը չէր ցանկանում գործ ունենալ ռուսական բռնակալության հետ և ուզում էր, որ կուսակցության բոլոր ուժերը ուղղվեին դեպի Թուրքահայաստան՝ ընդդեմ սուլթանական ռեժիմի:

Միհրանը կատաղի հակառակորդ էր ոչ միայն Հ.Յ. դաշնակցության պայքարը Կովկաս փոխադրելու ծրագրին, այլև՝ կուսակցության սոցիալիստական գործունեությանը:

Միհրանականները գտնում էին, որ սոցիալիզմի գաղափարախոսությունը, վատ լինի թե լավ, իրագործելի լինի թե անիրագործելի, – չի պատշաճում այն կացությանը, որի մեջ գտնվում է հայ ժողովուրդը: Ավելին, նրանց տեսակետով սոցիալիզմն ընդհանրապես խորթ գաղափար էր հայության համար, իսկ Թուրքահայերի համար՝ ուղղակի կործանարար: Միհրանը հաճախ էր շեշտում, թե Թուրքահայաստանի ազատագրության համար սկսված կռվի առաջապահ մարտիկներ են եղել Բաբկեն Սյունիները, Հրայրները, Վահանները, Գևորգ Չաուշները, անթիվ-անհամար ազգանվեր հեղափոխականներ, որոնցից ոչ մեկը սոցիալիստ չի եղել:

Ինչպես Հ.Յ.Դ. գործունեությունը Կովկաս տեղափոխելու, այնպես էլ սոցիալիզմի գաղափարը Թուրքահայաստան մտցնելու մասին Միհրանի կողմից անընդունելի համարվող երկու տեսակետներն ունեին շատ կողմնակիցներ: Խմբապետի պես էին դատում Թուրքահայ մարտիկներից շատերը, Երկրի գործիչների ստվարագույն մասը, գաղութահայերը և զգալի թվով հին դաշնակցականներ, ովքեր չէին հանդուրժում դաշնակցության գործող (1892թ.) ծրագրից որևէ նահանջ: Ինչպես արդեն նշվել է, այդպես էին մտածում նույնիսկ Թուրքահայ ազատագրական շարժման այնպիսի խոշոր գործիչներ, ինչպիսիք էին Սեբաստացի Մուրադը, Անդրանիկը և ուրիշներ: Ավելին, Հ.Յ. դաշնակցության՝ Թուրքահայաստանում գործող մի շարք կազմակերպություններ իրենց հայտարարել էին միհրանականության ջերմ կողմնակիցներ:

Միհրանին հետևողների թիվը ժամանակի ընթացքում այնքան շոշափելի դարձավ, որ այդ հոսանքը ստացավ միհրանական շարժում անվանումը: Եթե անջատական շարժման կենտրոնը Բաքուն էր, ապա միհրանական շարժման կենտրոնը դարձավ Թիֆլիսը: Շարժումը շատ կարճ ժամանակում տարածվեց այն աստիճան, որ մի քանի հազար մարդ հավաքվեց ըմբոստության դրոշ պարզած բաբերդցի խմբապետի շուրջը: Միհրանականությունը օրըստօրե զորանում և սպառնալից էր դառնում: Բողոքի շարժումը վերածվեց բացահայտ անհնազանդության, որը սպառնում էր ներքուստ պառակտել կուսակցությունը:

Իր թիկունքում ունենալով լավ զինված և վստահելի մեծաթիվ Թուրքահայ հայդուկներ՝ Միհրանն անցավ վճռական գործողությունների:

Առաջին հերթին խմբապետն իր պայքարի սլացքն ուղղեց Հ.Յ.Դ. վերին ղեկավարության, մասնավորապես, դաշնակցության խորհրդի դեմ, որը հրատարակել էր «Կովկասյան նախագիծը»: Նա պահանջում էր հետս կոչել կազմած փաստաթուղթը կամ գոնե դրանից հանել նշված երկու տեսակետների վերաբերյալ մասերը, քանի որ կուսակցության հիմնական, ավելի ճիշտ՝ միակ խնդիրը Թուրքահայաստանի ազատագրումն է[1]:

---

[1] **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 420-421:

[1] **«Հայրենիք»**, N 1, նոյեմբեր, 1922, էջ 58, N 1(109), նոյեմբեր, 1931, էջ 98:

Քանի դեռ շարունակվում էին Թուրք-հայկական ընդհարումները Կովկասում, «Նախագծի» նկատմամբ դժգոհների պահանջ-սպառնալիքները զուսպ էին և բացեիբաց դուրս չէին գալիս արտաքին երես: Չէ՞ որ, ի վերջո, կար տարրական գիտակցություն, թե ամբողջ ժողովրդի գոյությանը սպառնացող վտանգի հանդեպ պետք է զսպվեն բոլոր ներքին դժգոհությունները: Բայց հազիվ ընդհարումները վերջ էին գտել, և կովկասյան Թուրքերից եկող վտանգը վերացել էր, երբ հականախագծական աջ ուժերը հրապարակ իջան իրենց պահանջներով ու սպառնալիքներով:

«Կովկասյան նախագիծը» հետ չվերցնելու կամ Թուրքահայության համար «մնասակար մասերը» փաստաթղթից չհանելու դեպքում Միհրանը և նրա նվիրյալ զինակիցները սպառնում էին դիմել զենքի:

Արհամարհանքով մերժելով Հ.Յ. դաշնակցության ղեկավարության հեղինակությունը և չենթարկվելով նրան՝ միհրանականները պահանջեցին իրենց հանձնել կուսակցության վերին ղեկավարությունը: Մերժման հանդիպելով՝ նրանք ստեղծեցին իրենց անջատ մարմինը՝ «Ժամանակավոր զինվորական խորհուրդ» անունով, և սկսեցին գործել ինքնագլուխ:

«Զինվորական խորհրդի» նպատակն էր իր ձեռքը գցել դաշնակցության վարչական գործերը, կազմակերպության փողերը, կայքը, մինչև իսկ կուսակցության պաշտոնաթերթ «Յառաջի» խմբագրությունը:

Խորհուրդը պատրաստել էր տվել մի կեղծ կնիք և դրել գործածության մեջ Հ.Յ.Դ. կուսակցության անունով: Այդ նույն անունով հրատարակում էին թռուցիկներ և կոչեր: Միհրանի մարտիկները զենքի սպառնալիքով կուսակցության զինանոցներից հանում և յուրացնում էին զենք ու զինամթերք[1], դաշնակցական ղեկավարների վկայությամբ, գումարներ էին կորզում մեկից-մյուսից:

Ավելին, հետն առնելով մի քանի թիկնապահ, Միհրանը մտնում է «Յառաջի» խմբագրատուն՝ օրը ցերեկով, երբ սովորաբար այնտեղ էին հավաքված լինում ոչ միայն խմբագիրներն ու գործակիցները, այլ նաև արևելյան բյուրոյի անդամներն ու այլ կարևոր ընկերներ: Ինքնավստահ տոնով նա պահանջում է անմիջապես իրեն հանձնել դաշնակցության կնիքը և բոլոր թղթածրարները: Ճիշտ է, նրան չի հաջողվում հասնել իր նպատակին, բայց միայն այդ պատճառով ուշանում է թերթի հերթական համարի տպագրությունը:

Միհրանականները ծրագրել էին հաջորդ օրը կրկին հարձակվել խմբագրատան վրա, բայց այդ պահին Թիֆլիսում գտնվող Նիկոլ Դումանը զինավառ գալիս նստում է այնտեղ: Իմանալով այդ մասին՝ նրանք հրաժարվում են այդ մտադրությունից:

Միհրանականները ծրագրել էին ահաբեկման ենթարկել դաշնակցության մի շարք ղեկավար անձանց և, առաջին հերթին, Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյի

[1] «Հայրենիք», N 1(395), հունվար, 1959, էջ 15, N 2(408), փետրվար, 1960, էջ 15:

անդամներին՝, բայց Կովկասում այդ բանը նրանց չի հաջողվում, իսկ Թուրքիայում, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, նրանց հարձակման զոհ է գնում կուսակցության խոշոր տեսաբաններից մեկը՝ Եղիշե Թոփչյանը:

Դաշնակցության հակառակորդները, այդ թվում Թիֆլիսի և Բաքվի հակադաշնակցական բուրժուազիան, չտապեցին օգտվել պատեհ առիթից և ուժ տալ միհրանական շարժմանը: Նրանք հովանավորեցին, խոսքով ու գրչով, գրգռիչ խորհուրդներով ու դրամով քաջալերեցին Միհրանին և նրա համախոհներին՝ հույս ունենալով այդ կերպ կասեցնել Հ.Յ. դաշնակցության սոցիալիստական և հեղափոխական ձգտումները Ռուսաստանում:

Դաշնակցության աղբյուրները պնդում էին, որ ռուս գաղտնի ոստիկանությունը, իր հերթին, կարողացել էր ըմբոստ խմբապետին դարձնել իր ծպտյալ գործակալը:

Ընթերցողը նկատում է, որ անջատականներն ու միհրանականներն ունեին և՛ չփման եզրեր, և՛ արմատական տարբերություններ: Երկու հոսանքներին միավորում էր այն տեսակետը, ըստ որի Թուրքահայաստանում սոցիալիստական աշխատանքի համար չկա ոչ մի պայման, և դաշնակցությունը հիմք չունի այդ ուղղությամբ Երկրում որևէ գործունեություն ծավալելու:

Բայց երկու հոսանքների միջև տարբերություններն ավելի շատ էին և ավելի խորը. կուսակցության մեջ նրանք գտնվում էին հակադիր բևեռներում:

Եթե անջատականները Հ.Յ.Դ. ղեկավարությունից պահանջում էին կուսակցության գործունեության մի մասը փոխադրել Կովկաս, ապա միհրանականները այդ գաղափարի կատաղի հակառակորդներ էին: Առաջինները գըտնում էին, որ կազմակերպությունը պետք է դադարեցնի օսմանյան ռեժիմի դեմ զենքով կռվելը, հրաժարվի պայքարի հին ձևերից ու մեթոդներից և հիմնական խնդիր ունենա միանալու ռուսական ցարիզմի դեմ սկսված ազատագրական մեծ հեղափոխությանը, իսկ միհրանականները կտրականապես մերժում էին հայերի մասնակցությունը ռուսական հեղափոխությանը և գտնում, որ դաշնակցության պայքարի միակ դաշտը, առաջվա պես, պետք է լինի Թուրքահայաստանը:

Եթե Լևոն Աթաբեկյանը և նրա գաղափարակիցները պահանջում էին իրենց հոսանքի անջատումը դաշնակցությունից, ապա Միհրան Քեչիյանը և նրա համախոհները ոչ թե անջատվել էին ուզում կուսակցությունից, այլ նպատակ ունեին ողջ կազմակերպությունը տանել իրենց հետևից:

Միհրանականությանը Միք.Վարանդյանը տվել է հետևյալ բնորոշումը.

«Միհրանականությունը դրուագ մըն էր, պատահական ու վաղանցուկ, և հոդ ալ խառն էին օտար, անմաքուր ազդակներ ... Զափազանց վեհ էր մեր

* Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովի (Սոֆիա, 1904թ.) կողմից հաստատված արևելյան բյուրոյի կազմի մեջ էին Սիմոն Զավարյանը, բժ. Տեր-Դավթյանը, Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ), բժ. Համո Օհանջանյանը, բժ. Տիգրան Թադևոսյանը, Ստեփան Տեր-Մկրտչյանը և գյուղատնտես Արշակ Թադևոսյանը:

ամենուս իդեալը, և չափազանց ջերմ էր հին ու նոր դաշնակցականի, թուրքահայի, ռուսահայի ու պարսկահայի արեան ու գաղափարի եղբայրությունը, - և այդ իսկ պատճառով մեր կազմակերպությունը ամենածանր քրիզներու մեջ ալ կանգուն մնաց...»[1]:

Եվ այսպես, «Կովկասյան Նախագիծն» առիթ դարձավ, որպեսզի դուրս հորդեն տարիների ընթացքում դաշնակցության մեջ կուտակված անհամաձայնություններն ու դժգոհությունները: Կուսակցությունն ալեկոծվում, փոթորկվում էր, խռովահույզ ու աղմկոտ կրքերը հասել էին ծայրահեղ լարվածության:

Դաշնակցությունն ալեկոծող գործընթացն իր վրա էր բևեռել ոչ միայն կազմակերպության անդամների, այլև հասարակության ամենալայն շրջանների ուշադրությունը: Բոլորին՝ դաշնակցականների բարեկամներին և հակառակորդներին հուզում էր մի հարց. այդ ծանրագույն պահին կուսակցությունն ունա՞կ կլինի արդյոք, առանց արմատապես կերպարանափոխվելու և առանց մեծ կորուստների, դուրս գալ ծայր առած ներքին ալեբախումներից ու ցնցումներից, թե՞ ընդմիշտ կանցնի պատմության գիրկը:

Հ.Յ.Դ. կովկասյան գործունեության դեմ հանդես էին գալիս հայ բուրժուաների մեծ մասը և նրանց ձայնափող մամուլը: Սրանք անզիջում պայքարի մեջ էին դաշնակցության դեմ գտնելով, որ այդ կուսակցությունն ընդհանրապես ահավոր երևույթ է հայ իրականության մեջ, իսկ սոցիալիստական դառնալուց հետո կվերածվի անհաղթահարելի մի ուժի, ուստի այդ ապագա հզոր թշնամուն պետք է քայքայել հենց սկզբից, նրան թույլ չտալ կանգնել զուտ հեղափոխական ճանապարհի վրա: Եվ զարմանալի չէ, որ նրանք մոլեռանդությամբ պաշտպանում և խրախուսում էին Հ.Յ.Դ. շարքերում հանդես եկած հերձվածները, հատկապես ամուր թիկունք կանգնելով միհրանականությանը՝ դրա հետ կապելով դաշնակցությունը ներսից քայքայելու հույսը:

Պահպանողականների և ազատականների (հայ կադետներ-մշակականներ) համար անսպասելի էին «Նախագծում» տեղ գտած սկզբունքային նոր դրույթներն ու հարցադրումները: Առաջինները գտնում էին, որ փաստաթուղթը մի անթույլատրելի խառնուրդ է ազգայինի և դասակարգայինի, մի տարօրինակ հյուսվածք, ուր կան և՛ սոցիալ-դեմոկրատական, և՛ սոցիալիստ-հեղափոխական մտքեր, միաժամանակ՝ դրանք ժխտող հաստատումներ: Վկայակոչելով նույն բանը՝ ազատական մտավորականները՝ Լևոն Սարգսյանը, Համբարձում Առաքելյանը, Ալեքսանդր Քալանթարը, Սամսոն Հարությունյանը և ուրիշներ, ավելացնում էին, որ ազգային նկրտումները զոհաբերված են սոսկ դասակարգային անորոշ նպատակների: Նրանք հատկապես շեշտում էին, թե փաստաթուղթը դեմ է դաշնակցության ոգուն և ավանդական ըմբռնումներին, քանի որ պարունակում է բոլորովին նոր ու խորթ տարրեր, որոնք անխուսափելիորեն բաժան-բաժան կանեն ազգը, իրար դեմ կհանեն դասակարգերը,

[1] «Հայրենիք», N 6, ապրիլ, 1923, էջ 39:

մինչդեռ այժմ, ավելի քան երբևիցե, հրամայական անհրաժեշտություն է բոլոր հայերին միավորելու ուղղությամբ տարվող աշխատանքը:

Դրա հետ միասին, ազատականները մտահոգություն էին հայտնում, թե «Նախագծի» պատճառով դաշնակցությունը կարող է քայքայվել և չքանալ քաղաքական ասպարեզից, որը, նրանց խոսքերով ասած, մեծ հարված կլինի Թուրքահայ ժողովրդի ազատագրության գործին: «Մշակը» գրում էր.

«Քանի որ հարցի բազմակողմանի քննությամբ պիտի զբաղվի և այդ մասին իր վերջնական վճիռը կայացնի «դաշնակցության» մոտակա ընդհանուր ժողովը, ուստի, կարծում ենք, ամեն մի անհատ, որ անտարբեր չէ դեպի այդ մեծ կազմակերպության ապագան, պարտավոր է իր ձայնը բարձրացնել հօգուտ այդ հարցի այս կամ այն կերպ որոշման»[1]:

Դաշնակցության շարքերում տեղի ունեցող ցնցումները հնչակյանները դիտում էին որպես ազգային-հեղափոխական դաշտում իրենց երբեմնի (1887-1895 թթ.) գերակայությունը վերականգնելու ավետիս և հնարավորության սահմաններում նպաստում էին հակառակորդ կուսակցության ներսում հակասությունների հետագա խորացմանը:

«Նախագիծն» իրենց համար անմիջական սպառնալիք էին համարում սոցիալ-դեմոկրատները, հատկապես՝ բոլշևիկները: Վերջիններս գտնում էին, որ ընդունելով դասակարգային պայքարի սկզբունքը, դաշնակցությունը դրանով իսկ փորձում է ներխուժել իրենց գործունեության ոլորտները, որի հետևանքն այն է լինելու, որ նա իր հետևից տանելու է հայ բանվորության և աշխատավոր գյուղացիության նորանոր զանգվածների: Միաժամանակ, նրանց մոտ հույս էր ծագել, թե Հ.Յ.Դ. շարքերում տեղի ունեցող շարժումները, ի վերջո, կուսակցությանը կտանեն դեպի քայքայում:

«Ինչո՞ւ դաշնակցությունը քայքայվում է» վերտառությամբ հոդվածում հայ փոքրամասնականների (մենշևիկների) օրգան «Հոսանք» թերթը գրում էր. «Բուրժուա-ազգայնական կուսակցություն Հ.Յ. դաշնակցությունը վերջերս ընթանում է դեպի կատարյալ քայքայում:

Թեև դաշնակցական յուրիստ-կոնսուլտները մեզ հավատացնում են, որ կուսակցությունը չի քայքայվում, այլ, ընդհակառակը, բյուրեղանում է, բայց ինքը կյանքը փայլուն կերպով հերքում է այդ բանը:

Ամեն կողմից մենք տեղեկություններ ենք ստանում, որ «դաշնակցությունը» կորցնում է իր ուժի տակի հողը, գլխավորապես բանվորական միջավայրում»[2]:

Իր մի ուրիշ համարում նույն թերթը համոզված չեշտում էր. «...Դաշնակցությունը գնում է դեպի կատարյալ քայքայումն ճիշտ այնպես, ինչպես քայքայվում է Ռուսաստանի ռեակցիան»[3]:

[1] «Մշակ», N 281, 23 դեկտեմբերի 1906թ.:
[2] «Հոսանք» (Թիֆլիս), N 12, 7 դեկտեմբերի 1906թ.:
[3] Նույն տեղում, N 47, 27 հունվարի 1907թ.:

ԴԵՊԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հ.Յ.Դ. շարքերում առաջ եկած հակասությունները, առճակատումները, հուզումները 1906թ. վերջերին կուսակցությանը կանգնեցրին լուրջ կացության առջև: Դաշնակցությունն, ըստ էության, քաղաքական ճգնաժամ էր ապրում: Այդ ճգնաժամը պետք է հանգուցալուծում ստանար կուսակցության առաջիկա ընդհանուր ժողովում:

Հ.Յ.Դ. ընդհանուր ժողովի (1904թ., Սոֆիա) որոշման համաձայն, դաշնակցության չորրորդ ընդհանուր ժողովը պետք է բացվեր 1906թ. դեկտեմբերի 1-ին[1]: Սակայն 1905թ. օգոստոսին դաշնակցության խորհուրդը որոշում ընդունեց կրճատել այդ ժամկետը և հերթական ընդհանուր ժողովը հրավիրել 1905-ի դեկտեմբերին: Այդ նպատակով Հ.Յ.Դ. երկու բյուրոները 1905թ. օգոստոսի 20-ին համատեղ շրջաբերական ուղարկեցին դաշնակցության մարմիններին, որտեղ նշվում էր, որ ընդհանուր ժողովի հրավիրման ժամկետի կրճատման պատճառը «Կովկասյան նախագծի» վավերացման արագացումն է: «Հաղորդելով «խորհրդի» ներկա որոշումը, - ասված էր շրջաբերականի մեջ, - արևելեան և արևմտեան շրջաններու մարմիններուն կ'առաջարկենք՝ կազմակերպական կանոններու 101 յոդուածի տրամադրութեան համաձայն, շուտով ուղարկել արևմտեան բյուրոյին այն հարցերու ցանկը, որ կը փափաքիք ժողովին քննութեան ենթարկել: Կը խնդրենք ըստ կարելվոյն շուտ ձեռնարկել նախապատրաստական գործին, որպեսզի արևմտեան բյուրոն հնարավորություն ունենայ ժամանակին հավաքել, կազմել հարցերու ամփոփ ցանկը և դաշնակցական մարմիններուն ուղարկել խնդիրներու օրակարգը»[2]:

Ժողովի հրավիրման ժամկետի կրճատման մասին հանձնարարականը չկատարվեց, որովհետև հենց իրենք՝ նախ, արևելյան բյուրոն, ապա դաշնակցության խորհուրդը, հարմար չգտան չեղյալ համարելու տեղեր ուղարկած շրջաբերականը: Պատճառը Կովկասում թուրք-հայկական կռիվների լայն ծավալումն էր: Հ.Յ.Դ. կովկասյան բոլոր մարմինները ամբողջովին կլանվել էին ամենօրյա պայքարի թոհուբոհի մեջ և հնարավորություն չունեին կատարելու խորհրդի հանձնարարականը: Ուստի արևելյան բյուրոն 1905թ. սեպտեմբերին կ.կոմիտեներին ուղարկեց նոր շրջաբերական, ուր նշված էր, որ ուժի մեջ է մնում ընդհանուր ժողովի հրավիրման նախօրոք որոշված ժամկետը՝ 1906-ի դեկտեմբերը:

Արևելյան բյուրոն միաժամանակ կ.կոմիտեներին ուղարկեց ցուցակն այն հարցերի, որոնք հարմար էր գտել իր կողմից մտցնելու ժողովի օրակարգի մեջ:

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 195:
[2] Նույն տեղում, հատ. Գ, էջ 2[illegible]:

Ցուցակն ընդգրկում էր հետևյալ հարցերը՝ 1. Հ.Յ.Դ. կ.կոմիտեների տեղեկագրերի քննարկում, 2. Տաճկահայ խնդիր, 3. Կովկասահայ խնդիր, 4. Տաճկահայ և կովկասահայ խնդիրների ներքին կապը գործունեության և կազմակերպական տեսակետներից, 5. Հ.Յ.Դ. երկրորդ և երրորդ ընդհանուր ժողովներում ելույթների ու բացատրությունների, բյուրոների, խորհրդի և ռայոնական ժողովների առաջարկների, ինչպես նաև կյանքի կողմից առաջադրված պահանջների հիման վրա կուսակցության ծրագրի խմբագրում, 6. Պրոպագանդայի բարելավմանն ուղղված միջոցառումներ, 7. Դրամական հարց, 8. Տեղեկագրերի քննությունից բխած հարցեր և այնպիսի հարցեր, որ մարմինները պատշաճ կհամարեն դնել ընդհանուր ժողովի առջև, 9. Կուսակցության ղեկավար մարմինների ընտրություն[1]:

«Խնդրում ենք կազմել ձեր շրջանում ըստ կարելոյն լայն խորհրդակցություններ, - այնուհետև ասված էր շրջաբերականում,- որով հնարավորություն տրուի ամեն դաշնակցական խմբի լիովին արտայայտելու իր կարծիքներն այն բոլոր խնդիրների վերաբերմամբ, որ նա իր ձեռնհասութեան սահմանի մեջ է համարում: Սրանից հետևում է, բնականաբար, որ ժողովին ներկայացող ամեն մի պատգամավոր յուր հետ պիտի բերե ոչ միայն յուր շրջանի մեծամասնութեան, այլև փոքրամասնութեան կարծիքները»[2]:

Կովկասյան խնդրի առնչությամբ շրջաբերականում չեշտվում էր ընդհանուր ժողովում Հ.Յ.Դ. խորհրդի առաջարկած «Կովկասյան նախագծի» հանդամանալից քննության և կուսակցության նոր ծրագրի ընդունման անհրաժեշտությունը:

Մեկ տարի հետո, 1906թ. սեպտեմբերին, արևմտյան և արևելյան բյուրոների կողմից մի նոր շրջաբերական ուղարկվեց տեղերը, որով վերջնականապես ճշտվում էին առաջիկա ընդհանուր ժողովի օրակարգի բոլոր մանրամասները:

Դրանից ընդամենը մեկ ամիս անց, 1906թ. հոկտեմբերին, Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոն առաջիկա ընդհանուր ժողովի առիթով նպատակահարմար համարեց կուսակցության պաշտոնական օրգան «Դրոշակի» միջոցով դաշնակցական մարմիններին և ընկերներին անել նոր ծանուցում իբրև կազմակերպական ազդ:

Արևմտյան բյուրոն հիշեցնում էր, որ ժողովի տեղի և ժամանակի մասին հարկավոր տեղեկությունները կարելի է ստանալ կուսակցության կենտրոնական մարմիններից՝ կազմակերպական ճանապարհով: Ժողովի հրավիրման «Կանոնների» համաձայն, կուսակցության մարմիններն ու խմբերը օրակարգի մեջ ցուցակագրված բոլոր կետերի վերաբերյալ պարտավոր էին իրենց ներկայացուցիչ պատգամավորներին տալ մանրամասն ցուցմունք-հրահանգներ՝ չմոռանալով փոքրամասնության կարծիքը ևս, որպեսզի կուսակցաժողո-

[1] «Նյութեր...», հատ. Գ, էջ 2:
[2] Նույն տեղում, էջ 1:

վում մեծամասնության տեսակետների հետ մեկտեղ արտահայտվեին նաև փոքրամասնության կարծիքները, հայացքներն ու տրամադրությունները:

Բյուրոն բոլոր մարմիններին հրահանգում էր պատրաստել և ուղարկել լրացուցիչ դրամական հաշիվներ, որպեսզի 1904-1906 թվականների դրամական վիճակը (Հ.Ց.Դ. նախորդ համագումարներից հետո) պատկերացվեր անթերի և իր ամբողջությամբ: Ծանուցման վերջին՝ 6-րդ կետով արևմտյան բյուրոն հիշեցնում էր, որ ժողովը զբաղվելու է կարգապահական խախտումների և դրամական զեղծումների քննությամբ, որի պատճառով հատկապես խնդրվում էր բոլոր մարմիններին՝ մանրամասնորեն և անաչառությամբ արձանագրել ամեն տեսակ կարգապահական, կազմակերպական թե դրամական զեղծումներ և բյուրոների միջոցով ներկայացնել ընդհանուր ժողովին, որպեսզի կազմակերպության բարձր ատյանի քննությունից չվրիպի ոչ մի դեպք, ոչ մի փաստ, որոնք կարող էին մնասել կարգապահական գործին, կազմակերպության առաջիկա գործունեությանը և հեղափոխական գաղափարին[1]:

Ընդհանուր ժողով 1906թ. դեկտեմբերին նույնպես տեղի չունեցավ, քանի որ տեղերում դեռ չէին ավարտվել «Կովկասյան նախագծի» քննարկումները, դեռ շարունակվում էին բուռն վիճաբանությունները և առճակատումները կուսակցության շարքերում:

Հ.Ց.Դ. արևմտյան բյուրոն 1907թ. հունվարին հանդես եկավ «Դաշնակցական մարմիններին և ընկերներին» հերթական պաշտոնական կազմակերպական ազդով, որում ծանուցվում էր.

«Հ.Ց. դաշնակցութեան Դ-րդ ընդհանուր ժողովի բացումը մոտ լինելով՝ վերջին անգամ հրավիրում ենք մեր կազմակերպութեան պատկանող բոլոր մարմիններին և ընկերներին՝ շտապ ուղարկելու ժողովին իրենց առաջարկներն ու ծրագրերը, ինչպես և զանգատներն ու բողոքները, խմբական թե անհատական, որպեսզի կազմակերպութեան բարձր ատեանի առջև լիակատար ամբողջութեամբ պատկերանան գոյություն ունեցող տրամադրություններն ու հոսանքները»[2]:

Եվ այսպես, Հ.Ց. դաշնակցությունը դեպի հերթական համաժողով էր գնում տագնապալի մտորումներով՝ իբրև արդյունք իր շարքերում ծագած բազում հարցականների: Ընդհանուր ժողովը կկարողանա՞ր հաղթահարել քաղաքական այն խոր ճգնաժամը, որում հայտնվել էր կուսակցությունը, թե՞ այդ ժողովը վերջինն էր լինելու Հ.Ց.Դ. 17-ամյա պայքարի ճանապարհին:

[1] «Դրոշակ», N 10 (163), հոկտեմբեր, 1906, էջ 145:
[2] Նույն տեղում, N 1 (179), հունվար, 1907, էջ 2:

Ս.-Դ. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ: ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐ ՄԻԶԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Ռուսական մեծ հեղափոխությանը նախորդող շրջանում և ընթացքում հայ կուսակցությունների և կազմակերպությունների շարքերում տեղի ունեցած պառակտումների արդյունքներից մեկը ս.-դ. բանվորական հայ կազմակերպության (ՄԴԲՀԿ) ստեղծումն էր:

ՄԴԲՀԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ՄԴԲՀԿ ստեղծման գաղափարն առաջին անգամ հղացել է Եվրոպայում սովորող դաշնակցական ուսանողների շրջանում: Նրանցից մեկը՝ Երվանդ Պալյանը, որ ուսանում էր Ժնևում, հետաքրքրություն տածելով դեպի հրեական ազգային շարժումը, ուսումնասիրել էր նաև հրեական բունդի գաղափարական և կազմակերպական սկզբունքները, որոնք խարսխված էին ավստրիական մարքսիստների կողմից առաջ քաշված տեսաբանական հիմքերի վրա:

1880-ական թվականների կեսերից սկսած՝ ավստրո-հունգարական մարքսիստները, իրենց երկրի օրինակով, հանգամանորեն ուսումնասիրել էին բազմազգ պետություններում ազգային հարցի դրվածքը և մշակել դրա լուծման զանազան տեսություններ:

Ավստրո-մարքսիստները, 1899թ. իրենց կուսակցական համագումարում քննարկելով ազգային հարցը, առաջարկեցին դրա լուծման կուլտուր-ազգային ավտոնոմիայի տեսակետը: Համաձայն այդ տեսակետի, Ավստրո-Հունգարիայի ազգային փոքրամասնությունները, սոցիալիստների հաղթանակից հետո, պետք է կայսրության կազմում ստանային ավտոնոմիա, բայց ոչ թե տերիտորիալ-քաղաքական, այլ՝ կուլտուրական*:

Ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատները խիստ քննադատության տակ էին առել ազգային հարցի լուծման ավստրո-մարքսիստների կուլտուր-ազգային ավտոնոմիայի տեսությունը՝ այն որակելով որպես պրոլետարիատի ազգային տարբեր հատվածները միմյանցից անջատելուն և բուրժուազիայի ջրաղացին ջուր լցնելուն ուղղված քաղաքականություն:

Ավստրո-մարքսիստների կուլտուրական ավտոնոմիայի տեսությանը և հրեական բունդի պրակտիկ գործունեությանը հետևելով՝ Ե. Պալյանը և Ժնևի

* Ավտոնոմիան կոչվում է **ազգային**, որովհետև ավտոնոմիայի մեջ մտնում են տվյալ ազգի բոլոր անդամները, անկախ նրանց բնակության վայրից՝ տվյալ պետության մեջ: Ազգային ավտոնոմիան անձնային է, էքստերիտորիալ: Մյուս կողմից, այդ ավտոնոմիան **կուլտուրական** է կոչվում, որովհետև տվյալ պետության մեջ նրա իրավասությանը ենթակա են միայն կուլտուրական գործերը (դպրոց, մամուլ, թանգարաններ և այլն):

դաշնակցական ուսանողներից Ղազար Տեր-Ղազարյանը (երկուսն էլ նախկին Հնչակյաններ) եկել էին այն համոզման, որ դրանք կիրառելի են նաև Կովկասի Հայ բանվորության միջավայրում: Նրանք իրենց շուրջն են համախմբում մի խումբ դաշնակ ուսանողների, որոնց մոտ ձևավորվել էր այն կարծիքը, որ իրենց կուսակցությունը փոխանակ զբաղվի աշխատավորների դասակարգային գիտակցությունը բարձրացնելու խնդիրներով, տարված է բացառապես տաճկահայ դատով, որն իր բնույթով «բուրժուական» է, հետևապես այդպիսի կուսակցությունը իրավ սոցիալիստների տեղը չէ՛:

Ժնևում դաշնակցական ուսանողների շրջանում տեղի ունեցող քաղաքական խմորումների մասին լուրեր էին հասել Հ.Յ.Դ. ղեկավարությանը: Շուտով պարզվեց, որ դժգոհ ուսանողները որոշել էին թողնել դաշնակցությունը և միանալ սոցիալ-դեմոկրատիային:

«Լուրը բավականին անախորժ էր մեզ համար, - գրել է դաշնակցական նշանավոր գործիչներից մեկը: - Երբ ռուսական համալսարանների հայ ուսանողներն անցնում էին սոցիալ-դեմոկրատների կողմը, մենք չէինք զարմանում և անհանգստանում: Բայց երբ Ժնևի մեր ուսանողները, որոնց վերաբերմամբ մենք այն կարծիքի էինք, թե, գտնվելով դաշնակցության կենտրոնավայրում, իրազեկ էին մեր խնդրին, լքում են մեր շարքերը, այդ արդեն մեզ համար բավականին վհատեցուցիչ էր, մանավանդ որ մեզ հասնող լուրերը չափազանցված էին»[1]:

Վտանգը կանխելու համար Հ.Յ.Դ. ղեկավարության մեջ միտք է հղանում արագացնել Քրիստափոր Միքայելյանի նախատեսված հերթական ուղևորությունը Եվրոպա և նրան խնդրել այցելել Ժնև ու իր հեղինակությամբ դարձի բերել մտքափոխ ուսանողներին: Միաժամանակ Հ.Յ.Դ. Բաքվի կ.կոմիտեի անդամներ Աբրահամ Գյուլխանդանյանը և Նարիման Տեր-Ղազարյանը նամակ են գրում Ժնև՝ Ղազար Տեր-Ղազարյանին, իրենց մտահոգությունները հայտնելով ուսանողների շրջանում առաջացած հակադաշնակցական տրամադրությունների առթիվ:

Բայց ոչ Քրիստափորի ժամանումը Ժնև և ոչ էլ մյուս միջոցները չօգնեցին, և դաշնակցությունից ուսանողների հեռացման փաստը տեղի ունեցավ:

Դուրս գալով դաշնակցությունից՝ նրանք Ե. Պալյանի և Ղազար Տեր-Ղազարյանի գլխավորությամբ ստեղծեցին «Հայ սոցիալ-դեմոկրատիա» (ՀՄԴ) անունով խումբը: Իրենց համարելով մարքսիզմի հետևորդներ՝ խմբի անդամները մտադիր էին ուսումնառությունն ավարտելուց և Կովկաս վերադառնալուց հետո ստանձնել ցարիզմի և բուրժուազիայի դեմ հայ բանվորության պայքարի ղեկավարությունը: Ավելին, նրանք մտածում էին ստանձնել նաև աշխարհի բոլոր երկրներում ցրված հայ պրոլետարիատի դասակարգային

[1] **«Հայրենիք»**, N 4 (28), փետրվար, 1925, էջ 110:

պայքարին ուղղություն տվողի դերը[1]:

Շատ չանցած, հապճեպ կազմվեց խմբի ծրագիրը, որն առանձին գրքույկով լույս տեսավ 1901թ., Ժնևում:

Ծրագրում հայտարարվում էր, թե ամեն ինչից երևում է, որ Կովկասում սպասվող իրադարձությունները հանգեցնելու են խմբի վերաճմանը քաղաքական կազմակերպության: Հայ վարձու աշխատողների թվի արագ մեծացման տենդենցը և դրա հիման վրա նրանց քաղաքական գիտակցության աճը անխուսափելի են դարձնելու ռուսաստանյան բանվորական շարժմանը ակտիվ մասնակցելը: Հետևապես, նրանց պայքարին կազմակերպված բնույթ տալու համար անհրաժեշտ է ունենալ մարքսիստական գաղափարներ դավանող, դասակարգային պայքարի տեսությամբ առաջնորդվող մի քաղաքական կազմակերպություն, որը պետք է հենվի այն սկզբունքների վրա, որոնք մշակված են «Հայ սոցիալ-դեմոկրատիա» խմբի ծրագրում:

Իր ծրագրում ՀՄԴ-ն հանդես էր գալիս հայ ազգային-հեղափոխական երկու կուսակցությունների՝ Հ.Յ. դաշնակցության և Հնչակի ծրագրերում արտահայտած դրույթների մեծ մասի դեմ: Հատկապես խիստ քննադատության էին ենթարկվել այդ ծրագրերի սոցիալիզմին վերաբերող մասերը: ՀՄԴ-ն գտնում էր, որ, ունենալով գիտական, մարքսիստական աշխարհայացք, ինքը երբեք չի կարող հաշտ լինել ոչ Հնչակի և ոչ էլ դաշնակցության կողմից տարվող սոցիալիստական պրոպագանդայի հետ, որն, ըստ էության, ծխածածկոց է, որի հետևում այդ կուսակցությունները վարում են ազգայնական քաղաքականություն ինչպես Թուրքահայերի, այնպես էլ ռուսահայերի շրջանում: Հատկապես Հնչակը քննադատվում էր այն բանի համար, որ առաջ քաշելով քաղաքական և տնտեսական հարցեր, երբեք հաշվի չէր առնում, թե դրանք արդյո՞ք համապատասխան են կյանքի առաջադրած պայմաններին, թե՞ միայն սոցիալիստական ֆրազներով համեմված լոզունգներ են: Մոտավորապես նույն գնահատականին էր արժանանում նաև դաշնակցությունը, մի վերապահությամբ, որ նրա խոսքի և գործի միջև եղած տարբերություններն այն աստիճան մեծ չեն, ինչպես Հնչակի մոտ: Ծրագրում նշված էր, որ և՛ մեկը, և՛ մյուսը հայ իրականության մեջ գերիշխող կուսակցություններ են և, ըստ էության, հայության շարժիչ ուժերը, բայց չունեն լրջորեն մշակված գիտական տեսություններ ու գաղափարախոսություններ, այդ իսկ պատճառով խարխափում են ամեն քայլափոխի և պարզ պատկերացում չունեն, թե ուր են առաջնորդում ազգը:

ՀՄԴ-ի կողմից արված ծրագրային այս հաստատումների իմաստը խիստ թափանցիկ էր. գիտական գաղափարախոսություն չունեցող կուսակցությունները, մանավանդ նրանք, որոնք հանդես էին գալիս կեղծ-սոցիալիստական դրոշով, իրավունք չունեն հանդգնելու ազգի ղեկավարի դերին: Այդպիսի

[1] Տե՛ս **Վ. Ավետիսյան**, Ստեփան Շահումյան: Կենսագրական ակնարկ, Հայպետհրատ, Երևան, 1953, էջ 31:

գաղափարախոսություն ունի «Հայ սոցիալ-դեմոկրատիա» խումբը, նա էլ ի վիճակի է ստանձնելու եթե ոչ ողջ ազգի, ապա նրա ամենաառաջավոր մասի՝ հայ բանվոր դասակարգի առաջնորդությունը: Ներկայացրած այդ հայտով ՀՄԴ-ն իրեն էր թողնում հայ պրոլետարիատի շրջանում գաղափարական աշխատանք կատարելու ասպարեզը և բացառիկ իրավունքը*:

ՀՄԴ-ն չէր ժխտում առանձին դեպքերում հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների հետ համագործակցության հնարավորությունը՝ համազգային խնդիրներ լուծելու համար (օրինակ՝ ազգային մշակույթի բնագավառում, ազգի ինքնապաշտպանության կազմակերպման գործում և այլն): Խումբն ընդունելի էր համարում համագործակցությունը նաև հնչակի և Հ.Յ.Դ.-ի հետ՝ հայ վարձու աշխատավորների տնտեսական շահերը համատեղ պաշտպանելու համար, միայն պայմանով, որ ՀՄԴ -ն այդ գործակցության ընթացքում հանդես գա հեգեմոն դերով:

Իր ծրագրային նպատակները պրոպագանդելու և հայ բանվորության վրա ազդեցություն տարածելու նպատակով ՀՄԴ խումբը ժնևում հրատարակում է «Սոցիալիստական հանդես» անունով պարբերականը[1]: Որոշ ժամանակ հետո դարձյալ ժնևում հնչակյան Գարեգին Կոզիկյանը Երվանդ Պալյանի հետ հիմնադրում է «Բանվոր» թերթը, աստիճանաբար հարում է ՀՄԴ-ին և դառնում նրա լիդերներից մեկը[2]:

«Հայ սոցիալ-դեմոկրատիա» խմբի մի քանի անդամներ, այդ թվում Ե. Պալյանը, 1902թ. ավարտելով իրենց ուսումնառությունը, Շվեյցարիայից վերադառնում են Կովկաս: Նրանցից ոմանք հիմնավորվում են Թիֆլիսում, իսկ մեծ մասը մեկնում է Բաքու՝ աշխատելու:

Բաքու եկած ՀՄԴ անդամները, զրույցներ ունենալով իրենց ծանոթ դաշնակցականների հետ, վերջիններիս համոզում են թողնել նեղ-ազգայնական ուղին, դուրս գալ կուսակցությունից և միանալ իրենց:

Այդպես էլ կատարվում է. մի խումբ դաշնակցականներ հեռանում են կազմակերպությունից՝ նրա ազգայնական քաղաքականության հետ հաշտ չլինելու պատճառաբանությամբ: Նրանք հիմնականում հայ իրականության հետ քիչ առնչություն ունեցող երիտասարդներ էին, որոնք, ապրած լինելով ռուսական միջավայրում, հեռու էին ազգային մշակույթից: Այդ անձինք թեև դարձել էին դաշնակցության անդամ, բայց անհաղորդ էին մնացել հայ ժողովրդի ազգային ձգտումներին, նրա պայքարի բուն իմաստին:

* Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի տեսությունը նախատեսում էր, որ յուրաքանչյուր ազգի բանվոր, երկրի որ մասում էլ ապրելիս լինի, պետք է մտնի իր ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցության, արհմիության, կոոպերացիայի և այլնի մեջ: Այդ ազգային կուսակցությունները բազմազգ պետության մեջ պետք է իրար հետ կապվեն ֆեդերատիվ կապով:

[1] Տե՛ս Վ. Ավետիսյան, Ստեփան Շահումյան: Կենսագրական ակնարկ, էջ 31:

[2] Տե՛ս Վ. Ավետիսյան, Հայկ Ադամյան: Կյանքն ու գործունեությունը, «Հայաստան» հրատ., Երևան, 1968, էջ 20 (տողատակ):

«Բագուի դերը մեր ազատագրական շարժման մեջ» երկում Աբրահամ Գյուլխանդանյանը գրել է. «Այդ խմբակը, որ բաժանվեց դաշնակցությունից, բաղկացած էր Բագուի մեր ընկերներից կամ համակիրներից: Սա առաջին անգամն էր, որ մի խումբ ընկերներ կտրում էին իրենց կապերը դաշնակցության հետ, ճիշտ այն ժամանակ, երբ դաշնակցությունը փորձեր էր անում հիմք դնելու իր կովկասյան աշխատանքներին: ... Հակառակ Հ.Յ.Դ. ղեկավարության լուրջ մտահոգություններին՝ անջատման այդ փաստը մի առանձին աղմուկ չհանեց կուսակցության մեջ: Գլխավոր պատճառն այն էր, որ այն ժամանակ կուսակցական ամբողջ կյանքը գաղտնի էր և հրապարակային բնույթ չուներ»[1]:

Դաշնակցությունից հեռացածները, քիչ բացառություններով, Շուշիի ռեալական դպրոցի նախկին աշակերտներից էին կամ շուշեցիներ[2]: Նրանցից էին՝ Ղազար Տեր-Ղազարյանը, քիմիկոս Ցուզբաշյանը, բժ. Տ. Իսախանյանը: Բաքվի դաշնակցականներից հեռացածներին միացան Ալեքսանդր Մատուրյանը (Ալ. Ռուբենի), որոշ ժամանակ անց՝ նաև Նարիման Տեր-Ղազարյանը և մի քանի ուրիշներ: Վերջինիս հեռանալն այսպես է նկարագրել Ա.Գյուլխանդանյանը. «Բնորոշ էր Նարիմանի հեռանալը: Մի օր, երբ կ.կոմիտեի նիստն էր, որին անդամ էր, Նարիմանը ներս եկավ, հանձնեց մի նամակ և հեռացավ լուռ և անխոս: Դա նրա հրաժարականն էր Հ.Յ.դաշնակցությունից: Նամակը կարդացվեց ժողովում նույնպիսի լռությամբ և ընկերական ցավով»[3]:

Հ.Յ.Դ.-ից հեռացած փոքրաթիվ խումբը 1903թ. հոկտեմբերին Բաքվում միավորվում է ՀՄԴ մի քանի անդամների հետ, որի արդյունքում ստեղծվում է մի նոր քաղաքական կազմակերպություն՝ «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն» (ՄԴԲՀԿ) անունով: Շուտով «Հայ սոցիալ-դեմոկրատիա» խումբը ժնևում հանդես է գալիս պաշտոնական հայտարարությամբ, թե ինքը ձուլվում է ՄԴԲՀԿ հետ: Վերջինիս ղեկավարության որոշմամբ խումբը վերափոխվում է կազմակերպության արտասահմանյան կենտրոնի:

ՄԴԲՀԿ ստեղծման նախօրյակին, երբ դաշնակցականները և ՀՄԴ խմբերը բանակցում էին միավորվելու համար, առաջ էին եկել տարաձայնություններ մի կարևոր հարցի շուրջ. նոր կազմակերպությունը պե՞տք է լիովին ընդունի միջազգայնականության սկզբունքը և բացառապես առաջնորդվի գիտական սոցիալիզմի՝ մարքսիզմի ուսմունքով, թե՞ այդ ուսմունքը պետք է հարմարեցնի հայկական կյանքի իրավիճակին: Առաջին հարցադրման կողմնակիցը Ե. Պալյանն էր, երկրորդինը՝ բանակցության մյուս բոլոր մասնակիցները: Տարաձայնությունները տեղափոխվում են ՄԴԲՀԿ-ից ներս, և Պալյանը, շարունակելով պնդել իր տեսակետի վրա, բայց ըմբռնում չգտնելով, հեռանում է

[1] «Հայրենիք», N 4 (28), փետրվար, 1925, էջ 109-110:

[2] Այդ մասին մանրամասն տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 3, վավ. 6[16]:

[3] «Հայրենիք», N 4(28), փետրվար, 1925, էջ 111:

կազմակերպությունից:

Իր որդեգրած գաղափարները պրոպագանդելու համար ՄՌՀԿ-ն 1903թ. Բաքվում հիմնում է «Սոցիալիստ» թերթը, որի առաջին համարը լույս է տեսնում մայիսի 1-ին: Մինչև 4-րդ համարը ներառյալ «Սոցիալիստը» տպագրվում է ընդհատակում[1], բայց, գաղտնի տպարանը հայտնաբերվելուց հետո, տեղափոխվում է Շվեյցարիա[2] և 1904-1905թթ. շարունակում է լույս տեսնել Ժնևում Միքայել Բաղդասարյանի ու Ղազար Տեր-Ղազարյանի խմբագրությամբ և Գարեգին Կոզիկյանի գրաշարությամբ: Այստեղ թերթին հիմնականում աշխատակցում էին Շվեյցարիայում ուսումնառության մեջ գտնվող երիտասարդ հայ սոցիալիստները[3]:

Կազմակերպության ստեղծումը մեծ արձագանք ունեցավ հայ մտավորականության շրջանում ինչպես Բաքվում, այնպես էլ Թիֆլիսում, Բաթումում, Շուշիում և Անդրկովկասի այլ հայաբնակ արդյունաբերական վայրերում[4]:

Բաքվում ՄՌՀԿ-ի մեջ մտան հանրությանը հայտնի գործիչներ Բախչի Իշխանյանը, Ալեքսանդր Մատուրյանը (Ալ. Ռուբենի), Ղազար Տեր-Ղազարյանը, Գարեգին Կոզիկյանը (Եսալեմ), Տիգրան Իսախանյանը, Նարիման Տեր-Ղազարյանը, Միքայել Բաղդասարյանը, նախկին դաշնակցական, ապա հնչակյան, հետո ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատ Դավիթ Տեր-Դանիելյանը (Անանուն)[*] և ուրիշներ, ինչպես նաև հեղափոխական պայքարի ուղուն նոր ոտք դրած երիտասարդներ[**]:

ՄՌՀԿ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Ստեղծման հենց սկզբից ՄՌՀԿ-ն ընդդիմադիր դիրք բռնեց ՌՄՌԿ-ի հանդեպ: Վերջինս, իր հերթին, «բանվորական» անուն կրող նորաստեղծ կազմակերպությունը դիտեց որպես հայ իրականության մեջ իր քաղաքական հակառակորդներից մեկը:

1903թ. հոկտեմբերին ՄՌՀԿ-ն հրատարակեց իր հիմնարար փաստաթուղթը՝ հռչակագիրը, որն ըստ էության կազմակերպության ծրագիրն էր:

ՄՌՀԿ-ն ազդարարում էր, թե ինքը լուրջ տարաձայնություններ ունի ՌՄՌԿ-ի հետ, հատկապես մերժում է այդ կուսակցության կազմակերպական, կառուցվածքային սկզբունքները, քանի որ դրանք դեմոկրատական չեն, այդ իսկ պատճառով չեն համապատասխանում հայության, հետևապես նաև՝ հայ պրոլետարիատի ազգային հոգեբանությանը և առանձնահատկություններին: Նորաստեղծ կազմակերպության ղեկավար-գաղափարախոսները քննադատում էին ՌՄՌԿ ծրագրի 9-րդ կետը, որով, ըստ նրանց, այդ կուսակցությունը փաստորեն ժխտում էր ազգերի ինքնորոշման իրավունքը: ՄՌՀԿ-ն իրեն էր վերապահում Անդրկովկասի հայաբնակ վայրերի ազգարարային ծրագիրը մշակելու, տեղական սոցիալ-դեմոկրատական կոմիտեներ ստեղծելու իրավունքը:

Հռչակագրում շեշտված էր, որ հայ ժողովուրդն ունի կյանքի իր յուրահատուկ, **սպեցիֆիկ** պայմանները, իր ուրույն պատմությունը, ոչ միայն սոցիալական, այլև ազգային ազատագրության լուրջ խնդիրներ, և որ հայ պրոլետարիատը չի կարող իրեն անջատ համարել այդ խնդիրներից և լիովին նվիրվել միայն դասակարգային-սոցիալական պայքարին:

ՄՌՀԿ-ի անդամներն այնքան ընդգծված ու հաճախ էին խոսում հայության առանձնահատկությունների, հայ կյանքի սպեցիֆիկ պայմանների մասին, որ բոլշևիկները սկսեցին նրանց անվանել «սպեցիֆիկներ»:

ՄՌՀԿ-ն իր հռչակագիր-ծրագրով հայտարարում էր, որ կազմակերպությունն առաջնորդվում է գիտական սոցիալիզմի ուսմունքով: Միաժամանակ հռչակագիրը հասկացնել էր տալիս, որ այդ ուսմունքը ինքը չի ըմբռնում այնպես, ինչպես ռուս սոցիալ-դեմոկրատները, այլ ըմբռնում է այնպես, ինչպես եվրոպական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները և, հատկապես, գերմանական բանվորական սոցիալիստական կուսակցությունը: Ավելին, «սպեցիֆիկներն» իրենց կազմակերպությունը դիտում էին որպես հայ իրականության մեջ գերմանական այդ կազմակերպության նմանակը:

Հռչակագիր-ծրագրում ազդարարվում էր, որ ՄՌՀԿ-ի նպատակն է «կազմակերպել հայ բանվորներին Կովկասում, ճանաչել նրանց կարիքները, տալ նրանց այդ կարիքներին համապատասխան պահանջներ և ցույց տալ այն ուղին, որ հայ պրոլետարիատը պիտի անցնի, որպեսզի կարողանա իրագործել յուր այդ պահանջները»[1]:

Կազմակերպությունն իր ծրագրային խնդիրն էր համարում հայ բանվոր դասակարգի կարիքները լսելի դարձնել հարևան ժողովուրդների աշխատավորական կազմակերպություններին, հատկապես Ռուսաստանի պրոլետարիատի քաղաքական կազմակերպություններին, ձգտել վերջիններիս գործունեության ոլորտի մեջ մտցնել հայ պրոլետարիատի համար կենսական նշանակություն ունեցող պահանջներ: Իսկ նախքան այդ, հայ պրոլետարիատը ինքը պիտի կազմակերպվի ու ճանաչի ինքն իրեն, խորապես ըմբռնի իր կարիքներն ու

---

[1] Տե՛ս «Ձայն», N 4, 22 հոկտեմբերի 1906թ.:
[2] Տե՛ս նույն տեղում, N 5, 29 հոկտեմբերի 1906թ.:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:
[*] Դ. Անանունու մասին մանրամասն տե՛ս Արամայիսի (Միսակ Տեր-Դանիելյան) «Փշրանքներ» վերնագրով անտիպ հուշերը (ՊԿՊԱ, ֆ. 150, ց.1, գ. 25, թ.թ. 32-35):
[**] Դրանցից մեկն էր, օրինակ, Նոր Նախիջևանի հայոց թեմական դպրոցն ավարտելուց հետո (1901) Բաքու եկած և քաղաքի Ալեքսանդր III կայսեր անվան ռեալական արական գիմնազիայում սովորող Սարգիս Սրապիոնյանը (Լուկաչին), որը շուրջ երեք տարի ՄՌՀԿ շարքերում ակտիվ գործելուց հետո 1906-ին մտավ տեղի բոլշևիկյան կազմակերպության մեջ (տե՛ս Հ. Ն. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, գիրք երկրորդ, էջ 11,12,13):

[1] ՀՀ ՀԱԿՊԿՊԱ, ֆ. 1022, ց.7, գ. 44, թ.1:

պահանջները, նաև՝ այդ պահանջների բավարարմանը հասնելու ուղիներն ու գործելու մեթոդները: Միայն պայքարի նպատակների խոր գիտակցումը հայ պրոլետարիատին կմղի դեպի միջազգային պրոլետարիատի բազմանդամ մեծ ընտանիքի շարքերը:

ՄՌՀԿ-ի կազմակերպական սկզբունքների լուսաբանման տեսակետից կարևոր փաստաթուղթ է կազմակերպության կանոնադրությունը[1]:

Այս փաստաթղթով ՄՌՀԿ-ն կրկին հայտարարում էր, որ ինքը հայ պրոլետարիատի շահերի միակ արտահայտիչն է և գործում է ինքնուրույն: Կանոնադրության մեջ արձանագրված է, որ ՄՌՀԿ բարձրագույն մարմինը կազմակերպության համագումարն է, որը հրավիրվում է տարեկան մեկ անգամ: Պատգամավորների թիվը որոշում է կենտկոմը, նրան նաև իրավունք է վերապահվում վճռական ձայնի իրավունքով համագումար ուղարկել երկու ներկայացուցիչ և մեկ ներկայացուցիչ՝ կենտրոնական օրգանի խմբագրությունից: Կազմակերպության արտասահմանյան ներկայացուցչությունը համագումարին ուղարկում է մեկ հոգու՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Համագումարն օրինական է համարվում, երբ նրան մասնակցում է տեղական կոմիտեների 50%-ից ավելին:

Կազմակերպության բարձրագույն գործադիր մարմինը կենտկոմն է, որի կազմի մեջ մտնում են նրա անդամները և թեկնածուները: Կենտկոմը իրականացնում է կազմակերպության ղեկավարությունը համագումարից համագումար ընկած ժամանակաշրջանում: Նա կազմում է տարբեր հիմնարկներ, հատկապես այնպիսիները, որոնք ունեն ընդհանուր կուսակցական նշանակություն: Տեղական կոմիտեներին կենտկոմը տալիս է միջոցներ, լուծում է դրանց ներքին վեճերը: Կենտկոմի որոշումները պարտադիր են կողմերի համար, նա հետևում է կազմակերպության ծրագրի ու կանոնագրի հետևողական կիրառմանը, հաշվետվություն է տալիս համագումարին, կազմում է օրակարգը, անհրաժեշտության դեպքում համագումարների միջև ընկած ժամանակահատվածում հրավիրում է կոնֆերանսներ: ՄՌՀԿ-ն ունի իր կենտրոնական օրգանը, որի խմբագրական կազմը ընտրվում է կենտկոմի կողմից: Իր ներքին գործերում խմբագրակազմն ինքնուրույն է[2]: Կենտկոմին է վերապահված սոցիալ-դեմոկրատական և մյուս կուսակցությունների հետ հարաբերությունների մեջ մտնելը: Նրա խնդիրներից է՝ հասնել այն բանին, որպեսզի ՌՄՌԿ-ի հայ իրականության մեջ գործող կուսակցությունների հետ հարաբերվելը կատարվի միայն ՄՌՀԿ-ի միջոցով: Կենտկոմին իրավունք էր վերապահված միջազգային կոնգրեսներում ունենալ իր ներկայացուցչությունները՝ ՄՌՀԿ-ի անունով: Կազմակերպությունը ձգտում է այն բանին, որպեսզի միջազգային խորհրդաժողովներում ինքը մասնակցություն ունենա մյուս հայ կուսակցու-

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց.7, գ.20, թ.թ. 45-47:
[2] Նույն տեղում, թ.թ. 5-7:

թյունների հետ հավասար իրավունքներով:

Կազմակերպության մյուս մարմինները ընտրվում են դեմոկրատական ճանապարհով և հաստատվում կենտրոնական կոմիտեի կողմից: Տեղական խմբերն իրենց գործերը վարում են ինքնուրույն՝ առանց վերևի ցուցմունքներին սպասելու, բանվորների շրջանում մղում են գրավոր և բանավոր ագիտացիա ու պրոպագանդա և նրանց առաջնորդում տնտեսական ու քաղաքական պայքարի: Ցուրաքանչյուր օղակ պարտավոր է ամիսը մեկ հաշվետվություն ներկայացնել իրենից բարձր կանգնած մարմնին: Խմբերին թույլատրվում է հարցերը լուծել պարզ մեծամասնությամբ, իսկ առանձին դեպքերում, եթե հարցը վերաբերում է վերադաս մարմիններին անվստահություն հայտնելուն, անհրաժեշտ է քվեարկողների ձայների 2/3-ը:

Հռչակագիր-ծրագրի բովանդակությունը ոչ մի կասկած չէր թողնում, որ ՄՌՀ կազմակերպության գործունեությունը հանդիպելու է սոցիալ-դեմոկրատների բուռն դիմադրությանը:

1903թ. N 51-ում լենինյան "Искра" թերթը առաջին անգամ ընդարձակ հոդվածով հանդես եկավ սոց.-դեմ. հայ կազմակերպության դեմ: «Մեր տակտիկայի և կազմակերպության մի քանի հարցերը» վերնագրով հոդվածի հեղինակը Բոգդան Կնունյանցն էր, որը ՌՄՌԿ կովկասյան կազմակերպությունների օրինակով ցույց էր տալիս ինտերնացիոնալ կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը ազգային կազմակերպությունների նկատմամբ: «Միայն կազմակերպվելով միասնական, առանց ազգերի խտրության, լիովին ինքնուրույն կուսակցության մեջ,- շեշտում էր Կնունյանցը,- Ռուսաստանի պրոլետարիատը կարող է կազմել այն զորեղ քաղաքական ուժը, որը ընդունակ է դառնալ երկրի բոլոր հեղափոխական ուժերի իսկապես ավանգարդը և ջարդուփշուր անել ինքնակալությունը մինչև վերջ»:

Ի տարբերություն բոլշևիկների՝ ՄՌՀԿ-ի ստեղծումը ողջունեց հրեական բունդը՝ հայկական նորաստեղծ կազմակերպությանը համարելով իր գաղափարակիցը: Նրա ղեկավարությունը, որի կենտրոնը գտնվում էր Ժնևում, բարձր գնահատեց ՄՌՀԿ ծրագիրն ու կանոնադրությունը (քանի որ դրանցում համարյա նույնությամբ կրկնված էին բունդի սկզբունքները), պաշտոնաթերթի քաղաքական ուղղվածությունը: Պատահական չէ, որ «Սոցիալիստը» լույս էր տեսնում բունդի կենտրոնի ֆինանսական միջոցներով, և այդ խնդրով անմիջականորեն զբաղվում էին կենտրոնի ղեկավար գործիչներից Կրամերը և Մեղեմը[1]: Պատահական չէ նաև, որ 1904թ. սկսած՝ "Вестник Бунда" թերթը հաճախակի անդրադառնում էր ՄՌՀԿ-ի գործունեությանը:

Իր հերթին ՄՌՀԿ-ն բունդին համարում էր առողջ մտածող ինտելեկտուալների կազմակերպություն և գտնում էր, որ Ռուսաստանի հեղափոխական

[1] Տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ. թղթ. 3, վավ. 6[16]:

շարժման մեջ նրան պետք է հատկացվի «ամենագովելի դերը»[1]: ՌՄԴԲԿ V համագումարի նախօրյակին ՄԴԲՀԿ-ի օրգան «Ձայն» շաբաթաթերթը իր առաջնորդողում ջերմորեն ողջունում էր բունդի մասնակցությունը համագումարի աշխատանքներին, հաստատ համոզմունք հայտնելով, որ նա այնտեղ հետևողականորեն կարտահայտի և կպաշտպանի հալածվող հրեա ժողովրդի շահերը[2]:

ՄԴԲՀԿ-ն չէր թաքցնում, որ ինքը շատ բան ունի սովորելու հրեաների քաղաքական կազմակերպությունից և իր հնարավորությունների սահմաններում աջակցելու է նրան: ՄԴԲՀԿ ակտիվ գործիչներից մեկը՝ Ռոբերտ Բաղդասյանը, որպես իր կազմակերպության ներկայացուցիչ, մասնակցեց բունդի 1906թ. օգոստոսին տեղի ունեցած 7-րդ համագումարին՝ բերելով իր կազմակերպության ողջույնը[3]: Ըստ որում, բունդի համագումարին պաշտոնապես ներկա էին եղել երեք կուսակցությունների ներկայացուցիչներ՝ ՌՄԴԲԿ–ից երկու հոգի, լատիշական ս.-դ.-ից՝ մեկ, ս.-դ.-բ. հայ կազմակերպությունից՝ մեկ[4]: Բունդի համագումարից հետո նրա ընդունած բոլոր բանաձևերը տպագրվեցին «Ձայն» թերթում, իսկ ՌՄԴԲԿ հետ միավորվելու պայմանների մասին բանաձևը լիովին հավանության արժանացավ ՄԴԲՀԿ-ի ղեկավարության կողմից[5]:

Հրեական բունդի և ՄԴԲՀԿ-ի միջև ստեղծվող բարեկամական հարաբերությունների ամրապնդմանն ուղղված գործոնը կուլտուր-ազգային ավտոնոմիայի գաղափարի նկատմամբ նրանց միատեսակ վերաբերմունքն էր:

ՄԴԲՀԿ ղեկավար գործիչներից Դավիթ Անանունն իր «Ազգային հարցը և դեմոկրատիան» աշխատության մեջ գրում էր. «Ազգերն ապրում են ոչ թե սահմանագծված իրարից, այլ խառնիխուռն, միևնույն վայրի վրա և միևնույն քաղաքական ռեժիմի տակ: Այդ ազգերն էլ իրարու են եկել և իրարու խառնվել ոչ թե հոժարությամբ, այլ շատ հաճախ ստիպողական ուժի զորությամբ: Այսպիսի պայմաններում հրապարակ եկած պետական մարմինների շրջանակներում տարբեր նկարագիր ունեցող ազգությունները ակամայից բախվում են իրար հետ: Նրանք կարող են չմերժել հանուր պետական կազմը, միշտ էլ ձգտել մնալու միևնույն պետության անդամներ, բայց տարբերվել իրենց քաղաքականությունով»[6]:

ՄԴԲՀԿ տեսաբանները գտնում էին, որ նման պայմաններում, եթե անկարելի է, որ ամեն ազգ ինքնուրույն տնօրինի իր հասարակական-քաղաքական կյանքը, հարկավոր է փրկել գոնե այն, ինչ կարելի է: Եթե չկա ազգային տերիտորիա, բայց կա ազգային լեզու, ազգային կուլտուրա, ուրեմն, ամեն ինչ դեռ

[1] «Ձայն», N 13, 6 մայիսի 1907թ., էջ 416:
[2] Նույն տեղում:
[3] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, 4041, ց.1, գ.23, թ.թ.1-7:
[4] Տե՛ս «Ձայն», N 2, 8 հոկտեմբերի 1906թ.:
[5] Նույն տեղում:
[6] «Նոր հոսանք» (Թիֆլիս), N 1, 1913, էջ 143:

կորած չէ: «Ամենագլխավորը դրանց մեջ – նշում էր Անանունը, – լեզուն է՝ այդ զարմանալի և հրաշալի գործիքը, որ բավական է մարդկային ցեղի այս կամ այն հատվածին ուրույն ազգության դրոշմը չնորհելու համար»[1]: Նա ասում էր, որ ազգային դեմքի բնորոշման համար գոյություն ունեն նաև մի շարք այլ հատկանիշներ, օրինակ՝ ըմբռնելու և արտահայտելու պատկերավոր դրսևորումներ, տարբեր սովորություններ և ավանդույթներ, համակրանք ու հակակրանք արտահայտելու ձևեր և այլն: Ամեն տեղ, ուր կողք կողքի միևնույն պետության սահմաններում ապրում են մի քանի ազգություններ, ամեն մի ազգություն պետք է ավտոնոմ լինի ազգային-կուլտուրական գործերում: Ճակատագրի բերումով, արտաքին բիրտ ուժերի հարվածների տակ, նշում էր Անանունը, հայերը հարկադրված ցրվել են տարբեր տարածքների վրա, որի պատճառով նրանք այսօր մեծամասնություն են կազմում Անդրկովկասի միայն չորս՝ Ախալքալաքի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի գավառներում: Այդ իսկ պատճառով հայկական տերիտորիալ ավտոնոմիա կազմելը ձեռնտու չէ, քանի որ տնտեսական առաջադիմություն ապահովելու տեսակետից այդ վայրերը չունեն անհրաժեշտ պայմաններ: Ուրեմն ի՞նչ անել, որպեսզի, պահպանելով ազգությունը, միաժամանակ չզրկվենք անդրկովկասյան երկրամասի բարիքներից: Ինչպե՞ս անել, որ չսահմանափակվի հայերի բնակության վայրը, միաժամանակ նրա զանազան հատվածների միջև չխզվի ազգային կապը: Դ. Անանունը այդ հարցերին այսպես էր պատասխանում. «Ազգային միաբանության հիմք պիտի ընդունել ոչ թե տերիտորիայի սկզբունքը, այլ ազգային պատկանելության գիտակցությունը»[2]: Հետևապես, միևնույն պետության սահմաններում, ուր ամեն տեղ կողք կողքի ապրում են մի քանի ազգություններ, նրանցից յուրաքանչյուրը ազգային-կուլտուրական գործերում պետք է լինի ավտոնոմ: Մանավանդ Անդրկովկասի հայության փրկությունը, նրան հայեցի պահելու միակ միջոցը կուլտուր-ազգային ավտոնոմիան է: Դա հնարավորություն կտա ազգի էքստերիտորիալ խմբավորումները ամուր կապել ազգային մշակույթին ու լեզվին, նրանց տալ ազգային-հոգեկան սնունդ, դրանով իսկ արգելակել նրանց ուծացման ու անհետացման սկսված պրոցեսը:

Ըստ նրա, այդպիսի ազգային միությունը նման կլինի եկեղեցու կազմակերպությանը, ուր նա կլինի էքստերիտորիալ և անձնային: «Ազգային կուլտուրական ավտոնոմիան, – ասում է նա, – այն հաջող համադարմանն է, որ լուծում է նաև ազգային փոքրամասնության պահանջների հարցը և վերջ է տալիս այն իրավացի տրտունջին, թե մեծամասնությունը կամա թե ակամա ճնշում է նրա ազգայնությունը»[3]:

[1] «Նոր հոսանք» (Թիֆլիս), N 1, 1913, էջ 143:
[2] Նույն տեղում, N 2, 1913, էջ 365:
[3] Նույն տեղում, էջ 367:

ՄՌԲՀԿ-ի ղեկավարությունն առանձնակի ուշադրություն էր դարձնում իր գաղափարների և նպատակների բանավոր ու գրավոր պրոպագանդմանը: Պրոպագանդիստական խմբերը մեկնում էին բանվորական շրջաններ, կազմակերպում կարճատև դասընթացներ, զրույցներ, ժողովներ: Կարևոր իրադարձությունների ոգիներով տպագրվում էին կոչեր, ցրվում էին թռուցիկներ, մարտաշունչ հոդվածներով հանդես էին գալիս կազմակերպության մամուլի օրգանները:

Պետք է նկատել, որ ՄՌԲՀԿ-ի ամենաակտիվ գործունեության ժամանակաշրջանը 1903-1908 թվականներն էին, և հենց այդ տարիներին էլ մեծ զարգացում ստացավ կազմակերպության մամուլը:

1906թ. մարտից Թիֆլիսում սկսեց լույս տեսնել «Կեանք» շաբաթաթերթը՝ Բախչի Իշխանյանի խմբագրությամբ: Թերթի ճակատին սոցիալ-դեմոկրատիայի նշանաբանն էր՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք», իսկ վերնագրի տակ՝ «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության օրգան» հաստատագրումն էր:

Անդրանիկ համարի «Մեր խոսքը» վերնագրով առաջնորդողը ազդարարում էր, որ թերթի աշխարհայացքի անսասան հիմքը մարքսիզմն է: Նշվում էր, որ իր էջերում «Կեանքը» պարբերաբար լուսաբանելու է գիտական սոցիալիզմի տեսության հիմնական սկզբունքները, ցույց է տալու սոցիալիստական հեղափոխության հաղթանակի անխուսափելիությունը, անդասակարգ հասարակարգի հաստատման բնական անհրաժեշտությունը: Իրեն բնորոշելով որպես մարքսիստական դեմոկրատական օրգան՝ «Կեանքը» գրում էր, թե ինքը ստանձնել է հազվագյուտ պարտականություն և խիստ ծանր դեր, այն է՝ «հայ պրոլետարիատին կրթել ու դաստիարակել սոցիալիզմի դպրոցի մեջ»[1]: Թերթը տպագրում էր ինքնուրույն և թարգմանական գործեր, արտասահմանյան թղթակցություններ և լուրեր, մարքսիստական տեսական հոդվածներ, հանդես էր գալիս ցարիզմի և կապիտալիզմի դեմ անզիջում պայքար մղելու կոչերով: Բայց որ հատկապես բնորոշ էր ՄՌԲՀԿ-ի օրգանին, մշտապես զարգացնում էր այն միտքը, որ հայ բանվորների տեղն ինքնուրույն բանվորական սոցիալ-դեմոկրատական հայ կազմակերպությունն է, այլ ոչ թե ռուսական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: «Կեանքում» մշտապես հոդվածներով հանդես էին գալիս Բ. Իշխանյանը, Ալ. Ռուբենին (Մատուրյան), Կ. Միքայելյանը, Գ. Պիճիկյանը, Գ.Կոզիկյանը (Եսայեմ) և այլ ակտիվ գործիչներ:

«Կեանքի» 1906թ. N 13-ում Ալ. Ռուբենին տպագրել էր «Սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպական սիստեմը» հոդվածը, ուր խտացված արտահայտություն էին գտել կազմակերպության կառուցվածքի մասին իր և իր կուսակից-գաղափարակիցների հայացքները:

Հոդվածագիրը անառարկելի իրողություն էր համարում, որ ազգային

[1] **«Կեանք»** (Թիֆլիս), N 1, 18 մարտի 1906թ.:

սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կազմակերպչական սիստեմը գնալով բացահայտում է իր ակնհայտ առավելությունները, որ այն «այսօր հետզհետե գրավում է իր կենսունակությամբ բոլոր մտածող տարրերի ուշադրությունը, որոնք զգում են հետզհետե, այսպես կոչված, «Ռուս. սոց.-դեմ. բանվորական կուսակցության կազմակերպական բուտինայի անախրոնիզմը»[1]:

Ալ. Ռուբենին խորապես համոզված էր, որ «Բնական կերպով ամեն մի ազգության սոցիալ-դեմոկրատիան ավելի ձեռնհաս է կազմակերպելու իր ազգության պրոլետարիատը: Կազմակերպել պրոլետարիատ՝ կնշանակե դարձնել նրան մի հայտնի սիստեմով միացած, որոշ ծրագրով, տակտիկայով և կարգապահությամբ կռվող ուժ այն բոլորի դեմ, ինչի դեմ կանգնած է պրոլետարիատը: ... Այդ կռվի համար անհրաժեշտ են իր (պրոլետարիատի : - Հ.Ս.) հասկանալի լեզվով գրված գրականություն, առանձին ագիտացիա ու առհասարակ [առանձին] գործունեություն»: Բայց թե՛ կռիվը և թե՛ ագիտացիան չեն կարող հաջողության հասնել, եթե պրոլետարիատը կազմակերպված չէ իբրև ուրույն ուժ: Իսկ ուրույն ուժ նա կարող է ներկայացնել միայն այն դեպքում, երբ նա ինքնավար է իր ներքին գործերում, երբ նա ունի իր տեղական ու կենտրոնական մարմինները, իր ներկայացուցչությունը կուսակցության համագումարում և կուսակցության կենտրոնական կոմիտեում»[2]:

Ալ. Ռուբենին այնուհետև գրում էր, որ որքան ուժեղ լինի ազգային ս.-դ. կազմակերպությունը, «Նույնքան ավելի մեծ թվով բանվորներ կարող է կազմակերպել. ամեն մի կազմակերպության ուժը մի ազգության մեջ, ամբողջ կուսակցության ուժն է նշանակում մի պետության մեջ: Եվ այդ կազմակերպությունների միությունը, կենտրոնացումը կտա պետության այն ուժեղ կուսակցությունը՝ միևնույն ծրագրով և միևնույն տակտիկայով բոլոր ազգային կազմակերպությունների համար (մի և անբաժան կուսակցության միակ գրավականը), որ հզոր հարվածներով կխորտակի ինքնակալական բուրժուական կարգերը և մասնավոր սեփականությունը կփոխարինի կոլեկտիվ սեփականության»[3]:

1906-1907թթ. Թիֆլիսում տպագրվում էր «Կեանքի» անմիջական շարունակությունը հանդիսացող «Ձայն» շաբաթաթերթը: Բայց քանի որ կազմակերպության կենտրոնը Բաքուն էր, այդտեղ էլ շարունակեցին լույս տեսնել

[1] **«Կեանք»** (Թիֆլիս), N 13, 10 հունիսի 1906թ.:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում: Ալ. Ռուբենու այս մտքերը լիակատար հաստատում գտան ՄՌԲՀԿ 1906թ. հունիսին տեղի ունեցած կոնֆերանսի բանաձևում, ուր հաստատագրվել էր, որ կազմակերպությունը «Հայ պրոլետարիատի դասակարգային-քաղաքական միակ և ուրույն ներկայացուցիչն է» (կոնֆերանսի ընդունած բանաձևերը տե՛ս «Կեանք», N 15, 24 հունիսի 1906թ.: Կոնֆերանսի որոշ նյութեր տե՛ս ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4041, ց.1, գ.25, թ.1):

նրա նոր պարբերականները՝ 1907-ին՝ «Բանվոր» թերթը, 1908-ին՝ «Գործ» երկշաբաթաթերթը*:

ՄԵԾ ԲԱՂԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԴՐՀԿ-Ի ԵՎ ՀԱՅ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՄՋԵՎ

ՄԴՐՀԿ-ն անհաշտ հակառակության մեջ էր ՌՄԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեի և, հատկապես, հայ բոլշևիկների հետ:

Հակասությունների հիմնական պատճառները բխում էին թե՛ երկու կողմերի գաղափարական տարբերություններից և թե՛ տակտիկական-պրակտիկ խնդիրներից:

Որո՞նք էին այն հիմնական պատճառները, որոնք ՄԴՐՀԿ-ն բաժանում էին ՌՄԴԲԿ-ից:

«Սպեցիֆիկ»-բոլշևիկ հակասությունները սուր բնույթ ստացան մարքսիստական տեսության հարցերին տարբեր մոտեցումներ ունենալու պատճառով: Ըստ որում, տեսաբանական քննարկումների ու բանավեճերի ժամանակ առավել ակտիվ, հարձարկվող կողմը «սպեցիֆիկներն» էին և, առաջին հերթին, նրանց առավել ճանաչված ղեկավարներից Բախչի Իշխանյանը:

Այն օրերին բոլշևիկների հետ Բախչի Իշխանյանի կողմից սկսված բանավեճերի կենտրոնում մնում էր ազգային պրոլետարիատի խնդիրների ու դերի մասին հրատապ թեման: Այդ տեսակետից չափազանց բնորոշ էր նրա հոդվածներից մեկում ձևակերպված հետևյալ միտքը.

«Պրոլետարական ամեն մի հատված-նոյնը և ռուսահայ պրոլետարիատը - վարում է իր քաղաքական կռիվը ծրագրային նվազագույն (մինիմալ) սահմանում և ձգտում դասակարգային ազատագրության միայն և բացառապէս այն միջավայրում, այն պետական տերիտորիայում, ազգային կյանքի շրջանակում, ուր ծնունդ է առել նա որպէս տնտեսական կատեգորիա, ուր չերտավորվել է նա՝ որպէս սոցիալական դասակարգ, ուր կազմակերպվել է նա որպէս քաղաքական ֆակտոր (գործոն): Ուրեմն այդտեղ է միայն, ուր նա որոնում է իր դասակարգային կռվի ու ազատագրության գերագույն շահագրգռությունը: Մի այլ տեղ, մի այլ նպատակի համար չունի նա նման կամ պակաս դասակարգային շահագրգռություն՝ իրական ուժեր սպառելու, «գործնական քայլեր» անելու»[1]:

1906 թ. «Մուրճ» ամսագրում Բ. Իշխանյանը լույս ընծայեց «Տնտեսական զարգացման ֆազերը» հոդվածաշարը[1], որը, որոշ ժամանակ անց, տպագրվեց առանձին գրքույկով:

Հեղինակն այն միտքն էր զարգացնում, որ իրենց նորաստեղծ ս.-դ. կուսակցության գաղափարախոսությունն առողջ է ու կայուն, քանզի նրա հիմքը ոչ թե վերացական ու անորոշ «մարդկային հասարակությունն» է, այլ կոնկրետ ու որոշակի հայ ազգը, ավելի ստույգ՝ արդեն ձևավորված և զարգացող հայ բանվոր դասակարգը:

Սակայն ուսումնասիրության գլխավոր թեման, այնուամենայնիվ, մարդկային հասարակության տնտեսական զարգացման ֆազերն են: Հենց սկզբից Բ. Իշխանյանը ընթերցողին տեղեկացնում էր, թե այդ խնդիրը վերլուծելիս ու քննելիս՝ ինքը ղեկավարվել է գերմանացի ֆիզիոլոգ պրոֆ. Կարլ Բյուխների տեսությամբ, որը շարադրվել է Լայպցիգի համալսարանում նրա կարդացած դասախոսությունների ընթացքում, միաժամանակ ավելացնում էր, որ իր համոզմամբ՝ դա «ամենահայտնին ու ամենատարածվածը» և նաև «ամենաճշգրիտն է» խնդրո առարկային վերաբերվող «մինչ օրս եղած տեսությունների մեջ»:

Ըստ պրոֆ. Բյուխների՝ հասարակական առաջընթացի հիմքում ընկած է ոչ թե արտադրողական ուժերի ու արտադրահարաբերությունների, այլ լայն առումով՝ մշակույթի զարգացումը:

Բ. Իշխանյանի «Տնտեսական զարգացման ֆազերը» ուժգին քննադատության ենթարկվեց բոլշևիկների կողմից: Հնչակյան շարքերից հեռացած և կարճ ժամանակում բոլշևիկյան շարքերում բազմակողմանի զարգացած տեսաբանի համբավ ձեռք բերած Սարգիս Կասյանը մենշևիկյան ուղղության «Հոսանք» թերթում 1906թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին լույս ընծայեց «Գողության, տգիտության և տհասության արդյունք (ազատ ժամերի զբաղմունք պ. Բ. Իշխանյանի «Տնտեսական զարգացման ֆազերը» բրոշյուրով)» հոդվածաշարը[2]:

Կասյանը գրում էր, որ թեև Բ. Իշխանյանն ամեն կերպ փորձում է մարքսիստ երևալ, բայց, ըստ էության, ոչինչ չի հասկացել գիտական սոցիալիզմի ուսմունքից, և դա է պատճառը, որ նրա «Տնտեսական զարգացման ֆազերը» ոչ այլ ինչ է, քան «թերուս մտքի վիժվածք»: Հոդվածագիրը հարց էր տալիս. մի՞թե որևէ մեկը կարող է իրեն մարքսիստ համարել, եթե հանդես է գալիս բազմազգ պրոլետարական մասսաներին համատեղ պայքարի տանելու գաղափարի դեմ, եթե հայ բանվոր դասակարգի շահերը համարում է «առանձնահատուկ», փորձելով նրան դուրս բերել պրոլետարիատի միասնական շարքերից և խցկել ազգային նեղ պատյանի մեջ, այսինքն՝ անել այն, ինչ անում են բուր-

---

* Հետագա տարիներին նույնպես, մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ՄԴՐՀԿ-ն ունեցել է այլ հրատարակություններ ևս. 1911-1912թթ.՝ «Նոր կեանք» երկշաբաթաթերթը, 1911թ.՝ «Կոչ» շաբաթաթերթը: 1912թ. լույս է տեսել «Մեր ուղին» ժողովածուն, 1912-1913թթ. Մոսկվայում հրատարակվել է «Գարուն» գրական-գեղարվեստական ալմանախը, 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո վերահրատարակվել է «Բանվոր» թերթը:

1 **«Անկախ մամուլ»** (Թիֆլիս), N 24, 28 փետրվարի 1907թ.:

1 Տե՛ս **«Մուրճ»**, NN 9,10, 11, 12, 1906թ.:

2 Տե՛ս **«Հոսանք»**, N N 4, 5,6,7,8,10 (նոյեմբերի 26,28,29,30, դեկտեմբերի 1,5), 1906թ.: Իր հոդվածը Ս. Կասյանը ստիպված հրատարակեց «Հոսանք»-ում, քանի որ այդ ամիսներին բոլշևիկները չունեին գործադիր օրգան:

ժուական թունդ ազգայնականները:

Այնուհետև Ս. Կասյանը խիստ քննադատության էր ենթարկում հասարակական զարգացման փուլերի մասին Բ. Իշխանյանի «վուլգար ըմբռնումները»: Նա նշում էր, որ վերջինս չի հասկացել նույնիսկ Կ. Բյուխներին և նրա տեսությունը հայ ընթերցողին է ներկայացրել աղավաղված, աղճատված:

Ս. Կասյանի հոդվածը մեծ աղմուկ հանեց «սպեցիֆիկների» շրջանում: Բ. Իշխանյանը «Ձայն» թերթում հանդես եկավ պատասխան հոդվածով, որին հետևեց բոլշևիկ տեսաբանի նոր հոդվածը՝ «Թերուսը գրական ասպարեզում և գիտության մեջ» վերնագրով, որը լույս տեսավ դաշնակցական «Վտակ» (Թիֆլիս) թերթում*:

Երկրորդ հոդվածում Ս. Կասյանը, Բ. Իշխանյանին մեղադրելով գրագողության մեջ, կրկնում է իր նախորդ հոդվածի եզրակացությունը, թե նա մարքսիստ չէ, չի հասկացել այդ ուսմունքի էությունը, հատկապես նրա փիլիսոփայությունը՝ դիալեկտիկան և մատերիալիզմը: Հասարակական պրոցեսների վուլգար ըմբռնումները, գրում էր Կասյանը, և մարքսիստական փիլիսոփայության էությունը չհասկանալը «սպեցիֆիկների» ղեկավարին նետել են իդեալիզմի և պոզիտիվիզմի գիրկը:

Իր այս երկու ընդարձակ հոդվածները Ս. Կասյանը խարսխել էր Կ. Մարքսի «Փիլիսոփայության աղքատությունը», «Քաղաքատնտեսության քննադատության շուրջ», «Վարձու աշխատանք և կապիտալ», Ֆ. Էնգելսի «Անտի-Դյուրինգ» և մարքսիզմի դասականների այլ աշխատությունների վրա**:

Գաղափարական հակադրությունները ցայտուն դրսևորումներ ունեցան նաև ազգային-կուլտուրական ավտոնոմիայի տեսության հարցում:

Ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատները (հատկապես բոլշևիկները) գտնում էին, որ փոքր ազգերի էքստերիտորիալ հատվածների ձուլումը անխուսափելի ընթացք է, հետևապես՝ հետադեմ գործ է ամեն գնով դրանց ազգային ինքնությունը պահպանելու փորձերը:

Ստ. Շահումյանը գրում էր, որ կապիտալիստական հասարակարգում սոցիալ-տնտեսական բուռն զարգացման շնորհիվ «միանգամայն ակներև է դարձել ամեն տեսակ «սկզբունքային» սեպարատիզմի, ֆեդերալիզմի և ավտոնոմիզմի անհեթեթությունը: Ազգերն այնքան են խառնվել իրար, որ չկան այլևս ազգային տերիտորիաներ, որոնց սահմաններում կարելի լիներ հեշտությամբ հիմնել ազգային ֆեդերատիվ կամ ավտոնոմ մարմիններ»[1]:

ՌՄԴԲԿ կենտկոմում խիստ բացասաբար էին տրամադրված ՄԴՀԿ-ի այն տեսակետի նկատմամբ, ըստ որի ՌՄԴԲԿ-ն պետք է բաղկացած լինի ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ֆեդերացիայից:

«Սպեցիֆիկները» գտնում էին, թե մեկ ազգության պրոլետարիատի պայքարի պայմանները և բուն պայքարը տարբերվում են մյուսից, որ յուրաքանչյուր ազգի ներսում ծավալվող դասակարգային պայքարն ունի իր յուրահատուկ ձևերը: ՄԴՀԿ տեսաբանները հատկապես չեշտում էին, թե ՌՄԴԲԿ-ն իր ներկա կազմակերպական կառուցվածքով նպաստում է միջազգային բանվորական շարժման տարանջատմանը և որպես ցայտուն օրինակ մատնացույց էին անում դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների անշեղ կիրառումը ռուսական կայսրության բոլոր վայրերում: Միայն ՄԴՀԿ-ն է, ասում էին նրանք, որ ունի իր սեփական տակտիկան: Դա պատահական չէ, քանի որ ՄԴՀԿ-ն ոչ «արտահայտված փոքրամասնական» է, ոչ էլ «արտահայտված մեծամասնական»[2]: Մեր կազմակերպությունը, ասում էին «սպեցիֆիկները», հակված չէ շաբլոն կերպով հայ իրականության մեջ խցկել ՌՄԴԲԿ բոլոր սկզբունքները և որոշումները*:

ՄԴՀԿ-ն վճռականապես դեմ էր Կովկասում հաճախ կրկնվող տնտեսական գործադուլներին, դրանք համարելով անարխիզմի դրսևորում, որը ջլա-

---

* Ս. Կասյանի այս հոդվածի տպագրությունը է՛լ ավելի մեծ դժվարությունների հանդիպեց: Անդրկովկասում բոլշևիկյան որևէ օրգանի բացակայության պատճառով նա իր գրվածքը ներկայացրեց 1907թ. սեպտեմբերից Թիֆլիսում հրատարակվող մենշևիկյան «Շավիղին», որը, սակայն, լույս չտեսավ թերթի փակման պատճառով: Դրանից հետո, հոդվածը գրելուց յոթ ամիս անց, Կասյանն այն տպագրության հանձնեց «Վտակ» թերթին (տե՛ս «Վտակ», N 62,63,64,65,66,67,68,69,70, 19-28 մարտի 1908թ.): Թե ինչու էր բոլշևիկ տեսաբանը ստիպված իր հոդվածը տպագրել դաշնակցության օրգանում, տվել է ինքը՝ հեղինակը, տողատակում գրելով. «Տակավին չարունակել սպասել՝ այլևս անկարելի է, և մենք որոշում ենք դիմել մեզնում գոյություն ունեցող թերթերից ձախակողմյանին՝ «Վտակին», որի խմբագրությունը ահա հնարավորություն է տալիս մեզ արտահայտվելու» (տե՛ս «Վտակ», N 62): Կասյանի տողատակի բացատրությունից անմիջապես հետո թերթի խմբագրությունը տպագրել էր հետևյալը. «Տեղ ենք տալիս պ. Ս. Կասյանի հոդվածներին (նկատի ուներ հոդվածաշարը:-Հ.Ս.)՝ թողնելով ամբողջ պատասխանատվությունը հեղինակի վրա:

** Պրոֆ. Հ.Ն. Կարապետյանը ճիշտ է դիտարկել, թե Ս. Կասյանը առաջիններից մեկն էր, որ հայ ընթերցողներին ծանոթացրեց մարքսիզմի հիմնադիրների մի շարք երկերին: Այն ժամանակ դրանք դեռ հայերեն թարգմանված չէին, ուստի Կասյանը կարդում էր գերմաներեն բնագրով և քաղվածքներ կատարում իր թարգմանությամբ: (Տե՛ս Հ.Ն. **Կարապետյան**, Մեծ պայքարի մարդիկ, գիրք առաջին, Հայպետհրատ, Երևան, 1963, էջ 50): Բ. Իշխանյան - Ս. Կասյան բանավեճի առավել մանրամասն շարադրանքը տե՛ս Հ.Ն. Կարապետյանի նշված գրքի 43-50 էջերում:

---

[1] **Ստ.Շահումյան**, ԵԼԺ, հատ. երկրորդ, էջ 380:

[2] **«Ձայն»**, N 3, 20 հունվարի 1907թ., էջ 246:

* Այս տեսակետներն իրենց ցայտուն արտահայտությունն էին գտել ՄԴԲՀ կազմակերպության Բաթումի մասնաճյուղի 1905թ. մարտի 12-ի ժողովի ընդունած հետևյալ բանաձևում. «1) ՌՄԴԲԿ-ն պետք է կազմվի ազգային ս.-դ. կազմակերպություններից, որը նրան հնարավորություն կտա հաշվի առնել տարբեր ազգությունների պրոլետարիատի կյանքի և գործունեության պայմանները, 2) ՌՄԴԲԿ-ի մեջ մտած յուրաքանչյուր ազգային կազմակերպություն համարվում է տվյալ ազգության պրոլետարիատի միակ ներկայացուցիչը, 3) ՌՄԴԲԿ-ի մեջ մտած յուրաքանչյուր ազգային ս.-դ. կազմակերպություն պետք է կարողանա կարևոր ազդեցություն ունենալ կուսակցության քաղաքականության վրա, իսկ ընդհանուր կուսակցական գործերի ղեկավարման մեջ ունենա վճռական ձայնի իրավունք, 4) կուսակցության ընդհանուր որոշումների իրագործումը հարմարեցվում է ազգությունների հասարակական ուժերի առանձնահատուկ պահանջներին, 5) ՌՄԴԲԿ-ի մեջ մտած ազգային ս.-դ. կազմակերպությունները անկախ են լուծում այն հարցերը, որոնք երևան են գալիս իրենց ազգային պրոլետարիատի կյանքի **առանձնահատուկ** պայմաններից» (ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4041, ց.1, գ. 12, թ.3):

տում էր պրոլետարիատի ուժը: «Սոցիալիստը» գրում էր, թե հոգնեցնել պրոլետարիատը գործադուլային ցանցառ ակտերով՝ ոչ միայն վատ խաղ է, այլև՝ մեծ հանցանք[1]: Թերթը նշում էր, որ տնտեսական գործադուլները հոգնեցնում են բանվորներին, հետևապես զարմանալի չի լինի, եթե վաղը, օրինակ, հայտարարվի ընդհանուր քաղաքական գործադուլ, նրանք այլևս չեն կարող փողոց դուրս գալ: «Կեանք» թերթը, գործադուլների առիթով նույն միտքը արտահայտելով, նշում էր, որ դրանց կազմակերպիչները, գիտակցաբար թե ակամա, ուժեղացնում են պրոլետարիատի թշնամիներին: Հենց դա նկատի ունենալով, ընդգծում էր թերթի հոդվածագիրը, այժմ «մեր ընկերներն աշխատում են ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի մասնակի գործադուլները չփոխվեն ընդհանուր տնտեսական գործադուլի»[2]:

Գործադուլային պայքարը Կովկասում «սպեցիֆիկներն» անիմաստ էին համարում նաև այն պատճառաբանությամբ, թե տեղի արդյունաբերողներն ու վաճառականները և հատկապես հայ բուրժուազիան ցանկացած դեպքում կարողանում են իրենց հավատարիմ մարդկանց միջոցով կաշառել բանվորներին և նրանց հեշտությամբ տներն ուղարկել:

Դժվար չէ նկատել, որ գործադուլների վերաբերյալ ՄԻՐՀԿ տեսակետը հակադրված էր Կովկասի, հատկապես Բաքվի, բոլշևիկների տակտիկային, որոնց գլխավորած 1904թ. դեկտեմբերյան գործադուլը վերջացել էր հաղթանակով, և ձեռնարկատերերը ստիպված կոլեկտիվ պայմանագրեր էին կնքել գործադուլավորների հետ: Ի տարբերություն «սպեցիֆիկների»՝ բոլշևիկները կողմնակից էին ոչ միայն տնտեսական և քաղաքական խոշոր գործադուլների, այլև տնտեսական ոչ մեծ գործադուլների, գտնելով, որ դրանք պրոլետարիատի քաղաքական դաստիարակության միջոց են, քանզի տնտեսական գործադուլները դասակարգային պայքարի հետագա զարգացման ընթացքում անխուսափելիորեն վերաճում են քաղաքականի:

Կովկասում մերժելով գործադուլների և, հատկապես, տնտեսական գործադուլների կազմակերպումը, «սպեցիֆիկները» միաժամանակ դրանց ջերմ կողմնակից էին, երբ խոսքը վերաբերում էր Ռուսաստանին, հատկապես նրա կենտրոնական արդյունաբերական շրջաններին, գտնելով, որ, այո՛, առայժմ միայն ռուս պրոլետարիատն է ի վիճակի հուժկու ընդհանուր գործադուլով ժամանակավորապես կաթվածահար անել տնտեսությունը, ապա անցնել քաղաքական պայքարի արմատական միջոցների՝ նպատակ ունենալով հեղաշրջել երկիրը:

Եթե գործադուլների կազմակերպման հարցում «սպեցիֆիկները» պասսիվ և վերապահ դիրքերում էին, ապա զինված ապստամբության հարցում, ընդհակառակը, դրսևորում էին միանգամայն այլ մոտեցումներ, հանդես էին գալիս ընդհանուր զինված ապստամբության օգտին: Գտնելով, որ ոչ թե գործադուլը, այլ ապստամբությունն է ունակ հաջողության հասնելու, նրանք Կովկասի բոլոր բանվորներին կոչ էին անում ամենագործուն մասնակցություն բերել հեղափոխությանը[1]: Այս տեսակետը նույնպես ուղղված էր բոլշևիկների ծրագրային սկզբունքների և գործնական տակտիկայի դեմ, համաձայն որոնց պրոլետարիատի ընդհանուր զինված ապստամբությունը դասակարգային պայքարի բարձրագույն ձևն է, իսկ մինչ այդ պրոլետարիատը պետք է անցնի պայքարի մյուս էտապներով՝ գործադուլներ, ցույցեր, պետիցիաների և վերջնագրերի ներկայացում և այլն: Զուր չէ, որ ապստամբության մասին «սպեցիֆիկների» տեսակետը բոլշևիկները որակում էին որպես բլանկիզմ և անարխիզմ:

Միաժամանակ «սպեցիֆիկները» գտնում էին, որ Կովկասի պրոլետարիատը դեռ պատրաստ չէ զինված լայնածավալ կռվի, ունակ չէ տապալելու բուրժուազիայի իշխանությունը, քանի որ այդ դասակարգի գոյության մասին կարելի է խոսել միայն երկու քաղաքների՝ Բաքվի և Թիֆլիսի օրինակով: Դրան գումարվում է այն, ասում էին նրանք, որ վարձու աշխատավորների 90%-ից ավելին սոցիալիզմի մասին անգամ հեռավոր գաղափար չունի: Ուստի, հաջողության հասնելու համար, ամենօրյա աշխատանքով պետք է ի մի հավաքել ցիրուցան բանվորությանը և նրան նախապատրաստել վճռական կռվի: Իսկ որպեսզի այդ կռվի համար պրոլետարիատն աստիճանաբար կազմակերպվի, առաջին հերթին նրան պետք է լուսավորել մարքսիստական ուսմունքներով:

Սակայն, նույնիսկ այն դեպքում, եթե Կովկասում թվապես արագորեն աճի պրոլետարիատը, և նա լուսավորվի դասակարգային կռվի մասին մարքսիստական տեսությամբ, միևնույն է, Կենտրոնական Ռուսաստանի համեմատությամբ, Կովկասը կմնա որպես ծայրագավառ: Այստեղ պրոլետարիատը չի կարող ինքնուրույն և ղեկավար դեր ունենալ, ինչպիսին ունի Ռուսաստանում, մասնավորապես՝ Պետերբուրգում և Մոսկվայում: Ինչ վերաբերում է հայ իրականությանը, ապա այստեղ ազգային կուսակցությունները, ցավոք, իրենց շուրջն են համախմբել հասարակության կենսունակ, հեղափոխական հիմնական ուժերը, նրանց մեջ սերմանել ազգայնական ոգի: Եվ եթե սոցիալիստներն ուզում են, որ պրոլետարիատը հայ իրականության մեջ նույնպես ինքնուրույն ու ղեկավար դեր ունենա, ապա պետք է լարեն իրենց ողջ ուժերը՝ ազգային կուսակցություններից նրան խլելու համար:

Բոլշևիկների հետ «սպեցիֆիկների» հակասություններն ուժգին սրության հասան երկրորդ Պետական դումայի ընտրությունների ժամանակ:

Բոլշևիկները լրջորեն մասնակցում էին դումայի ընտրություններին՝ նրա ամբիոնն օգտագործելու և ցարիզմի հակաժողովրդական էությունը մերկացնելու համար: «Սպեցիֆիկները» խստիվ քննադատում էին բոլշևիկների դումայական տակտիկան, միաժամանակ բանվորների շրջանում լայն աշխատանք էին տանում, նրանց կոչեր էին ուղղում բոյկոտել ընտրությունները, քանի որ

[1] **«Սոցիալիստ»**, N 10, 14 սեպտեմբերի 1905թ.:
[2] **«Կեանք»**, N 17, 8 հուլիսի 1906թ.:

[1] ՀՀ ՀԱԿԿԳԱ, ֆ. 4041,ց.1, գ.12, թ.1:

«Դուման մեր թշնամիների զենքն է»:

1906թ. մարտի 22-ին հրապարակած «Թիֆլիսի հայ բանվորներին» կոչում ՄԴԲՀԿ-ն հայտարարում էր, որ չեն կարող լինել դումայի ազատ ընտրություններ, քանի դեռ կանգուն է միապետությունը, քանի դեռ չկա անձի անձեռնմխելիություն, խոսքի, մամուլի և ժողովների ազատություն: «Պրոլետարական համերաշխ ու վճռական բոյկոտ Պետական դումային»[1], - այս էր կոչի կարգախոսը:

Հայ բոլշևիկների և «սպեցիֆիկների» միջև խիստ տարաձայնություններ էին առաջացել Կովկասում թուրք-հայկական ընդհարումների նկատմամբ վերաբերմունքի հարցում: Նրանք երկուսն էլ հետևողականորեն պաշտպանում և քարոզում էին այն տեսակետը, որ այդ ընդհարումները սանձազերծել է ցարական կառավարությունը, բայց դրանց դադարեցման համար պայքարի նրանց մոտեցումները տարբեր էին: Բոլշևիկները գտնում էին, որ ընդհարումները պետք է վերացվեն հեղափոխական կռվով, ցարի տապալման և երկրում դեմոկրատական կարգեր հաստատելու ճանապարհով: ՄԴԲՀԿ-ն դեմ չէր դրան, բայց տվյալ պահին, երբ թափվում էր բազմաթիվ անմեղ հայերի արյունը, նա ժողովրդին կոչ էր անում ակտիվ ինքնապաշտպանության, որի գլխավոր ղեկավար ուժը Հ.Ց. դաշնակցությունն էր: «Անհրաժեշտ է պաշտպանվել և պաշտպանվել ամենակտրական միջոցներով»[2], - գրում էր «Սոցիալիստ» թերթը: Իր հերթին «Կեանքը» նշում էր, որ թուլացնել ինքնապաշտպանությունը, նշանակում է ոգեշնչել և նոր ոճիրների մղել թուրքերին: Սրանց սանձարձակ խժդժությունները, ավազակային կողոպուտն ու հափշտակությունը, գերեվարությունն ու սրախողխող կոտորածը ավելորդ անգամ գալիս են բազմացնելու արձանագրված փաստերի արդեն իսկ տխուր շարանը և հարկադրում, որ մենք դեռ իրավունք չունենք այնքան շուտ լավատես լինելու մեր տմարդի հարևանների տրամադրության նկատմամբ: Դեռ շատ ավելի ցածր է կանգնած թուրք ազգաբնակչության, մանավանդ նրա նոմադական տարրերի, քաղաքական գիտակցության մակերևույթը, որպեսզի կարելի ու հնարավոր լինի մեկն ու մեկ պնդել ու համոզվել, որ խուլիգանաբար շահագործվող այդ տնաքանդ ամբոխը կհասկանա, վերջապես, հանրության թշնամու լարած որոգայթների միտումնավոր քաղաքականության էությունը»[3]:

Հայության ինքնապաշտպանության կազմակերպման գործին ՄԴԲՀԿ-ի ակտիվ մասնակցությունն առաջ էր բերում բոլշևիկների նախատինքն ու զայրույթը, որոնք «սպեցիֆիկներին» մեղադրում էին ազգայնամոլության մեջ: «Մի՞թե հնարավոր է մարքսիստական կազմակերպություն կոչվել և գործակցել ազգայնական ուժերի հետ», - հարցնում էին նրանք ՄԴԲՀԿ անդամներին:

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 15, թ.1:
[2] «Սոցիալիստ», N 13, 1905թ.:
[3] «Կեանք», N 11, 27 մայիսի 1906թ.:

Չնայած բոլշևիկների քննադատություններին, «սպեցիֆիկները» շարունակում էին իրենց ազգապաշտպան գործունեությունը, դրանով իսկ անուղղակի աջակցություն ցույց տալով դաշնակցությանը: Նրանք շարունակում էին հայերին համարել անմեղ զոհեր և գտնում էին, որ այդ ժողովուրդն իրավունք ունի, որքան հնարավոր է, զինվելու և զենքով պաշտպանելու ապրելու իր իրավունքը: «Սոցիալիստը» գրում էր. «Մեզ թվում է, որ հնարավոր է միայն մի ելք, այն է՝ զինված խաղաղություն: Թուրքը այժմ զինված է, բայց զենք կրելու իրավունք պետք է տրվի և հայերին, իրավունք առանց սահմանափակումների»[1]:

Իր հերթին «Ձայն» շաբաթաթերթը գրում էր, որ կոտորածները սպառնում են ոչ այնքան փողի տերերին, որքան աշխատավորներին, ուստի «պրոլետարիատին, որը նույնպես ֆիզիկական վտանգի է ենթարկված, անհրաժեշտ է զինել: Բայց մի՞թե պրոլետարական կոպեկներով կարելի է զենք հայթայթել: Հայ բուրժուազիան ամեն տեղ բացեիբաց մերժեց հայ ս.-դեմոկրատիային փող տալ զինման համար, իսկ նրա իդեոլոգ դաշնակցականները ժողովներում առանց կարմրելու հայտարարեցին. «Մի՞թե հայ հարուստը փող պիտի տա ձեզ, որպեսզի նրա փողով ձեռք բերած զենքը դուք իր դեմ դարձնեք»: Չնայած այս բոլորին, հայ կազմ. սկսեց ժողովներ զանազան վայրերում, և հավաքված գումարը ծախսվեց զենք ձեռք բերելու վրա: Իր ունեցած զենքից կազմակերպությունը մի փոքր մասը հանեց Նուխու և Ջիվանշիրի շրջանը, կազմեց զինական մի քանի խմբեր: ... Բացի այդ, նա սկսեց լայն ագիտացիա՝ իր ընկերներին 3-4 ամսով ուղարկելով Շուշիի, Նուխու և Երևանի գավառները[2]:

Շատ տարիներ անց իր «Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը» գրքում Սարգիս Կայանը, վերհիշելով թուրք-հայկական ընդհարումների օրերին ՄԴԲՀԿ-ի բռնած դիրքը և գործողությունները, դատապարտում էր նրա կողմից հայ զինյալ խմբերի ստեղծումը, որը, նրա խոսքերով ասած, հակահեղափոխական գործ էր[3]:

Ահա, մոտավորապես սրանք էին այն հիմնական պատճառները, որոնք ջրբաժան գիծ էին անցկացրել ՄԴԲՀԿ-ի և ՌՄԴԲԿ-ի, ավելի ճիշտ՝ ՄԴԲՀԿ-ի և ՌՄԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեի միջև, էլ ավելի կոնկրետ՝ ՄԴԲՀԿ-ի և հայ բոլշևիկների միջև:

Ավելորդ չէ նշել, որ մեկ-երկու հարցում ՄԴԲՀԿ-ն և բոլշևիկները ընդհանրություններ էին դրսևորում: Դրանցից մեկը վերաբերում էր զինակոչին: Բոլշևիկների պես «սպեցիֆիկները» վճռականորեն հանդես էին գալիս զինակոչի դեմ: «Մոբիլիզացիան Կովկասում» պրոկլամացիայում (1904թ. օգոստոս) ՄԴԲՀԿ-ն հայ երիտասարդությանը հորդորում էր բոյկոտել զինակոչը: Դիմու-

[1] «Սոցիալիստ», N 11, 14 հոկտեմբերի 1905թ.:
[2] «Ձայն», N 5, 29 հոկտեմբերի 1906թ.:
[3] Տե՛ս Ս.Կայան, Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928, էջ 24,34:

մի մեջ ասված էր. «Վիկը ձեռքին ի պաշտպանություն գիշատիչ ցարական կամարիլիայի, ճապոնացու գնդակից մեռնել անարգ մահով Հեռավոր Արևելքում – ձեզ վայել չէ, դրա համար գոյություն ունեն կայսերական պնակալեզներ: Դուք կազմ ու պատրաստ եղեք ձեր բոլոր ուժերով դեմ գնալու այդ մահաբեր մոբիլիզացիային, որ խլում է ձեզ կյանքից, հեղափոխական ասպարեզից. ձեռք առեք բոլոր միջոցները համերաշխ կերպով առաջ գնալու և հակառակ պարագային՝ արյուն-արյունով պատասխանելու...»[1]:

Սակայն մեկ-երկու հարցում դրսևորված ընդհանրությունը բացառություն էր. թե՛ քաղաքական և թե՛ տակտիկական հարցերում ՌՄՌԿ-ի և ՄՌՀԿ-ի միջև հակասությունները մնում էին անլուծելի: Վիճաբանություններն ընդունում էին սուր, անզիջում բնույթ, և դա հատկապես ռուսաստանյան հեղափոխության վերելքի ժամանակաշրջանում: Այդ վիճաբանությունները շատ դեպքերում դառնում էին ամբիցիայի խնդիր: Պայքարն ընթանում էր բանվորական ժողովներում, թռուցիկների ու կոչերի միջոցով, բայց հիմնականում տպագիր օրգանների էջերում:

Վիճաբանությունները բուռն ընթացք էին ստացել հատկապես բոլշևիկյան «Կայծ» և «սպեցիֆիկյան» «Կեանք» թերթերի միջև: «Կայծում» «սպեցիֆիկների» դեմ ուղղված հոդվածները հիմնականում գրում էին Ստ. Շահումյանը և Սարգիս Կասյանը: Բանավեճերը, որպես կանոն, տարվում էին լրագրական էթիկայի կոպիտ խախտումներով: Համարներից մեկում պատասխանելով «Կայծի» հարձակումներին՝ «Կեանքը» գրում էր, որ այդ թերթում «Ս» և «Կ» ստորագրություններով հանդես եկող «անշնորհք գրչակներն իրենց տղայամիտ հոխորտանքներով մի քանի աստիճան ևս ձգեցին այդ թշվառ աստղի տակ ծնված թշվառ թերթը»[2]: Թեև խմբագրությունը ընթերցողին փորձում էր համոզել, թե ինքը «խորին արհամարհանքի է արժանացնում» «Կայծի» աշխատակիցների «հայհոյանքներն ու մանկական ցնդաբանությունները»[3], բայց, իրականում, չէր կարողանում խուսափել հակառակորդին «արժանի հարվածներ» հասցնելու գայթակղությունից, «Կայծին» պատասխանում էր նույն բառապաշարով ու նույնքան կրքով: Վիճաբանություն էր ծագում նույնիսկ որևէ կարևորություն չունեցող դիպվածի շուրջ*:

«Սպեցիֆիկները» հայտարարում էին, թե չեն ցանկանում որևէ գործ ունենալ հայ բոլշևիկների և նրանց ձայնափող «Կայծի» հետ: Եթե «Կայծին»

---

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4041, ց. 1, գ. 7, թ.1:
[2] «Կեանք», N 4, 8 ապրիլի 1906թ.:
[3] Նույն տեղում, N 12, 3 հունիսի 1906թ.:
* Այսպես, օրինակ, այն բանից հետո, երբ «Կայծի» առաջնորդողում գրվել էր, թե ինքը հայ իրականության մեջ առաջին սոցիալ-դեմոկրատական թերթն է, «Կեանքը», բուռն արձագանքելուց հետո, ծաղրանքով շեշտում էր. «Մենք կարծում ենք, որ այս հայտարարության մեջ ընկերները ...երևի կամեցել են ասել, թե «Կայծը» հայերեն լեզվով սոցիալ-դեմոկրատական առաջին աշակերտական թերթն է: Այդ արդեն միանգամայն ճիշտ է, նույնիսկ ժամանակագրական տեսակետից» («Կեանք», N 4, 8 ապրիլի 1906թ.):

համարենք ՌՄՌԿ հայկական բաժնի ներկայացուցիչ, ասում էին նրանք, ապա «նշանակում է ստորացնել ու անպատվել այդ կուսակցությանը»: Եվ ընդհանրապես ՄՌՀԿ-ն իրեն խիստ ընդգծված հեռավորության վրա էր պահում ՌՄՌԿ-ից՝ մշտապես ընդգծելով իր ինքնուրույնությունը:

«Ալիք» թերթի 1906թ. N 27-ում Միք. Վարանդյանը տպագրել էր «Ոճրագործ սուտը» վերնագրով հոդվածը, որի առիթը եղել էր պետական դումայի նախընտրական շրջանում կայացած Թիֆլիսի ընտրող լիազորների ժողովի ընդունած որոշումը: Այդտեղ շեշտված էր, թե թուրք-հայկական կոտորածը անմիջական արդյունք է կառավարության սադրանքի՝ «**հենված երկու թշնամացած կողմերի մութ ու ռեակցիոն տարրերի վրա, որոնց կառավարությունը զինեց ու հանեց ընդդեմ ազգաբնակչության խաղաղ մասի**», այդպիսով կազմելով քաղաքական հետադիմական բանակ և ուղղելով նրան ընդհանուր ազատագրական շարժման դեմ:

Միք. Վարանդյանն իր հոդվածում ցույց էր տվել, որ լիազորների ժողովը, որի մասնակիցների մեծ մասը եղել է ՌՄՌԿ անդամ վրացի սոցիալ-դեմոկրատ մենշևիկներ և հայ բոլշևիկներ, ակամայից արդարացրել է կառավարությանը, նվազեցրել նրա սադրիչ դերը: Չէ՞ որ ինքը՝ բյուրոկրատիան, ռուս պատրիոտների ամբողջ լեգեոնը շատ անգամ են ազդարարել, թե կառավարությունը դժվարանում է հանգստացնել «երկու թշնամացած կողմերին» և վերջ տալ «մութ ու խավար տարրերի» կատաղի արյունահեղությանը: Թիֆլիսի լիազորների որոշումը «թուրքերի հետ հավասարապես մեղսակից էր դարձնում հայությանը»:

Վարանդյանի հոդվածն ըստ էության հավանության էր արժանացել ՄՌՀ կազմակերպության կողմից: «Կեանքը» գրում էր. «Մենք բողոքում ենք Թիֆլիսի լիազորների այդ աստիճան անտակտ ու թեթևամիտ վերաբերմունքի դեմ. բողոքում ենք հանուն հայ ժողովրդական մասսայի, [հայ] պրոլետարիատի, որ ընդունակ չէ խուլիգանական գործիք դառնալու կառավարության ձեռքին»: Միաժամանակ թերթը բողոքում էր, որ Վարանդյանը մեղադրական ակտ է կարդում նաև հայ սոցիալ-դեմոկրատների դեմ տարբերություն չդնելով ՌՄՌԿ-ի և սոց.-դեմ. բանվ. հայ կազմակերպության միջև: «Մենք քանի-քանի անգամ հրապարակով շեշտել ենք, որ երբ մեր հակառակորդները առիթ են ունենում հայ սոցիալ-դեմոկրատների մասին արտահայտվելու, ճիշտ ու որոշ հիշատակեն, թե ում է վերաբերվում խոսքը... Հակառակ դեպքում ընթերցողը մեկը մյուսի փոխարեն ընդունելով՝ կարող է ահագին շփոթության և թյուրիմացության մեջ ընկնել: Ներկա դեպքում ո՞ր սոցիալ-դեմոկրատների մասին է խոսում պր-ն Վարանդյանը՝ այդ պարզ չի երևում նրա գրածից. եթե խոսքը վերաբերվում է ռուս սոց.-դեմ. բանվ. կուսակցության հայ անդամներին, մենք պատասխանատու չենք նրանց համար, իսկ եթե պր-ն Վարանդյանի շեշտումները վերաբերվում են սոց.-դեմ. բանվ. հայ կազմակերպությանը, մենք ներկա տողերով արդեն հիմնապես հերքեցինք նրա բյուր կարծիքները

մեր մասին»[1]:

Այսքանից հետո միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչու հայ բոլշևիկներն ամեն կերպ խոչընդոտում էին ՌՄԴԲԿ-ի հետ միավորվելու ՄԴՀԿ-ի բոլոր փորձերը:

1904-1906 թվականներին ՄԴՀԿ-ն մի քանի անգամ դիմել է ՌՄԴԲԿ-ի կենտկոմին՝ մտնելու այդ կուսակցության մեջ, որպես հայ բանվորության առանձին սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն: Այդ դիմումներից մեկին ՄԴՀԿ-ն կցել էր ՌՄԴԲԿ ապագա կազմակերպական սիստեմի մասին իր պատկերացումներից բխող առաջարկներ[2] և ՌՄԴԲԿ-ի հետ ՄԴՀԿ-ի միավորման պայմանների մասին որոշման նախագիծ[3]: Սակայն ՌՄԴԲԿ կովկասյան կոմիտեի կողմից ՌՄԴԲԿ կենտկոմ ներկայացրած զեկուցագրերի հիման վրա ՌՄԴԲԿ կենտկոմում արդեն կազմվել էր հաստատուն բացասական կարծիք ՄԴՀԿ-ի մասին:

ՌՄԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեի ու «սպեցիֆիկների» միջև շարունակվող սուր տարաձայնությունների և չդադարող բանավեճերի ժամանակ, 1905թ. օգոստոսի սկզբին, ՄԴՀԿ-ն դիմել էր ՌՄԴԲԿ կենտկոմին, խնդրելով, որ իրեն թույլ տրվի մասնակցելու առաջիկայում հրավիրվելիք Ռուսաստանի ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների և ՌՄԴԲԿ համատեղ կոնֆերանսին[4]: Սեպտեմբերի 5-ին Վ. Լենինը ՌՄԴԲԿ կենտկոմ է ուղարկում նամակ, որում խիստ նախազգուշացնում է թույլ չտալ ՄԴՀԿ մասնակցությունը կոնֆերանսին: Լենինի նամակում արտահայտվում էր նույն միտքը, ինչ բանավեճերի ժամանակ կովկասյան կոմիտեն արտահայտել էր «սպեցիֆիկների» մասին: Լենինը գրում էր. «Խիստ նախազգուշացնում եմ Հայկական ս.-դ. ֆեդերացիայի» վերաբերյալ: Եթե դուք համաձայնել եք, որ նա մասնակցի կոնֆերանսին, ապա ճակատագրական սխալ եք կատարել, որը հարկավոր է ուղղել ինչ էլ որ լինի: Դրանք Ժնևյան մի զույգ կազմալուծիչներ են, որոնք այնտեղ հրատարակում են ամենադատարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ: Դա բունդական կրեատուրա է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմը սնելու համար: Եթե դուք այդ մարդկանց թույլ տաք ռուսական կոնֆերանս, այսինքն՝ Ռուսաստանում աշխատող կազմակերպությունների կոնֆերանս գալու, դուք սարսափելի կխայտառակվեք: Կովկասի ընկերները բոլորն էլ դեմ են հրապարակագիր-կազմալուծիչների այդ շայկային (այդ բանը ես գիտեմ շատերից), և մենք չուտով կշշկռենք նրանց «Պրոլետարի»-ում: Դուք կհարուցեք միայն Կովկասի բողոքները և «հաշտության» ու «միավորման» փոխարեն՝ նոր գզվռտոց: Ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս կարելի է անտեսել կովկասյան միությունը»[1]:

Նամակից կրկին ու կրկին երևում է, որ, իրոք, ՌՄԴԲԿ կենտկոմում և անձամբ Լենինի մոտ ՄԴՀԿ-ի մասին կարծիքը կազմվել էր այն տեղեկությունների հիման վրա, որ ներկայացրել էին կովկասյան միութենական կոմիտեի հայ գործիչները: Նամակի՝ «Կովկասի ընկերները բոլորն էլ դեմ են», «այդ բանը ես գիտեմ շատերից» նախադասությունները շատ բան են ասում:

Հայ բոլշևիկները, խտացնելով գույները, նաև թույլ էին տվել բացահայտ անճշտություններ, այլապես նամակում տեղ չէր գտնի այն պնդումը, թե «Ժնևյան մի զույգ կազմալուծիչները» «որևէ լուրջ կապեր» չունեն «Կովկասի հետ»: Եվ դա այն դեպքում, երբ ՄԴՀԿ-ի կենտկոմը գտնվում էր Կովկասում, կազմակերպության ղեկավար գործիչների բացարձակ մեծամասնությունը Բաքվում և Թիֆլիսում էին, իսկ Ժնևում գործում էր միայն արտասահմանյան կոմիտեն:

Այդքանից հետո պատահական չէր, որ «սպեցիֆիկները» փորձում էին շրջանցել կովկասյան կոմիտեն ու հայ բոլշևիկներին և ուղղակի բանակցություններ վարել ՌՄԴԲԿ հետ՝ նրա կազմի մեջ ընդգրկվելու համար:

Հերթական փորձը կատարվեց ՌՄԴԲԿ IV համագումարի նախօրեին: ՌՄԴԲԿ կենտկոմը «սպեցիֆիկներից» ստացած նոր դիմումը քննարկման դրեց համագումարում, որը կրկին մերժվեց: ՄԴՀԿ-ի առջև կրկին փակվեցին ՌՄԴԲԿ-ի դռները:

ՌՄԴԲԿ-ի մեջ մտնելու խնդրանքով ՄԴՀԿ-ի հերթական դիմումի մերժումը բուռն դժգոհություն առաջ բերեց «սպեցիֆիկների» շարքերում:

«Կեանք» թերթի խմբագրականում Բ. Իշխանյանը գրում էր. «Ռուսաստանի կուսակցությունը (նկատի ունի ՌՄԴԲԿ-ն: - Հ.Ս.) միշտ առաջարկում է մի տնաքանդ պոստուլատ. կամ անխնա կլանվեցեք և ձուլվեցեք կազմակերպչական հողի վրա իր ամենակուլ որովայնի մեջ, կամ թե չեմ ճանաչում ձեր գոյությունը, հաշվի չեմ առնում ձեզ իբրև սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ»[2]:

Հոդվածագիրը նշում էր, որ IV միավորիչ համագումարում մշակվել և ընդունվել են երեք ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների (լեհական, հրեական և լատիշական)՝ ՌՄԴԲԿ-ի հետ միանալու պայմանները, բայց դրանց թվում տեղ չի գտել ՄԴՀ կազմակերպությունը: Արտահայտելով իր խիստ դժգոհությունն այդ «բացահայտ խտրական վարմունքի» նկատմամբ՝ Բ. Իշխանյանը շեշտում էր. «Այսուհետև պետք է հասկացնել ու հարկադրել այդ կուսակցությանը, որ չի կարելի կամայականությամբ արհամարհել դուրս մնացած կազմակերպություններին և ոտնահարել նրանց պրոլետարական մասսայի շահերը»: Ցավալի է, որ Ռուսաստանի կուսակցությունը չի

---

[1] **«Կեանք»**, N 13, 10 հունիսի 1906թ.:
[2] **ՀՀ ՀՔԿՓԿՊԱ**, ֆ. 4041, ց. 1, գ. 41, թ.թ.1-9:
[3] Նույն տեղում, գ. 42, թ.թ. 1,2:
[4] Նույն տեղում, գ.18, թ.թ.1,2:

---

[1] **Վ.Ի Լենին**, ԵԼԺ, հատ.47, էջ 49-80:
[2] **«Կեանք»**, N 10, 20 մայիսի 1906թ.:

ղեկավարվում սկզբունքային քաղաքականությամբ, բայց «սկզբունքը պետք է սկզբունք լինի անխտիր բոլորի համար»[1]:

«Զայնը» նույնպես քննադատում էր ՌՄՌԿ IV համագումարի արդյունքները, գտնելով, որ նա անընդունակ եղավ որևէ սկզբունքային որոշում կայացնելու ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մասին: «Դարձյալ կազմակերպական սիստեմի մասին» հոդվածում նորից ու նորից խոսք էր գնում այն մասին, որ պրոլետարիատը կազմակերպվում է միայն ազգային շրջանակներում: Թերթը մեջբերում էր Գ. Վ. Պլեխանովի հայտնի խոսքերը. «Միջազգային բանվորության աճը անհրաժեշտ է դարձնում բանվորական շարժման ազգային կենտրոնների ստեղծման անխուսափելիությունը: Պետք է չմոռանալ, որ գիտակից պրոլետարիատը ազգային է ոչ պրոլետարական իմաստով»:

Դիմելով բոլշևիկներին՝ «Զայնը» կոչ էր անում. «Բարի եղեք մեզ ապացուցելու, որ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մարտական կոչը բացառում է ազգային կազմակերպական այն սիստեմը, որ մենք պաշտպանում ենք: Մենք, հասարակ մահկանացուներս, համոզված ենք, որ վերջինս ամենևին չի հակասում մարքսիզմի սկզբունքներին»[2]:

ՄՌՀԿ Բաքվի կազմակերպության միջշրջանային ժողովը 1906թ. մայիսի 4-ին քննարկեց ազգային ս.-դ. կազմակերպությունների նկատմամբ ՌՄՌԿ IV համագումարի ցույց տված վերաբերմունքի հարցը: Ժողովը հանգեց այն եզրակացության, որ Ռուսաստանում գործող բոլոր ուժերի և կազմակերպությունների ցանկալի միությունը չի իրականանում այն պարզ պատճառով, որ ՌՄՌԿ ղեկավարության հարաբերությունները «ս.-դ. կազմակերպությունների հետ կրում են չարչիական բնույթ»[3]: Ժողովը միաժամանակ նշում էր, որ շարունակում է բաց մնալ երկրի բոլոր ս.դ. կազմակերպությունների միավորումն իրականացնելու ընդունակ մի հիմնադիր համագումար հրավիրելու հարցը: Որպես միավորման հնարավորության ապացույց՝ «սպեցիֆիկները» համարում էին ՌՄՌԿ IV համագումարում բոլշևիկների և մենշևիկների միավորման փաստը: Ընդունված որոշման մեջ միջշրջանային ժողովը ՌՄՌԿ ղեկավարությանը կոչ էր անում կուսակցության ծրագրից հանել այն կետերը, որոնք խանգարում են երկրի սոցիալիստ դեմոկրատների ուժերի միավորման գործին: Նույն նպատակով ժողովը դիմում էր նաև ՄՌՀԿ ղեկավարությանը՝ կազմակերպության ծրագիրը հնարավորին չափ ՌՄՌԿ ծրագրին հարմարեցնելու առաջարկով:

Միջշրջանային ժողովի առաջարկները չընդունվեցին ո՛չ ՌՄՌԿ և ո՛չ էլ ՄՌՀԿ ղեկավար մարմինների կողմից:

---

[1] **«Կեանք»**, N 10, 20 մայիսի 1906թ.:
[2] **«Զայն»**, N 9, 26 նոյեմբերի 1906թ.:
[3] **«Կեանք»**, N 10, 20 մայիսի 1906թ.:

ՄՌՀԿ-ի ղեկավարության կողմից Բաքվի միջշրջանային ժողովի առաջարկների մերժումը առիթ դարձավ, որ ՄՌՀԿ շարքերից հեռանան 100-ից ավելի, այդ թվում ճանաչված, «սպեցիֆիկներ»: Դրանց մեծ մասը մտավ ՌՄՌԿ մեջ, շուրջ 20 հոգի ընդունվեց հնչակի շարքերը, մյուսներն ընդհանրապես հեռացան քաղաքական ասպարեզից:

ՄՌՀԿ-ից այս խմբի հեռանալը միակ դեպքն էր ռուսական հեղափոխության տարիներին: Ի տարբերություն հայ իրականության մեջ գործող մյուս քաղաքական կուսակցությունների՝ ՄՌՀԿ-ն եղավ ամենակայունը: ՄՌՀԿ արտասահմանյան կոմիտեի նամակագրությունը կովկասյան կազմակերպությունների հետ (1904թ. մայիս-1906թ. հունվար) ցույց է տալիս նրանց շարքերում տարաձայնությունների բացակայությունը[1]: Կազմակերպությունը ներքաղաքական լուրջ ճգնաժամ չապրեց և նրա շարքերը, նշված բացառությամբ հանդերձ, հիմնականում մնացին անսասան:

Ե՛վ հայ բոլշևիկների, և՛ «սպեցիֆիկների» շարքերում կային անհատներ, որոնք պահանջում էին վերջ տալ բանավեճերին, միմյանց գնալ ընդառաջ, պայմանավորվածություն ձեռք բերել՝ կազմակերպչորեն միավորվելու համար: Ի վերջո ՄՌՀԿ-ի և ՌՄՌԿ կովկասյան երկրային կոմիտեի միջև համաձայնություն կայացավ՝ այդ նպատակով հրավիրել համատեղ ժողովներ: Տեղի ունեցավ մեկ-երկու ժողով, որոնք անցան փոխադարձ մեղադրանքներով, և հաշտության որևէ եզր գտնելու փորձն ավարտվեց անհաջողությամբ:

Այնուամենայնիվ, ՌՄՌԿ-ի և, հատկապես, բոլշևիկների նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ ՄՌՀԿ-ն հետևողական չէր: Երբ խնդիրը վերաբերում էր մենշևիկների հետ քաղաքական և կուսակցական բախումներին, «սպեցիֆիկները» հիմնականում հանդես էին գալիս բոլշևիկների դիրքորոշման պաշտպանությամբ, իսկ երբ հարցը դրվում էր ազգային շրջաններում բանվորների մեջ տարվող քաղաքական աշխատանքին, նրանք հանդես էին գալիս բոլշևիկների դեմ: Բայց նույնիսկ այդ «դեմի» դեպքում «սպեցիֆիկների» մեծ մասը ՌՄՌԿ-ի նկատմամբ զուսպ էր: Նրանց հարձակումների գլխավոր թիրախը կովկասյան, ավելի ճիշտ՝ կովկասահայ բոլշևիկներն էին:

Հակառակ ՌՄՌԿ հասցեին արած բոլոր քննադատություններին, «սպեցիֆիկներն», այնուամենայնիվ, գտնում էին, որ Ռուսաստանի միակ փրկությունը քաղաքական այդ ուժի հաղթանակի մեջ է (իհարկե՝ բացառելով հայ բոլշևիկներին և փոքրաթիվ հայ մենշևիկներին):

ՌՄՌԿ V համագումարի նախօրյակին «Զայնը» գրում էր. «Բավական է մի հարևանցի ակնարկ գցել Ռուսաստանի հեղափոխական շարժման վերջին տասնամյակի պատմության վրա... և լրջմիտ անալիզի ենթարկել, որպեսզի ամենայն իրավամբ անվանենք Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական ոչ միայն հեղափոխական պրոլետարիատի ավանգարդը, այլև ամբողջ ռուսական

---

[1] Տե՛ս ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 4041, ց. 1, գ.5, թ.թ.1- 46:

հեղափոխական շարժման դրոշակակիրը և, որպես այդպիսին, արժանի ուշադրություն նրա ամեն մի արարմունքի բոլոր նրանց կողմից, որոնք շահագրգռված են ռուսական հեղափոխության այս կամ այն ելքի մեջ»[1]:

ԼԱՐՎԱԾ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՌՀԿ-Ի ԵՎ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ - ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՏՋԵՎ

ՄՌՀԿ-ն հենց սկզբից ազդարարել էր, որ հայ քաղաքական դաշտում իր հիմնական հակառակորդը Հ.Յ. դաշնակցությունն է:

Դաշնակցությանը համարելով շովինիստական կուսակցություն՝ «սպեցիֆիկները» գտնում էին, որ այդ քաղաքական կազմակերպության գործունեությունը խորթ է հայ պրոլետարիատի շահերին և սոցիալական ազատագրության ձգտումներին: Նրանց տեսակետով Հ.Յ.Դ.-ի հոգսը Կովկասում աշխատավորության քաղաքական և տնտեսական վիճակի բարելավումը չէ, այլ նրանց իր ազգայնամոլական նպատակներին ծառայեցնելը:

Այն օրերի ս.-դ. բանվորական հայ կազմակերպության մամուլի էջերում կարելի է հանդիպել ոչ քիչ թվով կոչերի, որոնք ուղղված էին դաշնակցության լոզունգների հետևից գնացող ստվարաթիվ հայ բանվորներին: «Սպեցիֆիկները» սրանց փորձում էին համոզել, թե քանի որ դաշնակցության ղեկավարությունը բացարձակապես անտարբեր է պրոլետարիատի սոցիալ-տնտեսական դրության բարելավման և նրա քաղաքական ազատագրության խնդիրների նկատմամբ, ճիշտ կլինի հեռանալ այդ կուսակցության ազդեցությունից և միանալ ռուսական հեղափոխության հզոր բանակին՝ ՄՌՀ կազմակերպության միջոցով:

Ինչպես տեսնում ենք, այս հարցում «սպեցիֆիկների» և Հ.Յ.Դ. շարքերում առաջացած «անջատական» շարժման ղեկավարների տեսակետները համարյա նույնական էին: Նրանք մոտավորապես միատեսակ վերաբերմունք ունեին նաև Թուրքահայ ազատագրական շարժման նկատմամբ: Բայց եթե անջատականներն, այնուամենայնիվ, բազմակողմանի քննության էին ենթարկում խնդիրը, ապա «սպեցիֆիկյան» տեսաբաններն ընդհանրապես աշխատում էին շրջանցել այն: Չնայած դրան, նրանք, այնուամենայնիվ, չէին կարողանում խուսափել Թուրքահայության ազատագրական շարժմանը գնահատական տալուց: «Կեանքը» գրում էր. «Կարելի է անալոգիա տանել լեհական և հայկական քաղաքական ձգտումների մեջ, ինչպես այնտեղ, այնպես և այստեղ ուժեղ է եղել անկախ հայրենիք ունենալու ձգտումը, ինչպես լեհերը, այնպես և հայերը, բաժանված երեք քաղաքական տերիտորիաների մեջ, ձգտել են

[1] **«Զայն»**, *N 13, 6 մայիսի 1907թ.:*

ընդհանուր ազգային միության, ձգտել են քարտեզների գույների ոչնչացման: Տարբեր խնդիր է, եթե այդ ուժեղ և բացարձակ չի արտահայտվել, մասնավորապես հայերի մեջ, այլևայլ քաղաքական պատճառներով: Ինչպես լեհական գեղարվեստական գրականությունը այդ գաղափարների հայելին է ներկայացնում, ինչպես լեհական բուրժուազիայի համար դեռ չի դադարել ազատ Լեհաստանի ցնորքը, նույնպես և հայ բուրժուազիայի հիշողության մեջ դեռ մնում է ազատ Հայաստանի ցնորալի կրակը»[1]:

ՄՌՀԿ ղեկավարությունն ամիթը բաց չէր թողնում իր տեղական կազմակերպություններին հիշեցնելու, որ միշտ և ամենուրեք անհրաժեշտ է մերկացնել դաշնակցությանը, մասսաներին ցույց տալ նրա գաղափարախոսության սնանկությունը և գործնական ձգտումների կեղծ լինելը, հնարավոր բոլոր միջոցներով հայ բանվորությանը կրթել ու դաստիարակել մարքսիզմի ոգով, բարձրացնել նրա դասակարգային գիտակցությունը, նրան բերել այն համոզման, որ իր հարազատ ղեկավար քաղաքական ուժը միայն ու բացառապես կարող է լինել սոցիալ-դեմոկրատիան[2]:

Հարկ է նշել, որ «սպեցիֆիկյան» ոչ բոլոր տեսաբաններն էին հանդես գալիս դաշնակցության անողոք քննադատությամբ: Դա, իհարկե, պատահական չէր. չէ՞ որ նրանք, համարյա բոլորը, ժամանակին գտնվել էին այդ կուսակցության շարքերում կամ նրա գաղափարական ազդեցության ներքո[*]:

Դաշնակցության քննադատությունը ՄՌՀԿ-ն կենտրոնացրել էր մի քանի տեսական հարցերի (ի՞նչ է դասակարգը, ո՞րն է պրոլետարիատի ղեկավար դերը հեղափոխության մեջ, առաջնայնությունը ազգայի՞նն է, թե՞ միջազգայնականությունը և այլն) շուրջ:

ՄՌՀԿ տեսաբաններին շատ է զբաղեցրել ապագա դեմոկրատական Ռուսաստանի պետական կառուցվածքի հարցը: Ըստ որում, ֆեդերալիզացիայի հարցը նրանք դիտարկում էին շատ ավելի ձախ դիրքերից, քան նույնիսկ հայ բոլշևիկները: Ըստ որում, եթե սոցիալ-դեմոկրատ հայ բոլշևիկները անդրկովկասյան ֆեդերացիայի հարցը քննարկում էին զուտ քաղաքական առումով, ապա սոցիալ-դեմոկրատ բանվորական հայ կազմակերպության տեսաբանները բացահայտում էին ֆեդերացիայի և նրա կանոնալ սիստեմի բուն էությունը, կոնկրետ փաստերով ու թվական տվյալներով ցույց տալիս նրա գործնական վնասակարությունը՝ հատկապես երկրամասի հայության համար:

[1] **«Կեանք»**, *N 13, 10 հունիսի 1906թ.:*

[2] **ՀՀ ՀԱԿՓԿՊԱ**, *ֆ. 1022, ց.7, գ. 43, թ.թ.1-2:*

[*] *Այդ տեսակետից բնորոշ էին Դ. Անանունու մի շարք հրապարակումներում արտահայտված տրամադրությունները: Դրանցից մեկում նա գրում էր, թե դաշնակցությունը «սխալներ է գործել, որովհետև շատ գործ է կատարել, իսկ մենք չենք սխալվել, որովհետև ոչինչ չենք արել, մեր ժողովրդի հետ, նրա մեջ չենք եղել, իսկ դաշնակցությունը, որպես միակ մեծ և գործունյա կուսակցություն, միշտ եղել է հայ ժողովրդի հետ, հայ ժողովրդի համար, ինչ անենք, որ երբեմն էլ՝ հայ ժողովրդի գլխին», «Ցառաջ» (Երևան), N 77, 27 դեկտեմբերի 1910թ.:*

Խնդրի նկատմամբ այդ կազմակերպության ունեցած վերաբերմունքը հստակ արտացոլված է նրա նշանավոր տեսաբաններ Բախչի Իշխանյանի, Ալեքսանդր Մատուրյանի (Ռուբենի) և Դավիթ Տեր-Դանիելյանի (Անանուն) ուսումնասիրություններում: Անդրկովկասում ստեղծվելիք ֆեդերացիայի և կանտոնալ սիստեմի մասին նրանց մտքերն ու տեսակետները խտացված արտահայտություն են գտել Բ. Իշխանյանի խմբագրած «Կեանք» (Թիֆլիս) շաբաթաթերթում 1906թ. N 10 և N 11-ում Genosse ստորագրությամբ լույս տեսած «Իրագործելի՞ է արդյոք Անդրկովկասի ֆեդերացիան» հոդվածում:

Հենց սկզբից հոդվածագիրը նշում էր, որ իր կազմակերպությունը միանգամայն անմիտ է համարում դաշնակցականների այն ենթադրությունը, թե տնտեսապես, քաղաքական ձգտումներով և կուլտուրական մակարդակով իրարից խիստ տարբերվող Անդրկովկասի երեք հիմնական ազգերը՝ հայերը, վրացիները և թուրքերը, ընդունակ են ստեղծելու մի օրինակելի ֆեդերացիա, որը կունենա ընդհանուր օրենսդրական մարմին՝ պառլամենտ և ընդհանուր կառավարություն: Քանի որ պառլամենտում երեք ազգությունները կունենան հավասար ձայներ, ուստի, իբր, այնտեղ հնարավոր կլինի շատ արագ վերացնել այն բոլոր բարդությունները, որոնք խանգարում են երեք ժողովուրդների համերաշխությանը և խաղաղ համակեցությանը:

Թերթը հարց էր տալիս. արդյո՞ք երկրամասի երեք ազգերի թվական հարաբերությունը թույլ է տալիս գեթ մի բոպե մտածել, թե ֆեդերատիվ Անդրկովկասի պառլամենտում տեղ չեն ունենալու նույն հակասությունները, անհամաձայնություններն ու կռիվները, որոնք լինելու են պառլամենտից դուրս[1]:

Անդրկովկասի ֆեդերացիայի պահանջի ուտոպիական լինելը ցույց տալու համար հոդվածագիրը դիմում է թվական տվյալների և «ամեն օր հանդիպող նույնատիպ աղաղակող փաստերի»:

Անդրկովկասում, գրում էր նա, շիա և սյունիի թուրքերի թիվը մոտավորապես նույնքան է, որքան միասին վերցրած հայերի և վրացիների թիվը: Բացի այդ, ոչ մի երաշխիք չկա, որ ֆեդերալ պառլամենտում հայերն ու վրացիները միասնաբար հանդես են գալու թուրքերի դեմ: Ավելի հավանականն այն է, որ թուրք ֆեոդալ բեկն ու վրացի ֆեոդալ ազնվականը միանալով՝ ձեռք ձեռքի տված, կպայքարեն հայ բուրժուազիայի դեմ՝ իրենց հետևից քաշելով ստվար մասսաներ: Մյուս կողմից, զուր հույսեր տածել և միամտորեն հավատալ, թե շիա և սյունիի թուրքերը միմյանցից անկախ ու հակառակորդ ժողովուրդներ են, թե նրանց միջև եղած կրոնական պատնեշը երկար ժամանակ գոյություն կունենա - միամտություն է, նաև՝ հակակուլտուրական ու վնասակար: Կասկած չկա, որ թուրքերի քաղաքական գիտակցության արթնացմանը զուգընթաց, թուլանալու և անհետանալու են նրանց կրոնական տարբերությունները, և Անդրկովկասի պառլամենտում շիա և սյունիի թուրքերը հանդես

[1] Տե՛ս «Կեանք», N 11, 27 մայիսի 1906թ.:

են գալու որպես նույն ժողովրդի տարբեր հատվածներ, ինչպես միասնաբար հանդես են գալիս Անդրկովկասի լուսավորչական, ավետարանական կամ կաթոլիկ հայերը[1]:

Այնուհետև, «Կեանքը» նշում էր, որ դաշնակցությունը մեծ հույսեր է տածում, թե թուրքը մոտ ապագայում խոր քնից կսթափվի, կուլտուրական զարգացում կապրի և այն ժամանակ խաղաղ ու համերաշխ կաշխատի հայերի և վրացիների հետ: Բայց դաշնակցականները որևէ, հատկապես՝ բարոյական, հիմք չունեն հույս փայփայելու, թե թուրքը առաջիկայում կկրթվի ու կառաջադիմի: Չէ՞ որ հենց նրանք թուրք-հայկական ընդհարումների ամբողջ ընթացքում եռանդով պրոպագանդել և շարունակում են պրոպագանդել, թե թուրքերն անընդունակ են քաղաքակրթվելու, և որ նրանք ալան-թալանի սիրահար մի ժողովուրդ են և այդպես էլ պիտի մնան, թե հայերի նկատմամբ նրանց թշնամությունը սրբագործված է դարերով, որի առաջն առնելը կուլտուրական միջոցներով անհնար մի բան է, որ նրանց միակ զսպողը կարող է լինել ֆիզիկական ուժը:

Ցույց տալու համար, որ անհնարին է պատկերացնել ֆեդերատիվ Անդրկովկաս, հոդվածագիրը վկայակոչում էր մի ուրիշ հանգամանք ևս: Նա գրում էր.

«Որպեսզի մի քանի ժողովուրդներ կարողանան իրականացնել մի երկրում ֆեդերացիա, անհրաժեշտ է, որ այդ երկրի ժողովուրդները բոլորն էլ համաձայն լինեն, կողմնակից լինեն այդ ֆեդերացիային: Բռնի կերպով ստիպել մեկին, որպեսզի նա անպատճառ գա ու քեզ հետ ֆեդերատիվ հարաբերությունների մեջ մտնի, անհեթեթ բան է: Եվ եթե մի ազգություն բավականաչափ ուժ ունենա մի ուրիշ ազգության վզին փաթաթելու ֆեդերացիան, նա ավելի շուտ իրեն կենթարկեր այդ ազգը և ոչ թե նրան կհրավիրեր մտնել ֆեդերացիայի մեջ»[2]:

Անդրկովկասի ֆեդերացիայի մասին լսել անգամ չցանկացող վրացիները դրա փոխարեն պահանջում են Վրաստանի ավտոնոմիա և հայտարարում, որ եթե դաշնակցությունը շարունակի պնդել իր ծրագրի վրա, ապա իրենք ամեն միջոցի կդիմեն հակավրացական նման գործողությունը խափանելու համար: Ինչ վերաբերում է թուրքերին, ապա նրանք, ոչ մի խոսք չասելով հօգուտ Անդրկովկասի ֆեդերացիայի, միաժամանակ համակրանք են արտահայտում երկրամասի թուրքաբնակ վայրերում ավտոնոմիա մտցնելու գաղափարին: Իսկ դա նշանակում է, որ դաշնակցությունն ի վիճակի չէ վրացիներին ու թուրքերին մղել դեպի ֆեդերացիա:

Դաշնակցության ֆեդերալիզացիայի ծրագրի համաձայն, Անդրկովկասը բաժանվելու էր մի քանի տասնյակ ինքնավար կանտոնների՝ յուրաքանչյուրը դարձյալ իր օրենսդիր և վարչական մարմիններով:

[1] Տե՛ս «Կեանք», N 11, 27 մայիսի 1906թ.:
[2] Նույն տեղում:

Հայտնի չէր, թե որոնք պետք է լինեն նախատեսվող կանոնները, որպեսզի կարելի լիներ քննել դրանց իրագործման հավանականությունը: Որո՞նք էին լինելու այդ կանոնների առավելությունները, դրանք ի՞նչ միջոցներով և ինչպե՞ս էին արգելք դնելու երկրամասում ամեն օր կատարվող բազում չարիքների, հատկապես ազգային հողի վրա ծագած խժդժությունների առջև - սրանք հարցեր էին, որոնք սպասում էին անհետաձգելի պատասխանների:

«Կեանքը» նկատում էր, որ ամեն մի կանոնում, ուր կողք կողքի ապրում են շահերով և կուլտուրական զարգացման աստիճանով խիստ տարբեր հայն ու թուրքը, կանոնալ օրենսդիր մարմինը անխուսափելիորեն հանդիպելու է նույն բարդություններին, վեճերին ու ներհակություններին, որոնք հատուկ են լինելու ֆեդերալ պառլամենտին: «Օրինակ՝ շատ հետաքրքիր կլիներ տեսնել, թե ինչպես Զանգեզուրի կանոնի օրենսդիր մարմնի մեջ նստած են Հանքատեր Սուլթանովը և Հանքարդյունաբերող Մելիք-Ազարյանը, և թե փոխադարձ ներհակությունը արտահայտման ինչ ձևեր է ստանում Զանգեզուրի «պառլամենտի» պատերից ներս և նրա պատերից դուրս»[1]:

Բնական է, որ կանոններին վերաբերող հարցերի քննության ժամանակ ֆեդերալ պառլամենտում ծագելիք վեճերը ավելանալու էին տեղական կանոններում առաջացած վեճերին: Սրանց գումարվելու էին նաև այն վեճերը, որոնք տեղի էին ունենալու զանազան կանոնների միջև: Բայց դա բոլորը չէ, գրում էր թերթը: Ենթադրենք՝ մի կերպ գավառներում ստեղծվել են հայկական, թուրքական և վրացական կանոններ: Այդ դեպքում ի՞նչ պետք է արվի Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Շուշի, Երևան և մյուս քաղաքների հետ: Քանի՞ կանոններից բաղկացած պիտի լինի այդ քաղաքներից ամեն մեկը, քանի՞ օրենսդիր մարմին՝ դրանցից ամեն մեկում:

Այս ամենից հոդվածագիրը հետևություն էր անում, որ անդրկովկասյան ֆեդերացիան իր կանոնալ սիստեմով ոչ միայն չի կարող երաշխավորել երկրամասի երեք հիմնական ազգությունների կուլտուրական զարգացումը, այլև մեծ խոչընդոտ կլինի նրանց հետագա առաջադիմության ճանապարհին:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, սոց.-դեմ. բանվորական հայ կազմակերպությունը, կանգնած լինելով հայ պրոլետարիատի դասակարգային շահերից բխող տեսակետի վրա, ընդհանրապես մերժում էր քաղաքական-վարչական կազմի ապակենտրոնացման սկզբունքը՝ ֆեդերացիան և ավտոնոմիան: Կազմակերպությունը հայտարարում էր, որ ինքը իրագործելի և միանգամայն բավարար է համարում հայ պրոլետարիատի դասակարգային ձգտումներին ու նպատակներին համապատասխանող տեղական և շրջանային լայն ինքնավարությունը[2]:

Ինչպես դաշնակցության, այնպես էլ հնչակյան կուսակցության նկատ-

[1] «Կեանք», N 11, 27 մայիսի 1906թ.:
[2] Նույն տեղում, N 10, 20 մայիսի 1906թ.:

մամբ ՄԴԲՀ կազմակերպությունը ուներ խիստ բացասական վերաբերմունք: «Սպեցիֆիկները» հնչակին նույնպես համարում էին ազգայնամոլ կուսակցություն: Նրանք գտնում էին, որ թեև, ի տարբերություն դաշնակցության, հնչակը իրեն ազդարարել է մարքսիստական սոցիալիզմի հետևորդ, որ չնայած հնչակյանները հայ իրականության մեջ, ըստ էության, առաջինն են հայերեն թարգմանել մարքսիստական գրականության առանձին նմուշներ, բայց նրանք նույնիսկ իրենց կատարած թարգմանություններից համարյա ոչինչ չեն հասկացել:

ՄԴԲՀ կազմակերպության տեսաբանները այն համոզմանն էին, որ հնչակյան կուսակցությունը իրեն լիովին սպառել է և պետք է հեռանա քաղաքական ասպարեզից: Բ. Իշխանյանի «Կեանքը» գրում էր. «Հնչակյան կուսակցության գոյությունը բանվորական շրջաններում վերջին տարիներս կատարյալ անախրոնիզմ է դարձել»: Եվ դա բնական է, քանի որ ժամանակի հարվածներից ավերված է այլևս: «Անշուշտ, - նշում էր թերթը, - նորություն չէ, որ քիչ թե շատ գիտակից բանվորները, այլևս անկարող լինելով մնալ հնչակյան հակասությունների քաոսում, երես են դարձնում նրանից և միանում ավելի կենսունակ կազմակերպություններին»[1]:

Ուստի պատահական չէ, որ, օրինակ, ՄԴԲՀ կազմակերպության Բաթումի կոմիտեն 1904թ. նոյեմբերի 12-ին բողոք էր ուղարկել "Рабочий" թերթին՝ տարօրինակ համարելով Ամստերդամի սոցիալիստական կոնգրեսում որպես հնչակյան կուսակցության ներկայացուցիչ հանդես գալու Գ. Վ. Պլեխանովի քայլը[2]:

Հնչակյաններն անպատասխան չէին թողնում «սպեցիֆիկների» հարձակումները: «Վերածննդի» 1904թ. N35-ում Ավ. Նազարբեկյանը լուրջ չէր համարում նրանց սոցիալ-դեմոկրատներ կոչելը: «Եթե քիչ մոտենանք նրանց և քերենք նրանց մորթը, տակից դուրս կպրծնի հայ նացիոնալիստը»:

1906թ. ապրիլի 9-ին Բաքվի հնչակյանները, որոնք մնացել էին հավատարիմ կուսակցության գաղափարներին և նպատակներին, հանդես եկան «Ակամա պատասխան» հայտարարությամբ՝ ուղղված հնչակի նկատմամբ «սպեցիֆիկների» ծավալած հերթական քննադատության դեմ: Վերջիններիս անվանելով «մի դյուժին» «ողորմելիներ», որոնք «իրենց խելագարություններով» «ապականում են օդը», հնչակյանները, դիմելով նրանց, գրում էին. «Ձեզ դեռ հարկավոր է մտնել հնչակյան դրոշի տակ, սովորել ու հասկանալ ծխի ու կրակի մեջ ապրող բանվորի ցավն ու վիշտը»: Նրանք իրենց հակառակորդներին խորհուրդ էին տալիս՝ գոնե մի կարճ ժամանակով մտնել հնչակի դրոշի տակ՝ իմանալու համար, թե ինչ է հեղափոխական պայքարը, «աշխատավոր մարդու կյանքի չարքաշ պայմանները», տեսնել, բայց ոչ դարմանել, քանզի

[1] «Կեանք», N 11, 27 մայիսի 1906թ.:
[2] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4041, ց.1, գ. 9, թ.թ.1,2:

դարմանելը ձեր խելքից ու մտքից այնքան է հեռու, որքան երկինքը երկրից»[1]:

«Հնչակ» և «Երիտասարդ Հայաստան» թերթերում հաղորդումներ կային այն մասին, որ ՄՌՀ կազմակերպությունը, իր շարքերը ստվարացնելու համար զբաղվում է մարդասիրությամբ: Ի պատասխան այդ մեղադրանքի՝ «Ձայն» թերթը տպագրել էր Բաքվից ստացված «Անամոթ չահատակություն» վերնագրով թղթակցությունը, ուր խոսք էր գնում այն մասին, որ «Բաքվի հնչակյան խունացած պարոնները» շարունակում են ՄՌՀ կազմակերպության տեղի կոմիտեին և նրա հայ բանվորական բյուրոյին սպառնալիքներ կարդալ և մեղադրել այն բանում, թե նրանք փորձում են հնչակյան բանվորներին քաշել իրենց կողմը: Հոդվածագիրը նշում էր, թե քաղաքի «հնչակյան բոսերը» ճգնում են իրենց ներկայացնել որպես Բաքվի հայ բանվորների ցավերի միակ թարգման ու պաշտպան, մյուս կողմից, միայն ու միայն զբաղված են ՌՄՌԿ հետ միանալու խնդրով: «Հետո նրանք և՛ միացան, և՛ չմիացան, հնչակյան մնացին, անարխիստ դառան, տեռորիստ, բոմբիստ հռչակվեցին և այլն, և այլն: Հնչակյանները մի ավելորդ անգամ էլ ցույց տվեցին, որ իրենք էլի հին սապատավորներն են մնացել, որոնց միայն գերեզմանը կարող է ուղղել»[2]:

ՄՌՀԿ-ն շատ հիվանդագին էր արձագանքում հնչակ - բոլշևիկ սկսված երկխոսությանը: «Սպեցիֆիկների» և բոլշևիկների միջև գաղափարական տարաձայնությունները անհամեմատ քիչ էին (տարակարծությունները գլխավորապես կազմակերպչական և տակտիկական հարցերի շուրջ էին), քան բոլշևիկների և հնչակյանների միջև: Բայց, չնայած դրան, հնչակյանների նկատմամբ բոլշևիկների վերաբերմունքն ավելի հանդուրժողական էր, իսկ առանձին դեպքերում նույնիսկ բարեկամական: Անդրկովկասում հնչակի գործողությունները գնալով դառնում էին ընդգծված դասակարգային, ընդգծված սոցիալիստական: Ռուսական հեղափոխության նախօրեին և ընթացքում այդ հանգամանքը հող էր ստեղծել բոլշևիկ - հնչակ համագործակցության համար:

Ձենք կարող չնկատել նաև, որ դեպի հնչակները ՌՄՌԿ-ի ղեկավարության մոտ ստեղծված դրական տրամադրությունները արդյունք էին այն տրվյալների, որ հնչակի մասին ներկայացրել էին հայ բոլշևիկները: Սրանք, ինչպես շարադրանքից տեսանք, ընդհակառակը, ՌՄՌԿ կենտկոմին և նրա կովկասյան երկրային կոմիտեին միշտ բացասական կարծիքներ էին ներկայացրել «սպեցիֆիկների» մասին: Դրա պատճառն այն էր, որ հնչակն ազգային-հեղափոխական կուսակցություն էր, և նրա գործունեության հիմնական դաշտը շարունակում էր մնալ Թուրքահայաստանը: Բացի այդ, հնչակյան ձախ՝ նազարբեկյանական թևը հանդես էր գալիս կուսակցությունը ՌՄՌԿ-ի մեջ ձուլելու պահանջով, այն դեպքում, երբ ՄՌՀԿ-ն այդ մասին մտածել անգամ չէր

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4045, ց.1, գ. 111, թ.1:
[2] «Ձայն», N 1, 1 հոկտեմբերի 1906թ.:

ուզում և ՌՄՌԿ կազմում հավակնում էր ինքնուրույն կարգավիճակի:

Ուստի և անդրկովկասյան հնչակյանները չէին կարող բոլշևիկների համար լուրջ մրցակիցներ լինել և վտանգ ներկայացնել՝ հայ բանվորությանը իրենց կողմը գրավելու հնարավորության տեսակետից: Ուրիշ էր «սպեցեֆիկների» պարագան. սրանք Անդրկովկասի հայ բանվորական շարժման մեջ հայ բոլշևիկների համար դարձել էին լուրջ մրցակիցներ:

Հայ բոլշևիկները հանդես էին գալիս որպես հայ բանվորության շահերի միակ արտահայտիչներ: Իրենց հերթին այդ դերին հավակնում էին «սպեցիֆիկները»: Այստեղից էլ միմյանց նկատմամբ նրանց անհանդուրժողականությունը, որը հաճախ փոխարկվում էր բացահայտ թշնամանքի:

Այդ ամենը և հատկապես այն, որ հնչակյանները հաջողությամբ բանակցում էին հայ բոլշևիկների հետ՝ ՌՄՌԿ մեջ մտնելու համար, մեծապես զայրացնում էր «սպեցիֆիկներին», որոնց նույն նպատակով արված բազմաթիվ խնդրանքները կտրուկ մերժվել էին ՌՄՌԿ ղեկավարության կողմից: Դրա հետևանքն այն եղավ, որ ուժեղացան ՄՌՀԿ-ի հարձակումները հնչակյանների վրա, ըստ որում, կազմակերպության մամուլի օրգաններում հակահնչակյան հոդվածների հեղինակները ոչ միայն ավելի եռանդով էին «մերկացնում» «հնչակյան սոցիալիզմը», այլև զանազան վարկաբեկիչ նյութեր էին տպագրում հնչակի ղեկավար գործիչների և, հատկապես, Նազարբեկների դեմ, մտնելով նույնիսկ նրանց ընտանեկան ինտիմ կյանքի մանրամասների մեջ:

Հասցրած վիրավորանքների առիթով «Ակամա պատասխան» նամակում հնչակյանները գրում էին. «Այնպիսին, ինչպիսին դուք եք, թերուանե՛ր, ոչ ձեր փայլուն ցիլինդրներով, ոչ էլ ոսկեզօծ ակնոցներով, ոչ էլ Եվրոպայի վերջին մոդայի հագուստով չեք կարող [դեպի ձեզ] գրավել հայ բանվորներին կամ արատավորել հնչակյան միությունը»[1]:

1905թ. ապրիլին Բեռլինում կայացել էր Եվրոպայի հայ ուսանողների միության կոնգրես, որին հրաժարվել էին մասնակցել ՄՌՀԿ անդամ ուսանողներն այն պատճառաբանությամբ, թե իրենք չեն կարող համաձայնության որևէ եզր գտնել հնչակ և դաշնակ ուսանողների հետ[2]:

Ի տարբերություն Բաքվի կազմակերպության՝ Թիֆլիսի հնչակյան կազմակերպությունը հանդես չէր բերում առանձին ակտիվություն՝ միավորվելու ՌՄՌԿ-ի հետ: Բնականաբար, դա հող էր ստեղծել ՄՌՀԿ-ի հետ երկխոսություն սկսելու համար: Թիֆլիսում նույնիսկ մեկ-երկու փորձ եղավ նրանց հանդիպման, բայց դրանք վերջացան անհաջողությամբ: Հնչակյան մի հայտարարության մեջ նշված է, որ բանակցությունների ընթացքում ՄՌՀԿ-ն միշտ հանդես է գալիս ամբողջ հայ պրոլետարիատի անունից, այն էլ՝ վերամբարձ պահանջներով: Միաժամանակ հասարակայնությանը տեղյակ էր պահ-

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց.7, գ. 20, թ.թ. 33-34:
[2] Նույն տեղում:

վում, որ բանակցությունների օրերին նրա ղեկավարները բազմաթիվ գրություններ են ուղարկել տեղերը և հայտնել, որ հնչակյանների հետ համագործակցությունն անհնարին է: ՄԴՀԿ տեղական մարմինները, իրենց հերթին, կազմակերպության անդամներին տեղյակ էին պահում ղեկավարության հրահանգի մասին և պահանջում որևէ գործակցություն չունենալ հնչակյանների հետ:

Այսպես, Շուշիի ՄԴՀԿ խումբը 1905թ. հունիսի 23-ին իր անդամներին հղել էր մի ծանուցում, ուր ասված էր. «Վերջին շրջանում տարածվել են լուրեր, որ, իբր, ՄԴՀԿ-ն միավորվում է հնչակյանների հետ: Այդ լուրերը հիմքից զուրկ են»: Ծանուցման մեջ նշվում էր, որ Շուշիի խումբը նախկինում երբեք չի գործակցել հնչակի հետ և այսուհետև էլ չի գործակցելու, քանի որ այդ կուսակցությունն իր աշխարհայացքով ու գործունեությամբ ազգայնական է և օպորտունիստական, որը, սոցիալ-դեմոկրատիայի թիկնոց հագած, շահագործում է հայ բանվորներին ու աշխատավոր գյուղացուն, հետևապես նրա դեմ պետք է պայքարել ամենուրեք[1]:

Հարթ չէին «սպեցիֆիկների» հարաբերությունները նաև մենշևիկների հետ, թեև նրանց մոտեցումները որոշ հարցերում համընկնում էին:

Իր նամակներից մեկում Գարեգին Կոզիկյանը (Եսալեմ), բոլշևիկներին քննադատելով այն բանի համար, որ նրանք ռուսական հեղափոխության մեջ երրորդական-չորրորդական դեր են հատկացնում գյուղացիությանը (բանվոր դասակարգից, արհեստավորների դասից և հեղափոխական ինտելիգենցիայից հետո), միաժամանակ շեշտում էր, որ այդ հարցում մենշևիկները կանգնած են ավելի ճիշտ ուղու վրա[2]:

Բայց մենշևիկների նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցում «Զայնի» այդ մոտեցումը «սպեցիֆիկներին» բնավ բնորոշ չէր: Բնութագրականն այն էր, որ կովկասյան մենշևիկի դեմ նրանց պայքարը անցիկում էր: Այդ պայքարը հատկապես սուր բնույթ ստացավ ՌՄԴԲԿ IV համագումարից հետո: Նրանք հրապարակավ խոր դժգոհություն էին հայտնում, ասելով, թե բոլշևիկները մեծ զիջումներ են արել մենշևիկներին՝ միավորվելով նրանց հետ: «Դա մի համագումար էր, - գրում էր «Կեանքը», - որտեղ փոքրամասնականների շեֆերի՝ Պլեխանովի, Աքսելրոդի և այլոց կողմից փառաբանվեց նաև կովկասյան փոքրամասնականների, գերազանցապես վրաց սոցիալ դեմոկրատների կես-անարխիստական, կես-օպորտունիստական տակտիկան...[3]:

Բնական է, որ մենշևիկները չէին կարող անպատասխան թողնել «սպեցիֆիկներին» և բուռն գրոհներ ձեռնարկեցին ՄԴՀԿ-ի դեմ: «Սպեցիֆիկների» տարածած թռուցիկներից մեկում կարդում ենք. «Էլ անտեղի հարձակումներ,

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց.7, գ. 44, թ.1:
[2] Նույն տեղում, ֆ. 4041, ց.1, գ. 19, թ.2:
[3] «Կեանք», N 10, 20 մայիսի 1906թ.:

զրպարտություններ և մեղադրանքներ չմնաց, որ [մենշևիկները] չթափեին մեր կազմակերպության գլխին: Էլ ածականներ չմնաց, որ չկցեին մեր անվան: Վերջապես, չինայվեց ոչ մի միջոց՝ անվանաբեկ անելու մեր կազմակերպությունը»[1]:

Խիստ սրվել էին ՄԴՀ կազմակերպության հարաբերությունները երիտդաշնակցական և անջատական հոսանքների հետ: «Սպեցիֆիկները» վերջիններիս մեղադրում էին երկերեսության մեջ: «Կեանքը» գրում էր, որ թեև նրանք արտաքնապես ցույց են տալիս, թե գալիս են դեպի սոցիալ-դեմոկրատիա, բայց իրականում հոգով ու սրտով մնում են որպես ազգայնականներ[2]:

Մամուլում կծու բանավեճեր էին ծավալվել, մի կողմից, ՄԴՀ կազմակերպության տեսաբանների, մյուս կողմից, երիտդաշնակցական Ա. Մրավյանի և անջատական Լևոն Աթաբեկյանի միջև: Հատկապես ծայրահեղորեն սրվել էին Լևոն Աթաբեկյանի և Բախչի Իշխանյանի հարաբերությունները:

«Մի գրական թալանի առիթով» հոդվածում («Երկիր», N 14, N 15, 1906թ.) Լ. Աթաբեկյանը Բ. Իշխանյանին մեղադրել էր գրագողության մեջ: Իր հերթին վերջինս պատասխանել էր ավելի խիստ (եթե չասենք՝ անվայելուչ) արտահայտություններով՝ «Իմ պատասխանը դեմագոգիայի արհեստավորին» հոդվածով[3]:

«Զայն» թերթին ուղարկած հոդվածում, որը, չգիտես ինչու, չի տորագրվել և պահպանվում է արխիվում, նրա հեղինակը գրում էր, որ դաշնակցությունից հեռացած անջատականները, ի վերջո, «վերադառնալու են իրենց մոր գիրկը»: Դրա պատճառն այն է, որ «դաշնակցությունը ավելի մոտ է նրանց սրտին, քան սոցիալ-դեմոկրատիան»: Բայց ի՞նչ է նշանակում դա - անջատականներին հարց էր տալիս հոդվածագիրը և պատասխանում. «Սա նշանակում է, որ կամ ձեր մեջ սոցիալիզմը դեռևս մի մութ, անորոշ գաղափար է, որի հետ, իր ամբողջության մեջ, դուք դեռ չեք հաշտվել. թեև հայկական նացիոնալիզմից «հրաժարված» եք, բայց մնում ենք այդ նույն նացիոնալիզմի ճանկերում որպես ստրուկ:

Եվ քանի դեռ այս հարցերին պատասխան չեք տվել, հասարակության առջև պարզորեն չեք դրել ձեր պատկերը, ձեր համոզմունքները, ձեր ծրագրերը՝ մենք իրավունք չունենք ձեզ անջատված համարելու դաշնակցությունից»[4]:

Նույն առվով չէին գնում նաև «սպեցիֆիկների» և սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) ջրերը: Առաջինների գնահատմամբ երկրորդների կուսակցությունը մանրբուրժուական էր, հակապրոլետարական՝ «էկլեկտիկ-ուտոպիական» աշխարհայացքով և «ագրարային կոնսերվատիզմով»: ՄԴՀԿ-ի ղեկավարությունն իր տեղական մարմիններին պարբերաբար հանձնարարում

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց.7, գ. 15, թ.3:
[2] Տե՛ս «Կեանք», N 13, 10 հունիսի 1906թ.:
[3] Տե՛ս «Զայն», N 7, 12 նոյեմբերի, N 8, 19 նոյեմբերի 1906թ.:
[4] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց.7, գ. 26, թ.2:

էր անողոքաբար մերկացնել էսէռների «քաղքենիական գաղափարախոսությունը» և նրանց հեռու պահել հայ պրոլետարիատի շարքերից:

Ինչպես տեսնում ենք, «սպեցիֆիկների» կազմակերպությունը կռվի բազմաթիվ ճակատներ էր բացել և տրամադիր չէր համագործակցել որևէ քաղաքական կուսակցության հետ՝ լինեին դրանք ազգայնական թե սոցիալիստական, աջ թե ձախ կողմնորոշում ունեցող ուժեր: ՄՌՀԿ որդեգրած պայքարի բնութագրությունը իր հրապարակումներից մեկում ճշմարտացի է ներկայացրել «Կեանք» թերթը, գրելով.

«Կռիվ, անհաշտ կռիվ ցարի բռնակալական ռեժիմի դեմ, կռիվ լիբերալ բուրժուազիայի, կապիտալիստական ազգարային շահագործման դեմ: Կռիվ մեր իրականության մեջ ազգայնական կուսակցությունների դեմ, որոնք շահագործում են պրոլետարիատի տակավին թույլ դասակարգային գիտակցությունը, կազմակերպական պայքար ՌՄՌԿ դեմ՝ հանուն համայն Ռուսիայի լավագույն և ամենանպատակահարմար սիստեմով կազմակերպելու ձգտումների»[1]:

Չնայած պայքարի տարբեր ճակատներում, հատկապես 1905-1907թթ. ի հայտ բերած մեծ ակտիվությանը, այնուամենայնիվ, ս.-դ. բանվորական կազմակերպությանը չհաջողվեց խոր արմատներ ձգել հայ իրականության մեջ:

[1] «Կեանք», N 14, 17 հունիսի 1906թ.:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀԱՅ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ

Հայ հասարակության մեջ գործում էին ո՛չ միայն ազգային կուսակցություններ ու կազմակերպություններ: Դրանց կողքին, բայց դրանցից հեռու, իր գործունեությունն էր ծավալել հակառակ գաղափարներ դավանող ուժը՝ սոցիալ-դեմոկրատիան:

Սոցիալ-դեմոկրատիայի գաղափարաբանությանը զինվորագրված հայ որդիներն իրենց ժողովրդի փրկությունը և հարատևությունը կապում էին ո՛չ միայն ազգային ազատագրական շարժման, կապիտալիստական շահագործումից ազատագրվելու համար ճնշված դասակարգերի և, առաջին հերթին, ռուսաստանյան պրոլետարիատի հաղթական սոցիալիստական հեղափոխության հետ:

Ազատագրական շարժման ուղիների արմատական տարբերությունները հայ քաղաքական դաշտում անխուսափելիորեն առաջ բերեցին անգիջում դիմակայություն միմյանց ժխտող հասարակական ուժերի միջև:

Ռուսաստանում դասակարգային կռիվը հրապարակ էր հանել սոցիալիստական երկու խոշոր կուսակցություններ: Դրանցից մեկը սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) կուսակցությունն էր: Եթե չհաշվենք Հ. Յ. դաշնակցության վրա նրա թողած զգալի ազդեցությունը, ապա կարելի է ասել, որ այդ կուսակցությունը նկատելի դեր չխաղաց հայ իրականության մեջ: Հայ էսէռները հիմնականում նախկին դաշնակցականներ էին, որոնց թիվը մատների վրա էր հաշվվում: Թողնելով դաշնակցության շարքերը՝ նրանք համախմբվել էին սոցիալիստ-հեղափոխականների դրոշի տակ և ընդգրկվել համառուսաստանյան հեղափոխական շարժման մեջ:

Մյուս սոցիալիստական կուսակցությունը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունն էր, որը խոր արմատներ էր նետել հայկական միջավայրում: Իր երկրորդ համագումարից հետո (1903թ.) այդ կուսակցության մեջ ձևավորվեցին միմյանցից խիստ տարբեր քաղաքական երկու թևեր՝ բոլշևիկյան և մենշևիկյան, որոնք ունեին առանձին կենտրոնական, ռեգիոնալ և տեղական կազմակերպություններ՝ իրենց ղեկավար մարմիններով և մամուլի օրգաններով:

Անդրկովկասում մենշևիզմը կայուն դիրքեր ապահովեց միայն Վրաստանում: Սոցիալ-դեմոկրատիայի վրացական թևը համառուսաստանյան մենշևիզմի ամենախոշոր ջոկատներից մեկն էր, միաժամանակ Վրաստանի ամենաազ-

դեցիկ քաղաքական ուժը: Մենշևիզմը հայ իրականության մեջ էական դեր չխաղաց: Մենշևիկյան ուղղության հայերեն երկու-երեք տպագիր օրգանները գաղափարական լուրջ ազդեցություն չունեցան հայ զանգվածների վրա: Անշան թվով մենշևիկ հայ գործիչների մեծ մասն ապաստան էր գտել վրաց-մենշևիկյան սոցիալ-դեմոկրատիայի տանիքի տակ:

Ի տարբերություն մենշևիզմի՝ ՌՄԴԲԿ ծայրահեղ հեղափոխական թևը՝ բոլշևիզմը, խոր արմատներ նետեց հայ իրականության մեջ: Մարքսիստական ուսմունքին հավատարիմ գաղափարական անձնազոհ առաջնորդներ ու մարտիկներ, մամուլի բազմաթիվ օրգաններ, հեղափոխական եռուն գործնական աշխատանք - ահա հայկական միջավայրում բոլշևիզմի ներկայության տիպական չափորոշիչները:

ՌՄԴԲԿ ընդհանուր տանիքի տակ բոլշևիզմի և մենշևիզմի հեղհեղուկ գոյակցությունը պարբերաբար խախտվելով՝ ժամանակ առ ժամանակ տեղի էր տալիս բացահայտ թշնամանքի՝ Անդրկովկասի պայմաններում արտահայտվելով հայ (բոլշևիկ) - վրաց (մենշևիկ) հակադրության ձևով:

Զուտ ազգային ազատագրության խնդիրներին լծված հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների (Հնչակ, դաշնակցություն) շարքերը, բնականաբար, չտվեցին համառուսաստանյան մասշտաբի խոշոր գործիչներ: Նույնը կարելի է ասել նաև հայ էսէռների և հայ մենշևիկների մասին: Թերևս ինչ-որ չափով բացառություն կազմեցին Ավետիս Նազարբեկյանը՝ Հնչակից, Արշակ Զուրաբյանը՝ հայ մենշևիկների շարքից, և Պռոշ Պռոշյանը՝ հայ էսէռների թվից: Այս երեք գործիչները ճանաչում գտան միայն ռուսաստանյան քաղաքական գործիչների նեղ շրջանակներում անհայտ մնալով աշխատավոր լայն զանգվածներին: Նկատենք նաև, որ հետագայում, 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո, Ա. Նազարբեկյանը մտավ բոլշևիկյան կուսակցության մեջ, իսկ Ա. Զուրաբյանը և Պ. Պռոշյանը մերձեցան բոլշևիկներին ու կանգնեցին խորհրդային իշխանության պլատֆորմի վրա:

Պատկերը միանգամայն այլ էր հայազգի բոլշևիկների մոտ: Նրանց շարքերից սերվեցին ականավոր գործիչներ՝ Ստեփան Շահումյանը, Բոգդան Կնունյանցը, Սուրեն Սպանդարյանը, Խաչիկ Լալայանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Վլադիսլավ Կասպարովը, Ալեքսանդր Բեկզադյանը, Անաստաս Միկոյանը, որոնք մեծ ավանդ ներդրեցին ոչ միայն կովկասյան, այլև համառուսաստանյան հեղափոխական շարժման, բոլշևիկյան կուսակցության ստեղծման ու ամրապնդման, իսկ նրանցից ոմանք՝ նաև խորհրդային պետության կառուցման մեջ:

Բոլշևիկյան կուսակցության շարքերում նվիրվածությամբ գործեցին նշանավոր հեղափոխականներ Սարգիս Կասյանը, Մելիք Մելիքյանը (Դեդուչկա), Ասքանազ Մռավյանը, Սիմոն Տեր-Պետրոսյանը (Կամո), Դանուշ Շահվերդյանը, Սերգո Խանոյանը, Աշոտ Խումարյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Ռուբեն Դաշտոյանը, Արշավիր Մելիքյանը, Ռուբեն Քաթանյանը, Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին), Բագրատ Բորյանը և ուրիշներ:

ՀԱՅ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1905-1907թթ.)

Մենք այստեղ մանրամասն չենք լուսաբանի 1905-1907թթ. ռուսական առաջին հեղափոխության պատճառները, չենք անդրադառնա սկզբնական շրջանի իրադարձություններին, կանգ չենք առնի հեղափոխության անցած հանգրվանների վրա, քանի որ այդ հարցերը շարադրված են սույն աշխատության առաջին գրքում: Ստորև խոսք կգնա Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ քաղաքներում ու գավառներում հեղափոխության ունեցած արձագանքների և հակացարական ելույթների մասին՝ այդ տարիներին հայ բոլշևիկների ծավալած գործունեության առումով:

1905թ. հունվարյան դեպքերով սկսված ռուսական առաջին հեղափոխությունը զարգանալով հասավ ամենաբարձր աստիճանին՝ դեկտեմբերյան զինված ապստամբությանը: Ցարական ինքնակալության դեմ պայքարի ելան միլիոնավոր զանգվածներ՝ երկրում առաջ բերելով հսկայական քաղաքական վերելք:

Հեղափոխությունն առաջին հերթին ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեծ ստեղծագործությունն էր: Նրա հաղթանակին նախանձախնդիր գլխավոր ղեկավար ուժը՝ բոլշևիզմը, իր հետևից տանում էր պրոլետարիատի հիմնական շերտերին, նրան մղում հակացարական կռվի, դեպի բարիկադներ:

Հեղափոխության տարիներին բոլշևիզմը հայ իրականության մեջ դարձավ մշտական գործոն և շարժիչ ուժ, հասարակական զարգացման ընթացքը պայմանավորող հանգամանքներից մեկը: Թեև հեղափոխությունը պարտվեց, բայց այն եղավ նախերգանք գալիք դասակարգային մարտերի, որոնք տևականորեն փոխելու էին Ռուսաստանի զարգացման ուղին:

Այն իրողությունը, որ Հայաստանում առաջացած սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեծ մասը հենց սկզբից հարել է ՌՄԴԲԿ բոլշևիկյան թևին, խորհրդային պատմագրության մեջ դարձել է միանշանակ, այսինքն՝ Հայաստանում գործող սոցիալ-դեմոկրատական բոլոր կազմակերպություններն անխտիր համարվել են բոլշևիկյան: Դա խանգարել է Հայաստանում հեղափոխական շարժման ընդհանուր պատկերը ճիշտ ընկալելուն: Իրականում այդ կազմակերպությունների մի մասը հարել է ՌՄԴԲԿ մենշևիկյան թևին:

Հայաստանում մենշևիկները զգալի ազդեցություն են ունեցել ամենից առաջ Ալավերդու արդյունաբերական հանգույցում: Դա պատահական չէ,

քանի որ այդ հանգույցը գտնվում էր Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի* կազմում, ուստի ավելի շատ կապված էր Թիֆլիս քաղաքի, քան Հայաստանի որևէ շրջանի կամ քաղաքի, այդ թվում Ալեքսանդրապոլի և Երևանի հետ: Եվ քանի որ վրաց սոցիալ-դեմոկրատիան ամբողջովին մենշևիկյան էր, ապա Թիֆլիս քաղաքից և նահանգից Ալավերդի աշխատանքի եկած վրացի մասնագետներն ու բանվորներն իրենց հետ բերում էին սոցիալ-դեմոկրատիայի վրացական տարբերակը, որի ազդեցության տակ էր ընկնում նաև պղնձարդյունաբերության տեղի բանվոր-ծառայողների մի մասը:

Ալավերդու արդյունաբերական շրջանի բանվորության քաղաքական տրամադրությունների վրա նշանակալի ազդեցություն էր գործում Արշ. Զուրաբյանի ղեկավարությամբ Թիֆլիսում հրատարակվող հայ-մենշևիկյան «Հոսանք» թերթը: Մենշևիկները զգալի թիվ էին կազմում նաև երկաթուղային հանգույցներում, Ալեքսանդրապոլի դեպոյում, Սանահինում, Կարսում, Երևանում, այսինքն՝ այնտեղ, որտեղ աշխատում էին վրացի բանվորներ, տեխնիկներ, ինժեներներ: Ավելին, Ալավերդու բանվորների 1905թ. նոյեմբերյան նշանավոր գործադուլի կազմակերպման ու ղեկավարման գործում բոլշևիկներից ոչ պակաս դեր են խաղացել նաև մենշևիկները՝ վրաց մենշևիկյան գործիչներ Ժղենտիի, Խոպերիայի, Կախրեիձեի և ուրիշների ղեկավարությամբ:

Ռուսական հեղափոխությանն ակտիվ մասնակցություն ունեցան Անդրկովկասի բանվոր դասակարգը և գյուղացիությունը: Հեղափոխության վիթխարի ալիքն իր մեջ առավ նաև Հայաստանի աշխատավորության զգալի մասին:

Ռուսական առաջին հեղափոխությանը, ինչպես արդեն ասվել է, այս կամ այն չափով մասնակից եղան նաև հայ ազգային-հեղափոխական կուսակցությունները՝ հնչակն ու դաշնակցությունը:

Հնչակյան կուսակցության անդրկովկասյան մի շարք կազմակերպություններ, առաջին հերթին Բաքվի կազմակերպությունը, հեղափոխության տարբեր փուլերում, հատկապես 1905թ. ընթացքում, ակտիվ մասնակցություն են ունեցել բոլշևիկների կազմակերված գործադուլներին, ցույցերին, մասսայական բողոքներին, հանդես են եկել հայտարարություններով ու կոչերով: Բայց հնչակյանները հեղափոխությանն իրենց մասնակցությունը պայմանավորում էին մի հիմնական հանգամանքով՝ որքանո՞վ է այդ հեղափոխության հաղթանակը նպաստելու Թուրքահայության ազատագրական պայքարի դրական ելքին: Նրանք նաև Կովկասի Թուրք-հայկական ընդհարումների օրերին, իհարկե, ոչ այնքան ակտիվորեն, ինչպես դաշնակցականները, մասնակցում էին հայ բնակչության ինքնապաշտպանական կռիվներին և այդ պատճառով ենթարկվում էին բոլշևիկների քննադատությանը:

* Բորչալուի գավառի մեջ էին գտնվում Ալավերդի, Սանահին, Ախթալա, Քոլագերան երկաթուղային կայարանները, Ալավերդու և Շամլուղի պղնձահանքերն ու գործարանները:

Ինչ վերաբերում է դաշնակցությանը, ապա ռուսական հեղափոխությանը նրա մասնակցությունը սահմանափակվում էր էպիզոդիկ դեպքերով: Եվ դա հասկանալի է, քանզի Կովկասում Թուրք-հայկական ընդհարումների ճակատագրական ողջ ժամանակաընթացքում կուսակցությունը անդրկովկասյան իր կազմակերպությունների համարյա բոլոր ուժերը նետել էր երկրամասի հայության ինքնապաշտպանության կազմակերպմանը և կռիվները վարելուն: Հանուն ժողովրդի գոյապահպանման այդ կռվում դաշնակցությունն իր հետևից կարողացավ տանել հայկական հասարակության լայն շերտերի, հայազգի բանվորական ու գյուղացիական հոծ զանգվածների, որը և նշանակում էր սրանց փաստորեն օտարումը ռուսական հեղափոխության կենդանի գործից:

Ռուսական հեղափոխությանը չմասնակցելու կուսակցության ղեկավարության քաղաքականությունը ճիշտ էր համարում դաշնակցականների մեծ մասը: Բաքվից ուղարկած նամակներից մեկում Հարություն Շահրիկյանը ողջունում էր այդ քաղաքականությունը, պատճառաբանելով, որ ռուսական հեղափոխությունը որևէ աղերս չունի հայկական հեղափոխության հետ: Հանուն ռուսական հեղափոխության, գրում էր նա, «հայ ժողովուրդը բնաջնջման վտանգի չպիտի ենթարկվի»: Իր կուսակցության դիրքորոշումը Շահրիկյանը համարում էր «շրջահայաց»[1]:

Դրա հետ միասին դաշնակցությունը, իր դասակարգային բնազդի թելադրանքով, ցարիզմի ոչնչացումը և Ռուսաստանի առաջադիմությունը համարում էր ռուսահայ ժողովրդի առաջընթացը խթանող հիմնական պայման: Կուսակցությունը չէր կորցնում հավատը, որ հեղափոխությունը, հաղթություն տաներ թե պարտվեր, տևականորեն ազդելու էր Մերձավոր Արևելքի ժողովուրդների ճակատագրի վրա, նպաստելու էր դարավոր նիրհից նրանց արթնացմանը և ազատասիրական ձգտումների ուժեղացմանը:

Այնուամենայնիվ, դաշնակցության գլխավոր հոգսը եղել և մնում էր օսմանյան բռնակալության տակ հեծող Թուրքահայությունը՝ նրա պայքարի համար բարենպաստ պայմաններ ակնկալելու իմաստով:

Նկատենք, որ դաշնակցականների մի ստվար հատված հակված էր նույնքան ակտիվ մասնակցություն ունենալ Ռուսաստանում սկսված հեղափոխությանը, որքան ունեին սոցիալ-դեմոկրատները կամ սոցիալիստ-հեղափոխականները: Նույնիսկ կուսակցության նշանավոր գործիչներից ոմանք բացահայտորեն իրենց անհամաձայնությունն էին հայտնում հեղափոխությանը չմասնակցելու կուսակցության ղեկավարության պաշտոնապես որդեգրած տակտիկային:

Այսպես, քննադատելով դաշնակցության չեզոքության քաղաքականությունը հեղափոխության ընթացքում, Արշակ Ջամալյանն ասում էր. «Բայց չէ՞ որ [Թուրք-հայկական] ընդհարումներից զերծ մնացած վայրերում միջոց

[1] **«Հայրենիք»**, N 11 (191), սեպտեմբեր, 1938, էջ 103:

ունեինք հեղափոխական ակտեր կատարելու: Գուրիացիներն էլ ճնշվեցին, բայց և չդադարեցին ակտիվ գործունեություն վարելուց: Նույնպես և հրեաները: Մեր ... պատճառաբանությունը արդյոք վայե՞լ է մի հեղափոխական կազմակերպության»[1]:

Հեղափոխության օրերին բացառապես ազգային հողի վրա դաշնակցության ծավալած լայնամասշտաբ գործունեությունը հակադրված էր ինտերնացիոնալիստական սկզբունքներով առաջնորդվող հայ բոլշևիկներին: Նպատակների խիստ տարբերությունը, եթե չասենք տրամագծորեն հակառակ լինելը, նրանց կանգնեցրել էր բարիկադների տարբեր կողմերում: Մնկի պարտությունը մյուսի հաղթանակը պիտի լիներ: Հայության զանգվածներ նվաճելու համար նրանց կռիվն անզիջում էր, փոխզիջումը՝ բացառված:

Նկատենք նաև, որ ի հակադրություն Ռուսաստանի, Հայաստանում և Անդրկովկասում բոլշևիկյան կազմակերպությունները ռուսական հեղափոխության ազդեցության տակ չենթարկվեցին պառակտման, ինչպես դա տեղի ունեցավ հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների պարագայում: Ընդհակառակը, հեղափոխությունը նպաստեց նրանց շարքերի է՛լ ավելի համախմբմանն ու ամրապնդմանը: Դրա գլխավոր պատճառն այն էր, որ բոլշևիկյան կուսակցությունն էր հեղափոխության գլխավոր կազմակերպիչն ու ղեկավարը: Հեղափոխությունը հարազատ էր բոլշևիկի ոգուն, դրանից էր նա ստանում իր ուժը:

Ռուսաստանում սկսված հեղափոխությանը Հայաստանում առաջինն արձագանքեցին Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Ալավերդու բանվորները:

Ալավերդին այդ շրջանում, ըստ էության, Հայաստանի արդյունաբերական ամենախոշոր օջախն էր, Ռուսաստանում պղնձի արտադրության խոշոր կենտրոններից մեկը, որտեղ արդյունահանված և ձուլված բարձրորակ արտադրանքն ուներ սպառման լայն շուկա:

1887 թվականին Ալավերդու պղնձահանքերը ռուսական կառավարությունը կապալով հանձնել էր ֆրանսիական կապիտալիստներին: Մինչ այդ ամենադաժան շահագործման ենթարկվող բանվորների վիճակը ֆրանսիացիների օրոք ուղղակի ազետալի դարձավ: Սրանք գիշատչորեն կողոպտում էին պղնձի հարստությունը՝ բնավ չմտահոգվելով արտադրությունն առաջավոր եղանակով կազմակերպելու և բանվորների տաժանակիր աշխատանքն ինչ-որ չափով թեթևացնելու մասին:

1898 թվականին Ալավերդու և Շամլուղի պղնձաձուլական գործարաններն անցան «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերության» ձեռքը, և պղնձի արտադրությունն սկսեց արագորեն մեծանալ: «Ընկերությունը» նախ և առաջ ձեռնարկեց արտադրության վերակառուցմանը և արդյունավետության բարձրացմանը: Այդ նպատակով վերակառուցվեցին

[1] «Նյութեր...», հատ. Գ, էջ 186:

Ալավերդու «Պիրիտիկ-A» և Շամլուղի «Պիրիտիկ-C» գործարանները, միաժամանակ կառուցվեց ժամանակի տեխնիկայով հագեցված «Մանես»* գործարանը: 1900թ. մայիսին «Մանեսը» տվեց առաջին պղինձը, իսկ նույն թվականի հուլիսից սկսեց արտադրանքի կանոնավոր թողարկումը:

Չնայած Ալավերդում և Շամլուղում պղնձի արդյունաբերությունը վարչական տեսակետից ենթակա էր «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերությանը», բայց Հայաստանի և Անդրկովկասի հանքերի ու գործարանների բացարձակ գերակշիռ մասը գտնվում էր օտարերկրյա կապիտալիստների ձեռքում, նրանք էին իրականացնում պատրաստի արտադրանքի արտահանումը Ռուսաստան ու Եվրոպա և ստանում շահույթի առյուծի բաժինը**: Իսկ այդ բաժինը տարեցտարի ավելանում էր պղնձի արտադրության հետ: Միայն 1901թ. Ալավերդու ձեռնարկություններում ձուլվեց 15 անգամ ավելի շատ պղինձ, քան 1898-ին***, այսինքն՝ արտադրվել էր ավելի քան 70 հազար փութ:

Չնայած պղնձահանքերի և պղնձաձուլարանների տեխնիկական նկատելի առաջադիմությանը, Ալավերդու բանվորները, որոնց թիվը 1905-1907-ին հասնում էր 4500-ի, նախկինի պես ենթարկվում էին դաժան շահագործման: Նրանք աշխատում էին անտանելի պայմաններում: Արտադրական ապահովության մասին խոսք անգամ չկար, աշխատանքի ժամանակ հաշմանդամ դառնալիս ոչ մեկը պատասխանատվություն չէր կրում: Հանքերում հաճախակի էին փլվածքները՝ իրենց տակ թողնելով բանվորներին, իսկ ծխի ու մրի մեջ ժանգոտված, պղնձի գույն ստացած, հալոցքի վրա աշխատող բանվորը «կրակի ու հրի առաջ կմախք դարձած՝ կատարյալ ուրվականի էր նմանվում»[1]: Բանվորական օրը հանքերում տևում էր 10 ժամից, իսկ գործարաններում 12 ժամից ոչ պակաս: Հանքափորների մեծ մասն օրական ստանում էր

* Ֆրանսիացի ինժեների անունով:

** Ամբողջ Անդրկովկասում օտարերկրյա կապիտալին էր պատկանում այնտեղ ձուլվող ողջ պղնձի 92%-ը: 1910թ. ֆրանսիական կապիտալիստներն իրենց ձեռքը վերցրին Շահալի-էլիարի հանքերը, 1911թ. նրանց անցան նաև Սյունիքի և Ղաթարի պղնձաձուլական գործարանները Զանգեզուրում: 1912թ. օտարերկրյա կապիտալի ձեռքում էր գտնվում Հայաստանում արտադրվող պղնձի մինչև 84%-ը: (Տե՛ս В. А. Мелконян, Металлургия меди в Армении, Москва, 1955, էջ 59):

*** Պղնձի արտադրությունը մեծ աճ էր արձանագրում նաև Հայաստանի այլ պղնձահանքերում Ղափանի, Սիսիմադանի (Ալեքսանդրապոլի մոտ), Դիլիջանի շրջաններում: Եթե պղնձի ձուլումը Հայաստանում 1886թ. կազմել էր 196 տոննա, 1900թ.՝ 1170, 1903թ.՝ 2301, 1909թ.՝ 4448, ապա 1913թ.՝ 5620 տոննա (տե՛ս В. А. Мелконян, Металлургия меди в Армении, էջ 9, աղյուսակ N 2): Հայաստանի պղնձարդյունաբերությունը 1901-1907թթ. ձուլել է Ռուսաստանի պղնձի մոտ մեկ քառորդը (նույն տեղում, էջ 12): Այսպիսով, Հայաստանի պղնձարդյունաբերության ձեռնարկությունները 20-րդ դարի սկզբին թևակոխել էին կապիտալիստական զարգացման խոշոր մեքենայական արդյունաբերության փուլը և նշանակալից տեղ էին գրավում Ռուսաստանի պղնձարդյունաբերության մեջ:

[1] Ա. Կախոյան, Հոդվածներ և հուշեր, Հայպետհրատ, էջ 60:

55-60 կոպեկ[1], իսկ հալոցքի վրա աշխատողը՝ 80 կոպեկից մինչև մեկ ռուբլի[2]: Աղքատիկ աշխատավարձի մի մասը պահվում էր որպես տուգանք՝ այս կամ այն «մեղքի համար»: Տարբերական կենսապայմաններից զրկված բանվորները 20-25 հոգով ապրում էին գետնախորշերում զրկված լույսից ու ջերմությունից[3]:

Այս պայմաններում պատահական չէր, որ հենց Ալավերդու պղնձահանքերի և գործարանների բանվորները առաջինն արձագանքեցին ռուսական 1905 թվականի հեղափոխության կոչերին: Հեղափոխությունն սկսվելուց ընդամենը երկու ամիս հետո նրանք դուրս եկան բացահայտ պայքարի:

1905թ. հունվարի 9-ի «Արյունոտ կիրակիից» հետո ստեղծված վիճակը օրեցօր սպառնալից կերպարանք էր ստանում: Ֆրանսիական ընկերության ղեկավարությունը տագնապած էր և կանխարգելիչ միջոցներ էր ձեռնարկում:

Փետրվարի 26-ին Ալավերդու պղնձաձուլական գործարանի տնօրենը հետևյալ հեռագիրն է հղում Կովկասի ոստիկանապետին.

«Ֆրանսիական դեսպանը իր կառավարության հանձնարարությամբ խնդրում է պահպանության տակ վերցնել Ալավերդու ֆրանսիական մետաղագործական ընկերությանը պատկանող պղնձահանքերը և պղնձահանքերում աշխատող ֆրանսիացի ծառայողներին:

Հայտնում եմ ի կարգադրություն:

Դիրեկտոր՝ Վուիչ»[4]:

1905թ. մարտի 5-ին Ալավերդու մոտ 1000 բանվորներ, տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գլխավորությամբ, դադարեցրին աշխատանքը և ֆրանսիական մետալուրգիական ընկերության տնօրեն Ռ. Պոլմարին ներկայացրին 27 կետից բաղկացած տնտեսական պահանջներ, այդ թվում աշխատաժամի կրճատում և աշխատավարձի բարձրացում:

Սկզբում Պոլմարը չհամաձայնեց բավարարել բանվորների պահանջները և գործադուլը ճնշելու համար Բորչալուի գավառապետից խնդրեց լրացուցիչ ուժեր, պատճառաբանելով, թե տեղի ոստիկանական ուժերը բավական չեն «կարգը վերականգնելու» համար: Սակայն իշխանությունները չհամարձակվեցին ընդառաջ գնալ այդ խնդրանքին, և բանը չհասավ զինված ընդհարման: Ֆրանսիական ընկերությունը ստիպված էր բավարարել գործադուլավորների պահանջների զգալի մասը և նրանց հետ կնքել պայմանագիր: Միայն դրանից հետո բանվորները մարտի 20-ին վերսկսեցին աշխատանքը:

Շատ չանցած, մետալուրգիական ընկերությունը հրաժարվեց կատարել պայմանագիրը, ավելին՝ չեղյալ հայտարարեց այն: Բանվորները ստիպված նորից դիմեցին գործադուլի, որը տևեց 12 օր: Կնքվեց նոր պայմանագիր, որի կատարումը օր օրի ձգձգվում էր: Բանվորները երրորդ անգամ գործադուլ

[1] Տե՛ս В. А. Мелконян, Металлургия меди в Армении, էջ 4:
[2] Տե՛ս Ա. Կախոյան, Հոդվածներ և հուշեր, էջ 60:
[3] Տե՛ս В. А. Мелконян, Металлургия меди в Армении, էջ 4:
[4] «Հերոսական պայքարի վավերագրեր», էջ 289:

հայտարարեցին, կապիտալիստները այս անգամ էլ խոստումներ տվեցին, որոնք էլի մնացին օդից կախված:

Արդեն նշանավոր դարձած հեղափոխական գործիչ, բոլշևիկ Ստեփան Շահումյանը, որը սովորում էր Բեռլինի համալսարանում, Ռուսաստանում սկսված հեղափոխության օրերին, 1905թ. ապրիլի վերջերին, վերադառնում է Կովկաս: Նա Թիֆլիսում բոլշևիկների հավաքին հաղորդում է սկսված հեղափոխության մեջ ՌՄՌԿ խնդիրների մասին: Թիֆլիսի բոլշևիկները, ըստ էության, Շահումյանին ընդունում են որպես ՌՄՌԿ ղեկավարության ներկայացուցիչը Կովկասում: Նա շրջագայում է երկրամասի տարբեր վայրերում, կազմակերպում հակացարական ելույթներ, ուղղություն տալիս բոլշևիկների տեղական կազմակերպությունների գործունեությանը:

Ծավալելով եռուն գործունեություն՝ Շահումյանը հանդես էր բերում ժողովրդական մասսաների քաղաքական ղեկավարի փայլուն ունակություններ: Հեղափոխության բովում բազմակողմանիորեն դրսևորվում են նրա կազմակերպչական մեծ կարողությունները, տեսաբանի ու հմայիչ հռետորի տաղանդը: Հասարակական ելույթների վերլուծության ընթացքում ցուցաբերած խոր գիտելիքները, շիտակությունն ու անկեղծությունը նրա խոսքը տրամաբանորեն անմիջապես ընկալելի էին դարձնում աշխատավոր լայն զանգվածների համար:

1905թ. Մայիսի 1-ը Ալավերդու բանվորները դիմավորեցին կազմակերպված ցույցերով: Նախօրյակին Ստեփան Շահումյանը եկել էր Լոռի: Հաղպատ գյուղում նա հրավիրել էր տեղի սոցիալ-դեմոկրատական խմբի ժողով, որն ընտրել էր կուսակցական կոմիտե, ինչպես նաև որոշում էր ընդունել լայնորեն նշել Մայիսի 1-ը: Կոմիտեի բոլշևիկ անդամները Շահումյանի հետ մեկնում են Ալավերդի և «Մանես» հրապարակում հրավիրում բազմամարդ միտինգ: Հավաքվածների առջև ճառով հանդես է գալիս Շահումյանը՝ կոչ անելով ձեռնարկատերերին ներկայացնել տնտեսական, իսկ իշխանություններին՝ քաղաքական պահանջներ[1]: Դրանից հետո նա անց է կացնում Բորչալուի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անլեգալ խորհրդակցություն, հանդես գալիս ընդարձակ ելույթով: Խոսելով ռուսական հեղափոխության բնույթի մասին՝ նա ընդգծում է, որ այն բուրժուական է, քանի որ ուղղված է ցարիզմի, ճորտատիրական կարգերի մնացորդների դեմ և անմիջականորեն չի դնում կապիտալիզմի վերացման խնդիրը: Միաժամանակ հեղափոխությունը դեմոկրատական է, քանզի նրա հիմնական շարժիչ ուժերը աշխատավոր մասսաներն են: Շահումյանը նշում էր, որ արևմտաեվրոպական երկրներում հակաֆեոդալական հեղափոխությունները տեղի են ունեցել արդյունաբերական կապիտալիզմի ժամանակաշրջանում, և դրանց ղեկավար ուժը եղել է բուրժուա-

[1] Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 78:

զիան, իսկ ռուսական հեղափոխությունը բռնկվել է պատմական նոր դարաշրջանում, և նրանում ղեկավար դերը կատարում է պրոլետարիատը: Այդ հանգամանքը Շահումյանը համարում էր ռուսական հեղափոխության հսկայական առավելությունը եվրոպական բուրժուական հեղափոխությունների հանդեպ: Դա մի կողմից ապահովում էր դեմոկրատական հեղափոխության լիակատար ու հետևողական կատարումը, մի բան, որը չէր ցանկանում և չէր անում երկչոտ ու ամեն բանում կիսակատար բուրժուազիան եվրոպական ոչ մի հեղափոխությունում, մյուս կողմից՝ տնտեսական ռեֆորմներից մի քանիսի կիրառումը, որոնք կբարելավեն բանվոր դասակարգի դրությունն ապագա բուրժուական Ռուսաստանում և կհեշտացնեն նրա պայքարը հանուն տնտեսական ճնշման լիակատար ոչնչացման, հանուն սոցիալիզմի:

Այդ օրերին տեղի է ունենում Բորչալուի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անլեգալ խորհրդակցությունը, որը Ստ. Շահումյանի առաջարկությամբ ընդունում է հեղափոխական որոշումներ, իսկ վերջում ընտրում է գավառային կոմիտե (Ա. Կախոյան, Ա. Թումանյան, Ս. Էվոյան և ուրիշներ)[1]:

Ալավերդու բանվորների պայքարը շարունակվեց նաև 1905-ի հունիս-հուլիս ամիսներին: Ռուսաստանում հեղափոխության վերելքին զուգընթաց, նրանց մոտ գնալով ուժեղանում էին քաղաքական պայքարի տրամադրությունները: Ձեռք բերելով պայթուցիկ նյութեր ու զենք՝ սոցիալ-դեմոկրատները կազմակերպեցին զինված ջոկատներ և պատրաստվեցին վճռական ելույթի:

Երկարատև և համառ բնույթ էր ստացել հեղափոխական շարժումը նաև Հայաստանի արդյունաբերական մյուս կենտրոններում՝ Ալեքսանդրապոլում և Երևանում:

1905թ. փետրվար-մարտ ամիսներին Երևան քաղաքի ձեռնարկություններում սկսվեց գործադուլային շարժում, որի ղեկավարությունը հենց սկզբից իր ձեռքը վերցրեց ՌՄԴԲԿ Երևանի կազմակերպությունը:

Կազմակերպության մեջ այդ ժամանակ մտնում էին Սարաջևի գործարանում և փոստ-հեռագրական գրասենյակում գործող սոցիալ-դեմոկրատական երկու բջիջներ, երկաթուղում ստեղծված սոց.-դեմ. խումբը, 5-6 աշակերտական բջիջներ և ուրիշ համեմատաբար մանր խմբեր: Այդ բջիջների և խմբերի ամրապնդման ու ընդլայնման ուղղությամբ եռանդուն գործունեություն էին ծավալել Երևանի կազմակերպության հիմնադիր Գեորգի Սոկոլովսկին, Տոմսկի տեխնոլոգիական ինստիտուտից հեռացված և Երևան աքսորված Ալեքսանդր Մալխասյանը և գիմնազիստ Ալավերդովը:

Հաշվի առնելով գնալով թափ առնող հեղափոխական շարժումը երկրում և բուն Երևանում սկսված հուզումները, ինչպես նաև գործող խմբերի ու բջիջների ղեկավարումն ուժեղացնելու անհրաժեշտությունը՝ 1905թ. մարտին

[1] Տե՛ս **Մ. Վ. Արզումանյան**, Ստեփան Շահումյան, «Հայաստան» հրատ, Երևան, 1978, էջ 101:

ստեղծվեց կուսակցության քաղաքային կոմիտե, որի նախագահ ընտրվեց Գեորգի Սոկոլովսկին[1]:

Ապրիլին գործադուլային շարժումն ընդգրկեց Շուստովի և Սարաջևի սպիրտ-կոնյակի գործարանները և մի շարք ուրիշ ձեռնարկություններ: Գործադուլներն անցնում էին կազմակերպված և գնալով վերածվում էին քաղաքական ցույցի:

Երևանի նահանգային ժանդարմական վարչությունը 1905թ. ապրիլի 23-ի թվով զեկուցագիր էր ուղարկել Պետերբուրգ, ոստիկանական դեպարտամենտի հատուկ բաժին, ուր ասված էր. «Մեր ունեցած տեղեկությունների համաձայն քաղաքում գործադուլների գլխավոր կազմակերպիչն է Նախկին ուսանող Գեորգի Նիկոլաևիչ Սոկոլովսկին, որի արտաքսումը Երևանից ցանկալի է, քանզի նա նաև գլխավոր դեմքն է սովորողների շրջանում կազմակերպվող հավաքույթների»[2]:

Գ. Սոկոլովսկու նախաձեռնությամբ լայն աշխատանքներ ծավալվեցին մոտեցող Մայիսի 1-ը նշելու համար: Սպասելիքները գերազանցեցին. բնակիչների մի հոծ զանգվածի մասնակցությամբ առաջին անգամ Մայիսի 1-ը Երևանում նշվեց որպես քաղաքական տոն:

Երևանի բանվորների հեղափոխական տրամադրություններին ծանոթանալու և տեղի սոցիալ-դեմոկրատներին օգնություն ցույց տալու նպատակով մայիսի 11-ին Ալավերդուց այստեղ է գալիս Ստ. Շահումյանը, ուր մնում է երկու օր: Նրա նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ գումարվում է երկաթուղու, գինու - կոնյակի, կաշվի գործարանների ու գիմնազիայի սոցիալ-դեմոկրատական խմբակների ներկայացուցիչների խորհրդակցություն, որտեղ նա հանդես է գալիս «ՌՄԴԲԿ խնդիրները հեղափոխության մեջ» զեկուցումով: Շահումյանը շեշտում էր, որ ցարիզմի տապալումը բոլշևիկներից պահանջում է ոչ միայն քաղաքական գծի ճշտություն, այլև բարձր կազմակերպվածություն, պայքարում հետևողականություն: Ելնելով դրանից՝ նա նշում էր, որ Երևանի բոլոր սոցիալ-դեմոկրատական խմբակները պետք է միավորվեն մի ամուր կազմակերպության մեջ, որը կդառնա նաև Երևանի նահանգում գործող կուսակցական կազմակերպությունների ղեկավար կենտրոն: Հենց խորհրդակցությունում ընտրվում է ՌՄԴԲԿ Երևանի կոմիտե, որի կազմի մեջ են ընդգրկվում Ս. Մալխասյանը, Գ. Սոկոլովսկին, Կ. Ալավերդովը, Վ. Բարժանսկին, Վ. Նինուաշվիլին և ուրիշներ: Կենտրոնը սերտ կապեր է հաստատում Ղամարլուի, Նոր Բայազետի, Նախիջևանի, Գուգարքի և այլ վայրերի հետ, ծավալում լայն գործունեություն: «Ձկար ոչ մի մասսայական ժողով, - գրել է Գ. Սոկոլովսկին, - ո՛չ մի գործադուլ, ոչ մի ցույց, որտեղ չզգացվեր ու չշոշափվեր

[1] **«Հին բոլշևիկների հիշողություններ»**, գիրք առաջին, Երևան, 1958, էջ 101:
[2] **«Մեհոյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907»**, Հոդվածների ժողովածու, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1955, էջ 97:

մեր կազմակերպության ազդեցությունը»[1]: Այդպիսով Շահումյանի ջանքերով հիմք է դրվում Երևանի քաղաքային և նահանգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը, որն ամուր կապեր է հաստատում Թիֆլիսի ու Բաքվի հետ և դառնում ՌՍԴԲԿ կովկասյան միության կարևոր հենակետերից մեկը:

Երևան քաղաքի բոլշևիկների գործողություններն ակտիվացնելու նպատակով 1905թ. ամռանը այդտեղ է գալիս Բոգդան Կնունյանցը: Նրա օգնությամբ կատարվում է քաղաքի սոցիալ-դեմոկրատական խմբակների անդամների հաշվառում, ճշտվում են կազմակերպության ունեցած հնարավորությունները:

Երևանից Թիֆլիս վերադառնալու ճանապարհին Շահումյանը կանգ է առնում Ղարաքիլիսայում (Վանաձոր), ուր մի բազմամարդ ժողովում նվիրված հեղափոխությանը հայերի մասնակցության նպատակահարմարության պարզաբանմանը, բանակովի մեջ է մտնում դաշնակցության նշանավոր գաղափարախոս Գարեգին Խաժակի հետ: Դեպքին մասնակից բանաստեղծ Վահան Տերյանը գրել է. «Կարծես հրաշալի գավազանի զորությամբ դյութված՝ լուռ ու հանգիստ լսում էր... ամբոխը Շահումյանի հանդարտ հոսող ճառը... Կար նրա կեցվածքում, ձայնում, շեշտում, վերջապես, զարմանալի դեմքում անսահման մի գրավչություն, անդիմադրելի մի հմայք...»[2]:

Հայաստանում ռուսական հեղափոխության առաջին արձագանքողներից էին Ալեքսանդրապոլի աշխատավորները, որոնց թվում առանձնահատուկ դերակատարություն ունեին տեղի երկաթուղայինները:

Հայաստանի երկաթուղիներում աշխատող բանվորների թիվն այդ ժամանակ անցնում էր 2 հազարից: Երկաթուղայիններն աչքի էին ընկնում հեղափոխական պայքարի մեծ ակտիվությամբ: Իրենց աշխատանքի բնույթով նրանք շատ բան էին անում հեղափոխական գրականության, սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարածման ուղղությամբ: Երկաթուղայինները մշտական կապ ունեին Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի հետ, այդ քաղաքներում տեղի ունեցող իրադարձություններին ականատես էին լինում անձամբ և, վերադառնալով, ամենայն մանրամասնությամբ իրենց անմիջական տպավորությունները փոխանցում էին տեղի բնակչությանը:

1905թ. մարտի 20-ին աշխատանքը դադարեցրին Ալեքսանդրապոլի դեպոյի բանվորները: Շուտով նրանց միացան Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա գծամասի բանվորներն ու ծառայողները: Գործադուլավորներն իշխանություններին ներկայացրին մի շարք տնտեսական պահանջներ՝ կրճատել աշխատանքային օրվա տևողությունը, բարձրացնել աշխատավարձը, բարելավել բանվորների և ծառայողների կուլտուր-կենցաղային պայմանները:

Երկաթուղային վարչությունը պատասխանեց, որ ներկայացված պահանջներն անընդունելի են, մտածելով, թե, հույսները կտրելով, գործադուլավորները

[1] «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք առաջին, էջ 103:
[2] Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. երկրորդ, Երևան, 1961, էջ 372-373:

չուտով կվերսկսեն աշխատանքը: Բայց բանվորներն ու ծառայողները համառորեն պնդում էին իրենց պահանջների վրա: Ի վերջո, քաղաքում սկսված առաջին գործադուլը վերջացավ անհաջողությամբ. ոստիկանության ճնշման տակ երկաթուղայինները ստիպված անցան աշխատանքի:

Բոլշևիկների բացատրական աշխատանքի հետևանքով երկու շաբաթ անց Ալեքսանդրապոլի երկաթուղայինները կրկին դադարեցրին աշխատանքը: Ամեն օր կայարանում հավաքվում էին մեքենավարները, կոնդուկտորները, դեպոյի վարպետներն ու բանվորները, որոնք առաջադրում էին ոչ միայն տընտեսական, այլև քաղաքական պահանջներ: Բայց այս անգամ էլ նրանք արդյունքի չհասան. գործադուլը վերջացավ պարտությամբ:

Չնայած դրան, Ալեքսանդրապոլի երկաթուղայինների 1905թ. մարտ-ապրիլյան գործադուլները հող նախապատրաստեցին քաղաքում հեղափոխական շարժման հետագա զարգացման համար:

Բանվորական շարժման անմիջական ազդեցության տակ հեղափոխական պայքարը լայն ծավալ ստացավ նաև Հայաստանի գյուղացիության մեջ:

Ինչպես բանվորական զանգվածների, այնպես էլ գյուղացիության հեղափոխականացման գլխավոր պատճառը նրանց տնտեսական ծանր վիճակն էր, սոցիալական թշվառությունը: Ցարական դաժան ռեժիմի և կիսաճորտատիրական կարգերի պայմաններում հայ գյուղացին հազիվ քարշ էր տալիս իր անիծյալ կյանքը:

Հայաստանի գյուղացիներն ամենից առաջ տառապում էին սակավահողությունից: Նրանց բացարձակ մեծամասնությունը հողազուրկ էր կամ լավագույն դեպքում ուներ չնչին հողակտոր: Հողազուրկները կազմում էին գյուղացիական տնտեսությունների 30-35 տոկոսը[1]: Գյուղացիական ամեն մի տնտեսությանը ընկնում էր միջին հաշվով 0,9 հեկտար ցանքատարածություն: Դրան գումարվում էր արոտավայրերից ու անտառներից գյուղացիների զրկված լինելը:

Առանձին գավառներում դրությունն ավելի ծանր էր: Օրինակ՝ Զանգեզուրում ընդամենը 276 հազար հեկտար հողային տարածությունից 134 հազարը պատկանում էր պետությանը, 73,8 հազարը՝ կալվածատերերին ու վանքերին և 68,3 հազարը՝ գյուղացիական տնտեսություններին. այսպիսով, ամբողջ հողերի ավելի քան 75,3 տոկոսը պատկանում էր պետությանը, մելիքներին, բեկերին ու վանքերին, իսկ 24,7 տոկոսը՝ գյուղացիական տնտեսություններին[2]: Այսինքն՝ գյուղացիական ամեն մի տնտեսությանը ընկնում էր միջին հաշվով 0,49 հեկտար:

Կալվածատերերի և գյուղացիների միջև ընկած էր մի վիթխարի վիհ, որը

[1] Տե՛ս О. Е. Туманян, Экономическое развитие Армении, часть I, Ереван, 1954, էջ 213:
[2] Տե՛ս Ար. Մարուխյան, Գյուղացիության դրությունը նախասովետական Հայաստանում, Երևան, 1948, էջ 15:

պայմանավորված էր նրանց սոցիալական հակադիր դրությամբ: Ամենուրեք սակավահողությունից տառապող աշխատավոր գյուղացիության կողքին մի շարք կապիտալիստներ ու կալվածատերեր՝ Արամյանը, Բարաթովը, Իսկանդար բեկը, Ղալումյանները, Աղամովը, Մատուրովը, Աղամալովները, Գեղամովները, Սուլթանովը, Վեքիլովը և ուրիշներ իրենց ձեռքում կենտրոնացրել էին հազարավոր հեկտար հողային տարածություններ[1]:

Այլ ելք չունենալով՝ գյուղացին ստիպված կալվածատիրոջից հող էր վարձակալում կամ նրա մոտ բատրակություն էր անում մի կտոր հաց վաստակելու, իր ընտանիքի գոյությունը մի կերպ պահելու համար: Թեպետ նա կալվածատիրոջ մոտ աշխատում էր իր ողջ ընտանիքով՝ անգամ մանկահասակ երեխաներով ու ծերերով, բայց նրա տնտեսական վիճակը դյուզն անգամ չէր փոխվում[2]:

Գյուղացիները դաժան շահագործման էին ենթարկվում ոչ միայն կալվածատերերի, այլև կապալառուների և վաշխառուների կողմից: Նրանք փրկություն չունեին հատկապես վաշխառուներից, որոնց համար բարեբախտություն էր, երբ տարին երաշտ կամ անբերրի էր լինում, երբ գյուղացուն որևէ անակնկալ ձախորդություն էր պատահում: «Բավական է միայն, որ մանր գյուղացու կովը սատկի,- գրել է Կ. Մարքսը,- և ահա նա այլևս անկարող է իր վերարտադրությունը հին մասշտաբով վերսկսելու: Սրանով նա ընկնում է վաշխառուի ճանկը, իսկ մի անգամ նրա ճանկն ընկնելով՝ այլևս երբեք չի ազատվում»[3]:

Գյուղացիներից շատերը հաճախ պարտքի դիմաց գրավ էին դնում իրենց բաժնեհողը, բայց տարիներ շարունակ, չկարողանալով մարել պարտքը, ստիպված էին լինում հողը հանձնել վաշխառուին:

Ուսումնասիրելով Զանգեզուրի գյուղացիության տնտեսական դրությունը՝ Սիմոն Զավարյանը նշում էր, որ սովորաբար գյուղացիները ստիպված վաշխառուից պարտք էին վերցնում շատ բարձր՝ 20-30 տոկոսով, բայց սովի տարիներին, Թուրք-հայկական ընդհարումներից առաջացած տնտեսական քայքայման պայմաններում և այլ արհավիրքների ժամանակ, նրանք, սովից փրկվելու ուրիշ ելք չունենալով, պարտք էին վերցնում նույնիսկ 50 և ավելի տոկոսով: Թե ինչ էր լինում դրա հետևանքը, Զավարյանը նկարագրել է Գորիսի շրջանի Քարահունջ գյուղի մի գյուղացու օրինակով, որը հինգ տարի առաջ (1902թ.) «ընդունված պայմանով» վաշխառուից պարտք էր վերցրել 50 ռուբլի: Ժամանակին պարտքը չվճարելու հետևանքով գումարը աճում է, գյուղացին մինչև 1907թ. վճարում է 50ռ., տալիս է իր ունեցած երկու եզը, 21 փութ ցորենը և գրավ է դնում իր երկու դեսյատին հողը: Պարտապանը մահացել էր, իսկ նրա որդին վաշխառուին ուներ տալիք 50ռ., որի տոկոսների դիմաց նրա 22-ամյա

[1] Տ. Գ. Աղայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907թթ., ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1955, էջ 180-181:
[2] Տե՛ս Աբ. Մարուխանյան, Հայաստանի գյուղացիության պայքարը հողի համար, Երևան, 1955, էջ 12:
[3] Կ. Մարքս, Կապիտալ, հատ 3, մաս 2, Պետհրատ, Երևան, 1949թ., էջ 142:

կրտսեր եղբայրը առանց հատուցման աշխատում էր պարտատիրոջ մոտ[1]:

Սկիզբ առնելով երկաթուղային գծերին մոտ գտնվող գյուղերից՝ գյուղացիական հուզումներն ընդգրկեցին Հայաստանի բազմաթիվ շրջաններ՝ հատկապես Երևանի նահանգում և Կարսի մարզում:

Ինչպես բանվորական, նույնպես և գյուղացիական հակացարական պայքարը Հայաստանում հիմնականում մղվում էր բոլշևիկների գլխավորությամբ: Գյուղացիական շարժման մեջ Հայաստանի բոլշևիկները հիմնականում առաջնորդվում էին Ստեփան Շահումյանի և Սուրեն Սպանդարյանի հոդվածներում ու ելույթներում առաջ քաշված խնդիրներով:

Իր դժվարին պայքարում Ռուսաստանի պրոլետարիատը միայնակ չէ, - գրում էր Շահումյանը: - Նրա բնական դաշնակիցը շահագործվող մյուս դասակարգն է՝ գյուղացիությունը, որը և հեղափոխության կարևոր շարժիչ ուժերից մեկն է: Գյուղացիական հարցին էին նվիրված Շահումյանի մի շարք հոդվածներ՝ «Ներկա մոմենտը», «Գյուղացիական շարժում», «Սովը մոտենում է», «Ապարդյուն ջանքեր» և այլն: Նա մանրամասն լուսաբանում էր կալվածատիրական կարգերի նկատմամբ հայ գյուղացիության ունեցած ատելության պատճառները, անդրադառնում նրա պայքարի հնարավոր հետևանքներին, բացատրում բոլշևիկյան կազմակերպությունների անելիքները գյուղում: Հոդվածներից մեկում Շահումյանը գրում էր. «Ամեն տեղ ձրիակեր ազնվականության և բարբարոս բյուրոկրատիայի ճնշումների ու կեղեքումների դարավոր զոհը՝ սովի ու թշվառության ճիրաններում տանջվող ռուս գյուղացիությունը, սթափվում է իրեն կաշկանդող ծանր հիպնոսից»[2]: Աշխատավոր գյուղացիությունը պայքարի է ելել, և պայքարն ուղղված է կալվածատիրական հողատիրության դեմ հանուն ագրարային հարցի արմատական լուծման: Վիթխարի հեղափոխական ներուժ ունեցող «արթնացած հսկան» հրապարակ է իջել իր վճռական խոսքն ասելու և անպայման կասի: Թեև ոչ միայն կառավարությունն ու ազնվականությունը, այլև բուրժուական լիբերալները ձգտում են իրենց «խնամակալության տակ առնել, զսպել և չափավորել գյուղացիական շարժումը», սակայն այդ բանն առայժմ նրանց չի հաջողվում, որովհետև գյուղացիներն արդեն «սկսում էին գիտակցել, որ իրենց միակ, հավատարիմ դաշնակիցը, իրենց թշնամիների անհաշտ թշնամին բանվոր դասակարգն է»[3]: Շահումյանն աներեր հավատ ուներ, որ գյուղացիությունը իր հիմնական դաշնակցի օգնությամբ արմատական լուծում է տալու ագրարային հարցին: Մի այլ հոդվածում նա նշում էր. «Ռուս գյուղացիությունը, քաղաքների հեղափոխական պրոլետարիատի հետ... վաղը, մյուս օրը... ուռքի կկանգնեն և կփշրեն իրենց կաշկանդող ծանր շղթաները, կոչնչացնեն իրենց դահիճներին և

[1] Տե՛ս С. Заварян, Экономические условия Карабага и голод 1906-1907гг.,С-Петербург, 1907, էջ 59:
[2] Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 199:
[3] Նույն տեղում, էջ 200:

կստեղծեն ազատ քաղաքական կարգեր, որոնք այլևս անկարելի կդարձնեն այն դժոխային կացությունը, որի անունն է ստրկություն և մշտնջենական սով, սով և սով»[1]: Շահումյանը դիմում էր հայ գավառական ինտելիգենցիային, և հայ գյուղացիության գիտակից մասին. «Արթնացրե՛ք մասսաներին, կազմակերպեցե՛ք, համախմբեցե՛ք նրանց առանց ազգի ու կրոնի խտրության հեղափոխական բանակի շուրջը, կռվելու Ռուսաստանի գյուղացիության ընդհանուր լոզունգով: Որքան մեծ լինի ուժը, այնքան մոտ կլինի հաղթությունը, այնքան շուտ կլինի վախճանը ամեն մի պրովոկացիայի, ամեն մի կուտորածի, ամեն մի ասիական շահագործության - բեգերի, աղալարների և ամեն մի լրբության - ինքնակալության ստրուկ չինովնիկների»[2]:

Գյուղացիական շարժումը Հայաստանի բոլշևիկների կողմից ճիշտ ղեկավարելու հարցերին էին նվիրված Ս. Սպանդարյանի «Ինքնակալությունն ու գյուղացիությունը» և «Մեր դերը գյուղում» հոդվածները, որոնցում նա մանրամասն շարադրում էր հեղափոխության ընթացքում Հայաստանի բոլշևիկների առաջնահերթ անելիքները գյուղում: «Ագրարային հարցն այժմ ամենակարևոր, ամենահրատապ հարցերից մեկն է և իր վրա գրավել է բոլոր քաղաքական կուսակցությունների լուրջ ուշադրությունը: Այն մեծ պատմական դեպքերում, որ վրդովում են ամբողջ երկիրը, այն օրհասական կռվում, որ մղում է ժողովուրդը բռնակալ ռեժիմի դեմ - գյուղացիությունը կատարում է և կկատարի ահագին և վճռական դեր»[3]:

Հայաստանի գյուղացիության հեղափոխական պայքարը կազմակերպելու և բանվորների պայքարի հետ այն շաղկապելու համար եռանդուն աշխատանքի էին լծվել ՌՄԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեն և տեղի բոլշևիկյան կազմակերպությունները:

1905թ. մարտի 19-ին կովկասյան միութենական կոմիտեն հանդես եկավ հայ գյուղացիներին ուղղված կոչով: Նշելով, որ 1861 թվականի գյուղացիական ռեֆորմից հետո էլ հայ գյուղացիները շարունակում են ենթարկվել բեգերի, խաների, կալվածատերերի, վաշխառուների ու կապալառուների դաժան շահագործմանը, կոմիտեն նրանց կոչ էր անում հետևել իրենց դասակարգային եղբայրների՝ Ռուսաստանի, Գուրիայի, Իմերեթիայի, Մեգրելիայի գյուղացիների օրինակին և նրանց նման կռվի ելնել ցարական բռնակալական ռեժիմի դեմ: Կոչում մասնավորապես ասված էր. «Թող ոչնչացվի կայսրի կառավարությունը և նրա փոխարեն ընտրվի ժողովրդական կառավարություն: Դեմոկրատական հանրապետություն - ահա ինչ ենք պահանջում մենք: ... Ուրեմն հառաջ, հայ գյուղացիներ: Միացեք քաղաքների բանվորների հետ, դիմեցեք դեպի դեմոկրատական հասարակապետություն, միասին արմատախիլ անենք

[1] *Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 220:*
[2] *Նույն տեղում, էջ 210:*
[3] *Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1939, էջ 79:*

ստոր բռնակալությունը...»[1]:

Բոլշևիկների լարված աշխատանքը անհետևանք չէր անցնում: Հայ գյուղացիությունը նույնպես սկսեց շարժվել, թեև նրա ելույթները առայժմ հիմնականում տարերային էին և կրում էին առանձին ընդհարումների բնույթ:

Գյուղացիները տարբեր ձևերով էին արտահայտում իրենց դժգոհությունը տիրող կարգերից: Նրանք հրաժարվում էին հարկեր և պարհակներ վճարելուց, չէին կատարում իշխանությունների հրամաններն ու կարգադրությունները, տեռորի էին ենթարկում ատելի կալվածատերերին, հարկահավաքներին ու պետական չինովնիկներին, հրկիզում էին հարուստների ունեցվածքը, բռնագրավում և իրար միջև բաժանում էին կալվածատիրական, վանքապատկան, արքունական վարելահողերը, արոտավայրերն ու անտառները, զինված դիմադրություն էին ցույց տալիս ոստիկանությանն ու զորքին:

1905թ. մարտին Ալեքսանդրապոլի գավառի Շորագյալ (այժմ Շիրակ) գյուղի գյուղացիները նախապատրաստվում էին հարձակում գործել և գրավել մոտերքում գտնվող Կարակալայի արքունական կալվածքը: Կալվածատերերի հողերը գրավելու մտադրություն էին դրսևորում Աշոգքի Շիշթափա (այժմ Սեպասար), Բորչալուի գավառի Ղոթուրբուլաղ (այժմ Ստեփանավանի շրջանի Կաթնաղբյուր) և ուրիշ գյուղերի գյուղացիները: Նախապես տեղեկանալով՝ իշխանությունները կարողանում են կանխել սպասվող ելույթները՝ «վտանգավոր» գյուղեր ուղարկելով կազակային ուժեր:

Ապրիլի կեսերին Այրումի (Թումանյանի շրջան) գյուղացիներն ըմբոստացել էին կալվածատեր իշխան Մահալովի դեմ: Թիֆլիսի նահանգապետին ուղարկած հեռագրում կալվածատերը գրում էր. «Այրում գյուղի գյուղացիները խռովություն են բարձրացրել, տեղի է ունենում հրացանաձգություն նրանց և իմ մարդկանց միջև: Խնդրում եմ աջակցություն»[2]:

Նահանգապետը կատարեց Մահալովի խնդրանքը. առանձին կալվածքներում և գյուղերում տեղակայվեցին զինվորական պոստեր:

Հեղափոխական շարժումն ընդգրկեց նաև Հայաստանում տեղակայված զորամասերը: «Զորքը սկսում է տատանվել իր հավատարմության մեջ և ուզում է «օգնել գյուղացիներին և բանվորներին»»[3], - գրում էր Ստ. Շահումյանը:

Կայազորային մեծ միավորներ կային Ալեքսանդրապոլում, Կարսում, Երևանում և Հայաստանի ուրիշ քաղաքներում: Առավել մեծ զինվորական կայազորը գտնվում էր Ալեքսանդրապոլում:

Ցարական կառավարությունը հատուկ ուշադրություն էր դարձնում Կովկասում տեղակայված իր զորքերի վրա, քանի որ, նախ, այդտեղ նա իրականացնում էր իր գաղութային քաղաքականությունը՝ հենվելով բանակի ուժի

[1] *«Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907», էջ 231:*
[2] *ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 34, ց.1, գ.1046, թ.79:*
[3] *Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 202:*

վրա, ապա՝ այդ բանակը մշտապես պատրաստ պետք է լիներ, պահը ներկայանալիս, իրականացնել Միջերկրականի ափեր դուրս գալու վաղեմի երազանքը:

Բացի հեղափոխության ընդհանուր պատճառներից, ցարական բանակի զինվորներին դեպի ըմբոստացում էր մղում նաև իրենց, որպես անձնավորությունների, ծանր վիճակը:

Զինվորների դրությունն անտանելի էր: Զորանոցային կյանքը նրանց դարձնում էր հլու-հնազանդ մարդ-մեքենա, հարկադրում կատարել սպաների բոլոր պահանջները: Հրամանատարը ամեն մի առիթով ոտնահարում էր զինվորի մարդկային արժանապատվությունը: Ծեծը, պատիժը, բանտարկությունը նրա մշտական ուղեկիցներն էին: Շարքային զինվորները զրկված էին քաղաքական ամենատարրական իրավունքներից:

Բանակի հրամանատարությունը, դրաքննչական մարմինները խստորեն հետևում էին, որպեսզի հեղափոխական բովանդակության գիրք կամ թերթ չթափանցեն զորանոցային պատերից ներս: Սակայն, չնայած ձեռնարկած միջոցներին, հնարավոր չեղավ բանակը հեռու պահել հեղափոխական գաղափարներից:

Սոցիալ-դեմոկրատիան ներթափանցում էր բանակ իր հզոր զենքով՝ քաղաքական ագիտացիայով: Զորամասերում հեղափոխական աշխատանք էին ծավալում ոչ միայն ս.-դ. կազմակերպությունները, այլև Ռուսաստանի կենտրոնական քաղաքներից Հայաստան եկած և հեղափոխական տրամադրություններով համակված զինվորականները:

ՌՄԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեն և նրա տեղական կազմակերպությունները եռանդուն աշխատանք էին տանում բանակային զորամասերում: Անդրկովկասում տեղակայված խոշոր զորամասերում ստեղծվեցին ՌՄԴԲԿ զինվորական խմբեր ու կազմակերպություններ, նաև՝ զինվորական խորհուրդներ: 1905-1906թթ. Ալեքսանդրապոլի կայազորում գործում էր բոլշևիկյան ուժեղ խմբակ, որի շուրջ 150 անդամները կայազորի տարբեր գնդերից էին[1]: Խմբակն ուներ գաղտնի տպարան, ուր տպագրվում էին թռուցիկներ ու կոչեր, որոնք տարածվում էին զորքի մեջ և քաղաքում: Այդտեղ էին տպագրվում նաև Կարսի, Սարիղամիշի, Արդահանի և զինվորական այլ կայազորների զինվորական խորհուրդների կողմից պատրաստված կոչերն ու թռուցիկները, որոնք զանազան ճանապարհներով ստացված բոլշևիկյան կուսակցության «Вперед», «Пролетарий», «Рабочий», «Новая жизнь» կենտրոնական թերթերի հետ մտնում էին զորանոցներ և այնտեղ գտնում պարարտ հող:

ՌՄԴԲԿ կովկասյան միության նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ 1905թ. ամռանը Անդրկովկասում ստեղծվեց բանակի շարքային զինվորների գծով զինվորների անդրկովկասյան միությունը: Միաժամանակ Թիֆլիսում սկսեց հրատարակվել կովկասյան միութենական կոմիտեի օրգան «Голос казармы» («Զորանոցի ձայն») թերթը, որի էջերում բոլշևիկները զինվորներին

[1] «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907», էջ 111:

կոչ էին անում չկրակել բանվորների ու գյուղացիների վրա, միանալ ապստամբ ժողովրդին և վճռական պայքարով վերջ տալ իրենց ստրկական վիճակին:

Այդ ամենն անհետևանք չէր անցնում: 1905թ. ամռանը եռում էին զինվորական զորանոցները: Շարքային զինվորները, առանց հրամանատարների գիտության և հաճախ էլ հակառակ նրանց կամքի, հավաքվում էին ժողովների, անցկացնում միտինգներ, ուր առաջ էին քաշում իրենց պահանջները: Այդպիսի ժողովներ ու միտինգներ տեղի ունեցան Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ախալքալաքում, Ախալցխայում, Երևանում: Զինվորները պահանջում էին հրավիրել սահմանադիր ժողով, վերացնել մշտական բանակը և նրա փոխարեն ստեղծել ժողովրդական միլիցիա, տալ խոսքի, մամուլի, ժողովների ազատություն, բացառել հրամանատարների կողմից շարքային զինվորների նկատմամբ ունեցած անմարդկային վերաբերմունքը, բարելավել սնունդի որակը, զինվորներին ազատել ոստիկանական-պատժիչ ծառայություն կատարելուց, թույլ տալ հաճախելու մշակութային օջախներ և այլն:

Զորքերի հրամանատարները, որպես կանոն, մերժում էին ներկայացված պահանջները, և դա ավելի էր գրգռում զինվորական մասսային: Ավելի ու ավելի հաճախակի էին դառնում դեպքերը, երբ զինվորները, չկատարելով սպաների հրամանը, հրաժարվում էին կրակել միտինգավորների, ցուցարարների, գործադուլավորների վրա, իսկ առանձին դեպքերում նույնիսկ անցնում էին նրանց կողմը: Գնալով թուլանում էր զինվորական կարգապահությունը, հաճախակի էին դառնում բանակից փախչելու և ներքին կանոնադրությունը խախտելու այլ դեպքեր[1]:

Զինվորական հուզումներին մեծապես նպաստեցին ռուս-ճապոնական պատերազմում ռուսական զորքերի կրած ծանր պարտությունները, 1905թ. հունիսին սևծովյան նավատորմի «Պոտյոմկին» զրահանավի անձնակազմի ապստամբությունը:

Հեղափոխության վերելքն ընթանում էր ցարական զորքի և ոստիկանության կողմից իրականացվող հաշվեհարդարների պայմաններում: Հակահեղափոխությունը մոլեգնում էր նաև Կովկասում: Բոլշևիկյան ղեկավարությունը տագնապում էր դաժան գործողությունների առիթով: Զուր չէ, որ ՌՄԴԲԿ III համագումարը (Լոնդոն, 12-17 ապրիլի 1905թ.) ընդունել էր հատուկ բանաձև՝ Կովկասում տեղի ունեցող դեպքերի առթիվ: Բանաձևում ասվում էր. 1) Կովկասի սոցիալ-քաղաքական կյանքի հատուկ պայմանները մեծապես նպաստել են այնտեղ ՌՄԴԲԿ առավել մարտունակ կազմակերպության ստեղծմանը, 2) Հեղափոխական շարժումը Կովկասի բնակչության մեծ մասի շրջանում ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում, արդեն վերաճել է ինքնակալության դեմ համազգային ապստամբության, 3) Միապետական կառավարու-

[1] Տե՛ս Հ.Ա. Խաչակյան, ՌՄԴԲԿ կենտրոնական մամուլը և Անդրկովկասը (1901-1917թթ.), Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1971, էջ 263:

թյունն արդեն զորք և հրետանի է ուղարկում Գուրիա՝ նպատակ ունենալով ամենադաժան միջոցներով ճնշել ապստամբության բոլոր կարևորագույն օջախները, 4) Կովկասում ժողովրդական ապստամբության դեմ ինքնակալության հնարավոր հաղթանակը, որը կարող է հեշտանալ տեղի բնակչության բազմացեղ կազմի պատճառով, կունենա ամենաողբերգական հետևանքներն ամբողջ Ռուսաստանում ապստամբության հաջողության համար: Ելնելով այդ ամենից՝ համագումարը որոշել էր. «Ռուսաստանի գիտակից պրոլետարիատի անունից ՌՍԴԲԿ III համագումարը հղում է ջերմագին ողջույն Կովկասի հերոսական պրոլետարիատին ու գյուղացիությանը և հանձնարարում է կուսակցության կենտրոնական և տեղական կոմիտեներին՝ ձեռնարկել ամենաեռանդուն միջոցներ Կովկասում տիրող դրության մասին տեղեկություններ հայթայթելու և լայնորեն տարածելու բրոշյուրների, միտինգների, բանվորական ժողովների, խմբական զրույցների և այլնի միջոցով, ինչպես նաև ժամանակին աջակցել Կովկասին՝ իրենց ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով»[1]:

1905թ. երկրորդ կեսից հեղափոխության ալիքը գնալով նոր թափ էր առնում տարածվելով նաև լայնությամբ՝ ամբողջ Ռուսաստանով մեկ, այդ թվում նաև Անդրկովկասում:

Ինչպես արդեն նշվել է աշխատության առաջին գրքում, հեղափոխության հաղթանակի հեռանկարից սարսափած՝ հոկտեմբերի 17-ին ցարը ստորագրեց մանիֆեստ, որով ժողովրդին խոստանում էր օրենսդրական դումա, դեմոկրատական ազատություններ (խոսքի, մամուլի, ժողովների և այլն) և բարգավաճում:

Առաջին իսկ օրից բոլշևիկները լայն գործունեություն ծավալեցին մանիֆեստի դեմ, ցույց տալով, որ այն հրապարակ է նետվել շեղելու համար բռնատիրական կարգերը տապալելու նպատակով վճռական կռվի ելած միլիոնավոր զանգվածների ուշադրությունը:

Այդ օրերին Ստ. Շահումյանը գտնվում էր Թիֆլիսում և կովկասյան միութենական կոմիտեի ղեկավար գործիչների հետ ուղղություն էր տալիս դեպքերի ընթացքին երկրամասում: Հոկտեմբերի 19-ին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն հրատարակեց «Բոլոր բանվորներին» կոչը, որտեղ շեշտվում էր, թե «աշխատավոր ժողովուրդը չի կարող իր հույսը դնել ցարական ողորմածության վրա, այլ պետք է հենվի սեփական ուժերին և ազատագրվի իր ձեռքով»[2]:

Հոկտեմբերի 19-21-ը Թիֆլիսում տեղի ունեցան բազմամարդ ցույցեր, որոնց մասնակցում էին նաև հազարավոր հայ բանվորներ, արհեստավորներ, զինվորներ[3]: Հուժկու ելույթների գլուխ էին կանգնած բոլշևիկները: Շահումյանը ցույցերի ղեկավարներից մեկն էր: Նա ելույթներով հանդես էր գալիս

[1] "КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК", часть I, Госполитиздат, Москва, 1954, стр.84.
[2] *Տե՛ս* "**Листовки Кавказского союза РСДРП 1903-1905гг.**", М., 1958, *էջ 413 - 414.:*
[3] *Տե՛ս* "**Всероссийская политическая стачка в октябре 1905 года**". часть вторая, изд. Академии наук СССР, Москва - Ленинград, 1955, *էջ 262-265:*

ցուցարարների առջև, կոչ անում տապալել պետական կարգը[1]:

Ցարական մանիֆեստի դեմ վճռականորեն հանդես եկան նաև Հայաստանի աշխատավորների զգալի զանգվածներ: Նրանց գործողություններին ուղղություն տվող բոլշևիկյան կազմակերպություններից մեկի կողմից հոկտեմբերի 22-ին տպագրված ու տարածված թռուցիկներից մեկում աշխատավորությանը կոչ էր արվում չնահանջել պայքարի ուղուց: Նրանում ասված էր. «...Կառավարությունը, որ մինչև այդ երկիրը կառավարելու ժողովրդի բոլոր ցանկություններին պատասխանում էր գնդակներով ու աքսորով, այժմ, որպես մեծագույն ողորմածություն, նույն ժողովրդին առաջարկել է կիսատ-պռատ մի «սահմանադրություն»: Բայց ժողովուրդը այն կորզել է իր ուժով, որն այս օրերին հիմքից ցնցում է ողջ Ռուսաստանը: ...Խեղդվող միապետությունը, որ մահվան գալարումների մեջ է, դեռ փրկության հույսեր է փայփայում, բայց նրա դեմ ապստամբել է ողջ Ռուսաստանը, որը գոչում է. «Թող կորչի՛ ցարի ողորմածությունը, կեցցե՛ հեղափոխությունը»»[2]:

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը նոր գործադուլով դիմավորեց Ալավերդու շրջանի բանվորությունը: Հունիս-հուլիս ամիսների գործադուլից հետո լարված վիճակը աշնանը շարունակվում էր հանքերում և պղնձաձուլարաններում:

1905թ. նոյեմբերի 20-ին «Մանես» գործարանի բանվորները հայտարարեցին գործադուլ և ադմինիստրացիայից պահանջեցին կյանքի կոչել մարտ ամսին կնքած կոլեկտիվ պայմանագիրը: Հաջորդ օրը նրանց միացան «Պիրիտիկ» գործարանի բանվորներն ու ծառայողները: Գործադուլների անվտանգությանը հսկում էին նրանց իսկ ստեղծած զինված ջոկատները: Բանվորներին օգնության եկան և նրանց միացան հարևան գյուղերի մեծ թվով բնակիչներ:

Նոյեմբերի 21-ին գործադուլային շարժումը բոլշևիկների և մենշևիկների ղեկավարությամբ դարձել էր համընդհանուր՝ ընդգրկելով գործարանային և լեռնահանքային արդյունաբերական ողջ համալիրը: Բանվորները ցույցի էին դուրս եկել կարմիր դրոշներով, բազմաթիվ պաստառներով, որոնց վրա գրված էին՝ «Կորչի՛ ցարը», «Կեցցե՛ Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատը», «Կեցցե՛ հանրապետությունը» և այլ քաղաքական լոզունգներ: Հանդես գալով ելույթներով՝ թե՛ բոլշևիկ և թե՛ մենշևիկ գործիչները մերկացնում էին ցարական բռնապետական կարգերը, գործադուլավորներին կոչ էին անում վճռական ու անզիջում լինել սկսված պայքարում:

Բանվորների պայքարի ղեկավարումն ավելի նպատակասլաց դարձնելու համար սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների և մենշևիկների նախաձեռնությամբ ստեղծվեց գործադուլային կոմիտե, որի կազմի մեջ մտան բանվորներ Վլադիմիր Ջելիձեն, Սերգո Փիրուզյանը, Մեխակ Ադամյանը, Միրզա Կաֆարը և ուրիշներ: Այդ օրերին Ալավերդում գտնվող ականավոր հեղափոխական բոլշևիկ

[1] *Տե՛ս* **Ի. Դուբինսկի-Մուխաձե, Շահումյան**, «Հայաստան» հրատ., Երևան, *1974, էջ 94:*
[2] ***«Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907»***, *էջ 90-91:*

Մելիք Մելիքյանի և ՌՍՖՍՀ կովկասյան միութենական կոմիտեի Լոռու կուսակցական կազմակերպությանն ամրացրած պրոպագանդիստ-կազմակերպիչների հետ գործադուլային կոմիտեն կազմեց բանվորների՝ 22 կետից բաղկացած պահանջները[1] և ներկայացրեց ադմինիստրացիային: Պահանջների թվում էին՝ հաստատել 8-ժամյա բանվորական օր, աշխատավարձն ավելացնել 20%-ով, վերացնել տուգանքները, բանվորներին ապահովել համազգեստով, մտցնել ձրի բուժսպասարկում, հեռացնել առավել դաժան չինովնիկներին ու ադմինիստրատորներին և այլն[2]:

Գործադուլավորների թիվը հասավ 3000-ի՝ հայեր, ռուսներ, կովկասյան թուրքեր, պարսիկներ, վրացիներ, հույներ և այլք: Հանքերի և գործարանների վարչությունները հարկադրված եղան ընդունել բանվորների գրեթե բոլոր պահանջները, բացի 8-ժամյա բանվորական օրվա պահանջից: Այսպիսով, 5-օրյա գործադուլն ավարտվեց լիակատար հաղթանակով:

Հոկտեմբերյան քաղաքական գործադուլին անմասն չմնացին ալեքսանդրապոլցիները: Ամռան ամիսները Ալեքսանդրապոլում համեմատաբար խաղաղ էին անցել, բայց դրությունը կտրուկ փոխվեց հոկտեմբեր-նոյեմբերին:

Բոլշևիկների տեղի կազմակերպության ղեկավարությամբ Ալեքսանդրապոլի երկաթուղայինների ներկայացուցիչները հավաքվելով խորհրդակցության՝ որոշեցին միանալ երկաթուղայինների համառուսաստանյան ընդհանուր գործադուլին:

Հոկտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլ-Կարս գծամասի բանվորներն ու ծառայողները դադարեցրին աշխատանքը: Ստեղծվեց գործադուլային կոմիտե, որի անդամների մեծ մասը բոլշևիկներ էին: Կոմիտեն մշակեց 18 կետից բաղկացած պետիցիա, որը ներկայացվեց երկաթուղու ղեկավարությանը, նաև հատուկ թռուցիկով տարածվեց քաղաքում:

Հոկտեմբերի 15-ից երկաթուղու Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուլֆա և Ալեքսանդրապոլ-Կարս գծամասերի վերահսկողությունը փաստորեն գտնվում էր բոլշևիկների ձեռքում:

Ոչ միայն երկաթուղու գծամասերում, այլև քաղաքում վիճակը շարունակում էր լարված մնալ հոկտեմբերի երկրորդ կեսին և ամբողջ նոյեմբեր ամսվա ընթացքում:

Հոկտեմբերի 28-ին Ալեքսանդրապոլի երկաթուղային կայարանում հավաքվել էր ավելի քան 2 հազար մարդ, որպեսզի հանդիպեն այն 35 բոլշևիկներին, որոնք Կարս էին վերադառնում աքսորավայրից: Հանդիպումը վերածվեց վիթխարի ցույցի: Ելույթ ունեցողները ողջունում էին հեղափոխական մարտիկներին և երդվում հետևել նրանց: Ցուցարարների գլխավերևում ծածանվում էին կարմիր դրոշներ[1]:

Մի քանի օր հետո բոլշևիկները քաղաքում մեծ միտինգ կազմակերպեցին, որին մասնակցում էին երկաթուղային դեպոյի և վերանորոգման արհեստանոցների բանվորները, մեծ թվով քաղաքի բնակիչներ, ինչպես նաև Կարսից եկած մի քանի տասնյակ երկաթուղայիններ: Միտինգից հետո բոլշևիկների խորհրդով բանվորներն սկսեցին զինվել և պատրաստվել դիմադրության, եթե ոստիկանությունը և զորքը փորձ անեն զենք գործածել:

1905թ. հոկտեմբերի վերջին և նոյեմբերին գյուղացիական շարժումը երկրում հսկայական չափեր ընդունեց: Կալվածատերերի դեմ գյուղացիների պայքարը աստիճանաբար վերաճում էր ինքնակալության դեմ քաղաքական պայքարի: Դա հատկապես առավել ուժգնությամբ արտահայտվում էր Ռուսաստանի կենտրոնական սևահողային նահանգներում, Պոլոլիթեում, Մերձբալթիկայում, Ուկրաինայում, Վրաստանում: Մի շարք շրջաններում գյուղացիական շարժումը վերածվում էր զինված պայքարի[2]:

Նախորդ ամիսների համեմատ՝ գյուղացիական շարժումը ավելի կազմակերպված էր ընթանում Հայաստանում, որը գերազանցապես հետևանք էր բոլշևիկների թափած ջանքերի: Գյուղերի բոլշևիկյան խմբերը հատուկ ուշադրություն էին դարձնում գյուղացիական հեղափոխական կոմիտեների ստեղծմանը: Այդպիսի կոմիտեներ էին գործում, օրինակ, Բորչալուի գավառի Ծաթեր, Ակներ, Վարդաբլուր, Կուրթան, Ջալալօղլի և ուրիշ գյուղերում: Կոմիտեները սերտ կապեր էին հաստատել Ալավերդու հանքերի ու գործարանների բանվորների հետ, աջակցում էին նրանց պայքարին և նրանցից ստանում օգնություն: Մեծ ակտիվությամբ էին գործում նաև Երևանի նահանգի Էջմիածնի, Սուրմալուի, Նոր Բայազետի գավառների բազմաթիվ գյուղերում ստեղծված գյուղացիական կոմիտեները:

Կազմակերպելով գյուղացիական կոմիտեներ՝ բոլշևիկները դրանց միջոցով տարածում էին հեղափոխական սոցիալ-դեմոկրատական գաղափարներ, աշխատում էին կազմակերպված բնույթ տալ գյուղացիների պայքարին:

Հեղափոխության վերելքին զուգընթաց՝ հակացարական տրամադրությունները լայն թափով խուժում էին բանակից ներս: 1905թ. ամռան ամիսներին զորամասերում սկսված հուզումներն աշնանը վերածվեցին հզոր ալեկոծման: Զինվորները չէին կատարում հրամանատարների այն կարգադրությունները, որոնք, իրենց կարծիքով, հակահեղափոխական էին, հրաժարվում էին կրակել ժողովրդի վրա: Ավելին, ամբողջ զորամասեր անցնում էին ապստամբների կողմը:

Նոյեմբերին զինադուլ հայտարարեցին 153-րդ բանակի Ալեքսանդրապո-

---

[1] Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռիում (1899-1908թթ.), Հայպետհրատ, Երևան, 1957, էջ 120:
[2] «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907», էջ 188-189:

[1] Տե՛ս "Революция 1905-1907гг. в национальных районах России", Госполитиздат, Москва, 1955, էջ 555:
[2] Տե՛ս "Революция 1905-1907гг. в России", Документы и материалы 1905-1955, изд. Академии наук СССР, Москва, 1955, էջ XII:

լում տեղակայված 229-րդ հետևակային, 150-րդ և ուրիշ գնդերի զինվորները: Նոյեմբերի 28-ին 153-րդ Բակինսկի հետևակ գնդի զինվորները, բոլշևիկյան խմբի ղեկավարությամբ, մշակեցին մի շարք պահանջներ և ներկայացրին հրամանատարությանը, այն է՝ զորքը դուրս չբերել գործադուլավորների դեմ, ներում շնորհել քաղաքական կալանավորներին, զորացրել այն զինվորներին, որոնց ծառայության ժամկետն անցել է և այլն: Ալեքսանդրապոլի զինվորների մշակած պահանջներին հավանություն տվեցին Կարսի և այլ կայազորների զինվորները: Բանվորների դեպուտատների խորհուրդների օրինակով հոկտեմբերից Ալեքսանդրապոլի և Կարսի զորամասերում ստեղծվում էին զինվորական հեղափոխական խորհուրդներ, որոնց մեջ մեծամասնություն էին կազմում բոլշևիկները:

1905թ. դեկտեմբերին Սարիղամիշի զինվորական կայազորի մեջ մտնող 155-րդ հետևակային Կուբինյան գնդի զինվորները դուրս եկան միտինգի և հրամանատարությունից պահանջեցին ազատ արձակել այն զինվորներին, որոնք կալանավորվել էին «վնասակար գաղափարներ տարածելու համար»: Միտինգի մասնակիցները միաժամանակ հարց էին բարձրացնում ոչ մի զինվորի չհետապնդել քաղաքական համոզմունքների համար: Հրամանատարությունը մերժեց ընդունել միտինգում ընդունված բանաձևը: Ձերբակալված զինվորները դատվեցին ռազմադաշտային դատարանի կողմից[1]:

1905թ. նոյեմբերի վերջերին Թիֆլիսում տեղի ունեցավ ՌՄԴԲԿ կովկասյան միության II կոնֆերանսը, որին մասնակցում էր նաև Ստ. Շահումյանը: Կոնֆերանսը որոշում ընդունեց զինված ապստամբության նախապատրաստման մասին և այն ղեկավարելու համար ընտրեց ՌՄԴԲԿ կովկասյան բյուրո, որի մեջ էր նաև Շահումյանը: Կոնֆերանսը "Кавказский рабочий листок"-ը ճանաչեց որպես կովկասյան միութենական կոմիտեի օրգան և թերթի խմբագիր հաստատեց Ստ. Շահումյանին: Միաժամանակ անհրաժեշտ համարվեց հնարավորին չափ կարճ ժամկետում հիմնադրել բոլշևիկյան ուղղության թերթեր հայերեն, վրացերեն և կովկասյան թուրքերի լեզվով:

Նոյեմբերի 24-ին Պետերբուրգի դատական ատյանը որոշում էր ընդունել դեկտեմբերի 2-ից դադարեցնել «Հեղափոխական հովերով տարված»՝ "Сын отечества", "Новая жизнь", "Наша жизнь", "Свободный народ", "Начало", "Русское свободное слово", "Русская газета" թերթերի հրատարակումը: Ճիշտ այդ օրը կալանք էր դրվել նշված յոթ թերթերի համարների վրա: Դեկտեմբերի 7-ին "Кавказский рабочий листок" թերթում (N11) լույս տեսավ Ստ. Շահումյանի ««Ազատությունները» կենսագործվում են ... » հոդվածը: Հեղինակը նշում էր, որ հոկտեմբերի 17-ի մանիֆեստով ազդարարված մամուլի ազատությունը, ինչպես և հաստատ համոզված էին բոլշևիկները, դատարկ հնչյուն դուրս եկավ: «Սոցիալ-դեմոկրատիան,- գրում էր նա ,- մանիֆեստի

[1] ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 22, ց. 4, գ. 284, թ.2:

երևան գալու առաջին իսկ օրից ցարական ազատությունները հայտարարեց թղթե ազատություններ: Նա երբեք չի հավատացել ցարական կառավարության անկեղծությանը: Նա միշտ էլ պնդել է, որ միայն ինքնակալության տապալումը և պետական իշխանության հանձնումը ժողովրդի ձեռքը կարող է իսկական ազատություն երաշխավորել»[1]: Եվ Շահումյանը մարտական կոչ էր հղում աշխատավորներին՝ «պայքարել, վճռաբար ու անողոքաբար պայքարել ինքնակալության դեմ»[2]: Նա ցույց էր տալիս օրվա գործնական անելիքները. «Պետք է շարասյուներ կազմել, պետք է պատրաստվել բոլոր ուժերով, բոլոր միջոցներով՝ երկգլխանի հրեշի ամայացուցիչ գործունեությանը ըստ հնարավորին ավելի շուտ վերջ դնելու համար»[3]:

Նույն թերթի N 12-ում լույս ընծայած հոդվածում Ստ. Շահումյանը զարգացնում էր նախորդ համարում արտահայտված մտքերը և համոզմունք հայտնում, որ հեռու չէ սպասվող զինված ապստամբությունը: «Մոտ է այն ժամը,- գրում էր նա,- երբ ամբողջ Ռուսաստանով մեկ կրունկվի համաժողովրդական ապստամբությունը և ջարդուփշուր կանի ցարական ինքնակալության երկաթե զրահը»[4]:

«Վերադարձ չկա» հոդվածում Շահումյանն ավելի էր կոնկրետացնում հեղափոխական պրոլետարիատի նպատակները: Նա գրում էր. «Ցարական կառավարությունը հավաքել է վերջին ուժերը հաղթական հեղափոխությանը գլխավոր ճակատամարտ տալու համար: ...Հեղափոխական պրոլետարիատն ընդունում է այդ մարտահրավերը... Վերադարձ չկա՛: Մեր հետևում նավերն այրված են, իսկ մեր առջև ծառացած է ինքնակալությունը վերջնականապես ճզմելու կամ նրա կողմից ճզմվելու ալտերնատիվը: ...Հարցը վերաբերում է հեղափոխական ժողովրդի կողմից քաղաքական իշխանությունը գրավելուն: ...Ինքնակալությունը մեզ ստիպում է ձեռնարկել պայքարի համաժողովրդական միջոցին՝ զինված ապստամբությանը»[5]: Այդ ազատարար ապստամբությունն ամենից առաջ պրոլետարիատի ոգու և կամքի մեծագույն ստեղծագործությունը պետք է լինի: «Պրոլետարիատը,- գրում էր Ստ. Շահումյանը,- բոլորից շատ և բոլորից ավելի եռանդով է պայքարել ներկա համաժողովրդական հեղափոխությունում. հոկտեմբերյան օրերին նա խարխլեց ինքնակալությունը, իր արյան գնով նա գնեց քաղաքացիական այն իրավունքների ազատության կեսը, որոնցից օգտվում է ամբողջ ժողովուրդը: Այժմ նա տվել է վերջնական գոտեմարտի ահազանգը: Թո՛ղ հեղափոխական ժողովրդի բոլոր խավերը արձագանքեն իրենց ղեկավարի այդ ահազանգին, թո՛ղ բոլոր նրանք, ովքեր շահագրգռված են ցարական ինքնակալությունը ժողովրդականով փոխարինե-

[1] **Ստեփան Շահումյան**, եվ.Ժ, հատ. առաջին, էջ 140:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 143:
[5] Նույն տեղում, էջ 147-148:

լով, պատրաստվեն գլխավոր ճակատամարտի ցարիզմի դեմ: Թշնամին մահացու կերպով վիրավորված է պրոլետարիատի կրակոցից. համատեղ ջանքերով մինչև վերջը ջախջախենք նրան»[1]:

Բոլշևիկյան կազմակերպությունները լայն աշխատանք էին ծավալել զինված ապստամբության ռազմատեխնիկական նախապատրաստության ուղղությամբ: Կովկասում այդ գործը գլխավորում էր ՌՄԴԲԿ կովկասյան բյուրոն, որի հրահանգներով բոլշևիկները ստեղծում էին մարտական ջոկատներ, հայթայթում զենք, կազմակերպում մարտիկների ռազմական գործի ուսուցում և այլն: Այդ ուղղությամբ հատկապես խոշոր դեր էր կատարում լեգենդար հեղափոխական Սիմոն Տեր-Պետրոսյանը (Կամո):

Անդրկովկասն արագորեն արձագանքեց Մոսկվայի ապստամբությանը: Քաղաքական գործադուլներ բռնկվեցին Բաքվում, Բաթումում, Թիֆլիսում: Մասսաների գլխավոր պահանջն էր՝ «Կորչի՛ միապետությունը, կեցցե՛ ժամանակավոր կառավարությունը»:

Գործադուլային շարժումն ապստամբության վերաճելու համար դեկտեմբերի 12-ին Թիֆլիսում ստեղծվեց Կենտրոնական գործադուլային կոմիտե, որի մեջ մտան Ստ. Շահումյանը, Մ. Ցխակայան, Շ. Էլիավան և ուրիշներ: Շահումյանի խմբագրությամբ լույս տեսնող "Кавказский рабочий листок" -ը շարունակում էր ապստամբական կոչեր հղել բանվորներին ու գյուղացիներին: Իշխանություններն արգելեցին թերթի հրատարակումը, բայց դեկտեմբերի 12-ից այն սկսեց լույս տեսնել նոր՝ "Елизаветпольский вестник" անունով, որը նույնքան արմատական էր, որքան "Листок"-ը: Երեք համար լույս տեսնելուց հետո այս թերթի հրատարակումը նույնպես արգելվեց: "Елизаветпольский вестник"-ի վերջին՝ դեկտեմբերի 14-ի համարում զետեղված էր «Դեկաբրիստներ» վերտառությամբ առաջնորդողը, որի հեղինակը, ամենայն հավանականությամբ, Շահումյանն է: Այն նվիրված էր ցարական բռնակալական կարգերի դեմ դեկաբրիստների ապստամբության 80-ամյակին և օրգանապես աղերսված էր «քնից արթնացած Ռուսաստանը համակած հեղափոխական հրդեհին»[2]: Հոդվածագիրն առաջիններից մեկն էր, որ մարքսիզմի դիրքերից բնութագրում էր դեկաբրիստների շարժումը, գնահատում նրա ղեկավարների և շարքայինների սխրանքը:

Բոլշևիկների՝ ապստամբության մղող կոչերը լայն արձագանք էին գտնում աշխատավոր զանգվածների շրջանում: Զինված բանվորները գրավեցին Թիֆլիսի Նաձալդև ու Դիդուբե շրջանները, հարձակում գործեցին Անդրկովկասի երկաթուղիների ու հեռագրի վարչությունների շենքերի վրա և խափանեցին այդ ծառայությունների աշխատանքը: Բաքվի պրոլետարիատը անհնազանդություն հայտարարեց իշխանություններին, որի հետևանքով լիովին կազմա-

[1] ***Ստեփան Շահումյան***, *ԵԼԺ, հատ. առաջին, էջ 148-149:*
[2] **"Елизаветпольский вестник"**, 14 декабря 1905г.

լուծվեց կառավարական ապարատը:

1905 թ. դեկտեմբերի 9(22) -ին Մոսկվայում սկսված զինված ապստամբության լուրը Ալեքսանդրապոլ հասնելուց անմիջապես հետո քաղաքում բոլշևիկները բանավոր թե տպագիր խոսքով բանվորներին կոչ էին անում պատրաստ լինել զինված ելույթի: Անհնազանդություն էին հայտարարել Հայաստանի տարածքով անցնող երկաթուղիների բանվոր-ծառայողները: Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի երկաթուղային կայարաններն ամբողջովին անցել էին ապստամբների տնօրինության տակ: Իշխանություններին ցուցաբերած անհնազանդությունը ամբողջապես խախտել էր անդրկովկասյան երկաթուղային ցանցում կառավարության կողմից երթևեկության համար հաստատված կարգը: Երկաթգծի երթևեկությունը գտնվում էր գործադուլային կոմիտեի ձեռքում, որն իր հերթին ենթակա էր երկաթուղայինների անդրկովկասյան գործադուլային բյուրոյին և միայն վերջինիս թույլտվությամբ էր բաց թողնում գնացքները:

Որքան հախուռն թափով էր զարգանում հասարակական-քաղաքական կյանքը, որքան փոթորկալից էին պատմական օրերը, այնքան ավելի արագ էր զարգանում ու ձևավորվում այդ օրերին գործող, պայքարող դասակարգերի քաղաքական գիտակցությունը, այնքան ավելի արագ ու համարձակորեն էին դեպի հեղափոխություն գալիս մինչ այդ հասարակական շարժումից հեռու կանգնած մասսաների նորանոր շերտեր: Բնութագրելով 1905 թ. ընդամենը երկու-երեք ամսում (հոկտեմբեր-դեկտեմբեր) աշխատավորական լայն զանգվածների գիտակցության մեջ կատարված փոփոխությունները՝ Ստ. Շահումյանը գրում էր. «Պատմական այդ մեծ օրերը հիմքից ցնցեցին ժողովրդական մասսաներին և նրանց քաղաքական դաստիարակության տեսակետից այնքան բան արեցին, որքան չէին կարող անել խաղաղ զարգացման ամբողջ տարիները»[1]:

Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը 1905 թ. դեկտեմբերի 14-ին արձակեց հատուկ հրաման, որով զինվորական դրություն էր հայտարարվում Թիֆլիս քաղաքում, Թիֆլիսի նահանգում և անդրկովկասյան ամբողջ երկաթուղում:

Թեև զինվորական դրությունը չէր տարածվում Երևանյան նահանգի վրա, բայց քանի որ բոլշևիկների գլխավորած հակացարական պայքարը Ալեքսանդրապոլում ստացել էր տագնապ հարուցող ծավալներ և, նկատի առնելով երկաթուղային այդ հանգույցի բացառիկ կարևորությունը, իշխանություններն այնտեղ ևս հաստատեցին ռազմական դրություն: Քաղաքում տեղակայված Կաբարդինյան գունդը և ոստիկանական ուժերը, Թիֆլիսից եկած հրամանի համաձայն, գործադուլավորների դեմ անցան դաժան գործողությունների: Հետապնդվեցին ու ձերբակալվեցին բազմաթիվ ակտիվ բանվորներ և ծառայողներ: Շարժումը Ալեքսանդրապոլում վերջնականապես ճնշելու նպատակով

[1] ***Ստ. Շահումյան***, *ԵԼԺ, հատ. առաջին, էջ 373:*

Թիֆլիսից երկաթուղային շարժակազմով Ալեքսանդրապոլ էր ուղարկվել կազակական մի զորամաս, բայց ճանապարհին, Շահալի կայարանում, բանվորները կարողացել էին շարքից հանել շոգեքարշը, ինչպես նաև փակել երկաթգիծը, որի հետևանքով կազակները չկարողացան տեղ հասնել:

Մոսկվայի 1905թ. դեկտեմբերյան ապստամբության պարտությունից հետո սկսվում է ռուսական հեղափոխության վայրէջքի ժամանակաշրջանը: Բայց հեղափոխությունը դեռևս ուներ հզոր ներուժ, որի լիակատար ջախջախման համար միապետությունը ստիպված էր գործադրել վիթխարի ջանքեր: Առջևում սպասվում էին ցարիզմի դեմ ժողովրդական մասսաների նոր բախումներ՝ թերևս ավելի նվազ ուժգնությամբ ու ավելի պակաս համառությամբ:

Ինչպես ամբողջությամբ վերցրած Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում շարունակվում էին ժողովրդական զանգվածային ցույցերն ու գործադուլները:

1906թ. հունվարի 13-ին վախճանվել էր Տոմսկի տեխնոլոգիական ինստիտուտից վտարված և Երևանում հիմնավորված բոլշևիկ Ալեքսանդր Մալխասյանը: Նա մեծ դեր էր կատարել ՌՄԴԲԿ Երևանի խմբակների ստեղծման և ամրապնդման գործում: Բոլշևիկ գործչի թաղումը, որին մասնակցում էր մի քանի հազար մարդ, վերածվեց քաղաքական հուժկու ցույցի: Դեպի գերեզմանատուն ժողովրդական երթը և հանգուցյալի թաղման արարողությունը ղեկավարում էր Երևանի բոլշևիկյան կազմակերպությունը, որը դեկտեմբերյան ապստամբության պարտությունից հետո էլ շարունակում էր աճել ու ամրապնդվել: 1906թ. գարնանը նրա անդամների թիվը հասել էր 100-ի[1]:

1906թ. հունվարին Ալավերդում նորից լարված վիճակ էր: Ձեռնարկատերերը նորից խաբել էին բանվորներին և մտադիր չէին կատարել նրանց հետ ունեցած պայմանավորվածություններից ոչ մեկը: Բոլշևիկ և մենշևիկ սոցիալ-դեմոկրատները մի քանի սպառնալից դիմումներ հղեցին ադմինիստրացիային: Զինվոնիկները և բարձր վարձատրվող վարչական աշխատողները սարսափի մեջ ընկան, մտածելով, որ այս անգամ արդեն բանվորները հաշվեհարդար կտեսնեն իրենց հետ: Նրանց հույսը «կարգի պաշտպան» ոստիկանությունն էր:

Առաջվա պես բոլշևիկները եռանդուն աշխատանք էին տանում Ալեքսանդրապոլում, որի շնորհիվ 1906 թվականին նույնպես քաղաքը շարունակում էր մնալ պայքարի ասպարեզ: 1906թ. առաջին կեսին ՌՄԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության ղեկավարությամբ ընթացան երկաթուղայինների, տպարանների աշխատողների, դարբինների, կոշկակարների նոր գործադուլներ ու ցույցեր: Զուր չէ, որ Կովկասի ոստիկանության վարչության պետը խոստովանում էր, թե տվյալ պահին Ալեքսանդրապոլը Երևանի նահանգի ամենահեղափոխական կետն է:

[1] Տե՛ս Մ. Վ. Արզումանյան, Աքանազ Մռավյան. կյանքի ու գործունեության համառոտ ուրվագիծ, Հայպետհրատ, Երևան, 1955, էջ 9:

Հեղափոխության հետագա ընթացքին մեծապես խանգարում էր այն, որ ՌՄԴԲԿ երկու՝ բոլշևիկյան և մենշևիկյան թևերի ղեկավար մարմինների միջև, առանձին բացառություններով հանդերձ, չկար համաձայնություն և ընդհանուր մոտեցում ոչ միայն տեսական հարցերում, այլև հեղափոխության ստրատեգիական նպատակների շուրջ և իրադարձությունների զարգացման համեմատ՝ պայքարի տակտիկան ընտրելիս: Միաժամանակ չեշտենք, որ բոլշևիկների ու մենշևիկների միջև պայքարը հիմնականում մղվում էր ՌՄԴԲԿ վերին մակարդակներում, իսկ «ներքևներում» բանվորները գործում էին համերաշխ, նրանց մեծ մասի համար նույնիսկ անհասկանալի էր, թե ինչու իրենց ղեկավարները հաշտ չեն, ինչու մամուլի էջերում մեծ կրքով ու համառությամբ «պսակազերծ են անում» միմյանց: Այնպես որ բոլշևիկ և մենշևիկ բանվորները երբեմն ավելի հեշտ էին իրար հասկանում, քան իրենք և իրենց ղեկավար մարմինները: Բանվորները համերաշխաբար էին գործում հատկապես արդյունաբերական վայրերում, որտեղ բարձր էր պրոլետարիատի համակենտրոնացման աստիճանը և քաղաքական ակտիվությունը:

Բոլշևիկ թե մենշևիկ բանվորներից շատերը գիտակցելով, որ ՌՄԴԲԿ ղեկավարության պառակտվածությունը խիստ բացասաբար է անդրադառնում հեղափոխության ընթացքի վրա, պահանջում էին միավորել կուսակցության երկու թևերը:

Առաջինը բոլշևիկյան ղեկավարությունը պաշտոնապես հանդես եկավ ՌՄԴԲԿ միասնությունը վերականգնելու և ուժերը միավորելու նախաձեռնությամբ, որը դրական արձագանք գտավ մենշևիկյան վերին մարմիններում:

Կուսակցության ուժերը միավորելու շարժումն արդեն սկսվել էր 1905թ. աշնանը՝ հեղափոխության վերելքի պայմաններում, երբ երկրի մի շարք վայրերում, այդ թվում Անդրկովկասում, ստեղծվել էին բոլշևիկների և մենշևիկների միասնական (միացյալ) կոմիտեներ: Բաքվում ՌՄԴԲԿ միացյալ կոմիտե ստեղծվեց 1905թ. վերջին, Թիֆլիսում 1906-ի սկզբին[1]:

1906թ. ապրիլին Ստոկհոլմում տեղի ունեցավ ՌՄԴԲԿ IV համագումարը, որը կոչված էր ավարտին հասցնելու կուսակցության ներսում սկսված միավորիչ շարժումը: «Միավորիչ» համագումարին մասնակցում էին 46 բոլշևիկ և 62 մենշևիկ պատգամավորներ: Վերջիններիս թվական գերակշռությունը պայմանավորված էր նրանով, որ բոլշևիկյան շատ կազմակերպություններ հեղափոխության ընթացքում ջախջախվել էին ցարական ջարդարարների կողմից, բազմաթիվ նշանավոր ղեկավար գործիչներ նետվել էին բանտերը, ուրիշները քշվել էին հեռավոր աքսորավայրեր:

Համագումարին «Սուրենին» ծածկանունով մասնակցում էր Ստեփան Շահումյանը, որը պատգամավոր էր ընտրվել Երևան ու Ալեքսանդրապոլ քաղաքների և նահանգային զինվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպու-

[1] Տե՛ս Մ. Վ. Արզումանյան, Ստեփան Շահումյան, էջ 128:

թյունների կողմից: Նա համագումարում հանդես եկավ ելույթով[1], գրավոր առաջարկություն ներկայացրեց բունդի հետ միավորվելու վերաբերյալ բանաձևի նախագծի քննարկման ժամանակ[2], հետևողականորեն պաշտպանեց հեղափոխության մեջ բոլշևիկների ստրատեգիական գիծը և տակտիկական սկզբունքները, բազմաթիվ գործնական դիտողություններ կատարեց կառավարության ագրարային քաղաքականության, ազգային խնդրի, հեղափոխության շարժիչ ուժերի, դումայական տակտիկայի և օրակարգային այլևայլ հարցերի քննարկման և բանաձևերի ընդունման ժամանակ: Ն. Կրուպսկայան իր հուշերում նշել է, թե համագումարում Շահումյանն ինչպիսի նվիրվածությամբ էր պաշտպանում բոլշևիկների քաղաքական գիծը[3]:

Թեև ՌՄԴԲԿ IV համագումարը որոշում ընդունեց կուսակցության երկու թևերը միավորելու մասին, բայց այդ որոշումը ձևական բնույթ էր կրում և չիրագործվեց կյանքում: Կազմակերպչորեն չմիավորվելով՝ բոլշևիկները և մենշևիկները փաստորեն պահպանեցին իրենց գաղափարախոսական տարբեր սկզբունքները, հեղափոխության բնույթի ու նպատակների մասին հակադիր պատկերացումները: Քանի որ համագումարում մեծամասնություն էին կազմել մենշևիկ պատգամավորները, ուստի ընդունված բանաձևերի մեծ մասն ուներ մենշևիկյան ուղղվածություն:

Ստոկհոլմից վերադառնալով Թիֆլիս՝ Շահումյանը իր առաջին գործը համարեց մեկնել Երևան և կատարած աշխատանքների մասին հաշվետվություն տալ իրեն համագումար գործուղած սոցիալ-դեմոկրատների առջև: Մայիսի 12-ին գումարվում է ՌՄԴԲԿ Երևանի կազմակերպության ժողով, որին մասնակցում են նաև նահանգի մի շարք շրջանների բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ժողովում Շահումյանն ընդարձակ զեկուցում է տալիս համագումարի արդյունքների մասին, պատմում, թե այնտեղ ինչպիսի սուր պայքար էր ծավալվել բոլշևիկ և մենշևիկ պատգամավորների միջև, համոզմունք հայտնում, որ Երևանի բոլշևիկները հաստատապես կկանգնեն այն գծի վրա, որ մշակվել էր համագումարում:

Բանվորական հեղափոխական շարժումների ղեկավարումն ուժեղացնելու նպատակով ժողովը քննարկեց նաև քաղաքի բոլոր սոցիալ-դեմոկրատական խմբակների միավորման և մեկ ընդհանուր կազմակերպություն ստեղծելու հարցը: Ժողովն ընտրեց ՌՄԴԲԿ Երևանի կազմակերպության քաղաքային կոմիտե, որի կազմի մեջ մտան Ա. Մալխասյանը, Կ. Ալավերդյանը, Վ. Բաղդասարյանը և ուրիշներ: Հետագայում Երևանի կազմակերպության մեջ ղեկավար աշխատանք էին կատարում Մարտիրոս Միրաքյանը (Բանվոր Շանթ), Աքանազ Մռավյանը, Լևոն Տեր-Հովսեփյանը, Լևոն Ցաղուբյանը և ուրիշներ:

[1] Ստեպան Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 156-157:
[2] Նույն տեղում, էջ 157-158:
[3] Տե՛ս Н. К. Крупская, Воспоминания о Ленине, Москва, 1984, էջ 289:

Այնուհետև Շահումյանը եղավ արդյունաբերական ձեռնարկություններում, զրուցեց բանվորների հետ՝ պարզելու համար նրանց հեղափոխական տրամադրությունները Մոսկվայի բանվորների դեկտեմբերյան ապստամբության պարտությունից հետո:

Ռուսական հեղափոխության ինչպես վերելքը, այնպես էլ վայրէջքն առաջ էին քաշել բոլշևիկյան գրավոր պրոպագանդայի և ագիտացիայի ուժեղացման խնդիրը:

Չնայած հեղափոխության սկսված նահանջին, 1906 թվականը սոցիալ-դեմոկրատիայի համար նշանավորվեց մի շարք պրակտիկ հաջողություններով, որոնց գլխավոր արտահայտություններից էին բոլշևիկյան կոչերի, թռուցիկների, պրոկլամացիաների տպագրության և տարածման գործն ամուր հիմքերի վրա դնելը, հեղափոխական հայ մամուլի ու հրապարակոսության կայացումը և բոլշևիկ տեսաբանների ու առաջին հերթին Ստեփան Շահումյանի կողմից սոցիալ-դեմոկրատական գաղափարների զարգացումը՝ ելնելով Կովկասի և կովկասահայության իրական վիճակից:

Հեղափոխության վերելքի շրջանում հատկապես աննախընթաց աճել էին բոլշևիկյան թե՛ բանավոր և թե՛ գրավոր ագիտացիայի ծավալները: Մարտաշունչ ոգով գրված կոչերը, թռուցիկներն ու պլակատները զանգվածների հեղափոխականացման անփոխարինելի միջոցներ էին: Ամեն օր հազարավոր օրինակներով թռուցիկներ էին տարածվում կայսրության զանազան տարածքներում:

Հեղափոխական թռուցիկների, պրոկլամացիաների ու կոչերի տպագրման ու տարածման ուղղությամբ եռանդուն աշխատանք էին տանում նաև Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն ու կոմիտեները: Այսպես, միայն ՌՄԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեն 1905թ. ընթացքում տասնյակ հազարավոր օրինակներով հրատարակել էր մարտական թռուցիկներ, որոնցից շուրջ 17 հազարը հայերեն, այդ թվում «Պահեստի զինվորներին» 3000 օրինակ, «Կազմակերպված բանվորներին»՝ 400, «Գյուղացիներին»՝ 3000, «Ինչ պարզվեց»՝ 5000, «Զինվորներին»՝ 3000, «Մայիսի 1-ը»՝ 2500 օրինակ[1]:

Հեղափոխության տարիներին դեպքերն ու իրադարձությունները այնպիսի գլխապտույտ արագությամբ էին զարգանում, որ սոցիալ-դեմոկրատիայի ղեկավար մարմինները չէին հասցնում տեղեր ուղարկել կուսակցական գործիչների, որոնք կարողանային իրենց կենդանի խոսքով ու գործով նպաստել զանգվածների կազմակերպմանը: Ուստի կյանքը հրամայաբար թելադրում էր՝ ստեղծել բոլշևիկյան հայ մամուլ, որը պետք է նպաստեր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետագա համախմբմանն ու հայ բանվորական

[1] Տե՛ս С. Г. Арешян, Армянская печать и царская цензура, Изд. АН Армянской ССР, Ереван, 1957, էջ 354:

և գյուղացիական մասսաների քաղաքական դաստիարակությանը:

Լենինյան-իսկրայական ուղղության առաջին հայերեն անլեգալ՝ «Պրոլետարիատ» (1902թ.) և դրան հաջորդած «Պրոլետարիատի կռիվը» (1903թ.) թերթերի փակումից հետո բոլշևիկները չունեին տպագիր օրգան: Դա էր պատճառը, որ երբ 1905-ի գարնանը Ստ. Շահումյանը Բեռլինից վերադարձավ Թիֆլիս, ստիպված օգտագործեց «Մուրճ» հայերեն լեգալ հանդեսի էջերը, որի նույն թվականի մայիս-հունիս ամիսների համարներում նա տպագրեց «Դասակարգերը ժամանակակից եվրոպական հասարակության մեջ» մեծածավալ և մեծարժեք ուսումնասիրությունը:

Բայց այդպես երկար չէր կարող շարունակվել: Հայ բոլշևիկները պիտի ունենային և ունեցան իրենց սեփական տպագիր օրգանը:

Դեռևս մինչև Բեռլինից Ստեփան Շահումյանի Թիֆլիս վերադառնալը, Բաքու էր եկել նույն Բեռլինում բարձրագույն ուսումը լրացրած, առևտրական և փիլիսոփայական գիտությունների դիպլոմներ ստացած Սարգիս Կասյանը, որը, հնչակյան կուսակցությունից դուրս գալով, հենց նոր անցել էր բոլշևիկների շարքերը[1]: Նրա, որպես բոլշևիկի, առաջին կարևոր գործը եղավ ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեի հանձնարարությամբ հայերեն բոլշևիկյան թերթի հրատարակումը, որի իրականացումը գլուխ բերեց Լյուդվիգ Կնունյանցի և Պետրոս Մնացականյանի սերտ համագործակցությամբ[2]: 1905թ. մարտի 19-ին Բաքվում լույս տեսավ հայերեն առաջին բոլշևիկյան թերթերից մեկը՝ «Բանվորի ձայնը», որի խմբագիրը Ս. Կասյանն էր: Նույն թվականի մարտի 27-ին ուսիկանությունը ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեի ընդհատակյա տպարանում բռնագրավեց թերթի երկրորդ համարի շարվածքն ու տպագրված էջերը: «Բանվորի ձայնը» փակվեց, տպագրող բանվորները ձերբակալվեցին:

Բոլշևիկյան առաջին լրագրի բռնի փակումը հուշում էր, որ, օգտվելով 1905թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստի՝ մամուլի ազատության մասին խոստումներից, պետք է փորձել թերթ հրատարակել իշխանությունների թույլտվությամբ:

Բոլշևիկյան լեգալ թերթի հրատարակումը Թիֆլիսում ձեռնարկեց Ստ. Շահումյանը: Երկար քաշքշուկից հետո Կովկասի իշխանությունները համաձայնություն տվեցին: Ս. Կասյանը Բաքվից կանչվեց Թիֆլիս, ստեղծվեց խմբագրական մարմին՝ Ստ. Շահումյան, Ս. Սպանդարյան և Ս. Կասյան կազմով: Թերթի գլխավոր աշխատողներից էր բոլշևիկ Ս. Խանոյանը:

1906թ. ապրիլի 1-ից Թիֆլիսում սկսեց լույս տեսնել բոլշևիկյան առաջին լեգալ և ամենանշանավոր լրագիրը՝ «Կայծը», որն ուղղակի ժառանգորդն էր "Кавказский рабочий листок" և "Елизаветпольский вестник" թերթերի[3]:

[1] Տե՛ս Հ. Ն. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, գիրք առաջին, էջ 28, 30:
[2] Նույն տեղում, էջ 32:
[3] Ի. Դուբինսկի - Մուխաձե, Շահումյան, էջ 112:

«Կայծը» տպագրվում էր իր ժամանակի համար պատկառելի տպաքանակով՝ 1500-2000 օրինակ:

«Կայծի» առաջին համարը լույս տեսավ Ստ. Շահումյանի գրած «Մեր օրգանը» առաջնորդող հոդվածով: Նա նշում էր, որ թերթը երևան է գալիս հակացարական կռվի դժվարին ժամանակաշրջանում, երբ ծագած բազում բարդ խնդիրների լուծումը պահանջում է ամբողջ ժողովրդի և ամենից առաջ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական ուժերի հսկայական լարում: Ելնելով դրանից՝ Շահումյանը շեշտում էր, որ այդ հանգամանքն ավելի ևս ծանրացնում է նորաստեղծ թերթի պատասխանատվությունը, մի օրգանի, «որ ուզում է քայլ առ քայլ հետևել հեղափոխական պրոլետարիատին նրա հզոր կռվում, որ ուզում է արտահայտել ու ղեկավարել այդ կռիվը, որ ուզում է լուսավորել այն փշոտ ու արյունոտ ճանապարհը, որով ընթանում է հեղափոխական պրոլետարիատը»[1]: Այնուհետև Շահումյանը շեշտում էր, որ «Կայծը» «... կաշխատի իր կարողության չափ ծառայել հայ բանվորության և նրա բնական բարեկամ ու դաշնակից՝ հայ աղքատ գյուղացիության շահերին», որ թերթը «... պաշտպան ու արտահայտիչ պետք է լինի պրոլետարիատի վսեմ միջազգային իդեալի»[2]:

«Կայծում» Ստ. Շահումյանը տպագրել է ավելի քան 40 հոդված: Մի շարք հոդվածներով հանդես են եկել Ս. Սպանդարյանը և Ս. Կասյանը: Թերթին ակտիվ աշխատակցում էին Հակոբ Հակոբյանը, Մարտիրոս Միրաքյանը (Բանվոր Շանթ), Ռուբեն Դաշտոյանը, Արտաշես Կարինյանը, Աշոտ Խումարյանը, Ասքանազ Մռավյանը (Հրանտ), Լյուդվիգ Կնունյանցը, առաջավոր բանվորներ Մելիք Մելիքյանը (Դեղուշկա), Սերգո Մարտիկյանը, Մինաս Սարգսյանը և այլք[3]:

Թերթի տպագրության իրականացման և տարածման գործում եռանդուն աշխատանք էին տանում բանվորներ ու մտավորականներ, այդ թվում Արմենակ Սաքուլյանը, Նիկոլայ Կոստանյանը, Գևորգ Սահակյանը, Մինաս Սարգսյանը, Լևոն Ցաղուբյանը, Արտյոմ Աղամալյանը, Միքայել Վարդանյանը, Մինսակ Տեր-Գրիգորյանը և ուրիշներ:

«Կայծի» խմբագիրների ջանքերով բանվորներից ու գյուղացիներից առաջ քաշվեցին բազմաթիվ թղթակիցներ, որոնք գրում էին Թիֆլիսից, Բաքվից, Ալեքսանդրապոլից, Երևանից, Քութայիսից, Կարսից, Բաթումից, Գանձակից, Ալավերդուց և արդյունաբերական այլ վայրերից: Բանվոր-թղթակիցները պատմում էին գործարանների, հանքերի, արհեստանոցների առօրյայից, աշխատավորական կոլեկտիվներում տեղի ունեցող հուզումներից՝ բողոքների ու ցույցերի մասին և այլն: Լոռուց, Ապարանից, Աշտարակից, Զանգեզուրից, Դիլիջանից, Շամշադինից, Ախալցխայից, Գանձակից, Ղարաբաղից և այլ շրջաններից

[1] Ստ. Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 154:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», «Հայաստան» հրատ., Երևան, 1967, էջ 106:

ուղարկած հոդվածներում ու նամակներում գյուղացի-թղթակիցները նկարագրում էին գյուղացիների տնտեսական ծանր վիճակը, հակակալվածատիրական պայքարի դրվագներ, հաղորդումներ էին անում գյուղերում ցարական պատժիչ արշավախմբերի կատարած բռնությունների և այլ անիրավությունների մասին[1]:

«Կայծը» հաստատակամորեն առաջ էր տանում հեղափոխական պայքարի գիծը, ուստի այլևս անհանդուրժելի էր դարձել Կովկասի իշխանությունների համար: Թիֆլիսի դատաստանական պալատի քրեական դեպարտամենտը 1906թ. հուլիսի 31-ի իր կարգադրիչ նիստում որոշեց՝ «Կայսրության գերագույն իշխանությանը հասցրած ծայրահեղ վիրավորանքի և ապստամբության կոչ անելու համար» դադարեցնել հայերեն «Կայծ» թերթի հրատարակությունը, խմբագիր-հրատարակչին (Արամայիս Երզնկյանց) նշանակել 1000 ռուբլի տուգանք և գործը հանձնել դատարան: Ժանդարմերիային առաջարկվեց հայտնաբերել և դատական պատասխանատվության ենթարկել թերթի խմբագիրներին: Դատաստանական պալատի որոշման հիման վրա Թիֆլիսի նահանգապետը օգոստոսի 7-ին կարգադրեց «վտանգավոր ուղղության համար» փակել «Կայծը»[2]: Թեև «Կայծը» լույս տեսավ ընդամենը 47 համար, բայց այն լավագույն օրինակ հանդիսացավ դրան հաջորդող բոլշևիկյան մյուս թերթերի համար:

«Կայծը» փակվելուց հետո Շահումյանը, Սպանդարյանը և Կասյանը ձեռնամուխ եղան նոր թերթի լույս ընծայմանը և նշանավոր բոլշևիկ Աշոտ Խումարյանի անունով ստացան հրատարակման իրավունք: «Տրադիցիոն եոյակի» խմբագրությամբ 1906թ. օգոստոսի 18-ին Թիֆլիսում սկսեց լույս տեսնել բոլշևիկյան երկրորդ լեգալ թերթը՝ «Նոր խոսքը»[3]:

«Նոր խոսքի» էջերում սիստեմատիկաբար լույս էին տեսնում նրա խմբագիրների և այլ բոլշևիկյան գործիչների հոդվածները, որոնցում լուսաբանվում էին հեղափոխության ընթացքը նրա աստիճանական անկման պայմաններում, արծարծվում էին ժամանակի հրատապ խնդիրները, ցույց էր տրվում, թե ինչպես ցարը, սարսափած հեղափոխությունից, ժողովրդին խոստացավ Պետական դուման, բայց այնտեղ նստած են հիմնականում կալվածատերերի և կապիտալիստների ներկայացուցիչները, մասսաներին բացատրում էին, որ միապետական կարգերի պայմաններում անհնարին է ժողովրդի շահերը ներկայացնող պառլամենտ ունենալ և այլն:

«Կայծի» համեմատ «Նոր խոսքը» էլ ավելի կարճ կյանք ունեցավ՝ գոյատևելով ընդամենը մեկ ու կես ամիս, 15 համար լույս տեսնելուց հետո փակվեց:

Դրանից հետո Շահումյանի առաջարկով Սպանդարյանը և Կասյանը աշխատանքի տեղափոխվեցին Բաքու՝ իրականացնելու համար մեկ այլ պարբերականի հրատարակումը: Նույն նպատակով Թիֆլիսից Բաքու մեկնեցին Աշոտ Խումարյանը, բոլշևիկյան մամուլի ակտիվ աշխատակիցներ Բենիամին (Բենո) Սահակյանը և Ռուբեն Դաշտոյանը[1]: Համատեղ ջանքերով հաջողվեց 1907թ. փետրվարի 2-ին լույս ընծայել հեղափոխության տարիներին չորրորդ և վերջին բոլշևիկյան թերթը «Օրեր» անունով՝ այս անգամ նույնպես Շահումյանի, Սպանդարյանի և Կասյանի խմբագրությամբ: «Օրերը» ունեցավ ընդամենը ութ համար: Բոլշևիկ խմբագիրների և թերթի անվանական խմբագիր-հրատարակիչ, պահպանողական հայացքներ ունեցող Ս. Հախումյանի միջև տեղի ունեցավ ընդհարում՝ անհնարին դարձնելով նրանց համատեղ աշխատանքը[2]: Թերթի վերջին՝ փետրվարի 10-ի համարում զետեղված է հետևյալ հայտարարությունը, որ խմբագրության աշխատակիցների անունից ստորագրել էին Շահումյանը, Սպանդարյանը և Կասյանը. «Թերթիս խմբագրության անդամների և աշխատակիցների՝ մի կողմից, խմբագիր-հրատարակչի (Ս. Հախումյանի), մյուս կողմից, ընդհարման պատճառով ստիպված ենք թողնել մեր մասնակցությունը այս թերթին: Մեր ընթերցողներին կարճ ժամանակամիջոցում բավարարություն կտանք մի ուրիշ թերթով»[3]:

Այսպիսով, ցարական դաժան գրաքննության և ոստիկանական հետապնդումների պայմաններում 1905-1907թթ. ստեղծված Անդրկովկասի բոլշևիկյան մամուլը մեծ դեր խաղաց աշխատավորների քաղաքական դաստիարակության, հեղափոխական պայքարի մեջ նորանոր զանգվածներ ներգրավելու ուղղությամբ:

Ռուսական հեղափոխության տարիներին նշանավոր հայ բոլշևիկ ղեկավարները կուսակցական-կազմակերպական աշխատանքի հետ ծավալում էին գաղափարական և տեսական-պրոպագանդիստական մեծ գործունեություն: Ստեփան Շահումյան, Բոգդան Կնունյանց, Սուրեն Սպանդարյան, Սարգիս Կասյան, Ալեքսանդր Բեկզադյան, Ասքանազ Մռավյան – ահա ոչ լրիվ անունները ղեկավար այն գործիչների, որոնք իրենց տեսական աշխատություններով առաջ էին մղում սոցիալիստական միտքը, իսկ նրանցից ամենախոշոր տեսաբանի՝ Ստեփան Շահումյանի քաղաքագիտական, պատմագիտական, տնտեսագիտական, փիլիսոփայական, գրականագիտական մեծարժեք ուսումնասիրու-

---

[1] Տե՛ս **Խ. Հ. Բարսեղյան**, Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն. 1900-1920, Հայպետհրատ, Երևան, 1956, էջ 184,191,194, 197:

[2] Նույն տեղում, էջ 202: «Կայծի» փակման մանրամասները նկարագրված են նաև Ե. Մ. Խալեյան, Հայկական բոլշևիկյան մամուլը Անդրկովկասում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, Երևան, 1955, էջ 211-213:

[3] Տե՛ս **Հ. Ն. Կարապետյան**, Մեծ պայքարի մարդիկ, գիրք առաջին, էջ 34:

[1] Տե՛ս **Հ. Ն. Կարապետյան**, Մեծ պայքարի մարդիկ, գիրք առաջին, էջ 34:

[2] Նույն տեղում, էջ 34-35: Տե՛ս նաև «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք առաջին, էջ 24:

Այդ խոստումը չիրականացավ: «Օրերի» դադարեցմանը հաջորդած չորս տարիներին հայ բոլշևիկներին չհաջողվեց հրատարակել նոր թերթ: Այդ երկար լռությունը խախտվեց միայն 1911թ. նոյեմբերին, երբ Բաքվում Ստ. Շահումյանի խմբագրությամբ սկսեց լույս տեսնել բոլշևիկյան «Նոր խոսք» հանդեսը:

թյունները, իրենց նշանակությամբ դուրս գալով հայ իրականության սահմաններից, ձեռք էին բերում համառուսաստանյան հնչեղություն, իրենց արժանի տեղը գրավելով ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի գաղափարական զինանոցում:

Ստ. Շահումյանը մեծ հեղափոխական էր, մեծ մտածող, մեծատաղանդ տեսաբան: Նա հանդես եկավ ո՛չ միայն որպես պայքարող մասսաների քաղաքական ղեկավար: Նրա մոտ անքակտելիորեն շաղկապված էին պրոլետարիատի պայքարի ստրատեգիան ու տակտիկան: Նրա համար հեղափոխական գործունեությունը և հեղափոխական մտածողությունը անխզելի միասնություն էին կազմում, և ինքն էլ իր անձով մարմնավորում էր այդ միասնությունը:

Հարազատ մնալով գործելու այդ ելակետին՝ Շահումյանը սկզբից ևեթ որդեգրել էր պրոլետարիատի արմատական շահերի պաշտպանությունը, դարձել այդ դասակարգի պայքարի նպատակների և գաղափարաբանության անկաշառ ու անձնուրաց պաշտպանը:

1905-1907թթ. Ստ. Շահումյանի գրած տեսական հետազոտությունների շարքում առանձնանում է վերը հիշատակված **«Դասակարգերը ժամանակակից եվրոպական հասարակության մեջ»** աշխատությունը (1905թ.)[1]: Այստեղ հեղինակը բնորոշում է հասարակական դասակարգերը, վերլուծում է տարբեր ֆորմացիաներում մարդկանց մեծ խմբերի փոխհարաբերությունները, ցույց է տալիս դրանց առաջացման ընթացքը, բուրժուական հասարակարգում շահագործվող դասակարգերի տնտեսական վիճակի գնալով վատթարացման պատճառները, անդրադառնում է բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության դաշինքի հարցերին և այլն:

Վերլուծելով կապիտալիստական երկրների պրոլետարական մասսաների ապրելակերպի մասին եղած վիճակագրական տվյալները՝ Շահումյանը կտրականապես հերքում էր այն պնդումները, թե վարձու աշխատանքի մարդիկ բուրժուական արտադրահարաբերությունների պայմաններում հնարավորություն ունեն արմատապես բարելավելու իրենց սոցիալական դրությունը: Պատասխանելով նրանց, ովքեր մատնացույց էին անում բուրժուական կառավարությունների կողմից սոցիալական որոշ միջոցառումների իրականացման փաստը, Շահումյանը նշում էր, որ դրանք արվում են բանվորական շարժման սարսափի տակ և ի վիճակի չեն էական փոփոխություններ մտցնելու շահագործվող դասակարգերի սոցիալ-տնտեսական դրության մեջ:

Ստ. Շահումյանի **«Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ»** (1905թ.)[2] փիլիսոփայական-պոլեմիստական աշխատությունն անմիջականորեն արձագանք էր ռուսական հեղափոխության կողմից առաջադրված կենսական հարցերին: Քննության առնելով զարգացման էվոլյուցիոն

[1] **Ստ. Շահումյան**, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 69-103:
[2] Նույն տեղում, էջ 122-131:

և ռևոլյուցիոն ձևերի դիալեկտիկան՝ հեղինակն անցում է կատարում սոցիալական հեղափոխությունների բնորոշմանը՝ կապված հասարակական կյանքի որակական փոփոխությունների հետ: Նա նշում է, որ հեղափոխության միջոցով ազգերի ու ժողովուրդների կյանքի որակական փոփոխությունները, հասարակական կացութաձևի հեղափոխական անցումները, էվոլյուցիոն զարգացման ընթացքի ընդհատումները մարդկային հասարակության առաջընթացի անխուսափելի օրինաչափություններն են: Սոցիալիզմի հակառակորդները հեղափոխությունները հայտարարում են պատմականորեն ոչ օրինաչափ, վնասակար, անարդար ու անբարոյական, անհամատեղելի էվոլյուցիոնիզմի հետ: Շահումյանը մերժում է հակագիտական ու հակաբնական այդ տեսակետը և չեչտում, որ թե՛ «էվոլյուցիոնիզմը» և թե՛ «ռևոլյուցիոնիզմը» ամեն մի հեղափոխության անխուսափելի ուղեկիցներն են: Այդ երկուսը ոչ թե մերժում են միմյանց, ոչ թե անհամատեղելի են, այլ բնության ու հասարակության զարգացման միևնույն պրոցեսի երկու անխուսափելի, անհրաժեշտ կողմերն են: Հասարակության էվոլյուցիոն, աստիճանական զարգացումը որոշ մոմենտում անխուսափելիորեն փոխվում է արագ ու թռիչքաձև հեղափոխական զարգացման, երբ հին որակական կացությունից անցում է կատարվում դեպի նոր որակական կացություն: «**Հեղափոխությունները**, այսպիսով, - գրում է Շահումյանը, - ավարտում են հասարակության **էվոլյուցիոն** զարգացման որոշ ցիկլ և ճանապարհ են հարթում նրա հետագա՝ դարձյալ էվոլյուցիոն զարգացման համար»[1]:

Հեղափոխությունները համարելով պատմականորեն օրինաչափ, անխուսափելի ու արդար ակտեր՝ Շահումյանը միաժամանակ խիստ վտանգավոր էր համարում ծայրահեղ հեղափոխականներին, ուտոպիստական-անարխիստական «բունտարարներին», որոնք անտեսում են հասարակական էվոլյուցիայի օրենքները, առաջադրում են անհապաղ «սոցիալիստական հեղափոխության» լոզունգը՝ անտեսելով հասարակական զարգացման օրինաչափությունները:

Հեղափոխության տարիներին Ստ. Շահումյանը բազմակողմանի քննության ենթարկեց գյուղացիական-ագրարային հարցը՝ գյուղացիության հեղափոխական դերի առումով: **«Լիբերալ-դավաճանները և միապետական ազնվականությունը»** (1905թ.)[2], **«Կադետները և սոցիալ-դեմոկրատիան»** (1906թ.)[3], **«Գյուղացիական շարժումը»** (1906թ.)[4], **«Ներկա մոմենտը և մեր տակտիկան»** (1906թ.)[5] և մի շարք այլ հոդվածներում ագրարային հարցում հեղափոխության գլխավոր խնդիրը նա համարում էր կալվածատերերի ձեռքից **ամբողջ** հողի բռնագրավումը և **ձրի, առանց վճարի** հանձնումը գյուղացիությանը:

[1] **Ստ. Շահումյան**, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 127:
[2] Նույն տեղում, էջ 108-113:
[3] Նույն տեղում, էջ 183-185:
[4] Նույն տեղում, էջ 208-210:
[5] Նույն տեղում, էջ 345-349:

Դա ռուսական հեղափոխության և բոլշևիկյան կուսակցության ագրարային ծրագիրն էր:

Աշխատավոր գյուղացիության օգտին ագրարային հարցի հեղափոխական լուծումը անօրինական էին համարում կադետները, որոնք վճռականորեն դեմ էին կալվածատիրական հողերի բռնագրավմանը և անհատույց գյուղացիներին տալուն: Նրանք լավագույն դեպքում հնարավոր են համարում կալվածատիրական և պետական հողերի մի մասի վաճառքը գյուղացիներին: Շահումյանը խիստ քննադատության էր ենթարկում կադետների ծրագիրը, ցույց տալով, որ եթե գյուղացին այնքան միջոցներ ունենար, որ կարողանար հող գնել, ապա նա դա կաներ առանց կադետների «հոգածության», առանց վերևից սպասվող կարգադրությունների, քանի որ կապիտալիստական հասարակության մեջ հողը առուծախի առարկա է: Իրականությունն այն է, որ գյուղացին, որը հազիվ է քարշ տալիս իր գոյությունը, հետևապես «ետ գցած» կոպեկ անգամ չունի, երբ նա չի կարողանում նույնիսկ մշակել իր չնչին հողակտորը, այդ գյուղացին երբեք չի կարող երազել հող գնելու մասին: Հետևապես, ելքը կալվածատիրական հողերի բռնագրավումը և ձրի գյուղացիությանը տալն է: Իսկ դա հնարավոր կլինի իրագործել միայն միապետական-ազնվականական կարգերը ոչնչացնելու և դրա արդյունքում ժողովրդական-դեմոկրատական կառավարություն ստեղծելու միջոցով:

Ստ. Շահումյանի տեսական ժառանգության մեջ առանձնակի տեղ են գրավում ազգային հարցի մասին նրա ուսումնասիրությունները: Հեղափոխության տարիներին նրա գրչի արգասիքը հանդիսացավ «**Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան**»[1] մեծարժեք աշխատությունը, որի մեջ իմացական մեծ ընդգրկումով ընթերցողին է ներկայացրել մարքսիզմի տեսակետը ազգության և ազգային հարաբերությունների մասին՝ շաղկապված ցարիզմի դեմ ուղի ելած ռուսաստանյան պրոլետարիատի պայքարի հրատապ խնդիրների հետ:

Թեև գիտական այս ուսումնասիրությունը առաջին անգամ տպագրվել է 1906թ. «Կայծ» թերթում և նույն թվականին հրատարակվել առանձին բրոշյուրով, բայց գրվել է դրանից 3-4 տարի առաջ Բեռլինում: Այդտեղի հայ սոցիալ-դեմոկրատական խմբի մասնակից Մ. Մանուչարյանը (Զար) վկայել է, որ 1903թ. «Ստեփանի ռեֆերատն» ազգային հարցի մասին քննարկվել է արտասահմանյան սոցիալ-դեմոկրատական խմբակներում, որ նրա «Կապույտ տետրը» ձեռքից ձեռք էր անցնում, հարստանում էր նոր էջերով, մտքերն ավելի էին խտանում և հստակ դառնում[2]: Շահումյանի այս երկը պետք է դիտել ոչ միայն որպես հայ սոցիալ-դեմոկրատների միության՝ ազգային հարցի վերաբերյալ տեսակետի ամբողջացում, այլև մի ստեղծագործություն, ուր ավարտին է հասցված հեղինակի նախորդ շրջանի քաղաքական հայացքների զարգացման

[1] **Ստ. Շահումյան**, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 237-273:
[2] Տե՛ս **"Бакинский рабочий"**, N 21, 20 սեպտեմբերի 1922թ.:

ընթացքը:

Շահումյանը նշում էր, որ բուրժուազիան և նրա գաղափարախոսները մթագնել ու խճճել են ազգային հարցը, նրա շուրջը ստեղծել միստիկական քող, ազգությունը ներկայացրել որպես մի ֆետիշ, ազգային հարցը՝ որպես մի անլուծելի հանելուկ: Իսկապես որ, գրում էր նա, ազգային հարցն անլուծելի է բուրժուական կարգերի ժամանակ, քանի որ ազգային ճնշումների, ազգային ներհակությունների ու հակասությունների պայմաններում ազգային հարցը հանդես է գալիս որպես աշխատանքի ու կապիտալի հակադրության, սոցիալական ներհակությունների բաղկացուցիչ մաս: Մանրամասն շարադրելով մարքսիզմի հայացքը ազգերի կազմավորման, նրանց ներսի հակասությունների և դրանց լուծման պատմական անհրաժեշտությունը՝ Շահումյանն ընդգծում էր, որ ազգային հարցը կարող է իր վերջնական լուծումն ստանալ միայն ու միայն այն ժամանակ, երբ աշխատանքը կազատագրվի կապիտալի լծից, և սոցիալիզմի պայմաններում բոլոր ազգերը կստանան իրենց ազգային կյանքը տնօրինելու հավասար իրավունքներ: Վերացնելով հասարակության մի մասի շահագործումը մյուս մասի կողմից՝ կվերանա նաև մի ազգի հարբստահարումը մյուս ազգի կողմից:

Իր աշխատության մեջ Շահումյանը հանգամանորեն մեկնաբանում է մարքսիստների ազգային ծրագրի հիմնական սկզբունքները, ծրագիր, որի բովանդակության հիմքում ընկած է պրոլետարիատի ազատագրական պայքարի նպատակը: «Պրոլետարիատի ուժը, - գրում էր նա, - կազմում է նրա դասակարգային միջազգային համերաշխությունը: Թե՛ ներկայումս, այս հեղափոխության ընթացքում, և թե՛ ապագա ազատ Ռուսաստանում, որքան ավելի սերտ կերպով միացած լինեն զանազան ազգությունների բանվորները, այնքան ավելի հաջող կերպով նրանք կարող են կռվել իրենց դասակարգային շահերի համար, այնքան ավելի կատարյալ կլինի դեմոկրատիայի հաղթությունը ներկայումս և այնքան ավելի հաստատ նրա պահպանման և պրոլետարիատի դասակարգային կռվի հաջողության գարանտիան ապագայում»[1]:

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ստ. Շահումյանը աշխատավոր մասսաների իսկական ղեկավարի և տաղանդավոր հրապարակախոսի իր վիթխարի էրուդիցիայով արձագանքում էր ժամանակի քաղաքական ու տնտեսական բոլոր կարևոր հարցերին, գրականության, լուսավորության, մշակույթի բնագավառների ուշադրության արժանի երևույթներին: Զգաստ ու աչալուրջ նա հետևում էր ցարական կառավարության գործողություններին, Պետական դումայի աշխատանքներին, հեղափոխության ընթացքում դասակարգերի քաղաքական տրամադրությունների փոփոխություններին, կուսակցությունների տակտիկային և նրանց ներսում եղած ֆրակցիաների պայքարին, ռուսական հեղափոխության ելևէջներին, միջազգային հեղափոխական

[1] **Ստ. Շահումյան**, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 262-263:

շարժման ընթացքին ու այդ բոլորի վերլուծության և խորազնին քննության միջոցով տալիս էր հասարակական երևույթների ճշգրիտ գնահատականը և կանխատեսում դրանց զարգացման հնարավոր հետևանքները:

1905-1907թթ. Շահումյանի բեղմնավոր գրիչը հրապարակ բերեց բազմաթիվ ուրիշ ուսումնասիրություններ և հոդվածներ ևս: Ընդհուպ մինչև իր ողբերգական նահատակությունը (1918թ.) նա նորանոր ստեղծագործություններով հարստացրեց հայ հասարակական-քաղաքական միտքը, մեծարժեք ներդրում կատարեց բոլշևիզմի տեսության մեջ: Զուր չէ, որ մեծ հեղափոխականին անվանում էին «տեսական մարքսիզմի ծանր հրետանի»[1]:

Ստեփան Շահումյան մարդը, քաղաքացին, հեղափոխականը, գիտնականը հայ սոցիալիստական ուղղության հասարակական-քաղաքական, տեսական-գաղափարական մտքի գագաթն է: Նրա անձը և գործը ոգեշնչման անսպառ աղբյուր էին գաղափարակիցների համար, նրա միտքը լուսավոր մի ջահ էր դեպի ռուսական դեմոկրատական հեղափոխության բարիկադներ գնացող զրկվածների ու տառապյալների ճանապարհին:

Հեղափոխության հուժկու թափը և բոլշևիկյան հայ մամուլի ստեղծումը ոչ միայն խթանեցին հայ իրականության մեջ մարքսիստական հասարակագիտության շեշտակի առաջընթացը, այլև մեծապես նպաստեցին հայ պրոլետարական գրականության, մասնավորապես պոեզիայի, ավելի լայն առումով՝ հեղափոխության փոթորկալի օրեր ապրող աշխատավոր մարդկանց զգացմունքներն արտահայտող և նրանց հոգեկան, գեղագիտական կարիքներին սատար ժողովրդական մշակույթի զարգացմանը:

Հեղափոխության ամենախոշոր երգիչը հայ իրականության մեջ Հակոբ Հակոբյանն էր:

Հայ գրական անդաստանում Հ. Հակոբյանն առաջինն էր, որ իր քնարն ամբողջովին նվիրեց բանվոր դասակարգի աշխատանքին ու պայքարին, արտահայտիչը եղավ հայ պրոլետարիատի իղձերի ու ձգտումների:

Դեռ հեղափոխությանը նախորդող տարիներին հայ բանվոր մարդուն սրտակից, նրա խոհերի թարգման բանաստեղծի ստեղծագործությունները լայն ճանաչում ունեին ամենուրեք՝ գործարաններում, հանքահորերում, բանվորական բարակներում, այնտեղ, ուր կուփվում էր պրոլետարիատի պայքարի կամքը: Միաժամանակ այդ տարիներին նա ռուսերենից թարգմանեց ու հայ պրոլետարիատի սեփականությունը դարձրեց «Ինտերնացիոնալ», «Մարսելյոզ», «Անվախ ընկերներ», «Վարշավյանկա», «Թաղման քայլերգ», «Առաջ, ընկերք» և մի շարք այլ հեղափոխական երգերի տեքստերը:

Ռուսական հեղափոխությունը նոր շունչ ու ոգի հաղորդեց բանաստեղծին:

Հար ու հարատև ամբոխի լացը,
Ցավ ու կսկիծը,

[1] *Տե՛ս* Г. К. Орджоникидзе, Избранные статьи и речи, М., 1939, էջ 151:

Ինձ կոչ են անում, թե՝ արի՛, պոե՛տ,
Մեր վի՛շտը լացիր,
Մեզ ընկե՛ր դարձիր:
. . .
Ամբոխից փա՛խ տալ
Դժվա՛ր է, դժվա՛ր.
Հոգիս ձուլված է նրա հոգու մեջ,
Ձղերս կապված նրա ջղերին:
Մի այլ ճանապարհ
Գոյություն չունի երբեք ինձ համար,
Եվ որքան դյութող լինի ձեր հմայք,
Երկինք ու աստղեր,
Կա՛ մի քրտնալի, կարիքի աշխարհք
Ճնշված ու լքված՝
Նրան եմ ընտրում,
Այնտեղ վիշտ, զրկանք իրար հետ գրկված՝
Մի ելք են փնտրում ...

«Կուսակցական կյանքի ապրումներն ու հույզերն էին, դասակարգային հեղափոխական կռվի հաղթանակի հավատը, որ ներշնչեցին ինձ հեղափոխական-պրոլետարական մոտիվներ»[1], - իր ինքնակենսագրականում գրել է Հ. Հակոբյանը:

Եվ հեղափոխության երգիչը մեկը մյուսի հետևից հրապարակ հանեց «Հեղափոխություն», «Մե՛կ էլ, մե՛կ էլ», «Իմ աշխարհքը», «Բուրժուաներին», «Երկու ախոյան», «Մայիսմեկյան երգ», «Պրոլետարիատին», «Մեռա՞ն՝ չկորան», «Ողջու՛յն քեզ, արև» և մեծ պաթոսով գրած այլ ստեղծագործություններ: 1906թ. լույս տեսավ նրա «Աշխատանքի երգեր» ժողովածուն, ուր բանաստեղծը գովք էր հյուսում չարի դեմ ծառացած աշխատավորներին, պրոլետարների կուռ շարքերին, որոնք դուրս էին եկել կենաց ու մահու կռվի՝ հանուն ազատ կյանքի: Նա անկոտրում հավատ ուներ բանակալության դեմ ծառացած աշխատավոր մարդու հաղթանակի նկատմամբ.

Բռվված հնոցում քաղց ու կարիքի,
Սովոր բանտերի, բիրտ հալածանքի,
Շա՛տ ես դիմացել, դիմացիր էլի,
Եղբայր սիրելի.
Հավատ ունեցիր հաղթիդ վերջնական,
Այսօր չէ վաղը՝ քոնն է ապագան ...

Հեղափոխությունը դեռ ընթացքի մեջ էր, բայց նրա հաղթական ելքի հան-

[1] *Հակոբ Հակոբյան, Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1951, էջ 352:*

դեպ կասկած չունեցող բանաստեղծը 1905թ. աշնանը, ռուսական հեղափոխության հարձակման շրջանում պրոլետարիատին կոչ էր անում արյան գնով պահել գալիքի ազատ սոցիալիստական կարգերը, քանզի տապալված դասակարգերը չեն հաշտվելու իրենց պարտության փաստի հետ և փորձելու են ամեն գնով կորցրածը հետ բերել.

Երկունքի միջից մանուկը ծնվեց
Մեծ Ազատության:
Ընկե՛ր իմ, ընկե՛ր, ահա մանուկը
Հեղափոխության.
Փորձության ժամին երդվիր կրծքովդ
պաշտպանել նրան:

1907թ. «Պրոլետար» ծածկանվան տակ բանաստեղծը տպագրեց հաջորդ՝ «Հեղափոխական երգեր» ժողովածուն, ուր զետեղեց նաև հեղափոխական երգերի իր թարգմանությունները: Այդ երգերը «արդեն խմբերով երգվում էին թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում»:

Իր հուշերում բանաստեղծը պատմել է հետևյալ դեպքի մասին.

«Ես չեմ մոռանա. Աբասթումանում մի վաղ առավոտ գնացել էի հաց [գնելու] հացթուխից, որ տաք-տաք և՛ հունցում էր խմորը, և՛ գլուխը կախ, ... երգում «Վարշավյանկայից».

Դեպի՛ մարտ արյան,
Արդար սրբազան,
Դեհ, քայլենք առա՛ջ
Բանվորներս քաջ:

. . .

Կանգնած նայում եմ լուռ և լսում:

– Ա՛յ տղա, որտեղի՞ց գիտես դու այդ երգը:

– Վա՛հ, հիմա ո՞վ չգիտե հեղափոխական երգ, – պատասխանում է [նա]»[1]:

Հ. Հակոբյանի ստեղծագործական պաթոսին մեծապես խթանում էր «Կայծ» թերթը, որի հրատարակման համար նա հանդես էր բերել մեծ եռանդ ու ջանքեր: «Կայծի» էջերում պարբերաբար տպագրվեցին նրա «Ամբոխն իմ աշխարհ», «Հեղափոխություն», «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» և այլ բանաստեղծություններ, թարգմանություններ: Պոետը տպագրվում էր նաև ուրիշ պարբերականներում:

Հ. Հակոբյանի պրոլետարական պոեզիան չափազանց բարձր են գնահատել Ստեփան Շահումյանն ու Սուրեն Սպանդարյանը, նաև՝ հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչներ: Ս. Սպանդարյանի բնորոշմամբ, Հ. Հակոբյանը «պատկանում է այն սակավաթիվ հայ բանաստեղծների թվին, եթե չասենք միակն է, որոնք վաղուց հրաժարվել են «թմբկահայրենասիրական» թեմաներից և

[1] Հակոբ Հակոբյան, Երկեր, էջ 352:

համամարդկային բնույթ կրող բոլորովին նոր մոտիվներ են մտցրել հայ պոեզիայի ու գրականության մեջ»[1]:

Ընդգծելով Հ. Հակոբյանի պոեզիայի ժողովրդական նշանակությունը, այն փաստը, որ նրա ստեղծագործությունները ամենալայն մասսայականություն էին ստացել աշխատավորական զանգվածների մեջ, Ավ. Իսահակյանը գրել է. «Նա ապրեց և գրեց պրոլետարիատի համար, և հաղթական պրոլետարիատը սիրեց նրան և երկար ժամանակ պիտի սիրե իր մեծ վաստակավորին: Նրա երգերը տակավին երկար պիտի պետք գան մարտնչող սերունդներին, որովհետև նրանք ռազմական շեփորի ներշնչող, ոգևորող կոչեր են»[2]:

Հեղափոխության տաղանդավոր երգիչներից էր Շուշանիկ Կուրղինյանը: Հենց սկզբից նրա ստեղծագործության կենտրոնում չարքաշ կյանքով ապրող աշխատավորը, բուրժուական հասարակարգից մերժված թշվառներն ու բոկոտներն էին: Նա իր քնարը նվիրել էր մի կտոր չոր հաց անգամ չունեցող մարդկանց: Հեղափոխության գոռ ալիքները կյանեցին բանաստեղծուհու միտքն ու հոգին՝ նրա ստեղծագործությանը հաղորդելով նոր շունչ ու ոգի, նրան անվերադարձ կապելով պրոլետարիատի պայքարի սրբազան նպատակներին: «Ոչ լալկան երգեր», «Ինձ ասին», «Անեծք», «Հանգցրեք ջահերը», «Անգործավորը», «Բանվորները», «Ազատության զողանջներ» և ուրիշ բանաստեղծություններում Շ. Կուրղինյանն իր գրչով կանգնում էր հեղափոխության շարքերում իբրև նրա նվիրյալ մարտիկ:

Հա՜, մենք ենք գալիս –
Դարավոր վշտի զրկանքի բովից,
Հալածանքների, գարշ ստրկության
Մոռացված խավից –
Կրծքո՛վ փշրելու փառքը տիրողին, –
Գահը բռնության – ստրուկի շղթան, –
Նոր ուղի հարթել մեր նմաններին,
Արժանի կոչման – հավասարության՝
Այդպե՛ս ենք գալիս . . .

Հեղափոխության վերելքի օրերին բանաստեղծուհին հրճվանք էր ապրում տեսնելով ժողովրդական զայրույթի եփեռումը, որի դիմաց դահիճները, բռնակալներն ու սատրապները կուչ էին եկել՝ «արդար ոխից» սարսափած, և փախչում էին «մութ անկյուններ»: Բարիկադներ բարձրացած պրոլետարներին նա կոչ էր անում «չզգալ ահ ու դող», ջարդ ու փշուր անել խարխլված գահը, համոզված լինել, որ

Այսօր թե վաղը – մերն է հաղթանակ
Սուրբ ազատության:

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 267:
[2] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. չորրորդ, Երևան, 1951, էջ 58:

Հեղափոխությունը խոր ազդեցություն ունեցավ Հովհ. Թումանյանի, Ալ. Շատուրյանի, Ավ. Իսահակյանի ստեղծագործությունների վրա:

Դեռևս հեղափոխությունից երկու տարի առաջ, 1903թ. մայիսմեկյան տոնի կապակցությամբ, Հովհ. Թումանյանը Ստեփան Շահումյանի խնդրանքով թարգմանել էր Պուշկինի «Ազատություն» բանաստեղծության հայտնի տողերը՝ «Ատում եմ քեզ և քո գահը» և այլն, որոնք լայն արձագանք գտան, բոլշևիկների կողմից բազմիցս տպագրվեցին որպես թռուցիկ և տարածվեցին բանվորների շրջանում:

Հեղափոխության օրերին մեծ բանաստեղծը հոգով ու սրտով պայքարի ելած ժողովրդի հետ էր:

Ցարական բռնակալության դեմ մղվող կռվին և գալիք ազատությանը ոգեշունչ տողեր էր նվիրում Ալեքսանդր Շատուրյանը: «Կռվե՛նք անվախ ... »,- դիմում էր նա հեղափոխության մարտիկներին՝ իրեն նույնպես համարելով այդ կռվի մասնակից: Բանաստեղծը կանխատեսում էր, որ վրա է հասնելու չարի կործանումը, և «մի նոր կյանք» է ստեղծելու աշխատավոր մարդը:

Հեղափոխությունը շարունակվում էր:

1906թ. հունիսի 3-ին Ալավերդու պղնձաձուլական գործարանի բանվորները նորից դիմեցին գործադուլի և դարձյալ առաջադրեցին մի շարք տնտեսական պահանջներ: Աշխատանքը դադարեցրին նաև Շամլուղի հանքերի բանվորները: Հուլիսին գործադուլը նոր թափ առավ, իսկ օգոստոսի 2-ին հայտարարվեց ընդհանուր գործադուլ:

«Մանես» հրապարակում հավաքվել էր ավելի քան 4000 բանվոր: Միտինգավորները լի էին վճռականությամբ՝ պաշտպանելու իրենց իրավունքները: Առաջարկ եղավ պայքարը ղեկավարելու համար ստեղծել գործադուլային կոմիտե: Միտինգից հետո կազմավորված գործադուլային կոմիտեի մեջ մտան Ս. Փիրուզյանը, Վ. Զելիձեն, Հ. Մանթաշյանը, Մ. Ադամյանը, Ս. Վերմիշյանը, Ալ. Խաչիևը և ուրիշներ: Բանվորների պահանջները կոմիտեն ձևակերպեց 18 կետերի մեջ և ներկայացրեց «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերության» տնօրեն Գրոյին[1]:

Տեղի սոցիալ-դեմոկրատներին օգնելու և գործադուլը ղեկավարելու համար ՌՍԴԲԿ կովկասյան միությունը Ալավերդի ուղարկեց Սուրեն Սպանդարյանին: Ամեն ինչից երևում էր, որ պայքարը երկար է տևելու, ուստի Սպանդարյանի նախաձեռնությամբ գործադուլային կոմիտեն գավառի աշխատավոր գյուղացիությանը կոչ ուղղեց՝ նյութական օգնություն ցույց տալ գործադուլավորներին: Կոչը լայն արձագանք գտավ. շրջակա գյուղերի բնակիչներն իրենց ունեցած պարենից բաժին էին հանում բանվորներին: Գյուղերում կազմակերպվեց նաև դրամահավաք, և գոյացած գումարը ուղարկվեց Ալավերդի:

[1] **Դ. Ա. Մուրադյան**, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (1905-1907), ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1964, էջ 192-193:

Այդ կարևոր գործի կազմակերպումը հանձնարարված էր Հայկ Ազատյանին[1]: Գյուղացիների օգնության շնորհիվ բանվորները կարողացան դիմանալ ավելի քան մեկ ամիս:

Պայքարի եռուն օրերին Ալավերդի եկավ նաև Ստեփան Շահումյանը. գործադուլն ավելի կազմակերպված բնույթ ստացավ:

Իշխանությունները ձեռնարկեցին գործադուլը ճնշել զինված ուժով՝ հենվելով Նիկոլայ II-ի կողմից 1906թ. հունվարի 8-ին Վորոնցով-Դաշկովին հղած կարգադրության վրա: «Այժմ արդեն **հարկավոր է զենքի ուժով մինչև վերջ հասցնել խռովության ճնշումը**՝ կանգ չառնելով ամենածայրահեղ միջոցների առջև»[2], - հանձնարարել էր միապետը: Թիֆլիսի նահանգապետի հրամանով օգոստոսի վերջին Ջալալօղլի և Ալավերդի ուղարկվեցին գնդապետ Զոլոտարյովի կազակները՝ չորս թնդանոթով: Շուլավերից նրանց օգնության եկավ մի զինված ջոկատ՝ գավառապետի գլխավորությամբ: Միացյալ ուժերով կազակները և զորքը անցան տմարդի գործողությունների՝ թնդանոթներն ու գնդացիրները ուղղելով անզեն բանվորների վրա:

Գործադուլը բռնությամբ ճնշվեց: Աշխատանքից ազատվեցին հարյուրավոր բանվորներ, շատերը նետվեցին բանտեր կամ աքսորվեցին հեռավոր վայրեր:

Ալավերդու բանվորների գործադուլներն ու ցույցերը Հայաստանում 1905-1907 թվականներին տեղի ունեցած ամենախոշոր ելույթներն էին:

Դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո Հայաստանում շարունակվում էին նաև գյուղացիական ելույթները՝ հանուն հողի և ազատության: Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քանզի այն պատճառները, որոնք հայկական գյուղը պայքարի էին հանել 1905-ին, 1906 թվականին նույնպես մնում էին, միայն թե այժմ շարժումը տեղի էր ունենում խիստ անբարենպաստ պայմաններում: Հեղափոխական ալիքի աստիճանական անկման պայմաններում իշխանությունները գնալով ավելի ու ավելի սանձարձակ էին դառնում, ուժեղանում էին գյուղացիների հալածանքները, զորքն ու ոստիկանությունը դիմում էին ամենաանողոք գործողությունների: Չնայած դրան, գյուղացիները շարունակում էին հակակառավարական համարձակ ելույթները, գրավում էին կալվածատիրական հողերը, կտրատում նրանց պատկանող անտառները և այլն:

Այդ բոլորն առկա էին, օրինակ, Բորչալուի գավառի հայկական համարյա բոլոր գյուղերում: 1906թ. առաջին ամիսներին բացահայտ խռովություններն այստեղ այն աստիճան սպառնալից չափեր էին ընդունել, որ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը կալվածատերերի պահանջով գավառը հայտարարել էր ռազմական դրության մեջ[3]: Գյուղացիների ելույթները ճնշելու պարտակա-

[1] **Դ. Ա. Մուրադյան**, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (1905-1907), ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1964, էջ 194:
[2] **«Հերոսական պայքարի վավերագրեր»**, էջ 333:
[3] **ՎՀ ՊԿՊԱ**, ֆ. 20c, ց.1, գ.42, թ.թ. 18-19:

նությունները փոխարքան դրել էր պատժիչ արշավախմբի հրամանատար գնդապետ Զոլոտարյովի վրա:

1906թ. մարտի 12-ին գալով Ջալալօղլի, գնդապետը կարգադրում է ձերբակալել ժողովրդական հուզումների կազմակերպիչներին: Հաջորդ օրերին, մինչև ամսվա վերջը, պատժիչ արշավախումբը անլուր դաժանություններ գործեց Բորչալուի հայկական գյուղերի մեծ մասում:

Անցնելով պատժիչ արշավախմբի մի զորամասի գլուխ, որի կազմում կար 200 կազակ, 150 զինվոր և երկու լեռնային թնդանոթ, գնդապետ Զոլոտարյովը գավառապետի ուղեկցությամբ մտավ Շուլավեր, զինաթափեց տեղի և շրջապատի բոլոր հայկական գյուղերի գյուղացիներին, որից հետո նրանց պարտադրեց սեփականատերերին հատուցել հասցրած վնասը:

Գնդապետ Զոլոտարյովի պատժիչ արշավախմբի դաժան ռեպրեսիաները նույնիսկ ի զորու չեղան արմատախիլ անելու Հյուսիսային Հայաստանի գյուղացիական հուզումները: 1906թ. ընթացքում Լոռվա գյուղացիները շարունակում էին ելույթներ ունենալ կալվածատերեր Բարաթովի, Քալանթարովի, Եղիազարովի, Լոռիս-Մելիքովի և ուրիշ մեծահարուստների դեմ[1]: Օգոստոսին լուրջ հուզումներ տեղի ունեցան Քալանթարովին պատկանող Այգեհատ և շրջակա մի քանի գյուղերի հողերի վրա: Օգոստոս-սեպտեմբերին կալվածատեր Խանաղովի դեմ ելույթներ ունեցան Կուրթան գյուղի գյուղացիները, որոնց անմիջական կազմակերպիչներն ու ղեկավարները տեղի բոլշևիկներն էին[2]: Իշխան Բարաթովի և Հաղպատի գյուղացիների միջև պայքարն այն աստիճան էր սրվել, որ նրա վրա մի քանի անգամ մահափորձ կատարվեց, որի պատճառով իշխանը հարկադրված եղավ իր ամբողջ կալվածքը վաճառել միլիոնատեր Արամյանին[3]:

Գյուղացիական շարժումը 1906թ. դրսևորումներ էր ունենում նաև Հայաստանի ուրիշ տարածաշրջաններում: Օգոստոսին կալվածատեր Աղա-Վասակի դեմ պայքարի դուրս եկան Երևանի գավառի Էլառ գյուղի գյուղացիները: Պատճառը հարկերի անտանելի ծանր լինելն էր, կալվածատիրոջ անսանձ կամայականությունները[4]:

Գյուղացիների պայքարն ուղղված էր նաև հոգևորական կալվածատերերի դեմ: 1906թ. հուլիսին Հաղպատի գյուղացիները գրավում են վանքապատկան կալվածքները: Մինչ այդ նրանք ժողովի էին հավաքվել և որոշել հեռացնել վանահայր Միքայել Վարթյանցին, որից հետո վանքի տնտեսության ղեկավարումը վերցրել էին իրենց ձեռքը[5]:

[1] Տե՛ս «Կայծ», N 30, 1906թ.:
[2] Տե՛ս «Նոր խոսք», N 2, 1906թ.:
[3] Տե՛ս «Կայծ», N 22, 1906թ.:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 505, թ.թ. 93-94:
[5] Տե՛ս «Կայծ», N 39, 1906թ.:

Վաղարշապատում: Բոլշևիկների նախաձեռնությամբ հուլիսի 2-ին գյուղացիները ժողովի հավաքվելով հենց վանքի բակում որոշում են ընդունում չվճարել վանքին ու հողատերերին տրվելիք հարկի մի մասը: Որոշման մեջ ասված էր. նկատի առնելով հարկերի ծայրաստիճան բարձր լինելը, որը կուտակվելով լիակատար քայքայման է հասցրել գյուղացիներին, և, այնուհետև, նկատի առնելով, որ ներկայումս ոչ մի կալվածատեր այնպես անամոթաբար չի շահագործում քրտինք ու արյուն թափող ժողովրդին, ինչպես հոգևոր կառավարիչները, ուստի հարկերը չվճարել, մինչև դրանք չկարգավորվեն: Նույն պահանջներով որոշում է ընդունում նաև Վաղարշապատի համայնքը: Այդ երկու որոշումները և գյուղացիների բողոքագիրը, որի տակ ստորագրել էր 300 հոգի, հավատարմատարների միջոցով հասցվում է Էջմիածնի սինոդին: Հուլիսի 5-ին սինոդը քննության է առնում վաղարշապատցիների պահանջը, բայց այն թողնում է անհետևանք, պատճառաբանելով, թե հարկային գործի մեջ ինքը ոչ մի իրավասություն չունի, հետևապես պետք է սպասել Պետական դումայի որոշմանը[1]:

Անհանգիստ էր Հայաստանում տեղակայված զորքը:

Ալեքսանդրապոլում տեղակայված մենգրելյան գնդի զինվորներից 27 հոգի 1906թ. սկզբին ձերբակալվել և տարվել էր Թիֆլիս՝ քննության: 1906-ի հունիսի 25-ին լուր տարածվեց, թե ձերբակալված զինվորներին վերադարձրել են Ալեքպոլ՝ գնդակահարելու: Լուրը մեծ զայրույթ առաջ բերեց կայազորի զինվորների մեջ: Գնդի երկու գումարտակներ «Ի զեն» կոչով փորձեցին փրկել դատապարտվածներին, բայց հաջողություն չունեցան: Ձերբակալվեց 30 զինվոր: Պետերբուրգում լույս տեսնող բոլշևիկյան "Эхо" թերթը, անդրադառնալով այդ դեպքին, 1906-ի N 14-ում գրում էր. «Ալեքսանդրապոլի զորքի մեջ ուժեղ խմորումներ են տեղի ունենում: Այնտեղ կազմակերպվում են միտինգներ և քննարկվում են ամենակենսական նշանակություն ունեցող հարցեր»[2]:

Մինչև 1906թ. կեսերը խմորումներ տեղի ունեցան Արդահանի, Բայազետի և ուրիշ տեղերի զորամասերում: Ամռան վերջերին զինվորների բացահայտ ընդվզումները դադարեցին, քանի որ դրանից մեկ-երկու ամիս առաջ ցարական իշխանություններին հաջողվել էր «զսպել» հակակառավարական ուժերի գործողությունները բանակում:

Թեև ոչ միայն Հայաստանում, այլև Կովկասում ու ողջ երկրում մեկը մյուսի հետևից ճնշվել էին զինվորական ելույթները, բայց հեղափոխական տրամադրություններն առկա էին մի շարք զորամասերում: «Զինվորական ապստամբություններն անհաջող են վերջանում, - գրում էր Սուրեն Սպանդարյանը, - որովհետև դրանք կատարվում են անջատ, և եթե կառավարությունը դեռևս հաղթում է, այդ դեռ չի նշանակում, որ նա սպանում է հեղափոխական շարժումը զորքերի մեջ վերջնականապես, և, կարելի է հաստատ հավատացած

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 505, թ.թ. 93-94:
[2] «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», էջ 109:

լինել, որ երբ ազատագրական շարժման ալիքը նորից բարձրանա, - զորքերի շարժումը կլինի ավելի ուժեղ, ավելի կենտրոնացած»[1]:

Չնայած հեղափոխությունն ակնհայտորեն վայրէջք էր ապրում, բայց բոլշևիկները չէին կորցնում հավատը զանգվածների հնարավորությունների նկատմամբ և շարունակում էին նրանց նոր կոչեր ուղղել:

Ստ. Շահումյանը իր հոդվածներից մեկում 1906թ. ամռանը դիմելով հայ աշխատավորությանը՝ գրում է. «Մենք կոչ ենք անում գավառներում գործող մեր կազմակերպություններին, մեր ընկերներին, լարել իրենց բոլոր ուժերը, չինայել ոչ մի բան, որպեսզի անմասն չմնալ այն սուրբ պատերազմի մեջ, որ մղվում է ռուսական ոճրագործ բռնակալության դեմ: Հարկավոր է հարվածել թշնամուն ամեն կողմից և բոլոր ուժերով: Հարկավոր է վերջ տալ արյունարբու գազանների ճնշումներին ու վայրագություններին: Հարկավոր է բաց անել ազատության ու մարդավայել կյանքի դռները դարերով տառապող թշվառ հարյուր-միլիոնավոր ժողովրդի առաջ»[2]:

Սակայն բոլշևիկյան կոչերն այլևս ի վիճակի չէին փոխելու իրերի ընթացքը: Միապետությունը պատրաստվում էր ահեղ դատաստանի:

Նույնիսկ այդ պայմաններում 1907թ. սկզբներից, ինչպես ամբողջ երկրում, Հայաստանում նույնպես մեկ այստեղ մեկ այնտեղ լինում էին գործադուլային պայքարի բռնկումներ:

Երևանի Սարաջևի գործարանի բոլշևիկյան խմբի տարած աշխատանքի շնորհիվ հունվարի 27-ին բանվորները դուրս եկան գործադուլի: Բոլշևիկների ղեկավարությամբ քաղաքական ելույթներ ունեցան տպարանների, սպիրտկոնյակի գործարանների, հրուշակեղենի ձեռնարկությունների բանվորները: Բոլշևիկյան կազմակերպությունը զգալի աշխատանք կատարեց երկրորդ Պետական դումայի նախընտրական շրջանում: Դումայական ընտրությունների կապակցությամբ փետրվարի 18-ից Երևանում ռուսերեն լեզվով սկսեց լույս տեսնել «Факты» թերթը՝ Գ. Ն. Սոկոլովսկու (Ցուրի Մոլոտով) խմբագրությամբ: Թերթը Հայաստանի տերիտորիայում առաջին սոցիալ-դեմոկրատական օրգաններից մեկն էր, որը աշխատավորներին հեղափոխական պայքարի կոչ էր անում, լուսաբանում կուսակցական ներքին կյանքին վերաբերող հարցեր և այլն: Մի քանի համար լույս տեսնելուց հետո թերթը փակվեց[3]:

1907թ. Հայաստանում տեղի ունեցած գործադուլներից ամենախոշորը մարտի վերջին Ղափանում բռնկված հանքագործների գործադուլն էր:

Ղափանի պղնձահանքերը գտնվում էին երկաթուղային գծից և բանվորական մյուս կենտրոններից հեռու: Հանքերում աշխատում էր բազմազգ բանվորություն՝ մոտ 2500 հոգի[1], որոնցից 1800-ը հայեր էին: Բանվորների մեծ մասը տեղացի քայքայված գյուղացիներ էին: Սիմոն Զավարյանի տվյալներով 1906թ. Զանգեզուրի 11 գյուղերից արտագնա աշխատանքի էր գնացել 1917 մարդ, որոնց զգալի մասը վարձվել էր Ղափանի շրջանի պղնձահանքերի ադմինիստրացիայի կողմից: Այսպես, միայն Քաջարան գյուղից նույն թվականին արտագնացության էր դիմել 75 հոգի, որից 63-ը՝ Ղափանի պղնձահանքեր[2]: Բանվորներն աշխատում էին ուղղակի դժոխային պայմաններում: Տաժանակիր էր նրանց աշխատանքը, որ կատարում էին մուրճ ու բրիչով, բահով ու քլունգով, պղնձի ապառները հանքախորշերից դուրս էին հանում մեջքին բարձած կողովների մեջ: Անտանելի էին բնակարանային ու կենցաղային պայմանները[3]:

Ղափանում սոցիալ-դեմոկրատական խումբ էր ձևավորվել դեռևս 1905թ. կեսերին: Այն իր շարքերում ուներ Բաքվից հայրենիք վերադարձած զգալի թվով առաջավոր բանվորներ, որոնց մեծ մասը բոլշևիկներ էին: 1907թ. սկզբներին Բաքվի բոլշևիկյան կոմիտեն Ղափան գործուղեց 50 բանվոր, հիմնականում բնիկ զանգեզուրցիներ, որոնք քաղաքական դաստիարակություն էին ստացել նավթաշխարհի հեղափոխական մթնոլորտում[4]: Գալով Ղափան՝ նրանք կազմակերպված բնույթ հաղորդեցին հանքագործ բանվորների ելույթներին[5]: Միաժամանակ կտրուկ աշխուժացավ տեղի սոցիալ-դեմոկրատական խմբի աշխատանքը: Դրա առաջին արտահայտությունը եղավ Կոնդուրովի հանքերում (Բաշքենդ գյուղ) աշխատող բանվորների գործադուլը, որն սկսվեց մարտի 22-ին: Շուտով գործադուլին միացան Մելիք-Ազարյանի հանքերի ու ձեռնարկությունների տարբեր պրոֆեսիայի բանվոր-ծառայողները: Մարտի 28-ին գործադուլը դարձավ ընդհանուր: Ստեղծվեց գործադուլային կոմիտե, որը մշակեց և գործարանատերերին ներկայացրեց բանվորների պահանջները: Կոմիտեի աշխատանքները ղեկավարում էին բոլշևիկներ Ա. Վարդանյանը, Ս. Ստեփանյանը և ուրիշներ: Բոլշևիկների ղեկավարությամբ գործադուլավորները բռնագրավեցին պահեստները, ստեղծեցին պաշտպանական խմբեր:

Պետերբուրգում հրատարակվող միապետական "Биржевые ведомости" *թերթը 1907թ. մարտին գրում էր.*

«Կովկասում անկարգությունները դեռ շարունակվում են: Այնտեղ Ղափանի հանքերի և գործարանների թվով 5000 բանվորներ գործադուլ են հայտարարել: Նրանք ներկայացրել են աշխատավարձը բարձրացնելու, բանվորական օրը կրճատելու և այլ պահանջներ: Ադմինիստրացիայի կողմից այդ պահանջ-

---

[1] ***Սուրեն Սպանդարյան**, Ընտիր երկեր, «Հայաստան» հրատ., Երևան, 1982, էջ 78:*
[2] ***Ստ. Շահումյան**, Ել.Ժ, հատ. առաջին, էջ 287:*
[3] *Տե՛ս **«Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր»**, էջ113: Տե՛ս նաև՝ **Բարսեղյան**, Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն, 1900-1920, էջ 171:*

---

[1] ***«Գավառ»** (Գորիս), N 10, 1910թ.:*
[2] *Տե՛ս* С. **Заварян**, Экономические условия Карабага и голод 1906-1907гг., *էջ 45:*
[3] ***Դ. Ա. Մուրադյան**, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (1905-1907), էջ 201:*
[4] *Այդ մասին մանրաման տե՛ս* **М. Шостак**, Современное состояние медных рудников и заводов в Зангезурском уезде Елизаветпольской губернии, Тифлис, 1904, *էջ 28:*
[5] *Տե՛ս **Ա. Ս. Համբարյան, Դ. Ա. Մուրադյան, Ա. Հ. Սիմոնյան**, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1988, էջ 218:*

ների մերժման դեպքում բանվորները սպառնում են քանդել էլեկտրականը և ջրով հեղեղել հանքերը: Հեռախոսային կապը գրասենյակի հետ կտրված էր: Ի՞նչ են մտածում իշխանությունները[1]»:

Չնայած Ղափանում հայտարարվեց զինվորական դրություն, բայց բանվորները մնացին անհողդողդ: Գործարանատերերը ստիպված էին գնալ որոշ զիջումների: Նրանք բանվորների աշխատավարձը բարձրացրին 10%-ով, կրճատեցին աշխատանքի տևողությունը[2]:

Մայր առած դասակարգային մարտերում թրծվում էր Հայաստանի բանվոր դասակարգը, բարձրանում էր նրա կազմակերպվածությունը ցարական բռնապետության դեմ մղվող պայքարում:

Եթե 1905թ. համեմատությամբ 1906թ. գյուղացիական շարժումը Հայաստանում գնում էր դեպի անկում, ապա 1907-ին տեղի էին ունենում այդ շարժման վերջին առկայծումները:

1907թ. գարնանը գյուղացիական ելույթներ տեղի ունեցան Զանգեզուրում: Գավառի բոլշևիկյան կազմակերպությունը լայն գործունեություն էր ծավալել հատկապես Ղափանի հանքերի մերձակա գյուղերում: Գյուղացիների մեջ քաղաքական ակտիվ աշխատանք էր տանում բոլշևիկ Կոնստանտին Միխայլովը: Իր ելույթներից մեկում նա ասել էր. «Եթե կառավարությունը մեզ հող չի տալիս, ապա մենք ինքներս կխլենք այդ հողը, գյուղերից դուրս կքշենք պրիստավներին ու չինովնիկներին: Թող կառավարությունը և նրա պնակալեզ սպասավորները լավ իմանան, որ գյուղացին այլևս իր գլուխը չի խոնարհի բռնադատիչների առջև: Հիմա նա ամեն տեղ գոչում է. կորչե՞ն բռնակալները, կալվածատերերը, կապիտալիստները: Կեցցե՛ ազատությունը»[3]:

Բոլշևիկյան ագիտացիան ուժի հանեց Գյուտկում, Զեյվա, Բաշքենդ և ուրիշ գյուղերի գյուղացիներին, որոնք հայտարարում էին, որ իրենք չեն ենթարկվելու իշխանություններին, մինչև որ չփոխվի հողատիրության և հողօգտագործման գոյություն ունեցող սիստեմը:

Բաշքենդ գյուղի բնակիչների հուզումների գլուխ էին կանգնած Սպիրիդոն և Իլյա Ֆրանկոպոլո եղբայրները, որոնք գյուղացիներին հորդորում էին չվճարել տուրքերը, կալվածատերերից ուժով խլել հողը, զինվոր չտալ կառավարությանը և այլն:

Իշխանությունները դաժանորեն ճնշեցին հուզումները և ձերբակալեցին շարժման ղեկավարներին՝ բոլշևիկներ Կոնստանտին Միխայլովին, Սպիրիդոն և Իլյա Ֆրանկոպոլո եղբայրներին և ուրիշների: Ձերբակալվածներին տարան Թիֆլիսի Մետեխի բանտ: Հիշյալները մեղադրվում էին այն բանում, որ 1905-1907 թվականներին Զանգեզուրի գավառի Ղաթարի պղնձահանքերի մի

[1] "Биржевые Ведомости", 30 марта 1907г.
[2] «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907», էջ 106:
[3] Նույն տեղում, էջ 107:

խումբ մարդկանց հետ մոտակա ազգաբնակչության մեջ հրապարակային ճառեր են ասել, նրանց գրգռել պետության ու կալվածատերերի դեմ: Մեղադրականի մեջ արձանագրված էր նաև, որ Կ. Միխայլովն իր ելույթներում ասել է, թե հարկավոր է գործել ուժով, վռնդել բոլոր չինովնիկներին և նրանց փոխարինել ժողովրդից ընտրված մարդկանցով, թե նա և նրա համախոհները գյուղացիներին կոչ են արել հրաժարվել հարկեր վճարելուց, չենթարկվել զորակոչի հրամանին: 1908 թվականին առանց դատի Միխայլովը և Ֆրանկոպոլո եղբայրները գնդակահարվեցին Մետեխի բանտում[1]:

Ցարական կարգերի դեմ Հայաստանում 1905-1907թթ. ծավալված, իր բնույթով հակաֆեոդալական գյուղացիական շարժումները բոլշևիկների գլխավորած համառուսաստանյան հեղափոխական պայքարի մի մասն էին: Այդ տարիներին գյուղացիության դասակարգային պայքարը դրսևորվում էր տարբեր ձևերով, բայց բարձրագույն ձևը կալվածատիրական հողերի բռնագրավումները և զինված ընդհարումներն էին:

ՌՄԴԲԿ IV (Միավորիչ) համագումարից հետո էլ բոլշևիկների և մենշևիկների ջրերը, ինչպես ասում են, նույն առվով չգնացին, քանի որ հեղափոխությանը վերաբերվող համարյա բոլոր հարցերում տարբեր էին նրանց ղեկավար մարմինների մոտեցումները:

Անդրկովկասի մենշևիկները, առաջին հերթին վրաց սոցիալ-դեմոկրատները, հեղափոխության տարիներին աննշան կորուստներ էին ունեցել, համարյա ամբողջովին պահպանվել էին նրանց ղեկավար մարմիններն ու պրոֆեսիոնալ կադրերը:

Բոլշևիկների և մենշևիկների կորուստներն անհամեմատելի էին: Ցարիզմի հարվածներն ամենից առաջ ուղղվել էին բոլշևիկների՝ իբրև միապետական կարգերի անհաշտ ու անզիջում թշնամիների դեմ: Իրավիճակը բոլշևիկներին թելադրում էր ամրապնդել շարքերը, վերականգնել իրենց դիրքերը կուսակցական մարմիններում, որ կորցրել էին ՌՄԴԲԿ IV համագումարում և դրանից հետո:

1907թ. սկզբին Անդրկովկասի բոլշևիկները ստեղծեցին իրենց առանձին երկրային կենտրոնը՝ «Գրական բյուրոն»՝, որի մեջ մտան Ստ. Շահումյանը, Մ. Ցխակայան, Ս. Սպանդարյանը, Պ. Ջափարիձեն և ուրիշներ:

Միաժամանակ երկրամասի բոլշևիկները ձեռնարկեցին առաջիկայում նախատեսված ՌՄԴԲԿ V համագումարին մասնակցելու հետ կապված բազմապիսի հարցերի լուծումը՝ բացառիկ նշանակություն տալով պատգամավորների ընտրությանը:

1907թ. մայիսին Լոնդոնում գումարվեց ՌՄԴԲԿ V համագումարը: Երևանից համագումարի պատգամավոր էր ընտրվել քաղաքում լույս տեսնող "Фак-

[1] «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907», էջ 107-108:
՝ Այդպես էր կոչվում կոնսպիրատիվ նկատառումով:

ты" սոցիալ-դեմոկրատական թերթի խմբագիր Գ. Սոկոլովսկին: Ստեփան Շահումյանը և Ասատուր Կախոյանը ընտրվել էին ՌՍԴԲԿ Բորչալուի (Լոռու) կազմակերպության կողմից[1]:

Ի տարբերություն նախորդ համագումարի՝ ՌՍԴԲԿ V համագումարում մեծամասնություն էին կազմում բոլշևիկյան պատգամավորները: Այդ իսկ պատճառով այնտեղ ընդունված որոշումների մեծ մասը իր ուղղվածությամբ բոլշևիկյան էր:

Համագումարում Ստ. Շահումյանը ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ օրակարգային հարցերի քննարկմանը: Նա խորապես տրամաբանված ելույթ ունեցավ 13-րդ (մայիսի 7) նիստում, հայտարարություններով հանդես եկավ 9-րդ (մայիսի 4), 19-րդ (մայիսի 10), 35-րդ (մայիսի 19) նիստերում[2], մանրամասն ներկայացրեց 1000-ից ավելի անդամներ ունեցող ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության կատարած աշխատանքը հեղափոխության տարիներին[3], հեղափոխականորեն պաշտպանեց Լենինի կողմից առաջարկված բոլոր բանաձևերը:

Ընդունած համագումարի ընդունած բանաձևերում նորից ցարիզմը տապալելու կոչեր էին հնչում, բայց այդ կոչերն այլևս ի վիճակի չէին բանվորներին ու գյուղացիներին մղելու հեղափոխական ելույթների, քանի որ դրանք արիերգարդային հանդարտվող փոթորկի արձագանքներն էին միայն:

Ցարական կառավարության կողմից 1907թ. հունիսի 3-ին Պետական երկրորդ դումայի ցրումը սկիզբ դրեց երկրում դաժան ռեժիմի հաստատմանը: 1905-1907թթ. ռուսական հեղափոխությունը ճնշված էր:

Ռուսական առաջին հեղափոխությունը պարտվեց մի շարք պատճառներով. 1) Բանվորների և գյուղացիների հեղափոխական ելույթները ցարիզմի դեմ տեղի էին ունենում անջատ-անջատ, անմիաբան: Պատահական չէ, որ հեղափոխության ողջ ընթացքում այնպես էլ չստեղծվեց ամուր դաշինք այդ երկու դասակարգերի միջև: Դա հատկապես ցայտուն արտահայտվեց Հայաստանում, ուր կապիտալիզմի անբավարար զարգացման հետևանքով թույլ էր արդյունաբերական պրոլետարիատը, հետևապես ուժեղ չէր նրա ազդեցությունն ու ղեկավար օգնությունը գյուղացիությանը, 2) Թեև գյուղացիության տնտեսական պայքարն ինչ-որ չափով զուգորդվել էր քաղաքական պայքարին, բայց գյուղի աշխատավոր լայն զանգվածները դեռևս պարզորոշ չէին ըմբռնում իրենց շահերն ու անելիքները: Հայաստանում, բացի Ալավերդու և Ղափանի արդյունաբերական հանգույցներից, չկային բանվորական զանգվածների խոշոր կուտակումներ, ուստի սահմանափակ էր այն միջավայրը, որտեղից տարածվող հեղափոխական գաղափարները կարող էին բարձրացնել գյուղացիության դասակարգային ինքնագիտակցությունը: Գյուղացիների շարժման մեջ, հատկապես 1906 և 1907թթ., գերակշռում էին պայքարի պասսիվ ձևերը: Գյուղացին վերջնականապես չէր կորցրել հավատը ցարի նկատմամբ, ուստի շարունակում էր իշխանության մարմիններին ուղղել խնդրագրեր, բողոքներ ու գանգատներ: Դա մեծապես խանգարում էր գյուղացիության կազմակերպմանը և գաղափարական հասունացմանը: Այդ ամենի պատճառով Հայաստանում 1905-1907թթ. գյուղացիության հեղափոխական պայքարը թե՛ լայնությամբ և թե՛ խորությամբ այնպիսի ծավալներ չընդունեց, ինչպես, ասենք, Արևմտյան Վրաստանում կամ Ռուսաստանի կենտրոնական նահանգներում, 3) Բանակը, բացառությամբ առանձին զորամասերի, չմասնակցեց հեղափոխությանը: Ավելին, զինվորներն ու սպաները ցարական գեներալների հրամանով հարձակվում էին բանվորների ու գյուղացիների վրա, ճնշում նրանց ելույթները, 4) Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատները բաժանված էին երկու հակառակ թևերի՝ բոլշևիկների և մենշևիկների: ՌՍԴԲԿ շարքերում միասնության բացակայությունը մեծապես նպաստեց հեղափոխական շարքերի գլխատմանը, 5) Ռուսական միապետությունը ակտիվ աջակցություն էր ստանում դրսից: 1905թ. օգոստոսին հաշտություն կնքելով Ճապոնիայի հետ՝ ցարական կառավարությունը իր զորքերը հետ քաշեց արևելքից և նետեց հեղափոխության դեմ: Բացի այդ, Ֆրանսիայի, Անգլիայի, Ավստրո-Հունգարիայի, Բելգիայի կառավարությունները փոխառություններ տվեցին ցարին, որն օգտագործվեց հեղափոխությունը ճնշելու նպատակով: Ավելին, գերմանական կայսրը հավաստիացնում էր Նիկոլայ II-ին, որ եթե հեղափոխությունը սպառնալից դառնա գահի գոյության համար, ապա ինքը պատրաստ է զորքեր ուղարկել ռուսական բանակին օգնության:

Օտար պետությունները ցարիզմին աջակցում էին այլևայլ միջոցներով: Այդ տեսակետից բնորոշ էր Թուրքիայի օրինակը: Ցարին տապալելու հեռանկարը սոսկալի վախ էր հարուցել թուրքական սուլթանի հոգում: Աբդուլ Համիդը մտածում էր, որ ռուսական միապետի տապալմանը կհաջորդի օսմանյան միապետի տապալումը: Երկու միապետերի դասակարգային համերաշխությունը բազմապիսի դրսևորումներ ուներ: Օրինակ՝ սևծովյան նավատորմի «Պոտյոմկին» զրահանավի ապստամբությունից հետո ցարական կառավարությունը դիմել էր թուրքական սուլթանին և Ռումինիայի կառավարությանը՝ ապստամբ նավաստիներին ձերբակալելու և Ռուսաստանին հանձնելու պահանջով: Սուլթանը քանիցս ռումինական կառավարությանը հորդորեց ապստամբներին հանձնել ցարիզմի դատաստանին:

Հեղափոխությունը պարտվեց, բայց այն ունեցավ խոշոր նշանակություն ինչպես երկրի ներքին կյանքում, այնպես էլ միջազգային մասշտաբով:

Հեղափոխությունը ակնհայտորեն ցույց տվեց, որ ցարական միապետական կարգերը վերջնականապես սպառել են իրենց, որ երկրում հասունացել են հասարակական-քաղաքական նոր ուժեր, որոնք ունակ են իրենց հետևից տա-

[1] Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք առաջին, էջ 64:
[2] Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին , էջ 406-414:
[3] Նույն տեղում, էջ 406-410:

նելու աշխատավոր ժողովրդին, տապալելու ստելի բռնապետությունը: Հեղափոխության երեք տարիների ընթացքում ռուսական կառավարության բանվոր և գյուղացի դասակարգերը ձեռք բերեցին պայքարի հարուստ փորձ, որը անհրաժեշտ էր հետագա հեղափոխական մարտերի համար:

Ոչ պակաս տպավորիչ էր հեղափոխության ունեցած ազդեցությունը միջազգային իրադարձությունների վրա: Հատկապես Ռուսաստանին հարևան երկրներում այն ակտիվացրեց ներքին քաղաքական կյանքը և առաջ բերեց իրենց բնույթով տարբեր շարժումներ, որոնց կանդրադառնանք աշխատության հետագա էջերում:

ՍՈՑԻԱԼ - ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ - ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սոցիալ-դեմոկրատների և ազգային կուսակցությունների միջև տեղի ունեցող տեսաբանական վեճերի ոլորտում առանձին նշանակություն էր ձեռք բերել Ռուսաստանում և Անդրկովկասում ապագա ազգային ու պետական շինարարության ձևերի հարցը:

Ընդհանրապես ազգային հարցին վերաբերող բոլոր խնդրիները քննելիս՝ հայ բոլշևիկներն առաջնորդվում էին ոչ միայն Մարքսի, Էնգելսի, Լենինի, այլև Ստեփան Շահումյանի մտքերով: Լինելով բոլշևիկյան կուսակցության ամենանշանավոր ղեկավար գործիչներից մեկը՝ Շահումյանը նաև ազգային հարցի խոշոր գիտակ էր, որի խորհուրդների կարիքը միշտ զգացել են կուսակցության տեսաբաններն ու ղեկավարները, այդ թվում Վ. Լենինը:

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան հենց սկզբից առաջնակարգ նշանակություն է տվել ազգային հարցի տեսական մշակմանը: Այդ տարողունակ հարցը հատկապես մեծ չափով հետաքրքրել է բոլշևիկներին, որոնք մասնավորապես խորությամբ ուսումնասիրել և լուսաբանել են հարցի՝ ապագա դեմոկրատական Ռուսաստանի պետական կառուցվածքի ձևերին վերաբերող մասը: Բոլշևիկների այդ հատուկ շահագրգռությունը թելադրված էր կայսրության, այդ թվում Անդրկովկասի ազգային խայտաբղետ կազմով:

Ազգային-պետական շինարարության տարողունակ խնդրում գլխավոր տեղը բռնում է դեմոկրատական պետության **իշխանության կենտրոնացման** հարցը:

Մարքսիզմի հիմնադիրների մտահղացմամբ՝ դեմոկրատականորեն կենտրոնացած պետությունը նպաստում է ավելի լավ հնարավորությունների ստեղծմանը՝ բուրժուազիայի դեմ մղած պայքարում պրոլետարիատի վճռական հաղթանակի համար: Այսպես, Էնգելսը ուղղակի գրում էր, որ կենտրոնացումը պրոլետարիատին տալիս է «հնարավորություն՝ միավորվելու, իրեն զգալու որպես դասակարգ, ձեռք բերելու... անհրաժեշտ քաղաքական աշխարհայացք և վերջիվերջո հաղթելու բուրժուազիային»[1]: Այսպիսով, դեմոկրատական-կենտրոնացված հանրապետությունը մարքսիզմի հիմնադիրների կողմից միշտ դիտվել է որպես առավել պիտանի ձև ազգային հարցի լիակատար լուծման համար՝ ի շահ սոցիալիզմի[2]:

Կենտրոնացված պետական կառուցվածքի ընդունումը Մարքսը և Էնգելսը տարածում էին նաև պրոլետարական պետության վրա, որը նրանք պատկերացնում էին միասնական դեմոկրատական հանրապետության ձևով: Այդ միտքը առավել հստակորեն ձևակերպել է Էնգելսը: «Եթե կա մի բան, որ ոչ մի կասկածի ենթակա չէ, - գրում էր նա 1891թ., քննադատելով Էրֆուրտի ծրագրի նախագիծը, - ապա դա այն է, որ մեր կուսակցությունը և բանվոր դասակարգը կարող են տիրապետության հասնել այնպիսի մի քաղաքական ձևով, ինչպիսին է դեմոկրատական հանրապետությունը..., պրոլետարիատը կարող է օգտագործել միայն միասնական և անբաժան հանրապետության ձևը»[3]:

Ազգային-պետական շինարարության ձևերի հարցում բոլշևիկյան կուսակցությունը նույնպես, ընդհուպ մինչև 1917 թվականը, հետևողականորեն պաշտպանել է միասնական, ձևով ունիտար, դեմոկրատական կենտրոնացած խոշոր բազմազգ պետության սկզբունքը: Նման պետությունը, ասում էր Լենինը, ապահովում է ազգային-տերիտորիալ ավտոնոմիայի զանազան ձևերի ստեղծման հնարավորությունը:

Ինչո՞վ էր պայմանավորված բոլշևիկների առաջնորդի այդ դիրքորոշումը: Ամենից առաջ, Ռուսաստանի պրոլետարիատն էր խորապես շահագրգռված այն բանում, որ դեմոկրատական հեղափոխության և սոցիալիզմի համար մղվող իր պայքարը զարգանա ըստ հնարավորին ավելի լայն ինտերնացիոնալ հիմքի վրա, իսկ դա պահանջում էր ոչ թե պետական մասնատում, այլ, հակառակը, հնարավորին չափ ավելի սերտ միավորում, բոլոր ազգությունների աշխատավորների համախմբում: Բոլշևիկները միշտ ելնում էին բոլոր ազգությունների բանվորների ինտերնացիոնալ և ազգային շահերի ու խնդիրների միասնության տեսանկյունից: Նրանք գտնում էին, որ ազգային ազատագրությունը և իսկական ազգային իրավահավասարությունն անկարելի է ձեռք բերել առանց տապալելու ցարիզմը, իսկ հետո նաև՝ կապիտալիստական կարգերը: Այդ պատմական խնդիրն իրականացնել կարող էր միայն Ռուսաստանի տարբեր ազգերից ձևավորված պրոլետարիատը, որ գլխավորում է երկրի բոլոր ազգերի աշխատավոր զանգվածներին:

Ռուսաստանի պայմանների կոնկրետ-պատմական յուրահատկությունն ամենից առաջ այն էր, որ բազմաթիվ ազգերն ու ազգությունները, կազմելով միասնական խոշոր բազմազգ պետություն, ընդհանուր պայքար էին մղում

[1] **К. Маркс и Ф. Энгельс**, Соч., т. 4, стр. 355:
[2] *Տե՛ս նույն տեղում, հատ. 22, էջ 238-239:*
[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 237-238:*

իրենց սոցիալական ու ազգային ազատագրության համար: Բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ այդ պայքարը գլխավորում էր ռուսական բանվոր դասակարգը, որն իր շուրջն էր համախմբել բոլոր ազգերի և ազգությունների աշխատավոր մասսաներին: Այդ պայմաններում կուսակցությունը ճնշված ժողովուրդների ազատագրման, ազգային կեղեքման ու անիրավահավասարության վերացման ամենակարճ ուղին տեսնում էր ոչ թե յուրաքանչյուր ժողովրդի ազգային ազատագրական շարժման առանձնացած լինելու, ոչ թե նրանց կողմից սեփական ազգային պետության ստեղծման մեջ, այլ միասնական խոշոր բազմազգ պետության շրջանակներում ինտերնացիոնալ հեղափոխական պայքարի զարգացման մեջ: Եվ թեպետ «միասնական և անբաժան» ցարական Ռուսաստանի ունիտարիզմի բռնակալական բնույթը ի չիք էր դարձնում միասնական խոշոր պետության շատ առավելություններ, այնուամենայնիվ, այդ պետական ձևը, նման պայմաններում նույնիսկ, բարենպաստ հող էր ստեղծում դեմոկրատական հանրապետություն ստեղծելու, իսկ այնուհետև նաև՝ պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու համար:

«Ազատ ազգեր ազատ Ռուսաստանում» - այսպիսին էր նաև երկրի ազգային շրջանների սոցիալ-դեմոկրատների լոզունգը:

Բազմազգ երկրների պայմաններում հանդես գալով միասնական պետության օգտին՝ մարքսիստները միաժամանակ պաշտպանում էին **ազգերի ինքնորոշման** սկզբունքը:

«Հեղափոխական պրոլետարիատը և ազգերի ինքնորոշման իրավունքը» հոդվածում (1915թ.) Վ. Ի. Լենինը գրում էր, որ պաշտպանելով ազգերի ինքնորոշման իրավունքի «անկեղծ ճանաչումը, ճնշող ազգերի ս.-դ.-ները պետք է պահանջեն ճնշված ազգերի անջատման ազատություն, քանի որ հակառակ դեպքում ազգերի իրավահավասարության և բանվորների միջազգային համերաշխության ճանաչումն իրականում կլիներ դատարկ խոսք, սոսկ կեղծավորություն: Իսկ ճնշված ազգերի ս.-դ.-ները իրենց գործունեության անկյունաքարը պետք է դարձնեն ճնշված ազգերի բանվորների միասնությունն ու միաձուլումը ճնշող ազգերի բանվորների հետ, քանի որ հակառակ դեպքում այդ ս.-դ.-ները ակամայից դաշնակիցներ կդառնան այս կամ այն ազգային **բուրժուազիային**, որը **միշտ** դավաճանում է ժողովրդի և դեմոկրատիայի շահերին, **միշտ** պատրաստ է, իր հերթին, անեքսիաների և ուրիշ ազգերի ճնշման»[1]:

Լենինը նշում էր, որ ազգերի ինքնորոշման պահանջը հենց այնպես չի առաջացել:

«Մարքսիստները չեն կարող աչքաթող անել այն **տնտեսական** հզոր գործոնները, որոնք ծնում են ազգային պետություններ ստեղծելու ձգտումներ: Դա նշանակում է, որ մարքսիստների ծրագրում «ազգերի ինքնորոշումը» պատմա-տնտեսական հայեցակետից **չի կարող** այլ նշանակություն ունենալ,

[1] **Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հատ. 27, էջ 77:

բացի միայն քաղաքական ինքնորոշումը, պետական ինքնուրույնությունը, ազգային պետության կազմավորումը»[1]:

Դատապարտելով Ռոզա Լյուքսեմբուրգի մետաֆիզիկական տեսակետը, ըստ որի լեհական ազգայնականները չպետք է պահանջեն Լեհաստանի անկախությունը, Լենինը գտնում էր, որ ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատները չեն կարող համաձայնել նման պահանջի հետ: Սոցիալիստների կողմից Լեհաստանի անկախության դեմ կամ թեր լինելը կախված էր որոշակի կոնկրետ հանգամանքներից: Ճիշտ էին Մարքսը և Էնգելսը, երբ 19-րդ դարի 40-60-ական թվականներին պահանջում էին Լեհաստանի անջատումը, նրա անկախությունը Ռուսաստանից, որպիսի հանգամանքը ո՛չ միայն համառուսական, ո՛չ միայն համասլավոնական, այլև համաեվրոպական դեմոկրատիայի համար վիթխարի նշանակություն ուներ: Վերոհիշյալ ժամանակաշրջանում սլավոնական երկրներում, այդ թվում Ռուսաստանում, չկային մասսայական ազատագրական շարժումներ, իսկ Լեհաստանում այդպիսին կար, և եթե այդ շարժումը հաղթանակ տաներ, ապա խոշոր ազդեցություն կունենար ոչ միայն Ռուսաստանի, այլև առհասարակ Եվրոպայի դեմոկրատական շարժման վրա և առաջին հերթին կխթաներ սլավոնական ժողովուրդների արթնացմանը:

Երբ պրոլետարական հեղափոխության ալիքը Եվրոպայից անցավ Ռուսաստան, և Ռուսաստանը դարձավ համաշխարհային պրոլետարական հեղափոխական շարժման կենտրոնը, իսկ նույն ժամանակ Լեհաստանը կորցրեց իր հեղափոխական նշանակությունը, բնականաբար, պետք է փոխվեր և Լեհաստանի նկատմամբ մարքսիստների վերաբերմունքը քննվող հարցի տեսակետից: Եվ դա հատկապես այն պատճառով, որ եթե Լեհաստանում 1860-ական թվականներին կար դեմոկրատական շարժում, ապա Ռուսաստանում 20-րդ դարում առկա էր պրոլետարիատի հզոր հեղափոխական շարժումը: Ահա թե ինչու Լենինը դատապարտում էր Ռ. Լյուքսեմբուրգին և լեհական սոցիալիստներին: «Եթե ԼՍԿ-ն («Լեհական սոցիալիստական կուսակցությունը», այժմյան «Ֆրակները») 1896 թվականին փորձում էր Մարքսի տեսակետը «ամրացնել» **այլ դարաշրջանի**, ապա դա արդեն նշանակում էր մարքսիզմի **տառն** օգտագործել ընդդեմ մարքսիզմի **ոգու**», որովհետև « ... եթե Մարքսի այդ տեսակետը միանգամայն ճիշտ էր XIX դարի երկրորդ երրորդի կամ երրորդ քառորդի համար, ապա այն դադարեց ճիշտ լինելուց XX դարի սկզբին»[2]:

Ռուսաստանից Լեհաստանի բաժանման խնդրին դիալեկտիկորեն էր մոտենում Ստեփան Շահումյանը: «Ազգային հարցը Ռուսաստանում», «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» և ուրիշ աշխատություններում նա շեշտում էր, որ Մարքսը միանգամայն իրավացի էր, երբ 19-րդ դարի 60-ական թվականներին ողջունում էր Լեհաստանի ապստամբությունը և Ռուսաստա-

[1] **Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հատ. 25, էջ 316:
[2] Նույն տեղում, էջ 359-360:

նից այդ երկրի անջատման պահանջը, որովհետև այն ժամանակ դա կնպաստեր «Եվրոպայի ժանդարմի» ուժերի ջլատմանը[1]: Բայց նոր ժամանակներում, երբ 1905թ. սկսվել է ռուսական հեղափոխությունը, մարքսիստները, այդ թվում լեհ մարքսիստները, դեմ են Ռուսաստանից Լեհաստանի անջատվելուն, որովհետև փոխվել են պատմական հանգամանքները: Այժմ, ասում էր նա, երբ Ռուսաստանում փոթորկվում են հեղափոխական ալիքները, իսկ Եվրոպայում հեղափոխական շարժումը նահանջ է ապրում, Լեհաստանի անջատումը Ռուսաստանից «կնշանակեր ջլատել համառուսական դեմոկրատիայի ուժերը և մնասել ազատության գործին ընդհանրապես»[2]: «... Շնորհիվ փոխված տնտեսական և քաղաքական հարաբերությունների, բանվորների ազատագրական դատի համար ավելի ձեռնտու էր Լեհաստանի սերտ կապը Ռուսաստանի հետ, և մարքսիստները, ու ամենից առաջ իրենք՝ լեհ մարքսիստները, դեմ էին Լեհաստանի անջատմանը»[3]:

Ազգերի ինքնորոշման սկզբունքը բոլշևիկյան կուսակցության ծրագրային պահանջն էր: Այդ պահանջն առաջին անգամ ձևակերպվել է 1902թ. հունվար-փետրվարին: Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջին ծրագրի նախագծի եզրափակիչ մասում ամենաառաջնահերթ քաղաքական պահանջների թվում առաջ էր քաշվում «պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը»[4]:

ՌՄԴԲԿ 2-րդ համագումարում (1903թ. հուլիս-օգոստոս) ազգերի ինքնորոշման պահանջը պաշտոնապես վավերագրվեց կուսակցության առաջին ծրագրում: Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, ասված էր ծրագրում, իր անմիջական քաղաքական խնդիրն է համարում տապալել ցարիզմը և հաստատել դեմոկրատական հանրապետություն, որի հիմնական փաստաթղթի՝ սահմանադրության մեջ պետք է հաստատագրվի պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգերի ինքնորոշման իրավունքը:

Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին բոլշևիկյան դրույթները կարևոր զարգացում ստացան, մասնավորապես, Վ. Ի. Լենինի «Թեզիսներ ազգային հարցի մասին» (1913թ.)[5] աշխատության մեջ և «Ազգային հարցի մասին» բանաձևում, որն ընդունվել էր Պորոնինոյի խորհրդակցությունում 1913թ. աշնանը: Այս երկու փաստաթղթերը կազմեցին մի միասնական ամբողջություն, որոնցում ձևակերպված են չորս առավել էական մոմենտներ, որոնք բացահայտում են բոլշևիկյան ըմբռնմամբ ազգերի ինքնորոշման իրավունքի իմաստն ու նշանակությունը, պարզաբանում այդ իրավունքի պրակտիկ օգտագործման ուղիներն ու բնույթը:

---

[1] Տե՛ս **Ստ. Շահումյան**, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 261-262:
[2] Նույն տեղում, հատ. երկրորդ , էջ 382:
[3] Նույն տեղում:
[4] **Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հատ. 6, էջ 261:
[5] Նույն տեղում, հատ. 23, էջ 384-394:

Առաջին, այդ թեզիսներում և բանաձևում ազգերի ինքնորոշման իրավունքը շարադրված է որպես ինքնորոշման իրավունք՝ ընդհուպ մինչև անջատում և ինքնուրույն պետության կազմում: Երկրորդ, փաստաթղթերում հստակորեն ցույց է տրված, որ ինքնորոշման իրավունքն ամենևին չի նշանակում ազգերի անջատման նպատակահարմարություն և առավել ևս՝ պարտավորություն: Երրորդ, սահմանված է, որ ազգերի անջատման հարցը կուսակցությունը լուծում է յուրաքանչյուր դեպքում կոնկրետ-պատմական իրադրությունից ելնելով, բայց բոլոր պայմաններում այդ լուծումը պետք է ենթարկվի պրոլետարիատի շահերին՝ բուրժուազիային տապալելու և իշխանությունը գրավելու համար մղած պայքարի նպատակներին: Չորրորդ, ազգերի ինքնորոշման իրավունքում գլխավորը, ինչպես հետևում է թեզիսներից և բանաձևից, ոչ թե ազգերի անջատումն է, այլ նրանց ազատ մերձեցումը և միաձուլումը*:

Հետագայում բոլշևիկյան տեսաբանները զարգացրին և էլ ավելի կոնկրետացրին ազգերի ինքնորոշման իրավունքի դերն ու էությունը՝ իրենց աշխատություններում հիմնավորելով կուսակցության ծրագրային պահանջը՝ հետևողականորեն պայքար մղել ազգային ճնշման ու ստրկացման ամեն տեսակ ձևերի դեմ հանուն ազգերի իրավահավասարության, ազատության և կամավորության:

Հաշվի առնելով ցարիզմի բացահայտ ռեակցիոն ազգային քաղաքականությունը ոչնչացնելու անհրաժեշտությունը և ռուսական կայսրության ոչ ռուս շատ ժողովուրդների ձգտումը՝ ստեղծելու ինքնուրույն պետություններ, ինչպես նաև բոլոր ազգերի աշխատավորներին ռուսական բանվոր դասակարգի շուրջը համախմբելու խնդիրը՝ բոլշևիկյան ղեկավարությունը խիստ կարևոր էր համարում ամեն կերպ պրոպագանդել «բոլոր ազգությունների իրավունքը՝ կազմելու առանձին պետություն կամ ազատորեն ընտրելու այն պետությունը, որի կազմում նրանք ցանկանում են լինել»[1]:

Լենինը խստիվ քննադատում էր գերմանացի սոցիալ-դեմոկրատ Պարաբելլումին այն բանի համար, որ նա գտնում էր, թե «այժմ բոլոր ազգային հարցերը՝ էլզաս-լոթարինգիականը, հայկականը և այլն, իմպերիալիզմի հարցեր են», որ «կապիտալը գերաճել է ազգային պետությունների շրջանակներից» և որ հենց այդ պատճառով «չի կարելի պատմության անիվը ետ դարձնել դեպի ազգային պետությունների իր դարն ապրած իդեալը և այլն»[2]:

Ազգերի ինքնորոշման իրավունքն իր էությամբ դեմոկրատիայի պահանջներից մեկն է: Ազգային հարցի հետևողական լուծման ընդհանուր պլանում այդ պահանջը նշանակում է անվերապահ պայքար ազգային ճնշման ու

---

* «Միաձուլում» ասելով բոլշևիկները նկատի ունեին ոչ թե ազգերի կենսաբանական, այլ քաղաքական միաձուլում՝ միասնական նպատակների շուրջ:
[1] **Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հատ. 23, էջ 385:
[2] Նույն տեղում, հատ. 27, էջ 72:

ստրկացման ամեն մի ձևի ու դրսևորման դեմ[1]: Բոլոր հանգամանքներում և ցանկացած պայմաններում այն ենթադրում է ազգի ազատություն և ինքնուրույնություն իր ներքին կյանքի հարցերը լուծելու գործում, ուրիշ ազգերի նկատմամբ որոշ ազգերի թշնամանքի վերացում, բարեկամության և փոխօգնության հաստատում ազգերի միջև՝ անկախ նրանց թվաքանակից և զարգացման մակարդակից: Այս ամենը կազմում է սուվերենության պրոբլեմի ճիշտ լուծման ռեալ նախադրյալներ՝ իր կազմով բազմազգ երկրում[2]:

Հարկավոր է նշել նաև, որ ազգային ճնշման դեմ մղվող ընդհանուր պայքարի տեսակետից ինքնորոշման իրավունքը չի սահմանափակվում լոկ իրենց ազատագրության համար պայքարող ազգերի շահերով: Այդ իրավունքը կարևոր դեր է կատարում նաև այն ժողովուրդների համար, որոնք պատմականորեն սուվերենություն ունեցել են իրենց գոյության հենց սկզբից: Նկատի ունենալով Ռուսաստանի կոնկրետ պայմանները՝ Վ. Լենինը 1913թ. մատնանշում էր, որ ճնշվող ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացումը անհրաժեշտ է՝ նկատի ունենալով նաև վելիկոռուս բնակչության ազատության գործը, որն անընդունակ կլինի դեմոկրատական պետություն ստեղծելու, եթե հիմնովին չոչնչացվի վելիկոռուսական սևհարյուրակային նացիոնալիզմը:

Ռուսաստանի այն ժամանակաշրջանի առավել ռեակցիոն և շովինիստական կուսակցությունը սևհարյուրակայիններն էին: Այդ կուսակցության դիրքը արտահայտել է հայտնի Պուրիշկևիչը: «Քանի դեռ Ռուսաստանը, - պընդում էր նա, - չի ստանա լայն իշխանությամբ օժտված դիկտատոր ... կայսրության մեջ կարգուկանոն չի լինի»[3]: Սրանով արդեն ասված է ամեն ինչ՝ և՛ պետական կառուցվածքի վերաբերյալ հայացքների մասին, և՛ սևհարյուրակայինների ազգային քաղաքականության մասին, որոնց միակ պահանջն էր՝ «միասնական ու անբաժան» Ռուսաստան:

Սևհարյուրակայինների ծրագրից քիչ բանով էր տարբերվում Ռուսաստանի պետական կառուցվածքի այն պլանը, որ առաջարկում էր կադետների կուսակցությունը՝ հանդես գալով լոկ ազգային ճնշման ձևերն ու մեթոդները որոշ չափով փոփոխելու օգտին: Կադետների առաջնորդ Միլյուկովն այդ առթիվ ասում էր. «Նախանձելի է, երբ կարդում ես անգլիական գաղութային քաղաքականության կուլտուրական մեթոդների մասին, քաղաքականություն, որը կարողանում է քաղաքակիրթ, ժամանակակից միջոցներով հասնել մասերի միաձուլման»[4]: Ռուսաստանի ճնշված ազգերի՝ ինքնուրույն դառնալու ամեն մի փորձ կադետները գնահատում էին որպես դավաճանություն հայրենիքին:

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, եԼԺ, հատ. 23, էջ 310:
[2] Տե՛ս С. Р. Вихарев, В. И. Ленин о суверенитете союзных республик, изд. БГУ, Минск, 1969, էջ 50-54:
[3] Մեջբերված է՝ Я. Темкин, Большевики в борьбе за демократический мир, М., 1957, էջ 297:
[4] Մեջբերված է՝ А. Я. Аврех. Царизм и третьеиюньская система, М., 1966, էջ 88:

Օրինակ, խոսելով «անջատողական դրսևորումների» դեմ մղվող պայքարի անհրաժեշտության մասին՝ կադետական հայտնի գործիչ Նաբոկովը պնդում էր, որ «մեր հայրենիքը անդամահատելու ամեն մի փորձ պետք է դատապարտվի որպես գիտակցական կամ անգիտակցական օգնություն թշնամուն»[1]:

Մարքսիստները ազգային հարցի լուծումը կապում էին տվյալ երկրի դեմոկրատացման, դեմոկրատական իրավունքների սահմանադրական երաշխավորման, ամենալայն ժողովրդական մասսաներին երկրի պետական կյանքին մասնակից դարձնելու, բյուրոկրատական, ոստիկանական հալածանքներին վերջ տալու, գյուղում ճորտատիրական մնացորդները վերացնելու, ագրարային հարցը լուծելու հետ:

Բոլշևիկյան ղեկավարությունը գտնում էր, որ ազգային հարցը քաղաքագետները պարտավոր են քննարկել դիալեկտիկորեն: Կատարելով Ավստրիայում և Ռուսաստանում ազգային հարցի վիճակի պատմաքննական վերլուծություն՝ Լենինը եզրահանգել էր, որ ազգային հարցի լուծումը այդ երկու բազմազգ երկրներում չի կարող միանման լինել, որովհետև մի շարք հանգամանքներով այդ երկրները տարբերվում են իրարից: Այդ հանգամանքներից առաջինն այն է, նշում էր նա, որ Ավստրիայում բուրժուադեմոկրատական հեղափոխությունն ավարտվել է դեռևս 1867 թվականին, և այդ ժամանակից սկսած՝ անցած տասնամյակներին այստեղ ստեղծվել է զարգացման բարձր աստիճանի հասած կապիտալիզմ, որի պայմաններում երկրի ոչ գերմանացի երկու ազգերը՝ հունգարներն ու չեխերը, առայժմ պետականորեն անջատվելու ցանկություն չեն դրսևորում, որովհետև հարևան երկու գիշատիչ պետությունները՝ Գերմանիան և Ռուսաստանը, ամեն ադիթով կարող են խլել նրանց ձեռք բերած անկախությունը՝ արյան մեջ խեղդելով հազարավոր կյանքեր: Այնուհետև Լենինը գրում էր, որ բոլորովին այլ հանգամանքներ գոյություն ունեն Ռուսաստանում, ուր 1905 թվականի բուրժուադեմոկրատական հեղափոխությունը թեև սասանեց ցարի գահը, բայց դեռ չկարողացավ տապալել ցարական միապետությունը:

Ավստրիայի և Ռուսաստանի համեմատությունը կատարում էր նաև Ստ. Շահումյանը: Նա հիշեցնում էր, որ Ավստրիան պառլամենտարիզմի երկիր է, այնտեղ ազգային հարաբերությունները կարգավորվում են ռեֆորմների միջոցով: Իսկ քանի որ Ռուսաստանում չկան պառլամենտ, պառլամենտական պայքարի ավանդույթներ, ուստի ազգային խնդիրները չեն կարող լուծվել առանձին ռեֆորմների միջոցով, զուտ սահմանադրական եղանակով, պառլամենտի ընդունած որոշումներով: Շահումյանը հետևություն էր անում, որ քանի դեռ ազգային հալածանքը և բիրտ ճնշումը շարունակում են մնալ որպես ռուսական հասարակության անկապտելի հատկանիշներ, այլազգի ժողովուրդների ներսում շարունակելու են մնալ սեպարատիստական ձգտումներ: Իսկ դա

[1] Մեջբերված է՝ "15 лет советского строительства", М., 1932, էջ 42:

նշանակում է, որ Ռուսաստանում ազգային հարցը շարունակում է մնալ բազմազգ պետության գոյության հիմնական հարցը:

Ստ. Շահումյանը դեմ չէր Ռուսաստանի ժողովուրդների ազգային ինքնորոշմանը, ազգային պետություն կազմելուն: Ընդհակառակը, կռվելով բունդական «սպեցիֆիկյան» կուլտուր-ազգային ավտոնոմիստների դեմ, նա ցույց էր տալիս, որ կուլտուրական ավտոնոմիան ելք չէ,որ միակ ելքը պետք է փնտրել ազգերի ինքնորոշման մեջ, որ այդ պահանջին չի կարելի դեմ գնալ, ինչպես չի կարելի դեմ գնալ լեզվի և խղճի ազատությանը: Բայց ելնելով կոնկրետ իրադրությունից, երբ ցարիզմը ոչ միայն տնտեսապես ճնշում է Ռուսաստանում ապրող ազգություններին, այլև հալածում, ելնելով ազգային հատկանիշից, իրար դեմ հանում տարբեր կրոններ դավանողներին, պարբերաբար հրահրում բարբարոսական կոտորածներ, ամեն ինչ անում է իրարից անջատելու տարբեր ազգերի պրոլետարներին, արգելք լինելու նրանց միավորվելուն և ռուսական պրոլետարիատի հետ բռնապետական կարգերի դեմ պայքարը շարունակելուն, - ահա այսպիսի պայմաններում ազգերի առանձնացման քարոզը և ռուս ժողովրդից անջատելը ուժգին հարված կլինի բանվոր դասակարգի միասնությանը, որի ուժը նրա համախմբվածության ու կազմակերպվածության մեջ է:

Միասնական Ռուսաստանից ոչ ռուս ժողովուրդների անջատման գաղափարին Շահումյանը հակադրում է բոլշևիկների կուսակցության ծրագրային պահանջները ազգային հարցում. «1. Քաղաքացիական կատարյալ հավասարություն պետության բոլոր հպատակների համար - **անխտիր ազգից ու ցեղից**: 2. Ազգային կուլտուրայի զարգացման, ուրիշ խոսքով՝ լեզվի, խղճի, գրականության և այլն, կատարյալ ազատություն, 3. Քաղաքական ինքնորոշման իրավունք պետական կազմի մեջ մտնող բոլոր ազգերի համար»[1]:

Ազգերի ինքնորոշման պահանջի կարևոր բաղադրիչներից էր **ֆեդերալիզացիան** :

Բուրժուական ոչ մի ֆեդերացիա չի ստեղծվել կամավոր հիմունքներով: Բոլոր բուրժուական ֆեդերացիաները ծագել են դաժան բռնությունների, ստրկացման, պատերազմների ու առևտրական գործարքների միջոցով: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ը, որպես ֆեդերացիա (1787 թվականից), ստեղծվել է առանձին նահանգների նկատմամբ ներքին բռնության հետևանքով: 19-րդ դարի սկզբին ԱՄՆ-ը Ֆրանսիայից ու Իսպանիայից գնեց Լուիզիանա և Ֆլորիդա նահանգները: Մեքսիկայի դեմ մղված պատերազմի ժամանակ (1846-1848թթ.) ԱՄՆ-ը իրեն միացրեց Տեխաս, Նոր Մեքսիկա և Կալիֆոռնիա նահանգները: Ֆեդերացիան ԱՄՆ-ում վերջնականապես հաստատվեց հյուսիսային և հարավային նահանգների միջև 1861-1865 թթ. մղված քաղաքացիական պատերազմի և հարավցիների նկատմամբ հյուսիսցիների տարած հաղթանակի հետևանքով: Պատերազմների ու բռնության միջոցով են ստեղծվել նաև

[1] Ստ. Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 256-257:

բուրժուական մյուս ֆեդերացիաները: Մասնավորապես, շվեյցարական ֆեդերացիան կազմվել է 1847թ. քաղաքացիական պատերազմից և, այսպես կոչված, Զոնդերբունդի մեջ միավորված յոթ կանտոնների ջախջախումից հետո: Միավորման նման «մեթոդների» դեպքում ֆեդերացիայի բաղադրամասերի սուվերենությունը, որպես կանոն, վերացվում է որպես անտեղի խոչընդոտ:

Ուսումնասիրելով բուրժուական ֆեդերացիան՝ Մարքսը և Էնգելսը այն դիտում էին որպես ֆեոդալական մասնատվածության վերապրուկ, որպես պետական միասնության խախտում, միասնություն, որը թելադրվում է հասարակության զարգացման պահանջմունքներով: Նրանք ելնում էին այն բանից, որ ֆեդերացիան ապակենտրոնացնում է և, հետևաբար, խոչընդոտ կարող է լինել սոցիալիստական պետության ստեղծման ճանապարհին: Ըստ նրանց դատողության, ֆեդերացիան կարող է լինել միայն բացառություն կամ անցման ձև, իսկ սկզբունքորեն այն հակասում է դեմոկրատական ցենտրալիզմին, ուստի և արժանի է բացասական վերաբերմունքի բանվոր դասակարգի ու նրա կուսակցության կողմից:

Ֆեդերացիան միայն բացառություն և միայն անցման ձև դիտարկելիս՝ Մարքսը և Էնգելսը, լինելով հետևողական ցենտրալիստներ, մշտապես պաշտպանելով միասնական ու անբաժան դեմոկրատական հանրապետության գաղափարը, երբեք, սակայն, չեն արտահայտվել ֆեդերացիան հախուռն կերպով մերժելու օգտին: Դրսևորելով կոնկրետ պատմական, դիալեկտիկական-մատերիալիստական և պրոլետարական-դասակարգային մոտեցում նրանք մշտապես դեմ են եղել պետության որևէ մեկ ձևի մետաֆիզիկական բացարձակացմանը և մյուս ձևերի անվերապահ ժխտմանը, երբեք քննարկման չեն դրել այն վերացական հարցը, թե դեմոկրատական պետության այս կամ այն ձևը, որպես այդպիսին, լավ է, թե՞ վատ: Հարցի նկատմամբ մարքսիստական մոտեցման մեթոդաբանությունը ելնում է այն բանից, որ անկարելի է վերաբերմունք ճշտել պետության որևէ ձևի նկատմամբ՝ առանց հաշվի առնելու, նախ, պատմական՝ որոշակի դարաշրջանի շրջանակները և, երկրորդ, որոշակի երկրի կոնկրետ պայմանները: Մարքսիստները գտնում էին, որ ճիշտ հասկանալ և գնահատել պետության այս կամ այն ձևը, նրա դերն ու նշանակությունը, կարելի է միայն հեղափոխական դասակարգի դիրքերից խորապես վերլուծելով սոցիալ-քաղաքական այն պրոցեսները, որոնց հիման վրա ծագում և զարգանում է այդ ձևը:

Ելնելով կոնկրետ պատմական իրադրության հաշվառումից, մարքսիզմի հիմնադիրներն էական վերապահություն են արել որոշ բազմազգ երկրների համար: Ղեկավարվելով երևույթների և հարցերի վերլուծության ու քննարկման մեթոդով, հաշվի առնելով անմիջականորեն յուրաքանչյուր տվյալ երկրի գոյության պայմանները՝ նրանք մի շարք դեպքերում ընդունել են նաև պետական կառուցվածքի ֆեդերատիվ ձևի ոչ միայն հնարավորությունը և թույլատրելիությունը, այլև ուղղակի նպատակահարմարությունը: Մարքսի և Էնգելսի

կարծիքով, որոշակի առանձնահատուկ պայմաններում ֆեդերացիան կարող է դառնալ ազգային հարցի լուծման, մեկ պետության շրջանակներում ազգերի համագործակցությունը ապահովելու հարմար միջոց:

Այսպես, հաշվի առնելով Անգլիայում և Իռլանդիայում ստեղծված քաղաքական իրադրությունը՝ Կ. Մարքսը Անգլիայից վերջինիս անջատումը դիտում էր որպես իռլանդական հարցի լուծման ընդունելի եղանակ: Այդ ոգով նա արտահայտվել է 1867-1870 թվականներին: Նա այդ անջատումը պահանջում էր ոչ թե խաղաղ կապիտալիզմի մանրբուրժուական ուտոպիայի տեսակետից, ոչ թե «Իռլանդիայի նկատմամբ արդարացիության» տեսակետից, այլ ճնշող, այսինքն՝ անգլիական ազգի պրոլետարիատի կողմից կապիտալիզմի դեմ մղվող հեղափոխական պայքարի շահերի տեսակետից: Այդ ազգի ազատությունը կաշկանդվում և այլանդակվում էր նրանով, որ նա ճնշում էր մի ուրիշ ազգի:

Ընդ որում, Մարքսը, ելնելով Անգլիայի և Իռլանդիայի միջև եղած տնտեսական ու աշխարհագրական սերտ կապերի առկայությունից, չէր բացառում անգլո-իռլանդական ֆեդերացիա կազմելու հնարավորությունը[1]: Ավելին, առանձին դեպքերում Մարքսը այն համարում էր **անխուսափելի** : 1867թ. նոյեմբերի 2-ի նամակում նա գրել է. «Առաջ ես Իռլանդիայի անջատումը Անգլիայից համարում էի անհնարին: Այժմ ես այն համարում եմ անխուսափելի, թեպետ անջատմանը կարող է հաջորդել ֆեդերացիան»[2]:

Իր հերթին «Էրֆուրտի ծրագրի քննադատությունը» գրքում Էնգելսը գրում էր, որ հնարավոր է միացյալ թագավորության փոխարեն Անգլիայի, Իռլանդիայի, Շոտլանդիայի և Ուելսի ֆեդերացիայի ստեղծումը: Անգլիայի և Իռլանդիայի միջև ֆեդերացիայի կազմավորման օգտին Էնգելսը հանդես է եկել նաև 1891 թվականին: Որպես ֆեդերացիայի ճանաչման անմիջական պատճառ՝ տվյալ դեպքում ազգային հարցը լուծելու անհրաժեշտությունն է եղել:

Մի այլ առիթով Մարքսը և Էնգելսը բազմազգ երկրի պայմաններում ֆեդերացիան համարել են «առաջընթաց քայլ»: Այդ «առաջընթաց քայլը» նրանք հասկանում էին այն իմաստով, որ այդպիսի հանրապետությունը անցումային ձև կդառնա ազգային փոքրամասնությունների ազատ զարգացումը ճնշող բյուրոկրատական կենտրոնացումից դեպի դեմոկրատական-կենտրոնացված հանրապետություն: Իբրև անցումային ձև, ֆեդերացիան, ըստ նրանց, կապահովի ազգամիջյան հաշտությունը և ազգերի հավասարությունը, միևնույն ժամանակ նրանց հնարավորություն կտա օգտագործել խոշոր պետության բոլոր օգուտները:

Ռուսական մարքսիստները, Մարքսի և Էնգելսի համեմատ, ֆեդերացիայի հարցում նկատելիորեն ձախ հակումներ էին դրսևորում ապագա Ռուսաստանում ֆեդերալիզացիայի հնարավորությունը դիտելով որպես մարքսիստական ընդունված սկզբունքից անցանկալի կամ հարկադրական շեղում:

Բոլշևիկյան կուսակցությունը ելնում էր այն բանից, որ Ռուսաստանի ֆեդերալիզացիայի պահանջը և դրա իրականացումը բուրժուակալվածատիրական կարգերի տիրապետության պայմաններում 1) Կհանգեցնի այն բանին, որ կխզվեն ազգային ծայրամասերի պատմականորեն ձևավորված տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերը կենտրոնական Ռուսաստանի, ռուսական բանվոր դասակարգի առաջավոր հեղափոխական շարժման հետ, 2) Կարող է սոսկ ուժեղացնել ազգային երկպառակությունը, ազգային-պետական անջրպետներ ստեղծել ռուսաստանյան պրոլետարիատի ինտերնացիոնալ համախմբման ճանապարհին, հարուցել նացիոնալիզմի չտեսնված աճ, ընդլայնել ու խորացնել բուրժուական նացիոնալիզմի գաղափարախոսության ազդեցությունը աշխատավոր մասսաների վրա, 3) Ազգային ծայրամասերի պրոլետարական մասսաների թուլության և անկազմակերպվածության պայմաններում Ռուսաստանի ֆեդերալիզացիայի պահանջն անխուսափելիորեն կհանգեցնի խոշոր բազմազգ պետության փլուզմանը և մանր միմյանցից մեկուսացած բուրժուանացիոնալիստական պետությունների ստեղծմանը ու դրանով իսկ անչափ կդժվարացնի հեղափոխության զարգացումը, հատկապես անցումը հեղափոխության սոցիալիստական էտապին ազգային շրջաններում:

Հենց այդ պատճառով Վ. Ի. Լենինը Ս. Գ. Շահումյանին գրած նամակում հաստատապես և որոշակիորեն հայտարարում էր, որ ոչ թե ֆեդերացիան, այլ «ավտոնոմիան դեմոկրատական պետություն կառուցելու մեր պլանն է»[1]: Պաշտպանելով ազգերի ինքնորոշման, ընդհուպ մինչև անջատման իրավունքը, և երբեք չլինելով ազգերը միմյանցից անջատելու, որպես ընդհանուր սկզբունքի, կողմնակից՝ Վ. Ի. Լենինը միևնույն ժամանակ Ռուսաստանի այն ժամանակվա կոնկրետ պայմաններում ամենայն հստակությամբ առաջարկում էր ալտերնատիվ լուծում. կամ մասնակցիր ընդհանուր թշնամու դեմ բոլոր ժողովուրդների մղած համատեղ պայքարին՝ միասնական խոշոր բազմազգ պետության շրջանակներում, կամ թե (եթե չես կարող կամ չես կամենում տանել ազգային ճնշումը և կարող ես խզել պատմականորեն ձևավորված կապերը) անջատվիր, կառուցիր քո առանձին, ինքնուրույն ազգային պետությունը, բայց մի՛ որոշիր մյուսների փոխարեն, մյուս ժողովուրդներին մի՛ պարտադրիր ֆեդերատիվ կապեր, մի՛ կարծիր, թե դու «ֆեդերացիայի իրավունք» ունես:

Ֆեդերալիզացիայի հարցում է՛լ ավելի ձախ դիրքորոշում ունեին Անդրկովկասի բոլշևիկները, որոնց վիճակված էր դժվարին պայքար մղել ֆեդերացիայի սկզբունքը հետևողականորեն պաշտպանող վրացական ֆեդերալիստ-

---

[1] *Տե՛ս* **К. Маркс и Ф. Энгельс,** Соч. , т. 16, էջ 407, т. 22, էջ 238, т. 31, էջ 318, т. 32, էջ 531:

[2] *Նույն տեղում*, т. 23, էջ 464:

[1] **Վ. Ի. Լենին,** ԵԼԺ, հատ. 27, էջ 73-74: Մենք այստեղ չենք ծանրանում ֆեդերացիայի և ավտոնոմիայի տարբերությունների վրա, միայն նշենք, որ երկուսն էլ ունեն օրենսդրական մարմիններ:

ների կուսակցության և Հ.Յ.դաշնակցության դեմ: Դաշնակցության պարագայում ֆեդերացիայի սկզբունքի կենսագործումը ծրագրային պահանջ էր, որը վերջնական պաշտոնական ձևակերպում ստացավ կուսակցության չորրորդ ընդհանուր ժողովում (1907թ.):

Ֆեդերալիզացիայի հարցին բազմիցս անդրադարձել է Ստ. Շահումյանը:

Ազգերի ինքնորոշման խնդիրը քննության ենթարկելիս՝ Շահումյանը հարցադրում էր. ինչպիսի՞ վարչական ու կազմակերպական ձևերով հնարավոր կլինի ապահովել ինքնորոշման, լեզվի, խղճի իրավունքների իրականացումը: Եվ պատասխանում էր, որ գոյություն ունեն դրանց իրականացման մի շարք ձևեր՝ ֆեդերացիա, ավտոնոմիա, ինքնավարություն և այլն, որոնք բոլորն էլ տանում են դեպի Ռուսաստանի տնտեսական-քաղաքական, կուլտուրական կենտրոնացում կամ ապակենտրոնացում՝ նայած թե ով է ձեռնարկում այդ ձևերի կիրառումը՝ բուրժուազիա՞ն, թե՞ պրոլետարիատը:

Շահումյանը նշում էր, որ բազմազգ խոշոր պետությունների մեջ ազգային հարցի լուծման համար տարբեր դասակարգեր առաջադրում են տարբեր միջոցներ: Խոշոր պետություններում գործող բուրժուական տեսաբանները ստեղծել են մի սկզբունք, որն ասում է. **ամեն պետություն պետք է ազգություն լինի:** Ելնելով դրանից՝ բուրժուազիան բոլոր միջոցներով աշխատում է պետության սահմաններում ապրող բազմալեզու և բազմացեղ ժողովուրդներից ստեղծել մի ազգություն: Դա իշխող ազգության հարձակողական ազգայնականությունն է, շովինիզմը[1]:

Հակառակ դրա և իբրև դրա պատասխան, մանր և հալածվող ազգերի բուրժուազիան հայտարարել է. **ամեն ազգություն պետք է պետություն լինի սկզբունքը:** «Եվ այդ սկզբունքի համեմատ, - գրում էր Ստ. Շահումյանը, - հալածված ազգերի բուրժուազիաները ձգտում էին անդամահատել ժամանակակից մեծ պետությունները: Սկզբներում նրանք կողմնակից էին բացարձակ բաժանման (սեպարատիզմին): Այժմ նացիոնալիստների մեծամասնությունը դարձել են **ֆեդերալիստներ:** Սկզբունքով, ըստ էության, նրանք մնացել են անփոփոխ. նրանք պահանջում են, որ ամեն մի ազգություն միանգամայն ինքնամփոփ և անկախ քաղաքական միություն լինի, որ քաղաքական գերիշխանությունը, սուվերենիտետը, պատկանի առանձին ազգերին, միայն նրանք դեմ չեն այժմ, ընդհանրապես վերցրած, որ այդ ազգային ինքնիշխան մարմինները ֆեդերատիվ կապերով կապվեն միմյանց հետ: Այդպիսով, ուրեմն, լուծել ազգային հարցը, ըստ նացիոնալիստական դպրոցի՝ նշանակում է բաժանել ժամանակակից միջազգային պետությունները մի քանի ազգային պետությունների»[2]:

Շահումյանը վիճարկում էր ոչ միայն ֆեդերացիայի, այլև ավտոնոմիայի

[1] Տե՛ս **Ստ. Շահումյան**, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 251:
[2] Նույն տեղում, էջ 251-252:

պահանջը, չնայած դա ամրագրված էր բոլշևիկյան կուսակցության ծրագրում: Պատահական չէ, որ այդ հարցում Լենինը անհամաձայնություն էր հայտնել Շահումյանին: Վերջինս մնալով իր տեսակետին՝ Անդրկովկասի համար հատկապես շեշտադրում էր շրջանային և մարզային ինքնավարության հարցը: Ըստ նրա, մարզային ավտոնոմիան չպետք է ունենա օրենսդրական ֆունկցիա, պետք է անմիջականորեն ենթարկվի ապագա դեմոկրատական Ռուսաստանի պառլամենտին, նրա հրատարակած օրենքներին և միայն պետք է զբաղվի տվյալ շրջանի, մարզի կուլտուրական, տնտեսական, վարչական խնդիրներով[1]:

Վրացական ֆեդերալիստների կուսակցությունը և Հ.Յ.դաշնակցությունը պայքարում էին, որպեսզի Անդրկովկասն ունենա լիակատար ինքնավարություն՝ պառլամենտով ու սահմանադիր ժողովով, իսկ երկրամասի ազգությունները պետք է սահմանափակվեին կուլտուրական ավտոնոմիայով:

Ստ. Շահումյանը գտնում էր, որ այդ դեպքում, նախ՝ Անդրկովկասը կկտրվի առաջավոր Ռուսաստանից, և նրա զարգացումը մեծապես կդանդաղի: Բայց կա ավելի մեծ վտանգ, գրում էր նա. անկախ դառնալուց հետո Անդրկովկասում երբեք վերջ չեն գտնի ազգային թշնամանքը, կոտորածներն ու ճնշումները: Այդ ամենն անխուսափելի կլինի, հիշեցնում էր Շահումյանը, քանի որ երկրամասը բազմազգ է, ըստ որում, այդ ազգերը գտնվում են կուլտուրական բոլորովին տարբեր մակարդակների վրա, և իշխող բուրժուակալվածատիրական դասակարգերը կարող են անընդհատ իրենց սև գործը տեսնել՝ առաջացնելով ազգամիջյան բախումներ և կոտորածներ: Անդրկովկասում կստեղծվի «...մի այնպիսի դժոխք, - գրում էր Շահումյանը, - որի նմանը դժվար է երևակայել, մինչև իսկ մեր առաջ ունենալով ներկա (1905-1906թթ.: - Հ.Ս.) թուրք-հայկական արյունոտ դրաման: Ամեն մի փոքր ազգություն իր քաղաքական կյանքը պետք է սկսի կոտորածով, արյունահեղությամբ»[2]:

ՌՄԴԲԿ IV (միավորիչ) համագումարում, ուր զանազան տեսանկյուններով արծածվում էր նաև ազգային հարցը, Ստ. Շահումյանը մի քանի ելույթ ունեցավ: Երբ համագումարում լեհ սոցիալ-դեմոկրատներն առաջ քաշեցին Լեհաստանի համար սահմանադիր ժողովի հարցը, մենշևիկ Ն. Զիչինաձեն (Քարթվելով) օգտվեց առիթից և առաջարկեց քննարկել նաև Անդրկովկասին ավտոնոմիա տալու հարցը: Բոլշևիկների անունից առարկելով այդ հարցադրմանը՝ Ստ. Շահումյանն ասում էր. «Մեր (ՌՄԴԲԿ: - Հ.Ս.) ծրագրում ազգային հարցը երբեք տարակուսանք չի առաջացրել Կովկասի մեր ընկերների շարքերում», նրանք չեն դրել «...Անդրկովկասի ավտոնոմիայի հարցը: Բոլորի համար էլ այդ հարցը լուծված է համարվել բացասական իմաստով... ուստի և դեմ եմ արտահայտվում այդ հարցը համագումարի օրակարգի մեջ մտցնելուն»[3]:

[1] Տե՛ս **Ստ. Շահումյան**, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 266, 271:
[2] Նույն տեղում, էջ 271-272:
[3] **"Четвертый ("Объединительный") съезд РСДРП, Протоколы"**, М., 1959, стр. 29-30.

Ն. Զիչինաձեի առաջարկի պաշտպանությամբ հանդես եկան Ն. Ժորդանիան (Կոստրով) և Ի. Ռամիշվիլին: Վերջինս աղավաղելով Շահումյանի ելույթը՝ ասում էր. «Հենց հիմա այստեղ Սուրենինը (Ստ. Շահումյանը: - Հ.Ս.) չասաց, թե Կովկասում անգամ մեկ դեմոկրատի շուրթերից ոչինչ չես լսի ազգային հարցի մասին»[1]: Շահումյանը ստիպված էր հանդես գալ հետևյալ հայտարարությամբ. «Ես չեմ ասել, թե սոցիալ - դեմոկրատները Կովկասում չգիտեն ազգային հարցը: Ես ասել եմ, որ մեր ծրագրի այդ հարցը տարաձայնություններ չի հարուցել Կովկասի սոցիալ-դեմոկրատների մեջ: **Սոցիալ-դեմոկրատներից և ոչ մեկը առաջ չի քաշել Անդրկովկասի ավտոնոմիայի հարցը**»[2] (ընդգծումը մերն է: - Հ.Ս.): Քննարկման արդյունքն այն եղավ, որ համագումարը մերժեց Կովկասի այնպիսի ավտոնոմիայի պահանջը, որն ունենար սեյմ և սահմանադիր ժողով:

Համագումարը քննարկեց նաև ՌՄԴԲԿ-ի հետ ազգային սոցիալ - դեմոկրատական կուսակցությունների միավորման հարցը: Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ - դեմոկրատական կազմակերպությունները ՌՄԴԲԿ-ի մեջ մտան որպես տերիտորիալ կազմակերպություններ: Բունդի կապակցությամբ բոլշևիկների անունից հիմնավորված նախագծով հանդես եկած Ստ. Շահումյանը շարադրեց միավորման պայմանները և մերժեց ՌՄԴԲԿ կազմակերպական կառուցվածքի նրա նացիոնալ-ֆեդերալիստական սկզբունքներն ու ձգտումները: «Համագումարը վստահություն է հայտնում, - նշում էր նա, - որ հրեա բանվորների պայքարի փաստական միավորումը մեկ միասնական կուսակցության սահմաններում անխուսափելիորեն կհասցնի կուսակցության կողմից ընդունվող ցենտրալիստական կազմակերպական սկզբունքի լրիվ կենսագործմանը»[3]:

ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ի՞նչ էին մտածում հայ մարքսիստները Հայկական ցավոտ հարցի մասին:

Ո՞րն էր միջազգային և հայ սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքային դիրքը Թուրքահայ և օսմանյան կայսրության մեջ նրա նման ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի նկատմամբ:

Հայկական հարցի, արևմտահայության ազգային ազատագրական շարժման մասին մարքսիստները, այդ թվում՝ հայ բոլշևիկները, ունեին իրենց ուրույն ու կայուն տեսակետը, որի սնուցող հողը դասակարգային պայքարի տեսությունն էր՝ ակունքում ունենալով Հայաստանի, հայ ժողովրդի և նրա ազատագրական պայքարի մասին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հայտնած կարծիքները:

[1] **"Четвертый ("Объединительный") съезд РСДРП, Протоколы"**, М., 1959, стр. 23.
[2] Նույն տեղում, էջ 29-30:
[3] Նույն տեղում, էջ 30:

Ֆ. ԷՆԳԵԼՍԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայ առաջին սոցիալիստներից մեկը՝ Հովսեփ Աթաբեկյանը, ավարտելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հայերեն թարգմանությունը (1894թ. աշուն), նախքան այն տպագրության տալը, նույն թվականի նոյեմբերին Շտուտգարտից (Գերմանիա) նամակ էր ուղարկել Լոնդոն՝ Ֆրիդրիխ Էնգելսին, և խնդրել «Մանիֆեստի» հայերեն թարգմանության համար գրել առաջաբան: Նամակում Աթաբեկյանը հարկ էր համարել նաև անդրադառնալ Հայաստանի ու հայ ժողովրդի պատմական ճակատագրին, պատմել Թուրքահայության իրավազուրկ, ողբերգական վիճակի մասին, առաջ էր քաշել հայ ժողովրդին հուզող մի շարք հրատապ հարցեր, հիմնավորել նրա միջավայրում սոցիալիստական ուսմունքի պրոպագանդման անհրաժեշտությունը:

Նկարագրելով Թուրքահայության ողբալի կացությունը՝ Աթաբեկյանն իր նամակում Թուրքիայում քաղաքական փոփոխությունների հեռանկարը տեսել էր ոչ թե համաժողովրդական, այլ ազգային հեղափոխության ուղիներում: Այդ պայքարի հաղթական ավարտի հույսերը նա կապում էր սոսկ Թուրքահայերի համընդհանուր ապստամբության հետ՝ ռուսահայերի աջակցության պայմաններում: Դա նշանակում է, որ Աթաբեկյանը հայերի ազգային շարժումը դիտում էր որպես քաղաքական մեկուսացման պայմաններում տեղի ունեցող գործընթաց:

Ահա հենց այս կետում է, որ Էնգելսը վճռականորեն արտահայտել էր իր անհամաձայնությունը և մերժել առաջաբան գրել «Մանիֆեստի» հայերեն թարգմանության համար, թեև դա պատճառաբանել էր նրանով, թե «ինձ համար դժվար է գրել որևէ բան, որ նախատեսված է հրատարակել այն լեզվով, որը չեմ հասկանում»:

Չնայած դրան, Աթաբեկյանին հղած իր պատասխան նամակում Էնգելսը լուսաբանել էր հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժման նկատմամբ մարքսիստների հստակ տեսակետը: Նա գրել էր.

«...Որքան էլ Ձեզ չնորհակալ եմ Հայաստանի վիճակի հետաքրքիր նկարագրության համար, այնուամենայնիվ, չեմ կարող ճիշտ և խելացի համարել դատողություններ արտահայտելու այն մասին, ինչ որ ես չեմ իմացել **սեփական հետազոտությամբ:** Առավել ևս տվյալ դեպքում, երբ խոսքը ճնշված ժողովրդի մասին է, որը դժբախտություն ունի գտնվելու Թուրքական դեսպոտիզմի **Սցիլլայի** և ռուսական դեսպոտիզմի **Խարիբդարի** միջև, ընդ որում ռուսական ցարիզմը չարաշահում է՝ հանդես գալով ազատարարի դերում, իսկ լակեյական ռուսական մամուլը, ելնելով ագրեսիվ ցարիզմի նպատակներից, բաց չի թողնում առիթը օգտագործելու հայերի ազատագրության վերաբերյալ արտահայ-

տած կարեկցանքի յուրաքանչյուր խոսք:

Բայց եթե անկեղծորեն ասենք, իմ անձնական կարծիքն է, որ Հայաստանի ազատագրումը Թուրքերից, **ինչպես նաև ռուսներից**, հնարավոր կլինի միայն այն օրը, երբ կտապալվի ռուսական ցարիզմը:

Լավագույն ցանկություններ Ձեր ժողովրդին:

Ձեզ անձնվեր Ֆ.Էնգելս»[1]:

Այսպիսով, Էնգելսը հայ հեղափոխականների ուշադրությունն ամենից առաջ բևեռում էր ցարիզմի դեմ պայքարի հարցերի վրա, համառուսական հեղափոխական շարժումների վրա՝ դրանց հաղթանակով պայմանավորելով թե՛ ռուսական և թե՛ Թուրքական Հայաստանի ազատագրությունը:

Ռուսական ցարիզմի նկատմամբ խիստ բացասական վերաբերմունք ունեցող Ֆ. Էնգելսը, ինչպես նաև Կ. Մարքսը, քաջատեղյակ էին այն իրողությանը, որ թե՛ ռուսահայերը և թե՛ Թուրքահայությունը դրականորեն են տրամադրված դեպի Ռուսաստանը, ավելին, նրանք բազմիցս անկեղծ նվիրվածություն են հանդես բերել այդ երկրի, նրա ժողովրդի, նրա իշխանությունների նկատմամբ: Էնգելսը բազմիցս առիթ է ունեցել իր աշխատություններում արձանագրելու այդ իրողությունը:

Խոսելով հայերի և օսմանյան կայսրության մյուս քրիստոնյա ժողովուրդների՝ դեպի Ռուսաստանն ունեցած վերաբերմունքի մասին՝ Էնգելսը գրել է. «Ի դեմս ցարի նրանք տեսնում են իրենց միակ ազատարարին ... մենք այդ բանը փոխել չենք կարող, դա այդպես էլ կմնա մինչև այն պահը, քանի դեռ ցարիզմը չի տապալվել»[2]: Մի ուրիշ անգամ նա վերստին շեշտում էր, որ ցարիզմի նկատմամբ այդ ժողովուրդների բարեկամական վերաբերմունքի գլխավոր պատճառներից մեկն այն է, որ իրենց հակաթուրքական պայքարում նրանք ակնկալում են աջակցություն ցարական իշխանություններից և համոզված են, որ «հաղթել ... կարող են միայն ռուսների օգնությամբ»[3]:

Դեպի Ռուսաստանը հայերի ջերմ վերաբերմունքի փաստին անդրադարձել է նաև Կ. Մարքսը: Վերլուծելով Ղրիմի պատերազմի ընթացքում իր համար բացահայտած մի շարք հետաքրքիր երևույթներ՝ նա հատուկ զարմանքով էր գրում ռուսական բանակին հայերի և հույների անձնազոհ նվիրվածության մասին[4]:

Մարքսը միաժամանակ համոզվել էր, որ հայ ժողովրդի այդ վերաբերմունքի մասին լավ գիտի ռուս հասարակ ժողովուրդը, որն իր հերթին դեպի հայությունը տածում է փոխադարձ համակրանք ու հարգանք: Խոսելով 1877-1878թթ. ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ կովկասյան ճակատի ռազմական գործողությունների ընթացքում ռուսական զորքերի սրընթաց առաջխաղացման և ցավալի նահանջի մասին՝ Կ. Մարքսը նկատել է, որ Հայաստա-

[1] «Գատմա-բանասիրական հանդես», N 2-3, 1959, էջ 325:
[2] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 35, стр. 230.
[3] Նույն տեղում, հատ. 36, էջ 462:
[4] Նույն տեղում, հատ. 10, էջ 348:

նում ցարական զորքերի կասկածելի նահանջը զայրույթ է առաջ բերել Ռուսաստանում ի պաշտպանություն Թուրքահայության: 1877թ. հուլիսի 23-ին Ֆ. Էնգելսին գրած նամակում նա վկայում էր, որ Ռուսաստանում մասսաների զայրույթը խիստ սրվել է «հատկապես հենց այժմ, Հայաստանում նահանջելուց անմիջապես հետո»[1]:

Այդ ամենին քաջատեղյակ Ֆ. Էնգելսը, այնուամենայնիվ, բարեախտություն էր համարում ռուսական ցարիզմի տապալումը և համարում էր հայ ժողովրդի ազատագրության գլխավոր պայմանը, այն դեպքում, երբ «Հայաստանի ազատագրումը Թուրքերից» նա մղում էր երկրորդ պլան՝ համարելով ոչ կարևոր:

Հայ ժողովրդի ազատագրության ուղիների մասին Էնգելսի արտահայտած մտքերը լոկ նրա անձնական կարծիքի արտահայտությունը չէին: Այդպես էին մտածում եվրոպական սոցիալիստական շարժման համարյա բոլոր ղեկավար գործիչները:

Ֆ. Էնգելսի նշանավոր նամակը հայ մարքսիստների համար ուղենիշ հանդիսացավ մշակելու իրենց սկզբունքային դիրքորոշումը Թուրքահայության ազգային ազատագրական շարժման նկատմամբ: Այդ դիրքորոշումը վերջնական տեսքի բերվեց 1901-1903 թվականներին, ապա ստուգվեց ռուսական առաջին հեղափոխության և նրան հաջորդած մեկուկես տասնամյակի ընթացքում:

ԱՐԴՅՈՔ ՃԻՇՏ Է ԸՆՏՐՎԱԾ ՀԱԿԱԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԳՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԳԱՀԸ ԵՎ ՃԻՇՏ ԵՆ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ

Մարքսիստները ելնում էին այն սկզբունքային տեսակետից, թե ճնշված, հատկապես փոքր ազգերը, որոնք ապրում են բազմազգ պետության մեջ, չեն կարող զինված պայքարով ազգային ազատագրության հասնել, եթե դրա համար չկան անհրաժեշտ հասունացած պայմաններ: Նրանք քաջատեղյակ էին օսմանյան կայսրության մեջ հայ ժողովրդի աղետալի վիճակին, նաև նրա ազատագրական պայքարն իրենց շահադիտական նպատակներին ծառայեցնելու մեծ տերությունների քաղաքական խարդավանքներին:

Արդյունաբերական կապիտալիզմի բարձր զարգացման հասած եվրոպական տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, արդեն 19-րդ դարի վերջին իրենց ազդեցությունը տարածել էին Թուրքիայի տնտեսության հիմնական ճյուղերի վրա, վերահսկում էին երկրի ֆինանսները, առևտուրը, հումքի աղբյուրները, շուկան: Նույն նպատակին նոր-նոր ձգտում էր նաև ցարական Ռուսաստանը, որը, սակայն, Թուրքիա թափանցելու ճանապարհին հանդիպում էր եվրոպական տերությունների ուժգին դիմադրությանը: Սրանք

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 34, стр. 46.

չէին հանդուրժում, որ Թուրքական կարկանդակից բաժին հանվի նաև Ռուսաստանին:

Այս կատաղի մրցակցության մեջ հզորները առիթներ էին որոնում չոչոլու սուլթանի ինքնասիրությունը՝ ակնկալելով ավելի մեծ, ավելի շահավետ պատառներ պոկել նրանից:

Թուրքիայում գերիշխանություն ձեռք բերելու համար եվրոպական տերությունների միջև կատաղի մրցակցության և նրանց նյութական շահերի ընդհարման հետևանքով էր, որ Եվրոպայի «հիվանդ մարդը»՝ օսմանյան կայսրությունը կարողանում էր պահպանել իր տարածքային ամբողջականությունը: Եվրոպական իմպերիալիստական տերություններից ոչ մեկը շահագրգռված չէր, որ Թուրքիան մասնատվեր և կայսրությունից անջատվեին ազգային տարածքները: Դրան նպաստում էր ոչ միայն այդ տերությունների միջև գոյություն ունեցող կատաղի մրցակցությունը, այլև միասին վերցրած՝ դրանց բոլորի վախը ռուսական առաջխաղացման հանդեպ: Ռուսաստանը չէր հրաժարվել Թուրքիայի ասիական տարածքների և, ամենից առաջ, Հայաստանի գրավման արդյունքում Միջերկրականի տաք ջրեր դուրս գալու հեռահար նպատակից: Ռուսների այդ դարավոր երազանքի իրականացման մեջ ամենից առաջ մեծ վտանգ էր տեսնում Անգլիան՝ ասիական իր տիրույթները և հատկապես Հընդկաստանը կորցնելու մահացու վտանգ: Հայաստանի գրավումով և Միջերկրականի ավազան դուրս գալով՝ Ռուսաստանը Անգլիայի առջև կփակեր դեպի նրա արևելյան գաղութները տանող ցամաքային ճանապարհները: Ահա թե ինչու վերջինս, հոգին բուռը հավաքած, պաշտպանում էր Թուրքիայի ամբողջականությունը, հետևապես դեմ էր արևմտահայության հակասուլթանական պայքարին:

Ֆրանսիան նույնպես մեծապես շահագրգռված էր օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմամբ, քանի որ ֆինանսական հսկայական միջոցներ էր ներդրել Թուրքիայի տնտեսության մեջ, իր ձեռքն էր առել երկրի բանկային համարյա ողջ համակարգը, հիմնել բազմաթիվ կոնցեսիաներ, հիմնավորապես տիրել էր տնտեսության բազմաթիվ ճյուղերին: Ֆրանսիացիները վախ ունեին, որ Թուրքիայի բաժանման հետևանքով վտանգի կենթարկվեն իրենց վարկերն ու ներդրումները, իսկ Ռուսաստանի տիրապետությունը Հայաստանի վրա հաստատվելու դեպքում այդ ընդարձակ տարածքի վրա մեծապես կսահմանափակվեն եվրոպական տերությունների, այդ թվում Ֆրանսիայի ազդեցության ոլորտները:

Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա գաղութային թալանից հետ մնացած այդ երկիրը վճռական էր «չտկելու վիճակը»: Գերմանիան առանձնահատուկ ծրագրեր ուներ Թուրքիայում հիմնավորվելու և անհագ ախորժակով ասպարեզ էր նետվել համեղ կարկանդակից իր մեծ բաժինը պոկելու համար, մանավանդ որ սուլթանը և Թուրքական հասարակության բարձր դասը տրամադիր էին ամենասերտ կապեր հաստատել բարձրացող գերմանական տերության հետ, նրա կապիտալի առջև լայնորեն բացել երկրի դռները: Պատահական չէ, որ այս պայմաններում գերմանական իմպերիալիզմը նույնքան, եթե ոչ ավելի, շահագրգռված էր կայսրության ամբողջականության պահպանմամբ և, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այդ նպատակով առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ըստ էության նպաստեց արևմտահայության արյունալի հաշվեհարդարին:

Մարքսիստները պարզ գիտակցում էին, որ հայկական հարցը մեծ տերություններից յուրաքանչյուրի համար այնքանով է հետաքրքրություն ներկայացնում, որ չափով այն ժամանակի որոշակի հատվածում կարող է պատրվակ ծառայել իրենց շահերի օգտին ճնշում գործադրելու Թուրքական կառավարության վրա: Եթե այդ նկատառումով մոտենանք խնդրին, ասում էին մարքսիստները, ապա ակնհայտ է, որ իմպերիալիստական պետությունները ոչ միայն շահագրգռված չեն թեկուզև 1878թ. Բեռլինի կոնգրեսի ընդունած պայմանագրի չարաբաստիկ 61-րդ հոդվածի տրամադրություններով Հայկական հարցի լուծմամբ, այլև նրանց համար շահավետ է այդ հարցի հարատև գոյությունը, նրա չլուծված լինելը, մինչև որ այն կդադարի Թուրքիայի ներքին կյանքին միջամտելու արդյունավետ գործոն լինելուց:

Ելնելով այդ ամենից՝ մարքսիստները գտնում էին, որ հույս փայփայել, թե Հայկական հարցը կարող է լուծվել իմպերիալիստական տերությունների միջամտությամբ, առնվազն քաղաքական կուրություն է: Եվրոպայի միջամտությամբ Թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրությունը բացառված է:

Իսկ ինչպե՞ս շրջել հայոց պատմության անիվը, ե՞րբ կարող է վերջ գտնել ժողովրդի անեզր տառապանքը:

Հռետորական այդ հարցը մարքսիստներից պահանջում էր հստակ պատասխան, և այդ պատասխանը տրվում էր Թուրքիայի ներքին կյանքի, հատկապես տնտեսության վերլուծության, Թուրք ժողովրդի ավանդական ըմբռնումների, նրա ազգային հոգեբանության և հոգեկան կերտվածքի ուսումնասիրման, նաև կայսրության աշխարհաքաղաքական դերի ճշգրիտ գնահատման, հայ ժողովրդի ճակատագրում արտաքին գործոնների միջամտության հավանականության և դրանց արդյունավետության բացահայտման միջոցով:

Տվյալ ժամանակաշրջանում Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանմամբ, որքան էլ առաջին հայացքից անտրամաբանական թվար, շահագրգռված էին նաև եվրոպական սոցիալիստական կուսակցությունները, սոցիալիստական շարժումը, քանի որ ընդհանրապես դեմ էին պետական մեծ կազմավորումների քայքայմանը և «ազգային բնակարաններում պարփակվելուն»: Որպես պատմության պարադոքս, օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման խնդրում համընկնում էին եվրոպական տերությունների և եվրոպական մարքսիստների տեսակետները: Ոչ մեկը և ոչ էլ մյուսը շահագրգռված չէին Թուրքիայի քայքայմամբ: Բայց եթե եվրոպական իմպերիալիստները սուլթանի կայսրության ամբողջականու-

չէին հանդուրժում, որ Թուրքական կարկանդակից բաժին հանվի նաև Ռուսաստանին:

Այս կատաղի մրցակցության մեջ հզորները առիթներ էին որոնում չոչնչացնելու սուլթանի ինքնասիրությունը՝ ակնկալելով ավելի մեծ, ավելի շահավետ պատառներ պոկել նրանից:

Թուրքիայում գերիշխանություն ձեռք բերելու համար եվրոպական տերությունների միջև կատաղի մրցակցության և նրանց նյութական շահերի ընդհարման հետևանքով էր, որ Եվրոպայի «հիվանդ մարդը»՝ օսմանյան կայսրությունը կարողանում էր պահպանել իր տարածքային ամբողջականությունը: Եվրոպական իմպերիալիստական տերություններից ոչ մեկը շահագրգռված չէր, որ Թուրքիան մասնատվեր և կայսրությունից անջատվեին ազգային տարածքները: Դրան նպաստում էր ոչ միայն այդ տերությունների միջև գոյություն ունեցող կատաղի մրցակցությունը, այլև միասին վերցրած՝ դրանց բոլորի վախը ռուսական առաջխաղացման հանդեպ: Ռուսաստանը չէր հրաժարվել Թուրքիայի ասիական տարածքների և, ամենից առաջ, Հայաստանի գրավման արդյունքում Միջերկրականի տաք ջրեր դուրս գալու հեռահար նպատակից: Ռուսների այդ դարավոր երազանքի իրականացման մեջ ամենից առաջ մեծ վտանգ էր տեսնում Անգլիան՝ ասիական իր տիրույթները և հատկապես Հընդկաստանը կորցնելու մահացու վտանգ: Հայաստանի գրավումով և Միջերկրականի ավազան դուրս գալով՝ Ռուսաստանը Անգլիայի առջև կփակեր դեպի նրա արևելյան գաղութները տանող ցամաքային ճանապարհները: Ահա թե ինչու վերջինս, հոգին բուռը հավաքած, պաշտպանում էր Թուրքիայի ամբողջականությունը, հետևապես դեմ էր արևմտահայության հակասուլթանական պայքարին:

Ֆրանսիան նույնպես մեծապես շահագրգռված էր օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմամբ, քանի որ ֆինանսական հսկայական միջոցներ էր ներդրել Թուրքիայի տնտեսության մեջ, իր ձեռքն էր առել երկրի բանկային համարյա ողջ համակարգը, հիմնել բազմաթիվ կոնցեսիաներ, հիմնավորապես տիրել էր տնտեսության բազմաթիվ ճյուղերին: Ֆրանսիացիները վախ ունեին, որ Թուրքիայի բաժանման հետևանքով վտանգի կենթարկվեն իրենց վարկերն ու ներդրումները, իսկ Ռուսաստանի տիրապետությունը Հայաստանի վրա հաստատվելու դեպքում այդ ընդարձակ տարածքի վրա մեծապես կսահմանափակվեն եվրոպական տերությունների, այդ թվում Ֆրանսիայի ազդեցության ոլորտները:

Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա գաղութային թալանից հետ մնացած այդ երկիրը վճռական էր «չտկելու վիճակը»: Գերմանիան առանձնահատուկ ծրագրեր ուներ Թուրքիայում հիմնավորվելու և անհագ ախորժակով ասպարեզ էր նետվել համեղ կարկանդակից իր մեծ բաժինը պոկելու համար, մանավանդ որ սուլթանը և Թուրքական հասարակության բարձր դասը տրամադիր էին ամենասերտ կապեր հաստատել բարձրացող գերմանական տերության հետ, նրա կապիտալի առջև լայնորեն բացել երկրի դռները: Պատահական չէ, որ այս պայմաններում գերմանական իմպերիալիզմը նույնքան, եթե ոչ ավելի, շահագրգռված էր կայսրության ամբողջականության պահպանմամբ և, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այդ նպատակով առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ըստ էության նպաստեց արևմտահայության արյունալի հաշվեհարդարին:

Մարքսիստները պարզ գիտակցում էին, որ հայկական հարցը մեծ տերություններից յուրաքանչյուրի համար այնքանով է հետաքրքրություն ներկայացնում, որ չափով այն ժամանակի որոշակի հատվածում կարող է պատրվակ ծառայել իրենց շահերի օգտին ճնշում գործադրելու Թուրքական կառավարության վրա: Եթե այդ նկատառումով մոտենանք խնդրին, ասում էին մարքսիստները, ապա ակնհայտ է, որ իմպերիալիստական պետությունները ոչ միայն շահագրգռված չեն թեկուզև 1878թ. Բեռլինի կոնգրեսի ընդունած պայմանագրի չարաբաստիկ 61-րդ հոդվածի տրամադրություններով Հայկական հարցի լուծմամբ, այլև նրանց համար շահավետ է այդ հարցի հարատև գոյությունը, նրա չլուծված լինելը, մինչև որ այն կդադարի Թուրքիայի ներքին կյանքին միջամտելու արդյունավետ գործոն լինելուց:

Ելնելով այդ ամենից՝ մարքսիստները գտնում էին, որ հույս փայփայել, թե Հայկական հարցը կարող է լուծվել իմպերիալիստական տերությունների միջամտությամբ, առնվազն քաղաքական կուրություն է: Եվրոպայի միջամտությամբ Թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրությունը բացառված է:

Իսկ ինչպե՞ս շրջել հայոց պատմության անիվը, ե՞րբ կարող է վերջ գտնել ժողովրդի անեզր տառապանքը:

Հռետորական այդ հարցը մարքսիստներից պահանջում էր հստակ պատասխան, և այդ պատասխանը տրվում էր Թուրքիայի ներքին կյանքի, հատկապես տնտեսության վերլուծության, Թուրք ժողովրդի ավանդական ըմբռնումների, նրա ազգային հոգեբանության և հոգեկան կերտվածքի ուսումնասիրման, նաև կայսրության աշխարհաքաղաքական դերի ճշգրիտ գնահատման, հայ ժողովրդի ճակատագրում արտաքին գործոնների միջամտության հավանականության և դրանց արդյունավետության բացահայտման միջոցով:

Տվյալ ժամանակաշրջանում Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանմամբ, որքան էլ առաջին հայացքից անտրամաբանական թվար, շահագրգռված էին նաև եվրոպական սոցիալիստական կուսակցությունները, սոցիալիստական շարժումը, քանի որ ընդհանրապես դեմ էին պետական մեծ կազմավորումների քայքայմանը և «ազգային բնակարաններում պարփակվելուն»: Որպես պատմության պարադոքս, օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման խնդրում համընկնում էին եվրոպական տերությունների և եվրոպական մարքսիստների տեսակետները: Ոչ մեկը և ոչ էլ մյուսը շահագրգռված չէին Թուրքիայի քայքայմամբ: Բայց եթե եվրոպական իմպերիալիստները սուլթանի կայսրության ամբողջականու-

թյունն ուզում էին պահպանել՝ Ռուսաստանին թույլ չտալով տարածվելու միջերկրածովյան ավազանի ուղղությամբ, ապա եվրոպական սոցիալիստների համար Թուրքիայի ամբողջականության պահպանման օգտին հանդես գալը նշանակում էր ինչ-որ չափով խանգարել ցարական Ռուսաստանի, որպես եվրոպայի հեղափոխական շարժման ժանդարմի, հետագա հզորացմանը:

Դեմ լինելով Թուրքիայի բաժանմանը՝ եվրոպայի իմպերիալիստական տերությունները տվյալ ժամանակահատվածում դեմ էին զինված պայքարի միջոցով սուլթանական լծից Հայաստանի ազատագրության փորձերին, օբյեկտիվորեն այդ պայքարին դեմ էին նաև եվրոպական մարքսիստները:

Վերջիններս չէին ուզում ինքնակալական, ռազմաֆեոդալական ռեժիմ ունեցող Ռուսաստանի հզորացումը՝ հատկապես ելնելով ցարիզմի զավթողական մղումներից: Եվրոպական սոցիալիստների վերաբերմունքն արմատապես կփոխվեր, եթե Ռուսաստանը կանգներ դեմոկրատական վերափոխումների ճանապարհին: Այնժամ ի դեմս հանրապետական Ռուսաստանի՝ նրանք կտեսնեին իրենց դաշնակցին: Բայց դա ե՞րբ կլիներ, պատմական հեռանկարի ո՞ր հատվածում:

Ահա այսպիսի պայմաններում էր ընթանում արևմտահայերի ազգային ազատագրական պայքարը սուլթանական կարգերի դեմ:

Մարքսիստները՝ եվրոպական թե ռուսաստանյան, արևմտահայերի ազատագրական զինված պայքարը Թուրքիայում համարում էին վաղաժամ և անպատեհահարմար: Նրանք գտնում էին, որ հայ հեղափոխական ազգային կուսակցությունները, որոնց դրոշին գրված է «ազգասիրություն» և «ազատություն», ճիշտ չեն հաշվարկել հայության և նրա թշնամու ուժերը: Թուրքիայի երկուսուկես-երեք միլիոն հայությունը ինչպե՞ս կարող է զինված պայքարով ազատագրվել տասնապատիկ հզոր օսմանյան բռնապետության ճիրաններից, հարցնում էին հայ մարքսիստները, երբ նա իր դիմաց ունի հզոր պետություն՝ ավանդական ուժեղ դիվանագիտությամբ ու բազմաքանակ բանակներով, և երբ շրջապատված է ոչ միայն թուրքական էթնոսի հոծ զանգվածներով, այլև իր ազատագրական պայքարի իմաստը չըմբռնող և չհամակրող այլազգիներով և, առաջին հերթին, հետամնաց ու լավ զինված քրդության բազում ցեղախմբերով: Թուրք բռնադատիչները կեղեքող են ու վայրենի՝ համաձայն ենք ձեզ հետ: Ճակատագրական դժբախտություն է, որ հայ ժողովուրդն ընկած է նրանց տիրապետության տակ՝ միշտ սպասելով լուսավոր օրերի: Այդ օրերը պիտի գան կամ Թուրքիայի ներքին բարեկարգմամբ, այսինքն՝ խաղաղ ընթացքով, կամ բարեպատեհ մի ցնցումով, արտաքին միջամտությամբ:

ՕՍՄԱՆՑԱՆ ԿԱՑՍՐՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՀԱԼԱԾԱԿԱՆ ԱԶԳԵՐԻ ՀԵՏ ԹՈՒՐՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՀԱՐՑԸ

Բոլոր հեղափոխությունների պարագայում մարքսիստների համար չափազանց կարևոր խնդիր էր դաշնակիցներ ունենալը: Արևմտահայության ազատագրության գլխավոր պայմաններից մեկը նրանք համարում էին օսմանյան կայսրության մեջ հարստահարվող ժողովուրդների, այդ թվում նաև հարստահարվող թուրք ժողովրդի համերաշխ գործակցությունը սուլթանիզմի դեմ մղվող պայքարում: Թուրքիայում շահագործվող բոլոր ազգերի հեղափոխական ուժերի ամուր դաշինքը միայն կարող է հաջողության երաշխիք լինել ազատագրական կռվում: Հայկական ամեն մի անջատ շարժում օսմանյան բռնակալությունը մեծ հաջողությամբ օգտագործում է թուրք ժողովրդին հայերի դեմ լարելու, նրան իր հանցագործ, ջարդարարական քաղաքականությանը մասնակից դարձնելու համար:

Դաշնակիցներ ունենալու խնդրին մարքսիստները միշտ առաջնային նշանակություն են տվել հատկապես հեղափոխությունների նախապատրաստման շրջանում, գտնելով, որ առանց դրա որևէ երկրում ոչ միայն դժվար է ակնկալել ապստամբական ուժերի հաղթանակը, այլև անհնար է ձեռնամուխ լինել հասարակության արմատական վերափոխմանը:

Այդ տեսակետից մարքսիստների համար յուրօրինակ քննություն է եղել Փարիզի կոմունան (1871թ.), որը պարտություն կրեց, չնայած կոմունարների աներևակայելի խիզախությանը: Փարիզը վերածվեց վիթխարի սպանդանոցի: Դավաճան կառավարությունը, սարսափած կոմունիզմի ուրվականից, վագրի մոլեգնությամբ նետվել էր հազարավոր արյունակիցների վրա և, ի տես պրուսական հաղթած զորաբանակի և ի հրճվանք գերմանացի ռազմամոլների, կատարում էր մի անօրինակ հանցագործություն իր երկրի ու ժողովրդի հանդեպ: Ապստամբության պարտության գլխավոր պատճառը ֆրանսիացի գյուղացիների անտարբերությունն էր, որոնք օգնության չգնացին կոմունարներին: Այլ խոսքով, Փարիզի ապստամբ բանվորները կռվի դաշտում չունեին դաշնակից:

Ռուսական առաջին հեղափոխությանը նախորդած շրջանում բոլշևիկները Լենինի գլխավորությամբ ամենայն մանրամասնությամբ և բազմակողմանի մշակել էին պրոլետարիատի ապստամբության ընթացքում նրա դաշնակիցների մասին տեսությունը, ըստ որի դեպի այդ ապստամբություն պրոլետարիատը պետք է գնա գյուղացիական լայն զանգվածների հետ, իսկ հեղափոխության որոշակի (սկզբնական) էտապում հակացարական պայքարին կարող է մասնակից լինել նաև լիբերալ բուրժուազիան:

Բուրժուադեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստականին անցնելիս պրոլետարիատի դաշնակիցների շրջանակը նեղացվեց: Այժմ նրա դաշնակիցը միայն չքավոր գյուղացիությունն էր, նրա կռիվը՝ բուրժուական ողջ դասակարգի դեմ, ներառյալ լիբերալ բուրժուազիայի:

Դաշնակիցների խնդիրը վճռական նշանակություն է ձեռք բերում ոչ միայն դասակարգային մարտերի ժամանակ, այլև հզոր բանակներ ունեցող խոշոր տերությունների կողմից պատերազմների նախապատրաստման ընթացքում:

Այսպես, Ղրիմի պատերազմի ժամանակ եվրոպական տերություններից ոչ մեկը չէր համարձակվում Թուրքիայի կողմից Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ մտնել միայնակ: Այդ պատերազմում նրանք Ռուսաստանի նկատմամբ հաղթանակ տարան հավաքական ուժերով:

1907 թվականին Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը իրենց ուժերը միավորելով՝ ստեղծեցին Անտանտի ռազմաքաղաքական դաշինքը՝ ուղղված սպառնագին բարձրացող Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ: Բալկանյան առաջին պատերազմի օրերին (1912թ.) Թուրքիայի դեմ միասնաբար հանդես էին գալիս բալկանյան դաշնակից չորս երկրներ: Եվ այսպես շարունակ:

Իսկ ո՞վ էր արևմտահայության դաշնակիցը, որը պատրաստ լիներ նրա հետ կիսելու պարտության տառապանքը և հաղթության բերկրանքը: Եթե չհաշվենք ասորիների մի մասի, հեռավոր Մակեդոնիայի և Բուլղարիայի հակաթուրքական տրամադրություններ ունեցող հեղափոխականների և եվրոպացի հայասերների համակրանքը, որն արտահայտվում էր միայն ու միայն բարի ցանկություններով, ապա ակնհայտ է, որ նա ոչ մի երկրից, ոչ մի ժողովրդից գործնական օգնություն չէր ստանում մի հրացան կամ անգամ մի փամփուշտ:

Ինչ-որ մի մեծահարուստ անգլուհի հնչակյան ղեկավարությանը 90-ական թվերին խոստացել էր գնել և անհատույց թուրքահայ ազատագրական շարժման մարտիկներին նվիրել 10 000 հրացան: Հնչակյանները երկար սպասեցին, բայց բարոնուհու խոստումը փչոց դուրս եկավ: Իրավացի էր հայ ազատագրական շարժման հայտնի գործիչ, դաշնակցական Արտաշես Հովսեփյանը (Մալխաս), գրելով. «... Հայ ժողովուրդը բոլորովին մենակ մնաց, ոչ մեկ դրացի ազգ եղբայրական ձեռք կարկառեց հայուն, օգնութեան փոքՀ մը ըրավ»[1]:

Աշակցությունը միայն բարոյական էր, իսկ մաքառող արևմտահայ մարտիկները կարիք ունեին ոչ թե բարի խոսքերի ու սին խոստումների, այլ զենքի և նյութական միջոցների: Ուրիշ խոսքով՝ հայկական հեղափոխությունը չուներ ոչ մի դաշնակից, այն միայնակ էր:

Թուրքահայ հեղափոխության արյունամած տարիներին Արևմտահայաստանի հայ բնակչության միակ սրտակիցը նրա արյունակից ռուսահայությունն էր, որը ոչինչ չէր խնայում օգտակար լինելու մաքառող եղբայրներին:

Եվ այսպես, թուրքահայ հեղափոխությունը ոչ մի օգնություն չէր ստանում դրսից: Իսկ ներսու՞մ:

Իսկ ներսում նրա դեմ կանգնած զինված թուրքն էր, իսկ թիկունքում զինված քուրդը՝ երկուսն էլ հայկական հեղափոխության երդվյալ ոխերիմ թշնամիներ:

[1] Մալխաս, «Զարթոնք», հատ. Ե, Ֆարաբի տպարան, Թեհրան, 1986, էջ 150:

Կայսրությունը թուրքերինն էր, և հայկական շարժումն ուղղված էր նրանց հարստահարիչ պետության դեմ: Բայց շարժման ճանապարհին ընկած էր մեծ խոչընդոտը՝ սուլթանական ռեժիմի պահապան զինված քրդությունը:

Հայ և քուրդ ժողովուրդների համատեղ գործակցություն ստեղծելու, թուրքական հարստահարման դեմ իրենց ուժերը միավորելու և սուլթանական բռնակալության դեմ միասնական պայքարի դուրս գալու դեպքում գուցե իրավիճակը լիներ միանգամայն ուրիշ, համենայն դեպս թուրքական պետության համար չափազանց դժվար կլիներ տևականորեն շարունակել արյունալի հաշվեհարդարները, իսկ արևմտահայությունը, վերջապես, կունենար իր դաշնակիցը: Բայց այդպես չեղավ:

Ճշմարիտ է, որ և՛ հնչակյանները, և՛ դաշնակցականները, նաև արմենականներն ու վերակազմյալ հնչակյանները քիչ ջանք չեն գործադրել հարևան քրդության հետ հաստատելու բարեկամական հարաբերություններ, միշտ ձգտել են քրդական հակաթուրքական ընդվզումների առկայծումները միավորել հայկական շարժմանը: Հայ գործիչները մտածում էին, որ եթե այդ բանը չկարողանան գլուխ բերել, գոնե փորձելու են քրդերին մղել չեզոքության:

Բայց ջանքերը նպատակին չհասան: Քուրդն ինչպես եղել էր, այնպես էլ մնաց հայության ազատագրության ճանապարհի մեծ խոչընդոտը:

Երբ հայ բոլշևիկները չեշտում էին հայկական շարժման լիակատար մեկուսացվածության հանգամանքը, դաշնակցականները վկայակոչում էին հայ-քրդական և հայ-թուրքական երկխոսություն առաջ բերելու տարիներ շարունակ իրենց թափած աշխատանքը: Դրան ի պատասխան բոլշևիկներն ասում էին, որ հնչակը և դաշնակցությունը գործ են ունեցել ոչ թե թուրք և քուրդ աշխատավոր զանգվածների, այլ թուրք մեծամեծների և քուրդ ցեղապետերի հետ, հետևաբար դաշինքի խնդիրը չէր կարող դրական լուծում ստանալ, որ այդպիսի լուծում հնարավոր է, եթե թուրքական և քրդական հասարակության մեջ ձևավորվի պրոլետարիատ: Քանի որ բոլոր երկրների պրոլետարիատների դասակարգային շահերը նույնական են, ուստի միայն այդ դեպքում հող կստեղծվեր հայ և թուրք, հայ և քուրդ պրոլետարների համերաշխ գործակցության և դաշինքի համար՝ ընդդեմ ամեն տեսակ հարստահարման, այդ թվում թուրքական պետական ռեժիմի բռնադատման դեմ: Բոլշևիկների ընդդիմախոսները սոցիալ-տնտեսական վերլուծություններով ցույց էին տալիս, որ թուրքական հասարակության մեջ բանվորությունը նոր-նոր էր ձևավորվում իբրև դասակարգ, ինչ վերաբերում է քրդերին, ապա նրանց մեջ գալիք տասնամյակներում պրոլետարիատի, որպես ինքնուրույն դասակարգի, ձևավորման երազանքը անհող է ու անհույս: Հայ բոլշևիկները ընդունում էին դաշնակցական վերլուծաբանների փաստարկները, բայց միաժամանակ գտնում էին, որ այդ դեպքում արևմտահայությանը ոչինչ չի մնում անելու, քան մի կերպ լեզու գտնել թեկուզ քուրդ ավագանու հետ՝ անորոշ ժամանակով սպասելով միջազգային իրադարձությունների զարգացմանը և արտաքին ուժերի հնարա-

վոր միջամտությանը:

Ստեփան Շահումյանը գրում էր. «Հայ ժողովուրդը, բախտի բերումով, ապրում էր երկու հրեշավոր բռնակալների՝ արյունոտ ցարի և կարմիր սուլթանի իշխանության տակ: Նա շրջապատված էր իրենից ավելի հետամնաց, դժբախտ տաճիկ և քուրդ ժողովուրդներով՝ Տաճկաստանում, և թուրք ու վրացի ժողովուրդներով՝ Ռուսաստանում: Հարկավոր էր խելոք և հեռատես քաղաքականությամբ ձգտել որքան կարելի է համերաշխ ապրել հարևանների հետ: Հարկավոր էր այնպես ղեկավարել քաղաքականության նավը, որ նա չջախջախվի «տաճիկ բռնակալության Սցիլլայի և ռուսական ցարիզմի Խարիբդայի» արանքում...»[1]: Միայն հարևան ժողովուրդների հետ համերաշխ ապրելու և գործելու քաղաքականությունն է երաշխիք հայ ժողովրդի հանգիստ գոյությանը... «Բայց մեր «ազգասերները», ընդհակառակը, կարծես դիտմամբ ամեն ջանք գործ էին դնում մեկուսացնելու հայ ժողովրդին հարևան ազգերից, թշնամացնելու նրա հետ բոլորին և հող պատրաստելու սուլթանի և Նիկոլայ Ռոմանովի դժոխային ծրագրերը իրականացնելու համար»[2]:

Բոլշևիկների համոզմունքները բխում էին Ֆ. Էնգելսի վերևում նշված նամակից և ընդհանրապես հայկական հեղափոխության շարժիչ ուժերի մասին եվրոպական սոցիալիստների ունեցած պատկերացումներից:

«Երկրի ձայն» (Թիֆլիս) թերթը 1907թ. նոյեմբերին տպագրել էր հրապարակախոս Աշ. Աթանեսյանի նույն թվականին գրված հուշերը՝ Ավգուստ Բեբելի և Վիլհելմ Լիբկնեխտի հետ հայկական հարցի շուրջ Գերմանիայի հայ ուսանողների մի խմբի զրույցի մասին:

Այդ խումբը, որի կազմի մեջ էր Աշ. Աթանեսյանը, 1893 թվականին Լայպցիգում այցելում է Վ. Լիբկնեխտին և Ա. Բեբելին:

« - Ինչ ունեք ասելու, - դիմեց մեզ Բեբելը, առաջարկելով ծխել, - պատմում է Աշ. Աթանեսյանը:

- Ձեզ երևի հայտնի կլինեն լրագրերից այն սարսափները, որ այժմ կատարվում են Թուրքիայում հայերի վերաբերմամբ, - սկսեց ընկերներիցս մեկը: - Մենք եկել ենք խնդրելու Ձեզ և Ձեր հարգելի ընկերոջը՝ պ. Լիբկնեխտին, որ դուք հարցապնդեք ձեր կառավարությանը Թուրքիայում կատարված սարսափների առիթով և Ձեր միջամտությամբ թեթևացնեք հայ ժողովրդի զարհուրելի պայմանները:

Բեբելը նայեց Լիբկնեխտին: Սա իր սերթուկն էր հագնում, և ապա դարձավ մեզ:

- Ես հասկանում եմ Ձեզ: Նույնանման դիմում մենք ստացանք մի ամիս առաջ նաև Բեռլինի հայ ուսանողությունից: Ձեզ ասելու եմ այն, ինչ նրանց. հայ ժողովրդի բախտը անբաժանելիորեն կապված է համայն Թուրքիայի

[1] Ստ. Շահումյան, ԵԼԺ, հատ. երրորդ, էջ 48:
[2] Նույն տեղում:

ժողովուրդների հետ: Միապետական ռեժիմի պայմանները միանման սոսկալի են ողջ Թուրքիայի համար: Ուստի և հայերի դրությունը կբարելավվի այն ժամանակ, երբ կբարելավվի ամբողջ Թուրքիայի ժողովուրդների բախտը: Իսկ բոլորիդ հարցը կլուծվի, երբ կտապալվի սուլթանական ռեժիմը:

- Իսկ ե՞րբ կտապալվի սուլթանական ռեժիմը, - հարցրի ես:

- Ե՞րբ, երբ որ Թուրքիայում նույնանման պայմանների տակ ապրող բոլոր ազգությունները և մանավանդ ամենից շատ տանջված տարրերը կմիանան՝ փչրելու գոյություն ունեցող կարգերը:

- Բայց չէ՞ որ Թուրքերը մահմեդական են և երբեք քրիստոնյաների հետ չեն միանա, - նկատեց ընկերս:

- Հալածվածներն ու ճնշվածները կրոն ու ազգություն չեն ճանաչում: Փորձեցեք Դուք, հայերդ, այդ ուղղությամբ գործել Թուրք ժողովրդի հետ և երբեք հայկական առանձին հարց չբարձրացնեք: Հակառակ դեպքում դուք միայն հեռացնում եք ձեզանից բողոքող մուսուլման տարրերին և հարստահարվածների դատը դարձնում ազգային՝ հայկական դատ, մի բան, որ, բնականաբար, գրգռում է մուսուլման ժողովրդին...

Այդ ժամանակ դուռը ծեծեցին: Բեբելը նայեց ժամացույցին և տեղից բարձրացավ:

- Ներեցեք ինձ, ես գնալու եմ, տասը րոպե է միայն մնում: Եկեք ինձ մոտ, եթե ցանկանում եք, վաղը առավոտյան ժամը 10-11-ին: Ես այդ առիթով ձեզ հետ ավելի մանրամասն կխոսեմ: Թուրքիայի դրությունը քաղաքական մեծ հարց է, և նա չէ կարող չհետաքրքրել մեզ: Ներեցեք:

Մենք վեր կացանք մեր տեղից:

Բեբելը մեզ ճանապարհեց մինչև դուռը: Սենյակը լիքն էր տասնյակ մարդկանցով:

Մենք դուրս եկանք և այդ երեկո մի քանի հայ ուսանողների հետ ունեցանք երկար ու տաք վիճաբանություն: Մեր մեջ ծագեցին գժտություններ: Ընկերներիցս մի քանիսը հայհոյում էին Բեբելին:

Մյուս օրը, շնորհիվ այդ գժտությունների, մենք վճռեցինք չգնալ Բեբելի մոտ»[1]:

Սա էր սոցիալ-դեմոկրատների խոր համոզմունքը, ըստ որի Թուրքական բռնակալությունից հայ ժողովրդի ազգային ազատագրությունը հնարավոր է միայն այն դեպքում, եթե միաժամանակ ուրքի կանգնեն օսմանյան բազմազգ կայսրության այլազգի ճնշված ժողովուրդները, և եթե դրանց պայքարին աջակից լինեն «սեփական» բռնապետական իշխանության դեմ սոցիալական կռվի ելած Թուրք մեծապետական ազգի աշխատավոր դասակարգերը: Նրանք բազմիցս շեշտել են, որ այդ հանգամանքը հաշվի չառնելու դեպքում հայ ազգային հեղափոխական կուսակցությունները Թուրքահայության ազատագրական

[1] «Երկրի ձայն» (Թիֆլիս), N 25, 18 նոյեմբերի 1907 թ.:

շարժումը, ի վերջո, տանելու են դեպի կործանում, միաժամանակ մնալու են որպես արևելահայ աշխատավորների սոցիալական ազատագրության պայքարի ճանապարհի խոչընդոտներ:

Հայ բոլշևիկների համար օսմանյան բռնապետությունը նույնքան ատելի էր, որքան հայ քաղաքական մյուս ուժերի համար: Բայց, ի տարբերություն վերջիններ, առաջինները գտնում էին, որ պետք է սպասել, մինչև որ սուլթանական ռեժիմի դեմ զինված կռվի դուրս գան ոչ թուրք այն ժողովուրդները, որոնք բազմաքանակ են, մեծ թիվ են կազմում կայսրության բնակչության ընդհանուր թվաքանակում (հույներ, սլավոններ, արաբներ): Ահա այդ դեպքում միայն հայերը ոչ միայն կարող են, այլև պարտավոր են միանալու նման հակասուլթանական մասսայական շարժմանը: Իսկ քանի որ առայժմ չկան Թուրքիայում համաժողովրդական միասնական ճակատ ստեղծելու պայմաններ, ապա հայերի համար կործանարար է զինված կռիվը[1]*:*

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՈՐՊԵՍ ԹՈՒՐՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆ

Ֆ. Էնգելսի այն դրույթը, թե «Հայաստանի ազատագրումը Թուրքերից, ինչպես նաև ռուսներից հնարավոր կլինի միայն այն օրը, երբ կտապալվի ռուսական ցարիզմը», դարասկզբից հայ մարքսիստների համար դարձավ գործունեության և պայքարի ուղեցույց:

Ֆ. Էնգելսի նամակից հետևում է, որ հայ ժողովուրդը սեփական ուժերով չի կարող հաղողության հասնել: Հայ սոցիալ-դեմոկրատները, Էնգելսի արտահայտած միտքն ավելի կոնկրետացնելով, եկել էին այն եզրակացության, որ առանց արտաքին ուժի, տվյալ դեպքում առանց Թուրքիային անմիջական հարևան երկրի՝ Ռուսաստանի աջակցության՝ հայկական հեղափոխությունն անհեռանկար է:

Բայց ո՞ր Ռուսաստանի մասին էր խոսքը Էնգելսի նամակում: Խոսքը գնում էր ցարիզմի կապանքներից ազատագրված Ռուսաստանի մասին:

Ռուսաստանի, այդ թվում հայ, սոցիալ-դեմոկրատները, ինչպես ասվեց, չէին դնում Թուրքիայի մասնատման հարցը, պատճառաբանելով, որ ցարական ռեժիմը ոչնչով տարբեր չէ սուլթանական ռեժիմից և որ պրոլետարիատը երբեք նպատակ չի ունեցել և այժմ էլ չունի մասնակից լինել մի օտար պետության պատկանող տարածքների գրավմանը: Ուրիշի տարածքների և ունեցվածքի վրա միշտ աչք են ունեցել ցարիզմը և նրա նման բռնապետությունները, բայց ոչ երբեք բանվոր դասակարգը: Ռուսաստանի պայմաններում

[1] *Այդ մասին տե՛ս ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի «Միքայել Նալբանդյանի և ռուս հեղափոխական-դեմոկրատների գաղափարական ընդհանրություններն ու քաղաքական կապերը» («Գրական թերթ», N 16 (1324), 15 ապրիլի 1966թ.):*

պրոլետարիատի ուժերը պետք է ուղղվեն հեղափոխության միջոցով ցարիզմի տապալմանը, որի հետևանքով կվերանա նաև արևմտահայության ազատագրության ճանապարհի գլխավոր խոչընդոտը: Ինչպես ֆրանսիական մեծ հեղափոխությունը ճակատագրական նշանակություն ունեցավ Արևմտյան Եվրոպայի պետությունների համար, գրում էր Մրավյանը (Արսեն Ամիրյան), այնպես էլ ռուսական հեղափոխության հաղթանակը հսկայական ազդեցություն կունենա առաջին հերթին հարևան երկրների, այդ թվում Թուրքիայի վրա՝ առաջ բերելով հակասուլթանական դեմոկրատական շարժում, որի հաղթության դեպքում հայ ժողովուրդը նույնպես ազատագրություն կստանա կայսրության բոլոր ժողովուրդների հետ: Սուլթանական անարգ ռեժիմից ազատագրված արևմտահայությունը հավասար իրավունքներով մասնակից կլինի օսմանյան երկրի առաջընթացին, իսկ ցարական բռնապետությունից ազատագրված արևելահայության համար կբացվեն զարգացման հսկայական հնարավորություններ: Հայ ժողովրդի երկու հատվածների միավորման հարցը պետք է թողնել ապագային: Նա ընդգծում էր ռուսական հեղափոխության ազատարար նշանակությունը հայ ժողովրդի համար և նրան կոչ էր անում կողմնորոշվել դեպի դեմոկրատական, հեղափոխական Ռուսաստան, դեպի ցարիզմի դեմ մղվող համաժողովրդական պայքար: Այդ պայքարի ելքը կվճռի նաև արևմտահայերի բախտը: «– Տաճկահայաստանի ազատագրումը Ռուսաստանի ազատագրման միջոցով – ներկա պայմաններում միակ ուղիղ և անսայթաք ճանապարհն է». «Միայն ռուսական բռնապետության տապալումն է, որ ճանապարհ կբացե Տաճկահայաստանի ազատագրմանը»[1]*:*

Այսպիսով, սոցիալ-դեմոկրատների խոր համոզմամբ, ցարիզմի փլատակների վրա բարձրացող Ռուսաստանի դեմոկրատիան է փրկություն բերելու Թուրքահայությանը: Դրանից հետևում էր, որ ռուսահայերը անվարան պետք է ընդգրկվեն համառուսաստանյան հեղափոխական շարժման մեջ և իրենց ուժերը ներածի չափով նպաստեն երկրի դեմոկրատացմանը:

Շատ ուշագրավ են այն մտքերը, որ հայկական հարցի մասին Շվեյցարիայում Գ. Ղարաջյանի (Արկոմեդ) հետ ունեցած զրույցների ժամանակ արտահայտել է Գ. Վ. Պլեխանովը:

«Պլեխանովը, – պատմում է Գ. Ղարաջյանը, – հայկական հարցի մասին այն կարծիքին էր, որ Թուրք-ասիական պայմաններում պարտիզանական կռիվներով հազիվ թե որևէ բանի կարելի լինի հասնել: Դիվանագիտության վրա հույս դնելու նույնպես բնավ հիմք չկա: Ցարական իշխանությունը, ներկա դեպքում, հանդիսանում է ինչպես հայ, այնպես էլ ճնշված այլ ազգերի դաժան թշնամին: Զխոսելով արդեն Թուրքական դեսպոտիզմից ազատագրվելու համար Թուրքահայերի հեղափոխական ինքնագործունեության զարգացման մասին, ռուսահայերն իրենց գլխավոր ուշադրությունը պետք է կենտրոնաց-

[1] ***Ա. Մրավեան****, Դաշնակցութեան կրիզիսը, էջ 39, 40:*

նեն Ռուսաստանի քաղաքական ազատագրական շարժման վրա, որն, անկասկած, կհեշտացնի Թուրքիայի ճնշված ժողովուրդների, այդ թվում և հայերի ազատագրման խնդիրը»[1]:

Կրկին ու կրկին շեշտելով ռուսական հեղափոխությանը միանալու անհրաժեշտությունը՝ Ստեփան Շահումյանը նշում էր, որ պայքարող կովկասահայությունը այդ դեպքում իր ուժերը կգումարի հեղափոխության մյուս բազմազգ ջոկատների ուժերին: Միայն այդպես անխորտակ կլինի հայության ազատագրական պայքարը թե՛ Ռուսաստանում և թե՛ Թուրքիայում:

Սոցիալ-դեմոկրատների նման հաստատումները բնավ չէին համընկնում ո՛չ հնչակյան կուսակցության և ոչ էլ առավել ևս Հ.Յ.դաշնակցության տեսակետներին: Սրանց հետ համախոհ էին նաև արմենական և վերակազմյալ հնչակյան կուսակցությունները:

Այդ բոլոր ազգային կուսակցությունները մնասակար էին համարում ռուսական հեղափոխական շարժումներին հայերի մասնակցությունը, գտնելով, որ սոցիալ-դեմոկրատները, հատկապես նրանցից բոլշևիկները, Կովկասի հայ բանվորներին ու գյուղացիներին քաղաքական պայքարի կոչելով, կռիվ են հայտարարում Թուրքահայ դատին, մեծապես մնասում արևմտահայ ժողովրդի ազատագրության գործին:

Դաշնակցականները գտնում էին, որ Թուրքահայ ազատագրական շարժումը կապել ռուսական հեղափոխության հաղթանակի անորոշ հեռանկարի հետ, նշանակում է հայ հեղափոխական ուժերին դատապարտել կրավորական սպասողականության կամ ուղղակի անգործության:

Հայ մարքսիստները վճռականապես մերժում էին նման վերագրումները՝ հետևողակ-անորեն պաշտպանելով Թուրքահայ և ռուսահայ ազատագրական շարժումների իրենց առաջադրած տակտիկան:

Անդրադառնալով հայ ժողովրդի պատմական ճակատագրում ռուսական հեղափոխության դերին՝ Ստեփան Շահումյանը գրում էր, որ Ռուսաստանը, որտեղ չկա քաղաքական ազատություն, չկա ազատ խոսք, մամուլ, որտեղ օրենքի տեղ բռնություն և կամայականություն է տիրում, երբեք չի կարող աջակից լինել Թուրքահայության ազատագրությանը, ուստի ամենից առաջ պետք է կռիվ հայտարարել այն պայմանների դեմ, քաղաքական այն կարգերի դեմ, որոնք արգելակում են ժողովրդի ազատ բնական զարգացումը: Նա նշում էր, որ ցարական բռնակալության դեմ կռիվը կլինի դաժան, կենաց ու մահու, կպահանջի մեծ անձնազոհություն, միաժամանակ անհիմն էր համարում այն պատճառաբանությունը, թե Ռուսաստանի ռազմաստիկանական տիրող պայմաններում ցարիզմի դեմ կռիվն անհնարին, անմիտ բան է:

Անընդունելի համարելով հեղափոխության հաղթանակի նկատմամբ նման

[1] **Ս. Տ. Արկոմեդ,** *Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, մաս I, Երևան, 1929, էջ 18:*

հոռետեսությունը՝ Շահումյանը գրում էր, որ պրոլետարիատի համար չկա այն զորեղ թշնամին, որի դեմ կռիվն անհնարին լինի:

Այսպիսով, վերը շարադրվածը լուսաբանում է Թուրքահայաստանի ազատագրական դերի մասին եվրոպական և ռուսական սոցիալ-դեմոկրատների, բոլշևիկյան գործիչների կայուն տեսակետը՝ ռուսական հեղափոխության հաղթանակը Եվրոպայի և Ասիայի ճնշված ժողովուրդների, այդ թվում Թուրքահայության ազատագրման ելակետային պայմանն է:

ՈՐՊԵՍ ԷՐ ՌՈՒՍԱՀԱՑՈՑ ՊԱՐՏՔԸ ԹՈՒՐՔԱՀԱՑՈՑ ՀԱՆԴԵՊ

Մարքսիստները գտնում էին, որ ճնշված ու հալածված ժողովուրդների, այդ թվում Թուրքահայերի ազգային ազատագրական շարժումներին սոցիալ-դեմոկրատները կարող են միայն բարոյական աջակցություն ցույց տալ, և այդ տեսակետից էլ որոշում էին ազգային շարժումների նկատմամբ իրենց համակրանքի և քաղաքացիական պարտքի չափը:

Կ. Մարքսը անիրագործելի և հետադիմական էր համարում եվրոպական տերությունների ձգտումը՝ պահպանելու օսմանյան կայսրությունն այն դրությամբ, որի մեջ նա այն ժամանակ գտնվում էր: «Փաստն այն է, - գրել է Կ. Մարքսը 1853թ.,- որ հարկ կլինի այսպես թե այնպես Թուրքերի վերջը տալ (նկատի ունի Թուրքական պետության վերջը: - Հ. Ս.) »[1]: Բայց Թուրքական և ամեն մի բռնապետական բազմազգ պետության վերջը պետք է գա ոչ թե մի ազգի (տիրապետող) նկատմամբ մյուս ազգի (ազգերի) տարած հաղթանակի միջոցով, այլ համաժողովրդական հաղթական ապստամբության միջոցով, որի հիմնական շարժիչ ուժը պետք է լինեն, առաջին հերթին, տիրապետող ազգի պրոլետարիատը և աշխատավոր մյուս դասակարգերը:

Վ. Լենինը «Ուրիշի դրոշի տակ» հոդվածում գրել է. «Մարքսիստները երբեք չեն ժխտել ֆեոդալական-աբսոլյուտիստական ուժերի դեմ մղվող բուրժուական-ազգային ազատագրական շարժումների առաջադիմականությունը»[2]: Նա մատնանշել է. «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870, այլև 1877 թվականի (ռուս-Թուրքական) և 1896-1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ Թուրքիայի պատերազմի և հայկական հուզումների) ժամանակ, պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունը եղել են ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»»[3]: «Ենթադրենք, - գրել է Լենինը, - երկու երկիր պատերազմում են իրար դեմ բուրժուական, ազգային և ազատագրական շարժումների դարաշրջանում: Ո՞ր երկրին

[1] **К. Маркс и Ф. Энгельс**, Соч., т. IX, стр. 392.
[2] **Վ. Ի. Լենին**, *ԵԼԺ, հատ. 26, էջ 165:*
[3] *Նույն տեղում, էջ 172:*

հաղողություն ցանկանալ ժամանակակից դեմոկրատիայի տեսակետից: Պարզ է, որ այն երկրին, որի հաղողությունը ավելի ուժգին առաջ կմղի և առավել փոթորկալի կծավալի բուրժուազիայի ազատագրական շարժումը, ավելի ուժգնորեն կքայքայի ֆեոդալիզմը»[1]:

Ի. Ստալինը իր «Ազգային հարցը և լենինիզմը» նշանավոր աշխատության մեջ խոսում էր Թուրքիայում տեղի ունեցող ասիմիլյացիայի խիստ դաժան մեթոդների մասին: «Թուրքական ասիմիլյատորները, - ընդգծում էր նա, - բոլոր ասիմիլյատորներից ամենադաժանները, - հարյուրավոր տարիներ խոշտանգում և խեղում էին բալկանյան ազգերին ... պարսկական ու թուրքական ասիմիլյատորները հարյուրավոր տարիներ ծվատում, խոշտանգում ու բնաջնջում էին հայ և վրացի ազգերին»[2]:

Օսմանյան ռեժիմի դեմ հայ ժողովրդի պայքարի արդարացիության մասին բազմիցս արտահայտվել են ականավոր մարքսիստներ Ավգուստ Բեբելը, Վիլհելմ Լիբկնեխտը, Ռոզա Լյուքսեմբուրգը, Ժան Ժորեսը, Ժյուլ Գեդը, Էդուարդ Բեռնշտայնը, Կարլ Լիբկնեխտը, Գեորգի Պլեխանովը և ուրիշներ:

1902թ. մարտի 4-ին Եվրոպայի հայ ուսանողական միության լիազոր կոմիտեին հղած իր նամակում Կարլ Կաուցկին նշում էր, որ ինքը «ամբողջ սրտով հայոց դատի համակրող ու պաշտպան» է և հայոց դատ ասելով՝ հասկանում է «ոչ միայն լոկ նրանց պաշտպանությունը թուրքական և քրդական կոտորածների դեմ, այլ վերականգնումը նրանց ազգային անկախության»[3]:

1902թ. աշնանը հայ մարքսիստների մի խումբ Կ. Կաուցկուց խնդրում է առաջաբան գրել «Էրֆուրտյան ծրագրի» հայերեն հրատարակության համար՝ հատկապես արծարծելով ազգային հարցը: Կաուցկին կատարում է «հայ բարեկամների խնդրանքը», գրում է առաջաբան, ուր նշում է, որ «ազգային հարցը հենց հիմա հատուկ նշանակություն ունի նրանց («հայ բարեկամների»: - Հ. Ս.) համար»[4]: Ուշագրավ է, որ այդ առաջաբան-հոդվածում Կ. Կաուցկին շարադրել է ոչ միայն իր սեփական հայացքները Ռուսաստանում և Կովկասում ազգային հարցի վերաբերյալ, այլև պարզել է ազգային հարցում հայ սոցիալ-դեմոկրատների դիրքորոշումը, միաժամանակ ընդգծել նրանց իրավացի լինելը[5]:

1895-1896թթ. հայկական ջարդերի ազդեցության տակ սոցիալիստական շարժման ականավոր գործիչ Ռոզա Լյուքսեմբուրգը գրում է «Ազգային խնդիրը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան» վերնագրով հոդվածը, որը տպագրվել է Դրեզդենում լույս տեսնող "Sächsische Arbeiterzeitung" («Սաքսոնական բանվորական լրագիր») թերթի 1896թ. հոկտեմբերի 8-ի, 9-ի և 10-ի

[1] Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հատ. 26, էջ 168:
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 395:
[3] Միքայել Վարանդեան, Հայրենիքի գաղափարը, էջ 47:
[4] К. Каутский, Национальный вопрос, 1922, стр. 47.
[5] Նույն տեղում:

համարներում (NN 234, 235, 236):

Լյուքսեմբուրգը քաջատեղյակ էր թուրքական լծի տակ հեծող բազմաթիվ, հատկապես քրիստոնյա, ժողովուրդների ազատագրական պայքարին: Ի տարբերություն եվրոպական սոցիալիստական շարժման խոշոր գործիչների մեծ մասի՝ Լյուքսեմբուրգը դրանց թվում առաջիններից մեկն էր, որ մերժեց այդ շարժման մեջ լայնորեն տարածված կարծիքը, թե թուրքական կայսրության քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի, հույների, բոսնիացիների, սերբերի, բուլղարների «խռովությունները» արհեստականորեն հրահրված են մեծ տերությունների կողմից, իսկ «հայերի ապստամբությունները ռուսական ռուբլով գնված գործակալների գործն է»[1]: Լյուքսեմբուրգը չեչտում էր, որ սոցիալ-դեմոկրատիայի շարքերում գոյություն ունեցող այդ տեսակետը «սկզբունքորեն ոչնչով չի տարբերվում բուրժուական դիրքավորումից»[2]: Թուրքիայի ճնշված ժողովուրդների ապստամբությունները, գրում էր նա, հետևանք են այդ երկրում տիրող տնտեսական և իրավական ճնշման, ազգային և կրոնական խոր հակադրությունների: Ճնշվածներն ու հալածականներն այլևս ի վիճակի չեն տանել օսմանյան բռնապետության սարսափները, միջնադարյան հետամնացությունն ու խավարը:

Ռ. Լյուքսեմբուրգը լիովին չէր ժխտում մեծ տերությունների դիվանագիտության դերը քրիստոնյա ժողովուրդների հակաթուրքական ապստամբությունների մեջ, բայց դա համարում էր չնչին պատճառ այն գործոնների թվում, որոնք առաջ են բերում այդ ապստամբությունները: «Դիվանագիտությունը տվյալ դեպքում մի վառվող տաշեղ է նետում դարերի անարդարությունից և շահագործումից լեռան չափ դիզված բոցավառ նյութի մեջ»[3], - գրում էր նա:

Այնուհետև Լյուքսեմբուրգը պարզում էր այդ ամենի հանդեպ սոցիալ-դեմոկրատիայի դիրքը՝ այն բանաձևելով երեք կետերի մեջ. «1. Թուրքիայի կազմալուծման պրոցեսը պետք է ընդունել որպես հաստատ իրողություն և չմտածել, թե այն կարելի է կամ պետք է կասեցնել, 2. Քրիստոնյա ազգերի ինքնուրույնության ձգտումներին վերաբերվել լիակատար համակրանքով, 3. Դրանք, սակայն, ամենից առաջ ողջունել որպես ցարական Ռուսաստանի դեմ ուղղված պայքարի միջոց և հաստատակամորեն հանդես գալ հօգուտ նրանց անկախության՝ ինչպես ընդդեմ Ռուսաստանի, նույնպես և ընդդեմ Թուրքիայի»[4]:

Ինչպես ընթերցողը նկատում է, Ռ. Լյուքսեմբուրգը չէր սահմանափակվում Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի

[1] «Բանբեր Երևանի համալսարանի. հասարակական գիտություններ», N 2(14), 1971, էջ 138:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 147:

ազատագրական պայքարի նկատմամբ համակրանք տածելով և կայսրության սահմաններում նրանց ազատագրությունը տեսնելու ձգտումով, ինչպես անում էին Ֆ. Էնգելսը և եվրոպական սոցիալ-դեմոկրատիայի այլ առաջնորդներ: Նա ավելի առաջ էր գնում և հաստատակամորեն հանդես էր գալիս հօգուտ այդ ժողովուրդների անկախության՝ Թուրքիայից և Ռուսաստանից: Սակայն նրա հոդվածից չի երևում, թե նա պաշտպանում էր Թուրքական բռնակալության դեմ զինված պայքարով ազգային անկախություն և ազգային պետականություն ձեռք բերելու գաղափարը: Հավանաբար նա հակված էր հարցի լուծման խաղաղ տարբերակին:

Միջազգային սոցիալ-դեմոկրատիան Թուրքական կառավարության ջարդարար քաղաքականության դեմ բազմիցս իր ձայնը բարձրացրել է նաև **պաշտոնապես**: Երկրորդ ինտերնացիոնալի ղեկավար մարմինները, առիթը ներկայանալիս, եվրոպական կառավարություններին հորդորում էին ակտիվ միջամտել հայերի նկատմամբ Թուրքական կառավարության ջարդարար քաղաքականությանը, դատապարտել նրա գործողությունները, կանխել սպասվելիք նոր կոտորածները:

Այսպես, օրինակ՝ 1900 թվականին Երկրորդ ինտերնացիոնալի Փարիզի միջազգային կոնգրեսը Հայկական հարցի վերաբերյալ ընդունել էր մի հատուկ բանաձև, որտեղ գրված էր.

«Փարիզի սոցիալիստական միջազգային համաժողովը, վերստին շեշտելով եղբայրական համակրության զգացմունքները, որոնք պիտի միացնեն բոլոր ժողովուրդներին, զայրույթով բողոքում է Հայաստանում կատարված բռնաբարությունների, խժդժությունների ու ջարդերի դէմ և ... հրավիրում է պառլամենտական սոցիալիստ խմբերին ամեն մի դեպքում միջամտել հօգուտ անարգաբար հարստահարված Հայ ժողովրդի, որին համաժողովը ուղղում է իր ջերմ ու սերտ համերաշխութեան հավաստիքը»[1]:

Երկրորդ ինտերնացիոնալի միջազգային սոցիալիստական բյուրոն 1901թ. հոկտեմբերի 15-ին հրատարակեց «Բոլոր երկրների բանվորական կուսակցություններին» կոչը, որի մեջ տագնապ էր արտահայտում հայ ժողովրդի դեմ սուլթանական կառավարության կողմից նյութվող նոր ոճրագործության հնարավորության առթիվ, ցույց էր տալիս, որ հայերի նկատմամբ եվրոպական կառավարությունների հանցագործ անտարբերությունն ու անգործությունը միայն խրախուսում են Աբդուլ Համիդին, որն իր հպատակ ժողովրդի հետ վարվում է այնպես, ինչպես ինքն է կամենում: Սոցիալիստական բյուրոն բանվորական կուսակցությունների պարտքն էր համարում տառապյալ հայ ժողովրդի նկատմամբ արտահայտել «պրոլետարական և միջազգային համերաշխություն», իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով ճնշում գործադրել եվրոպական երկրների կառավարությունների վրա, որպեսզի նրանք

[1] **«Դրոշակ»**, N 7(118), 1901, Հավելված, էջ 2:

զբաղվեն Հայկական խնդրով: Դիմելով աշխատավորներին, Ինտերնացիոնալի բյուրոն կոչ էր անում.

«Ձեր և ձեր թերթերի ու պատվիրակների վրայ պարտք է ընկնում ... ի լոյս հանել նրա (սուլթանի – Հ.Ս.) ոճիրները և ձեր համակրանքի ու քաջալերութեան խոսքերն ուղղել նրանց, որոնք տառապում և կուում են **ազրելու իրավունքը** նուաճելու համար»[1]:

Միջազգային բյուրոյի կոչին արձագանքեցին մի շարք երկրների սոցիալիստական կուսակցություններ: Ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը այդ առթիվ հրատարակեց մանիֆեստ, որում կոչ արեց սոցիալիստներին և բոլոր աշխատավորներին ոտքի կանգնել և լսեցնել իրենց ձայնը հօգուտ Թուրքիայի ճնշված հայերի[2]:

Հայկական հարցի նկատմամբ նույն անշեղ տեսակետներն ու վերաբերմունքն ունեին եվրոպական և ռուսական սոցիալ-դեմոկրատների հայ գործընկերները՝ Ստեփան Շահումյանը, Բոգդան Կնունյանցը, Սուրեն Սպանդարյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, նրանց համախոհներն ու զինակիցները, անդրկովկասյան և համառուսական բոլշևիկյան մամուլը:

Արդեն դարասկզբին հայ սոցիալ-դեմոկրատները բուռն վիճաբանությունների մեջ էին դաշնակցական և հնչակյան տեսաբանների հետ և իրենց տեսակետները պարզաբանում ու պաշտպանում էին Հայկական հարցին նվիրված ժողովներում, հավաքույթներում, դիսպուտներում, մամուլի տարբեր օրգաններում:

Բազմաթիվ ելույթներով և տեսական հոդվածներով հարցին անդրադառնում էր Ստ. Շահումյանը:

Դեռ 1901թ. դեկտեմբերին Ռիգայում հրավիրված Ռուսաստանի հայ ուսանողների համագումարում Շահումյանը բուռն բանակռիվ էր մղում այն պատգամավորների դեմ, որոնք գտնում էին, թե հայ ուսանողությունը չպետք է մասնակցի համառուսաստանյան հեղափոխական շարժումներին, այլ միայն պետք է զբաղվի տաճկահայերի ազատագրության խնդիրներով: Վճռականապես մերժելով այդ տեսակետը՝ նա շեշտում էր, որ «որքան ազատ քաղաքական պայմաններ ստեղծվեն Ռուսաստանում և Կովկասում, այնքան ավելի դյուրին կլինի տաճկահայերին օգնելը, քանի որ, ինչպես ցույց են տվել փաստերը, ցարի կառավարությունը թշնամի է տաճկահայերի ազատագրական շարժմանը»[3]: Իսկ դա նշանակում է, ասում էր Շահումյանը, որ հայ ուսանողությունը պետք է ակտիվորեն մասնակցի հակացարական պայքարին, որի հաղթանակի դեպքում միայն մեծապես կհեշտանա տաճկահայության ազատագրության գործը:

[1] **«Դրոշակ»**, N 7(118), 1901, Հավելված, էջ 2:
[2] Նույն տեղում, N 8 (119), 1901, էջ 143:
[3] **Վ. Ա. Ավետիսյան**, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, էջ 399:

Ստ. Շահումյանը բազմիցս նշել է, որ հայ բոլշևիկները երբեք անտարբեր չեն եղել արևմտահայերի բախտի նկատմամբ, երբեք նրանց ուղղված մեղադրանքի կամ ամենափոքր իսկ նախատինքի խոսք չեն ասել: Ընդհակառակը, օսմանյան բռնակալության դեմ տաճկահայության ծավալած ազատագրական շարժումը միշտ համարել են բնական ու արդարացի: Նա շեշտում էր, որ բոլշևիկների քննադատություններն ուղղված են հայ ազգային կուսակցությունների դեմ, բայց ոչ թե նրա համար, որ այդ կուսակցությունները ստանձնել են իրենց ժողովրդի շարժման ղեկավարությունը, այլ որովհետև շրջահայաց չեն, խելք և զգուշությամբ չեն վարում այդ շարժումը, միամտաբար ապավինում են իմպերիալիստական տերությունների դիվանագիտությանը, տարվում են այդ տերությունների կառավարությունների առատ, բայց սին խոստումներով, պարբերաբար ընկնում են նրանց լարած թակարդը, իրենց հետևից դեպի անդունդ են տանում խաղաղ ու մոլորյալ ժողովրդին, որի հետևանքով նա ենթարկվում է արյունալի ջարդերի և ուրիշ սոսկալի աղետների:

Հայկական հարցին հաճախ է անդրադարձել Բոգդան Կնունյանցը: 1902թ. «Նացիոնալիզմ և սոցիալիզմ» թեմայով նա ռեֆերատ էր կարդացել հայ ունկընդիրների առջև, որի շուրջ ծավալվել էին բուռն վիճաբանություններ. կովկասահայը պիտի՞ մասնակցի ռուսական ցարի դեմ սկսված կռվին, թե՞ կռիվ պիտի տա սուլթանի դեմ: Երկար հակաճառություններից հետո երկու կողմերը մնացել էին իրենց տեսակետներին[1]:

Իր կազմած և ՌՄԴԲԿ II համագումարին ներկայացրած Բաքվի կոմիտեի զեկուցագրում Կնունյանցը նշել է. «Քաղաքական այն ծանր պայմանները, որոնցում ապրում են Թուրքիայում 3 միլիոն հայեր՝ բարբարոսական հետապնդումները, մասսայական հալածանքները, Փոքր Ասիայում մի քանի անգամ կազմակերպված ջարդերը, չեն կարող չհրավիրել ռուսահպատակ հայերի, մասնավորապես ինտելիգենցիայի ռադիկալ մասի ուշադրությունը»[2]:

Հետագայում նույնպես Բ. Կնունյանցը անդրադարձել է Թուրքահայության ազատագրական շարժման հարցերին: 1909թ. տպագրած «Թուրքիայի իրադարձությունների շուրջը» հոդվածում նա գրել է, որ այդ երկրում ծավալված ազգային ազատագրական շարժումները մեծ ուժ և թափ են հաղորդել երիտթուրքերի 1908թ. հեղափոխությանը, բայց վերջիններս դարձել են նրանց դահիճները: Աբդուլ Համիդը, նշել է նա, մոլեռանդ ու բարբարոս էր, նրա հետնորդները՝ ազգայնամոլ, կեղծ և ավելի վտանգավոր: Եվ բոլոր դեպքերում տանջվում, տառապում և ստիպված շարունակ պայքարի մեջ է հայ ժողովուրդը[3]:

Հայ սոցիալ-դեմոկրատների միության ձևավորման հենց սկզբում (1902թ.) կազմակերպության ընդունած փաստաթղթերում արտահայտվել էին Թուրքահայության հանդեպ ունեցած տագնապները: «Միության» օրգան «Պրոլետարիատում» տպագրված հոդվածներից մեկում այն միտքն էր զարգացվում, թե ազգային ազատագրական պայքարը մեծապես առաջ է մղել հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, մեծապես նպաստել է ազգային գրականության զարգացմանը՝ Խ. Աբովյանից մինչև Ա. Շիրվանզադե[1]: «Ներքին տեսություն» վերտառությամբ հոդվածում թերթը անարգանքի սյունին էր գամում Թուրքահայության հարստահարիչներին, մերկացնում նրանց ստոր ու դավադիր գործերը, բիրտ ու դաժան քաղաքականությունը: Հայ սոցիալ-դեմոկրատները լուսաբանել են Թուրքիայից Կովկաս փախած հայերի նկատմամբ սուլթանի և ցարի բարբարոս, կատարյալ հակամարդկային վերաբերմունքը, դիմակազերծել իրար հետ գործարքի մեջ մտնելը ընդդեմ թշվառ գաղթականության՝ որակելով այն որպես «պատմության արյունոտ և մռայլ էջ»[2]:

«Պրոլետարիատի» հոդվածների և նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ սոցիալ-դեմոկրատները չէին ուրանում Թուրքահայ դատի գոյությունը, բայց մտահոգված արևմտահայերի ծանր ճակատագրով, քննադատում էին այդ դատի շուրջ տարվող գործելակերպը: Նրանք չէին հաշտվում այն մտքի հետ, որ ռուսահայերը այսուհետև ևս պիտի շարունակեն դրսից կարգավորել արևմտահայերի գործերը: Որպեսզի այդ բանը տեղի չունենա, ռուսահայերին օր առաջ պետք է դուրս բերել ռուսահայ բուրժուազիայի կործանարար ազդեցությունից:

«Պրոլետարիատը» չէր նույնացնում հայ ազատագրական շարժումը և ազգային-հեղափոխական կուսակցությունների գործունեությունը, Թուրքահայերին հրավիրում էր դեպի քաղաքական ինքնագործունեություն, նրանց առաջարկում էր՝ հակառակ այդ կուսակցությունների ծրագրային նպատակների, դաշնակցել Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի հետ:

«Պրոլետարիատի կռիվը» բոլշևիկյան հայերեն առաջին թերթի N1-ում զետեղված են Հայկական հարցի մասին մի շարք նյութեր, այդ թվում «Մեր պատասխանը» անստորագիր հոդվածը, որը ակադ. Աշոտ Հովհաննիսյանի վկայությամբ Բ. Կնունյանցինն է: Հոդվածում արտահայտված էր ռուսահայությանը տոչորող ցավը՝ Թուրքահայերի վիճակի օր-օրի վատթարացման կապակցությամբ: Հեղինակը նկատում էր, որ «ոչ մի մարդասեր, ոչ մի իսկական սոցիալիստ երբեք չի կարող անտարբերությամբ տանել այն բոլոր գազանությունները, որոնք սոսկալի թափով տեղի են ունենում այն երկրում, որը Թուրքաց Հայաստան է կոչվում»[3]: Միաժամանակ Կնունյանցը շեշտում էր, որ ոչ մի տեղ գոյություն չունի առճակատում սոցիալիզմի ներկայացուցիչների ու որևէ նահատակ ազգի, սոցիալ-դեմոկրատների և ազատության ձգտող ուժերի միջև[4]:

---

[1] Տե՛ս Հովհաննես Ինճիկյան, Բոգդան Կնունյանց, Երևան, 1957, էջ 49:
[2] Второй съезд РСДРП. Протоколы, М., 1959, стр. 530.
[3] Տե՛ս "Бакинские вести", N 1, մայիս, 1909թ.:

[1] «Պրոլետարիատ», N 1, 1902թ.:
[2] Նույն տեղում:
[3] «Պրոլետարիատի կռիվը», N 2-3, 1903թ.:
[4] Նույն տեղում:

Հայ մարքսիստները, գրում էր նա, սկզբից ևեթ մտահոգվել են արևմտահայերի բախտով, բայց ոչ այնպես, ինչպես հայ ազգային կուսակցությունները և հոսանքները: «Ուղարկելով Տաճկահայաստանում կովող եղբայրներին մեր սոցիալիստական ողջույնը, - ասված էր հոդվածում, - մենք բացարձակ կերպով հայտարարում ենք **մեր** համակրությունը բազմաչարչար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին, և մեր անկեղծ ցանկությունն է, որ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ»[1]:

Բոլշևիկ Վահան Տերյանը Թուրքահայաստանի մասին իր մի գրության մեջ նշել է. «Մենք, հայ սոցիալ-դեմոկրատներս (բոլշևիկներս), հաստատ գիտենք, որ լոկ պրոլետարական-գյուղացիական հեղափոխությունը և բանվորների ու չքավորագույն գյուղացիների կառավարության ստեղծումը կարող է ազատություն բերել արտասահմանյան մեր եղբայրներին՝ Թուրքահայերին, և բուժել նրանց խոր վերքերը»[2]: Ռուսական հեղափոխական շարժումներին հայ պրոլետարիատի մասնակցությունն անխուսափելի է, նշում էր նա, քանի որ այդ պրոլետարիատը անբաժանելի մասն է համառուսաստանյան պրոլետարիատի, հետևապես ցարիզմի և կապիտալիստական շահագործման դեմ նրանց համատեղ պայքարը պայմանավորված է դասակարգային նույն ճակատագրով, հետևանք՝ պատմականորեն ձևավորված օբյեկտիվ պայմանների:

Այս էր ազգային շարժումների նկատմամբ սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքի հիմնարար սկզբունքը:

Ճնշված ազգերի հանդեպ իրենց համակրանքը մարքսիստներն արտահայտում էին մամուլով, բանավոր խոսքով, ցույցերում ու միտինգներում հնչեցրած ելույթներով: Անշուշտ, նրանց համակրական արտահայտությունները սոսկ պլատոնական սիրո արտահայտություններ չէին, այլ ազգերի նկատմամբ սկզբունքային տակտիկական վերաբերմունքի արտահայտություն և պարզապես հեղափոխականների քաղաքացիական պարտք: Միջազգային սոցիալ-դեմոկրատիան, որը քաղաքական պայքարի ասպարեզ էր իջել և հանուն պրոլետարիատի սոցիալական ազատագրության անզիջում կռիվ էր հայտարարել կապիտալիստական շահագործման ու բռնության դեմ, չէր կարող անտեսել տնտեսական, ցեղային, մշակութային, կրոնական այն ճնշումները, որոնք կատարվում էին ազգային հողի վրա՝ լինեին դրանք Եվրոպայի գոտում, ծայրագույն արևելքում թե Կովկասում:

Սակայն, ինչպես տեսանք, ազգային շարժումների նկատմամբ մարքսիստների վերաբերմունքը սահմանափակված էր բարոյախոսական կոչերով և համակրական արտահայտություններով: Մենք անտարբեր չենք Թուրքահայոց ճակատագրի հանդեպ, չենք դատապարտում իրենց եղբայրներին օգնություն գնալու կովկասահայ երիտասարդների ազնիվ ձգտումները, - ասում էին նրանք, - բայց վճռականապես դեմ ենք Թուրքիայում հայ հեղափոխականների գործնական քայլերին:

Ահա թե ինչու հայ ազգային-հեղափոխական կուսակցությունները և ազգային գործիչները սոցիալ-դեմոկրատներին մեղադրում էին, որ նրանք միայն բավարարվում են Թուրքահայ մղձավանջի վերացման բարի ցանկություններով, «ձեռքերը ծալած» միայն քննադատում են ուրիշների արածը: Եթե նրանք չեն ուզում մոտենալ Հայկական հարցին, պետք է գոնե մասնակցեն Թուրքիայի դեմոկրատացման սպասվելիք գործընթացին, որին լծված են դաշնակցականները, հնչակյանները, եվրոպական առաջադեմ գործիչները, նույնիսկ երիտասարդ Թուրքերը:

Հետևում էր սոցիալ-դեմոկրատների պատասխանը, թե իրենք արևմտահայերի ազատագրական պայքարի հաղթանակով շահագրգռված են թեկուզ հենց այն բանի համար, որ այդ հաղթանակից հետո հայ ազգային կուսակցությունները, և հատկապես դաշնակցությունը, այլևս չէին կարող շարունակել տարիներ ի վեր մղող իրենց այն պրոպագանդան, համաձայն որի, հրաժարվելով Թուրքահայ հեղափոխությանը գործուն մասնակցություն ունենալուց, սոցիալ-դեմոկրատները, իբր, դրանով իսկ դավաճանում են հայ ժողովրդի կենսական շահերին: Հայ մարքսիստները գտնում էին, որ Հայկական հարցի լուծումը հնարավորություն կտա սոցիալ-դեմոկրատիայի դրոշի շուրջ համախմբել ազգայնական, հակասոցիալիստական պրոպագանդայի ազդեցության տակ գտնվող կովկասահայ աշխատավորական նորանոր շերտերի, ինչպես նաև Կովկասում ապաստանած Թուրքահայ զանգվածներին:

Ընդունելով «ձեռքերը ծալած» լինելու մեղադրանքը՝ սոցիալ-դեմոկրատներն ասում էին, թե հայ ազգային կուսակցությունները, հատկապես դաշնակցությունը, հիմնականում զբաղված են Թուրքահայաստանում բանավոր ու գրավոր ագիտացիա մղելով և ցույցեր կազմակերպելով, իսկ ծավալուն շարժում առաջացնել անկարող են: Գուցե երևույթի բացատրությունը պետք է որոնել նրանում, որ հայ ազգը «փոքր ածու՞» է, ուստի հենց այդ պատճառով համեստ է նրա տարերքը: Գուցե այդպես է, բայց փաստը մնում է փաստ, որ հայ հեղափոխական կուսակցություններն ի վիճակի չեն դուրս գալու ցուցաբարական գործունեության կախարդական շրջանակից և դառնալու ղեկավար լուրջ ուժ Թուրքահայության ազատագրական շարժման մեջ:

Բայց չէ՞ որ դաշնակցությունը մեկ ու կես տասնամյակ շարունակ Թուրքահայաստանում ոչ միայն ագիտացիա է անում, այլև լծված է գործնական պայքարի, իսկ հնչակը՝ է՛լ ավելի երկար ժամանակ, - լինում էր պատասխանը: Չէ՞ որ նրանք հսկայական ջանքեր են գործադրում ոչ միայն տեղում կազմակերպելու շարժումը, այլև ապահովելու կովկասահայության ակտիվ աջակցությունը Թուրքահայոց պայքարին: Օրինակ՝ հաղթահարելով անասելի վտանգներ՝ նրանք զենք են մտցնում երկիր: Իրենց եղբայրների և քույրերի վշտից ու տառապանքից վառված սրտերով ռուսահայ երիտասարդները, կազմած արշա-

[1] **«Պրոլետարիատի կռիվը»**, N 2-3, 1903թ.:
[2] **Վ. Տերյան**, Երկեր, հատ. 3, Հայպետհրատ, Երևան, 1963, էջ 506:

վախմբեր, օգնության են շտապում Վան ու Մուշ, Սասուն ու Տարոն: Երկիր անցնելիս նրանք ենթարկվում են թուրք և ռուս սահմանապահ ուղեկալներում տեղակայված զորամասերի հարձակումներին, տալիս են ցավալի կորուստներ, բայց ո՛չ ցարը և ո՛չ էլ սուլթանը մինչև այժմ ի վիճակի չեն եղել մեռցնելու նրանց ազգասիրական ոգին, թուլացնելու օգնության գնալու մղումը: Եթե դաշնակցական և հնչակյան գործիչներին հաջողվում է սահմանն անցնել և մտնել Արևմտահայաստան, արա իրենց ողջ ուժերը նրանք ներդնում են հեղափոխության կազմակերպման գործին, այլ ոչ թե բավարարվում են ագիտացիայով և բարոյախոսական ճառերով:

Հենց այս հարցի շուրջ է, որ հայ բոլշևիկները հանդես էին բերում իրենց անհաշտ վերաբերմունքը հնչակի և դաշնակցության հակաթուրքական պայքարի ձևերի, նրանց հեղափոխական գործունեության տակտիկայի նկատմամբ:

Ինչպես և սպասելի էր, ասում էին նրանք, հակաթուրքական ապստամբությունն արդեն խլել է հարյուր հազարավոր անմեղ հայերի կյանք: Ամեն անչնչան ցույցի կամ մի փոքր ընդհարմանը հաջորդել են թուրք ոստիկանության և զորքի արյունալի հաշվեհարդարները: Իրենց ժողովրդի դատին անմնացորդ նվիրված հազարավոր զավակներ ամեն տարի մեռնում են բանտերում և կախաղանների վրա:

Որպես իրենց խոսքերի ճշմարտացի լինելու ապացույց, բոլշևիկները մատնացույց էին անում երկու-երեք տասնյակ դաշնակցական խիզախ հայորդիների կողմից 1896թ. օգոստոսին օտտոմանյան բանկի գրավման փորձը, որն ավիթ եղավ Կ.Պոլսում 6000 հայի ոչնչացմանը: Դեպքին տրվում էին տրամագծորեն հակառակ գնահատականներ: Քր. Միքայելյանը «Ամբոխային տրամաբանություն» աշխատության մեջ գրում էր.

«Պոլսում հեղափոխականները ոչ միայն Տաճկաստանի սրտումն էին, այլև համաշխարհային նշանակություն ունեցող մի կենտրոնում, ամբողջ Եվրոպայի աչքի առաջ, նրա շահերի անմիջական թատերաբեմում. մի ատրճանակի պայթյունն այնտեղ ավելի է լսելի աշխարհին, քան հարյուրավոր հրացանների որոտումը երկրի խորքում»[1]:

Բերվում էր նաև Խանասորի արշավանքի օրինակը, որը հայկական յոթ գյուղերի կործանման առիթ եղավ: Ճիշտ է, ասում էին բոլշևիկները, սուլթանական կառավարության կողմից 300 հազար հայերի կոտորածի պատճառը ոչ հնչակը և ոչ էլ դաշնակցությունն են եղել, բայց այս դեպքում էլ սխալ քաղաքականությունը առիթներ է ստեղծել կոտորածների համար:

Բոլշևիկները հատկապես խստորեն քննադատում էին «Դեպի Երկիր» կարգախոսով հնչակյանների և դաշնակցականների կազմակերպած զինված հայդուկային ջոկատների ռուս-թուրքական սահմանի խախտումը, տարբեր ճանապարհներով Ռուսաստանից Արևմտահայաստան զենք տեղափոխելը: Ս. Կասյանի խոսքերով՝ դրանք «կովկասահայ աշխատավոր մարդկանց շահերի հետ որևէ առնչություն չունեցող արկածախնդրական գործողություններ» էին, որոնք Թուրքիայի ռազմաֆեոդալական բռնապետական ռեժիմին հայթայթում էին նորանոր պատրվակներ է՛լ ավելի ուժգին շարունակելու իրենց հայաջինջ քաղաքականությունը: Գաղտնիք չէ, ասում էին բոլշևիկները, որ կառավարությունը հաճախ ինքն է սադրում ելույթները: Եվ այդպես առատորեն թափվում է հազարավոր անմեղ խաղաղ աշխատանքի մարդկանց արյունը, որի գինը հազարապատիկ ավելի է ստացված և սպասվելիք երևակայական դրական արդյունքներից:

Ի վերջո, ո՞րն էր այս ամենի նպատակը, - հարցնում էին բոլշևիկները: Քր. Միքայելյանը պատասխանում էր. «Ի՞նչ էր, ուրեմն, մեր շարժման նպատակը: Ուրիշ ոչինչ, եթե ոչ կազմա՛լերպված ու բռնի ուժով կռվել, բողոքել Տաճկաստանում տիրող սպանիչ կարգերի դեմ, մինչև որ վեց պետությունների երաշխավորված միջամտությամբ այդ կարգերը դեպի լավը կփոխվեն»[1]: Ըստ որում, այդ կռիվը և բողոքը պետք է հարատև լինեն: «Մեր դատը վաղուց է հայերիս համար սոսկալի վերքի նշանակություն ստացել: Շնորհիվ թուրք կառավարության կատարյալ կուրության՝ նա նույն վերքի նշանակությունն է ստացել Թուրքիայի համար ևս: Թե՛ մենք և թե՛ Թուրքիան ընտրել ենք այդ վերքի դեմ վիրաբուժական միջոց. մենք դիմել ենք հեղափոխության, Թուրքիան՝ մեզ կոտորելու միջոցին: Մեզ մնում է, ուրեմն, երկուսից մեկը - կամ սեփական ձեռքով թաղել մեր դատը, կամ թե շարունակել մեր կռիվը այնքան, որ նա՝ Թուրքերի դեմ մինչև այժմ ուղղված դժգոհությունների, պաշտոնական բողոքների և թղթի սպառնալիքների շրջանը անցնելով, վերջապես մի վերք դառնա նաև այն ազգությունների ու պետությունների համար, որոնք կապ ունեն Թուրքիայի և մեր հարցի հետ: Այն օրը, երբ դրանք ևս կը համոզվեն, որ այդ վերքի դեմ պետք է դիմել վիրաբուժության, մեր դատը ապահովված կը լինի. այդ օրը կը լինի և մեր հաջողության օրը»[2]:

Հետևում էր բոլշևիկների պատասխանը. ոչ հնչակի և ոչ էլ դաշնակցության ղեկավարները չեն կարողանում ըմբռնել, որ հայության վերքը երբեք վերք չի դառնա Եվրոպայի համար: Եվրոպական բուրժուական պետությունները, հատկապես Բեռլինի 61-րդ հոդվածի կիրառումն ստանձնած բոլոր վեց պետությունները, Թուրքիայում ունեն իրենց տնտեսական շահերը, և նրանցից ոչ մեկը չի ցանկանա հանուն հայերի վատթարացնել իր հարաբերությունները սուլթանի հետ: Պատահական չէ, որ հայերի նկատմամբ գործած գազանությունները, հարյուր հազարավոր անմեղ մարդկանց խողխողումը նրանք, թեև վճռականապես դատապարտում էին, բայց, ի վերջո, միշտ

[1] **Քր. Միքայելեան,** Յեղափոխականի մտքերը, հրատ. Հ.Յ.Դաշնակցութեան, Ժընև, 1906թ, էջ 45- 46:

[1] **Քր. Միքայելեան,** Յեղափոխականի մտքերը, էջ 42:
[2] Նույն տեղում, էջ 71-72:

համարում էին սուլթանական կառավարության ներքին գործը:

Սակայն դաշնակցությունը գտնում էր, որ օսմանյան կայսրությունում պարբերաբար կատարվող հայերի կոտորածները թուրքերի ներքին գործը չէ, այլ համայն առաջադեմ մարդկության գործը: Հայերը Թուրքիայում ուզում են նվազագույնը՝ կյանքի ու գույքի ապահովություն, նրանց շարժումը անջատողական չէ, այլ նպատակ ունի ժողովուրդն ազատագրել հալածանքներից ու բռնություններից, կոտորածների մշտական սարսափից:

Թուրքերին միանալու հայերին ուղղված Տամադ Մահմուդ փաշայի կոչին ի պատասխան, Քր. Միքայելյանը 1900թ. գրել էր «Միություն թուրքերի հետ» հոդվածը՝ ամենայն պարզությամբ ներկայացնելով հայ ազատագրական շարժման նպատակը: Նա թուրքերին կոչ էր անում աջակից լինել օսմանյան կայսրությունում հայերի հետ խաղաղ հարաբերությունների հաստատմանը:

«Թուրքե՛ր, մենք չենք ձգտում ոչ հայ թագավորության վերականգման, ոչ թեկուզ 100 մարդուց միայն բաղկացած որևէ ազգության սպառնող գերիշխանութեան, ոչ էլ անպատճառ ձեր պետությունից անջատվելուն: Մեր դրությունը պարզ է. ինչպես ձեզ վիճակված է գործել ձեր ժողովրդի մեջ, նույնպես էլ մեզ համար ավելի հարմար է մեր ժողովրդի պետքերին հետևել: Եթե մենք այսօր կոչում ենք բարձրաձայն՝ «Կեցցե՛ հայկական շարժումը», - դա չի նշանակում, որ մենք միշտ պատրաստ չենք նույն ոգևորությամբ նաև կոչելու՝ «Կեցցե՛ ընդհանուր օտտոմանյան հեղափոխությունը», «Կեցցե՛ ընդհանուր օտտոմանյան անկախությունը»: Քրիստափորը այնուհետև նշում էր, որ եթե վերջ գտնեն կայսրության մեջ հայերի նկատմամբ կատարվող բռնությունները և հալածանքները, եթե բարեփոխվի նրանց դրությունը, ապա «մենք հեղափոխականին վայել ավյունով կը վազենք ձեր շարքերն ամրապնդելու:

Բայց ե՞րբ կը լինի այդ ...»[1]:

Մարքսիստները, այդ թվում հայ սոցիալ-դեմոկրատները, վճռականապես դեմ էին անհատական տեռորին: Հայ բոլշևիկները բազմիցս դատապարտել էին հնչակի և դաշնակցության տեռորիստական գործողությունները: Թուրք նահանգապետերի, տարբեր աստիճանի պետական պաշտոնյաների և զինվորական հրամանատարների դեմ կատարած մահափորձերն ու ահաբեկումները Ի՛լ ավելի էին ծանրացնում թուրքահայոց դրությունը: Բոլշևիկներն ասում էին, որ պայքարի այդ եղանակը նույնպես չի կարող թուրքահայ ժողովրդին հասցնել իր ցանկացած նպատակին, չի կարող լինել Հայկական հարցի լուծման ուղի: Իսկ դա նշանակում է, որ ազատության պայքարը այդ կուսակցությունների համար դառնում է ինքնանպատակ, իսկ ժողովուրդը՝ սոսկ միջոց:

Անդրադառնալով 19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանում ծայր առած և 20-րդ դարի սկզբներին շարունակվող ահաբեկչական գործողություններին և ելնելով պատմության մեջ անհատի ու ժողովրդական մասսաների դերի

[1] **Քր. Միքայելեան**, Յեղափոխականի մտքերը, էջ 107-109:

մարքսիստական գնահատումից՝ Ստ.Շահումյանը ցույց էր տալիս անհատական տեռորի քարոզի անմտությունը, նույնիսկ վնասակարությունը՝ բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի համար: Նա գրում էր.

«Կառավարության համար, բուրժուազիայի համար տեռորը սարսափելի չէ: Ընդհակառակը: Ինքնակալական կարգերի դեմ պայքարի փոխարեն՝ պայքար այս կամ այն ցարական մինիստրի դեմ, կապիտալիստական կարգի դեմ պայքարի փոխարեն՝ պայքար կապիտալի առանձին ներկայացուցիչների ու սպասավորների դեմ, - սրանից ավելի ցանկալի ի՞նչ կարող է լինել պրոլետարիատի թշնամիների համար: Արդյոք ինքնակալությունը տապալվե՞ց այն բանից, որ սպանվել էր Ալեքսանդր 2-րդը: Ոչ, նույնիսկ ընդհակառակը, նա ամրապնդվեց Ալեքսանդր 3-րդի թագավորությամբ: Արդյոք որևէ բան կորցրե՞ց ցարական կառավարությունը, երբ սպանեցին Պլևեին: Ընդհակառակը, նա ձեռք բերեց Ստոլիպինին, որը շատ ավելի խելացիորեն ու ավելի եռանդով է պաշտպանում ինքնակալության շահերը... Անհատական, քաղաքական տեռորը մի միջոց է, որը ձեռնտու է իշխող դասակարգերի և կործանարար՝ պրոլետարիատի համար»: Այդ է պատճառը, որ «Ամենուրեք կառավարություններն իրենք էին տեռորիստական ակտեր կազմակերպում, որպեսզի դրանք պատվաստեն մասսաներին և կազմալուծեն պրոլետարիատի պլանաչափ պայքարը»[1]: Բուրժուազիայի տիրապետությունը ոչնչացնել, կապիտալիստական կարգերը վերացնել կարող են միայն ժողովրդական մասսաներն իրենց գիտակցված ու կազմակերպված հեղափոխական ելույթներով: Լեհաստանի պրոլետարիատի 1906թ. պարտիզանական կռիվները գնահատելիս՝ Ստ. Շահումյանը նկատում էր, որ այն «... անհատական անզոր տեռորը չէ, այստեղ խոսողը ինքը ամենակարող ու տիրական մասսան է: Նրա կատաղության այդ առաջին արտահայտությունները սոսկալի են այն սպառնական հետևանքներով, սպառնական՝ միապետական կառավարության համար, - որոնցով հղի են նրանք»[2]:

Ոչ հնչակյանները և ոչ էլ դաշնակցականները չէին ընդունում անհատական տեռորի տակտիկայի բոլշևիկյան քննադատությունը: Քր. Միքայելյանը, առարկելով հայ բոլշևիկներին, գրում էր.

«... Մենք կարծում ենք, որ մեր հեղափոխական շարժումը ... հենց նրանով էլ արտահայտեց իր կենսունակությունը, իր ճկունությունը և ամենաանպաստ պայմաններին հարմարվելու իր ընդունակությունները, որ նա կարճ ժամանակամիջոցում ըմբռնեց կռվի բազմազան միջոցները՝ սկսած համեմատաբար խաղաղ բնավորություն ունեցող բողոքներից մինչև ուժանակի գործածությունը, սկսած անհատական տեռորներից մինչև ժողովրդական շարժումները»[3]:

[1] **Ստ. Շահումյան**, ԵԼԺ, հատ. երկրորդ, էջ 50-52:
[2] Նույն տեղում, հատ. առաջին, էջ 313:
[3] **Քր. Միքայելեան**, Յեղափոխականի մտքերը, էջ 44:

Բոլշևիկների պես էին մտածում նաև ռուսահայ և թուրքահայ անկուսակցական շատ գործիչներ, որոնք չէին հավատում, թե հայոց շարժումը Թուրքիայում կարող է հաջողություն ունենալ:

Արևմտահայ Վ. Տեր-Պոյաճյանը (Իրո) «Մշակ» թերթի խմբագրությանն ուղղած նամակում, պախարակելով հնչակյաններին, որոնք տարված են «վերացական անիրականանալի գաղափարներով», գրում էր. «Մի՞թե անկեղծ և լուրջ մտածող տաճկահայը կարող է իրական գործը թողնել և ցնորքների կամ շատ և շատ հեռու նպատակների հետևից քարշ գալ, գործը թողնել և խոսքի հետևից ընկնել»[1]: Նամակի հեղինակը հատկապես վտանգավոր էր համարում դաշնակ և հնչակ քաղաքական գործիչների բացահայտ կոչերը հայերի ուժերով վերացնելու իրենց բաժանող պետական սահմանները: Նա «Հնչակ» թերթի 1906թ. N 4-ի մի հոդվածից, որ համարում էր «անլուրջ», կատարում էր այս մեջբերումը. «Կովկասի մեջ եղած հայը, հայ գյուղացին, հայ գործավորը մի ընդհանուր շարունակություն են կազմում վեց նահանգների մեջ եղած հայի, հայ գյուղացու և հայ աշխատավորի: Անջատող սահմանները մեզ համար de facto ջնջված են տարիներից ի վեր»*: «Հնչակը», շարունակում էր նամակագիրը, ըստ էության, կրկնում է այն, ինչ այդ առթիվ արդեն ասել են դաշնակցության ղեկավարները: Անշուշտ, նա նկատի ուներ հայության բաժան-բաժան հատվածների միջև եղած սահմանները վերացնելու մասին Քրիստափոր Միքայելյանի հայտնի խոսքերը. «Պատռել է հարկավոր քարտեզների վրա այս կամ այն ավազակապետի կամքով գծված սահմանները, ջնջել է հարկավոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից և որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատև են լինում: Ո՛չ մի բռնություն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթե նա, տոգորված ընդհանուր շահերի գիտակցությամբ, ունի նաև կռվելու անսասան **վճռականություն** և կապված, **միացած** է դարերով սնված ու պահպանված ընդհանուր բնազդների ու զգացմունքների առողջ զարկերակով:

Համարձակություն՝ գահական խլտվիլակների և նրանց շրջապատող, նրանց գործակից բոլոր դահիճների ու անբան ստրուկների դիմաց...

Ինքնավստահ վճռականություն՝ ընդհանուր շահերի գիտակցությամբ լուսավորված ...

Մե՛կ նպատակ, մե՛կ ամբողջություն՝ հեղափոխական անհաշտ կռվի համար ...»[2]:

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, «Մշակի» խմբագրության ֆոնդ, 227, գ. 382, թ. 53:
Այդ միտքը ավելի հստակ ձևակերպված է հնչակյան կուսակցության երկրորդ ծրագրում, ուր ասված է. Թուրքահայության կողմից քաղաքական ազատություն նվաճելուց հետո «շարունակել ընդհանուր հայության ազատության գործը, ազատել բռնակալ լծից ռուսահային ու պարսկահային և կազմել այդ երեքից մի դաշնակցային ռամկավարական հանրապետություն» («Մրագիր Հնչակյան սոցիալիստ-հեղափոխական կուսակցութեան», Լոնդոն, Հայկակ՝սն ազատ տպարան, 1891, էջ 7-8):

[2] Քր. Միքայելեան, Յեղափոխականի մտքերը, էջ 130-131:

Այսպիսով, գտնում էր Վ. Տեր-Պոյաճյանը, հնչակյան և դաշնակցական կուսակցությունները ընդամենը մի քանի հազար հրացան ունեցող, այսինքն՝ ըստ էության, անզեն հայ փոքր ժողովրդին միաժամանակյա պատերազմի կոչ են անում հզոր Ռուսաստանի և օսմանյան կայսրության դեմ նրանց միջև եղած «սահմանները ջնջելու» և «հայությունը միավորելու համար»: Բայց, ցավոք, հայ ժողովուրդը մինչև այժմ չի տեսել թուրքահայ վեց նահանգների և ռուսահայերի միջև կանգնած սահմանների գոնե մի փոքր հատվածի վերացումը և հավանաբար երկար ժամանակ չի էլ տեսնի[1], - եզրահանգում էր նա:

Նշելով, որ բոլոր ողջախոհ հայերը դատապարտում են դաշնակցությանը՝ սխալ ու անհեռատես քաղաքականություն վարելու համար, Ստ. Շահումյանը տարիներ անց, 1916թ. դեկտեմբերին, գրում էր. ««Ազգը», այսինքն՝ ժողովուրդն իր մեծամասնության մեջ, ոչ միայն չչահեց հնչակյան-դաշնակցական «ազգասիրությունից», այլ կրեց ամենասոսկալի պատիժներ, զոհ դարձավ ամենաահռելի պատուհասների»[2]: Ապա՝ «... Մենք հակառակ ենք եղել դաշնակցականների, հնչակյանների ազգային քաղաքականությանը: Մենք ասել ենք նրանց, դուք, պարոններ, հայ ազգի համար կույր առաջնորդներ եք: Դուք ունեք բարի ցանկություններ, բայց ձեր գործերը, ձեր ճանապարհը կորստաբեր են հայ ժողովրդի համար»[3]: «... Իհարկե, դաշնակցությունը մեղավոր չէ, որ հայ ժողովրդի պատմական վիճակը այդքան անագորույն է, ոչ մի կուսակցություն չի կարող դժոխքը դրախտ դարձնել: Բայց կուսակցությունները ստեղծվում են հենց նրա համար, որ ըստ կարելվույն լավացնեն ժողովրդի դրությունը, որ խելացի կերպով առաջնորդեն մասսաներին և տանեն նրանց **ազատության ճանապարհով**[4]:

Արձանագրելով, որ ազգային հեղափոխությունը որևէ չափով չի թուլացրել ժողովրդի վիճակը, Ստ. Շահումյանը զգուշացնում էր, որ այդպես շարունակելու դեպքում թուրքահայ դժբախտ ժողովուրդը նորանոր աղետներ է կրելու, կանգնելու է նոր կտորածների սարսափի առաջ: Եվ ազգային հեղափոխականները որքան շուտ հրաժարվեն դավադրական ակտերից, անժամանակ ցույցերից, իմպերիալիստական դիվանագիտության շաղակրատանքներից և վարեն խելոք ու մտածված քաղաքականություն, այնքան կշահի ժողովուրդը: Հայի արյունը ջուր չէ, այն պետք է խնայել: Նա պիտի կառչած մնա իր երկրին, պիտի բազմանա ու բազմապատկվի, համբերություն հավաքի և սպասի գալիք օրերին,- այս էր Ստ. Շահումյանի մտքերի տրամաբանությունը:

Հայ սոցիալ-դեմոկրատները ջերմորեն ողջունում էին հնչակից և դաշնակցությունից հեռացած և դեպի համառուսաստանյան հեղափոխության շարքերը եկած ղեկավար գործիչներին և շարքային անհատներին: Եթե դաշնակցա-

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, «Մշակի» խմբագրության ֆոնդ, 227, գ. 382, թ. 56:

[2] Ստ. Շահումյան, Եվ, հատ. երրորդ, էջ 49:

[3] Նույն տեղում, էջ 47:

[4] Նույն տեղում, էջ 48:

կաններից համեմատաբար քչերն էին այդ քայլին դիմում, ինչպես ասենք՝ Լևոն Սարգսյանը, Արսեն Ամիրյանը, Լևոն Աթաբեկյանը, Վահան Մինախորյանը և ուրիշներ, ապա հնչակի շարքերը թողնում էին հայրենները: Դրանց թվում կուսակցության հիմնադիր ղեկավարներից շատերն էին՝ Ավետիս և Մարո Նազարբեկյաններ, Ռուբեն Խանազատ, Ռուբեն Բերբերյան, խոշոր գործիչներ՝ Գրիգոր Վարդանյան, Սարգիս Կասյան, Սաքո Համբարձումյան և շատ ուրիշներ:

Դաշնակցականների ու հնչակյանների հետ բոլշևիկների բուռն վիճաբանությունների նյութեր էին նաև ուրիշ սուր ու ցավոտ խնդիրներ: Դրանցից մեկը օսմանյան տերության ներքին գործերին միջամտելու թե չմիջամտելու հարցն էր:

Սոցիալ-դեմոկրատները չէին ժխտում, որ, իրոք, իրենք երբեք նպատակ չեն ունեցել և այժմ էլ չունեն գործնական քայլեր անելու թուրքահայերի ազատագրության համար: Ահա դաշնակցության տեսաբանների առաջադրած մեղադրանքին նրանցից մեկի տված պատասխանը. «... Անհիմն ու անիմաստ է ասել՝ «պե՞տք է հայ սոցիալ-դեմոկրատիան ձեռքերը ծալե, թե՞ կունենա որոշ գործնական քայլեր Թուրքիայում»: Ի՞նչ ձեռքերը ծալելու մասին խոսք կարող է լինել մի կուսակցության, որն իր ամբողջ գոյության իմաստով չէ ստանձնել երբեք պատմական որևէ կոչում ու պարտականություն՝ «գործնական որոշ քայլեր» անելու Թուրքիայում (կամ Թուրքահայերի մեջ), որ երբեք հավակնություններ չի ունեցել արտահայտիչը հանդիսանալու Թուրքահայ կուվող տարրերի ձգտումների, որ իր դասակարգային շնքին չէ կրում երբեք Թուրքական պայմանների այն ծանրությունը, որի վերացման և «սահմանադրական կարգերի շուտափույթ գալստյան» համար նա գերազանցորեն շահագրգռված զգա ակտիվ կերպով արտահայտվելու: Մի շարք անհիմն սպասելիքներ են սրանք, որ ունենալ կարող է հայ սոցիալիստ-դեմոկրատներից միայն նա, ով թյուր գաղափար ունի սոցիալ-դեմոկրատիայի դասակարգային էության և գաղափարական հիմքերի մասին»[1]:

Որքան էլ դաշնակցական գաղափարախոսները փորձում էին տեսականորեն հիմնավորել, թե Թուրքահայոց գործերին կովկասահայերն ունեն միջամտելու իրավական և հատկապես բարոյական բոլոր կուվանները, քանի որ և՛ առաջինները, և՛ երկրորդները մի ժողովուրդ են, մի մարմնի երկու մասեր, բայց բոլշևիկները իրենց դիրքի մեջ մնում էին անդրդվելի և պարզ ու որոշակի հայտարարում էին, թե դա կոպիտ միջամտություն է մի այլ սուվերեն երկրի ներքին գործերին:

Լինելով Ռուսաստանի բազմազգ պրոլետարիատի կուսակցության նվիրյալ անդամներ և ռուսահայ իրականության մեջ ՌՍԴԲԿ գաղափարական արտահայտիչներ՝ հայ սոցիալ-դեմոկրատները շահագրգռված չէին սեփական ուժերը

[1] **«Անկախ մամուլ»** (Թիֆլիս), N 24, 28 փետրվարի 1907 թ.:

սպառելու քաղաքական մի այնպիսի միջավայրում, ինչպիսին Թուրքիան էր: Ավելին, նրանք հայտարարում էին, որ իրենք դավաճանած կլինեին իրենց գոյությունն իմաստավորող պրոլետարիատին և նրա գերագույն շահերին, եթե նրան անմնացորդ ծառայելու փոխարեն լքեին դասակարգային կռվի դիրքերը և «մխրճվեին» Թուրքահայ գործերի մեջ:

Հայ սոցիալ-դեմոկրատները բազմիցս շեշտել են, որ ոչ իրենք և ոչ էլ ամբողջությամբ վերցրած ռուսահայ պրոլետարիատը որևէ դրդապատճառ չունեն Ռուսիայի սահմաններից դուրս դասակարգային, առավել ևս ազգային շարժումներ հրահրել: Ռուս, հետևապես նաև հայ մարքսիստները վճռականապես դեմ էին ընդհանրապես իրենց գործունեության դաշտը տարածել Ռուսաստանի սահմաններից դուրս՝ հետևյալ հիմնական պատճառներով.

Ա) Ամեն մի երկրի սոցիալ-դեմոկրատիան իր երկրի սոցիալ-տնտեսական պայմանների արդյունք է և կոչված է գործել հենց այդ երկրում ելնելով այդ պայմաններից: Հասարակական-պետական կարգերի փոփոխությունը տվյալ երկրի բնակչության գործն է, Բ) Թուրքիայում բուրժուական հարաբերությունների թույլ զարգացած լինելու պատճառով այնտեղ չկա ժամանակակից իմաստով պրոլետարիատ, որը կարողանա ըմբռնել սոցիալիստական գաղափարները և գնալ սոցիալ-դեմոկրատների լոզունգների հետևից, Գ) ՌՍԴԲԿ-ի ոգուն խորթ է գործուն միջոցներով հեղափոխական շարժումը Ռուսաստանից այլ երկրներ, այդ թվում Թուրքիա արտահանելու նպատակը:

Բայց չէ՞ որ հայ իրականության մեջ դա դրսևորվում է ցեղակցության և արյունակցության ձևով, խոսքը վերաբերում է նույն ազգի երկու հատվածներին, – առարկում էին դաշնակցականները: Այդ հատվածներից մեկը՝ Թուրքահայությունը, գտնվում է սոսկալի վիճակում, իսկ մյուսը՝ ռուսահայությունը, անհամեմատ բարենպաստ դրության մեջ է, ուստի բնական է, որ վերջիններս օգնության ձեռք են մեկնում սահմանի այն կողմում գտնվող իրենց արյունակից եղբայրներին ու քույրերին: Որպես պատասխան հնչում էր հայ սոցիալ-դեմոկրատների ամփոփիչ տեսակետը. ցեղակցությունը և արյունակցությունը լոկ իրողություններ են, որոնք դասակարգային քաղաքականության ոլորտում չունեն գիտական փաստարկման արժեք: Դրանք միայն պայմաններ են ստեղծում հայդուկային, ամբոխային ժողովների սենտիմենտալ ճառախոսությունների համար: Ավելին, եթե նույնիսկ ազատություն ստանա Հայաստանը, նույնիսկ այդ դեպքում հայ սոցիալ-դեմոկրատիան որևէ ակնկալություն, դասակարգային որևէ պատրանքային հեռանկար չպիտի ունենա որոնելու շահեր Հայաստանում, մանավանդ եթե վերջինս շարունակի մնալ դեմոկրատիայի ճանապարհը բռնած Թուրքական պետության կազմում: Այս դեպքում նույնիսկ ռուսահայ պրոլետարիատը գլուխ ունենալով ռուսահայ սոցիալ-դեմոկրատիային, որպես սոցիալական հավաքականություն, որպես տնտեսական-քաղաքական դաշտում ձևավորված ինքնուրույն դասակարգ, առաջվա պես մնալու է ռուս իրականության մեջ՝ ապրելով ու գործելով միայն ռուսական կայսրու-

կաններից համեմատաբար քչերն էին այդ քայլին դիմում, ինչպես ասենք՝ Լևոն Սարգսյանը, Արսեն Ամիրյանը, Լևոն Աթաբեկյանը, Վահան Մինախորյանը և ուրիշներ, ապա հնչակի շարքերը թողնում էին հարյուրները: Դրանց թվում կուսակցության հիմնադիր ղեկավարներից շատերն էին՝ Ավետիս և Մարո Նազարբեկյաններ, Ռուբեն Խանազատ, Ռուբեն Բերբերյան, խոշոր գործիչներ՝ Գրիգոր Վարդանյան, Սարգիս Կասյան, Սաքո Համբարձումյան և շատ ուրիշներ:

Դաշնակցականների ու հնչակյանների հետ բոլշևիկների բուռն վիճաբանությունների նյութեր էին նաև ուրիշ սուր ու ցավոտ խնդիրներ: Դրանցից մեկը օսմանյան տերության ներքին գործերին միջամտելու թե չմիջամտելու հարցն էր:

Սոցիալ-դեմոկրատները չէին ժխտում, որ, իրոք, իրենք երբեք նպատակ չեն ունեցել և այժմ էլ չունեն գործնական քայլեր անելու թուրքահայերի ազատագրության համար: Ահա դաշնակցության տեսաբանների առաջադրած մեղադրանքին նրանցից մեկի տված պատասխանը. «... Անհիմն ու անիմաստ է ասել՝ «պե՞տք է հայ սոցիալ-դեմոկրատիան ձեռքերը ծալե, թե՞ կունենա որոշ գործնական քայլեր Թուրքիայում»: Իմն ձեռքերը ծալելու մասին խոսք կարող է լինել մի կուսակցության, որն իր ամբողջ գոյության իմաստով չէ ստանձնել երբեք պատմական որևէ կոչում ու պարտականություն՝ «գործնական որոշ քայլեր» անելու Թուրքիայում (կամ թուրքահայերի մեջ), որ երբեք հավակնություններ չի ունեցել արտահայտիչը հանդիսանալու թուրքահայ կովող տարրերի ձգտումների, որ իր դասակարգային շնչին չէ կրում երբեք թուրքական պայմանների այն ծանրությունը, որի վերացման և «սահմանադրական կարգերի շուտափույթ գալստյան» համար նա գերազանցորեն շահագրգռված զգա ակտիվ կերպով արտահայտվելու: Մի շարք անհիմն սպասելիքներ են սրանք, որ ունենալ կարող է հայ սոցիալիստ-դեմոկրատներից միայն նա, ով թյուր գաղափար ունի սոցիալ-դեմոկրատիայի դասակարգային էության և գաղափարական հիմքերի մասին»[1]:

Որքան էլ դաշնակցական գաղափարախոսները փորձում էին տեսականորեն հիմնավորել, թե թուրքահայոց գործերին կովկասահայերն ունեն միջամտելու իրավական և հատկապես բարոյական բոլոր կրվանները, քանի որ և՛ առաջինները, և՛ երկրորդները մի ժողովուրդ են, մի մարմնի երկու մասեր, բայց բոլշևիկները իրենց դիրքի մեջ մնում էին անդրդվելի և պարզ ու որոշակի հայտարարում էին, թե դա կոպիտ միջամտություն է մի այլ սուվերեն երկրի ներքին գործերին:

Լինելով Ռուսաստանի բազմազգ պրոլետարիատի կուսակցության նվիրյալ անդամներ և ռուսահայ իրականության մեջ ՌՄԴԲԿ գաղափարական արտահայտիչներ՝ հայ սոցիալ-դեմոկրատները շահագրգռված չէին սեփական ուժերը

[1] «Անկախ մամուլ» (Թիֆլիս), N 24, 28 փետրվարի 1907 թ.:

սպառելու քաղաքական մի այնպիսի միջավայրում, ինչպիսին Թուրքիան էր: Ավելին, նրանք հայտարարում էին, որ իրենք դավաճանած կլինեին իրենց գոյությունն իմաստավորող պրոլետարիատին և նրա գերագույն շահերին, եթե նրան անմնացորդ ծառայելու փոխարեն լքեին դասակարգային կռվի դիրքերը և «մխրճվեին» թուրքահայ գործերի մեջ:

Հայ սոցիալ-դեմոկրատները բազմիցս շեշտել են, որ ոչ իրենք և ոչ էլ ամբողջությամբ վերցրած ռուսահայ պրոլետարիատը որևէ դրդապատճառ չունեն Ռուսիայի սահմաններից դուրս դասակարգային, առավել ևս ազգային շարժումներ հրահրել: Ռուս, հետևապես նաև հայ մարքսիստները վճռականապես դեմ էին ընդհանրապես իրենց գործունեության դաշտը տարածել Ռուսաստանի սահմաններից դուրս՝ հետևյալ հիմնական պատճառներով.

Ա) Ամեն մի երկրի սոցիալ-դեմոկրատիան իր երկրի սոցիալ-տնտեսական պայմանների արդյունք է և կոչված է գործել հենց այդ երկրում ելնելով այդ պայմաններից: Հասարակական-պետական կարգերի փոփոխությունը տվյալ երկրի բնակչության գործն է, Բ) Թուրքիայում բուրժուական հարաբերությունների թույլ զարգացած լինելու պատճառով այնտեղ չկա ժամանակակից իմաստով պրոլետարիատ, որը կարողանա ըմբռնել սոցիալիստական գաղափարները և գնալ սոցիալ-դեմոկրատների լոզունգների հետևից, Գ) ՌՄԴԲԿ-ի ոգուն խորթ է գործուն միջոցներով հեղափոխական շարժումը Ռուսաստանից այլ երկրներ, այդ թվում Թուրքիա արտահանելու նպատակը:

Բայց չէ՞ որ հայ իրականության մեջ դա դրսևորվում է ցեղակցության և արյունակցության ձևով, խոսքը վերաբերում է նույն ազգի երկու հատվածներին, – առարկում էին դաշնակցականները: Այդ հատվածներից մեկը՝ թուրքահայությունը, գտնվում է սոսկալի վիճակում, իսկ մյուսը՝ ռուսահայությունը, անհամեմատ բարենպաստ դրության մեջ է, ուստի բնական է, որ վերջիններս օգնության ձեռք են մեկնում սահմանի այն կողմում գտնվող իրենց արյունակից եղբայրներին ու քույրերին: Որպես պատասխան հնչում էր հայ սոցիալ-դեմոկրատների ամփոփիչ տեսակետը. ցեղակցությունը և արյունակցությունը լոկ իրողություններ են, որոնք դասակարգային քաղաքականության ոլորտում չունեն գիտական փաստարկման արժեք: Դրանք միայն պայմաններ են ստեղծում հայդուկային, ամբոխային ժողովների սենտիմենտալ ճառախոսությունների համար: Ավելին, եթե նույնիսկ ազատություն ստանա Հայաստանը, նույնիսկ այդ դեպքում հայ սոցիալ-դեմոկրատիան որևէ ակնկալություն, դասակարգային որևէ պատրանքային հեռանկար չպիտի ունենա որոնելու շահեր Հայաստանում, մանավանդ եթե վերջինս շարունակի մնալ դեմոկրատիայի ճանապարհը բռնած թուրքական պետության կազմում: Այս դեպքում նույնիսկ ռուսահայ պրոլետարիատը գլուխ ունենալով ռուսահայ սոցիալ-դեմոկրատիային, որպես սոցիալական հավաքականություն, որպես տնտեսական-քաղաքական դաշտում ձևավորված ինքնուրույն դասակարգ, առաջվա պես մնալու է ռուս իրականության մեջ՝ ապրելով ու գործելով միայն ռուսական կայսրու-

թյան սահմաններում:

Առարկելով սոցիալ-դեմոկրատներին՝ դաշնակցական տեսաբանները (Գ. Խաժակ, Ե. Թոփչյան) նրանց առջև դնում էին նոր հարցեր: Օրինակ՝ ինչու՞ եվրոպական, ամենից առաջ Եվրոպայի ամենաուժեղ՝ գերմանական սոցիալ-դեմոկրատիան՝ մեծ շահագրգռությամբ հետևում է Ռուսաստանում ընթացող հակացարական ազատագրական շարժմանը, ավելին՝ նրան ցույց է տալիս ոչ միայն բարոյական աջակցություն լոկ խոսքերով, այլև կոնկրետ գործերով. մասնավորապես հեղափոխական կուսակցություններին օգնում է նյութապես, որը հեղափոխական գործնական քայլ է: Իսկ ինչո՞ւ հայ և ռուս սոցիալ-դեմոկրատները չեն կատարում ինտերնացիոնալիստական գոնե այդպիսի մի քայլ, չեն մատուցում որևէ կոնկրետ ծառայություն Թուրքահայ կամ ամբողջությամբ վերցրած Թուրքիայի ազատագրական շարժմանը:

Դաշնակցականների բերած այս օրինակի առթիվ սոցիալ-դեմոկրատները պատասխանում էին, թե հարցն այդպես դնողներն աչքաթող են անում մի կարևոր հանգամանք՝ այն հսկայական տարբերությունը, որ ունեն նշված երկու համեմատական մեծությունները՝ եվրոպական և ռուս (հայ) սոցիալ-դեմոկրատները:

Եթե ռուս և հայ սոցիալ-դեմոկրատները, նույնիսկ խախտելով իրենց սկզբունքները, փորձեն նյութական և այլ կարգի օգնություն ցույց տալ Թուրքիայի ճնշված ազգերի ազատագրական շարժմանը, ապա, միևնույն է, միջնադարյան բռնապետական կենդանի ավանդույթներով ապրող, տնտեսապես և կուլտուրապես հետամնաց այդ երկրում տեղի ունեցող հակաթուրքական շարժումների վրա այդ օգնությունը չի կարող դրական (նաև բացասական) ազդեցություն գործել, ինչպիսին կարող է ունենալ գերմանական կամ եվրոպական այլ սոցիալ-դեմոկրատիայի օգնությունը համառուսաստանյան հեղափոխական շարժման վրա՝ նրա դրական զարգացման առումով: Երկրորդ, ռուսական հեղափոխության առաջմղիչ ուժը համառուսաստանյան սոցիալ-դեմոկրատիան է, այսինքն՝ այն կուսակցությունը, որն ունի նույն մտածելակերպն ու գործելակերպը, ինչ ունի նրան աջակցող և օժանդակող եվրոպական սոցիալ-դեմոկրատիան: Իսկ կա՞ արդյոք որևէ ընդհանրություն Թուրքական հակասուլթանական շարժման գործիչների և ռուս (հայ) կամ եվրոպական սոցիալ-դեմոկրատների միջև: Ոչ համեմատական մեծությունների այս խոշոր տարբերությունները ի չիք են դարձնում սոցիալ-դեմոկրատիայի հակառակորդների այն պնդումը, թե Թուրքահայաստանի նկատմամբ մարքսիստների բռնած դիրքը դավաճանական է:

Հայ մարքսիստները նաև հավելում էին, որ եթե վաղը Թուրքիայում մեծապես փոխվեն տնտեսական-արդյունաբերական և սոցիալական հարաբերությունները, ապա այնտեղ նույնպես կառաջանա բանվորական շարժում, դրա հետ մեկտեղ Թուրքահայ (և լայն առումով Թուրք) իրականության մեջ հանդես կգա սոցիալ-դեմոկրատիա: Կասկածից դուրս է, որ այդ դեպքում ռուս (հայ) սոցիալ-դեմոկրատիան **բարոյապես** պարտավորված կլինի օգնություն ցույց տալու իր գաղափարական եղբայրներին՝ լինեն նրանք Թուրք, հայ, մակեդոնացի կամ հույն: Նման բարենպաստ պայմաններում ռուս (հայ) մարքսիստները լայնորեն կօգտագործեն ռուսական հեղափոխության հաղթանակի շնորհիվ ստեղծվելիք սահմանադրական կարգերի և, առաջին հերթին, համառուսաստանյան պառլամենտի հնարավորությունները, դեմոկրատական ճանապարհով հետևողական պայքար կծավալեն հօգուտ Թուրքիայի ճնշված ազգերի, այդ թվում Թուրքահայության օգտին:

Ենթադրվում էր, որ դեմոկրատական Ռուսաստանի ապագա պառլամենտում Թուրքական դեմոկրատիայի օգտին սոցիալ-դեմոկրատների կողմից ծավալվելիք պայքարը նպաստելու էր օսմանյան կայսրության ժողովուրդների հակաթուրքական տրամադրությունների և շարժումների թուլացմանը, ներքին անդորրի հաստատմանը, երկրի տարբեր ազգերի առճակատումների և խռովությունների դադարեցմանը: Այդ ամենի շնորհիվ վերջ էին գտնելու «խռովություններին ի պատասխան» պարբերաբար կրկնվող արյունալի ջարդերը:

Ինչ վերաբերում էր եվրոպական սոցիալ-դեմոկրատիայի առաջատարի՝ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի կողմից ռուսական հեղափոխական շարժմանը ցույց տրվող աջակցությանը, որի մասին վկայում էին դաշնակցության տեսաբանները, ապա դրան ի պատասխան հայ մարքսիստները հիշեցնում էին, որ սոցիալ-դեմոկրատիան օրն ի բուն դատափետում է պրուսական հալածանքների քաղաքականությունն ընդդեմ լեհ ժողովրդի, վերջինիս պաշտպանում պառլամենտում, բայց դա ամենևին չի նշանակում, թե նա պետք է նաև ակտիվորեն, գործնականապես մասնակցի լեհերի գաղտնի ընկերություններին, նրանց ձեռնարկած արյունահեղ ցույցերին:

Հայ մարքսիստների համար վիճաբանության առարկա չէր դաշնակցության դասակարգային բնութագիրը: Նրանք այդ կուսակցությունը միանշանակ համարում էին կովկասահայ բուրժուազիայի շահերի արտահայտիչը և նրա զինվորական կազմակերպությունը: Ստ. Շահումյանը 1906թ. գրում էր.

«Կովկասի հայ բուրժուազիան բնականորեն «դաշնակցություն» կուսակցության մեջ տեսնում էր իր հարազատ զավակին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտչին ու պաշտպանին, – և այդ պատճառով բոլոր ուժերով, նյութապես ու բարոյապես, աջակցում էր այդ կուսակցու-

* Այդ տարիներին բանվորական կուսակցությունների մեջ ամենաուժեղը և ամենաազդեցիկը գերմանական ս.-դ. կուսակցությունն էր: Շատ երկրների ս.-դ. կուսակցություններ գերմանական ս.-դ. կուսակցության գաղափարական, տակտիկական և կազմակերպական սկզբունքները համարում էին իրենց համար օրինակելի: Նրա լիդերները՝ Ա. Բեբելը, Վ. Լիբկնեխտը, Ֆ. Մերինգը, Կ. Կաուցկին և ուրիշներ, առաջնակարգ դիրք ունեին II ինտերնացիոնալում:

թյանը»[1]: Թուրքահայ աշխատավորները, նշում էր նա, երազում են ռուսական կամ եվրոպական միջամտությամբ քիչ թե շատ բարելավել իրենց անտանելի վիճակը: Դաշնակցությունը, կովկասահայ բուրժուազիան և հոգևորականությունը նույնպես ձգտում են գլուխ բերել այդ միջամտությունը: Բայց սրանց նրպատակը միանգամայն տարբեր է Թուրքահայ աշխատավորների նպատակից: Դաշնակցության մտահոգությունը ոչ թե վերջինիս ազատագրությունն է, այլ ռուսական զենքի միջոցով Տաճկահայաստանի գրավումը և կովկասահայ բուրժուազիայի համար հումքի նոր աղբյուր և ապրանքների շուկա դարձնելը:

Հետագայի նշանավոր բոլշևիկ Արսեն Ամիրյանը գրում էր, թե աշխարհի ցանկացած երկրում տիրող դասակարգ «սեփական» ժողովրդին «սիրում է» այնքանով, որքանով սա իր ստրուկն է և կերակրողը: Այդպիսին է նաև կովկասահայ բուրժուազիան, որն ազգային բոլոր խնդիրները քննարկում և լուծում է միայն ու միայն իր դասակարգային շահերի տեսանկյունով: Նա «հայոց ազգային հարցը» օգտագործում է Տաճկահայաստանում, այսպես կոչված, «ազգային օջախ» ստեղծելու, այն գաղութի վերածելու, աշխատավորներին տիրապետելու և շահագործելու համար: «Բուրժուական լայն խավերի վրա հենվող» դաշնակցությունը իր նպատակը հենց դա էր դարձրել, ուստի «պատահական չէ, որ կովկասահայ բուրժուազիան իր փողի քսակը լայնորեն բացել է նրա առաջ»[2]:

Այստեղից հայ սոցիալ-դեմոկրատները հետևություն էին անում, որ Կովկասից դաշնակցականների և հնչակյանների կողմից Թուրքահայ շարժմանը ցույց տրվող օգնությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ շուկաների նվաճման մի մարմաջ: Շուկան ամենից առաջ և ավելի շատ հարկավոր է հայ խոշոր բուրժուազիային, հետևապես հայ հեղափոխական շարժումը Թուրքիայում կամ բուրժուական է իր էությամբ, կամ շարժումը տարվում է հայ բուրժուազիայի գործուն աջակցությամբ ու օրհնությամբ[3]:

Նման դատողությունները դաշնակցական տեսաբանները վճռականորեն մերժում էին՝ դրանք համարելով զուտհիկ ու անարդար: Նրանք նշում էին, որ հարկ չկա ապացուցելու այն ճշմարտությունը, որ եթե Թուրքահայ ժողովուրդը դրսի միջամտությունը իր չարաղետ հարցի լուծման պայմաններից մեկն է համարում, դրանում ո՛չ հայ բուրժուազիան է մեղավոր և ո՛չ հոգևորականությունը: Մեղավորը, նախ, Թուրքական անտանելի իրականությունն է, ապա՝ «մեղավոր» է նաև նախկին Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների՝ հույների, սերբերի, չեռնոգորցիների, վալախների, բուլղարների և կրետացիների ազատագրության օրինակը:

Դաշնակցականները բազմաթիվ օրինակներով ցույց էին տալիս, որ Կովկասի

[1] Ստ. Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 369:
[2] Ա. Մրավեան, Ժամանակ է սթափվելու, էջ 46:
[3] Տե՛ս Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հատ. 2, էջ 243:

հայ բուրժուաները փոքր բացառություններով (Մանթաշյան, Ծատուրով, Դոլուխանյան) չեն աջակցում Թուրքահայության պայքարին և եթե ինչ-որ գումարներ էլ հատկացնում են, ապա միայն հեղափոխական կուսակցությունների ահաբեկչական հնարավոր ակտերից սարսափահար:

Վերջապես փաստարկվում էր, որ Կովկասի հայ բուրժուազիան որևէ կարիք չունի գաղութներ նվաճելու Թուրքահայաստանում: Հարկ կա՞ արդյոք ցույց տալու, ասում էին դաշնակցության տեսաբանները, որ հայկական կապիտալիզմը զարգացման այն մակարդակի վրա չէ, որ օտար երկրներում շուկա որոնելը նրա համար գոյության խնդիր լինի, քանի որ Կովկասը արդյունաբերության զարգացման տեսակետից դեռ գտնվում է նախնական փուլում, և հայկական երիտասարդ կապիտալը շուկայի պակաս չունի: Լայնածավալ Ռուսաստանն այնպիսի ընդարձակ շուկա է, որ լիուլի բավականացնում է ոչ միայն նրան, այլև կայսրության մյուս ազգերի բուրժուազիայի ողջ բանակին: Երկչոտ ու իր մտքի բոլոր լույսերը հանգցրած հայ բուրժուազիան քաղաքական ռոմանտիզմի գրգիռ անգամ չի հաղորդում սեփական ուղեղին: Իհարկե, եթե նվաճվեր հայ-հայրենիքը, ինչ խոսք, հայ բուրժուազիայի ճարպակալած աչքերն այնժամ կուղղվեին դեպի Երկրի նյութական հնարավորությունները: Բայց եթե դա տեղի ունենա, ապագայի գործ է, իսկ այժմ այդ նույն բուրժուազիան, չնչին բացառություններով, հեռու է փախչում Թուրքահայաստանից՝ իր ֆիզիկականով, նյութականով և անգամ հասարակ բարեմաղթություններով: Փախչում է ինչպես սատանայից: Շահն ու եսապաշտությունը ինչպես եղել են, այնպես էլ մնում են հայ բուրժուազիայի կուռքերը:

Եվ այսպես, Հայկական հարցի, Թուրքական լծից հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժման մասին սոցիալ-դեմոկրատների պատկերացումները բխում էին պրոլետարիատի դասակարգային պայքարի մարքսիստական ուսմունքից: Թուրքահայաստանի ազատագրության համար թափվող ջանքերը նպաստելո՞ւ են բանվոր դասակարգի գործին, թե՞ հակառակը: Սա էր տվյալ խնդրի ոլորտում մարքսիստների գործունեության հիմնական չափանիշը: Պրոլետարիատը շահագրգռված չէ իր ուժերը վատնելու ազգամիջյան կռիվների մեջ, քանի որ ունի ավելի բարձր նպատակ՝ սոցիալական ճնշումից ազատագրելու հասարակության բոլոր հալածված ու շահագործվող դասակարգերին, խավերին, շերտերին՝ անկախ նրանց ազգային-ցեղային և կրոնական պատկանելությունից, կուլտուրական զարգացման մակարդակից:

Հայ սոցիալ-դեմոկրատները հավատարիմ էին ազգային ազատագրական շարժումների նկատմամբ մարքսիզմի առաջադրած պահանջներին: Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Լենինի տեսական ժառանգության մեջ նրանք հանդիպում էին օսմանյան կայսրության ոչ Թուրք ժողովուրդների, այդ թվում արևմտահայության հարստահարումների մասին բազմաթիվ նկարագրությունների և սկզբունքային գնահատականների, բայց մարքսիզմի դասականների ոչ մի աշխատության մեջ չկար սոցիալիստների կողմից Թուրքահայոց ազգային

ազատագրական պայքարին նույնիսկ աննշան մասնակցություն ունենալու անհրաժեշտության մասին որևէ խոսք անգամ:

Եզրափակելով խնդրո առարկա այս թեման՝ կրկին նշենք, որ սոցիալ-դեմոկրատիան Թուրքահայության ազգային ազատագրական շարժմանը համակրանք արտահայտելուց այն կողմ չէր անցնում: Դաշնակցական, հնչակյան և մյուս ազգային գործիչները այդ համակրանքը համարում էին հայ ժողովրդի նկատմամբ «ողորմածության» դրսևորում, ավելին՝ դավաճանություն ոչ միայն տառապյալ հայության ազգային շահերին, այլև բոլոր ճնշված ու հալածական ազգերի բաղձանքներին:

Թուրքահայության հանդեպ սոցիալ-դեմոկրատների գործելակերպը դատապարտում էին նաև արևմտահայ գրականության, մշակույթի, լրագրության նշանավոր գործիչները (Ա. Զոպանյան, Գ. Զոհրապ և ուրիշներ):

Արշակ Զոպանյանը, որն այդ ժամանակ ոչ մի կուսակցության անդամ չէր և դեմ էր Թուրքահայերի զինված կռվին, միաժամանակ խստորեն դատապարտում էր սոցիալ-դեմոկրատների որդեգրած քաղաքականությունը: Նրանց համարում «անգիտակից դավաճաններ», որոնք «անուղղելի մնաս» են հասցնում հայկական դատին: Նա գրում էր.

«Եթե այդ պարոնները չեն ուզեր իրենց ցեղին ցավերովը զբաղվիլ, ստիպող չկա զիրենք, թող երթան ընկերավարականութեամբ, անիշխանականութեամբ զբաղին, բայց հանգիստ ձգեն հայոց դատը, բնավ չզբաղվին անով»[1]: Նա շեշտում էր, որ սոցիալիստները ոչ մի առնչություն չունեն Թուրքահայոց ցավերի հետ, որ հասարակությունը բաժանելով դասակարգերի, հայ աղքատներին պայքարի հանելով հայ հարուստների դեմ դրանով իսկ նրանք անդառնալի մնաս են հասցնում համահայկական շահերին: «Պետք է վերջապես ըմբռնել, թե ընկերավարական իդեալը ոչ միայն հարակից չէ հայոց ազգայնական իդեալին, այլև անոր կհակասե, քանի որ մեր ազգային գործունեութեան մեջ հարուստ և աղքատ կրնան եւ պարտին գործակցիլ, իսկ ընկերավարական իդեալին համեմատ այդ տարրերը հակառակորդներ են»[2]:

Ինչ խոսք, հայկական հասարակության դասակարգերի լիակատար համերաշխության մասին Զոպանյանի և նրա նման մտածող հայ ազգային գործիչների տեսակետը չէին բաժանում ոչ միայն հայ սոցիալ-դեմոկրատները, այլև հնչակյանները և նույնիսկ՝ դաշնակցականների մի մասը: Տվյալ ժամանակաշրջանում այդ գաղափարը, որն ընկած էր արմենականների և վերակազմյալ հնչակյանների տեսաբանության և կիրառվող քաղաքականության հիմքում, առաջիկայում դավանելու էին նաև հայ սահմանադրական ռամկավարները: Զոպանյանի և իր համախոհների մտահոգությունն այն էր, որ հնարավորին չափ արգելք հանդիսանային սոցիալ-դեմոկրատական գաղափարների ներթափանցմանը հայ իրականությունից ներս, մի բան, որ գործնականում անիրականանալի ցանկություն էր:

Այս դիտարկումով ինչ-որ չափով նաև հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ, չնայած արմատական էին, մի կողմից, հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների և մյուս կողմից, հայ սոցիալ-դեմոկրատների միջև եղած գաղափարական տարբերությունները, և չնայած քաղաքական դաշտում նրանք չուներին շփման կետեր, բայց, որքան էլ առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, այդ գաղափարական-քաղաքական տարբերությունները չէին հանգեցնում փոխադարձ ֆիզիկական բռնությունների: Չկա մի օրինակ անգամ, երբ գաղափարական հողի վրա, ասենք, որևէ դաշնակցական կամ հնչակյան զենք բարձրացրած լիներ հայ սոցիալ-դեմոկրատի (բոլշևիկ թե մենշևիկ) վրա և հակառակը (համենայն դեպս սույն աշխատության հեղինակն այդպիսի դեպքի տեղյակ չէ՝):

«Ավանդույթն» առաջին անգամ խախտվեց շատ տարիներ հետո միայն, երբ 1920թ. մայիսին Հայաստանում տեղի ունեցած բոլշևիկյան ապստամբության օրերին փոխադարձ արձակած գնդակները զոհեր էին խլում և՛ հայ սոցիալ-դեմոկրատներից, և՛ դաշնակցականներից:

Միմյանց հանդեպ հայ սոցիալ-դեմոկրատների և հայ ազգային-հեղափոխականների այս «հանդուրժողականության» հիմնական պատճառը, մեր կարծիքով, այն էր, որ այս երկու հակառակ ուժերը գործում էին քաղաքական տարբեր դաշտերում, Թուրքահայաստանի հարցի շուրջ նրանց միջև չկային շփման կետեր, չկար մրցակցություն այն պարզ պատճառով, որ Հայկական հարցի լուծումը սոցիալ-դեմոկրատների համար օրախնդիր չէր, իսկ հնչակի և դաշնակցականի համար նրանց գոյության նպատակն էր, նաև նրանց գոյության պայմանը:

Եվ այսպես, ընթերցողների առջև ուրվագծվում է այն օրերին Թուրքահայոց ազատագրական շարժման հանդեպ իրարից խիստ տարբեր երկու մոտեցում գործով ու խոսքով: Հայ ազգային հեղափոխականների մոտ գերակշռողը եղավ **կենդանի գործը՝** լի անսահման վտանգներով, գործ, որի շարժիչ ուժը ազնիվ հայրենասիրության **անեզր զգացմունքն** էր՝ շատ դեպքում անհաշվարկ և ոչ շրջահայաց՝ թելադրված համիդյան բռնակալության ճիրաններից հարազատ ժողովրդին ազատելու իրենց համար բացարձակ դարձած գաղափարով: Սոցիալ-դեմոկրատները Թուրքահայ ազատագրական շարժմանը չէին սատարում կոնկրետ գործերով, քանզի նրանց խոհերի կենտրոնում կապիտալի

---

[1] **«Անահիտ»** (Փարիզ), N 3-5, 1906, էջ 67:
[2] Նույն տեղում, էջ 74:

* Թերևս բացառություն կարող է լինել Բաթումում 1904 թ. սեպտեմբերին շուլավերցի բանվոր Ավետիք Թամամյանի սպանությունը: Թեև նա սոց.-դեմ. կուսակցության անդամ չէր, բայց,լինելով անկուսակցական սոցիալ-դեմոկրատ, ուժգին քննադատում էր հայ ազգային կուսակցությունների գործելակերպը, ակտիվորեն հանդես էր գալիս սոցիալ-դեմոկրատիայի պաշտպանությամբ և քաղաքի բանվորական գործադուլների եռանդուն կազմակերպիչներից մեկն էր:

կողմից հարստահարվող բազմազգ բանվոր դասակարգն էր: Նրանք տուրք չէին տալիս ազգային-հայրենասիրական զգացմունքներին, գործում էին ծայրահեղ սառը դատողությամբ՝ թելադրված բուրժուական դաժան կարգերի հանդեպ անսահման ատելությամբ:

Գաղափարական տարբեր ուղղությունների հետևող հայորդիները սերված էին նույն միս ու արյունից և նրանց բոլորի մտածումների կենտրոնում պաշտելի ազգն էր, ճակատագրի բերումով լինել-չլինելու իրական վտանգի առջև հայտնված հազարամյակների Հայաստան աշխարհը: Հայրենիքը սնող մայրն էր իր բոլոր զավակների, որոնք, իրենց հերթին, անմնացորդ նվիրվել էին նրա փրկության գործին և ժողովրդի գոյատևման համար ուղիներ ու միջոցներ էին որոնում տատասկոտ բավիղներում:

Վերը նշված երկու մոտեցումներից ո՞րը, ի վերջո, ճիշտ դուրս եկավ: Հարցը պրոզայիկ է, նաև՝ հռետորական: Այնուամենայնիվ, ճշմարտության չափանիշը գործնական արդյունքն է, պրակտիկան: Հայոց շարժումն իր վերջնական արդյունքով ամենաողբերգականը եղավ ժողովուրդների ազգային ազատագրական շարժումների պատմության մեջ: Պատմությունը ապացուցեց, որ հայ սոցիալ-դեմոկրատները ոչ պակաս հայրենասերներ և ազգասերներ էին, միայն թե նրանք ամեն ինչ անում էին իրենց մայր ժողովրդին դեպի ազգային ազատագրություն տանել՝ որքան հնարավոր է՝ անվտանգ ճանապարհներով:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԹՈՒՐՔ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՍԱՍՏԿԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Թուրքահայոց հարստահարման, նրա նկատմամբ նոր բռնությունների ու ոճիրների սանձազերծման տեսակետից համիդյան զուլումի երկաթյա շղթայում առանձնանում են 1906-1907 թվականները:

ՈՃԻՐՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Երբ հայ պատմաբանը Թուրքահայոց զուլումը նկարագրելու համար գրիչ է վերցնում, դժվարանում է իր ձեռքի տակ եղած հազարավոր փաստերից ու դեպքերից առանձնացնել առավել տիպականը, քանզի դրանք բոլորը զարհուրելի են, մեկը մյուսից արհավրալի: Որքան էլ մարդկանց ջղերն ընտելացած լինեին արյունոտ տեսարանների, որքան էլ կյանքի արժեքը ընկած էր, այնուամենայնիվ, չէր կարելի չցնցվել ու չսոսկալ մարտիրոսությունների այն հսկայական չափերի առջև, որ մատուցում էր դժոխային իրականությունը արյան, արցունքի, ցավ ու տառապանքի դասական հայրենիքում Թուրքահայաստանում:

Սասունի ապստամբությունից հետո սուլթանը և նրա կառավարությունը հայությանը դիտում էին որպես կայսրության ոխերիմ թշնամու: Նրա հետ սրի ու գնդակի լեզվով խոսելը բարձրացված էր պետական քաղաքականության աստիճանի:

Հայոց նկատմամբ հալածանքներն ուժեղացնելու համար, բացի Սասունի ապստամբությունից, Թուրքերին ներկայացվել էին ևս երկու նոր առիթներ՝ Համիդի սպանության փորձը և Անդրկովկասի Թուրք-հայկական ընդհարումները: Ըստ որում, իր նկատմամբ հայերի կատարած վրեժխնդրական գործողությանն ի պատասխան, սկսված լայնածավալ զանգվածային բռնությունների ղեկավարումն անձամբ ստանձնել էր սուլթանը: Ինչ վերաբերում է անդրկովկասյան ընդհարումներին, ապա դրանց ընթացքում կովկասահայության ցուցաբերած կազմակերպվածությունը և բացառիկ դիմադրական ոգին, նախ, այլայլմունք էր առաջացրել Ելիզեում, ապա այն փոխարինվել էր զայրույթի, և կրկին Թուրքահայությունը դարձել էր քավության նոխազ:

ԱՄԵՆՕՐՅԱ ՍԱՐՍԱՓԻ ՏԱԿ

Հայոց ծովածավալ տառապանքները վերջ չունեին:

1906թ. հունվարի սկզբներից Վան քաղաքի մուսուլմանները ջամիներում (աղոթարաններում) ժողովների էին հավաքվում, ուր շեյխերն ու մոլլաները հայերին կոտորելու բացահայտ կոչեր էին անում: Արդյունքը սպասեցնել չտվեց: Վանի այս կամ այն փողոցում հայերը դաշունահար էին լինում կամ զոհ գնում գնդակների: Իշխանությունները ոչ միայն չէին փորձում կանխել սպանությունները, այլև բացահայտ խրախուսում էին ելուզակներին: Միայն 1906թ. փետրվարին Թուրքերը և քրդերը քաղաքում սպանեցին 20-ից ավելի հայի, հիմնականում երիտասարդների:

Հայկական նահանգների կառավարիչները, որպես կանոն, օժտված էին գազանային բնազդներով և հայությանը հարստահարելիս ոչ մի զանազանություն չէին դնում միջոցների միջև: Այդպիսիներից էր Բիթլիսի վալի Ֆերիդ բեյը: Մյուս՝ շատ փոքր մասը գործում էր ավելի նրբորեն՝ զգուշանալով աղմկահույզ դեպքեր ստեղծելուց:

Ֆերիդ բեյը, որն անձնական հակառակորդն էր Վանի վալիի, միշտ դավեր էր նյութում այդ ալբանացի ծերունու դեմ, նրան ամբաստանում Բ. Դռան առջև՝ ներկայացնելով իբրև մեղմ ու թույլ, մինչև իսկ՝ հայասեր, որը, ինչպես հարկն է, չի հետապնդում հայ հեղափոխականներին:

Այդ ամբաստանությունների հիման վրա կառավարությունը 1906թ. վերջին պաշտոնանկ արեց Վանի կուսակալին, որին փոխարինեց Ալի բեյը: Սա իսկական հոգեառ եղավ հայերի համար:

Վայրագությունները հետզհետե ընդլայնվում էին ու տարածվում ավելի հեռուները՝ Վասպուրականի ամենամոռացված անկյուններն իսկ: Շատախը, Նորադուզը, Կարկառը, Գյավաշը, Կարճկանը, Մոկսը, Արճակը, Բերկրին և այլ գավառներ ենթակա էին անլուր սարսափների:

1906թ. ապրիլին Արճեշում Թուրքերը հարձակվում են եկեղեցու վրա՝ նպատակ ունենալով կոտորել այնտեղ աղոթող բոլոր հայերին: Երբ մարդասպանները մոտենում են եկեղեցուն, հավատացյալների մեծ մասն արդեն ցրվել էր, և մնացել էր միայն 15 մարդ, որոնք բոլորը գազանաբար սպանվում են դաշունահար լինելով:

Զղաղարող ոճիրների ասպարեզ էր Բաղեշի վիլայեթը: Մշո դաշտում իրենց նախճիրներով հայտնի էին քուրդ ցեղապետեր Ջբրանցի Նատոն, Ջնդին, Հասնացի Ֆաթեհը, Ըրզախը, Թաճտին, Մեհմեդ Ալին և ուրիշներ: Արյունարբու ոճրագործները հարյուրավոր հայերի արյունը խմելուց զատ՝ պատճառ էին հազարավոր հայ ընտանիքների քանդման:

Ֆիդայիների դեմ կռվելու նպատակով Մշո դաշտում ստեղծվել էին ենիչերիների նոր տեսակ՝ հատուկ հեծելախմբեր (սեյարա), որոնց ամեն ինչ թույլատրել էին հայերի հանդեպ: Ցանկացած պահին տներ մտնելը, տանտիրոջը բրածեծ անելը սովորական բաներ էին չարիքի վարպետների համար:

Գևորգ Չաուշին գտնելու պատրվակով 1906թ. մայիսին մեծ թվով զինվորներ լցվեցին Դաշտի հայկական գյուղերը և պահանջեցին «հանձնել ավազակին», թեև լավ գիտեին, որ նա Դաշտում չէ և այնտեղ եղել էր ամիսներ առաջ: Տվյալ գյուղում չարաթներ շարունակ մնալուց և գյուղացիներին տնտեսապես ու բարոյապես քայքայելուց հետո նրանք, երբ արդեն բավարարած էին լինում իրենց գազանային կրքերը, գյուղն այրելով հեռանում էին՝ վաղը մի ուրիշ տեղ նույնը կրկնելու համար[1]:

1906թ. սեպտեմբերի սկզբին Բիթլիսից ոչ հեռու քրդերի ձեռքով սպանվում է Խուլդուկ գյուղի երիտասարդներից Աստուր Զարխոշյանը, որը ծնողաց միակ հույսն էր: Սրանք լացով ու սրտաբեկ դիմում են Բիթլիսի վալի Ֆերիդ բեյին, բայց նա անգթորեն պատասխանում է. «Հիմա նույնիսկ կառավարության զինվորներից են սպանվում, ո՞ւր մնաց թե հայը...»:

Ամեն օր, ամեն ժամ թալաններ ու սպանություններ էին կատարվում հատկապես ճանապարհներին:

Վանից ոչ հեռու, Կեմ գյուղացի Նավոն իր սայլով գնում էր Արտամետ: Ճանապարհին օրը ցերեկով նրա առաջը կտրում է երեք զինված քուրդ: Նավոն, մահվան երկյուղից բռնված, թողնում է սայլը և փախչում: Քրդերն արձակում են լծած չորս եզները, քշում-տանում: Նավոն լեղապատառ, շունչը կտրած հազիվ իրեն ձգում է գյուղ՝ մեծապես գոհ, որ կարողացել էր գոնե ազատել կյանքը:

Քրդերից մեկը հանկարծ հայտնվում է ճանապարհին և, մոտենալով Մուշ գնացող մի հայ երիտասարդի, մեջքից արձակում է արծաթապատ գոտին: Սա դիմադրում է, որին քուրդը պատասխանում է դաշույնի հարվածներով: Վիրավոր երիտասարդը ստիպված հաշտվում է կատարվածի հետ:

Զգվում էին դիվային ոճիրների շարքերը: Լսելով թալանվածների և ստորացվածների աղեկտուր հեծեծանքը՝ չէր կարելի չկսկծալ ու չմորմոքել:

1907թ. հուլիսի 3-ին Մուշում տեղի ունեցան արյունալի դեպքեր. կառավարության դրդմամբ թուրք և քուրդ ամբոխը հարձակում գործեց հայերի վրա, եղան սպանվածներ ու վիրավորներ: Այդ բոլորին ականատես զինվորական հրամանատարը որևէ միջամտություն չարեց: Հայերն ապաստանեցին եկեղեցիների և դպրոցների մեջ, բայց դա նրանց չփրկեց: Հարձակվողները պատուհաններից ներս նետում էին վառվող փայտեր ու խոտի խրձեր: Ներսինները, չկարողանալով երկար դիմանալ, իրենց նետում էին դուրս, որտեղ հավաքված ամբոխը ոտնակոխ էր անում նրանց:

Նույնպիսի սարսափելի վիճակ էր ամենուր՝ Կարկառում, Խիզանում, Սպարկետում, Տիգրանակերտում, Երզնկայում, Վանում, Էրզրումում, Տրապիզոնում...

---

[1] «Դրոշակ», N 8 (174), օգոստոս, 1906, էջ 123:

Տրապիզոնում մի թուրք սպա 1906թ. վերջին զվարճության համար օղու լիքը բաժակը դնում է նավավար Պետրոս Տեռքմեջյանի 20-ամյա տղայի գլխին և, նշան բռնելով, կրակում: Երիտասարդը տեղնուտեղը սպանվում է, իսկ սպան ոչ միայն որևէ պատժի չի ենթարկվում, այլև լրբորեն ասում է, որ գյավուր սպանելը մեղք չէ, թող վկա լինի Ալլահը:

Եթե այսօրինակ ոճրագործություն տեղի էր ունենում այս քաղաքում, ուր եվրոպացիները բավական թիվ էին կազմում, կարելի է պատկերացնել, թե ինչ էր կատարվում խորքերում, ուր ոչ եվրոպացի կար, ոչ տեսնող, ոչ էլ հաղորդող:

1907թ. հուլիսին Հայոց ձորից և մյուս վայրերից Վան քաղաք էին թափվել 300-ից ավելի կին, երեխա, տղամարդ: 5-6 օր քաղաքի փողոցներում գիշերելով՝ նրանք փորձում էին հյուպատոսներին ներկայացնել բողոքագիր, որի մեջ բերվում էին հայերի սպանությունների բազմաթիվ օրինակներ: Հյուպատոսները, սակայն, որևէ վճռական քայլ անելու տրամադրություն չունեին, քանի որ հրահանգ չունեին[1]:

Ահավոր բռնությունների և սպանությունների ասպարեզ էր նաև Կիլիկիան:

1906թ. հունվար-փետրվարին սպանությունների, ձերբակալությունների ալիքը տարածվեց Զեյթունում, Մարաշում, Աղանայում, Հաճնում: Հատկապես անտանելի վիճակ էր ստեղծվել Զեյթունում: Օրական ոստիկանատներ (մարքյազ) էին բերվում հազարավոր մարդիկ:

Ձերբակալված շատերին Կիլիկիայից տեղափոխում էին Հալեպ, ուր նոր կուսակալ էր նշանակվել Տիգրանակերտից այդտեղ փոխադրված Նազըմ փաշան՝ մի շատ անգութ մարդ, հայերի դահիճ: Ինչպես շրջակա վայրերից, այնպես էլ Կիլիկիայից Հալեպ բերված ձերբակալված հայերին նա քննում էր անձամբ՝ գործադրելով ամենաահավոր մեթոդներ:

1907թ. մարտի սկզբներին Մարաշի թուրքերը որոշում են հրդեհել քաղաքի կենտրոնական մեծ մզկիթը և այն վերագրել հայերին: Հրդեհը նկատվում է և հնարավոր է լինում արագ մարել: Աղաղակը, սակայն, տարածվում է, թե հայերն են վառել մզկիթը:

Հրդեհի հեղինակներին գտնելու համար ոստիկանությունը սկսում է հայերին ձերբակալել և նետել բանտերը: Իր հերթին գրգռված թուրք խուժանը սպառնում է կոտորել և թալանել: Հայերը, անմեղ ու անտեղյակ, սարսափահար փակվում են տներում: Իր մոտ կանչելով հայ երևելիներից Խրլաղյանին և ուրիշների՝ մութասերիֆը խստիվ պահանջում է կարճ ժամանակում գտնել և հանձնել հրդեհի հեղինակներին, միաժամանակ շեշտելով, որ հակառակ պարագայում ինքն անկարող է լինելու զսպել գրգռված թուրքերին: Հայերը գըլխիկոր հետ են դառնում առանց մի ճար գտնելու:

Վերջապես մի քանի օր հետո խնդրին տեղյակ բարեսիրտ մի թուրք բացահայտում է իսկությունը: Պարզվում է եղելությունը, և հայերը փրկվում են կոտորածի սպառնալիքից[1]:

Թեև սադրիչներն այս անգամ չեն հասնում իրենց ծրագրած նպատակին, բայց քաղաքում և շրջակա գյուղերում սկսվում են անհատական սպանություններ: Միայն մարտ - ապրիլին զոհվեց շուրջ 30 հայ:

Մարաշի այդ դեպքից հետո ահ ու դողի մեջ էին Ադանայի և շրջապատի հայերը, որոնք ժամ առ ժամ սպասում էին անկանխատեսելի դեպքերի:

Ընդհանրական երևույթ էր թուրքերի ու քրդերի կողմից ամեն գյուղից տարեկան մի քանի հայ կին փախցնելն ու մահմեդական դարձնելը: Հարս ու աղջիկ, մինչև իսկ պատանիներին բռնաբարելը սովորական բան էր:

1906թ. հուլիսի սկզբներին Նշե պին Սատոն, Մահմուտ պին Հասեն և ուրիշ քրդեր գիշերը հարձակվում են Տափիկ գյուղի հայերից Գրգո Արզունյանի տան վրա, հետո գյուղից առևանգում են Ներսեսի կին Կուլոյին, Մանուկի կին Շամամին, գնդակահարում գյուղացիներից երկուսին: Առևանգված Կուլոն ու Շամամը քրդացվում են[2]:

Այլ ելք չունենալով՝ ամբողջովին թուրքացել էր Դերջանի Բագառիճ գյուղը, ինչպես նաև՝ գավառի գյուղերի բնակիչներից շատերը: Կույսեր ու հարսներ փախցնելը սովորական երևույթ էր հատկապես Էրզրումի նահանգում: Կին լինելն արդեն պատիժ էր հայուհու համար:

1907թ. հունվարին թուրք զինվորները, մտնելով Բայազետի գավառի Մոսուն հայ գյուղը, խուժում են Աբրո Վրթոյանի, Հովհաննես Ղազարյանի, Մարտիրոս Ավագյանի, Մկրտիչ Հակոբյանի տները և առևանգում նրանց դեռահաս աղջիկներին: Մինչ սուգ ու շիվանով բռնված գյուղացիները օգնության համար դիմում են իշխանություններին, զինվորներն առևանգած աղջիկներին բերում են Բայազետ քաղաք և հայտնում, որ նրանք իրենց ցանկությամբ, կամավոր ուզում են «հագ տինը» ընդունել և թուրքերի կին դառնալ:

Բայազետի մութասերիֆը առաջնորդական տեղապահ Ներսես քահանային հինգ ոսկի տալով՝ օրինականացնում է առևանգումը: Քահանան, շլացած ոսկիներով, միամիտ ու խեղճ աղջիկներին համոզում է, որ բռնաբարվելուց հետո այլևս ոչ մի հայ երիտասարդ չի ամուսնանա անպատիվ եղած մեկի հետ և նրանց հորդորում է մահմեդական դառնալ ու անձնատուր լինել իրենց բռնադատիչներին: Այդ դեպքերի կապակցությամբ «Դրոշակը» գրում էր. «Եթե հայ քահանայ մը դրամի շլացումով կրնայ այդչափ ստորանալ, ալ ի՞նչ երեսով հայը բողոքե թուրք պաշտոնյաներու կաշառակերութեան դեմ»[3]:

Ոչ միայն հայ հարսներն ու պարմանուհիներն էին դառնում առևանգումների զոհ, այլև մանուկներն ու պատանյակները: Առևանգվում էին, թուրքացվում

---

[1] «Դրոշակ», N 6-7(184), հունիս-հուլիս, 1907, էջ 83:

[1] «Դրոշակ», N 10 (187), հոկտեմբեր, 1907, էջ 147:
[2] Նույն տեղում, N 10 (176), հոկտեմբեր, 1906, էջ 148:
[3] Նույն տեղում, N 3 (181), մարտ, 1907, էջ 36-37:

ու քրդացվում: Շատ տեղերում օրը ցերեկով քրդերը մտնում էին հայ գյուղացիների տները, նրանց ծաղր ու ծանակի ենթարկելուց ու ծեծ ու ջարդ տալուց հետո ազատ ու համարձակ հափշտակում երեխաներին:

Իսկ որքա՜ն որբեր էին թափառում ավերակված հայկական գյուղերում անհայր ու անմայր: Նրանցից շատերը չգիտեին անգամ, թե ինչ է մայրական գուրգուրանքը և հայրական հոգատարությունը: Նրանց հայրերը զրկվել էին կյանքից ավարառու քրդի դաշույնից կամ Թուրք ելուզակի գնդակից:

Զարհուրանքի, սոսկումների ու արդար ցասումի երգիչ Սիամանթոն նորաբողբոջ հայ որբերի օրինակով ողբում էր հայերի սև օրն ու բախտը, նրանց անեզր տառապանքը տանջարան երկրում.

Զարհուրե՜լի անցեալ, մոխիրներուն վրայ ծնաք և ավերակներե՛ն քալեցիք.
Երբ սուրէն զարնուած Հայրենիքն իր բերանը հասնող իր արիւնին մեջը կը խեղդուեր՝
Թնութեան դժխեմ օրենքը օր մը ղձեզ մարդկութեան ճիրաններուն մեջ դրաւ,
Եւ այսպես՝ արիւն և կեանքին կարմիր լոյսը չփոթեցիք ձերիններուն արիւնին հետ...
Սարսափներուն յառեցաւ ձեր մաքուր հայեացքը, ծաղիկներու և ժպիտի փունջերուն տեղ:
Հոգեվարքի ի՜նչ հեծեծանքներ և ի՜նչ օգնութիւն պաղատող եղերական ճիչեր,
Ի՜նչ գալարում, ի՜նչ մազերու փետտում, ի՜նչ կոծ և ի՜նչ մահաձայն լաց,
Ի՜նչ արցունքներու հոսումներ, ի՜նչ աղերսանք և քանի՜ քանի՜ կտրուած գլուխներ,
Եկան՝ ձեր մանկական վճիտ աչուքներուն առջևէն գլորուելու...:
Ոսկորներու փշրու՜մը լսեցիք, ձեր ծնած տանը սեմերուն վրայ,
Գիշերներո՜վ՝ շտապօրեն, կացիններու կայծարձակ հարուածներուն տակ...:
Եվ հովերը դժբախտ քաղաքներեն՝ այրուած մեռելներու մահուան հոտը ձեզ բերին:

Մի ամբողջ խողխողվող սերնդի հոգեվարքի օրհասական ճիչերն էին լսվում պոետի տողերից: Շարունակվում էր Թուրք-հայ արյունոտ դրաման:

Այսպիսով, Թուրքիայի կառավարչական սիստեմի մեղքով հայ ժողովրդի համար կյանքի ապահովությունը բացարձակապես վերացած էր: Ծով ցավերը վախճան չունեին: Տառապող հայությունը բողոքն անգամ մոռացել էր. ո՞ւմ բողոքեր:

Սակայն հայերի խմբային և անհատական սպանություններով, հայ կանանց ու երեխաների առևանգումով ու հավատափոխությամբ Թուրքական կառավարությունը չէր լուծում իրեն մտահոգող հիմնական հարցը:

ՀԱՑՈՐԴԻՆԵՐԸ ԲԱՆՏԱՑԻՆ ԴԺՈԽՔՈՒՄ

Թուրքական բանտեր... Այդ դժոխարանները «բոլոր երկրների բանտային տարեգրութեան մեջ եզակի տեղ են գրավել իրենց անտանելի պայմաններով»[1]:

Չորս տեսակ էին դրանք. 1. Քաղաքային բանտեր, որոնք հիմնականում տեղավորված էին պետական հիմնարկությունների (սերա) շենքերի հաստ պատեր ունեցող ներքնահարկերում: 2. Գետնափոր զնդաններ քաղաքային բանտերին կից կամ ավելի խորքում խոնավ ու կեղտոտ խուցերով ու հորերով: 3. Ղալա (բերդ) բանտեր, որոնք գտնվում էին քաղաքներից դուրս և հինգ տարուց ավել դատապարտվածների համար ծառայում էին իբրև աքսորավայրեր: 4. «Կաֆա» կոչված արգելարաններ, որոնք գտնվում էին քաղաքային բանտերին կից՝ որպես տուրքեր չվճարողների արգելատեղեր: Դրանք շինված էին գերաններից, շատ անգամ առանց ծածկի: Այնտեղ ժամանակավորապես, առանց դատի, լցնում էին տղամարդկանց, կանանց, պատանիների, որոնք առավոտից մինչև երեկո, միմյանց վրա թափված, սպասում էին, թե իրենց աղմուկաղաղակի վրա փաշան երբ դուրս կգա սերայից և իրենց տուն գնալու իրավունք կտա: Նրանք մյուս առավոտ պարտավոր էին տուրքը բերել, հակառակ պարագային ոստիկանները նրանց նորից ժողովելու և լցնելու էին արգելանոց:

Հանցանքները պատժելու համար Թուրքիայում կային օրենքներ, որոնք բոլորն էլ շատ բարձր էին կայսրության մեջ գոյություն ունեցող արդարադատության ընդհանուր մակարդակից, քանզի դրանք թարգմանաբար և կուրորեն առնված էին հիմնականում ֆրանսիական օրենսգրքերից՝ առանց հաճախ իմանալու կամ ըմբռնելու դրանց էությունն ու իմաստը: Կյանքում այդ օրենքները մնում էին մեռած տառեր: Պատժի չափը կախված էր դատարանի բացարձակ կամքից, նայած թե ինչ վերաբերմունք ունի այդ դատարանը դեպի պատժի ենթարկվողը՝ ըստ նրա ազգության, դիրքի, անձնական կապերի և մանավանդ նրա գործ դրած ոսկիների:

Բանտարկյալները Թուրքիայում, ինչպես և ամենուր, բաժանվում էին երկու մասի՝ քրեական և քաղաքական:

Քրեական հանցանքներով բանտարկվածների բացարձակ մեծամասնությունը Թուրքեր ու քրդեր էին, ավելի քիչ՝ Թուրքեր: Նրանց համար բանտը տաժանավայր չէր: Քրեական կալանավորներ լինելով՝ նրանք վայելում էին բանտային վարչության հովանավորությունը: Դա վերաբերվում էր գլխավորապես բանտարկված այն ցեղապետերին, որոնց համար բանտում ստեղծվում էին հարմարավետ պայմաններ: Ընդհանրապես քուրդ ավազակաբարո ցեղապետերի աննշան մասն էր միայն բանտարկվում և այն էլ այն դեպքում, եթե նրանք ծայրահեղության էին հասցրած լինում իրենց գործած ոճիրները,

[1] «Ցառաջ» (Կարին), N 28, 13 ապրիլի 1910թ.:

հատկապես եթե նրանց ասպատակություններից հանկարծ տուժել էին նաև թուրքերը: Ջերբակալված հայտնի քրդերը արգելափակվում էին տանելի պայմաններ ունեցող սենյակներում, ստանում էին բավարար սնունդ, համարյա չէին ենթարկվում հարցաքննությունների, առավել ևս՝ կտտանքների: Բանտում գտնվող քրդերի 90-95 տոկոսը և ավելին սեփականազուրկ, խեղճ ու անտեր մարդիկ էին: Նույնիսկ սրանց բանտային կյանքի պայմանները, գեհենի մեջ ընկած հայերի կյանքի համեմատ, իսկական դրախտ էին թվում[1]:

Ընդհանրապես երկրում ամենից քիչ պատիժ կրող հանցանքն ավազակությունն էր: Ավազակը թուրքն ու քուրդն էին, ավարառության ենթարկվողը՝ քրիստոնյան, առավելապես՝ հայը: Որպես կանոն, ավազակները մահմեդականներին չէին կողոպտում: Երբ կտրում էին քարավանների առաջը, մահմեդականներին ջոկում էին հայերից և թալանում միայն վերջիններիս:

Ոստիկանությունը ոչ միայն շահագրգռված չէր պայքարելու ավազակների դեմ, այլև երբեմն խրախուսում էր նրանց: Հայերին թալանելուց հետո կողոպտիչները շատ անգամ իրենց ավարից բաժին էին հանում ոստիկաններին, իսկ սրանք, որպես վարձատրություն, թալանված ապրանքներով բեռնավորված ավազակներին խորհուրդ էին տալիս իրենցից հեռանալ ու քաշվել ուրիշ ապահով տեղեր, իսկ իրենք գալով ոստիկանատուն՝ հայտնում էին, թե ավազակներն անհետացել են: Դրանով էլ խնդիրը փակվում էր:

Մահմեդականների կողմից հայերի դեմ կատարած ոճիրներն ընդհանրապես մնում էին անպատիժ: Հաճախ սպանված հայերի դիակները իշխանությունների կարգադրությամբ անհետացնում էին, որից հետո բողոքող ազգականները մեղադրվում էին զրպարտության մեջ: Մահմեդական ավազակը միայն այն դեպքում էր հայտնվում դատական-պատժիչ մարմինների ուշադրության կենտրոնում, եթե նա ձեռք էր մեկնել մահմեդականի և հատկապես թուրք ու քուրդ ավագանու սեփականության վրա:

Անգամ ամենաբարձր թուրք պաշտոնյայի մեջ երբեք զզվանք չկար դեպի մի այնպիսի ոճիր, որը քաղաքակրթված հասարակության մեջ անխուսափելիորեն առաջ էր բերում ընդհանուր ցասում: Կործանելը, ավերելն ու ոչնչացնելը միս ու արյան էր փոխվել թուրքի մեջ: Հայրենիքի և արդարության գաղափարն այնքան աղոտ ու այնքան խավար էր թուրք ամբոխի, հոգևորականի, պաշտոնյայի մոտ, որ նա չէր ըմբռնում, թե միևնույն հայրենիքում հավասար իրավունքներով կարող են լինել և՛ մահմեդականներ, և՛ քրիստոնյաներ, և որ պետության մեջ չպետք է կրոնի ու ազգի խտրություն լինի: Եվ շրջում էին ոճրագործները՝ ազատ ու անվախ, երկրի մի ծայրից մյուսը, իբրև լայնատարած որսատեղի իրենց ավերիչ հարձակումների համար:

Նախկինում հայերից շատ քչերն էին հայտնվում բանտերում, այն էլ իբրև քրեականներ: Սրանք մեղադրվում էին պարտքը չվճարելու կամ հայը հայի

[1] Տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. N 4, վավ. 9[7]:

հետ վեճի բռնվելու պատճառով: Խեղճ ռայա հայը չէր կարող մտքով անգամ անցկացնել, թե կարելի է բռնակալի դեմ ընդվզել, ասենք՝ նրա վրա ձեռք բարձրացնել:

Հայը, իբրև քաղաքական հանցավոր, թուրքական բանտում առաջին անգամ երևաց 19-րդ դարի 70-ական թվականների վերջին, Էրզրումում: Քաղաքում ռուսական զորքերի ներկայությունը ռուս - թուրքական պատերազմի օրերին ստեղծել էր ուրախ տրամադրություն հայերի մոտ: Ռուսների հեռանալուց հետո թուրքերն այդ ուրախությանը պատասխանեցին բռնություններով ու հարձակումներով:Այդ հարձակումներին հակադարձելու և իրենց ընտանիքները պաշտպանելու համար հայ երիտասարդները զենք առան: Թուրքերը վրեժ առնելու առիթներ էին որոնում, մինչև որ 1882թ. կառավարությունը հայերի խմբակային քաղաքական ձերբակալություններ կատարեց և մոտ 400 հոգու նետեց Էրզրումի բանտը:

1880-ական թվականների սկզբին Խրիմյան Հայրիկը ժամանել էր Մուշ և այցելել միացյալ ընկերության տեղի վարժարանը, ուր հետևյալ կարճառոտ քարոզն էր ասել. «Վերջ ամենայնի գիտեմ, ձեր քաղաքի բանտին մեջ ազգակից բանտարկեալներ բնավ չկան, բայց այն ատեն մենք մեր փրկությունը ձեռք կը բերենք, երբ ողջ մնամ և իմանամ, որ Մշոյ հայությունը, խիտ շարքերով լեցուած կը լինի բանտի սենեակներուն մեջ»[1]:

Հայերին ուղղված Խրիմյանի խորհրդավոր քարոզի իմաստն այն էր, թե զենք վերցրեք, ընդվզեք, ապստամբեք: Նա չէր ցանկանում, որ հայ մարդիկ քրդերի նման ավազակության և ոճրագործության դիմեին և այդ պատճառով նրանց հետ նստեին բանտերում: Բայց փափագում էր, որ նրանք արթնային ստրկության թմբիրից, իրենց արդար իրավունքների պաշտպանության համար բողոք, պայքարի դրոշ բարձրացնեին, մարտնչեին և լցվեին բանտերը:

Խրիմյանի այս ցանկությունը իրականացավ, բայց նա երբեք չէր կարծում, թե բանտերում ու զնդաններում հայերի բռնափակումը սոսկալի չափեր կընդուներ: 90-ական թվականների կեսերից սկսած՝ թուրքական բանտերում քաղաքական «հանցագործների» թիվը համրանք չուներ: Նրանք համարյա բոլորը քրիստոնյաներ էին, որոնց թվում բացարձակ մեծամասնություն էին կազմում հայերը: Այդ ժամանակներից հայերին, իբրև քաղաքական հանցավորների, բանտերը նետելու համար օգտագործվում էր ամեն առիթ ու ամեն պատրվակ:

Օրինակ՝ 1907թ. փետրվարին Էրզրումում մի հայ տղամարդու քաղաքական հանցանքի մեղադրանքով բանտ էին նետել այն բանի համար, որ նա դրանից վեց տարի առաջ իր մեկ հարազատից ամանորի առթիվ ստացել էր շնորհավորական նամակ, որի մեջ նոր տարում երջանիկ լինելու բարեմաղթություն էր եղել: Ինչ, մի՞թե արևափայլ սուլթանի բարձր հովանու տակ հայերը

[1] Սարգիս և Միսակ Բդէեան, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 191:

երջանիկ չեն: Ապերախտ հայ, ապերասա՜ն ազգ...

Հեղափոխականների ձերբակալման ու բանտարգելման առաջին գործողությունը խուզարկությունն էր:

Խուզարկության գործին, բացի ոստիկանական և ժանդարմական ծառայողներից, մասնակցում էին զինվորներ, տվյալ բնակավայրի մուավինը, մուտանտիկը, բելեդիե ռեիզը, Թաղի մուխտարը, նաև՝ Թուրք աղաներն ու բեկերը:

Ամեն հավատացյալ Թուրք կամավոր լրտես էր և, ըստ էության, ոստիկանի պաշտոն էր կատարում: Նա լուրեր էր բերում կառավարությանը, Թե այսինչ հայի մոտ զենք է տեսել, Թե մյուսն արգելված Թղթեր ունի և այլն:

Բավական էր մի պարզ մատնություն, որպեսզի սկսվեր խուզարկությունը: Զինվորները շրջապատում էին կասկածի ենթակա տունը՝ պատրաստի բռնած հրացանները, որպեսզի զարկեն փախչելու փորձ անողին: Տան մեջ կանանց և երեխաների լացն ու շիվանն աշխարհ էր բռնում: Փնտրում էին տանտիրոջը, որն, ասենք, արդեն զոհ էր գնացել Թուրքական գնդակի, Թեև խուզարկուներից ոչ ոք դրան չէր ուզում հավատալ: Տղամարդ չգտնելով՝ հարցաքննում էին տանտիկնոջը, իսկ եթե դժգոհ էին լինում ստացած պատասխաններից, հարցաքննում էին երեխաներին, նաև՝ դրացիներին: Հարցաքննվածների ցուցմունքները պատահաբար միմյանց հակասելու դեպքում, խուզարկուներն ամբողջ տունը տակնուվրա էին անում: Ոստիկանները ուտի տակ էին տալիս ամեն ինչ ու փչացնում, գողանում պիտանի իրերը, հափշտակում զարդերն ու դրամը: «Հանցագործին» ձերբակալելով՝ ամուր կապկպում էին ձեռքերը և զինվորների ուղեկցությամբ ուղարկում բանտ[1]:

Սոսկալի էր դեպի բանտ տանող ճանապարհը: «Եասա՜գ, եասա՜գ», - գոռում էին զինվորները և հերթական հարվածը հասցնում «հանցագործին»: «Դին դյուշմենի», - աղաղակում էր Թուրք ամբոխը և առաջ վազում ձեռքերով բզկտելու կալանավորին:

Ահա և բանտը՝ հաստաբետոն պատեր, երբեք արև չտեսնող խոնավ, մութ ու գարշահոտ սենյակներ, որոնցում աղբը, կեղտն ու մարդիկ խառնված էին իրար:

Իրենց ահավոր պայմաններով հատկապես հայտնի էին Աքիայի, Պոտրումի, Մուշի, Բիթլիսի, Վանի, Մալաթիայի, Կ.Պոլսի, Էրզրումի, Կենճի, Հասանգալեի, Սվազի բանտերը:

Ռուբեն Տեր-Մինասյանի վկայությամբ՝ Սասունի ապստամբությունից հետո Մուշի բանտերն էր նետվել 2000-2500 հայ: Տարոնում կառավարական բանտերն այլևս ի վիճակի չէին տեղավորել հայ բանտարկյալներին, այդ իսկ պատճառով բազմաթիվ մասնավոր տներ վերածվել էին բանտերի[2]:

Ով տեսել էր Մուշ քաղաքի «Կենտրոնական բանտ» կոչված սպանդանոցը,

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 59:
[2] Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները , հատ, Գ, էջ 319:

սեփական աչքով տեսել էր դժոխքի իրական և հարազատ պատկերը:

Տասներեք անգամ Թուրքական կալանավայրերի սարսափները ճաշակած Միսակ Բդեյանը մանրամասն նկարագրել է Մուշի բանտը, նրա անտանելի պայմանները, այնտեղ բռնափակված դժբախտ հայերի «ապրել» -մեռնելը:

Մուշի մուսուլման բնակչության 90 տոկոսից ավելին քրդեր էին՝ համարյա գլխովին անգրագետ: Քաղաքում այս տգետ ու խավար արարածների ձեռքին էին գտնվում կառավարական բոլոր, այդ Թվում բանտապետի և նրա 50 ենթակաների պաշտոնները:

1906Թ. Մուշի բանտում հազիվ 120 Թուրք և քուրդ քրեական ոճրագործ կար, իսկ հայերի Թիվը հասել էր 700-ի՝ բոլորն էլ ազգային-քաղաքական զոհեր[1]:

Բանտի արևելյան կողմի չորս օդասուն սենյակները տրված էին քուրդ անվանի ոճրագործներին, ամեն մի սենյակում 12-15 անձ էր, այսինքն՝ յուրաքանչյուր ոճրագործի հատկացված էր մեկ կանգուն տեղ, այնպես որ այս քրդերը բանտում ապրում էին առանց նեղվելու: Աղքատ դասակարգի պատկանող 100-105 քրդերին հատկացված սենյակներից ամեն մեկում մնում էր 15-20 հոգի: Ինչ վերաբերում է 700 հայ բանտարկյալներին, ապա նրանցից 100-ը նետված էր բանտի ամենախոնավ չորս սենյակների մեջ, ուր յուրաքանչյուրին ընկնում էր կես կանգուն տարածք, այնպես որ բոլորի «անկողինները» տեղավորված էին կողք կողքի և գիշերը մինչ առավոտ մնում էին պառկած, առանց կարողանալու մի կողմից մյուս կողմը դառնալ: Մնացած 600 հայ բանտարկյալները խոնված էին բանտից մի քանի քայլի վրա գտնվող նախկին հեծելազորաց երկու մեծ ախոռներում: Այստեղ նրանք ամառ Թե ձմեռ ուղղակի պառկում էին սալահատակին[2]:

Մուշի բանտում հայ բանտարկյալի «սնունդը» օրական ընդամենը 150 գրամ Թային (սոմոն) հաց էր, որը պարունակում էր հազիվ 10% ցորեն[3]: «Մենք, հայերս, - գրել է Միսակ Բդեյանը, - դարերէ ի վեր բռնապետութեան ներքև ճնշուող ժողովուրդ մը ըլլալով, միևնոյն համբերութիւնը ցոյց կուտայինք բանտերու մեջն ալ, եթե գոնե բավականաչափ սնունդ ստանայինք»: Ապա՝ «Այդ դժոխքին մեջ նետուողը որքան ալ քաջառողջ ըլլայ, բանտի ապականած մթնոլորտը, խոնավությունը, գարշահոտությունը, պառկիլ-հանգստանալու տեղի չգոյությունը, սննդի անբավարարությունը, մաքուր և թարմ օդի բացակայությունը կերպանափոխ կ՚ընեին մարդս քանի մը օրուան մեջ... Բոլոր ողջ մնացողները հյուծուած և թոքախտավոր դրութեան մատնուած էին՝ ուղղակի կենդանի մեռելներու ոսկրացած երևոյթը ստանալով: ...Բանտին մեջ գտնուող հուժկու սասունցիներն ալ՝ նախկին առիւծները չէին

[1] Սարգիս և Միսակ Բդէեան, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 191:
[2] Նույն տեղում, էջ 191-192:
[3] Նույն տեղում, էջ 192:

մնացած, անոնք ալ, դաշտեցիներուն և քաղաքացիներուն նման, մեռելի գոյն ստացած էին...»[1]:

Բասենում ձերբակալված և Հասանգալեում զնդան նետված Ալեքսան անունով մի ռուսահայ երիտասարդի վիճակի մասին «Ալիք» (Թիֆլիս) թերթը տպագրել էր հասանգալեցի Թուրքերի պատմած հետևյալ իրողությունը: Ահա վեց ամիս է, որ Ալեքսանն անասելի տանջանքներ է կրում բանտում: Նա բոլորովին մերկ է, շապիկ անգամ չունի: Նրան օրական տալիս են քարի պես կարծր և ցեխի պես սև մի կտոր հաց և աղտոտ մի թաս ջուր: Գազազած պաշտոնյաների հրեշային հայհոյանքների տարափի տակ նա ուտում է ողորմելի սնունդը: Հազիվ մի պատառ հացը կուլ տալուց սկսվում են խժդժությունները. ծեծում են գազանաբար՝ ամեն օր գավազանի հարյուր հարված հասցնելով, աքցանով քաշում են մսերը, մազերը պոկում փունջ-փունջ, մարմինը դաղում շիկացած երկաթով և գրեթե կիսամեռ թողնում խոնավ հատակին: Այս գործողությունը օրական կատարվում էր երկու անգամ[2]:

Նույն թերթը տպագրել էր 1906թ. մայիսից Սվազից ուղարկած «Բանտարկյալները Տաճկաստանի մեջ» հոդվածը: Նկարագրությունը դարձյալ անտանելի է. ցասումի, նզովքի ու տառապանքի մռայլ զնդանների խորքերից բարձրացող աղիողորմ ճիչեր և շղթաների խուլ շռինդ, փշրված եղունգներով պատերը և երկաթե դռները չանգռող նվաղած հոգիների հեծեծանք...[3]:

Մատենադարանում պահվում է Հայֆայի ավստրիական փոստատան նախկին գրագիր Մուսա Պալյանի սրտակեղեք նկարագրությունը Թուրքական բանտում իր կրած չարչարանքների ու լկումի մասին[4]:

Կայսրության ահավոր բանտերից մեկը Վան քաղաքի բանտն էր, որի հիմնական բնակիչները հայեր էին, և ուր ամեն օր կատարվում էին բարբարոսական ոճրագործություններ: Քաղաքում սարսափով էին խոսում բանտային տեսուչ Հյուսնիի մասին, որը գազանային ոճիրներ հնարելու անմրցելի վարպետ էր: Բռնակալության մռայլ որջերի մեջ անթիվ-անհամար էին իրենց արհեստը կատարելագործած նման արյունկզակ դահիճները: «Ոչ մեկ ազգ այնքան հմտորեն զարգացուցած է տանջելու արհեստը, որքան Թուրքը, - գրել է արևմտահայ գործիչներից մեկը: - Տանջանքը մասնագիտական նրբութեան հասցուցած՝ ան գիտե լավագոյն կերպով գործադրել զայն, միևնոյն ժամանակ ուշադիր՝ որ զոհը յանկարծ ձեռքեն չպրծնի, անժամանակ մեռցնելով»[5]:

Վանի բանտում հարցաքննությունը ծեծ ու ջարդի պրոցես էր: Դժբախտից խոսք դուրս քաշելու համար գործի էր դրվում հատուկ մահակը, օրերով

[1] **Սարգիս և Միսակ Բդէեան**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 252:
[2] Տե՛ս **«Ալիք»** (Թիֆլիս), N 17, 18 մայիսի 1906թ.:
[3] Տե՛ս նույն տեղում, N 38, 11 հունիսի 1906թ.:
[4] Տե՛ս **Մատենադարան**, կաթողիկոս Իզմիրլյանի անձնական դիվան, մատյան 34, թղթ. 14, վավ. 457:
[5] **Մալխաս**, Զարթոնք, հատ. Բ, Գ տպագր., էջ 411:

նրան պահում էին սոված ու անքուն: Բանտի պաշտոնյաների հրամանով Թուրք և քուրդ քրեական բանտարկյալները բռնաբարում էին նույնիսկ տարիքն առած տղամարդկանց: Քանի՜ - քանի՜ անգամ հայ բանտարկյալը, իր պատիվը փրկելու համար, ստիպված էր սուտ խոսել, չեղած իրողություններ պատմել, հայտնել գործի մեջ չեղած իր մասնակցությունը, համակերպվել ոստիկանության նենգ ծրագրերին, ստորագրել նախօրոք պատրաստած կեղծ ցուցմունքները:

Դաժան բռնությունից հետո կալանավորը գալարվում էր՝ շաղախված սեփական արյան մեջ, իսկ տանջողը հրճվում էր գազանային քրքիջով:

Հայ քաղաքական բանտարկյալների մեծ մասը ց'կյանս պահվում էր գետնափոր զնդանների խոռոչներում ու գաղտնարաններում՝ մահվան դատապարտվածների հետ, քրդերի, Թուրքերի, չերքեզների և այլ ազգությունների ամեն կարգի քրեական ոճրագործների, հանցագործների ու սրիկաների հետ: Վերջիններս բանտերի տեսչությունների թույլտվությամբ կրում էին սառը զենք: 1907թ. սեպտեմբերին Տրապիզոնի բանտում Թուրք բանտարկյալները, անշուշտ, բանտային պետերի թույլտվությամբ, դաշույններով զինված խուժել էին հայ քաղաքական բանտարկյալների խցերը և դաշունահարել 17 հոգու, որոնցից երկուսը մեռել էին տեղնուտեղը[1]:

Նմանօրինակ գազանություններ կատարվում էին նաև Թուրքական ուրիշ բանտերում, ուր «անհավատները» զոհ էին գնում բանտակից Թուրք սրիկաների հարձակումներին:

Կարելի է պատկերացնել այդ իրադրության մեջ հայ քաղբանտարկյալների հոգեվիճակը: Նրանք ստիպված էին ենթարկվել անտանելի դժոխային պայմաններին, զրկված էին խոսելու, գրելու, կարդալու իրավունքից, սպասում էին բանտային վերահսկիչների հերթական զազրելի հիշոցներին և գանակոծություններին՝ քաղցից կիսամեռ, թափված իրար վրա, դժվարությամբ շնչելով ապականված օդը: Մասսայական երևույթ էին բանտարկյալ հայերի թունավորումները:

Հայ քաղաքական բանտարկյալները զրկված էին տեսակցելու իրավունքից: Թեև բոլորն այդ մասին գիտեին, բայց ոմանք քանի օրվա հեռավորությունից գալիս էին տեսակցելու իրենց հարազատին կամ փոխանցելու բերած մթերքները: Այդ միամիտները աղաչանք-խնդրանքներով դիմում էին բանտի պաշտոնյաներին, որոնք, սակայն, բերած մթերքները խլելուց հետո, ապտակելով ու հայհոյելով վռնդում էին նրանց:

Ինչպես Թուրքիայի մյուս բանտերում, Մալաթիայի բանտում նույնպես քաղաքական բանտարկյալները, փոքր բացառություններով, հայեր էին: Ահա թե ականատեսներից մեկն ինչպես է նկարագրել նրանցից մեկի հարցաքննությունը:

Բանտի հայ քաղբանտարկյալներից առանձնացրել էին հինգ հոգու և

[1] **«Դրոշակ»**, N 10 (187), հոկտեմբեր, 1907, էջ 154:

նետել զնդանի մութ ու խոնավ խորշերը: Բոլորն էլ քաղաքի աչքի ընկնող հայերից էին, տարբեր մասնագիտությունների մարդիկ: Նրանց վրա հագուստ չկար այլևս՝ միայն շապիկ ու մի վարտիք:

Կեսգիշերն անց էր, և քաղաքը խոր քուն էր մտած: Բանտում իսկ, ուր սովորաբար աղմուկն ու աղաղակն անպակաս էին, այդ ժամին կատարյալ լռություն էր: Մոտիկ խուցերից երբեմն լսվում էին խուլ հառաչանք, ծանր տնքոց կամ զառանցանքի խզված խառնիխուռն ձայներ:

Ուժասպառ դարձած կալանավորներից երկուսն այլևս անկարող էին ոտքի վրա մնալու և ընկել էին թաց ու ցեխոտ հատակի վրա: Թրջված ու սառած վարտիքներն ու շապիկները կպել էին նրանց ջարդված մարմինների արյունով սևացած տեղերին: Նրանց նոր էին հարցաքննությունից բերել: Ի տես այդ ահավոր պատկերի՝ մյուս երեքը սարսափած ու դողոցով սպասում էին իրենց հերթին: Ցուրտը թափանցել էր մինչև ոսկորները, ատամները զարկվում էին միմյանց և սարսուռ տարածում խուցի մութ խոռոչներում:

Բացվում է խուցերից մեկի դուռը:

– Դոկտոր, գելսըն,* – ձայն է տալիս զինվորը:

Բժիշկ Ա-ն կորագլուխ դուրս է գալիս և ընկնում զինվորի առաջ: Ահա նա փոլիխանայում է, ուր սկսվում է հարցաքննությունը:

Նստած են մուավինը, հազարապետը և կոմիսարը, իսկ երեք ոստիկան և մի քանի ժանդարմ ոտքի վրա սպասում են:

– Արի, խային, տեսնենք ինչպե՞ս կազմակերպեցիր զինված խումբը և ուղարկեցիր Զեյթուն, – դիմում է բժշկին կոմիսարը:

– Ստաֆուրուլլահ** էֆենդիմ, ես այդպիսի գործեր կատարող չեմ, ես վեհափառ սուլթանի ստրուկն եմ:

– Դեռ սուլթանի անունն է՞լ ես առնում պղծված բերանդ, խնզրը***, – գոռում է կոմիսարը, ոտքի ելնում և ուժգին ապտակում բժշկին:

Տիրում է լռություն: Մուավինը, զգալով, որ իր ներկայությունը խանգարում է քննության գործին, տեղից բարձրանում է և բինբաշու ականջին փսփսում. «Ձեզ տեսնեմ, առանց խոսքը քաղելու չդրկեք իր տեղը» ասելով՝ դուրս է գալիս և մտնում կողքի սենյակը:

– Ձե՞ս ուզում խոստովանել, հա՛, – գոռում է կոմիսարը, – հիմա քեզ ցույց կտամ:

Ապա դառնալով դեպի զափթիեները՝ կարգադրում է.

– Սրան գետին զարկեք:

Զափթիեները մի ակնթարթում վայր են գլորում բժշկին և քացիների տակ առնում: Սկսվում է սովորական դարձած տանջանքը: Բժիշկը, որչափ ուժ ուներ, զսպում էր իրեն. ամաչում էր ձայն հանել ...

Ոտքի կանգնեց ինքը՝ կոմիսարը, և իր ձեռքով ջինվիզն անցկացրեց բժշկի երկու բթամատերին ու սկսեց պտուտակը դարձնել: Ցավի ծանր հառաչը դուրս թռավ բժշկի բերանից, բայց նա իրեն նորից զսպեց, սեղմեց ատամները՝ չգոռալու համար: Կոմիսարը որքան ուժ ուներ դարձրեց պտուտակը: Բթամատերի ոսկորները սկսեցին ճթճթալ ու կոտրատվել, արյունը դուրս ցայտեց: Բայց բժիշկը շարունակում էր զսպել իրեն: Կոմիսարը չէր սպասում և կատաղությամբ զափթիեներին հրամայեց կատարել հաջորդ գործողությունը:

Զափթիեները միանգամից հարձակվեցին և սկսեցին սեղմել կալանավորի ամորձիքը ... Սա արդեն անկարելի էր տանել: Բժիշկը ակամա մի այնպիսի գոռոց արձակեց, որ ավելի նման էր եզան բառաչի, քան մարդկային ձայնի: Տանջանքի ողբն էր դա: Բոլորն այդ ձայնից հետ քաշվեցին: Սերայի բակում քնած պահապաններն ու պաշտոնյաները վազեցին իմանալու, թե ում են տանջում: Մյուս սենյակից դուրս եկավ մուավինը և, իբր դժգոհ, հարցրեց.

– Այս ի՞նչ է, ինչո՞ւ է գոռում այս մարդը:

– Գյավուրները լավ միջոց ունեն արդարանալու, դիտմամբ սկզբից գոռում-գոչում են, որ պատժից ազատվեն, – վրա բերեց կոմիսարը:

– Այդ ոչինչ, անիծվածը խոստովանեց, որ ինքն է արել, – ավելացրեց բինբաշին:

– Չէ՛, չէ՛, ես չեմ արել, – կիսաշունչ արտաբերեց բժիշկը՝ խրախուսված մուավինի ներկայությունից:

– Շատ մի՛ խոսիր, ես ականջովս լսեցի, – վրա բերեց մուավինը և հրամայեց.

– Տարեք սրան:

Չորս զափթիեներ դուրս հանեցին դժբախտին փոլիխանայի դռնից: Ոտքերից բռնած քարերի ու ցեխերի միջով նրան քարշ տալով տարան և ներս գլորեցին բանտախցից ներս: Դուռը ճռռալով փակվեց[1]:

Տնքում էր հայ մարդը ոճիրների ցավից ու ժահրակալ վերքերից:

Նույնպիսի անտանելի տեսարաններ էին Աքիայի գորշ ու բարբարոս զնդանում, ուր ամեն տարի մեռնում էր տասնյակ հայ բանտարկյալ: Ավելի քան տասը տարի չարչարանքների ու տանջանքների ենթարկվելուց հետո, այս բանտում անշնչացավ հայտնի դաշնակցական գործիչ Աչրկգյոզյանը:

Երկար տարիներ Պոլսի բանտում նստած հայ քաղբանտարկյալներից մեկը 1906թ. սեպտեմբերի 12-ին իր նամակներից մեկում գրել է.

«... Ամեն օր վիշտ, անարգանք, տառապանք: Ի՞նչ է սա. օր մը չըլլար, որ առանց յուզման և զայրոյթի անցընես, գիշեր մը չըլլար, որ երկու-երեք ժամ հանգիստ քնանաս: Աս մեկ օր, մեկ ամիս, մեկ տարի չէ: Աս տաքին, մեկ սենեակին մեջ 100-120 հոգի իրարու վրա լեցված կը չարչարվին կը կենան:

---

* Գելսըն – եկեք:
** Ստաֆուրուլլահ – քավվիցի:
*** Խնզրը – խոզ:

[1] «Դրոշակ», N 5 (171), մայիս, 1906, էջ 78-79:

Ափերով լու և մլուկ կը տեղան վրադ: Շատեր խենթացան կամ մարեցան այս օրերս: Ինչ ընես ... Բայց համբերությունն ալ վերջ ունի: Անտանելին ոչ թե աշխարհեն հեռու մնալն է և ոչ ալ բանտի խիստ օրենքները, այլ այն, որ դուն ստորնացած ես չափից դուրս, որ մարդու տեղ չը պիտի դնես ինքզինքդ, ամեն լուտանք ու անարգանք պիտի կլլես, էն ոչինչ մարդը պիտի անարգե քեզ, էն աննշան քուրդը պիտի հրամայե ու յոխորտա վրադ, էն ստոր Թուրքը պիտի սաստե քեզ և եթե երիտասարդ ես, պատիվդ բռնաբարելու ջանա: Պիտի դիմադրես, պիտի կռվիս. և ահա, օր մը, սանդուղեն իջած ատենիդ, վատ օրին կը զարնվիս. եթե չը մեռար և դուն ալ զարկիր, ալ բանտեն դուրս ելլելու յույսդ պիտի կտրես, շղթայ պիտի կրես. զնդանները պիտի նետվիս և ի վերջոյ յիմարանոց նետվելով՝ սյուներուն պիտի կապվիս և գիշեր - ցերեկ ծեծվիս: Վրադ տաք ու պաղ ջուր յաջորդաբար թափելով, պիտի զարնեն ու զարնեն և կիսակենդան պիտի ընկնես ցեխոտ յատակի վրայ սև նկուղներուն մեջ և անշշուկ ու լռին պիտի թոշնես և փչես հոգիդ ...»[1]:

Ահավոր ինկվիզիցիայի պայմանների անմիջական հետևանք հանդիսացող տիֆը, ժանտախտը, թոքախտը և վարակիչ այլ հիվանդություններ կատարում էին իրենց կատաղի հունձը: Հայ երիտասարդ ուժերը թառամում էին ու կյանքից հեռանում ամենակուլ բերդերի ու զնդանների պատերի տակ: Մեռնողները հաճախ մի քանի օր մնում էին բանտախցում կենդանի բանտարկյալների հետ: Սրանք երանի էին տալիս նրանց, ովքեր մեռնելով ազատվել էին տանջանքներից: Կյանքն ավելի տանջալի էր, քան մահը:

Թուրքական բանտերում հայերի կրած անլուր տառապանքներն իրենց արտացոլումն են գտել հայ գեղարվեստական գրականության մեջ:

Դաշնակցական գործիչ, հայ ազատագրական պայքարի թեմաներով բազմաթիվ գեղարվեստական ստեղծագործությունների հեղինակ տրապիզոնցի Արտաշես Հովսեփյանը (Մալխաս) իր պատմվածքներից մեկում նկարագրել է թուրքական «արդարադատության», մասնավորապես նրա քննչական մարմինների քստմնելի մեթոդները, հայ հեղափոխականների վրա հնարովի մեղքեր բարդելու կատարելության հասցրած արվեստը: Պատմվածքի գլխավոր հերոսին՝ Վահեին հարցաքննելիս քննիչներն օգտագործում են տանջելու տարբեր չափի գործիքներ՝ իրենց համար ձեռնտու «խոստովանություններ» կորզելու համար: Երբ բանտարկյալը նվաղած ընկնում է գետին, քննիչ-բանտապետը դիմում է ենթականերին. «Մեծը բավական է, փալախկան հանեք չան ոտքերից ... Մեհմեդ աղա, ղերը կրակը դիր, մի լավ կարմրացրու»:

Մի քանի հայ բանտարկյալներ սենյակի մի անկյունում քարե արձանների նման սահմռկել էին՝ ի տես անմարդկային արարքի: Սարսափազդու ատելությամբ նայելով նրանց վրա՝ բանտապետն ամբողջ ձայնով գոռում է. «Դուք ուշադիր նայեք, թե հիմա ինչ է լինելու այս հեղափոխականի հետ. իսկ ձեր բախտը բերել է, ավանակնե՛ր: Ես ձեզ չեմ տանջելու, այլ թաղելու եմ ողջ-ողջ»:

Սոսկալի ծեծից հետո Վահեի մարմինը դաղում են չիկացած շամփուրներով, ապա կիսամեռ դուրս տանում:

Բանտապետը դիմում է հերթական զոհին.

– Է՛, հիմա դու առաջ եկ տեսնեմ ... դու՛, դու՛, Եկավեան էֆենդի, քեզ եմ ասում: Մեր վեհափառ սուլթանի կառավարությունից դժգոհ ես, Հայաստանի ազատությունն էիր ուզում, անշուշտ, հայ թագավոր էլ էիր ուզում: Ես քեզ այնպիսի թագավորություն տամ, որ երբեք մտքիցդ դուրս չգա ...

Մինչև կես գիշեր աղիողորմ ճիչեր ու հառաչանքներ էին լսվում բանտապետի սենյակից[1]:

Թուրքական բանտերի և հայ բանտարկյալների թեմայով Ավետիս Ահարոնյանը գրել է «Բանտում» և «Իմ բանտը» երկասիրությունները:

«Բանտում» ստեղծագործության մեջ գրողը նկարագրել է մահվանից առաջ հայ հեղափոխականի հպարտ պահվածքը և արհամարհանքը դահիճների հանդեպ. «Բանտարկյալի կերպարանքը սքանչելի էր ու վեհ: Բաց, լայն ճակատ, պայծառ ու շքեղ, ինչպես իր ծածկած մտքերը, ջլուտ դեմք՝ եզերված թավ, լայն միրուքով, փռված առնական կրծքին, որ վեհությամբ բարձր ու ցածր էր լինում»[2]:

Եվ ահա այդ առնական, աստվածային գեղեցիկ հայ տղամարդուն կյանքից զրկելու համար նրա շուրջը, ինչպես բորենիներ, պտտվում են բանտապահ թուրք ոչնչությունները:

«Իմ բանտը» ստեղծագործության մեջ գրողը նկարագրելով թուրքական բանտերում բռնափակված հայորդիների անեզր տառապանքը, միաժամանակ ցույց է տալիս նրանց անկոտրում կամքը, ցասումն ու նզովքը[3]:

Բանտերում տառապող հայորդիներին սրտակեղեք ու հոգեցունց տողեր է նվիրել Սիամանթոն: «Հայորդիները» բանաստեղծական շարքի «Թիարաններու խորերեն» հատվածում նա դիմում է իր դժբախտ եղբայրներին.

Ձեզի կը բերեմ, ձեզի կը խնկեմ, ձեզի կը մատուցանեմ,
ո՜վ կենդանի մեռյալներ,
Ո՜վ թիապարտներ, ո՜վ աքսորեա՛լներ, հայրենակարո՜տներ,
կալանավո՜րներ,
Դուք որ մահուան մեջ կ'ապրիք և կեանքին մեջ ամեն վայրկեան
կը մեռնիք,
Դուք որոնց արդար սուրերուն տեղ այսօր՝ ձեր վրայ, ծանրածանր
շղթաներն են որ կը փայլին...:

---

[1] «Դրոշակ», N 2 (180), փետրվար, 1906, էջ 23:

[1] Մալխաս, Զարթոնք, հատ. Բ, Գ տպագր., էջ 411-413:
[2] Ա. Ահարոնեան, Ժողովածու երկերի, հատ. հինգերորդ, Բոսթըն, 1948, էջ 63-72:
[3] Նույն տեղում, հատ յոթերորդ, Վենետիկ - ս. Ղազար, 1948, էջ 165-166:

Հեծեծանք և սոսկում է թևածում թուրքական բանտի գեհենից.
Գիտեմ թէ ի՞նչ ապառաժեայ խավար է որ կը լեցուի ձեր
զնդաններուն մէջն անողորմ,
Եվ ի՞նչ դաժան երազներ կուգան իրենց ժանիքներովն
ձեր ուղեղը բզքտելու...:

Անդադրում շնդում են զնդանվածների երկաթե շղթաները, որոնց օղակները կատաղորեն զարնվում են մահապարտների ոսկորների վրա: Այդ կապանքները «ցեղին ստրկութեան շղթաներն են», որ հայորդիները նրա «ուսեն իրենց ուսերուն վրա վերցուցին»:

Բանաստեղծի հոգին դառնացած էր, որ ազգը մի հնար չի գտնում բանտերի խավար խուցերից հանելու իր զավակներին.

Ո՞ւր են ուրեմն, ու՞ր են մեր բազուկները, մեր կամքերը, մեր մուրճերը,
մեր հարուածներն ազատարար,
Ո՞ւր է մեր սերը, ո՞ւր է մեր խիղճը, մեր վազքը, մեր զայրոյթը
շանթածրար,
Եւ ե՞րբ, ե՞րբ պիտի վար չրջենք, ե՞րբ պիտի խորտակենք, ե՞րբ
պիտի փշրենք
Մահուան դուռներն այդ բանտերուն, երթալ յափշտակելու, երթալ
համբուրելու համար
Այդ յավիտենական հերոսները, որոնք մեր կեանքը, իրենց կեանքեն,
անհունապես ավելի սիրեցին...
Որոնց մէջ թերևս երեկուան սերը մեռնի վաղուան անեծքը
ծնեցնելու համար...
Ուրեմն ո՞ւր եք Բռունցքներ, ո՞ւր եք Բարկություններ, ո՞ւր եք
Խորտակիչներ, ո՞ւր եք, ո՞ւր...:

Ծնված լինելով իր ժողովրդի անպատմելի տառապանքից, իր վրա կրելով նրա արյունոտ կյանքի ծանր մղձավանջը, Սիամանթոն այդ տառապանքից հյուսել էր իր արյան երգերը՝ պարուրելով դրանք ցասման, ըմբոստացման, վրեժի խոր զգացումներով:

Հայ հեղափոխական կուսակցություններն իրենց ուժերի ու հնարավորությունների ներածի չափով փորձում էին թեթևացնել հայ բանտարկյալների դաժան կյանքը:

Հ.Ց. դաշնակցության Վասպուրականի կենտրոնական կոմիտեն 1906-ի սեպտեմբերին հրատարակել էր հետևյալ կոչը.

«Հայրենակիցնե՛ր.

Անշուշտ լսեցիք բանտի վերջի բռնությունների մասին. պաշտոնյաները ազատության մարտիկներին վերջնական կերպով ճնշելու և բարոյապես սպանելու համար ամեն տմարդի միջոցների դիմել են և դիմում են: Դրա գործնական արդյունքը ամբողջ հասարակության առաջն է ... ճիվաղները հասնում են իրենց նպատակին: Կուսակցությունն անտարբեր չպիտի մնա և չմնաց: Ամենքս հուզվեցինք. ամենքս լացինք. ամենքս պատրաստվեցինք որևէ բան անել: Բայց այդ բոլորով ո՛չ մի գործնական դարման չարինք ընկերների վերքերին: Խոսքերից և զգացմունքներից ավելի բանտի ընկերները գործ են պահանջում՝ հեռացումը լիրբ պաշտոնյաների և նյութական աջակցություն՝ բժշկության, ապրուստի, դատական և այլ ծախսերի համար: Առաջինը որոշ մարդիկ անում են: Մնում է երկրորդը. իսկ այդ էլ ձեր բաժինն է: Շտապեցե՛ք խոսքից գործի անցնել և ձեր լումաներով օգնության հասնել թշվառներին ...

Արդյունքը [մինչև այժմ] եղել է [ընդամենը] 10 000 դահեկան»[1]:

Եվրոպական կառավարությունները, հատկապես Կ. Պոլսի նրանց դեսպանները, քանիցս փորձեր արեցին հայ քաղբանտարկյալների վիճակի մեջ բարվոքում մտցնել, բայց այդ մասնավոր դիմումները չէին կարող և չկարողացան էապես փոխել համիդյան գեհենը: Միայն առանձին դեպքերում հնարավոր եղավ այս կամ այն ոճրի առաջն առնել, ինչպես, օրինակ՝ Անատոլ Ֆրանսի խնդրանքով և Էմիլ Կոմպի միջնորդությամբ 1904թ. գարնանը Հ.Յ.Դ. Վան-Վասպուրականի կազմակերպության ղեկավար Վարդգես Սերենկյուլյանի դիմատման արգելումը:

Չնայած բոլոր արհավիրքներին, հայ քաղաքական բանտարկյալները, փոքր բացառություններով, մնում էին հավատարիմ իրենց երդմանը և, որպես կանոն, կյանքն ավարտում էին անվրեպ գործող կախաղանների վրա կամ կառափնարաններում իրենց արյունով շարունակելով թրջել հայոց պատմության բովանդակ էջերը:

«Հայորդիները» բանաստեղծական շարքի «Կախաղաններու կատարեն» հատվածում Սիամանթոն ողբում էր բախտը տրտմաթախիծ հայրենիքի նվիրական որդիների:

Կիսվել էր գիշերը: Բանտապահները կիսամութին անդոհական թիարանների ահավոր անկյուններից դուրս են բերում անվեհեր ու անընկճելի հայորդիներին՝ հիշոցների ու նզովքների տարափի տակ: Ազգի որդիները քայլում են դեպի ստույգ մահ՝ ուսերին ունենալով նրա ցավերը, բռունցքների մեջ ծրարած ատելության կայծակներ:

Ահա մթնշաղի մեջ ցցված կախաղանների կմախքատիպ սյուները, որոնց տակ անհամբեր սպասում են իրենց ցեղի էությունը մարմնավորող դահիճները:

Արևակերպ հերոսները բարձրանում են կախաղան: Հոգեվարք և մահ: Նրանք մեռնում են առանց գալարումի՝ հայացքները հառած սարսռող աստղերին: Իսկ ներքևում, հրապարակի վրա, ցեխի մեջ և ցեխը ապականելով, մոլեգին ծափերի տարափի տակ ոռնոցով ցնծում է արյունախում բարբարոս խուժանը:

Ո՞վ էր տեսնում նրանց նահատակությունը: Ո՛չ ոք: Որևէ մեկը նրանց

[1] **«Դրոշակ»**, N 10 (176), հոկտեմբեր, 1906, էջ 159:

մարմինը չէր փաթաթում պատանի մեջ, մեղեդիներ չէին հնչում նրանց դագաղների շուրջ, խունկ չէին ծխում նրանց անհայտ շիրիմներին և պակներ չէին հյուսվում զարդարելու համար հերթական զոհերի ճակատները: Կախաղանի վրա ճոճվող մարմիններին շոյում էին միայն հայրենի հովերը՝ տառապանքով և հեծեծանքով:

Հերոսները մեռնում էին, մեռնում ամեն օր ու ամեն ժամ, բայց չէր մեռնում նրանց արդար գործը:

Միայն Գաղափարն է, որ ո՛չ մահ ունի, ո՛չ դատավոր,
ո՛չ գերեզման և ո՛չ դազաղ:
Եվ հիմա, զմեզ խեղդող չվանը մեզի տվե՛ք, մեզի տվե՛ք,
դահճապետնե՛ր, դահիճնե՛ր,
Եվ կեցցե՜ն Ըմբոստները, կեցցե՜ն Ըմբոստները, կեցցե՜ն և կեցցե՛
Հայաստան...:

ՀԱՑՈՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՑՔԱՑՈՒՄԸ

Սուլթանն ու նրա կառավարությունը արմատական լուծում էին պահանջում, այն է՝ Հայաստանն առանց հայերի, բայց այնպիսի մեթոդներով, որ նպատակը կատարվի սուս ու փուս, որ աղաղակ ու ճիչ չբարձրանա, որպեսզի Եվրոպան հերթական անգամ պատճառ չունենա դատապարտելու իրենց գործողությունները[1]:

Այդ մեթոդներից գլխավորը հայ բնակչության տնտեսական քայքայումն էր՝ նրան արտադրության միջոցներից զրկելը, արտադրական շենքերի ու տների ավերումը, ստացած բերքի ու պարենամթերքի բռնագրավումը, հարկերով սնանկացումը:

Տարիներ առաջ Մշո դաշտի բոլոր գյուղերը շեն ու ծաղկուն էին: Ցուրաքանչյուր գյուղի հայ բնակչության 80 տոկոսից ավելին ուներ վարելահող, բոլորն էլ՝ գութանի կազմ և անասունների հոտ:

Բռնապետական ճնշումների և սանձազերծված հալածանքների հետևանքով 8-10 տարում ամեն ինչ փոխվեց: Դաշտի հայ գյուղերը ենթարկվում էին անգթությունների և քայքայման: Արդեն 1906-1907թթ. գյուղերում հազիվ 4-5 տոկոս լծկանի տեր հայեր էին մնացել:

Հայկական գյուղերի վիճակն ահավոր էր: Այլևս որևէ շինարարության մասին խոսք լինել չէր կարող, իսկ եղածը քանդվում էր, կործանվում: Փթած գերաններին հենված, հսկայական ճաքերով փլվող պատեր, ձեռքն ընկած ամեն բանով ծածկված ու կաթող տանիք՝ քանդվող առաստաղով, դժվարությամբ բացվող, կախ ընկած դռներ, խավար ու խոնավ խցեր, ուր ծվարում էին ամբողջ ընտանիքներ:

Այս եղած-չեղածի վրա էին աչք տնկել թուրքն ու քուրդը:

Լեռների կատարներից իջած ավարատենչ, ընչաքաղց ու շղթայազերծ քդերը ծծում էին հայի վերջին ավիշը:Նրանք հրոսակային խմբեր կազմած՝ շրջում էին գյուղից գյուղ և քաշում-տանում նախիրներն ու հոտերը, հափշտակում տներում դեռ մնացած փալաս-փուլուսը, այն ամենը, ինչ նրա աչքը բռնել էր:

Ամեն մի քուրդ իր համար մի բեկ էր, որի հետ անկարելի էր անգամ զրուցել: Նա էլ էր վարժվել մաքուր կերակուրների, ուստի հայ գյուղացուն ստիպում էր հավ մորթել, ձվածեղ սարքել, փոխինդ անել:

Քրդերի հարստահարումները ձմռանը մի փոքր թուլանում էին: Ցրտի ու ձյան պատճառով, երբ փակվում էին ճանապարհները, նրանք ստիպված քաշվում էին իրենց որջերը՝ մի պահ ազատ թողնելով մշտական զոհերին: Բայց գարունը բացվելուն պես, մինչև ուշ աշուն, հայկական բնակավայրերը մշտական ասպատակությունների ասպարեզ էր նրանց համար:

Խիզանում շեյխ Սեիդ-Ալին քանի՛-քանի՛ հայի գլուխ կերավ, ամայացրեց գյուղերը, գրավեց հողերն ու կալվածքները, քարուքանդ արեց տասնյակ եկեղեցիներ և դրանց քարերով իր համար բազմաթիվ շենքեր շինել տվեց: Շենքերը սարքում էին հայ վարպետները՝ մահվան սպառնալիքի տակ:

Խարբերդի Ակնը և շրջակա գյուղերը Դերսիմի քրդերի մշտական ասպատակությունների վայրեր էին: Նրանք կողոպտում ու տակնուվրա էին անում ոչ միայն նահանգի հայ, այլև թուրք գյուղերը: Միայն 1907թ. Ակն գավառում թալանվել էր թուրքերի 32 գյուղ: Կատարյալ անիշխանության պայմաններում զինվորները, մասնավորապես քուրդ զինվորները, ամեն օր տասնյակներով փախչում էին իրենց տները, իսկ թուրք զորքերը չէին համարձակվում քայլել Դերսիմի վրա և խափանել քրդերի կողմից թուրքական գյուղերի ավերումներն ու թալանը[1]:

Քուրդ ավազակների խրախճանքի ասպարեզ էին Բաղեշի կուսակալության Պուլանըխի և Խլաթի հայ գյուղերը: Հարստահարումներն այստեղ այն աստիճանի էին հասել, որ հյուպատոսները, հակառակ իրենց համբերյալ անտարբերությանը, 1907թ. մայիսին ստիպված էին քննության առնել լայնածավալ ոճիրները: Ռուսաստանի և Անգլիայի հյուպատոսները, ստանալով իրենց դեսպանների հավանությունը, նոր կուսակալ թահի փաշային ծանուցագիր ներկայացրին, բայց նրանց միջամտությունը ոչ մի հետևանք չունեցավ:

Քուրդ աղաները բռնության տակ հայերին ստիպում էին մշակել իրենց արտերը՝ վարելուց ու ցանելուց սկսած մինչև ցորենը շտեմարաններ լցնելը: Գարունը գալուն պես յուրաքանչյուր գյուղից 10,20,30 հոգի բռնության տակ շաբաթներով նրանց այգիներն էին փորում, որ նախկինում եղել էին իրենցը,

[1] Այդ մասին տե՛ս **Ա. Նորեան**, Դրվագներ Հ.Յ.Դաշնակցութեան գործունեութիւնից, Ա տասնամեակ, Բոստըն, 1917, էջ 29:

[1] **«Դրոշակ»**, N 10 (187), հոկտեմբեր, 1907, էջ 146:

փորում էին անոթի, ծարավ ու մերկ: Հազիվ մի քանի օր հանգիստ առած կամ իրենց համար աշխատած՝ վերստին գնում էին այս անգամ էլ աղաների խոտը հնձելու, որին հերթով հաջորդում էր գարու, ցորենի, կորեկի հունձը: Շատ տեղերում պահպանվել էր, այսպես կոչված, ղշլաղության համակարգը, ըստ որի ձմռանը հայ գյուղացիները պարտավոր էին իրենց խոտ ու հարդով խնամել քրդերի անասունները, և երբ մի հորթ էր սատկում, ապա դրա դիմաց նույնիսկ մի կով տալով նրանք չէին պրծնում զանազան պատիժներից: Իսկ եթե որևէ մի հայ հրաժարվում էր ձրի աշխատել, ապա նրա համար բաց էին զուլումների դռները:

Կողոպտվում էին ոչ միայն հայ անհատներն ու ընտանիքները, այլև նրանց ազգային հաստատությունները, այդ թվում վանքերն ու եկեղեցիները:

Թուրքական կառավարությունը ժամանակից ի վեր աչք էր տնկել Կիլիկիո Աթոռին պատկանող Թլանի ագարակի վրա, բայց հանգամանքները նրան թույլ չէին տվել հագուրդ տալ իր ախորժակին:

Եվ ահա 1906թ. ապրիլին սուլթանական իրադեով հարկունիս գրավվեց այդ ընդարձակ հողը, որը դարեր ի վեր Կիլիկիո Աթոռի անվիճելի սեփականությունն էր և Կաթողիկոսության հասույթի գրեթե միակ աղբյուրը:

Պաշտոնական պատճառաբանությունն այն էր, որ Կովկասից մեծ թվով նոր մուհաջիրներ են եկել, որոնց պետք է բավարարել հողով, իսկ կառավարությունն ազատ հողեր, իբր, չունի: Բայց իրական շարժառիթն ավելի խորքային էր: Թլանի մեծ կալվածքը մի տեսակ Կիլիկիո հայության սիրտն էր, նրա եկեղեցու անկախության կարևոր կռվաններից և ապացույցներից մեկը, որից այժմ զրկվում էր:

Լուրը արագորեն տարածվեց Կիլիկիայով մեկ: Հարվածն անակնկալ էր, ժողովուրդը՝ խոր հուզմունքի մեջ: Ոչ ոք չէր ուզում հավատալ դրան, քանի որ նախօրյակին սուլթան Համիդն անձամբ ընդունել էր Կիլիկիո Սահակ կաթողիկոսին և նրան տվել հուսալից ու փայլուն խոստումներ: Դիվանագիտության մեջ միանգամայն բոբիկ, խաբելու մեջ թուրք տիրակալների ունակություններին անհաղորդ խեղճ ու անհեռատես կաթողիկոսը, որ կյանքի մեծ մասն անցկացրել էր վանքում, սուլթանի հետ հանդիպման ժամանակ շլացել էր նրա բառերից:

Եվ ահա այժմ, Թլանը բռնագրավելուց հետո, կաթողիկոսը բողոք ներկայացրեց Կ. Պոլիս՝ հիշեցնելով սուլթանի խոստումները և այն, որ դրանից երեք տարի առաջ իշխանությունները խլել էին Նաճարլը հայ գյուղի բնակիչների բոլոր հողերը և դրանք բաշխել մուհաջիրներին: Կաթողիկոսը շեշտել էր նաև, որ Թլանի կալվածքի կորուստը իր Աթոռի համար կործանարար է: Երբ Պոլսից մերժում ստացվեց, Կիլիկիո կաթողիկոսը, իբրև բողոք այդ մերժման, հայտարարեց իր հրաժարականը և միաբանության հետ հեռացավ Ադանա[1]:

[1] **«Դրոշակ»**, *N 5 (171), մայիս, 1906, էջ 67-68:*

Այդ առիթով «Դրոշակը» գրում էր.

«Երեկ ռուս բռնապետությունն էր, որ փորձում էր հափշտակել հայ ժողովրդի եկեղեցական կալվածքները և իրավունքները: Այսօր Ելդզի խենթը, հայ արյան այդ անկուշտ հարալեզը, քաջալերված իր հյուսիսային դրացու ցնորած օրինակից, գալիս է մի էլ ևս ավելացնելու իր բռնությունների տարեգրությանը»[1]:

Այդ ամենին լրացնում էր ***հարկահանության*** *քայքայիչ, դժոխային սիստեմը:*

Հարկերը պետական եկամտի համարյա միակ աղբյուրն էին: Հարկերից ազատ էին մոլլաները, զինվորական դասը, Պոլսի թուրք բնակիչների մի մասը: Հարկ վճարելու ոչ մի տրամադրություն ցույց չէին տալիս լեռներում ապաստանած և բնատնտեսությամբ ապրող քրդական թափառական ցեղերը: Բալկանյան աշխատասեր քրիստոնյա ժողովուրդները աստիճանաբար թոթափելով օսմանյան լուծը, բնականաբար, ազատվում էին նաև թուրքական հարկային սիստեմի ճիրաններից: Ինչ վերաբերում է թուրքերին, ապա նրանց մեծ մասը, ծույլ և մեղկ, հարկը կանոնավոր չէր վճարում և միշտ քրիստոնյաներից էր «ժամանակավոր պարտք» վերցնում մարելու «տերության պարտքը»[2]:

Տուրքերի հիմնական բեռը բարձված էր քրիստոնյաների ուսերին, որոնք տրորվում և հեծում էին այդ բեռան հեղձուցիչ ճնշման տակ: Հարկերը նախկինում էլ բազմազան էին, անտանելի: Գյուղացու ուսերին ընկած հիմնական տուրքը տասանորդի տուրքն էր, որը գանձվում էր ոչ թե դրամով, այլ բնամթերքով: Զինվորական տուրքը գանձվում էր 12 տարեկանից սկսած, իսկ խարաճը, այսինքն՝ գլխահարկը, յուրաքանչյուր արու զավակից: Կային նաև բազմազան այլ տուրքեր՝ շահատուրք, հողային, առևտրական տուրք յուրաքանչյուր անասունի համար և այլն[3]: *Բայց ահա այժմ «օրինավոր» ճանաչված այդ հարկերից բացի, հայերի վրա դրվում էին նաև մինչ այդ չտեսնված ու չլսված տուրքեր (բաշքիա): Հայը պարտավոր էր հարկ վճարել մեռած, անհետ կորած, փախած հարազատների, ինչպես և նորածինների համար:*

Այդ ամենին գումարվում էին այն տուրքերը, որ իրենց հերթին հայերի համար սահմանել էին հայկական գյուղերի տեր քուրդ կալվածատեր բեկերը, չեյխերն ու աղաները[4]: *Ահա դրանցից մի քանիսը.*

Խաֆիրություն *. – Սա մի տուրք էր, որ քուրդ աղաները վերցնում էին յու-*

[1] **«Դրոշակ»**, *N 6 (172), Հունիս, 1906, էջ 86:*

[2] *Տե՛ս* ***Ա. Նորեան****, Դրուագներ դաշնակցութեան գործունեութիւնից, Ա տասնամեակ, էջ 17:*

[3] *1877թ. ռուս-թուրքական պատերազմից առաջ օսմանյան կայսրությունում գոյություն ուներ օրենք, որով երկրագործական բերքից տերությունը վերցնում էր տասից մեկ մասը: Հիշյալ թվականից հետո բերքից սկսեց գանձվել մեկ ութերորդ մասը (տե՛ս «Ցառաջ» (Կարին), N 4, 15 Հունվարի 1910թ.), թեև դա ևս շարունակում էր կոչվել «տասանորդի տուրք»:*

[3] *Տե՛ս* ***Երուանդ Խաթանասեան****, Հայոց թիւը, Բոստոն, 1965, էջ 5:*

[4] *Քրդերի հարստահարումների մասին տե՛ս* ***«Ժամանակ»*** *(Թիֆլիս), N 8, 12 Հունվարի 1907թ.:*

բաքանչյուր գյուղացիական հայ ընտանիքից՝ տարեկան միջին հաշվով հետևյալ չափերով՝ 7 կոտ հացահատիկ, 8 նուկի բուրդ, մի լիդր յուղ, կես լիդր մեղր, 2 ոչխար, 1 գույգ գուլպա և մրգեղեն: Խաֆիրառու աշիրեթներից հայտնի էին հատկապես պալազցիները, խարչանցիները, ջիլանցիները և բագրանցիները:

Մարուանա . – Կոչվում էր այն գործողությունը, երբ մեկը պարտք էր տալիս՝ գրավ վերցնելով տունը, հողը, եզները: Հողը գրավ էր դրվում 1-10 տարով: Պարտքը չվճարելու դեպքում փողատերը գրավը ծախում էր ամենաչնչին գնով:

Սալաֆ . – Կեղեքման մի սոսկալի միջոց էր սա: Փողը տրվում էր կարիքավորին՝ նրանից մթերքներով հետ ստանալու պայմանով: Փողատերը հայ գյուղացուն, ասենք, տալիս էր 10-20 պիաստր՝ վեց ամիս հետո 40-50 պիաստր արժողությամբ մի ոչխար ստանալու պայմանով, 12-15 պիաստր տալով՝ նույնքան ամիսներ անցնելուց հետո ստանում էր 30-40 պիաստր արժողությամբ մի այծ, 10-12 պիաստր ստացած գյուղացին պարտավոր էր վեց ամիս հետո փողատիրոջը տալ մի լիդր՝ ծխախոտ:

Միրաբայություն. – Դա ճորտական մի դրություն էր, որին ենթարկվում էին հայ գյուղացիները, երբ պարտք էին վերցնում մի գումար և պարտավորվում իրենց եզներով ու երկրագործական բոլոր մյուս պարագաներով ծառայել աղային[1]:

Այսպիսով, օսմանյան հարկային համակարգը մի լեռնակուտակ ծանրություն էր, որի տակ հայը տառացիորեն կքված էր ու ճզմված:

Միայն 1906 թվին, անցյալ տարվա համեմատությամբ, հայկական գյուղերից 60%-ով ավելի տուրքեր էին ուզում, կամ միջին հաշվով յուրաքանչյուր գյուղից ավել էին պահանջում 50 հազար ղուռուշ կամ 50 ոսկի: 1907թ. Հայաստանի մի շարք վայրերում սովի ճիրաններում հեծկլտացող հայ գյուղացիներից սկսեցին պահանջել անցած 20-25 տարիների «չմուծված» հետևյալ տուրքերը:

Բացի կառավարական հարկահաններից, հայ գյուղերից հարկերի գանձմանը մասնակից էին դառնում մեծ թվով պաշտոնյաներ ու զինվորականներ: Սրանք ամիսներով աշխատավարձ չէին ստանում, ուստի իրենց չստացածը փոխհատուցելու համար հնարում էին զանազան միջոցներ, այդ թվում ձեռք էին գցում հարկահանի՝ գրավոր հաստատված իրավունք: Դիմելով կառավարական հաշվակալ տնօրենին (մուհասեբեճի) և նրան փեշքեշ տալով՝ այդ պաշտոնյաները ձեռք էին բերում մի կտոր թուղթ (լիազորագիր)՝ իրենց փափագած գյուղից (գյուղերից) տուրքեր գանձելու համար, և անմիջապես

* 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին Տարոնում մեկ լիդրը հավասար էր 9,621 կգ, Սասունում 6, 552կգ:

[1] Տե՛ս **«Խարիսխ»** (Թիֆլիս), N 22, 28 հուլիսի 1907թ.:

գործի էին անցնում:

Այն թուրքերը, որոնք բանակի պարենավորման պայմանագիր ունեին զինվորական իշխանությունների հետ և իրենց պարտավորությունները կատարելուց հետո չէին ստացել ակնկալիք գումարը, նույնպես դիմում էին հաշվակալական տնօրենին և նրանից վերցնում հարկերի գանձման արտոնագիր՝ իրենց նախասիրած գյուղերի վրա: Ձեռք բերելով այդ իրավունքը՝ առանց ժամանակ կորցնելու նրանք անձամբ չտապում էին գյուղերը կամ իրենց ստորադաս պաշտոնյաներին էին ուղարկում հարկեր հավաքելու համար:

Այսպիսի պարագաներում ո՛չ օրենք գոյություն ուներ, ո՛չ էլ խիղճ: «Ամեն մեկը կը փորձեր բան մը փրցնել, – գրում էր մշեցի Սարգիս Բդեյանը: – Խորհող չկար, թե երբ այս ժողովուրդը բոլորովին ուժասպառ ըլլայ, այլևս ի՞նչ պիտի կրնային գանձել յառաջիկայ տարին»[1]:

Հրաման էր տրված հարկատուների հետ վարվել ամենախիստ կերպով, տուրքերը գանձել արագ՝ չթողնելով ոչ մի ապառիկ: Թուրքական ռեժիմի ներկայացուցիչները ևս՝ թափիլտաչչիները (հարկահավաքները) թահսիլդարները, վերկի-մեմուրիները և զապթիեները, խումբ-խումբ, հերթով լցվում էին հայաբնակ գավառները և տուրքերը լրացնելու համար ապշեցուցիչ վայրագություններով գրավում ամեն ինչ: Օր չէր անցնում, որ հարկահանների մի ոհմակ չմտներ գյուղ՝ նորանոր հարկեր պահանջելու: Թե ինչ հարկեր էին և ինչի համար, դա միայն իշխանությունների ներկայացուցիչների իմանալու բանն էր. հային միայն մնում էր պահանջածը տալ: «Տու՛ր առանց հարցնելու և տրտնջալու», – սպառնում էր հարկահանը, որը չէր ուզում լսել «չկա» բառը: «Տու՛ր և ո՛չ մի խոսք»:

Որքան տալիս էին, նորից էին պահանջում: Պահանջում էին արյունոտ խարազանով՝ առանց խնայելու սեռ ու տարիք: Գյավուրներին կենդանի սպանելու համար յուրաքանչյուր հարկահավաք ազատ էր հնարելու ցանկացած նորանոր չարչարանքներ՝ ծաղր ու ծանակ, ծեծ ու ջարդ, անգութ գանակոծում: Սոսկումը վերջ չուներ: Տուրք ուզողները պոկում էին տղամարդկանց բեխերը, նրանց ստիպում 5-6 օխա ջուր խմել, գոմերում կապում էին տավարի շարքում, երեսներին քսում աղտեղություններ, բերանները լցնում անասունի աղբ, գլխիվայր կախում ախոռի մեջ և այլն:

«Որտեղի՞ց տամ» հարցի պատասխանը գտել էր ինքը՝ կառավարությունը: Երբ հայ գյուղացին հայտնում էր տուրքերը վճարելու իր անկարողության մասին, հարկահավաքի մոտ հայտնվում էին հարուստ քրդեր: Հարկահավաքը գյուղացուն դիմելով ասում էր. «Քո ունեցած պարտքերը թող այս բեկերը վճարեն, հետո դու կվերադարձնես նրա պարտքերը տոկոսներով»: Առանց ուշադրություն դարձնելու գյուղացիների լաց ու կոծին՝ քուրդը հանում էր քսակը և նրանց ներկայությամբ ոսկիները հաշվում ու տալիս պաշտոնյային:

[1] **Սարգիս և Միսակ Բդեյան**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 238:

Երկար չէր տևում քուրդը գյուղացուց խլում էր վճարածից տասնապատիկ ավելի արժեք ունեցող կալվածքներ:

Մշո դաշտի հայ գյուղացիության երեք քառորդը բառիս բուն իմաստով մատնված էր բացարձակ չքավորության՝ չունենալով մի հավ անգամ: Այս պայմաններում գյուղի ամբողջ «պարտքը» ծանրանում էր մնացած մեկ քառորդ բնակչության վրա, որը դեռ չէր լքել հայրենի եզերքը այն պատճառով միայն, որ, պանդխտության մեջ հարազատ ունենալով, ամսեամիս նրանից ստանում էր որոշ գումար և հազիվ կարողանում էր քարշ տալ իր թշվառ գոյությունը՝ առանց ոտքերին տրեխ ունենալու՝ սնվելով միայն կլկլրլե սև հացով, որ անասունն անգամ հազիվ էր ուտում:

Ահա դրսից ստացած այս չնչին գումարների վրա նույնպես տնկված էին հարկահանների աչքերը: Գյուղացիք դա էլ ստիպված տալիս էին «պարտքի» դիմաց, բայց նորից չէին կարողանում իրենց օձիքն ազատել: Նրանք երբեմն համարձակվում էին աղաչանքով դժգոհել, ասելով.

«Աղա, չէ՞ որ մեր գյուղի քեթիպը (գրագիր), գյուղապետը աւելիով ցոյց տուած էին մեր պարտքը, ու մենք վճարած էինք բոլորն ալ, թէ ի՞նչ հալով, այդ ալ՝ Աստուած գիտէ, այս ի՞նչ առնելիք է, որ հիմա նորէն կը պահանջէք՝ դեռ տարին չլրացած»:

Հարկահանի պատասխանն էր լինում.

«Օղուլ, կառավարութիւնը յանձնարարած է մեզի, որ այդ գումարները գանձեն ձեզմէ. մենք հարցուցած ենք կառավարութեան, թէ այդ գիւղը ունի՞ այդքան պարտք, որ երթանք գանձենք: Մեզի պատուիրուած է, որ երբ մեզի այդ տեսակ հարցում ուղղուի, մեր պատասխանը պիտի ըլլայ. «Վեր, **սորմա**», այսինքն՝ ինչ որ ձեզմէ կը պահանջուի, տուէք, բայց մի հարցնէք, թէ որո՞ւ հաշուոյն է, որ կը գանձուի»[1]:

Չկարողանալով դրամ գտնել՝ հարկահավաքները կողոպտում էին տների բոլոր իրերն ու երկրագործական գործիքները: Երբ այլևս շարժական ոչինչ չէին գտնում, նրանք գրավում ու աճուրդի էին հանում խեղճ ու կրակ պարտապանի հողերը, նրա ձեռքով կտրատել տալիս իր այգիների վերջին պտղատու ծառերը, քանդել տալիս դեռևս կանգուն նրա տունը, գոմերը, ախոռները, մարագները, հանել տալիս կաղնու հաստ գերանները և տանելով վաճառում որպես շինափայտ կամ վառելափայտ:

Արդեն սովորություն էր դարձել, որ գյուղացիները կալատեղից տուն գան՝ առանց ցորենի հատիկ անգամ բերելու: Նրանց ամբողջ վաստակը տուրք էր հաշվված: Երկրագործ դասակարգը գլորվում էր անկումից անկում: Մարդկային թշվառությունը ներկայանում էր աննկարագրելի զարհուրելի պատկերով, որի պայմաններում մեռնում էր ամեն ձգտում, իդեալ, ինքնագործունեություն:

[1] **Սարգիս և Միսակ Բդէեան**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 139:

Սարգիս Բդեյանը վկայում էր, որ քուրդ հարկահաններն այլևս ոչխար ու տավար չէին թողել հայկական գյուղերում: Վա՜յ նրանց, ովքեր ոչխարի տուրքը (խամզուր) տալուց հետո, մեկ-երկու տավար կամ ոչխար փախցնելով տարել պահել էին ուրիշ տեղ: «Այդ պարագային, - գրում էր նա, - անոր տունը, ինչ որ տեսնէին հոն՝ կարասներ, կաղամբի բրիկներ, ամաններ եւ այլն, բոլորն ալ ջարդ ու փշուր կ'ընէին, կիներու գլխուն մազերէն քարշ տալով՝ մինչեւ պաշտօնեայի սենեակը կը տանէին: Խեղճ երեխաները իրենց մայրերուն ետեւէն վազելով, լալով ու աղաղակներով՝ օդը կը թնդացնէին: Բայց այդ պահուն ո՞ր պաշտօնեայի խիղճն էր, որ պիտի գթար: Կնոջ կ'ըսէին.

- Կամ մարդուդ տեղը ցոյց պիտի տաս, և կամ դուն պիտի բանտարկուիս անոր փոխարէն:

Խեղճ կինը ի՞նչ գիտնար թէ իր ամուսինը ու՞ր պահուըտած է: Մեծելով և երեսին մուր քսելով, վարտիքի մէջ կատու ձգելով և շատ անգամ ալ՝ հոն բանտարկուած պահելով, իրենց պիղծ կիրքերուն յագուրդ կուտային: Եւ մինչեւ որ ամուսինը չգար ու չյանձնուէր, թող չէին տար: Եւ երբ ամուսինը հարկադրուէր երեւան ելլելու, խեղճին գլուխը ի՞նչ խաղեր կը խաղային: Բան ու գործ չունիս, ըսէ թէ «ուրիշ տեղ գացեր էի՝ դրամ ճարելու, բայց չկրցայ գտնել»: Կը մերկացնէին, վրան պաղ ջուր լեցնելով՝ կը ծեծէին, գլուխն ի վար կը կախէին օրերով, մինչեւ որ իր զավակներու միակ ապավէնն եղող կովը առնէին ձեռքէն ու ազատ ձգէին զինք:

Շատ մը թուրքեր, այդ քյուրտերու արյունլուայ ձեռքերը համբուրելով, իրենց խնդակցությունը կը յայտնեին»[1]:

Դեռ մի կողմ թողած հազարավոր հարկահանների լկտի արարքներն ու հայհոյանքների տարափը, որ թափում էին «գյավուրի» հավատի, կրոնի, խաչի, եկեղեցու, մի խոսքով՝ բոլոր նվիրական սրբությունների վրա, անմասն չէին մնում նաև ընտանեկան սրբությունները, ընտանեկան պատիվը:

1907թ. փետրվարին հարկահանները Էրզրումի վիլայեթի Ալիճե գյուղ էին մտել Ֆազի անունով մեկի գլխավորությամբ: Դիմելով գյուղացիներից մեկին՝ Մկրտչին, որ ի վիճակի չէր պահանջածը տալու, Ֆազին նրա երեսին գոչել էր. «Մեռնէք, սատկէք, պիտի գանձվի այդ տուրքը: Ձեր տունը, անկողինը, կահ-կարասին, հավը ու ամեն ինչը պիտի ծախէք՝ պահանջվող դրամը տալու համար: Եթե դա էլ չբավականացնի, պիտի գնաք քաղաք և այնտեղ հարուստներին ծախեք ձեր կնկա, աղջկա, հարսի պատիվը՝ տուրքը վճարելու համար»[2]:

Հարկահանները պարտապանի նկատմամբ «մեծահոգություն» էին հանդես բերում՝ որոշ պարտքերի դիմաց բռնաբարելով նրա կնոջը, հարսին, աղջկան: Նահապետական հայ գյուղացին պատրաստ էր տալ ամեն բան՝ և՛ գույք, և՛ կյանք, բայց ոչ երբեք պատիվը: Այդպես էր եղել դարեր շարունակ,

[1] **Սարգիս և Միսակ Բդէեան**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 139:
[2] **«Դրոշակ»**, N 3 (181), մարտ, 1907, էջ 39:

այդպիսին էին իր ազգային ավանդույթները, բայց հիմա նա ընկճված էր, այլևս անուժ էր դիմադրել անեզր չարիքին:

Ժողովուրդը մրմնջում էր.

«Մեր կյանքը դժոխք է, մեր ապրելը՝ զուր»:

ՍՈՎԻ ՈՍԿՐՈՏ ՁԵՌՔԸ

Ավազակային որջերի արանքում ապրող հայ ժողովուրդը հոժար էր նույնիսկ տանելու այդ ամեն արհավիրքն ու տանջանքները, եթե իրեն թողնվեր գեթ չոր հաց: Բայց դա էլ չուներ:

Զանգվածային կոտորածներով ու անհատական սպանություններով անցած տասնամյակներին սուլթանը չէր կարողացել հասնել իր գլխավոր նպատակին՝ Հայաստանը տեսնել առանց հայերի: Այժմ այդ խնդրի լուծումը համիդը գլուխ էր բերում գերազանցապես իր ոճրագործությունների չար արգասիք-պսակով՝ սովի միջոցով, որը երկիրը հայաթափելու ծրագրին նպաստող միջոցներից ամենաարմատականն էր:

Անօրինակ ճնշումները, հարստահարումները, բռնագրավումները, անտանելի հարկերը անխուսափելիորեն հասցրին համատարած սովի, որը տիրել էր հայկական հասարակության համարյա բոլոր խավերին[1]: Սևաբախտ, չարատանջ տաճկահայը խաղում էր գերմարդկային տանջանքների վերջին արարը, կրում սատանայական ռեժիմի վերջին ամենածանր վճռական հարվածը, որը նույնքան կատաղի էր, որքան քուրդն ու թուրքը, նույնքան սպառնալից՝ որքան Մուշում ու Սասունում, Տիգրանակերտում ու Վանում կենտրոնացած զորքի սվինը: Սովը և սուրը միացել էին՝ ջնջելու ժողովրդին:

Սանձազերծված սովն արդյունք չէր անբերրիության կամ բնական այլ աղետների: Դա սովորական կամ պատահաբար առաջ եկած ժամանակավոր սով չէր, այլ անողոք վերջաբանն էր այն տմարդի քաղաքականության, որ թուրքական կառավարությունը շուրջ 30 տարուց ի վեր համառ հետևողականությամբ և ամենայն եռանդով գործադրում էր Թուրքիայի հայ ժողովրդի և հատկապես Վանի ու Բիթլիսի նահանգների նկատմամբ, որոնք իրենց հայաշատությամբ վաղուց թուրք կառավարության աչքի փուշն էին: Այլ խոսքով, տնտեսական չարիքը՝ սովը, սերտորեն շաղկապված էր քաղաքականության հետ: Դա արհեստական սով էր, որ ստեղծել էր սուլթանի կառավարությունը՝ ջնջելու համար կայսրության մեջ իր ամենաատելի տարրին՝ հայությանը: Այդ արհեստական սովը գալիս էր զուլումի երկրում բնաջնջելու, վերջ տալու դժբախտ թուրքահայի գոյությանը և, այդպիսով, ընդմիշտ լուծելու Եըլդըզ Քեոշքի համար մի սարսափելի ուրվական դարձած կենդանի «Հայկական հարցը»:

[1] Տե՛ս **«Երկիր»** (Թիֆլիս), N 20, 24 հոկտեմբերի 1906թ.:

Ականատեսը գրում էր. «Վրա էր հասել անաղմուկ քայքայման և անձայն հոգեվարքի շրջանը: Սովատանջ էին ամբողջ գյուղեր ու գավառներ: Սովի համատարած արհավիրքն իր ճիրանների մեջ էր առել ամենատարրական ապահովությունից զրկված հայ մարդուն, որը մահ էր որոճում իր մարող օջախի առջև»[1]:

Սովն իր ոսկրացած ձեռքը երկարել էր Դուրանի և Սասունի լեռներից մինչև պարսկական սահմանը՝ Պուլանըխը, Մանազկերտը, Ախլաթը, Մոտկանը, Խիզանը, Բիթլիսն ու շրջակայքը և այլն: Միայն Մուշի դաշտում 300 000 հայությունից 100 000-ը հացկարոտների բանակ էր՝ իր սև բախտի հետ:

Ո՞վ էր տեսել կամ լսել, որ ցորենի շտեմարան Մշո դաշտն ամեն օր սովից մեռած տասնյակ դիակներ թաղեր: Քաղցից տառապում էր Խլաթը, որի սովալլուկ հայերը 1906թ. գարնանից իրենց գոյությունը քարշ էին տալիս մուրալով: Բաղեշի շրջակա Երանա և Մոկունք գավառակների թշվառությունն ու սովի գործած ավերներն աննկարագրելի էին: Ողբալի վիճակում էին Կարճկան գավառի քաղցածների ահագին լեգեոնները: Սպարկետ գավառում միահեծան տերը դարձյալ սովն էր: Սովի տիրույթն էր նաև Մոկսը: Գյավաշ գավառում ցնցոտիներով սովյալներին թիվ չկար: Բայց ոչ մի տեղ թշվառությունն այնպես համատարած չէր, ինչպես Կարկառ գավառում: Մոտավորապես նույն վիճակում էր Դուրանը[2]:

Վանից Թիֆլիս ուղարկած մի թղթակցության մեջ ասված էր. «Սովն իր ավերիչ ընթացքով հասել է գագաթնակետին: Այլևս համբերել և տոկալ անկարելի է»[3]:

«Մշակ» թերթը քաղվածքներ էր արել Վանից 1907թ. ապրիլի 2-ին Թիֆլիս՝ իր տաճկահայ ընկերոջը գրած մի մասնավոր նամակից, որում կային այսպիսի տողեր.

«Քեզ ես ավելորդ եմ համարում երկար գրել ներկա վիճակի մասին. վիրավոր գազանի նման մենք մռնչում ենք համատարած թշվառության մեջ ... Գյուղացիք, որպեսզի բացված սարալանջերից բանջար բերեն իրենց գոյությունը քարշ տալու համար, 6-8 ժամ ճանապարհ են գնում ... Օրերով կորնգանի սերմ են ուտում:

Չկա, ոչինչ չկա. այս տարի պիտի քայքայվեն տնտեսության վերջին մնացորդները, և ժողովուրդը պիտի ցրվի, մեռնի կամ կրոնափոխության դիմի: Ոչ ոք չի կարող այդ տարերային գահավեժի առաջքն առնել: Մահն արդեն չոքել է այս աշխարհի վրա ...»[4]:

Նույն «Մշակ» թերթը տպագրել էր Մշո գավառի Ալվառինջ գյուղացի Հովսեփ Ավետյանի նամակը, որ ուղարկել էր Բաթում բանվորության գնացած

[1] Մատենադարան, **Արշակ Ալպոյաճյանի** արխիվ, թղթ. N 3, վավ. 3[2], թ.2:
[2] Այդ մասին տե՛ս **«Ալիք»** (Թիֆլիս), N 5, 5 հուլիսի 1906թ.:
[3] **«Խարիսխ»**, N 19, 25 հուլիսի 1907թ.:
[4] **«Մշակ»**, N 98, 12 մայիսի 1907թ.:

իր եղբորը: Աղեկտուր ողբով նա գրում էր.

«Աչնան խրկածդ 10 ոսկին մենակ քալամի գին մնաց մեր ձեռք. այն օրեն մինչ հիմա անոթի ու ծարավ ու խեղճ վիճակի մեջ ենք և Աստուծոյ հավատայ, որ շաբաթ եղած է որ բնավ մեր թոնրին մեջ հաց եփած չէ: Չէ՞ որ իմ գրած նամակի մեջ յիշած էինք թե պատասխանին հետ մեզի դրամ խրկեք. ու՞ր է, բնավ մեզի պատասխան մը չը տուիք: Սիրելի եղբայր, մեկ բաշխիր ցախ ծախելով եփված հաց առի, տարայ տուն, ամեն մեկուն մեկ հաց չեղավ: Հապա այդ տեսակով ի՞նչպես պիտի կրնամ այսչափ ընտանիք եփված հացով պահել ... Ահավասիկ, եղբայր իմ, մենք գոմով ու քոչով քո ձեռքերուդ տեղ ուրքերդ կը համբուրենք, որ այս գիր ձեռքիդ հասածին պես մեզի 20 ոսկի խրկես, որ տամ իմ անտանելի պարտքեր և երկու կամ երեք քիլա գլխել առնենք որ այս ձմռան սովամահ չը լինենք: Հավատայ Աստուծոյ, որ մեր գյուղին մեջ երկու անձ անոթութենեն մեռան. մեկը Գորե Պետոն, մյուսն ալ Հլղաթի Հարս ...»[1]:

Հայկական գյուղերը լցված էին սովից առաջացած հիվանդություններով: Ժողովուրդը չվարած չցիտեր ուր և ում դիմեր, իսկ անգութ իշխանությունները շարունակում էին սառնասրտորեն իրականացնել հայերին սովամահ անելու դիվային ծրագիրը:

Կարծես այդ բոլորը քիչ էին, պակասը լրացնելու եկավ բնական աղետը:

1907թ. մարտի 29(16)-ին Բիթլիսի վիլայեթում սկսվեցին երկրաշարժի հզոր ցնցումներ: Բիթլիս քաղաքի բազմաթիվ տներ և շրջակա շատ գյուղեր քանդվեցին: Ամբողջովին ավերակների մեջ էին Խուլթիկ, Բարխանդ, Գոմս, Խրմպլզուր, Ամպ-Կորվու հայկական գյուղերը: Եղան բազմաթիվ զոհեր ու վիրավորներ:

Բարբարոսաբար սկզբնական ցնցումները թեթև էին եղել, որի հետևանքով ահաբեկ ժողովուրդը կարողացել էր շինություններից դուրս գալ, բայց գոմերում մնացած անասունների մեծ մասը ոչնչացել էր: Մարդիկ թափվել էին քաղաքից դուրս և խուրջերից ու փսիաթներից պատրաստել «վրաններ»: Շարժի օրը սաստիկ ձյուն էր տեղացել, իսկ հետո 3 - 4 օր անընդհատ անձրև էր եկել: Շարժը շարունակվել էր մի ամբողջ շաբաթ, և ամենքն այդ խիստ եղանակի պայմաններում ստիպված մնացել էին դաշտում:

ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Տաճկահայաստանից եկած աղեկտուր ձայները, հայկական գավառների սովը և գերմարդկային տանջանքները ցնցել էին ողջ հայության սիրտը: Օրհասական դրության մեջ ընկած թուրքահայն աղիողորմ հառաչանքներով իր

[1] «Մշակ», N 58, 17 մարտի 1907թ.:

վրա էր հառել ամենքի հայացքը, որոնք սոսկում էին իրենց եղբայրների ու քույրերի անտանելի կացությունից և, մոռանալով ամեն ինչ, լարում էին իրենց ուժերը, գործ էին դնում ամեն միջոց՝ նրանց ազատելու դժոխային վիճակից:

Տարոնից «Դրոշակի» խմբագրությանն ուղարկած 1905-ի հոկտեմբերի 6 թվակիր նամակում նրա հեղինակը գրում էր.

«Պետք է դիմել, աղաղակել, ստիպել մեր հարգելի ազգայիններին և հեռավոր սրտակից եղբայրներին, որ փութան դրամական նպաստ հասցնելու, ապա թե ո՛չ, Տուրուբերանի հայ ժողովուրդը կորած է. այլևս դիմանալ անհնար է: Ո՞ր Հիսուս, ո՞ր ազգ, ո՞ր ժողովուրդ տարավ այս վերջին 20 տարվա Տարոնոյ հալածանքը և անսասան մնաց ...»[1]:

Անդրադառնալով տաճկահայերին ցույց տրվելիք անհետաձգելի օգնության հարցին՝ «Մշակը» գրում էր.

«Տաճկահայի ներկա ճգնաժամն իր բարդ ու ծանր հետևանքներով եզակի լինելով՝ այս անգամվա անելիք օգնությունը նրա գոյության և լինել չլինելու հարցն է ասպարեզի վրա դնում ... Չէ՞ որ մարդասպան փաղիշահի ծրագիրն է այդ: Այս անգամ էլ պետք է հնարավորության չափ ուշքի բերել տաճկահային»[2]:

Առաջին և երկրորդ պետական դումաների հայ անդամները մի քանի անգամ հարց էին բարձրացրել, որպեսզի թուրքահայերի օգտին հանգանակությունները կատարվեն լեգալ, այն նպատակով, որ կառավարությունը, ելնելով մարդասիրական սկզբունքներից, ինքը ևս նպաստի այդ գործին: Հայ հասարակությունը պահանջում էր հավաքված գումարները դնել Կ.Պոլսի ռուսական դեսպանի տրամադրության տակ՝ նրան վստահելով այդ գումարների բաժանումը սովահար հայկական նահանգներին:

Բանն այն էր, որ երբ թուրքաց իշխանությունները նկատում էին թուրքահայերի գործերին հայ հեղափոխական կուսակցությունների կողմից որևէ կասկածելի միջամտություն, ամենայն խստությամբ անհնարին էին դարձնում որևէ հաղորդակցություն ռուսահայության և տաճկահայության միջև: Ուստի տաճկահայերին հաց, ուտելիք, դրամ հասցնելու համար անհրաժեշտ էր գործել վերին աստիճանի զգույշ, օգնությունը կատարել այնպիսի եղանակներով, որ Կ.Պոլսի կառավարության մոտ չհարուցեր որևէ կասկած, որպեսզի նա առիթ ու պատրվակ չունենար արգելելու օգնությունը: Հենց այդ պատճառով կտրուկ ու բացորոշ դրվում էր այն պահանջը, որ սովատանջ թուրքահայերին օգնելու գործին չպետք է միջամտեն անլեգալ հեղափոխական կուսակցությունները և, առաջին հերթին՝ Հ.Յ.դաշնակցությունն ու Հնչակը: Գործի շահը պահանջում էր այն դնել միանգամայն լեգալ հողի վրա, որպեսզի

[1] «Դրոշակ», N 12 (165), նոյեմբերի երկրորդ կես, 1905, էջ 186:
[2] «Մշակ», N 93, 6 մայիսի 1907թ.:

թե՛ նվիրատու հասարակությունը և թե՛ նպաստ ստացող սովատանջները կարողանան միշտ բաց ու հայտնի հաշիվ տալ և ստանալ: Անլեգալ հեղափոխական կուսակցությունների ու խմբերի միջամտությունը միանգամայն կխափաներ օգնության գործը, և նվերները չէին կարող հասնել իրենց նպատակին:

Այդ մոտեցումը արդյունավետ եղավ, արդյունքների տեսակետից՝ հուսադրող:

Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հանձնարարականով 1907թ. մարտին Թիֆլիսում ստեղծվել էր կենտրոնական հանձնախումբ՝ «Հանգանակիչ մասնաժողով» անունով, որը պետք է կազմակերպեր դրամահավաք՝ ի նպաստ Յուրքահայ տառապյալ ազգաբնակչության:

Մասնաժողովը բաղկացած էր հետևյալ անձերից՝ Համբարձում Առաքելյան, Ավետիք Արասխանյան, իշխանուհի Սոֆյա Արղության, Գաբրիել Կաֆյան, Զավեն Տիգրան, տիկ. Հայկանուշ Մարտիրոսյան, Ալեքսանդր Մելիք-Ազարյան, Սամսոն Հարությունյան, Առաքել Սարուխանյան, բժ. Կարապետ Ստեփանյան, Քրիստափոր Վերմիշյան և Ալեքսանդր Քալանթար: Հանգանակիչ մասնաժողովն ընտրել էր իր դիվանը հետևյալ կազմով՝ Ալեքսանդր Մելիք-Ազարյան՝ նախագահ, Սամսոն Հարությունյան՝ փոխնախագահ, Առաքել Սարուխանյան՝ գանձապահ և Համբարձում Առաքելյան՝ քարտուղար[1]:

Հայրապետական կոնդակով 1907թ. մայիսին հաստատելով հանգանակիչ մասնաժողովի կազմը՝ կաթողիկոսը միաժամանակ միջնորդություն է հարուցում Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով թույլատրել հանգանակություն բանալ «ի նպաստ Թուրքական Հայաստանի մեր սովյալ և բազմակարոտ եղբայրներին»: Փոխարքան ընդառաջ է գնում և հաստատում է մասնաժողովի գործելու իրավունքը: Կաթողիկոսին ուղարկած իր N 22311 գրությամբ նա հայտնում է, որ նախաձեռնությունը հավանության է արժանացել ներքին ու արտաքին գործերի մինիստրների կողմից և արդեն արտոնված է սկսել հանգանակությունը:

Փոխարքայի գրությունը գոհունակություն առաջ բերեց հայկական շրջաններում, տարբեր ուղղությունների մամուլի էջերում:

Թիֆլիսում լույս տեսնող «Անկախ մամուլ» թերթը գրում էր.

«Մինչև ռուսական ազատագրական շարժման բռնկումը՝ տաճկահայերին օգնելու մասին խոսելը, առավել ևս՝ գործելը, մեզանում՝ հակակառավարական գործ էր համարվում և խստությամբ պատժվում: Այսօր, սակայն, մենք ոչ միայն կարողանում ենք ազատորեն խոսել տաճկահայկական խնդրի մասին, այլև իրագործված ենք տեսնում այնպիսի մի փափագ, որպիսին է Ռուսաստանի սահմաններում լեգալ (կառավարությունից թույլատրված) կերպով հանգանակություն անելը մեր տառապյալ եղբայրների համար»[2]:

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. N 3, վավ. 5[4]:
* Նկատի է առնված 1905-1907թթ. ռուսական մեծ հեղափոխությունը:
** Այսինքն՝ ռուսական կայսրությունում:
[2] «Անկախ մամուլ» (Թիֆլիս), N 3, 4 դեկտեմբերի 1907թ.:

Տեղեկանալով փոխարքայի գրությանը՝ հանգանակիչ մասնաժողովը դիմեց Կովկասի հայ հասարակության բոլոր խավերին՝ կոչ անելով չզլանալ նպաստ բերելու Թուրքական Հայաստանի սովատանջ արյունակիցներին: Հույս էր հայտնվում, որ հայ հասարակությունը խորապես կ'ըմբռնի խնդրի լրջությունը և ասպարեզ կիջնի առատաձեռն նվիրատվություններով: «Ստացված նվիրատվությունների և Թուրքական Հայաստան ուղարկվելիք դրամական նպաստների մասին պարբերաբար հաշիվ կներկայացվի հասարակությանը՝ լրագրության միջոցով»[1], - ասված էր կոչի մեջ:

Հանգանակիչ մասնաժողովի հրատարակած կոչին լայն արձագանք տվեց հայ հասարակությունը:

Թուրքահայոց սովի առաջն առնելու և նրանց բժշկական օգնություն ցուցաբերելու համար Անդրկովկասում և Ռուսաստանի հայաբնակ վայրերում քաղաքական, հասարակական, բարեսիրական կազմակերպությունները ծավալուն աշխատանք սկսեցին՝ հավաքվում էր դրամ, հագուստ, դեղորայք:

Բավական մեծ գումարներ էին նվիրաբերում արդյունաբերական ընկերությունները, զանազան կազմակերպություններ: Ինչպես և սպասելի էր, խոշոր գումարներ հավաքվեցին Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Գանձակում, Մոսկվայում, Նոր Նախիջևանում:

Այսպես, Բաքվի «Արամազդ» նավթարդյունաբերական ընկերության ղեկավարությունը 1907թ. մայիսի 8-ին Կ.Պոլսի ռուսաց դեսպան Զինովևին ուղարկեց 5000 ռուբլի՝ խնդրելով այն տաճկահայ սովյալներին հասցնել դեսպանության կամ ռուսական ու ֆրանսիական հյուպատոսների, ինչպես և հայոց պատրիարքարանի ու առաջնորդարանների միջոցով: «Մատուցանելով Ձերդ Գերազանցությանը մեր խորին երախտագիտությունը, մենք համոզված ենք, որ Դուք անուշադիր չեք թողնի մեր խնդրանքը»[2], - ասված էր «Արամազդ» ընկերության կողմից Զինովևին հղած գրության մեջ:

Դաշնակցության ղեկավարությունը Հ.Յ.Դ. կովկասյան մարմիններին հանձնարարել էր 100 000 ֆրանկի դրամական օգնություն հասցնել Թուրքահայաստանի սովյալներին[3]: Քանի որ այդ գումարը կուսակցությունը չէր կարող ուղարկել իր անունից, ուստի դա իրականացվեց Կովկասի բարեգործական կազմակերպությունների միջոցով:

Նվիրատվություններ էին անում նաև անհատ անձինք՝ գերազանցապես բանվորներ, գյուղացիներ, մանր առևտրականներ, առանձին դեպքերում նաև մեծահարուստներ: Այսպես, երևանցի Հարություն Շամիլյանը Կովկասի Կենտրոնական նպաստամատույց հանձնաժողովին հանձնեց 20 000 ռուբլի, որից 10 000-ը՝ Թուրքիայի հայ սովյալներին[4]:

[1] «Անկախ մամուլ» (Թիֆլիս), N 3, 4 դեկտեմբերի 1907թ.:
[2] «Մշակ», N 97, 11 մայիսի 1907թ.:
[3] Տե՛ս «Դրոշակ», N 6-7(184), հունիս-հուլիս, 1907, էջ 102:
[4] Տե՛ս «Մշակ», N 100, 6 սեպտեմբերի 1907թ.:

Սակայն միջոցների հանգանակումը խնդրի մի կողմն էր միայն. այն ավելի դյուրին էր, քան հանգանակածի բաշխումը Թուրքահայաստանում: Արդյո՞ք դա տեղի Թուրք և քուրդ բնակչությանը հայերի հանդեպ նոր խժդժությունների ոգեթ չէր տա: Վտանգ կար, ավելին՝ այն անխուսափելի էր:

«Անկախ մամուլ» Թերթը գրում էր. «Եթե Կովկասից գնացած օժանդակությունը բաժանվի միայն հայերին, սուլթանի կառավարությանը դժվար չի լինի անգիտակից կամ կիսագրագետ Թուրք ու քուրդ խուժանին տրամադրել հայերի դեմ: Եվ, վերջապես, ի՞նչ ձևով և ո՞ւմ միջոցով նպաստները պետք է հասցնել Տաճկաստան՝ ավերի ու Թալանի այդ երկիրը»[1]:

Միակ ելքը Կովկասից ստացված օգնության մի մասը հարևան քրդերին ու Թուրքերին հասցնելն էր, և այդպես էլ արվեց:

Ռուսահայության կողմից ցույց տրվող օգնությունը ներառում էր նաև դեղամիջոցների հայթայթումն ու առաքումը: Դա հրատապ էր, քանզի Թուրքահայերի սովահարությանը հետևում էր հյուծախտը, մոլեգնում էին նաև զանազան տարափոխիկ հիվանդություններ:

Բժշկական օգնության եզակի նախաձեռնություն էր հանդես բերել դաշնակցական հայտնի գործիչ, բժիշկ Ցակով Զավրիևը (Հակոբ Զավրիյան): Նա մտածել էր իրականացնել մի կարևոր ձեռնարկ՝ տառապյալ հայերին բժշկական և սանիտարական օգնություն ցույց տալու համար մեկնել Սասուն և Մուշ:

Լայն կապեր ունենալով Պետերբուրգի բարձր հասարակության շրջաններում բժ. Զավրիևը հարցը բարձրացրել էր Ռուսաստանի արտգործմինիստրության առջև, իսկ սա իր հերթին հանձնարարել էր Կ.Պոլսի ռուսաց դեսպան Իվան Ալեքսեևիչ Զինովևին՝ փորձել ձեռք բերել Թուրքական կառավարության համաձայնությունը: Դեսպանը Թուրք կառավարությանը հղած միջնորդության մեջ գրել էր, որ բժ. Զավրիևը երեք ֆելդշերով նպատակ ունի բժշկական օգնություն ցույց տալ Սասունի և Մշո դաշտի ոչ միայն հայերին, այլև մուսուլմաններին: Նա նշել էր, որ խումբն իր հետ տանելու է մեծ քանակի դեղորայք և առողջապահական-ախտահանիչ նյութեր, որ խմբի ծախսերը հոգացվելու են ինքնուրույն նվիրատվություններով, որոնք ուղարկվելու են իրեն՝ Զինովևին՝ բժ. Զավրիևին հասցնելու համար: Վերջինս ռուսաց դեսպանին պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնելու ստացած գումարների ծախսման, բժշկասանիտարական օգնություն ցույց տալու մասին: Դեսպան Զինովևն իր միջնորդագրում Թուրք կառավարությանը նաև տեղյակ էր պահում, որ բժ. Զավրիևի միսիան շտապեցնելու և նրան դյուրություններ հայթայթելու համար իր երկրի արտգործմինիստրությունը Կովկասի բարձր իշխանության սահմանագծային հարաբերությունների վարչության պաշտոնյա Կախանովսկուն հանձնարարել է՝ ամեն աջակցություն ցույց տալ բժ. Զավրիևի ձեռնարկին, որպեսզի նա իր խմբի հետ սահմանից ապահով ուղևորվի

[1] «Անկախ մամուլ», N 3, 4 դեկտեմբերի 1907թ.:

մինչև Մուշ, եթե, իհարկե, ստացվի Թուրքական կողմի համաձայնությունը:

Ի վերջո հաջողվում է ձեռք բերել սուլթանական իրադե: 1905-ի գարնան վերջերին Զավրիևը Պետերբուրգից գալիս է Թիֆլիս, ուր նրան ընկերանում են Թադևոս Ամիրյանը, Մարգար Ժամհարյանը, մի վրացի և մի ուրիշ հայ[1]:

Թեև Թուրք կառավարությունը Զավրիևին Թույլատրել էր իր խմբով Թիֆլիսից անցնել Մուշ, բայց տեղ հասնելուց հետո նրանց զրկում են ազատ գործելու հնարավորությունից. բժշկական խումբը լիովին կզրկանում է: Հայերին խստիվ արգելվել էր մոտենալ բժշկին, իսկ եթե նրանցից որևէ մեկին, այնուամենայնիվ, հաջողվում էր ընկնել Զավրիևի մոտ, ենթարկվում էր պատժի:

Վերջապես մի քանի օր հետո բժիշկը առաջարկ է ստանում հեռանալ երկրից: Զավրիևը ստիպված է լինում դադարեցնել առաքելությունը: Մուշից վերադառնալուց առաջ նա գաղտնի հանդիպում է ունենում տեղի դաշնակցական կազմակերպության ներկայացուցիչների հետ, նրանց թողնում մի շոշափելի գումար՝ հիվանդներին բաժանելու համար[2]:

Այսպիսով, անհաջողությամբ է վերջանում ռուսական հովանավորության ներքո «օրինավոր» ճանապարհով Մուշ-Սասունին բժշկական օգնություն հասցնելու Ցակով Զավրիևի փորձը:

Սակայն այդ անհաջողությունը չթուլացրեց կովկասահայ կազմակերպությունների և անհատների ճիգերը, որոնք շարունակում էին ուղիներ փնտրել Թուրքահայոց տառապանքները թեթևացնելու համար: Իրենց ընտանիքներին և գյուղական համայնքներին՝ օգնության էին հասնում նաև Եվրոպայում, Ամերիկայում, Եգիպտոսում և այլուր գտնվող Թուրքահայերը:

Բոստոնի «Հայրենիք» Թերթը «Օգնեցեք Հայաստանի սովյալներուն» խորագրի տակ պարբերաբար տպագրում էր նյութեր Հայաստանի կացության մասին, տագնապ էր բարձրացնում և ամերիկահայերին կոչ անում օգնության ձեռք մեկնել հայրենիքում մնացած սովահար ժողովրդին[3]:

Կործանվող հայրենիքի ավերակների տակից հայտնվելով աշխատանքի վարձատրության բարենպաստ մթնոլորտի մեջ՝ արդեն ի բնե ժուժկալ ու կենսական համեստ պահանջներով Թուրքահայ գաղթականը կարողանում էր ոչ միայն իր ապրուստի միջոցներն ապահովել, վաստակի մի զգալի մասը տրամադրել հասարակական գործերին, որբախնամ, աղքատախնամ, կրթասիրաց, ուսումնասիրաց, գրադարանային և այլ անուններով բազմազան ընկերություններին ու միություններին, այլև տարեկան մի քանի տասնյակ ոսկի ուղարկել Երկիր: 1905-1907թթ. Թուրքահայաստանում ծայր առած համատարած սովի պայմաններում տարագրության մեջ գտնվող հայորդիներն իրենց համարյա ողջ վաստակածը ուղարկում էին հարազատներին և համա-

[1] Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Գ, էջ 355:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 356:
[3] Տե՛ս «Հայրենիք», N 21(411), 25 մայիսի 1907թ.:

գյուղացիներին:

Թուրքահայ սովյալներին կարևոր օգնություն էր ցուցաբերում նորաստեղծ հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ):

Միությունը հիմնադրվել էր 1906-ի ապրիլի 15-ին Կահիրեում (Եգիպտոս)՝ Պողոս Նուբար փաշայի նախաձեռնությամբ և մի քանի նշանավոր հասարակական գործիչների աջակցությամբ[1]:

ՀԲԸՄ-ն իր էությամբ համազգային էր ու մարդասիրական, հետևապես չուներ քաղաքական նպատակներ, կոչված էր օգնության հասնելու Պարսկաստանի, Ռուսաստանի և աշխարհի զանազան կողմերի հայերին, բայց ամենից առաջ՝ Թուրքիայի հայությանը, նպաստելու նրա մտավոր ու բարոյական զարգացմանը, նյութական ու տնտեսական կացության բարվոքմանը, հայ գյուղացիության համար հայթայթել հողատնտեսական միջոցներ, արհեստագործական գործիքներ, նրան տալ նախագիտելիքներ*:

Բարեգործական միության ստեղծումը համընկավ Թուրքահայաստանում ծայր առած ավերիչ սովին: Եվ միությունը հնարավորությունների սահմաններում հասնում էր սովյալներին:

Բայց տառապող հայությանը հասցրած եղբայրական օգնությունն ի վիճակի չէր փակելու համատարած սովի երախը և դարմանելու գերազանցապես դրա հետևանքով հիվանդություններ ձեռք բերած հազարավոր հայերի: Ո՛չ Կովկասահայությունը և ոչ էլ արտասահմանյան երկրների հայերը որքան էլ ջանքեր թափեցին, անկարող էին կանգնեցնել Թուրքահայոց անօրինական հարստահարումները, թեթևացնելու ահռելի հարկային բեռը, կանխելու նրանց սպանությունները, արգելք լինելու կրոնափոխությանը, Թուրքացմանն ու քրդացմանը, անկարող էին թեթևացնելու Թուրքական բանտերում տառապող հազարավոր հայ բանտարկյալների վիճակը:

ՏՆԱՔԱՆԴ ԳԱՂԹԸ

Մրմնջացող ցավերն ու թշվառությունը՝ սպանությունները և բանտային տանջանքները, ոստիկանական չդադարող հետապնդումները, անլուր հարստահարումները, տնտեսապես քայքայող հարկերը, ամենակուլ սովը Թուրքիայի և հատկապես Թուրքահայաստանի հայ բնակչությանը կանգնեցրին հասարակայնորեն փլուզվելու իրական հեռանկարի առջև:

1895-1896թթ. հետո հայի աղեկտուր հառաչանքն այնպես ուժգին չէր լսվել, բնաջնջումի երկյուղը նրան երբեք այնպես չէր սարսափեցրել, ինչպես 1905-1907 թվականներին, երբ հայ ժողովուրդը, ավելի քան երբեք, պատեպատ էր ընկնում գոյատևման մի ուղի գտնելու համար: Դավանափոխություն, ձուլում, օտարահպատակություն, գաղթ – այդ ամենը պաշարել էին նրա ամբողջ մտածմունքը: Նա դիմում էր ամեն ինչի՝ միայն թե ազատվեր իրեն պարուրած մղձավանջից:

Անելանելի վիճակից դուրս գալու համար հայերը մասսայաբար դիմում էին Վանի, Բիթլիսի, Էրզրումի և այլ տեղերի ռուս հյուպատոսներին՝ **ուղղափառություն կամ գոնե ռուսահպատակություն ընդունելու** խնդրանքով:

Այդ նպատակով 1907թ. գարնանը Կարսո դաշտի բոլոր հայ գյուղերը բազմաստորագիր բողոքագրերով դիմեցին Էրզրումի ռուսաց հյուպատոսին՝ ռուսահպատակություն ընդունելու համար: Թեպետ հյուպատոսը կտրականապես մերժեց խնդրանքը, բայց հարևան գավառների հայերը նոր դիմումներ հղեցին: Միայն Դերջանի գավառից ռուսաց հյուպատոսին դիմում-բողոքագիր ներկայացվեց Մաղկաթ, Հրանի, Կոթեր, Խումլար, Բասենի գավառից՝ Իշխու, Կրտապազ, Եղան, Պատիժուան, Գոմաձոր, Հարանիքար, Տորի, Մանծաղ հայկական գյուղերի հասարակության կողմից[1]: Այս անգամ էլ հետևեց կտրուկ մերժումը: Նույնպիսի մերժում էր գալիս նաև ռուսաց մյուս հյուպատոսներից: Իր հերթին իշխանությունը, ձեռք ձգելով բողոքողների ցուցակները, ձերբակալեց նրանց և, իբրև քաղաքական հանցագործների, նետեց բանտերը:

Ավելին, անվերջանալի աղետները Թուրքահայության մի մասի մոտ առաջ էին բերում ազգությունը փոխելու և ուրիշ ազգերի մեջ ձուլվելու տրամադրություն:

Հին հեղափոխական, դաշնակցական Մաթեոսի հուշերում վերարտադրված է իր զրույցը մի Թուրքահայ ուսուցչի հետ, որն արտահայտում էր շատերի կարծիքը: «...Վարժապետը աշխատում էր համոզել ինձ այն գաղափարում, – գրել է Մաթեոսը, – թե մեր ձգտումները համամարդկային բնույթ են կրում, քանի որ մեզ համար միևնույն է հայը, քուրդը, յոյնը և այլն, և այլն ազգությունները, որոնց վրայ նայում ենք հաւասար աչքով, ուստի ի՞նչ նպատակ ունի հայութեան գոյութիւնը պահպանել աշխարհիս վրայ, որպէս ուրոյն ազգութիւն, ինչո՞ւ են պէտք այնքա՜ն տանջանքները, հալածանքները, արիւնավերածութիւնները, երբ մեր նպատակից դուրս է անկախ Հայաստանը, ինչո՞ւ չաշխատիլ, չձգտիլ միանալու, ձուլուելու որեւէ մի զօրեղ ազգի հետ եւ այնպէս ապրիլ որպէս մարդ ...»[2]:

---

[1] Տե՛ս **Էդուարդ Լ. Մելքոնյան**, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937թթ., Երևան, 1999, էջ 6:

* Հազվադեպ էր, երբ մի ընկերություն ամենասեղմ միջոցում ունենար այնպիսի բեղմնավոր գործունեություն և ձեռք բերեր այնքան մեծ համակրանք ու ժողովրդականություն, ինչպես ՀԲԸՄ-ը: Բավական է ասել, որ եթե 1881թ. հիմնված Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (ԿՀԲԸ) իր գոյության մոտ 30 տարվա ընթացքում կարողացել էր հավաքել 200 000 ռուբլու հասնող դրամագլուխ, ապա 1906-ին ստեղծված Հայ բարեգործական միությունն իր գոյության երկու տարվա ընթացքում ունեցավ մոտ 60 հազար ռուբլու դրամագլուխ և բարեգործական նպատակներով ծախսեց ավելի քան 160 հազար ֆրանկ (տե՛ս Մատենադարան, **Արշակ Ալպոյաճյանի** արխիվ, թղթ. N 4, վավ. 6[3]):

---

[1] **«Դրոշակ»**, N 6-7 (184), հունիս-հուլիս, 1907, էջ 89-90:

[2] **«Հայրենիք»**, N 6(30), ապրիլ, 1925, էջ 139:

Ռուսահպատակության, ռուսաց եկեղեցու դավանանքն ընդունելու, առավել ևս՝ ուրիշ ազգերի մեջ ձուլվելու ձգտումը հայ գյուղացու վերջին հուսահատական ճիգն էր: Եվ երբ անգամ մերժվում էր դավանափոխությունը, նրան այլևս մնում էր երկու ելք՝ չլքել մայր հայրենիքը և մեռնել քաղցից, կամ, իր ցանկության հակառակ, դառը հեծեծանքով թողնել նվիրական սրբությունները և հեռանալ սևավոր երկրից, ուր հառաչանքից այրվում էր երկինքը, և հողը տնքում էր ցավերի բեռից, ուր կյանքն անեծք էր, մահը՝ փրկիչ:

Եվ Հայաստանի գյուղերը գունդառգունդ սկսեցին դատարկվել. հայ գեղջուկը թողնում էր պապերից ժառանգած «արտ ու ափը», տուն ու տեղ և, բեռնավորված ցավ ու արցունքով, ընտանիքով **գաղթում էր**՝ իր զավակներին մի կտոր հաց ճարելու համար:

Հնչակյան նշանավոր գործիչ, տեսաբան ու պատմաբան Լևոն Մարտիրոսյանը, որը նույնպես ժամանակին բաժանել է հայ պանդուխտի դառը ճակատագիրը, շատ տարիներ անց նկարագրել է տեսածը.

«... Դժբախտ հայերը իրենց ետևեն էին թողնում իրենց սիրելիները, իրենց սիրելի օճախը՝ անուշ ու լեղի յիշատակներով լեցուն. բայց հովը եկեր՝ զանոնք կը քշեր հեռուն, ծովերեն ու օվկիանոսներեն անդին. անծանոթ երկիր մը, ուր այլեւս Թուրքին աւերիչ ձեռքը իրենց օճիքեն չէր բռներ, իրենց կեանքին ու պատիւին վտանգ չէր սպառնար»[1]:

Հայաստանի սրտից՝ Վասպուրականից, Մշո դաշտերից, Դուրան-Բարձրավանդակից գաղթի քարավանները ձգվեցին դեպի Հայոց աշխարհի մյուս նահանգները և ավելի հեռու՝ կայսրության ուրիշ տեղեր: Այսինքն՝ այդ էտապում հայերը մի նահանգից գաղթում էին մյուսը, մի գավառից՝ մյուս գավառ՝ ազատվելու համար «սեփական» հոգեառ հարկահանների ձեռքից և մուրացկանությամբ իրենց գոյությունը մի կերպ քարշ տալու:

Վանի և Բիթլիսի վիլայեթներից հայերն իրենց ընտանիքներով հիմնականում փախչում էին Դիարբեքիրի և Հալեպի կողմերը, Դուրանի և Սասնո հայերի մի մասը գաղթում էր Ալաշկերտ, Խնուս, Պիշերի: Գաղթում էին միայն հայկական բնակավայրեր: Խնուսում, օրինակ, 360 գյուղերից հայաբնակ էին մնացել միայն 25-ը, և եկած գաղթականներն, առանց բացառության, լցնում էին հայկական գյուղերը:

Կարճկան գավառի Սորբ գյուղում ոչ ոք չմնաց. բոլորը գաղթեցին և ժամանակավոր կայան դարձրին Վան քաղաքից ոչ հեռու գտնվող մի հին գյուղի ավերակները: Կոթ գյուղում մնացել էին միայն քայլելու անընդունակ երեք ծեր կանայք՝ թառած անմարդաբնակ գյուղի իրենց տներում պահակելով ավերակները: Ըստուր գյուղի բոլոր բնակիչները գաղթել էին Ախլաթի կողմերը: 1907թ. վերջերին Կարճկան գավառի հայ գյուղերի մեծ մասը դատարկ էր: Սպարկետ գավառի բնակիչները գաղթում էին դեպի Մոկս: Նույն 1907թ.

[1] **Լևոն Մարտիրոսեան**, Կեանքի մը պատմը (Յուշեր և խոհեր), Պեյրութ, 1959, էջ 33:

Մոկաց գավառի հայերի 40%-ից ավելին ցրված էր տարբեր կողմերում: Ռշտունիքում, որը Հյուսեին աղայի մշտական բռնությունների ասպարեզն էր, գյուղերի մեծ մասը դատարկվել էր դեռ նախորդ՝ 1906 թվականին, և շարունակում էր դատարկվել:

Այս տարածքում միայն Գառգառ գավառի հայերն էին, որ վճռել էին խոտ ուտել, բայց իրենց գյուղերից չհեռանալ: Մի նամակով գավառից գրում էին. «Մարդիկ ամբողջ օրը նախիրների նման ցրվում են լեռներում խոտ հավաքելու և իրենց զավակների համար կանաչ տանելու»[1]:

1906 և 1907թթ. երկու ամեռվա ընթացքում միայն Վանի և Բիթլիսի նահանգներից գաղթեց 6 հազար հայ ընտանիք, իսկ տարվա մյուս ամեն մի ամսում 450-500, այսինքն՝ այդ երկու տարիներին երկու նահանգներից հեռացավ մոտ 14 հազար ընտանիք:

Իշխանություններն ամեն ինչ անում էին, որպեսզի գաղթողները որքան կարելի է հեռու գնան, հեռանան հատկապես արաբաբնակ նահանգներ և հացի մշակությունից աղքատ ուրիշ վայրեր: Հայկական մի նահանգից մյուսը գաղթելու ճանապարհին հարուցվում էին բազում խոչընդոտներ, քանզի կառավարության գլխավոր նպատակը Հայաստանը հայաթափելն էր: Հեռացողները պետք է ունենային անցագրեր: Ոչ հայկական նահանգներ մեկնողները անցագրերը ձեռք էին բերում 10-15 լիրայով, իսկ հայաբնակ վայրեր գաղթողները ավելի թանկ՝ վճարելով մինչև 30 լիրա: Անիծյալ թուղթը ձեռք ձգելու համար հայերը ծախում էին վերջին ունեցածը:

Իրենց հարազատ վայրերից փախչողները ենթարկվում էին ոչ միայն նոր տանջանքների, այլև նոր հալածանքների: Թուրք պաշտոնյաները նրանց չէին թողնում հանգիստ շարունակել ճանապարհը, մինչև չկողոպտեին վերջին ստակը:

Զրկանքի արահետներով քայլող ստվերների առջևում անհայտություն էր՝ լքման և հույսի անիմանալի խառնուրդով: Նրանք գնում էին՝ ականատես լինելու նոր սոսկաղեպքերի, կրելու նոր փորձություններ և տալու նոր զոհեր:

Շատերը ճանապարհներին մեռնում էին սովից ու հյուծախտից և օրերով մնում անթաղ: Անցորդները հաճախ էին տեսնում այսուայնտեղ ցրտահար ընկած կանանց ու երեխաների դիակներ:

Ականատեսը Դիարբեքիրից գրում էր.

«Տալվորիկցի կին մը տեսանք, որ դառնապես կուլար. պատճառը հարցուցի, հայտնեց, թե ինքը երկու փոքրիկ աղջիկներ ուներ, զորս սովեն ազատելու համար այս կողմեր կը բերեր: Անոնցմե մին սաստիկ անձրևեն և ցրտեն կը մեռնի: Կարծես քիչ ըլլար այս պատուհասը, զոր ամբողջացնելու համար, Պաթմանի կամուրջին մոտ խումբ մը քրդեր իր դեմը կ'ելլեն և անխղճորեն կը խլեն իր մարմնոյն մերկությունը ծածկող հին ու մին հալավները և իր ամբողջ

[1] **«Դրոշակ»**, N 10(163), հոկտեմբեր, 1905, էջ 155:

ունեցվածքը կազմող պատառոտուն վերմակը, զոր իր շալակը կը կրե եղեր»[1]:

Տեղ հասնելուց հետո սկսվում էր գաղթածների նոր ոդիսականը: Նրանք լցվում էին փողոցները, թափվում եկեղեցիների դռների մոտ, շուկաները, պատրսպարվում պատահած խորշում անոթի, մերկ, բոբիկ: Մանկիկները քնում էին շների հետ: Ցերեկները դիակների տերերը գնում էին քաղաքից դուրս՝ փոսեր փորելու: Հաջողակները գտնում էին ախոռի անկյուն և տաքանում անասունների շնչով: Իսկ բախտավորը մի Թուրք կամ քուրդ բեկի, մի խոլամի ձեռքի տակ ծառա էր մտնում ընտանիքը սովից փրկելու համար:

Գաղթողների մի մասը տարբեր ճանապարհներով դուրս էր գալիս կայսրության սահմաններից: Կառավարությունը հայերի առջև արգելքներ էր հարուցում, որ նրանք չանցնեն Ռուսաստան, ուստի ուժեղացրել էր հսկողությունը կովկասյան սահմանագլուխներում, բայց դրա փոխարեն ամեն կերպ նպաստում էր դեպի հեռուներ, հատկապես Ամերիկա գնացողներին: Կ. Պոլսում մտածում էին, որ Կովկաս անցնողները լրացնելու են այնտեղի հայության շարքերը, մի բան, որ չէր տեղավորվում համիսլամականության սկզբունքների մեջ, իսկ Ամերիկա գնացողները, բնականաբար, ձուլվելու և անհետանալու են:

Կայսրության սահմաններից հեռացած հայերին կառավարությունը համարում էր աքսորականներ և նրանց արգելում էր վերադառնալ իրենց նախկին բնակության վայրերը: Այդպիսիների թիվը հաշվվում էր տասնյակ հազարներով:

Դատարկված և դատարկվող գյուղերում տեղավորվում էին քուրդ աշիրեթները և Հյուսիսային Կովկասից եկած մուհաջիրները՝ չերքեզները և անդրկովկասյան Թուրքերը: 1906-1097թթ. Մշո դաշտում և Սասունում բռնությամբ հայազուրկ եղավ և քրդաբնակ դարձավ 11 գյուղ: Դրանք էին՝ Մնձուր, Քարձոր, Տատրագոմ, Կյաշախուլի, Ավազաղբյուր, Փողորկով, Արթխոնք, Տոմ, Ալադին, Գոմս, Առնիստ[2]:

Հայկական գյուղերը հայաթափվում ու «քրդական» էին դառնում նաև «խաղաղ» ու «կամավոր», հատկապես «սալաֆը» գործի դնելու միջոցով: Վերջնական արդյունքը լինում էր այն, որ պարտապան հայ գյուղացին կյանքը փրկելու համար թողնում էր ամեն ինչ և ընտանիքն առած հեռանում ուր պատահի: Գյուղը «խաղաղ» եղանակով հայաթափվում էր և դառնում քրդաբնակ:

Մշո դաշտի հայկական գյուղերը հիմնականում լցվում էին չերքեզներով: Միայն 1906-ին նրանք զավթեցին զուտ հայկական 15 գյուղ՝ վռնդելով բոլոր բնակիչներին: Լիովին չերքեզաբնակ դարձած այդ գյուղերից էին՝ Սանիստը, Հուշդամը, Արտրիթը և այլն: Չերքեզներին էին բաժին ընկնում նաև Դաշտի հայկական կիսավեր գյուղերը: «Հերթի կանգնած» մուհաջիր չեչենները և

[1] «Դրոշակ», N 6-7 (184), հունիս-հուլիս, 1907, էջ 94:
[2] «Վտակ» (Թիֆլիս), N 3, 4 հունվարի 1908թ.:

լեզգիները 1906-1907թթ. տեր դարձան այդ գյուղերից 12-ին՝ Խորոնք, Վարդենիս, Աբլբուհար, Խարս, Ջխուրի, Իրիզակ, Խոփեր, Հերգետ, Բաղլու, Փեթար, Գոմեր, Դերիկ (Աշտիշատ)[1]:

Չերքեզներից շատ ավելի ագահ և ընչաքաղց էին Թուրք-հայկական ընդհարումներից տուժած մի քանի հազար անդրկովկասյան Թուրքեր, որոնք եկել ու թափվել էին Թուրքիայի հայկական նահանգներ՝ հայերի նկատմամբ վրեժխնդրությամբ լեցուն:

Բացի այն բանից, որ կովկասյան Թուրքերն իրենց կամքով էին խուժել Հայաստան, Թուրք կառավարությունն իր հերթին Կովկաս՝ Բորչալուի, Արդահանի ու Ջլդրի կողմերն էր ուղարկում իր գործակալներին, որոնք, այնտեղի Թուրքերին մեծամեծ խոստումներ տալով, բերում լցնում էին հայկական գյուղերը:

Կովկասից եկած Թուրքերին իշխանությունները մաս առ մաս տեղավորում էին հիմնականում Բիթլիսի նահանգում, Բասենում, Խնուսում, Ալաշկերտում, Էրզրում քաղաքի շրջակա գյուղերում:

1906թ. գարնանից սկսած՝ կովկասյան Թուրքերը մեծ զանգվածներով մտան Բիթլիսի նահանգի Պուլանըխ գավառի հայկական գյուղերը: Ցուրաքանչյուր գյուղում տեղավորվեց 30-50 ընտանիք: Արդեն ամռանը հարյուրավոր ընտանիքներ վերջնականապես հաստատվել էին գավառի Լիս, Ատկոն, Համզաշեխ, Թեղուտ, Ոտնջուր, Կարակ և ուրիշ գյուղերում[2]:

1906-1907-ին կովկասյան մուհաջիրները լցվեցին Բասեն-Ալաշկերտ շրջան և տեր դարձան հայկական Վարդենիս, Դրմետ, Առնիստ, Աբլբուհար և այլ գյուղերին: Մյուս, ավելի բազմաքանակ մասը իջավ նույն շրջանի դեռևս նշանակալի թվով բնակչություն ունեցող հայ գյուղերի դաշտեր, բնակավայրերից մեկ կիլոմետրից ոչ հեռու: Կառավարության ֆինանսական աջակցությամբ իշխանություններն ամեն կերպ օգնում էին, որպեսզի նրանք այդ տարածություններում իրենց համար տներ կառուցեն՝ որքան հնարավոր է արագ:

Կառավարությունը կովկասյան Թուրքերին տվել էր մեծ դյուրություններ ու արտոնություններ, մասնավորապես նրանց իրավունք էր շնորհված 10 տարի տուրք չվճարել: 1906-1907թթ. Բասեն-Ալաշկերտի հայկական գյուղերի արանքում կառուցվեցին կովկասյան Թուրքերի բազմաթիվ գյուղեր: Այսպես, իրարից հազիվ 15 բոպեի հեռավորության վրա գտնվող Վարդենիս և Արտոնք գյուղերի միջև 1906թ. հիմնվեց Թուրքերի նոր գյուղ, որը շուտով հայկական նշված երկու գյուղերի համար դարձավ իսկական պատուհաս: Կովկասյան Թուրքերին Թույլատրված էր հայերից ուժով բռնագրավել նրանց հողերը: Երբ վերջիններս բողոքում էին տեղի իշխանություններին, ստանում էին այսպիսի պատասխան.

[1] Տե՛ս «Վտակ», N 3, 4 հունվարի 1908թ.:
[2] «Դրոշակ», N 11(177), նոյեմբեր, 1906, էջ 166:

«Հայ անամօթներ, դուք վարուցանք ընելու անասուններ չունիք, կառավարութիւնը միթէ պիտի սպասէ՞ մինչեւ որ լծկաններու տեր ըլլաք, արտեր ցանէք և յետոյ տուրք վճարէք: Այդ յոյսը կտրած ենք ձեզմէ այլեւս: Քանի որ թաթարներ ունին լծկաններ, անոնց իրաւունք կը տրուի իրենց ուզած արտերը ցանելու և հասոյթ առաջ բերելու. անանկով թէ՛ անոնք կ՚օգտուին և թէ պետութեան գանձը»[1]:

Խեղճ հայերը տուն էին վերադառնում ձեռնունայն:

Իրենց տները թողած և քաղաքներ լցված գյուղացիները սոսկալի դեպքեր էին պատմում կովկասյան արյունակզակ թուրք գաղթականների վայրագություններից:

Հայերի հողերի վրա, նրանց գյուղերում կովկասյան թուրք գաղթականների հաստատման, նրանց գործադրած բռնությունների մասին էր "Journal de Gene've" թերթի 1907թ. ապրիլի 18-ի համարում տպագրված թղթակցությունը, որտեղ ասվում էր.

«Վատ լուրեր են ստացվում Տաճկահայաստանից, ուր հալածանքի սիստեմը նորից ծաղկում է: Անատոլիայի արևելյան մասը՝ Վանը, Բիթլիսը, Էրզրումը և այլն, պաշարված են Ռուսաստանից այնտեղ ապաստանած հարյուրավոր մուսուլմաններով: Դրանք այն թուրքերն են, որոնք անցյալ տարի հարձակվեցին Կովկասի հայերի վրա և նրանց կողմից անխնա ետ մղվեցին: Ստիպված փախչելով օսմանյան կայսրություն, նրանք այնտեղ գտան անզեն հայ բնակչությանը, որոնց նկատմամբ կատարում են դիվային վրիժառություններ»: Այնուհետև թերթը նշում էր, որ թուրքական իշխանություններն այդ նորեկների միջև բաժանում են հայերի սեփականությունը, նրանց մղում սպանությունների, թալանի, կանանց առևանգումների: «Սարսափն ու սովը նորից տիրում են աղետի ենթարկված այդ երկրի վրա, - շեշտում էր հոդվածագիրը և ավելացնում, - խոշոր ջարդերի մոտալուտ մի դարագլուխ է կանխատեսվում, որովհետև իսլամ տարրը ավելի քան գրգռված է»[2]:

Հայկական գյուղերում ամրանալուց հետո կովկասյան թուրքերն սկսեցին ասպատակել հարևան թուրքաբնակ և քրդաբնակ գյուղերը, ի հետևանս որի այդ գյուղերի բնակիչներից շատերը աստիճանաբար գալիս էին այն համոզման, որ հայի գաղթելով մի կողմից իրենք կզրկվեն իրենց համար բանող դարավոր ստրուկից, մյուս կողմից հետագայում փափուկ կացություն կստեղծվի, եթե մեծ հոսանքներով թուրքերը Կովկասից շարունակեն գալ և իրենց հարևանությամբ հաստատվել հայկական գյուղերում:

Հայ քաղաքական ուժերը չեփոր էին հնչեցնում, հնարավորն ու անհնարինն անում էին կանգնեցնելու տնաքանդ գաղթը: Նրանք, սարսափահար՝ ի տես արտագաղթի կործանիչ հոսանքին, տեսնում էին, որ Երկրում օրեցօր

[1] **Սարգիս և Միսակ Բդէեան**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 230:
[2] Հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս **«Վտակ»**, N 3, 4 հունվարի 1908թ.:

լռում են բողոքի կենդանարար ձայները, հանգչում ապստամբության խարույկները, որոնք վառված էին անթիվ թանկագին զոհերի ազատաբաղձ շնչով[1]:

«Ռազմիկ» (Պլովդիվ) թերթի էջերից տագնապ էր հնչեցնում Անդրանիկը: «Տուշմանը իր գործը սիստեմաթիկ կերպով առաջ կ՚տանի, - գրում էր նա. - արուեստական սո՛վ, գաղթականությու՛ն աշխարհի չորս ծագերը, անվերջ ու անանուն հարկեր, մեր ընկերները՝ ճահիլ ճիվան կորիճները, բանտերուն խորքերը ամեն օր կը հալին, կը մաշուին. թալանը, առևանգումը և բոլոր այն բազմատեսակ թշուառությունները, որոնք սիրտ կը կտրատեն, արդեն արյունաքամ ըրած են Մայր Հայաստան»[2]:

Անդրանիկի համար բացարձակ ճշմարտություն էր, որ ամեն մի ժողովրդի ողնայունը բնաշխարհի հողին կառչած այն զանգվածն է, որն ի գին մեծամեծ զոհողությունների պահում ու պահպանում է հայրենի ժառանգությունը:

Առավել տագնապալին այն էր, որ գաղթում էին գլխավորապես երիտասարդները, աշխատող ձեռքերը, որոնք պիտի հանդիսանային կովող, դիմադրող ուժը[3]: Որքան էլ դժվարին լիներ բուն երկրի մեջ ապրելը, անհնար լիներ անպատմելի հալածանքներ ու սովի տանջանքներ կրելը, պարզ էր, որ երկիրն առանց հայության թողնել՝ նշանակում էր վերջնականապես թաղել նրա դատը:

Իր խոսքն ուղղելով գաղթելու պատրաստ հայրենակիցներին՝ «Դրոշակը» խռովիչ հարց էր տալիս՝ թողնե՞նք, որ մեր հայրենիքը դառնա այնքան խանդաղատանքով փայփայած իղձերի գերեզման, թողնե՞նք, որ այնքա՞ն մաքառումներից, հոյակապ անձնվիրություններից և զրկանքներից հետո նա անհետանա[4]: Թերթը թուրքահայ գյուղացիությանը հղում էր «Մի՛ բաժանվիր քո հողեդ» պատգամը. «Լսե՛, ուրեմն, հեռուեն հեռու քեզի հասնող այս աղոտ ձայնը և ուժգնորեն կառչե այն հողին, որ քունդ է, և որուն նայեր են այսքան դարերե ի վեր մինչև քեզի հասնող սերունդները, կառչե անոր ամրակուռորեն ... Իսկ եթե թոյլ չե՞ն տար որ մաճդ ձեռքդ առնես, դուն դիմե արդարադատ Զենքիդ, բայց մի՛ բաժանվի՛ր քու Հողեդ ...»[5]: Խաչատուր Մալումյանը (Ակնունի) «Կա՛ց, հայ մարդ, կա՛ց» աղերսագին ճիչով դիմում էր գաղթը փրկության ճանապարհ համարող հայորդիներին, նրանց կոչ անում մնալ հազարամյակների Հայաստան աշխարհում՝ որքան էլ այն վտանգված է ու տկար, քանզի «մեր հայրենիքից դուրս հայ ժողովուրդը ազգ չէ, այլ **փշրանք**, թափթփուկ անպետք և անկարևոր»: Զէ՞ որ «Երկիրն է նրա պատմական դերի բեմը, նրա կուլտուրական բաղձանքների հնոցը»[6]: Անդրադառնալով

[1] Տե՛ս **Գաբրիել Լազեան**, Հայաստանը և Հայ Դատը Հայկոռա յարաբերութիւններու լոյսին տակ, էջ 110:
[2] **«Ռազմիկ»** (Պլովդիվ), 20 սեպտեմբերի 1906թ.:
[3] Տե՛ս **Ա. Նորեան**, Դրվագներ Հ.Յ.Դաշնակցութեան գործունեութիւնից, Ա տասնամեակ, էջ 31:
[4] **«Դրոշակ»**, N 1 (189), հունվար, 1908, էջ 12:
[5] Նույն տեղում, N 3 (181), մարտ, 1907, էջ 40:
[6] **Գ. Լազեան**, Հայաստանը և Հայ Դատը Հայկոռա յարաբերութիւններու լոյսին տակ, էջ 110:

օտարության մեջ, նույնիսկ Կովկասի ցեղակիցների միջավայրում գտնվող գաղթած հայերի դառը կյանքին, նրանց մշտնջենավոր անապահովության փաստին, ռուս կառավարության հալածանքներին՝ «Դրոշակը» գաղթելու պատրաստ Թուրքահայերին պատգամում էր. «Հազար անգամ ավելի պատվաբեր է մնալ սեփական հայրենիքում և ստվարացնել կովողների բանակը»[1]:

Այսպիսով, եթե ի մի բերելու լինենք Թուրքահայության տառապանքների ընդհանուր պատկերը 1906-1907թվականներին, ապա կարելի է համառոտակի ամփոփել հետևյալ հաստատումներով: Թալան ու ավերմունք Մուշի շրջանում, ուր անողոքաբար ոտքի տակ էին տրվում հայկական գյուղերը. հարվածներ ամբողջ Վասպուրականին, ուր քուրդ հրոսակախմբերի ասպատակությունները, միացած հարկային անպատմելի ճնշումների հետ, առաջ էին բերում զանգվածային գաղթ ու նոր աղետներ. մահմեդական նոր գաղութների հաստատում Սեբաստիայի շրջանում. եկեղեցապատկան կալվածքների գրավում իբրև մի նոր ապտակ Թուրքահայ սահմանադրության աննախանձելի մնացորդներին. ձերբակալություն և աքսոր Զեյթունում ու ամենուր. բանտարկություն և տանջանք արևելյան նահանգներում. սպանություն ու թալան Էրզրումի վիլայեթում. զորանոցների ցանցի ծավալում արյունաքամ Սասունում: Այդ ամենը կատարվում էր ծրագրված ու հետևողականորեն, նաև՝ զգուշությամբ, որպեսզի սոսկալի ոճիրների ու կտտանքների խուլ արձագանքներն անզոր լինեին տարածվել հեռուներում:

Փարիզում լույս տեսնող «Նոր հանդես» կիսամսյա թերթը «Հայաստանի ապագան» առաջնորդողում գրում էր.

«Հայաստանը այս րոպեիս անպաշտպան և արյունավեր դաշտ մըն է, ուր Թուրք կառավարությունը ուզածը կ՚ընե, թեեն բռնող չկայ»[2]:

Ամբողջ մի ազգ մարտիրոսանում էր և չկար մի ուժ, որ կանգնեցներ ժողովրդի հոսող արյունը: Ջնջվում էին ազգատոհմեր, տներ, օջախներ, փլվում էին դռներ, քանդվում տաճարներ...

Այդ էր պատճառը, որ Թուրքահայոց միջավայրում գնալով ուժեղանում էին հեղափոխական ուղուց հետ կանգնելու տրամադրությունները: Հայ պահպանողական շերտերից ավելի ու ավելի հաճախ էին հնչում դաշնակցության և հնչակի գործելակերպը դատապարտող խոսքեր, կոչեր էին լսվում դադարեցնելու Հայկական հարցի լուծման համար շարունակվող՝ ժողովրդին հյուծող պայքարը: Այդ տրամադրությունները հիմնականում ուղղորդվում էին Կ.Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանի և նրա համախոհների կողմից: Պատրիարքն իր պաշտոնավարության բոլոր տարիներին քարոզել էր սուլթան Համիդի ու նրա կառավարության հետ լեզու գտնելու անհրաժեշտությունը և իր գործունեության մեջ հետևողականորեն հետևել էր այդ մարտավարությանը: Անշուշտ, Օրմանյանի ու օրմանյանականների քաղաքականության նպատակն էր մեղմել հայատյաց սուլթանի գազանային կրքերը:

Սուլթանական ռեժիմի հետ մի կերպ համակերպվելու գաղափարի քարոզչությանն էին նվիրված պոլսահայ համարյա բոլոր հայ թերթերը և հատկապես «Արևելքը» ու պատրիարքարանի ոչ պաշտոնական օրգան «Բյուզանդիոնը»: Նորից նպատակը նույնն էր՝ չգրգռել գազանին:

«Արևելք» օրաթերթը սուլթանի և Բարձր Դռան գովքը հասցնում էր այնպիսի ծայրահեղության, որին կարող էին նախանձել Թուրքական թերթերից շատերը:

1906թ. օգոստոսի 19-ին (սեպտեմբերի 1-ին) Աբդուլ Համիդի գահակալության հերթական տարեդարձն էր: Այդ առթիվ «Արևելքը» առաջնորդող հոդվածում ահա այսպիսի գովք էր հյուսում սուլթանին և նրա գործին.

«Մեծ ոգևորությամբ և անհուն ցնծությամբ կը տոնուի այսօր Կայսեր Գահակալութեան բարեբաստիկ տարեդարձը մայրաքաղաքիս մեջ ու երկրին ամեն կողմերը, ու միլիոնավոր հավատարիմ հպատակներ սրտաբուխ մաղթանքներ կ՚ընեն Նորին Կայսեր Վեհափառութեան թանկագին կենաց և արևշատութեան համար, որ արթուն աչքով և հայրական հոգածութեամբ կը հսկէ Իր ժողովրդեան վրայ: Ամեն կողմ լուսավառութեան շքեղ պատրաստություններ տեսնուած են՝ փայլուն կերպով տոնելու համար Վեհափառ Սուլթան Համիտ Բ Կայսեր գահակալությունը, որ մեծ բարիք մը եղած է երկրին բարօրութեան համար»:

Թերթը գրում էր, որ վերջին երեսուն տարում օսմանյան կայսրության տնտեսության, լուսավորության, կրթության և պետական-հասարակական կյանքի մյուս բոլոր բնագավառներում աննախընթաց նվաճումներ են ձեռք բերվել «մեծազոր Վեհապետին՝ Սուլթան Համիտ Բ Կայսեր բարձր նախաձեռնությամբ, որ այնքան մեծ գուրգուրանք մը կը տածե Իր հավատարիմ ժողովրդեան Նկատմամբ: Փոխադարձաբար, Թուրքիոյ միլիոնավոր բնակիչներն ալ ամեն առթիվ իրենց սրտաբուխ մաղթանքները կը կրկնեն, իրենց վայելած անգին բարիքներուն համար: Մամուլը բարեբախտությունն ունի ամեն օր արձագանքելու Ն. Կայս. Վեհափառութեան թանկագին շնորհներն ու իմաստուն խորհուրդները: Ուստի «Արևելք» ևս նուիրական պարտք կը համարի մասնակցիլ երախտագիտական արտայայտութեանց ու ցնծագին խրախճանքներուն, գոչելով.

Կեցցէ՛, յավէ՛տ կեցցե՛
Օգոստափառ և Մեծանուն
Ինքնակալ Թուրքիոյ
Վեհ. Սուլթան Ապտ ուլ Համիտ խանը ղազի[1]:

---

[1] **«Դրոշակ»**, N 11-12 (188), նոյեմբեր- դեկտեմբեր, 1907, էջ 164:
[2] **«Նոր հանդես»**, N 2, 1 սեպտեմբերի 1906թ.:

[1] **«Արևելք»** (Կ. Պոլիս), N 6264, 19 օգոստոսի (1 սեպտեմբերի) 1906թ.:

Դրանից 13 տարի առաջ էր սկսվել լույս տեսնել «Արևելքը» և այդ ամբողջ ժամանակաշրջանում նրա էջերում ոչ մի նյութ չէր տպագրվել Հայաստանի կացության, հայկական գավառներում տիրող սոսկալի վիճակի, հայ բնակչության անլուր հարստահարությունների մասին:

Բնական է, որ հայ հեղափոխական կուսակցությունները և հատկապես դաշնակցությունը կտրականապես մերժում էին Թուրքական սուլթանին ու նրա կառավարությանը սիրաշահելու մարտավարությունը՝ նման գործելակերպը համարելով դավաճանություն հայ դատին:

Իր դժվարին դերի և աննախանձելի վիճակի մասին այսպես է արտահայտվել ինքը՝ Օրմանյան արքեպիսկոպոսը.

«... Օրմանեան իսկապես սալին ու մուրճին մեջտեղը մնացող երկաթին դերը վարեց, մեկ կողմեն սալին պնդութեան և մյուս կողմե մուրճին ելևէջներուն հարուածները կրելով»[1]:

ԵՎՐՈՊԱՑԻ ՀԱՑԱՍԵՐՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԱՆԱՐԴՅՈՒՆՔ ՃԻԳԵՐԸ

«Մշակում» տպագրված իր մի հոդվածում Արշակ Չոպանյանը նկատել է, թե Հայկական հարցի բարձրացման օրերին դրա նկատմամբ որքան անտարբեր էր եվրոպական հասարակայնությունը: Անգլիայի խոշոր պետական գործիչներ լորդ Սոլսբերիի և լորդ Բիկընսֆիլդի օրինակով նա ցույց էր տալիս, որ այդ անտարբերությունը երբեմն հասնում էր ատելության: Չոպանյանը մեջբերել էր Սոլսբերիի հետևյալ խոսքերը, որ 1878թ. նա ասել էր իր բարեկամներից մեկին.

«Վերցրեք եվրոպական մի քարտեզ, մատներդ դրեք որևէ կետի վրա, դրանից գծեր քաշեք ինչ ուղղությամբ որ կուզեք: Այդ բոլոր գծերի վրա չեք գտնի մի եվրոպացի, որ սիրի հայերին, հայերով հետաքրքրվի: Պատկերացնու՞մ եք, թե որքան դժվար է մի բան անել այսպիսի մի ժողովրդի համար»[2]:

Անշուշտ, հիշյալ լորդերը հետևողական Թուրքասերներ էին ոչ միայն այն պատճառով, որ այն ժամանակ հայ ազգի եվրոպական բարեկամներին մատների վրա կարելի էր հաշվել, այլև այն բանի համար, որ դա էր պահանջում Անգլիայի շահը:

Երբ Սոլսբերին ասում էր, թե հայերը սիրված չեն Եվրոպայում, նա արտահայտում էր իրողությունը: Եվրոպացիներից շատ քչերը գիտեին հայերին, այն էլ որպես վաչխառուների, գող ու խարդախ խանութպանների, դրամ վաստակելուց զատ ուրիշ իդեալ չունեցող գծուծ ու գռեհիկ էակներից կազմված մի ցեղի: Մի քանի արևելագետներից բացի, հայոց դարավոր պատմությունը, նրանց հինավուրց արվեստն ու գրականությունը, նրանց հոյակապ լեզուն, այն ամենը, ինչ հայ ժողովուրդն արել էր քաղաքակրթության համար՝ անծանոթ էր եվրոպացիներին:

Հենց դա էր պատճառը, նկատում էր Չոպանյանը, որ երբ 1895թ. Հայաստանում սկսվեցին մեծ կոտորածները, եվրոպական մամուլի մեծագույն մասը, փոխանակ բարձրացնելու գթության միահամուռ աղաղակ, ինչպես անում էին փոքրաթիվ ազնիվ ու իրազեկ եվրոպացիները, ընդհակառակը, զրպարտությունների ու անարգանքների տարափ էր տեղում նահատակվող հայության գլխին: Անտանելին հատկապես այն էր, որ հայոց կոտորածների հանդեպ նման անմարդկային դիրք բռնողների միայն մի մասն էր կաշառված: Կային այնպիսիք, և ոչ սակավաթիվ, որոնք անկեղծորեն էին արհամարհում և ատում հայ ցեղը: Այնուհետև Արշակ Չոպանյանը նույն հոդվածում վերհիշում էր, որ երբ ինքը 1895-ի վերջերին եկել էր Փարիզ, մի քանի ամիս անց, 1896-ին, մի հայ վաճառական իրեն պատմել է, որ մեծ դիրք ունեցող ֆրանսիացի մի խումբ դրամատերեր զրույցի ժամանակ իր երեսին ուղղակի ասել են, թե «հայոց ջարդը ոչ այլ ինչ է, քան Թուրքիայի մաքրագործում»[1]:

Հիմա արդեն, 20-րդ դարի սկզբներին, Եվրոպայում հայերի նկատմամբ վերաբերմունքը նկատելիորեն փոխված էր դեպի լավը: Բանը, սակայն, այն է, որ դա վերաբերում էր հասարակական կարծիքին, բայց ոչ բնավ պետությունների կառավարություններին:

Դարասկզբից միջազգային խոշոր իրադարձություններն իրենց վրա էին բևեռել ոչ միայն պետությունների, այլև եվրոպական հասարակայնության ուշադրությունը և մոռացության տվել Արյան Երկիրը: Հայկական բարձրավանդակից հնչած հավարը եվրոպական պաշտոնական և կիսապաշտոնական մամուլում արձագանքվում էր ընդամենը սառցային անտարբերությամբ: «Հայերը գաղթում են խմբովին, հեռանում հազարներով», - դեպքից դեպք նման հակիրճ հաղորդումներ էին երևում թերթերի էջերում:

Թուրքահայությունը սպասում էր, թե եվրոպական հասարակայնությունը երբ է կրկին զբաղվելու իր խնդրով. սպասում էր մի տոկունությամբ, որ դասական էր, մի մարտիրոսագրությամբ, որ նմանը չուներ դարերի թշվառության էջերում:

Հայկական ազգային-քաղաքական ուժերը շարունակում էին եռանդագին աշխատանք տանել եվրոպական կառավարությունների և հասարակայնության ուշադրությունը կրկին Հայաստանի վրա բևեռելու համար: Որքան էլ հայկական կուսակցությունները քննադատում էին եվրոպական դիվանագիտությունը և արդար զայրույթով կշտամբում նրա խաբեբա ու դավաճան ընթացքը, բայց, այնուամենայնիվ, լիովին չէին անտեսում Թուրքահայ դատին նրա աջակցությունը, գտնելով, որ այդ դիվանագիտությունն այսպես թե

[1] Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, հատ. Գ, էջ 5486:
[2] «Մշակ», N 291, 20 դեկտեմբերի 1913թ.:

[1] «Մշակ», N 291, 20 դեկտեմբերի 1913թ.:

այնպես մի գործոն է, որից կարելի է և պետք է օգտվել:

Թեև Ֆրանսիան և Անգլիան խորասուզված էին իրենց գաղութների խնդիրների և նոր նվաճումների մեջ, բայց պատմական տվյալ ժամանակաշրջանում հենց այդ երկու երկրների և նրանց հետ նաև Իտալիայի, այսինքն՝ իրենց ազատասիրական վաղեմի ավանդույթներով անգլոսաքսոն և լատին երեք մեծ երկրների հասարակական շրջաններին էր հուզում Հայկական հարցը: Սրանց հարում էր Միացյալ Նահանգների հասարակայնությունը: Պահպանողականության և հետադիմության բերդեր հանդիսացող սլավոնագերմանական մյուս երեք մեծ երկրների՝ Ռուսաստանի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կառավարությունները ոչ միայն չէին աջակցում հայկական խնդրին, այլև ամեն կերպ խոչընդոտում էին դրան:

Բայց անհնարին էր Հայկական հարցը լիովին մոռացության տալ: Հայաստան այցելած եվրոպացին ականատես էր լինում արյան, հալածանքի, քաղցի և պայքարի, վկա էր դառնում մի իրականության, որ սարսափ էր ազդում թույլերին և մռայլ խոհեր ծնում ուժեղների հոգում: Նույնիսկ պահպանողական երկրների մամուլում Հայաստանի մասին երբեմն-երբեմն հայտնվում էին վերլուծություններ, համակրական հոդվածներ, ճանապարհորդական նոթեր:

Թուրքահայաստանից վերադարձած մի ավստրիացի 1906թ. աշնանը հետևյալ տպավորությունն էր հաղորդել.

«Մոտիկից տեսա հայ ժողովուրդը, որի մասին շատ բաներ էի լսել, և կրկնակի սիրեցի նրան: Նա տոկուն է, ավելի քան մի այլ ժողովուրդ, սիրում է եվրոպականությունը և ընդհանրապես թեքվում է դեպի արևմտյան քաղաքակրթություն: Տասը տարվա ծանր դեպքերը տանջել են նրան, դրոշմել նրա ճակատին անջնջելի կնճիռներ, բայց չեն կորցրել նրա հավատը դեպի լավ օրեր, նրա վստահությունը՝ դեպի ապագան: Նա սպասում է ազատության և այդ նպատակով ոչինչ չի խնայում ազատության մարտիկների համար: Մի կոշմար, որ խեղդում է անօգնական ժողովրդին՝ անծայր, չտեսնված աղքատությունն է, որ ամեն մի օտարականի մոտ ներշնչում է անսահման ատելություն դեպի այդ բոլորի պատճառը՝ դեպի տիրող ռեժիմը»[1]:

Բայց նման հայանպաստ կարծիքների կողքին մամուլում հայտնվում էին իրականությունը խեղաթյուրող, Թուրքահայաստանում տիրող վիճակի պատասխանատվությունը հայերի վրա բարդող հոդվածներ:

Այսպես, Բրյուսելում լույս տեսնող "Orient" անունով թերթն իր վարձկան հույն խմբագիր Նիկոլայիդիսի ղեկավարությամբ իսկական արշավանք էր սկսել Հայության դեմ, ներբողում էր սուլթան Համիդին և շարունակ որոտում սուլթանականության թշնամի հայ ու մակեդոն հեղափոխականների դեմ: Թերթն անվերջ լուտանքներ էր թափում դաշնակցության, հնչակի, «Պրո Արմենիայի», հայկական դատի եվրոպացի պաշտպանների վրա, Պրեսանսեներին ու դ՝ Էստուրնելներին համարում ստախոս ու անպատիվ գրպարտիչներ, հայերի հովանավորյալ բոլոր հակասուլթանական ուժերին՝ ավազակներ: Հակահայ թերթը գրում էր.

«Ինչո՞ւ զարմանալ, որ հայերը պարարտ հող են ներկայացնում վատ ներշնչումների զարգացման համար ... Մի՞թե աշխարհը չգիտե, որ նրանք առևտրականներ են՝ որքան ճարպիկ, այնքան և շահասեր, որ նրանց մեջ ագահությունը հիմնական առաքինություն է:

Չէ՞ որ հենց այդ տեսակ հողի վրա է բողբոջում ապստամբության ոգին, որը և հնարավորություն է տալիս իրագործելու նյութական շահեր ...

1895-ի շարժումն առաջացավ նման շահամոլական ախորժակներից, որոնք սրվել էին դարերի ընթացքում, երբ Անատոլիայի ոչ հայ ազգաբնակչությունը շարունակ կեղեքվում էր հայերի ձեռքով, որոնք, սակայն, տակավին չէին հագեցել: 1904-ի շարժումը* ծագեց միևնույն պատճառներից, և նրա դադարից հետո պիտի առաջ գան նորանոր շարժումներ, մինչև որ հայկական ախորժակները չստանան լիակատար բավարարություն»[1]:

Մամուլի էջերում նման հոդվածների հաճախակի հայտնվելն էր, որ եվրոպական հայասերներին ստիպում էր ակտիվացնել հայկական դատի պաշտպանությանն ուղղված իրենց ջանքերը: Նրանց համար գաղտնիք չէր, որ թուրքական կառավարությունը ֆինանսական մեծ միջոցներ է հատկացնում Եվրոպայում հակահայ քարոզչությանը՝ հայկական դատին նոր հարվածներ հասցնելու համար:

Նախկինի նման առաջին շարքերում էին հայ ժողովրդի ֆրանսիացի բարեկամները: Դրանք մշակույթի խոշոր գործիչներ էին, քաղաքական ու հասարակական նշանավոր դեմքեր՝ Անատոլ Ֆրանս, Մարսըլեն Բերթըլո, Ժորժ Կլեմանսո, Պիեռ Քիյառ, Էլիզե Ռըկլյու, Անատոլ Բոլեռ, Ե. Սաչ, Անդրե Մադեր, տիկին Մենար-Դորեան, տիկին Պսիշարի, տիկին Ա. Էմիլ Զոլա, Օգյուստ Բորկա, Ա. Կլեմանսո, Էժեն Կարիեր, Անդրե Շևրեյոն, Արմանդ Դիվո, տիկին Կ. Ֆլամարիոն, Լուի Հավե, Ուշար, Ժ. Պ. Լանգլուա, Պոլ Մենար-Դորեան, Պոլ Մեորիս, Գուստավ Միրբո, Ստեյնլեն, Պոլ Պենլևի, Ժան Պսիշարի, Շ. Սենիոբոս, տիկին Սևերին և ուրիշներ:

Ականավոր հրապարակախոս և քաղաքական գործիչ Ժորժ Կլեմանսոն, որը «Պրո Արմենիայի» խմբագրական մարմնի անդամներից մեկն էր նրա հիմնադրման օրից սկսած, տարիներ շարունակ ստատար էր Հայկական հարցին: 1906թ. սկզբին ֆրանսիական կաբինետում մինիստրի պաշտոն ստանձնելուց հետո էլ նա չէր հրաժարվել հայերի իրավունքների համար պայքարից: «Ես մինիստրական պաշտոնը չեմ ստանձնել, որպեսզի դեն նետեմ իմ մարդկային

[1] Հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս «Դրոշակ», N 11 (177), նոյեմբեր, 1906, էջ 175:

* Խոսքը Սասունի 1904թ. ապստամբության մասին է:

[1] Մեջբերում «Դրոշակի» 1905թ, N 5(158)-ից, էջ 76:

խիղճը», - ասել էր նա, երբ նրան ակնարկել էին, թե չեզոքություն ենթադրող պոստում արդյո՞ք նպատակահարմար է կոնֆլիկտի մեջ գտնվող մի կողմին (հայերին) պաշտպան կանգնել՝ ընդդեմ մյուս կողմի (թուրքերի)[1]:

Ֆրանսիացի նշանավոր աշխարհագետ Էլիզե Ռեկլյուն, որը բազմաթիվ սքանչելի տողեր էր նվիրել հայոց տառապանքին ու դատին, մեռնելուց (1905թ.) առաջ հասցրել էր հայոց մասին հերթական ներբողը գրել: Նրա անտիպ ձեռագրից «Դրոշակը» տպագրել էր մի հատված, ուր ասված էր.

«Աշխարհի վրա կա՞ արդյոք մի վայր, որի անունը կարողանա մեզ ավելի հուզել, քան «Հայաստան» անունը: Մտածող մարդկությունը միշտ պիտի պահի Հայաստանի համար ինքնաբուխ հարգանքի զգացում... Մեր ժամանակներում ժողովուրդների մեջ կա՞ մեկը, որ դժբախտությամբ գերազանցի Հայ ժողովրդին:

...Իրենց միամտության մեջ՝ դժբախտ հայերը դեռ մեզ պատիվ են անում, օգնության հույս տածում դեպի մեզ՝ դավաճաններիս, վախկոտներիս և կեղծավորներիս...»[2]:

1906թ. հունիսին Փարիզում կազմակերպվեց մի նոր մարմին՝ «Ֆրանս-հայկական կոմիտե» անունով, որը նպատակ ուներ ծառայել հայոց դատին: Այդ կոմիտեի ստեղծման նախաձեռնողներից մեկը եղավ խոշորագույն գիտնական-քիմիկոս Մարսելեն Բերթելոն, որը մեծ ծառայություններ էր մատուցել իր հայրենիքին և համաշխարհային գիտությանը: Նա նաև հայ դատի ամենաջերմ պաշտպաններից էր, բազմիցս մասնակցել էր հայասիրական միտինգների կազմակերպմանը, հրապարակայնորեն նշավակել հայերի նկատմամբ թուրք բռնապետության ոճիրները:

«Ֆրանս-հայկական կոմիտեն» կյանքի կոչողներից էր հայ դատի հավատարիմ ու անձնվեր պաշտպան, պրոֆեսոր Անատոլ Լերուա Բոլեոն: 1906-ի դեկտեմբերին նա գրում էր.

«Ֆրանսիայում բոլոր կուսակցություններն արդեն համաձայն են հայտարարելու, որ, վերջապես, զլացած արդարությունը ճանաչվի հայերի համար: Մեր պարտականությունն է անդադար բողոքել բարբարոսական ռեժիմի դեմ, որ ուրիշ նպատակ չունի, բայց եթե ջնջել հայությունը»:

Նշելով, որ հայ ժողովուրդը «Ասիո միակ կամ առաջին քրիստոնյա ժողովուրդն է», Բոլեոն այնուհետև գրում էր. «Նա պատմության մեջ մեծ դեր խաղաց. առանց ընկճվելու ամեն տեսակ փորձանքներ կրեց և անընդունելի է, որ այժմ անհետանա այնպիսի մի ժամանակ, երբ բոլոր ազգությունները երիտասարդանում կամ վերածնվում են»[3]:

Ֆրանսիացի իրենց համախոհներին ակտիվորեն սկսեցին ձայնակցել անգլիացի հայասերները:

1905թ. մարտին անգլիական պառլամենտի անդամ, հայտնի հայասեր Ջեյմս Բրայսը հանդես եկավ հրապարակային մի զեկուցումով, որը լայն արձագանք գտավ Լոնդոնի մամուլի էջերում: Զեկուցողն անդրադարձել էր Մակեդոնիայի և Հայաստանի խնդիրներին միաժամանակ: Մակեդոնիայի մասին նա ասել էր.

«Մակեդոնական հարցն ավելի դժվար ու կնճռոտ է, քան հայկականը՝ այն իմաստով, որ այդ երկրում մշտական գժտություններ մեջ են այնտեղ բնակվող բուլղարները, հույները, սերբերը, վալախները: Այդ ազգերից ամեն մեկն ունի իր քաղաքական կազմակերպությունները, որոնց ղեկավարությամբ էլ նրանք միմյանց դեմ մղում են դաժան կռիվներ»[1]: Այդ իսկ պատճառով, նշում էր Բրայսը, Մակեդոնիային պետք է միայն ինքնավարություն տալ Թուրքիայի գերիշխանության ներքո, հաշվի առնելով, որ բազմազգ և ներքին հակասություններից ծվատվող այդ երկիրը դեռևս հասունացած չէ ինքն իրեն կառավարելու համար:

Ինչ վերաբերում է Հայաստանին, Բրայսը գտնում էր, որ հայկական խնդիրն ավելի պարզ է, քանի որ նրա մեջ խճճված քաղաքական շահերն ավելի քիչ են: Նա առաջարկում էր հայկական գավառների համար նշանակել մի կառավարիչ, որը պատասխանատու չլինի Թուրքական կառավարության առջև: Այդ կառավարիչը պետք է օժտված լինի բավականաչափ իշխանությամբ ու ֆինանսական միջոցներով և խնդիր պետք է ունենա վերականգնել խաղաղությունը, դադարեցնել պաշտոնյաների հարստահարումները, սանձահարել թալանչի քրդերին: Բրայսը այնուհետև նշում էր.

«Մեզ հաճախ ասում են, թե մենք պետք է միայն մտածենք մեր սեփական շահերի մասին: Բայց ժամանակն է գիտակցել, որ նաև ունենք պարտավորություններ: Ծագում են պահեր, երբ Անգլիան պարտավոր է ուժ գործածել հանուն արդարության և ազատության»[2]:

Եթե անգլիացի և ֆրանսիացի հայասերները նախկինում հավասարապես պայքարում էին հայկական և մակեդոնական հարցերի կարգավորման համար, ապա 1906թ. կեսերից սկսած նրանք գերակայությունը տալիս էին Հայկական հարցին, քանի որ Թուրքահայոց տառապանքներն արդեն անհամամատելի էին մակեդոնացիների վիճակի հետ: Դա էր վկայում, օրինակ, անգլիացի հայասերներից մեկի արտասանած ճառը «Balkan Comittee» *-ի մի նիստում, ուր մասնավորապես ասել էր.*

«Դուք չեք կարող չխոստովանել, որ հայերի տառապանքներն ավելի սարսափելի են, քան մակեդոնացիներինը: Վստահ եմ, ուրեմն, որ ձեր կոմիտեն իր

---

[1] *Մատենադարան, **Արշակ Ալպոյաճյանի** արխիվ, թղթ. N 2, վավ. 3[8] (թերթի կտրոն):*
[2] ***«Դրոշակ»**, N 7 (173), հուլիս, 1906, էջ 98:*
[3] *Նույն տեղում, N 12 (178), դեկտեմբեր, 1906, էջ 178:*

---

[1] *Տե՛ս Մատենադարան, **Արշակ Ալպոյաճյանի** արխիվ, թղթ. N 3, վավ. 3[5] (թերթի կտրոն):*
[2] *Տե՛ս նույն տեղում:*

ուժերի համեմատ պիտի աջակցի Հայաստանի բարեկամներին»[1]:

1905-1907թթ. Եվրոպայում և Ամերիկայում հրատարակվում էին մի քանի հանդեսներ, որոնց նպատակն էր թե՛ Հայկական դատի պաշտպանությունը և թե՛ Հայաստանն ու հայ ժողովուրդը եվրոպական ազգերին ու ամերիկյան ժողովրդին ծանոթացնելը:

Լոնդոնում 1906թ. սկզբից սկսել էր հրատարակվել «Pro Arménia» թերթի անգլերեն տարբերակը՝ Ա. Սթեդի ղեկավարությամբ: Առաջին համարի կազմի գլխամասում խմբագրությունը զետեղել էր Բեռլինի դաշնագրի 61-րդ և Կիպրոսի դաշնագրի առաջին հոդվածը, դրանով իսկ կամենալով ցույց տալ, որ նա ձգտելու է այդ հոդվածների իրականացմանը: Առաջնորդող հոդվածում ասված էր. «Մենք թուրքատյացներ չենք, երբ պահանջում ենք ռեֆորմներ: Ռեֆորմները օգուտ կբերեն թուրք ժողովրդի մեծամասնությանը: Մեր նպատակը չէ հաստատել հայկական մի բռնակալություն թուրքերի վրա և ոչ էլ մի թուրքական բռնակալություն հայերի վրա, այլ հաստատել ամենքի համար մի տանելի ռեժիմ»[2]:

Թերթը համարից համար զարգացնում էր այն միտքը, որ Թուրքիայում հայերը առավելագույնը դնում են ինքնավարության հարցը: Եթե այդ երկրում լինեին այնպիսի կարգեր, որ թուրքահայերը կարողանային տնտեսապես, բարոյապես և հասարակական տեսակետով առաջադիմել, ապա դրանով իսկ լուծված կլինեին այն խնդիրները, որոնք հուզում են նրանց: Սուլթանական բռնապետական ռեժիմի պայմաններում այդ բանը հնարավոր չէ, ուստի թուրքահայերն իրենց անձի, գույքի, լեզվի, խղճի ազատության ապահովության համար ուզում են հաստատ երաշխիքներ: Ամենամեծ ցավն այն է, շեշտում էր պարբերականը, որ նրանց հետ ապրող թուրքն ու քուրդը չեն ըմբռնում քաղաքացիական կյանքի կարևորությունը և անհրաժեշտությունը: Եվ եթե հայը խնդրում է եվրոպական երաշխիք, դա արել և անում է այն պատճառով, որ վստահություն չունի թուրք վարչության վրա: Հենց դա է պատճառը, որ նրանք ձգտում են ինքնավարության:

Եթե իրագործվեր հայկական ինքնավարությունը, շեշտում էր թերթը, ապա այն պետք է ընդարձակ քաղաքացիական կյանք տար ոչ բացառապես հայերին, այլև բոլոր այն տարրերին, որոնք կմտնեին մի վարչական շրջանի մեջ: Դա կլիներ ինքնավարություն այն բոլոր տարրերի համար, որոնք միացած կլինեին մի ընդհանուր իրավակարգի մեջ, կղեկավարվեին միատեսակ եվրոպական կարգերով:

Այլ խոսքով, հայկական ինքնավարության պահանջը ոչ թե ազգային-էթնիկական է, այլ՝ տերիտորիալ:

Հայ ժողովրդի հանդեպ համակրանքի գնալով ուժեղացող ձայներ էին

[1] Տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. N 3, վավ. 3[5] (թերթի կտրոն):
[2] «Մշակ», N 9, 15 հունվարի 1906թ.:

լսվում Ապենինյան թերակղզուց:

Իտալացի հռչակավոր գիտնական և խմբագիր, ծերունի Զեզարե Լոմբրոզոն 1906թ. ավարտին «Ֆրանս-հայկական կոմիտեին» ուղարկած նամակում գրում էր, որ Եվրոպայում չկա սիրտ ու հոգի ունեցող մի մարդ, որ չվրդովվի այն վայրագությունների համար, որ թուրք կառավարության աջակցությամբ քրդերը կատարում են Հայաստանում: «Ես ձեր տրամադրության տակ եմ դնում իմ հանդեսը: Կուզեի երիտասարդ լինել, որպեսզի կարողանայի ձեզ օգնել զանազան իրական միջոցներով, քան խոսքերով ու գանգատներով»[1]:

Հայկական տանջանքները հուզումնալի արձագանք էին գտնում Շվեյցարիայում:

1906թ. հունիսի 15-ին Ժնևի «Կազինո դը Սենպիեր» դահլիճում կայացած բազմամարդ ժողովում, հայկական որբանոցների հայտնի խնամակալ Լեոպոլդ Ֆավրը և Վանի ծանոթ միսիոներ դր. Ռեյնոլդցը հանդես եկան դասախոսություններով՝ Հայաստանում հիմնած որբանոցների և թուրքահայ ժողովրդի ծանր վիճակի մասին: Մասնավորապես Լեոպոլդ Ֆավրը մեծ գովեստով անդրադարձավ հայ ժողովրդի քաղաքակրթական ձգտումներին, դրվատեց նրա բարոյական հակումներն ու անսովոր տոկունությունը[2]:

Ժնևի համալսարանի պրոֆեսոր Էդգար Միլհոն 1906թ. սեպտեմբերին հրատարակած հոդվածում թուրքահայ ժողովրդի դժբախտ կացության համար մեղավոր էր համարում ոչ միայն սուլթանական կառավարությանը, այլև ռուսական ցարիզմին, որն իր քաղաքականությամբ սատարում էր Աբդուլ Համիդի սարսափելի ռեժիմը: «Հայ ժողովուրդը, – գրում էր նա, – կրկնակի դժբախտ է, ամեն կողմից՝ ոտնահարված ու փշրված, ճզմված Համիդյան մուրճի և ցարական սալի միջև»[3]:

«Խաղաղության միջազգային բյուրոյի» պատվավոր քարտուղար Էլի Դյուկոմոն, որն իր մահկանացուն կնքեց 1906-ի դեկտեմբերի 6-ին, Բեռնում, մեկն էր այն չվեյցարացիներից, որոնք դեպի հայ դատը տածում էին բուռն և ջերմ համակրանք: Նա մշտական հարաբերության մեջ էր «Դրոշակի» խմբագրության հետ և իր հնարավորություններից ոչ մեկը չէր խնայում մի նոր մղում տալու հայ ժողովրդի արդար դատին:

Էլի Դյուկոմոնի մահվան առթիվ հռչակավոր Ֆեդերիկ Պասսին իր մի զգայուն հոդվածում նրա մահը համարում էր «հասարակական սուգ»[4]:

Իր հերթին «Դրոշակի» խմբագրությունը հանգուցյալի դագաղին ցավակցական ծաղկեպսակ էր դրել, որի ժապավենի վրա այս խոսքերն էին.

«Հայ ժողովրդի սրտակից բարեկամին, որի նվիրումը հայ դատին բացառիկ էր, անմոռանալի»:

[1] «Դրոշակ», N 1 (179), հունվար, 1906, էջ 3:
[2] Տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. N 2, վավ. 3[7] (թերթի կտրոն):
[3] «Դրոշակ», N 10 (176), հոկտեմբեր, 1906, էջ 146:
[4] Նույն տեղում, N 12 (178), դեկտեմբեր, 1906, էջ 191:

Հայերը բազմաթիվ բարեկամներ ունեին Բելգիայում:

Բրյուսելի համալսարանի պրոֆեսոր Պոլ Էրերան 1906թ. հոկտեմբերին գրում էր, որ Հայաստանի նկատմամբ կամովին ստանձնած պարտականություններն անտեսված ու բռնաբարված են հենց իր՝ Եվրոպայի մեղքով: Եթե մեջտեղ են բերվում ոսկու տենչը և նյութական այլևայլ շահերը, և եթե դրանք փոքր-ինչ վտանգվում են, այնժամ տերությունները սպառնալիքներ են տեղում, զինում են զրահանավեր և աշխարհի ծայրը բանակներ ուղարկում: Ընդհակառակը, զրկանքին ու անիրավությանը չեն պատասխանում ոչ մի իրական գործով: «Այսպիսի անհոգությանը ի՞նչ անուն պետք է տալ, եթե ոչ մեղսակցություն»: Դիմելով Թուրքահայ ժողովրդին՝ գիտնականը նրան սիրտ է տալիս, ասելով. «Հասարակական կարծիքի ուժը անճնշելի է. այն ձեզ հետ է»[1]:

Գերմանական հասարակության առջև հայ դատը շարունակում էր ջերմորեն պաշտպանել գերմանուհի տաղանդավոր գրող Իլզե Ֆրապանը, որի «Հայկական հարցը» և «Հայերն ու ցարիզմը» գրքույկները թարգմանվել էին եվրոպական մի քանի լեզուներով:

«Դեպի գործ» վերտառությամբ հոդվածում Իլզե Ֆրապանը գերման մշակութային գործիչներին կոչ էր անում վճռականորեն կանգնել ազգովին դժբախտության մեջ հայտնված Թուրքահայ ժողովրդի կողքին, ճնշում գործադրել կառավարության վրա, որպեսզի նա փոխի Թուրքիայի նկատմամբ իր քաղաքականությունը և այն պայմանավորի Հայկական հարցի նկատմամբ սուլթանի վերաբերմունքով, այսինքն՝ թե նա ինչպես է կատարում Բեռլինի կոնգրեսի դաշնագրի 61-րդ հոդվածը:

Հայասիրական շարժումը նկատելի տարածում էր ստանում նաև Միացյալ Նահանգներում:

Ամերիկայի Բոստոն քաղաքում հրատարակվում էր անգլերեն «Արմենիա» անունով ամսագիրը, որի նշանաբանն էր Վ. Գլադստոնի հռչակավոր խոսքերը՝ "To Arménia is to serve Civilization" - «Ծառայել Հայաստանին, նշանակում է ծառայել քաղաքակրթությանը»: Այդ ամսագրի պատվավոր հրատարակիչներն էին մի շարք ամերիկացի քաղաքական գործիչներ և հայտնի գրողներ, իսկ աշխատակիցների շարքում էին Էդուարդ Կլեմանը, Տիսա Ալիս-Շտոն – Բլեկվելը, Ֆրանք Միլլերը, Լոյդ Հարիսոնը և ուրիշներ: Ամսագիրը հոդվածներ էր տպագրում Թուրքահայերի անագորույն կացության մասին, մեծ տերությունների կառավարություններին հիշեցնում էր իրենց պարտքը Հայաստանի հանդեպ, որոնք ստորագրել էին այդ երկրին ինքնավարություն տալու մասին մեկից ավելի փաստաթղթեր[2]:

Հակառակ դարավոր թշնամու գործադրած ջանքերի, կաշառումների ու դավերի, հակառակ Ելդզի պաշտոնական և անպաշտոն պրոպագանդի, եվրոպական և ամերիկյան հասարակաց կարծիքը գնալով աստիճանաբար համակրանքի ու հիացման դաշն էր կապում հայկական հեղափոխական շարժման հետ: Թվում էր թե նորագույն Եվրոպան ահա ուր որ է վերջնականապես հարելու է հայ դատին: Կարծես դրա վկայությունն էին նաև իրենց գործողությունները համաձայնեցնելու և կոորդինացնելու տարբեր երկրների հայասերների ձեռնարկած քայլերը:

1905թ. սեպտեմբերին Լյուցերն քաղաքում գումարված **խաղաղության միջազգային 14-րդ կոնգրեսը** ի Թիվս այլ հարցերի, նկատի առնելով նաև հայոց և մակեդոնացոց հարցերը, որոշել էր դիմել Բեռլինի դաշնագիրը ստորագրած պետություններին՝ վերջապես ձեռնարկել Հայաստանում և Մակեդոնիայում 61 ու 23 հոդվածներով խոստացած և մայիսյան ծրագրով ճշգրտված ռեֆորմների իրագործումը:

Կոնգրեսը հատկապես մեծ հույսեր էր կապել Միացյալ Նահանգների նախագահ Ռուզվելտի հետ, ուստի դիմել էր նրան՝ խնդրելով նրա բարձր միջամտությունը, որ թվով 13 կարևոր հարցեր, այդ թվում Հայաստանի հարցը, մտցվեն երկու տարի հետո՝ 1907թ. ամռանը Լահեում (Հաագա) գումարվելիք **խաղաղության միջպետական 2-րդ կոնգրեսի** օրակարգի մեջ: Դիմումում Հայկական հարցի մասին նշված էր, որ հայերի կյանքի, գույքի և պատվի ապահովությունը ծայրաստիճան վտանգված է, ուստի քաղաքակիրթ մարդկության պարտքն է նրան օգնության ձեռք մեկնել: Նաև որոշում էր ընդունվել՝ այդ վճիռը Ռուզվելտին հաղորդել կոնգրեսի նախագահ Էլի Դյուկոմոնի միջոցով:

Կոնգրեսի աշխատանքների ավարտից անմիջապես հետո Էլի Դյուկոմոնը 1905թ. սեպտեմբերի 22-ի թվով նախագահ Ռուզվելտին ուղղել էր միաձայն քվերակված դիմումը և շուտով ԱՄՆ-ի պետական դեպարտամենտից ստացել հետևյալ պատասխանը.

«Պարոն.

Շատ հաճելի պարտականություն եմ կատարում ներկայացնելով Ձեզ նախագահի շնորհակալությունները այն հավանությունների մասին, որ խաղաղության 14-րդ կոնգրեսը տվեց խաղաղության համար նրա արած ջանքերին և դուք արտահայտեցիք այնքան մեծ բարեհաճությամբ սեպտեմբերի 22-ի Ձեր վերջին նամակի մեջ:

Ինչ վերաբերում է այն 13 հարցերին, որ կոնգրեսը ցանկանում է մտցված տեսնել խաղաղության միջպետական երկրորդ կոնգրեսի ծրագրի մեջ, ես կարող եմ Ձեզ ասել, որ մեր կառավարությունը նկատի կառնի այդ հարցերը, երբ այդ երկրորդ կոնգրեսի համար կպատրաստվեն Միացյալ Նահանգների պատվիրակներին տրվելիք հրահանգները»[1]:

Ռուզվելտին հղած դիմումը բուռն արձագանք գտավ հայ գաղութների և համալսարանական հայ երիտասարդության շրջանում: Կազմակերպվեցին

---

[1] **«Դրոշակ»**, N 11 (177), նոյեմբեր, 1906, էջ 163:
[2] **«Մշակ»**, N 9, 15 հունվարի 1906թ.:

[1] **«Մշակ»**, N 10, 17 հունվարի 1906թ.:

ժողովներ, որոնցում չեշտվում էր հարուցած խնդրի կարևորությունն ու այժմեականությունը: Նման ժողովներ տեղի ունեցան Ժնևում, Լոզանում, Ռուշչուկում, Ալեքսանդրիայում և այլուր:

Կոնգրեսի այդ դիմումից բացի, Նախագահ Ռուզվելտին ուղղված մի նոր գրավոր դիմումով 1906թ. հունվարին հանդես եկան Եվրոպայի մի շարք երկրների՝ Գերմանիայի, Անգլիայի, Ավստրիայի, Բելգիայի, Դանիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Իտալիայի, Նորվեգիայի, Շվեդիայի և Շվեյցարիայի նշանավոր քաղաքական, հասարակական, գրական, հրապարակախոսական, եկեղեցական գործիչներ. Ֆրանսիայից՝ Մարսըլեն Բերթըլոն, Լեոն Բուրժուան, Դենիս Կոշենը, Արիստիդ Բրիանը, Էտուարնել-դը Կոնստան, Ֆեդերիկ Պասսին, Անատոլ Լըրուա-Բոլեոն, Կրուալեն, Կլարետին, Հ. Պևեն, Բրեալը, Ռեյնակը, Իտալիայից՝ Ասկոլին, Բոսսին, Սակկին, Անգլիայից՝ Բելֆորդի դքսուհին, պրոֆ. Հարիսը, Մորիսոնը, Բեկստոուն, Ա. Սթեդը և ուրիշներ, թվով 370 ականավոր դեմքեր[1]:

Դիմումի մեջ ասված էր. «Մենք չենք կասկածում, որ դուք նույնպես, ինչպես և մենք, խորապես զգացված եք հայ ժողովրդի ողբերգական վիճակով, ժողովրդի, որը նույն ծագումն ունի, ինչպես և մենք, և կարևոր դեր է խաղացել ամենահին ժամանակներից քաղաքակրթության զարգացման մեջ: Այդ ժողովուրդն այժմ հասցված է կատարյալ հուսահատության, և նրան կորուստ են սպառնում այն անգթությունները և բռնությունները, որոնք մնում են անպատիժ, կատարվում են նրան շրջապատող բարբարոս մուսուլման ցեղերի ձեռքով և որոնց նպատակն է ջնջել նրա գոյությունը: ... Հայ ժողովրդի համար չկա այլևս ոչ նրա գույքի, ոչ կյանքի և ոչ էլ տղամարդկանց, կանանց ու երեխաների կյանքի ապահովության որևէ երաշխիք: Կազմակերպված ավազակախմբերը, որոնք կատաղաբար գործում են Ասիայում, նրանց սպառնում են կողոպուտներով, հափշտակություններով, բռնությամբ և կոտորածով:

... Պարոն Նախագահ, մենք խնդրում ենք Ձեզ՝ վերցնել նախաձեռնություն և ստանալ օգնություն պետությունների կողմից, որպեսզի օսմանյան կայսրության հպատակներին, վերջապես, կարողանանք տալ այն հասարակական հանգըստությունը և ընդունելի կարգը, որի բացակայությունը այդ կայսրությունը հասցրեց այդպիսի թշվառությունների և որը սպառնում է նրան հասցնել կատարյալ կործանման»[2]:

Ֆրանս-հայկական կոմիտեի խնդրանքով դիմումը խմբագրել էր և կից առաքման գիրը ստորագրել Մարսըլեն Բերթըլոն, որից հետո այն հանձնվել էր Նախագահ Ռուզվելտին՝ Ջեյմս Ռայնոլդի միջոցով:

Ի պատասխան Եվրոպայի հայասերների դիմումի՝ ԱՄՆ-ի Նախագահ Ռուզվելտի հանձնարարությամբ պետական դեպարտամենտի քարտուղար Ռոոտը

[1] Տե՛ս «Արշալոյս», N 59, 17 մարտի 1906թ. նաև՝ «Մշակ», N 14, 21 հունվարի 1906թ.:
[2] «Մշակ» N 15, 22 հունվարի 1906թ. , նաև՝ «Արշալոյս», N 59, 17 մարտի 1906թ.:

պատասխանը տվել էր այդ դիմումը ներկայացրած դր. Ջեյմս Ռայնոլդին, ուր ասված էր.

« Տե՛ր,

Նախագահն այս պաշտոնատանն է հանձնել ընդունագրելու համար Ձեր հունվարի 18-ի նամակը, որի հետ ներկայացվել էր մի բազմաստորագիր խնդրագիր Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Շվեդիայի, Դանիայի, Մեծ Բրիտանիայի, Հոլանդիայի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ազդեցիկ ու ներկայացուցիչ մարդկանց կողմից, Նախագահին կոչ անող, որ նա գործ ձեռնարկի՝ Թուրքիայի հայ հպատակների կրած հարստահարությունների առաջն առնելու համար:

Խնդրողների բարձր դիրքն ավելի մեծ շահագրգռություն կտա այն խնդրին, որն արդեն գրավել է Նախագահի ամենալուրջ ուշադրությունը՝ անցյալ երկար տարիներից ի վեր:

Այս կառավարության այլևայլ ճյուղերը կրկին ու կրկին արտահայտում են ամերիկյան ժողովրդի համակրանքը ամեն երկրի հարստահարվածների, նաև՝ դժբախտ հայերի նկատմամբ: Ոչ մի շրջանակի մեջ տարակույս չկա, թե Նախագահը բաղձանք ունի, որ հայերն ունենան կյանքի, գույքի ապահովությունը, որի երաշխավորելը եղել է եվրոպական պետությունների միաբան նպատակը»[1]:

Այնուհետև պատասխան նամակում նշվում էր, որ Թուրքիայի «հպատակ հայերի տառապանքները բարձրաձայն դարման և հատուցում են աղաղակում: Դրանք վիրավորում են ողջ մարդկության զգացումը, որը դատապարտում է այն ցեղային ներհակությունները, որ առաջ են եկել Թուրք բնակչության անհաշտելի տարրերի կողմից: Ուղղադատ ոչ մի մարդ չի կարող ականատես լինել այնպիսի դեպքերի, առանց տենչալու, որ ուժ ունենա կանխելու դրանք: Ես անկեղծորեն կբաղձայի, որ Միացյալ Նահանգներն այդ զորությունն ունենային»[2]:

Միաժամանակ պետական դեպարտամենտի քարտուղարը անկեղծորեն գրում էր, որ Միացյալ Նահանգների ջանքերը «անբավական պիտի լինեն մի օրինական ու զորավոր միջամտության համար», առանց եվրոպական երկրների կառավարությունների հետևողական աջակցության[3]:

Նախագահ Ռուզվելտին ուղղված Բերթըլոյի խմբագրած խնդրագիրը լայն արձագանք ունեցավ և ամբողջովին կամ սեղմ շարադրանքով տպագրվեց ռուսաստանյան, եվրոպական և ամերիկյան բազմաթիվ թերթերում:

Ռուսահայ իրականության մեջ դիմում-խնդրագրի նկատմամբ վերաբերմունքը միատեսակ չէր: Ռուսահայ գործիչների մեծ մասը ողջունում էր եվրո-

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. N 2, վավ. 3[13] (թերթի կտրոն):
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

պական մտավորականների հավաքական դիմումը Միացյալ Նահանգների Նախագահին, բայց առավել սթափ մտածող հայերը այն համարում էին ավելորդ՝ հիշատակելով անցած շուրջ 30 տարիներին Հայկական հարցի նկատմամբ պաշտոնական Եվրոպայի վերաբերմունքի պատմությունը:

Երիտասարդ պատմաբան Հակոբ Մանանդյանը Թիֆլիսում լույս տեսնող «Արշալույս» թերթում տպագրած «Եվրոպական միջամտության խաբուսիկ հույս» վերնագրով հոդվածում հոռետեսաբար էր գնահատում Հայկական հարցի մասին ԱՄՆ-ի նախագահին հղած բողոք-դիմումը: Նա գրում էր.

«Եվրոպայի համակրությունը հայկական խնդրում թեև որոշ նշանակություն ունի, բայց Եվրոպան չէ, որ պիտի լուծե Թուրքահայ խնդիրը:

Հիշե՞նք մեր անցյալը»[1]:

Մանանդյանը գտնում էր, որ Արևմուտքին արված խնդրանք-պաղատանքի փոխարեն հայ քաղաքական ուժերը պետք է փոխեն Թուրքահայ ազատագրական շարժման մարտավարությունը և հույսը կապեն միայն ու միայն Ռուսաստանի միջամտության վրա: Նա հարց էր տալիս. «Հարկավոր չէ՞ արդյոք այժմվանից իսկ հող պատրաստել, որպեսզի սահմանադրական Ռուսաստանը համակրի հային, գիտակցի իր իսկական շահերը և միջամտության ու օգնության ձեռք պարզի Թուրքահայ ժողովրդին»: Հոդվածագիրն ինքն իր դրած հարցին այսպես էր պատասխանում.

«Մենք համոզված ենք, որ Թուրքահայ ազատագրական շարժման անիվը վերջ ի վերջո շուռ պիտի գա այդ ուղղությամբ: Որքան շու՛տ, այնքան լավ: Հարավից, արևելքից ու արևմուտքից Թուրքահայ նահանգները շրջապատված են մահմեդական մոլեռանդ երկրներով: Պատմական մի անհրաժեշտություն է, որ Թուրքահայը օգնություն սպասի հյուսիսից: Եվրոպական միջամտության հույսը խաբուսիկ էր, խաբուսիկ էլ կմնա»[2]:

Նախագահ Ռուզվելտին հղած դիմում-խնդրագիրը տպագրվեց նաև Թուրքական մամուլում: Կ.Պոլսի Թուրք Թերթերն իրենց մեկնաբանություններով զայրույթ էին արտահայտում օսմանյան կայսրության գործերին եվրոպական միջամտության նոր փաստի առթիվ, իսկ արտասահմանում լույս տեսնող երիտԹուրքական ընդդիմադիր լրագրերը քննադատում էին սուլթանական կարգերը՝ միաժամանակ առիթն օգտագործելով պարզում իրենց տեսակետները Հայկական հարցի մասին:

Կարդալով խնդրագիրը՝ Փարիզում հիմնավորված երիտԹուրքական տարագիր խոշոր գործիչներից մեկը՝ իշխան Մեհմեդ Սաբահեդդինը նամակ է հղում Բերթլոյին և իր կարծիքը հայտնում փաստաթղթի վերաբերյալ:

Նամակի սկզբում իշխանը հավաստիացնում էր, թե «երախտագիտության ճշմարիտ մի զգացումով կարդացի այն կոչը, որ Դուք ուղղել եք Նախագահ Ռուզվելտին ի նպաստ հայերի»[1]:

Վկայակոչելով գանգատագիր-կոչի տողերը, թե «ամոթ է Եվրոպայի և թույլ տվեք ասել, Ամերիկայի համար, որ հանդուրժում է շարունակվող ոճիրները հայ ժողովրդի նկատմամբ», Սաբահեդդինն ավելացնում էր, որ պետությունների հասցեին արված արդարացի նախատինքը թերի է, քանի որ այնտեղ չի ասված, թե եվրոպական երկրներից մի քանիսը ուղղակի մասնակից են ոճիրներին, իսկ Օսմանյան կայսրության անմիջական դրացիներից մեկը բացահայտորեն քաջալերում է այդ ոճիրները[2]:

Անշուշտ, Սաբահեդդինը նկատի ուներ ցարական Ռուսաստանին, ուր ի պաշտպանություն Թուրքահայերի ազատագրական շարժման՝ իրենց ձայնը բարձրացնում էին միայն առանձին ռուս մարդիկ, իսկ ամբողջության մեջ ռուս մտավորականությունը հայության շուրջ ստեղծված իրադարձությունները շարունակում էր ընկալել այնպես, ինչպես ներկայացնում էր բյուրոկրատական վարչակարգը՝ կեղծ պրոպագանդայով:

Հայերի նկատմամբ համակրական խոսքերից հետո իշխան Սաբահեդդինը, այնուհետև, բարձրացնում էր խնդիրներ, որոնք ըստ էության գալիս էին չեզոքացնելու իր Նամակի սկզբում արտահայտած կարծիքը:

Նա տարօրինակ էր համարում այն, որ նախագահ Ռուզվելտին հղած իր Նամակ-կոչում Բերթլոն գրել է միայն հայերի մասին, իսկ Թուրք ժողովրդի հարստահարված զանգվածների մասին ոչ մի խոսք չի ասել, «որոնք նվազ ճնշված չեն, քան իրենց հայրենակից քրիստոնյաները»: Եվ նա նկարագրում էր Թուրք գյուղացիների տնտեսական անտանելի վիճակը, բողոքում էր, որ Թուրք զինվորները միայնակ են պաշտպանում երկրի անվտանգությունը և զոհվում հեռուներում, մինչդեռ քրիստոնյաները, այդ թվում հայերը, ազատ են բանակում ծառայելու պարտականությունից:

Այնուհետև Սաբահեդդինը հարց էր տալիս, թե ինչու Եվրոպան հետևողականորեն հանդես է գալիս հայերի օգտին՝ օսմանյան կայսրությունում իրականացվելիք բարենորոգումների պահանջով, բայց խուսափում է այդ պահանջը տարածել Թուրք հարստահարվող զանգվածների վրա: «Կյանքը, - գրում էր նա,- առաջադրում է կայսրության մեջ ոչ թե մասնակի, այլ ընդհանուր բարենորոգման պահանջը: Հայերն իրենց բնակած բոլոր նահանգներում, առանց բացառության, փոքրամասնություն են կազմում: Նման իրավիճակում ինչպե՞ս կարելի է լրջորեն խորհել նրանց վիճակի բարվոքման մասին՝ առանց նկատի առնելու մեծամասնության վիճակը»[3]:

Ապա երիտԹուրք նշանավոր գործիչը առաջ էր քաշում այն հարցը, թե ի վերջո Թուրքերը և հայերը կարո՞ղ են հաշտ ու խաղաղ ապրել օսմանյան

---

[1] **«Արշալույս»**, N 22, 31 հունվարի 1906թ.:
[2] Նույն տեղում:

[1] **«Ռազմիկ»**, N 30, 1 փետրվարի 1906թ.:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

պետության մեջ, թե՞ դա բացառված է: Առաջադրելով հարցը՝ նա պատասխանում էր, որ երկու ազգերի խաղաղ գոյակցությունը մի պետության մեջ ոչ միայն ցանկալի է ու հնարավոր, այլև՝ անխուսափելի:

Հայը և Թուրքը, գրում էր նա, նույն հողի ու ջրի զավակներ են, և շահերի կատարյալ համերաշխություն կա նրանց միջև: Այս երկու ժողովուրդները, որոնք հիմնականում բաղկացած են խաղաղասեր աշխատավորներից, երազում են կարգապահության և օրինապահության մասին, երկուսն էլ ժամանակ առ ժամանակ ենթակա են նույն վտանգներին՝ վաչկատուն քուրդ ցեղերի հարձակումներին[1]:

Անդրադառնալով այդ ընդհանուր վտանգին՝ Սաբահեդդինը շարունակում էր, որ Թուրքերի համար ցավալի հետևանք է ունենում այն, որ Եվրոպայում տարբերություն չեն դնում Թուրքի և մուսուլման ոչ Թուրքի միջև: Այդ չփոթությունը եվրոպացիներին հնարավորություն չի տալիս ըմբռնելու, թե ինչու քուրդ մուսուլմանները հարստահարում են ոչ միայն քրիստոնյա հայերին, այլև մուսուլման Թուրքերին, «և եթե ուրիշ որս չեն գտնում, կողոպտում են իրար»[2]: Ապա՝ «Միտքս քուրդ ցեղը վարկաբեկելը չէ: Քրդերն իրենց արիական ծագումով ցեղագրապես ավելի մոտ են հայերին, քան Թուրքերին, և օժտված են խելքով ու կորովով: Նրանց վայրագությունն արդյունք է տնտեսական-ընկերային վիճակի: Եվ եթե հաջողվի նրանց կապել հողի հետ, ապա Փոքր Ասիայում վերջ կդնեն անհամաձայնությունը և անիշխանությունը»[3]:

Սաբահեդդինը գտնում էր, որ քրդերին հողի հետ կապելը պահանջում է երկարատև ժամանակ, մի բան, որ կայսրության շահին համահունչ չէ: Այդ շահը պահանջում է արմատական փոփոխություններ կատարել երկրի կառավարման համակարգում և ամենից առաջ դիմել վարչական ապակենտրոնացման[4]:

Իշխան Սաբահեդդինի այս նամակը տպագրվեց հայկական մամուլի օրգաններում և ենթարկվեց լայն քննարկման: Ոմանք հավանություն էին տալիս այնտեղ արծարծված մտքերին, ուրիշները վճռականապես մերժում էին: Վերջիններիս թվում էր «Ռազմիկ» թերթի խմբագիր, նշանավոր դաշնակցական գործիչ Ռուբեն Զարդարյանը, որը թերթում հանդես եկավ մի շարք հրապարակումներով:

Ռ. Զարդարյանը գրում էր, որ նամակ հղելով Բերթելոյին՝ Սաբահեդդինը նպատակ է հետապնդել հայկական բարենորոգումների հարցը խեղդել ընդհանուր Թուրքիայի բարեկարգության առաջարկով[5]: Բերթելոյին հասցեագրած

[1] «Ռազմիկ», N 30, 1 փետրվարի 1906թ.:
[2] Նույն տեղում, N 31, 4 փետրվարի 1906թ.:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, N 33, 11 փետրվարի 1906թ.:

նամակից առաջ նա հայերին ուղղած մի բաց նամակով նրանց մեղադրել էր, որ իրենց շարժումներով ու դիմումներով նրանք եվրոպական օտար երկրներին հարկադրում են միջամտել Թուրքիայի ներքին գործերին: Բայց ուրիշ ի՞նչ ճանապարհ կարող է ցույց տալ իշխանը. հարց էր տալիս «Ռազմիկի» խմբագիրը: Առայժմ ոչ մի: «Իրենց սրտի վրա կրելով պատմական փորձառության դասը վերքը,- գրում էր նա,- մանավանդ խորապես ճանաչած ըլլալով Թուրքիոյ կառավարության խոստումների բարոյական արժեքը՝ հայերը համոզուած են թե առանց **օտարին միջամտության**, առանց **եվրոպական քոնթրոլի մը** հսկողության՝ Թուրքիան ոչ միայն չպիտի ուզե, այլև կարող չէ արմատական, արդար և խելացի բարեկարգությամբ մը օժտել երկիրը»[1]:

Անդրադառնալով Սաբահեդդինի այն հայտարարությանը, թե Թուրքիայում հայերի հետ հավասարապես հարստահարվում են նաև Թուրքերը, ասել է թե՝ Թուրքական իշխանությունների կողմից հայահալած դիտումներով ծրագիր չկա և պարզապես պետք է բողոքել վարչական հոռի սիստեմի դեմ, Ռ. Զարդարյանը գրում էր, թե դա պարզ աչքակապություն է, քանի որ Թուրքական կառավարությունը և դիվանագիտությունը հետևողականորեն իրագործում են հայությանը իր հայրենիքում բնաջնջելու ավանդական քաղաքականությունը, մինչդեռ իսլամ ժողովրդի դեմ եղած վարմունքի խստությունները միայն ժամանակավոր, դեպքից դեպք ուժեղացող կամ թուլացող հանգամանք ունեն: «Հայու սրտին կը զարնեն դաշույնով,- շեշտում էր նա,- մինչդեռ Թուրք գյուղացու կամ հասարակ խուժանին կը դպչին ճիպոտով մը: Հայուն կը զարնե քյուրտը, Թուրք խուժանը, զափթիեն, զինուորը, փոլիսը, Թուրք վարչական ողջ մեքենան, սուլթան Համիտը, բանտը, կախաղանը, մինչդեռ Սապահեդդին իր կրոնակից գեղացիներուն լոկ տնտեսական տխուր կացութեանը, հայրենիքի [հանդեպ] պարտականությունը կատարող զինուորներուն մահուանը և այդ մահուանը հետևանք եղող երկրագործ ժողովուրդին կորուստներուն համար կը գանգատի»[2]:

Իշխան Սաբահեդդինի պնդմանը, թե հայն ու Թուրքը նույն շահերն ունեն, Ռ. Զարդարյանը հակադրում էր հակառակ տեսակետը: Նա գրում էր, որ, նախ, հայերին կեղեքող, ավազակություններով ու թալաններով ապրող քրդերին մշտապես խրախուսում են Թուրք իշխողները, սրանք են շահագրգռված, որ քուրդ ցեղը միշտ բարբարոս վիճակում մնա: Մի՞թե Թուրքական կառավարությունը չէր, որ **Համիդիե** անունով մկրտեց քուրդ ավազակաբարո հեծյալ գնդերին, զենք տվեց մարդասպանների ձեռքը, նրանց մղեց հայերի զանգվածային ջարդերի:

Այնուհետև «Ռազմիկի» խմբագիրը փաստեր էր բերում այն մասին, որ Հայաստանի շատ գավառներում Թուրք բեկերը և աղալարները տիրացել են

[1] «Ռազմիկ», N 34, 15 փետրվարի 1906թ.:
[2] Նույն տեղում:

ընդարձակ հողատարածքների՝ հայ գյուղացիներին զրկելով սեփականություն ունենալու իրավունքից: Վերջիններս իրենց ընտանիքները սովից փրկելու համար ստիպված կրում են Թուրք հողատերերի բոլոր ստորացումները, ոտնատակ տալիս իրենց արժանապատվությունը: Ընկերային վիճակի նույն հակամարտ շահերն ունեն նաև քաղաքաբնակ հայերն ու Թուրքերը: Աշխատանքը բաժին է քաղաքաբնակ հային, իսկ պտուղների վայելումը՝ քաղաքաբնակ Թուրքին: «Քաղաքաբնակ Թուրքերուն մեկ մասը զինուոր է, մաս մը կառավարական պաշտոնեայ, չնչին փոքրամասնություն մը՝ խիստ նախնական արհեստներով զբաղված ու մարդ չի գիտեր Թե դեռ անդին մնացած խոշոր մեծամասնություն մը ինչո՞վ կը շահի ու ինչո՞վ կ՚ապրի: ... Թե՛ պաշտոնեայ, Թե անգործ քաղաքաբնակ Թուրքերը կողմնակի, մութ միջոցներ գտած են՝ կեղեքելու, հարստահարելու հայը և այդ «վաստակով» պահելու իրենց գոյությունը»[1]:

Ընդառաջ գնալով Բերթլոյի՝ և եվրոպական երկրների մյուս նշանավոր գործիչների խնդրանք-կոչին՝ նախագահ Ռուզվելտը ջանքեր գործադրեց հայկական հարցը Լահեի 1907թ. միջպետական կոնգրեսի օրակարգի մեջ մտցնելու համար, բայց նրա փորձերն ապարդյուն անցան: Եվ դա հայոց խնդրի տապալման առաջին դեպքը չէր:

Դեռևս 1900թ. Փարիզում գումարված խաղաղության համաշխարհային 9-րդ կոնգրեսն իր օրակարգի մեջ առաջին անգամ մտցրել էր հայոց հարցի քննությունը: Բայց խաղաղության կոնգրեսները պաշտոնական ֆունկցիաներից զուրկ լինելով՝ միայն կարող էին իղձ ու փափագ հայտնել, դիմումներ անել և խնդրել, որպեսզի չարաբաստիկ հայոց հարցի վրա հրավիրվի եվրոպական դիվանագետների ուշադրությունը: Խաղաղության կոնգրեսների կողմից արված մասնավոր և միայն բարոյական նշանակություն ունեցող դիմումները, արտահայտած իղձերն ու փափագները շուտով մոռացվում էին, և հայոց հարցի համար չէին կարողանում ստեղծել պաշտոնական հանգամանք:

1906թ. փետրվարի 23-ին Լոնդոնում տեղի էր ունեցել Եվրոպայի հայասերների ժողով, որը հրավիրվել էր «Արևելյան հարցի միջազգային միության» կողմից: Ժողովը նախագահում էր հայկական հարցի ջերմ պաշտպան, ֆրանսիական սենատի անդամ դ՚Էտուրնել-դը Կոնստան: Իտալիայի կողմից մասնակցում էր Լուիջի Վիլլարին, Ֆրանսիայից՝ «Պրո Արմենիայի» խմբագիր Պիեռ Քիյառը և Ժան Լոնգեն: Ներկա էին նաև Ս. Ստիվենսոնը, Մ. Նոել Բաքստը, դր. Ռեյնոլդը, դր. Ֆերբերնը, Սաութվարդի եպիսկոպոսը, Շվանը, կանոնիկոս Մակ-Քոլը, պրոֆ. Բիթը, լորդ Մոնկվերը, Լոնդոնում Սերբիայի դեսպանը և շատ ուրիշներ:

[1] **«Ռազմիկ»**, N 35, 18 փետրվարի 1906թ.:
Բերթլոյի մահվամբ (1907թ. մարտի 18, Փարիզ) հայ դատը կորցրեց իր զորեղ պաշտպաններից մեկին Եվրոպայում: Մեծ գիտնականի և հայասերի մահվան առթիվ Հ.Ց.դաշնակցությունը հեռագրով արտահայտել էր հայության խոր վիշտը:

Ժողովին նախագահող դը Կոնստան մասնակիցներին տեղեկացրեց, որ տարբեր երկրների հայասերներից ստացվել են մեծ թվով համակրական նամակներ, որոնց հեղինակները ցավ են հայտնում, որ չեն կարողացել ներկա լինել այդ կարևոր հանդիպմանը:

Իր բացման խոսքում դը Կոնստան ասում էր. «Մենք իրավունք ունենք մեր անձնական տառապանքներով չշահագրգռվել, բայց իրավունք չունենք չշահագրգռվել մարդկային տառապանքով»:

Իր հանգամանալից ու գեղեցիկ բացման խոսքը նա ավարտեց հետևյալ խոսքերով. «Զգաղարենք սուլթանի կառավարությունը որակել որպես ոճիր և որպես ամոթ մեր քաղաքակրթության համար, բայց նաև հրավիրենք բոլոր քաղաքակիրթ ժողովուրդներին, որ միանան մեզ՝ վերջ դնելու համար այս խայտառակությանը ...»[1]:

Հանդես գալով՝ դը Ռեյնոլդը, որ երկար տարիներ ապրել էր Հայաստանում, ողբալի մանրամասնություններ ներկայացրեց երկրի մեջ տիրող սովի և թշվառության մասին, որոնք սպառնում են բնաջնջել 1895-1896թթ. կոտորածից ողջ մնացողներին:

Իր ելույթում Պիեռ Քիյառը հիշեցրեց, որ այս նույն սրահում 18 ամիս առաջ տեղի է ունեցել նույնանպատակ ժողով, որը, դժբախտաբար, ոչ մի արդյունք չի ունեցել, և դրա համար պատասխանատու է ոչ միայն սուլթանի կառավարությունը, այլև մեծ տերությունները և այդ երկրների քաղաքացիները, որոնք պահանջված ուժով չեն ազդել իրենց կառավարությունների վրա: «Մենք պատասխանատու ենք հայերի նկատմամբ, որոնց տվինք մեր քաղաքակրթության ճաշակը, ազատության և արդարության գաղափարները»[2]:

Սաութվարդի եպիսկոպոսի, կանոնիկոս Մակ-Քոլի, Բրքստոնի, Բիթի և այլոց ելույթներից հետո ժողովն ընդունեց հետևյալ բանաձևը.

«Ժողովն իր խորին ցավն է հայտնում, որ Բեռլինյան 1878-ի դաշնագրության 23-րդ և 61-րդ հոդվածների մեջ պարունակած հանդիսավոր խոստումների հանդեպ ստորագրող պետությունները ցարդ անկարող եղան ազդու միջոցներ ձեռք առնել՝ օսմանյան կայսրության եվրոպական և ասիական նահանգների մեջ բարենորոգումներ ներմուծելու համար: Ժողովը սաստկագին խընդրում է, որ այս պետությունների և Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից մշակվի մի ծրագիր, որ կարելի լինի հարկադրել սուլթանին՝ տաճկահայ նահանգներում իրականացնելու մի արդար և մարդկային վարչություն»[3]:

Ժողովից հետո այդ առթիվ տրվեց ճաշկերույթ ի պատիվ Ջեյմ Բրայսի: Առիթից օգտվելով՝ նա մի անգամ ևս չեշտեց, որ իր մինիստրական պաշտոնում նույնպես ինքը պիտի չարունակի ծառայել իր այն գաղափարներին,

[1] **«Դրոշակ»**, N 3 (169), մարտ, 1906, էջ 47:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

որոնց նպատակն է բարեփոխել Հայաստանի վիճակը:

1906թ. հուլիսի 23(10)-ին Լոնդոնում գումարվել էր **միջպառլամենտական կոնֆերանս**, որը տևել էր երեք օր: Լոնդոն էր եկել 600 պատգամավոր՝ զանազան երկրների պառլամենտների կողմից:

Ընդհանուր պրոպագանդայի տեսակետից նկատելով նրա կարևորությունը, նաև այն դերը, որ այդ ժողովը կարող էր խաղալ հայոց խնդիրը Լահեի կոնգրեսին ներկայացնելու գործի մեջ՝ «Դրոշակի» խմբագրությունը միջոցներ ձեռք առավ Հայկական հարցը ժողովի առջև դնելու և հեռագրական դիմում արեց կոնֆերանսի փոխնախագահ դ'Էտուրնել-դը Կոնստային, հայ դատի ականավոր պաշտպան Ֆրանսիս դը Պրեսանսեին և բելգիացի պատգամավոր, հայասեր Ժորժ Լորանին:

Հեռագրում ասված էր. «Նկատի ունենալով ձեր համակրանքը դեպի մեր դատը՝ հարկադրված ենք խնդրելու Ձեզ, որ նեղություն հանձն առնեք, հանուն արդարության և խաղաղության գործի, որի քաջարի պաշտպանն եք, հարուցանելու միջպառլամենտական կոնֆերանսի առջև հայկական խնդիրը, ճանաչված միջազգային դաշնագրով: Այդ դիմումն անելու համար մենք ունենք հիմնավոր պատճառներ: Թուրքաց Հայաստանի մեջ իրերի դրությունն օրեցօր դառնում է ծանր, վտանգավոր: Արտաքին հանգստության դիմակի ներքո հայաջինջ քաղաքականությունն իր գործն է տեսնում անարգել ու հետևողական»:

Հեռագրում բերվում էին հայերի անագորույն վիճակի մասին մի շարք փաստեր: Խմբագրությունն այնուհետև խնդրում էր՝ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը կյանքի կոչելու և Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու համար կոնֆերանսում բարձրացնել Հայկական հարցը, աջակից կանգնել հայկական դատին, «որը միաժամանակ արդարության և խաղաղության դատն է»:

Հ.Յ.դաշնակցության դիմումը կոնֆերանսում արձագանք էր գտել շնորհիվ Ֆրանսիայի, Անգլիայի, Բելգիայի պառլամենտների հայասեր պատգամավորների:

Բելգիայի պառլամենտի պատգամավոր Ժորժ Լորանը (ընտրված Վերտոնից) աջակցություն ստանալով այլ հայասեր պատգամավորների կողմից, խոսք առնելով՝ բարձրացրեց Հայկական հարցը:

Լորանն իր ճառում նշեց, որ Բեռլինի 1878թ. կոնգրեսի հայտնի փաստաթուղթն ստորագրած պետությունները տեր չեն կանգնում իրենց գրավոր խոստմանը և անգործության են մատնել միջազգային դաշնագիրը:

«Պարտավոր ենք պահանջելու, - ասում էր Լորանը, - որ դաշնագրերը գործադրվեն: Եթե ոչ, ապա ինչ օգուտ դրանց կնքելուց: Ինչ բանի են ծառայում մեր բոլոր արածները, և հասարակությունն ինչ վստահություն կարող է ունենալ մեր ջանքերի վրա: Արդ, փորձը ցույց է տալիս, որ եթե որոշ երկրների, մանավանդ Թուրքիայի հետ դաշնագրերի գործադրությունը բռնի ուժով չպահանջվի, դրանք կմնան առանց գործադրության»:

Այնուհետև նշելով խնդիրը Լահեի կոնգրեսին ներկայացնելու անհրաժեշտությունը, Լորանն իր ճառը վերջացնում էր հետևյալ խոսքերով.

«Հայերն ինձ խնդրել են, որ այստեղ լսել տամ իրենց վշտի աղաղակը և օրինական բողոքը կամայականության ռեժիմի դեմ: Շարունակել անտարբեր մնալ հայոց ցավերի նկատմամբ, նշանակում է բռնաբարել մի դաշնագիր, որը կրում է սուլթանի և բոլոր մեծ պետությունների ստորագրությունը»[1]:

Միջպառլամենտական կոնֆերանսն ընդառաջ գնաց Հ.Յ.դաշնակցության խնդրանքին և միաձայն ընդունեց պատգամավոր Լորանի առաջարկը, որով պահանջվում էր, որպեսզի Լահեում 1907թ. գումարվելիք խաղաղության միջպետական 2-րդ կոնգրեսը ձեռք առնի գործուն միջոցներ, Թուրքիային հարկադրի հարգել միջազգային դաշնագրերը և հայերին տալ կայսրության մյուս ազգերին, այդ թվում Թուրքերին, հավասար իրավունքներ:

Որպես կանոն, միջպառլամենտական կոնֆերանսների ընդունված բանաձևերը քննարկվում էին դրանցում մասնակցած երկրների պառլամենտների կողմից, որոնց ընդունած որոշումները պարտավոր էին իրականացնել կառավարությունները: Հետևապես Հայոց հարցը նույնպես պետք է անցներ այդ ուղիով, և կառավարությունները պետք է դիմումներ անեին այդ հարցը Լահեի կոնֆերանսի օրակարգ մտցնելու համար:

Ահա թե ինչու հայ քաղաքական ուժերի շրջանում հույս էր արթնացել, որ Լոնդոնի միջպառլամենտական կոնֆերանսի ընդունած այդ բանաձևը թեև դեռ դողդոջուն, անհաստատ որոշում էր, բայց, իբրև առաջին քայլ, կարևոր նշանակություն կարող էր ունենալ՝ մի նոր էտապի սկիզբ հանդիսանալով հայոց հարցի լուծման մեջ:

Այդ հույսը թելադրվում էր նրանով, որ Հայկական հարցը խաղաղ եղանակով լուծելու համար եվրոպական հայասերների մինչ այդ ձեռնարկած բոլոր ջանքերը եղել են մասնավոր նախաձեռնություններ, իսկ Լոնդոնի կոնֆերանսում տեղի ունեցածը կիսապաշտոնական գործողություն էր: Համոզմունք կար, որ եթե միջպետական կոնգրեսը գոնե մի անգամ քննության առարկա դարձնի Հայկական հարցը, ապա ինչ-որ հույսեր կարող էին առաջանալ հայոց մեջ: Բայց հարցը օրակարգ մտցնելու ճանապարհին կանգնած էին մեծ խոչընդոտներ և ամենից առաջ Թուրքիայի խափանարարական աշխատանքը:

1906թ. սեպտեմբերի 15-22-ը Միլանում (Իտալիա) տեղի ունեցավ **խաղաղության համաշխարհային 15-րդ կոնգրեսը:**

Միլանի կոնգրեսին նախագահում էր Թեոդոր Մոմսենը՝ Իտալիայում հայկական դատի առաջին պաշտպաններից մեկը:

Կոնգրեսին մասնակցում էր մի քանի հարյուր պատգամավոր Ֆրանսիայից, Անգլիայից, ԱՄՆ-ից, Գերմանիայից, Բելգիայից, Դանիայից և ուրիշ

[1] **«Դրոշակ»**, N 8 (174), օգոստոս, 1906, էջ 115:

երկրներից: Պատգամավորների մեջ մեծ թիվ էին կազմում Հայկական հարցի պաշտպանները: Հայոց բարեկամ Պիեռ Քիյառը կոնգրեսում ներկայացնում էր «Եվրոպայի Հայ ուսանողական միությունը»:

Կոնգրեսի բացման առթիվ «Դրոշակի» խմբագրությունը Հ.Յ.դաշնակցության անունից հղեց ողջույնի հեռագիր:

Կոնգրեսի երկրորդ նիստում Պիեռ Քիյառը հանդես եկավ մի ոգեշունչ ճառով, պարզեց հայ ազգի դանդաղ ոչնչացման սուլթանական ծրագրի իրագործման ընթացքը և պահանջեց մեծ տերությունների ակտիվ միջամտությունը:

Տեղի ունեցան մտքերի փոխանակում և տաք վիճաբանություններ, որոնց մասնակցեցին մի շարք երկրների պատգամավորներ: Ի վերջո կոնգրեսը միաձայն քվեարկեց «Հայաստան» վերտառությամբ մի բանաձև, որով իր ձայնն էր միացնում այն բազմաթիվ բողոքներին, որոնք կազմում էին հայկական դատի բարոյական ուժը[1]: Բանաձևի մեջ կրկին հույս էր հայտնվում, որ Լահեի միջպետական կոնգրեսը կանդրադառնա Հայկական հարցին:

1906թ. հոկտեմբերին «Դրոշակի» խմբագրությունը Հ.Յ.դաշնակցության անունից կրկին Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի և Միացյալ Նահանգների արտաքին գործերի մինիստրություններին դիմում հղեց՝ հայկական խնդիրը Լահեի կոնգրեսին ներկայացնելու համար: Այդ դիմումին կցված էր 14 մեծադիր երեսներից բաղկացած մի դոսիե, ուր ցուցակագրված էին Թուրքաց Հայաստանում կատարված բռնությունները և կոտանքները 1906թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը:

Դիմումի մեջ շեշտվում էր, որ Թուրք կառավարությունն անկարող լինելով կրկնելու 1895-1896-ի կոտորածները՝ հարկադրված իր հակահայ քաղաքականությանը տվել է նոր ձև՝ այնտեղ, ուր հայ բնակչությունն ուժեղ է, բազմաքանակ, այնտեղ նա ջանք է թափում նոսրացնել հայությանը:

Այնուհետև, արդեն քանիցս նշվում էր, որ խոստացած բարենորոգումների գործադրությունը չի հետապնդում օսմանյան կայսրության անդամահատում, ոչ էլ հայ ժողովուրդը իր համար պահանջում է հատուկ իրավունքներ: Նրա նպատակն է, որ հայկական նահանգների ողջ ազգաբնակչությունն ունենա մարդավայել ապրելու հնարավորություններ:

Դիմումի առթիվ դաշնակցության «Խարիսխ» թերթը գրում էր.

«Աղերսանք չէ այդ դիմումը և ոչ էլ հարցում կամ սպասելիք Հասգայում գումարված խորհրդաժողովից, որովհետև մեզ լավ հայտնի է, թե որքան խոր է վիհը տաճկահայի դատի և ժամանակակից դիվանագիտության միտումների միջև, որոնք իրենց մեջ մի բովանդակություն են պարունակել՝ շահագործել թափվող արյունը քաղաքական զանազան կոմբինացիաների համար կամ վայրագ անտարբերությամբ նայել, թե ինչպես մի կառավարություն ձգտում է

[1] «Դրոշակ», N 10(176), հոկտեմբեր, 1906, էջ 147-148:

վերջ դնել մի ժողովրդի կյանքին»[1]:

Հայոց բարեկամներ Ֆր. դը Պրեսանսեն և Պիեռ Քիյառը հանձն առան պաշտոնագիր-դիմումն անձամբ ներկայացնել Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Լեոն Բուրժուային:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Լահեում 1907թ. կայանալիք միջպետական կոնգրեսի հետ Հ.Յ.դաշնակցությունը, և ոչ միայն նա, կապել էր մեծ հույսեր: Ուղղակի կարելի է ասել, որ հայ ազգային քաղաքական ուժերի համար Լահեն դարձել էր բացարձակ գաղափարի նման մի բան:

Լահեի (Հաագայի) կոնգրեսի գումարման նախօրյակին Թուրքական իշխանությունները անհանգստություն էին ցույց տալիս և դիմում հակաքայլերի:

1907թ. ապրիլի վերջերին Բիթլիսի վալի Ֆերիդի հրամանով մզկիթների մեջ հավաքվեցին բոլոր Թուրք մոլլաները, շեյխերն ու մեծամեծ աղաները: Նպատակն էր խորհրդակցել «վերահաս վտանգի» շուրջ, կազմակերպել հայերից հանրագրերի հավաքումը և պալատ ուղարկելը՝ ապացուցելու համար, թե նրանք գոհ են տիրող ռեժիմից, և թե Թուրքիան եվրոպական գյավուրների կողմից բարեկարգվելու կարիքը չունի:

Արդյունքը չուշացավ: Շուտով բռնության տակ «Հայ հասարակության կողմից» շնորհակալության հանրագրություններ ուղարկվեցին Պոլիս, Ելդզի պալատ: Ահա այդ հանրագրություններից մեկը, որ «գրված էր» հայ մեծամեծների կողմից և խմբագրել էր Ֆերիդ փաշան.

«Բիթլիսի հայ ժողովրդի հարստահարությանց և կեղեքումների մասին եվրոպական քանի մը թերթերու մեջ զրպարտություններ հրատարակված են: Օսմանեան արդարադատ հովանիին ներքև ապրող Բիթլիսի հայ ժողովուրդը երջանիկ և գոհ է: Ամեն երկրի մեջ ալ անհատական ոճիրներ և եղեռնագործություններ կը պատահին: Տիրող կառավարութեան պարտքն է պատժել ոճրագործները և արդարությունը ի գործ դնել: Հետևաբար եվրոպական թերթերու մեջ հրատարակված զրպարտությունները չարագործ անձանց գործ համարելով՝ պաշտոնապես կհերքենք այդ հրատարակությունները, հավաստելով, թե մենք՝ հայերս, կապրինք երջանիկ և գոհ Ն. Վ. Սուլթանի հայրախնամ կառավարութեան հովանիի տակ:

Ստորագրություններ

Տեր Բարսեղ Սարգիսեան՝ առաջնորդական տեղապահ, Տեր Մեսրոպ քահանայ՝ կրոնական ժողովի կողմեն, Յակոբ Բենտերեան և Ճերճիս Գրգորեան՝ քաղաքական ժողովի կողմեն»[2]:

Կոնգրեսը դեռ չսկսած՝ նրա նշանակության մասին տրամագծորեն հակառակ կարծիքներ էին հայտնվում հայ քաղաքական և հասարակական շրջաններում: Գերակշռում էին հոռետեսական կարծիքները:

[1] «Խարիսխ» (Թիֆլիս), N 1, 1 հունվարի 1907թ.:
[2] «Դրոշակ», N 6-7(184), հունիս-հուլիս, 1907, էջ 91:

Վերջապես, 1907թ. օգոստոսի սկզբներին բացվեց **Լահեի (Հաագայի) խաղաղության միջպետական 2-րդ կոնգրեսը**, որի նախագահ ընտրվեց Ռուսաստանի պատվիրակության ղեկավար, հայտնի դիվանագետ, Պոլսի երբեմնի ռուսական դեսպան, ռուս բյուրոկրատիայի գոռոզ ու տմարդի ներկայացուցիչներից մեկը՝ Նելիդովը, որն իր մասին հայերի մոտ տխուր հիշատակներ էր թողել դեռևս 19-րդ դարի 90-ական թվականների թուրքահայերի ջարդերի ժամանակներից:

Դեռ 1897թ., երբ գումարվել էր Լահեի (Հաագայի) միջպետական առաջին կոնգրեսը, հայոց հարցի հին գործիչներից մեկը՝ Մինաս Չերազը, մեծ ջանքեր էր գործադրել, որպեսզի կոնգրեսը քննության առնի այդ հարցը, բայց նրա ջանքերը ոչ մի արդյունք չէին տվել, քանի որ նախապես հարցը չէր մտել կոնգրեսի օրակարգի մեջ:

Դրանից հետո զանազան կողմերից հայ գործիչները բազմիցս փորձեր էին արել ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտի միջոցով հայոց հարցը մտցնել Լահեի միջպետական կոնգրեսի օրակարգ, բայց, ինչպես արդեն ասվեց, այդ փորձերը նույնպես ապարդյուն էին անցել:

Լահեի խաղաղության 2-րդ կոնգրեսին հայերի կողմից դիմումներ ներկայացնելու համար ստեղծվեց երկու պատգամավորություն, դրանցից մեկը նշանակված էր ամենայն հայոց կաթողիկոսի կողմից, որի մեջ մտնում էին Արևմտյան Եվրոպայի հայոց հոգևոր պետ Գևորգ եպիսկոպոս Ութուճյանը (ղեկավար), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի վարչական խորհրդի անդամ Ավետիս Ահարոնյանը և «Հայրենիք» թերթի նախկին տնօրեն Հովհաննես Շահնազարը[1]: Մյուս պատգամավորությունը նշանակված էր ֆրանսիացի հայասերների կողմից, որի անդամներն էին "Revue de Paris"-ի խմբագիր Վիկտոր Բերարը և "Pro Arménia"-ի խմբագիր Պիեռ Քիյառը, որոնք լիազորված էին կոնգրեսում խոսելու նաև Անատոլ Ֆրանսի և Ֆրանսիս դը Պրեսանսեի անունից:

Հայկական դատի այս չորս ականավոր ու եռանդուն պաշտպանները Ամերիկայի, Եգիպտոսի, Բուլղարիայի և Պարսկաստանի հայ գաղութների դիմումների վրա արտոնություն ունեին Լահեի կոնգրեսում խոսել նրանց անունից և ներկայացնել թուրքահայ ժողովրդի ծանր կացությունը:

Ե՛վ էջմիածնի, և՛ հայասերների պատգամավորությունները Լահե հասան օգոստոսի 7-ին և առանձին-առանձին գանգատագիր ներկայացրին կոնգրեսին՝ խնդրելով քննության առնել Հայկական հարցը, որպես միջպետական խնդիր, որը միաժամանակ արդարության և հայ ժողովրդի իրավունքի խնդիր է:

Ամենայն հայոց կաթողիկոսի պատգամավորության գանգատագիրը, որը ստորագրված էր Գ. Ութուճյանի, Ա. Ահարոնյանի և Հ. Շահնազարի կողմից,

[1] Էջմիածնի պատգամավորության կազմման և նրա գործունեության մանրամասն նկարագրությունը տե՛ս **Ավետիս Ահարոնյանի** հոդվածաշարում՝ «Արօր», NN 3,4,5,6,7,11, Բաքու, 1904-1907թթ.:

պարունակում էր Հայկական հարցի պատմության համառոտ ակնարկ, ուր նշվում էր, որ երեք տասնամյակ է անցել Բեռլինի կոնգրեսում մեծ տերությունների հանձնառությունից, բայց որևէ բարենորոգում չի կատարվել Հայաստանում: Ավելին, հայերի դժբախտ կացությունը գնալով ավելի է վատթարացել, և հայությունն իր հայրենիքում կանգնած է անելանելի վիճակի դեմ-հանդիման:

«Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մկրտիչ 1-ինը, երեսուն տարուց հետո գալիս է խնդրելու քաղաքակիրթ պետությունների արդարադատությունն ու գթությունը: Այսօր խոր ծերության մեջ նա չէ կամենում թողնել աշխարհն՝ առանց կատարելու այս գերագույն պարտքը դեպի յուր ժողովուրդը»[1], - ասված էր խնդրագրի վերջում:

Հայ պատգամավորությունն այդ գրավոր դիմումը հանձնեց Բեռլինի դաշնագրությունը ստորագրած եվրոպական պետությունների (Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ավստրո-Հունգարիա), Միացյալ Նահանգների և Պարսկաստանի պատվիրակներին՝ խնդրելով միջամտել, որպեսզի հայության ներկայացուցիչները հնարավորություն ունենան հանդես գալու կոնգրեսում և բանավոր ներկայացնելու հայ ժողովրդի անտանելի կացությունը: Միաժամանակ հայ պատգամավորները կաթողիկոսի առանձին հրահանգով խնդրել էին Պարսկաստանի ներկայացուցչի բարոյական աջակցությունը՝ նկատի ունենալով պարսից շահնշահերի մշտական և անփոփոխ բարյացակամ վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ:

Իր հերթին հայասերների պատգամավորության ֆրանսիացի անդամները՝ Վիկտոր Բերարի, Անատոլ Ֆրանսի, Ֆրանսիս դը Պրեսանսեի և Պիեռ Քիյառի ստորագրությամբ կոնգրեսին ներկայացրին գրություն, որին կցված էր նաև մի փաստաթուղթ՝ Հայաստանում տեղի ունեցող սարսափների մասին:

Հայասերների պատգամավորության գրության մեջ նշված էր, որ իրենք Հայաստանից դուրս քառասուն քաղաքների հայ գաղութների կողմից լիազորված են կոնգրեսում ներկայացնելու Թուրքիայում հայ ժողովրդի աննախանձելի վիճակի պատկերը: «Հայերի վիճակը երբեք ավելի ողբալի չի եղել, քան այսօր, - շեշտվում էր գրության մեջ: - Եվ եթե նրանց շուտափույթ օգնություն չլինի, նրանք կջնջվեն այն երկրում, ուր ապրում են դարերից ի վեր և ուր ներկայացնում են եվրոպական քաղաքակրթությունն ու միտքը»[2]:

Կարծես կանխազգալով կոնգրեսում մեծ տերությունների ժխտական վերաբերմունքը Հայկական հարցի քննության նկատմամբ՝ հայասերները նշում էին. «Թող թույլ տրվի մեզ նկատել, որ հայ վիլայեթներում թուրքական պետության հարատև բռնության վիճակը կազմում է իրական վտանգ աշխարհի խաղաղության համար, և այդ դրությունից կարող են ծագել այնպիսի միջ-

[1] **«Դրոշակ»**, N 8 (185), օգոստոս, 1907, էջ 107:
[2] Նույն տեղում:

ազգային բարդություններ, որոնք կարող են առաջ բերել եվրոպական ընդհանուր պատերազմ»[1]:

Կոնգրեսին առաջարկելով հանգամանորեն քննարկել հայերի ներկա կացության հարցը՝ հայասեր պատգամավորության ֆրանսիացի անդամներն իրենց գրության վերջում նշում էին. «Որպես եվրոպական վեց պետություններից մեկի քաղաքացիներ, խորունկ կսկիծով մեզ զգում ենք հանցակից և պատասխանատու մի անիրավության, որն այսքան երկարատև և այս աստիճան աղետաբեր եղավ Եվրոպայի պատվի և խաղաղության համար»[2]:

Սակայն ինչպես էջմիածնի, այնպես էլ հայասերների պատգամավորություններին խաղաղության միջպետական 2-րդ կոնգրեսում սպասվում էր խոր հիասթափություն: Հայկական հարցը «լուծելու» այդ նոր փորձը վերջացավ նույնպիսի անհաջողությամբ, ինչպես մինչ այդ եղածները:

Ի պատասխան զույգ պատգամավորությունների գրությունների՝ կոնգրեսում մեծ պետությունների ներկայացուցիչները նամակներով շտապեցին նրանց հայտնել, որ հաստատում են դիմումների ստացումը, բայց ի վիճակի չեն ունկնդրություն շնորհել հայ պատգամավորներին, քանզի իրենց իրավասություններից վեր է ոչ միայն Հայկական հարցի լուծումը, այլև անգամ դրա քննությունը կոնգրեսում:

Միաժամանակ մեծ տերությունների ներկայացուցիչները խնդրել էին ռուսական պատվիրակության ղեկավար, կոնգրեսի նախագահ Նելիդովին՝ իրենց բոլորի անունից ընդունել հայերին և վերջնական պատասխան տալ:

Օգոստոսի 10-ին Նելիդովը պաշտոնապես ընդունում է հայ պատգամավորներին և ունկնդրում նրանց: Հայերը հակիրճ նրան պատմում են Հայաստանի սարսափների մասին և նրան հանձնում գրավոր բողոքագիր, խնդրելով Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի և 1895-ի մեմորանդումի* անհապաղ գործադրությունը, որպես մարտիրոսվող ժողովրդի փրկության միակ դարման:

Ի պատասխան հայերի դիմումի՝ Նելիդովը, որպես կոնգրեսի նախագահ, նրանց ասում է, որ Հայկական հարցը միանգամայն դուրս է կոնգրեսի ծրագրի սահմաններից, ուստի չի կարող քննության առնվել, ինչպես և չեն կարող քննվել նման կարգի ուրիշ հարցեր նույնպես, որոնք ներկայացված են կոնգրեսին:

Ստանալով այդ պատասխանը՝ հայ պատգամավորները վերջին փորձն են անում. նրանք նկատում են, որ Հայկական հարցի քննությունը կոնգրեսում պատճառաբանված է ու արդարացված գոյություն ունեցող դաշնագրերով, որոնք միջազգային բնույթ ունեն, հետևապես կարող են Լահեի կոնգրեսի քննության նյութ դառնալ:

[1] «Դրոշակ», N 8 (185), օգոստոս, 1907, էջ 108:
[2] Նույն տեղում:
* Խոսքը մեծ տերությունների կողմից 1895թ. մայիսի 11-ին Թուրքական կառավարությանը ներկայացված մեմորանդումի մասին է:

Նելիդովն անդրդվելի էր. «Հայկական հարցը դուրս է կոնգրեսի ծրագրից»,- ասում է նա զայրացած և բարձրանում տեղից: Հայ պատգամավորները հեռանում են ձեռունայն:

Այդ վճռական մերժումից հետո պատգամավորության անդամները օգոստոսի 12-ին երկրորդ դիմումն են ուղղում մեծ տերությունների ներկայացուցիչներին և բողոքում կոնգրեսի բռնած ընթացքի դեմ: Նրանք գրում են, որ կոնգրեսում Հայկական հարցի քննության մերժումը հիմնավորված չէ, որ հայերի խնդիրը միայն Թուրքիայի ներքին քաղաքականության խնդիրը չէ, և դա հռչակված է միջազգային վերոհիշյալ երկու կարևոր փաստաթղթերում: «Մյուս կողմից, ամեն ոք գիտե, - նշված էր այս երկրորդ դիմումի մեջ, - որ Թուրք կառավարության կազմակերպած ջարդերը հայկական գավառներին հասցրել և հասցնում են ամենավայրագ պատերազմների բռնկման, և որ նույնիսկ Եվրոպայի խաղաղությունը չի կարող ապահով լինել, քանի դեռ Փոքր Ասիայի հուզումները սպառնում են իրար դեմ հանել պետությունների բանակները»[1]:

Դրանից բացի, հայ պատգամավորները մի բողոքով դիմեցին քաղաքակիրթ աշխարհի հասարակական կարծիքին, որը լույս տեսավ միջազգային մամուլի մի շարք կարևոր օրգաններում: Դիմումի մեջ ասված էր.

«Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակներս՝ Գևորգ եպիսկոպոս Ութուճյան, Ա. Ահարոնյան, Հ. Շահնազար, Թուրքահայ ժողովրդի անունից դիմեցինք Լահեի երկրորդ կոնգրեսին՝ խնդրելով հայկական հարցի քննությունը:

Կոնգրեսն իր նախագահի բերանով հրաժարվեց կատարել մեր խնդրանքը՝ առաջ բերելով իրավասության խնդիրներ, որ մենք չենք կարող համարել հիմնավոր՝ նկատի առնելով Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը և 1895թ. մեմորանդումը: Արդ՝ մենք բողոքում ենք այդ մերժման դեմ, որ գալիս է միանգամայն հակասելու նույնիսկ կոնգրեսի բուն նպատակին:

Մենք հիշեցնում ենք, որ մինչդեռ պետությունների՝ դեպի հայերը հանձն առած երաշխավորությունները մնում են մեռած տառ, Թուրք կառավարությունը կազմակերպած ջարդերով, բռնի դավանափոխությամբ և գաղթով ավերում և ամայացնում է Հայաստանը:

Հանդեպ այս անիրավության դեպի մի ժողովուրդ, որ պահանջում է միայն իր տարրական իրավունքները՝ Եվրոպայից ճանաչված, մենք կոչ ենք անում քաղաքակիրթ աշխարհի խղճին, և թող նա դատե, թե հայկական հարցի խաղաղ լուծման համար արած ջանքերի այսպիսի անհաջողությունը, ավելացնելով մարտիրոս ժողովրդի հուսախաբությունը, արդյո՞ք վերջիվերջո իսպառ չի խախտի այդ ժողովրդի հավատը դեպի խաղաղ միջոցների արժեքը»[2]:

Ահա այսպիսի տխուր վախճան ունեցան այն հույսերը, որ հայկական

[1] «Դրոշակ», N 8 (185), օգոստոս, 1907, էջ 109:
[2] Նույն տեղում:

քաղաքական շրջանները բավական երկար ժամանակ տածում էին Լահեի խաղաղության միջպետական 2-րդ կոնգրեսի նկատմամբ: Իմպերիալիստական մեծ տերությունների ներկայացուցիչների համար ինչպես նախկինում, այս դեպքում նույնպես Հայկական հարցը անգամ մանրադրամ չէր:

Կոնգրեսն ամոթալի ճառերի և կեղծավոր ժամանցի թատր հանդիսացավ, ուր բոլորը խոսում էին խաղաղությունից, բայց բոլորի մտքում իրենց երկրների շահերն էին լոկ:

Մեծ պետությունների դիվանագիտությունը անսիրտ, քարացած անտարբերությամբ կրկին ծանակեց դժբախտ ժողովուրդների դատերը: Հայության ողբն ու ամենօրյա նահատակությունը կոնգրեսը գերադասեց Հայկական հարցի գեթ քննությունից:

«Եվ թող այսուհետև չը մեղադրեն, եթե խաղաղ միջոցներից, խնդիրներից, աղերսներից իսպառ յուսախաբ՝ տարաբախտ հայ ժողովուրդը այլև ավելի համոզիչ միջոցների դիմի իր փրկության համար»[1], - Հ.Յ.դաշնակցության անունից գրում էր «Դրոշակը»:

Լահեի (Հաագայի) երկրորդ կոնգրեսը մի հոյակապ կատակերգություն էր, որին մասնակից էին 200-ի չափ ամենահմուտ դիվանագետներ: Համաժողովը ոչ միայն անընդունակ եղավ անգամ լսելու փոքր, կոտրվող ազգերի ձայնը, որոնք խաղաղություն էին աղաղակում, այլև բացարձակապես անկարող եղավ գեթ մի քայլ առաջ տանելու իր ստանձնած առաքելությունը՝ վերջ տալու խելահեղ սպառազինությանը և արգելք դնելու պատերազմների առաջ:

Արևմտահայության նորանոր զանգվածներ գնալով կրկին ու կրկին համոզվում էին, որ Արևմուտքը բնավ փրկության խարիսխ չէ: Լայպցիգի համալսարաններում ուսանող հայ երիտասարդներին Բեռնշտայնն ասել էր. «Հայերը թող Գերմանիայից ոչինչ չսպասեն»: Այդպես էր մտածում հայասերների մեծ մասը: Թեև եվրոպական շատ երկրների հասարակական կարծիքն ընդհանուր առմամբ հայերի օգտին էր, թեև Հայկական հարցը անկեղծ մտահոգության առարկա էր այդտեղի բարձր մտավորական շրջաններում, բայց խնդիրներ վճռողները մեծ տերությունների կառավարություններն էին, իշխող դասակարգերը, որոնք իրենց պետական շահերն ամեն ինչից վեր էին դասում բարոյականության ցանկացած սկզբունք ոտնատակ տալու գնով: Մարդասիրության, առաջադիմության, ազատության բարձր գաղափարները խամրում էին մեղկ շահերի գերակայության առջև:

«Հայորդիները» բանաստեղծական շարքի հայ որբերի ճակատագրին նվիրված հատվածում (ԺԳ) Սիամանթոն հայ նոր սերնդին պատմում էր Արևմուտքի խաբուսիկ հայասիրության մասին՝ շեշտելով, որ մինչ այժմ նա հայությանը միայն չարիք է բերել:

[1] «Դրոշակ», N 8 (185), օգոստոս, 1907, էջ 110:

Օրեր անցա՜ն ... մահը յոգնեցավ և արևմուտքէն կեղծուպատիր ձեռքեր,
Ձեզի՝ իրենց անգութ որբութեան մատեանը բերին, բաժին մը չոր հացի հետ:
Ու խելակորոյս՝ սկսան ձեր մատաղ հոգիներուն մէջ իրենց ստութեան սերմերը ցանել:
Աստուածներու խորհուրդէն և անունէն խոսեցան և փրկութեան դուներ ցուցուցին...:
Իբր ողորմութիւն՝ ցնցոտի՛մը նետեցին ձեր մերկ ու ազազուն մարմիններուն վրայ,
Ցանցեր հիւսեցին ձեր անբիծ կարապի անմեղութիւնը վանդակելու համար.
Եվ թշնամիին սուսերուն տեղ՝ իրենց շահախնդիր և մեղավոր խաչերը շարժեցին...
Իրենց պիղծ ծոցերը և իրենց արծաթը զոհերուն համար միայն բաց էր,
Իրենց բարի ժպիտը կեղծ էր, իրենց խոստումը մահաբոյր և նայուածքնին ծածկամիտ,
Իրենց բուրվառին մէջ մեր արիւնն էր որ խունկի փոխան կը ծխար...
Իրենց սկիհը մեր արցունքովը լեցուած էր, և այն հացը զոր ձեր առջև նետեցին,
Մեր թշուառութեան և մեր տառապանքին վարձատրութեան արժեքն էր անգութ:
Քրիստոսին խոսքը ծամածռեցին ստրկութեան օրենքները օրհնաբանելով՝
Եվ ուղեցին ձեր դողդոջ կեանքերուն վրայ արևմուտքի սակարաններուն հիմնաքարերը շարել...

Բանաստեղծը հայ որբ սերնդին կոչ է անում այլևս չհավատալ տերությունների կեղծապատիր ձեռքմեկնման պատրանքին.

Ձեր ձեռքերը օտարին հպումեն յե՛տ քաշեցեք, մերինները պատրաստ են և զինաբաղձ.
Անոնք մեր փլատակներուն վրայ իրենց եսամոլի դաւաճան ու կեղծ քարոզը կուզեն ցանել:

Բայց խաբված են ոչ միայն որբերը, այլև խաբված է ողջ ժողովուրդը:

Արձագանքելով Եվրոպային ուղղված իր գրչակից եղբոր ցասմանն ու կսկծին, արևմտահայ գրական վերածնության մյուս ռահվիրան՝ Դանիել Վարուժանը (Չպուքքյարյան) ողբում էր հայոց «մորթուած արշալոյսները» և եղեգան փողով հնչեցնում իր սիրասուն ազգի դժբախտ զավակների ռեքվիեմը.

Լաց, Հայաստա՜ն, ո՛վ թշուառ կին ու փետ՛
Վարսերդ սև. այդ գլխուդ վրայ դրժուած
Ցանե տաք-տաք մոխիրներ ...

Վարուժանը նույնպես, Սիամանթոյի նման, հայոց «տիեզերական ցավի»

հեղինակ էր համարում և՛ սուլթանական բռնապետությանը, և՛ «արդարադատ» Եվրոպային.

... Ալլահն ամպին մեջե, Սուլթանը ցեխին
Հոտոտելով փոխն ի փոխ՝
Կժպտին հաշտ իրարու,
Եվ Եվրոպան դեմքն իր ետև դարձուցած
Կոպերը թաց կը չփե -
Մեր ծուխեն աչքն իր բոզի
Կսկծելուն համար լոկ:

Եթե Բեռնշտայնը համոզված էր, որ հայ ժողովուրդն իր ազատագրական պայքարի ճանապարհին Եվրոպայից որևէ աջակցություն չի ստանալու, ապա մյուս հայասեր Ժան Ժորեսը կովկասահայ պատգամավորների հետ հանդիպման ժամանակ իր գերմանացի գաղափարակցի խոսքերը նույնքան համոզվածությամբ լրացրել էր՝ ասելով. «Օգնեցե՛ք ինքներդ ձեզ, ապա թե ոչ՝ կորած եք»[1]:

Այդ ճշմարտությանն արդեն հասու էր հայ մտավորականության և քաղաքական գործիչների մեծ մասը: Ժողովրդական զանգվածների մեջ նույնպես գնալով խորանում էր այն համոզումը, որ հայոց ազատագրումը կարող է իրականություն դառնալ միայն իրենց իսկ ձեռքով:

Հավատով առլեցուն էր Սիամանթոն, երբ հույս ներշնչող այրող խոսքեր էր հղում հայ եղբայրներին ու քույրերին.

Մեր ճշմարիտ սուրը և մեր Դրոշը պիտի ապրին՝ որովհետև կամքերնիս կարմիր է և վրեժնիս անպարտելի,
Մեր սուրը պիտի՛ ապրի, կեանքը ստեղծելու ու մահը անգամ մըն ալ մեռցնելու համար...
Մեր սուրը պիտի՛ ապրի՝ փրկութեան և ազատութեան արեգակներուն ի խնդիր՝
Կեանքին համար, յոյսին համար, արդասաբեր հողին և մայրական Հայաստանին համար :

Հայոց դժխեմ ճակատագրի հետ անհաշտ էր նաև Վարուժանը:

Բա՛վ է սվինները պատռեն
Մեր արգանդին մեջ հավետ
Լուսաթաղանթն արշալոյսին սերմերուն...

Հայոց մայրերի արգանդից «պիտի ելլեն» «Հսկա և հերոս» վահագնատիպ հայորդիներ՝ աչքերում Ազատության շանթեր.

Օ՜ն լսեցե՛ք, լսեցե՛ք այս, ո՛վ Մայրեր,
Վաղն երբ անոնք թամբեն իրենց նժույգներն
Ու անոնցմով, զերդ պողպատի ջրդեղում,
Վրեժի մե՛ջ մկրտվին.
Երբ թուրք արեան բարկ ծարավեն մոլեգնած՝
Լեռներուն վրա մռնչեն,
Ո՜հ՛, այն ատեն, այս օրուան
Մեր Մեռելները բոլոր
Միահամուռ ոստումով
Պիտի կանգնին գերեզմանին մեջ իրենց,
Ու անհամբեր հեռուն, հեռուն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին
Արշալոյսի մ՚ Արշալոյսի մը՝ որուն
(Հավատացեք ինձ, Մայրեր,)
Ես ոտնաձայնը կառնեմ ...

Օրակարգի գլխավոր հարցը պատասխան էր պահանջում. Թուրքիայի հայ ժողովուրդը դատապարտված է լիակատար կործանմա՞ն, թե՞, այնուամենայնիվ, փրկության որևէ ելք կա:

Դաշնակցության 15-ամյակի առթիվ «Դրոշակը» գրում էր. «Դառն, ցավագին հիասթափություններ ունեցել են բոլոր ազգերն իրենց ազատագրական ճիգերի մեջ, - մենք բացառություն չկազմեցինք օրենքից: Մեր հիասթափությունն ավելի խոր եղավ, ավելի հարատև. մեր թշնամին՝ ավելի վայրագ, մեր մարտիրոսությունն՝ ավելի ցնցող: Ո՛չ ամբավ արյունը, որով ներկվեցին Հայաստանի լեռներն ու ձորերը, ոչ հերոս-նահատակների փառահեղ բույլքն ու կռիվների անվերջանալի շարքը՝ չհասցրին մեզ բաղձալի վախճանին, - և տասնհինգ տարվա անդուլ, փոթորկված գործունեությունից հետո, այսօր մենք տեսնում ենք, որ դեռ պետք է քայլել, թերևս շատ քայլել...»[1]:

«ՄԻԱՑՆ ԶԵՆՔՈՎ ԿԱ ՀԱՑՈՑ ՓՐԿՈՒԹՑՈՒՆ»

Տվյալ պահին հայ հեղափոխականների առջև կանգնած խնդիրներից ամենահրատապը ժողովրդին զինելն էր, որն իր մեջ ներառում էր զենք ու զինամթերք հայթայթելը և Երկիր տեղափոխելը, դրանց հուսալի պահպանությունը կազմակերպելը, լայն մասշտաբով զինավարժություն կատարելը:

[1] ***«Արշալոյս»**, N 44, 28 փետրվարի 1906թ.:*

[1] ***«Դրոշակ»**, N 1 (154), հունվար, 1905, էջ 1:*

ԺՈՂՈՎՐԴԻՆ ԶԻՆԵԼՈՒ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Դեռևս 1905թ. ապրիլին Ժնևում գումարված Հ.Յ.դաշնակցության գերագույն մարմնի՝ խորհրդի նիստը քննության էր առել «տաճկահայկական գործելակերպի», այսինքն՝ Երկրում կուսակցության պայքարի մարտավարության (տակտիկա) հարցը: Նիստի մասնակիցներից Մարտիրոս Մարգարյանը, Ավետիս Ահարոնյանը, Համո Օհանջանյանը, Միքայել Վարանդյանը, խիստ քննադատության ենթարկելով կուսակցության պայքարի 1904թ. մարտավարությունը, գտնում էին, որ այն սխալ է եղել. Կովկասից Թուրքիա գնացող արշավախմբերը չեն հասել իրենց նպատակին, տվել են մարդկային մեծ կորուստներ, մի բան, որ ճնշիչ ազդեցություն է թողել ժողովրդի վրա:

Նիստի մասնակիցների մյուս մասը՝ Ռոստոմը, Անդրանիկը, Սարգիսը՝, հակառակ կարծիքի էին: Պաշտպանելով պայքարի հին մարտավարությունը՝ Ռոստոմը գտնում էր, որ առաջիկայում Վասպուրականը պետք է դարձնել ապստամբության գլխավոր կենտրոնավայր, ուժերի կենտրոնացման վայրեր պետք է լինեն Մոկսը, Շատախը, Կարկառը, նաև՝ Կիլիկիան: Անդրանիկը ճիշտ էր համարում Ռոստոմի մոտեցումները, համաձայն էր կենտրոնացումների և շարժումների մասին նրա տեսակետներին, պայմանով, որ յուրաքանչյուր կենտրոնացման վայրում լինի առնվազն 200 հրացան և 200 հազար փամփուշտ, այլապես ձեռնպահ կմնա այդ գործից:

Վերջապես, մի քանի օր տևած երկար վիճաբանություններից հետո պայքարի մարտավարության վերաբերյալ խորհուրդն ընդունում է հետևյալ բանաձևը.

«Ա.- ի նկատի ունենալով, որ եվրոպական ազգու միջամտություններ առաջ բերելու և հայկական հարցը լուծելու համար անհրաժեշտ է երկարատև ուժեղ դիմադրություն, իսկ այդպիսի դիմադրություն հնարավոր է միայն լուրջ պատրաստությունից հետո, խորհուրդը որոշեց՝

Խույս տալով ամեն տեսակ կանխաժամ և վտանգող որևէ ընդհարում, զգուշավոր, լիակատար և իրական պատրաստությամբ հայ կռուող ազգաբնակչության զգալի մասը զենքով դիմադրելու կարողության մեջ դնելե յետոյ, ընդհանուր շարժում առաջ բերել Վասպուրականում և Լեռնավայրում (Կիլիկիա)»[1]:

Հայ հեղափոխական կուսակցությունների հիմնական խնդիրներից մեկն էր՝ հասնել այն բանին, որ զենք կրելու ընդունակ ամեն կազմակերպված հայ տղամարդ զենք ունենա, նստի իր տանը, զբաղվի իր աշխատանքով, բայց պետք եղած ժամանակ, ընդհանուր ազդարարության դեպքում անցնի գործի:

***Ժողովրդին զինելու խնդիրը** որքան հրատապ էր, նույնքան՝ դժվարին:*

---

* *Հավանաբար **Սարգիս Բարսեղյանը** (Վանա Սարգիս):*

[1] ***«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 228-229:*

Հեղափոխական կազմակերպությունները որոշ քանակի զենք էին ձեռք բերում տեղում թուրք զինվորներից ու քրդերից: Սակայն բուն երկրում զենք ձեռք բերելը կապված էր հսկայական դժվարությունների հետ: Առիթ ենք ունեցել իր տեղում ասելու, որ ռուսահայը, որպես քրիստոնյա, ծառայում էր ռուսական բանակում, գիտեր զենք գործածելու ձևը, բայց զենք կրելու իրավունք չուներ, երբ զինվոր չէր: Ինչ վերաբերում է թուրքահային, ապա նա, որպես «գյավուր», զրկված էր թուրքական բանակում ծառայելու իրավունքից, հետևապես չգիտեր զենք գործածելու արվեստը: Նրան խստիվ արգելված էր զենք կրելը: Զենք ունենալու համար հայը կարող էր տեղն ու տեղը գնդակահարվել կամ դատապարտվել ցմահ բանտարկության: Եվ դա այն դեպքում, երբ թուրքը և հարևան քուրդը զինված էին մինչև ատամները: Դրան ավելանում էր այն, որ տեղում զենք հայթայթելը կապված էր հսկայական ծախսերի հետ. Թուրքիայում զենքը թանկ «հաճույքներից» էր: Այդ էր պատճառը, որ հեղափոխական հնչակյան և դաշնակցական կազմակերպությունները այն հայթայթում էին դրսում՝ Պարսկաստանում, Մինգաչևքում և մանավանդ Ռուսաստանում, ուր զենքի ձեռքբերումը համեմատաբար դյուրին էր և էժան: Օգտագործելով ռուս զինագործների հետ հաստատված իրենց գաղտնի ու վաղեմի կապերը՝ նշված կազմակերպությունների գործակալները, մեծ գումարներ վճարելով, Ռուսաստանի զինագործարաններից դուրս էին բերում զենք ու զինամթերք, դրանք հասցնում Կովկաս՝ այստեղից Երկիր տեղափոխելու համար:

Զգալի քանակի զենք էր ձեռք բերվում նաև Եվրոպայում: Կանոնավորվել էր Երկրից դուրս զենքը պահեստավորելու գործը: Այդ տեսակետից մեծ պարտականություն էր ընկած Անդրանիկի վրա, որը, 1905թ. սկզբին անցնելով Եվրոպա, կանգնել էր այնտեղից զենքի հայթայթման և Երկիր առաքելու գործի գլուխ[1]: Հ.Յ.Դ. Բալկանյան շրջանի մի տեղեկագրի մեջ կարդում ենք, որ 1906 թվականին «ընկեր Անդրանիկի ձեռքով գնուած է՝ 560կգ 60 000 հատ դատարկ փամփուշտ՝ 870 ֆրանկ արժողությամբ, 4 հատ փամփուշտի մեքենա իրենց ամբողջ կազմվածքով՝ 1000 -1200 ֆրանկ արժողությամբ»:

Սկզբներում հայ զանգվածները կարծում էին, թե գործող հեղափոխական կազմակերպությունները պետք է իրենց համար հոգ տանեն զենքի ու զինամթերքի մասին: Բայց հեղափոխականները, բախտորոշ կարևորություն ընծայելով ինքնապաշտպանության գործին, կարողացան զանգվածների մեջ առաջ բերել այն միտքն ու տրամադրությունը, որ ժողովուրդը ինքը պետք է հույսը դնի իր վրա: Իհարկե, եղան դիմադրության դեպքեր Թուրքահայաստանի շատ տեղերում, բայց գործն առաջ էր տարվում համառորեն՝ անգամ բնակչության կամքին հակառակ: Հեղափոխականները բացատրում էին զենքի կարևորությունը՝ բազմատեսակ օրինակներ բերելով հայության անցյալից և ներկայից,

---

[1] ***«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 134:*

հորդորում էին զինված լինել: Կազմակերպությունները քաջատեղյակ էին, որ բնակչության լայն զանգվածներն ընչազուրկ են, հետևապես ընդունակ չեն իրենց դրամով հրացան ու փամփուշտ գնել, ուստի հատուկ տուրք էին սահմանում զենքի գնման համար: Տուրքը դրվում էր ունևորների վրա, և նրանք պարտավորված էին լինում վճարելու՝ առձեռն դրամով, հացահատիկով կամ այլ մթերքով: Հաճախ հարկ էր լինում ճնշիչ միջոցների դիմել, երբ ունևորները զլանում էին իրենց բաժին գումարը վճարել: Հաստատվում էր զինական հատուկ ֆոնդ, ուր հավաքվում էին վճարվող տուրքերը և այնտեղից էլ ծախսվում հրազենների գնման համար, որոնցով պիտի օգտվեին այնուհետև բոլոր աղքատ ռազմիկները: Աստիճանաբար լայն զանգվածները նույնպես գնացին նյութական և այլ կարգի զոհողությունների՝ նախ հանձն առնելով գործիչների ու զինվորների ուտեստի ծախսերը, ապա նաև մասնակցելով զենք ձեռք բերելու համար կազմակերպված հանգանակություններին: «Զենքի դրամը նա (գյուղացին: - Հ.Ս.) տալիս է իր ընտանիքի բերանից կտրելով և յուր կանանց ու աղջիկների զարդերը կրճատելով»[1], - կարդում ենք Լեռնապարի կ.կոմիտեի մի փաստաթղթի մեջ:

Ամեն կողմից հարկեր էին, թալան ու կողոպուտ, բայց այդ պայմաններում նույնիսկ հայ գյուղացին գումարներ էր տնտեսում և հատկացնում զենք ձեռք բերելու գործին[2]:

Դաշնակցությունը և Հնչակը գնալով ավելացնում էին զենք-զինամթերքի հայթայթման համար հատկացվող միջոցները: Օրինակ՝ Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոյի 1905թ. մի տեղեկագրի մեջ կարդում ենք. «Բյուրոն ներկայումս կատարում է, բավական խոշոր չափով, արտասահմանից զենք գնելու և առաքելու գործը: Մասնավորապես [Եվրոպայից] Վասպուրականի համար ձեռնարկված է զենքի գնում, որին հատկացված է 120 000 ֆրանկի չափ գումար: Դրա մի մասը՝ մոտ 25 000-ը, ընկնելու է Ամերիկայի կազմակերպության վրա»[3]:

Դրսում զենք ու զինամթերք գնելը գործի մի մասն էր միայն: Ոչ պակաս կարևոր էր հայթայթածը տեղ հասցնելը, մի բան, որ կապված էր անասելի դժվարությունների հաղթահարման ու մահացու վտանգների հետ:

Զենքի փոխադրության դժվարությունները տասնապատիկ մեծանում էին հայկական ազատագրական շարժման նկատմամբ ռուսական կառավարության բռնած թշնամական դիրքի պատճառով, որը հատկապես անզիջում էր դաշնակցության նկատմամբ:

Ցարական իշխանությունները օգտագործում էին իրենց դիվանագիտական հնարավորությունները, որպեսզի Երկիր զենք տեղափոխելու գործում հայ հեղափոխականների առջև անհաղթահարելի արգելքներ ստեղծվեն ոչ միայն

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 80:
[2] Նույն տեղում, էջ 52:
[3] Նույն տեղում, էջ 168:

Ռուսաստանում, այլև Եվրոպայում: Ռուսական և թուրքական կառավարությունները, փոխադարձ համաձայնության գալով, ամրացրել էին պետական սահմանները և աչալուրջ հսկում էին, որ Կովկասի կողմից զենք ու զինամթերք չմտնի Երկիր:

Սակայն հսկայական դժվարությունները անկարող էին թևաթափ անել հայ հեղափոխականներին: Ինչպես Հ.Յ.դաշնակցությունը, այնպես էլ Հնչակյան ս.դ. կուսակցությունը անաղմուկ շարունակում էին ժողովրդի զինումը:

Կովկասից Հայաստան տանող՝ հայ հեղափոխականների կողմից բացված փոխադրական ճանապարհները չորսն էին.

Առաջինը Կարս-Դուրան գիծն էր՝ բացված դեռ 1901-ից: Այս գիծն իր հերթին բաժանված էր երկու հատվածների՝ Կարս - Բասեն - Խնուս և Խնուս - Վարդո - Սասուն:

Երկրորդ գիծն էր՝ Երևան - Միրզաջան (Տաք Աղբյուր) - Արճեշ (Ծաղկոտն): Միրզաջանից մի գիծ անցնում էր Ախլաթ, որտեղից դրա մի ճյուղը գնում էր Դուրան (Տարոն), իսկ մյուսը՝ Վասպուրական:

Երրորդ կարևոր գիծը Խոյի (Ավարայր) գիծն էր: Խոյ էին մտնում Ջուլֆայի կողմերից: Այնտեղ էր մտնում նաև մի ճանապարհ ուղիղ Երևանից (Երևան-Դավալու-Արաքս գետի աջ ափ-Մակու-Մենավոր (Թադեոս Առաքյալի վանք կամ Նախավկա վանք): Այս երկու կետերից գիծը շարունակվում էր Ապաղայի դաշտ՝ Նազարավա և Խաչան գյուղեր, որտեղից զենք-զինամթերքն ուղարկվում էր ավելի առաջ՝ Պտղիկ և Անձավ գյուղերը, իսկ այնտեղից՝ Արճակի կամ Թիմարի ճամփով՝ Վան:

Չորրորդը Նախիջևան - Սալմաստ (Մինարեթ) - Բաչկալա - Հայոց ձոր - Վան գիծն էր, որը գլխավորապես ծառայում էր սուրհանդակային հարաբերության և քիչ թվով զենքի փոխադրության համար:

Այս բոլոր փոխադրական գծերը սկիզբ էին առնում Երևանից, Ալեքսանդրապոլից և Կարսից: Երևանը (Մրգաստանը) իր Հ.Յ.Դ. կ.կոմիտեով ամբողջապես նվիրված էր Թուրքահայաստանում հեղափոխության նախապատրաստման գործին և ղեկավարում էր շարժումը փոխադրական գծերի վրա: Երկրի զենքի ու զինամթերքի պահանջները բավարարելու համար այստեղ մեծ աշխատանք էր տանում կ.կոմիտեի անդամ Գալուստ Ալոյանը իր օգնականների՝ Մկրտիչ Աղամալյանի (Սարհատ) և Հայկ Խոջամիրյանի հետ[1]:

Սկզբնական շրջանում Կովկասից դեպի Հայաստան երկարող այս չորս գծերով զենքը և զինամթերքը փոխադրվում էր զինված **զինատար խմբերի** միջոցով: Դրանք անխուսափելիորեն անցնում էին քուրդ, մանավանդ հայդարանցի, մեծ ու բազմաճյուղ աշիրեթների սահմաններով:

1903-1904թթ. զինակիր խմբերից միայն մեկն էր կարողացել անվտանգ տեղ հասնել. դա Թորգոմի ձիավոր խումբն էր՝ կազմված մոտ 25 ամենաղն-

[1] Տե՛ս **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 404:

տիր մարտիկներից՝ Քեռի (Արշակ Գաֆավյան), Սեբաստացի Մուրադ, Սեպուհ (Բաբերդցի Արշակ), Որսորդ, Գևորգ, Ավո, Կայծակ Առաքել, Տուրբախ և ուրիշներ: Խմբին հաջողվեց բավական ռազմամթերք ապահով հասցնել Սասուն՝ այնտեղ ստեղծելով մեծ խանդավառություն:

Սա մի երջանիկ բացառություն էր: Զենք ու զինամթերք տեղափոխող մնացած բոլոր խմբերը սահմանի վրա կամ սահմանից ներս ենթարկվում էին հարձակումների և, կռվի բռնվելով թուրք զորքի ու քրդերի հետ, ամբողջովին ջարդվում էին, կամ, անձերի ու զենքի մեծ կորուստներ տալով, վերադառնում էին սահմանից այս կողմ: Այդ տխուր ճակատագրին արժանացան Թորգոմի (երկրորդ անգամ), Խանի, Նևրուզի, Դումանի, Երկաթի, Թոխմախի, Միհրանի, Փոխիկի, Շաշոյի, Զուլումաթի և այլ խմբեր[1]:

Բացի այն բանից, որ ջարդվում էին ընտիր երիտասարդներ, զինատար խմբերի անհաջողությունները ծանր անդրադարձ էին ունենում շրջակա հայ գյուղերի բնակիչների վրա, որոնք վրեժխնդիր թուրքերի ու քրդերի կողմից ենթարկվում էին սպանությունների ու բռնությունների և այդ իսկ պատճառով խուսափում էին այլևս որևէ աջակցություն ցույց տալ հերթական զինատար խմբին:

Ավելին, Կովկաս բողոքներ էին հասնում Թուրքահայաստանի հեղափոխական կազմակերպություններից ու կոմիտեներից:

Այսպես, 1906թ. նոյեմբերին Հ.Յ.Դ. Դուրան-Բարձրավանդակի կ.կոմիտեն Ռուբեն Տեր-Մինասյանի և Գեղամ Տեր-Կարապետյանի ստորագրությամբ դաշնակցության արևելյան բյուրոյի ուղարկած տեղեկագրում գրել էր.

«... Ամենագլխավոր հույսը կ.կ.-ի համար արտասահմանյան զենքի փոխադրությունն է: Այդ հարցը շատ կարևոր է Երկրի ընդհանուր գործի, տակտիկայի վերաբերմամբ: Փորձերը ցույց են տալիս, որ հին ձևի խմբական փոխադրությունները մեծ մասամբ անհաջող են եղել, և հաջող եղածներն էլ պատճառ են եղել գործի վիժման արագացման»[2]: Ելնելով դրանից՝ կ.կոմիտեն առաջարկում էր փոխել զենքի փոխադրության մարտավարությունը և գործն այնպես կազմակերպել, որ հնարավոր լիներ խուսափել մեծ կորուստներից:

Նույն թվականի դեկտեմբերին կայացած Հ.Յ.Դ. Բալկանյան արտակարգ շրջանային ժողովը, քննարկելով Երկիր զենք մտցնելու հարցը, նշել էր.

«1894-1904 տարիներու ընթացքին զինակիր խմբերու անցնելը մասնակի կոտորածներու պատճառ ըլլալե զատ, դժբախտաբար, Սասունի վերջին ապըստամբության ժամանակ տեսնուեցավ, որ այդքան զոհողություններով հանդերձ Սասնո մեջ քանի մը հարյուր զենքեն ավելի չէր ներմուծուած, որով յուրաքանչյուր զենք գրեթե տասը քաջի արյունով գնուած կըլլայ: Փոխադրության այդ ձևեն զատ հարկ է նաև ուրիշ հարմարագույն միջոցներ խորհել և գործադրության պարագային կանխավ Երկրի ընկերներուն հետ խորհրդակցիլ»[1]:

Ինչպես տեսնում ենք, զինատար խմբերի միջոցով զենքի փոխադրության այդ ձևից զատ, պատասխանատուները սկսում էին խորհել ավելի հարմար միջոցների մասին, քանի որ հին պրակտիկան իրեն չէր արդարացնում:

Ավելի ընդունելի միջոց դարձավ **զենքի և զինամթերքի փոխադրությունը շալակով:**

Դեռ Խանասորի արշավանքի օրերից հայերը ռուսական ափից գիշերը շալակով Արաքսի վրայով զինամթերք էին անցկացնում պարսկական ափ, իսկ այնտեղից փոխադրում Սալմաստ կամ Խոյ: Եվ ահա այժմ, 1905-1907թթ., շալակավորների համար փոխադրության նոր ճանապարհներ բացվեցին Կովկասից Երկիր:

Շալակով զենքի փոխադրումը անհամեմատ թանկ էր նստում, բայց այդ միջոցն ավելի հուսալի էր և համեմատաբար քիչ զոհեր էր պահանջում: Փոխադրումը կատարվում էր ինչպես հայերի, այնպես էլ քրդերի միջոցով: Ըստ որում, վերջիններս մեծամասնություն էին կազմում, և նրանց թիվը անընդհատ աճում էր: Դնալով մեծանում էր նաև քուրդ շալակավորների պահանջները, և հայ հեղափոխական կազմակերպությունները ստիպված էին օր-օրի բարձրացնել նրանց վարձատրությունը:

Քուրդ շալակավորների թվում կային այնպիսիք, որոնք, նախապես վարձատրություն ստանալով, այնուհետև դրժում էին եղած պայմանավորվածությունը և զենքերն առած դիմում էին իրենց աշիրեթները կամ մտնում էին ոստիկանատուն և մատնում պատվիրատու հայ գործիչներին: Բայց ոչ քիչ թվով քրդերի համար ձեռնտու էր բարեկամ մնալ հայերի հետ՝ մասամբ համոզված, թե նրանց պայքարը իրենց դեմ չէ, այլ թուրք կառավարության:

Այդպիսի քուրդ շալակավորներից մեկին Վ. Փափազյանն այսպես է ներկայացրել.

«Գյուտ մըն էր մեզի համար Սալմաստեն Սամսոնի գտած Մուստաֆա (Մստո) անուն քյուրտ մը, որ սկիզբեն սուրհանդակ, ապա զինակիր խմբերուն իբր առաջնորդ՝ հավատարմորեն ու ֆետայինի նուիրուածութեամբ կատարեց իր պաշտոնը և Փոխիկի խումբին հետ նահատակուեցավ: Նամակները մեզ կը բերեր նոյնպես քյուրտ մը, որ էշի փալանի մեջ կը տեղափոխեր նամակներն ու թերթերը: Հետագային փորձուեցավ նոյն քյուրտին հետ ղրկել նոյնպես 1-2 հազար փամփուշտ, որ ապահով տեղ հասավ»[2]:

Հ.Յ.Դ. Դուրան-Բարձրավանդակի կ.կոմիտեի հիշատակած տեղեկագրի մեջ նշվում էր. «Մեզ վերջերս հաջողվել է [շալակավորների միջոցով] պարբերական փոխադրություն անել Ջրաբերդ (Կարս)-Բյուրակնի գծով: Բայց այդ

---

[1] Տե՛ս **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 206:
[2] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 61:

---

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 171:
[2] **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 208:

դեռ իր կատարելագործման չի հասել: Որպեսզի այդպիսի ուժ ներս քաշելու ձևի օգուտները չոչափելի լինեն, անհրաժեշտ է Զրաբերդում կենտրոնացնել մեզ հատկացված ուժերը, նշանակել մի ընկեր հատկապես այդ գործով զբաղվող, որը բաց անի Բասենի գիծը և լեռնային գծեր՝ երկու կամ երեք տեղով. պետք է նշանակել մի ընկեր Բասեն – Խնուս՝ և՛ որպես ապրանք ընդունող, և՛ գծերին հսկող. պետք է ունենալ այժմյան եղածի պես 4-5 հոգուց բաղկացած չորս-հինգ խումբ, որոնցից մեկը լինի Զրաբերդում, մյուսը՝ Բյուրակնում, իսկ Բյուրակնից այստեղ մենք կփոխադրենք նույն ձևով: Այդ փոխադրական գործի արագացման համար պետք է մի ընկեր էլ Ապահունիքում այնտեղի գծերը Ալաշկերտով բաց անելու համար: Ցանկալի է, որ այդ ընկերները չտարվեն ուրիշ գործերով: Փոխադրության արագությանը նպաստում է սուրհանդակների առատ վարձատրությունը, թեև դա վաճառականություն է և անպատվաբեր՝ հեղափոխությանը: Բայց վարձատրելուց չպետք է խուսափել»[1]:

1905թ. փետրվար-մարտից սկսած՝ Կովկասից Երկիր զենքի մատակարարումը մի պահ դադարեց: Դրա պատճառը Թուրք-հայկական ընդհարումների սկսվելն էր Անդրկովկասում: Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոյի փաստաթղթերից մեկում կարդում ենք.

«Վասպուրականում գործի կաղալու գլխավոր պատճառներից մինն է՝ Անդրկովկասի վիճակը, որ անդրադառնում է այսօր մեր գործունեության բոլոր ճյուղավորությունների վրա, զբաղեցնում է նաև Պարսկաստանի ուժերը՝, միշտ ավելի ու ավելի տարածելով հայ-մահմեդական ընդհարումների համաճարակ -սոսկումը»[2]:

Տարվա առանձին եղանակներին՝ հատկապես վաղ գարնանը, աշնանը և ձմռանը, առաջնությունը տրվում էր Պարսկաստանով անցնող գծերին, որոնք միշտ չէ, որ հուսալի էին: Ուստի Երկրի մարմինները մշտապես դժգոհում էին, որ Ատրպատականի կազմակերպությունները թերանում են իրենց պարտականությունների մեջ, և այդ դժգոհություններն արտահայտում էին կուսակցության վերադաս մարմիններին ուղարկած դիմումների մեջ:

Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյի հարցումին ի պատասխան՝ Վրեժի (Թավրիզի) կ.կոմիտեն 1906թ. մայիսի 8-ին Շամի ներկայացրած պահանջների առթիվ գրում էր.

«Երկրի պահանջները մեզ վրա են թափվում ամեն անգամ, երբ սուրհանդակ է գալիս Շամից: Մեզ են մեղադրում, մեզ են անտարբեր անվանում: Մինչդեռ մենք ամեն հնարավորը արել ենք, ամեն տրամադրելի միջոցները գործ ենք դրել նրանց գոհացնելու համար: Եվ այժմ, երբ Երկրի վիճակը ուղ-

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 61:

[2] Նկատի ունի Պարսկաստանի՝ Թուրքիային սահմանակից արևելյան մասերում (Մակուի խանություն, Ուրմիայի և Սալմաստի գավառներ) գտնվող դաշնակցական կազմակերպությունների ուժերը, որոնք ենթակա էին Հ.Յ.Դ. Վրեժի (Թավրիզի) կ. կոմիտեին:

[2] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 80:

ղակի կրիտիկական է, ինչպես աղաղակում են Երկրի վերջին նամակները, երբ նոքա միջոցներ են ուզում պատրոն, վառոդ, պիստոն, մի քանի հատ երկարներ – նոցա ծով կարիքների մինիմումը միայն – որոնք միայն մի քանի հազար ռուբլու են նայում՝ մենք մնում ենք կանգնած, անմիջապես բավարարություն տալ չենք կարող, ձեռքի տակ միջոցներ չունենք»[1]:

Հսկայական ջանքերը չէին փոխհատուցվում, ինչպես սպասվում էր: Այսպես, Պարսկաստանի ճանապարհներով Կովկասից Թուրքահայաստան էր փոխադրվել. **1904թ.** Մենավորի վրայով՝ 21 մոսին, 3 բերդան, 5 ատրճանակ, մոսինի 26 134 ծայր, բերդանի 10 464 ծայր, իսկ Ավարայրի վրայով, Ղոթուրի գծով՝ երկու տասհարվածյան՝ 120 փամփուշտով: **1905թ.** Նույն Մենավորի վրայով՝ 11 մոսին, 9 բերդան, 14 խնձոր, 17 ատրճանակ, մոսինի 24 763 ծայր, բերդանի 15 220 ծայր, Ավարայրից Ղոթուրի վրայով՝ բերդանի 7 000 ծայր: **1906թ.** Պարսկաստանի վրայով մոտավորապես նույնքան զենք ու զինամթերք է Երկիր մտցվել, որքան 1905-ն[2]:

Սակայն Պարսկաստանի ճանապարհը միակը չէր: Կովկասից զենք էր տեղափոխվում նաև Երկիր տանող մյուս գծերի վրայով, հատկապես Կարս – Բասենի վրայով: Հնչակյանները գերազանցապես Սեբաստիայի և Տրապիզոնի վիլայեթներ զենք էին մտցնում սևծովյան նավահանգիստների վրայով:

Այդ ամենը, սակայն, ծայրահեղորեն անբավարար էր, և հիմնական պատճառը սահմանային անցումների հսկայական դժվարություններն էին: Ահա թե ինչու նախկինի պես օգտագործվում էր մի ուրիշ միջոց ևս. զենքերից բացի Երկիր էին մտցվում դրանց՝ ծավալով փոքր զանազան մասեր և ապա հատուկ զինագործների միջոցով հավաքվում[3]:

Ավելին, կյանքը թելադրում էր **զենքի առանձին մասերը պատրաստել հենց տեղում:**

Այդ նպատակով Թավրիզում և Սալմաստում (Ղալասար գյուղ) ստեղծվել էին արհեստանոցներ՝ զենքերի փայտյա մասերը պատրաստելու, ինչպես նաև երկաթային այն մասերը, որ հնարավոր էր: Դրանով խնայվում էր զենքերի գնի և փոխադրական ծախսերի մոտ կեսը, չխոսելով այն մասին, որ փոքրանում էր Ռուսաստանից զենքի տեղափոխման ժամանակ առաջացող վտանգների հավանականությունը: Զենքի այն մասերը (խողովակ, փակաղակ), որ անհնար էր արհեստանոցներում պատրաստել կամ դրամով գնել տեղում, ձեռք էին բերվում Օրյոլի և Տուլայի զինագործարաններից՝ կաշառքով կամ գողությամբ՝ փոխադրման նվազ ծախքով[4]:

Թավրիզի և Սալմաստի արհեստանոցները ստեղծվել էին համարյա միաժամանակ: Հատկապես նշանակալի դեր է կատարել Հ.Յ.Դ. Վրեժի (Թավրիզի)

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 314:

[2] Նույն տեղում, էջ 231:

[3] Նույն տեղում:

[4] **«Հայրենիք»**, N 10(294), հոկտեմբեր, 1950, էջ 54:

ջրջանի «Խարիսխ» արհեստանոցը[1], որը հաստատվել էր 1891թ. Կոստանտին Խատիսյանի ծրագրով և Քաթանյանցի միջոցներով:

Քանի որ Պարսկաստանի հայերի մեջ չկային հրաձգային զենքերը նորոգելու և դրանց մասերը պատրաստելու ունակ անձինք, ուստի տեղի դաշնակցական գործիչները մշտապես Կովկասից խնդրում էին վարպետներ ուղարկել:

1892-ին Ռուսաստանից Թավրիզի զինագործարանում աշխատելու է գալիս Կարոն (Արիստակես Զորյան)՝ իր հետ բերելով գործիքներ և նորոգման կարոտ զենքեր: Նույն թվականին գալիս են Միհրանը, Երվանդը, Միքայելը: 1893թ. վերջերին սրանք հեռանում են, Կարոն մնում է միայնակ: 1895-ի սկզբին աշխատելու է գալիս Լևոնը՝ երկու աշակերտներով, և արհեստանոցի աշխատողների թիվը հասնում է չորսի: Շատ չանցած, նույն թվականի վերջերին, Կովկասից գալիս են Թորոսը (Գալուստ Ալոյան), Երևանցի Պետրոսը (Բագրատ Տեր-Հովհաննիսյան), Մարգարը (Երևանցի Թադեոս): Վերջապես 1896թ. գալիս է Սամսոնը (Ստեփան Թադևոսյան), և Նրա ջանքերով արհեստանոցի աշխատողների թիվը հասնում է 13-ի: 1897-1898թթ. արհեստանոցը փակված էր, որովհետև ձերբակալվել էր նշված վարպետների մեծ մասը: Սամսոնի և Թորգոմի ջանքերով 1898-ի վերջերին կրկին այն գործի է գցվում: Մինչև 1901թ. արհեստանոցում աշխատում էին Պետրոսը և Սմբատը, ապա կարճ ժամանակով՝ Շահբազը: Քանի որ գնալով աճում էր զենքի պահանջը, Պետրոսը Կովկաս է մեկնում և, վերադառնալով, իր հետ բերում է մի քանի արհեստավոր: 1902թ. արհեստանոցում աշխատում էին Սարգիսը, Ախալցխացի Հայի Լևոնը, Համբիկը, Երվանդը: Նշված բոլոր վարպետները հիմնականում կովկասցիներ էին, որոնց մեծ մասն անցել էր Երկիր, մասնակցել կռիվներին. հինգը նահատակվել էր:

Դա էր հիմնական պատճառը, որ 1904-1905թթ. արհեստանոցում աշխատում էր ընդամենը երկու վարպետ. 1905-ին՝ Եփրեմը և Պողոսը, 1906-ին՝ Եփրեմը և Ղուկասը[2]:

1891-1895թթ. Թավրիզի արհեստանոցում պատրաստվել է մոտ 340, իսկ 1896-1906թթ.՝ 600 կտոր զենք: Միայն 1903-ին պատրաստվել է 110 հրացան[3]:

1906 թվականից Թավրիզում աշխատանքներ էին սկսվել նաև փամփուշտ պատրաստելու արհեստանոց ստեղծելու համար[4]:

Տեղում պատրաստված մասերը տեղադրվում էին նաև հին հրացանների և ատրճանակների վրա: Այդպիսի զենքերից էին Խանասորի արշավանքի ժամանակ գործածած մի քանի հարյուր զենքեր, որոնք մաշված էին, շուրջ 80%-ն ուներ թերիներ՝ կարգին չէին հրացանի փողերը, ժանգոտված ու մնասված էին ներքին մասերը: Դրանք հիմնականում հավաքվել և կենտրոնացվել էին

[1] *Տե՛ս* ***«Նյութեր...»****, հատ. Դ, էջ 284-287:*
[2] *Նույն տեղում, էջ 82:*
[3] *Նույն տեղում, էջ 247:*
[4] *Նույն տեղում, էջ 247-248:*

Ղալասար գյուղի թաքստոցներում, ապա նորոգվել տեղի գաղտնի արհեստանոցում, ուր տարբեր ժամանակ աշխատել էին Բալասան Եգանյանը, Հովհաննես Համփոյանը, վաղարշապատցի Գևորգը և ուրիշներ:

Թավրիզի և Ղալասարի զենքի արհեստանոցների աշխատանքները գրտնվում էին Ատրպատականում Հ.Ց.Դ. արևելյան բյուրոյի ներկայացուցիչ Ստեփան Թադևոսյանի (Սամսոն) մշտական ուշադրության կենտրոնում: Ինքը՝ Սամսոնը, որ զինագործություն էր սովորել Թիֆլիսի պետական արհեստագործական վարժարանում, Ատրպատական գալով առաջին տարիներին (90-ական թվականներ) զենքի հայտնի վարպետ Պետրոսի հետ աշխատել էր Թավրիզի գաղտնի արհեստանոցում, իսկ հիմա Ղալասարի զենքի գաղտնի արհեստանոցում աջակցում էր վարպետներ Հայի Լևոնին, Ջումշուդին, Սարգսին[1]:

Վերանորոգված զենքերը նույնպես մտցվում էին Երկիր և հիմնականում բաժանվում ֆիդայական խմբերին:

Զենքերը վերանորոգելու համար գաղտնի արհեստանոցներ էին ստեղծվել նաև բուն Երկրում: Օրինակ՝ Վան քաղաքում գործում էր այդպիսի մի քանի արհեստանոց: Դրանցից մեկը գտնվում էր «Կոմիտա Մարեի» տան նկուղում, որը վերածվել էր իսկական զինագործարան-զինապահեստի: Ընտանիքի համարյա բոլոր տղամարդիկ հմուտ երկաթագործ-փականագործներ էին, որոնք և վերանորոգում էին մի քանի հարյուր հրացան: Ընդարձակ նկուղի մի գաղտնարանում պահվում էին զենքի մասերը, մյուսում նորոգման ենթակա զենքերը, մի այլ գաղտնարանում՝ վերանորոգվածները[2]: Արհեստանոցներից երկրորդը հիմնվել էր «Դրախտի մայրիկի» տան նկուղում, ուր կար 250 - 300 հրացան և ռազմամթերք պարունակող գետնափոր մեծ պահեստ: Մյուսը ստեղծվել էր Աղվեսաձոր թաղի Ջոջ աղայի տանը, որը մասնագիտացել էր ռումբեր պատրաստելու գործում: Մի արհեստանոց մասնավոր էր, պատկանում էր Ալեքսան, Վահան և Հմայակ զինագործ եղբայրներին: Քաղաքում զենքի նորոգման հետ կապված բոլոր դժվար աշխատանքները կատարվում էին այստեղ[3]:

Հակառակ բոլոր դժվարություններին, 1905-1907թթ. դաշնակցությունը և հնչակը դրսից ավելի շատ զենք ու զինամթերք հասցրին Երկիր, քան նախընթաց 20-25 տարիներին: Դրա շնորհիվ հայությունը իր սպառազինումով սկսել էր գերազանցել քրդերին[4]:

Երկիր զենք մտցնելը, տեղում զենք պատրաստելը կամ նորոգելը կազմակերպություններին դեռ չէր ազատում հոգսերից: Ոչ պակաս կարևոր էր ***զենքի ու զինամթերքի*** *պահպանության հարցը: Դրանք պահվում, պահեստավորվում էին ինչպես բնակավայրերում, այնպես էլ անմատչելի վայրերում, հողի տակ, քարանձավներում, անտառներում ու կիրճերում: Թաքստոցների տեղերն*

[1] *Տե՛ս* ***Մալխաս****, Ապրումներ, հատ. Ա, էջ 330-332:*
[2] ***Վահան Փափազեան****, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 216:*
[3] *Նույն տեղում, էջ 217:*
[4] *Տե՛ս* ***Ռուբեն****, Հայ յեղափոխականի մը յուշերը, հատ. Բ, էջ 160:*

իմանում էին միայն խիստ սահմանափակ թվով հուսալի ընկերներ:

1907թ. միայն Վասպուրականում կար զենքի ու զինամթերքի շուրջ 50 պահեստ[1]:

Կարևորագույն խնդիրներից և հոգսերից մեկը պահեստավորված զենքի ճիշտ պահպանումն էր: Երբ խոնավ նկուղներում, անտառներում, հողի տակ պահպանվող զենքերի գործածությունը ուշանում էր, ապա առաջանում էր դրանց ավերվելու վտանգ: Այդ էր պատճառը, որ հարկ էր լինում հաճախ ստուգել պահեստները: Ստուգումներից մեկը, օրինակ, կատարել էին վստահելի զինվորներ Մատթեոսը, Բուլղարացի Գրիգորը, Նիկոլը, Հայրիկը, Զոհրապը, Փոքր Սարգիսը: Ստուգումների արդյունքում ձեռնարկվում էին միջոցներ զենքերի պահպանումը կարգավորելու համար[2]:

Զենքի հայթայթում - փոխադրում - նորոգում - պահեստավորում - պահպանում շղթայի ամեն մի օղակի ճախողումը ի չիք էր դարձնում թափած ահռելի ջանքերը:

Զենքերի անվտանգ պահպանության հարցը մշտապես գտնվում էր ղեկավար գործիչների ուշադրության կենտրոնում: Այդ հարցը շատ է մտահոգել հատկապես Անդրանիկին: Դեռ Սասունի երկրորդ ապստամբության օրերին նա նկատել էր, որ Տարոն-Վասպուրականի ոչ բոլոր զինապահեստներն են, որ անվտանգ վայրում են: Այդ համոզումը նրա մեջ է՛լ ավելի խորացավ, երբ Աղթամարի կռվից հետո անցավ Վան և որոշ ժամանակ ականատես եղավ, որ դաշնակցության տեղի կոմիտեն զինապահեստների զգալի մասը կենտրոնացնում էր Վան քաղաքում: Այդ բանը նա սխալ էր համարում և նախազգուշացնում վտանգավոր հետևանքների մասին: Անդրանիկը համոզվել էր, որ շրջակա վայրերի զինապահեստների պահպանությունը անփույթ է կազմակերպված: Երկրում զենքի պահպանության խնդրով Հ.Յ.Դ. բարձրագույն մարմնին ներկայացրած իր գրավոր առաջարկում նա նշում էր, որ Թուրք իշխանություններն ամեն ինչ անելու են խուզարկությունների միջոցով իմանալու զենքերի պահեստների տեղերը: Ուստի, ելնելով այդ ենթադրությունից, առաջարկում էր Երկրի մեջ ստեղծել մի մարմին, որի վրա դրվեր զենքերի պահպանության ողջ պատասխանատվությունը: Նման մի պատասխանատու մարմին էլ առաջարկում էր ստեղծել Երկրից դուրս՝ զենքի և ռազմամթերքի ձեռքբերման ու դրանք Երկիր մտցնելու համար[3]:

Երկրում զենքերի պահպանության վիճակի մասին խիստ անբարենպաստ տպավորություններով էր Անդրանիկը անցել Եվրոպա: Ժնևում, մասնավորապես, «Դրոշակ» թերթի խմբագրությունում ունեցած զրույցների ժամանակ, համարյա մշտապես շոշափում էր այդ թեման, նշում, որ վատ պահպանության հետևանքով թուրքական իշխանությունները կարող են հեշտությամբ հայտնաբերել զինապահեստները և բռնագրավել այնքան մեծ զոհողությունների գնով ձեռք բերած զենքն ու զինամթերքը, հետևապես ճակատագրական սխալ է խիտ բնակեցված քաղաքներում և գյուղերում մեծ քանակությամբ զենք կուտակելը:

Բայց ամեն անգամ Անդրանիկն ընդդիմախոսներից լսում էր հակառակ կարծիքներ: Կուսակցության ղեկավար շրջաններում այն համոզումը կար, որ զենքերի պահպանությունը Երկրում լավ է կազմակերպված, որ զինապահեստները գտնվում են հուսալի ձեռքերում, հետևապես հարկ չկա տրտունջ հայտնելու և տագնապելու:

Ինչպես կտեսնենք աշխատության հետագա էջերում, Անդրանիկի տագնապը, ցավոք, զուր չէր:

*Հեղափոխական կազմակերպությունների կարևորագույն և խիստ պատասխանատու գործերից մեկը **ժողովրդին ինքնապաշտպանության վարժեցնելն էր և մարտական ուժերի զինավարժություններ անցկացնելը:***

Դա դյուրին աշխատանք չէր: Ազատասեր լինելով հանդերձ (ինչպես սովորաբար լինում են նաև ուրիշ հարստահարված ժողովուրդներ)՝ Թուրքահայությունը այնքա՜ն էր հալածվել ու բռնադատվել, որ իր ընդհանրության մեջ անհաղորդ էր դարձել սեփական զենքով պաշտպանվելու անհրաժեշտության գաղափարին:

Դաշնակցության և Հնչակի զինվորները, հին ֆիդայիները Երկրում գաղտնի զինավարժություններ էին անցկացնում Թուրքահայ երիտասարդների հետ: Անդրկովկասի զանազան վայրերում նույնպես հայ երիտասարդները լարված զինավարժություններ էին կատարում և պատրաստվում անցնել Թուրքահայաստան:

Աբրահամ Գյուլխանդանյանն ահա այսպես է նկարագրել երիտասարդական այդպիսի մի խմբի նախապատրաստման ընթացքը.

«Դաշնակցական խնչոն, որ արդեն մեծ հեղինակություն էր Բաքվի երիտասարդության և պատանիների աչքին, իր երիտասարդներից կազմել էր մի տասնյակ, որոնց վարժեցնում էր հայդուկային կյանքին:

Խմբակի անդամները պետք է ընտելանային չարքաշ կյանքի, լինեին դիմացկուն, պիտի կարողանային երկար ժամանակ քայլել, օրերով սոված մնալ և սովորել զենքի գործածությունը:

... Եվ պատանիներն օրերով ոտքով կտրում էին որոշ տարածություն, փորձում քաղցած մնալ, ամիսներով խնայում էին իրենց չնչին կոպեկները, որ կարողանան զենք գնել, և երևակայում էին, որ զենքն ուսերին մագլցելով Հայաստանի բարձրաբերձ լեռներով, վերք կը տան և վերք կը ստանան, մինչև որ «Մեր հայրենիքը թշվառ ու անտեր» կը դառնա «ազատ և անկախ»»[1]:

---

[1] *Տե՛ս **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 495:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Տե՛ս **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 25-26:*

[1] ***Ա. Գյուլխանդանեան**, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 67:*

Ապա՝ «Չնայած այն ժամանակվա պայմաններում Բաքվում չափազանց դժվար էր զինավարժություն անել, սակայն Խեչոյի խմբի անդամները շաբաթ կամ տոն օրերի նախօրյակին զույգ-զույգ կամ զատ-զատ երեկոյան աննկատ դուրս էին գալիս քաղաքից և գիշերը կենտրոնանում Գայլի Դրունք կոչված վայրի մեջ, ուր լուսադեմին Խեչոն սկսում էր իր զինավարժության դասերը, որոնք տևում էին այնքան ժամանակ, քանի դեռ կասկածելի կամ հետաքրքիր աչքեր չէին խանգարում նրանց զբաղմունքները: Ապա նույնպիսի զգուշությամբ վերադառնում էին քաղաք»[1]:

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Հայ բազմադարյա հարուստ գրականությունը չափազանց աղքատ է եղել ռազմագիտական գրվածքներով: Իր հոգու փրկության համար հայը դարեր շարունակ շատ աղոթքներ, սաղմոսներ, շարականներ, ժամագրքեր է կազմել ու դրանք անգիր արել, բայց չի մտածել ունենալ իր կյանքը պաշտպանելու տարրական գիտելիքներ: Զարմանալի է, բայց փաստ, որ հայ ռազմագիտական գրականությունը սկզբնավորվել է միայն 19-րդ դարի 20-30-ական թվականներին՝ հանձինս Ներսես Աշտարակեցու գլխավորած կամավորական հայկական զորամասի համար 1827 թվականին կազմած ռազմական գրավոր կանոնների: Այդ կանոնները, Անդրանիկի մարտական հրահանգների և Դումանի ժողովրդական ինքնապաշտպանության նախագծի հետ, հիմք դրեցին հայ ռազմագիտական գրականությանը:

*
* *

1906թ. Ժնևում լույս տեսավ Անդրանիկի «Մարտական հրահանգներ» գրքույկը, որը տպագրվելուց հետո արագորեն տարածվեց ազատագրական շարժման մարտիկների շրջանում:

Անդրանիկը թղթին էր հանձնել թուրքահայ ժողովրդի ազգային ազատագրական շարժման մեջ իր տասնհինգամյա մասնակցության ընթացքում ձեռք բերած մարտական փորձառությունը: Կանոնագիրքը նրա մտավոր աշխատանքի առաջին և հաջողված փորձը լինելով՝ դարձավ եզակի երևույթ հայ ռազմագիտական մտքի պատմության մեջ: Նրանում ամփոփված են մեծ հայդուկապետի խորհուրդներն ու հրահանգները Երկրում մաքառող հայ մարտական խմբերին: Այդ խորհուրդները ծնունդ էին առել հատկապես Սասունի 1904թ. արյունալի իրադարձությունների վերլուծության արդյունքում, որը

[1] **Ա. Գյուլխանդանեան**, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 67:

Անդրանիկի մեջ խոր համոզմունք էր ստեղծել, թե շատ դեպքերում կարելի էր խուսափել մեծ կորուստներ տալուց, եթե մարտերը վարվեին ռազմագիտական սկզբունքներով՝ հաշվի առնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ բոլոր հանգամանքները:

«Մարտական հրահանգները» մի յուրատեսակ ձեռնարկ էր, որի մեջ արտացոլում էին գտել Անդրանիկի հնարագիտությունները ու սրամիտ մտքերը: Դրանք շարադրված են պարզ, հասկանալի լեզվով, մատչելի՝ հրացանը ուսած ամեն մի հայ գյուղացու համար: Նրանում դժվար է գտնել ռազմագիտական հարուստ գիտելիքներ, տեսական խոր վերլուծություններ և ընդհանրացումներ: «Պարտ կը զգամ յայտարարելու, - գրել է հեղինակը, - թէ ես ոչ զինուորական վարժարանի մը ընթացքը աւարտած եմ, ոչ ալ մասնագիտական ճիւղ մը մշակած, հետեւաբար հավակնութիւն չունիմ մասնագիտական գործ մը ներկայացնելու իմ հայրենակիցներուս. կեանքը ինքն է եղած իր փորձութիւններով իմ, ինչպէս նաև իմ շատ մը ընկերներուն դաստիարակը»[1]: Գրքում անպաճույճ պարզությամբ, երբեմն էլ միամիտ բացխոսությամբ նկարագրված է հայդուկի դժվարություններով ու տառապանքներով լի առօրյան, տրված է ժողովրդի ազատագրության պայքարի նվիրյալների բարոյական բարձր նկարագիրը: Իր ֆիդայական հարուստ կյանքի փորձից ելնելով՝ Անդրանիկը երկրում մնացած մարտիկներին խորհուրդներ էր տալիս, թե ինչպես կռվել և յուրաքանչյուր առանձին դեպքում կռվի ինչպիսի մեթոդներ ընտրել, ինչպես հաղթել թշնամուն և ինչպես կարողանալ պահպանել սեփական կյանքը:

Երևույթը մեծապես արժեքավորվում է, եթե հատկապես նկատի ենք առնում, որ օսմանյան կայսրության մեջ քրիստոնյաները, ինչպես արդեն քանիցս նշվել է, իրավունք չունեին զենք կրելու, չէին կանչվում զինվորական ծառայության, արգելված էր նրանց մուտքը զինվորական ուսումնարաններ և ռազմական բնագավառի հետ առնչվող այլ հաստատություններ: Այդ տեսակետից «Մարտական հրահանգները» հայդուկների համար մի անփոխարինելի ձեռնարկ էր, որը նրանց կարող էր տալ ռազմական նախնական գիտելիքներ:

Գրքույկը բացվում է իրենց կյանքը ժողովրդի ազատության զոհասեղանին նվիրաբերած նշանավոր 10 հեղափոխականների խմբանկարով, նրանց ու նրանց զոհված ընկերների հիշատակին նվիրված հեղինակի հետևյալ խոսք-առաջաբանով:

«ՁՕՆ

Սէրոբի, Վազգէնի, Աբրոյի, Թաթուլի, Պետոյի, Հրայրի, Գուրգէնի, Վահանի, Թորգոմի, Վաղարշակի և բոլոր ընկերներու յիշատակին:

Ձեզի, ո՜վ անմոռաց ընկերներ, որ ձեր կեանքով ու մահով ժողովուրդին

[1] **Անդրանիկ**, Մարտական հրահանգներ, հրատ. Հ.Յ.Դաշնակցութեան, Ժընև, 1906, էջ 3:

ազատութեան դժուարին ուղին հարթեցիք և ձեր գործունեութեամբ փորձառու դարձուցիք ձեր յետնորդները, ձեր անմահ յիշատակին կը նուիրեմ այս գրքոյկը, յուսով՝ որ անոր ընթերցումը աւելի փորձառու կը դարձնէ անձնուէրները և կը նպաստէ աւելի օգտակարապէս ծառայելու ձեր սիրած գաղափարին:

ԱՆԴՐԱՆԻԿ

1906, մայիս »[1]:

Հրահանգ-կանոնագիրքը բաղկացած է հետևյալ գլուխներից՝ Զինվորական խորհուրդ, Օժանդակ խմբեր, Խումբը Երկրի մեջ, Թուցիկ խմբեր, Ապստամբություն, Մարտական ընդհանուր հրահանգներ և նկատողություններ, Զգուշություններ ճանապարհին, Կռիվների մասին անհրաժեշտ գիտելիքներ, Փախստականներ, Դրամը Երկրի մեջ, Գյուղական դատեր, Զենքը Երկրի մեջ, Քրդեր և քրդական միություն, Երիտասարդներին:

«Մարտական հրահանգները» սկսվում են հեղինակի այն հաստատումով, որ ազատագրական կռիվը հաջողությամբ տանելու համար անհրաժեշտ է ստեղծել զինված պայքարը ղեկավարող մարմին՝ զինվորական խորհուրդ, որը պետք է գործի արտասահմանում: Զինվորական խորհրդի մեջ պետք է ընդգրկվեն պայքարի հարուստ փորձառություն ունեցող և ազատագրական կռվի նպատակները խորապես գիտակցող ընկերներ՝ նվազագույնը 12 հոգի: Այդ խորհրդի վրա պետք է դնել Երկրում երիտասարդներին մարտական խմբերի մեջ ներգրավելու գործը: Նորակոչները պետք է ուխտեն, որ պատրաստ են իրենց կյանքը անմնացորդ «զոհել Հայրենիքի, Ազատության և ինկած հազարաւոր նահատակներու համար»[2]:

Զինվորական խորհրդի պարտականությունն է «իր ճիւղերուն և Հ.Յ. դաշնակցութեան մարմիններուն միջոցով ամէն կողմէն զէնք գնել ամէնալաւ տեսակէն և փոխադրել տալ հարկ եղած տեղերը: Զէնք գնելու մէջ յամաչափութեան պէտք է նայել: Օրինակ՝ եթէ ունինք հարիւր հրացան և պատահեցաւ 1000 000 փամփուշտ, պէտք է գնել անմիջապէս: Պէտք չէ ըսել՝ «Ինչո՞ւ է պէտք այդքան փամփուշտը»: Երկրի մէջ ամէնէն կարևորը փամփուշտն է:

Այն զինուորները, որոնք կարողութիւն ունեն, պէտք է իրենց միջոցներով ամէնաառաջնակարգ միջոցներով զինուին, որ կարողանան թշնամի զորքին ու զէնքին հետ մրցիլ»[3]:

Հեղինակը մանրամասն հրահանգավորում է, թե ինչպես պետք է դրսում օժանդակ խմբեր կազմել, ինչպես Թուրքիայի սահմաններից ներս թափանցել և օգնության փութալ Երկրում կռվողներին: Նկատի ունենալով, որ օսմանյան կայսրության սահմանները ամուր պաշտպանված են ոչ միայն թուրքական զորամասերով, այլև Անդրկովկասի կողմից՝ նաև ռուսական սահմանապահ

[1] **Անդրանիկ**, *Մարտական հրահանգներ, էջ 27:*
[2] *Նույն տեղում, էջ 5:*
[3] *Նույն տեղում, էջ 6:*

զորքերով, ուստի սահմանանցումը պետք է կատարել մեծ խմբերո՛վ, որպեսզի հարկ եղած դեպքում կարողանալ կռվով ճեղքել-անցնել Երկիր: «Եթէ տաս հոգիանոց խումբ մը պիտի ղրկուի՝ աւելի լաւ է երբեք չի ղրկել»[1]: Օժանդակ խմբերը չպետք է սահմանն անցնեն անկախ տարվա եղանակներից և ցանկացած պահի, այլ միայն այն ժամանակ, «երբ գիշերները երկար են և լուսընկայ չեն»[2]: Երկիր գնալով՝ կամավոր զինվորը ոչ միայն այնտեղ պետք է անձնազոհ կռվի, այլև դրսևորի մարդկային բարձր հատկանիշներ: «Երկիր մտնողները, - գրում էր Անդրանիկը, - խմբապետէն սկսած մինչև վերջին զինուորը բարոյապէս բարձր պիտի պահեն զիրենք և ապրելով ժողովրդին մէջ՝ լաւ տպավորութիւն պիտի թողնեն անոնց վրայ»[3]:

Որպեսզի զինվորը կարողանա լավ կռվել, խմբապետը պարտավոր է նրան ապահովել սարքին հրացանով ու փամփուշտներով: «Առանց զինուորներու, դուն, խմբապէտ, ոչ մեկ ուժ չես կազմեր և պէտք է անոնց կեանքը շատ ու շատ բարձր գնահատես»[4], - պատվիրում է գրքույկի հեղինակը:

Երբ օժանդակ խումբն արդեն լիովին պատրաստ է անցնելու սահմանը, «խմբապէտը վերջին անգամ կը կրկնէ իր պատուերներն ու կարգադրութիւնները: Յետոյ պէտք է նաև քանի մը խօսք ըսէ. «Ընկերնե՛ր, կտրիճ ըլլաք և աչքաբաց, մատա՛ղ ձեր ոտքերուն: Կռուողին համար կռիվը արհեստ մըն է: Սիրով ըլլաք իրարու հետ և ուրախ: Բոլորիս մարմիններն ու հոգիները միացած մէկ կազմ ունենան: Յառա՛ջ...»»[5]:

Նկատի առնելով, որ ռուսական իշխանությունները բոլոր միջոցներով դաժանորեն խափանում էին հայ կամավորական խմբերի սահմանանցումը և թափանցումը Երկիր, Անդրանիկը այդ խմբերին հետևյալ հրահանգներն էր տալիս. «Եթէ պատահին սահմանապահ զորքեր (ոչ թուրք) որոնց հետ մենք գործ չունինք և որոնց թշնամի չենք -պետք չէ կրակել: Երեք անգամ յայտարարելու է, թէ՝ բարեկամներ ենք և ճամբորդ: Եթէ լսեցին՝ լա՛վ, եթէ չի լսեցին ու զարկին ձեզի, խմբապէտը հրամայածին պէս՝ զարկեք անխնայ իբրև թշնամու՝ սրտներուն և ճակատներուն: Յիշեցէ՛ք Թորգոմի և Որսորդ Գեորգի խումբը»[6]:

Եթե հաջողվի սահմանն աննկատ անցնել և մտնել Թուրքիայի տարածքը, ապա օժանդակ խումբն ամեն բոպե պետք է պատրաստ լինի մարտի մեջ մտնելու թշնամու ուժերի հետ: Կարծում ենք՝ ընթերցողին կհետաքրքրի Անդրանիկի կողմից նկարագրած նման մարտի պատկերը: Նա գրում էր.

«Ձեր հետքերուն յետամտելով՝ թշնամին կու գայ հարայ-հրոցով և կը գոռայ. «Այստե՛ղ են, այստե՛ղ»: Բայց սուտ են: Դիտմամբ այդպէս կը ըսեն,

[1] **Անդրանիկ**, *Մարտական հրահանգներ, էջ 7:*
[2] *Նույն տեղում, էջ 8:*
[3] *Նույն տեղում, էջ 8-9:*
[4] *Նույն տեղում, էջ 9:*
[5] *Նույն տեղում, էջ 17:*
[6] *Նույն տեղում, էջ 14:*

որ ձեր կողմէն շարժում մի ընեք կամ հրացան բանաք, որ յանկարծակի չի գան»: Ուստի պետք է սպասել, որպեսզի թշնամին, որքան հնարավոր է, մոտենա, և միայն այն ժամանակ խմբապետը կարող է հրաման տալ կրակ բացելու: «Առաջին համազարկերը տալուն պէս՝ տղաքը պետք է բարձր ձայնով հարայհրոց բարձրացնեն, իսկ յայտնի ձայն ունեցողները պոռան թշնամիին, թե՝ «եկէ՛ք, մի՛ փախչիք, մոտեցէ՛ք կռուինք»: Մեր զինուորները պէտք չէ քֆրեն, քֆրելը տղամարդու գործ չէ»*: Համազարկի ժամանակ անհրաժեշտ է միշտ աղմուկ բարձրացնել, իսկ հանդարտ ժամանակ՝ կռուիլ ու երգել և նայել խմբապետի հրահանգներուն ու ձեր քովը գտնված տասնապետներուն: Պարապ տեղը չըլլայ, որ փամփուշտ վառէք: Երբեմն ալ մի՛ մոռնաք հրացանները մաքրել: Վիրավորված ընկերը անմիջապես բերելու է վիրաբոյժին քով»[1]:

Անդրանիկը հիշեցնում է, որ Արևմտահայաստանի տեղանքին քրդերը ավելի լավ են ծանոթ, քան թուրքերը, և որ հենց այդ պատճառով քրդերի դեմ ավելի դժվար է կռվելը: «Անոնք օձի պես դիրքէ-դիրք կը սողան, մինչ թուրք զորքը անծանօթ է տեղին և պահուիլ չի կրնար ... Տասը ֆիդայի ուրախութեամբ կը կռուին հարիւր-երկու հարիւր զինուորին դէմ: Եղեր է ժամանակ երբ մեր տղաքը տասը հոգիով կռուած են հարիւրի դէմ և առանց զոհ տալու յաջողութեամբ դուրս եկած»: Նույնը և քրդերի դեպքում, չնայած տեղանքին նրանց լավ իմացությանը: «Սահմանագլխին քյուրդերը, թեև զինուած են կանոնավոր հրացաններով, բայց առանց զօրքի օգնութեան չեն կրնար կռուիլ»[2]:

Որքան էլ բազմաքանակ լինի թշնամին և որքան ծանր՝ կռիվը, հրամանատարները չպետք է երբեք հոգով ընկճվեն, ընդհակառակը, պետք է անվախության և անձնազոհության օրինակներ տան իրենց ենթականերին: «Խմբապետը ու տասնապետները, որքան ալ սաստիկ ըլլայ կռիվը, միշտ ուրախ դէմք ունենալու և քաջալերելու են հայդուկները. պաղարիւն մնալու են, չփոթուելու չեն»[3]:

Այնուհետև Անդրանիկը հանգամանորեն հրահանգավորում է, թե խմբերը ինչպես պետք է կռվեն Երկրում, ինչպիսի մարտավարժության պիտի հետևեն: Տրվում են Արևմտահայաստանի տարբեր վայրերում գործելու եղանակները, հարձակման, պաշտպանության, շրջապատման պայմաններում անելիքները: Գրքույկում խորհուրդներ են տրված, թե այս կամ այն շրջանում ապստամբություն բարձրացնելիս նվազագույնը որքան զենք ու զինամթերք պետք է ունենան ապստամբները: «Շրջան մը ապստամբութեան համար առնուազն ունենալու է չորս հարիւի մոսինի կամ ուրիշ հրացան, որը կարողանայ 2000 մետր կամ 3000 քայլ նետել: Ժողովուրդը զինելու համար պէտք է ունենալ առնուազն 500 լավ բերդան կամ այնալի հրացան, իւրաքանչիւրը 500 փամ-

* Զմոռանանք ասել, որ Անդրանիկն ինքը միշտ չէ, որ հետևում էր այս իր իակ խորհրդին:
[1] **Անդրանիկ**, Մարտական հրահանգներ, էջ 21-22:
[2] Նույն տեղում, էջ 23-24:
[3] Նույն տեղում, էջ 24:

փուշտով: Մոսինները ունենալու են 1500 փամփուշտ»[1]:

Գրքույկում հրահանգավորված է, թե ինչպիսին պետք է լինի զինվորների հայդուկային կյանքը, ինչպիսի պարտավորություններ պետք է ստանձնեն կռվի ելած հայ երիտասարդները, այն է՝ գաղտնապահություն, կարգապահություն, վարքուբարքով լինել անարատ, ճշմարտախոս յուրայինների շրջանում, անթերի կատարել հրամանատարների կարգադրությունները, միմյանց չվիրավորել, պահակային ծառայություն կատարելիս խիստ զգույշ և արթուն մնալ, չերգել, չծխել, բարձրաձայն չխոսել, լուցկի չվառել, կրակհան չգարկել, զենքերը մաքուր պահել, փամփուշտները՝ չոր: Գրքույկում մանրամասն տրված են հրացանները քանդելու, մաքրելու և խնամելու կանոնները: Այնտեղ թվարկված են մարտիկի «ամենակարևոր պիտույքները»՝ «փամփուշտ, վառօդ, գնդակ, կապսուլ, պահեստի պաշար, փամփուշտ լցնելու գործիքներ, ոտնամաններ, գուլպա»[2]: Հեղինակը խիստ կարևորում էր անհրաժեշտ քանակով ուտելիք ձեռք բերելու միջոցների ընտրությունը: Բայց առավել կարևոր էր համարում խմբի անդամների միջև դրա ճիշտ, արդարացի բաշխումը, որևէ մեկին մյուսներից չգերադասելը:

«Ինձոր մ'ալ ունենաք, բաժանելու եք: Իսկ կերակուր կերած ժամանակ բոլոր զինուորները տասնեակ-տասնեակ պիտի նստեն, և տասնապետներն ալ իրենց տասնեակներուն հետ: Տասնապետները կերակուրի ժամանակ առանձին պէտք չէ որ նստին»[3]:

Անդրանիկը պահանջում էր խստիվ կատարել քողարկման, խրամատավորման, պաշտպանության և հարձակման կանոնները, ցուցում էր տալիս, թե ինչպես պետք է գործել օրվա տարբեր եղանակներին, տարբեր ռելիեֆ ունեցող վայրերում, տարբեր իրադրությունների ժամանակ, ինչպիսի անմիջական օգնություն ցույց տալ հիվանդներին և վիրավորներին, ինչպես հայթայթել, պահպանել և օգտագործել ռազմամթերքը: Նա հանգամանորեն անդրադառնում է խմբապետի և զինվորների փոխհարաբերություններին, հորդորներ է հղում զինվորներին՝ անթերի կատարել խմբապետի և տասնապետերի կարգադրությունները, միաժամանակ մեծ հոգատարություն ցուցաբերել մեկը մյուսի նկատմամբ:

Անդրանիկը չափազանց կարևոր նշանակություն էր տալիս խմբերի՝ մի տեղից մյուսը տեղափոխվելիս ճանապարհին զգուշության կանոնների խստիվ պահպանմանը (երբ լուսնյակ է գիշերը, անտառում, գյուղ մտնելիս, գյուղի մեջ, գյուղում հաց հայթայթելիս, գյուղից մեկնելիս, ջրերով, կամրջով և կիրճերով անցնելիս, գարնանը և ձմռանը մի տեղից մյուսը անցնելիս և այլն), մասնավորապես զինվորներին զգուշացնում էր թունավորվելու վտանգից և

[1] **Անդրանիկ**, Մարտական հրահանգներ, էջ 34:
[2] Նույն տեղում, էջ 42:
[3] Նույն տեղում:

լրտեսներից:

Այնուհետև գրքույկի հեղինակը տալիս է կռիվների մասին անհրաժեշտ գիտելիքներ, այսինքն՝ թե մարտիկներն իրենց ինչպես պետք է պահեն դիրքերում, դաշտի վրա, փոսորակ տեղերում, սար բարձրանալիս, երբ սպանվում է խմբապետը, կամ երբ տասնապետն այլևս ի վիճակի չի լինում անձնական օրինակով ոգեշնչել իր զինվորներին և այլն:

«Մարտական հրահանգները» ավարտվում է հայ երիտասարդներին ուղղված խոսքերով: Անդրանիկը փափագ էր հայտնում «մօտ ապագայի մէջ» հայ երիտասարդներին տեսնել մասնագիտական զինվորական կրթություն ստացած, որպեսզի նրանք «ավելի յաջողութեամբ, ավելի ձեռնհասութեամբ վարեին մարտական բանակը»: Նա ցավով շեշտում էր, որ օտար երկրներում գտնվող հայ երիտասարդներին քիչ են հետաքրքրում իրենց ժողովրդին բաժին ընկած արհավիրքները, և հենց դա է պատճառը, որ նրանք բնավ ցանկություն չունեն ձեռքը զենք առնել և հետևել զինավարժության: Անդրանիկը հիշեցնում էր ժողովրդի դաժան կյանքի խորհուրդը և հրամայականը, հայոց պատմության հորդորը՝ «Առանց զենքի չկա հայոց փրկություն»:

Օտար երկրներում ապաստանած հայ երիտասարդներին ուղղված իր ուղերձը և «Մարտական հրահանգները» Անդրանիկը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Ես չեմ որ կը հրավիրեմ ձեզ, արտասահմանեան հայ երիտասարդներ, այլ դժբաղդ Հայրենիքին հողն ու քարը իրենց արիւնով ներկած մեր նահատակներն ու պաշտելի հերոսներըն են, որ կոչ կ՚ընեն ձեզի՝ զենքի, զինա-վարժութեան և վրէժխնդրութեան:

Լսեցէք անոնց Ձայնը՝ որ մեր կեանքին Ձայնն է»[1]:

*

* *

1907թ. Ժնևում հրատարակվեց **Նիկոլ Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության : Հայ ժողովրդի երեք գլխավոր հատվածների համար»** գրքույկը, որը հայկական մարտական գրականության երախայրիքներից մեկն էր:

Ինչպես վկայում է գրքույկի հեղինակը, Կովկասյան Թուրք-հայկական ընդհարումներից անմիջապես հետո ընկերներն իրեն առաջարկել էին ինքնապաշտպանական մարտական խմբերի համար պատրաստել մի ուղեցույց: Որոշ տատանումներից հետո Դումանը ձեռնարկում է ուղեցույցի ստեղծումը՝ հաշվի առնելով այն խառնակ դրությունը, որի պայմաններում ապրում էր հայությունը: Նա այսպես էր բացատրում իր նպատակադրումը.

[1] **Անդրանիկ**, Մարտական հրահանգներ, էջ 78:

«Տաճկաստանում ամենուրեք խուլ շչունչները գուժում են ռեաքսիոն ահավոր խմորումների մասին, Պարսկաստանում հաճախակի ընդհարվում են միապետական ու սահմանադրական երկու հակառակ հոսանքները, իսկ Ռուսաստանում – ո՞վ գիտե ինչ նոր անակնկալ է պատրաստվում:

Այլևս տատանումը հանցանք է: Ամեն մարդ, որ զգում է դրության լրջությունը, պետք է ասի իր խոսքը, պետք է հորդորե, որ հայոց այդ երեք գլխավոր հատվածները պատրաստվեն ինքնապաշտպանության:

Եվ նրանք ճակատագրորեն պիտի պատրաստվին»[1]:

Գիտակցական ողջ կյանքը ժողովրդի ազատագրական կռվին նվիրած գիտուն ու տաղանդավոր մարտական ղեկավարը ժողովրդի համար ծանր օրերին հանդես էր գալիս նաև որպես ռազմական տեսաբան: Ինչպես և Անդրանիկը, Դումանը նույնպես ի մի էր բերում ու ամփոփում իր անցած մարտական ուղու, հատկապես կովկասյան Թուրք-հայկական ընդհարումների օրերին ձեռք բերած ուսանելի փորձն ու ռազմական հմտությունները և դրանք փոխանցում հայության զինակիր զավակներին:

Գրքույկը բաղկացած է «Նախաբանից», «Ներածությունից» և 15 հատվածներից:

Նախաբանում հեղինակը շեշտում է. «Թե՛ թշնամուն և թե՛ բարեկամին հարգանք ու պատկառանք ներշնչողը, դժբախտաբար, դեռ կոպիտ ուժն է: Ուստի մի ազգ, – եթե ուզում է մնալ հարգված, եթե չի՛ ուզում կորչել, – պետք է լինի զենքի ընդունակ, միշտ պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության համար, մանավանդ քաղաքական ցնցումների վայրկյաններում (մոմենտներում)»[2]:

Ներածության մեջ զանգվածային (նույնիսկ ինքնապաշտպանական) կռիվը (ինչպես, ասենք՝ Սասունի վերջին ապստամբությունը կամ Թուրք-հայկական ընդհարումները Կովկասում) Դումանը բաժանում է երկու տեսակի՝ ամբոխային և գիտակցական (կամ կազմակերպված):

Առաջին դեպքում ամբոխը լսելով հրազենի մի քանի ճայթյուն՝ դիմում է գլխակորույս փախուստի: «Ամբոխը չի՛ հասկանում, որ իր շահը մի մասն է ամբողջի՝ նրա հետ սերտ շաղկապված, և եթե ուզում է պահել իր սեփականը, պետք է պաշտպանի ամբողջը: Ամբոխը չի ընդունում, որ համաճարակին և առհասարակ ընդհանուր աղետին կարելի է դիմադրել միմիայն ընդհանուր ուժերով»[3]:

Միանգամայն տարբեր է գիտակցական կազմակերպված կռիվը, գրում է Դումանը: «Կազմակերպված ինքնապաշտպանական կռիվը ըմբռնում է երևույթները լայն և պարզորեն, գիտակցում է իր նպատակը. նա գիտե իր

[1] **Դուման**, Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության, Հայ ժողովրդի երեք գլխավոր հատվածների համար, Ժընև, 1907, էջ 38:
[2] Նույն տեղում, էջ 7:
[3] Նույն տեղում, էջ 8:

ուժերը ճշտիվ և թշնամունը՝ մոտավորապես. նա կարգի է բերում իր բոլոր ռազմիկ ուժերը և մտցնում է նրանց մեջ կարգապահություն (դիսցիպլին): Հարկավոր դեպքում շարժում է իր զորամասերը արագորեն, կենտրոնանում է՝ ուր անհրաժեշտ է, հարձակվում է՝ ուր հարկավոր է, պաշտպանում է՝ ուր կարևոր է»[1]:

Գրքույկի հեղինակը հենց սկզբից կոչ է անում ապագա կռիվներին լավ նախապատրաստվելու համար գործել խորին գաղտնապահությամբ, առանց որևէ ցուցամոլության:

Հայ ժողովուրդը թվական կազմով շատ է զիջում դրացիներին, որոնց մի մասը թշնամաբար է տրամադրված իր հանդեպ: Այս վիճակում հրամայաբար առաջ է գալիս ինքնապաշտպանական կռիվը հայերի կողմից կազմակերպված ու գիտակցորեն մղելու պահանջը՝ ազգի ֆիզիկական ուժերը տնտեսելու նպատակամղումով:

Քանի որ «Նախագծի» պահանջների կատարումը նախատեսված էր իրականացնել ընդհատակյա պայմաններում, իշխանություններից խիստ ծածուկ, ուստի գաղտնապահության գործը (հատկապես՝ Թուրքիայում) չվիժելու համար Դումանը գերադասելի էր համարում, որ ինքնապաշտպանության կազմակերպիչները լինեն տեղացիներ: Միայն բացառության դեպքում, եթե տեղում չկան կարող ուժեր, կարելի է դրսից կազմակերպիչ հրավիրել:

Ինքնապաշտպանական համակարգի հիմնական օղակը մարտական խումբն է: Ըստ որում, Դումանը խորհուրդ էր տալիս չտարվել մեծաթիվ մարտիկներ ունեցող խմբեր կազմելով: Գերադասելի են փոքր խմբերը:

Խմբերի զինավարժությունը Դումանը համարում էր դրանց գոյության առաջին պարտադիր պայմանը: Առանց զենքին լավ տիրապետելու, առանց վարժ, արագ և դիպուկ կրակելու՝ մարտիկը դադարում է խմբի համար պիտանի միավոր լինելուց:

Իսկ ինչպես կատարել զինավարժություն, եթե խումբը և նրա ամեն մի անդամը մշտապես ենթակա են հետապնդումների: Զինավարժության մեջ առավել կարևոր համարելով ճիշտ գնդակաձգությունը՝ Դումանը գտնում էր, որ դրան կարելի է հասնել որսորդության միջոցով, և իշխանությունները առիթ չեն ունենա որսի գնացողի նկատմամբ հարուցել քաղաքական մեղադրանք: Որսորդության դերի մասին նա գրում էր.

«Որսորդութեան առանձին տեղ ու նշանակություն պետք է տալ, որովհետև **որսորդական վարժութիւնն է միայն, որ մարդուն մատեցնում է պատերազմի արհեստին,** ինչպէս օրինակ՝ իր վրայ կրել պաշարի ու ռազմամթերքի ծանրութիւնը, քայլել երկար, բարձրանալ լեռը, իջնել ձորը, պտտել ճահիճներում ու անտառներում, վարժուել քաղցի ու ծարաւի և բնութեան խստութիւններին, վարժվել շատ նշան առնելուն եւ արագաձգութեան... Որսորդութիւնն ունի եւ մի ուրիշ շատ խոշոր առավելութիւն, այն, որ **որսորդը գործում է անկախ եւ ինքնուրոյն, եւ** դրանով նրա մէջ **զարգանում է հնարագիտության ոգին եւ նախաձեռնութիւնը** (ինիցիատիվա), որ չափազանց կարեւոր է խաղաղ կեանքի մէջ եւ, մանավանդ, պատերազմի ժամանակ»[1]:

Ինքնապաշտպանության գործը համարելով պատասխանատու՝ Դումանը գտնում էր, որ մարտական խմբի մեջ կարող են մտնել միայն նրանք, ովքեր ռազմապես ու հոգեբարոյական հատկանիշներով պատրաստ են կրելու հեղափոխության զինվորի բարձր կոչումը:

Ինքնապաշտպանության տեսակետից մարտական խմբերը գրքույկի հեղինակը բաժանում է չորս մասի՝ **մնայուն** խումբ, **թռուցիկ** խումբ, **շրջիկ** (կամ **ֆուռան**) խումբ: Հայ բնակչության այն մասը, որը չգիտեր զենք գործածել, նա համարում էր **չկազմակերպված ժողովուրդ**[2]:

Դումանը մի առ մի առաջադրում է դրանցից յուրաքանչյուրի անելիքը **քաղաքում** և **գյուղում** ցերեկային և գիշերային հարձակումների ժամանակ:

Քաղաքը Դումանը բաժանում է թաղերի, որոնցից ամեն մեկում կազմակերպվում է մի խումբ: Տվյալ քաղաքի զուտ հայաբնակ թաղերի խմբերը կարող են օգնության գնալ մյուս թաղերին, այնինչ խառը բնակչություն ունեցող թաղի մարտական խումբը **մնայուն** է և կռվի ժամանակ մնում է միայն իր թաղում: Զուտ հայաբնակ թաղից մյուս թաղերին օգնություն են գնում ոչ բոլոր խմբերը: Այստեղ մնացած խմբերը ևս բաժանվում են երկու մասի՝ մնայուն և թռուցիկ: Մնայուն խումբը մնում է իր տեղում (սովորաբար թաղի կենտրոնում)՝ անակնկալ հարձակումներից թաղը պաշտպանելու համար, իսկ թռուցիկ խումբն օգնության է գնում թաղի թաղամասերին (սովորաբար ծայրամասերին):

Բացի թաղերի մնայուն և թռուցիկ խմբերից, ամբողջ քաղաքի համար կազմակերպվում է մի այլ խումբ՝ զուտ կամավորներից: Դա **շրջիկ** խումբն է: Երբ ընդհարման նշաններ են երևում, այս շրջիկ խումբը մասերի բաժանված՝ ցերեկն աննկատելի շրջում է բոլոր բազմամարդ վայրերում՝ շուկա, հրապարակ, քաղաքային պարտեզ և այլն: Այդ խումբն է ցույց տալիս առաջին դիմադրությունը՝ հանկարծ տեղի ունեցող ընդհարման միջոցին: Խառը շուկայում, ընդհարման նախանշանների օրերում, ամեն մի հայ խանութպան պետք է ունենա իր զենքը, ինչպես և յուրաքանչյուր անհատ, որ պատկանում է ինքնապաշտպանության որևէ խմբի և ծառայում է խանութում նույնպես պետք է ունենա իր զենքը: Երբ անակնկալ կռիվ է սկսվում խառը շուկայում, խանութների զինված անհատները միանգամից դուրս են թռչում հարվածելու թշնամուն, իսկ անզեններն անմիջապես փակում են խանութները և դիմում ապա-

[1] **Դուման**, Նախագիծ..., էջ 8:

[1] **Դուման**, Նախագիծ ..., էջ 10-ի ծանոթությունը:
[2] Նույն տեղում:

հով վայրեր[1]:

Քաղաքի մնայուն, թռուցիկ և շրջիկ բոլոր խմբերի խմբապետերի ընդհանուր ժողովում գաղտնի քվեարկությամբ և ձայների 2/3-ով ընտրվում է երեք հոգուց բաղկացած «Ժամանակավոր զինվորական սպայակույտ» (շտաբ), որը կապ է պահպանում բոլոր խմբերի հետ, հոգ է տանում ժողովրդին զինելու մասին, կազմակերպում է հարմար դիրքերի կառուցումը վերահաս կռիվների համար, կռվի նախօրյակին ժողովրդին հորդորում է ձեռք բերել ուտեստի և ջրի պաշար, շուկայի վտանգավոր մասերից տուն փոխադրել թանկագին ապրանքները, թշնամու հարձակման ժամանակ քաղաքի ապահով մասեր տեղափոխել կռվի անընդունակ բոլոր մարդկանց:

Այնուհետև Դումանը մանրամասն ուսուցանում է, թե քաղաքում ինչ մեծության շենքերն են հարմար օգտագործել որպես դիրքեր՝ թշնամու գնդակից պաշտպանվելու և հակառակորդին հարված հասցնելու համար[2]:

Իսկ քաղաքում ընթացող կռվի ժամանակ ի՞նչ պիտի անեն շրջակա հայկական գյուղերի բնակիչները: Նրանք պետք է փակեն դեպի քաղաք շտապող թշնամական օգնական ուժերի ճանապարհը, ինչպես նաև հնարավորության դեպքում զինված խմբեր ուղարկեն քաղաքի հայերին օգնության:

«Նախագծում» Դումանը մանրամասն կանգ է առնում **գյուղի ինքնապաշտպանության** հարցերի վրա:

Հայկական գյուղերը ինքնապաշտպանական խնդիրների տեսակետից նա բաժանում է երեք դասի. ա) Զուտ հայաբնակ գյուղ՝ հայկական շրջանում, բ) Զուտ հայաբնակ գյուղ՝ մենակ ընկած օտար շրջանում, գ) Խառն ազգաբնակչություն ունեցող գյուղ, ուր ապրում են նաև հայեր:

Ամեն գյուղ ունենում է **մի խումբ**, որի մեջ մտնում են այդ գյուղի բոլոր մարտական ուժերը: Եթե գյուղը շատ մեծ է, կարող է կազմակերպվել **մի քանի խումբ**՝ քաղաքի նման թաղային սիստեմով, իսկ ամեն խումբ բաժանվում է երկու մասի՝ մնայուն և թռուցիկ: Տվյալ գյուղի մնայուն և թռուցիկ խմբերն ունեն իրենց հրամանատարները, որոնք ենթակա են ընդհանուրի կողմից ընտրված հրամանատարին՝ «գյուղական խմբապետին»:

Այնուհետև Դումանը հրահանգում է, թե իրարից ոչ հեռու ընկած հայկական գյուղերն ինչպես պետք է միմյանց հետ կապ հաստատեն փոխադարձ օգնության համար, ինչպես կազմակերպել դաշտային աշխատանքները գյուղում, որպեսզի գյուղացիները զոհեր չտան, և, մյուս կողմից, չառաջանա տնտեսական քայքայում[3]:

Գրքույկի հեղինակը հատկապես մեծ կարևորություն է տալիս **դիրքապահության ճիշտ կազմակերպմանը**, պաշտպանողական ու հարձակողական

[1] Տե՛ս, **Դուման**, Նախագիծ ..., էջ 12:
[2] Նույն տեղում, էջ 15:
[3] Նույն տեղում, էջ 19-20:

կռիվների ընթացքում մարտիկների և ժողովրդի անելիքներին, արտակարգ պայմաններում առավել նպատակահարմար գործելակերպի ընտրությանը: Դումանը շեշտում է, որ փոքրաթիվ մարտիկներով կարելի է դիմադրել մեծ թվով հարձակվողների և նրանց ծանր կորուստներ պատճառել: Բայց դա չի նշանակում, թե միշտ պետք է մնալ պաշտպանական սահմաններում: Եթե կռվի ճակատի տվյալ հատվածում հայերի ուժը գերազանցում է հակառակորդի ուժին և եթե կան բավականաչափ փամփուշտներ, ապա հարկ է անհապաղ հարձակման անցնել, հետապնդել թշնամուն և հեռացնել գյուղի տարածքներից: Հարձակման համար Դումանն առաջ է քաշում 12 պայման[1], որոնց կատարումը համարում է հաղթանակի երաշխիք:

Այնուամենայնիվ նկատելի է, որ ընդհանուր առմամբ «Նախագծում» գերադասությունը տրված է պաշտպանական կռվին, որը դրացիների համեմատ նվազ թվաքանակ ունեցող հայերին հնարավորություն կտա թշնամուն պատճառել մեծ կորուստներ և ընդհարումից դուրս գալ քիչ կորուստներով:

Խոսելով պաշտպանողական և հարձակողական կռիվների առանձնահատկությունների մասին՝ Դումանը զարմանալիորեն գուշակել է թուրքահայ եղբայրների գալիք մեծ ողբերգությունը և իրեն հատուկ վճռականությամբ առաջարկել է արհավիրքին դիմագրավելու միջոցը: Ահա թե կանխատեսաբար ինչ էր գրում նա.

«Ենթադրենք, որ նույնիսկ ապագայում Թուրքիո մահմեդական ցեղերը միաբանին առաջ բերելու հայերի ընդհանուր ջարդ: Ի՞նչ պէտք է անել այդ դէպքում: Այդ դէպքում հայ ժողովուրդը պէտք է անպայման համոզուի, որ ջարդի մէջ կայ կառավարութեան մասնակցությունը և վերջապես պէտք է դէն շպրտի ոչխարի հաւատը դեպի զասապը որ խորապէս անվստահ դէպի գայլերը՝ պէտք է օրհասական կռիւ մղի բոլոր հնարաւոր միջոցներով, քանի որ առանց դիմադրելու էլ միեւնոյն է պիտի կոտորուի. իսկ դիմադրութիւնով կոտորուելը մի կողմից սահմանափակում է սեփական զոհերի թիւը, մյուս կողմից էլ ունի և այն առավելութիւնը, որ թշնամին թէեւ ի վերջո յաղթական, բայց կռվի մէջ որոշ քանակութեամբ զոհեր տալով հայկական մի շրջանում կ՚ըզգուշանա պրոկերես ու համարձակ լինել գոնէ միւս շրջաններում»[2]:

«Նախագծում» մեծ կարևորություն է տրված զինված խմբերի ճիշտ շարժումների խնդրին: Դումանը հրահանգում էր, որ բոլոր դեպքերում զինվորական շարժումները տեղի ունենան **կարճ ճանապարհով** և **արագ**, իսկ ճանապարհին չպետք է ընկնել ծուղակի մեջ, որ կարող է սարքած լինել թշնամին: «Կամուրջի վրայով, ձորի եւ խրամատների միջով, այլ եւ պատերի վրայով անցնելիս պէտք է ձեռք առնել զգուշութեան միջոցներ, մանաւանդ գիշեր ժամանակ: Կամուրջին չհասած, պէտք է կանգ առնել բաւականաչափ հեռու եւ

[1] **Դուման**, Նախագիծ ..., էջ 29:
[2] Նույն տեղում, էջ 25:

խուզարկութիւն կատարել, յետոյ անցնել կամուրջը: Ամբողջ խմբով միանգամից չպէտք է ձորը մտնել, այլ մաս-մաս եւ ցրուած կարգով՝ նախազգուշութեան միջոցներ ձեռք առնելուց յետոյ: Այդպէս պէտք է վարուել խրամատների եւ պատերի հանդիպելիս»[1]:

«Նախագծի» վերջին հատուածում Դումանը քննության է առնում զենք ձեռք բերելու խնդիրը:

Հեղինակը գտնում է, որ պետք է խուսափել Հայաստանից շատ հեռու գտնվող երկրներում (ասենք՝ Ճապոնիայում) արտադրած զենքեր գնելուց, քանի որ դրանց հետ սովորաբար վաճառվում են շատ քիչ փամփուշտներ, որոնք կարճ ժամանակում սպառվելուց հետո զենքը դառնում է «մի անպետք փայտի կտոր»:

Ուրեմն զենքը պետք է փնտրել մոտիկ տեղերից: Հայությունն ապրում է երեք պետությունների սահմաններում, որոնցից յուրաքանչյուրում կա երկու որակի զենք. մեկը նորագույն զենքն է, որով զինված են այդ երկրների բանակները, մյուսը բանակների գործածությունից հանված զենքն է: Ռուսաստանում նորագույն զենքը «Մոսին» հրացանն է, իսկ նախընթացը՝ «Բերդանը»: Թուրքիայում ներկա զենքը «Մաուզերն» է, իսկ նախընթացը՝ «Մարտինը»: Հետևապես հայերը պետք է ձգտեն Ռուսաստանում ձեռք բերել «Մոսին» և Թուրքիայում «Մաուզեր»: «Մոսինը» արտադրվում է Ռուսաստանում (ուր կան զենքի մի քանի գործարաններ), իսկ «Մաուզերը» Թուրքիան ներմուծում է (քանի որ երկրում չկա զինագործարան): Ուրեմն հայերը «Մոսինից» բացի պետք է ունենան նաև «Մաուզեր», քանի որ այդ երկու զենքերի փամփուշտները կարելի է ձեռք բերել առատ ու էժան:

Բայց հայերն անկարող են մեծ թվով «Մոսին» և «Մաուզեր» ձեռք բերել, քանի որ նոր զենքը միշտ թանկ է լինում, բացի այդ, սովորաբար խստիվ արգելվում է գործածությունն այն զենքերի, որոնք դեռ գտնվում են զորքի ձեռքին:

Ահա թե ինչու, նշում է Դումանը, հայերը հիմնականում պետք է զինվեն նախընթաց, այսինքն՝ բանակների գործածությունից դուրս եկած, հետևապես էժան զենքերով, ինչպես, ասենք՝ «Բերդանը» և «Մարտինը», ատրճանակներից՝ «Պարաբելումը», «Բրաունինգը», «Նագանը», «Սմիտ-Վեսսոնը», «Բուլդոկը» և այլն:

Դումանը նշում է, որ ինքնին հարց է ծագում, թե համեմատաբար վատ զենքերով ինչպես կարելի է դուրս գալ թշնամու դեմ: Այսպիսի մտածումները միանգամայն անհիմն են, գրում է նա: Նախ և առաջ՝ ոչ ոք չի արգելում ձգտել ավելի կատարելագործված զենքեր ունենալու: Երկրորդ՝ մեր նպատակն է ինքնապաշտպանություն հարևան ժողովուրդներից, որոնք գտնվում են նույնպիսի պայմանների մեջ, ինչ որ մենք – այսինքն՝ նրանք էլ չպիտի կարողանան

[1] *Դուման, Նախագիծ ..., էջ 33-34:*

զինվել բացառապես կատարելագործված զենքերով: Եվ երրորդ՝ գրեթե ո՛չ մի առավելություն չի ներկայացնում կատարելագործված զենքը մեր ժողովրդի ձեռքում:

Կատարելագործված հրացանն ունի գլխավորապես երեք առավելություն – անծուխ է, ավելի արագաձիգ է և խփում է շատ հեռու: Բայց այդ հատկությունները նշանակություն ունեն միայն ռազմապես կրթված զորաբանակների համար: Մինչդեռ մեր ժողովուրդը դրա անհրաժեշտ կարիքը չունի, քանի որ նա անվարժ է արագաձգության ու կանոնավոր համազարկերի արհեստին: Մյուս կողմից էլ, նա հիմնականում առիթ է ունենալու ընդհարվելու մոտիկ տարածության վրա[1]:

Ընդհանուր գծերով այսպիսին է Նիկոլ Դումանի՝ մեծ հայրենասերի, ինքնապաշտպանական կռիվների տաղանդավոր կազմակերպչի ռազմագիտական աշխատության բովանդակությունը: Նրա հրահանգները միանգամայն բավարարում էին հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի մարտիկների պահանջները:

Նիկոլ Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» գրքույկը համարձակորեն կարելի է դնել ժամանակաշրջանի լավագույն զինվորական կանոնագրքերի կողքին[*]:

*

* *

Անդրանիկի և Դումանի զինվորական հրահանգները գրվել են Թուրքահայաստանից դուրս, մեկը՝ Ժնևում, մյուսը՝ Բաքվում:

Պատմաբաններին երկար ժամանակ հայտնի չէր՝ արդյո՞ք զինվորական հրահանգներ գրելու փորձեր արվել են բուն երկրում: Միայն այն բանից հետո, երբ լույս տեսավ «Նյութեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար» փաստաթղթերի ու նյութերի բազմահատոր ժողովածուի Դ հատորը, պարզ դարձավ, որ Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովի (1907թ.) թղթածրարներում պահպանվել է զինվորական-մարտական բնույթի երկու ձեռագիր-

[1] *Դուման, Նախագիծ ... , էջ 35-36:*

[*] *Ի շարս Ներսես Աշտարակեցու ռազմական գրավոր կանոնների Անդրանիկի մարտական հրահանգների և Դումանի ժողովրդական ինքնապաշտպանության Նախագծի, հետագայում ավելացան Նժդեհի՝ Բալկանյան պատերազմի օրերին գրած զինվորական կանոնները, իսկ ավելի ուշ՝ 1918թ. Թիֆլիսում լույս տեսնող հայ զինվորական խորհրդի օրգան «Ռազմիկ» թերթի ռազմագիտական մշակումները: Նույն թվականին Թիֆլիսում և Երևանում լույս տեսան մի շարք թարգմանական ռազմագիտական գրքույկներ: 1919 և 1920թթ. Թիֆլիսից Երևան տեղափոխված «Ռազմիկ» թերթի խմբագրությունը և Հայաստանի Հանրապետության բանակի գլխավոր շտաբը համատեղ մշակեցին և հրատարակեցին նոր գրքույկներ: Այդ ամենով կայացավ ու ճոխացավ հայ ազգային ռազմագիտական գրականությունը:*

գրություն (էջ 33-38), որոնք թվական կամ որևէ մակագրություն չեն կրում: Դրանցից առաջինը վերնագրված է «Ո՞վ կարող է լինել զինուոր» և գրված է փոքր չափի թղթի վրա՝ 10,5 էջ: Շարադրանքի նպատակը և ոճը հուշում են, որ այն ստեղծվել է Երկրում: Մյուս ձեռագիր գրությունը վերնագրված է «Մարտական դաստիարակություն»[1], որի բովանդակությունից կարելի է ենթադրել, որ այն նախատեսված է եղել ռազմական ծավալուն գործողությունների, հետևապես՝ զինվորական համեմատաբար մեծ խմբավորումների (հարյուրակից ոչ պակաս) համար:

Մենք չգիտենք, թե ո՞վ կամ ովքե՞ր են այդ գրությունների հեղինակը կամ հեղինակները, արդյո՞ք այդ զինվորական կանոնագրերն ունեցել են գործնական նշանակություն, երբևիցե պե՞տք են եկել զինվորական վարժություններ կազմակերպելու ժամանակ: Այնուամենայնիվ, եթե դրանք նույնիսկ մնացել են լոկ իբրև գրություններ և գործնական նշանակություն չեն ունեցել, միևնույն է, կարևոր են հայ ռազմագիտական մտքի զարգացման ընթացքն ուսումնասիրելու համար:

«Ո՞վ կարող է լինել զինուոր» կանոնագիրը, որ նախատեսված էր դաշնակցական զինվորի համար, բաղկացած է չորս հատվածներից և 65 հոդվածից*:

Վեց հոդվածից բաղկացած առաջին հատվածը վերնագրված է՝ «Ո՞վ կարող է լինել զինուոր»: Պատասխանն այս է. զինվոր կարող է լինել նա, ով՝ 1) որոշել է անձը զոհաբերել հայրենիքի համար, 2) ունի «մաքուր զգացմունք, ընկերական բնավորություն և անպայման ենթարկվելու տրամադրություն», 3) առողջակազմ է և տարիքը տատանվում է 20-50-ի միջև, 4) որից տնտեսապես կախում չունի իր ընտանիքը, 5) ծառայության անցնելու առաջին իսկ օրից ապրում է կազմակերպության ծախսով, իսկ նրա ընտանիքը որևէ նըպաստ չի ստանում, 6) երբ զինվորը թողնում է ծառայությունը, իր հետ բերած զենքը և դրամները մնում են կազմակերպության սեփականություն:

Երկրորդ բաժնում (31 հոդվ.) խոսք է գնում դաշնակցական զինվորի պարտականությունների մասին: «Ամեն մի դաշնակցական զինուոր պարտավոր է հավատարմութեամբ ծառայել Դաշնակցութեան Դրոշին և Հայրենիքի ազատագրման գործին» - գրված է այս բաժնի առաջին հոդվածում: Զինվորը պարտավոր է անտրտունջ և անձնվիրաբար կատարել իր հրամանատարի բոլոր հրամանները: Եթե նա անհատապես զգում է, որ տված հրամանները սխալ են, միևնույն է, պիտի կատարի՝ պատասխանատվությունը թողնելով հրամայողի վրա (հոդվ. 2): Զինվորները, իբրև մի գաղափարի ծառայող մարդիկ, պարտավոր են ընկերաբար վարվել միմյանց հետ, վտանգի ժամանակ ընկերոջն ազատելու համար չխնայել կյանքը (հոդվ. 4): Ամեն մի զինվոր պարտավոր է իմանալ, որ իր սխալ քայլերով անպատվություն կբերի ոչ միայն

[1] Տե՛ս **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 33-38:

* «Ո՞վ կարող է լինել զինուոր» կանոնագրի ամեն մի հատված սկսվում է հոդված 1-ից:

իրեն, այլև իր տասնյակին, տասնապետին, խմբին ու խմբապետին (հոդվ. 5): Զինվորի համար ամենակարևոր իրը հրացանն է, որը պարտավոր է պահել մաքուր, խնամքով, առանց տասնապետի հրամանի կամ նրա գիտության՝ չփոխել մասերը: Զենքը երբեք չպետք է ընկնի թշնամու ձեռքը: Միայն վերջին հուսահատական րոպեին, երբ զինվորը հույս չունի ապրելու և ընկերներն անկարող կլինեն ընկած զինվորից վերցնել զենքը, մահացող զինվորի վերջին սրբազան պարտքն է՝ ոչնչացնել զենքը՝ այն թշնամու ձեռքը չտալու համար (հոդվ. 7,8): Առանց տասնապետի կամ խմբապետի թույլտվության՝ զինվորը իրավունք չունի բաժանվել իր խմբից, ճանապարհին ծխել, ջուր խմելու համար խմբից հեռանալ, հանգիստ ժամանակ գյուղերում կամ դիրքերում փոխել իր տեղը (հոդվ. 9,10,11,12): Ամեն զինվոր որոշակի ժամերի պարտավոր է պահակություն անել, պահակության ժամանակ չքնել, ուշիմ հսկել զենքերը, թե՛ ընկերների և թե՛ թշնամու ճանապարհները, վտանգի ժամանակ անմիջապես իմաց տալ խմբապետին (հոդվ. 13, 14,15): Ամեն զինվոր պարտավոր է գյուղում իրեն պահել համեստ, վայելուչ, իր անձնական օրինակով բարձրացնել հեղափոխականի պատիվը: Նա պետք է բավարարվի համեստ հյուրասիրությամբ, որ կարող է անել համեստ ընտանիքը: Զինվորն իրավունք չունի գյուղերում ինքնագլուխ ժողովրդին ներկայացնել դրամի պահանջ, խառնվել գյուղի գործերին և կուսակցական խնդիրներին, առանց տասնապետի հրամանի հարաբերություն ունենալ գյուղացիների հետ կամ խուզարկություն կատարել (հոդվ. 17,18,19,20,21): Զինվորը պարտավոր է լինել վերին աստիճանի գաղտնապահ, բարեկամներին, ընկերներին և ազգականներին նամակ գրել խմբապետի գիտությամբ և սրա կարդալուց ու թույլտվություն տալուց հետո ուղարկել հացեատիրոջը (22,23 հոդվածներ): Ամեն տասնյակ պետք է ունենա իր դրոշակակիր զինվորը, խմբի ամենաարիասիրտը, որը պետք է ամենայն անձնվիրությամբ պաշտպանի այն՝ հիշելով, որ թշնամու ձեռքը դրոշակի անցնելը կամ ոչնչացումը խմբի բարոյական պարտությունն է (28,29,30 հոդվածներ): Քանի որ առանց տասնապետի և նրա օգնականի տասնյակը կմնա առանց ղեկավարի և անխուսափելիորեն կոչնչանա, ուստի ամեն մի զինվոր պարտավոր է կյանքի գնով պահպանել իր տասնապետին և օգնականին (հոդվ. 31):

Զինվորի պարտականությունների մասին հատվածին հետևում է նրա իրավունքներին վերաբերող հատվածը, որոնք ձևակերպված են ընդամենը երկու հոդվածի մեջ, այն է՝ 1) Զինվորն իր անմիջական կարիքների և հիվանդության մասին իր տասնապետի միջոցով հայտնում է խմբապետին, 2) Իրեն հասցրած վիրավորանքների և պատահած թյուրիմացությունների մասին նույնպես զինվորը խմբապետին հայտնում է տասնապետի միջոցով:

Վերջին հատվածը, որը բաղկացած է 26 հոդվածից, հատկացված է տասնապետին և նրա իրավունքներին: Տասնապետը նշանակվում է կոմիտեի կողմից՝ զինվորներից ամենափորձվածին, ձեռներեցին և խելացիին: Նա պարտա-

վոր է աչալրջությամբ հսկել իր տասնյակի բարոյականը, կարգ ու կանոնը և այդ ամենի համար պատասխանատու է կոմիտեի առջև: Պարտավոր է նաև հավասար աչքով նայել տասնյակի բոլոր զինվորներին: Տասնապետը չպետք է զինվորներին հայտնի դարձնի կոմիտեում իրեն հայտնած գաղտնիքները, իսկ տասնյակին ուղղված հրահանգները պարտավոր է նույնությամբ հաղորդել իր զինվորներին (Հոդվ. 1,2,3,4,5): Տասնապետը իրեն պիտի համարի զինվորների եղբայրը, հարթի անհամաձայնությունները նրանց միջև, հետևի, որ նրանք խնամքով վարվեն զենքի հետ, չդիմեն ինքնագլուխ գործողությունների, հսկի, որ փամփուշտները անխնա չպարպեն (Հոդվ. 6,7,8,12): Կռվից հետո տասնապետը պետք է իր տասնյակի վառած փամփուշտների, փչացած զենքերի ցուցակը իր ստորագրությամբ ներկայացնի խմբապետին (Հոդվ. 22): Եթե տասնապետը նշանակվում է կոմիտեի կողմից, ապա տասնապետի օգնականը ընտրվում է խմբապետի կողմից՝ տասնյակի համաձայնությամբ: Տասնապետի ներկայության ժամանակ օգնականը սովորական զինվորի դեր է կատարում: Տասնապետի հեռանալու, վիրավորվելու կամ զոհվելու դեպքում օգնականը ստանձնում է նրա դերը և իրավունքները (Հոդվ. 24,25,26):

*

* *

Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովի թղթածրարներում պահված զինվորական մյուս հրահանգը, ինչպես ասվեց, կրում է ***«Մարտական դաստիարակություն»*** *վերնագիրը: Արխիվային այդ ձեռագիրը, որը պահպանվել է 14 մեծադիր էջերի վրա, ներկայացնում է ավելի ընդարձակ ամբողջության մի մասը և սկսվում է 114 հոդվածից: Հրահանգ-կանոնագրի վերջին հոդվածը 232-ն է: Ձեռագրի վրա չկա ո՛չ թվական և ո՛չ էլ բացատրական որևէ մակագրություն: Զինվորական այս հրահանգը հավանաբար նախատեսված է եղել տակտիկական զինավարժություններ անցկացնող հրամանատարների և հրահանգիչների համար:*

Փաստաթուղթը բացատրում է, թե պաշտպանության ժամանակ ինչպես պետք է դիրք բռնել, ցրիվ կազմ (շղթա) ստեղծել հարմար տեղում, կրակ տեղալ շղթայից, պահպանել օպտիմալ հեռավորություն թշնամու դիրքերից (Հոդվ. 120): Հրահանգված է, թե պաշտպանական կռվի ժամանակ երբ պետք է հատ-հատ կրակել, երբ՝ դանդաղ և արագ, թե թշնամու հեծելազորի վրա քանի քայլ հեռավորությունից կարելի է կրակ բանալ (մինչև 500 քայլ) և հետևակի վրա՝ քանի (600 քայլ), իսկ մինչև 1400 քայլ՝ կրակ կարելի է բացել միայն թշնամու խմբված ուժերի վրա (Հոդվ. 124): Փաստաթղթում ուշադրություն է նվիրված, թե թշնամու հարձակման ժամանակ ինչպես պետք է չափել նրա հեռավորությունը և ըստ այդմ բացել հրացանային հատ-հատ կամ արագ կրակ (Հոդվ. 125): Թշնամու հարձակման դեպքում կարևոր է արագ լցնել

հրացանը, նշան վերցնել, նշան ուղղել, ճիշտ ընտրել առանձնապես աչքի ընկնող նպատակակետերը (Հոդվ. 126,127, 131): Նշված է, որ դիրքային կռվում զինվորներին պետք է կանգնեցնել մի հարմար պատնեշի մոտ, որտեղ յուրաքանչյուր ոք ամենից առաջ պետք է հարմար տեղ գտնի հրացանաձգության համար: Այդ տեղը, որքան կարելի է, պետք է ծածկված լինի թշնամու գնդակներից: Եթե նոր բռնած տեղից թշնամին չի երևում, պետք է տեղափոխվել մի ուրիշ տեղ, որ ունենա գնդակ գցելու լավ ասպարեզ (Հոդվ. 136, 137):

Հարձակման ժամանակ զինվորները պետք է ուշադրություն դարձնեն այն բանի վրա, թե ինչ է անում թշնամին: Երբ հարձակվողը մոտենում է ամենավերջին դիրքին, կարելի է հրացան արձակել, որից հետո, կապուկներով կրակ բացելով, գրոհ տալ, միաժամանակ նախապատրաստվել սվինամարտի (Հոդվ. 142):

Նահանջի ժամանակ մահացու է խուճապը: Շղթան պետք է նահանջ կատարի սովորական քայլերով, կանգ առնի հարմար դիրքերում և կրակ բացի համազարկերով կամ հատ-հատ (Հոդվ. 143):

Այնուհետև փաստաթղթում հրահանգավորված է, թե ինչպես պետք է հարյուրակի մասերից շղթա կազմել (Հոդվ. 204-211), ինչպես շղթան խտացնել կամ երկարացնել՝ համաձայն հարյուրապետի հրամանի, ինչպես ղեկավարել շղթան (Հոդվ. 204-227), ինչպես փոխել շղթայի ուղղությունը կամ այն խմբել (Հոդվ. 228-229): 202-232 հոդվածներով հրահանգավորված է, թե ինչպիսին պետք է լինի ռազմական կարգը առանձին գործող հարյուրակի, որը գործում է շղթայից դուրս:

*

* *

Ինչպես տեսնում ենք, նշված ռազմական չորս հրահանգները ստեղծվել են Հ.Յ.դաշնակցության շրջանակներում, և դա պատահական չէ, քանզի ուսումնասիրվող ժամանակահատվածում, ինչպես արդեն ասվել է, այդ մարտական կազմակերպությունն էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի հիմնական ղեկավար ուժը:

Արդյո՞ք հայ ազգային-հեղափոխական մյուս կուսակցության՝ հնչակի շրջանակներում ևս ստեղծվել է զինվորական որևէ հրահանգ-կանոնագիր: Հնարավոր է, որ ստեղծված լինի, բայց մենք չենք հանդիպել հնչակյան հրատարակություններում:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Հայկական քաղաքական շրջաններում աշխույժ քննարկվում էր այն հարցը, թե տեսանելի ապագայում արևմտահայությունը ինչպե՞ս պետք է կազմա-

կերպի իր պաշտպանությունը. արդյո՞ք Հայաստանում հայերը ունենալու են կանոնավոր զինվորական կազմավորումներ, թե՞ պայքարը շարունակվելու է զինված հայդուկային մանր խմբերի միջոցով: Այդ հարցը բնավ հռետորական չէր, քանի որ արդեն 20-րդ դարասկզբին հայ ազատագրական շարժման ղեկավար գործիչների մոտ շրջանառվում էր Թուրքահայաստանում սեփական բանակ ստեղծելու անհրաժեշտության մասին Արմենակ Ղազարյանի (Հրայր) արտահայտած միտքը: Ազատագրական շարժման այդ խոշորագույն գործչի իղձն էր՝ որքան հնարավոր է շուտ հրաժարվել կռվի հայդուկային մարտավարությունից և զինական խնդիրը դարձնել ողջ հայության սրբազան գործը:

Որքան էլ տարօրինակ է, այդ միտքն առաջին անգամ ծագել է եվրոպացի հայասերների մեջ՝ առավել ցայտուն արտահայտվելով իտալացի Ամիլկար Զիպրիանոյի՝ 1895-1896թթ. Թուրքիայում տեղի ունեցած հայկական ջարդերի մասին հոդվածում: Նախատինքի խոսքերով դիմելով հայերին՝ նա ասում էր, որ այդ ջարդերի մեղքն ընկնում է նաև նրանց վրա այն իմաստով, որ նրանք ունակ չեղան զենքով խափանելու սուլթան Համիդի հայասպան ծրագիրը: Զիպրիանոն շեշտում էր, որ եթե սպանված 300 հազար հայերից, ասենք, 100 հազարը զենք ունենար և կռվով պաշտպաներ իրեն, ապա հիմա ժողովուրդը փրկված կլիներ բռնապետության ճիրաններից: Թուրքը հայի արյունով դեռ չի կշտացել, զգուշացնում էր նա, ուստի հայության ղեկավար քաղաքական ուժերը պետք է առանց ժամանակ կորցնելու ձեռնարկեն ժողովրդական ամենալայն զանգվածներին զինելու և նրանց զենքին վարժեցնելու գործին: Հայասերի խոսքերի իմաստն այն էր, որ Թուրքահայությունը պետք է ունենա սեփական կանոնավոր զինված ուժեր՝ բանակի տեսքով:

Ճիշտ է, Սասունի ապստամբությունից հետո էլ Թուրքահայերը մերթ այստեղ, մերթ այնտեղ ըմբոստանալով զենքի էին դիմում ու կռվի մեջ մտնում Թուրք կառավարական պաշտոնյաների կամ քուրդ ավազակների հետ՝ պաշտպանվելու համար նրանց բռնություններից: Բայց այդ ըմբոստությունները պատահական երևույթներ էին ու մնում էին ամփոփված ավելի մասնավոր, անհատական պոռթկումի սահմաններում և երբեք չէին ընդհանրանում:

Սակայն բանակի գաղափարը հայկական աջ գործիչների, եկեղեցականների, օտար երկրներում ապրող հայ վաճառականների շրջանում հանդիպում էր ուժգին դիմադրության: Տարածվում էր այն տեսակետը, թե չպետք է ազատագրական կռիվ մղել Թուրք պետության դեմ, որ այդ պետությունը, միևնույն է, անխուսափելիորեն կործանվելու է հզոր պետությունների՝ Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի հարվածներից, և այն ժամանակ հայությունը հնարավորություն կունենա առանց զենք գնելու և կրելու, առանց արյուն թափելու ազգային ազատություն ստանալ:

Բոստոնում ապրող մի մեծահարուստ հայի՝ 1903թ. արած հետևյալ խորհրդածությունը մեզ է փոխանցել հնչակյան ղեկավար գործիչ Սապահ-Գյուլյանը.

«Ես զարմանում եմ, որ շատ լեզուներ գիտցող, համալսարանավարտ, ուսման և խելքի տեր մարդիկ էլ **յեղափոխական** են դառնում. մարդ որքան տրգետ լինելու է՝ չը հասկանալու համար, որ Թուրքիան անպատճառ պիտի կործանվի, քանի որ ո՛չ եվրոպացիները, ո՛չ էլ ամերիկացիները նրան հանգիստ պիտի թողնեն և թույլ տան, որ այն դրախտանման երկիրը մինակ ինքը վայելէ: Արդ, այն օրը, երբ Թուրքիան՝ եվրոպական այս կամ այն պետության իշխանութեան տակ կանցնի, մենք հայերս, այնուհետև ազատ, խաղաղ, երջանիկ, ապահով կեանք կարող ենք վարել: Ասել է թե՝ մեզ հայերիս ո՛չ յեղափոխություն է պետք, ո՛չ զենք, ո՛չ էլ ապստամբություն ու կռիվ. այլ մեր գործը պիտի լինի՝ աչքաբացություն անել, հարստություն հավաքել, որ տանենք, երթանք **մեր երկիրը՝** վայելենք, երբ արդեն եվրոպացիները՝ անգլիացիները, ֆրանսիացիները կամ ռուսները մտած, ազատած և երկիրը տիրած կը լինեն. խելոք հայը այդպես պիտի անի, ուրիշ ոչինչ. յեղափոխական ճանապարհը՝ դրա համար մնասակար է և մեզ թե՛ կսպառեն և թե՛ ավելորդ տեղը աշխատեցրած, յոգնեցրած, ջլատած կը լինի»[1]:

Մշտական կանոնավոր ազատագրական բանակ ունենալու համար ազգը ամենից առաջ պետք է ունենար նյութական հսկայական զոհողությունների հնարավորություն, մի բան, որ, ցավոք, չուներ: Թուրքերի և քրդերի տևական հարստահարումներն արևմտահայությանը հասցրել էին տնտեսական ծայրահեղ աղքատության դուռը: Իսկ կանոնավոր և լավ զինված ազատագրական բանակը նախ և առաջ ենթադրում էր վիթխարի ֆինանսական և նյութական միջոցների առկայություն:

Ուստի մշտական, առավել ևս՝ կանոնավոր զորք ունենալու բաղձանքը, որ փայփայում էին հայ հեղափոխականները, իրական հիմք չուներ:

Հայ քաղաքական միտքը բանակի հարցում կարծես հրաժարվում էր և՛ կանոնավոր մշտական բանակի, և՛ հայդուկային խմբերի տարբերակներից՝ գնալով հակվելով **համաժողովրդական բանակ** ստեղծելու մտքին:

Արևմտյան գաղափարներին խիստ ընկալունակ հայ քաղաքական միտքը անդրադարձնում էր Եվրոպայում նույն խնդրի շուրջ ծավալված տեսակետները: Եվրոպական, հատկապես սոցիալիստական, միտքը բազմակողմանիորեն մշակելով ու զարգացնելով համաժողովրդական բանակի գաղափարը՝ այն հակադրում էր տերությունների, այդ թվում օսմանյան կայսրության, վիթխարածավալ կանոնավոր բանակներին, որոնք զինված էին տեխնիկայի վերջին խոսքով և խժռում էին ազգային եկամտի հսկայական մասը: Այդ բանակները ստեղծվել էին ոչ թե բացառապես երկրի պաշտպանության նպատակով, այլ գերազանցապես, մի կողմից, ագրեսիայի և իմպերիալիստական զավթումների, մյուս կողմից, երկրի ներքին կարգը զենքի ուժով պահպանելու, ժողովրդական հուզումները և ազգային ազատագրական շարժումները ճնշելու համար:

[1] **Սապահ-Գիւլեան**, Պատասխանատուները, Փրավիտենս, 1916թ., էջ 44-45:

Եվրոպայի ազատական-ռամկավար և սոցիալիստական կուսակցությունները հանդես էին գալիս պետությունների բանակների զինաթափման պահանջով, զինաթափում, որ, ի զարմանս քաղաքակիրթ աշխարհի, առաջինը 1899 թվականին պաշտոնապես առաջ էր քաշել ռուսական հզոր պետության ինքնակալ Նիկոլայ II -ը, և այն դարձել էր լայն քննարկման հարց դիվանագիտական ոլորտներում, հանդեսների և լրագրերի էջերում, գիտական գրականության մեջ: Դնելով կանոնավոր բանակների զինաթափման պահանջը, սոցիալիստները, սակայն, չէին դնում ազգային զինաթափման հարցը: Ավելին, նրանք գտնում էին, որ ժողովուրդները պետք է զինվեն, որովհետև անզեն ժողովուրդն ազատ ժողովուրդ լինել չի կարող, որ անզեն ժողովուրդը լոկ խաղալիք է բռնակալների ձեռքին:

Սպառազեն դեմոսի շվեյցարական օրինակը խանդավառում էր համաժողովրդական բանակի գաղափարը փայփայող եվրոպական առաջադեմ գործիչների երևակայությունը: Բոլոր շվեյցարացիները մարզվում էին ռազմական ճամբարներում, բոլորն էլ զինվորներ էին՝ պատրաստ պաշտպանելու հայրենիքը, բայց ոչ երբեք զավթողական կռիվ մղելու: Նվազ բնակչություն ունեցող Շվեյցարիան անհրաժեշտ պահին կարող էր մարտի դաշտ հանել մինչև 200 հազար զինվոր:

Համաժողովրդական բանակի օգտին Եվրոպայում ծավալված պրոպագանդան լայնորեն արձագանքվում էր հայկական իրականության մեջ: Գաղափարը ջերմ պաշտպաններ ուներ հայ քաղաքական շրջաններում, հատկապես ս.դ. Հնչակյան և Հ.Յ.դաշնակցության կուսակցությունների վերին մարմիններում:

«Համաժողովրդական բանակն է միակ փրկության խարիսխը, - գրում էր Միքայել Վարանդյանը: - Զինված ու մարզված ժողովուրդն է միայն, որ կարող է ընդմիշտ ապահովել իր ազատությունը, թումբ կանգնելով բռնակալական և ամեն տեսակ հետադիմական դավերի հանդեպ: Երբ ամբողջ ժողովուրդը, նրա բոլոր առնական ուժերը գիտեն զենքի գործածության եղանակը, գիտեն կռվելու լավագույն արվեստը - ոչ մի միապետ կամ կամայապետ, ոչ մի զինվորական կամ ավատական ուժ, ոչ մի բռնավոր, հակաժողովրդական կատա ու դասակարգ չի կարող հարատևել իր տիրապետությունը, անգամ միլիոնավոր վարձկան ու այլ զինվորների աջակցությամբ»[1]:

Բայց բանն այն է, որ Հայաստանը Շվեյցարիա չէր, և հայերի հարևանները եվրոպացիներ չէին: Բացի այդ, համաժողովրդական բանակ ստեղծելը, այսինքն՝ ողջ արևմտահայությանը զինելը, պահանջում էր նաև ֆինանսական ու նյութական հսկայական միջոցներ, համառ ու երկարատև աշխատանք: Այն պայմանավորված էր օսմանյան կայսրության ներքաղաքական իրադրությունների և միջազգային հարաբերությունների հետագա զարգացումով, հայ-թուրք և հայ-քուրդ հակասությունների արդի և գալիք օրերի վիճակով: Եվ

[1] **Մ. Վարանդեան**, Համաժողովրդական բանակ, Թեհրան, «Ալիք» տպարան, էջ 24:

հենց այդ պատճառով այն առայժմ մնում էր լոկ իբրև ցանկալի գաղափար:

Իսկ արևմտահայությունը շարունակում էր տվայտել թուրք-քրդական գեհենում: Ժամանակը թանկ էր, այն չէր սպասում: Գալիքի համաժողովրդական բանակը չէր, որ այսօր բռնադատումից պիտի պաշտպաներ իր դժբախտ ազգին: Ժողովրդին պետք չէին անիրական տեսական հաստատումներ, նրան կենդանի գործ էր պետք: Իրական, այլ ոչ թե թղթային օգնություն հարստահարվող ժողովրդի պաշտպան մարտիկներին:

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

Իր պետականության կորստից հետո հայ ժողովուրդը երկար դարեր հնարավորություն չէր ունեցել պատրաստելու սեփական զինվորական կադրեր:

Ազատագրական շարժման գործիչները բազմիցս մտավախություն էին հայտնում, թե հայկական լեռնաշխարհում համընդհանուր ապստամբություն բռնկվելու դեպքում զինվորական ղեկավար ուժերի պակասի պատճառով ապստամբական ուժերի համար կարող է ստեղծվել խիստ ծանր կացություն: Թեև շարժման մեջ գործում էր ֆիդայապետերի մի ընտիր համաստեղություն, բայց նրանք ընդհանուր ապստամբության պարագային հազիվ թե կարողանային ղեկավարել մեծաթիվ զինված զանգվածներ:

Այդպիսի մտավախություն ուներ հատկապես դաշնակցության ղեկավարությունը: Բայց ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանում անհնար էր որևէ ձևով ձեռնարկել զինվորական կադրերի պատրաստում: Միակ վայրը, ուր 1901 թվականից սկսած այդ ուղղությամբ որոշ աշխատանքներ էին տարվել, Բուլղարիան էր:

Զինվորական հրամանատարական ազգային կադրերի պատրաստումը օրախնդիր դարձավ Սասունի ապստամբության պարտությունից հետո: «Սըրտանց կը փափաքեի, - ասում էր Անդրանիկը, - որ օր մը, և այն մոտավոր ապագայի մեջ, գիտապես, մասնագիտական կրթութեամբ օժտուած երիտասարդներ յաջորդեին մեզի և ավելի յաջողութեամբ, ավելի ձեռնահասութեամբ վարեին մարտական բանակը»[1]:

Մի այլ առիթով Անդրանիկն այսպես է հիմնավորել զինվորական կադրերի պատրաստման անհրաժեշտությունը. «Երկիր գնացած զինուորներից 90%-ը զենքի վարժ եղած չեն. շատերը նրանցից նոյնիսկ չեն գիտցեր հրացանի «զատվորը»* հանել ու տեղը դնել: Կրակելիս բնավ չեն ուզեցել հետևել՝ որ կողմն է գնում գնդակը: Այս տեսակետից Զինուորական դպրոցը կարևոր էր մեզ համար»[2]:

[1] **Անդրանիկ**, Մարտական հրահանգներ, էջ 46:
* Ռուսերեն՝ «զատվոր» - փակաղակ:
[2] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 60:

Բուլղարական իշխանությունների գիտությամբ հայկական զինված խմբերը երկրի զանազան վայրերում հրաձգության փորձեր էին անում: Օրինակ՝ այդպիսի մի խումբ 20 - 25 մասնակիցներով Մազմանյանի և Նևրուզի ղեկավարությամբ մարզվում էր Պլովդիվի Բունարջիկ բլրի անտառում:

Կառավարության բարձր պաշտոնյաները, անձամբ Ֆերդինանդ Թագավորը և վարչապետ Ռոդոսլավովը, չտեսնելու էին տալիս իրենց երկրում հայ հեղափոխականների զինական աշխատանքները, իսկ առանձին դեպքերում հնարավոր միջոցներով օժանդակում էին նրանց: Բուլղարիայում հայերը նաև հնարավորություն ունեին պատրաստել զենքեր, փամփուշտներ, ռումբեր. մայրաքաղաք Սոֆիայի մոտ՝ Վիտոշ լեռան ստորոտում, ինչպես արդեն ասվել է, կատարում էին ռումբի փորձարկումներ: Մակեդոնական հեղափոխականների աջակցությամբ հնարավոր էր եղել մի քանի հայ մտավորական երիտասարդների ընդունել տալ Սոֆիայի Կնյաժևո արվարձանում գտնվող պետական զինվորական վարժարանը: Այդտեղ էր սովորում նաև Գարեգին Նժդեհը:

Բայց կատարվածը գոհացուցիչ չէր, և կյանքը թելադրում էր անպայման ունենալ սեփական ոչ մեծ զինվորական դպրոց, որտեղ պատրաստվեին հայ սպաներ, ինչպես նաև մասնագետներ, որոնք սովորեին պատրաստել պայթուցիկ նյութեր և ձեռնառումբեր: Նման դպրոցի հիմնական խնդիրն էր լինելու հմուտ զինվորական ուժեր հասցնել Տաճկահայաստանի հեղափոխության համար:

Դպրոցը կարող էր կյանքի կոչվել դարձյալ Բուլղարիայում, ուրիշ ոչ մի տեղ: Դպրոցն այնտեղ բացելու միտքը հղացել էր Ռոստոմը:

Զինվորական դպրոց ունենալը կապված էր լուրջ բարդությունների հետ: Անհրաժեշտ էր ստանալ բուլղարական իշխանությունների համաձայնությունը, առանց որի զուր կլինեին հետագա ջանքերը: Այդ նպատակով Հ.Յ. դաշնակցության Սոֆիայի կոմիտեն դիմում է կառավարական մարմիններին՝ թույլտվություն ստանալու խնդրանքով: Գործը գլուխ բերելու համար Սոֆիա է գալիս Ռոստոմը: Այստեղ մակեդոնական հեղափոխության ղեկավարները կազմակերպում են նրա տեսակցություններն իշխանությունների ներկայացուցիչների հետ:

Երբ Անդրանիկը 1905թ. մարտին ժնևից եկավ Բուլղարիա և տեղեկացավ դպրոցի գաղափարին, անմիջապես հավանություն տվեց: Չէ՞ որ նրան էին պատկանում հետևյալ խոսքերը. «Ամեն օր երևան եկած դեպքերն ու անոնց յայտնութիւնը մեզի բացարձակորեն կը սովորցնեն, թե հայը ըլլա Տաճկաստան, ըլլա Կովկաս, Պարսկաստան կամ ուրիշ տեղ, իր կեանքը պահպանելու մէկ միջոց մը միայն ունի, մէկ պաշտպան մը, այն ալ միայն զէնքն ու զինավարժութիւնն է: Մարդ ոչ հերոս, ոչ ալ կռուող կը ծնի. զէնքն է որ մարդուն կռուելու ընդունակութիւն կու տայ և դիմադրութեան ոգի կը ստեղծէ անոր մէջ. անոնք, որ կը սպասեն՝ թէ մեր նոր սերունդները առանց զէնքի ընտելանալու, առանց զինավարժութեամբ պարապելու վաղը կռուողներ պիտի դառնան՝ տղայական միամտութիւն է որ կը յայտնեն, ուրիշ ոչինչ: Այդ կերպով՝ եթէ դարեր ալ սպասեք, նորէն երկչոտներ, ստրուկներ պիտի մնանք և նորեն մեր կեանքն ու պատիվը պիտի ըլլայ օտարի ձեռքին խաղալիք»[1]:

Չնայած արդեն պարզ էր, որ զինվորական դպրոցը հիմնվելու է Բուլղարիայում, բայց թե կոնկրետ որտեղ, ինչպիսի ծրագրով ու բյուջեով՝ հայտնի չէր: Ուստի պահանջվում էր, նախ, լուրջ աշխատանք կատարել ծրագիր կազմելու համար, դրամական հաշվարկներ անել, որոշել, թե դպրոց ունենալու դեպքում որքան ունկնդիր կարելի կլինի պահել և այլն:

1906թ. ապրիլին տեղի ունեցած Հ.Յ.Դ. բալկանյան շրջանային ժողովը առաջարկեց խիստ սահմանափակ ծրագիր և բյուջե՝ 12 ունկնդրի համար[2]: Բալկանի կ.կոմիտեն այդ օրերին Եվրոպայից Սոֆիա եկած դաշնակցական ակտիվ գործիչ Ռաշիդին առաջարկեց կազմել դպրոցի ծրագիրը և ստանձնել վերատեսչի պարտականությունը*:

Ռոստոմի հետ մակեդոնական ազատագրական շարժման առաջնորդ Սարաֆովի ունեցած զրույցի ընթացքում վերջինս առաջարկում է սեփական դպրոց բացելու փոխարեն 20 հոգու իր միջնորդությամբ ընդունել տալ Սոֆիայի պետական դպրոց և 400 հայ երիտասարդի ծառայության վերցնել բուլղարական բանակում, որպես հասարակ զինվոր: Ռոստոմը տալիս է համաձայնություն և անձնական հայեցողությամբ ու իր լիազորությամբ Երվանդին** անմիջապես ուղարկում է Կովկաս՝ բարձրագույն և միջնակարգ կրթությամբ մարդիկ Սոֆիա բերելու համար: Բայց կովկասահայ երիտասարդներից ոչ ոք ցանկություն չի հայտնում սովորել բուլղարական դպրոցում պատճառաբանելով, որ, չիմանալով լեզուն, ոչինչ չեն կարող սովորել, հետո՝ որ դպրոցում ուսուցանում են առարկաներ, որոնք չեն համապատասխանում հայկական կյանքին: Ինչ վերաբերում է բուլղարական բանակում 400 հայ երիտասարդների շարքային ծառայության վերցնելուն, ապա դա Հ.Յ.Դ. բալկանյան կազմակերպության համար հսկայական բեռ կլիներ, քանի որ հայ զինվորների վրա կատարվելիք ծախսերը (սնունդ, ռազմավարժանքների և զորանոցի վարձ) իր վրա պետք է վերցներ հայկական կողմը:

Մի շարք խորհրդակցություններից հետո վճիռ ընդունվեց բանալ Հ.Յ.Դ. սեփական դպրոց:

Սակայն Հ.Յ.Դ. բալկանյան կոմիտեն չգիտեր, թե խնդրին ինչ վերաբերմունք ցույց կտա բուլղար կառավարությունը: Այդ իսկ պատճառով Անդրանիկը հանձն է առնում շփումներ հաստատել կառավարական կարևոր անձնավորությունների հետ: Սկզբում նա տեսակցում է մի բարձրաստիճան զինվո-

[1] **Անդրանիկ**, Մարտական հրահանգներ, էջ 79:
[2] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 60:
* Ռաշիդի իսկական անուն-ազգանունը անհայտ մնաց, նա հանդես էր գալիս Նիկոլա Պանև ծածկանունով և հայտնի է, որ ավարտել էր Սոֆիայի Կնյաժևոյի զինվորական դպրոցը:
** Չհաջողվեց պարզել ով լինելը:

բականի հետ, որը «Նույնիսկ իշխանի անունից խոսելով, մի տեսակ թարգման էր հանդիսանում բուլղար քաղաքական շրջանների տրամադրութեան դեպի տաճիկ կառավարությունը»[1]: Այդ պաշտոնյան ոչ միայն ոչինչ չունեցավ զինվորական դպրոց բանալու դեմ, այլև խոստացավ այս կամ այն աջակցությունը ցույց տալ: Միաժամանակ նա պայման դրեց՝ բուլղար-թուրքական պատերազմի դեպքում հայերը պետք է ապստամբություն բարձրացնեն Հայաստանում:

Անդրանիկը ոչ մեկի կողմից երաշխավորված չէր այդ անսպասելի պահանջին դրական կամ բացասական պատասխան տալու, բայց պաշտոնյային հիշեցրեց, որ հայ և բուլղար ժողովուրդների պատմական բախտը նրանց մերձեցրել, բարեկամներ է դարձրել, իսկ բարեկամները, բնականաբար, պետք է միմյանց օգնության ձեռք մեկնեն:

Դպրոցի հարցով Անդրանիկը հանդիպումներ ունեցավ նաև զինվորական նախարարության աշխատակիցների և մակեդոնացի ընկերների հետ[2], բացատրություններ տվեց նախատեսվելիք ձեռնարկի մասին, շեշտեց խնդրի կարևորությունը:

Բուլղար բարձրաստիճան պաշտոնյաների հետ ունեցած հանդիպումների և նրանցից ստացած տպավորությունների մասին Անդրանիկը գրավոր հաղորդեց Ժնև, Հ.Յ.Դ. արևելյան բյուրո՝ Խաչատուր Մալումյանին: Վերջինս ձեռնարկին սկզբունքորեն համակրանք հայտնեց, բայց միաժամանակ կասկածներ ունեցավ երաշխիքների մասին, ասելով, որ եթե դեպքերի բերումով բուլղար զինվորական մինիստրության անձնակազմը փոփոխության ենթարկվի, ապա հնարավոր է, որ փոխվի նաև կառավարության քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ՝ վտանգի տակ դնելով զինվորական դպրոցի գոյությունը: Ուստի նա Անդրանիկին խորհուրդ է տալիս «գործը տանել զգուշութեամբ»[3]:

Բայց ինչպես երևում է, Անդրանիկը առանձին կարևորություն չի տվել Մալումյանի կասկածին, համոզված, որ բուլղար այն պաշտոնյաները, որոնց հետ ինքը հանդիպել է, լավ տեղյակ են կառավարական բարձր շրջաններում տիրող հակաթուրքական ձգտումներին:

Վերջապես հնարավոր եղավ ձեռք բերել բուլղարական կառավարության բանավոր արտոնությունը՝ դպրոցը բացել զինվորական նախարարության տնօրինության ներքո: Հաստատության ընդհանուր ղեկավարությունը իրականացնելու էր Հ.Յ.Դ. բալկանյան կ. կոմիտեն՝ Ստեփան և Թագվոր Խինկլյանների միջոցով[4]: Դպրոցը նախատեսվում էր 50 ուսանողի համար, որոնց ուսուցումը կազմակերպվելու էր Բուլղարիայի Սպայից Վարժարանի հատուկ ծրագրով: Դասընթացները տևելու էին 10 ամիս: Մինչև 1907 թվականի

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 60:
[2] Նույն տեղում, հատ. Դ, էջ 132:
[3] Նույն տեղում, հատ. Դ, էջ 60:
[4] ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 3, գ. 13, թ. 87:

հունիս ամիսը անցկացվելու էին տեսական պարապմունքներ, այնուհետև լեռներում սկսվելու էին գործնական պարապմունքներ՝ զինավարժություններ, որոնք տևելու էին մինչև սեպտեմբեր ամիսը:

Բուլղար կառավարությունն իր երկրում օտար հաստատության ստեղծման համաձայնություն տվեց միայն այն պայմանով, որ ձեռնարկը խիստ գաղտնի պահվի թուրքական իշխանություններից: Դպրոցի մասին չպիտի իմանային նաև օտար երկրների հետախուզությունները: Ավելին, այն գաղտնի պիտի մնար նաև բուլղար հասարակությունից, մամուլի օրգաններից: Տեղացիների ուշադրությունը չգրավելու համար կառավարությունը արտոնեց, որ դպրոցի ուսանողությունը կրի բուլղարական բանակի զինվորական համազգեստը: Միաժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ եթե պատերազմ ծագի Բուլղարիայի և Թուրքիայի միջև, ապա հայերը, պարտավորված չլինելով ապստամբություն բարձրացնել Հայաստանում, այնուամենայնիվ, հնարավորության սահմաններում աջակից կլինեն բուլղարներին:

Երկար բանակցություններից հետո բուլղարական կողմը համաձայնեց նաև մինչև դպրոցի բացումը 400 հայ երիտասարդներ ընդունել բուլղար բանակի շարքերը՝ նրանց ձրիաբար զենքի խնամքին ու գործածությանը վարժեցնելու համար: Դրանից զատ, կառավարությունից արտոնություն ձեռք բերվեց բուլղար սպաների պետական վարժարանում դարձյալ ձրիաբար կրթել 20 հայ երիտասարդի:

Զինվորական դպրոցի ստեղծումը պահանջում էր ֆինանսական խոշոր միջոցներ: Առաջին նախահաշվով 50 սովորողներից յուրաքանչյուրի վրա ամսական ծախսվելու էր 100 ֆրանկ, հետևապես 10 ամսում ամբողջ ծախսերը կազմելու էին 50 հազար ֆրանկ: Արտակարգ ծախսերն ի հարկին զատ գումար էին կազմելու:

Սկզբնական շրջանում գումարները հայթայթվում էին Բուլղարիայի տարբեր քաղաքների Հ.Յ.Դ. կազմակերպություններից: Բայց բալկանյան շրջանը իր համեմատաբար սահմանափակ միջոցներով մենակ չէր կարող հոգալ ծախսերը: Ուստի սիրահոժար ընդունելով բալկանյան կ.կոմիտեի առաջարկը՝ Հ.Յ.Դ. Ամերիկայի կ. կոմիտեն հատկացրեց նախատեսված գումարի մեծ մասը, որն այն ժամանակվա կուրսով կազմում էր մոտ 200 հազար լև: Այսպիսով, ընդհանուր գումարի 48 հազար ֆրանկը հոգացել էին Բալկանի և Ամերիկայի կոմիտեները: Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոն խոստացել էր զգալի գումար տրամադրել, բայց կարողացել էր հատկացնել միայն 2 հազար ֆրանկ[1]: Ինչ վերաբերում է արևելյան բյուրոյին, ապա նա ձեռնարկին ընդհանրապես չմասնակցեց ո՛չ նյութական և ո՛չ էլ բարոյական օժանդակությամբ:

Դպրոցի բյուջեն տնօրինելու համար ստեղծվեց երեք հոգուց բաղկացած խառն հանձնախումբ, որի մեջ մտան Անդրանիկը, Բալկանի կ.կոմիտեի ներ-

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 133:

կայացուցիչ Ալաջաջյանը և Ամերիկայի կ. կոմիտեի ներկայացուցիչ Ջելալյանը (Հայկ Արմեն): Անդրանիկը նաև հանձն առավ և ձեռք բերեց անհրաժեշտ թվով հրացաններ՝ վարժական պարապմունքների համար, և ուրիշ ռազմական առարկաներ:

1906թ. օգոստոս ամսից Կովկասից սկսեցին Բուլղարիա գալ հայ երիտասարդներ: Ֆիլիպեում (Պլովդիվ) հավաքվեց մոտ 15 հոգի, որոնց մտավոր պատրաստությունը ստուգելուց հետո Ռոստոմն առաջարկեց նորից մարդ ուղարկել Թիֆլիս՝ ավելի խելահաս տղաներ բերելու համար, բայց առաջարկը մնաց անկատար:

Ֆիլիպեի դաշնակցական ընկերները Կովկասից եկածներին քննության ենթարկելուց հետո նրանց ներկայացրին անհեթեթ պահանջ՝ ստորագրություն տալ, որ զինվորական դպրոցն ավարտելուց հետո չպիտի թողնեն հեղափոխական գործը: «Մենք մուրհակով հեղափոխական լինել չենք ուզում» ասելով՝ երիտասարդները բողոք են բարձրացնում և, երկու օր չանցած, «քիչ թե շատ օգտակար տղաները վերադառնում են Կովկաս՝ տգեղ վարմունքի պատկերը գամուած իրենց կրծքին»[1]:

Վերջապես բոլոր նախապատրաստական աշխատանքներից հետո Դուբնիցայի շրջանում, Ռելա լեռան վրա, համանուն պատմական վանքի կալվածքներից մեկում 1906թ. նոյեմբերին բացվեց **Հայ զինվորական դպրոցը**:

Սովորողներից 10 հոգի եկել էր Բալկանյան երկրներից և նույնքան՝ Ամերիկայից: Նախատեսված էր Կովկասից ընդունել 20 հոգու, բայց եկել էին 4-ը՝ և , այդպիսով, դպրոցն իր պարապմունքներն սկսեց՝ ունենալով 24 ունկնդիր, որոնցից շատերը գրել-կարդալ չգիտեին[2]:

Սկզբնական շրջանում դպրոցի ամբողջ կազմակերպական գործը ծանրացած էր միայն սպա Ռաշիդի վրա: Դեկտեմբերի 5-ին եկավ սպա Պողոս Պողոսյանը, որը բուլղարական բանակի կապիտան էր: Նրա հետ նույն օրը տեղ հասան ևս երեք երիտասարդ, և դպրոցի ունկնդիրների թիվը հասավ 27-ի: Կապիտանը միակ դասախոսը և զինավարժություններ անցկացնողն էր: Կազմվեց դպրոցի ուսումնական մարմին, որի մեջ մտան Ռաշիդը և Պողոսյանը: Քանի որ վերջինս դժվարանում էր հայերեն դասավանդել, ուսումնական գործընթացում ծագում էին զգալի դժվարություններ: Ուստի անհրաժեշտություն առաջացավ դասավանդման գործի մեջ ներգրավել նաև Ռաշիդին և Սոֆիայի Կնյաժևոյի զինվորական դպրոցն ավարտած ենթասպա Գարեգին Նժդեհին: Ռաշիդը ստանձնեց նաև դպրոցի տնօրենի և գլխավոր մարզչի պաշտոնը: Նշանակվեցին հերթապահներ՝ ցերեկվա և գիշերվա, սեղանատան-խոհանոցի ժամապահներ և այլն:

[1] **«Հայրենիք»**, N 7 (389), հուլիս, 1958, էջ 68:
* Դրա փոխարեն կովկասյան մարմինները Ֆիլիպե էին ուղարկել 7-8 երիտասարդի՝ տեղի արհեստանոցներից մեկում ռումբեր պատրաստել սովորելու համար:

[2] **«Հայրենիք»**, N 7 (389), հուլիս, 1958, էջ 68:

Դպրոց ընդունվածների հետ նախնական զրույցներից հետո ուսումնական մարմինը նրանց բաժանեց երեք խմբի. պարապմունքներն անցկացվում էին հատուկ ծրագրով: Մի խմբում պատրաստում էին խմբապետեր, երկրորդում՝ խմբապետի օգնականներ, երրորդում՝ վարժ ու վստահելի զինվորներ:

Երիտասարդները ոտքի վրա էին առավոտյան ժամը 5-ին: Մինչև ժամը 12-ը պաշտոնական դասեր էին, 12-14-ը՝ ազատ էր, 2-5-ը անցկացվում էին զինավարժություններ: Ստուգման փողը հնչում էր 8 $^{1}/_{2}$-ին, որից հետո զինվորներն ազատ էին:

Ունկնդիրներն անցնում էին հետևյալ առարկաները՝ հետախուզություն՝ 10 դաս, զինվորական հետախուզություն՝ 10, վիրաբուժություն՝ 10, ստրատեգիա՝ 25, ադմինիստրացիա՝ 15, տակտիկա՝ 80, դաշտային ծառայություն՝ 25, ներքին ծառայություն՝ 10, զորաբաժնային ծառայություն՝ 70, հրետանի՝ 80, խրամատաշինություն՝ 40, զինվորական պատմություն՝ 20, աշխարհագրություն՝ 20, հայոց պատմություն՝ 15, հեղափոխության պատմություն՝ 30, զինվորական շրջանի կազմակերպում՝ 25, պայթուցիկ նյութեր՝ 50, մանկավարժություն՝ 5, հրացանաձգություն՝ 30, երկրաչափություն՝ 30, գրիմ՝ 10, զինվորական կարգապահություն՝ 20 դաս[1]:

Ռելայի դպրոցի գործունեությունը մտել էր արդյունավետ հուն, ուստի բալկանյան կ.կոմիտեն նպատակահարմար գտավ ավելացնել ունկնդիրների թիվը: Դպրոց եկան Թուրքահայաստանից (որոնցից ոմանք արդեն եղել էին ֆիդայական խմբերի շարքերում), Եգիպտոսից, Ռուսաստանից և այլ տեղերից: Ժամանակի ընթացքում նրանց թիվը հասավ 80-ի՝:

Մեկ երկու ամիս անց պարզվեց, որ բյուջեում եղած 50 հազար ֆրանկը խիստ անբավարար է. այդ գումարի մեծ մասը մինչև 1907-ի սկիզբն արդեն ծախսվել էր: Նոր հաշվարկները ցույց տվեցին, որ մինչև ձեռնարկի ավարտը և վկայված երիտասարդներին որոշված տեղերը ճամփելը պահանջվելու է ևս նույնքան կամ դրանից մի քիչ պակաս գումար:

[1] **«Հայրենիք»**, N 7 (389), հուլիս, 1958, էջ 68:
* Գրական աղբյուրները և արխիվային նյութերը մեզ են հասցրել հայ զինվորական դպրոցի ունկնդիրների մեծ մասի անունները. Պետրոս Թագվորյան, Արմենակ Առաքելյան, Տիգրան Շաղղաղյան, Պողոս Երիցյան, Վաղարշակ Քալանթարյան, Կարո Այվազյան, Թագվոր Ժամկոչյան, Հայկ Ռուբինյան, Պետրոս Սիրունյան, Արիստակես Հովհաննիսյան, Գրիգոր Նահապետյան, Արմենակ Տեր-Գասպարյան, Մաքսուդ Փաշայան, Խեչո Զոհրաբյան, Միհրան Բոյաջյան, Հակոբ Հովհաննիսյան, Օննիկ Ղազարյան, Արտաշես Սուքյան, Մարտիրոս Ստեփանյան, Խեչո Փանոսյան, Թարխան Մելքումյան, Գրիգոր Մինասյան, Հովհաննես Ավետիսյան, Խորեն Սերովբյան, Երվանդ Հովհաննիսյան, Արտաշես Փափազյան, Գուրգեն Թորոսյան, Արմենակ Խան Աղամյան, Կարապետ Եղուրդյան, Գևորգ Կիրակոսյան, Հայկ Կտիկյան, Լևոն Կարապետյան, Մարգար Նիզամյան, Մուշեղ Սերովբյան, Հրաչյա Սեղրոսյան, Մկրտիչ Հարությունյան, Նազարեթ Գույումջյան, Հայկ Միկվանյան, Ջարեհ Մանավյան, Միաք Տեր-Մելիքսեթյան, Եսայի Հովհաննիսյան, Ալեքսանդր Դումանյան, Կիրակոս Սարգսյան, Մկրտիչ Մաղիկյան, Շահեն Ղազարյան, Մկրտիչ Թոնյան, Աստվածատուր Սարգսյան, Վարժապետ Մարտիրոս, Մշեցի Հարո, Վարդենիսցի Հարութ, Մատթեոս, Հայրիկ...

Դրամական անմիջական և ստիպողական պետքը Բալկանի կոմիտեին հարկադրեց հարց բարձրացնել Հ.Յ.Դ. առաջիկա ընդհանուր ժողովի առջև, որպեսզի արևմտյան և արևելյան բյուրոները որոշ պարտավորության տակ դրվեն՝ մնացած ծախքերն իրենց վրա վերցնելու համար: Այդ պահանջը բնական էր, քանզի դպրոցում պատրաստվող կադրերը դրվելու էին ընդհանուր ժողովի տրամադրության տակ և անառարկելիորեն պիտի ենթարկվեին նրա նշանակումներին:

Արդեն 1906-ի վերջերին Հ.Յ.Դ. Բալկանի կոմիտեն համոզվել էր, որ դպրոցի տեղը սխալ է ընտրված: Այդ մասին նախապես նախազգուշացրել էին մակեդոնացի հեղափոխական գործիչները: Նախ, Դուբնիցայի շրջանը գտնվում էր հայերի մեծ բարեկամ Բորիս Սարաֆովի հակառակորդ Սանդանսկու գլխավորած կազմակերպության ազդեցության տակ, երկրորդ, որ առավել անցանկալի էր, Ռելա վանքը գտնվում էր Թուրքական սահմանից ոչ հեռու:

Չնայած զինվորական դպրոցը գաղտնի պահելու վերաբերյալ ձեռնարկվում էին հարկ եղած միջոցներ, բայց Թուրքական հետախուզությունն ի վերջո պարզեց նրա գոյությունը: Սոֆիայի Թուրք դիվանագիտական ներկայացուցիչն իր կառավարության անունից ազդու ծանուցագիր ներկայացրեց բուլղարական կառավարությանը և կտրականապես պահանջեց փակել դպրոցը:

Դպրոցի գոյությունը դուրս չէր մնացել նաև ռուսական հետախուզության տեսադաշտից:

Բալկաններում ռուսական գործակալությունը վարող Օդեսայի պահպանողական բաժանմունքի պետը զեկուցագրով իր վերադասին հայտնում էր, որ հայկական դպրոցում զինվորական կրթություն ստացող երիտասարդները «պատրաստ են դառնալու ապստամբական հրոսակախմբերի և չետաների* ղեկավարներ»[1]:

Ռուսական իշխանությունները նույնպես հնարավոր միջոցներով փորձում էին խափանել դպրոցի աշխատանքները, դիվանագիտական խողովակներով ճնշում էին գործադրում բուլղարական իշխանության վրա, պահանջում փակել այն:

Թեոդոպոլսում ռուսական փոխհյուպատոս Պետրովը 1907 թվականի հունվարի 29-ին, իր շեֆին՝ Սոֆիայում ռուսական դեսպանորդին հայտնում էր, որ ինքը բուլղարական իշխանություններին հղել է բազմաթիվ բողոքներ, սակայն նրանք չեն արձագանքել և արգելքներ չեն հարուցում հայկական ռազմական դպրոցի գործունեության առջև, ավելին, համառորեն ժխտում են, որ դպրոցը գործում է հայկական հեղափոխական կոմիտեի ենթակայության տակ: Նա նշում էր, որ հայկական դպրոցի ոգեշնչողներն առաջվա պես հանդիսանում են Ստեփան և Թագվոր Խինկյանները, որոնք հակառակ տեղի իշխանությունների հավաստիացումներին, մասնակցում են Հ.Յ.դաշնակցության գաղտնի

* Բալկաններում այդպես էին անվանում պարտիզանական ջոկատները:

[1] ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 3, գ. 13, թ. 13:

կոմիտեի աշխատանքներին, ստանում նրա հովանավորությունը: Փոխհյուպատոսը նշում էր, որ ռազմական դպրոցը գաղտնի կոմիտեի կարևոր կենտրոնատեղի է շատ առումներով. մասնավորապես այստեղ շարվում են հեղափոխականների օրգան «Ռազմիկ» թերթի էջերը, որի տպագրությունն իրականացվում է տեղի հայկական տպարաններից մեկում: Դպրոցում հայերը կազմակերպել են սեփական ձուլարան՝ տառեր ձուլելու համար[1]:

Այնուհետև փոխհյուպատոսը շեշտում էր, որ Բուլղարիայում Թուրքիայի դեմ հայերի ծավալած գործունեությունն ըստ էության ուղղված է նաև ռուսական շահերի դեմ, ուստի նա շեֆին առաջարկում էր ուժեղացնել ճնշումը բուլղարական կառավարության վրա, որպեսզի սա արգելի հայկական գաղտնի կոմիտեի գործունեությունը և անհապաղ փակի զինվորական դպրոցը:

Բուլղարական իշխանությունները ձգձգում էին հարցը, նույնիսկ ստիպված դիմում էին «դպրոցը փակելու» իմիտացիայի՝ կատարելով խուզարկություններ: Ըստ որում, դպրոցի ղեկավարները նախապես հրահանգ էին ստանում կտուրների վրա և ներքնահարկերում թաքցնել ամեն կասկածելի բան: Խուզարկություններից մեկի ժամանակ ոստիկանությունը նույնիսկ կեղծ ձերբակալություններ կատարեց: 1907թ. փետրվարի 26-ին ունկնդիրներից 34 հոգի հեռացան մոտակա անտառը, իսկ 10-15 հոգի մնացին սենյակներում իբրև «մակեդոնական հեղափոխականներ»: Սրանք ձերբակալվեցին և ուղարկվեցին Դուբնիցա, բայց երկու-երեք օր հետո ազատվելով վերադարձան դպրոց, միայն թե Թուրք կառավարությանը ցույց տրվեր, որ գնացին և ձերբակալեցին ...

Ի վերջո բուլղար կառավարությունը տեղի տվեց Թուրքական և ռուսական ճնշումների առջև: Մարտի 24-ին բուլղարական բանակի հրամանատարությունից հեռագիր ստացվեց, որով պահանջվում էր փակել դպրոցը և անմիջապես հեռանալ: «Ուրեմն բուլղար կառավարությունը մեզ վռնդում է, երևի մոռանալով իր ժողովրդի կրած երեկվա տանջանքները»[2], - ասում էր կապիտան Պ. Պողոսյանը:

Կառավարությունը, սակայն, ոչ թե փակեց դպրոցը, այլ կարգադրեց տեղափոխել Թուրքական սահմանից հեռու գտնվող Ռոդոմետի շրջանի Փելովա վանքը: Մարտի 27-ին, չորս սայլ և ութ ձի իրեր բարձած, սկսվեց տեղափոխությունը: Բեռները նոր վայր հասան ապրիլի 9-ին[3]:

Հաջորդ օրը Փելովա եկավ հայերի մեծ բարեկամ Սարաֆովը՝ տեսնելու դպրոցի պայմանները: Երբ ունկնդիրներից մեկը բողոքեց, թե կառավարու-

[1] ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 3, գ. 13, թ. 88: Փոխհյուպատոսի զեկուցագրից երևում է, որ նա ճշգրիտ տեղեկություն չի ունեցել դպրոցի գտնվելու վայրի մասին և այն չփոթել է Ֆիլիպեի ռումբեր պատրաստող գաղտնի արհեստանոցի հետ, որտեղ, իրոք, մի կարճ ժամանակով կազմակերպված էր «Ռազմիկ» թերթի համար տառեր ձուլելու գործը:

[2] «Հայրենիք», N 7 (389), հուլիս, 1958, էջ 70:

[3] Նույն տեղում, էջ 71:

թյունը հալածում է հայ հեղափոխականներին, նա պատասխանեց. «Կառավարությունը որևէ մեղք չունի. նա երբեք չի հալածել ձեզ և չի հալածելու: Ամբողջ մեղքը ձերոնցն է: Ես դեռ անցյալ սեպտեմբերին մատնացույց արեցի այս վայրը, ուր հիմա դուք գտնվում եք, բայց ձերոնք չհավանեցին և ընտրեցին մի այնպիսի վայր, ուր դեռ հունիսին ձյուն է լինում: Մի՞թե այստեղ կառավարությունը մեղք ունի»[1]:

Ռելա վանքի կալվածքում մնացին դպրոցի գույքի հիմնական մասը, ինչպես նաև սաների համար ամբարած սննդամթերքի պաշարները: Ռաշիդը, որ 1906թ. նոյեմբեր-1907թ. մարտ վարել էր դպրոցի տնօրենի և գլխավոր մարզչի պաշտոնը Ռելայում, բանակցությունների մեջ մտնելով մակեդոնական շարժման աջ թևի ղեկավարներից Վանչո Միահիլովի հետ, ամբողջ գույքը և սննդամթերքը վաճառում է նրան և անհետանում: Թեև Հ.Յ.Դ. Սոֆիայի կազմակերպությունը վճիռ կայացրեց ահաբեկել ծանր զեղծում կատարած խարդախին[2] բայց բոլոր փնտրտուքներն իզուր անցան:

Մոտ 10 ամսվա համար նախատեսված Ռելայի հայ զինվորական դպրոցը, ևս երկու ամիս մի կերպ շարունակելով իր գոյությունը Փելովա վանքում, փակվեց քաղաքական աննպաստ պայմանների հարկադրանքի տակ:

Իր կարճատև գոյության ընթացքում դպրոցը մեծ դեր ունեցավ՝ տալով շատ անհրաժեշտ զինվորական կադրեր: Այնտեղ պատրաստված տասնյակ հրամանատարներ ուղարկվեցին Անդրկովկաս և Արևմտահայաստան:

Հ.Յ.Դ. բալկանյան կ.կոմիտեի 1907 թվականի հունվար-օգոստոս կիսամյա համառոտ տեղեկագրի մեջ ասված է, որ, չնայած առանձին թերություններին, «Վարժարանի արդյունքը գոհացուցիչ եղավ: Աշակերտ-ընկերները զինուորական վարժութեանց, նշանառութեանց և տեսական ու գործնական դասերու մեջ այնքան յաջողություն ցոյց տուած են, որ նոյնիսկ արժանացած են բարձրաստիճան զինուորականներու հիացման»:

1907 թվականի մայիսի վերջին տեղի ունեցած բալկանյան կ.կոմիտեի նիստում որոշում ընդունվեց հունիսի 15-ից հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում դպրոցի շրջանավարտների մոտ կեսին ուղարկել նշանակված տեղերը: Դրանց մեծ մասը օգոստոսին արդեն մեկնել էր հեղափոխական աշխատանքի:

---

[1] **«Հայրենիք»**, N 7 (389), հուլիս, 1958, էջ 71:

Դպրոցի սաներից մեկը՝ Մատթեոսը, իր հուշերում ժխտել է այն մեղադրանքը, որ ներկայացվել էր Ռաշիդին: Նա այսպես է հիշել իր զրույցը կապիտան Պողոսյանի հետ 1906թ. փետրվարի 24-ին. «Դասերից յետոյ, երբ պ. Պողոսեանի հետ առանձնացանք սենեակում, նա ասաց ինձ, որ Ռոստոմը եւ Անդրանիկը որոշել են ոչ միայն դպրոցից վռնդել Ռաշիդին, այլեւ խստիւ պատժել նրան: Հարցրի, թե ախր ի՞նչ է պատճառը, ի՞նչ մի գաղտնիք կա.Պողոսյանը պատասխանեց, թե հավանաբար դպրոցից նամակներ են գնացել նրանց: «Ջանըմ, մի՞թէ այդքան թեթեւամիտ են թէ՛ Ռոստոմը եւ թէ՛ Անդրանիկը, որ այդ հիման վրայ մի այդպիսի քայլ անեն: Դա անկարելի բան է»» (**«Հայրենիք»**, N 7(389), հուլիս, 1958, էջ 69):

[2] **ՎՀ ՊԿՊԱ**, ֆ. 3, գ. 13, թ. 19:

ՀԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՎ

Հայ ազգային գործիչներից շատերի միտքը զբաղված էր ժողովրդի միասնության խնդրով: Նրանք անընական էին համարում մահու և կենաց ազատագրական պայքարի ելած հայության ներսում հակոտնյա քաղաքական ուժերի բախումները, համազգային վճռորոշ հարցերի շուրջ անհամաձայնությունները, միշտ ինքնատիպ երևալու և մյուսներից անպայման շատ տարբերվելու մարմաջը, միմյանց նկատմամբ անհանդուրժողականությունը:

Օրինակ՝ Անդրանիկը գտնում էր, որ ազգի համար բախտորոշ ժամանակաշրջանում ազգային այս կամ այն կուսակցության պատկանելը և կուսակցական մոլեռանդությունը տարբեր բաներ են, որ մոլի կուսակցությունը չի բխում հայ ժողովրդի ազգային շահերից: Հայ մարդու համար ուղեցույց պետք է լինի ոչ թե այս կամ այն կուսակցության գաղափարախոսությունը, այլ պիտի մշակվի ազգային գաղափարների համակարգ՝ խարսխված համազգային խնդիրների ըմբռնման վրա, և որը ունակ լինի առաջադրելու դրանց լուծման գործուն միջոցներ: Միակ ճշմարիտը ազգայինն է, մնացյալը ածանցյալ է, ներմուծված ու արհեստականորեն պատվաստված: Նա վճռականապես դեմ էր բոլոր այն շարժումներին, ինչ ուղղության էլ դրանք հետևեին, եթե հակադրվում էին հայ ազգային-հեղափոխական շարժումներին, հետևապես՝ տկարացնում հայության դիմադրական կորովը:

Հայ ազգային քաղաքական ուժերի համախմբման մտահոգությամբ Անդրանիկը Պլովդիվում հրատարակվող «Ռազմիկ» թերթի 1906 թվականի սեպտեմբերի 20-ի թվով (N 93) հրապարակած «Բոլոր հայ յեղափոխական զինուորներուն» վերնագրով շատ ուշագրավ հոդվածում թուրքական բռնակալության դեմ ազգային ազատագրական պայքարի միասնական ճակատ ստեղծելու կոչ էր անում:

Անդրանիկը գրում էր. «Հայությունը մե՛կ է՝ ըլլա Կովկաս, թէ Տաճկաստան, և, հետևապէս, ազգային շահերնիս ալ մէկ: Ազգային վտանգը ուր որ ծայր տայ՝ ամէն հայու պարտականութիւնն է փութալ դէպի վտանգը, ինչով, ինչ միջոցով որ կարող է»[1]: Վտանգը, ցավոք, իրական է, և այն չոքած է մեր դռներին, նշում էր Անդրանիկը: Խոսքն այն մասին է, ասում էր նա, որ «դարերով ճնշուած ժողովուրդ մը, ինչպէս հայը, փոխանակ զանազան բաժանումներու ենթարկուելու և զանազան վարդապետութիւններ քարոզելու կամ հետևելու այս ու այն ընկերային փիլիսոփայութիւններուն, մէկ նշանաբան մը պէտք է գրէ իր դրոշին վրայ՝ վազել, սեղմուել այս դրոշակին տակ – այս է

---

[1] **«Ռազմիկ»** (Պլովդիվ), 20 սեպտեմբերի 1906թ.:

այսօրուան պահանջը»[1]: Անդրանիկը խորհուրդ էր տալիս զգուշանալ այն թերթերի պրոպագանդից, «որոնք մասնավոր ճիգ մը ունին մեր մտքերը պղտորելու», «խելք սովորեցնելու», այն դեպքում, երբ «կեանքի մէջ իսկապէս ո՛չ մէկ գործ ըրած ունին»[2]: «Ո՞ւր էին անոնք երեկ, - հարց էր տալիս Անդրանիկը, - երբ հայրենիքին լեռներէն ու ձորերէն մենք զէ՞նք, զէ՞նք աղերսեցինք, իսկ ո՞ւր էին այսօրուան խելոք քարոզիչները, երբ մենք փամփուշտ պոռացինք և անհավասար կռուին մէջ հայ մարտիկը հուսահատութեան վայրկեաններ անցուց. ո՞ւր էին, ինչո՞ւ չի յուզեցին թմրած հայերու հոգին, որ գան, թև ու թիկունք ըլլան կռուին դաշտին վրա տուչմանին դէմ կռուող ֆեդայիին»[3]:

Անդրանիկը մեծագույն ամոթ էր համարում այն, որ գաղափարական հողի վրա հայը սպանում է իր եղբայր հային, հնչակյանը՝ դաշնակցականին, դաշնակցականը՝ հնչակյանին: «Ինչո՞ւ, ի՞նչ պատճառ կայ, - հարցնում էր նա, - ատոնք ըլլան անհատական կամ կուսակցական, երկու պարագային ալ եղբայրասպանութիւնը մեղադրելի է. ե՛տ կեցէք, զգուշացէ՛ք, քանի այդ վնասակար գործը լայն ծավալ առած չէ»[4]:

Այսօր էլ այժմեական և հրամայական են հնչում Անդրանիկի հետևյալ խոսքերը. «Զգուշացե՛ք, ընկերնե՛ր, ցո՛յց տուէք տուչմանին ու ամբողջ մարդկութեանը թէ՝ հայ յեղափոխականը, ինչ կուսակցութեան ալ որ պատկանի, ... եղբայրասպանութիւնը մտքովը չի կրնար անցնիլ: Թշնամին թողուլ և ներքին մանր-մունր հաշիվներով զբաղուիլ, ոճի՛ր է, հայրենիքի մահն է: Թողուցէ՛ք անձնական ինչ կիրք որ ունիք, ուշքի եկէք, աչքերնիդ անգամ մըն ալ դարձուցէ՛ք ավիրակ հայրենիքին վրա»[5]:

Անդրանիկն ընդունում էր, որ վեճերն ու անհամաձայնություններն ամեն մի հասարակության մեջ, այդ թվում նաև հայերի միջև, անխուսափելի են, բնական: Բայց հայությունը մի ընտանիք է - այդ բանը պետք է լավ ըմբռնել, իսկ «ընտանեկան վէճերն ու խնդիրները կարելի է միշտ օրինաւոր ճամփով կարգադրել»[6]:

Անդրանիկը նշում էր, որ եթե հայկական հասարակության մեջ օտար գաղափարներն արդեն սկսել են ավերներ գործել և մնասել հայության ազատագրական պայքարին, ապա հայ զինվորները, հայդուկները, որոնք մեր «դրժբախտ երկրի հույսն ու ապավենն են», իրավունք չունեն հետևելու այդ ընթացքին և օրինակ վերցնելու վատից, ապազգայինից: «Զինուորին, նոյնիսկ կ'ուզէ խմբապէտ ալ ըլլա անիկա, ինչ գործն է իյնալ լրագրական խօսքի լաբիրինթոսին մէջ. Ֆեդայիին գործը պէտք է ըլլա իր զէնքն ու իր փամփուշտը և նպատակը՝ հայրենիքին փրկութիւնը ... Ցիշեցէ՛ք, որ դուք ժողովուրդին պաշտպանութեան համար է, որ զէնք վերցուցած եք, և նոյն այդ ժողովուրդին բարօրութեան համար է, որ մեր ընկերներէն հարիւրներով հերոսաբար ինկան, դուք ձեր բոլոր բարոյական ու նիւթական ուժը ժողովուրդէն կ'առնէք, դուք իւր որդիներն եք, ան ձեր մայրն է. հարգեցէք և լավ վերաբերվեցեք դեպի ժողովուրդը. ձեր մայրը մի նեղէք, անոր ցավերը շատ են, բավական են անոր իր նեղութիւնները»[1]:

Իր ծանր մտորումները և արյունոտված սրտի թելադրանքը Անդրանիկը վերջացնում էր հետևյալ բաղձանքով.

«Իբրև վերջաբան՝ իմ կոչս է բոլոր յեղափոխական ընկերներուս, բոլոր հայ ժողովրդին, կուսակցական ինչ դավանանքի ալ պատկանին - ժամանակ է որ սթափուինք, սեղմենք մեր շարքերը. ազատութեան գործը շատ դժուարին գործ մը դարձած է. մեծ ուժի կը կարոտի, ազգովին քով քովի գանք և այդ մեծ ուժը կազմենք. քաջութիւնը, դրամը, զէնքը չէ, որ կը պակսի մեզի, այլ կամքը. զորացնենք մեր կամքը և վստահ ըլլանք, որ կը փրկուինք»[2]:

Անդրանիկը հույս էր հայտնում, որ իր ձայնին կանսան հայրենի երկրի պաշտպան անձնազոհ մարտիկները: «Կը յուսամ, թէ այս փոքրիկ կոչս արձագանք պիտի գտնէ իւրաքանչիւր հայդուկի սրտին մէջ, ինչպէս նաև ամեն հայ անհատի. կը յուսամ, թէ մէկ կողմ պիտի ընենք ամէն անձնական «ես»-ը ու թշուառ ժողովուրդի դատին վրա միայն պիտի դարձնենք մեր լուրջ ուշադրութիւնը»[3]:

Անդրանիկը չէր սխալվում. նրա զգայացունց կոչը լայն արձագանք գտավ իր զինակիցների սրտում, ճիշտ ընկալվեց բյուրավոր հայերի կողմից թե՛ Երկրում, թե՛ ռուսահայոց մեջ և թե՛ արտասահմանում:

ԶԳՈՒՇՈՐԵՆ ԳՈՐԾԵԼՈՒ ՀՐԱՄԱՑԱԿԱՆԸ

Չնայած Սասունի ապստամբության պարտությունից հետո հայ ժողովրդի կյանքը Թուրքիայում ուղղակի անտանելի էր, բայց հայերը իրենց մեջ դեռ ուժ էին գտնում այս ու այնտեղ ըմբոստանալու բռնակալության դեմ:

Ժողովրդական ատելությունն այնքան զորեղ էր, որ հեղափոխական կազմակերպություններին ոչ միշտ էր հաջողվում զսպել զանգվածների զայրույթը, որն ափերից դուրս էր գալիս և դառնում անկառավարելի:

1906թ. նոյեմբերի 1-ի թվով Դուրան-Բարձրավանդակի կ.կոմիտեն Ռուբենի և Գեղամ Տեր-Կարապետյանի ստորագրությամբ տեղեկագիր է ուղար-

[1] «Ռազմիկ» (Պլովդիվ), 20 սեպտեմբերի 1906թ.:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:

[1] «Ռազմիկ» (Պլովդիվ), 20 սեպտեմբերի 1906թ.:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

կում Հ.Յ.Դ. ղեկավարությանը, որտեղ բերվում էին օրինակներ, թե ինչպես Սասունի ապստամբության պարտությունից և Սասունը քանդելուց հետո էլ այնտեղ եղած հայությունը շարունակում է դիմադրել բռնությանը: Փաստաթղթում ասվում էր.

«Սպաղանքում 12 տուն է մնացել ընդամենը: Իշխանությունները նրանց ստիպում են վճարել հին տուրքերը, բայց ժողովուրդը բան չունի տալու և ստիպված է լինում դուրս քշել հարկահաններին՝ մի քանիսի գլուխը ջարդելով: Այժմ 12 տունը հաշվվում են ասէ (ապստամբ: - Հ.Ս.): Կելիեկյուզանցիք ահա չորրորդ անգամն է փայտերով հարձակվում են զորանոցի վրա և դիում 170 զինվորներին. սրանք վախենում են, կառավարությունը՝ զգուշանում լուրջ բարդություններից... Դաշտում աղաները և թասիլդարները առանց մեր հրահանգի կորցվում են և այլն, և այլն»:

Տեղեկագրում ընդգծվում էր, որ 1904-ի ապստամբության անհաջողությունները «հեղափոխության վարկը չեն գցել, չեն հիասթափեցրել»: Ավելին, տեղեկագիրը դա համարում էր շատ բնական և բացատրում էր մի հիմնական պատճառով. «Ժողովուրդը չափից դուրս հավատում է հեղափոխությանը և դրանից է, որ դիտմամբ կուրացնում է իր աչքերը և երևույթը միշտ նպաստավոր բացատրում իր հավատի առարկա հեղափոխական կազմակերպության համար: Դա ճիշտ այն երևույթն է, ինչպես մի կռապաշտ յուր կուռքին է վերագրում ամեն մի լավ կամ վատ երևույթ»[1]:

Սակայն հեղափոխության առջև կանգնած խնդիրների բարդությունը հրամայաբար առաջ էր քաշում ավելի զգուշորեն գործելու, թշնամուն ավելորդ պատրվակներ չտալու պահանջը: Ամեն կերպ պետք էր խուսափել նոր զոհեր տալուց:

Գնալով հեղափոխականների մտքում խորանում էր ժողովրդի արյունը թանկ գնահատելու և ամեն կերպ խնայելու անհրաժեշտության մասին Հայրի թողած պատգամը: Նույնիսկ Լեռնապարի կ.կոմիտեն և նրա առաջին դեմքը՝ Իշխանը, սկսել էին լրջորեն խորհել պայքարի մարտավարության մեջ հարկ եղած փոփոխություններ մտցնելու մասին: Դրա վկայություններից էր Լեռնապարի կ.կոմիտեի՝ կուսակցության կենտրոնին ուղարկած տեղեկագրերից մեկում արտահայտած հետևյալ միտքը.

«Միանգամայն կարևոր և օգտակար է, որ մինչև գալիք ընդհանուր ժողովը (խոսքը Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովի մասին է: - Հ.Ս.) տեղի չունենա ոչ մի վայրում որևէ շարժում կամ ցույց»[2], մինչև որ այդ ժողովում կարելի լինի մի հայտարարի բերել Երկրի ընդհանուր գործունեության ընթացքը: Տեղեկագրում հույս էր հայտնվում, որ ժողովը հեղափոխական գործընթացից կհանի «աղմկայոյզ ու տենդոտ, ավելի շատ ցուցական, քան թե իրական, սխալ ընթացքը» ու կներմուծի «լուրջ, խելացի մի նոր գործունեության տակտիկա»[1]: Ապա՝ «Լավ չէ՞ր լինի մի որոշ փոփոխություն անել անցեալի արյունոտ փորձերից խրատուած»[2]:

Պետք է հայությունը քիչ թե շատ հնարավորություն ունենար շունչ առնելու, նվիրվելու առօրյա գործերին: Կյանքը պահանջ էր առաջադրում Երկրի ձայնը հասցնել կուսակցությունների վերին մարմիններին և առաջիկայում տեղի ունենալիք դաշնակցության հերթական ընդհանուր ժողովին ու հնչակյան կուսակցության պատգամավորական ժողովին:

1906թ. ամռանը Շամի և Լեռնապարի ղեկավար գործիչները Վանում հավաքվել էին համատեղ խորհրդակցության՝ քննարկելու ընդհանուր ժողովին պատգամավորներ ուղարկելու հարցը: Զեկուցումով հանդես էր եկել Սարգիս Բարսեղյանը (Պողոս Օդաբաշյան), ապա ծավալվել էր մտքերի փոխանակություն: Ընդհանուր տրամադրությունն այն էր, որ կուսակցությունը պետք է վերադառնա նախկին գաղտնի գործելակերպին, գործունեության խոհեմ ու զգուշավոր ձևի: Խորհրդակցությունը տրամադրություն հանդես բերեց համագումար ուղարկել գործիչների, որոնք քաջ ըմբռնում են պահի հրամայականը, այն է՝ հետագա պայքարին նախապատրաստվել համբերությամբ և տևականորեն, թշնամուն պատրվակներ չմատուցել զանգվածային նորանոր խժդժությունների համար: Որոշվեց, որ համագումար գնացողներն իրենց ձայնը պետք է միացնեն այն պատգամավորների ձայներին, որոնք հանդես են գալու Թուրքահայաստանում կուսակցության ժամանակավորապես «հանդարտ» գործելու և ուժեր հավաքելու օգտին:

Վասպուրականից համագումար պիտի գնային երեք հոգի՝ երկուսը Շամից, մյուսը՝ Լեռնապարից: Բոլորի հայացքն ուղղված էր Արամին: Նա էր ամենահարմարը որպես Շամի ներկայացուցիչ, ուստի միաձայն որոշվեց Վիեննա ուղարկել նրան և Շամի կ.կոմիտեի անդամ Համազասպ Բաղեշցյանին (Սալման): Լեռնապարում մրցակից չուներ Իշխանը, որը նույնպես հակվել էր խոհեմաբար և զգուշորեն գործելու գաղափարին: Միաձայն պատգամավոր ընտրվեց նաև Իշխանը:

Անխուսափելիորեն բարձրացավ մյուս հարցը. Արամի բացակայության ժամանակ ո՞վ պետք է փոխարինի նրան: Դա չափազանց լուրջ խնդիր էր, քանի որ վիթխարի ծանրություն վերցրած Արամին փոխարինող մարդ ընկերները չէին տեսնում: Ուստի դրվեց Կոմսին հետ կանչելու հարցը. միայն նա կարող էր տանել այն գործը, որ նախկինում անում էր, և որին փոխարինել էր Արամը:

Կոմսին հրավիրելու կողմ արտահայտվեցին նաև կազմակերպությունից ներս նրա հակառակորդները՝ Տիգրանը, Իշխանը և մյուսները՝ դրանով իսկ ընդունելով նախկինում նրա նկատմամբ իրենց վերաբերմունքի անարդարացի

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 55:
[2] Նույն տեղում, էջ 46:

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 46:
[2] Նույն տեղում:

լինելը: Կոմսի նորից Երկիր մտնելու առաջարկն ընկերներն ընդունեցին առանց առարկության: Նրանք հաշվի էին առնում այն հանգամանքը, որ Կոմսը արդեն տվել էր իր համաձայնությունը, չնայած այն բանին, որ ինչպես թուրքական, այնպես էլ ռուսական զինվորական իշխանությունները է՛լ ավելի էին խստացրել սահմանների հսկողությունը, և Կովկասից Երկիր մտնելը այժմ կապված էր մեծ վտանգների հետ:

Կոմսը Վանում (Շամում) փոխարինելու էր Արամին, իսկ Լեռնապարում Իշխանին՝ Սարգիս Բարսեղյանը:

Այս հարցերի շուրջ պայմանավորվելուց հետո խորհրդակցության մասնակիցները մեկնեցին տեղերը:

Կոմսին կրկին Երկիր բերելու միտքը ջերմորեն պաշտպանում էին նաև Դուրան-Բարձրավանդակի ընկերները:

Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյին Ռուբենը Դուրանից գրում էր.

«Ինչպես և Շամի ռայոնական ժողովը որոշեց, մենք ևս շատ հարմար գտանք Կոմսին. խնդրում ենք մեր այդ որոշումը հայտնեք և ուղարկեք Կոմսին, մենք նրան կը գտնենք հարմար»[1]:

Սակայն Դուրան-Բարձրավանդակի կ.կոմիտեն նպատակահարմար էր համարում, որ Կոմսը Երկիր մտնելուց հետո ոչ թե հիմնավորվի Վան-Վասպուրականում, այլ Դուրան-Բարձրավանդակում: Բյուրոյին գրած նամակում Ռուբենը շարունակում էր.

«Ի նկատի ունենալու եք, որ այստեղի գործը անհամեմատ ավելի ծանր է, քան Շամինը կամ ուրիշ տեղինը, դժվարություններն աննկարագրելի են, ամեն օր սպասում ենք ընդհարման, մի գիշեր չենք կարող մնալ մի տեղ: Ահա 25 օրվա մեջ 5 խուզարկություն եղավ. ցերեկը զորք, գիշերը՝ ջանբեզարներ, դավադիրների առանձին խմբեր: Այդ բոլորը պահանջում են այնպիսի մի մարդ, որ կարողանա այդ բոլորի մեջ յուր հավասարակշռությունը պահպանել ու գործ տեսնել: Գործն ընդարձակ է ու ծանր, հարկավոր է ղեկավար ուժ, որ յուր փորձառությունը չափել ու ձևել է Երկրի վրա: Այստեղի ժողովրդի մեջ անփորձը կարծում ենք վնասակար պիտի լինի և իզուր տեղը շուտով կգնա նահատակների շարքը ավելացնելու: Առողջությունը և լավ քայլերը ամենանահրաժեշտ պայմաններից մեկն է, որովհետև մենք միշտ «անիծյալի» պես փախչում ենք և մեծ մասն անց կացնում բացօթյա ու հաճախ՝ անոթի: Գրածներս դառն իրողություն են: Եթե Կոմսը չգա, առաջարկեք Շամի (Լեռ) ընկերներից Սարգսին*, նա էլ հարմար է»[2]:

1906թ. աշնանը նորից Վանում հավաքվում են քաղաքի և Լեռնապարի կոմիտեների ղեկավար ընկերները, որպեսզի Արամին և Իշխանին ճանապարհեն ընդհանուր ժողովի: Նրանք պատվիրակներին տալիս են հրահանգներ, նրանց զեկուցումների համար՝ նյութեր, ինչպես նաև պատրաստում են բանաձևերի նախագծեր: Այդ բոլորը պետք է ի մի բերեր Արամը և ներկայացներ ընդհանուր ժողովին:

Այստեղ, այս երկրորդ խորհրդակցությունում, նաև որոշվում է, որ Թադեի վանք հասնելուց հետո Իշխանն անմիջապես պետք է անցնի Կովկաս և այնտեղից ռազմամթերքի ու զենքի նոր քանակություն հասցնի վանք, իսկ Արամը 2-3 ամիս պետք է մնա վանքում և ներս ճամփի արդեն այնտեղ կուտակված և Իշխանից ստացվելիք ռազմամթերքը:

Բազմակողմանի նախապատրաստությունից հետո Արամն ու Իշխանը մեկնում են Կովկաս:

Վանից Թադեի վանք 22-24 ժամ տևող ճամփան նրանք այս անգամ անցնում են առանց պատահարների և փորձությունների: Վանքում մի գիշեր հանգըստանալուց հետո Իշխանը շարունակում է ճանապարհը, իսկ Արամը, ինչպես պայմանավորվել էին, մնում է վանքում: Այստեղ նա հաջողությամբ է իրականացնում իր խնդիրը, քանի որ Պարսկաստանից Երկիր զենք ու ռազմամթերք փոխադրելու համար աշունը առավել նպաստավոր էր. գիշերները երկար էին, լեռներում այլևս չկային սարվորներ, այլ խոսքով, ճամփան համեմատաբար ապահով էր:

Արամը սպասում էր Կովկասից Կոմսի գալստյան: Վերջապես աշնան վերջին Կոմսը հասնում է Թադեի վանք: Նրանք երկուսով երկար զրույցներ են ունենում, քննարկում Վանում Կոմսի անհետաձգելի անելիքները, իր հերթին վերջինս Արամին մանրամասն տեղյակ է պահում կուսակցության ներքին վիճակին, կազմակերպության առջև ծագած նոր խնդիրներին: Կոմսին Թադեից Վան ճամփելուց հետո, 1906թ. դեկտեմբերին Արամը ուղևորվում է Կովկաս*: Նա այնտեղից մեկնում է Վիեննա՝ մասնակցելու Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովին:

Շամի մյուս պատգամավոր Համազասպ Բաղեշցյանը (Սալման) Վանից Վիեննա է ճանապարհվում Արամից հետո: Կովկաս անցնելիս Պարսկաստանում նրա թոքախտ հիվանդությունը սրվում է: Թեև բժիշկները խորհուրդ են տալիս չշարունակել ճանապարհը, բայց նա մեկնում է և հասնում Բալկաններ: Տեսնելով Համազասպի ծայրահեղ հյուծված վիճակը՝ կուսակցական ընկերները նրան բուժվելու են ուղարկում ավստրիական Տիրոլ:

---

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 75:

* **Սարգիս Բարսեղյան** (Վանա Սարգիս, Շամիլ):

[2] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 75:

* Կովկասից Վան անցնելու և այնտեղից վերադառնալու իր պատմությունն Արամը շարադրել է 1917թ. գրած հուշերում, որն ընդհատվում է Թադեի վանքից 1906թ. դեկտեմբերին Կովկաս մեկնելու պահով (տե՛ս «Արամը», էջ 153-391):

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ: ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՄԵՆԱՈՒԺԵՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Հանգամանալից խոսակցության նյութ է Հ.Յ.դաշնակցության չորրորդ ընդհանուր ժողովը, որն իր կարևորությամբ առանձնակի տեղ է գրավում կազմակերպության պատմության մեջ: Անցնելով խիստ վտանգավոր հանգրվաններով՝ կուսակցությունը հենց այս ժողովի ընդունած որոշումների շնորհիվ է, որ կարողացավ դուրս գալ ստեղծված ծանր ճգնաժամից, խուսափել անխուսափելի թվացող պառակտումից և շարունակել պայքարի ընտրած ուղին՝ ավելի կազմակերպված ու նպատակասլաց:

Հ.Յ.դաշնակցության ժողովի որոշումները և ընդունված այլ փաստաթղթեր տևական ազդեցություն են ունեցել կուսակցության հետագա գործունեության վրա, նպաստել հայ ժողովրդի թուրքահայ և ռուսահայ հատվածների հետագա մերձեցմանն ու միևնույն նպատակների շուրջ համախմբմանը:

Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովի աշխատանքների և արդյունքների մասին առկա հրապարակումների թիվը մեծ չէ, թեև դաշնակցության պարբերականներում, հատկապես «Հայրենիք» ամսագրում, ժամանակին տպագրվել են մի շարք հոդվածներ: Ուսումնասիրողների համար արժեքավոր են ժողովի պատգամավոր Սիմոն Վրացյանի և մասնակից Վալադ Վալադյանի շատ տարիներ հետո գրված հուշագրությունները:

Բայց եթե նվազ են ինքնուրույն հրապարակումները, ապա, բարեբախտաբար, ուսումնասիրողներն իրենց ձեռքի տակ ունեն չորրորդ ընդհանուր ժողովի ողջ արձանագրությունները (թեև առանձին նիստերի արձանագրություններ թերի են): Դրանց գիտական մշակման և հրատարակության պատրաստելու ուղղությամբ տքնաջան աշխատանք է կատարել դաշնակցության պատմության խորագիտակ, երջանկահիշատակ Հրաչ Տասնապետյանը: Ժողովի արձանագրությունները՝ նրա գրած առաջաբաններով, հանգամանալից ծանոթագրություններով ու դիտարկումներով, լույս են տեսել իր իսկ կազմած ու խմբագրած «Նյութեր Հ.Յ.դաշնակցութեան պատմութեան համար» բազմահատորյա հրատարակության մեծածավալ հատորներում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ

Դեռևս 1905թ. կեսերին Հ.Յ.Դ. արևելյան բյուրոն դիմել էր Ավստրիայի սոցիալիստական կուսակցության ղեկավարությանը՝ խնդրելով աջակցել դաշնակցության հաջորդ ընդհանուր ժողովը Վիեննայում անցկացնելու համար: Պատասխանը եղել էր դրական: Ժողովն անցկացնելու համար ավստրոսոցիալիստները սիրով ձրի տրամադրել էին Մարիահիլֆե թաղում, Մարիահիլֆեշտրասսեի կողքին գտնվող կուսակցության ղեկավար մարմնի նստավայր՝ կենտրոնական շենքի նիստերի շատ հարմար սրահը, իսկ համաժողովի աշխատանքների ընթացքում բարոյական աջակցություն էին ցույց տալիս նրա մասնակիցներին:

Ավստրիայի կառավարությունը չտեսնելու էր տալիս ժողովի աշխատանքները: Կուսակցաժողովի պարապմունքների ամիսներին թուրքական գործակալ-լրտեսները Վիեննայում ճիգ ու ջանք էին թափում իմանալու, թե ինչ են քննում և ինչ են որոշում դաշնակցական պատգամավորները: Գործակալներից ստացած տեղեկությունները հաղորդելով ավստրիական կառավարությանը՝ Կ.Պոլսի կառավարությունը պահանջում էր արգելել ժողովը: Բայց պաշտոնական Վիեննան, բարեբախտաբար, կարևորություն չտվեց Բարձր դռան պահանջին, և խնդիրը հրապարակային կերպարանք չստացավ:

Պատգամավորներից շատերը Վիեննա հասնելու համար ստիպված էին հաղթահարել մեծ դժվարություններ, որի հետևանքով երկու պատգամավորներ չկարողացան տեղ հասնել: Նրանցից մեկը Հ.Յ.Դ. Դուրան-Բարձրավանդակի կ.կոմիտեի կողմից պատգամավոր ընտրված Գևորգ Զաուշն էր (Սարգսյան), մյուսը՝ Վասպուրականի շրջանից ընտրված Համազասպ Բաղեշցյանը (Սալման):

Դուրան-Բարձրավանդակի կ.կոմիտեի բոլոր անդամների՝ Ռուբեն Տեր-Մինասյանի, Գեղամ Տեր-Կարապետյանի (Մշո Գեղամ) և Վարդան վարդապետի (Վկա) ստորագրությամբ 1906թ. հոկտեմբերի 25-ին լիազորագիր-նամակ է ուղարկում ժողովի կազմակերպական հանձնախմբին, որում նշված էր. «Բարձրավանդակի և Դուրանի կ.կոմիտեն կը ներկայանայ ընդհանուր ժողովիդ յարգելի համախմբման իր ամենասիրելի ու քաջարի ընկերին՝ պ. Սարհատի միջոցով»[1]:

Ստանալով կ.կոմիտեի վկայագիրը՝ Գևորգը մեկնում է Դուրանից, բայց նրան չի հաջողվում հաղթահարել ճանապարհի դժվարությունները: Ուստի ստիպված վերադառնում է և իր ձայնը փոխանցում Բուլղարիայում գտնվող հարազատ ընկերներին՝ Անդրանիկին և Սեբաստացի Մուրատին: Այդ մասին

[1] **«Նյութեր...»**, *հատ. Դ, էջ 6-7:*

Զաուշը երկու նամակով տեղյակ է պահում վերջիններիս և Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյին:

Քանի որ Հիվանդ Համազասպ Բաղեշցյանը գտնվում էր Տիրոլում և չէր կարողացել հասնել Վիեննա, ուստի ժողովին Արամը միայնակ էր ներկայացնում Վասպուրականը: 1907թ. մարտի 21-ին Արամը Վիեննայից նամակ է գրում Համազասպին: Նամակը չի պահպանվել, ուստի հայտնի չէ նրա բովանդակությունը: Բայց կարելի է ենթադրել, որ ընդհանուր ժողովի դիվանի հանձնարարությամբ Արամը մի անգամ ևս փորձել է պարզել, թե Հիվանդ Բաղեշցյանն արդյո՞ք ոչ մի կերպ ի վիճակի չի լինելու հասնել Վիեննա և եթե ոչ, ապա ում է փոխանցում իր ձայնը: Արամը նաև, հավանաբար, նրան խնդրել էր ժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ հայտնել իր կարծիքը: Ստանալով Արամի նամակը՝ Բաղեշցյանը Արլոյից 1907թ. մարտի 29-ին պատասխան է գրում, որով հայտնում է, որ իր ձայնը փոխանցում է Արամին կամ Իշխանին: Քանի որ այդ պատասխանը Համազասպ Բաղեշցյանից մեզ հասած եզակի գրություններից է, այն մեջբերում ենք ամբողջությամբ.

«Arlo, 29 մարտ 1907

Սիրելի Արամ!

Ստացա մարտի 27-ի նամակդ, բայց բավականին ուշ: Սրանից մի քանի օր առաջ էլի մի նամակ գրել եմ Մալումյանի հասցեով անձնականիս վերաբերյալ: Ձես գրում, թե մեր տեղեկագիրն ու ռայոնական ժողովի որոշումները կարդացե՞լ եք, թե՝ ոչ և ինչ տպավորություն է թողել: Ինչ վերաբերում է իմ ձայնիս, պարզ է, որ ես չեմ կարող տալ այնպիսի մեկին, որի հետ հիմնական սկզբունքներում չփում չեմ ունեցել, այլ այնպիսի մեկին, որի հետ երկար խոսել, վիճել, համաձայնութեան ենք եկել: Ըստ այդմ էլ չեմ կարող, օրինակ, իմ ձայնը տալ Ամերիկայի որևէ պատգամավորի: Կը մնաք դու և Իշխանը: Երկուքիդդ մեկը ներկայացրեք իմ ձայնը: Ինչ վերաբերում է իմ կարծիքներին, դժբախտաբար ես դեռ պառկած եմ, ուստի հնարավորություն չունեմ որևէ բան գրելու. ոչ գլուխս է տեղը, ոչ ձեռքերս: Իմ կարծիքներն այն են, ինչ որ արտահայտուած են տեղեկագրի և ռայոնական ժողովի որոշումների մեջ: Տակտիկի մասին այնքան կ'ասեմ միայն, որ եթե ուզում են ժողովուրդը կոտորել տալ, թող նախկին տակտիկը ընդունեն:

Ժընևից ոչինչ չեմ ստանում: Դրամ պատրաստիր, որ ուղարկես ինձ: Անչափ ուժասպառ եմ. չգիտեմ երբ պետք է ուտքի կանգնեմ:

Համբոյրներով՝ Սալման:

[Հ. Գ.]

Համբոյրներս ծոյլ և ո՛չ ինձ չափ հիվանդ Իշխանին և բոլոր ընկերներին:

---

* **Գևորգ Զաուշի**, նշված երկու նամակները տպագրված են մեր **«Անդրանիկի ժամանակը»** աշխատության մեջ (գիրք Ա., Երևան, **«Կայիսա»**, 1966, էջ 287-289):

Նոյն»[1]:

Երկու ամիս հետո Համազասպը իր փափագով փոխադրվում է Ժնև: «Կուզեմ մեռնիլ հայ ընկերներու քովը», - ասում է նա: Ծանր հիվանդությունը այստեղ նրան վերջնականապես գամում է անկողնուն: Նա մեռավ Ժնևում, 1907թ. հունիսի 26-ին, երբ ընդամենը 24 տարեկան էր: Մեռավ հայրենի Վանից հեռու՝ չհասցնելով կատարել պատգամավորի իր պարտականությունը:

Վիեննա չհասած Գևորգ Զաուշի ձայնը փոխանցված էր Անդրանիկին, Բաղեշցյանինը՝ Արամին, իսկ խիստ զբաղված լինելու պատճառով Բաքվից չմեկնած Նիկոլ Դումանինը՝ Սևքարեցի Սաքային:

Ժողովի էին հրավիրված Հ.Յ.Դ. հետևյալ կենտրոնական կոմիտեները. Դուրան-Բարձրավանդակի (Մուշ-Սասուն), Շամի շրջան (Վասպուրական), Լեռնապար (Շատախ), Լեռնավայր (Կիլիկիա), Բալկաններ, Ոսկեհանք (Իզմիր), Հյուսիսային Ամերիկա, Մեծ Քաղաք (Թիֆլիս), Մրգաստան (Երևան), Այգեստան (Գանձակ), Ոսկանապատ (Բաքու), Ջրաբերդ (Կարս), Նավահանգիստ (Բաթում), Քար (Ալեքսանդրապոլ, Գյումրի), Ապառաժ (Շուշի, Ղարաբաղ), Նալբանդ (Նոր Նախիջևան), Ժլատ (Վլադիկավկազ) և Վրեժ (Թավրիզ, Ատրպատական)[2]:

Ժողովին մասնակցելու իրավասություն ունեին. 1. Կենտրոնական կոմիտեները, 2. Պատասխանատու մարմինները, 3. Արևմտյան բյուրոն, 4. Արևելյան բյուրոն, 5. Եվրոպայի դաշնակցական ուսանողությունը, 6. Ռուսաստանի դաշնակցական ուսանողությունը և 7. Զիֆոնի (զինական ֆոնդի) վարիչ մարմինը:

Վիեննայում զանազան կողմերից հավաքվել էին կուսակցության գրեթե բոլոր պատասխանատու ընկերներն ու ղեկավարները, մտավորական ու մարտական ամենաականավոր դեմքերը: Հիմնադիրներից սկսած մինչև վերջին սերունդը առկա էր:

Ժողովին երկուական պատգամավոր են ուղարկել Դուրան-Բարձրավանդակը՝ Անդրանիկ Օզանյանին (Պարույր) և Սեբաստացի Մուրատին, Վասպուրականը՝ Սերգեյ Հովհաննիսյանին (Արամ Մանուկյան) և Համազասպ Բաղեշցյանին (Սալման), Ամերիկան՝ Վահագն Տաթևյանին և Թովմաս Ջելալյանին (Հայկ Արմեն) և Բալկանները՝ Սարգիս Մինասյանին (Արամ Աշոտ) ու Ռուբեն Զարդարյանին (Ասլան): Մեկական պատգամավոր ներկայացված էր. արևմտյան և արևելյան բյուրոներից՝ Խաչատուր Մալումյանը (Ակնունի) և Ստեփան Զորյանը (Ռոստոմ), Լեռնավայրից (Կիլիկիա)՝ Սիմոն Զավարյանը (Անտոն), Լեռնապարից (Ռշտունիք և Մոկս)՝ Նիկոլ Պողոսյանը (Վանա Իշխան), Մրգաստանից (Երևան)՝ բժ. Յակով Զավրիևը (Հակոբ Զավրիյան), Քարից (Ալեքսանդրապոլ)՝ Ավետիք Իսահակյանը (Հայ Գուսան), Այգեստանից (Գանձակ)՝

---

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 6:

[2] **«Հայրենիք»**, N 4 (374), ապրիլ, 1957, էջ 10:

Ալեքսանդր Մաշուրյանը, Ապառաժից (Ղարաբաղ)՝ Բարսեղյանը*, Զրաբերդից (Կարս)՝ Ավետիս Ահարոնյանը (Ղարիբ), Ժլատից** (Հյուսիսային Կովկաս)՝ տիկ. Ժենյա Մելիք-Բալանթարյանը, Նալբանդից (Նոր Նախիջևան)՝ Սիմոն Գրուզինյան-Վրացյանը (Սիգ), Մեծ Քաղաքից (Թիֆլիս)՝ Եղիշե Թոփչյանը (Երվանդ), Նավահանգստից (Բաթում)՝ Միքայել Հովհաննիսյանը (Վարանդյան), Ոսկանապատից (Բաքու)՝ Լևոն Թադևոսյանը (Պապաշա կամ Զոփուրյան), Վրեժից (Ատրպատական)՝ Ստեփան Ստեփանյանը (Բալաջան) և Վահան Զաքարյանը***, Ցուցականից՝ Մարտիրոս Մարգարյանը (Սաֆո), զիֆոնից (զին. մարմին)՝ Ստեփան Տեր-Մկրտչյանը (Գագիկ), Ռուսաստանի դաշնակցական ուսանողական միությունից՝ Ավետիք Շահխաթունյանը (Արտուր), Եվրոպայի դաշնակցական ուսանողական միությունից՝ Արշակ Իսահակյանը (Զամալյան, կուսակցական ծածկանունով նաև՝ Ա. Արիսյան): Տեղերում ընտրված պատգամավորներից զատ, ընդհանուր ժողովին վճռական ձայնի իրավունքով հրավիրված էին Օնիկ Դերձակյանը (Արշակ Վռամյան), Համո Օհանջանյանը (Մհերյան), Վարդան Մեհրաբյանը (Խանասորի Վարդան), Արշակ Ներսիսյանը (Սեպուհ), Տաճատ վարդապետ Մելքոնյանը****, Սարգիս Ծովանյանը (Սևքարեցի Սաքո) և Նիկոլ Դումանը: Խորհրդակցական ձայնով Տրապիզոնից հրավիրվել էր Արսենը*****: Մի աղբյուրում («Հայրենիք» ամսագիր, N 4 (374), 1947, էջ 10) ընդհանուր ժողովի մասնակիցների թվում նշված է նաև բժ. Հովսեփ Տեր-Դավթյանը, որի մասին, սակայն, որևէ հիշատակություն չկա ժողովի արձանագրության մեջ:

Ինչպես տեսնում ենք, համեմատաբար փոքրաթիվ էին բուն Թուրքահայաստանից եկած պատգամավորները: Բարձր Հայքից և օսմանյան կայսրության ուրիշ մասերից չէին կարողացել ներկայացուցիչներ գալ, բայց այդ թերին լրացնում էին Անդրանիկի, Մուրատի, Սեպուհի, Զարդարյանի, Արամ-Աշոտի, Վռամյանի նման գործիչները, որոնք տարիներ ի վեր գործել էին Երկրում և քաջածանոթ էին Թուրքահայ իրականությանը:

Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովը պաշտոնապես բացվեց 1907թ. փետրվարի 22-ին:

Կուսակցաժողովը գումարվեց մռայլ, հոռետես մտքեր ներշնչող պարագաներում: Խռովիչ տարամերժություններն ընդարձակ դաշտ էին իջել: Ընդհանուր ժողովի բացումն ու կազմն իսկ կրում էր կուսակցության ներսի աղետալի վիճակի դրոշմը:

Նախապես, երբ մշակվում էր օրակարգը, ենթադրվում էր, թե ժողովը կտևի առ առավելն մեկ ամիս: Բայց, հակառակ սպասածի, օրակարգային հարցերը քննելու համար պահանջվեց շատ ավելի երկար ժամանակ: Մեկ ամիսը լրացավ, և երկրորդն էր արդեն սկսվել, բայց անհնարին եղավ նախատեսել, թե երբ, իսկապես, պիտի սպառվեն օրակարգային բոլոր հարցերը: Հնարավոր չեղավ արագացնել ժողովի ընթացքը: Պատճառները մեկից ավելի էին: Նախ, հարցերի մեծ մասը շատ բարդ էր ու փչոտ, և այդ պատճառով դրանց քննարկումը նախատեսվածից շատ ժամանակ էր խլում: Նպաստեցին, հարկավ, և կրկնաբանությունները, որոնցով ընդհանրապես տառապում էին հայկական ժողովները: Ընդհանուր ժողովը փակվեց միայն մայիսի 4-ին, 121 նիստ ունենալուց հետո:

Ժողովի բացման օրը ներկա էր 18 հոգի: Միայն հետագա օրերին ու շաբաթներին բացակայողները հետզհետե սկսեցին հասնել Վիեննա: Մի շարք պատգամավորներ ուշացան իրենցից անկախ պատճառներով՝ կապված ճանապարհին առաջացած դժվարությունների հետ և այլն: Օրինակ՝ Զրաբերդի (Կարս) և Նավահանգստի (Բաթում) պատգամավորներ Ավետիս Ահարոնյանը և Միքայել Վարանդյանը տեղ հասան, երբ ժողովը բոլորել էր իր զբաղմունքների առաջին ամիսը: Զինական ֆոնդի (Զիֆոն) ներկայացուցիչ Ստեփան Տեր-Մկրտչյանը եկավ ապրիլի 6-ին, իսկ Սիմոն Զավարյանը Վիեննա հասավ հազիվ ապրիլի 9-ին, այսինքն՝ ժողովի բացումից մեկուկես ամիս անց[1]:

Ուշացումով էին տեղ հասել նաև Արամ Մանուկյանը, Ավետիք Իսահակյանը, Սիմոն Վրացյանը, Եղիշե Թոփչյանը:

Փետրվարի 22-ին ընտրվեցին ժողովի օրակարգը մշակող ու մանդատային հանձնաժողովներ, որոնք իրենց աշխատանքներն ավարտեցին փետրվարի 23-ին:

Փետրվարի 24-ին ժողովի մշտական նախագահներ ընտրվեցին Զավարյանը, Վռամյանը, Ահարոնյանը և Օհանջանյանը: Սրանցից առաջինը, ինչպես և վերջին երկուսն ընտրվեցին հեռակա կարգով, քանի որ դեռ ճանապարհին

---

* **Բարսեղյան** – Ապառաժի (Ղարաբաղ) կ.կոմիտեի պատգամավորի լիազորություններով համագումար եկած անձնավորության ծածկանունն է հավանաբար, քանի որ այդ տարիներին Բարսեղյան ազգանունով հայտնի դաշնակցական գործիչ չի եղել: Ընդհանուր ժողովի արձանագրությունների մեջ 3 տեղ հիշատակվում է Գյուլխանդանյան ազգանունը (փետրվարի 23-ի 3-րդ, մարտի 1-ի 14-րդ և ապրիլի 30-ի 113-րդ նիստերում): Ազգանունը գրված է շատ հստակ և, անշուշտ, թյուրիմացության արդյունք լինել չի կարող: Աբրահամ Գյուլխանդանյանը (Աբրո), որ հայ-թաթարական կռիվների ժամանակ Կովկասում կարևոր դեր է ունեցել, արդյո՞ք Ղարաբաղի պատգամավոր Բարսեղյանը չէ (տե՛ս **«Նյութեր...»**, հատ. Գ, 13, 33, 277, 292 էջեր):

** Հյուսիսային Կովկասի «Ժլատ» կոչված շրջանը տարածվում էր Թերեքի և Ստավրոպոլի նահանգների վրա: Կուբանի նահանգը չէր մտնում «Ժլատի» մեջ, այլ կցված էր Հ.Յ.Դ. Նալբանդի (Ռոստով-Նոր Նախիջևան) կենտրոնական կոմիտեին: 1905թ. վերջերից «Ժլատի» կ.կոմիտեի ատենապետ էր ընտրվել Արտաշես Զիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան), որը, սակայն, չէր ընտրվել դաշնակցության չորրորդ ընդհանուր ժողովի պատգամավոր (**«Հայրենիք»**, N 9 (391), սեպտեմբեր, 1958, էջ 14,16):

*** Ատրպատականից պատգամավորներ Ս. Ստեփանյանը և Վ. Զաքարյանը, որպես Կուկունյանի խմբի անդամներ, ձերբակալվել և աքսորվել էին Սախալին, բայց կարողացել էին տաժանավայրից փախչել և հիմնավորվել Իրանում:

**** Իսկական անուն-ազգանունը պարզված չէ: Հավանաբար Վանում և Մուշում գործած Գարմենն է՝ Ռուբեն Տեր-Մինասյանի ուսանողական շրջանի մտերիմ ընկերը (տե՛ս **«Նյութեր ...»**, հատ. Գ, էջ 357):

***** Ազգանունը և ինքնությունը պարզված չէ:

[1] **«Հայրենիք»**, N 7 (377), հուլիս, 1957, էջ 48:

էին: Փետրվարի 27-ին ժողովի հինգերորդ նախագահ ընտրվեց Խաչատուր Մալումյանը (Ակնունի), իսկ ավելի ուշ՝ նաև Եղիշե Թոփչյանը: Այդ վեց ատենապետերը ժողովը վարելու էին հերթով, յուրաքանչյուր օր՝ մեկը: Բայց ընթացքում խախտվեց այդ կարգը, և ժողովի ողջ ընթացքում ամենից ավելի նախագահողը Ակնունին եղավ:

Ապա ժողովն ընտրեց 7 հոգուց բաղկացած քարտուղարություն՝ այդ թվում 4 պատգամավոր և 3 հրավիրված: Այս կազմից քարտուղարներ նշանակվեցին երկու հոգի՝ Երվանդ Ֆրանգյանը և Մարդպետը*, իսկ օգնական քարտուղարներ՝ Մարտիրոս Հարությունյանը և Վալադ Վալադյանը: Վերջինս հրավիրվել էր Լայպցիգից, ուր ուսանում էր համալսարանում:

Այնուհետև ընտրվեց 4 հանձնախումբ՝ ցուցական, դատական, վիճակագրական և եվրոպական պրոպագանդի: Ընտրվեցին նաև հանձնաժողովներ՝ հաշվական, դատական (Բալկանյան գործերի), զինման խնդրի: Վերջապես, ընտրվեց Սասունի, Վասպուրականի և ահաբեկիչ խմբերի համար ներքին կանոնագիր կազմող 3 մասնախումբ:

Օրակարգում ընդգրկված էին մեկը մյուսից կարևոր բազմաթիվ հարցեր՝ ապստամբական ձեռնարկներ, արշավախմբեր, ցուցական գործունեություն. ինքնապաշտպանություն (մասնավորապես Կովկասի հայության ինքնապաշտպանություն). Թուրքիայի այլատարր ցեղերի հետ համերաշխություն. գործակցություն Ռուսաստանի սոցիալիստական կուսակցությունների հետ. գործակցություն վրացիների հետ. հնչակյան կուսակցության Փարիզի կենտրոնի դիմումը՝ հայ հեղափոխական կուսակցությունների ժողով գումարելու և համերաշխաբար գործելու նպատակով միկուսակցական մի ատյան կազմելու մասին. հայ-թուրքական կռիվները Կովկասում. պրոպագանդա, մամուլ, հրատարակություններ. կովկասահայ դատը տաճկահայ դատից իսպառ անջատելու խնդիր. կազմակերպական և ներքին կուսակցական զանազան խնդիրներ:

Այդ ամենից զատ առանձնանում էր օրակարգային երկու կարևորագույն հարց՝ ռուսահայ դատը նույնպես դաշնակցության ծրագրի մեջ մտցնելը և սոցիալիզմն իբրև գործնական քաղաքական խնդիր ընդունելը:

Ընդհանուր ժողովի առաջին իսկ նիստերում պատգամավորները բաժանվել էին երկու մասի՝ նախագծականներ և հականախագծականներ: Վերջիններս թեև փոքրամասնություն էին կազմում, բայց համախումբ էին, միասնական: Նախագծականները, հատկապես նրանք, ովքեր սոցիալիզմն ընդունում էին անվերապահորեն, մեծամասնություն էին, բայց գլխավոր հիմնահարցի (սոցիալիզմի) հանդեպ տարբեր մոտեցումներ ունեին:

Սոցիալիստների մեծամասնությունը չափավոր հայացքների տեր էր: Դրանք հիմնականում «տարեց»** պատգամավորներն էին, որոնց թվում էին

* Ինքնությունը պարզված չէ:

** Ընդհանուր ժողովի օրերին «տարեցների» և «երիտասարդների» տարիքային տարբերու-

Սիմոն Զավարյանը, Ռոստոմը, Ակնունին, Ահարոնյանը, Վարանդյանը և ուրիշներ:

Երիտասարդներն ավելի ձախ էին, և նրանց թվում ամենամոլեռանդները երկու հոգի էին՝ Ավետիք Շահխաթունյանը (23 տարեկան) և Արշակ Ջամալյանը (25 տարեկան): Մեկը Մոսկվայի համալսարանում ուսանում էր իրավագիտություն, իսկ մյուսը Բեռլինի համալսարանում հետևում էր հասարակական ու փիլիսոփայական գիտություններին: Իրենց ձախության մեջ նրանք այնքան հեռու էին գնացել, որ հանուն սոցիալիզմի պատրաստ էին իրարից անջատել տաճկահայ և կովկասահայ դատերը: Իսկ դա նշանակում էր, որ Շահխաթունյանն ու Ջամալյանը պահանջում էին պարզապես այն, ինչ պահանջում էին ժողովից դուրս՝ Բաքվում, Թիֆլիսում և ուրիշ կենտրոններում ասպարեզ իջած «անջատականները»՝ Լևոն Աթաբեկյանի գլխավորությամբ:

Սոցիալիզմի մասին երկու երիտասարդ ծայրահեղականների նման էր մտածում նաև Եղիշե Թոփչյանը, բայց սա ավելի գործնական սոցիալիստ էր, քանի որ եռանդուն հեղափոխական աշխատանք էր տանում Անդրկովկասում մասնավորապես դաշնակցության դրոշի տակ կազմակերպելով բանվորական արհեստակցական միություններ, առավելապես՝ Թիֆլիսում: Նա ձախ դաշնակցականի համբավ ուներ և ջատագով էր սոցիալիստական արմատական գաղափարների և դասակարգային կռվի: Բայց իր ձախությամբ հանդերձ, Թոփչյանը երբեք հնարավոր չհամարեց միանալու կուսակցության մեջ եղած անջատողական հոսանքին և վճռականապես մերժում էր կազմակերպության ջլատմանը նպաստող ամեն քայլ:

Զախագույն Շահխաթունյանից ու Ջամալյանից և ձախ Թոփչյանից բացի, նվազ ծայրահեղականներ էին երկու ուրիշ երիտասարդներ՝ Սիմոն Գրուզինյան-Վրացյանը (Սիգ) և ատամնաբույժ Ալ. Մաշուրյանը (Զաքյուճ)[1]:

Դավանելով նույն գաղափարները՝ պատգամավորները միմյանցից խիստ տարբեր էին իրենց կրթական մակարդակով, հարցերի քննարկման ժամանակ դրսևորած ակտիվությամբ, վերջապես, որ պակաս կարևոր չէ՝ բնավորության գծերով: Նրանց մեջ կային աղմկարարներ և լռակյացներ, իրենց արժանիքներն ընդգծող անհատներ և իրենց ծառայությունների մասին որևէ ակնարկ չանող գործիչներ և այլն:

Սիմոն Վրացյանը ընթերցողներին է ներկայացրել պատգամավորներից մի քանիսի համառոտ նկարագիրը. «**Սիմոն Զավարյան** - Հմուտ և համոզված տեսաբան ընկերավարության, խոսում էր հանդարտ և անհույզ: **Ավետիք Խահակյան** - Բոլորովին հռետոր չէր , խոսում էր կակազելով, բայց մի ան-

թյունները մեծ չէին. երիտասարդների տարիքը տատանվում էր 23-35-ի, իսկ տարեցներինը հաղիվ 40-44-ի միջև: Ռոստոմը 40 տարեկան էր, Զավարյանը և Ահարոնյանը՝ 41, Ակնունին՝ 44: Այս սահմաններից անցել էր միայն Վարանդյանը՝ թեակոխած լինելով իր 51 տարին:

[1] Տե՛ս **«Ռոստոմ»**, էջ 241:

գամ այնպես փայլուն ներկայացրեց իր հակաընկերավարական, նիցշեական, անիշխանական փիլիսոփայությունը, որ ամբողջ ժողովը բուռն ծափահարեց: Տեղը նստելուց առաջ նա ասաց. «Շան տղերք, ծափահարում եք, բայց քվե չպիտի տաք»: **Միքայել Վարանդյան** - «Դրոշակի» խմբագիրը, այն օրերին, կարելի է ասել, դաշնակցական երիտասարդության կուռքն էր և սիրում էր շքեղ արձակով գրած նրա հոդվածները: Մեծ եղավ հիասթափությունս. Վարանդյանը արտասանեց մի շատ թույլ ճառ: Ավելի լավ է միայն գրե և բնավ ճառ չխոսե՝ մտածեցի ես: **Ավետիս Ահարոնյան** - Պերճախոս հռետորներ շատ չկային ընդհանուր ժողովում: Ահարոնյանը հիանալի հռետոր էր, բայց կուտ քիչ կար նրա ճառերում: Ռոստոմը Ահարոնյանի ճառերի մասին ասում էր. «Լիմոնադ լինի կարծես, հաճույքով կը խմես, բայց սնունդ չկա մեջը»: **Խաչատուր Մալումյան** - Ավելի բովանդակալից ճառախոս էր, որ, սակայն, Ահարոնյանի պերճանքը չուներ: **Ռոստոմ Զորյան** - Բոլորովին ճառախոս չէր, խոսում էր բառեր փնտրելով, հաճախ ձեռքի օգնությամբ, բայց զարմանալի կերպով հաճելի էր նրան լսելը: **Թովմաս Ջելալյան** - Անհաշտ և կրքոտ հակաընկերավարական էր, տեղի-անտեղի աղմուկ էր անում, բռունցք էր ցույց տալիս հակառակորդներին, ժողովականին ոչ վայել բառեր էր գործածում: Մենք նրան «խուլիգան» էինք կոչում: **Ավետիք Շահխաթունյան** - Պակաս անզուսպ չէր, թեև՝ ավելի բարեկիրթ: Նա իր փոքրիկ բռունցքով հարվածում էր սեղանին, սպառնում ժողովից հեռանալ, եթե ընկերավարությունը չընդունվի: **Արշակ Իսահակյան** - Նույնպես ծայրահեղ ընկերավարական էր, ելույթները՝ բուռն, բայց երբեք չարտասանեց «կհեռանամ» բառը»[1]:

Ժողովի պատգամավորներից մի քանիսի դիմանկարը իր հուշագրություններում գծել է Վալադ Վալադյանը: Օրինակ՝ **Նիկոլ Պողոսյանի (Վանա Իշխան)** մասին գրել է. «Չեմ հիշում, որ ժողովի ամբողջ տևողության [ընթացքում] նա ավելի քան երեք-չորս անգամ ձայն ուղած լիներ, չնայած որ հարյուր քսան նիստեր եղան»[2]: Իսկ Սևքարեցի Սաքային այսպես է վերհիշել. «Ըստ իր վաղեմի սովորության՝ լուռ էր մնում երկար տևած վիճաբանությունների ընթացքում, բայց խղճի մտոք հետևում էր թեր ու դեմ փաստարկություններին, և վերջում տվեց իր քվեն ի նպաստ այն տեսակետին, որ իր համոզումով ամենից ճիշտն էր ու օգտակարը՝ հայ ժողովրդի համար»[3]:

«ԿՈՎԿԱՍՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ» ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Ընդհանուր ժողովի օրակարգի կենտրոնական հարցը «Կովկասյան նախագիծն» էր, որի քննարկմանը պատգամավորներն ընդմիջումներով հատկացրին

[1] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով, հատ. Բ, էջ 98-100:
[2] **«Հայրենիք»**, N 10 (392), հոկտեմբեր, 1958, էջ 53:
[3] Նույն տեղում, N 8 (402), օգոստոս, 1959, էջ 83:

ավելի քան 10 նիստ՝ սկսած մարտի 30-ի առավոտյան 58-րդ նիստից, որը տեղի ունեցավ ժողովի բացումից (փետրվարի 22) 36 օր անց*:

Օրակարգային ամենակարևոր հարցի քննարկումն ուշացավ երեք պատճառով՝ ա) Բավական ժամանակ ծախսվեց շրջաններից եկած տեղեկագրերի ընթերցման ու քննարկման վրա, բ) Պատգամավորները պարտադիր էին համարում դեռևս Վիեննա չհասած Սիմոն Զավարյանի, Ավետիք Ահարոնյանի, Միքայել Վարանդյանի և բժ. Համո Օհանջանյանի մասնակցությունը հարցի քննարկմանը, ուստի առաջարկում էին հետաձգել մինչև նրանց ժամանումը, գ) «Նախագծի» շուրջ հակամարտող պատգամավորների միջև եղած լարումները ինչ-որ չափով մեղմելու համար պահանջվեց որոշ ժամանակ:

«ՆԱԽԱԳԾԻ» ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

«Կովկասյան նախագծի» քննարկումն սկսելուն պես, անսպասելիորեն բարձրացավ և միանգամից սուր բնույթ ստացավ չնախատեսված մի հարց. արդյո՞ք դաշնակցության խորհուրդը, որպես կուսակցության ղեկավար մարմիններից մեկը, ունեցել է իրավասություն՝ կազմելու և իր անունից հրատարակելու «Կովկասյան գործունեության նախագիծը», թե՞ այդպիսին չի ունեցել:

Պատգամավորներից շատերը, հատկապես թուրքահայ ընկերները, խիստ քննադատելով Հ.Յ.Դ. խորհրդին և արևելյան բյուրոյին, պնդում էին, որ նրանք ինքնագլուխ ու կամայական արարքներ են թույլ տվել, այն է՝ հրապարակ են հանել «Նախագիծը» և, այդպիսով, դուրս են եկել իրենց իրավասությունների սահմաններից[1]: Այդ տեսակետն ունեցողները «Նախագծի» երևան գալը համարեցին ներկուսակցական կյանքում տեղի ունեցած աղաղակող անօրինականություն և պահանջեցին ընդհանուր ժողովի հատուկ որոշմամբ փաստաթուղթը չեղյալ հայտարարել:

Առաջ քաշած այդ տեսակետը խիստ վտանգավոր կացություն ստեղծեց: Հարցը կարող էր փակուղի մտնել անկանխատեսելի հետևանքներով հանդերձ: Ուստի և՛ «Նախագծի» կողմնակիցները, և՛ հակառակորդները անհրաժեշտ համարեցին բարձրացրած հարցի վերաբերյալ լսել հատուկ զեկուցում և այն քննարկել հանգամանորեն:

Զեկուցող հաստատվեց արևմտյան բյուրոյի պատգամավոր Խաչատուր Մալումյանը (Ակնունի): 58-րդ նիստում (մարտի 30-ի առավոտյան) նա հանդես եկավ խորհրդի կողմից «Կովկասյան գործունեության նախագիծը» հրա-

* Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովում «Կովկասյան նախագծի» քննարկման ժամանակ պատգամավորներից շատերը հանդես էին եկել մի քանի անգամ: Ուստի տվյալ պատգամավորի կողմից ժողովի տարբեր նիստերում ունեցած ելույթներում արտահայտված մտքերը շարադրելիս սույն աշխատության հեղինակը դրանք միավորել է՝ կրկնություններից հնարավորին չափ խուսափելու համար:
[1] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով, հատ. Բ, էջ 91:

տարակելու իրավասության մասին զեկուցումով:

Խ. Մալումյանն իր զեկուցումն սկսեց Նրանով, որ «Նախագծի» հրատարակման իրավասարության հարցը պետք է քննարկվի երկու տեսակետից՝ ըստ իրավասության և ըստ էության: Վերջինն առայժմ մի կողմ թողնելով՝ նա կանգ առավ առաջինի, այն է՝ իրավասության հարցի վրա՝ պատճառաբանելով, որ շատ անգամ և շատ ընկերների կողմից կարծիքներ են հայտնվել, թե Հ.Յ.Դ. խորհուրդը ոչ մի իրավասություն չուներ հրատարակելու «Նախագիծը»[1]: Մալումյանը նշեց, որ մեղադրանքները հիմք չունեն, քանի որ՝ 1. Կուսակցության կովկասյան գործունեության անհրաժեշտության մասին Հ.Յ.Դ. Նախորդ՝ երրորդ ընդհանուր ժողովը (Սոֆիա, 1904թ.) ընդունել է հետևյալ վճիռները. ա) Դաշնակցության գործունեությունը տարածել Կովկասի վրա, բ) Կովի համար դիմել ժողովրդական ցույցերի, տեռորի, զինված դիմադրության, գործադուլների և այլն, գ) Կովկասյան կազմակերպությունների ռայոնական ժողովներին թույլատրել մանրամասնորեն մշակելու Կովկասում մղվելիք պայքարի տակտիկա, դ) Խորհուրդը «Նախագիծը» հրատարակել և տեղերն է ուղարկել երրորդ ընդհանուր ժողովում հաստատված կազմակերպական կանոնագրով իրեն տրված լիազորությունների և իրավասությունների հիման վրա, մասնավորապես այն կետի հիման վրա, որով խորհրդին արտոնվել է՝ քաղաքական տագնապների ժամանակ ծրագրել նոր ձեռնարկներ: 2. Նախքան խորհրդի կողմից «Նախագծի» մշակումը և ընդունումը, Հ.Յ.Դ. կովկասյան գործունեության մասին արդեն որոշումներ էին ընդունել կովկասյան ռայոնական ժողովները: Ահա այս հիման վրա է, ասաց Մալումյանը, որ խորհուրդը մշակել և հրատարակել է «Նախագիծը»՝ նրա վերջնական խմբագրումը և հաստատումը թողնելով ներկա ժողովին:

Անդրադառնալով «Նախագծի» առթիվ ծագած դժգոհությունների բնույթին՝ Մալումյանը նշեց, որ «այդ դժգոհությունները, եթե չհաշվենք քիչ բացառությունները տեղական ընկերների շրջանում – հետևանք են զանազան անհատների անձնական դժգոհության և կամ այն հանգամանքի, որ մեր ժողովրդական մասսաները, հաճախ նույնիսկ անգրագետ, չեն ծանոթացել «Նախագծին» և զոհ են գնացել դժգոհ անհատների կամ խմբերի գրգռումներին ու չարամիտ մեկնաբանություններին»[2]:

Իբրև ապացույց, զեկուցողը վկայակոչեց այն կարևոր հանգամանքը, որ չնայած տեղերում «Նախագծի» քննարկումն անցել է շատ բուռն, և ամենատարբեր կարծիքներ են հայտնվել, բայց վերջիվերջո կուսակցական հիմնական զանգվածը եկել է ընդհանուր համաձայնության, և Երկրից, Կովկասից ու արտասահմանից չորրորդ ընդհանուր ժողովին ներկայացած Հ.Յ.Դ. կենտրոնական 24 մարմինների (կ.կոմիտեների) մեծ մասը ընդունում է «Նախագիծը»,

[1] «Հայրենիք», N 4 (374), ապրիլ, 1957, էջ 16:
[2] «Նյութեր...», հատ. Դ, էջ 146:

ուրիշները կողմ են փաստաթղթի հարցադրումների մեծ մասին, և միայն երկու կ.կոմիտե ամբողջովին դեմ է՝ Բալկանը և Ամերիկան[1]: Բայց առավել նշանակալիցն այն է, շարունակեց նա, որ հենց Երկրի մարմինները, ինչպես, օրինակ՝ Վասպուրականը, ամբողջովին կողմ են «Նախագծին», իսկ Սասուն-Մուշի ընկերները դեմ չեն, որպեսզի կուսակցությունն իր գործունեությունը տարածի նաև Կովկասի վրա[2]:

Այդ բոլոր փաստարկների հիման վրա Խաչատուր Մալումյանը, իբրև եզրակացություն, ժողովին առաջարկեց՝ վավերացնել խորհրդի արած քայլը, ճանաչել նրա իրավասությունը և դրանով իսկ վերջ տալ չնախատեսված հարցի չուրջ ծագած վիճաբանություններին:

Զեկուցումից հետո ժողովի 58-62-րդ նիստերում (մարտի 30-ից ապրիլի 2-ը) ծավալվեց մտքերի փոխանակություն:

Իրենց ելույթներում խորհրդի կողմից «Նախագծի» հրատարակումը օրինական համարեցին Սիմոն Զավարյանը, Ռոստոմը, Արշակ Խաչակյանը, Եղիշե Թոփչյանը և ուրիշներ:

Հանդես գալով՝ Ռոստոմը ոչ միայն ճիշտ համարեց «Նախագծի» հրատարակումը, այլև նշեց, որ խորհուրդը պարզապես իրավունք չուներ այլ կերպ վարվելու, քանի որ փաստաթղթի երևան գալը կյանքի հրամայական պահանջն է: Իր ելույթում Սիմոն Զավարյանը նկատեց, որ «Նախագծի» հրատարակման իրավասության մասին խոսակցությունները միանգամայն ավելորդ են, քանի որ դա կատարված իրողություն է:

Եղիշե Թոփչյանը նույնպես, խորհրդի կողմից «Նախագծի» հրատարակումը համարելով օրինական՝ հաստատեց Մալումյանի այն փաստարկը, որ նախքան «Նախագծի» հրատարակման մասին խորհրդի կողմից որոշում ընդունելը, դրա սկզբնական տարբերակն արդեն ստեղծվել էր Կովկասյան ռայոնական ժողովներում: Դա նշանակում է, որ փաստաթղթի հեղինակը ոչ միայն խորհուրդն է, այլև ռայոնական ժողովները: Ճիշտ է, Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովը սկզբունքով ընդունել է կովկասյան գործունեությունը (ցույց, տեռոր, զինված դիմադրություն, գործադուլ և այլն), բայց ապակենտրոնացման սկզբունքի համաձայն՝ միաժամանակ ընդունել է որոշում, որ «Կովկասյան ռայոնական ժողովին է վերապահվում տակտիկայի մանրամասն ծրագիրը որոշելը և մշակելը»: Կատարելով ընդհանուր ժողովի այդ որոշումը՝ ռայոնական ժողովները մանրամասն քննել են կովկասյան դաշնակցական մասսաների քաղաքական պահանջներն ու տնտեսական կարիքները և, տրված իրավասությունների համաձայն, մշակել են «Նախագծի» կետերը, որից հետո ուղարկել խորհրդին: Վերջինս չէր կարող հակառակ լինել այդ պահանջին և չհրատարակել փաստաթուղթը՝ ճիշտ է, նրա վրա բավական աշխատելուց ու խմբագրե-

[1] «Հայրենիք», N 4 (374), ապրիլ, 1957, էջ 17:
[2] Նույն տեղում, էջ 18:

լուց հետո: Ավելին, խորհուրդը ուղղակի պարտավոր էր դա անել: Այսպիսով, շարունակեց Թոփչյանը, «Նախագիծը» կովկասյան դաշնակցական մասսաների կարիքների ու պահանջների արձագանքն է, այն մասսաների, որ Հ.Յ.դաշնակցության բարոյական, նյութական ու նույնիսկ ռազմիկ ուժերի գրեթե 3/4-ն էր ներկայացնում: «Լա՛վ իմացեք, - վերջում ասաց նա, - որ կուսակցութեան հիմքը մենք չենք, այլ այդ մասսաները: Եթե մեր որոշումներով հակառակ գնանք նրանց շահերին ու գիտակից պահանջներին, նրանք երես կը դարձնեն մեզնից: Զգուշացե՛ք այդ հեռանկարից»[1]:

Հակառակ տեսակետ էին պաշտպանում հականախագծականները՝ Սեբաստացի Մուրատը, Ռուբեն Զարդարյանը, Թովմաս Ջելալյանը (Հայկ Արմեն), Արշակ Վռամյանը, Սեպուհը, Սարգիս Մինասյանը և այլոք: Ինչ վերաբերում է Անդրանիկին, ապա նա նույնպես սկզբունքորեն դեմ լինելով «Կովկասյան Նախագծին»՝ գերադասել էր, սակայն, չմասնակցել դրա քննարկումներին:

Սեբաստացի Մուրատը, մերժելով Ս. Զավարյանի փաստարկումները, չեշտում էր, որ խորհուրդն իրավունք չուներ հրատարակելու «Նախագիծը», քանի որ դրա ստեղծմանը մասնակից չեն եղել կուսակցության մյուս պատասխանատու մարմինները, մանավանդ Երկրի ներկայացուցիչները: Նա պատգամավորներին տեղյակ պահեց, որ, ճիշտ է, այդ միջոցին Ժնևում գտնվող Անդրանիկը մասնակցել է խորհրդի երկու գումարումներին, բայց բոլորովին տեղեկություն չի ունեցել, որ «Նախագիծը» պիտի հրատարակվի[2]: Համոզմունք արտահայտելով, որ, «Նախագիծն» ընդունելով, մենք այդ սխալը «ապագայում քաղելու ենք հարյուրավոր զոհերի արյունով», Մուրատը պահանջում էր, որ «խորհուրդն ինքը խոստովանի իր քայլի ապօրինի լինելը»[3]: Նա նաև ասում էր, որ անհավանական են այն պնդումները, թե կուսակցական անդամների մեծ մասը կողմ է արտահայտվել «Նախագծին»: Մուրատի այդ կասկածը անընդունելի համարեցին նախագծականներից շատերը, որոնք օրինակներ էին բերում ապացուցելու, որ, պաշտոնական մարմիններից և շարքային դաշնակցականներից զատ, «Նախագծի» մասին դրական կարծիքներ են հայտնել անկուսակցական հավաքույթների հազարավոր մասնակիցներ:

Ելույթ ունենալով՝ Ակնունին վկայակոչեց Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյի հանձնարարությամբ Քարի (Ալեքսանդրապոլի) կ.կոմիտեի կողմից ամիսներ առաջ հրավիրված՝ գավառում բնակություն հաստատած տաճկահայերի ժողովը, որին մասնակցություն էին բերել 22 վայրերից եկած ներկայացուցիչներ: Այդ ժողովն ընդունել էր մի որոշում, որը հայտնի էր «Ալեքսանդրապոլի տաճկահայերի բանաձև» անունով: Ակնունին կարդաց այդ բանաձևը, ուր ասված էր.

«Հ.Յ.դաշնակցության արևելյան բյուրոյի հրավիրմամբ գումարվեց կով-

[1] **«Հայրենիք»**, N 4 (374), ապրիլ, 1957, էջ 17:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 36:

կասաբնակ դաշնակցական տաճկահայերի համագումարը՝ քննելով «Նախագծի» շուրջ ծագած տարաձայնությունները, անկախ շրջաններից բերած մանդատներից, եկավ այն եզրակացության, որ նա համապատասխան է Հ.Յ.դաշնակցության երրորդ ժողովի սկզբունքներին, և որ կովկասյան գործունեությունը կյանքի հրամայական պահանջ է: Իսկ «Նախագծի» վերջնական ընդունելությունը և գործադրության չափը թողնվում է առաջիկա ընդհանուր ժողովին»[1]:

Այդ բանաձևի առթիվ Ամերիկայից եկած պատգամավոր Թովմաս Ջելալյանն ասաց, թե ինքը սխալ է գտնում բանաձևի բովանդակությունը: Իսկ Մուրատը ծանրակշիռ հայտարարություն արեց, թե ինքը համոզված է, որ տաճկահայերը չէին կարող նման որոշում ընդունել. եթե, այնուամենայնիվ, ընդունել են, նշանակում է նրանց ստիպել են: «Քարի ժողովին մասնակցող պատգամավորներեն և՛ ոչ մեկը անկեղծ կողմնակից չէ եղած «Նախագծին», - ասաց նա: - Եվ եթե հակառակ ատոր՝ այնուամենայնիվ ստորագրած են նման բանաձև մը, ըրեր են ատիկա, որովհետև իրենց վրայ բարոյական ճնշումներ գործ դրուեր են: Այս է ճշմարտությունը»[2]:

Մուրատի հայտարարությունը մի անվերապահ ամբաստանություն էր՝ ուղղված թե՛ Քարի կ.կոմիտեի ընկերների և թե՛ կուսակցության վերին ղեկավարության հասցեին: Ժողովականների մոտ հուզում առաջացավ: Բարեբախտաբար Ամերիկայից եկած երկրորդ պատգամավորը՝ Վահագն Տաթևյանը, որ պարագաների բերումով ինքն անձամբ ներկա էր գտնվել Ալեքսանդրապոլի ժողովին, հերքեց Մուրատի մեղադրանքը, ասելով. «Սխալ է, ոչ մեկ ճնշում գործ դրուած է մեր տաճկահայ պատգամավորներեն որևէ մեկուն վրայ: Ճիշդ է, թե քսաներկու շրջաններե եկած պատգամավորները հետերնին բերած էին մանդատներ, որոնք մեծավ մասամբ հականախագծական բնույթն ունեին: Սակայն ժողովի ընթացքին պատգամավորներն իրենք փոխեցին իրենց սկզբնական հայացքները «Նախագծի» վերաբերմամբ, երբ անոնց բացատրուեցավ վերջինիս էությունը: Ուստի պատգամավորները «Նախագիծն» ընդունեցին իրենց ունեցած մանդատներե անկախ ու յոժար կամքով ստորագրեցին բանաձևը, որ կարդացուեցավ հոս: Իսկ թե ժողովեն ետք պատգամավորներեն մեկը թե շատեր նորեն հականախագծական դարձեր են, ես ատկե լուր չունիմ: Գիտցածս ան է, որ բանաձևին ճշդությունը կասկածի տակ առնել կարելի չէ: Մենք հոս կասկածելու ոչ մեկ հիմք ունինք»[3]:

Պատգամավորներ Տաճատը, Վահագն Տաթևյանը և Թովմաս Ջելալյանը «Նախագծի» դեմ կուսակցության ներսում առաջացած ընդդիմության գլխավոր պատճառներից մեկը համարեցին այն, որ Հ.Յ.Դ. բյուրոները և խորհուրդը

[1] **«Հայրենիք»**, N 7 (377), հուլիս, 1957, էջ 50-51:
[2] Նույն տեղում, էջ 51:
[3] Նույն տեղում:

չեն ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, լայն պրոպագանդա չեն արել «Նախագծի» բովանդակությունը՝ նրանում բարձրացրած հարցերը հասցնելու կուսակցական լայն զանգվածներին, իսկ կուսակցությունից դուրս՝ նաև ժողովրդին: Այս քննադատությունը տեղին համարեցին ոչ միայն հականախագծականները, այլև «Նախագծի» կողմնակիցները. «Նախագծի» պրոպագանդման ուղղությամբ կատարված աշխատանքը համարվեց թերի, բայց ոչ որպես պատճառ խորհրդի ձեռնարկը անօրինական համարելու համար:

Մոտավորապես նման բովանդակությամբ ելույթ ունեցավ Արշակ Վռամյանը: «Խորհուրդը, - ասաց նա, - իրավասու չէր նոր քաղաքականություն սկսելու: Այս է էականը»[1]: Առավել ևս հիմա սխալ է պնդել, շարունակեց նա, թե «Նախագիծը» իրավական փաստաթուղթ է, որքանով որ դրան կողմ են քվեարկել 21 կ.կոմիտեներ: «Այդ մարմինների դիմաց կանգնած է ազատ մասսա, որ ոչինչ չգիտե այդ մասին և չի էլ ուզում լսել ... Որ խորհուրդը անցել է իր իրավունքների սահմաններից՝ անվիճելի է ինձ համար»[2]: «Նախագծի» հրատարակումը սխալ ու անօրինական համարելով՝ Ա. Վռամյանը, այնուամենայնիվ, ժամանակավրեպ և անօգուտ համարեց չորրորդ ընդհանուր ժողովում հարցի չափից ավելի սրումը: «Իրողությունը արդեն կատարուած է, «Նախագիծը»՝ հրատարակուած. այլևս չխոսենք այդ մասին, այլ հաշտուենք Ռոստոմի ասածի հետ, որ դաշնակցությունը, կեանքից բխած մի կուսակցություն լինելով, անկարող էր նախագիծը չհրատարակել, քանի որ կեանքն է այդպես պահանջել»: Ելնելով դրանից՝ նա կոչ արեց այլևս ժողովում «Նախագծին» վերաբերող իրավական հարցեր չբարձրացնել: «Թողնենք այդ բոլորը, սեղմենք մեր շարքերը, համերաշխ լինենք մեր առաջ դրուած ստեղծագործական հարցերին: Մեր թշնամիների ուրախութեան համար մի փոքրիկ առիթ անգամ չտանք, որոնք աչքերը տնկած ընդհանուր ժողովի վրա, սպասում են երկպառակութեան ձայներին»:

Հավանաբար, «Նախագծի» հրատարակման իրավասության վերաբերյալ վիճաբանությունները դեռ երկար շարունակվեին, եթե Համո Օհանջանյանը վճռականորեն չբողոքեր հականախագծականների՝ ըստ էության ոչ կառուցողական ելույթների դեմ: Նա կոչ արեց չընկնել բառերի հետևից և չհավանությունների գրկում չխեղդել կենդանի գործը: Նրան անմիջապես արձագանքեց Ռոստոմը, ասելով. «Հռոմեական մի զորավարի որդին, առանց հոր գիտութեան, ինքնագլուխ կերպով, մենամարտի է հրավիրում թշնամի բանակի զորավարին և սպանում: Չնայելով, որ փայլուն յաղթանակ է տանում, զորավար հայրն, այնուամենայնիվ, մահուան է դատապարտում որդուն, որովհետև սա խախտել էր զինուորական դիսցիպլինան: Մենք, սակայն, հին հռոմեական օրերում չենք ապրում, որպեսզի պատժենք խորհուրդը: Չէ կարելի մեղադրեա-

[1] **«Հայրենիք»**, N 5 (375), մայիս, 1957, էջ 40:
[2] Նույն տեղում:

լի աթոռի վրայ նստեցնել ամբողջ ռայոնական ժողովը (Կովկասի :- Հ.Ս.)»:

Այնուհետև Համոյի առաջարկի պաշտպանությամբ հանդես եկան Մաշուրյանը («Մենք չենք կարող մեր գործունեությունը հիմնել բացառապես կետերի վրա, միայն «զակոններով» ղեկավարուել: Այս դեպքում մենք ինչո՞վ ենք զանազանուելու բյուրոկրատիայից: Մի գործ կատարելով՝ մենք չպետք է կանգնենք ու քննադատենք, թե արդեոք օրենքների վրա՞յ ենք հիմնուել թե ոչ: Ես ուղղակի թյուրիմացություն եմ համարում ընկ. Մալումեանի դրած հարցը՝ «Նախագծի» հրատարակութեան իրավասութեան մասին ... «Նախագիծը» կեանքի անհրաժեշտ պահանջ է եղել և ուրիշ ոչինչ»), Շահխաթունյանը («Խորհուրդը» իրավունք է ունեցել՝ ամեն տեսակ եզրակացություն դուրս բերել»):

Միանգամայն անսպասելի էր Սեպուհի ելույթը, որը մինչ այդ ամենաթունդ հականախագծականներից էր. «Մի բոպե ընդունենք, - ասաց նա, - որ խորհուրդն իրավասու չի եղել, բայց թե կովկասեան իրականությունը ստիպել է նրան «Նախագիծը» հրատարակելու: Թողնենք, սակայն, բոլոր այս վիճաբանությունները. ժողովուրդը մեզ սպասում է դրսում, թե ի՞նչ կ'ասե դաշնակցութեան ընդհանուր ժողովը: Զվախենանք ոչ Միհրանական շարժումից, ոչ մյուս հակառակորդներից: Միաձայն ընդունենք «Նախագիծը», և մեր բոլոր թշնամիները կը լռեն...»[1]:

Սեպուհի ելույթը ժողովն ընդունեց ծափահարություններով: Ավելին, ելույթը փոխեց մթնոլորտը, հականախագծականներին տրամադրեց հրաժարվել կոշտ դիրքից և համերաշխաբար հրապարակ բերել բոլորի (կամ, համենայն դեպս, մեծամասնության) համար ընդունելի մի որոշման նախագիծ:

Ամփոփելով խորհրդի իրավասության մասին վիճաբանությունները՝ հարցի մասին զեկուցած Խ. Մալումյանը ողջունեց այն ընկերներին, որոնք կարծիք հայտնեցին, թե սխալ է հեղափոխականների գործունեությունը կաշկանդել օրինականության մեռած տառերով, մանավանդ, եթե նկատի է առնվում, որ «մեր կազմակերպությունը ոստիկանական հաստատություն չէ»: Միաժամանակ նա նշեց, որ դա բնավ չի նշանակում, թե կարելի է անուշադրության թողնել «Նախագծի» հրատարակման գործում իրավասության հարցը, քանի որ «մենք ունենք կանոններ մեր ձեռքով իսկ մշակուած, որոնցով մենք պարտավոր ենք ղեկավարուել՝ մեկ ընդհանուր ժողովից մինչև յաջորդը»:

Ողջունելով Սեպուհի ելույթը՝ այնուհետև Մալումյանն ասում է. «Ի վերջոյ ես միանում եմ Սեպուհի առաջարկին և ցանկություն յայտնում, որ ժողովը իր միաբերան վստահությունը տայ «Նախագծի» հրատարակմանը. ներկայ դեպքում միաձայնությունը ցանկալի է ո՛չ այն պատճառով, որ ընդհանրապես միաձայն որոշումը լավ բան է, այլ որովհետև հարկավոր է ուժգին կերպով

* Նկատի ունի կուսակցության շարքերը:
[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 158:

վերջ տալ «Նախագծի» դեմ ուղղված խուլիգանական շարժմանը*, որին մասնակցում են նաև ոչ խուլիգանական տարրերը: Եվ որպեսզի դադարեն բողոքները կազմակերպութեան դեմ, ժողովը պետք է միաձայն հավանություն տայ խորհրդի որոշման»[1]:

Խորհրդի կողմից «Նախագծի» հրատարակման իրավասության մասին վիճաբանությունները վերջանում են: Բանաձևերի նախագծեր են առաջարկում Զարդարյանը, Թոփչյանը, Մալումյանը, Տաճատը, Ջելալյանը, ինչպես նաև միասնաբար՝ մի խումբ ընկերներ:

62-րդ նիստում (ապրիլի 2-ի առավոտյան) քվեարկության են նախապատրաստվում այդ նախագծերը, սակայն հիմք է ընդունվում միայն Ռուբեն Զարդարյանի նախագիծը, որը, լրացումներից հետո, հետևյալ տեսքն է ընդունում.

«Ընդհանուր ժողովը, լսելով ընկ. Մալումյանի զեկուցումը «Խորհրդի իրավասութեան մասին «Նախագծի» հրատարակման գործում» և այս առթիվ տեղի ունեցած կարծիքների փոխանակություններն ու վիճաբանությունները, հասավ հետևյալ եզրակացութեան.

Խորհուրդը, հիմնուելով դաշնակցութեան հիմնական ծրագրի, Գ. ընդհանուր ժողովի կողմե կովկասեան գործունեութեան մասին տրուած որոշումների ոգիին, կովկասեան չրջանային** ժողովի այս առթիվ տուած որոշումներուն, ինչպես նաև կեանքի հրամայողական պահանջներուն վրայ, պարտավոր էր հրատարակելու «Կովկասեան նախագիծը»՝ իբրև ուղեցոյց կովկասահայ կեանքի քաղաքական և տնտեսական գործունեութեան, վերապահելով անոր վերջնական հաստատությունը ներկայ ընդհանուր ժողովին»:

Բանաձևի այս նախագիծը 71-րդ նիստում (ապրիլի 7) դրվում է քվեարկության և, բացի Սեբաստացի Մուրատից, բոլորը տալիս են իրենց համաձայնությունը:

Այնուհետև ընդհանուր ժողովն անցնում է «Կովկասյան նախագծի» քննությանը ըստ էության:

ՍՈՑԻԱԼԻԶՄԸ՝ ՓՈՐՁԱՔԱՐ

«Նախագծի» քննության հենց սկզբից պատգամավորների առջև կանգնեց **Հ.Յ.Դ. սոցիալիստական գործունեության հարցը:**

Քննարկումն, ըստ էության, ամենից առաջ ներառում էր կուսակցության կողմից սոցիալիստական գաղափարախոսության պաշտոնական որդեգրման և նրա սոցիալիստական գործունեության նպատակները: Այդ խնդիրների քննարկմանն էին նվիրված ընդհանուր ժողովի 62-67-րդ նիստերը (ապրիլի 2-5-ը):

* Նկատի ունի Միհրանական շարժումը:
[1] «Նյութեր...», հատ. Գ, էջ 161, 190:
** Պետք է լինի՝ ռայոնական:

Արտահայտվեցին գրեթե բոլոր պատգամավորները, ոմանք՝ մի քանի անգամ[1]:

Հականախագծակաների համոզմունքն այն էր, որ Կովկասում և՛ ազգային, և՛ սոցիալական հողի վրա Հ.Յ.դաշնակցության միաժամանակյա գործունեությունը պատճառ կդառնա կովկասահայության ուժերի ցրման ու բաժանման: Ըստ որում, նրանք հենվում էին հետևյալ պատճառաբանությունների վրա. ա) Թուրքահայոց դատի լուծման համար պայքարող Դաշնակցությունը, միաժամանակ Կովկասում իր վրա վերցնելով սոցիալական ազատագրության կոչվը, բնականաբար, պարտավորված է լինելու անպայման մասնակցել այստեղի մյուս բոլոր սոցիալիստական կուսակցությունների գործունեությանը, այսինքն՝ ստիպված է լինելու ավելի շատ զբաղվել սոցիալական, քան ազգային խնդիրներով, որի հետևանքով անխուսափելիորեն չեղվելու է Թուրքահայոց ազատագրության իր անմիջական նպատակից, բ) Եթե կովկասահայը սկսի առաջնորդվել յուր սոցիալական, այսինքն՝ անհատական տնտեսական շահերով, ապա նա, անշուշտ, մոռացության կտա կամ լավագույն դեպքում երկրորդական խնդիր կհամարի տաճկահայ դատը: Դրա ապացույցը այն հայերն են, որոնք հանգիստ ու նյութապես բավարարված ապրելով հասարակապետական ազատ կարգեր ունեցող երկրներում՝ բոլորովին մոռացել են իրենց ազգը, ձուլվել տեղի ազգերի հետ և, կարելի է ասել, այլևս կորած են հայության համար, գ) Տաճկահայաստանում ազգային, միաժամանակ Կովկասում սոցիալիստական հողի վրա գործելով՝ դաշնակցությունը ստիպված կլինի դրամական ահագին ծախսեր կատարել սոցիալիզմի գաղափարների տարածման և դրանց իրականացման համար մղվող պայքարի վրա, որի հետևանքով տաճկահայ դատը տնտեսապես նույնպես պիտի տուժի, հետևապես պիտի տուժի նաև ազգային ինքնապաշտպանության գործը, դ) Քանի դեռ տաճկահայ դատին լուծում չի տրված, նման պայմաններում Կովկասում կամ այլուր հայության մեջ սոցիալիստական գործունեություն ձեռնարկելը մեծապես կվնասեր ազգի մեծամասնությունը կազմող տաճկահայությանը ամենից ավելի հետաքրքրող խնդիրներին, այն է՝ ազգի ինքնապաշտպանության գործին և ազգային դատին:

Հականախագծական Սեբաստացի Մուրատը իր ելույթում դաշնակցության համար ուղղակի կործանարար էր համարում սոցիալիստական գաղափարախոսության և գործելակերպի որդեգրումը: Կովկասահայ բուրժուազիայի և նրա պաշտպան ցարական ինքնակալության դեմ պայքարը նա համարում էր վաղաժամ, անթույլատրելի: «Մենք չենք կարող միաժամանակ կռվել թե կառավարության և թե բուրժուաների դեմ Կովկասում, – ասում էր նա և ավելացնում: – Երբ պետական ետադեմ ռեժիմը կը տապալենք, յետո կը կռուենք բուրժուազիայի դեմ», իսկ այժմ մնանք հանգիստ[2]:

[1] Տե՛ս Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, հատ. Բ, էջ 98:
[2] «Նյութեր...», հատ. Գ, էջ 171:

Հակադրվելով Համո Օհանջանյանի այն տեսակետին, ըստ որի դաշնակցությունը չպետք է լինի ազգային կուսակցություն, Մուրատը հարց է տալիս. մինչև այժմ Հ.Յ.Դ. վարած դատը ազգայի՞ն է եղել, թե ո՛չ: Նշելով, որ այն զուտ ազգային է եղել, նա շեշտում էր, որ եվրոպական դիվանագիտության առաջ «մեր հարցը դրվել է իբրև ազգային, այլ ոչ թե սոցիալիստական դատ»[1]:

Հետևողականորեն պաշտպանելով Մուրատի հարցադրումները՝ Բալկանի ներկայացուցիչ Ռուբեն Զարդարյանն ասում էր. «Կովկասն իրավունք ունի իր գործը տնօրինելու այնպես, ինչպես ինքն է ուզում: Բայց մենք այն հրամայական հարցը կը դնենք միշտ, թե ի՞նչ յարաբերութեան մեջ պետք է լինեն կովկասահայ և տաճկահայ դատերը: Այս հարցը մեզ մտահոգություն է պատճառում: Մեր դատը պետք է մնայ ոչ դասակարգային, այլ ընդհանուր ազգային: Ես չեմ կարող համաձայնել ընկ. Համոյի հետ, թե մեր շարժումը պետք է լինի միջազգային յեղափոխութեան մի ֆրակցիա»[2]:

Բալկանի կազմակերպության պատգամավոր Սարգիս Մինասյանը վճռականորեն հանդես գալով սոցիալիստական գաղափարների դեմ՝ դասակարգային պայքարի քարոզը համարում էր դաշնակցության ոգուն ու նպատակներին հակառակ բան: Քանի որ դաշնակցությունը ստեղծված է Տաճկահայաստանի համար, ասում էր նա, ուստի նա չպետք է դուրս գա տաճկահայ դատի սահմաններից և փորձի ստար կանգնել մի ուրիշ դատի կա՝ տվյալ դեպքում կովկասահայության դատին: Իսկ եթե, այնուամենայնիվ, կուսակցությունը կովկասահայության դատը համարելու է նույնքան կարևոր, որքան տաճկահայ դատը, ապա այդ դեպքում պարտավոր է իր առջև դնել միայն ազգային խնդիրներ, բայց ոչ երբեք քաղաքական, քանի որ Հ.Յ.Դ.-ն ազգային-հեղափոխական, այլ ոչ թե քաղաքական-հեղափոխական կուսակցություն է: Նա հարցնում էր. «Եթե վաղը հանկարծ ասպարեզ գա բուլղարահայերի մի դատ, այդ դեպքում դաշնակցությունը պիտի անցնի այդ շարժման գլո՞ւխ: Իսկ եթե կուսակցությունը ուզում եք համազգային դարձնել, ապա այդ դեպքում Կովկասում պարտավոր եք չմղել ոչ մի դասակարգային պայքար»[3]:

Եկեղեցական կալվածների գրավման հարցը համարելով համազգային՝ Մինասյանը ճիշտ համարեց, որ դաշնակցությունն իր վրա էր վերցրել դրա լուծման պատասխանատվությունը, բայց երբ այսօր նույն դաշնակցությունը ձգտում է ղեկավարել դասակարգային սկզբունքներով, ապա նա այլևս կորցնում է իր համազգային բնույթը: «Ո՛չ, դաշնակցությունը չպետք է ունենար կովկասահայ դատ, ի նկատի ունենալով այն հանգամանքը ևս, որ տաճկահայ դատը լուծելու տեսակետից անհրաժեշտ է Եվրոպայի միջամտությունը, մինչդեռ Եվրոպան չի խառնուի կովկասեան գործերի մեջ»[4]:

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 173:
[2] Նույն տեղում, էջ 164, 176:
[3] Նույն տեղում, էջ 155:
[4] Նույն տեղում:

Իր ելույթներից մեկում Ս. Մինասյանը մեջբերեց 1906թ. մարտին տեղի ունեցած Հ.Յ.Դ. բալկանյան շրջանային ժողովի որոշումը, որում կտրականապես մերժվել էր դաշնակցության խորհրդի «Կովկասյան նախագիծը»: Այդ ժողովի ընդունած բանաձևի մեջ ասված էր. «... ա) Խորհուրդը կը սխալի՝ կարծելով թե Կովկասի հայ-թուրքական կռիվներու պատճառները տնտեսական-դասակարգային են: Կովկասի մեջ դաշնակցությունը մղած է լոկ ազգային-քաղաքական ինքնապաշտպանության կռիվ և ո՛չ դասակարգային. ուրեմն անհիմն է դաշնակցության ծրագրին մեջ սոցիալիստական գաղափարներ և ուղղություն մտցնելու առաջարկը և վնասակար՝ թուրքահայ դատին, որ դաշնակցության միակ դատն է, բ) Դաշնակցությունը Կովկասի մեջ կռիվը շարունակելու է ազգային ինքնապաշտպանութեան հողի վրա»[1]:

Բալկանի պատգամավորն այն միտքն է ընդգծում, որ առայժմ պետք չէ, որ կուսակցությունը ուժեր տրամադրի սոցիալիստական գաղափարների տարածմանը, քանի որ այդ գաղափարները չեն համապատասխանում Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմաններին: Նա այնուհետև նշում էր, որ մինչև այժմ դաշնակցության գործունեությունը ազգային ազատագրական հունի մեջ է եղել, և դրա համար է, որ նրա դրոշակի տակ համախմբվել են անխտիր բոլորը՝ բանվոր ու դրամատեր, գյուղացի թե՛ կալվածատեր, ուսուցիչ թե՛ հոգևորական: Վերջացնելով իր խոսքը, Բալկանի պատգամավորը, այնուհետև, ասում էր, որ ժողովուրդը մինչև այժմ դաշնակցության մեջ չի ենթադրել սոցիալիզմ, այլ կուսակցության վրա նայել է որպես մի գործնական, ազգային-ազատագրության կազմակերպություն: Հենց դրա համար է, որ հազարավոր հայեր, դաշնակցությանը գերադասելով հնչակյան կուսակցությունից, մտել են նրա շարքերը, դրա համար է, որ ժողովուրդը պատվար էր կանգնած նրան: Բայց այժմ, ցավով նշում էր նա, հազարավոր դաշնակցականներ թողնում են կուսակցության շարքերը՝ չցանկանալով ծառայել սոցիալիզմի վերացական գաղափարներին:

Մի այլ ելույթում նշելով, որ դաշնակցության տարեկան հասույթը կազմում է մոտավորապես 500 000 ֆրանկ, Հ.Յ.Դ. Բալկանի կազմակերպության պատգամավորը ասում էր. «Ո՛չ մեկ պարագայի տակ համաձայն չենք, որ յանուն տաճկահայ դատին և յանուն դաշնակցութեան հավաքուած գումարները տրամադրուի Կովկասի մեջ գոյություն ունեցող գործավարական և ռուսական շարժման»:

Բալկանի մյուս ներկայացուցիչ Ռուբեն Զարդարյանը գտնում էր, որ, «Նախագծի» մեջ մտցնելով կովկասյան գործունեության պահանջը, դաշնակցության խորհուրդը դրանով իսկ չեղվել է Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովի որոշումներից և, ինքնապաշտպանողականից անցնելով հարձակողականի, մեծապես մնասել է կուսակցության հիմնական սկզբունքներին:

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 166:

Ե. Թոփչյանի այն հարցին, թե կովկասյան գործունեությունը ինչով և ինչպես է վնասելու թուրքահայ դատին, Զարդարյանը պատասխանում էր, որ տաճկահայերի կարծիքով, եթե դաշնակցությունը զուգահեռաբար գործի նաև Կովկասում, դրանով իսկ կհարվածի հայկական դատին, որը, զուտ քաղաքական կռիվ լինելուց զատ, նաև հանձնված է վեց մեծ տերությունների խնամակալությանը, մինչդեռ այժմ, երբ չեչովում է դասակարգային-տնտեսական պայքարի սկզբունքը, բնականաբար, կուսակցությունը չեղվում է իր իսկ նախընտրած ուղուց:

Սոցիալիզմի մասին տաճկահայ պատգամավորների տեսակետը ջերմորեն պաշտպանում էին մի քանի ռուսահայ պատգամավորներ, որոնց թվում էր Քարի (Ալեքսանդրապոլ) պատգամավոր Ավետիք Իսահակյանը (Հայ Գուսան): Նա պնդում էր, որ սոցիալիզմի գաղափարը խորթ է հայ ժողովրդի հոգեբանությանը, քանզի հայն իր էությամբ ինդիվիդուալիստ է, մի բան, որ հակառակ է սոցիալիզմի կոլեկտիվիստական ոգուն: Իր տեսակետը հիմնավորելու համար պատգամավորը բերում էր նաև այլ «փաստարկներ»:

Շատ տարիներ անց վերհիշելով Ավետիք Իսահակյանի ունեցած ելույթներից մեկը՝ Սիմոն Վրացյանը գրել է.

«Իսահակյանն անհաշտ հակառակորդ էր ընկերավարության: Նա մի բուռն ճառ խոսեց ընկերավարության դեմ, որը, նրա կարծիքով, մերժում է անհատի ազատությունը և ձգտում ճորտության վերածել մարդկությանը: Ընկերային բոլոր վարդապետություններից ընկերավարությունը ամենեն հետադիմականն է[1]», - պնդում էր նա:

Սոցիալիզմի դեմ անգիջում հանդես եկող պատգամավորների ելույթները ծանր մթնոլորտ էին ստեղծել կուսակցաժողովում: Դաշնակցության առջև կանգնել էր մաս-մաս լինելու և անջատվելու սպառնալիքը: Սոցիալիզմի կողմնակիցները, թվում էր, ուր որ է պիտի ընկրկեն, տեղի տան և ընդունեն իրենց պարտությունը:

Վերջիններիս հոգեկան ապրումները հարազատորեն է արտահայտել Հ.Յ.Դ. Այգեստանի պատգամավոր Ալեքսանդր Մաշուրյանը, 1907թ. փետրվարի 24-ի թվով Վիեննայից ուղարկած նամակում: Նկարագրելով ժողովի առաջին նիստերը՝ Հ.Յ.Դ. Այգեստանի (Գանձակի) կ.կոմիտեին նա գրում էր.

«Սիրելի Այգեստան,

Ինձ վրա դրել եք ծանր պարտականություն՝ լինել ձեր պատգամավորը ընդհանուր ժողովում: Առաջին իսկ րոպեից ես ինձ ճնշված եմ զգում այդ ծանր դերը ստանձնելու համար, որովհետև այդ ընդհանուր ժողովը բացառիկ պայմաններում է գալիս կանգնում մեր իրականությունը խորապես հուզող ծանր հարցերի դիմաց: Մի խոշոր կազմակերպության քայքայված, մահամերձ օրգանիզմը բժշկելու համար, այսպիսի տագնապալից պատմական մոմենտում,

[1] Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, հատ. Բ, էջ 191:

ընդհանուր ժողովի կատարելիք դերը պատմական կը դառնա, եթե նա կարողանա ըմբռնել ժամանակի ոգին, յուր բարձրության վրա կանգնի ու վճռի յուր առաջ դրված հարցերը, և ոչ թե թողնի նրանց տարերքի կամքին, ինչպես մինչև այժմ է եղել:

Սիրելի՜ք: Սկզբից հենց ես բարոյական պարտք եմ զգում պարզապես արտահայտելու իմ աննախանձելի տպավորությունները, որ ես ստացա ընդհանուր ժողովի առաջին նիստերից հետո. հենց սկզբից ես ստիպված եմ ձեզ հայտնելու այդ իմ թերատ* տպավորությունները և ասելու, որ ընդհանուր ժողովը հազիվ թե կարողանա մեզ այնքան տանջող հարցերին գոնե թեթևակի պատասխան տալ, սոցիալիզմի ոգով տոգորված պատասխան իհարկե, ապա թե ոչ, ամեն տեսակ հարցի պատասխան կարելի է որևէ կերպ տալ:

Ես պետք է ձեզ հենց սկզբից նախազգուշացնեմ, որ մի ժողով, որտեղ ահագին քանակությամբ ոչ սոցիալիստ անդամներ կան, որտեղ ծայրահեղ չովինիստի դիմաց ծայրահեղ ձախակողմյանն է նստած, այդտեղ անհնարին է լինելու հարցերի խաղաղ քննադատություն և ըմբռնում: Այդպիսի ժողովում անհնարին է չնախատեսել հավանական պայթոցներ...»:

Ապա՝

«...Այստեղ մենք այնպիսի մեծաքանակ անդամների հետ գործ ունենք, որոնք կատաղում են ամեն անգամ, երբ կովկասյան գործունեության մասին են լսում, որոնք սոցիալիզմի անունն անգամ լսել չեն ուզում, որոնք դաշնակցության իմաստը միայն տեսնում են տաճկահայկական դատի մեջ, որոնք չափազանց անհամբերությամբ տարան նույնիսկ այն միտքը, երբ խոսք էր լինում կապ ունենալ որևէ ռուս հեղափոխական մարմինների հետ, որ երբեմն ինձ թվում է, թե ես ապրում եմ 5-10 տարի այսօրվանից առաջ...: Ծանր դրություն է: Սակայն դեռ չեն եկել 7-8 ավելի հեղինակավոր ընկերներ, որոնց ազդեցությունը գոնե մի քիչ լավ լինի...»[1]:

Հականախագծականների ելույթներից հետո նախագծականների մի մասի մոտ առաջ եկան տատանումներ, որոնք աճելով կարող էին բարձրացնել մտքերի շփոթը: Ահա թե ինչու առաջարկ եղավ հարցի մասին ընդհանուր ժողովին ներկայացնել հատուկ զեկուցում: Ապրիլի 2-ի առավոտյան (62-րդ) նիստում «Նախագծի» բովանդակության մասին հանգամանալից զեկուցում կարդաց Եղիշե Թոփչյանը: Նրա զեկուցման հիմնական բովանդակությունն այն էր, որ արագ փոփոխվող իրադրությունները Հ.Յ.դաշնակցության առջև հրամայաբար դրել են Կովկասում սոցիալիստական պրոպագանդա մղելու և սոցիալիստական գործունեություն ծավալելու հրատապ խնդիրները: Ըստ որում, նա ընդգծեց, որ «Կովկասում չենք մտցրել մեր կուսակցական գործունեության մեջ ոչ մի նոր ուղղություն: Կովկասեան գործունեութեան սոցիալիստականու-

* Թերի

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 355:

թյունը եղել է բնական շարունակությունը մեր նախկին գործունեության»: Նշելով, որ «Կովկասյան նախագիծը» ուղղված է հենց այդ գլխավոր նպատակին, զեկուցողն ասում էր, թե ինքը չի կասկածում, որ ժողովն ավելի ուժգին է շեշտելու «Նախագծի» սոցիալիստական սկզբունքները:

Զեկուցման շուրջ սկսված մտքերի փոխանակությանն առաջինը հանդես գալով՝ Ռոստոմը նշեց, որ ծագման օրից սկսած՝ դաշնակցությունը եղել է աշխատավորական, սոցիալիստական կուսակցություն, և դա այնքան ակնհայտ է, որ որևէ անհրաժեշտություն չկա ժամանակ կորցնելու այդ բանն ապացուցելու համար: Նա գտնում էր, որ ընդհանուր ժողովը պետք է պատասխան տա երկու հիմնահարցերի. 1. Ազգային-հեղափոխական դաշնակցությունը իր սկզբունական ծրագրի տրամադրությունների համաձայն, Կովկասում դառնո՞ւմ է քաղաքական-հեղափոխական կուսակցություն, թե՞ ոչ, 2. Դաշնակցությունը Կովկասում պե՞տք է դասակարգային պայքար սկսի՝ դարձյալ համաձայն իր ծրագրի ոգուն, թե՞ ոչ[1]:

Հենց այս հարցերի շուրջն էլ ծավալվեցին բուռն վիճաբանություններ: Ռոստոմի ելույթից հետո հանդես եկած նախագծականները (Հ. Օհանջանյան, Ս. Զավարյան, Խ. Մալումյան, Հ. Զավրիյան, Ավ. Ահարոնյան, Արամ, Իշխան, Մաշուրյան, Բարսեղյան, Ստեփանյան և ուրիշներ) նշում էին, որ կյանքի հրամայականով ազգային-հեղափոխական դաշնակցությունն կուսակցությունն անխուսափելիորեն վերածվում է քաղաքական-հեղափոխական կազմակերպության՝ սոցիալիստական բովանդակություն ունեցող գաղափարախոսությամբ ու սոցիալիստական գործելակերպով: Դրան նպաստում էր այն, որ դաշնակցությունը նախկինում, մինչև 1903թ., նպատակադրված չլինելով Կովկասում հեղափոխական ակտիվ դեր կատարել, այնուամենայնիվ, այդտեղ կազմակերպում էր խմբեր, մղում պրոպագանդա, աշխատում էր պատրաստել մի ամբողջ սերունդ՝ գաղափարի և գործի:

Գանձակի ներկայացուցիչ Ալեքսանդր Մաշուրյանը հրապարակեց իրենց կ.կոմիտեի հրավիրած շրջանային ժողովում ընդունած բանաձևը, ուր ասվում էր. «Հ.Յ.դաշնակցությունը, լինելով սոցիալիստական կուսակցություն, պետք է հիմնվի միմիայն հայ աշխատավոր մասսաների վրա, որին պետք է պատրաստել մի կողմից հեղափոխական կռիվ մղելու ներկա միապետական կարգերի դեմ, մյուս կողմից՝ բարձրացնելու նրա գիտակցությունը ապագա սոցիալիստական կարգերի համար»[2]:

Ոչ միայն Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովի արձանագրությունների, այլև արխիվային այլ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դաշնակցության կովկասյան գործունեությունը կյանքի պահանջ էր «Նախագծից» դեռ շատ առաջ: Կովկասահայության ինքնապաշտպանության մասին

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 161:
[2] Նույն տեղում, հատ. Դ, էջ 356:

այդ ժողովի որոշումը դեռ չկար, երբ կուսակցությունը Կովկասում կռիվ էր սկսել ռուսական կառավարության դեմ՝ հայ եկեղեցու գույքը հարկադրաբար բռնագրավելու պատճառով: Իսկ այն ժամանակ դաշնակցության շարքերում ոչ մի բողոք չեղավ, թե կուսակցությունն ինչու է ստանձնել հայ եկեղեցու պաշտպանությունը: Հենց տաճկահայ դատի տեսակետից էր անհրաժեշտ, որ դաշնակցությունն սկսեր նաև կովկասյան գործունեություն: Առանց այս վերջինի կուսակցությունն, անկասկած, այն ուժը չէր ունենա, որին հասել էր: Կովկասում էր, որ դաշնակցությունը հզորացրել էր իր բանակը, խտացրել գաղափարակիցների շարքերը և պատվով անցել կռիվների բովով: Կուսակցության՝ Կովկասում ձեռք բերած ուժն ու փորձառությունը ռազմական և նյութական տեսակետից խոշոր օգուտ էին տալիս ոչ միայն կովկասահայությանը, այլև տաճկահայ դատին: Փաստ է, որ 1904 թվականից սկսած՝ կուսակցությունն ավելի շատ էր զբաղվել տաճկահայ շարժման խնդիրներով, քան՝ երբեք: Ըստ որում, Կովկասից Թուրքահայերին տրված օգնությունն իր ծավալներով անհամեմատ ավելի մեծ էր եղել, և դա՝ շնորհիվ կուսակցության կովկասյան գործունեության: Կովկասում սկսված կռիվները հրապարակ էին հանել հեղափոխական բազմաթիվ անհատներ, բարձրացրել հանրության դիմադրական ոգին: Այդ ամենից տաճկահայ դատը միայն շահ ունեցավ: Ճիշտ է, առաջներում կուսակցությունն իր դրամական եկամուտն համարյա ամբողջովին հատկացնում էր այդ դատին, բայց բանն այն է, որ այդ ամբողջը մի քանի անգամ քիչ էր՝ համեմատած եկամտի այն մասի հետ, որ հիմա է հատկացվում:

Իրենց այդ հաստատումը համոզիչ դարձնելու համար նախագծականները թվերով ու փաստերով ցույց էին տալիս, որ դաշնակցությունից ուժեր է խլել ոչ թե ցարիզմի դեմ բուն քաղաքական կռիվը, այսինքն՝ սոցիալ-դասակարգային պայքարը, այլ ինքնապաշտպանությունը Կովկասում: «Սա էր, որ զբաղեցրել է ամենքիս, - ասում էր Ռոստոմը, - բյուրոյի անդամներից սկսած մինչև Մուրատը, Սեպուհը...: Եթե Կովկասում մի վտանգ կար տաճկահայ դատի համար, դա ինքնապաշտպանության կռիվներն էին, և մենք պարտավոր էինք ճիգ թափել, որպեսզի վերջ տրուին այդ կորստաբեր կռիվներին. իսկ վերջ տուած լինելու համար մենք պետք է քաղաքական լոզունգ ունենայինք, որը կը միացներ մեզ մեր հարևանների հետ: Սա մի հրամայական պահանջ էր մեր կուսակցության համար»[1]:

Որ դաշնակցության կովկասյան գործունեությունը կյանքի անհետաձգելի պահանջ է եղել, վկայում է նաև այն, որ երրորդ ընդհանուր ժողովն ինքն էր ըմբռնել այդ պահանջի հրամայականը: Ճիշտ է, ժողովը Կովկասում կուսակցության պայքարի հիմնական տակտիկան համարել էր հայության ինքնապաշտպանության կազմակերպումը, բայց արձանագրել էր, որ դաշնակցությունն այնտեղ պետք է մասնակցի քաղաքական ցույցերին, բանվորական

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 165-167:

գործադուլներին, համերաշխություն հաստատի ուրիշ քաղաքական կուսակցությունների և առանձնապես սոցիալիստ-հեղափոխականների հետ: Այդ տարիներին դաշնակցական կազմակերպությունները քաղաքական ցույցերի էին դուրս գալիս կարմիր դրոշակներով, բողոք հայտնում բռնակալության դեմ հանուն կովկասահայության իրավունքների պաշտպանության, մասնակցում էին բանվորական գործադուլներին, որպեսզի վարձու աշխատողների շահերը պաշտպանեն ընդդեմ շահագործողների:

Այս և նման կարգի հանգամանքներն էր նկատի ունենում Նավահանգստի (Բաքումի) պատգամավոր Միքայել Հովհաննիսյանը (Վարանդյան), երբ ասում էր, որ Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովի որոշումների հիման վրա դաշնակցական կազմակերպությունները իրավասություն ունեն դիմելու հարձակողական գործողությունների: «Մի՞թե յարձակում չէ տեռորը, որ միշտ կատարել է դաշնակցությունը, [մի՞թե յարձակում չեն] գործադուլները [և] քաղաքական ցույցերը»[1], - հարց էր տալիս նա:

«Ինքնապաշտպանություն» և «հարձակում» հասկացությունների ճշտման և լուսաբանման անհրաժեշտությունը շեշտելով՝ Համո Օհանջանյանը նշում էր, որ հականախագծականները «ինքնապաշտպանություն» հասկացությունը ըմբռնում են շատ սահմանափակ իմաստով, գտնելով, որ այդ գաղափարի տակ պիտի հականալ **միայն** կռիվ կովկասյան թուրքերի դեմ: Դա համարելով նեղ ու սնանկ մոտեցում՝ նա ասում էր. «Ամեն մի յարձակում մեր դեմ, որը վտանգում է մեր իրավունքները, մեր գոյքը և ստացուածը, լինի դա թուրքերի թե կառավարութեան կողմից, առաջ է բերում ինքնապաշտպանություն»:

Պաշտպանելով Ե. Թոփչյանի հարցադրումները՝ Խաչատուր Մալումյանը նշում էր, թե եթե մի կողմ թողնվեն հականախագծականների կողմնակի մանր առարկությունները, ապա նրանց առաջ քաշած էական հարցը մնում է հետևյալը. դաշնակցությունը Կովկասում գործ չպետք է ունենա, որպեսզի կարողանա ամբողջովին նվիրվել տաճկահայ դատին: Այդ հարցը պարզելով ըստ էության՝ նա ասում էր. մի պահ պատկերացնենք, թե Կովկասում դաշնակցությունը չի գործում և գոյություն չունի «Նախագիծը», այլ կա միայն հայ ժողովուրդը՝ ենթարկված ռուսական բռնակալության հալածանքներին: Կովկասահայ ժողովուրդը, որ վաղուց ի վեր տոգորված է եղել առաջադիմելու ոգով, կարո՞ղ էր մինչև վերջ տանել իր իրավունքների դեմ սիստեմատիկ գործադրվող բռնությունները, որոնք օրեցօր սաստկանալով՝ Ալեքսանդր Երկրորդի մահից հետո վերածվեցին մի ամբողջ հայաջինջ քաղաքականության: Այս դեպքում եթե ժողովուրդը չըմբոստանար այդ քաղաքականության դեմ, նման կլիներ մի քուրդ ցեղի, անզգա մի զանգվածի: Ապա դիմելով ժողովի տաճկահայ պատգամավորներին՝ Մալումյանը կոչ էր անում ըմբռնել կովկասահայության կուլտուրական ձգտումներին հարվածող ցարական բռնակալ ռեժիմի դեմ Հ.Յ.Դ. կովկասյան գործունեության անհրաժեշտությունը և հաշտվել դրա հետ: Բարոյական չէ կովկասահայերին ասել, թե մի դիմեք ակտիվ քայլերի՝ հանուն տաճկահայ դատի: Մի՞թե կարելի է նրանց ասել, թե դուք իրավունք չունեք ձեր ուժերի և միջոցների որոշ մասը գործածել ձեր կարիքների համար, այլ պարտավոր եք դրանք ամբողջովին տաճկահայ շարժման տրամադրության տակ դնել: Այդպիսի առաջարկությունները Մալումյանը համարում էր ապացույց խակ ու անտրամաբանական մտածողության:

Պատասխանելով նրանց, ովքեր ասում էին, թե վերջին շրջանում Հ.Յ.Դ. շատ կազմակերպությունների կազմալուծման հետևանքով հազարավոր դաշնակցականներ հեռացել են կուսակցությունից, և, որ դրա հիմնական պատճառը եղել է սոցիալիզմի պրոպագանդան, նախագծականները նշում էին, որ, ճիշտ է, մի քանի վայրերում, ինչպես օրինակ՝ Ջրաբերդում, Քարում, Մրգաստանում, Ապառաժում և այլուր, Հ.Յ.Դ. կազմակերպություններից մի քանիսը կազմալուծվել են, բայց դա պետք է դիտել ոչ թե որպես պարտություն, այլ՝ հաղթանակ, քանի որ հեռացողների փոխարեն կուսակցության շուրջն են համախմբվել ավելի մաքուր հեղափոխական տարրեր, որի շնորհիվ կազմակերպության ուժերն ավելի են ամրացել՝ և՛ բարոյական, և՛ թվական տեսակետից: Կար նաև ուրիշ՝ կուսակցության շարքերի բացարձակ թվական աճի երևույթը, որի շնորհիվ, ասենք, Թիֆլիսում միայն դաշնակցական բանվորների թիվը 1906թ. կազմում էր 7-8 հազար, մինչդեռ երկու տարի առաջ (1904թ.) այդ քաղաքում բոլոր Հ.Յ.Դ. անդամների թիվը հազիվ հասնում էր 2 հազարի: Դրա հիմնական պատճառն այն էր, որ դաշնակցությունն այն ժամանակ զբաղված էր միայն տաճկահայ խնդրով, բայց երբ սկսեց Կովկասում զբաղվել քաղաքական, սոցիալիստական գործունեությամբ, կազմակերպության շարքերը կտրուկ աճեցին, որը նրան հնարավորություն տվեց ձեռնարկելու ավելի լայնածավալ գործեր: Ընդհանուր եզրակացությունն այն էր, որ Կովկասում սոցիալիզմի քարոզը միայն ամրապնդել է Հ.Յ.Դ.-ն:

Ինչպես վերևում նշեցինք, սոցիալիզմի մասին չափավոր հայացքների տեր նախագծականների տեսակետները հաճախ հանդիպում էին ծայրահեղ ձախ երիտասարդ նախագծական Արշակ Ջամալյանի և, հատկապես, Ավետիք Շահխաթունյանի անհամաձայնություններին և հակաելույթներին:

Ռոստոմի մահվան (1919թ. հունվար) տասնամյակի առթիվ (1929թ. հունվար) Արշակ Ջամալյանը հրատարակել էր մի հետաքրքրական հուշ՝ այն դերի առնչությամբ, որ կուսակցության ականավոր առաջնորդը կատարել էր Վիեննայի ժողովում:

Ասելուց հետո, որ ինքը, Շահխաթունյանը, և երկու մյուս նշված երիտասարդ պատգամավորները, չորս հոգով, կազմել էին «անջատական» հոսանքը համաժողովում, Ջամալյանը շարունակում է.

«Մեր նպատակն էր անջատել իրարից թիւքահայ և ռուսահայ դատերը,

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 158:

որոնցից առաջինի գլուխը պէտք է կանգնէր հին, «ազգային դաշնակցութիւնը», իսկ երկրորդի համար ստեղծելու էր մի «Նոր դաշնակցութիւն», զուտ ընկերվարական ծրագրով»[1]:

Եթե Կովկասում, դաշնակցականների շրջանում, անձնականները, որոնք ճնշող մեծամասնությամբ երիտասարդներ էին, բավական թիվ էին կազմում, ապա Վիեննայի ժողովում նրանք կազմեցին չնչին փոքրամասնություն:

Այդ բանը շատ էր վշտացրել և հավասարակշռությունից հանել ծայրագույն ձախ Շահխաթունյանին:

Իր հուշերում Վ. Վալադյանը պատմում է, որ նիստերից մեկում Շահխաթունյանը, ինչ-որ մի ելույթից գրգռված, բողոքում է, թե ժողովում խտրական վերաբերմունք է նկատվում այն պատգամավորների հանդեպ, որոնք սոցիալիզմի կողմնակիցներ են: Ուստի ջղային շարժումներով պահանջում է, որ նախագահությունը նույնքան խիստ լինի նաև մյուս կողմի, այսինքն՝ հակասոցիալիստների նկատմամբ:

Այդ առթիվ ձայն վերցնելով՝ Ռոստոմն ասում է. «Շահխաթունին պահանջում է, որ մենք խիստ լինենք ոչ սոցիալիստ ընկերների վերաբերմամբ ևս: Ես ոչ մի բարոյական իրավունք չունեմ տասնուհինգ տարի շարունակ միայն տաճկահայ դատի համար գործած եւ նրանով միայն ոգևորուած ընկերներից պահանջելու, որ անպայման հարեն սոցիալիզմին: Ես կ'աշխատեմ համոզել նրանց, բայց այս կամ այն ճնշումը գործ չեմ դնի նրանց վրայ: Եվ ինչպե՞ս կարող են նրանք ըմբռնել մեր ծրագրային հիմունքները, քանի որ դրանք բացատրութիւնների չեն ենթարկվել մեր կողմից: Ի՞նչ բարոյական իրավունքով մենք պէտք է ստիպենք, օրինակ, Գէորգ Զաուշին, որ նա սոցիալիստ դառնա, երբ մենք նախապէս որևիցե գաղափար չենք տվել նրան սոցիալիզմի մասին: Յետո, ենթադրենք նույնիսկ, որ Գէորգ Զաուշն ու մեր միւս ռազմիկները գիտակցության են եկել, ունեն զանազան ֆորմուլաներ: Բայց մի՞թէ դրանով կփոխուի նրանց նախկին գործելակերպը ... Ոչ, չի փոխվի ամենևին»[2]:

Կրկին նույն հարցին անդրադառնալով՝ մեկ այլ նիստում Ռոստոմը նշել էր, որ եթե դաշնակցական մարտիկը հեռու է սոցիալիզմի գաղափարից, ապա դրա մեղքը նրանցն է, ովքեր պարտական էին նրան բերել դեպի սոցիալիզմ: «Դաշնակցությունը, - ընդգծում էր նա, - աշխատավորական դատի կողմնակից մի կուսակցություն է եղել: Իսկ եթե այդ ուղղությամբ գործնական ոչինչ չի արված, այստեղ ոչ կազմակերպությունն է մեղավոր, ոչ էլ նրա ծրագիրը»[3]:

Նույն ելույթում անդրադառնալով Ջելալյանի այն պնդմանը, թե դաշնակցությունը տաճկահայերի սեփականությունն է, և որ կովկասահայերը իրավունք չունեն ոտնձգություն կատարելու այդ սեփականության նկատմամբ՝

[1] «Դրոշակ», N 1-2 (284-285), 1929, էջ 16:
[2] «Հայրենիք», N 6 (376), հունիս, 1957, էջ 52:
[3] Նույն տեղում:

Ռոստոմը բողոքում էր, ասելով, որ զուտ կուսակցական խնդիրներ քննարկելու ժամանակ անընդունելի է «տաճկահայ» և «կովկասահայ» բառերի գործածությունը, մի բան, որ կարող է խորթություն առաջ բերել կազմակերպության ներսում:

Հիրավի, դաշնակցության ընտանիքում չկար տաճկահայ և կովկասահայ, այլ կար դաշնակցական: Գաղտնիք չէր, որ կային կովկասահայեր, որոնք ավելի ջերմորեն էին նվիրված տաճկահայ դատին, քան տաճկահայերն իրենք իսկ, և հակառակը:

Դաշնակցության նշանավոր գործիչներից մեկը՝ տաճկահայ Հարություն Շահրիկյանը (Նիթրա), որն ապրում և գործում էր Բաքվում, թղթին էր հանձնել տվյալ շրջափուլում կուսակցության առջև ծառացած հրատապ խնդիրների մասին իր մտածումները և, «Ծրագրային քննադատություններ» վերտառությամբ, 1907թ. հունվարի 10-ի թվով ուղարկել էր Վիեննա՝ ընդհանուր ժողովին:

Ժողովի նիստերից մեկում ընթերցվեց Շահրիկյանի նամակը, որն առաջ բերեց հականախագծականների բուռն դժգոհությունը և, բնականաբար, արժանացավ նախագծականների ջերմ հավանությանը:

Հարություն Շահրիկյանը տագնապ էր հայտնում, որ եթե «Կովկասյան նախագծի» հակառակորդներին հաջողվի ընդհանուր ժողովում իրենց կողմը քաշել մինչև այժմ փաստաթուղթը պաշտպանող պատգամավորներին, ապա, մեծամասնություն կազմելով, կարող են ընդունել իրենց համար ձեռնտու որոշում և ջնջել դաշնակցության կովկասյան գործունեությունը: Դա, գրում էր նա, «կլինի մի խոշոր պատմական սխալ, մի մեծ ոճիր թե՛ տաճկահայ և թե՛ կովկասահայ, ավելի ճիշտ՝ տառապող ու տանջվող հայ ժողովրդի դեմ և մահվան վճիռ դաշնակցության գոյության: Ահա այդ ոճիրը գործելուց պետք է զգուշանալ»[1]:

Նամակի հեղինակը գրում էր, որ սխալ է այնպես կարծել, թե տաճկահայ բոլոր զինյալները և մտավորականները հակառակորդ են սոցիալիզմին: Համենայն դեպս, **կովկասաբնակ** տաճկահայ զինյալներից շատերը և մտավորականության մեծագույն մասը, տևական ժամանակ ապրելով ռուսահայ միջավայրում, խորին համոզմունք էր ձեռք բերել, որ՝ 1. Թուրք և վրացի շովինիստ տարրերով շրջապատված 1 200 հազար կովկասյան հայության քաղաքական և տնտեսական դրությունը նույնքան պիտի լինի դաշնակցության հոգածության առարկան, որքան և տաճկահայության, 2. Հայության երկու հատվածների միջև տարբերություն դնելն ինքնըստինքյան մեծ հարված է ազգային ինքնագիտակցության հետագա զարգացմանը և արգելք՝ փոխադարձ աջակցության գաղափարին, 3. Թուրք-հայկական ընդհարումները, դրանց քաղաքական դրդապատճառները և ընդհարումների ընթացքում դեպի հայկական

[1] «Հայրենիք», N 11 (191), սեպտեմբեր,1938, էջ 101:

մարտիրոսագրությունը վրացիների ցույց տված տմարդի վերաբերմունքն ապացույց են այն բանի, որ կովկասահայության գոյությունը նույնքան վտանգված է, որքան տաճկահայության, 4. Սոցիալիստական սկզբունքներով ղեկավարվելը տեսականորեն թե գործնականորեն մի անհրաժեշտություն է դաշնակցության համար՝ բխած ոչ միայն կուսակցության առաջին ծրագրից, այլև հենց նրա գաղափարական-հեղափոխական ըմբռնումից և իրական կյանքից:

Արձանագրելով այս իրողությունները՝ Շահրիկյանն ընդհանուր ժողովի պատգամավորներին առաջադրում էր երկու հարց. ա) Դաշնակցական հայդուկը մինչև այժմ հանուն ո՞ր իդեալի է կռվել սուլթանական բռնակալության դեմ և այսուհետև նույնպես հանուն ո՞ր իդեալի պիտի կռվի, բ) Ապագա ինչպիսի՞ սոցիալիստական վերանորոգման պիտի նվիրվեն հայ գեղջուկն ու բանվորը: Նամակագիրը ուզում էր նաև պարզ պատասխան իմանալ՝ արդյո՞ք նրա համար, որ թուրք ու քուրդ բռնավորների և բյուրոկրատների տեղը պիտի բռնեն հայ բռնավորը և հայ բյուրոկրատիան. Նրա համա՞ր, որ իր քրտնաթոր աշխատանքով հայ աշխատավորն ավելի պարարտացնի հայ վաճառականին, կապիտալիստին ու վաշխառուին. Նրա համա՞ր, որ դարեր ի վեր նրա արյունքրտինքով շաղախված հողին տեր դառնան բեկը, շեյխը, աղան և հազար ու մի տզրուկներ. Նրա համա՞ր, որ ուժեղը իր վայելքները բազմապատկելու համար խժռի թույլին՝ դրանով իսկ հավերժացնելով գազանային սկզբունքը. Նրա համա՞ր, որ սոցիալական անհավասարությունների հետ շարունակվի նաև ազգերի անհավասարությունը և նվիրագործվեն տիրապետողների բոլոր առանձնաշնորհումները:

«Ո՛չ, երբե՛ք, - իր գրության մեջ շեշտում էր Շահրիկյանը: - Ոչ մի հայ հայդուկ իր կյանքը չի զոհի, իր կյանքով չի պաշտպանի այդպիսի դատ: Ուրեմն, կեղեքվող ու տանջվող հայ ժողովուրդին, հայ աշխատավորին տվեք գիտակցություն: Ասացեք այդ աշխատավորին, թե հանուն ո՞ր իդեալի, հանուն ո՞ր սկզբունքների պիտի բոլորվի Հ.Յ.դաշնակցության շուրջը: Եվ եթե այդ իդեալը, այդ սկզբունքն անվիճելի է, որ հենց ինքը սոցիալիզմն է, եթե դուք կդադարեք Կովկասի տանջվող ու կեղեքվող հայ աշխատավորի կյանքով զբաղվելուց, եթե նրա ցավերն ու վիճակը ձեր ցավն ու վիճակը չեք համարի, հանուն ո՞ր սկզբունքի և իդեալի պիտի պահանջեք, որ նա (Կովկասի հայ աշխատավորը: - Հ.Ս.) տաճկահայի ցավերով ու վիճակով զբաղվի ու զոհվի: Եթե դաշնակցությունը հրաժարվի կովկասյան գործունեությունից, զբաղվի միայն տաճկահայ դատով, ապա նրա գոյությունը Կովկասում կլինի մի ֆիկցիա, նա այլևս չի ունենա իր հետևից գնացող զանգվածներ և անխուսափելիորեն կարժանանա առանց զոռքի զորապետի բախտին»[1]:

Շահրիկյանը շեշտում էր, որ ոչ միայն «սոցիալիստ» կովկասահայն է օգնության հասնում «հակասոցիալիստ» տաճկահային, այլև՝ վերջինս առաջինին: Երբ թուրք-հայկական ընդհարումների ժամանակ, Կովկասի հայության գոյությունը ծայրահեղ վտանգված էր, տաճկահայ հայդուկն անձնազոհության գերազանց ապացույցը տվեց՝ աներեր կանգնելով կովկասահայ եղբայրների կողքին: Եվ մի՞թե դա կովկասահայ գործունեություն չէր:

Իր մտահոգություններն արտահայտելուց հետո նամակագիրն ընդհանուր ժողովի պատգամավորներին խորհուրդ էր տալիս.

«...Մեր նվիրական պարտականությունն է մնալ այն, ինչ որ էինք, այսինքն՝ ազգային-սոցիալիստական կուսակցություն, այլ ոչ թե Տաճկահայաստանի կամ կովկասյան կուսակցություն, ուստի և իբրև այդպիսին՝ սահմանի այս կողմը և այն կողմը գտնվող հայկական երկու խոշոր հատվածների քաղաքական ու տնտեսական ազատագրությանը նվիրված, միայն թե վերանորոգված, ամրապնդված, տեսականապես ու գործնականապես ավելի բարձր կանգնած, քան որևէ այլ կուսակցություն: ... Ով ոճրագործ ձեռք ու սիրտ ունի՝ թո՛ղ քանդի այդ մեծությունը»[1]:

Իսկ եթե, այնուամենայնիվ, ժողովը կայացնի կուսակցությունն անդամահատող որոշու՞մ: Դրա պատասխանը Շահրիկյանի համար մեկն էր. «Այդ դեպքում ինձ նման մտածողներին մնում է միայն մի ճանապարհ՝ հեռանալ և համախմբվել այն ընկերների հետ, որոնք սահմաններ չեն ճանաչում ազգի երկու հատվածների միջև»[2]:

ԱՐԴՅՈ՞Ք «ՆԱԽԱԳԻԾԸ» ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԾՐԱԳՐԻՆ

«Նախագծի» քննարկման ընթացքում ծագեց կասկածներ հարուցող հարցերից մի ուրիշը. Կովկասում իր գործունեության համար **հիմք ընդունելով սոցիալիզմը, Հ.Յ.Դ.-ն դրանով իսկ կհակադրվի՞ իր գործող ծրագրին, թե՞ ոչ:**

«Կովկասյան նախագծի» հակառակորդները նախագծականներին մեղադրում էին, որ ընդունելով սոցիալիստական գաղափարախոսություն և գործելակերպ, դրանով իսկ նրանք ոտնահարում են Հ.Յ.Դ. ծրագիրը, որտեղ ասված էր, թե կուսակցության գլխավոր նպատակը տաճկահայ դատի լուծումն է:

Անշուշտ, հականախագծականները նկատի ունեին Հ.Յ.դաշնակցության առաջին ընդհանուր ժողովում (1892թ.) ընդունված ծրագիրը, որտեղ հաստատագրված էր, որ կուսակցությունն իր հիմնական խնդիրն է համարում «ապստամբության միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական և տնտեսական անկախություն»:

Ելնելով ծրագրի վերոհիշյալ ձևակերպումից՝ Սեբաստացի Մուրատը, Արշակ Վռամյանը, Ռուբեն Զարդարյանը, Թովմաս Ջելալյանը և մյուս հականա-

[1] **«Հայրենիք»**, N 11 (191), սեպտեմբեր, 1938, էջ 101:

[1] **«Հայրենիք»**, N 11 (191), սեպտեմբեր, 1938, էջ 103:
[2] Նույն տեղում:

խագծականները շեշտում էին, որ հայ հեղափոխականների հիմնական նպատակը Տաճկահայաստանի քաղաքական ազատության ձեռքբերումն է, ուստի «դաշնակցություն» ասելով նրա անդամները հասկանում են, որ իրենք տաճկահայ դատին նվիրված մարտիկներ են: Ոչ միայն բուն Տաճկահայաստանի ու Կովկասի, այլև Եգիպտոսի, Բալկանների, Ամերիկայի և այլ երկրների դաշնակցական կազմակերպությունների գործունեությունը, Հ.Յ.Դ. ծրագրի համաձայն, միշտ ուղղված է եղել և այժմ էլ ուղղված է դեպի Տաճկահայաստան: Դաշնակցությունը տաճկահայերի սեփականությունն է, և ոչ ոք իրավունք չունի ոտնձգություն կատարելու այդ սեփականության նկատմամբ: Մյուս կողմից, ասում էին նրանք, Հ.Յ.Դ. ծրագրում ոչ մի խոսք չկա Կովկասի մասին: Եվ եթե դաշնակցության երրորդ ընդհանուր ժողովն առաջին քայլն է արել կուսակցության գործունեությունը Կովկասի վրա տարածելու ուղղությամբ, ապա դրանով իսկ դուրս է եկել իր իրավասության սահմաններից և կոպտորեն խախտել Հ.Յ.Դ. ծրագիրը: Հականախագծականները գտնում էին, որ Հ.Յ.Դ. ծրագրում սոցիալական հարցերը հաղորդում են ազգային-ազատագրության խնդիրներին (անձի կյանքի ու պատվի կատարյալ ապահովություն, գույքի պահպանման երաշխիք և այլն), այսինքն՝ ծրագիրը ելնում է այն բանից, որ երբ հայ ժողովուրդը ձեռք բերի ազգային ազատություն, դրանից հետո էլ դաշնակցությունը զենքը ցած չի դնելու, այլ շարունակելու է գործել՝ այս անգամ արդեն սոցիալական հողի վրա: Եվ ահա ծրագրի այդ պարզ ու արդարացի դրույթները և նրանց հաջորդականությունը խախտվում են «Կովկասյան նախագծով», այսինքն՝ կուսակցության գործողությունների **հաջորդականության** գաղափարը փոխարինվում է գործողությունների **միաժամանակյա** իրականացման գաղափարով, մի բան, որ, հակառակ լինելով դաշնակցության մերձավոր և հեռավոր նպատակներին, ահագին չփոթություն է առաջացնում կուսակցության անդամների մեջ, որի պատճառով Հ.Յ.Դ. ներսում անխուսափելիորեն առաջ կգան հերձվածներ, տեղի կունենա ուժերի բաժանում[1]:

Արշակ Վռամյանը հիշեցրեց, որ Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովում ինքը, իբրև պատգամավոր, բողոքել է կուսակցության գործունեությունը Կովկասի վրա տարածելու փորձերի դեմ, և իր խնդրանքով բողոքը մտցվել է արձանագրության մեջ: Բայց նույնիսկ այդ ժողովի որոշման մեջ խոսք չի եղել Կովկասում հարձակողական տակտիկա որդեգրելու մասին, խոսքը գնացել է միայն ինքնապաշտպանության մասին: Իսկ դաշնակցության խորհուրդն իր «Նախագծով» խախտել է ժողովի ընդունած տակտիկան՝ ինքնապաշտպանության պահանջը փոխարինելով մարտական հեղափոխական, հարձակողական տակտիկայով՝ դրանով իսկ խախտելով ծրագիրը: Երրորդ ընդհանուր ժողովն, ըստ էության, իր կովկասյան կազմակերպություններին միայն տեղական

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 265:

բնույթի այս կամ այն գործողություն կատարելու իրավունք էր վերապահել, այնինչ, խորհրդի կատարած քայլը ինչ-որ մասնավոր ձեռնարկ չէ, այլ մի ամբողջ քաղաքականություն:

Կովկասում ինքնապաշտպանության հարցը սրվեց նաև Սեբաստացի Մուրատի կողմից: Նա համաձայն չէր այն կարծիքին, թե Կովկասում կամ այլուր դաշնակցության ուժերն աճել են այն պատճառով, որովհետև նա սոցիալիստական ուղղություն է մտցրել իր գործունեության մեջ: Նա գտնում էր, որ «մեր խմբերը բազմացել են ինքնապաշտպանութեան շնորհիվ» և «եթե ինքնապաշտպանութեան կոմիտները չլինեին՝ դաշնակցությունը յուր սոցիալիզմով շատ էլ առաջ չէր գնայ»[1]:

Մուրատը և ընդհանրապես սոցիալիզմի գաղափարներին հակառակ նրա համախոհները սկզբունքային նույնություն ու գաղափարակցություն չէին տեսնում 1892-ի ծրագրի և 1904-ի «Նախագծի» միջև, այլ պնդում էին, թե այդ երկուսը միանգամայն տարբեր բաներ են: «Ես կը գտնեմ, - ասում էր Մուրատը, - թե դաշնակցութեան ծրագիրն ու «Նախագիծը» իրար բոլորովին չէր համապատասխաներ... Ո՞վ գիտե, մի գուցե ինքս լավ չեմ կարողացած հասկնալ ատոնց երկուքին ալ իմաստը... Բայց և այնպես, կը կրկնեմ, որ ծրագիրն ու «Նախագիծը» բոլորովին տարբեր բաներ են»[2]:

Իր այս խոսքերով Մուրատն արտահայտում էր ոչ միայն ժողովի հակասոցիալիստների տեսակետը, այլև ժողովից դուրս իր բյուր **ռազմիկ** ընկերների կարծիքը՝ լինեին դրանք տաճկահայ թե ռուսահայ:

Ռազմիկներից ամեն մեկը առավել կամ նվազ չափով Երկրում մասնակից էր եղել ֆիդայական կռիվներին կամ ճակատել կովկասյան թուրք հորդաների դեմ: Նրանք, համարյա բոլորը, որոնք հիմնականում սերված էին ժողովրդի խոնարհ խավերից, հեգնում, ծաղրում էին «սոցիալիզմ» բառը, խորշում դրանից:

Թուրքահայ և կովկասահայ խնդիրներն արծարծելիս՝ յուրաքանչյուրն իր տեսակետները հիմնավորելու համար վկայակոչում էր ազգի, ազգայինի, հայրենիքի ու հայրենասիրության գաղափարները: Այդ տեսակետից հատկապես ջանում էին այն հականախագծականները, որոնք, վկայակոչելով Հ.Յ.Դ. ծրագիրը, գտնում էին,որ Նրանում եթե հեռավոր ակնարկ էլ կա սոցիալիզմի մասին, ապա այն խամրում է փաստաթղթում տեղ գտած ազգի, ազգայինի, հայրենիքի ու հայրենասիրության գաղափարների առջև: Դա պատահական չէ, ասում էին նրանք, քանզի աշխարհում չկա մի առաջադեմ զարգացած երկիր (Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա և այլն), որտեղ սոցիալիստները սոցիալիզմի գաղափարը գերադասեն ազգի և հայրենիքի գաղափարից:

Արշակ Վռամյանն ասում էր. «Մենք ամեն օր ականատես ենք, թե ինչպե՛ս քաղաքակիրթ երկրներում ընկերավարական կուսակցությունները միշտ ան-

[1] **«Դիվան Հ.Յ.Դաշնակցութեան»**, հատ. 1, Պոսթն, 1934, էջ 100:
[2] **«Հայրենիք»**, N 5 (375), մայիս, 1957, էջ 42-43:

երկդիմի յայտարարած են, թե ամեն անգամ, երբ օտար նվաճումի մը սպառնալիքի առջև գտնուին, իրենք իրենց աշխատավոր դասակարգի կուլտուրան և հայրենիքը պաշտպանելու են իրենց արյունով: Դա առավել ևս վերաբերվում է մեզ՝ հարստահարված ժողովրդի սոցիալիստ զավակներին, ներկայացուցիչներին մի ազգի, որ անկախ հայրենիք չունի և շրջապատված է թշնամիներով: Ուստի Դաշնակցությունը պարտավոր է հայրենիքի գաղափարին կառչած մնալ՝ պատմական հողի վրա ինքնավարություն պահանջելով: Այդ տեսակետից մենք ազգային ենք և պարտավոր ենք յայտարարել [այդ մասին]: Ընկեր Համոն ալ, որ այնքան հակառակ խոսեցավ «ազգային» բառին, ստիպուած է, սակայն, ընդունելու, որ իրենց կռիվը Կովկասի մեջ զուտ ազգային եղած է՝ դպրոցներու, կալվածներու խնդիրը, գաղթականներու վերադարձի հարցը, թատրոնական և գրագիտութեան ընկերություններու կազմումը և այլն:

... Մեր մշակած թեորիաները հարկավոր է զգուշութեամբ մոտեցնել ժողովրդին: Մենք իրականությունը պետք է աչքի առաջ ունենանք միշտ, և ոչ իբրև աղանդավոր երևանք»[1]:

Վիճաբանությունների ընթացքում նախագծական պատգամավորներից ոմանք կուսակցության ծրագրի մեջ ազգայինի և սոցիալիստականի փոխհարաբերությունների հարցում համերաշխ էին հականախագծականների հետ:

Այսպես, Լեռնապարի պատգամավոր Իշխանը (Նիկոլ Պողոսյան) ասում էր, որ, թեև Հ.Յ.Դ. ծրագրի մեջ կան սոցիալիստական երանգներ, բայց Տաճկահայաստանում կուսակցությունը պրոպագանդա է տարել զուտ ազգային բովանդակությամբ, իսկ Կովկասում եղել է միայն օժանդակող մարմին: Դաշնակցությունը այնքան հեռու է եղել սոցիալիզմից, որ հնչակյանների հետ վիճելիս դաշնակցականները նրանց մեղադրում էին, թե նրանք ցանկանում են գործել սոցիալիզմի սկզբունքներով[2]:

Հատկանշական է, որ Հ.Յ.Դ. ծրագրի (1892թ.) գնահատման, հատկապես նրանում «սոցիալիզմի հետք անգամ չլինելու» մասին հաստատումների հարցում համարյա նույնանում էին հետևողական նախագծական թուրքահայ պատգամավորների և սոցիալիզմի ջատագով կովկասահայ ծայրահեղ նախագծականների տեսակետները:

Ա. Շահխաթունյանը գտնում էր, որ, իր ծրագրից ելնելով, դաշնակցությունն անցյալում երբեք իրեն չի համարել քաղաքական կուսակցություն, այլ եղել է զուտ ազգային: Եվ չէր կարող լինել սոցիալիստական, քանի որ նրա շարքերում «բուրժուազիան հավասարապես տեղ է ունեցել աշխատավորների հետ միասին»[3]: Ուստի պետք չէ ջանալ ցույց տալու, թե կուսակցության ներկա գործունեության շրջանը անմիջական շարունակությունն է անցյալի հա-

[1] «Նյութեր...», հատ. Գ, էջ 177:
[2] Նույն տեղում, էջ 176:
[3] Նույն տեղում, էջ 165:

մարյա նույնանման մի շրջանի: Ռուսական հեղափոխության հախուռն զարգացման շնորհիվ է, որ դաշնակցության մեջ տեղի է ունեցել մտքերի հոլովույթ (էվոլյուցիա): Դրա առավել ցայտուն ապացույցներից մեկը նա համարում էր Ավետիս Ահարոնյանի օրինակը, որը «երկու-երեք տարի առաջ սոցիալիզմի կողմնակից չէր, իսկ այսօր հարել է նրան»[1]:

Քննադատելով Թոփչյանի այն տեսակետը, թե Հ.Յ.Դ. ծրագրի համաձայն՝ «մինչև այժմ մեր ունեցած ազգայնությունը չի հակասում սոցիալիզմին», Շահխաթունյանը դա համարում էր «բոլորովին սխալ»: «Այո, ազգայնությունը առհասարակ չի հակասում սոցիալիզմին, բայց միայն այն դեպքում, երբ այդ երկու հասկացությունները չեն զատված իրարից, այլ կազմում են մի ամբողջություն: Եվ երբ ասում ենք ազգային պահանջներ՝ կապված սոցիալիստական պահանջների հետ, հասկանալի է: Բայց երբ ազգային կռիվը [դիտում ենք առանձին], անկախ սոցիալիզմից, այդ դեպքում այդ առանձնացած ազգայնությունը հակասում է սոցիալիզմին»[2]:

Լիովին համերաշխվելով Շահխաթունյանին՝ Արշակ Ջամալյանը մերժում էր Թոփչյանի այն տեսակետը, թե Կովկասում վերջին շրջանում տարված դասակարգային գործունեության շնորհիվ դաշնակցությունը մեծապես հզորացել է, և հատկապես աճել են նրա շարքերը: Նա ասում էր, որ որևէ կուսակցության ուժն ու ազդեցությունը չի կարելի չափել նրա կազմի թվաքանակով: «Մենք այսօր ունենք շատ այնպիսի խմբեր [կուսակցության ներսում], - ասում էր նա, - որոնք մեր դավանած սոցիալիզմի մասին այն աստիճան խախուտ հասկացողություն ունեն, որ պատրաստ են գնալ ամեն մի հոլմի հետևից»[3]:

Ա. Ջամալյանը վիճարկում էր նաև Թոփչյանի այն հաստատումը, թե դաշնակցությունը ոչ միայն ըստ ծրագրի, այլև ըստ գործունեության անցյալում եղել է սոցիալիստական կուսակցություն: Հ.Յ.Դ. ծրագրի քննությունը հակառակն է ապացուցում: «Մենք մասսաներին հավատացնում ենք, թե մեր ներկա և անցյալ գործունեության միջև ոչ մի տարբերություն չկա: Բայց ուզում եմ պնդել, որ դա այդպես չէ. անցյալում մենք չենք եղել ո՛չ սոցիալիստ, ո՛չ էլ նույնիսկ հեղափոխական: Փաստերը շատ են պերճախոս»: Իր տեսակետը հիմնավորելու համար նա բերում էր մի քանի փաստեր: Օրինակ՝ նշում էր, որ դաշնակցական մի քանի ընկերներ 1902-ին առաջարկում էին ակտիվ գործունեություն սկսել Կովկասում, բայց կորուկ մերժում էին ստանում կուսակցության ղեկավարությունից: Ինչ վերաբերում է եկեղեցական կալվածների գրավման հետևանքով 1903 թվականին ծայր առած շարժումներին, ապա դրանք բնավ չեն ունեցել հեղափոխական ոգի: Եվ երբ կալվածքները վերադարձվեցին, անմիջապես կռվի ասպարեզից հետ քաշվեցին նույն այդ մասսա-

[1] «Նյութեր...», հատ. Գ, էջ 166:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 164:

ները, որոնք բողոքներ էին բարձրացրել միաժամանակ: Մեր այն հարցին, նշում էր Ջամալյանը, թե «ինչո՞ւ խոշոր հեղափոխական ձեռնարկներ չենք արել, մեզ պատասխանում են, որ արգելք են հանդիսացել հայ-թուրքական ընդհարումները [Կովկասում]: Բայց չէ՞ որ ընդհարումներից զերծ մնացած վայրերում միջոց ունեինք հեղափոխական ակտեր կատարելու: Գուրիացիներն էլ ճնշվեցին, բայց և չդադարեցրին ակտիվ գործունեությունը: Նույնը և հրեաները»:

Արշակ Ջամալյանը վճռականապես մերժում էր կուսակցության ծրագրում առկա արևմտահայ ազգային հեղափոխության մեջ կովկասահայ մանր բուրժուազիայի դերի թերագնահատումը և խոշոր բուրժուազիայի նկատմամբ «մեղմ ու քնքույշ» վերաբերմունքի դրսևորումը: Ճիշտ է, ասում էր նա, խոշոր բուրժուաները մեծ նվիրաբերումներ են արել, բայց արել են բռնության, վախի տակ, իսկ կովկասահայ մանր բուրժուաները շարժման օգտին կատարել են բացառապես կամավոր: Մենք ի՞նչ բավարար քանակություն կարող ենք ստանալ աղքատ բանվորներից, եթե դուրս գցենք մանր բուրժուաներին: Բայց հենց նույն պահին պատգամավորներից մեկը* տեղից բացականչում է. «Երևանում կատարած տարեկան մուտքի 40 հազար ռուբլուց 35 հազարը տվել են աշխատավորները»:

Ջամալյանը, սակայն, շարունակում էր պնդել իր տեսակետի վրա, ասելով, թե մանր բուրժուաներին չի կարելի դուրս նետել, որ, այո՛, փող են տալիս շարժմանը, և եթե նրանց դուրս դնենք, ապա «այդ դեպքում կը մնանք հրամանատարներ առանց բանակի»[1]: «Գալով [խոշոր] բուրժուաներին՝ կ'ասեմ, որ նրանք մեզ համար վտանգավոր չեն մինչև մի որոշ աստիճան՝ մինչև կյանքի և գույքի ապահովագրություն ձեռք բերելը: Այո՛, մինչև այստեղ նրանք կարող են մեզ հետ լինել», ինչպես եղել են սրանից առաջ 15 տարի շարունակ[2]:

Այնուհետև Ջամալյանն իր ելույթներում քննադատում էր նախագծական այն պատգամավորներին, որոնք հաճախ շեշտում էին, թե, իր ծրագրային սկզբունքներից ելնելով, դաշնակցությունն անցյալում իր շարքերի մեջ է ներառել մեծ թվով աշխատավորական տարրեր: Բայց չէ՞ որ բուրժուական կուսակցությունները նույնպես իրենց շարքերում տեղ են տալիս աշխատանքի մարդկանց: Նույնիսկ քրիստոնյա սոցիալիստներն ամեն կերպ փորձում են հանրությանը համոզել, թե պաշտպանում են աշխատանքի մարդկանց շահերը և իրենց շարքերի մեջ են ընդգրկում զգալի թվով բանվորներ:

Մերժելով հայանախագծականների մեղադրանքները՝ նախագծականները գտնում էին, որ ընդունելով «Կովկասյան նախագիծը», դաշնակցությունը դրանով բնավ չի հակադրվում իր գործող ծրագրին: Հիրավի, երբ մոտիկից

* Կարծում ենք, որ դա եղել է Երևանից ընտրված պատգամավոր Հակոբ Ջավրիյանը:
[1] «Նյութեր...», հատ. Գ, էջ 186:
[2] Նույն տեղում, էջ 187:

ենք քննում ծրագրի՝ «ապստամբության միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական և տնտեսական անկախություն» ձևակերպումը, ապա համոզվում ենք, որ «ապստամբություն» հասկացության տակ ծրագիրն ավելի շատ նկատի ուներ ոչ թե երկարատև նախապատրաստված զանգվածային ապստամբությունը, այլ հայդուկային կռիվները, վրիժառուական-ահաբեկչական ակտերը: Ինչ վերաբերում է «անկախությանը», ապա դրա տակ նկատի էր առնվում Արևմտահայաստանի ինքնավարության ձեռքբերումը օսմանյան կայսրության կազմում: Բայց դա խնդրի մի կողմն էր միայն: Կար նաև մյուսը՝ այն, որ 1892թ. հրատարակված Հ.Յ.Դ. ծրագիրը յուր ոգով և առաջադրված քաղաքական ու տնտեսական պահանջներով հարազատ էր սոցիալիստական գաղափարների սկզբունքներին: Հետևաբար՝ «Կովկասյան նախագծի» սոցիալիստական պահանջները չեն հակասում ծրագրին, այլ միայն լայնացնում են դրանց շրջանակները, մանավանդ որ կովկասյան իրականության մեջ այդ պահանջները կարող են և պետք է լինեն ավելի շեշտված, ավելի լայն և ավելի խորը: Այդ բանը նկատի առնելով էր Մալումյանը հիշեցնում, որ դեռևս 1896թ. «Դրոշակի» խմբագրությունը ողջույն էր հղել սոցիալիստական ինտերնացիոնալի Լոնդոնի կոնգրեսին, որտեղ նշվում էր, որ դաշնակցությունը դավանում է սոցիալիստական գաղափարներ: Նույնպիսի բովանդակության նամակ «Դրոշակի» խմբագրությունը 1905թ. ուղարկել էր Բրյուսել՝ սոցիալիստական ինտերնացիոնալի բյուրոյին: Ահա թե ինչու, ասում էին նախագծականները, եթե կուսակցությունը Կովկասում իր գործունեության համար հիմք ընդունի սոցիալիզմը, ապա դրանով նորություն ասած չի լինի և հակասության մեջ չի մտնի իր առջև դրված նպատակների հետ, քանզի Հ.Յ.Դ. ծրագրում արդեն կար սոցիալիզմի գաղափարը, մանավանդ դրա առաջաբանում դաշնակցության նպատակների բացատրությունը տրված է սոցիալիզմի ոգով և հիմունքներով: Հարցը միայն նրանում է, նշում էին նրանք, որ կուսակցության ծրագրի ճակատին գրված չէր **սոցիալիզմ** բառը: Իսկ հիմա գրե՞լ, թե՞ չգրել. ընդամենը նպատակահարմարության հարցն է, այլ ոչ թե սկզբունքի: Եթե դաշնակցությունն այդքան զորեղացել է, ապա դրա պատճառը ոչ թե այն է, որ ունեցել է հոյակապ, բայց օդից կախված սոցիալական ծրագրեր, այլ այն, որ, կանգնելով գործնական հողի վրա, նա յուր գաղափարները միշտ քաղել է իրական կյանքի պահանջներից:

Ընդհանուր ժողովի օգնական-քարտուղար Վալադ Վալադյանը հետագայում իր հուշերում վկայում էր, որ Մուրատը և ուրիշ շատ դաշնակցական ռազմիկներ չէին հաշտվում «Նախագծի» հետ, հավանաբար այն պատճառով, որ չէին կարդացել Հ.Յ.Դ. ծրագիրը[1]: Նրանք անտարբեր էին սկզբունքային-

* Հ.Յ.Դ չորրորդ ընդհանուր ժողովի մասին Վալադ Վալադյանի արժեքավոր հուշերը, տե՛ս «Հայրենիք», N 4, N 5, N 6, N 7, 1957թ.:
[1] «Հայրենիք», N 5 (375), մայիս, 1957, էջ 43:

տեսական մարզանքների հանդեպ: Իրենք իրենց համար արդեն կազմել էին որոշ ու հաստատ մի գաղափար Հ.Յ.դաշնակցութեան մասին, որի դրոշի տակ էին մտել իրենք ինքնաբերաբար՝ պարզապէս անսալով իրենց **հայրենասիրական** զգացումներին ու իրենց ներքին մղումին: «Նրանցից իւրաքանչիւրին խանդավառողը այն **կենդանի յեղափոխական գործն** էր, որ կատարվում էր դաշնակցութեան ձեռքով»[1]:

Նույն միտքը շատ ավելի վաղ այսպես է ձևակերպել Հարութիւն Շահրիկյանը. «Դաշնակցական համարվողներից շատերը ոչ ծրագիրն էին ուսումնասիրում և ոչ գիտեին, թե մեր կազմակերպությունն էապես սոցիալիստ-հեղափոխական է»[2]:

«Նախագծի» գաղափարները հավասարապես խորթ էին թե՛ շարքային ֆիդայիների և թե՛ քաջազուն հայդուկապետերի հոգուն: Սասունի և Զանգեզուրի հերոս Մուրատի պես էին խորհում ոչ միայն Անդրանիկն ու Սեպուհը, ընդհանուր ժողովից դուրս գտնվող թուրքահայ ուրիշ նշանավոր ռազմիկներ, այլև ռուսահայ Սեքարեցի Սաքոն, Վարդան Մեհրաբյանը, Նիկոլ Դումանը Դաշնակցական Խեչոն ...

Թուրքահայ նշանավոր ռազմիկներից թերևս բացառություն էր կազմում Քեռին, որը Սիսիանում խիստ կարևոր գործերն ավարտելուց հետո վերադարձել էր իր հին մտերմիկ վայրերը՝ Երևան - Ալեքսանդրապոլ - Կարս, ուր ականատես էր դարձել դաշնակցական կազմակերպություններում հականախագծականների սկսած պայքարին: Զգալով այդ պայքարից բխող հնարավոր վտանգները կուսակցության համար՝ իր հեղինակության ամբողջ թափով, իրեն հատուկ հստակ ուղղամտությամբ նա վճռական անհամաձայնություն էր հայտնել նրանց:

Նախագծի նկատմամբ թեր և դեմ բռնկված պայքարում Քեռին ոչ թե իր թուրքահայ հականախագծականների կողմն էր բռնել, այլ ի սկզբանե անվարան ու որոշակի բռնել էր Ռոստոմի և նրա պես մտածող պատգամավորների, այսինքն՝ մեծամասնության կողմը և երբեք հակառակություն չունեցավ «Նախագծի» ու նրանում ամրագրված գաղափարների նկատմամբ:

Վալադ Վալադյանն իր մի ուրիշ հուշագրության մեջ գրել է.

«Քեռու հոգուն խորթ էին ու խորթ էին եղել Նախագծից առաջ, «տաճկահայ-ռուսահայ» ստորոգելիները, որոնք մի պահ մոռացութեան տրվելուց հետո, նորից էին երևան եկել: Քեռին չէր կարող ըմբռնել ու արդարացնել հականախագծականների ընթացքը: Նրա համար կար և կը մնար միայն կազմակերպության և հեղափոխական գործի անբաժանելի ամբողջության գաղափարը: Եվ Քեռու համար այդ գաղափարն այնքան պարզ էր և իր պարզությամբ հանդերձ այնքան տիրական, որ մտքովն իսկ չէր անցնում, թե նախագիծ կոչված կարող էր լինել վտանգավոր մի սխալ, և որ մանավանդ այդ սխալը ապագայում քավել կարելի պիտի լիներ հարյուրավոր զոհերի արյունով, ինչպես Մուրատն էր ասել»[1]:

Քեռին պատգամավոր չէր և չէր մասնակցում ընդհանուր ժողովին, ուր քննվում էր «Նախագիծը», բայց եթե ներկա գտնվեր իսկ, ամենայն համոզվածությամբ կարելի է ասել, որ նա չէր մասնակցի վիճաբանություններին՝ դրանք համարելով անօգուտ ու ավելորդ: Քանի որ դաշնակցության կուսակցական գերագույն մարմինը հանդիսացող բյուրոներից ավելի գերադաս հաստատությունը՝ Հ.Յ.Դ. խորհուրդն էր մշակել «Կովկասյան գործունեության նախագիծը», որը և համապատասխան էր Կազմակերպության նախորդ ընդհանուր ժողովի որոշմանը և կուսակցության ծրագրի ոգուն, այդքանն արդեն բավական պիտի լիներ, որպեսզի Քեռին միանար «Նախագծին» և հանդես գար սոցիալիզմի սկզբունքները վճռականորեն ժխտող Սասնո իր երեք պաշտելի ընկերների՝ Անդրանիկի, Մուրատի և Սեպուհի տեսակետների դեմ:

ՈՐՆ Է ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԵՆԱՐԱՆԸ

Դաշնակցությանը, որը Կովկասում որդեգրում է քաղաքական, այն էլ՝ սոցիալիստական գործունեություն, ո՞ր դասակարգի վրա է հենվելու և ինչպի՞սի վերաբերմունք է դրսևորելու դասակարգային պայքարի գաղափարի նկատմամբ. - այս հարցին հականախագծականներն ուզում էին ստանալ հրստակ պատասխան:

Այս տարողունակ հարցից բխում էին նաև մի քանի ուրիշ ենթահարցեր. ո՞րն է քաղաքական-պետական կազմի այն տիպարը, որին տվյալ պահին ձգտում է կուսակցությունը. ո՞րն է այն տնտեսական դրությունը, որ նա առաջադրում է հայ ժողովրդին և որի համար կազմակերպությունը շարունակելու է իր կռիվը՝ թեկուզ հեռավոր ապագայում հայկական հասարակության մեջ այն ներմուծելու համար. որո՞նք են պայքարի այն անհրաժեշտ էտապները, որոնց հաջորդափոխությունը հասցնելու է հեռավոր իդեալին:

Ժողովում միասնական կարծիք չկար հայկական հասարակության մեջ եղած դասակարգերի մասին:

Հականախագծականներից շատերը գտնում էին, որ դաշնակցությունը բոլոր միջոցներով պետք է ձգտի իր կողմը բերել հայ խոշոր բուրժուազիային:

Ռուբեն Զարդարյանն ասում էր, թե հեգնանք է ենթադրել, որ դաշնակցության շարքերում կարող են գտնվել հայկական հասարակության անխտիր բոլոր դասակարգերին պատկանող անձինք: Պատմության մեջ իդեալական հեղափոխությունները միշտ կատարել են ճնշված, հարստահարված աշխատա-

---

[1] **«Հայրենիք»**, N 5 (375), մայիս, 1957, էջ 43:
[2] Նույն տեղում, N 11 (191), սեպտեմբեր, 1938, էջ 93:

[1] **«Հայրենիք»**, N 2(408), փետրվար, 1960, էջ 54:

վոր մասսաները: Հայտնի է, սակայն, որ քաղաքական կռվի որոշ հատվածներում ոչ մի սոցիալիստական կուսակցություն չի մերժել նույնիսկ ամենախոշոր բուրժուաների աջակցությունը, եթե նրանց շահն էլ է պահանջել տիրապետող ռեժիմի տապալումը: Հետևաբար, դաշնակցությունը չի խորշի հայ բուրժուաների կամավոր աջակցությունից, եթե սրանք պատրաստ լինեն կանգնելու կուսակցության գաղափարական դրոշի տակ:

Արտահայտվելով սոցիալիզմի դեմ Սարգիս Մինասյանը բարձր էր դասում հայ բուրժուաների գործունեությունը թե՛ Թուրքիայում և թե՛ Կովկասում, նրանց նույնիսկ համարելով հայկական հեղափոխության ռահվիրաներ, դրանով իսկ մերժելով նրանց դեմ դասակարգային պայքար մղելը հանուն սոցիալիզմի:

Հանդես գալով Բալկանի պատգամավորի այս տեսակետի դեմ ժողովի 67-րդ նիստում Արամն ասում էր.

«Ընկեր Մինասյանը գովասանական խոսքեր է ուղղում հայ բուրժուաների հասցեին՝ նրանց համարելով տաճկահայկական դատի հիմնադիրներ 80-ական թվերին: [Բայց] դա մի շրջան էր, երբ բուրժուաները չէին գիտակցում իրենց դասակարգային շահերը. Բացի այդ, մեր դատը այդ ժամանակամիջոցում քաղաքական հարց չէր, այլ սոսկ կուլտուրական, իսկ քաղաքական գույն ստացավ այն ժամանակ, երբ նրանք տեսան, որ Բալկանեան փոքր ժողովուրդները ազատուեցան դիվանագիտական ճանապարհով: Խրախուսված այդ օրինակից՝ նրանք ուզեցին էժան ազգասիրութեամբ ձեռք բերել ազատ Հայաստան. իսկ յետոյ, երբ իրոք անկարելի եղավ այդքան հեշտությամբ Հայաստանն ազատել, մեր բուրժուաները ոչ միայն հեռացան այդ ասպարեզից, այլև միացան տաճիկ կառավարութեան հետ, [հանդես գալով] հեղափոխության դեմ»[1]:

Հայանախագծականները նշում էին, որ Կովկասի վրա դաշնակցության գործունեությունը տարածելու և հայ իրականության մեջ դասակարգային պայքար քարոզելու հետևանքներից մեկն այն կլինի, որ հայ կապիտալիստները և ընդհանրապես ունևորները կտրուկ երես կթեքեն դաշնակցությունից, հետևապես կհրաժարվեն տաճկահայ հեղափոխական շարժմանը օգնություն ցուցաբերելուց: Առանց կովկասահայ հարուստների նյութական աջակցության՝ տաճկահայոց պայքարը դատապարտված է, իսկ կովկասահայ բանվորների դրամական մուծումները չնչին լինելով, չեն կարող փրկել շարժումը: Ուստի իր հիմնական նպատակն առաջ տանելու համար դաշնակցությունը պետք ունի ոչ միայն հարստահարված դասակարգերի, այլև ժողովրդի բոլոր խավերի ու շերտերի օժանդակությունը, քանի որ ամբողջ հայ ազգի գոյության հարցն է խնդրո առարկա[2]:

Իրենց պատասխաններում նախագծականները նշում էին, որ եթե Հ.Յ.Դ.-ն

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 178:
[2] Նույն տեղում, էջ 149:

իրեն դիտում է իբրև սոցիալիստական կուսակցություն, ապա նա ակամայից կանգնում է դասակարգային պայքարի հողի վրա:

Այդ հարցի մասին, ընդհանուր ժողովի նախագահության հանձնարարությամբ, նիստերից մեկում ռեֆերատ կարդաց Եղիշե Թոփչյանը, որտեղ հստակ տվեց հետևյալ ձևակերպումը. «Այն օրվանից, երբ «Նախագիծը» հրատարակվեց, դաշնակցությունը սոցիալիստական քաղաքական կուսակցություն է»: Դա նշանակում էր, որ Հ.Յ.Դ., որը նախկինում հենվում էր աշխատավոր դասակարգերի վրա, այսուհետև ավելի հստակ է արտահայտելու նրանց շահերը: Նա հիշեցնում էր, որ նրանք, ովքեր դեմ են Հ.Յ.Դ. կողմից սոցիալիզմի գաղափարների, այդ թվում դասակարգային պայքարի գաղափարի որդեգրմանը, հաճախ առաջ են բերում այն փաստը, որ դաշնակցությունը դեռ 90-ական թվականներին կռվի ճակատ էր բացել հնչակյանների՝ իբրև սոցիալիստների դեմ: Ի պատասխան այդ փաստարկման՝ Թոփչյանն ընդգծում էր, որ հնչակյանների հետ դաշնակցությունը պայքարի մեջ էր ոչ թե այն պատճառով, որ հակառակ էր սոցիալիզմին, այլ այն, որ Հ.Յ.Դ.-ն պայքարում էր աղավաղված, աղանդավորական սոցիալիզմի դեմ այն դեռևս վաղաժամ համարելով հայ իրականության համար: Անդրադառնալով հայ կապիտալիստների կողմից տաճկահայ շարժմանը օգնության հասնելու հարցին՝ Ե. Թոփչյանը ասում էր. «Ես չեմ ուզում, որ, բուրժուազիան մազաչափ անգամ նյութական նպաստներ տալով, ազդե մեր գործի վրա. ես չեմ ուզում, որ տաճկահայ դատը այս կամ այն կերպ կովկասահայ բուրժուազիայի հովանավորութեան տակ մտնի: Բուրժուազիայի ձեռքին այն կը դառնայ մի գործիք՝ մեր սոցիալիստական գործունեությունը Կովկասում մնասելու համար: Մի Ադելխանով հեշտությամբ կը շահագործե տաճկահայ գաղթական բանուորներու ազգային զգացմունքները. որքան էլ այդ բանուորները գիտակից լինեն, այնուամենայնիվ, նրանք կ՚ազդուին Ադելխանովի նույնիսկ մի խոսքեն, թե՝ «Ես հազար ռուբլի եմ տուել ազգի համար. գործադուլ մի՛ ըրեք»: Եվ գործադուլ չանելով՝ նրա բանուորները բանուորության մեջ պառակտման պատճառ են դառնալու: Դա կորստաբեր կլինի սոցիալիստական ամեն մի կուսակցության համար»:

Կրկնելով, որ միայն փողը չէ, որ ուժ է տալիս ժողովուրդների պայքարին, զեկուցողը նշում էր, որ հայերն ունեցել են Իսրայել Օրիներ, Հովսեփ Էմիններ, որոնք համոզված են եղել, թե մի քանի միլիոնով կարելի կլինի Հայաստանը Թուրքերից գնել: Խորեն եպիսկոպոս Ստեփանյանը նույնպես կարծում էր, թե սուլթանին կաշառելով՝ կարելի է ազատություն ստանալ նրանից: «Բայց նման յույսերը, - շեշտում էր Թոփչյանը, - ցնորքներ են: Ցեղափոխութեան հենակետը փողը չէ. Թող բանուորները փող չտան, բայց կտան իրենց կյանքը, որ ավելի բարձր ու մեծ է մեզ համար, քան փողը»[1]:

Իր ելույթներից մեկում անդրադառնալով Հ.Յ.Դ.-ին նյութական օժանդա-

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 182:

կություն ցույց տալու հարցին՝ Ռոստոմն ասում էր, որ այդ հարցի շուրջ ստեղծվել են բացահայտ թյուրիմացություններ: Նա նշում էր, որ ենթադրելի էր, թե Կովկասում հայության բոլոր խավերը պետք է օգնության հասնեին տաճկահայության պայքարին, հետևապես նաև նրա դեկավար ուժին՝ դաշնակցությանը: Բայց այդպես չեղավ: Հայ խոշոր բուրժուաների օգնության մասին խոսք լինել չի կարող, միջին բուրժուաները նույնպես գրեթե չէին մասնակցում օգնության գործին: Ավելի ջերմ օժանդակություն էին ցույց տալիս մանր բուրժուաները, այն էլ միայն ոգևորության բացառիկ դեպքերում և սահմանափակ շրջանում: Դաշնակցությունը ստիպված էր ձեռք առնել մի քանի կտրուկ միջոցներ՝ խոշոր բուրժուաների գրպանը բացելու համար, և միայն դրանից հետո կուսակցության, հետևապես՝ տաճկահայության պայքարին օժանդակող միջին և մանր բուրժուաների շրջանը լայնացավ՝ հիմնականում վախի ազդեցության տակ: Ռոստոմը չեշտում էր, որ հայ բուրժուա տարրը ամբողջության մեջ որևէ բնական ձգտում չունի օգնություն հասցնելու հեղափոխական գործին, և, որպես դրա ապացույց, բերում էր Բուլղարիայի, Ամերիկայի և առհասարակ արտասահմանյան հայ հարուստների անտարբերությունը կամ հակառակությունը[1]: Ինչ վերաբերում է տաճկահայ հեղափոխությանը կովկասահայ բանվորների կողմից ցույց տրվող աջակցությանը, ասում էր Ռոստոմը, ապա «մեզանից ոչ մեկը թույլ չպետք է տայ իրեն՝ արհամարհանքով վերաբերուելու բանուորի կոպեկներին: Ռեակցիայի ճգնաժամային բոպեներին, բանուորական-արհեստավորական կոպեկները չէի՞ն, որ փրկեցին մեր կուսակցությունը: Աշխատավորներն են եղել, որ իրենց քսակները միշտ էլ լայն բաց են արել յօգուտ մեր գործի, ուրիշ ոչ մի տարր՝ նրանց չափ չէ նպաստել մեզ երբեք: Զմոռանանք այս»:

Ինչ վերաբերում է հականախագծականների այն տեսակետին, թե դաշնակցությունն իրավունք չունի հայ իրականության մեջ բորբոքելու դասակարգային պայքար, թե նա պետք է լինի վերդասակարգային կազմակերպություն և արտահայտի հայկական հասարակության բոլոր դասակարգերի, խավերի ու շերտերի շահերը, նախագծականները վճռականապես մերժում էին այդպիսի մոտեցումը: Ռոստոմն ասում էր, որ Կովկասում բուրժուազիայի և աշխատավոր դասակարգի միջև անխուսափելիորեն տեղի է ունենում բաժանում: Նա նշում էր, որ կովկասահայ բուրժուազիան Հ.Յ.Դ. կովկասյան գործունեության պատճառով չէ միայն, որ թշնամանում է նրա հետ: Արդեն տաճկահայ հեղափոխությունն ինքնին արհամարհանքի է հանդիպել կովկասահայ բուրժուաների կողմից: Սկզբում կուսակցությունը աջակիցներ է ունեցել բուրժուական ինտելիգենցիայի միջից, բայց առաջին մեկ-երկու տարուց հետո բոլորն էլ հեռացան կազմակերպությունից, իսկ ռեակցիայի օրերին ուղղակի ծաղրի առարկա դարձրին կուսակցության գլխավորությամբ վարած կուրմները: Ահա

[1] *«Նյութեր...», հատ. Գ, էջ 184:*

թե ինչու, նշում էր Ռոստոմը, այսուհետև այլևս ոչ մի կապ չենք կարող ունենալ կովկասահայ բուրժուազիայի հետ:

Հ.Յ.Դ.-ի՝ իբրև աշխատավորության և հակաբուրժուական կուսակցության մասին իրենց ելույթներում շեշտում էին համարյա բոլոր նախագծականները: Արշակ Վռամյան. «Մեզ պետք է իր աշխարհայացքով ամբողջովին [տաճկահայ] դատին նվիրուած զանգուած, և ոչ՝ համակիր, հետերոժեն տարրեր: Մեր յոյսն է աշխատավորությունը»[1]: Իշխան. «Մենք պետք է հենվենք աշխատավոր դասակարգի վրա և պաշտպանենք նրա շահերը: Այլ խնդիր է, իհարկե, երբ համազգային որևէ վտանգ է առաջանում, այսպիսի արտակարգ և կրիտիկական վայրկյաններում մենք անժամանակ բլոկ կը կազմենք այլ տարրերի հետ»[2]: Ստեփան Ստեփանյան. «Բուրժուաների հետ մենք ոչ մի գործ չունենք և չենք կարող ունենալ»[3]: Համո Օհանջանյան. «Մենք պայքարում ենք տնտեսական անհավասարության դեմ, մի անարդարության դեմ, որը հիմք է մյուս բոլոր չարիքների: Եվ ես պնդում եմ՝ որ միայն ջղուտ աշխատավորների միջոցով կարելի է վերացնել այդ աղաղակող անարդարությունը, և սոցիալիստական կարգեր հաստատել»[4]: Նրանք բոլորը հաստատ էին իրենց տեսակետի վրա, այն է՝ հետայսու դաշնակցությունը պիտի առաջ գնա իբրև բառիս իսկական իմաստով քաղաքական-սոցիալիստական կուսակցություն՝ իր ամբողջական սոցիալիստական պատմափիլիսոփայությամբ, աշխարհայացքով, իդեալներով, նպատակներով: Որպես իսկական հեղափոխական կուսակցություն, դաշնակցությունը, ամուր հենվելով միմիայն աշխատավոր մասսաների վրա, անզիջում կռվելու է սոցիալիզմի հաղթանակի, սոցիալիստական կարգերի համար:*

Հետագա վիճաբանությունների ընթացքում հականախագծականները աստիճանաբար փոխում էին իրենց տեսակետները, հակվում ու մոտենում նախագծականներին, ի վերջո կանգնում նրանց դիրքերում:

Առաջինը դա արեց հականախագծական Սեբաստացի Մուրատը: Նիստերից մեկում նա սխալ համարեց Արշակ Խաչակյանի այն արտահայտությունը, թե տաճկահայ դատը մթագնել է կովկասահայ երիտասարդության միտքը:

Մուրատին հետևեցին ուրիշներ: Ավետիք Շահխաթունյանը, որ սկզբում վճռականապես մերժում էր «Կովկասյան նախագիծը», հարցի քննարկման ավարտին ասում էր. «Այսուհետև, այո՛, մեր գործունեությունը պետք է լինի զուտ դասակարգային, և մեր գործունեության սոցիալիստականությունն այնպես պետք է շեշտուած լինի, որ կողմնակի մոմենտներ վայրկեան անգամ չկանգնեցնեն մեր առաջխաղացությունը»: Ավելին, նա գտնում էր, որ «մեր կուսակցության միջից պետք է դուրս գան այն տարրերը, որոնք իրենց սկզբ-

* *Այլատարր:*

[1] *«Նյութեր...», հատ. Գ, էջ 185:*

[2] *Նույն տեղում, էջ 176:*

[3] *Նույն տեղում, էջ 188:*

[4] *Նույն տեղում, էջ 172:*

բունքներով համաձայն չեն կուսակցության աշխարհայացքին: Եվ ես հույս ունեմ, որ մեր հաջորդ ընդհանուր ժողովում, եթե միայն այդպիսին տեղի ունենա, չլինի մտքերի այն խառնաշփոթը, որպիսին տեսնում ենք այստեղ»[1]:

Վիճաբանությունների ընթացքում երկու կողմերին հուզում էր այն հարցը, թե **ազգայինի և սոցիալիստականի փոխհարաբերությունների հարցը ինչպես են ըմբռնում ռուսահայ բուրժուաները և ռուսահայ աշխատավորները:**

Նախագծականները նշում էին, որ Հ.Յ.Դ.-ն միաժամանակ և՛ ազգային է, և՛ սոցիալիստական: Ներկա բուրժուական հասարակարգում ազգային կռիվն անհրաժեշտություն է: Բուրժուաներն ազգային հարցը հասկանում են իրենց ձևով, իսկ սոցիալիստները, այդ թվում դաշնակցականները՝ իրենց: Ընդգծելով, որ ոչ մի տեղ իսկական սոցիալիստները դեմ չեն մաքուր ազգայինին, նախագծականները օրինակ էին բերում, որ Բեբելը քանիցս հայտարարել է, թե ինքը զենքը ձեռքին դուրս կգա պաշտպանելու յուր հայրենիքը, եթե արտաքին թշնամին սպառնա այդ ազգային հայրենիքի անվտանգությանը: Մյուս մեծ սոցիալիստ Ժորեսին են պատկանում այն խոսքերը, որ ինքը կողմնակից է ազգային գաղափարին, եթե այն բխում է ազգության հիմքը կազմող աշխատավոր դասակարգի շահերից: Իտալացի սոցիալիստ Էնրիկո Ֆերրին անհուն սիրով էր խոսում իր հայրենիքի մասին և հայտարարում էր, որ սուրբ պարտականություն է զգում ողջ Իտալիայի, ինչպես նաև իր համայնքի ու ընտանիքի նկատմամբ:

Ազգայինի և սոցիալիստականի փոխհարաբերությունների հարցին այս մեծ սոցիալիստների մոտեցումները հոգեհարազատ էին դաշնակցությանը: «Մի՞թե մենք, - ասում էր Եղիշե Թոփչյանը, - որ մեր առաջ ունենք հայկական արյունոտ իրականությունը և հարյուր հազարավոր զոհերի գնով սրբագործուած տաճկահայ դատը, կարո՞ղ ենք ժխտել ազգային հարցը, - երբեք: Մենք ջերմ պաշտպաններ կլինենք այդ հարցին, բայց սոցիալիստական հասկացողությամբ և ոչ՝ բուրժուական»[2]:

Բնորոշ է նաև Ռոստոմի տեսակետը ազգայինի և սոցիալիստականի փոխհարաբերությունների մասին: Նա նշում էր, որ Կովկասում սկսված կռվին դաշնակցությունը տվել է ազգային դրոշմ հիմնվելով, սակայն, միայն աշխատավոր դասակարգերի վրա: Այս ձգտումների տեսակետից նա նկատի ուներ նաև իր կուսակցության դավանած ազգայնությունը, որը ոչ «Մեղու» և ոչ էլ «Մշակ» հանդեսների ազգայնությունը չէր: «Մեղուն» ազգային էր զուտ կղերական տեսակետից, «Մշակը»՝ բուրժուական, իսկ դաշնակցության տեսակետը աշխատավորական է, և այս աշխատավորական տեսակետից էլ կուսակցությունը եղել և մնում էր ազգային, որը արմատապես սահմանազատված էր բուրժուական ազգայնականությունից:

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 164:
[2] Նույն տեղում, էջ 170-171:

Թեև ընդհանուր ժողովում «Նախագծի» քննարկման ժամանակ պատգամավորներն արդեն բազմիցս անդրադարձել էին տաճկահայ ազատագրական շարժմանը, բայց գնալով ծավալվող վիճաբանությունների ընթացքում անխուսափելիորեն առաջ եկավ տաճկահայոց խնդիրները ավելի խորն ու բազմակողմանի քննելու, նրանց դատի նկատմամբ ավելի հստակ վերաբերմունք դրսևորելու անհրաժեշտության հարցը:

Կովկասյան գործունեություն որդեգրող կուսակցությունը որքանով է ի վիճակի լինելու շարունակել իր հիմնական առաքելությունը՝ սատար կանգնելու տաճկահայ դատին, - սա էր այդ հարցի իմաստը:

Հայանախագծականների ընդհանուր տեսակետն այն էր, որ հայկական հեղափոխությանը շրջապատող պայմաններն ու հեղափոխական ուժերի արդեն իսկ անբավարար լինելու հանգամանքը հրամայական պարտականության տակ է դնում դաշնակցությանը, որպեսզի նա իր ունեցած ուժերը կենտրոնացնի միայն ու միայն իր հիմնական նպատակին՝ տաճկահայոց ազատագրությանը՝ առանց ուժերի որևէ մասնատման: Ըստ որում, նրանք բազմիցս վկայակոչում էին ընդհանուր ժողովից առաջ տեղի ունեցած կուսակցական բոլոր մակարդակների ժողովներում ընդունված որոշումները, որոնցում պատճառաբանվում էր, թե ինչու ընդունելի չէ Հ.Յ.Դ. կովկասյան գործունեությունը, որը կամա թե ակամա վնասելու է տաճկահայության դատին: Իսկ տաճկահայ դատը՝ դա հայկական դատն է, որը երաշխավորված է եվրոպական պետությունների զանազան դաշնագրերով (Ռ. Զարդարյան): Ավելին, այդ դատը համամարդկային է, զի դրան ոչ միայն հայերն են նվիրված, այլև օտարներ (Մուրատ): Տաճկահայաստանում քարոզել դասակարգային պայքար, նշանակում է հարվածել ազգին: Քանի դեռ Հայաստանը գերի է օտարին՝ այնտեղ պիտի բացառվեն դասակարգային տարաձայնությունները, առավել ևս՝ դասակարգային պայքարը (Վ. Տաթևյան): Ոչ ոք իրավունք չունի տաճկահայությանը փաթաթել սոցիալիստական սկզբունքներ (Մանուկ*): Տաճկահայաստանում հող չկա սոցիալիզմ կառուցելու համար: Մեզ, նախ, մեր կյանքն է հարկավոր ապահովել, այնուհետև արդեն կմտածենք և հացի մասին (Թ. Ջելալյան):

Այս և նման հարցադրումները հատկապես խտացված ձևով արտահայտություն էին գտնում Սարգիս Մինասյանի ելույթներում: «Ինձ համար, - ասում էր նա, - տաճկահայ դատը գորդյան հանգույց է, որը միայն սրով պետք է լուծել, իսկ այդ լուծումը կարելի կլինի ոչ [թե] սոցիալիզմի ... միջոցով, այլ միայն՝ փողի, որը ջիղն է ազատագրության գործի»: Նա գտնում էր, որ «տաճկահայ բարձր պաշտոնեությունը ավելի ազգասեր է եղել, քան կովկասահայ

* Մանուկը Տրապիզոնի ներկայացուցիչն էր համագումարում, խորհրդակցական ձայնով: Իրև Տրապիզոնի պատգամավոր, ընդ. ժ.-ի արձանագրությունների մեջ հիշատակված է նաև Արսեն անունը: Հավանաբար երկուսն էլ ծածկանուններն են նույն մարդու, որի իսկական անուն-ազգանունը հնարավոր չեղավ պարզել:

բուրժուազիան»[1]: Ելույթներից մեկում նա առաջարկեց պատմական հայացք ձգել տաճկահայոց անցյալի վրա՝ հասկանալու համար նրանց պայքարի գլխավոր ղեկավար ուժի՝ Հ.Յ.Դ. ազգային բնույթը: Այդ նպատակով նա հարց էր տալիս. «Մեր շարժումը վերևի՞ց է սկսվել, թե՞ ներքևից»: Իր առաջադրած հարցին ինքն էլ պատասխանում էր՝ «վերևից»: Տաճկահայության ազգային հարցի արծարծման նախաշարժիչ պատճառը ժողովրդի տնտեսական հանգամանքներն են: Այն բանից հետո, երբ տաճկահայ ժողովուրդը տեսավ, որ օսմանյան տերության մեջ իր դրության բարելավման ոչ մի հույս այլևս չպետք է կապել «արդարություն» հասկացության հետ, իր ազգային ձգտումներին տվեց քաղաքական իմաստ: Ներսես Վարժապետյան պատրիարքը հայ ամիրաների աջակցությամբ այդ քաղաքական ձգտումները նվիրագործեց՝ դնելով միջազգային սեղանի վրա՝ ստանալով Բերլինի դաշնագրի 61-րդ հոդվածը: Ճիշտ է, ասում էր Մինասյանը, նախկինում տաճկահայ բուրժուազիան տարված էր բացառապես իր ստամոքսով և չէր հետաքրքրվում ազգային-քաղաքական հարցերով, իսկ նրա շարքերում շատերը հաշտվել էին այն մտքի հետ, թե տաճկահայ ժողովրդի ապագան ամբողջ Թուրքիայի ապագայի մեջ է: Բայց այն բանից հետո, երբ տաճկահայ դատը հանձնվեց միջազգային ատյանին, այդ բուրժուազիան, հույսը կտրելով թուրքական իշխանությունների բարյացակամությունից, հարեց ազգային շարժմանը: Պոլսի հայ բուրժուազիան իր ձեռքն առավ Հայաստանի մշակութային գործը և մեծապես նպաստեց ստեղծելու կրթական ընկերություններ, բացելու դպրոցներ և այլն: Տաճկահայ բուրժուազիայի մեծ մասը անկեղծ հավատ էր տածում եվրոպական դիվանագիտության նկատմամբ, գտնելով, որ նա կարող է ցանկալի լուծում տալ հայկական դատին, մի բան, որ, ցավոք, չիրականացավ: Այդ բուրժուազիայի մյուս մասը հետզհետե եկավ այն համոզման, որ առանց զենքի և արյուն թափելու անհնար կլինի Եվրոպայի դիվանագիտությանը զբաղեցնել հայկական հարցով: Այդ մտայնությունը հատկապես ուժեղացավ այն բանից հետո, երբ հայտնի դարձավ Ավստրիայի արտաքին գործերի նախարարի՝ 1895թ. արած հետևյալ հայտարարությունը՝ ուղղված հայերին. «Մինչև արյուն չթափեք, հույս մի դրեք Եվրոպայի աջակցության վրա»:

Այս բոլորից հետո, ասում էր Մինասյանը, սխալ է կարծել, թե տաճկահայ հեղափոխական շարժումը հենց սկզբից գնացել է սոցիալիզմի ճանապարհով: Տաճկահայաստանում սոցիալիստական սկզբունքներ են ունեցել միայն մի քանի երիտասարդ գործիչներ: Այնտեղ չկար և այժմ էլ չկա դասակարգային պայքար, ընդգծում էր նա, քանի որ այնտեղ չկա դասակարգային շահերի հակամարտություն: Բոլոր հայերին անխտիր կեղեքողը թուրքն է: Թուրքերը հայերին հալածում են ոչ թե այս կամ այն դասակարգին պատկանելու համար, այլ իբրև հայ: Տաճկահայաստանում մենք պրոլետարիատ չունենք, որովհետև

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 188:

չունենք արդյունաբերություն: Նա կարծիք էր հայտնում, որ հայ վաշխառուներին չի կարելի համարել շահագործող դաս, քանի որ նրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ ապօրինի մարմիններ: Դաս չեն կազմում նաև ամիրաները, որոնք միշտ սոսկ միջնորդների դեր են կատարել պատրիարքարանի և կառավարության միջև: Ո՛չ ամիրաները, ո՛չ էլ նույնիսկ հայ վաշխառուները անտագոնիստական հակասությունների մեջ չեն հայ աշխատավոր գյուղացիության հետ, հետևապես Հայաստանում հող չկա սոցիալիզմի համար, որը հենվում է դասակարգային պայքարի վրա: Տաճկահայաստանում սոցիալիզմը raison d'être՝ կունենա միայն այն ժամանակ, եթե ընդարձակ չափերով այնտեղ ստեղծվի արդյունաբերություն: Ճիշտ է, այսօր Թուրքիայում կան հատուկենտ գործարաններ, նշում էր Մինասյանը, որտեղ աշխատում են նաև հայեր, բայց կարելի՞ է գնալ և այդ գործարաններում եղած հայ բանվորներին ներշնչել սոցիալիստական գաղափարներ: Մի որևէ շարժում առաջ բերելու փորձի դեպքում իշխանությունները խկույն կքշեն բոլոր հայ բանվորներին և նրանց տեղերը կհանձնեն ուրիշ ազգությունների մարդկանց:

Նորից շեշտելով, որ տաճկահայ շարժումն ունի զուտ ազգային բնույթ, Ս. Մինասյանը հռետորական հարց էր տալիս. «Ինչո՞ւ ձգտել դասակարգայնության. մի՞թե մեր ազգային ազատագրության իդեալը բավական չէ մեզ»: «Հենց այս իդեալը պետք է լինի դաշնակցության գործունեության սահմանը», - եզրակացնում էր նա[1]: Ազգայնության գաղափարն ավելի լայն է, ասում էր նա, տաճկահայ բանվորների լոկ տնտեսական կարիքներին բավարարություն տալու ձգտումը երբեք չի կարող համեմատվել ազգային գաղափարի հետ, որը կարող է անհրաժեշտ ու անմիջական լուծումի: Ուստի դաշնակցությունն իր գործը պետք է դնի լայն հողի վրա, պայքարի Հայաստանի՝ իբրև հայ ժողովրդի գոյության խարսխի, ապագայի համար, մշտապես աչքի առաջ ունենալով, որ հայրենիքը չի պատկանում հայության այս կամ այն դասակարգին, որ այն ամբողջ հայ ժողովրդի հայրենական ժառանգությունն է, հավասարապես և՛ հարուստինն է, և՛ աղքատինը:

Հականախագծականները մերժում էին այն տեսակետը, թե Հայաստանի ազատագրության խնդրում տաճկահայ բուրժուազիայի մասնակցությունը կարևոր չէ: Ժողովուրդը իր սեփական ուժերով անկարող է գործը առաջ տանել, ասում էին նրանք: Բուրժուազիան միշտ ավելի գիտակից է, մի բան, որ ապացուցված է նաև ուրիշ ազգերի ազատագրության ընթացքում:

Տաճկահայության ազատագրության դատը հականախագծականները համամարդկային դատ էին համարում, որքանով որ Եվրոպան, նրանց կարծիքով, նպաստում է թուրքական լծի տակ հեծող քրիստոնյա ազգերի, այդ թվում տաճկահայության ազատագրությանը: Դրան հակառակ, կովկասահայ շար-

* Գոյության իմաստ:

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 174:

ժումը չի կարող համամարդկային դատ լինել, քանի որ դրա հիմքում ընկած է դասակարգային պայքարի գաղափարը: Ավելին, կովկասյան շարժումը չի հետաքրքրում ոչ միայն ուրիշ ժողովուրդների, այլև նույնիսկ գաղութահայությանը, որը Տաճկահայաստանն է համարում իր պատմական օրրանը և երազում է վերադառնալ հայրենիք: Պատահական չէր, որ գաղութահայությունը ներկայացնող պատգամավորները մշտապես շեշտում էին, որ եթե դաշնակցությունը հայրենիքի գաղափարը ամեն ինչից վեր չի դասելու, ապա նրա գոյությունը ավելորդ է, և այդ դեպքում տաճկահայերի ճակատագիրը պետք է կապել թուրքերի, քրդերի, արաբների, հույների և կայսրության մյուս ժողովուրդների ճակատագրի հետ ու հայ դատի հարցը փակված համարել:

Արևմտահայ պատգամավորներից ոմանք նշում էին, որ իրենք ոչ միայն չեն հավատում Տաճկահայաստանում սոցիալիզմի քարոզների հաջողությանը, այլև ընդհանրապես չեն ընդունում սոցիալիզմը՝ որպես մարդկության վերջին հանգրվան: Սոցիալիզմի գաղափարաբանությունը՝ դա անհատական սեփականության վերացումն է, դրամատիրության ջնջումը, մարդկանց տնտեսական վիճակի հնարավորին չափ համահարթումը: Բայց այդ նպատակները տաճկահայերին չեն հետաքրքրել նախկինում և այժմ էլ չեն հետաքրքրում. ընդհակառակը, շարունակ շեշտել են, թե իրենք միայն ազգային կոիվ ունեն: Տաճկահայաստանում վտանգված է ոչ թե սոցիալիզմը, որն ընդհանրապես այնտեղ չկա, այլ վտանգված է հայությունը, ազգը, ազգայինը: Նրանք ասում էին, որ ոչ ոք չի կարող հայ հեղափոխականներին մեղադրել այն բանի համար, որ նրանք սոցիալիստներ չեն: Տաճկահայ իրականությանը ծանոթ եվրոպացի շատ գործիչներ՝ Ժորեսը, Վիվիանին և ուրիշներ, միանգամայն արդարացի էին համարում սոցիալիզմի նկատմամբ թուրքահայ հեղափոխականների բացասական վերաբերմունքը:

Խոսելով կովկասահայերի, մասնավորապես՝ դաշնակցության կողմից տաճկահայությանը ցույց տրվող օգնության ծավալների և բնույթի մասին, արևմտահայ պատգամավորները բոլոր կովկասահայերին միահամուռ կոչ էին անում թուրքական դեսպոտիզմի դեմ կռվող իրենց եղբայրներին աջակցել բարոյապես և նյութապես: «Ինչ ուզում եք եղեք՝ սոցիալիստ թե մոնարխիստ, միայն թե աջակցեք մեզ՝ իբրև հայերի», բայց դրա հետ միասին՝ «մեզ մի թելադրեք ձեր սկզբունքները, թե՝ այսպես արեք, այնպես չանեք»[1]:

Բոլոր հականախագծականների եզրակացությունն այն էր, որ մի ժողովուրդ չի կարող երկու հայրենիքի համար կռվել, ուստի դաշնակցությունն իր գործունեությունն ամբողջովին պետք է կենտրոնացնի Տաճկահայաստանի վրա՝ «քանի որ սա է մեր հայրենիքը»[2]:

Հականախագծականների կողմից տաճկահայ ազատագրական շարժման և

[1] «Նյութեր...», հատ. Գ, էջ 175:
[2] Նույն տեղում:

դաշնակցության փոխհարաբերությունների մեկնաբանությունները ընդհանուր ժողովում հանդիպեցին նախագծականների բուռն հակազդեցությանը, որոնք իրենց ընդդիմախոսների փաստարկումներին և տեսական եզրահանգումներին հակադրում էին կենդանի կյանքից վերցրած օրինակներ, կովկասահայ և միջազգային սոցիալիստական շարժման ընդերքում մշակված և արդեն ընդհանուր ճանաչում ստացած դրույթներ:

Քննարկելով տաճկահայ ազատագրական շարժման և դաշնակցության փոխհարաբերությունների մասին Սարգիս Մինասյանի և մյուս հականախագծականների տեսակետը՝ Ռոստոմն իր ելույթներում նշում էր, որ, հանդես գալով Հ.Յ.Դ. սոցիալիստական գործունեության դեմ, նրանք իրենց եզրահանգումները կառուցում են՝ նկատի ունենալով Հայկական հարցի միայն առաջին ժամանակաշրջանը, երբ Թուրքահայաստանում հեղափոխական գործունեությունը դեռևս գտնվում էր սաղմնային վիճակում: Սխալ է, ասում է նա, մըշտապես վկայակոչել Բեռլինի դաշնագիրը, նաև՝ Ներսես պատրիարքի ծրագիրը: Արևմտահայ շարժումը չի սահմանափակվում միայն այդ եզակի խնդիրներով: Հ.Յ.Դ. ծրագրում հեռավոր ակնարկ անգամ չկա Բեռլինի դաշնագրի և Ներսեսի ծրագրի մասին: Դաշնակցության պաշտոնաթերթ «Դրոշակը» միայն մեկ անգամ է թռուցիկ անդրադարձել պատրիարքի ծրագրի բովանդակությանը: Բայց այն բանից հետո, երբ նոր կազմակերպվող կուսակցության շարքերում բուռն բողոքներ եղան դրա հրատարակման դեմ, ապա N2-ից սկսած՝ թերթի էջերից այն իսպառ վերացավ: Ճիշտ է, Հ.Յ.Դ.-ն եվրոպական պրոպագանդայի ժամանակ երբեմն մատնացույց էր անում Բեռլինի դաշնագիրը, ասում էր Ռոստոմը, բայց դա արվում էր լոկ նրա համար, որպեսզի չեշտված լիներ հայոց խնդրի միջազգային կողմը:

Գալով այն հարցին, թե Տաճկահայաստանում ինչպես է տարվել դաշնակցության կոիվը, Ռոստոմն ընդգծում էր, որ այն չի տարվել «ազգովին», այլ «եղել է ազգի համար»: Դաշնակցությունը հենց սկզբից Տաճկահայաստանում հենվել է միայն աշխատավորական տարրի վրա, խոր արմատներ ձգել նրա մեջ: Այդ էր պատճառը, որ 1895-1896թթ. ընդհանուր կոտորածից հետո, միայն դաշնակցությունն էր, որ կարողացավ Տաճկահայաստանում պահպանել իր գոյությունը, իսկ մյուս հայկական ազգային կուսակցությունները համարյա վերացան կամ պառակտվեցին զանազան խմբավորումների:

Անդրադառնալով «դասակարգ» հասկացությանը և տալով դրա բնութագրությունը՝ Ռոստոմն ասում էր, թե ոմանք այն դիտում են որպես միայն տնտեսական զարգացումից առաջ եկած չերտավորում մասնավորապես դասակարգ չհամարելով ազնվականությանը: Իրականում, սակայն, եվրոպական իմաստով դասակարգեր են և՛ ազնվականությունը, և՛ բուրժուազիան: Գալով տաճկահայկական իրականությանը՝ նա նկատում էր, որ այնտեղ հիմնովին բացակայում է ազնվականությունը, որը ոչնչացվել է մահմեդական տիրապետության ընթացքում, իսկ նրա տեղը բռնել են գրեթե բացառապես քուրդ

ցեղապետերը: Ուրեմն, հայ աշխատավորների դիմաց կանգնած է ոչ թե հայ ազնվականությունը, այլ քուրդ ազնվական դասակարգը, որի հետ այդ աշխատավորությունը հարաբերվում է անմիջականորեն կամ հայ էֆենդիների և աղաների միջոցով:

Ռոստոմը տաճկահայկական շարժման համար խիստ վտանգավոր էր համարում մշտապես կրկնելը, թե դաշնակցությունն իր ծագման իսկ օրից եղել և մնում է զուտ ազգայնական կուսակցություն: Ընդհակառակը, իր գոյության 17 տարիների ընթացքում նա ազգային կռիվ չի մղել, նրա կռիվը եղել է ոչ թե մահմեդական ժողովրդի, այլ կայսրության կառավարող ռեժիմի դեմ, որից դժգոհ է նաև մահմեդական աշխատավորությունը: Իսկ եթե այդ ընդհանուր կանոնից վրիպումներ են եղել, ապա դա տեղի է ունեցել կուսակցության ղեկավարության կամքին հակառակ: Պայքարող տաճկահայությունը և նրա մարտական ջոկատը՝ դաշնակցությունը, մղում են ոչ թե ազգային, այլ ազգային ազատագրական կռիվ:

Կրկին ու կրկին հիշեցնելով, որ դաշնակցությունը աշխատավորական կուսակցություն է, հետևապես, իր էությամբ՝ հակաբուրժուական, Ռոստոմը նշում էր, որ ինչպես կովկասահայ, այնպես էլ տաճկահայ հարուստներից կազմակերպությունը երես է դարձրել իր կազմավորումից անմիջապես հետո: Նա առաջիկայի հիմնական խնդիր էր համարում կովկասահայ և տաճկահայ աշխատավորների միավորումը և համատեղ գործակցությունը՝ ի հեճուկս կովկասահայ և տաճկահայ բուրժուաների: Դա անհրաժեշտ է, ասում էր նա, մանավանդ որ երկու երկրների՝ Հ.Յ.Դ.-ի այդ երկու հակառակորդները ձգտում են կապվել իրար հետ և համաձայնեցնել իրենց գործողությունները: Իբրև դրա վկայություններից մեկը, նա օրինակ էր բերում «Մշակում» տպագրված կոչը՝ ուղղված Պոլսի էֆենդիներին: Ելնելով դրանից՝ նա համոզված ասում էր, թե հեռու չէ այն օրը, երբ արմենականները կմիանան մշակականներին*, և կառաջանա քաղաքական նոր համախմբում[1]:

Տաճկահայ ազատագրական շարժման և Հ.Յ.դաշնակցության փոխհարաբերությունների մասին ընդհանուր ժողովում Ռոստոմի ելույթները հետևողականորեն պաշտպանում էին նրան համախոհ պատգամավորները:

Զբաժանելով այն տեսակետը, թե Տաճկահայաստանում հող չկա սոցիալիզմի համար, որովհետև այնտեղ չկա արդյունաբերություն, Եղիշե Թոփչյանն ասում էր, որ չնայած Թուրքիայում կապիտալիզմը թույլ է զարգացած, բայց դա չի նշանակում, թե ամեն ինչ նախկինի նման է: Եվրոպական կապիտալիզմը վաղուց է արշավում այդ երկրի վրա՝ խոր ազդեցություն թողնելով նրա կյանքում, արմատներ ձգելով տնտեսության մեջ: Նա կարևոր էր համարում

* Ռոստոմի նախատեսությունը ճիշտ դուրս եկավ. 1908թ. Պոլսում կազմվեց սահմանադիրռամկավար կուսակցությունը, որի մեջ մտավ նախկին արմենականների մի կարևոր մասը:

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 184-185, 189:

նաև այն, որ Թուրքահայերն արդեն ունեն պրոլետարիատ, ճիշտ է՝ երկրից դուրս՝ Ամերիկայում, Կովկասում, Բուլղարիայում և այլուր: Դրսում գտնվող հայ բանվորների աչքերը մշտապես հառած է իրենց հայրենիքին, երազում են վերադառնալ իրենց օջախները, եթե լինի կյանքի ու գույքի ապահովություն:

Ինչ վերաբերում է Թուրքահայ բուրժուազիային, նշում է Թոփչյանը, ապա նա միշտ էլ հանդես է եկել տաճկահայ աշխատավորության դեմ: Եվրոպացի հեղինակներից Լարուսը գրել է, որ 1849-1869թթ. հայ գյուղացիները պատրիարքարանին և բարձր դռանը ուղարկել էին ավելի քան 950 բողոքագիր, բայց պատրիարքը դրանք ծածկում էր եվրոպական դեսպաններից և հայ էֆենդիների թելադրությամբ սուլթանին հայտնում, թե ժողովուրդը շատ գոհ է իր վիճակից: 1883-ին Վասպուրականի էֆենդիները շնորհակալական թուղթ են հղում սուլթանին՝ դարձյալ պնդելով, թե «մենք գոհ ենք մեր վիճակից»: 1886թ. Վանում, դասակարգային շահերի հակամարտության հողի վրա, արյունահեղ ընդհարումներ տեղի ունեցան (Պողոսյանների և Ապողոսյանների խնդիրը): Այս օրինակները վկայակոչելով՝ Թոփչյանն ասում էր, որ «զուր են կարծում ընկերները, թե Տաճկահայաստանում չկա դասակարգային դիֆերենցիացիա. կա՛, թեև փոքր աստիճանով: Որքան էլ ամիրաներն ու էֆենդիները ճառեն, նույնիսկ փող տան, ես երբեք չեմ կարող վստահել նրանց»[1]:

Անվերապահորեն պաշտպանելով Ռոստոմի և Թոփչյանի մտքերը տաճկահայության մեջ դասակարգային շերտավորումների, դասակարգային պայքարի մասին՝ Արամ Մանուկյանը, կոնկրետ օրինակներ բերելով Վասպուրականից, նշում էր, որ սուլթանի կառավարությունը հավասար չափով հովանավորում է թե՛ Թուրք և թե՛ հայ հարուստներին: «Մինչդեռ հարուստ հայերը ազատ մուտք ունեն Պոլիս, չունևորները զրկուած են այդ արտոնությունից: Գավառական քաղաքներում, այժմ ևս, դեպքերից յետոյ, հայ հարուստները վայելում են կառավարութեան լիակատար վստահությունը, ավելի, քան քյուրտերը, ինչպես օրինակ՝ Վասպուրականում: Ասել ուրեմն, որ հայ հարուստը Տաճկաստանում նույնքան է ճնշված, որքան աղքատը, սխալ է: Նշանակում է ծանոթ չլինել տաճկահայ իրականութեան հետ: Այնտեղ գոյություն ունեն դասակարգային շերտավորումներ»[2]:

Զարգացնելով Արամի միտքը՝ Զիֆոնի ներկայացուցիչը, պատգամավոր Ստեփան Տեր-Մկրտչյանը (Գագիկ) ասում էր.

Մինչև հիմա «Թուրք ամբոխը կարծել է, որ մեր կռիվը ուղղված է ամբողջ մահմեդական ազգաբնակության դեմ: Այժմ մենք պիտի ցույց տանք, որ մեր կռիվը շահագործող դասակարգի դեմ է՝ լինի դա Տաճկաստանում թե Կովկասում: Մենք միայն մեր հեղափոխական սոցիալիստական գործելակերպով կարող ենք այդ թյուր համոզմունքը Թուրք մասսայի մեջ վերացնել: Դրանով

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 181-182:

[2] Նույն տեղում, էջ 188:

կվերանա նաև կրոնական, ազգային ատելությունը և կը սկսի դասակարգային կռիվ, ոչ թե ազգային կռիվ»[1]:

Արշակ Վռամյանն այն միտքն էր հիմնավորում, որ տաճկահայության քաղաքական կռիվը սկսվել է դաշնագրերից շատ առաջ և որպես օրինակ բերում էր Պոլսի հայոց պատրիարքարանի 1870-ի տեղեկագիրը սուլթանին, որը բացահայտ տնտեսական-սոցիալական շեշտ ուներ: Ապա վկայակոչում է թուրքահայերին տված սահմանադրությունը: Այս երկու կարևոր երևույթները նախապատրաստական շրջան էին, որոնք նպաստեցին հայ ազգային կուսակցությունների երևան գալուն[2]:

Անդրադառնալով տաճկահայություն - Հ.Յ.դաշնակցություն փոխհարաբերության հարցին և սխալ համարելով այն, թե դաշնակցությունը ստեղծվել է բացառապես Թուրքաց Հայաստանի համար՝ Ա. Վռամյանն ասում էր, որ բովանդակ հայությունն իր գոյությունն ապահովելու համար դեռ վաղուց ընդհանուր ձգտում է ունեցել Պոլսից մինչև Թիֆլիս և Էջմիածին: Առաջիններում հայերն իրենց հույսը դրել էին ռուսաց կառավարության վրա՝ կարծելով, թե իրենց փրկությունը գալու է Ռուսաստանից: Նրանք խորապես համոզված էին, որ անպայման կատարվելու է իրենց այդ փափագը, մանավանդ որ ցարիզմի խոստումները հայերին առատ էին: Բայց Պետերբուրգը դրժեց բոլոր խոստումները, և հայերը ստիպված իրենց հայացքը այս անգամ դարձրին դեպի Տաճկաստան: Այլ խոսքով, Վռամյանի միտքն այն էր, որ տաճկահայ ինքնավարության հարցի ի հայտ գալուց առաջ արդեն գոյություն ուներ ռուսահայ ինքնավարության գաղափարը:

Այնուհետև Վռամյանն ասում էր. «Մենք չենք կարող ժխտել դասակարգային կռվի գաղափարը Տաճկահայաստանի վերաբերմամբ, քանի որ դասակարգային ըմբռնումը արմատացած է մեր ժողովրդի մեջ: Հարուստները չեն, որ վարում են մեր դատը (ծափահարություններ): Բուրժուա կոչեցեք նրանց, ամիրա, կղերական կամ այլ՝ ինչ խոստումներ են տվել, բայց ոչ մեկը դրանցից չեն իրագործել: Եվ ես այսօր **տաճկահայ շարժման հիմքը** (ընդգծումը մերն է: - Հ.Ս.) տարբեր չեմ գտնում կովկասյանից. մենք ունենք Թուրքիայում խոշոր թվով գյուղացիություն, որը և իր ուսերի վրա է տարել գործի ծանրությունը»[3]:

Ապա, Արշակ Վռամյանը, իբրև տաճկահայ, իր հայրենակից հականախագծականներին կոչ արեց հրաժարվել քաղաքական նախապաշարումներից, հաշվի առնել հայկական կյանքում առաջացած նոր իրողությունները, ընդունել «Կովկասյան նախագիծը» և կովկասահայ շարժումը դիտել իբրև հարազատ, սրտամոտ գործ: «Ես դա ասում եմ իբրև հայ,- շեշտում էր նա: - Այն ընկերները, որոնք կարծում են, թե տաճկահայերը դեմ են կովկասահայ շարժմանը, լավ կը լիներ, որ այդպիսի մտքեր այլևս չարտահայտեին այստեղ: Տաճկահայերը կ'ընդունեն և կը պնդեն, որ դաշնակցությունն, իբրև համահայկական կուսակցություն, պատրաստ է անցնել և այդ շարժման գլուխը»[1]:

Կովկասում քաղաքական, առավել ևս՝ սոցիալիստական գործունեություն ծավալող Հ.Յ.դաշնակցությունն անհրաժեշտաբար պետք է պատասխան տար նաև այն հարցին, թե **ինչպիսի ակտիվությամբ և ծավալներով է պատրաստվում պայքարի մեջ մտնել Կովկասի տիրող՝ ցարական ինքնակալության հետ,** որը միաժամանակ կովկասահայ բուրժուազիայի պաշտպանն է, բուրժուազիա, որին դաշնակցությունը համարում է իր պատմական հակառակորդը: Կուսակցությունն անխուսափելիորեն կանգնել էր «Իմ թշնամու բարեկամը իմ թշնամին է» հրամայականի առջև:

Հականախագծականները (Սեպուհ, Մուրատ, Վահագն Տաթևյան և ուրիշներ) ընդհանրապես չէին ընդունում ռուսական ցարիզմի դեմ պայքարի ճակատ հարդարելու անհրաժեշտությունը[2]: Նրանց հիմնական փաստաթղթերն էին. ա) Հայությունը չի կարող սակավաթիվ ուժերով միաժամանակ պայքար մղել երկու ճակատով՝ սուլթանական Թուրքիայի և ցարական Ռուսաստանի դեմ: Այդ պայքարի արդյունքը չի կարող համապատասխան լինել զոհողությանը: Հայերը սահմանից այն կողմ դատ ունեն՝ հանձնված վեց մեծ պետությունների խնամակալությանը, որոնցից մեկն էլ Ռուսաստանն է: Զգույշ պետք է լինել և չպետք է գրգռել ռուսական կառավարությանը, «եթե չենք ուզում, որ մեր երկիրը փլատակների վերածվի, բ) Ցարական կառավարության դեմ պայքարը խիստ վտանգավոր է հատկապես այն պատճառով, որ Ռուսաստանում տիրում է ռեակցիոն ռեժիմ, որի հետ ոչ մի հույս չեն կարող կապել հայերը՝ իրենց դատի լուծման հարցում: Եթե երկիրը դառնա պառլամենտական, այն ժամանակ հնարավոր կլինի եթե ոչ ուժային, ապա քաղաքական միջոցներով նրան բերել հայկական դատի պաշտպանության կողմը, գ) 1905թ. հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստի մեջ կիսով չափ արտահայտված են Հ.Յ.Դ. «Կովկասյան նախագծում» առաջադրված քաղաքական և տնտեսական պահանջները: Մանիֆեստով ռուսական կառավարությունը խոստանում է Երկրին, այդ թվում Կովկասին, տալ սահմանադրություն, որում ամրագրվելու են գույքի, անձի ու պատվի ապահովության, կրոնի, խոսքի, մամուլի և ազգային մշակույթի ազատության պահանջները: Այս պայմաններում չարժե ռուսաց կառավարության մոտ հայությանը ներկայացնել որպես մշտապես անհանգիստ ու խռովարար տարրի: Իբրև հայության մեծ մասի կամքի արտահայտիչ, դաշնակցությունն առայժմ պետք է ցույց տա, որ ինքը գոհ է հաստատվելիք սահմանադրական կարգերից: Իսկ եթե այդ խոստացած կարգերը ձևական ու խաբուսիկ լինեն, ապա, անկասկած, ռուսական ողջ ընդդիմու-

---

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 185:
[2] Նույն տեղում, էջ 176:
[3] Նույն տեղում:

---

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 185:
[2] Նույն տեղում, հատ. Գ, էջ 160, 162, հատ. Դ, էջ 192, 260, 291:

թյունը կդիմի զենքի, կտապալի միապետությունը և կստեղծի հասարակապետություն: Միայն այդ դեպքում Հ.Յ.Դ.-ն կարող է միանալ Կովկասի մյուս սոցիալ-հեղափոխական կուսակցություններին և պայքար մղել երկրամասում շվեյցարականի նման մի առանձին պառլամենտ ստեղծելու համար, դ) Եթե Տաճկաստանում հայության դեմ մղվում է ազգային բնաջնջման պայքար, ապա Ռուսաստանում և Կովկասում տեղի է ունենում հայության իրավունքների կոպիտ ոտնահարում, ստորացում և հալածանք: Այլ խոսքով՝ տաճկահայության վիճակը շատ ավելի տագնապալի է, քան ռուսահայությանը: Ուստի, եթե նույնիսկ սոցիալիստական հողի վրա գործելու որոշ մասնավոր պահանջներ էլ լինեն, այնուամենայնիվ, ներկա համազգային տագնապի պայմաններում ավելի անհրաժեշտ ու բնական է, նաև՝ ավելի բարոյական՝ կյանքին սպառնացող վտանգի առջև զոհել տնտեսական, սոցիալական շահերը: Հետևապես Հ.Յ.Դ.-ն առաջին հերթին պետք է լուծում տա իր նպատակների քաղաքական մասին՝ ազգային խնդրին, որից հետո միայն, որպես կյանքի անվտանգությունը երաշխավորված ու ապահով մի ազգ, անցնի յուր հեռավոր նպատակների իրականացմանը՝ արդեն տնտեսական ու սոցիալական հողի վրա ծավալված գործունեությամբ, ե) «Կովկասյան Նախագիծը» ռուսական կառավարության դեմ կռվի կոչ է անում այն ժամանակ, երբ դեռ վերջ չեն տրված հայ-թաթարական ընդհարումներին, որոնց ընթացքում հայերը «վերջին ստրաժնիկի սիրտը շահելու միջոցով» փորձում էին նույն կառավարությանը համոզել, որ իրենք զահի հավատարիմ հպատակներ են: Վերջին մեկուկես տարվա ինքնապաշտպանական չնախատեսված ու դժվարին կռիվները ցույց տվեցին, որ դաշնակցությունը միայն գերագույն ճիգերով, ժողովրդային միահամուռ գործակցությամբ և անհուն զոհողություններով հազիվ կարողացավ դիմադրել թաթարական խուժանի դեռևս չկազմակերպված հարձակումներին, ուստի այդ պարագային ցարիզմի դեմ կռիվ մղելն անխոհեմություն է, նշանակում է քանդիչ հարված հասցնել տաճկահայ հեղափոխությանը և մահացու վտանգ կախել ողջ հայության գլխին: Եթե դաշնակցությունը մաս կազմի ռուսական հեղափոխությանը և կռիվ հայտարարի կառավարությանը, այդ դեպքում նա նոր ուժով կբորբոքի կովկասյան թաթարների հարձակումները հայերի դեմ, ավելին՝ իր կազակներով, սևհարյուրակայիններով ու խուլիգանների խմբերով կմիանա նրանց, զ) Քանի որ ռուսական հեղափոխական շարժումը անհաջող ընթացքի և աննպաստ պայմանների մեջ է, ուստի դաշնակցության վերաբերմունքը ռուսական ընդհանուր շարժման նկատմամբ պետք է լինի կրավորական և սպասողական կամ առավելագույնը՝ մնա Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովի (1904թ.) ընդունած որոշումների շրջանակներում:

Նախագծականները ստիպված էին մեկ առ մեկ անդրադառնալ իրենց ընդդիմախոսների պատճառաբանություններին և դրանք ժխտել ոչ պակաս համոզիչ փաստարկումներով[1]. ա) Ռուսահայ դաշնակցականները դավաճանած կլինեն իրենց սոցիալիստական սկզբունքներին, եթե ակտիվորեն չմասնակցեն կայսրության մեջ ծավալված քաղաքական այն կռվին, որն ուղղված է ռուսական բյուրոկրատիայի դեմ: Ցարիզմի գոյության ամեն մի օրն ու ժամը նոր դժբախտություններ է բերում հայությանը և կայսրության ամեն մի հպատակ ժողովրդի: Ուրեմն կյանքի հրամայական թելադրանքն է՝ կռվել ռուսաց կառավարության ամեն մի հակաժողովրդական ձեռնարկի դեմ և պայքարել այնքան, մինչև որ ստեղծվի իրավական կարգեր ունեցող պետություն: Միայն ժողովրդապետական Ռուսաստանը կարող է նպաստել հայ դատի հաջող լուծմանը, ուստի դաշնակցությունը պետք է լինի ժողովրդական հեղափոխական ուժերի կողքին, բ) Սոցիալիստական սկզբունքներ որդեգրած դաշնակցությունը չի կարող պայքարի մեջ չմտնել ցարական ինքնակալության դեմ, թեկուզ և այն պատճառով, որ վերջինս հայ բուրժուազիայի պաշտպանն է, գ) Բռնակալների սիրտը հլու-հնազանդությամբ չէ, որ կարելի է շահել, ստորաքարշ հպատակության և անտրտունջ հավատարմության մասին խոստումները չեն, որ կարող են նպաստել ցարիզմի կողմից տաճկահայ դատի նկատմամբ բարյացակամ վերաբերմունք ցուցաբերելուն: Ցարական կառավարությունն էր, որ համարյա գերեզման փորեց տաճկահայ դատի համար: Բեռլինի կոնգրեսից սկսած՝ նա միշտ էլ դավեր է նյութել տաճկահայ ազատագրական շարժման դեմ, իսկ եթե հայերի օգտին որոշ հայտարարություններ է արել, ապա սոսկ այն նպատակով, որ նրանց ձեռքով չագանակներ հանի կրակից, դ) Հաճախ ռուս, լեհ, վրացի և ուրիշ ազգերի հեղափոխականներից դաշնակցությունը նախատինքի խոսքեր է լսել, թե նա մնացել է ազգային նեղ աղուրի մեջ՝ առանց դիմելու քաղաքական լայն ձեռնարկների: Ռուսաստանում ցարիզմի դեմ վճռական պայքարի մեջ են երկու մեծ կուսակցություններ՝ սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-հեղափոխականների: Հ.Յ.Դ.-ն, որի ծրագիրը հիմնված է պատմական որոշ հասկացողության վրա, պիտի անմիջական կապեր հաստատի այդ կուսակցություններից երկրորդի՝ սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) կուսակցության հետ, որի ըմբռնումներն ու պայքարի տակտիկան շատ մոտ են դաշնակցությանը: Հ.Յ.Դ.-ն սերտ կապերի մեջ պետք է լինի նաև վրացական ֆեդերալիստների, լեհական PPS-ի և այն կուսակցությունների հետ, որոնց ծրագրերը մոտ են դաշնակցության ծրագրին:

ՏԵՂԵԿԱԳՐԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Ընդհանուր ժողովի օրակարգային երկու գլխավոր հարցերի՝ «Կովկասյան Նախագծի» և սոցիալիզմի խնդրի քննարկումների ընթացքում, տարբեր նիս-

[1] Տե՛ս **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 152, 163, հատ.Դ, էջ 260:

տերում պատգամավորները ծանոթանում էին Հ.Յ.Դ. երկու բյուրոներից և կենտրոնական կոմիտեներից ստացված տեղեկագրերին ու գրություններին՝ կուսակցության երրորդ և չորրորդ ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում իրենց շրջաններում կատարված աշխատանքների մասին: Դրանցից մի քանիսն իրենց հետ բերել էին պատգամավորները, բայց տեղեկագրերի մեծ մասը տարբեր ճանապարհներով և տարբեր միջոցներով Վիեննա էին հասել մեծ ուշացումով: Շատ տեղեկագրեր գրվել էին ամիսներ, իսկ մի քանիսը՝ նույնիսկ մեկ տարի առաջ: Քանի որ Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովը նախապես որոշվել էր հրավիրել 1905թ. վերջերին կամ 1906-ի սկզբներին, բայց պայմանների բերումով այն կայացել էր 1907թ. առաջին կեսին, այդ պատճառով ժողովին ներկայացրած տեղեկագրերի մի մասը, պատրաստված լինելով 1905թ., չէր ընդգրկում 1906-ին կատարած աշխատանքները: Օրինակ՝ Իշխանի կողմից ժողովին ներկայացրած՝ Լեռնապարի կ.կոմիտեի տեղեկագրի բովանդակությունից երևում է, որ այն նույնպես կազմվել է 1905 թվականին: Դա էր հիմնական պատճառը, որ տեղեկագրերի մի մասը ինչ-որ տեղ արդեն հնացել էր: Չնայած դրան, այդ փաստաթղթերն այսօր էլ իրենցից մեծ կարևորություն են ներկայացնում Հ.Յ.Դ. տեղական մարմինների գործունեությունը լուսաբանելու տեսակետից, նաև պարունակում են խիստ արժեքավոր տվյալներ երկու Հայաստանների տարբեր գավառների տնտեսության, ազգամիջյան հարաբերությունների, բնակչության կրթական և քաղաքական մակարդակի, ազգային սովորույթների ու կենցաղի և այլ հարցերի վերաբերյալ:

Տեղեկագրի մեջ կուսակցության վերին մարմիններին ներկայացված էին նաև մի շարք կոնկրետ պահանջներ:

Այսպես, Հ.Յ.Դ. Լեռնապարի կ.կոմիտեն ընդհանուր ժողովի դիվանին ներկայացրած տեղեկագրում ամբողջ սրությամբ դրել էր երկրում գործող դաշնակցական մարմինների միջև կապերն ամրապնդելու և դրանց գործողությունները համակարգելու պահանջը: Կոմիտեի կարծիքով՝ այդ խնդիրը լուծելուց հետո ապագայում հնարավոր կլինի «միացնել տաճկահայ դատի շուրջ կատարվող և տեղի ունեցող բոլոր երևույթները, և հենց դա միայն կարող է օգտակար լինել: Հակառակ պարագային այստեղ-այնտեղ երևացող մասնակի երևույթները պիտի ջլատեն յեղափոխական ուժը, և գործի թափը պիտի քայքայուի»: Ելնելով դրանից՝ կոմիտեն գտնում էր. «Ըստ մեզ կարևոր է Երկրի մեջ ունենալ մի ընդհանուր պատասխանատու մարմին, որի ձեռքը կ'անցնի այդ միացման և համերաշխ գործունեութեան կերպարանք տալու դերը, և միայն նրա գործը կ'ամփոփուի այդ բանի մեջ: Պատասխանատու մարմին կը վերապահուի նոր վայրեր ընտրել՝ նոյնպես նոր գործունեութեան ասպարեզցանցեր կազմելու համար»[1]:

Շամի (Վասպուրականի) կ.կոմիտեի տեղեկագիրը, որը, հավանաբար, իր

[1] «Նյութեր...», հատ.Դ, էջ 46:

հետ Վիեննա էր բերել Արամ Մանուկյանը, անշուշտ, պետք է պարունակեր մի շարք սկզբունքային հարցադրումներ: Մենք չգիտենք, թե այդ տեղեկագրի մեջ կոնկրետ ինչ առաջարկություններ են եղել, որովհետև, ցավոք, փաստաթուղթը չի պահպանվել ժողովի արձանագրություններում*: Հնարավոր է, որ տեղեկագիրը ոչնչացվել է դեռ Երկրում թուրք ոստիկանության ձեռքը չգցելու համար, և ժողովին Արամը ստիպված է եղել տալ բանավոր տեղեկություն: Դա բացառված չէ, եթե նկատի ունենանք, օրինակ՝ Մրգաստանի (Երևան) պատվիրակ Հակոբ Զավըրյանի՝ ընդհանուր ժողովի 66-րդ նիստում ունեցած ելույթի հետևյալ խոսքերը. «Ես չեմ կարող իմ շրջանի կարծիքները լրիվ առաջ բերել, որովհետև ժողովը (նկատի ունի շրջանային ժողովը: - Հ.Ս.) վերջանալու մոտ, մենք ոստիկանական արշավանքի ենթարկվեցինք և ստիպված եղանք ոչնչացնել մեր բոլոր թղթերը, որոնց հետ նաև մեր որոշումները. հետևյալ օրերին մենք նորից գրի անցկացրինք այդ որոշումները, բայց չտապով ու առանց բացատրությունների»[1]:

Այնուամենայնիվ, Հ.Յ.Դ. Շամի կազմակերպության բովանդակության մասին ընդհանուր մոտավոր պատկերացում ենք կազմում ելնելով ժողովում Արամի տված զեկուցումներից, ունեցած ելույթներից, կատարած դիտողություններից, ինչպես նաև որոշ կողմնակի նյութերից: Այդ նյութերից, մասնավորապես, իմանում ենք, որ կոմիտեն կտրուկ պահանջել էր լուրջ փոփոխություններ մտցնել կուսակցության պայքարի տակտիկայի մեջ, այլապես ժողովրդին սպասվում են նոր արհավիրքներ:

Այսպես, Արամին գրած մի նամակում (21.03.1907) Շամի կենտկոմի անդամ Համազասպ Բաղեշցյանը (Սալման), անդրադառնալով Երկրում կուսակցության պայքարի տակտիկային, գրել էր. «... Տակտիկի մասին այնքան կ'ասեմ միայն, որ եթե ուզում են ժողովուրդը կոտորել տալ, թող նախկին տակտիկը ընդունեն»[2]:

Ժողովի դիվանին Արամի կողմից ներկայացրած մի բանաձևի նախագծի տեքստի բովանդակությունից կարող ենք ենթադրություն անել, որ Շամի տեղեկագրում նաև առաջարկ էր եղել կուսակցության կազմակերպական կանոնների վերաքննությունը կատարել միայն ռայոնական ժողովների իրավասության սահմանների հարցը հանգամանորեն քննելուց հետո՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ընդհանուր ժողովում չի որոշվել այդ ժողովների իրավասության, նաև դրանց ազդեցության տարածման սահմանները[3]:

* Ընդհանուր ժողովի արձանագրությունների մեջ չեն պահպանվել նաև Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյի, Լեռնավարի (Կիլիկիա), Մեծ Քաղաքի (Թիֆլիս) և Վիշապի (Պոլիս) կ.կոմիտեների պատասխանատու մարմնի տեղեկագրերը, ինչպես նաև մի շարք զեկուցագրերի տեքստեր: Հավանաբար կորած պետք է համարել նաև Դուրան-Բարձրավանդակի կ.կոմիտեի ծածկագիր տեղեկագրի առաջին տետրակը (տե՛ս «Նյութեր...», հատ. Դ, էջ 44):

[1] «Նյութեր...», հատ. Գ, էջ 173:

[2] Նույն տեղում, հատ. Դ, էջ 6:

[3] Նույն տեղում, հատ. Գ, էջ 26:

Ելնելով Հ.Յ.Դ. Շամի կոմիտեի տեղեկագրի ոգուց՝ Արամ Մանուկյանը, որպես Վասպուրականի պատգամավոր, ընդհանուր ժողովում բարձրացնում էր մեկը մյուսից կարևոր հարցեր: Դրանք էին՝ հեղափոխական զինված ձեռնարկների նկատմամբ հստակ վերաբերմունքի մշակում, անհրաժեշտ դասեր քաղելու նպատակով սուլթանի անհաջող մահափորձի քննություն, Կովկասում հայկական կոմիտների հետ կապված խնդիրների արծարծում և ընդհարումների ընթացքում թուրքահայ ֆիդայիների մասնակցության գնահատում, կուսակցության ներսում ծագած անջատողական շարժումների նկատմամբ թուրքահայ ընկերների վերաբերմունքի պարզաբանում, Պարսկաստանի հեղափոխական շարժումներին Հ.Յ.Դ. մասնակցության նպատակահարմարության և դրանց նկատմամբ թուրքահայ ընկերների վերաբերմունքի պարզաբանում, սոցիալիզմի տեսության և պրակտիկայի հանդեպ կոնկրետ գործնական տեսակետի մշակում և այլն[1]:

Բազմաթիվ ցավոտ հարցեր էին բարձրացված ժողովի դիվանում ստացված Դուրան-Բարձրավանդակի կ.կոմիտեի տեղեկագրում, որ կազմվել էր 1906-ի նոյեմբերին և ստորագրվել Ռուբենի ու Գեղամի կողմից: Տեղեկագրի հեղինակների հիմնական մտահոգությունը շրջանում հայ բնակչության զինվածության ծայրահեղ անբավարար վիճակն էր:

Երբ սուլթանական իշխանությունները նորանոր ծրագրեր էին մշակում Դուրան-Բարձրավանդակը հայերից դատարկելու համար, զենքերի պակասը կամ չգոյությունը ուղղակի աղետալի դրություն էր ստեղծում: Տեղեկագիրը տագնապ էր բարձրացնում.

«... Մի գործ տեսնելու համար ունենք ոչինչ. կայ գեղեցիկ կազմակերպութիւն և դրան կից ժողովուրդի բայքայում եւ ոչնչացում:

Մենք կարծում ենք, թե ճիշտ է, որ յեղափոխութիւնը իւր ապագայ սպասելիքները պէտք է հիմնէ ժողովրդի արեան, նրա ոսկորների վրայ, բայց նա միեւնոյն ժամանակ պարտաւոր է լուրջ կերպով մտածել յեղափոխութեան պատրաստութեան վրա, որ վերջը նպատակին ծառայէ այդ հազար ու հազար նահատակների վրէժ արիւնը: Եթէ կազմակերպութեան կից չմտածենք լուրջ պատրաստութեան մասին, այդ կը լինի մեր կողմից մի սոսկալի դաւադրութիւն, մի սոսկալի ոճրագործութիւն: Մեր այժմեան այստեղի գործունէութիւնը աննպատակ է, քանի չի մտածւում ուժի մասին, մենք սրբու կերպարանքով ոճրագործներ ենք, ուստի առաջարկում ենք ձեզ.

Ուզենանք թե չուզենանք, յեղափոխութիւնը պէտք է շարունակուի, ուստի կազմակերպութիւնը պէտք է մնայ, բայց կորուստից խուսափելու համար պարտաւոր էք կշեռքի միւս նժարի վրայ լեցնել առատ ոսկի, ծայր, հրացան. եթէ ոչ, պիտի գլորուի 150 000-ից բաղկացած մի ժողովուրդ դէպի գահավէժ անդունդը: Զեռքից գնաց ժողովուրդը, և դեռ շատ կը փճանայ, եթէ անտարբեր մնաք»:

Կովի համար Դուրան-Բարձրավանդակի հայ բնակչության անպատրաստ լինելը կ.կոմիտեին ստիպել էր տեղեկագրում նաև շեշտել, որ ստեղծված պայմաններում բացառված է անգամ մտածել շրջանում մի նոր ապստամբություն բարձրացնելու մասին: «Ի նկատի ունենալով Դուրանի աշխարհագրական դիրքը, մեր բուն նպատակը չի կարող լինել Դուրանն ընդունել որպես ապստամբավայր: Մեր նպատակն այդ վայրում պետք է լինի ժողովրդին ինքնապաշտպանութեան պատրաստելը»[1]:

Դուրան-Բարձրավանդակի դաշնակցական ղեկավարության այդ մտահոգությունը զուր չէր:

Դեռևս 1905թ. Հ.Յ.Դ. խորհուրդը, նկատի առնելով, որ եվրոպական ազդու միջամտություն առաջ բերելու և Հայկական հարցը լուծելու համար անհրաժեշտ է երկարատև, ուժեղ դիմադրություն, իսկ այդպիսի դիմադրությունը հնարավոր է միմիայն լուրջ պատրաստությունից հետո, որոշել էր.

«Ա. Նույս տալով ամեն տեսակ կանխաժամ ու վտանգող որևէ ընդհարումից, զգուշավոր, լիակատար և իրական պատրաստությամբ հայ կռվող ազգաբնակչության մի զգալի մասը զենքով դիմադրելու կարողության մեջ դնելուց հետո՝ ընդհանուր շարժում առաջ բերել Վասպուրականում և Լեռնավայրում, ամեն կերպ աշխատելով հիշյալ երկու վայրերի շարժումները համաձայնեցնել իրար հետ:

Բ. Թուրքիո և ուրիշ որևէ պետության միջև լինելիք պատերազմի դեպքում փութացնել շարժումը Լեռնավայրում ու Վասպուրականում հայկական հարցը առաջ մղելու համար՝ նախապես համաձայնություն կայացնելով երկու Բյուրոների և նույն վայրերի պատասխանատու մարմինների հետ»[2]:

Դաշնակցության խորհուրդը ապագա երրորդ ապստամբավայրը համարում էր Սեբաստիայի նահանգը՝ նկատի առնելով, 1. որ այն աշխարհագրական և տեղագրական տեսակետով, անտառների ու լեռների առատությամբ առանձին հարմարություններ է ներկայացնում ռազմական ձեռնարկների տեսակետից, 2. որ այն, իբրև հայկական վեց վիլայեթներից մեկը, ավելի մոտ է Եվրոպային, հետևապես այնտեղի անցքերը ավելի դյուրությամբ կը դառնան քաղաքական աշխարհի սեփականություն, 3. որ այնտեղ հայաբնակ վայրերի շուրջը չկան բարբարոս քրդական ցեղեր, որոնք այնքան վտանգավոր են հեղափոխական գործի [համար] հայ երկրի մյուս վայրերում[3]:

Ինչպես տեսնում ենք, հարևան Վասպուրականում նոր ապստամբություն բարձրացնելու մասին Հ.Յ.Դ. ղեկավարության դիրքորոշումը տագնապ էր առաջացրել Դուրան-Բարձրավանդակի ղեկավարության մեջ: Սասունը և Մշո

---

[1] Տե՛ս **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով, հատ. Բ, էջ 89:

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 60:
[2] Նույն տեղում, էջ 82:
[3] Նույն տեղում, էջ 82-83:

դաշտը ուժասպառ էին: Վասպուրականում ապստամբություն բարձրացնելու դեպքում անխուսափելի էր լինելու ալիքի տարածումը Մշո դաշտի, Սասունի և Տարոնի վրա: Այդ դեպքերում նշված շրջանների համարյա անգեն հայությունը անխուսափելիորեն ենթարկվելու էր զանգվածային կոտորածի:

Այսքանից հետո միանգամայն հասկանալի է դառնում այն մեծ տագնապը, որ Հ.Յ.Դ. Դուրան-Բարձրավանդակի կ.կոմիտեն արտահայտել էր ընդհանուր ժողովի դիվանին հղած տեղեկագրի մեջ*:

Իրենց տեղեկագրերով տեղական մի շարք կոմիտեներ ընդհանուր ժողովից պահանջում էին պատրաստել և ընդունել մի ընդարձակ կանոնագիր, ուր մանրամասնորեն, հստակ ու որոշակի գծված լինեն Հ.Յ.Դ. բյուրոների, կ.կոմիտեների, կոմիտեների, ենթակոմիտեների, խմբերի ու գործիչների հարաբերությունները, նրանց գործելու եղանակը, սահմանը և իրավասությունը[1]:

Թուրքահայաստանից ստացված տեղեկագրերի մեջ արտահայտված էին նաև ազատագրական պայքարը շարունակելու նպատակահարմարությունը կասկածի տակ առնող տրամադրություններ:

Մարդիկ կ.կոմիտեներին հարցումներ էին անում՝ կարժե՞ր արդյոք այն գերմարդկային ու տիտանական աշխատանքը, անսպառ ճիգը, անհուն զոհաբերությունը, մարդկային արյան այն խոշոր տուրքը, որ հայ ժողովուրդը տալիս է ի խնդիր իր ազատության: Պե՞տք էր, որ հանուն օսմանյան կայսրության կազմում ինքնավարություն ձեռք բերելու՝ ոչնչանային հարյուր հազարավորներ, ամայանար հայոց բնաշխարհը, և ժողովրդի դժբախտ բեկորները՝ վերածված մուրացկանների ողբալի բազմության, բախեր օտարների դուռը և նրանցից թախանձագին խնդրեր կծկվելու մի անկյուն:

Հարցադրումը հստակ էր, մտը ուղղակի դրված էր ցավոտ վերքի վրա: Տեղեկագրերի քննարկման ժամանակ նման հարցադրման պատասխանը նույնքան հստակ էր լինում Թուրքերի կողմից հայերի հալածանքներն ու ջարդերը հետևանք չեն երկու տասնամյակ առաջ սկսված ազատագրական շարժման, դրանք հարյուրամյակների պատմություն ունեն: Նախահեղափոխական Հայաստանում նույնպես սովորական բաներ էին հայերի սպանությունը, բռնի կրոնափոխությունը, թալանը, հազար ու մի ուրիշ բարբարոսություններ: Եվ հայ մարդը այդ ամենի հանդեպ լուռ ու մունջ էր, հայությունը նման էր երկչոտ ու պատվազուրկ ողորմելի մի բազմության: Եթե չլիներ ազատագրական շարժումը, միևնույն է, հայությունը իր սեփական հայրենիքում անխուսափելիորեն կոչնչանար, և Հայաստանը, զրկված իր բնիկ ժողովրդից, կդառնար լոկ աշխարհագրական հասկացողություն: Հետևապես հայերը պետք է շարունակեն ինքնապաշտպան կռիվը, հարվածին պատասխանեն հարվածով, այլ ոչ թե սողան ոճրագործ իշխանավորների ոտքերի տակ:

Միայն նա՛ է արժանի կյանքի, ով ամեն օր կռվով նվաճում է իր ազատությունը:

* Չնայած այդ հարցում Դուրան-Բարձրավանդակի և Հ.Յ.Դ. ուրիշ կ.կոմիտեների անհանգստությանը, դրանց համառ ու թախանձագին պահանջին, երկրին վերաբերող խնդիրների առնչությամբ, այնուամենայնիվ, ընդհանուր ժողովը որոշեց, թե Թուրքահայաստանի ո՛ր վայրերում պետք է բռնկվի ապստամբություն, երբ տրվի ընդհանուր ազդանշան:

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 170:

Հ.Յ.Դ.-Ն ՊԱՌԱԿՏՄԱՆ ԻՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԻ ԱՌՋԵՎ

Ընդհանուր ժողովում քննարկվող «Կովկասյան նախագծին» և սոցիալիզմին վերաբերող երկու գլխավոր հարցերն իրենց մեջ պարունակում էին ներքին մեծ լարում, որը սպառնում էր առաջ բերել արագ հանգուցալուծում ավերիչ հետևանքներով: Բարեբախտաբար, ժողովը գնաց ոչ թե կուսակցության թուլացման, այլ նրա շարքերն էլ ավելի համախմբելու ուղիով:

ԲԱԽՏՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

Ծավալված վիճաբանությունների արդյունքում դաշնակցությունը կանգնել էր երկատման և քայքայման դեմ հանդիման:

Ինչպես արդեն ասվել է, Հ.Յ.Դ. երկատման գաղափարն առաջին անգամ հրապարակ էին նետել դաշնակցությունից դուրս նրա քաղաքական հակառակորդները, որոնք ոչ մի կերպ չէին ուզում հաշտվել այն մտքի հետ, որ կուսակցությունը գործելու է նաև Կովկասում: Այդ գաղափարին անմիջապես արձագանք տվեցին տաճկահայ այն խմբերը, որոնք ցանկացան անջատման ուրվականով վախեցնել Հ.Յ.Դ. ղեկավարությանը, նրան ստիպել Կովկասում գործելու միտքը թողնել և կենտրոնանալ միմիայն Թուրքահայաստանում: Շատ չանցած՝ այդ կործանարար գաղափարին արձագանք տվեցին նաև Հ.Յ.Դ. շարքերին պատկանող անդամներ՝ ոմանք կատարյալ անկեղծությամբ, ուրիշները՝ կուսակցության ղեկավարությանը հարվածելու միտումով: Ըստ որում, երկփեղկման ու անջատման մի քանի կողմնակիցներ այնքան հեռու գնացին, որ սկսեցին քարոզել ու պնդել, թե տաճկահայ դատը և քաղաքական շարժումը ոչ այլ ինչ են, քան մի բուրժուական շարժում՝ ստեղծված հայ բուրժուազիայի ձեռքով ու ջանքերով, և, հետևաբար, ծառայել այդ շարժմանը, նշանակում է ծառայել բուրժուազիային:

«Կովկասյան նախագծի» քննարկումների ժամանակ դաշնակցության երկատմանն ուղղված առաջարկություններ էին արվել կուսակցական կազմակերպությունների ժողովներում և կ.կոմիտեների նիստերում, ընդունվել էին որոշումներ, միաժամանակ ընդհանուր ժողով մեկնող պատգամավորները պատվեր էին ստացել՝ խստորեն առաջնորդվել այդ որոշումներով: Այդպիսի հրա-

հանգներ էին ստացել Հ.Յ.Դ. Եվրոպայի ուսանողների միության, Ռուսաստանի ուսանողների միության, Նալբանդի (Նոր Նախիջևանի) կազմակերպության և այլ կազմակերպությունների կողմից ժողով մեկնած պատգամավորները:

Հ.Յ.Դ. Նալբանդի կ.կոմիտեն այն տեսակետին էր, որ եթե կուսակցությունը, Տաճկահայաստանից բացի, իր գործունեությունը տարածի նաև Կովկասի վրա, ապա դաշնակցության մեջ անհրաժեշտ կլիներ ստեղծել երկու գաղափարախոսություն՝ մեկը զուտ դասակարգային՝ կովկասահայության շրջանում աշխատանք տանելու համար, մյուսը՝ ազգադասակարգային և ազգային՝ տաճկահայության շրջանում: Բայց և՛ Տաճկաստանում, և՛ Ռուսաստանում միաժամանակ գործելու դեպքում կուսակցությունն անխուսափելիորեն կդատապարտվի կիսաազգային-կիսադասակարգային դերի՝ միշտ նստած երկու աթոռների մեջտեղը, զրկված լինելով և՛ տաճկահայության, և՛ կովկասահայության աջակցությունից: Ուստի, այդ հանգամանքը նկատի ունենալով, Նալբանդի դաշնակցականներն այն կարծիքին են հանգել, որ Հ.Յ.դաշնակցությունը առաջվա պես պետք է մնա միայն իբրև Տաճկաստանի կուսակցություն, իսկ Կովկասում տեղի տա սոցիալիստ-հեղափոխականների սկզբունքներով առաջնորդվող և զուտ դասակարգային հողի վրա գործող մի ուրիշ կուսակցության[1]:

Հ.Յ.Դ. ապագայի նկատմամբ մոտավորապես նույնպիսի դիրք բռնեցին Ռուսաստանի և Եվրոպայի դաշնակցական ուսանողական միությունները:

Դաշնակցության խորհրդին՝ Մոսկվայի և Պետերբուրգի ուսանողների ուղարկած համատեղ տեղեկագրում ընդգծվում էր, որ տաճկահայերի կռիվն իր բնույթով եղել և մնում է ազգային, իսկ կովկասահայերինը՝ դասակարգային, սոցիալիստական և միջազգային, այսինքն՝ այդ երկու դատերն իրենց էությամբ և նպատակներով միմյանցից խիստ տարբեր են, հետևապես դրանց ղեկավարությունը պետք է հանձնել իրարից բոլորովին անկախ երկու առանձին կուսակցությունների: Ըստ որում, Տաճկահայաստանում գործող հեղափոխական կուսակցությունը պետք է Կովկասում ունենա իր ներկայացուցիչ մարմինը, որը կապող օղակ կլինի թուրքահայ հեղափոխական կուսակցության և կովկասահայության բոլոր խավերի միջև, կգլխավորի վերջիններիս կողմից թուրքահայերին ցույց տրվելիք օգնության և օժանդակության գործը[2]:

[1] **«Նյութեր...»**, հատ.Դ, էջ 270: Հարկ է նշել, որ Հ.Յ.Դ Նալբանդի կազմակերպությունը կուսակցության չորրորդ ընդհանուր ժողովի նախօրյակին նահանջեց իր այս խիստ որոշումից: Շրջանային ժողովում առաջիկա ընդհանուր ժողովի պատգամավոր ընտրված Սիմոն Վրացյանին (Սիգ) 1907թ. փետրվարի 2-ին լիազորագրով պատվիրված էր. «Ի նկատի ունենալով, որ ընդհանուր ժողովում կարող է ռուսահայկական և տաճկահայկական դատերի բաժանման խնդիրը բարձրանալ՝ պատգամավորին տրվում է հետևյալ հանձնարարականը. բաժանման և ոչ բաժանման հարցում «Նալբանդի» պատգամավորը ձեռնպահ պիտի մնա քվեարկությունից, իսկ կոմպրոմիսների մեջ ազատ է» (**«Նյութեր ...»**, հատ.Դ, էջ 16): Տեղեկագրի տակ դրված է «Արտուր» ստորագրությունը, որը Ռուսաստանի դաշնակցական ուսանողների միության նախագահ Ավետիք Շահխաթունյանի ծածկանունն է:

[2] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 337:

Եվրոպայի դաշնակցական ուսանողության միության Բեռլինի մասնաճյուղի անդամները նույնպես այն կարծիքին էին, որ «տաճկահայ և կովկասահայ աշխատավոր ժողովրդի շահերը պահանջում են ամբողջովին զատել այդ երկու դատերը և դրանք հանձնել երկու անկախ կուսակցությունների[1]: Ըստ որում, առաջարկվում էր, որ յուրաքանչյուրը յուր սահմաններում կատարելապես ինքնուրույն այդ երկու կուսակցությունները պետք է իրար հետ կապվեն դաշնակցային (ֆեդերատիվ) կապերով[2]:

Միմյանցից խիստ տարբեր, հաճախ էլ փոխադարձաբար իրար ժխտող այս բոլոր տեսակետները, որ բերվել էին ընդհանուր ժողով, չափազանց վտանգավոր լինելով, ուղղակի խփում էին Հ.Յ.Դ. կազմակերպական հիմքերին և կարող էին նրա քայքայման ու վերացման պատճառ դառնալ:

Ընդհանուր ժողովին նախորդած քննարկումների ընթացքում և բուն ժողովում կազմած արձանագրությունների ու այլ նյութերի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ կուսակցության երկատման կողմնակիցները չունեին հիմնավոր պատճառաբանություններ, նրանց առաջարկները արդյունք չէին կուսակցության ներսում և նրա շուրջ գոյություն ունեցող քաղաքական իրական կացության: Այդ է պատճառը, որ Շահխաթունյանը և Արշակ Խաչակյանը (Ջամալյան), որոնք 68-րդ նիստում հանդես եկան կուսակցությունը երկու առանձին և ինքնուրույն մասերի բաժանելու անհրաժեշտության մասին զեկուցումներով, առաջ բերեցին բուռն վիճաբանություններ:

Նախագծականների կողմից հիմնավոր ու փաստարկված ելույթ ունեցավ Եղիշե Թոփչյանը: Նա նշում էր, որ Հ.Յ.Դ.-ն պետք է լինի միասնական, որ նրա բաժանման և երկու կուսակցությունների ստեղծման մասին խոսք անգամ լինել չի կարող, քանի որ սոցիալիստական գաղափարների համար հող է ստեղծված ոչ միայն Կովկասում, այլև Տաճկահայաստանում, որտեղ նույնպես, ճիշտ է՝ թույլ, բայց առկա է դասակարգային պայքարը[3]: Նա իրավացիորեն գտնում էր, որ Հ.Յ.Դ. միասնական կուսակցության «բաժանումներից կ'օգտվեն մեր հակառակորդները. կը ստեղծուի մի խառնաշփոթ կացություն, և մեր բոլորիս սկզբունքները կը վտանգուեն: Բաժանման անհրաժեշտություն չկա, միևնույն ուղղությամբ մենք կը գործենք երկու վայրերում ևս: Եթե պրոֆեսիոնալ միություններ ենք կազմում և ագրարային շարժումներ առաջացնում Ալեքսանդրապոլում, նույնը կարելի է անել և Սարիղամիշում, Բասենում, հետզհետե անցնելով սահմանի այն կողմերը»: Թոփչյանը շեշտում էր, որ Ռուսաստանի և Տաճկաստանի պայմանների միջև մեծ տարբերություններ չկան, ուստի սխալ է այն կարծիքը, թե Հ.Յ.դաշնակցությունն անկարող է գործել միաժամանակ տարբեր երկրներում, մանավանդ որ տարբեր երկրներում նույն կուսակցու-

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 341:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, հատ.Դ, էջ 182:

թյան հաջող գործունեության օրինակներ կան, ինչպես, ասենք՝ լեհական PPS -ն, որը գործում է Գերմանիայում, Ավստրիայում և Ռուսաստանում, որոնց տիրապետության տակ են գտնվում լեհական հողերը: Այդ կուսակցությունը չի ճանաչում բռնությամբ ստեղծված սահմանները և ձգտում է միահամուռ ու ամբողջական գործունեության[1]:

Նշված երեք պետություններում լեհական PPS-ի գործունեության մասին Թոփչյանի վկայակոչումը Արշակ Խաչատրյանը հաջորդ՝ 69-րդ նիստում համարում է սխալ ու խեղաթյուրված: «Ես էլ, բարեբախտաբար, ծանոթ եմ այդ հարցին. լեհական այդ կուսակցության երեք հատվածները կապված են իրար, բայց այդ կապը միայն բարոյական բնույթ է կրում, այլ ոչ թե իրավական»[2]: Նա նշում էր, որ Ռուսաստանի լեհ սոցիալիստական կուսակցության ընդհանուր ժողովներին մասնակցում են մյուս տեղերի լեհ պատգամավորները, բայց միայն խորհրդակցական ձայնի իրավունքով, բայց ոչ երբեք վճռական, այլ խոսքով՝ նրանք ներկայանում են իբրև հյուրեր: Ուրեմն, մի բան է ընդհանուր ծրագիրը, ուրիշ բան՝ կազմակերպական հարցը: Գալով հայկական իրականությանը՝ ասում էր նա, Հ.Յ.Դ. միասնությունը պահպանելու դեպքում կովկասահայ դաշնակցականները կարող են լոկ օգնողի դեր կատարել տաճկահայ ազատագրական շարժմանը, ոչ ավելին: Բայց կովկասահայության խնդիրները պակաս ծանր չեն և պակաս կարևոր, որոնց լուծման համար անհրաժեշտ է ինքնուրույն և ուժեղ ազգային-քաղաքական նոր կուսակցություն:

Նույն նիստում Ե. Թոփչյանը ստիպված էր նորից ելույթ ունենալ և պնդել իր ասածը: Պատասխանելով Շահխաթունյանին, նա ասում էր.

«Թեև ընկ. Շահխաթունյանը ձգտում է հավատացնել մեզ, որ նա PPS կուսակցությանը ծանոթ է, բայց պետք է ասեմ, որ նրա տեղեկությունները այդ հարցի վերաբերմամբ ավելի քան պակասավոր և թերի են: Նա գուցե լսել է մեկի կարծիքը, բայց անհրաժեշտ է այդ կուսակցության անցեալի հետ ծանոթանալ: PPS-ն յուր գոյությունը ստացել է 1892 թուին և ունի յուր կուսակցության երկար պատմությունը. չափազանց մեծ նմանություն ունի դաշնակցության հետ: Կուսակցությունը ունենալով մի ընդհանուր աշխարհայացք և ծրագիր, տարիներ շարունակ գործել է երեք երկրներում: Տարբերությունը եղել է միայն տակտիկայի մեջ ...»[3]: Ուստի, ասում էր Թոփչյանը, առանց ծանոթ լինելու Տաճկաստանի տնտեսական ու սոցիալական պայմաններին, միանգամայն անհիմն է պնդել, թե Հ.Յ.դաշնակցությունը չի կարող և՛ այնտեղ, և՛ Կովկասում գործել իբրև մի միասնական կուսակցություն: Նա ավելացնում էր, որ PPS-ն, ինչպես նաև ռուս սոցիալիստ-հեղափոխականները (էսէռ), դաշնակցության ղեկավարներին խորհուրդ են տալիս չճանաչել Հայաստանի տարբեր մասերն իրարից բաժանող՝ օտար զավթիչների կողմից գծած սահմանները, հայոց հայրենիքի երկու մասերը դիտել իբրև մի միասնական մարմին, այլապես հեղափոխականների կողմից իրենց երկրի բաժանման իրողության հետ հաշտվելը կորստաբեր կարող է լինել ազգի ազատագրության հեռանկարի տեսակետից: Հետևապես Հ.Յ.Դ. բաժանումը էսէռները նույնպես անընդունելի էին համարում: Թոփչյանը համոզված էր, որ բաժանումը սկզբունական շրջանում աննկատ կմնա, բայց ապագայում ահռելի կտա խոշոր իրարանցումների: Ահա թե ինչու, ասում էր նա, կուսակցության միասնությունը պահպանելու խորհրդով՝ Հ.Յ.Դ. ղեկավարներին իրենց խոսքն են ասել մակեդոնական հեղափոխականները՝ Սարաֆովի գլխավորությամբ: Սարաֆովականները նույնպես հաշվի էին նստում այն փաստի հետ, որ Մակեդոնիան բաժանված է տարբեր երկրների միջև: Սարաֆովը մակեդոնական փորձով հասկացել էր, թե իր հայրենիքի համար որքան աղետաբեր կարող է լինել իրենց կուսակցության բաժանումը:

Հ.Յ.Դ. արևմտաեվրոպական բարեկամները նույնպես, որոնք փոքրիշատե ծանոթ էին հայկական շարժմանը, սոսկումով էին խոսում դաշնակցության պառակտման ու բաժանման հեռանկարի մասին: Մասնավորապես Քիյառը այդ հարցի կապակցությամբ հանդես էր եկել դաշնակցական շարքերին ուղղված կոչով, որը տպագրվել էր 1906-ին «Դրոշակում»:

Ելնելով այս փաստերից՝ Ե. Թոփչյանը հարց էր տալիս. «Եվ հանուն ինչի՞ ենք ուզում բաժանվել. հանուն կովկասահայ աշխատավորների՞: Բայց չէ՞ որ դրանք ամենքը դեմ են բաժանման»[1]:

Այո, շարքային բոլոր դաշնակցականները և ընդհանրապես հայ աշխատավորները դեմ էին կուսակցության բաժանմանը, իսկ դա նշանակում էր, որ Հ.Յ.Դ. բաժանման գաղափարը գալիս էր ոչ թե ներքևից, այլ՝ վերևից, կուսակցության ղեկավարության մի մասից: Ուրեմն անհրաժեշտ էր գործել զգույշ՝ չվնասելու համար ո՛չ Հ.Յ.Դ. կովկասյան գործունեությունը՝ սոցիալիստական սկզբունքներով հանդերձ, և ո՛չ էլ տաճկահայ դատը: Կուսակցության նշանաբանը պետք է լիներ՝ մեկ աշխարհայացք, մեկ դրոշակ և միայն տարբեր գործելակերպ՝ տեղական պայմանների համեմատ: «Մենք չպետք է թույլ տանք, որ բուրժուազիան ստանձնե տաճկահայ շարժման ղեկը, մենք պետք է լինենք միակ ղեկավարը»[2], - եզրահանգում էր Եղիշե Թոփչյանը:

Հանդես գալով բաժանման դեմ Խաչատուր Մալումյանը (Ակնունի) նույնպես գտնում էր, որ Հ.Յ.դաշնակցությունը կովկասահայ և թուրքահայ դատերը պետք է առաջ տանի նույն դրոշի տակ: Նա համոզված էր, որ բաժանումը ողջ ազգի համար անպայման կունենա դժբախտ հետևանքներ: Կուսակցական հողի վրա երկփեղկումը ահռելի կտա զանազան թյուրիմացությունների, կռիվ-

[1] «Նյութեր...», հատ. Գ, էջ 182:
[2] Նույն տեղում, էջ 187:
[3] Նույն տեղում:

[1] «Նյութեր...», հատ.Գ, էջ 182:
[2] Նույն տեղում, էջ 183:

ների, նույնիսկ արյունոտ ընդհարումների: Իբրև ապացույց, Մալումյանը բերում էր մի շարք փաստեր հնչակյանների և ռուսական մի քանի քաղաքական կազմակերպությունների կյանքից, երբ ներքին հակասությունները և պառակտումները նրանց առաջնորդում էին քայքայման: Հայ ժողովրդին վիճակված ծանր կռիվը պահանջում է հետ մղել պառակտման և անջատման որևէ առաջարկ: Մի՛ ծրագիր, հեղափոխական մի՛ բանակ, - ահա կռվի հաջողության գրավականը:

Կուսակցության միասնականությունը պահպանելու խոր մտահոգությամբ էին տոգորված նաև Արշակ Վռամյանի, Համո Օհանջանյանի, Ռոստոմի, Ստեփան Ստեփանյանի և մյուս նախագծականների ելույթները:

Ա. Վռամյանը նշում էր, որ դաշնակցությունը հրապարակ է եկել ոչ միայն օսմանյան Հայաստանի, այլև տառապող ողջ հայության համար, և դրա ապացույցներից մեկը նա համարում էր այն, որ կուսակցության անդամները միայն արևմտահայեր չեն, որ նրա շարքերում մեծ թիվ են կազմում նաև արևելահայերը, ուստի կուսակցության երկատման դեմ վճռականորեն հանդես գալը ամեն մի դաշնակցականի պատվի խնդիրն է, առավել ևս՝ պարտքը՝ լինի նա արևմտահայ թե արևելահայ: «Այն օրեն,- շեշտում էր նա, - երբ կը բաժանուի դաշնակցությունը, և բուրժուական տարրերը առաջ կու գան և կը միանան, ասում եմ, այն օրեն կազմալուծուած կը համարեմ մեր դատը»[1]: Ապա՝ «Ինձի համար գոյություն ունի մի ընդհանուր Հայաստան՝ առանց սահմանային բաժանումների՝ բռնակալների ձեռքով կտրատված»[2]:

Վճռականորեն մերժելով այն տեսակետը, թե մի կուսակցություն չի կարող միաժամանակ դավանել և՛ ազգային գաղափարախոսություն, և՛ սոցիալիզմ, Հ. Օհանջանյանն իր հերթին շեշտում էր, որ դաշնակցությունը, որպես աշխատավոր ժողովրդի կուսակցություն, բոլոր հայկական հատվածների համար ունենալու է մի ընդհանուր ծրագիր և հիմնական տեսակետ[3]: Բայց «մենք կարող ենք Տաճկաստանում լինել սոցիալիստական կուսակցություն, վարելով միայն քաղաքական դատ, միանալով պետական ռեժիմի դեմ կռվող թուրք կուսակցությունների հետ, առանց նշանախեց անգամ մնասելու մեր սոցիալիստական գործը և հակասելու մեր տեսակետին»[4]: Հենց միասնական կուսակցությունը ի վիճակի կլինի Տաճկաստանում մանևրել, միաժամանակ Կովկասում հաջողությամբ առաջ տանել իր գործերը, իսկ բաժանումը մնասակար կլինի հենց այն պատճառով, որ Հ.Յ.Դ.-ի երկատումից հետո Կովկասում նոր ստեղծված կուսակցությունն անխուսափելիորեն կընկնի բուրժուազիայի ղեկավարության տակ, որը կ'ձգտի Հ.Յ.դաշնակցությունից խլել տաճկահայ դատը և այն օգտագործել հանուն դասակարգային շահերի:

---

[1] «Նյութեր...», հատ.Գ, էջ 185:
[2] Նույն տեղում, էջ 176:
[3] Նույն տեղում, էջ 179:
[4] Նույն տեղում:

Իր փաստարկված ելույթով Ռոստոմն ամփոփեց նախագծականների տեսակետը Հ.Յ.դաշնակցության հետագա գոյության մասին: Նա, իհարկե, համոզված էր, որ կուսակցության բաժանման օգտին առաջարկ անող ընկերները աչքի առաջ ունեն տաճկահայ դատի շահը, բայց համոզված էր նաև, որ նրանք ակամայից անդունդ են ձգում նույն այդ դատը: Ռոստոմի խոր համոզմամբ՝ բաժանումը առաջ էր բերելու երկպառակտություններ ստեղծվելիք կովկասահայ նոր կուսակցության և տաճկահայ դատին նախանձախնդիր Հ.Յ.դաշնակցության միջև: Միամտություն է կարծել, թե բաժանվելով՝ կարելի է բարեկամներ մնալ, ասում էր նա: Ավելին, այդ երկու կուսակցությունները կկանգնեն իրար դեմ հանդիման՝ իբրև ոխերիմ թշնամիներ: Միասնական կուսակցությունը կբաժանվի զանազան մասերի, և կմղվի թշնամական կռիվ: Ռոստոմը համոզմունք է հայտնում, որ ընդհանուր ժողովը կուսակցության համար առաջադրելու է մեկ ու միասնական գործունեություն և՛ տաճկահայության, և՛ կովկասահայության համար, որովհետև վաղը-մյուս օրը Տաճկաստանում ևս կփոխվի դրությունը, ինչպես անսպասելիորեն փոխվել է Կովկասում:

Կուսակցության միասնականության օգտին հանդես եկող պատվիրակները բերում էին նաև իրենց տեսակետի ուրիշ հիմնավորումներ. 1. Հայության պատմական դատն իր մեջ ընդգրկում է ինչպես տաճկահայ, այնպես էլ կովկասահայ դատերը: Այդ գաղափարով միայն հնարավոր կլինի հայ գաղութները կապել Երկրի դատի հետ: Եթե իր գործունեության շեշտը կուսակցությունը դնի միմիայն տնտեսական պայքարի վրա, ապա գաղութահայերը չեն հետաքրքրվի Երկրի հոգսերով, քանի որ իրենք արդեն տնտեսապես բարեկեցիկ են: Պատահական չէ, որ սիոնիզմի գաղափարախոսության դեմ հանդես են գալիս աշխարհի մեծահարուստ և ընդհանրապես բարեկեցիկ հրեաները՝ չհավատալով Պաղեստինում քաղաքական վերածնության հնարավորությանը, 2. Տաճկահայ և կովկասահայ երկու դատերի բաժանումը և Հ.Յ.Դ.-ն երկատելը այն հետևանքը կունենա նաև, որ կովկասահայերը այլևս չեն հետաքրքրվի տաճկահայության ազատագրական պայքարով, մի բան, որ աղետաբեր կլինի ողջ հայության համար, 3. Անգլիացիները, գերմանացիները և ընդհանրապես եվրոպացիները հայությանը մշտապես մեղադրանք են նետել, թե նա «գործիք է ռուսի ձեռքին»: Հ.Յ.Դ. կովկասյան գործունեությունը՝ ցարիզմի դեմ կռվի ճակատ հարդարելը և այդ կռվի հաջողության համար կուսակցության միասնականության պահպանումը հայության համար նպաստավոր կլինեն այն տեսակետից, որ նրա դատի հակառակորդները այլևս հիմք չեն ունենա օգտագործելու այդ չինծու մեղադրանքը, 4. Թուրքիայի և Ռուսաստանի մեջ բնակվող հայության երկու հատվածների քաղաքական և ռազմական սերտ միությունը ռուսական և թուրքական կառավարություններին կստիպի Հայկական հարցում ավելի զգուշավոր լինել իրենց արտաքին և ներքին քաղաքականության մեջ, 5. Սոցիալիստական ծրագրով օսմանյան կայսրության մեջ գործելու դրական հետևանքներից մեկն այն կլինի, որ հնարավոր կդառնա թուրք ժողովրդի

մեջ աստիճանաբար նվազեցնել լայն տարածում ստացած կասկածամտությունը, թե հայերը պայքարում են շովինիստական նպատակների համար, 6. Այն տեսակետը, թե իրեն սոցիալիստական կուսակցություն հռչակելով՝ դաշնակցությունը դրանով իսկ կդժվարացնի եվրոպական պետությունների հակասոցիալիստական կառավարությունների միջամտությունը Հայկական հարցում որևէ հիմք չունի: Եվրոպական դիվանագիտությունն այս կամ այն ճնշված ժողովրդի դատին միջամտելու ժամանակ չի հարցնում ոչ այդ ժողովրդի կարծիքը, ոչ էլ հաշվի է նստում նրա լեզվի կամ կրոնի հետ, այլ ելնում է միայն ու միայն իր քաղաքական և տնտեսական շահերից:

Ընդհանուր ժողովում Հ.Յ.դաշնակցության միասնության և բաժանման հարցի քննարկման ընթացքում նախագծական պատգամավորները բազմիցս դիմում էին Քրիստափոր Միքայելյանի արտահայտած մտքերին: «Ժամանակն է վերջապես, - գրել է Միքայելյանը, - որ ներկա մահաշունչ կացության դիմաց, երբ, տաճկահայկական կոտորածներից հետո, գուցե, գտնվում ենք կովկասահայկական կոտորածների նախօրյակին, կռվելու անդրդվելի վճռականությունը և իրար խառնվելու, իրար հետ միանալու, իրոք մի ամբողջություն կազմելու միահամուռ, միահոգի պահանջը մեր ընդհանուր նշանաբանը դառնա: Պատռե՛լ է հարկավոր քարտեզների վրա այս կամ այն ավազակապետի կամքով գծած սահմանները, ջնջե՛լ է հարկավոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից և որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատև են լինում: Ո՛չ մի բռնություն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթե նա, տոգորված ընդհանուր շահերի գիտակցությամբ, ունի նաև կռվելու անսասան վճռականություն և կապված, միացած է դարերով սնված ու պահպանված ընդհանուր բնազդների ու զգացմունքների առողջ զարկերակով»[1]:

Արդեն ասվեց, որ Հ.Յ.Դ. կազմակերպությունների, կոմիտեների, շրջանային ժողովների մեծ մասը ընդհանուր ժողովին նախորդող շրջանում հանդես էր եկել կուսակցության միասնության պահպանման օգտին: Այդ տրամադրությունը պատգամավորները բերել են ընդհանուր ժողով, որը վճռականորեն մերժեց կուսակցությունը երկու մասի բաժանելու լիկվիդատորական տեսակետը և հանդես եկավ կուսակցության շարքերի հետագա ամրապնդման պահանջով:

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՀՐԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՇՈՒՐՋ

Դաշնակցության խորհրդի «Կովկասյան նախագծի» բազմակողմանի և մանրակրկիտ քննարկումներից հետո, Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովը, այնուհետև, ձեռնարկեց այդ խնդրի շրջանակներում «Նախագծի» շուրջ կուսակ-

[1] **«Նյութեր...»**, հատ.Գ, էջ 186:

ցության շարքերում առաջացած՝ միմյանցից քիչ տարբեր տեսակետների և դրանց առաջացման պատճառների քննությունը:

Խնդրին առաջինը անդրադարձավ Սեպուհը, նշելով, որ «Նախագծի» շուրջ կուսակցության մեջ առաջացել է երկու հակադիր տեսակետ, որոնց կրողներին հաշտեցնելը համարյա անհնարին է[1]:

Համո Օհանջանյանն իր հերթին շեշտեց, որ մի ժողովրդական կուսակցության մեջ, ինչպիսին դաշնակցությունն է, երկու տեսակետների առաջացումը բնական պետք է համարել: Այդ տեսակետներին հետևողներից ոչ մեկը չի պայքարում բուն կուսակցության դեմ, այլ ամեն մեկը ձգտում է իր տեսակետը օրինական ճանապարհով դարձնել ընդունելի: Բայց այդ երկու տեսակետներից կամ հոսանքներից զատ առաջացել է նաև մի ուրիշ հոսանք՝ միհրանականությունը, որի հետևորդները «Նախագիծը» համարում են ապօրինի վիժվածք և կատաղի պայքար են սկսել ոչ միայն այդ փաստաթղթի, այլև կուսակցության դեմ: «Այժմ հասել է ժամանակը, - նշում էր Օհանջանյանը, - որ դաշնակցութեան բարձրագույն մարմինը, նրա կամքը ներկայացնող ներկայացուցչությունը ասե յուր հեղինակավոր խոսքը այդ կնճռոտ հարցի մասին»[2]:

Նիստերից մեկում (64-րդ) Եղիշե Թոփչյանը բացատրում էր, թե կուսակցության մեջ ինչու առաջացավ միհրանականությունը, և թե ինչու այդ հոսանքը անզիջում պայքար է մղում հատկապես «Կովկասյան նախագծի» դեմ: Նա նշում էր, որ կուսակցության ներսում միհրանականության առաջացման պատճառը հեղափոխությունից հետո վրա հասած ռեակցիան էր, և որ այդ երևույթը հատուկ չէ միայն հայ իրականությանը, այլ ընդհանուր երևույթ է:

Բանն այն է, որ հեղափոխության ընթացքում ընդհանրապես կռվող մարտական տարրերը ուժ են ստանում և ձգտում են գերիշխել շրջապատի վրա: Նույն երևույթը ի հայտ եկավ նաև հայության միջավայրում: Բայց երբ ռուսական հեղափոխության պարտությունից հետո երկրով մեկ տարածվեց ռեակցիան, և երբ սկսվեց համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանը, զինվորները և ընդհանրապես ռազմիկ ուժերը, բնականաբար, պիտի հետ քաշվեին: Բայց նոր պայմաններում այդ ուժերը չցանկացան հեշտությամբ թողնել իրենց գրավիչ դերը:

Հեղափոխության սկզբնական շրջանում 1905թ. ընթացքում, «Նախագծի» դեմ մեծ բողոքներ չէին լսվում, այն ժամանակ չկային միհրանականներ: Ավելին, երբ 1905թ. Թիֆլիսում մասսաները կարմիր դրոշներով ցույցերի էին դուրս գալիս, զինվորներն ու խմբապետերը ցուցարարների առաջին շարքերում էին: Բայց երբ տիրեց ռեակցիան, երբ հարաբերական խաղաղ կյանք սկսվեց, Հ.Յ.Դ. կենտրոնական մարմինները դաշնակցականներին արգելեցին վարել դատեր և այլն: Այս պայմաններում ռազմիկ տարրերը տեսան, որ այլևս

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 152:
[2] Նույն տեղում:

գերիշխել չեն կարող, ուստի ծառացան կուսակցության դեմ, դարձան բողոքողներ՝ պատրվակ բռնելով «Կովկասյան նախագիծը»: Ամբոխի վրա ազդելու նպատակով նրանք իրենց ձեռքին վարդագույն քող դարձրին տաճկահայ դատը[1]:

Պատգամավորներից մի քանիսը նույն տեսակետը պաշտպանում էին ուրիշ փաստարկներով: Նրանք գտնում էին, որ Կովկասում թուրք-հայկական ընդհարումներից հետո կռիվների վայրերից վերադարձած զինվորներն ու խմբապետերը, մնալով անաշխատ, չգոհանալով կուսակցության կողմից իրենց տրված հատուցումից, սկսեցին դրամ պահանջել: «Ինքնապաշտպանության համար հավաքված գումարները մեզ են պատկանում», - ասում էին նրանք: Հենց այդտեղից էլ, ի վերջո, հրապարակ եկավ թուրքահայ-ռուսահայ տխմար խընդիրը, ըստ որի, իբր, ռուսահայերը շահագործում են թուրքահայոց դատը:

Պատգամավորների մի մասի այս եզրակացության կապակցությամբ Սիմոն Վրացյանը հետագայում վերհիշել է մի զավեշտական միջադեպ՝ գրելով.

«Ընդհանուր ժողովում քննվում էին հայ-թաթարական կռիվներին և Միհրանական շարժմանը վերաբերվող նյութերը: Սրահում լարված, ջղային տրամադրություն էր տիրում: Խոսք առավ Զավարյանը և մի հուզումնալից ճառ արտասանեց, որ ավելի ևս խստացրեց սրահի մթնոլորտը: Նա մեղադրեց Միհրանին և նրա գործակիցներին անվանեց **բանդիտ**: Մանր խոսքեր ասաց նաև կուսակցության ղեկավարների հասցեին, որոնք երկար ժամանակ չէին հասկացել ծանր պայմանների մեջ կռիվներում եղած և վերջը թիկունքում անգործության դատապարտված մարդկանց»: Բնական էր, որ անգործ և անոթի մնացած մարդիկ պիտի պահանջեին, որ իրենց անունով ինքնապաշտպանության համար հավաքված դրամը իրենց բաժանվեր: Այդ դրամը նրանց բարոյապես քայքայեց. հիմա էլ սպառնում են մեզ ուտել»:

Ակնունին կտրեց նրա խոսքը, հարցնելով, թե ապա այդ պայմաններում ինչ անենք:

« - Ինչ անենք, - աչքերից շանթեր արձակելով բացականչեց Զավարյանը. - հիմա ես կ'ասեմ ձեզ՝ ինչ անենք: Ես առաջարկում եմ հայ-թաթարական կռիվների առթիվ հանգանակված գումարի մնացորդը բերել այստեղ և բոլորիս աչքի առջև այրել ...»:

Սրահը որոտաց ընդհանուր ծիծաղից: Ողբերգությունը փոխվեց զավեշտի: Բայց Զավարյանը լուրջ կերպով պնդում էր իր առաջարկի վրա»[2]:

Ելույթ ունեցող պատգամավորները փաստերով ցույց էին տալիս, որ Միհրանի և նրա կողմնակիցների շահատակությունները հատկապես մեծ ծավալներ են ընդունում Թիֆլիսում, Բաթումում, Ռոստովում, Ալեքսանդրապոլում և այլուր: Բայց դրանք չէին սահմանափակված միայն Կովկասով: Միհրանի

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 170-171:
[2] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով, հատ. Բ, էջ 93:

գործունեությունը անցել էր նաև սահմանից այն կողմ: Օրինակ՝ նա հաճախ նամակներ էր գրում Պարսկաստանի իր ծանոթներին, թե դաշնակցությունը ձեռք է քաշել տաճկահայ դատից, թե զինվորներին Կովկասում փող չեն տալիս և այլն: Այդ ամենի նպատակն էր պարսկահայ դաշնակ զինվորներին գրգռել կուսակցության ղեկավարության դեմ:

Պատգամավորների ելույթներից պարզ էր դառնում, որ Միհրանն ու նրա ընկերները պարզ գործիք են դարձել ոչ միայն հայ բուրժուաների, այլև կառավարության ձեռքին: Նրանք հաճախ հանդիպումներ էին ունենում ոստիկանների հետ, ստանում հրահանգներ, գործում իշխանությունների պատվերով, մի խոսքով՝ ամենահոժար կերպով առաջարկում էին իրենց աջակցությունը ռուսաց կառավարությանը: Իսկ վերջինս այն համոզումն ուներ, թե դաշնակցությունը բաժանված է երկու՝ նոր և հին, կուսակցությունների, որոնցից առաջինը գործում է Կովկասում, իսկ երկրորդը՝ Միհրանի կուսակցությունը՝ Տաճկահայաստանում: Եվ կառավարությունն աշխատում էր «Հին դաշնակցության» ձեռքով կռվել «Նոր դաշնակցության» դեմ: Ելույթ ունեցողները բերում էին կառավարության հետ միհրանականների գործակցության ուրիշ պերճախոս օրինակներ ու վկայություններ: Միհրանն ու նրա ընկերները իշխանությունների աչքի առաջ ազատորեն զենք էին կրում. եթե նրանցից մեկը ձերբակալվում էր, ապա անմիջապես գործին միջամտում էին պահնորդականները և նրան ազատում կալանքից: Ավելին, միհրանականներից ոմանք ծառայում էին որպես ոստիկանական բարձրաստիճան պաշտոնյաների թիկնապահներ: Համո Օհանջանյանն իր ելույթում նշում էր, որ եթե մինչև վերջին ժամանակներս միհրանականներն իրենց գործունեությունը սահմանափակում էին քաղաքներում, ապա այժմ մարդիկ են ուղարկում գավառներ, որոնք հայտարարություններ են անում, թե այլևս չկան, չեն գործում Հ.Յ.Դ. արևելյան ու արևմտյան բյուրոները, և կուսակցության գործերը միայն վարում է իրենց ստեղծած «Զինվորական խորհուրդը»: Դաշնակցության անունով նրանք հանգանակություններ էին անում ոչ միայն Թիֆլիսում, այլև մյուս քաղաքներում Ռոստովում, Արմավիրում և ուրիշ վայրերում, ըստ որում, հավաքած գումարների մասին հաշիվ չէին տալիս կուսակցության որևէ մարմնի: Ավելին, ասում էր Համոն, Միհրանը և նրա ընկերները «ամեն տեղ միջոցներ են ձեռք առնում մեր գործը քայքայելու, մեր ձեռնարկները վիժեցնելու համար»[2]:

Պատգամավորները նաև օրինակներ էին բերում, որոնք ցույց էին տալիս, որ չնայած իշխանությունների ամեն տեսակ աջակցությանը, արդեն քայքայում և լքում է առաջացել միհրանականների շարքերում: Դրան նպաստում էին մի քանի հանգամանքներ, նաև այն, որ նրանք ձեռնարկել էին ավազակային գործողություններ՝ անարխիստների անունից սպառնալից նամակներ էին

[1] **«Նյութեր...»**, հատ.Գ, էջ 216:
[2] Նույն տեղում:

գրում այս կամ այն հարուստին, որից հետո երկու-երեք հոգով ներկայանում էին նրան և փող պահանջում փոխարենն իրենց պաշտպանությունն առաջարկելով անարխիստների դեմ: Բայց երբ շրջանակը հետզհետե նեղացավ, նրանք սկսեցին իրար մատնել: Շարքերից սկսեցին հեռանալ ոչ միայն մաքուր, այլև մութ տարրերը, որովհետև վերջիններիս ղեկավարները նրանց թույլ չէին տալիս շահատակելու՝ իրենց վերցնելով ավարի մեծ բաժինը, հաճախ էլ՝ ամբողջը:

Այդ ամենն արվում էր՝ շահարկելով դաշնակցության անունը: Ահա թե ինչու Հ.Յ.Դ. ղեկավարությունը տարբեր առիթներով ստիպված էր պաշտոնապես հանդես գալ և հայտարարել, որ Միհրանը և նրա կողմնակիցները ոչ մի առնչություն չունեն կուսակցության հետ:

Ինչպես դրան, ընդհանուր ժողովում եղան Միհրանին և նրա գործակիցներին պաշտպանողներ : Կարծիք հայտնող եղավ, թե դեռ Միհրանից առաջ, ըստ էության, միհրանական շարժում կար լայն խավերի մեջ[1]: Իր հերթին Սեբաստացի Մուրատը նշում էր. «Դեռ սկզբից ես հակառակ եմ եղել «Նախագծին», երբ չկար Միհրանը, նկատի ունենալով, որ դրանով մեր դատի առաջ պատնեշ է դրվում: Մենք շատ լավ գիտեինք, որ հնչակեանների մեջ էլ սոցիալիզմի պատճառով է երկպառակություն ընկել՝, հետևապես չէինք կարող դեմ չլինել «Նախագծին»: Ուրիշ բան է, որ ինքնապաշտպանութեան գործը մոռացնել տուեց այդ: Դեռ Միհրանից առաջ այդ բողոքը կար Թիֆլիսում, Կարսում, Ալեքսանդրապոլում և այլուր»[2]:

Միհրանականության բացահայտ պաշտպանությամբ հանդես եկավ Թովմաս Ջելալյանը: «Այժմ, - ասաց նա, - մեր մեջ կա երկու մտածողություն՝ հին ու նոր: Դուք էլ եք ասում, որ [կուսակցության մեջ] շերտավորում կայ, [որ այն] երկու ֆրակցիայի է բաժնուած: Դա արդյունք էր ռուսաց յեղափոխութեան, և այդ բաժանումը ես անվանում եմ բյուրոյականություն և միհրանականություն (բացականչություն՝ «Բողոքում ենք դրա դեմ»): Եվ դրանից ամեն մեկը իրեն իրավական և իսկական դաշնակցություն է համարում: Այդ երկու հոսանքներից մեկի ներկայացուցիչը չկա այստեղ, հետևապես մեր որոշումը կը լինի խիստ միակողմանի և անարդար: Մենք պետք է դիմենք օրինավոր ճամփի, այն է՝ կանչել երկու կողմերին, լսել երկուսին էլ և ապա վճիռ արձակել (բողոքներ, խիստ դժգոհություն)»[3]:

Խնդրի քննարկումն ինքնանպատակ չէր: Ընդհանուր ժողովը պետք է որոշում ընդուներ Միհրանին և նրան հետևող զեղծարարներին պատժի ենթարկելու մասին: Այդ կապակցությամբ հարց առաջացավ. Միհրանին և նրա առավել մեղսակից ընկերների դատը պիտի անել այստե՞ղ՝ ժողովո՞ւմ, թե՞ այն պիտի թողնել Հ.Յ.Դ. կովկասյան որևէ մարմնի իրավասությանը: Մագեց նաև մի ուրիշ հարց. պիտի դատվի միհրանականությունը իբրև շարժու՞մ, թե՞ պիտի դատվեն միայն առանձին անձինք՝ Միհրանը և շարժման առավել աչքի ընկնող պարագլուխները:

Այդ հարցին նախնական պատասխան տալու համար ընտրվեց քննիչ հանձնաժողով, որը պետք է ներկայացներ համապատասխան առաջարկ:

Քննիչ հանձնաժողովը 84-րդ նիստին ներկայացրեց «Միհրանական խնդրի մասին» բանաձևը, որը բխում էր «Կովկասյան զեղծարարների մասին» օրակարգային հարցից: Սկսվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Արշակ Իսահակյանը (Ջամալյան), Համո Օհանջանյանը, Մաշուրը, Արամ Մանուկյանը, Եղիշե Թոփչյանը և ուրիշներ: 86-րդ նիստում բանաձևի շուրջ եղած վիճաբանությունները ցարդ համարելով անբավարար՝ ընդհանուր ժողովը հարկ համարեց առանձին ծանրանալ հատկապես նախորդ նիստերում դրված երկու հարցերի վրա. ա) Հ.Յ.Դ. ո՞ր մարմինը պիտի վճիռ կայացնի զեղծարարների վերաբերյալ, բ) ի՞նչ պատիժ է տրվելու նրանց:

Ընդհանուր ժողովում զեղծարարների վերաբերյալ դատավճիռ կայացնելու օգտին հանդես եկան Արամը, Շահխաթունյանը և Ջավրիյանը, դեմ արտահայտվեցին՝ Ռոստոմը, Վռամյանը, Ստեփանյանը, Մինասյանը, Մալումյանը, Ահարոնյանը:

Արամը գտնում էր, որ ընդհանուր ժողովը պիտի «իր խոսքն ասի, իր կըտրուկ որոշումը տա»[1]: Պաշտպանելով Արամին՝ բժ. Ջավրիյանը ասում էր. «Այժմ բոլորը վերջնական որոշում են սպասում ընդհանուր ժողովից, նույնիսկ Միհրան ... Աչքի առաջ ունենալով հարցի բացառիկ նշանակությունը՝ ընդհանուր ժողովը պետք է զբաղվի դրանով և [խիստ] որոշում ընդունի»[2]:

Ելույթ ունեցողների մեծ մասը, սակայն, այլ կարծիքի էր: Ռոստոմը շեշտում էր.

«Ես հակառակ եմ արտահայտուող այն կարծիքին, թե ընդհանուր ժողովը դատարանի դեր պիտի ստանձնե և դատավճիռ արձակե: Իմ կարծիքով, այդ գործը ամբողջապես պիտի թողնել կովկասեան մարմիններին, միևնույն ժամանակ հանդիմանություն հայտնելով արևելյան բյուրոյին, որ ժամանակին կըտրուկ միջոցի չէ դիմել և այդ հարցը հասցրել է ընդհանուր ժողովին»[3]:

Ռոստոմի առաջարկին միանում է Արշակ Վռամյանը, գտնելով, որ զեղծումների և նման խնդիրներով բացառապես պետք է զբաղվեն տեղի կազմակերպությունները՝ կենտկոմների մակարդակից ոչ ցածր:

---

[1] «Նյութեր...», հատ.Գ, էջ 217:
Եթե հնչակյան կուսակցության դեպքում զուտ ազգայինը այդ կուսակցության ներսում հանդես եկավ հետագայում կուսակցության ստեղծումից 9-10 տարի հետո՝ հանձին վերակազմյալ հնչակյանությանը, ապա Հ.Յ.Դ-ի դեպքում այդ ազգային կուսակցության մեջ սոցիալիստական գաղափարախոսությունը և գործելակերպը ցայտուն կերպով դրսևորվեցին նրա ստեղծումից շուրջ 15 տարի հետո:
[2] «Նյութեր...», հատ.Գ, էջ 217:
[3] Նույն տեղում, էջ 241:

[1] «Նյութեր...», հատ. Գ, էջ 240:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

Բժ. Զավրիյանը, Համոն և Թոփչյանը քննադատական խոսքեր են ուղղում Ռոստոմին՝ նրա այն հայտարարության կապակցությամբ, որ անհրաժեշտ է հանդիմանել արևելյան բյուրոյին այն բանի համար, որ ժամանակին չի դիմել կտրուկ միջոցների՝ միհրանական շարժումը սաղմում խեղդելու համար, որի հետևանքով հարցը հասել է ընդհանուր ժողով[1]: Զավրիյանը մասնավորապես ասում էր. «Ես զարմանում եմ, որ Ռոստոմը, լինելով արևելյան բյուրոյի անդամ, այժմ հայտնում է հանդիմանություն նրան՝ ժամանակին այդ խնդիրը իր տեղում չվճռելու պատճառով: Ինչո՞ւ հապա Ռոստոմը չէ պահանջել այդ վճիռը ժամանակին: Եթե չեն արել, այն պատճառով է, որ հենց ինքը՝ Ռոստոմը, մի շարք ուրիշ հանգամանքներ ի նկատի է ունեցել: Բայց այժմ չպետք է թերի միջոցներով բավականանալ, այլ [պետք է] դիմել ամենախիստ միջոցների»[2]:

Միհրանականների նկատմամբ փափուկ վերաբերմունք դրսևորած լինելու մեջ Ռոստոմին խիստ մեղադրեց հատկապես Համոն՝ ասելով. «Ռոստոմի բռնած դիրքը և խոսելու տոնը ինձ միանգամայն զարմացնում են»[3]: Իր հերթին Թոփչյանը նկատում է, որ Ռոստոմի փափկանկատությունը շատ խորն է. «Ես հասկանում եմ այդ, բայց նա սխալվում է իր փափկանկատության մեջ»[4]:

Անդրադառնալով գեղծումների հարցերը կուսակցության տեղական մարմիններին հանձնելու Ռոստոմի առաջարկին՝ Ավ. Ահարոնյանը պաշտպանեց նրա այն տեսակետը, որ ընդհանուր ժողովը ոչ թե դատական, այլ օրենսդրական ժողով է, ուստի Միհրանին և նրա ընկերներին պատժելու հարցերը չեն կարող տեղ գտնել այդ ժողովում: Օրենսդրական մարմինը ձեռնհաս չէ կանչել երկու կողմերի վկաներին՝ ցուցումներ ստանալու համար, հետևապես նրա որոշումները խիստ պակասով կլինեն, թյուրիմացությունները՝ անխուսափելի: «Ինչպես Ռոստոմը նկատեց, - ասում էր Ահարոնյանը, - կան դատապարտելի* մարմիններ, որոնք կարող էին ժամանակին խեղդել այդ տգեղ, դավաճանական քայլերը, բայց չարեցին, և սանձելու հնարավորությունը դարձրին անկարելի»[5]: Նա թյուրիմացության արդյունք էր համարում այն, որ իրար նմանեցվում են նաև կուսակցության ներսում առաջացած երկու շարժումները՝ «Կովկասյան նախագծի» դեմ ծագած ընդվզումը և միհրանական շարժումը՝ վերջինիս որակելով իբրև խուլիգանական շարժում: Պատահական չէ, որ Հ.Յ.դաշնակցությանը վարկաբեկելու համար նրա հակառակորդները միհրանական շարժումը կապեցին տաճկահայ դատի հետ: Հատկապես «Մշակը», ասում էր Ահարոնյանը, օգտագործեց ու չահագործեց միհրանականությունը, և դա մշակականներին հաջողվեց, քանզի անգիտակից մասսան կարծում էր,

[1] «Նյութեր...», հատ.Գ, էջ 241-242:
[2] Նույն տեղում, էջ 241:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
* Այդպես է արձանագրության մեջ, պետք է լինի **դատապարտող:**
[5] «Նյութեր...», հատ.Գ, էջ 241:

թե Միհրանը, նրան առավել նվիրված համախոհներ խմբապետ Տիգրանը, Արփիար Արփիարյանը, իրոք, տաճկահայ դատի գաղափարական ներկայացուցիչներ են: Դրանով պետք է բացատրել նաև Միհրանի զինակից Շխալու փառավոր թաղումը:

Ահա այդ իրադարձություններից հետո միայն կուսակցության ղեկավարությունը խոր կերպով զգաց թույլ տված սխալի հետևանքը, այն, որ ձեռքից բաց էր թողնվել հարմար պահը, երբ գործը դեռ այդքան սուր բնույթ չէր ստացել, երբ առանց բարդություններ առաջացնելու՝ հնարավոր կլիներ գեղծարարներին չեզոքացնել և շարժումը խեղդել սաղմում: Տեղական մարմինները, ասում էր Ահարոնյանը, այդ բանը չեն արել, ուստի, անկասկած, մեղավոր են: Նա համերաշխվում էր Ռոստոմի հետ այն հարցում, որ պետք է հանդիմանել արևելյան բյուրոյին:

Եղածն արդեն եղած համարելով՝ Ահարոնյանն այնուհետև գտնում էր, որ այժմ պետք է կարողանալ Միհրանից զատել թյուրիմացաբար նրան հետևող մասսաների գոնե մի մասին, շանտաժիստներից խլել բարոյականության քողով շղարշված զենքը և նրանց հանձնել տեղական մարմինների դատին:

Ելույթ ունենալով՝ Սիմոն Զավարյանը սխալ էր համարում արևելյան բյուրոյին հանդիմանելը, նախատելը, գտնելով, որ միհրանական շարժման դեմ նրա բռնած դիրքը եղել է հեռատես ու խելացի: Նա հիշեցնում էր, որ այդ շարժումն առաջին անգամ հայտնի է դարձել էջմիածնում, որտեղից անմիջապես հայտնել են Երևանում տեղի ունեցող շրջանային ժողովին: Խնդրանքով ժողովից մարդիկ են ուղարկվել այնտեղ՝ բացատրելու շարժման էությունը: Նույն կերպ են վարվել Հ.Յ.Դ. Թիֆլիսի և Բաթումի կազմակերպությունները՝ ընդունելով շարժման էությունը մասսաներին բացատրելու տակտիկան: Զավարյանը միհրանական շարժման գլխավոր պատճառը համարում էր մասսաների տգիտությունը: Բայց, ասում էր նա, «մենք ունենք հանցանքի մեր բաժինը», որքանով որ «պրոպագանդա չենք արել, չենք բացատրել մեր տեսակետները և ուղղությունը»: Նա նշում էր, որ շատերն ուղղակի տեղեկություն չունեին «Նախագծի» մասին, եթե ունեին էլ՝ շատ աղոտ, այլ խոսքով՝ «Նախագիծն» ամբողջությամբ լուսաբանված չէր բավարար չափով: Այս պայմաններում է, որ «Մշակը» փաստորեն անցավ միհրանական շարժման գլուխ՝ կանոնավորելով և ընթացք տալով դրան: Զավարյանը գտնում էր, որ եթե այն ժամանակ արևելյան բյուրոն ծայրահեղ սուր միջոցներ ձեռք առներ, ապա գուցե վիճակն ավելի վատ լիներ, քան այժմ է: Կլինեին զգալի զոհեր երկու կողմերից, և, անկասկած, զոհված միհրանականները նահատակներ կհռչակվեին:

Ներկայումս, այնուհետև ասում է Զավարյանը, կուսակցությունը պարտավոր է մասսաներին լայնորեն ցույց տալ միհրանական շարժման ողջ էությունը, ի ցույց դնել գեղծարարների իսկական կերպարանքը: Այդ դեպքում Միհրանին հետևող 2-3 հազար անձանց 9/10 մասը, անշուշտ, կհեռանա շարժումից: Զավարյանը դեմ էր միհրականանների նկատմամբ խիստ ու սուր միջոցների դիմե-

լուն: «Ոչ մի կաթիլ արյուն այդ գործի առթիվ չպետք է թափվի, - շեշտում էր նա: - Մենք որոշակի կերպով կտանք մեր ծրագիրը՝ իր ամբողջությամբ. ով համաձայն է դրա հետ՝ կը մնա, ով չէ - լինի նա երիտասարդ դաշնակցական թե հականախագծական, այդ միևնույն է - կհեռանան դաշնակցության շարքերից: Ասում եմ՝ հականախագծական և երիտասարդ դաշնակցական, որովհետև այդ երկու ծայրահեղությունների միջև մի նմանություն եմ գտնում»[1]:

Քննարկումների ընթացքում աստիճանաբար հակամիհրանական դիրքեր եկող Սեբաստացի Մուրատը նույնպես գտնում էր, որ արևելյան բյուրոն ճիշտ է վարվել, երբ սկզբնական շրջանում խուսափել է միհրանականների նկատմամբ պատժիչ խիստ միջոցներ կիրառելուց: «Սխալվում է Համոն, երբ ասում է. «Եթե ուզեինք՝ կը ճնշեինք»: Դա նշանակում է բոլորովին անծանոթ լինել տաճկահայ կյանքին, - նշում էր Մուրատը: - Մեր մեջ միշտ եղել են և կան թայֆաներ, որոնք իրար դեմ կանգնում են իբրև թշնամիներ... Եթե սպանության մի փորձ լիներ, ահագին խառնաշփոթություն կառաջանար՝ և մի շարք մարդիկ կը սպանվեին: Ես դեմ չեմ նախագծական շարժման, ոչ էլ կկռվեմ դրա դեմ: Զավարյանն ասում է, թե պետք է զեղծարարներին անպատիժ թողնել՝ բավականանալ միայն դաշնակցությունից հեռացնելով: Ես ասում եմ, որ ես չե՛մ թողնի, որ Միհրանը անպատիժ մնայ»[2]:

Ընդհանուր ժողովի պահանջով քննիչ հանձնաժողովը ներկայացրեց իր ուսումնասիրության արդյունքները:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հ.Յ.Դ. նախորդ ընդհանուր ժողովներից ոչ մեկում կուսակցական-կարգապահական հարցերը չէին ենթարկվել այնպիսի լայն ու շահագրգիռ քննության, ինչպես չորրորդում:

Բուռն ու հուզումնալից եղավ սուլթան Աբդուլ Համիդի դեմ անհաջող մահափորձի կապակցությամբ **Սաֆոյի (Մարտիրոս Մարգարյան) հարցի** քննարկումը:

Ժողովը, նախ, լսեց այդ հարցի մասին ցուցական մարմնի տեղեկագիրը և քննիչ հանձնաժողովի զեկուցագիրը՝ իր բոլոր հարակից փաստաթղթերով: Ապա որոշեց ամբողջ կազմով վերածվել դատական մարմնի և «Սաֆոյի գործը» քննել ամբողջ խստությամբ: Միաժամանակ նպատակահարմար գտնվեց չծանրանալ ձեռնարկի տեխնիկական կողմի վրա,այլ ցուցական մարմնի գործունեությունը քննության ենթարկել կազմակերպական և ընկերական-բարոյական տեսակետներից:

[1] **«Նյութեր...»**, հատ.Գ, էջ 242:
[2] Նույն տեղում:

Սաֆոն պատգամավոր էր ցուցականից և ներկա էր ժողովին: Ցուցմունք տալու համար Վիեննա էր հրավիրվել «վտիտ մարմնով, խոշոր վառվռուն աչքերով, ջղային շարժումներով, ծխախոտը միշտ շրթունքներին մի աղջիկ»[1], Ռուբինան, սուլթանի մահափորձի գլխավոր գործող անձերից մեկը՝ Համո Օհանջանյանի ապագա կինը, իր ելույթներով մի տեսակ դատախազի դեր էր կատարում: «Ամեն անգամ, երբ արտասանվում էր Քրիստափորի անունը, նա ուշաթափվում էր կամ ջղային բացականչություններ անում»[2], - գրել է Ս. Վրացյանը:

Սիմոն Վրացյանը նկատում է, որ սուլթանի մահափորձի գործը ժողովի առջև ներկայացվեց այնպես, որ Քրիստափորի և Սաֆոյի հակամարտության տպավորություն ստացվեց: Կուսակցությունը Սաֆոյին հանցավոր էր նկատում գործողության ձախողման համար: Նա հիմնականում մեղադրվում էր այն բանում, որ ինքնագլուխ փոխել էր սուլթանի մահափորձի՝ Քրիստափորի կազմած ծրագիրը, ըստ որի ռումբի պայթումը պետք է իրականացներ Ռուբինան, բայց գործողության ընդհանուր ղեկավար Սաֆոն որոշել էր դժոխային մեքենա դնել կառքի մեջ և լարել այնպես, որ ճիշտ վայրկյանին պայթեր Համիդի գլխին: Պայթել էր, բայց անվնաս էր մնացել մեծ ոճրագործը:

Սաֆոյին ամբաստանող պատգամավորները նրան առաջադրում էին երկու հիմնական մեղադրանք. 1) Քրիստափորի և Սաֆոյի հարաբերությունները նորմալ չեն եղել, վերջինս խնդիրներ է ունեցել կուսակցության ղեկավարի հետ, Նույնիսկ նախանձել է նրան, 2) Այդ հակասությունն է եղել գլխավոր պատճառը, որ Սաֆոն չեղյալ է համարել Քրիստափորի ծրագիրը, որի հետևանքով մահափորձը վիժել է[3]:

Ելույթ ունեցողները ցասումով նշում էին, որ Քրիստափոր Միքայելյանի մահվանից հետո ցուցականի անդամները, փոխանակ ամեն հնարավոր միջոց ձեռք առնեին ձեռնարկի հաջողության հավանականությունը բազմապատկելու, ընդհակառակը՝ ամենից առաջ մտահոգվել են իրենց կյանքի փրկության մասին, որի հետևանքով, ըստ էության, խուսափել են ստանձնել մեծ ոճրագործի ահարեկման մեծ պատասխանատվությունը, միաժամանակ զարմանալի անհոգությամբ թերացել են ուշադրության առնելու և ըստ այնմ կանխելու կամ մեղմելու այն վտանգները, որոնք նաև սպառնում էին նույն վայրում գործող օժանդակ ընկերներին: Անհոգության արդյունքն այն է եղել, ասում էին պատգամավորները, որ համարյա բոլոր ընկերները դատապարտվել են մահվան կամ երկարատև բանտարկության: Այդ ամենը ժողովականները համարում էին եզակի վրդովեցուցիչ երևույթ դաշնակցության պատմության մեջ, մի երևույթ, որ ըստ էության արատավորել է Քրիստափորի թանկագին

[1] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով, հատ. Բ, էջ 88:
[2] Նույն տեղում, էջ 93:
[3] Նույն տեղում, էջ 94:

հիշատակը:

Ժողովի գերլարված պահը նկարագրելով՝ Ս. Վրացյանը գրել է.

«Սաֆոն, երևութապես անհույզ համբերությամբ լսում էր ամենախառն խոսքերը: ... Մեկ անգամ միայն ցնցվեց ու բացականչեց, երբ մի պատգամավոր նրա հասցեին նետեց «դավաճան» բառը:

Երբ նախագահը խոսքը տվեց Սաֆոյին, նա դանդաղ ոտքի ելավ, և ամբողջ սրահը ականջ կտրեց: Նա հայտնապես ազդված էր, բայց աշխատում էր ցույց չտալ ներքին հուզումը:

- Հիմա հերթը դավաճանինն է, - սկսեց նա: - Ես համբերությամբ լսեցի ձեզ, դուք էլ համբերությամբ լսեցեք ինձ»:

Եվ Սաֆոն անցնում է Քրիստափորի և իր հարաբերություններին: Նա ասում էր, թե ելույթ ունեցողները ոչ մի հիմք չունեն պնդելու, թե ինքն անձնական խնդիր է ունեցել Քրիստափորի հետ, նախանձել է նրան: Այդպիսի փաստ գոյություն չունի: Նա ընդունում էր Քրիստափորի մեծությունը, միաժամանակ ասում, թե մեծ մարդիկ էլ կարող են սխալվել, որ ինքը երբեմն քննադատել է Քրիստափորի սխալները, բայց դա երբեք չի ազդել նրանց ընկերական փոխհարաբերությունների վրա: Արևի վրա էլ բծեր կան, բայց մի՞թե այդ իրողությունը որևէ մեկին իրավունք է տալիս չընդունելու արևի զորությունը:

Անմտություն համարելով Քրիստափորին նախանձելու մասին խոսակցությունները՝ Սաֆոն նշում էր, որ ինքը դրա համար ոչ մի պատճառ չուներ, քանի որ իրենց երկուսի գործունեության ասպարեզները տարբեր են եղել: Եվ ինքն ինչո՞ւ նախանձից դրդված պիտի փոխեր մահափորձի ծրագիրը: Ծրագիրը փոխվել է, ասում էր նա, որովհետև «համոզված էի, որ մեքենան ավելի վստահելի է, քան մարդկային նյարդերը, մանավանդ այս (մատնացույց էր անում իրեն) տկար աղջկա ջղերը: Դժբախտություն ամեն գործում էլ պատահում է: Դուք քավության նոխազ եք փնտրում. թող ես լինեմ քավության նոխազ, միայն թող կուռ և համերաշխ մնա դաշնակցությունը»[1]:

Ս. Վրացյանն իր հուշերում շեշտում էր, որ թեև ուժեղ տրամաբանությամբ և անկեղծ շեշտերով Սաֆոյի արտասանած այդ ճառը մեծ տպավորություն էր գործել պատգամավորների վրա, բայց չէր կարողացել փոխել հարցի քննարկման ընթացքը: «Մահափորձի անհաջողության առաջ բերած ցավն ու վրդովումն այնքան սաստիկ էին, որ, իրոք, քավության նոխազն անհրաժեշտ էր»[2]:

Ծանր մթնոլորտում անցան նաև **Վարդոյի խնդրի** շուրջ ծավալված քննարկումները: Խնդրի էությունը կայանում էր հետևյալում.

Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովի (Սոֆիա, 1904) պատգամավոր Հակոբ Վարդ-Պատրիկյանը (Վարդո)*, որը ներկայացնում էր Հ.Յ.Դ. Ոսկեհանքի (Իզմիր) կոմիտեն[1], ժողովի աշխատանքների ավարտից հետո մնացել էր Սոֆիայում, ապա այնտեղ տեղափոխել նաև ընտանիքը: Որոշ ժամանակ անց Հ.Յ.Դ. Բալկանյան (Բալկանի) կ.կոմիտեի (որը գտնվում էր Բուլղարիայում) երաշխավորությամբ Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոն Վարդոյին նշանակում է Վառնայում հրատարակվող «Շարժում» թերթի խմբագիր: Շատ չանցած՝ նա սկսում է դաշնակցական թերթում տպագրել կազմակերպության դեմ ուղղված հոդվածներ ու նյութեր՝ դրանք հասցեագրելով Հ.Յ.Դ. խորհրդին, զույգ բյուրոներին և կ.կոմիտեներին՝ պահանջելով «կուսակցությունն ազատել բյուրոկրատների ձեռքից»: Հատկապես մեծ աղմուկ էին հանել 1904թ. դեկտեմբերին Վարդոյի ստորագրած «Դաշնակցական ընկերներին» ուղղված «բաց նամակները», որոնցում նա անողոքաբար քննադատել էր կուսակցության գործելակերպը, նրա ղեկավարների աշխատանքը, նույնիսկ՝ կազմակերպության կառուցվածքային դրությունը[2]:

Հերթական համարներից մեկում «Շարժումը» հետևյալ հաղորդումն էր արել.

«Ստույգ աղբյուրներից տեղեկանում ենք, որ Անդրանիկը ուր որ դաշնակցականների է պատահում, անկեղծորեն դատափետում է կազմակերպութեան թերությունները և մատնանշում նրա ձեռնտութեան բացակայությունը երկրի յեղափոխական գործերին: Անդրանիկի կարծիքը և համոզումն է՝ գործի ղեկը խլել բյուրոկրատներից, սիրողներից և կենտրոնացնել յեղափոխական զինուորականութեան ձեռքում, այսինքն՝ Երկրում գործողների: Ցաջողություն ենք ցանկանում Անդրանիկին և զինուորական խորհրդին իրենց ծրագիրների մեջ»:

Վիեննայի ժողովի առաջին օրերին կարդալով թերթի այս հաղորդումը՝ Արամ Մանուկյանը և ուրիշ 14 պատգամավորներ նախագահությանն են ներկայացնում հետևյալ առաջարկը. «Աչքի առաջ ունենալով, որ Անդրանիկի մասին թերթի այդ տողերը կարող են մտքերի շփոթ առաջ բերել որոշ դաշնակցականների շարքերում, ուստի դիմանից խնդրում ենք հոգալ, որպեսզի ընկեր Անդրանիկը հերքում գրե այդ մասին և այստեղ՝ ժողովում, բացատրություն տա իր հիշյալ կարծիքի վերաբերմամբ»[3]:

Գաղափարական բնույթի այդ կնճռին գումարվել էր երկրորդը: Հ.Յ.Դ. Բալկանի կոմիտեն մեղադրանք էր ներկայացրել, թե «Շարժում» թերթին տրամադրած հրատարակչական միջոցներից Վարդոն անձնական պետքերի համար յուրացրել է կոմիտեի հատկացրած 2139 ոսկի և 4673 արծաթե լևերը (6000 ֆրանկ), ինչպես նաև գրպանել է Կովկասից, Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյի կողմից թերթի համար ուղարկած ճիշտ նույնքան գումարը (2000ռ.), այս-

---

[1] **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով, հատ. Բ, էջ 96:
[2] Նույն տեղում:
* Արխիվային որոշ փաստաթղթերում Վարդոն հանդես է գալիս **Իսաք Արվախ** կեղծ անունով:

[1] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 109:
[2] Նույն տեղում, էջ 23, 151:
[3] Նույն տեղում, հատ. Դ, էջ 29:

ինքն՝ ընդհանուր առմամբ զեղծվել է ավելի քան 12000 ֆրանկ:

Բալկանի կոմիտեն քննում է Վարդոյի հարցը, բայց, նրան պատժելու լիազորություններ չունենալով, դիմում է Հ.Յ.Դ. առաջիկա չորրորդ ընդհանուր ժողովին և պահանջում, որ նրա արարքներին տա կտրուկ գնահատական: Կոմիտեն կուսակցաժողովի ուշադրությունը հրավիրում էր Վարդոյի կողմից յուրացրած դրամները վերադարձնելու վրա և պահանջում, որ նա հրապարակավ ներողություն խնդրի «Շարժում» թերթի էջերում դաշնակցական մարմինների և անհատ ընկերների հասցեին արած «հրապարակային զրպարտությունների և անվանարկությունների» համար[1], որը «ժողովրդին և ընկերներու վրայ գէշ ազդեցություն ըրած է»[2]:

Եվ ահա, ընդհանուր ժողովը քննում է Վարդոյի հարցը: Եղան ցասկոտ ելույթներ, մեծամասնությունը պահանջում էր խստագույն պատիժ: Թուրքահայ պատգամավորների զգալի մասը (այդ թվում Անդրանիկը) դեմ էր Վարդոյին պատժելու առաջարկներին, գտնելով, որ նրա հարցը բարձրացվել է այն պատճառով, որ համարձակվել է քննադատել կուսակցության ղեկավարների գործունեության հոռի կողմերը:

Ի վերջո ժողովը Վարդոյի գործի համար ստեղծված դատական հանձնաժողովին պատվիրեց կազմել և առաջիկա նիստերից մեկի քննարկմանը ներկայացնել բանաձևի նախագիծ՝ ելնելով նրան խիստ պատիժ տալու առաջարկներից, որ արել է պատգամավորների մեծամասնությունը:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐ

Եվ այսպես, «Կովկասյան նախագծի» բոլոր սկզբունքային հարցերում Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովի նախագծական և հականախագծական պատգամավորները երկար ժամանակ գտնվում էին տրամագծորեն հակառակ դիրքերում և անզիջում էին իրենց տեսակետների պաշտպանության մեջ:

Բայց որքան մոտենում էր ժողովի ավարտը, այնքան մեծանում էր «Նախագծի» կողմնակիցների թիվը: Տաճկահայ դատի շուրջ ծագած վիճաբանությունների ընթացքում մի քանի հականախագծականներ անցան նախագծականների կողմը, իսկ կուսակցության պահպանման կամ պառակտման հարցի քննարկման ժամանակ հականախագծականների մեծ մասը պաշտպանեց կուսակցության միասնության գաղափարը: Պարզ էր արդեն, որ հականախագծականների ճամբարում ամեն ինչ չէ, որ կարգին է, և սկսված պառակտումը աստիճանաբար հասնելու է իր տրամաբանական ավարտին: Դրան նպաստում էր հարցերը համբերատարությամբ և փոխադարձ հանդուրժողականությամբ քննարկելու՝ գերազանցապես նախագծականների ջանքերով ստեղծված մթնոլորտը:

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 175:
[2] Նույն տեղում, հատ.Գ, էջ 170:

Ընդհանուր ժողովում, ինչպես և ընդհանրապես ընդունված էր կուսակցության ներսում, հարցերը քննարկվում էին ամենալայն ժողովրդավարական սկզբունքներով, հաշվի էին առնվում և հարգվում բոլոր ելույթ ունեցողների կարծիքները, անկախ այն բանից, թե այս կամ այն պատգամավորը ո՞ր տեսակետի օգտին էր արտահայտվում: Արդեն նշվել է, որ պատգամավորներն իրենց հետ ընդհանուր ժողով էին բերել դաշնակցական կազմակերպությունների ու մարմինների միանգամայն տարբեր, հաճախ միմյանց ժխտող, որոշումներ: Ժողովում նրանցից ամեն մեկը հետևողականորեն պաշտպանում էր իր կազմակերպության կողմից տված առաջադրանքները, մինչև որ փաստերի տրամաբանության ուժով ստիպված էր լինում միանալ մեծամասնության տեսակետներին:

Ընդհանուր ժողովի վերջին նիստերն անցնում էին համարյա առանց վիճաբանությունների, որն ապացույց էր այն բանի, որ արդեն ձևավորվել են ընդհանուր տեսակետներ սկզբունքային համարյա բոլոր կարևոր հարցերի շուրջ: Այդ բանն առավել ցայտուն դրսևորվեց բանաձևերի ընդունման ժամանակ:

Ներկայացված նախագծերը քննարկվեցին ժողովի տարբեր նիստերում, որոնցում ընդունված բանաձևերը ըստ ուղղությունների կարելի է բաժանել **յոթ խմբի**, մի բան, որ ժամանակին կատարել էր «Դրոշակի» խմբագրությունը:

Առաջին խմբին[1] վերաբերվում է **Հ.Յ.Դ. կովկասյան գործունեության** բանաձևը:

Երկար, հուզումնալից և սրտամաշ վեճերից հետո կուսակցության կովկասյան գործունեության մասին բանաձևը հաստատվեց ձայների մեծամասնությամբ: Այս բանաձևում նշվում էր, որ «Կովկասյան նախագիծը»՝ իր պարունակած սկզբունքներով հանդերձ, կուսակցության շարքերը ոգևորելու փոխարեն, մի անըմբռնելի թյուրիմացությամբ ամենատխուր ընդհարումների և պառակտումների պատրվակ եղավ, սակայն, ընդհանուր ժողովի կողմից վավերացվելուց հետո այն ըստ իրավասության և թե ըստ էության դարձավ մի հիմնաքար, որի վրա պետք է հենվի դաշնակցության սոցիալիստական գործունեությունը անդրկովկասյան հայ ժողովրդի մեջ[2]:

Ժողովի 70-րդ և 71-րդ նիստերում (ապրիլի 7) քվեարկության են դրվում **կուսակցության բաժանման** վերաբերյալ բանաձևերի երեք նախագծերը, որոնց հեղինակներն էին Խաչատուր Մալումյանը, Արշակ Վռամյանը և համատեղ՝ Արշակ Իսահակյանն ու Ավետիք Շահխաթունյանը:

* Արձանագրող քարտուղարների մի մասի ստիպողական մեկնման պատճառով ընդհանուր ժողովի չորս (93,95,97,98) նիստերի արձանագրությունները կազմվել են շատ սեղմ, այդ իսկ պատճառով տեղի ունեցած վիճաբանությունների մասին ըստ էության չկան անհրաժեշտ տեղեկություններ:
[1] Տե՛ս **«Դրոշակ»**, N 5 (183), մայիս, 1907, էջ 70:
[2] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 299:

Առաջինը կարդացվում է Իսահակյան-Շահխաթունյան նախագիծը, որի հեղինակները նկատի էին ունեցել, որ՝ ա) Թուրքիայի իրականությունը քաղաքական, սոցիալական և տնտեսական տեսակետով տարբեր է կովկասյան իրականությունից, բ) Թուրքիայում Հ.Յ.Դ. պայքարը եղել է ազգային-քաղաքական, այն դեպքում, երբ Կովկասում նրա կուսակցությունը դասակարգային է, սոցիալիստական և միջազգային, գ) Թուրքահայ դատը ղեկավարող կուսակցությունը կարող է գտնվել միմիայն Տաճկահայաստանում, իսկ Երկրից դուրս, մասնավորապես Կովկասում, այդ կուսակցությունը կարող է ունենալ միայն օժանդակող կազմակերպություններ, դ) Այդ դատին օժանդակելու գործը Կովկասում չի վերաբերվում միայն սոցիալիստական բանակին, այլ ժողովրդական լայն մասսաներին, հետևաբար, այդ օժանդակության գործի կազմակերպումը և ղեկավարումը չի կարելի հանձնել որևէ կուսակցության, այլ պիտի դրվի անկուսակցական հողի վրա:

Ելնելով այդ ամենից՝ նախագծի հեղինակները առաջարկում էին. 1. Թուրքահայ դատի և Կովկասի հայ աշխատավոր մասսաների դասակարգային կռվի ղեկավարությունը հանձնել միմյանցից միանգամայն անկախ կուսակցությունների, 2. Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ եթե ստեղծված բացառիկ պայմաններում այդ երկու գործերն իրարից բաժանվեն անմիջապես և ամբողջապես, ապա երկու գործի համար էլ կառաջանան շատ վնասակար հետևանքներ: Ուստի առաջարկվում էր այդ բաժանումն առայժմ կատարել միայն կազմակերպորեն՝ երկու գործերի համար ստեղծելով զատ-զատ մարմիններ, որոնցից ամեն մեկը իր սահմաններում կգործի ինքնուրույն, բայց իրար հետ միացած կլինեն ֆեդերատիվ կապերով[*]: Ըստ որում, բանաձևի նախագիծը նախատեսում էր, որ առաջարկված ֆեդերատիվ սկզբունքը կիրառվելու է ժամանակավորապես, իբրև միացման շրջան: Նախագծի տարբերիչ առանձնահատկություններից մեկն այն էր, որ նրա հեղինակները շարժմանը օժանդակելու գործը դրել էին անկուսակցական հողի վրա, այն դեպքում, երբ բաժանման կողմնակիցների մի մասն առաջարկում էր Կովկասում դասակարգային կռիվ մղողներին անջատել դաշնակցությունից, ըստ որում, Հ.Յ.Դ.-ն, իբրև զուտ Թուրքահայ կուսակցություն, շարունակելու էր մնալ Կովկասում իր ամբողջ մասսայով հանդերձ[2]:

Բանաձևի Իսահակյան-Շահխաթունյան նախագծի քննարկման ընթացքում դեմ արտահայտվեցին բժ. Զավրիյանը և Ռոստոմը: Վերջինս ասում էր.

«Այդ բանաձևը ես գտնում եմ անհետևողական: Եթե ընկերները գտնում են և համոզված են, որ երկու դատերը չէ կարելի միացնել մի կուսակցության մեջ, այն ժամանակ լավ է, որ թողնեն դաշնակցությունը»: Ապա դիմելով բանաձևի հեղինակներին՝ ասում է. «Դուք ուզում եք մնալ, որպեսզի մեր (կովկասահայ:- Հ.Ս.) մասսաները գիտակցության բերեք՝ նրանց ապագայում բաժանելու նպատակով. բայց ձեր այդ ցանկությունը իրագործեցեք՝ դաշնակցությունից դուրս: Մեկ անգամ ընդմիշտ որոշեցեք ձեր դիրքը դեպի կուսակցությունը»[1]:

Այսպիսով, Ռոստոմը կտրականապես մերժում էր դաշնակցության հիմնական սկզբունքներն ու երկու դատերի միացման խնդիրը վճճի առարկա դարձնելը:

Ա. Շահխաթունյանը, նորից ելույթ ունենալով, պնդում է իր տեսակետի վրա, ասելով. «Այդ դեպքում մենք ստիպուած կը լինենք հեռանալ կուսակցությունից»[2]:

Այնուհետև բանաձևի իրենց նախագծերն են ներկայացնում Ա. Վռամյանը և Ս. Մալումյանը:

Իսահակյան-Շահխաթունյանի, Վռամյանի և Մալումյանի նախագծերը քվեարկության են դրվում: Իսահակյան-Շահխաթունյան բանաձևը ստանում է ընդամենը երկու ձայն, ձեռնպահ է մնում մեկ հոգի, մնացած պատգամավորները դեմ են քվեարկում: Չի անցնում նաև Վռամյանի ներկայացրած բանաձևը: Չորս հոգու ձեռնպահությամբ (Իսահակյան, Շահխաթունյան, Մաշուրյան, Վրացյան)* ժողովն ընդունում է Մալումյանի առաջարկած հետևյալ բանաձևը.

«...1. Հետ մղել [կուսակցության] անջատման առաջարկը, 2. Երկու գործունեությունն էլ** վարել Հ.Յ.դաշնակցության դրոշակի և ղեկավարության ներքոյ»[3]:

Այսպիսով, հաղթեց հայոց երկու դատերի միասնության սկզբունքը: Դա պատմական պահ էր ոչ միայն ընդհանուր ժողովի, այլև ողջ կուսակցության համար: Դաշնակցությունը շարունակում էր փաստորեն մնալ նու՛յնը, սահմանի այն կողմում Թուրքահայ վիլայեթներում այնտեղ վարելով գլխավորաբար քաղաքական պայքար, իսկ սահմանի այս կողմում ռուսահայ նահանգներում, նա պիտի տաներ առավելապես տնտեսական, ընկերային պայքար: Բանաձևի ընդունումը մի տուրք լինելով տաճկահայերի կողմից ռուսահայերին՝ միաժամանակ վերացումն էր հայերի մտքում այն սահմանագծի, որ բռնակալ կայսրությունների կողմից քաշված էր նույն ժողովրդի երկու հատվածների միջև: Դաշնակցությունը չէր ուզում բաժան-բաժան տեսնել հայությանը, երբ

[1] «Նյութեր...», հատ.Գ, էջ 188:
[2] Նույն տեղում:

[1] «Նյութեր...», հատ.Գ, էջ 188:
[2] Նույն տեղում, էջ 189:
[*] Ս. Վրացյանը վկայել է, թե «երբ ընկերավարության հարցը դրվեց քվեարկության, Ավետիք Իսահակյանը եղավ սակավաթիվ պատգամավորներից մեկը, որ հակառակ քվեարկեց» (Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, հատ. Բ, էջ 191): Սակայն ընդհանուր ժողովի համապատասխան արձանագրությունը ցույց է տալիս, որ Ա. Իսահակյանը ոչ թե դեմ է քվեարկել Մալումյանի առաջարկած բանաձևին, այլ ձեռնպահ է մնացել:
** Նկատի ունի Հ.Յ.Դ-ի տաճկահայկական և կովկասյան գործունեությունը:
[3] «Դրոշակ», N 5 (183), մայիս, 1907, էջ 70:

ահավոր վտանգ էր կախված նրա մի մասի ֆիզիկական գոյության վրա:

*«Հայ անկախության գաղափարը մերձավոր անցյալի մեջ» հայտնի հոդվածում Վահան Նավասարդյանն այդ առիթով գրել է, թե այդպիսով դաշնակցությունն իր գործի շրջանակների մեջ առավ նաև Ռուսաստանը, և դրանով իսկ ինքը փոխվեց որակով: «Թուրքահայ դատը փոխարինուեց **համահայկական** դատով, իսկ համահայկական դատը Կովկասի մեջ էլ ավելի շերտավորվեց և դարձավ հայ **աշխատավոր** ժողովրդի դատ»[1]:*

Անդրանիկի, Սեպուհի, Մուրատի նման տաճկահայ անվանի ռազմիկները գլուխ խոնարհեցին նախագծական մեծամասնության կամքի առջև՝ միայն ու միայն իրենց պատկանած կազմակերպության ամբողջականությունը պահպանած լինելու մտահոգությամբ: Իրականում իրենց հոգեբանությամբ նրանք մնացին կովկասյան գործունեության նույն հակառակորդները:

Ի. Մալումյանի բանաձևն ընդունելուց հետո հանդես է գալիս Մաշուրյանը և առաջարկում մի լրացուցիչ բանաձև, ուր պատճառաբանված էր, թե ժողովն ինչու է հետ մղում անջատման առաջարկը: Այդ լրացուցիչ փաստաթուղթը, որը քվեարկվում և ընդունվում է, ուներ հետևյալ բովանդակությունը.

«Ընդհանուր ժողովը լսելով ընկերներ Շահխաթունյանի և Իսահակյանի՝ տաճկահայ դատի անջատման և անկուսակցական հողի վրա դնելու զեկուցումները, գտնում է.

Ի նկատի ունենալով, որ Տաճկահայաստանում քաղաքական կռիվը երբեք չէ հակասում սոցիալիստականին, այլ պատրաստում է վերջինիս համար գործունեության լայն ասպարեզ, որ տաճկահայ ժողովրդի 90 տոկոսը կազմող աշխատավոր դասերի դատը անկուսակցական հողի վրա դնել կը նշանակե բուրժուազիայի ձեռքը տալ նրան, մեռցնել այդ դատը, և որ տարբեր քաղաքական ու տնտեսական պայմանների տակ ապրող հայ մասսաների ներկայացուցիչները չեն կարող մի ընդհանուր ժողովում մշակել տարբեր միջավայրերի համապատասխան և նրանց համար մերձավոր ծրագիր ու տակտիկա այդ գործի համար, – ուստի, հիմնվելով դաշնակցութեան սկզբնական ծրագրի ոգու վրայ, այս ընդհանուր ժողովում պետք է մշակել յեղափոխական սոցիալիստական ծրագրի ընդհանուր մասը, հիմնավորուած պատմափիլիսոփայական որոշ աշխարհայեացքով, իսկ մինիմում ծրագիրն ու տակտիկական խնդիրները թողնել համապատասխան երկրների ռայոնական ժողովներին»[2]:

Մաշուրյանի առաջարկած բանաձևին դեմ են քվեարկում Շահխաթունյանն ու Իսահակյանը, ձեռնպահ են մնում Սարգիս Մինասյանը և Սիմոն Վրացյանը: Վերջինս իր բռնած դիրքը պատճառաբանում էր այսպես. «Համաձայն Նալբանդի շրջանային ժողովի դրած պայմանի, տաճկահայ և կովկասահայ դատերի հարաբերության խնդրում քվեարկելիս մնում եմ ձեռնպահ: Իսկ

[1] **«Հայրենիք»**, *N 4(16), փետրվար, 1924, էջ 83:*
[2] **«Նյութեր...»**, *հատ.Գ, էջ 190:*

անձնապես կողմնակից եմ բաժանման բանաձևին»[1]:

*Բանաձևերի **երկրորդ խումբը**[2] վերաբերում էր **տակտիկական խնդիրներին**՝ ապստամբական ձեռնարկներ, տեռոր, Թուրքիայի հայաբնակ վայրերում ինքնապաշտպանության գործ, արշավախմբեր, Կովկասի ինքնապաշտպանություն, ցուցական գործունեություն, նոր կազմակերպությունների ստեղծում Վերնաշենի, Լեռնավայրի, Բաստի, Սիմի շրջաններում, զինապայթուցիկ ձեռնարկներ:*

*Մանրամասն քննարկելով **ապստամբական ձեռնարկների** հարցը՝ ժողովը որոշում ընդունեց, թե Թուրքահայաստանի ո՛ր վայրերում պետք է բռնկվեն ապստամբություններ, երբ տրվեր ընդհանուր ազդանշան: Նախատեսվում էր այդ վայրերում ստեղծել կուսակցության նոր կազմակերպություններ, իսկ ողջ Հայաստանի համար՝ «Պատասխանատու մարմին»՝ նրան հատկացնելով առանձին բյուջե: «Մարմինը» լինելու էր բոլոր գործերի կարգադրողն ու պատասխանատուն:*

Գլխավոր վայրերի կազմակերպություններին հանձնարարվում էր կատարել երկրի լայն ռազմական ուսումնասիրություն և պատրաստել ռազմական ծրագրեր՝ այս կամ այն պատահականությանը դիմագրավելու համար: Անակնկալ պատահարների դեպքում «Մարմինը» կարող էր դիմել ակտիվ ձեռնարկների, նախօրոք ստանալով դաշնակցության խորհրդի համաձայնությունը:

*Լսելով **տեռորի մասին** ներկուսակցական զեկուցումը՝ բուռն վիճաբանություններից հետո ընդունվեց բանաձև, որով թույլատրվում էր «քաղաքական սիստեմատիկ տեռոր», և այդ նպատակով անհրաժեշտ էր համարվում կյանքի կոչել «Տեռորական գործոն կոմիտեն», իսկ մինչ այդ պետք է ընտրվեր երեք ընկերներից բաղկացած մի ժամանակավոր հանձնախումբ՝ կոմիտեի ստեղծման նախապատրաստական աշխատանքները կատարելու համար:*

Տեռորի մասին հարցի քննարկման ժամանակ մի քանի կտրուկ պահանջներ առաջադրեց Արամ Մանուկյանը: Օրինակ՝ նիստերից մեկում նա բարձրացրեց Երկրի եվրոպական հյուպատոսների հայ թարգմանիչների հարցը, որ նրան բազմիցս զբաղեցրել էր Վասպուրականում: Օգտվելով իրենց դիրքից՝ այդ թարգմանիչներից շատերն իրենց անձնական շահերի օգտին շահագործում էին հայ դատը: Բազմաթիվ դեպքերում նրանք յուրացնում էին նույնիսկ սովյալների համար արտասահմանից ստացված նպաստը: Բայց առավել վտանգավորն այն էր, որ այդ թարգմանիչները հայ հեղափոխականների գործունեության մասին հյուպատոսներին տալիս էին ճիշտ կամ նույնիսկ չափազանցված տվյալներ՝ դրանով իսկ մեծապես վնասելով հայ դատի եվրոպական պրոպագանդային:

Ելույթ ունենալուց հետո Արամը կազմեց մի գրավոր առաջարկ և ներկա-

[1] **«Նյութեր...»**, *հատ.Գ, էջ 190:*
[2] **«Դրոշակ»**, *N 5 (183), մայիս, էջ 70-71:*

յայտրեց ժողովի դիվանին: Փաստաթուղթը ստորագրել էին նաև 13 ուրիշ պատգամավորներ: Այնտեղ ասված էր.

«Ընդհանուր ժողովը հանձնարարում է Երկրի մարմիններին՝ ձեռք առնել նրանց դեմ ամենախիստ միջոցներ՝ կանգ չառնելով նույնիսկ տեռորի առաջ»[1]:*

***Հայ բնակչության ինքնապաշտպանության գործը** Թուրքիայի հայաբնակ վայրերում ամուր հիմքերի վրա դնելու համար ժողովն ընդունեց չորս կետերից բաղկացած մի բանաձև, որը նախատեսում էր՝ 1. Ինքնապաշտպանական խմբերը զինել տեղացիների նյութական միջոցներով, 2. Քայլեր ձեռնարկել զենքի շուկա ստեղծելու համար, 3. Ինքնապաշտպանական խմբերի ձեռք բերած զենքերը համարվում են համայնական սեփականություն և պետք է գտնվեն դաշնակցության վերահսկողության տակ, գործադրվեն միայն նրա հրահանգներով, 4. Զինման գործը պետք է կատարվի աստիճանաբար, ինքնապաշտպանական խմբերի կազմության և դրանց անդամների զինվորական կրթության զարգացմանը զուգընթաց:*

*Քննելով **արշավախմբերի խնդիրը**՝ ժողովը հանգեց հետևյալ եզրակացության. 1. Եթե վարիչ մարմինները լրջորեն զբաղվեն դրանց անդամների զինման խնդիրներով, արշավախմբերն ապագայում նույնպես օգտակար կարող են լինել ազատագրական կռվի մեջ, 2. Այդօրինակ գործողությունների համար, առանց վարձի, ստեղծել դաշնակցական նոր խմբեր՝ միլիցիական սկզբունքներով:*

*Լսելով համապատասխան զեկուցումներ **Կովկասի հայ բնակչության ինքնապաշտպանության ու զինման գործի** մասին և ծավալելով վիճաբանություններ՝ ընդհանուր ժողովը որոշեց. 1. Կազմակերպության առաջիկա տակտիկայի մեջ ընդունել ցուցական գործունեությունը շարունակելու անհրաժեշտությունը, 2. ....., 3....., 4. Ձգտել ապահովել Թուրքիայի ոչ հայ դժգոհ տարրերի գործակցությունը, 5. ....**:*

*Նկատելով, որ հեղափոխական ձեռնարկների համար անհրաժեշտ է ունենալ շատ հմուտ արհեստավորներ **զինա-պայթուցիկ**** և այլ հարակից արհեստների համար, ժողովն ընդունեց չորս կետից բաղկացած բանաձև:*

*Ընդհանուր ժողովի ընդունած բանաձևերի **երրորդ խումբը** վերաբերում էր **այլ ուժերի հետ կուսակցության համերաշխ գործակցությանը**[2]:*

*Լսելով զեկուցում **Թուրքիայի հեղափոխական տարրերի հետ համերաշխություն** կայացնելու անհրաժեշտության մասին՝ ժողովն արձանագրում էր, որ Թուրք ժողովրդի մեջ ծայր առած հակակառավարական դժգոհությունները նպաստավոր պայմաններ են ստեղծում գործնական հողի վրա դնելու համար համերաշխության գաղափարի իրականացումը, «ինչ որ, դժբախտաբար, ցարդ չէ յաջողած դաշնակցութեան՝ հակառակ տարիներե ի վեր ձեռք առած միջոցներուն, հակառակ իր ծրագրին և նախորդ իր ընդհանուր ժողովի որոշումներուն»: Ուստի Թուրքիայում գործող դաշնակցական մարմիններին հանձնարարվեց ամեն կերպ աջակցություն ցույց տալ Թուրք ժողովրդի հակասուլթանական ընդդիմադիր տարրերին՝ ռեժիմի դեմ իրենց կռվի մեջ: Հայ և Թուրք ընդդիմադիր ուժերի գործակցությունն այնպես պետք է կարգավորվեր և առաջ տարվեր, որ Թուրք բողոքող և ըմբոստ տարրը պայքարի ասպարեզ իջներ և դրանով իսկ իշխանություններին զրկեր «ամբոխային կրոնամոլությունը հայ ժողովրդի և հայ յեղափոխութեան դեմ գրգռելու առիթեն»:*

Այս տեսակետներից ելնելով՝ կուսակցության մարմիններին հանձնարարվեց. 1. Ամեն կերպ աշխատել սկիզբ դնելու հայ և Թուրք ընդդիմադիրների համերաշխ գործակցության և այդ նպատակով առաջ բերել համերաշխության մարմիններ, 2. Նախապատրաստական բանակցություններ սկսել հեղափոխական Թուրք և կայսրության այլազգի ուրիշ տարրերի, նրանց խմբակցությունների հետ, որոնց քաղաքական հայացքներն ու ձգտումները մոտ են դաշնակցության սկզբունքներին, Թուրք ժողովրդի մեջ ամեն կերպ ուժ տալ հակասուլթանական պրոպագանդային, 3. Քանի որ Թուրքիայում առանձին ազգություններն ունեն իրենց ինքնուրույն նպատակները և ընդհանուր թշնամու դեմ հանդես չեն գալիս միասնաբար, ուստի ձգտել կայսրության այլ ազգությունների հեղափոխական կուսակցությունների և տարրերի մեջ առաջ բերել համերաշխության ոգի, կազմել ֆեդերատիվ սկզբունքի վրա հիմնված քաղաքական ծրագիր ունեցող ամուր դաշինք, որն ի վիճակի լինի ապահովել բոլոր ազգությունների իրավունքները: «Այս գաղափարի իրականացման համար առաջին պատեհությամբ իսկ հրավիրել համաժողով մը վերոհիշյալ տարրերու մասնակցությամբ»: Առաջին անգամ դաշնակցությունը, հանձինս ժողովի այս բանաձևի, ամենայն հստակությամբ արձանագրում էր.

«Միևնոյն ատեն Թուրքերու մեջ տարածված անհիմն թյուրիմացություններուն վերջ տալու համար, ժողովը պարտք կը համարի յայտարարել, որ դաշնակցությունը Թուրքիոյ մեջ ունեցած չէ և չունի անջատական ոչ մեկ ձգտում, այլ իր նպատակն է եղած ազգերու կատարեալ հավասարություն, և տեղական լայն ինքնավարութեան սկզբունքի համաձայն՝ հայկական վեց վիլայեթներու մեջ վարչական ինքնավարութեան հաստատումը, ինչ որ չը հակասեր մյուս ազգերու իրավունքին»:

***Կովկասում 1905-1906թթ. տեղի ունեցած Թուրք-հայկական ընդհարումների կապակցությամբ** ժողովն ազդարարում էր, որ լցված է «խորագոյն վշտով երկու իրողության հանդեպ»: Նկատելով, որ այդ ժողովուրդների թշնամությունը «զգալապես մնասում է ընդհանուր յեղափոխութեան գործին», որ*

---

* *Հայկական հարցը շահարկող հայ թարգմանիչներին:*

[1] ***«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 26:*

** *Բանաձևի 2,3,5 կետերը գաղտնագրված են եղել և չեն հրատարակվել: Զեն հրատարակվել նաև Վերնաշենի, Լեռնավայրի, Բաստի, Սիմի շրջաններում Հ.Ց.Դ կազմակերպություններ ստեղծելու մասին ընդունած որոշումները:*

*** *«Զինա-պայթուցիկ» բանաձևի բոլոր չորս կետերը գաղտնագրված էին և չեն հրատարակվել:*

[2] ***«Դրոշակ»**, N 5(183), մայիս, էջ 72-74:*

ցարական կառավարությունը բոլորովին տրամադիր չէ հրաժարվել իր պառակտող քաղաքականությունից, որ թուրք անգիտակից ամբոխին հարստահարող բեկությունն ու հոգևորականությունը, մերթ իրենց շահերից դրդված, մերթ արտաքին քաղաքական պրոպագանդայի ազդեցության տակ, շարունակում են շահագործել զանգվածների տգիտությունն ու հակահայկական տրամադրությունները, ժողովն ընդունեց որոշում. 1. Հանձնարարել դաշնակցական բոլոր մարմիններին՝ գրավոր և բանավոր զորեղ համերաշխության պրոպագանդա մղել Կովկասի հայ և թուրք ժողովուրդների շրջանում, 2. Ջանք չխնայել թուրք մտավորականության միջոցով իր ժողովրդի շարքերում առաջ բերելու հեղափոխական կազմակերպություններ, «իբրև լավագույն միջոց՝ խլելու անգիտակից մասսաները մոլորեցնող թուրք տարրերի ազդեցությունից», 3. Հայ ժողովրդի բոլոր խավերի միջից հալածել այն մարմիններին ու անհատներին, որոնք «խոսքով թե գործով, հաճախ անգիտակցաբար, գրգռում են փոխադարձ ատելություն և ատիթ տալիս թշնամության վերսկսման, 4. Աջակցել այն թուրք կազմակերպություններին, հրատարակություններին և անհատներին, որոնք ծառայում են երկու ժողովուրդների համերաշխությանը և մերձեցմանը, 5. Հայ և թուրք աշխատավորների միջև հաստատել հեղափոխական կապեր քաղաքներում և գյուղերում, միացյալ ուժերով կռիվ մղել երկու ժողովուրդների ազատագրությունը կասեցնող քաղաքական և տնտեսական գործոնների դեմ: «Այս հանձնարարման հետ միասին, - ասված էր բանաձևի եզրափակիչ պարբերության մեջ, - ընդհանուր ժողովը ջերմ հույս է տածում, որ հակառակ ընթացիկ դժվարությունների և լայնատարած յոռետեսութեան, այսօրվա ատելությունն ու պառակտումը կ'ընկճվին և տեղի կը տան միջազգային՝ այն համերաշխութեան, որը պիտի լինի ամենազորեղ պատվանդանը մեր ապագա կռվի ու երկու ժողովուրդների յեղափոխական յաղթանակին»:

Վրացիների հետ համերաշխ գործակցություն հաստատելու պահանջն ընդհանուր ժողովին մղել էր ընդունելու հատուկ բանաձև. «Գործակցություն վրացիների հետ» վերտառությամբ այդ բանաձևում ասված էր, որ դաշնակցությունը խորապես կողմնակից է հայերի և վրացիների միջև քաղաքական ներդաշնակ հարաբերությունների, որ երկու ժողովուրդները, որոնք միմյանց հետ կապված են հայրենիքով, քաղաքական և տնտեսական շահերով, «պետք է գործեն ձեռք ձեռքի տված, ներշնչված նույն տենչով և, հետևաբար, փոխադարձ անհամաձայնության և գժտության ամենափոքր նշանն անգամ պիտի նկատվի քաղաքական մեծ սխալ երկու ժողովուրդների համար»: Ընդհանուր ժողովը կուսակցության բոլոր մարմիններին և ընկերներին հրահանգում էր՝ «Իրենց հեղափոխական գործողությունների, ինչպես և գրավոր ու բանավոր պրոպագանդայի ընթացքում երբեք չմոռանալ այն սերտ կապը, որ պիտի լինի

* Նկատի ունի՝ ազգամիջյան:

վրացի և հայ աշխատավորների միջև, հանդեպ քաղաքական և տնտեսական այն կռվի, որով բռնկված է Անդրկովկասը»: Ժողովը դաշնակցության ղեկավար մարմիններին թելադրում էր «մոտիկից կապեր հաստատել և, ի հարկին, ձեռնարկներ անել վրաց ժողովրդի մեջ գոյություն ունեցող հեղափոխական և սոցիալիստական կուսակցությունների հետ»՝ դուրս չգալով, հարկավ, Հ.Յ.Դ. ծրագրի և տակտիկայի սահմաններից:

Շեշտելով իր այդ անվերապահ ցանկությունը՝ ժողովը միաժամանակ անկեղծ ցավով մատնանշում էր այն փաստը, որ վրացիների շրջանում գործող ամենախոշոր քաղաքական կազմակերպությունը՝ ՌՄԴԲԿ մաս կազմող վրաց մենշևիկների կուսակցությունը, հակառակ այն ուսմունքի (մարքսիզմի) ոգուն, որի դրոշակակիրն է փորձում ներկայանալ (Կովկասում), «իր գործելակերպով, որ հեռու է շիտակությունից, և իր պրոպագանդայի ձևով, որ հաճախ շովինիզմի կնիք է կրում, փոխանակ նպաստելու երկու ժողովուրդների քաղաքական համերաշխ գործակցության, սերմանում է անօգուտ գրգռումն, անվստահություն և նույնիսկ թշնամանք»:

Դաշնակցության մարմինները հանձնարարություն ստացան՝ չհետևել այդ վրաց կուսակցության գործելակերպին, չգործել նրա մեթոդներով, այլ անշեղ շարունակել քաղաքական շիտակ պայքարը, և, մերկացնելով հանդերձ այդ վրաց կազմակերպության գործունեությունը, միաժամանակ «անսասան և անհողդողդ առաջ տանել երկու հարևան ժողովուրդների ներդաշնակ գործակցության աշխատանքը, միշտ հավատարիմ սոցիալիզմի և համերաշխության հիմնական պահանջներին»:

Այնուհետև ընդունվեցին բանաձևեր Կովկասի և ռուսական կայսրության **սոցիալիստական կուսակցությունների հետ գործակցության,** ինչպես նաև **միջկուսակցական իրավարար ատյան ստեղծելու մասին:**

Առաջին բանաձևով դաշնակցության կովկասյան մարմիններին հանձնարարվեց ձգտել գործակցություն առաջ բերել սոցիալիստական և հեղափոխական այն կուսակցությունների և կազմակերպությունների միջև, որոնց դավանանքը և գործելակերպը մոտ է դաշնակցությանը: Ավելին, չէր բացառվում գործակցությունը նաև Կովկասում գործող սոցիալիստական այն կուսակցությունների և կազմակերպությունների հետ, որոնք հակառակորդ էին դաշնակցությանը, նույնիսկ սոցիալ-դեմոկրատների հետ, որոնք ամենից ավելի էին պայքարում դաշնակցության դեմ:

«Սոցիալիստական ու հեղափոխական բոլոր ուժերը պետք է միանան, - գրում էր «Դրոշակը». - այդ է մեզ համար ժամանակի չափազանց ստիպողական պահանջը: Երբ բովանդակ սոցիալիստական մարդկությունը երկրագնդի բոլոր անկյուններում բարձրաձայն գոչում է՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» - մենք՝ կովկասյան սոցիալիստներս, ոճիր կը գործենք ընդդեմ մարդկութեան, եթե շարունակենք պառակտումի, թշնամութեան որոմը ցանել

մեր երկրի պրոլետարների ու նրանց թարգման կուսակցությունների միջև»[1]:

Երկրորդ բանաձևով նախատեսվում էր տվյալ շրջանի դաշնակցության պատասխանատու մարմնի ջանքերով չեզոք ու ձեռնհաս անձերից կազմել միջկուսակցական իրավարար ատյաններ, որոնց որոշումները պետք է պարտադիր լինեին գործակցության մեջ մտած կազմակերպությունների և մարմինների համար: Ատյանների կազմության մանրամասների մշակումը թողնվում էր ռայոնական ժողովներին:

Ապա ընդհանուր ժողովն անցավ **Հնչակյան կուսակցության** Փարիզի կենտրոնական վարչությունից ստացված **դիմումի** առիթով ներկայացված բանաձևի քննարկմանը:

Նշենք, որ Հնչակյան հիշյալ կենտրոնը, այսինքն՝ կուսակցության վերին մարմինը, դիմել էր Հ.Յ.Դ. ընդհանուր ժողովին՝ առաջարկելով գումարել հայ հեղափոխական կուսակցությունների կոնգրես և համերաշխաբար գործելու նպատակով այնտեղ կազմել միջկուսակցական ատյան: Քննարկելով Հնչակյան կենտրոնի դիմումը՝ ժողովն ընդունեց համապատասխան բանաձև:

Նկատելով, որ դաշնակցության և Հնչակյան հեղափոխական կուսակցությունների միջև համերաշխ գործակցությունը հնարավոր է միայն այն դեպքում, «երբ Հնչակյան տեղական մարմիններն իրենց առօրյա ընթացքով և հեղափոխական գործունեությամբ վստահություն կներշնչեն դաշնակցական տեղական մարմիններին», նկատելով, որ կուսակցական հողի վրա շարունակվում են ընդհարումներն իրենց ցավալի հետևանքներով, ընդունելով, որ հայ հեղափոխական կուսակցությունների կոնգրեսի հրավիրման հարցը իմաստ չունի, քանզի Երկրում, բացի դաշնակցական մարմիններից, գոյություն չունեն Հնչակյան և այլ հեղափոխական մարմիններ, ընդհանուր ժողովը որոշեց. «ա) Հայ հեղափոխական կուսակցությունների կոնգրեսի հրավիրումը ներկայումս համարել վաղաժամ, բ) Միջկուսակցական ատյանի առաջարկն ընդունել (համաձայն ներկա ժողովի նախորդ որոշման)»:

Միաժամանակ ժողովը գտնում էր, որ ապագայում բացառված չէ հայ հեղափոխական կուսակցությունների համատեղ կոնգրեսի հրավիրումը և նրանց միջև համերաշխ գործակցության ստեղծումը, եթե առաջ գան անհրաժեշտ պայմաններ:

Շեշտվում էր նաև այն հանգամանքը, որ այլևայլ հեղափոխական կազմակերպություններին պատկանող՝ հեղափոխական-ազատագրական պայքարի գործին նվիրված վստահելի անհատների ու խմբերի հետ ընդհանուր թշնամու դեմ (մանավանդ Երկրում) «համերաշխ կռիվ մղելը եղել է և այժմ էլ պետք է լինի դաշնակցության բաղձանքը և ձգտումը»: Հետևապես ժողովը հանձնարարում էր բոլոր մարմիններին՝ «ամեն կերպ խույս տալ [միջ]կուսակցական ընդհարումներից և ծագող վեճերն ու թյուրիմացությունները լուծել հիշատակված միջկուսակցական ատյանի միջոցով»*:

Ընդունված բանաձևերի չորրորդ խումբը վերաբերում էր առաջիկա ժամանակաշրջանում **դաշնակցության պրոպագանդիստական գործունեությանը**[1]:

Ժողովը կուսակցության ղեկավար մարմիններին հանձնարարել էր առաջիկայում ուժգին կերպով առաջ մղել պրոպագանդայի գործն ըստ առանձին տարածաշրջանների՝ Եվրոպա, Ռուսաստան, Կովկաս, Թուրքահայաստան, ամեն կոնկրետ դեպքում հաշվի առնել տեղական առանձնահատկությունները**:

Կուսակցության պաշտոնական կենտրոնական օրգան «Դրոշակի» նկատմամբ աճած պահանջներից ելնելով՝ ժողովը պարբերականի խմբագրությանը խորհուրդ էր տալիս անհրաժեշտության դեպքում «Դրոշակը» լույս ընծայել ավելի մեծ ծավալով և ի հարկին անել հավելվածներ: Պարբերականի գործունեության մեջ կարևորվում էր տնտեսական խնդիրների ավելի լայն ու խոր արծարծում: Նկատի առնելով, որ մամուլի համար Անդրկովկասում համեմատաբար տանելի պայմաններ էին ստեղծվել, անհրաժեշտ համարվեց հայերեն բրոշյուրների հրատարակությունը ժնևում սահմանափակել և դրանց տպագրությունը հիմնականում կազմակերպել Կովկասում: Որոշվեց հայկական հարցի պրոպագանդան ուժեղացնելու համար եվրոպական զանազան լեզուներով հրատարակել թուրքահայ և կովկասահայ հեղափոխական շարժումներին նվիրված գրքույկներ, ինչպես նաև թուրքերեն, քրդերեն, պարսկերեն և այլ լեզուներով ստեղծել, տպագրել ու տարածել բրոշյուրներ՝ տարածաշրջանում հայերի հետ ապրող այլևայլ ժողովուրդների համերաշխությանը և մերձեցմանը նպաստելու համար:

Հատկապես կարևոր նշանակություն էր տրվում Կովկասում դաշնակցական նոր հրատարակությունների հիմնմանը (կովկասյան շրջանի համար մի օրաթերթ, մի ամսագիր, մի ռուսերեն թերթ): Անհրաժեշտ համարվեց ընդլայ-

---

[1] **«Դրոշակ»**, N 8 (185), օգոստոս, 1906, էջ 106:

* Տվյալ դեպքում «Երկիր» ասելով բանաձևը, հավանաբար, նկատի ուներ Վասպուրականը և Դուրան-Բարձրավանդակը:

* Ինչպես տեսնում ենք, Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովը կտրականապես մերժել էր Հնչակյան կուսակցության հետ դաշնակցության գործակցության և փոխադարձ աջակցության հնարավորությունը հայ ժողովրդի համար ճակատագրական մի ժամանակահատվածում: Մեր կարծիքով, դա ժողովի կողմից թույլ տված կոպիտ սխալն էր: Երբ ընդունվում էին հեռու և մոտիկ օտար, այդ թվում թուրք, քաղաքական այլևայլ կազմակերպությունների հետ համերաշխություն հաստատելու անհրաժեշտության մասին բանաձևեր և միաժամանակ մերժվում էր նույնքան (եթե ոչ ավելի) հեղափոխական մի հայ կուսակցության հետ ոչ միայն ամուր դաշինք կազմելու, այլ նույնիսկ գործակցելու առաջարկը, ապա դա, անշուշտ, մեղմ ասած, չէր բխում հայ ժողովրդի ազատագրական շարժման շահերից: Ժողովում բանաձևի ընդունումից հետո նոր ուժով բորբոքվեցին Հնչակ-դաշնակ հակասությունները, է՛լ ավելի սատկացան եղբայրասպան ընդհարումները, եղան բազմաթիվ նոր անիմաստ զոհեր: Ակամայից ջուր էր լցվել ընդհանուր թշնամու ջրաղացին:

[1] **«Դրոշակ»**, N 5 (183), մայիս, 1907, էջ 74 -75:

** Ըստ տարածաշրջանների ընդհանուր ժողովի կողմից Հ.Յ.Դ. մարմիններին տված կոնկրետ հանձնարարականները չեն հրատարակվել:

նել Թիֆլիսում լույս տեսնող «Ցառաջ» թերթի գրադարանի հրատարակչությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Թուրքահայ դատի և Երկրի սոցիալ - տնտեսական ուսումնասիրության վերաբերյալ աշխատությունների ստեղծման և տպագրման խնդրին:

Կազմակերպական հարցերին վերաբերող ընդհանուր ժողովի ընդունած բանաձևերի **հինգերորդ խմբում** կարևորվում էր այն բանաձևը, որով հավանություն էր տրվում ու հաստատվում Հ.Յ.Դ. Շամի (Վասպուրականի) կազմակերպությունից անջատված ընկերների և առաջին հերթին Նիկոլ Պողոսյանի (Վանա Իշխան) առաջարկը՝ **Հ.Յ.Դ. Լեռնապարի առանձին կենտրոնական կոմիտե ստեղծելու** և նրան դրամական անհրաժեշտ միջոցներ հատկացնելու մասին:

Իր նշանակությամբ հատկապես հրատապ էր **բռնի հանգանակությունն արմատախիլ անելու** մասին բանաձևը: Այս հարցի մասին տված զեկուցումը լսելուց հետո և ծավալված բուռն վիճաբանությունների արդյունքում ժողովը վերահաստատեց բռնի հանգանակությանը՝ Հ.Յ.Դ. նախորդ ընդհանուր ժողովի տված գնահատականը՝ «բացարձակ չարիք»: Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովից (1904թ.) հետո դաշնակցության խորհուրդը նույնպես խստորեն դատապարտել էր բռնի հանգանակությունը և կարգադրել դադարեցնել այն, նկատի առնելով, որ նման գործողությունները հասարակական լայն խավերում առաջ են բերում բարոյալքում և հակահեղափոխական հետևանքներ:

Ելնելով այդ ամենից՝ ժողովն ընդունեց հետևյալ որոշումը. 1. Հանգանակության գործում խսպառ արգելել բռնի միջոցների գործածությունը, 2. Ամենախիստ պատասխանատվության ենթարկել դաշնակցության այն անդամներին և մարմիններին, որոնք կշարունակեն դիմել բռնի միջոցների, 3. Ազդու միջոցներ ձեռք առնել վերջ տալու այն բռնի հանգանակությունները, որ կազմակերպության անունից գաղտնի կամ խարդախ միջոցներով կատարում են այլևայլ բախտախնդիրներ:

Այնուհետև ժողովն ընդունեց միջազգային սոցիալիստական բյուրոյի հետ հարաբերությունների, Պարսկաստանի շրջանում տարվող քաղաքականության, Հ.Յ.Դ. առաջիկա ընդհանուր ժողով հրավիրելու, գաղութներում տարվելիք աշխատանքների, Քր. Միքայելյանի ընտանիքին օգնություն ցույց տալու մասին՝ բանաձևերը, անդրադարձավ Թուրքահայաստանի ուսումնասիրման ուղղությամբ տարվելիք աշխատանքներին:

Վերջինիս կապակցությամբ որոշում ընդունվեց՝ Երկրում տարվելիք ուսումնասիրությունը (գլխավորապես վիճակագրական և ռազմահեղափոխական տեսակետից) դնել ավելի լայն ու գիտական հիմքերի վրա, աշակցել, որպեսզի հենց Երկրի Հ.Յ.Դ. մարմինները և դաշնակցական ձեռնհաս ընկերները կատարեն վիճակագրական, ազգագրական, տնտեսագիտական և քաղաքական ուսումնասիրություններ, բոլոր միջոցներով նպաստել, որպեսզի, որքան հնարավոր է, մեծ թվով մտավորական ընկերներ մտնեն Երկիր և, որքան կարելի է, շատ տեղեկություններ հայթայթեն ժողովրդի կյանքի ու կացության վերաբերյալ: Անհրաժեշտ համարվեց կատարվելիք ուսումնասիրությունների արդյունքում պատրաստել հայկական գավառների մանրամասն ու մեծադիր քարտեզ: Որոշվեց նաև ստեղծել մի հատուկ մարմին՝ «Ուսումնասիրող մարմին» անունով, որը և պետք է ղեկավարեր Երկրի ուսումնասիրման ուղղությամբ տարվելիք բոլոր աշխատանքները:

Ընդհանուր ժողովի ընդունած մյուս բանաձևերի խումբը վերաբերում էր **կարգապահական հարցերին (վեցերորդ խումբ)**[1]:

Այս խմբի բանաձևերից մեկը վերաբերում էր ստացված **տեղեկագրերին և անհատական դիմումներին ընթացք տալուն**: Այդ կապակցությամբ ժողովը կուսակցական տեղական մարմիններին հանձնարարեց անհապաղ ընթացք տալ բնակչությունից ստացված բոլոր դիմումներին, գանգատներին ու բողոքներին, պատասխանատվության կանչել այն բոլոր դաշնակցականներին - զինվոր, պրոպագանդիստ, հայդուկ, կազմակերպիչ - որոնք իրենց քայլերով առիթ են տալիս արդար բողոքների: «Ընդհանուր ժողովը լիահույս է, - ասված էր բանաձևում, - որ իր այս հրահանգի ճիշտ կիրառությամբ կարելի պիտի լինի արմատախիլ անել կուսակցության անվան հետ, հաճախ անհիմն կերպով, կապվող զեղծումները, և ներշնչել հայ ժողովրդի բոլոր խավերին այն գիտակից վստահությունը, որ միշտ վայելել է դաշնակցությունը ոչ միայն կողմնակիցների, այլև ազնիվ հակառակորդների կողմից»:

Կարևոր էր **ցուցական մարմնի** գործունեության բանաձևը՝ կապված Քր. Միքայելյանի նահատակության և սուլթան Համիդի դեմ կազմակերպված տեռորի անհաջողության հետ:

Ապացուցված համարելով ցուցականի խիստ թերացումը ընկերական պար-

---

* Քր. Միքայելյանը չունեցավ ընտանեկան երջանկություն: Նա ամուսնացել էր գեղեցիկ արտաքինով մի ռուս օրիորդի՝ Եվգենյա Կոնստանտինովնայի հետ: Սա եղել էր անձնվեր հեղափոխական և ժամանակին գործել էր "Народная Воля" կազմակերպության շարքերում: Եվգենյան, սակայն, չկարողացավ համակերպվել իր ամուսնու կյանքի կերպին, բաժանել նրա հոգսերը, սատար կանգնել հեղափոխական առաջնորդի ջանքերին: Արտաահմանում Քրիստափորի ընտանիքի նյութական ծանր վիճակը ավելի չար էր դարձրել կնոջը: Երկար տարիներ ապրելով հայկական միջավայրում (հատկապես Թիֆլիսյան շրջանում)՝ Եվգենյան չէր ձգտել քիչ թե շատ սովորել հայերեն: Դա պատահական չէր, քանի որ նա ընդհանրապես անտարբեր էր այն ամենի հանդեպ, ինչ հայկական էր: Լինելով ռուս հայրենասեր՝ նրան միանգամայն խորթ էր հայոց դատը և երբեք չէր թաքցնում դա: Միքայելյանների միակ զավակը՝ Ռուբենը, մոր դաստիարակության ազդեցությամբ, նույնպես հեռու մնաց հայությունից. նրան խորթ էին հայ ազգային սովորույթներն ու կենցաղը, խուսափեց սովորել հայերեն: Այդ ամենը դառնություն էր պատճառում Քրիստափորին, բայց նա մեծ համբերությամբ կրում էր իրեն բաժին ընկած բախտը: Ի վերջո, ամուսնու մահից հետո, Եվգենյա Կոնստանտինովնան որդու հետ մեկնեց Մոսկվա և մշտական բնակություն հաստատեց այնտեղ, ուր և Ռուբենին ամուսնացրեց մի ռուս օրիորդի հետ: Քրիստափորի ընտանիքն ընդմիշտ հեռացավ հայ հորիզոնից (տե՛ս Միք. Վարանդյանի «Քրիստափոր Միքայելյան» հուշագրությունը - «Նորք» (Երևան) հանդես, N 8-9, 1991, էջ 99-100):

[1] **«Դրոշակ»**, N 5 (183), մայիս, 1907, էջ 77 -78:

տականությունների կատարման մեջ, նրա անդամների անձնվիրության պակասը և անձամբ Սաֆոյի մեղքը ձեռնարկի անհաջողության մեջ՝ ընդհանուր ժողովը վճռեց. 1. Մեղավորներին ենթարկել ընկերային-բարոյական դատապարտման, 2. Ցուցական մարմնի անդամ Սաֆոյին խսպառ արտաքսել Հ.Յ. դաշնակցությունից և այդ մասին հայտարարել պաշտոնական օրգանի մեջ՝:

Լսելով «**Վարդոյի գործի**» համար կազմված դատական հանձնաժողովի մանրամասն զեկուցումը՝ ժողովն ընդունեց համապատասխան բանաձև: Նկատելով, որ՝ 1. Պաշտոնական թե անպաշտոն բազմաթիվ փաստաթղթեր հաստատում են «Շարժում» թերթի խմբագիր Վարդ Պատրիկյանի (Վարդոյի) կողմից իր անձնական պետքերի համար կուսակցության բյուջեից մեծ չափերի հասնող գումարների յուրացումը, 2. Վարդոն իր «բոլոր անմաքուր գործերը... չքմեղելու համար հանրային կարծիքին առջև» դիմել է ամեն կարգի միջոցների՝ ջանալով արատավորել դաշնակցությունը, ընդհանուր ժողովը որոշեց. ա) Արևմտյան բյուրոյի միջոցով պահանջել, որ Վարդոն յուրացրած 12 112 ֆրանկ գումարը վճարե՝ յայտարարելեն 15 օրվայ ընթացքի մեջ, բ) «Դրոշակի» մեջ յայտարարել Վարդոյի վերջնական արտաքսումը դաշնակցութենեն՝ իբրև զեղծարար-յեղափոխությունը արատավորող և անբարոյական անձնավորություն»*՝:

---

* Կուսակցությունից վտարվելուց հետո Սաֆոն զբաղվում էր զանազան մանր-մունր գործերով: Նրա հայրենակից Արտաշես Ջիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան) իր «Կեանքիս գրքեն (փշրանքներ իմ յուշերեն)» հուշագրության մեջ պատմում է, թե ինչպես շատ տարիներ անց, 1919-ին, Օդեսայում ինքը պատահաբար հանդիպել է իր վաղեմի բարեկամ և ականավոր դաշնակցական Սաֆոյին, որի հետ ջերմորեն կապված է եղել պատանեկության տարիներին: «Լինելով հիմնադիրներից մեկը հայ իրականության ամենահոյակապ քաղաքական կազմակերպության, - վերհիշել է Ջիլինգարյանը ,- ճակատագրի մի դաժան հարվածով նա դուրս էր նետված ոչ միայն այդ կուսակցությունից, այլև՛ հասարակական փոթորկահույզ կյանքից, որի մեջ եղել է երկար տարիներ: Եվ այժմ նա ստիպված է ապրել մանր վաճառականի շատ սովորական ու քաղքենի կյանքով»: Ջիլինգարյանի այն հարցումին, թե ինչ է անում այժմ, Սաֆոն դառնությամբ պատասխանել էր. «....Յուղ եմ ծախում, արևածաղկի յուղ»: Ապա սկսում է պատմել առևտրական նպատակով Եվրոպայում կատարած իր ճամփորդության մասին: Այնտեղ ես անցնում էի այն տեղերով, ասում էր նա, «ուր գնացել էի ուրիշ առաքելությամբ, ուրիշ տենչանքներով .... ու երբ մտածում էի իմ ներկա կյանքի մասին, այնքան ծիծաղելի էր թվում ինձ այն»: Սաֆոյի հետ իր հանդիպման հուշը այսպես է եզրափակել Ա. Ջիլինգարյանը. «Ասում էր և կրկնում «յուղ եմ ծախում», բայց իր հոգին, իր հայացքը ուղղված էր դեպի այլ կողմ, դեպի հեռուն, դեպի իր փոթորկալից հեղափոխական անցյալը...» (**«Հայրենիք»**, N 12 (394), դեկտեմբեր, 1958, էջ 15-16): Իր հերթին Սիմոն Վրացյանը վկայում է, որ կուսակցությունից վտարվելուց հետո Սաֆոն, ընդմիշտ հեռանալով հասարակական ասպարեզից, երբեք հանդես չեկավ դաշնակցության դեմ: 1919թ. Հ.Յ.Դ. 9-րդ ընդհանուր ժողովը (Երևան) նրան իրավունք տվեց վերադառնալու կուսակցության շարքերը, բայց նա այլևս չվերադարձավ (տե՛ս **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով, հատ. Բ, էջ 96-97):

** 1907թ. նոյեմբերի 22-ին Վարդոն սպանվեց Ռուչչուկում (Բուլղարիա), երբ պատրաստվում էր ընտանիքով տեղափոխվել Եվրոպա (տե՛ս **«Մշակ»**, N 183, 15 դեկտեմբերի 1907թ.): Վարդոյի սպանության մասին տե՛ս նաև **«Անկախ մամուլ»** (Թիֆլիս), N 9, 11 դեկտեմբերի 1907թ.: Հարկ է նշել, որ Վարդ Պատրիկյանը վճռականապես ժխտում էր իր դեմ հարուցած մեղադրանքները, հատկապես դրամական զեղծումների վերաբերյալ: Հ.Յ.Դ.

Մի ուրիշ բանաձևով ընդհանուր ժողովը **դատապարտեց և կուսակցությունից հեռացրեց** Հ.Յ.Դ. Ջրաբերդի (Կարս) շրջանի մի խումբ դաշնակցական մարտիկների՝ բնակչության նկատմամբ կատարած բռնությունների, ավարառությունների համար:

Ընդհանուր ժողովի այս կարգի բանաձևերի թվում իր նշանակությամբ հատկապես առանձնանում էր «**Ժամանակավոր զինվորական խորհրդի մասին**» (կամ «Միհրանական խմբի մասին») բանաձևը:

Քննիչ հանձնաժողովը, հիմնվելով ընդհանուր ժողովում եղած պաշտոնական զեկուցումների և նույն ժողովի դիվանում եղած գրավոր փաստաթղթերի վրա, խնդիրը մանրամասն քննելուց հետո եկել էր հետևյալ եզրակացության.

1. «Ժամանակավոր զինուորական խորհուրդ» անուն կրող մարմինը Հ.Յ.դաշնակցութեան մեջ կազմակերպուած է ապօրինի ճանապարհով:

2. Այդ ապօրինի մարմինը չինել և գործ է ածել կեղծ կնիք Հ.Յ.դաշնակցութեան անունով:

3. Հրատարակել է Հ.Յ.դաշնակցութեան անունից մի շարք թռուցիկներ և յատուկ ամբաստանագրեր՝ ջանալով ամենաստոր զրպարտություններով արատավորել Հ.Յ.դաշնակցութեան 1904-ի ընդհանուր ժողովի կողմից ընտրուած մարմինները:

4. Տաճկահայ դատի պաշտպանութեան պատրուակով երևան գալով և նրա անունը շահագործելով՝ բուրժուական և հակադաշնակցական այլ մութ տարրերի ձեռքը գործիք է եղել կազմակերպութեան դեմ և որոշ չափով վարկաբեկել է այդ դատը՝ հայ հասարակութեան առաջ:

5. Կազմակերպելով «Զինուորական խորհուրդ» խումբը՝ նպատակ է ունեցել յայտարարել զինուորական դիկտատուրա և բռնի միջոցներով իր ձեռքն առնել կուսակցութեան վարչական գործը, դրամը, կայքը, Թիֆլիսի խմբագրությունը և այլն:

6. Ցուրացրած է կազմակերպութեան մի քանի զենքերը:

7. Գործիք է դարձել իշխանութեան ձեռքին և գտնվում է գաղտնի ոստիկանութեան յատուկ հովանավորութեան ներքոյ:

8. Ապօրինի այդ մարմնի գործունեությունը անպայման ու աներկդիմի կերպով պարսավի է արժանացել դաշնակցութեան բոլոր մարմինների և գոր-

---

Բալկանի կազմակերպության անդամների մի մասը նույնպես Վարդոյի նկատմամբ հրուցված մեղադրանքը համարում էր չհիմնավորված: Մատենադարանում պահպանվում է Վարդ Պատրիկյանի 121 էջից բաղկացած «Տասը տարի Հայ Յեղ. Դաշնակցութեան մեջ: Պատմական ակնարկ այդ կազմակերպութեան անցեալի և ներկայի ու եզրակացություններ ապագայի մասին» անտիպ բացատրությունը, որ նա գրել է 1906 թվականին (տե՛ս Մատենադարան, մատյան 85[2], Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 39, վավ. 3[34]): Վավերագրում զետեղված է Վարդ Պատրիկյանի դատեր՝ Նվարդի ձեռագիր առաջաբանը՝ գրված հոր սպանության 30-ամյակի օրը՝ 1937թ. նոյեմբերի 22-ին, Կահիրեում: Առաջաբանում այդ սպանությունը նա որակում է, որպես «աներևակայելի ոճիր» (տե՛ս նշված վավերագիրը, թերթ 1):

ծիչ ընկերների կողմից (Երկրի, Ռուսաստանի և արտասահմանի):

9. «Ժամանակավոր զինուորական խորհուրդ» անուան տակ միացած ուժերու գործունեությունը ոչ միայն խուլիգանական շարժում է, ունենալով նեցուկ բուրժուական հակայեղափոխական մի խմբակ և ռուս ոստիկանությունը, այլ մի ստոր դավաճանություն մասնավորապես տաճկահայ դատին, որի անունն էր շահագործում»[1]:

Խմբապետ Միհրանին և նրա ընկերներին պատժելու համար ժողովն իր 86-րդ նիստում (ապրիլի 16) ձեռնարկում է բանաձևի երկու նախագծերի քննարկումը, որոնցից մեկի հեղինակը Արամն էր, մյուսինը՝ Խաչատուր Մալումյանը: Արամի առաջարկած նախագիծը հետևյալն էր.

«Զինուորական խորհրդին և նրան կից եղած զեղծարար ոճրագործներին դատել ընդհանուր ժողովից ընտրուած մի յատուկ մարմնի միջոցով: Որոշումները իրագործել և յայտարարել ընդհանուր ժողովի անունից՝ յատուկ մարմնի ձեռքով»[2]:

Բանաձևի՝ Արամի նախագիծը քվեարկության դրվեց և մերժվեց: Քվեարկության արդյունքները ցույց տվեցին, որ ժողովը հակված չէ իր վրա վերցնելու դատական ֆունկցիաներ:

Այնուհետև քննարկման դրվեց Մալումյանի նախագիծը, որի հիմքում ընկած էր քննիչ հանձնաժողովի եզրակացությունը: Քվեարկության արդյունքով (26 կողմ և մեկ ձեռնպահ) ընդունվեց Մալումյանի առաջարկած հետևյալ բանաձևը.

«Ներկայացրած փաստերի հիման վրայ ժողովը որոշեց.

1. Համարել Միհրանի և «Զինուորական խորհրդի» մյուս գործակից անդամների վարմունքը ծանր յանցանք կազմակերպութեան և նրա պաշտպանած տաճկահայ դատի դեմ, և այդ հիման վրայ ճանաչել նրանց իսպառ արտաքսուած դաշնակցութեան շարքերից:

2. Յանձնել պատշաճ մարմնին՝ կազմակերպական կանոններով նախատեսուած պատժի ենթարկել Միհրանին և իր գործակիցներին: Հրատարակել այդ որոշումը պաշտոնական օրգանի մեջ:

3. .....*:

4. Հրավիրել դաշնակցական իրավասու մարմինների ուշադրությունն այն հանգամանքի վրայ, որ ապագայում այդ տեսակ անձինք պետք է անյապաղ ենթակուեն «Կանոնագրով» նախորոշուած պատասխանատուութեան, առանց սպասելու և բերելու այդօրինակ խնդիրները ընդհանուր ժողովին»[3]:

Եվ այսպես, Հ.Յ.Դ. ընդհանուր ժողովը տվեց միհրանական շարժման գնահատականը և նրա ղեկավարների նկատմամբ կայացրեց խստագույն վճիռ*:

Վերջապես, ժողովի ընդունած բանաձևերի վերջին՝ **յոթերորդ խումբը** վերաբերում էր հաշվական խնդիրներին, որոնք հրապարակման ենթակա չէին: Շատ տարիներ հետո միայն հրապարակվեցին 1904թ. մայիսի 1-ից մինչև 1906թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ֆինանսական հաշվեկշռի տվյալները, որից իմանում ենք, որ այդ ընթացքում Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոն և «Դրոշակի» խմբագրությունը ունեցել են 528 393 ֆրանկ մուտք և նույնքան ելք: Այդ գումարից ցուցական մարմնին տրամադրվել էր 119 614 ֆրանկ, Վասպուրականին՝ 23 087, Մուշ-Սասունին՝ 35 005, «Պույոմկին» զրահանավի նավաստիներին՝ 1000 ֆրանկ[1]:

Մի առանձին խումբ էին կազմում **կուսակցության նոր ծրագիրը և առաջին կանոնագիրը** (կանոնադրությունը):

«Կովկասյան նախագիծն» իր ծավալուն շարադրանքով և նշանակությամբ հնարավոր չէր մեխանիկորեն տեղադրել Հ.Յ.Դ. ծրագրի շրջանակների մեջ, հետևաբար գործնականորեն բացառված էր եղած ծրագրի բարեփոխումը և այն հասարակական նոր իրողություններին համապատասխանեցնելը: Ուստի ընդհանուր ժողովը նպատակահարմար գտավ մշակել նոր ծրագիր, որի մեջ արտացոլվեին «Կովկասյան նախագծում» բանաձևված հիմնական գաղափարներն ու պահանջները:

Հ.Յ.Դ. նոր (երկրորդ) ծրագիրը մշակելու համար ընդհանուր ժողովի 93, 95, 97 և 98-րդ նիստերում քննարկվել էին դրա հիմնական ուղղություններն ու հարցադրումները: Գլխավոր հարցերը պտտվում էին տնտեսական, ազգային, քաղաքական, ինչպես և ֆեդերացիայի ու դաշնակցության նպատակի նվազագույն պահանջների շուրջ: Այդ հարցերի քննարկումը վերջացնելուց հետո, ծրագրի տարբեր պահանջների վերաբերյալ բանաձևեր էին ներկայացրել Ե. Թոփչյանը («Հասարակական հոլովույթը, կապիտալիզմի զարգացումը և անհատի դերը»), Ս. Զավարյանը («Ազգային և կուլտուրական իրավունքների խնդիրը»), Արշ. Իսահակյանը («Տնտեսական-հասարակական զարգացման փուլերը»), Ա. Շահխաթունյանը («Հավելյալ արժեքի սկզբունքը»), Խ. Մալումյանը («Դաշնակցության սոցիալիստական նպատակը և հեղափոխական տակտիկը. մեր նվազագույն պահանջները»), Հ. Օհանջանյանը («Դաշնակցության պատմափիլիսոփայության սկզբունքները»), Ա. Ահարոնյանը («Ազգային կռվի

---

[1] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 311-312:
[2] Նույն տեղում, էջ 312:
* Երրորդ կետը չէր հրապարակվել, բայց դրա բովանդակության մասին իմանում ենք 85-րդ նիստի արձանագրությունից (տե՛ս **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 243):
[3] **«Նյութեր...»**, հատ. Գ, էջ 312:

* Նշենք, որ Միհրանի և նրա գլխավորած շարժման մասին քննիչ հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքները և այդ կապակցությամբ ընդհանուր ժողովի կողմից «Ժամանակավոր զինվորական խորհուրդը» «դավաճան» կամ «խուլիգան» որակելը, ինչպես նաև այն մեղադրանքները, որոնք ժողովի բանաձևերում առաջադրվել էին Միհրանի և նրա զինակիցների նկատմամբ, կտրականապես մերժում էին հնչկյան, արմենական, վերակազմյալ հնչկյան կուսակցությունները և հատկապես մշակականները, իսկ Արփիարյանի նկատմամբ ժողովում արված ամբաստանությունները համարում էին հիմնազուրկ սադրանք:
[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 78:

ազդեցությունը դասակարգային շարժումների վրա»)[1]: Հարություն Շահրիկյանն ընդհանուր ժողովին էր ուղղել Հ.Յ.Դ. նոր ծրագրի իր նախագիծը, որի մասին պատգամավորները լսել էին համապատասխան հաղորդում[2]:

Մենք այստեղ չենք կատարի Հ.Յ.Դ. նոր ծրագրի պատմաքննական հանգամանալի վերլուծություն, այլ կբավարարվենք նրա բովանդակությունը համառոտ շարադրելով:

Հ.Յ.Դ. նոր ծրագիրը բաղկացած էր երկու բաժնից. 1. «Ընդհանուր տեսություն» (ներածություն), 2. «Նվազագույն պահանջներ», որն իր մեջ ներառում էր քաղաքական և տնտեսական պահանջներ առանձին-առանձին Թուրքահայաստանի ու Անդրկովկասի համար և ընդհանուր պահանջներ երկու երկրների համար:

Դաշնակցության անդրանիկ (1892թ.) ծրագրի ներածական բաժնում ընկերային-քաղաքական ընդհանուր աշխարհայացքի կողքին կարևոր տեղ էր հատկացված Թուրքահայ իրականությանը և Թուրք-հայ հարաբերություններին՝ իբրև կուսակցության պայքարի մեկնակետ: Իր հերթին «Կովկասյան նախագիծը» մեկնում էր կովկասահայ իրականությունից՝ ընկերավարական պատմափիլիսոփայական մի շարք էական կետեր հարմարեցնելով կովկասյան պայմաններին, միաժամանակ փորձ անելով այդ պայմաններից բխող եզրահանգումները շաղկապել Հ.Յ.Դ. պրակտիկ գործունեության հետ:

Թեև նոր (երկրորդ) ծրագրի ներածական բաժինն իր մեջ ներառել էր նոր գաղափարներ ու մտքեր, նկատենք, սակայն, որ այն բոլորովին ընդհանուր էր և անմիջական աղերս չուներ հայ դատի և հայության ազգային ազատագրական պայքարի հետ: Ազգային դատի հիմնական առաջադրանքները տրված էին «Ընդհանուր տեսությանը» (ներածությանը) հետևող՝ «Քաղաքական պահանջներ» բաժնում առանց պատմաքաղաքական առանձին հիմնավորման[3]:

Ծրագրի առաջին բաժինը՝ ներածական տեսությունը, սկսվում էր հաստատումով, թե մարդկային հասարակությունը անհիշատակ ժամանակներից ի վեր բաժանված է դասակարգերի՝ իշխողներ ու հպատակներ, կեղեքողներ ու կեղեքվողներ: Շահագործող փոքրամասնությունը հազարամյակներ շարունակ աշխատավոր մեծամասնության ձեռքից խլում էր նրա ստեղծած բարիքները: Ստրկատիրական ու ֆեոդալական հասարակարգերին փոխարինած կապիտալիզմը չվերացրեց շահագործումն ու կեղեքումը, տարբերությունը միայն այն եղավ, որ «կեղեքման մենաշնորհը վայրենի բիրտ ուժից անցավ ավելի քաղաքակիրթ ուժին՝ **կապիտալին**»[4]: «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսը, որի իրականացման համար աշխատավորը ժամանակին չէր զլացել իր արյունը թափելու, մնաց իբրև պատրանք, իսկ բուրժուազիայի ձեռքին՝ իբրև միջոց գրաված դիրքերն ամրապնդելու: «Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի դեռ անձեռնմխելի է մնում **մասնավոր սեփականության սկզբունքը** , որ հիմնաքարն է հասարակական անհավասարության»[1]:

Տեխնիկական առաջադիմության և մեքենայական արդյունաբերության զարգացման համեմատ՝ ծավալվում և ուժեղանում է բուրժուազիայի տիրապետությունը: Շահագործող փոքրամասնությունն իր ձեռքում կենտրոնացնում է վիթխարի հարստություն: Տեխնիկայի կատարելագործումը չի թեթևացնում աշխատավոր մարդու հոգսերը. դրան արգելք է հանդիսանում մասնավոր տնտեսական սիստեմը: Շահագործվող մեծամասնության աշխատանքի մի խոշոր մասը մնում է անվճար, արդյունքների բաշխման ընթացքում աշխատավորը ստանում է արտադրածի չնչին մասը միայն: Մի կողմում մերկ ու կիսաքաղց պրոլետարական զանգվածներ, մյուս կողմում առասպելական հարստությունների վայելքներից հղփացած արտոնյալ փոքրամասնություն – այս է բուրժուական հասարակության պատկերը:

Այսպիսով, մարդկության մի մասին բաժին հանելով մաշող աշխատանքը, իսկ մյուսին՝ պարապ ու զվարճամոլ կյանքը, մեկին նետելով թշվառության գիրկը, իսկ մյուսին երջանկացնելով նրա կրած տառապանքի հաշվին, կապիտալիզմը զորեղ խոչընդոտ է հանդիսանում հասարակական առաջադիմության ճանապարհին:

Այնուհետև ծրագիրն անդրադառնում էր գյուղի աշխատավորության սոցիալ-տնտեսական դրությանը: Գյուղացիական զանգվածների տնտեսական լայնամասշտաբ քայքայումը կապիտալիզմի զարգացման անխուսափելի հետևանքն է: Դասակարգային հակասությունները ծվատում են գյուղը: Իր քրտինքով ապրող աշխատավոր գյուղացիությունը դաժան շահագործման է ենթարկվում ձրիակեր հողատերերի, վաշխառուների, բուրժուաների կողմից: «Այսպիսով, – եզրահանգված է ծրագրում, – ոչ միայն արդյունագործական պրոլետարիատը, այլև աշխատավոր գյուղացիությունը ավելի ու ավելի դրվում են անհաշտելի հակասության մեջ՝ տիրող բուրժուակալվածատիրական կարգերի հետ»[2]:

Կապիտալիզմը նաև **չինարար** դեր ունի այն իմաստով, որ, համաձայնացնելով աշխատանքը, նպաստում է պրոլետարիատի դասակարգային ինքնաճանաչողության աճին ու կազմակերպվածությանը, «դրանով իսկ նախապատրաստում է ապագա սոցիալիստական հասարակության նյութական և հոգեբանական խարիսխները, հարթում է նրա իրականացման ճանապարհը»[3]:

Ծրագրում հաստատ համոզմունք է հայտնված, որ անարդարացի կապիտալիստական կարգերը անխուսափելիորեն վերջ են ունենալու, և դրանց փլա-

---

[1] **«Նյութեր...»**, հատ.Գ, էջ 285:
[2] Տե՛ս **«Շաբաթօրեակ - Դրոշակ»**, Զ. տարի, NN 13,14,15:
[3] **«Նյութեր...»**, հատ.Գ, էջ 315- Ներածականը:
[4] Նույն տեղում:

[1] **«Նյութեր...»**, հատ.Գ, էջ 317:
[2] Նույն տեղում, էջ 319:
[3] Նույն տեղում:

տակների վրա ուղի է հարթելու սոցիալիզմը: Մարդկության կուլտուրական առաջադիմության դրոշակը բուրժուազիան այլևս չի կարող տանել, ուստի այն իրենց ձեռքն են վերցրել աշխատավոր դասակարգերը՝ պրոլետարիատը, աշխատավոր գյուղացիությունը և հեղափոխական ինտելիգենցիան: Նրանք արդեն հավաքական կռիվ են սկսել և անպայման հասնելու են աշխատանքի ազատագրությանը: «Սոցիալիստական շարժումն իր էությամբ միջազգային է, - նշված է ծրագրի ներածականում: - Բոլոր երկրների աշխատավոր տարրերը, իբրև միևնույն տնտեսական սիստեմի զոհեր, պիտի միանան և արդեն միանում են համաշխարհային մի հզոր եղբայրակցության մեջ, ու գիտակ իրենց բարձր առաքելության, վստահ իրենց հաղթանակի վրա, դիմում են կազմակերպված կռվի ճանապարհով դեպի նոր, սոցիալիստական կարգեր»[1]:

Սոցիալիզմի համար կռիվը հատկապես ծանր է լինելու միապետական, ավատապետական կարգեր ունեցող երկրներում, ուր գերիշխող ազգության ներկայացուցիչները, իրենց ձեռքն առնելով պետական և հասարակական բոլոր լծակները, ճնշում են հպատակ ազգերին: Գերիշխող ազգերի կողմից նրանց հարստահարումը, մի կողմից, նպաստում է վերջիններիս ներսում դասակարգային հակամարտությունների մեղմացմանը, մյուս կողմից, խոչընդոտում է ճնշող ու ճնշվող ազգերի աշխատավոր դասակարգերի միջև համերաշխության հաստատմանը: Ազգային ճնշումը ազգային կուլտուրայի շուրջն է համախմբում և՛ աշխատավոր, և՛ շահագործող դասակարգերին, իսկ դա ընդհանուր հող է ստեղծում ճնշված ազգերի ներսում «դասակարգային համերաշխության» համար:

Անդրադառնալով բազմազգ պետություններում փոքր ազգերի ձուլման խնդրին՝ ծրագիրը ելնում էր այն բանից, որ մարդկության առաջադիմության շահերը պահանջում են ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք բացառեն ազգային հալածանքը, հետևապես՝ նաև ազգերի բռնի ձուլման փորձերը: Ազգերի պատմականորեն ժառանգած բեղմնավոր առանձնահատկությունները համամարդկային արժեքներ են, և դրանք միայն կհարստացնեն ապագա սոցիալիստական մարդկությանը:

Սոցիալիզմի համար կռիվը սոցիալիստական կուսակցությունների առջև դնում է քաղաքական և տնտեսական պայքարի զանազան ձևերի կիրառման պահանջը: Այդ կուսակցությունները պատրաստվում են իրենց ձեռքը ձգել պետության ղեկը, որպեսզի ստեղծեն նպաստավոր պայմաններ իրենց սոցիալական իդեալների իրագործման համար: Ճնշված ազգերի քաղաքական կազմակերպությունները շահագրգռված են, որպեսզի բազմազգ պետությունները ապակենտրոնացվեն և վերածվեն ֆեդերատիվ-դեմոկրատական (դաշնակցային-ժողովրդավարական) հանրապետությունների[2]:

[1] **«Նյութեր...»**, հատ.Գ, էջ 321:
[2] Նույն տեղում, էջ 323:

Հ.Յ.Դ. ծրագրում շեշտված էր, որ սոցիալիստական կարգերի հաղթանակից հետո իրականացվելու է տիրող դասակարգերի էքսպրոպրիացիան (սեփականազրկում):

Ծրագրի ընդհանուր տեսության (ներածության) վերջում համոզմունք էր հայտնվում, որ սոցիալիզմի իդեալի հաղթանակը հեռու չէ: «Եվ այդ իդեալը բոլոր տանջվածների ու հալածվածների՝ չի ներկայանում մեզ՝ իբրև մի անհող, անխարիսխ ցնորք, այլ միանգամայն իրագործելի մի հնարավորություն, որովհետև այն ոչ միայն բխում է իրերի օբյեկտիվ, տարերային ընթացքից, այլ թելադրվում է հրամայականորեն՝ պատմությունը առաջ շարժող մասսաների ու անհատների կամքից, խղճից ու բանականությունից[1]:

Հ.Յ.Դ. ծրագրի **երկրորդ բաժինը** կոնկրետ էր՝ վերաբերում էր հայկական կյանքին, նրա առանձնահատկություններին, հնարավորություններին ու միջոցներին:

Դաշնակցությունը, ասված էր ծրագրի այս բաժնում, իբրև հեղափոխական և սոցիալիստական կուսակցություն, ձգտում է պաշտպանել հայ աշխատավոր մասսաների թե՛ տնտեսական-դասակարգային, թե՛ մարդկային-քաղաքական և թե՛ ազգային-կուլտուրական բովանդակ շահերը, նպատակ ունենալով ժողովրդի ձեռքը տալ կառավարման ղեկը և այժմյան միապետական ու կապիտալիստական կարգերը փոխարինել լայն ժողովրդավարությամբ և արդյունաբերության միջոցների համայնացումով:

Ղեկավարվելով սոցիալիստական սկզբունքներով և ելնելով հայ ժողովրդի իրական ու հասունացած կարիքներից՝ կուսակցությունը առաջադրում էր իր նվազագույն (minimum) պահանջները:

Թուրքաց Հայաստանում դաշնակցության նվազագույն պահանջներն էին՝ 1. Թուրքահայաստանը օսմանյան պետության կազմում պետք է ստանա քաղաքական և տնտեսական ազատություն՝ հիմնված տեղական լայն ինքնավարության և դաշնակցային կապերի վրա, 2. Թուրքահայաստանի ազատագրությունը պետք է խարսխված լինի օսմանյան ապագա ժողովրդավարական պետության ընձեռած հնարավորությունների վրա: Օսմանյան կենտրոնական կառավարությունն իր ձեռքում է պահելու պետության ընդհանուր գործերը՝ արտաքին քաղաքականությունը, զորքը, դրամը, մաքսը, փոստ-հեռագիրը: Պետական մյուս ֆունկցիաները կենտրոնական կառավարությունը թողնում է տեղական ինքնավար կազմավորումներին, 3. Հանդիսանալով ապագա օսմանյան ֆեդերատիվ պետության մի մասը՝ Թուրքահայաստանը պետք է վայելի ազատություն իր ներքին գործերում: Ներքին խնդիրներում ինքնավարություն պետք է վայելեն նաև Թուրքահայաստանի բոլոր շրջաններն ու համայնքները, 4. Թուրքահայաստանի թե՛ կենտրոնական և թե՛ առանձին շրջանների օրենսդրական-վարչական բոլոր մարմինները պետք է ընտրվեն ընդհանուր,

[1] **«Նյութեր...»**, հատ.Գ, էջ 324:

հավասար, ուղղակի, գաղտնի և համեմատական ձայնատվության սկզբունքներով՝ առանց ցեղի, կրոնի և սեռի խտրության:

Անդրկովկասի վերաբերյալ դաշնակցությունն առաջադրում էր հետևյալ պահանջները. 1. Անդրկովկասը պետք է դառնա դեմոկրատական հանրապետություն, որը լինելու է Ռուսաստանի ապագա ֆեդերատիվ հանրապետության (ՌՖՀ) անբաժան մասը: Անդրկովկասի հանրապետությունը ՌՖՀ-ի հետ կապված է լինելու ինքնապաշտպանության, դրամական սիստեմի, մաքսի և արտաքին քաղաքականության խնդիրներով, 2. Ներքին բոլոր գործերում Անդրկովկասյան հանրապետությունն անկախ է: Այն ունի իր կենտրոնական պառլամենտը, որն ընտրվում է ընդհանուր, հավասար, ուղղակի, գաղտնի և համեմատական ձայնատվության սիստեմով, 3. Անդրկովկասը Ռուսաստանի համապետական պառլամենտ է ուղարկում իր ներկայացուցիչներին, 4. Անդրկովկասյան հանրապետությունը բաժանվում է կանտոնների և համայնքների, որոնք վայելում են տեղական ամենալայն ինքնավարություն, 5. Կանտոնների սահմանները որոշելիս պետք է նկատի առնել ազգաբնակչության տեղագրական և կուլտուրական առանձնահատկությունները՝ ըստ կարելվույն միաձույլ համախմբումներ կազմելու համար, 6. Օրենսդրական, դատաստանական, վարչական բոլոր մարմինները, ինչպես և պաշտոնյաները ընտրովի են, 7. Կանտոններն ունեն օրենսդրություն, ռեֆերենդումի և նախաձեռնության իրավունք:

Մրագրի երրորդ բաժնում տեղ էին գտել նաև երկու երկրների (Թուրքիա, Ռուսաստան) համար ընդհանուր պահանջներ, որոնք ներառում էին՝ խոսքի, մամուլի, խղճի, ժողովների, միությունների և գործադուլների ազատություն. եկեղեցու բաժանում պետությունից, կրոնը հայտարարվում էր անհատական խղճի գործ և ոչ ավելի. ազգերի ինքնորոշման իրավունք, բոլոր ազգերի ու կրոնական համայնքների կատարյալ հավասարություն, դասակարգային բոլոր առանձնաշնորհումների ոչնչացում. անձի, բնակարանի, նամակագրության անձեռնմխելիություն. տեղափոխության ազատություն, անցագրերի վերացում. ընդհանուր, պարտադիր և ձրի (պետության հաշվին) տարրական ուսուցում, դպրոցների դուրս բերում եկեղեցու ազդեցությունից և դրանց կատարյալ աշխարհականացում, դասավանդումը մայրենի լեզվով. ձրի դատավարություն. ինչպես պետական, այնպես էլ կանտոնային և շրջանային կազմվորումների բյուջեներից առանձին ազգությունների կուլտուրական նպատակների համար հատկացումները պետք է կատարվեին համաձայն ազգաբնակչության թվի. մշտական զորքը փոխարինվելու էր միլիցիայով, որը պաշտոնավարելու էր իր շրջանի սահմաններում: Երբ ընդհանուր պետությանը արտաքին վտանգ էր սպառնում, հայտարարվում է ընդհանուր զորահավաք[1]:

Այնուհետև ծրագիրն առաջադրում էր կուսակցության տնտեսական պա-

[1] **«Նյութեր...»**, հատ.Դ, էջ 326:

հանջները: Նախատեսվում էր արքունական, կալվածատիրական, եկեղեցապատկան և բոլոր այլ տեսակի հողերի համայնացում, այսինքն՝ մասնավոր հողատիրության վերացում և հողի վաճառքի արգելում: Հողը տնօրինելու էր գյուղական համայնքը, որը և որոշելու էր նրանից օգտվելու ձևերը: Պարբերաբար կատարվելիք հողաբաժանումների միջոցով իրականացվելու էր հողերի չափերի հավասարեցում: Նախատեսվում էր հանքերը, բնական այլ հարստությունները դարձնել պետական սեփականություն, դրանցից ստացած եկամուտները գործադրել համաժողովրդական նպատակների համար: Վերացվելու էին անուղղակի հարկերը, մտցվելու էր եկամտի ու ժառանգության պրոգրեսիվ տուրք: Որոշակի չափից պակաս եկամուտ ունեցողները բոլորովին ազատվելու էին հարկերից: Մրագրվում էր 8-ժամյա աշխատանքային օր բանվորների համար թե՛ քաղաքում և թե՛ գյուղում, մտցվելու էր աշխատանքային օրենսդրություն, վերացվելու էր կանանց և երեխաների գիշերային աշխատանքը: Պետության և գործատերերի հաշվին իրականացվելու էր բանվորների ապահովագրում դժբախտ պատահարներից ու հիվանդություններից: Նախատեսվում էր մտցնել ձրի բժշկություն և այլն[1]:

Այսպիսին էր Հ.Յ.Դ. երկրորդ ծրագրի բովանդակությունը*, որն անփոփոխ մնաց երկար տարիներ**:

Ունենալով ծրագիր (1892թ. սկսած)՝ դաշնակցությունը, սակայն, մինչև 1904թ. չի ունեցել **կանոնագիր** (կանոնադրություն): Մրագիրը միաժամանակ կանոնագրի դեր էր կատարում, թեև այնտեղ հստակորեն չէր ասված, թե ինչ պայմաններով կարելի է անդամակցել դաշնակցությանը: Բայց քանի որ այդ ծրագիր-կանոնագրի մեջ նշված էր, թե ընդհանուր ժողովի «վճիռները պարտավորիչ են ամենուն համար», ապա հասկանալի է, որ այն ժամանակ ևս, երբ մեկը ուզում էր անդամակցել դաշնակցությանը, պետք է ընդուներ նրա ծրագիրը, որ հաստատված էր Հ.Յ.Դ. առաջին ընդհանուր ժողովի վճռով:

Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովը (1904թ. փետրվար-մարտ, Սոֆիա) ընդունել էր հետևյալ որոշումը. «Նկատելով, որ Գ-րդ ընդհանուր ժողովի մեջ ընդունեուցան կարգ մը փոփոխություններ նախկին ժողովներու վճիռներու վերաբերմամբ, ընդհանուր ժողովը որոշեց հանձնարարել արևմտյան բյուրոյին՝ ա) Ըստ կարելվոյն շուտով ցրել դաշնակցական մարմիններուն կազմակերպական փոխված կանոնները և բ) Մինչև ներկա տարվա վերջը կարգավորել նա-

[1] **«Նյութեր...»**, հատ.Դ, էջ 326-328:

* Հ.Յ.դաշնակցության յուրաքանչյուր գործելավայրի (Թուրքիա, Կովկաս, Պարսկաստան) ռայոնական ժողովները իրավասու էին մշակել պլատֆորմ իրենց ընթացիկ և անմիջական պահանջների համար:

** Հ.Յ.Դ. Վիեննայի (1907թ.) համագումարում ընդունված կուսակցության երկրորդ ծրագիրը վերահաստատվեց Հ.Յ.Դ. Վառնայի համագումարում ու մնաց անփոփոխ Պոլսի (1910թ.) և Էրզրումի (1912թ. և 1914թ.) համագումարներում: Երևանի նահանգի 9-րդ (1919թ.) համագումարում որոշում ընդունվեց Հ.Յ.Դ. ծրագրի վերաքննությունը հետաձգել հաջորդ՝ 10-րդ համագումարին:

խորդ ու ներկա ընդհանուր ժողովների ատենագրությունները, ինչպես նաև հարակից բոլոր նյութերն ու «Դաշնակցության խորհրդի» վերջնական խմբագրումից հետո հրատարակության տալ»[1]:

Համաձայն այդ որոշման, ատենագրությունների և հարակից խնդիրների հրատարակումը հետաձգելով մինչև 1904թ. վերջը՝ Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոն հատուկ տետրակով դաշնակցական բոլոր մարմիններին հաղորդեց այն կազմակերպական փոփոխված կանոնները, որոնք վերաբերում էին այդ մարմինների իրավունքներին ու պարտականություններին՝ միաժամանակ խնդրելով նշված կանոնների ճիշտ և անշեղ գործադրություն[2]:

Եվ ահա չորրորդ ընդհանուր ժողովն ընդունեց ոչ միայն կուսակցության նոր (երկրորդ) ծրագիրը, այլև **կազմակերպության կանոնագիրը**:

Կանոնագրի առաջին հոդվածում նշվում էր, որ յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է անդամակցել դաշնակցությանը, ամբողջովին պետք է ընդունի կուսակցության ծրագիրն ու տակտիկան, ենթարկվի նրա կանոնագրերին և ամեն ջանք գործ դնի դրանք կյանքում իրականացնելու:

Երկրորդ հոդվածով նշված էր, որ դաշնակցականները բաժանվում են երկու կարգի՝ ա) գործոն անդամներ և բ) օժանդակ անդամներ: Գործոն անդամներ էին նրանք, որոնք մասնակցում էին դաշնակցության որևէ կազմի և վճարում իրենց հասույթի առնվազն 2%-ը: Օժանդակ անդամներ էին համարվում նրանք, որոնք, ընդունելով կուսակցության ծրագիրը և նրան նյութապես օժանդակելով, կարող էին չղեկավարվել կազմակերպության տակտիկայով և կանոնագրով: Օժանդակ անդամներն ընտրվելու և ընտրելու իրավունք չունեին:

Կազմակերպական խնդիրներին վերաբերող չորրորդ հոդվածով ամրագրվում էր Հ.Յ.Դ. կազմը. խումբ (առնվազն 7 անդամ), ենթակոմիտե (առնվազն 50 անդամ), կոմիտե (առնվազն 200 անդամ), կենտրոնական կոմիտե (առնվազն 1000 անդամ), պատասխանատու մարմին, բյուրո: Դաշնակցական կազմերը՝ սկսած խմբերից մինչև կենտրոնական կոմիտե, ունենում էին քաղաքական, մարտական, արհեստակցական, գյուղացիական, կարմիր խաչի և գործունեության այլ ուղղություններին վերաբերող կազմվածքներ, որոնցից յուրաքանչյուրն իր համար մշակում էր հատուկ ներքին կանոնագիր:

Հ.Յ.Դ. կանոնագիրը որոշում էր մարտական խմբերի կազմը և պարտականությունները (հոդվ. 147-151): Մարտական խմբերը կազմվում էին հեղափոխական ձեռնարկների համար՝ դաշնակցական շարքերից: Ամեն խումբ բաղկացած պիտի լիներ 10 մարտիկից, որոնք ծանոթ էին կուսակցության ծրագրին և պատրաստ էին ծառայելու դրա իրականացմանը: Մարտիկ խումբը ենթարկվում էր տեղական մարմնին և բյուրոների կողմից հրատարակված հրահանգներին: Յուրաքանչյուր մարտիկ պարտավոր էր ունենալ սեփական

[1] «Նյութեր...», հատ.Գ, էջ 329:
[2] Նույն տեղում:

զենք, իբրև կռվող, մտնել հեղափոխական ձեռնարկների մեջ: Ակտիվ գործողությունների ժամանակ մարտիկի ապրուստը պարտավոր էր հոգալ կազմակերպությունը:

Կուսակցության դրամական միջոցներին վերաբերող խնդիրները կարգավորվում էին կանոնագրի 125-128 հոդվածներով: Կազմակերպության դրամական միջոցների աղբյուրներն էին՝ ա) անդամավճարները (հասույթի 2-10%-ը)*, բ) նվերները, գ) հանգանակությունները, դ) պատահական գումարները: Յուրաքանչյուր դաշնակցական պարտավոր էր ամիսը մեկ անգամ իր ամսական հասույթի 2%-ը մուծել տեղական դաշնակցական մարմնի դրամարկղ: Այն դաշնակցականը, որ երեք ամիս շարունակ չէր վճարում իր անդամավճարը, զրկվում էր ձայնատվության և ընտրվելու իրավունքից՝ մինչև հատուցանելը: Հանգանակություն անելու իրավունքը վերապահված էր միայն դաշնակցական մարմիններին: Առանց սրանց գիտության և առանց պաշտոնական վկայագրի՝ հանգանակություն կատարողները նկատվում էին իբրև զեղծարարներ: Հանգանակության գործի մեջ խստիվ արգելված էր բռնի միջոցների գործածությունը (հոդվ. 128):

Դաշնակցության արհեստակցական և գյուղացիական միությունների գործունեությունը կարգավորվում էր կանոնագրի 152-154 հոդվածներով:

Հեղափոխական մամուլը կանոնակարգվում էր 158-162 հոդվածներով: Դաշնակցական մամուլը պարտավոր էր չշեղվել կազմակերպության ծրագրից: Կենտրոնական պաշտոնական օրգանը՝ «Դրոշակը», ղեկավարվում էր ընդհանուր ժողովի տված հրահանգներով: Ռայոնական ժողովներն իրավունք ունեին իրենց շրջանների համար հիմնել ռայոնական պաշտոնական օրգաններ: Կենտրոնական կոմիտեները կարող էին հրատարակել դաշնակցության տեղական թերթեր՝ առանց որևէ պաշտոնական կամ կիսապաշտոնական բնույթի: Դաշնակցական խորհուրդը և ռայոնական ժողովները կարող էին ոչ դաշնակցական հայտարարել կուսակցական այն թերթերը, որոնք չեղվում էին կուսակցության ծրագրից և նրա հիմնական տեսակետներից**:

* Միամտություն է ենթադրել, թե հեղափոխական կուսակցությունների քաղաքական պայքարների համար անհրաժեշտ միջոցները գոյանում են կուսակցականների վճարումներից: Դաշնակցության քաղաքական կռվի համար կուսակցական խմբերի անդամավճարները երբեք նյութական կարևոր միջոց և աղբյուր չեն կազմել: Ոչ ոք ի վիճակի չէր խմբերին արգելելու, որպեսզի նրանց անդամավճարները չծախսվեին տեղական կուսակցական կարիքների վրա:

** Մեր կարծիքով, կանոնագրքի տեքստը կազմվել էր հապճեպ, քանի որ այնտեղ բացակայում էին մի շարք սեպիքներ: Այսպես՝ Հ.Յ.Դ. խորհրդի և ռայոնական ժողովի իրավասության սահմանները նշելուց հետո, կանոնագիրը ոչ մի խոսք չէր ասում, թե խորհուրդը ռայոնանի որոշումների նկատմամբ ունի արդյոք **վետոյի** իրավունք, թե ոչ: Դարձյալ ոչ մի խոսք չկար, թե ովքե՞ր են ընտրում և ու՞մ առաջ են պատասխանատու ռայոնական թերթերի խմբագրությունները: Նշված էր, որ Հ.Յ.Դ. կովկասյան թերթը պատասխանատու է ընդհանուր ժողովի առջև միայն, իսկ դա նշանակում է բոլորովին պատասխանատու չլինել, հաշվի չառնել ո՛չ կուսակցական մյուս մարմինների, ո՛չ թղթակիցների և ո՛չ էլ ընդ-

Ընդունված որոշումները վերջնական տեսքի բերելու համար ընդհանուր ժողովի 117-րդ և 118-րդ նիստերում կազմվել էր 9 հոգուց բաղկացած խմբագրական հանձնախումբ: Ինի հանձնախմբի անդամներ էին ընտրվել Խաչատուր Մալումյանը, Համո Օհանջանյանը, Եղիշե Թոփչյանը, Սիմոն Զավարյանը, Արշակ Վռամյանը, Սարգիս Մինասյանը, Ստեփան Տեր-Մկրտչյանը, Ավետիք Շահխաթունյանը: Հանձնախմբի անդամության թեկնածուներ ընտրվեցին Ավետիս Ահարոնյանը, Լևոն Թաղևոսյանը, Բարսեղյանը:

Դեռ մինչև ժողովի փակումը հանձնախումբը ձեռնարկել էր ընդունած որոշումների խմբագրումը: Հատկապես լուրջ աշխատանք էր տարվում կուսակցության նոր ծրագրի վրա, որի համար հիմք էին հանդիսանում քաղաքական և տնտեսական տարբեր պահանջների վերաբերյալ Ե. Թոփչյանի, Ս. Զավարյանի, Արշ. Խահակյանի, Ա. Շահխաթունյանի, Խ. Մալումյանի, Հ. Օհանջանյանի, Ա. Ահարոնյանի, Հ. Շահրիկյանի կողմից ներկայացված բանաձևերի նախագծերը:

Ժողովի աշխատանքների ավարտից հետո ինի հանձնախումբը տակավին մինչև մայիսի 29-ը զբաղվեց կուսակցության նոր ծրագրի, կանոնագրի, որոշումների գրքույկի և ընդունված բանաձևերի վերջնական խմբագրությամբ, ինչպես նաև առկա մնացած մի շարք երկրորդական հարցերի կարգադրությամբ:

Ժողովում ընդունված որոշումները նրա հանձնարարականի համաձայն, ինի հանձնախումբը բաժանեց երեք կարգի. 1. Մի մասը **հանրության** համար, որը պետք է հրատարակվեր «Դրոշակ» թերթում, 2. Մյուս մասը **դաշնակցական մարմինների** համար, որն առանձին գրքույկով տպագրվեց և շատ արագ ուղարկվեց կենտրոնական կոմիտեներին, 3. Երրորդ մասը նախատեսվեց **հատուկ մարմինների** համար և նրանց փոխանցվեց գաղտնի ճանապարհով: Այս մասը հիմնականում հատուկ մարմինների վերաբերյալ ընդունված գաղտնի վճիռներն էին:

ՀԱՎԱՏՈՎ ԵՎ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Հ.Յ.դաշնակցության չորրորդ ընդհանուր ժողովն իր աշխատանքներն ավարտեց մայիսի 4-ին: Ժողովը փակեց Ակնունին: Իր փակման խոսքի մեջ նա շեշտեց, թե ժողովի սկզբին որքա՞ն մեծ էին մտահոգությունները, որքա՞ն տագ-

հանրապես մասսաների տրամադրություններն ու ցանկությունները: Շատ խնդիրներում կային անորոշություններ: Օրինակ՝ մութ էր մնում, թե կուսակցության գումարները ինչպես պետք է գործադրվին կազմակերպության մարմնի հինգ տարբեր աստիճաններում՝ խումբ, ենթակոմիտե, կոմիտե, կենտրոնական կոմիտե, բյուրո (գուցե դա արվել էր՝ հաշվի առնելով քաղաքական պայմանները և կոնսպիրացիայի նկատառումնե՞րը):

* Հանրության համար նախատեսված որոշումները հրատարակվեցին **«Դրոշակ»** թերթի հատուկ համարում (N 5, 1907, էջ 70-79), որին անդրադարձ եղավ վերևում:

նապալից էին պատգամավորների մտքերը՝ պառակտման վտանգի առջև կանգնած կուսակցության ապագայի նկատմամբ: «Բայց մենք կարողացանք այդ անվստահությունից և պառակտման վտանգից դուրս գալ հաղթական, պարզ երեսով: Հետևաբար, ապարդյուն չէին այն բոլոր ջանքերը, որոնք գործ դրվեցին հանուն կազմակերպության ամբողջության: Հաճախ ծանր ու անախորժ էին լինում մեր թափած ջանքերը: Բայց հակառակ բոլոր անախորժությունների, կատարյալ մխիթարական եղավ մեր երկար աշխատանքի արդյունքը»[1]:

Վիեննայի ժողովի ընթացքի վրա վճռական ազդեցություն ունեցան կուսակցության ականավոր գործիչ-պատգամավորները: Հատկապես առանձնահատուկ կառուցողական դեր խաղաց Ռոստոմը: Իր անառարկելի հեղինակությամբ ու հմայքով, նվիրումով ու կամքով նա կարողանում էր խաղաղեցնել ամեն կիրք ու հակում և համաձայնության բերել բոլոր հակամարտ տարրերին: Նրա խոսքին, նրա կարծիքներին ու խորհուրդներին ակնածությամբ ականջալուր և ակնդետ էին ժողովի բոլոր պատգամավորներն անխտիր: Ռոստոմը կարողացավ առաջնորդին վայել հմտությամբ ժողովականների մեջ հրահրել կուսակցության ապագայի պատվախնդրության ոգի, մեղմել հակամարտ կողմերի խռովահույզ բռնկումները, հարթեցնել հարցադրումների սուր անկյունները:

Մի առիթով Արշակ Ջամալյանը շեշտել է, որ առանց Ռոստոմի անհնարին կլիներ ժողովում առաջն առնել այն մեծ վտանգի, որ կախված էր կազմակերպության գլխին[2]:

Դժվար է գերագնահատել այն մեծ դերը, որ ընդհանուր ժողովում ունեցան Սիմոն Զավարյանը, Ավետիս Ահարոնյանը, Խաչատուր Մալումյանը (Ակնունի), Հակոբ Զավրիևը, Սեբաստացի Մուրատը, Եղիշե Թոփչյանը, Միքայել Հովհաննիսյանը (Վարանդյան), Համո Օհանջանյանը, Արշակ Ներսիսյանը և դաշնակցության ավագ ու միջին սերնդի այլ պատգամավորներ:

Դաշնակցության երիտասարդ սերնդի պատգամավորների թվում իրենց բովանդակալից ելույթներով, հարցադրումներով և առաջարկություններով կուսակցաժողովում աչքի ընկան Արշակ Ջամալյանը, Նիկոլ Պողոսյանը (Վանա Իշխան) և հատկապես Արամ Մանուկյանը:

Ընդհանուր ժողովում Արամն իրեն դրսևորեց որպես խոշոր կուսակցական գործիչ: Արդեն նշվել է, որ տարբեր նիստերում նա բարձրացնում էր մեկը մյուսից կարևոր հարցեր, ուրիշ պատգամավորների հետ մի շարք ծանրակշիռ նախագծեր էր առաջարկում դիվանին, որոնք, ենթարկվելով համապատասխան հանձնախմբերի քննությանը, նույնությամբ կամ աննշան փոփոխություններով մտնում էին ժողովի ատենագրության մեջ*:

[1] **«Հայրենիք»**, N 7 (374), հուլիս, 1957, էջ 49:
[2] **«Դրոշակ»**, N 1-2(284-285), 1929, էջ 17,18:

* Արամ Մանուկյանի կենսագրությունը գրելու օրերին **Արշալույս Աստվածատրյանը** դիմել էր Սիմոն Վրացյանին՝ խնդրելով թղթին հանձնել ընդհանուր ժողովի ամիսներին ստա-

Հ.Յ.Դ. ընդհանուր ժողովի փակումից անմիջապես հետո կուսակցության պաշտոնաթերթ «Դրոշակը»հանդես եկավ ընդարձակ խմբագրականով (1907 թ. N 5)՝ տալով ժողովի գնահատականը և նրա պատմական նշանակությունը: Շատ չանցած՝ լույս տեսավ ժողովի արդյունքներին նվիրված մի գրքույկ[1], որին, իբրև նախաբան, կցվեց այդ խմբագրականը:

Այնտեղ նշվում էր, որ, հակառակ չարագուշակ բոլոր կանխատեսումների, ընդհանուր ժողովը կարողացավ հաղթահարել բոլոր ավերիչ կրքերը, թումբ կանգնեցնել կուսակցության պառակտման ճանապարհին և նրա առջև բացել գործելու նոր հորիզոններ:

Ներկայացնելով, որ ժողովի ընդունած որոշումները հենց դրա խրախուսիչ ապացույցներն են, «Դրոշակը» ի մի էր բերում հիմնական արդյունքները:

Առաջին, անջատման ծրագիրը, որ կազմակերպության շարքերում երկու տարի շարունակ դարձել էր խլրտումների և նույնիսկ ամենատխուր ընդհարումների պատճառ, ընդհանուր ժողովը հետ մղեց համարյա միաձայն և դաշնակցության անցյալին, նրա ուժին վայել վճռականությամբ կուսակցության դրոշի տակ միացրեց ու շաղկապեց թուրքահայ և կովկասահայ դատերը:

Երկրորդ, «Կովկասյան գործունեության նախագիծը», որը 1905-ից ի վեր անընդմեջ թյուրիմացությունների պատրվակ էր եղել և մի պահ դարձել էր կազմակերպության շարքերի սասանման պատճառ, ի վերջո ընդունվեց ու վավերացվեց թե՛ ըստ **իրավասության** և թե՛ ըստ **էության**՝ դառնալով այն հիմնաքարերից մեկը, որի վրա պետք է հենվեր դաշնակցությունը՝ Անդրկովկասի հայության մեջ տարվելիք աշխատանքների ընթացքում:

Երրորդ, «Ժողովի մտածողության և աշխատանքների պսակը» «Դրոշակը» համարում էր **սոցիալիստական** ծրագրի հիմնական սկզբունքների վավերացումը, իբրև տրամաբանական շարունակություն Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովի (1904թ., Սոֆիա) նույն հարցի վերաբերյալ ընդունված որոշման: «Հիմնված իր ընդհանուր ծրագրի վրա, – նշված էր պաշտոնաթերթի խմբագրականի մեջ, – և ուշադիր քաղաքական-տնտեսական պահանջներին, որոնք հրապարակ են եկել վերջին 15 տարվա ընթացքում, կազմակերպության ղեկավար մարմինը վճռեց՝ հայտարարել դաշնակցությունն իբրև **հայ աշխատա-**

ցած իր տպավորությունները Արամից: 1962թ. նոյեմբերի 6-ին Վրացյանը նամակով պատասխան է ուղարկում, որում հետևյալ տողերը կան. «Վիեննայի ընդհանուր ժողովում Արամը կենտրոնական դեր կատարող ընկերների շրջանում էր. ավելի մտերիմ մեծերի հետ: Մեզ՝ «ձախերիս» հետ թունդ սոցիալիստ էր, բայց մեզ կոչում էր «խոխեք» և, իհարկե, եթե պետք լիներ, խաչ կը քաշեր սոցիալիզմի էլ, մեր էլ վրայ: Ռոստոմի, բժ. Զավրիևի տիպի դաշնակցական էր: Սոցիալիստ, այո՛, բայց ամենից առաջ՝ հայ: Ժողովներում յաճախ էր խոսում. կեանքից և իրականությունից էր խոսում: Բոլոր պատգամավորների հետ լավ էր, բայց, ինչպես ասացի, մտերիմ էր երևում «վերին խավերի» հետ՝ Վարանդեան, Ահարոնեան, Ակնունի և այլն: Առանձին հոգատարություն էր ցույց տալիս դեպի սուլթանի մահափորձի հերոս Ռուբինան» («Արամը», էջ 41):

[1] **«Որոշումներ Հ.Յ.Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովին»**, Ժընև, 1907թ.:

վոր դասակարգի կուսակցություն, որ ձգտում է քաղաքականապես և տնտեսապես կազմակերպել նրան, պաշտպանել նրա տնտեսական-դասակարգային և քաղաքական-ազգային իրավունքները՝ նպատակ ունենալով մյուս աշխատավորների հետ միասին **ձեռք գցել կառավարության ղեկը** և այժմյան միապետական ու կապիտալիստական կարգերը փոխարինել լայն ռամկավարությամբ և **համայնական կարգերով»**[1]:

«Դրոշակը» հիշեցնում էր, որ անսովոր եռանդ ու զոհաբերություն պահանջող խնդիրները հաջողությամբ լուծելու համար կուսակցությունը իր դրոշի տակ պիտի ունենա միայն համոզված զինվորներ, զոհաբերության պատրաստ մարտիկներ՝ ներշնչված նույն ծրագրով, սրտապնդված միևնույն տակտիկայով:

Միաժամանակ պաշտոնաթերթը շեշտում էր, որ ընդհանուր ժողովը որոշել է խստագույն պատասխանատվության ենթարկել բոլոր նրանց, լինեն շարքային թե կազմակերպող, անհատ թե մարմին, որոնք իրենց զեղծումներով, բռնությամբ և անարգ քայլերով փորձել են վարկաբեկել կուսակցությունը: Ելնելով դրանից՝ ժողովը բոլոր կոմիտեներին և կազմակերպություններին հրահանգել է, ավելի քան երբևիցե, կարգապահական խիստ պահանջներ ներկայացնել կուսակցության բոլոր անդամներին, առանց որևէ վերապահության շարքերը շեշտակի զտել ու մաքրագործել բոլոր նրանցից, ովքեր իրենց «համոզմունքով ու հավատով», իրենց բարոյական նկարագրով և անձնական հակումներով չեն համապատասխանում կուսակցության առաջադրած դժվարին ու բարդ խնդիրների կատարմանը: «Դրոշակը» համոզված էր, որ «անգործ, պառակտող մարմինները պիտի կազմալուծվեն. վարկաբեկ ընկերները պիտի հեռանան. կազմակերպության անունը չահագործողները պետք է խստագույն պատժի ենթարկվեն – այդ է ընդհանուր ժողովի կամքն ու որոշումը, նրա բացարձակ հրամանը»[2]: Այդպիսիները որքան շուտ հեռացվեն կուսակցությունից, այնքան լավ, քանզի մնալով կազմակերպության մեջ, նրանք պիտի սպառեն դաշնակցության բարոյական դրամագլուխը:

Վերջում պաշտոնաթերթը կոչ էր հղում կուսակցության բոլոր հավատավոր անդամներին, ուր ասված էր, որ ընդհանուր ժողովի պատգամավորների միահամուռ կամքով հաղթականորեն հետ է մղված անջատման ու կազմալուծման ուրվականը, որ ժողովը դաշնակցական բոլոր ընկերներին «ավետում է մռայլ, հուսաբեկող մտքերի վախճանը և սկզբնավորումը մի նոր շրջանի», որը «պահանջում է նոր եռանդ, նոր թափ, ինչպես և նոր տանջանք: Զը նահանջենք տանջանքի առջև, որ մեր կռվի հատկանիշն է, երկարամյա աղբյուրը մեր եռանդի և ջանքերի, ու, սրտապնդված գալիք օրերով, առաջ մղենք

[1] **«Դրոշակ»**, N 5 (183), մայիս, 1907, էջ 66 (Պարբերության մեջ բոլոր ընդգծումները մերն են: – Հ.Ս.):
[2] Նույն տեղում, էջ 67:

հեղափոխական կռիվը՝ հանուն սոցիալիստական մեծ հաղթանակի:

Դեպի բարձր [նպատակ], դեպի աշխատանք, դեպի կռիվ[1]:

Ընդհանուր ժողովի հաջող ավարտի առնչությամբ մամուլում հանդես եկան դաշնակցության նշանավոր գործիչներ, նաև՝ կուսակցության բարեկամներից շատերը, որոնք իրենց հոդվածներում չեշտում էին այն շրջադարձը, որ Հ.Յ.Դ-ն կատարել էր Վիեննայում:

«Դրոշակի» նույն համարում «Դաշնակցությունը և սոցիալիզմը» վերտառությամբ հոդվածով հանդես էր եկել Պիեռ Քիյառը: Ողջունելով Հ.Յ.Դ. ընդհանուր ժողովում ընդունած սոցիալիստական հեղափոխության ծրագիրը՝ նա գրում էր.

«Կույր պետք է լինել չհասկանալու համար, որ թուրքահայերի ապագան անլուծելիորեն կապված է ռուսահայերի ապագային, և որ ընդհանրապես Եվրոպայի ազատությունը լայն չափով կախում ունի ռուս ժողովրդի և ռուս կայսրության կից ժողովուրդների վերջնական հաղթությունից՝ ցարիզմի դեմ»[2]:

Հոդվածագիրը ճիշտ էր համարում, որ դաշնակցությունը դաշինքի մեջ է ոչ թե Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական «դոգմատիկ կուսակցության», այլ «գործոն կուսակցության»՝ սոցիալիստ-հեղափոխականների կազմակերպության հետ, որի շարքերում դաստիարակված հերոսները նման են Սասունի քաջերին և օսմանյան բանակը գրոհած անվեհեր մարտիկներին, չխոսելով արդեն այն մասին, որ բազմաթիվ կետերում համընկնում են երկու կուսակցությունների պայքարի և՛ ստրատեգիան, և՛ հատկապես տակտիկան[3]:

Ժողովի արդյունքներին տված Միքայել Վարանդյանի բնորոշումներն առավելապես զգացական էին: «Պառակտման և կազմալուծման հնարավորությունն այժմ, գուցե ավելի քան երբևիցե, հեռու է մեզանից: Ընդհանուր ժողովը հաստատեց դա իր նշանավոր պատմական որոշումներով, որդեգրեց կովկասյան գործունեության նախագիծը և դրանով շեշտեց, որ կարելի է գործել երկու նույնիսկ տարբեր պետությունների սահմաններում, ունենալով մեկ ծրագիր ու աշխարհայացք, մի տեղ կռիվ մղելով հանուն մարդկային տարրական իրավունքների, մի այլ տեղ կռիվ՝ հանուն ազգային ապահովության ու միաժամանակ դասակարգային իրավունքների, և ամեն տեղ կռիվ հանուն սոցիալիզմի, հավասարության ու արդարության: ... Ջնջված են սահմանները տաճկահայ և ռուսահայ ժողովրդի միջև, - այդպես էր բացականչում մեր Քրիստափորը դեռ չորս տարի սրանից առաջ, եկեղեցական գույքերի կռիվը պայթելու միջոցին: Ջնջված էին սահմանները մինչև օրս de facto , իրականապես, իսկ այնուհետև նրանք ջնջված են և de jure, իրավապես: Ասպարեզը բաց է - դժվարին, զոհառատ կռվի ասպարեզը: Թող բոլոր նրանք, որոնք

[1] **«Դրոշակ»**, N 5 (183), մայիս, 1907, էջ 67, 68:
[2] Նույն տեղում, էջ 68:
[3] Նույն տեղում, էջ 69:

տոգորված են դաշնակցության լավագույն ավանդույթներով, որոնց մեջ անկեղծ ու համեստ գործունեության տենչն ավելի ուժեղ է, քան գծուծ ու ճոռոմ հատվածամոլության անբարիշ ոգին - համախմբվեն նոր, ընդարձակ դրոշակի շուրջ և կրկնապատկված եռանդով շարունակեն ազատության կռիվը»[1]:

Կուսակցաժողովի որոշումները և կարգադրությունները, բնականաբար, չէին կարող անուշադրության թողնել համիդյան կառավարությանը: Նրան հատկապես զայրույթ էր պատճառել ընդհանուր թշնամու՝ համիդյան բռնակալական ռեժիմը տապալելու նպատակով թուրք և քուրդ տարրերի հետ գործակցություն և համերաշխություն հաստատելու անհրաժեշտության մասին ժողովի որոշումը: Բոստոնի «Հայրենիք» թերթը գրում էր.

«Սուլթանը դաշնակցութեան Դ ընդհանուր ժողովին տված որոշումներեն մտահոգվիլ սկսած է»[2]: Թերթն ընդգծում էր, որ ստացված տեղեկությունների համաձայն, թուրքական կառավարությունը միջոցներ է ձեռնարկում սպասվող վտանգները չեզոքացնելու համար:

Ոչ պակաս մտահոգ էին ցարական իշխանությունները, որոնք գտնում էին, թե հայության երկու խոշոր հատվածների դատերի կենտրոնացումը դաշնակցության ձեռքում ստեղծում է իրական վտանգ Կովկասում:

«Երկու թագակիր - ոճրագործները, - գրում էր «Դրոշակն» իր խմբագրականում, - թող շարունակեն ավելի բարձրացնել ժողովուրդները բաժանող թումբերը: Մենք կշարունակենք քանդել ու վերացնել դրանք»[3]:

Հիրավի, Հ.Յ.Դ. դաշնակցության չորրորդ ընդհանուր ժողովն անկյունադարձային նշանակություն ունեցավ կուսակցության համար: Նրա գլխավոր պատմական դերն այն եղավ, որ կարողացավ պառակտման եզրին կանգնած կազմակերպությունը դուրս բերել քաղաքական ճգնաժամից, նոր ուժ ներարկել կուսակցությանը՝ դիմագրավելու համար այն մեծ փորձություններին, որոնք սպասվում էին նրան և ողջ հայ ժողովրդին:

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ ՈՒ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ԱՃԸ

Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովը տեղի ունեցավ կուսակցության հեղինակության աննախընթաց աճի պայմաններում:

Նիկոլայ II-ի 1903թ. հունիսի 12-ի օրենքով ցարական բռնակալության կողմից հայ եկեղեցու կալվածքների հափշտակումը արագորեն հանգեցրել էր ռուսահայ ժողովրդի հեղափոխական ուժերի հզոր բռնկման: Դաշնակցությունը կանգնեց ընդվզող ժողովրդի գլուխ և նրան անհաշտ կռվի տարավ

[1] **«Դրոշակ»**, N 5, (183), մայիս, 1907, էջ 69:
[2] **«Հայրենիք»** (Բոստոն), N 8 (450), 22 փետրվարի 1908թ.:
[3] **«Դրոշակ»**, N 6-7(184), հունիս-հուլիս, 1907, էջ 82:

ցարական բռնապետության դեմ (1903-1904): Այնուհետև նա հանձն առավ և փայլուն կատարեց կովկասահայության ինքնապաշտպանության գործի կազմակերպչի ու ղեկավարի գործը (1905-1906): 1906թ. երկրորդ կես - 1907թ. առաջին կես ժամանակահատվածում նույնպես կուսակցության ուժերը շարունակում էին անշեղորեն աճել:

Կատարված գործերին գումարվել էր Սասունի երկրորդ ապստամբությունը, որը դիտվում էր ոչ միայն որպես սասունցիների, այլև ողջ արևմտահայության ապստամբություն: Քանի որ նրա ղեկավարները (Անդրանիկ, Հրայր, Գևորգ և այլք) դաշնակցականներ էին, ուստի հերոսամարտը դիտվեց որպես դաշնակցության ստեղծագործություն, իսկ այդ կուսակցությունը՝ որպես արևմտահայության հիմնական ղեկավար քաղաքական ուժ:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

Դաշնակցության կազմակերպված և գրանցված անդամների թիվը 1907թ. սկզբներին մոտ 165 հազար էր, որոնք ընդգրկված էին Կովկասում, Թուրքիայում, Պարսկաստանում, Բալկանյան երկրներում և Ամերիկայում գործող քաղաքական, արհեստակցական և մարտական 3 039 խմբերի մեջ: Ըստ որում, Թուրքիային բաժին էր ընկնում 693 խումբ, Անդրկովկասին՝ 1951, Հյուսիսային Կովկասին և Ռուսաստանին՝ 260, մնացյալները՝ Պարսկաստանին, Բալկանյան թերակղզուն, Ամերիկային 51[1]:

Կուսակցությունն ուներ 21 կենտրոնական կոմիտե, որոնց մեծ մասը Թուրքիայում և Կովկասում էր, երկու բյուրո՝ արևելյան և արևմտյան, որոնցից առաջինը ազգի կենսատարածքում էր, երկրորդը՝ Եվրոպայում:

Դաշնակցության ներկուսակցական կյանքի ամենաբնորոշ առանձնահատկությունը ներքևից վերև կուսակցության շարքերում եղած խստագույն կարգապահությունն էր: Պահնորդական բաժանմունքի փաստաթղթերից մեկում կան այսպիսի տողեր.

«[Կուսակցության] կանոնագրերի և հրահանգների բնորոշ հատկանիշը դրանց համառոտ լինելը և հստակությունն է: Ընդունված որոշումը կամ հրամանը չգործադրելը կամ դրա քմահաճ ու անփույթ գործադրումը խստորեն և անխուսափելիորեն պատժվում է: Պատժական կամ քրեական օրենքները շատ կարճ ու պարզ են՝ հանդիմանություն, վտարում կուսակցությունից, բանտարկություն (մառանում կամ գետնահարկում) և նույնիսկ մահապատիժ»[2]:

Նույն փաստաթղթում նշված է նաև, որ յուրաքանչյուր դաշնակցականի առաջին պարտականությունը լիակատար գաղտնապահությունն է, որի

[1] Տե՛ս «Դրոշակ», N 9 (186), սեպտեմբեր, 1907, էջ 137:
[2] «Նյութեր...», հատ. Բ, էջ 333:

խախտման պատասխանը տեռորն է[1]:

Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոյի նստավայրում ժնևում, հրատարակվում էր կուսակցության օրգանը՝ «Դրոշակը»՝ ավելի քան 14 հազար օրինակով, և զանազան գաղտնի ուղիներով մտցվում էր Թուրքիա ու Կովկաս, լեգալ կերպով ուղարկվում Պարսկաստան, Բուլղարիա, Ամերիկա և ուրիշ երկրներ:

Կուսակցությունն ուներ նաև այլ պարբերականներ: Կովկասում լույս էր ընծայում մեկ օրաթերթ՝ 7000 օրինակով և այլ թերթեր, մեկ շաբաթաթերթ Ամերիկայում այնտեղի իր կոմիտեների և հայ գաղութի համար, մեկ պարբերաթերթ Բալկաններում տեղի հայ գաղութի համար, մեկ շաբաթաթերթ Հարավային Ռուսաստանում, ֆրանսերեն մի օրգան Եվրոպայում լայն պրոպագանդայի միջոցով հայկական դատը Եվրոպայի հանրային կարծիքի առաջ պաշտպանելու համար:

Կուսակցությունը տիրապետում էր հրատարակչական միջոցների, որոնցով հայերեն տպագրվում էր հեղափոխական և սոցիալիստական գրականություն, այդ թվում թարգմանություններ միջազգային սոցիալիստական գրականությունից: Լույս էին տեսնում գրքեր ու գրքույկներ՝ ռուսերեն, թուրքերեն և թաթարերեն՝ Կովկասի ու Ռուսաստանի, թուրքերեն՝ Արևմտահայաստանի, ֆրանսերեն ու գերմաներեն՝ Եվրոպայի համար: Նա Կովկասում ուներ գաղտնի տպարաններ, որոնցում տպագրվում էին բազմաթիվ թռուցիկներ ու կոչեր:

Իր կազմը և ռազմական ուժը պահելու, պրոպագանդա մղելու և ծրագրից բխող այլ նպատակների համար կուսակցությանն անհրաժեշտ էր բավականաչափ դրամ: Եվ նա ուներ իր ելմտական սիստեմը:

Եկամուտներն ամենից առաջ գոյանում էին դաշնակցության անդամների և օժանդակ անդամների (թեկնածուների) անդամավճարներից, որոնք կազմում էին նրանց աշխատավարձի կամ եկամտի ոչ պակաս 2 տոկոսը: Կուսակցության բյուջեն գոյանում էր նաև վճարովի դասախոսություններից ու ներկայացումներից, վիճակախաղերից, բարեգործական ձեռնարկներից:

Գնալով աճում էր կուսակցության բյուջեն: 1904թ. բյուջեն կազմել էր 80 0000 ֆրանկ, իսկ 1907-ին՝ 1 000 000: 1907թ. բյուջեի հասույթները բաշխվել էին հետևյալ կերպ. ա) Հեղափոխական և քաղաքական գործունեություն՝ 30 տոկոս, բ) Ժողովրդի զինում 35, գ) Պրոպագանդա և գրականություն՝ 20, դ) Կազմակերպական ծախսեր՝ 10, ե) Պատահական ծախսեր՝ 5 տոկոս[2]:

ՍԻՆԴԻԿԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Զուգահեռաբար զարգանում էր նաև Հ.Յ. դաշնակցության սինդիկալիստական գործունեությունը: Անդրկովկասի քիչ թե շատ նշանակալի բոլոր

[1] Տե՛ս «Նյութեր...», հատ. Բ, էջ 333:
[2] Տե՛ս «Դրոշակ», N 9 (186), սեպտեմբեր, 1907, էջ 137:

քաղաքներում կուսակցությունն ստեղծել էր մեծ թվով բազմազան արհեստակցական միություններ, որոնք հիմնված էին դասակարգային պայքարի սկզբունքների վրա:

Արհմիութենական զանազան կազմակերպություններ էին ստեղծվել Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում, Գանձակում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և Շուշիում: 1907թ. սկզբներին կուսակցությունն ուներ 110 տարանուն բանվորական միություն՝ չուրջ 12 հազար անդամներով, այդ թվում Բաքվում 10 միություն (2000 անդամ), Թիֆլիսում 38(5100 անդամ), Բաթումում 4(750 անդամ), Երևանում, Կարսում և Ալեքսանդրապոլում 33 (1900 անդամ), Ելիզավետպոլում 6(600 անդամ), Շուշիում 19(640 անդամ)[1]:

Դաշնակցությունը բազմաթիվ միություններ ուներ նաև գյուղերում:

Ապահովված չլինելով հողով, աշխատելով գյուղատնտեսական տեխնիկայի հետամնաց միջոցներով, միաժամանակ ստիպված լինելով վճարել սնանկացնող հարկեր և ամբողջովին հանձնված լինելով չահագործող կալվածատիրոջ իշխանությանը՝ հայ գյուղացիական զանգվածները շատ հարմար միջավայր էին սոցիալիստական գաղափարների պրոպագանդման համար ընդհանրապես և հողի հանրայնացման գաղափարի արմատավորման համար՝ առանձնապես: Հենց հողի հանրայնացման պրոպագանդայով դաշնակցությունը արշավ ձեռնարկեց դեպի գյուղ, որն այնտեղ ընդունվեց գրկաբաց: Շրջելով հայկական գյուղերը՝ կուսակցական ագիտատորներն ստեղծել էին գյուղացիական միությունների լայն ցանց. կուսակցության կողմից ստեղծված գյուղացիական միություններում 1907թ. սկզբներին ընդգրկված էր 67000 գրանցված անդամ[2]:

Իր ամբողջ հեղինակության գործադրմամբ դաշնակցությունը գյուղացիության կյանքում առաջ բերեց կարևոր փոփոխություններ: Հարուստ և ազդեցիկ գյուղացիների դիմադրության պատճառով քսան տարուց ի վեր գյուղում չէր կատարվել հողաբաժանում: Հ.Յ.Դ. գավառային կազմակերպությունները գյուղացիական միությունների միջոցով իսկական պայքար սկսեցին գյուղական մակաբույծ տարրերի դեմ: Նրանց ստիպմամբ գյուղացիները կալվածատերերին տասանորդ չէին վճարում, մի շարք գավառներում, մանավանդ Գանձակի և Երևանի նահանգներում, կուսակցության հրահանգներով գյուղացիական միությունները բաշխում էին համայնական հողերը՝ հօգուտ հարբստահարված, փոքր հողակտորներ ունեցող գյուղացիների:

Կուսակցությունն ուներ նաև լրացուցիչ մարմիններ՝ կարմիր խաչի կազմակերպությունը, աշակերտական միությունները, միջկուսակցական, հետազոտական, մամուլի մարմինները, մշակութային-կրթական ընկերությունը, «Փոթորիկ» կազմակերպությունը, ինքնապաշտպանական կոմիտեները, ապահովության բաժանմունքը, տեռորիստական գործուն կոմիտեն, ահաբեկիչ կազմակերպությունը, երկու ուսանողական կազմակերպությունները:

Որքան Ռուսաստանում և Անդրկովկասում ուժեղանում էին հեղափոխական շարժումները, այնքան ավելի էին անբարոյականում ցարական պատժիչ մարմինները: Դրանք, որ կոչված էին պայքարելու հանցագործությունների դեմ, իրականում դարձել էին անհագ կաշառակերության օջախներ, որոնք ծածկում էին չարագործների հանցանքները և պատիժներ բարդում անմեղների վրա:

Դաշնակցությունն անտարբեր չմնաց ցարական ատյանների անարդարացի վճիռների նկատմամբ: Նա հնարավոր միջոցներով ձգտում էր չեզոքացնել իշխանությունների միջամտությունը հայերի փոխհարաբերությունների մեջ, և այդ նպատակով նրանց արգելում էր դիմել պետական ոստիկանությանը և դատարաններին:

Կուսակցությունը մոտավորապես նույն մարտավարությունն էր կիրառում նաև Թուրքահայաստանում փորձելով այստեղ հանդես գալ որպես «պետություն պետության մեջ»:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անդրկովկասի շատ հայ և թուրք գյուղերում հանդես էին եկել ավազակային տարրեր, որոնք օրը ցերեկով, նույնիսկ հրապարակավ գողություն ու թալան էին անում և մնում անպատիժ: Բայց անտանելին հատկապես այն էր, որ հայ ավազակ տարրերն իրենց գողացած անասուններն ու ապրանքները, փոխադարձ համաձայնությամբ, ուղարկում էին թուրք ավազակներին՝ ծախելու, և իրենք էլ նրանց գողացած անասուններն էին ստանում ու վաճառում[1]: Հասարակ ժողովուրդը անտեղյակ էր ավազակների փոխադարձ համաձայնությանը. հայ գյուղացիները կարծում էին, թե իրենց անասունները թուրքերն են տանում, իսկ սրանք էլ համոզված էին, թե իրենց կողոպտողները հայ ավազակներն են:

Տվյալ շրջանի Հ.Յ.Դ. կազմակերպության շրջիկ գործիչը, կատարելով ոստիկանի դեր, ժողովրդից ստացած տվյալների համաձայն, իր մոտ էր կանչում գող ու ավազակ անձանց, սպառնում և նրանցից ստորագրություն վերցնում, որ դադարեցնելու են անպատիվ «արհեստը»: Հանցանքը կրկնվելու դեպքում ավազակները և գողերը հանձնվում էին ժողովրդական դատարանի քննությանը:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 136: Մի այլ աղբյուրում (տե՛ս «Rapport, presante' au Bureau Socialist International par le parti Soc. et revol armen. "Dachnakzutiun", Stuttgart, 1907, էջ 6) նշված է, որ այդ նույն ժամանակ դաշնակցության արհմիությունների մեջ ընդգրկված էր կուսակցական կազմակերպությանը ենթարկվող և կուսակցական հանձնարարություններ ստանձնած 23 300 բանվոր:

[2] Տե՛ս «Դրոշակ», N 9(186), սեպտեմբեր, 1907, էջ 136:

[1] Տե՛ս «Հայրենիք», N 1(193), նոյեմբեր, 1938, էջ 146-147:

Դաշնակցությունը ոստիկանների ցանց ուներ Անդրկովկասի քաղաքներում: Նրա ոստիկանները, օրինակ, մշտապես հսկում էին Բաքվի հայկական թաղերը, ձերբակալում հանցագործներին, տուժածներին վերադարձնում կողոպտված ապրանքը և այլն: Քաղաքի դաշնակցական առաջին ոստիկանապետ, տաճկահայ Գևորգ (Ժորժ) Կարապետյանի գլխավորած ոստիկաններն աշխատում էին օր ու գիշեր և զարմանալի արիությամբ: Ոստիկանապետի անունը քաղաքում հռչակ էր ստացել նրա համարձակության, անձնազոհության, անկողմնակալության համար: Այդպիսին էր նաև Բաքվի երկրորդ դաշնակցական ոստիկանապետը՝ Լևոնը[1]:

Դաշնակցության ոստիկանությունը Բաքվում այնքան մեծ ժողովրդականություն ստացավ, որ ոչ միայն հայերը, այլև օտարներն սկսեցին դիմել նրա աջակցությանը:

Աբրահամ Գյուլխանդանյանը (Աբրո) «Դաշնակցութեան ոստիկանութիւնը և դաշնակցական ոստիկանապետերը» հոդվածում վերհիշել է Բաքվում տեղի ունեցած մի երկու բնորոշ դեպք:

Նա պատմում է, որ Թուրք-հայկական ընդհարումները վերջանալու վրա էին, երբ հենց նոր քաղաք ժամանած մի պարսիկ խան կորցրել էր պայուսակը՝ մի քանի հարյուր հազար թումանի արժողությամբ թանկագին քարերով: Նա դիմել էր պետական ոստիկանությանը, որը, սակայն, կորցրել էր գլուխը և չէր կարողացել ընկնել կողոպտիչների հետքի վրա անգամ:

Հույսը կորցրած խանը տեղեկանում է դաշնակցության ոստիկանության գոյության մասին և մի հայ բարեկամի հետ դիմում է նրա ղեկավարին: Ձանցած երկու թե երեք օր՝ ի զարմանս ռուս ոստիկանության, պայուսակն իր ողջ պարունակությամբ հայ ոստիկանությունը գտնում է և հանձնում տիրոջը:

Այդ պրպտումների ժամանակ պարզվում է, որ գողերը Բաքվում կազմել են մի խմբակ՝ հայերից, թուրքերից, ռուսներից և այլ ազգությունների պատկանող անձերից: Պարզվեց նույնպես, որ գողերից ոմանք վայելում են պետական ոստիկանների հովանավորությունը, և շատ գողություններ ու ավազակային թալաններ կատարվում են նույն ոստիկանների թելադրանքով և աջակցությամբ: Դաշնակցությունը վճռական գործողությունների անցավ, հայտնաբերվեցին ու զինաթափվեցին համարյա բոլոր հայտնի գողերը: Ա. Գյուլխանդանյանը գրում էր, որ դաշնակցության ոստիկանությունը «ոչ միայն կարողացավ մաքրել քաղաքը այդպիսի մութ տարրերից, այլև բոլոր այն պետական ոստիկաններից, որոնք կապ էին ունեցել նրանց հետ»[2]:

Մի ուրիշ դեպք: Թատերական ներկայացման ժամանակ մի ռուս նավթարդյունաբերողից գրպանահատները տարել էին ոսկե ժամացույցը: Ներկայացմանը ներկա էր եղել նաև քաղաքի պետական ոստիկանապետը: Թատրոնի

[1] Տե՛ս «Հայրենիք», N 7(163), մայիս, 1936, էջ 104:
[2] Նույն տեղում:

դահլիճը տակնուվրա էին արել, բայց գողին բռնել չէր հաջողվել:

Մյուս օրը ռուս արդյունաբերողը դիմել էր դաշնակցության ոստիկանությանը և, սարսափելի հայհոյանքներ թափելով պետական ոստիկանության հասցեին, խնդրել էր գտնել ժամացույցը, քանի որ այն մի թանկագին նվերհիշատակ էր: Երկու օր անց հայ ոստիկանությունը գտել էր գողին, վերցրել ժամացույցը և հանձնել տիրոջը[1]:

Դաշնակցության լոկ անունը սարսափ էր տարածում գողերի ու ավազակների վրա: Ա. Գյուլխանդանյանը վերհիշել է Հ.Յ.Դ. Բաքվի կազմակերպության նշանավոր ղեկավարներից Լևոն Թադևոսյանի (Պապաշա) հետ պատահած դեպքը:

Թիֆլիսից վերադառնալիս, Բաքվի մոտ, Բալաջարի կայարանում, քնած ժամանակ գողերը տարել էին նրա դրամը, շատ կարևոր փաստաթղթեր, նաև՝ անձնագիրը: Նա մտահոգվել էր, որ թղթերը կընկնեն ցարական ոստիկանության ձեռքը՝ վտանգավոր հետևանքներով:

Բայց անհանգստությունն ավելորդ էր: Մի քանի օր հետո փոստով ստացվեցին գողացված թղթերը, դրամը և անձնագիրը՝ մի նամակի հետ: Նամակում հայտնելով, թե թղթերն ստուգելու ժամանակ տեսել են, որ դրանց մի մասը կնքված է դաշնակցության կնիքով, գրպանահատները ներողություն էին խնդրում, որ համարձակվել են կողոպտել մի այդպիսի անձնավորության գրպանը[2]:

Դաշնակցության մարմինները ոստիկանավարչական ֆունկցիաներ էին իրականացնում նաև Թուրքահայաստանում և Իրանում (Ատրպատականում):

Նկատի առնելով մի շարք վնասներ՝ դաշնակցական գործիչները սկզբում Թուրքահայաստանում խուսափում էին վարչական գործերին խառնվելուց: Բայց ժողովուրդը ոչինչ չէր սպասում այն վարչությունից, որի գոյությունը զգացվում էր միայն թասիլդարների անողոք հարստահարման և խուզարկու զորքերի բռնությունների ժամանակ: Մարդիկ ավելի ու ավելի հաճախ էին դիմում կուսակցական գործիչներին՝ խնդրելով «տեր կանգնել իրենց»[3]:

Թուրքահայաստանում Հ.Յ.Դ. կ.կոմիտեների ղեկավարության տակ էին գավառների (շրջանների) խմբապետական ժողովները և նրանց կողմից ընտրված կոմիտեները, խմբապետերը, իշխանները (բացառություն էր կազմում Բարձրավանդակը (Սասուն), որտեղ ընտրություններ չէին անցկացվում, քանի որ շրջանը կառավարվում էր իշխանների կողմից՝ ավանդական օրենքներով):

Դաշնակցության ոստիկանները գտնվում էին խմբապետական կոմիտեների անմիջական վերահսկողության տակ:

Դաշնակցության վարչական մարմինները, իրենց ոստիկաններով հանդերձ, մեծ արդյունավետությամբ էին գործում հատկապես Վասպուրակա-

[1] «Հայրենիք», N 7(163), մայիս, 1936, էջ 105:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Նյութեր...», հատ. Դ, էջ 56:

նում: Նահանգի հայությունը 1905-1907 թվականներին ըստ էության ճանաչում էր միայն Հ.Յ.Դ. Շամի կ.կոմիտեի իշխանությանը:

Հեղափոխականներն իրենց պաշտպանության տակ էին առել հայ գյուղացիությանը: Գյուղացիները հրաժարվում էին քուրդ բեկերին հարկ տալուց, եթե քրդերը փորձում էին հարկերը հավաքել ուժով, ապա հեղափոխական մարմինների ցուցումներով նրանք զինված դիմադրություն էին ցույց տալիս:

Քրդական ճնշման դեմ հայերի ձեռք բերած հաղողությունները բացում էին նաև նստակյաց քուրդ գյուղացիների աչքերը, որոնք նույնպես հրաժարվում էին իրենց աղաներին հարկերը վճարել և շատ հաճախ դիմում էին դաշնակցության ոստիկանության օգնությանը:

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

Ռուսական պետական դատարանների քաջքշուկից ու կաշառումներից խուսափելու, ժողովրդի բոլոր դատական խնդիրները նրա իսկ ներսում կարգադրելու և արագ ու անաչառ ընթացք տալու համար դաշնակցությունը ստեղծել էր սեփական արդարադատություն:

Անդրկովկասում գործող Հ.Յ.Դ. դատական համակարգն ստացավ «ժողովրդական» անվանումը: Այն կոչված էր ի զորու լինել լուծելու գյուղացիների և ընդհանրապես հայ ազգաբնակչության մեջ ծագած վեճերն ու թյուրիմացությունները, ինչպես նաև պատժիչ վճիռներ կայացնելու անուղղելի հանցագործների նկատմամբ:

Ժողովրդական դատավորներն ընտրվում էին համայնքների կողմից և գործում կուսակցության հսկողության տակ: Համայնքը շահագրգռված էր դատավորներ ընտրել տարբեր խավերի պատկանող ազնիվ, անկաշառ, անկողմնակալ մարդկանց: Դատական գործերի համար ծախսերը հոգում էին դատարանների դիմած հայցվորները կամ նրանց հարազատները՝ իրենց եկամուտների 2 տոկոսի չափով: Դատարանները պարտադիր վճիռներ էին կայացնում, իսկ կազմակերպությունը միջամտում էր միայն այն դեպքում, եթե կողմերից մեկը չէր ենթարկվում կայացած արդար վճռին:

1905-1907 թվականները եղան Անդրկովկասում դաշնակցության ժողովրդական դատարանների գործունեության բեղուն ու արդյունավետ տարիները: Ռուսական արդարադատության երևանյան բաժնի ներկայացրած պաշտոնական հաշվետվության մեջ զարմանք էր հայտնվում, որ նահանգում ամեն տեսակի վեճերը մեծապես նվազել են: Բայց հաշվետվության հեղինակը կամ չգիտեր դրա պատճառը, կամ «մոռացել» էր նշել, որ պատճառը ոչ թե ընդհանրապես հանցագործությունների թվի կտրուկ անկումն էր, այլ այն, որ հայերը այլևս չէին դիմում պետական դատարաններ: Իսկ դա մեծ հարված էր իշխանությունների հեղինակությանը:

Նշանավոր հրապարակագիր Էմիլ Դիլոնը դաշնակցության դատարանների մասին "The Contemporary Riviev" հեղինակավոր հանդեսում լույս ընծայած հոդվածում գրում էր, որ արագ կատարվող դատավարությունները և կայացած վճիռները, որոնք հիմնականում ներշնչված են արդարության նուրբ զգացումով, միանգամայն անսովոր բաներ են[1]:

Իր տրամադրության տակ չունենալով բանտեր, այնուհետև նշում էր Դիլոնը, ժողովրդական դատարանը գողերի ու ավազակների համար սահմանում է զանազան պատիժներ, որոնց մի մասը խիստ զավեշտական է: Օրինակ՝ որոշ հանցանքների համար կայացված վճռով հանցագործը ամբողջ օրը կանգնում է գյուղի հրապարակում և ամենքին բարձրաձայն հայտարարում, որ ինքը անազնիվ է և գող: Դրանից հետո տեղի դաշնակցական կազմակերպությունը նրան թույլատրում էր տուն վերադառնալ և աշխատել վերականգնել իր կորցրած վարկը[2]:

Կայացվում էին ավելի խիստ վճիռներ, որոնք, երբեմն, ճակատագրական էին լինում հանցագործների համար:

Դատարանները հատկապես խստագույն պատիժներ էին տալիս այն հայերին, որոնք զենք էին վաճառում թուրքերին ու քրդերին: Նման հանցագործներին դատարանները դատապարտում էին ամենաբարձր պատժով:

Օրինակ՝ Ալեքսանդրապոլի շրջանից մի հայ տարբեր ժամանակներում մոտ 100 բերդան հրացան էր վաճառել Շեյխ Հասան անունով ալաշկերտցի մի թուրքի, որը այդ զենքերը փոխադրել էր Ալեքսանդրապոլ - Մավրակ - Ճալա - Ալաճա - Տեկոռ - Կաղզվան - Ալաշկերտ գծով: Հրացանների հերթական խմբաքանակը տեղափոխելիս՝ Շեյխ Հասանը և նրա ուղեկիցը ձերբակալվում ու գնդակահարվում են, իսկ հայ հանցագործը կարողանում է թաքնվել ու փրկվել[3]:

Հետաքրքիր է, որ Անդրկովկասում դաշնակցության ժողովրդական դատարաններին հաճախ դիմում էին նաև մահմեդական հարևանները՝ թուրքերը և քրդերը: Արդար դատավճիռներ ստացած շատ մահմեդականներ դառնում էին դաշնակցության համակիրներ և մուծումներ էին անում ժողովրդական դատարանների սնդուկին:

Ոստիկանական դեպարտամենտի դիրեկտորին ուղղված 1905թ. հունիսի 11-ի N 723 խիստ գաղտնի գրությամբ Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետ, գնդապետ Ցակովլևը հաղորդում էր, որ Ղարսի մարզի Ղարս օկրուգի Շորագյալիի ոստիկանական մասի մուսուլման բնակչության ներկայացուցիչները բողոքով դիմել են նահանգապետին և խնդրել պարզաբանել, թե իրենք ում պետք է ենթարկվեն՝ գաղտնի հայկական կոմիտեի՞ն,

[1] Տե՛ս «Դրոշակ», N 8(161), օգոստոս, 1905, էջ 124:
[2] Նույն տեղում, էջ 125:
[3] Տե՛ս «Հայրենիք», N 1(193), նոյեմբեր, 1938, էջ 147:

թե՞ մարզի կամ օկրուգի կառավարման ադմինիստրացիային, և ո՞վ պետք է իրենց պաշտպանի կոմիտեի բռնություններից, քանի որ տեղական ադմինիստրացիան, իրենց խոսքերով, լիովին կորցրել է իր նշանակությունն ու իշխանությունը հայ բնակչության շրջանում[1]:

Նույն գրությամբ նաև հայտնվում էր, որ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլ քաղաքի մուսուլման բնակիչները դիմել են տեղի կոմիտեին՝ ֆիդայապետերի (խմբապետերի), բռնություններից իրենց ազատելու խնդրանքով, և այդ նպատակով լիակատար պատրաստակամություն են հայտնել կատարել կոմիտեի բոլոր կարգադրությունները: Կոմիտեն մուսուլման բնակչությանը տվել էր վկայական՝ նրան իր ենթակայության և պաշտպանության տակ վերցնելու մասին[2]:

Կովկասյան դատարանների օրինակով դաշնակցությունը ոչ պաշտոնական ժողովրդական դատարաններ է ստեղծել նաև Թուրքահայաստանում:

Այստեղ ձևավորված դատարանները, որոնք հետաքրքիր ու յուրօրինակ երևույթ էին Թուրքահայ իրականության պայմաններում, գործում էին բոլոր մակարդակներում՝ գյուղական, շրջանային (գավառային), նահանգային: Ինչպես Կովկասում, դրանց կազմի մեջ ընդգրկվում էին ազնիվ ու շիտակ, գյուղացիների շրջանում մեծ հարգանք վայելող անկողմնակալ մարդիկ:

Գյուղական դատարանները գյուղացիների միջև ծագած բոլոր վեճերն ու տարաձայնությունները քննում էին տեղում՝ արագ, արդյունավետ ու ձրի: Սահմանված պատիժներն էին՝ ծեծ, տուգանք, մնասի հատուցում, գավառից կամ նահանգից աքսոր[3]:

Վասպուրականի գյուղերից մեկի՝ Գանձակի ժողովրդական դատարանի գործունեությանն իր հուշերում անդրադարձել է դաշնակ գործիչներից Գալուստ Էյնաթյանը՝ բերելով դատավարություններից մեկի օրինակը:

Դաշնակցության տեղի կազմակերպությունը գյուղացիներին հրահանգել էր պետությանը չվճարել աշարը, իսկ եթե աճուրդի դրվեր որևէ գյուղացու ունեցվածքը, ապա ոչ ոք չպետք է մասնակցեր դրան: Սակայն գյուղի ռեսը, անտեսելով այդ նախազգուշացումը, մասնակցել էր աճուրդին, այն դեպքում, երբ ոչ միայն գյուղացիներից, այլև հարևան գյուղի Թուրքերից ու քրդերից որևէ մեկը չէր համարձակվել այդ բանն անել:

Քննելով ռեսի գործը՝ դատարանը որոշում է ընդունում երկու տարով նրան իր ընտանիքով հեռացնել գյուղից, հակառակ դեպքում մեղադրյալին սպասում էր խստագույն պատիժ[4]:

Անդրադառնալով Վասպուրականում գործող դատարանների աշխատանքին՝ Արամ Մանուկյանը գրել է, որ ըստ էության փակվել էին օսմանյան դատարանների դռները հայերի համար: Այդ դատարանները պարապ էին, քանի որ «Բոլոր դատերը հայերը իրենք իրենց մեջ էին տանում»[1]: Դատական մարմինները, տեղական սովորությունների համաձայն, «հաշտարար ձևով փոխադարձ համաձայնություն էին գոյացնում երկու կողմերի միջև: Երբ այդ անկարելի էր լինում, վճիռ էին կայացնում և հանձնում գյուղի կոմիտեին, իսկ երբ սա էլ չէր կարողանում իրագործել, դիմում էին շրջանային կոմիտեին, և այդպես դեպի վեր, մինչև կը հասներ կ. կոմիտեին»: Արամը վկայում է, որ «շատ քիչ դատական խնդիրներ էին հասնում մեզ, և եղածներն էլ շատ խոշոր էին»[2]:

Իրանի մի շարք վայրերում նույնպես, հատկապես Ատրպատականի նահանգում, դաշնակցությունը, թեև ոչ այնպես լայնատարած, ինչպես Կովկասում և Թուրքահայաստանում, իրականացնում էր արդարադատություն: Պարսկահայերը նույնպես խուսափում էի դիմել տեղի «դատական ատյաններին» և իրենց հարցերը լուծում էին դաշնակցության դատարաններում:

Ավելին, այդ դատարանները մահմեդական հարևանների համար նույնպես, վերջիններիս խնդրանքով, կայացնում էին արդար վճիռներ: Այսպես օրինակ՝ 1907թ. Ատրպատականի քուրդ աշիրեթներից մեկի մի խումբ քրդեր դիմելով դաշնակցության տեղական մարմին, նրան հրավիրել էին միջնորդ ու հաշտարար լինելու իրենց միջև ծագած ներքին կռիվներում: Դաշնակցության դատարանը, ընդառաջ գնալով, հաջողությամբ կատարեց իր դերը[3]:

Իհարկե, սխալ է կարծել, թե դաշնակցության դատարանների գործունեությանը հավանություն էին տալիս բոլոր հայերը: Այդ մարմնի գոյությանը Անդրկովկասում վճռականապես դեմ էին արտահայտվում պահպանողականները, հնչակյանները, ազատականները՝ «Մշակի» գլխավորությամբ, և, մանավանդ, բոլշևիկները: «Մշակը», «Հնչակը», «Կայծը» տպագրում էին հոդվածներ, տեղերից ստացված թղթակցություններ, որոնց հեղինակները բազմաթիվ փաստեր էին բերում ժողովրդական դատարանների անօրինականությունների մասին:

Այսպես, բոլշևիկյան «Նոր խոսքը» 1906 թվականի N 3-ում տպագրել էր Երևանի իր թղթակից Ռ. Նարինյանի (Մուշեղ Բագրատունի) հոդվածը, որտեղ նկարագրվում էին քաղաքում և գավառում դաշնակցական դատարանների կատարած կամայականությունները: Այդ դատարանների մասին նույն ոգով էր արտահայտվում նաև «Կայծը»՝ իր 1906-ի N31-ում:

Ժողովրդական դատարանների կողմնակալության և նրանց կողմից չարաշահումների դեպքեր կային նաև Թուրքահայաստանում, բայց այստեղ այդ դատարանների նկատմամբ բողոքներն ու քննադատություններն աննշան էին: Դա հասկանալի է. կողմնակալության, քաշքշուկների, կաշառակերության

---

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց.2, գ.3, թ. 58:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Արամը», էջ 35:
[4] «Հայրենիք», N 5(304), մայիս, 1951, էջ 32:

[1] «Արամը», էջ 37:
[2] Նույն տեղում, էջ 35:
[3] Տե՛ս «Դրոշակ», N 1(189), հունվար, 1908, էջ 16:

սովոր, միշտ հայերին մեղադրող և նրանց նկատմամբ միշտ անարդար վճիռներ կայացնող թուրքական պաշտոնական «դատարանների» համեմատ՝ դաշնակցության ժողովրդական դատարանները հայ բնակչության համար իսկական պարգև էին:

ԳՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Թուրքահայաստանում փաստորեն դաշնակցության ձեռքն էր անցել հայ գյուղի կառավարումը:

Հ.Յ.Դ. Դուրան-Բարձրավանդակի կ. կոմիտեի 1906թ. նոյեմբերի 1-ի՝ կուսակցության չորրորդ ընդհանուր ժողովին գրած տեղեկագրի մեջ կարդում ենք.

«Ի նկատի առնելով, որ ժողովրդի մեծ մասը ճնշված է, և համարյա բոլորը տրամադիր են հարելու հեղափոխությանը, կազմակերպությունը չի սահմանափակվում որոշ անհատների [իր] մեջ [ներառելով], այլ ամբողջ հասարակությունը, գյուղական [ողջ] դասակարգը մտնում են կազմակերպության մեջ, և, [դրանով իսկ], ամբողջ համայնքը ճանաչվում է հեղափոխական, այսինքն՝ ենթարկվում է հեղափոխության ամեն պահանջի, կատարում նրա հրահանգները: Գյուղը, յուր տղամարդով, կնիկ ու ճժով հեղափոխական կազմակերպության մեջ է մտնում, և այդ հեղափոխական զանգվածը կառավարվում է գյուղի գործադիր մարմնի կողմից»[1]:

Նույն կազմակերպության մի ուրիշ որոշման մեջ ասված էր, որ գործադիր մարմինը կազմված է գյուղի խմբապետից և նրա օգնականից: Իսկ եթե այդ բնակավայրում երկու խումբ կա, ապա գործադիր մարմնի մեջ մտնում են նաև երկրորդ խմբապետը (առանց օգնականի) և գյուղի ռեսը: Վերջինս, ի տարբերություն մյուս երեք անձերի (որոնք նշանակվի են), պետք է ընտրվի Հ.Յ.Դ. կ.կոմիտեի կամ գյուղի խմբի կողմից և հաստատվի Հ.Յ.Դ. շրջանային կոմիտեում: Հակառակ պարագայում ռեսը չի կարող լինել գործադիր մարմնի անդամ, իսկ դրանից հետո, առանց խորհրդակցելու խմբապետի և մյուս ընկերոջ հետ, չի կարող կատարել որևէ գործ՝ լինի դա կառավարական, գյուղին վերաբերվող, թե՝ հեղափոխական[2]:

Դաշնակցության կազմակերպությունների վրա է ընկած գյուղերում դպրոցների բացումը և դրանց աշխատանքների հաջողության ապահովումը: Դպրոցներին կարևոր նշանակություն էր տրվում նաև այն պատճառով, որ հեղափոխական գաղափարները պարարտ հող էին գտնում ամենից առաջ կրթություն ստացած պատանիների ու երիտասարդների միջավայրում: Բացի այդ, դպրոցներում հնարավորություն էր ստեղծվում ունենալու գաղտնի գրադարան՝ հեղափոխական գրականությամբ, ստանալու լրագրեր և այլն: Արամ

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 56:
[2] Նույն տեղում, էջ 69:

Մանուկյանը գրել է, որ եթե չի կարելի ասել, թե Վասպուրականում և Մուշում եղել է «պարտադիր ուսում», բայց կարելի է պնդել, որ եղել է «պարտադիր դպրոց» ունենալու սովորություն և կարգադրություն[1]:

Գյուղական կազմակերպությունների պարտականությունների մեջ էին մտնում թայֆայական կռիվների և վաշխառության դեմ պայքարը, ազգային ավանդույթների և բարոյական նորմերի պահպանումը:

Այսպես, 1906 թվականին դաշնակցության Վանի կ. կոմիտեն «Հրաման» վերտառությամբ հրատարակել և ոչ միայն քաղաքում, այլև նահանգի համարյա բոլոր հայկական գյուղերում տարածել էր հայտարարություն-թռուցիկ, ուր ասված էր. «1. Արգելվում է գիշերով թուրքերի մոտ գնալը, 2. Խստիվ արգելվում է խմել և թաղերում օղի ծախել, 3. Արգելվում է թղթախաղը, 4. Խիստ պատասխանատվության պետք է ենթարկվեն նրանք, ովքեր թուրքերին հայ կանայք են տանում անբարոյականության նպատակով, 5. Պատասխանատվության կենթարկվեն կեղծ դրամ կտրողները, 6. Արգելված է վաշխառուական տոկոսներով դրամի շահագործումը»[2]:

Հետագայում անդրադառնալով այդ թռուցիկի բովանդակությանը՝ Արամը նշել է, որ դա շատերի մոտ զարմանք էր առաջացրել, որոնք առարկում էին, թե կ.կոմիտեն իր վրա վերցրել է կառավարական իրավունքներ: «Չէին կարող հասկանալ, - գրել է նա, - որ մեր անլեգալ կազմակերպությունը կարող էր տրված առաջարկները գործադրել»[3]: Հիրավի, այդ առաջարկները (հրահանգները, հրամանները) գործադրվում և իրագործվում էին թե՛ համոզման և թե՛ ստիպողական միջոցներով: Չենթարկվողներն ստանում էին պատիժներ: «Մի երկու պատիժները օրինակ էին դառնում, որ ուրիշները միառժամանակ զսպվեին: Պետք է ասել, որ այդ օրինակներից շատերը, ինչպես և դատական գործառնությունները, մնացին նաև «հուրիեթի» ժամանակ, մանավանդ գավառներում»[4]:

Դաշնակցության գործունեության մասին ինչպես ռուսական պահնորդական բաժանմունքում (охранка), այնպես էլ թուրքական ոստիկանական բաժանմունքներում կուտակվել էին բազմաթիվ փաստաթղթեր ու նյութեր:

Ռուսական օխրանկայի փաստաթղթերից մեկում, որը մանրամասն տեղեկություններ էր պարունակում դաշնակցության օրգանական կազմության մասին, նշված էր.

«...Դաշնակցությունն ինքնին ներկայացնում է ինչ-որ պետություն պետության մեջ ... ոչ մեկ հեղափոխական կուսակցություն (բացառությամբ դեռ ոչ լրիվ քողազերծված «Միջազգային հրեական միության») չունի այն բարդ կազմակերպությունը, ինչպես հայկական դաշնակցությունը: Նայելով [կազ-

[1] Տե՛ս «Արամը», էջ 35:
[2] Նույն տեղում, էջ 36:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

մակերպության] ուրվագծին, մենք տեսնում ենք հանրապետական ձևի պետական մեխանիզմի կմախք: Պետական այդ կմախքը, ի դեմս իր աշխատողների, ներկայացնում է ոչ այլ ինչ, եթե ոչ հայկական պետության պաշտոնյաների կազմը, որը ներզոր կերպով մշակված ծրագրի համաձայն՝ հետապնդում է իր պետական խնդիրներին»[1]:

Այս տեղեկությունները Պետերբուրգ հաղորդողները խուսափում էին իրենց վերադասին տեղյակ պահել նաև այն մասին, որ Կովկասի բոլոր նահանգներում ոչ միայն ոստիկանապետերը և գավառապետերը, այլև շատ հաճախ նահանգապետերը իրենց նախաձեռնությամբ հարաբերությունների մեջ էին մտնում Հ.Յ.Դ. մարմինների և ղեկավար գործիչների հետ, դիմում կազմակերպության աջակցությանը կամ խորհրդին:

Ցարական պահնորդական բաժանմունքի կողմից Հ.Յ. դաշնակցությանը տված բնութագրություններն ու գնահատականները գալիս են լրացնելու մեր պատկերացումները այդ համահայկական, խորապես ազգային կուսակցության մասին: Հայ ազատագրական շարժման պատմության անկողմնակալ հետազոտողը չի կարող չհպարտանալ, որ պետականությունից զուրկ, բռնադատված և հարստահարված ժողովուրդն ի վիճակի եղավ իր ընդերքից սերելու դաշնակցությանը, որն իր ստեղծումից ընդամենը մեկուկես տասնամյակ հետո դարձել էր մի այնպիսի հզոր ուժ, որի հետ ստիպված էին հաշվի նստել ինչպես ռուսական, այնպես էլ թուրքական իշխանությունները:

Այսպիսով, 1903թ. հունիսից-1907թ. կեսերը Կովկասում և Թուրքահայաստանում դաշնակցության դերի և հեղինակության աննախընթաց աճի ժամանակաշրջանն էր: Կուսակցությունը մինչև այդ էլ լինելով հայության ամենախոշոր և ամենագլխավոր քաղաքական ուժը, նշված ժամանակահատվածում դարձել էր նաև ռուսական կայսրության մեջ գործող ամենախոշոր քաղաքական ուժերից մեկը, Անդրկովկասի ուժեղագույն կազմակերպությունը: 1907թ. կեսերին Հ.Յ. դաշնակցությունը իր վերընթացի գագաթնակետին էր:

Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

1905-1907թթ. ռուսական հեղափոխության ընթացքում Հ.Յ.դաշնակցությունը պարզեց իր դիրքորոշումը ինչպես ազատագրական շարժման, այնպես էլ առանձին հեղափոխական կուսակցությունների և հասարակական-քաղաքական հոսանքների նկատմամբ:

Հեղափոխության բռնկման պահից ի վեր դաշնակցությունն ամենագործուն մասնակցությունն ունեցավ քաղաքական ցույցերին, ագիտացիա էր մղում կառավարության դեմ, կազմակերպում բողոքի հանրահավաքներ,

[1] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 332:

առաջ քաշում ամենածայրահեղ կարգակոչեր, պահանջում սահմանադիր ժողովի հրավիրում, իր պատգամավորներին Երկրորդ պետական դումա ուղարկում բացահայտ հեղափոխական դիրեկտիվներով, հրատարակում անհաշտ ուղղության մարտական թերթեր, կազմակերպում բանվորական գործադուլներ՝ քաղաքական ու տնտեսական պահանջներով, մի քանի վայրերում իսկական ագրարային պատերազմ հայտարարում կալվածատերերի դեմ, բոյկոտում իշխանություններին, դիմում ահաբեկչության:

Ռուսական հեղափոխությունը, որ դաշնակցության առջև դրել էր որակապես նոր, ավելի ընդհանուր և ավելի լայն խնդիրներ, նրան ավելի էր մոտեցրել սոցիալիզմի գաղափարներին, առիթ և հիմք էր տվել իր սոցիալիստական ծրագիրը զարգացնելու XX դարի սկզբին ծավալվող համաշխարհային սոցիալիստական շարժման իդեալների և պահանջների ոգով:

Արդեն դարասկզբին դաշնակցության համար պայմաններ էին ստեղծվել Սոցիալիստական երկրորդ ինտերնացիոնալի հետ հարաբերությունների մեջ մտնելու համար, իսկ հեղափոխությունը արագացրեց այդ գործընթացը:

1905թ. մայիսին Ժնևում, «Դրոշակի» խմբագրությունում, Բրյուսելից, Սոցիալիստական միջազգային բյուրոյից, ստացվել էր հետևյալ նամակը.

«Հայ հեղափոխական դաշնակցության
«Դրոշակի» խմբագրությանը

Այս տարվա մայիսի 10-ին «Տրիբուն ռուս»-ի մեջ կարդացի, որ Ձեր կազմակերպությունը հարել է Սոցիալիստական միջազգային կոնգրեսների մշակած որոշումներին:

Ես Ձեզ երախտապարտ կլինեմ, եթե բարեհաճեք այդ հարցի վերաբերյալ մի պաշտոնական ծանուցում ուղղել Սոցիալիստական միջազգային կոմիտեին՝ ուղարկելով միաժամանակ Ձեր կանոնագրքի մի օրինակը:

Ընդունեցեք, սիրելի ընկերներ, մեր եղբայրական ողջույնները:

Քարտուղար (ստորագրություն)
12 մայիսի 1905թ.»[1]:

Նամակն ստանալու պես «Դրոշակի» խմբագրությունն ուղարկեց հետևյալ պատասխանը.

«Միջազգային սոցիալիստական բյուրոյին
Սիրելի քաղաքացիներ

* 1905 թ. հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստը («սահմանադրությունը») ազդարարելուց հետո կառավարությունը դադարեցրել էր հալածանքները քաղաքական կուսակցությունների, այդ թվում դաշնակցության դեմ, թույլատրել էր, որ նրանք հանդես գան քաղաքականապես և ճանաչվեն երկրի մեջ: Պետական դումայի ընտրությունների ընթացքում դաշնակցությունը Կովկասում հանդես էր եկել իբրև ուրույն մարմին, և կառավորությունը ճանաչել էր նրա ընտրական պայքարը: Դաշնակցության ցուցակով ընտրված և դումա մտած պատգամավորները ճանաչվեցին իբրև «դաշնակցական պատգամավորներ» և դումայում կազմում էին առանձին ֆրակցիա՝ «Դաշնակցության ֆրակցիա» անունով:

[1] **«Դրոշակ»**, N 6(159), հունիս, 1905, էջ 82:

Ի պատասխան մայիսի 12 թվակիր Ձեր նամակի՝ պատիվ ունենք Ձեզ տեղեկացնելու, որ, արդարև, մենք հարած ենք միջազգային սոցիալիստական սկզբունքներին, որոնք արծարծվել են 15 տարուց ի վեր մեր հրատարակությունների մեջ, մասնավորապես, մեր կուսակցության օրգան «Դրոշակի» էջերում:

Բայց այդ կողմնակցությունը և այդ պրոպագանդը մինչև օրս զուտ տեսական բնույթ ունեին, քանի որ մեր գործունեությունը կենտրոնացած էր Թուրքաց Հայաստանում, ուր հող չկա սոցիալիստական գործոն պրոպագանդայի համար:

Ահա երկու տարի է, ինչ Հ.Յ.դաշնակցությունը սկսել է իր կոիվը նաև Ռուսական Հայաստանում: Եվ քանի որ մեր երկրի այդ հատվածում պայմաններն ավելի նպաստավոր են սոցիալիստական շարժում կազմակերպելու համար, ուստի մեր կուսակցության խորհրդի ս.թ. մարտ ամսին տեղի ունեցած վերջին ժողովը հատուկ սեպեց Կովկասի համար մշակել սոցիալիստական ծրագրի մի նախագիծ, որի մեջ նա ընդունում է միջազգային սոցիալիստական կոնգրեսների հիմնական որոշումները:

Այդ որոշումների հիման վրա մենք վերջերս համաձայնության եկանք ռուսական կայսրության հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների հետ՝ կազմակերպելու համար միահամուռ գործակցություն ցարիզմի և կապիտալիզմի դեմ:

Վերոհիշյալ նախագիծը պաշտոնապես կհաղորդվի Ձեզ՝ կուսակցության առաջիկա ընդհանուր ժողովի կողմից վավերացվելուց հետո:

Ընդունեցեք, սիրելի քաղաքացիներ, մեր եղբայրական ողջույնները:

Խմբագրություն «Դրոշակի»

17 մայիսի 1905, Ժընև»[1]:

Այս նամակագրությունից հետո դաշնակցության և սոցինտերնի միջև շփումները, թեկուզ հեռակա, ավելի շոշափելի դարձան:

Բրյուսելի սոցիալիստական բյուրոն շատ թե քիչ տեղեկանալով դաշնակցության գործունեությանը, ծանոթանալով նրա սոցիալիստական աշխարհայացքին, 1905թ. վերջերից ինտենսիվ հարաբերությունների մեջ մտավ կուսակցության ղեկավար մարմինների հետ՝ նրանց հաղորդելով տեղեկություններ համաշխարհային սոցիալիստական շարժման մեջ տեղի ունեցող խոշոր իրադարձությունների մասին:

Դաշնակցությունն ինտենսիվ շփումների մեջ էր ոչ միայն սոցինտերնի, այլև եվրոպական առանձին սոցիալիստական կուսակցությունների ղեկավար մարմինների հետ:

Ռուսական հեղափոխության սկզբում գերմանական սոցիալ-դեմոկրատիան, հանգանակություն ձեռնարկելով հօգուտ Ռուսաստանի սոցիալիստական կուսակցությունների, գումարի մի մասը հատկացրել էր Հ.Յ.դաշնակցությանը՝

[1] *«Դրոշակ», N 6(159), հունիս, 1905, էջ 82-83:*

իբրև սոցիալիստական պայքարի հողի վրա կանգնած կազմակերպության:

1906թ. սեպտեմբերին «Դրոշակի» խմբագրությունը, Հ.Յ.դաշնակցության կողմից, որպես օգնություն, "Humanite"-ի խմբագրությանն էր ուղարկել 1 000 ֆրանկ: Վերջինս շնորհակալությամբ էր ընդունել այդ գումարը, և դա առաջին հերթին դիտել էր որպես համերաշխության արտահայտություն:

"Humanite"-ի խմբագիրը «Դրոշակի» խմբագրությանն ուղարկել էր հետևյալ նամակը.

Սիրելի քաղաքացիներ

Հաստատում եմ ստացումը 1 000 ֆրանկի, որ Հ.Յ. դաշնակցության անունից ուղարկել եք ինձ՝ "Humanite» -ի օգտին: Իմ աշխատակիցների և իմ կողմից հայտնում եմ ձեզ շնորհակալություն և խնդրում եմ Ձեզ՝ բարեհաճել դաշնակցությանն հաղորդելու մեր շնորհակալությունը՝ համերաշխության այս ակտի համար:

Ընդունեցեք, սիրելի քաղաքացիներ, իմ եղբայրական ողջույնը:

Ժան Ժորես»[1]:

Ընթերցողը տեղյակ է, որ դաշնակցության չորրորդ ընդհանուր ժողովը միաձայն որոշել էր՝ որպես հայ աշխատավորության շահերի թարգման և իբրև համաշխարհային սոցիալիստական բանակի մի հատված, այսուհետև մասնակցել սոցիալիստական միջազգային կոնգրեսներին: Այդ որոշման ընդունման համար հիմք էր ծառայել այն եզրակացությունը, որ կուսակցությունն արդեն ունի բավարար երաշխիքներ՝ պաշտոնապես մտնելու Ինտերնացիոնալի մեջ: Մնում է անել վճռական քայլը:

Վերջապես այդ քայլն արվեց: Ղեկավարվելով Հ.Յ.դաշնակցության 4-րդ ընդհանուր ժողովի համապատասխան որոշումով՝ կուսակցությունը դիմում ներկայացրեց Բրյուսելի սոցիալիստական բյուրոյին՝ ընդունվելու Սոցիալիստական ինտերնացիոնալի շարքերը:

Սոցիալիստական բյուրոյում դաշնակցության դիմումի քննարկման ընթացքում առաջացան որոշ բարդություններ: Հայ սոցիալ-դեմոկրատներից մի շարք բողոքներ էին հղվել Բրյուսել՝ առաջարկելով դրական ընթացք չտալ դաշնակցության դիմումին: Իրենց հերթին, ինտերնացիոնալի անդամ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները նույնպես, սոցիալիստական բյուրոյում հարցի քննարկման ժամանակ, հանդես եկան դաշնակցությանը սոցիալիստական կուսակցությունների շարքին դասելու առաջարկի դեմ:

Անտեսելով այդ բողոքներն ու դիմադրությունը՝ Բրյուսելի սոցիալիստական բյուրոյի ճնշող մեծամասնությունը քվեարկեց դաշնակցությանը Սոցիալիստական ինտերնացիոնալի մեջ ընդունելու որոշում:

Այդ որոշումից անմիջապես հետո, առաջիկա Միջազգային 7-րդ սոցիալիստական կոնգրեսին մասնակցելու համար, ինտերնացիոնալի գործադիր կոմի-

[1] *«Դրոշակ», 10(176), հոկտեմբեր, 1906, էջ 159:*

տեն դաշնակցությանը հատկացրեց երեք պատգամավորական տեղ՝ մեկը վրճռական ձայնի իրավունքով ամբողջ կուսակցության, երկուսը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով՝ նրա կովկասյան մարմինների համար:

Քանի որ կոնգրեսին մասնակցելու էին միայն դաշնակցության ռուսական հատվածի ներկայացուցիչները, Բրյուսելի սոցիալիստական բյուրոն որոշեց, որ կուսակցությունն առայժմ Ինտերնացիոնալում չի ունենալու առանձին սեկցիա, այլ մեկ ձայնի իրավունքով մտնելու է Ինտերնացիոնալի համառուսական սեկցիայի՝ ռուս սոցիալիստ-հեղափոխական (էս-էռ) կուսակցության ենթասեկցիայի մեջ*:

1907թ. օգոստոսի 16-ին, կոնգրեսի բացման նախընթաց օրը, Սոցիալիստական բյուրոյի նիստում քննարկվեց Հայաստանի (Թուրքահայաստանի) առանձին ներկայացուցչության հարցը, որն առաջարկել էր Հ.Յ.Դ. արևելյան բյուրոն, և որի նպատակն էր Ինտերնացիոնալում ստեղծել առանձին հայկական սեկցիա:

Հարցի քննարկումն անցավ համակրանքի մթնոլորտում: Բայց քանի որ նոր սեկցիա ստեղծելու հարցը համարվում էր ծանրակշիռ ու պատասխանատու, և քանի որ առաջարկը կատարվել էր հանկարծակի, ուստի Միջազգային սոցիալիստական բյուրոյի նախագահ, Բելգիայի սոցիալիստների առաջնորդ Վանդերվելդի առաջարկով բյուրոն որոշեց հետաձգել Հայաստանի (Թուրքահայաստանի) առանձին ներկայացուցչության հարցը մինչև իր առաջիկա նիստը, ուր դաշնակցության պատշաճ մարմինը կներկայացնի մանրամասն զեկուցագիր Թուրքահայկական կազմակերպությունների մասին: Զեկուցագրին մանրամասն ծանոթանալուց և իրերի վիճակին տեղեկանալուց հետո, Սոցիալիստական բյուրոյի անդամները պետք է տային իրենց վճիռը:

Բյուրոյի այդ նիստից երկու օր հետո, 1907թ. օգոստոսի 18-ին, Շտուտգարտ քաղաքի (Գերմանիա) «Ziederhalle» դահլիճում տեղի ունեցավ Սոցիալիստական Ինտերնացիոնալի կոնգրեսի բացումը: Պատգամավորները, թվով հազարի չափ, բաժանված էին ըստ ազգությունների և պետությունների: Ներկա էին 25 ազգությունների ներկայացուցիչներ: Ռուսական սեկցիայի գծով կոնգրես եկած պատգամավորների թիվը մոտ 50 էր, որից 3-ը, ինչպես ասվեց, դաշնակցականներ էին[1]: Վճռական ձայնի իրավունքով մասնակցում էր Ռոստոմ Զորյանը[2]:

Կոնգրեսի օրակարգում դրված էին Միջազգային սոցիալիստական նախորդ՝ Ամստերդամի կոնգրեսից հետո տարբեր երկրներում սոցիալիստական շարժման հաջողությունների, միլիտարիզմի և միջազգային ընդհարումների, գաղութային քաղաքականության, սոցիալիստական կուսակցությունների և արհեստակցական միությունների փոխհարաբերությունների, արտագաղթի և ներգաղթի, կանանց իրավունքների կարևոր հարցերը:

Կոնգրեսում ելույթներ ունեցան եվրոպական սոցիալիստական շարժման նշանավոր առաջնորդներ Բեբելը, Ժորեսը, Վանդերվելդը, Վալիանը, բազմաթիվ այլ հայտնի գործիչներ, ինչպես նաև մինչ այդ սոցիալիստական շարժմանն անծանոթ կամ քիչ ծանոթ պատգամավորներ:

Բրյուսելի Սոցիալիստական միջազգային բյուրոյի միջոցով կոնգրեսին ներկայացվեց պաշտոնական հակիրճ զեկուցագիր՝ Թուրքիայում և Անդրկովկասում Հ.Յ.դաշնակցության գործունեության մասին*, որ կազմել էր «Դրոշակի» խմբագրությունը: Զեկուցագիրը հարյուրավոր օրինակներով տարածվեց կոնգրեսում և առաջ բերեց սևեռուն հետաքրքրություն:

Չնայած դրան, չնայած կոնգրեսին վճռական ձայնի իրավունքով մասնակցում էր Ռոստոմը, բայց Հ.Յ.դաշնակցությունը այդ ժամանակ պաշտոնապես չանդամակցվեց Երկրորդ (սոցիալիստական) ինտերնացիոնալին: Հարցերի լուծումը հետաձգվեց գալիքին:

Օրակարգի հարցերի շուրջ ծավալված մտքերի փոխանակությունից և բանավեճերից հետո կոնգրեսն ընդունեց համապատասխան բանաձևեր: Միաձայն ընդունված հատուկ բանաձևով կոնգրեսն իր բուռն համակրությունը և հիացմունքը հայտնեց ռուսաստանցի սոցիալիստներին և հեղափոխականներին՝ նրանց հերոսական և արյունալի պայքարի համար: Քվեարկությունը կատարվեց ծափահարությունների որոտի ուղեկցությամբ:

Վեցօրյա աշխատանքից հետո Շտուտգարտի Միջազգային սոցիալիստական 7-րդ կոնգրեսը փակվեց, և պատգամավորները հեռացան աշխարհի զանազան ծայրեր:

Նախքան աշխատանքների ավարտը կոնգրեսն ընդունել էր նաև մի բանաձև, որով Բրյուսելի միջազգային սոցիալիստական բյուրոին առաջարկել էր առանց ուշացնելու հրատարակել մի ընդհանուր ժողովածու և այնտեղ զետեղել կոնգրեսի բոլոր նյութերը: Շատ չանցած՝ լույս տեսավ այդ ժողովածուն, ուր զետեղված էր նաև դաշնակցության կողմից կոնգրեսին ներկայացրած նշված զեկուցագիրը:

Մի ուրիշ բանաձևով որոշում էր ընդունվել Սոցիալիստական ինտերնացիոնալի հաջորդ՝ 8-րդ կոնգրեսը հրավիրել 1910 թվականին, Կոպենհագենում:

---

* Սոցիալիստական ինտերնացիոնալում ամբողջ ռուսական սեկցիային տրված էր 20 ձայն, որից 10-ը՝ սոցիալ-դեմոկրատիային, 7-ը՝ սոցիալիստ-հեղափոխականներին և 3-ը՝ չեզոք արհմիություններին:

[1] Տե՛ս «Դրոշակ», N 8(185), օգոստոս, 1907, էջ 110:

[2] Տե՛ս «Ռոստոմ», 1979, էջ 15:

* Տե՛ս "Rapport, presente' au Bureau Socialist International par le parti Soc. et revol. armen. "Dachnakzutiun", Stuttgart, 1907.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ՖԻԴԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ

Հ.Յ.Դ. չորրորդ ընդհանուր ժողովին հաջորդած ամիսներին, 1907թ. մայիս-օգոստոսին, տեղի ունեցան հայ ֆիդայական խմբերի վերջին երկու մարտերը թուրք-քրդական ուժերի դեմ: Դրանով փակվեց առասպելական հերոսների շուրջ 30-ամյա դյուցազնական պայքարի ոսկե տարեգրության վերջին էջը:

ՆՈՐ ԴՅՈՒՅԱԶՆԱԳԱՏՈՒՄ ԵՎ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՈԼՈՒԽՈՒՄ

Դուն չե՛ս գիտեր ի՞նչ է մեռնիլը ...
Մեռնիլը՝ ապրելու սկսիլ է ...

1907 թվականի մայիսին հայությունը կրեց ծանր կորուստ. նահատակվեց ժողովրդի վրեժխնդրությունից ժայթքած մրրկաթև Ասպետը՝ Գևորգ Չաուշը:

Հոգնել էր քուն ու հանգիստ չունեցող հերոսը: Ընկերները Գևորգին թախանձագին խնդրում էին գոնե որոշ ժամանակով դուրս գալ երկրից և կարճատև հանգիստ առնել: Բոլոր հորդորները զուր էին անցնում: Տեղի չտալով սպառնացող վտանգներին, չ՛անսալով մոտալուտ փորձանքներից խուսափելու անհրաժեշտության մասին իրեն արված ազդարարություններին, արհամարհելով կործանարար վտանգները՝ Գևորգը շարունակում էր իր խիզախ գործողությունները: Ժողովրդի ցավն ու տառապանքը փոքր-ինչ դարմանելը թանկ գնահատելով իր անձից՝ նա շարունակում էր կռվել Դուրան-Բարձրավանդակի հայության կյանքի ու պատվի համար:

Իշխանությունները ակնապիշ հետևում էին Գևորգի ամեն քայլին: Նրա հետքը գտնելու համար ամենուր վխտում էին լրտեսները: Ե՛վ բարեկամը, և՛ թշնամին, սակայն, լավ գիտեին, որ հերոսին միայն հանկարծակիի բերելով կարելի է հաջողության հասնել:

Եվ պատահեց այն, ինչը վաղուց սպասելի էր:

1907թ. մայիսի 5-ին Գևորգ Չաուշն իր խմբով իջել էր հայկական Սոլուխ գյուղը: Սոլուխը, որ ուներ 120 տուն, գտնվում էր Եփրատի եզերքից ոչ հեռու, Մուշից դեպի Էրզրում տանող ճանապարհին[1]:

[1] *Տե՛ս Տեղակալ Մ. Ավետեան, Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) Ցուշամատեան և զոր. Անդրանիկ, էջ 124-125:*

Մայիսի 26-ին Ցրոնքից իր խմբով Սոլուխ է գալիս նաև Ռուբեն Տեր-Մինասյանը՝ հաջորդ օրը Գևորգի հետ Դերիկ անցնելու համար[1]:

Մայիսի 27-ի առավոտյան Սոլուխին տիրող Ահմեդը իր տանը Գևորգի և Ռուբենի պատվին կազմակերպում է հացկերույթ, որին հրավիրվում են նաև հենց նոր գյուղ մտած երկու հարկահավաք թուրք ժանդարմները: Հյուրասիրությունը դեռ չվերջացած՝ ժանդարմները պատրվակ են բռնում, թե շտապում են հարևան Ղաշղալթախ գյուղ՝ հարկեր հավաքելու: Սոլուխից բավական հեռանալով՝ նրանք փոխում են ճամփան և ուղղություն վերցնում դեպի Մուշ: Ներկայանալով քաղաքի կառավարչին՝ նրանք հայտնում են Գևորգի գտնվելու տեղը[2]: Քաղաքում գտնվող զորքն ու բոլոր ժանդարմներն անմիջապես ճամփա են ընկնում դեպի Սոլուխ[3]:

Շատ չանցած՝ սոլուխցի Մեսրոպը լուր է տալիս Գևորգին, որ Մուշից մեծ զորք է առաջանում դեպի գյուղ: Շրջապատելով Սոլուխը՝ թշնամին, վերջապես, կարողանում է ծուղակի մեջ առնել Գևորգ Չաուշին:

Թուրքական հարձակումը ղեկավարում էր Քեռսե Բինբաշին՝ մի փորձված ու ճարպիկ զինվորական, ազգությամբ չերքեզ: Նա գտնվում էր երիտթուրքերի գաղափարական ազդեցության տակ, համակրում էր հայկական հեղափոխությանը և հաճախ գաղտնի հանդիպումներ էր ունեցել Գևորգի ու Ռուբենի հետ[4]: Բայց այժմ եկել էր կատարելու իր զինվորական պարտքը:

Թուրք հրամանատարն իր տրամադրության տակ ուներ մեծ ուժ՝ հազարավոր զինվորներ, անսպառ զինամթերք, հրացաններ, գնդացիրներ, թնդանոթներ: Կանոնավոր զորքին հետևում էր կողոպուտի բնազդից մղված անկանոն խուժանը:

Այդ ուժի դեմ Չաուշն ուներ 17 հայդուկ և մոտ 70 կռվող գյուղացի՝ զինված զանազան տիպի հրացաններով: Կար մաուզեր տեսակի մոտ 20 տասնոց ատրճանակ, որոնք գնդացրի դեր պիտի կատարեին, հայդուկներն իրենց վրա ունեին մի օրվա փամփուշտ[5]:

Սոլուխի տեղանքը հարթ էր, զուրկ բնական դիրքերից, բայց հայդուկապետն ընդունեց մարտը[6]:

Նախքան Մուշից մեկնելը Քեռսե Բինբաշին Ղաշղալթախ գյուղի պահակագնդին հրահանգել էր գնալ դիրքավորվել կամրջի մոտ, Սոլուխի թիկունքին, որպեսզի փակվեր ֆիդայիների նահանջի ճամփան:

Գևորգը գյուղացիներին պատվիրում է խուճապի չմատնվել, գյուղից դուրս

[1] *Տե՛ս «Պատմություն Տարոնի աշխարհի», էջ 700:*
[2] *Տե՛ս Սարգիս և Միսակ Բգէեան, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 235:*
[3] *Նույն տեղում:*
[4] *Տե՛ս Ալ., Գևորգ Չաուշ, էջ 377-378:*
[5] *Տե՛ս «Հայրենիք», N 10(404), 1959, էջ 51:*
[6] *Տե՛ս Տեղակալ Մ. Ավետեան, Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) Ցուշամատեան և զոր. Անդրանիկ, էջ 125:*

գալու փորձ չանել, երեխաներին ու կանանց պահել փակված տներում: Գյուղում առանձնացվում է երեք դիրք, որոնց վրա բաշխվում են ուժերը: Հայդուկապետն իր խմբով դիրքավորվում է գյուղի կենտրոնի տներից մեկում: Մարտիկները հրաման են ստանում կրակ բացել, երբ Թշնամին կգտնվի քսան քայլի վրա:

Քեոսե Բինբաշին զորքին հարձակման հրաման է տալիս, ու սկսվում է ճակատագրական թեժ կռիվը: Հայ մարտիկների առաջին իսկ համազարկերից գետին են տապալվում մի քանի տասնյակ թուրքեր, և Թշնամին ստիպված նահանջում է: Թուրք հրամանատարը զորքը նորից գրոհի է տանում, և հաջողվում է մտնել գյուղ: Այստեղ էլ Ալիզռնացի (Մուռ) Մքոյի գնդակից սպանվում է Քեոսե Բինբաշին: Թուրքերի շղթան հետ է քաշվում, բայց շատ չանցած՝ զորքը նորից հարձակում է կատարում հայ մարտիկների դիրքերի վրա:

Գևորգ Զաուշը փորձում է անկարելին անել. անվախ ու հանդուգն նետվում է առաջ՝ իր դիրքի դիմացի ահագին բազմությունը ցրելու համար: Հաջորդ պահին իսկ Թշնամու մի գնդակ մխրճվում է Գևորգի կռնակը, և նա ընկնում է մահացու վիրավոր:

Տեսնելով այդ՝ վաղօրյա զինվոր սպաղանցի Գալեն (Կալո) ինքն էլ առաջ է նետվում վրեժխնդրության մռնչյունը շուրթերին: Նա նույնքան առյուծասիրտ մի կտրիճ էր և շատ տարիներ եղել էր Գևորգի երդվյալ ընկերը, նրանից անբաժան, նրա հետ մասնակցել էր բազում հերոսական կռիվների*: Այս վերջին կռվում նրան էլ է հասնում Թշնամու մահաբեր գնդակը[1]: Նույն րոպեներին կամրջի գլխին գնդակահար ընկնում է Գևորգի մյուս հավատարիմ ընկերը՝ Խարսա Ցակոն:

Կռիվն այդպես շարունակելը համարելով անկարելի՝ Ռուբենը մարտիկներին կարգադրում է ամբողջ ուժով դիմադրել Թշնամուն, նրան չթողնել խուժելու գյուղ, մինչև որ գյուղացիները կարողանան գյուղից հեռանալ և ապաստան գտնել զանազան տեղերում[2]:

Մութը վրա է հասնում, և, օգտվելով դրանից, գյուղացիները Սոլուխից դուրս են գալիս: Ֆիդայիների կռիվը շարունակվում է մինչև ուշ գիշեր: Հեռանալով գյուղից դեպի Ղաշղալթախ՝ նրանք իրենց հետ տանում են ծանր վիրավոր Գևորգ Զաուշին, նաև՝ Գալեի ու Ցակոյի դիակները: Հասնելով Եփրատին՝ մարտիկները համբուրում և գետի ալիքներին են հանձնում սպանված երկու թանկագին ընկերներին, իսկ մահամերձ Զաուշին թաքցնում են Խաչ-

* Բնածին հերոս, արտակարգ նկարագրով օժտված Գալեի մասին Ռուբենը գրել է. «Եթե ան ըլլար քիչ մը անհամեստ, քիչ մը փառասեր, կը դառնար առաջինը Մշո աշխարհին մեջ»: Իսկ Գևորգ Զաուշը հաճախ այս կամ այն առիթով կրկնում էր. «Եթե ես ունենայի Գալեի քաջությունը և մտածողությունը, առանց կատակի սուլթան Համիդին թախտից վայր բերելը քանի մը շաբաթուան գործ պիտի դառնար» (**«Հայրենիք»**, N 10 (404), 1959, էջ 51):

1 Տե՛ս **«Դրոշակ»**, N 10 (187), հոկտեմբեր, 1907, էջ 152:

2 Տե՛ս նույն տեղում, N 6-7(183-184), հունիս-հուլիս, 1907, էջ 85:

խալդաղի եղեգնուտներում Թշնամու անարգանքներից փրկելու համար, նաև նպատակ ունենալով հաջորդ օրը նրան վերցնել և քելակներով* տեղափոխել գետի մյուս ափը:

Կռիվը դաժան էր եղել: Թշնամին տվել էր մեծ կորուստներ: Բացի զորքի ընդհանուր հրամանատար Քեոսե Բինբաշիից, սպանվել էին երկու հարյուրապետ, հինգ մյուլազիմ, մեկ բժիշկ, մեկ ոստիկանապետ: Սրանց բոլորի անունները պաշտոնապես հրապարակվեցին, բայց գաղտնի պահվեց զոհված զինվորների թիվը**, որը 100-ից ավելի էր: Անհամեմատ մեծ թիվ էին կազմում վիրավորները:

Քեոսե Բինբաշիի մահը սգի էր մատնել թուրքերին, որոնց մեջ նա հերոսի համբավ ուներ: Նրա մահը ափսոսանքով ընդունեցին նույնիսկ շատ մշեցի հայեր, քանի որ հանգուցյալը այն բացառիկ թուրք բարձրաստիճան զինվորականներից էր, որը չէր թաքցնում իր համակրանքը հայ հեղափոխականների և ընդհանրապես հայության նկատմամբ: Քեոսե Բինբաշին զինվորական մեծ պատիվներով թաղվեց Մուշում: Թաղման թափորի հետ էր 50 հոգանոց նվագախումբը[1]:

Սոլուխի կռվում հայ ֆիդայիների կորուստն անհամեմատ քիչ էր: Նրանք տվել էին երեք սպանված և 11 վիրավոր: Կռվող գյուղացիներից սպանվել էր 18, իսկ անգեն բնակիչներից՝ 23 հոգի[2]: Թվապես անհամեմատ ոչ մեծ զոհերի դիմաց հայերը որակապես տվել էին անչափելի կորուստ:

Զորքը միայն առավոտյան կողմ համարձակվեց մտնել Սոլուխ: Զինվորները ու ամբոխը անմիջապես վրա պրծան գյուղում մնացած գյուղացիների վրա, որոնք հաշմանդամ կամ հիվանդ լինելով՝ չէին կարողացել հեռանալ: Ջարդարարները, լի վրեժխնդրությամբ, սկսեցին անլուր գազանություններ: Նրանք սպանեցին Զաթո Կարոյանին, Բարսեղ Հովասափյանին, Առաքել Գասպարյանին, Մկրտիչ Տոնոյանին, մշեցի Ավո Զուստյանին, բռնաբարեցին Հովսեփի կին Կուլոյին, Օհանի կին Զրմոյին, Նադոյի կին Վարդեին: Գյուղից սարսափահար փախուստի ժամանակ Արածանի գետում ջրամոյն խեղդվում էին 6 հոգի[3]: Ամբողջովին կողոպտված գյուղի բնակիչները ցիրուցան են լինում:

Զորքն ու ոստիկանությունը անդադրում փնտրում էին ֆիդայական խմբին: Հրամայված էր ամեն գնով ձերբակալել Ռուբենին: Նրանք գիտեին, որ

* Քելակ - գետն անցնելու «փոխադրամիջոց», որը այծի փչած տիկերի վրա դրած տախտակի մի քանի բարակ կտորներ էին՝ ամրացված պարաններով:

** Տարբեր աղբյուրներում սպանված թուրքերի թիվը տարբեր է նշված: Կարո Սասունին կանգ է առնում 110 թվի վրա (տե՛ս «Պատմություն Տարոնի աշխարհի», էջ 701): Ավել թե պակաս ստույգ տեղեկության հիման վրա նրանց թիվը Ռուբեն Տեր-Մինասյանը հաշվել է 120 (տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Դ,էջ 180): Ոմանք այդ թիվը հասցնում են 400-500-ի (տե՛ս «Հայրենիք», N 10(404), 1959, էջ 51):

1 Տե՛ս **«Պատմություն Տարոնի աշխարհի»**, էջ 701:

2 Տե՛ս **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Դ, էջ 179:

3 Տե՛ս **«Դրոշակ»**, N 6-7(183-184), հունիս-հուլիս, 1907, էջ 85:

Գևորգը մահացու վերք է ստացել, ուստի փնտրում էին նաև նրան: Բայց հերոսը մայիսի 28-ի արևածագին արդեն ավանդել էր հոգին՝ հենված եղեգի մի խրձի, թևերը գետին փռած՝ կարծես քնած հսկայի քնով: Նա մեռել էր տանջանքների մեջ:

«... Իմա՛լ ժողովուրդ ունինք. արժե մեռնիլ անոր համար ...»:

Ժամանակին այս խոսքերը արտաբերած «Սարերի Ասլանը» հիմա հոգնած ու տառապալից գլուխը կախել էր լայնանիստ կրծքին՝ այլևս չբարձրանալու համար[1]: Նա ընդամենը 36 տարեկան էր*:

Ռազմիկ ընկերները արտասուքով լվացին հերոս մարտիկի դին և երդվեցին երբեք մոռացության չտալ նրա հիշատակը:

Որպեսզի Գևորգի մարմինը չընկներ թշնամու ձեռքը, հայդուկները դիակը շտապ թաղեցին մոտակա բլրի ստորոտում, բայց թուրք զինվորները կարողացել էին գտնել տեղը և, դիակը հանելով, դրել էին սայլի վրա ու տարել Մուշ: Թուրքերը չէին անարգել հերոսի դին և երեք օր հարգանքով ցուցադրելուց հետո հանձնել էին հայոց Առաջնորդարանին:

«Ճնշուածներուն ամբոխը ահաբեկ՝ անոր մահը կողբար, - գրում էր «Ռազմիկ» թերթի թղթակիցը, - անոր մահերգը կը հեծծեր երդիքներուն անկիւնը, ամայի դաշտերու գոգը, խորհրդապանծ սարին ստորոտը: Մեռեր էր հերոսը, եւ իր արու մահուան դիւցազներգութիւնը կը հեգէին փոսացած աչքերով պառաւներ, ցուպերու կոթնած ծերունիներ, կիսամերկ լաճեր եւ սգաւոր այրիներ...»[2]:

Քեռուս Բինբաշիի թաղումից երկու օր հետո Գևորգ Չաուշին նույն նվագախմբի հնչյունների տակ և մեծ թափորով տանում են քաղաքի Կողաթաղի գերեզմանատուն և հողին հանձնում հայ ազատագրական շարժման մի ուրիշ նշանավոր գործչի՝ Գուրգենի (ագուլիսցի Բաղդասար Մայան - 1873-1899) շիրիմի կողքին:

Հերոսի դին թաղելու տանող ահաբեկ թափորում միայն հառաչանք էր ու այրող կսկիծ: Վշտից քարացած մի տառապյալ մշակ այսպես էր փոխանցում իր ողբը երիտասարդ զրուցակցին.

«Իր կորիճ մարմինն է, որ թաղելու կը տանին, իր նշխարքը որ հիմա արիւն կը հոտի: Չավու՛շը, տղայ, մեր դաշտերուն կորիւնը, մեր գազաններուն սարսափը ինկա՛ւ, ու մեզ որբ թողուց այս վերան աշխարհին մեջ: Չավուշը ինկաւ, տղա՛յ. գիտե՞ս ինչ ըսել է այս: Անտառեն վերցուր առիւծը, եւ ի՞նչ կը տեսնես, - բոլոր մանր ու խոշոր գազանները, գայլն ու բորենին, վարազն ու արջը, կուզն ու աղուէսը պար կը դառնան, քո արտն ու ախոռը, քո տունն ու օջախը կը քանդեն, քո տաւարն ու հաւքը կը լափեն, քո նամուսը կը պղծեն, քո հանգիստը կը քրքրեն, եւ մեծ փառք, եթէ այդ բոլոր զուլումին մէջ մենավոր հոգիդ ողջ մնաց... Գէորգը մեր առիւծն էր, որ իր կորիւններուն հետ ահ ու սարսափ կ'ազդեր այդ ամեն մանր ու խոշոր գազաններուն, այդ ծուարած բորենիներուն: Ան մեր Ասլանն էր: Անոր շուքէն կը դողային քուրդն ու պեկը, միլթեզիմն ու ասքերը, չէրքեզն ու մուհաճիրը: Դեռ՞րգը, դուն տեսե՞ր էիր անոր պես իգիտ...»[1]:

Եվ մշակը աչքերին տարավ թևը՝ լճացած արցունքը սրբելու համար:

Կորուստն, իրոք, անչափելի էր: Մահվան բոթը սլացավ՝ խոր կսկիծ պատճառելով Տարոնի, Սասունի, Մշո աշխարհի հայությանը, Արևմտահայաստանի տարբեր վայրերի մարտիկներին, ողջ հայ ժողովրդին: Հայը չէր ուզում հավատալ, որ այլևս չկա Չաուշը: Բայց իրականությունը դաժան էր: Չկար այլևս մեծանուն քաջը: Հազար-հազար հոգիներ լալիս էին լուռ, առանց արցունքի: «Ափսո՜ս» խոսքը, թռած հազարների բերանից, թևածում էր ամենուր:

Մ. Փորթուգալյանի «Արմենիա» (Մարսել) թերթը դրվատելով առասպելական հերոսին՝ մեծ ափսոսանքով գրում էր. «Ցավով կիմանանք, թե Մուշ պատահած ընդհարումներուն մեջ սպանվեր է խմբապետ Գևորգ Չաուշը (Սարհատ)»: Թերթն ընթերցողին հիշեցնում էր, որ նա շատ տարիներ անձնվիրաբար պայքարել է իր ժողովրդի ազատության համար և երբեք չի մտածել հարազատ երկրից հեռանալու մասին[2]:

Ռամկավար գործիչ Արամ Անտոնյանին 1925 թվականին գրած նամակում նրա այն հարցին, թե «որոնք են եղել քո կյանքի ամենատխուր պահերը», զորավար Անդրանիկը պատասխանել է, որ դրանք երկուսն են եղել, որոնցից մեկը՝ «1907-ին, երբ Գևորգի մահուան լուրը հասավ ինծի»[3]:

Ժողովուրդը երգեր հյուսեց իր անվեհեր որդուն: Սոլուխի կռվի և Գևորգի նահատակության վրա տխուր երգեր հյուսեցին նաև քրդերն ու թուրքերը: Հայի սրտից բխած վշտակոծ երգերից մեկում ասված էր.

Քո մահից յետոյ
Ա՛լ մեզի համար
Ինչ կ'արժե կեանքը,
Ինչ կ'արժե աշխարհ[4]:

Վշտառատ երգեր երգելով՝ ժողովուրդը միաժամանակ գիտակցում էր, որ հերոսն իր կյանքը զոհել է պաշտելի Հայաստանի համար, ինչպես զոհվել են իրենց կոչմանը գիտակ բոլոր անձնուրաց մարտիկները: Մեծ նահատակը

---

[1] Տե՛ս Շավարշ Միսաքեան, Օրեր և ժամեր, Փարիզ, 1958, էջ 9:

* Սոլուխի կռվից հետո Ռուբեն Տեր-Մինասյանի հակառակորդների կողմից լուր տարածվեց, թե Գևորգ Չաուշին սպանել է ինքը: Նրանց հիմնական փաստարկն այն էր, որ Գևորգը մահացու վերք է ստացել կռնակից, հետևապես գնդակը նետվել է նրա դիրքի թիկունքում գտնված Ռուբենի դիրքից (այդ կարծիքի մասին տե՛ս Սարգիս և Միսակ Բդէեան, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 236-ի տողատակ, «Պատմություն Տարոնի աշխարհի», էջ 701-ի տողատակ և այլն): Վարկածը հնարովի է, անհեթեթ:

[2] «Ռազմիկ», N 191, 6 հոկտեմբերի 1907թ.:

[1] Շավարշ Միսաքեան, Օրեր և ժամեր, էջ 201:

[2] «Արմենիա», 24 օգոստոսի, 1907թ.:

[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 83, թ.1:

[4] «Յեղափոխական երգարան», Գ, տպագրություն, Պեյրութ, 1988, էջ 65:

կարծես ասում էր. «Թող ոչ ոք չողբա իմ բախտը: Ես կյանքս ամբողջապես, առանց մնացորդի նվիրել եմ իմ տառապյալ ժողովրդի ազատության կռվին: Բռնապետության առաջ իմ կողմից երբեք զղջումի խոսք չի կարող լինել: Հանդերձյալ աշխարհում իմ հոգին լինելու է մեկը. իմ մահով իմ գործը շո՞ւտ է արդյոք պսակվելու գաղափարի մաքրությամբ»:

Ժողովուրդն ուներ իր պատասխանը. «Գևորգ Չաուշ անունով անզուգական հերոսի գործն անմահ է: Նրա կերպարը դարեդար մնալու է իմ չխամրող հիշողության մեջ»:

Իսկ թուրքերի ուրախությանը չափ ու սահման չկար. Նրանք ուրախ էին, որ ազատվել են հերոս հայ վրիժառուից:

Չաուշի մահից հետո խորտակվեց Երկրի հայության ամուր պատնեշներից մեկը: Հերոսի կենդանության ժամանակ իրենց զսպված պահող ավազակախմբերը նրա մահից հետո ազատ շունչ առան: Թուրքերի ու քրդերի ձեռքերը լիովին արձակվեցին Դուրան-Բարձրավանդակում և այլուր: Անոթի գայլերի ոհմակները այժմ անվախ ու անկաշկանդ խուժում էին անպաշտպան հայ գյուղերը, կոտորում ու ավերում, թալանում ու կեղեքում:

«Հայրենիք» թերթը տպագրել էր Մուշից ստացած մի թղթակցություն, ուր ասված էր. «Գևորգ Չաուշի սպանութենեն յետոյ կացությունը գնալով ծանրացավ. ընդհանուր կոտորածի մը սարսափը պատած է ամբողջ Մշո դաշտը»[1]:

Մշեցի Հաջի Սեֆու Ապտը Սահիմեն մտնելով Ախճան գյուղը՝ ատրճանակի կրակոցներով սպանում է երիտասարդներ Ցովո Սերոբյանին, Մեսրոպ Աղջոյանին և վիրավորում ուրիշ երկուսի: Խրճիթցի Զորավուի քրդերը հարձակվում են Ցրոնքի վրա և սպանում գյուղի 20-30 տարեկան մի քանի երիտասարդի՝ Պողո Խաչոյանին, Մուշո Սլոյանին, Ասիկ Գրիգորյանին, Ցակո Ղազարյանին, Զքո Մարդոյանին, Խչո Մխիթարյանին և այլոց[2]:

Մուշի մերձակա հայկական գյուղերը նույնպես սարսափի մեջ էին:

Հունիսի 14-ին Պելպաշի քրդերը, իրենց ցեղապետ Սլոյի և Պլքոյի առաջնորդությամբ, հարձակվում են Պաղլու հայաբնակ գյուղի վրա, սպանում ու հոշոտում մարդկանց, հրդեհում բոլոր տները: Տղամարդիկ հալածական բարձրանում են լեռները, կանայք ու երեխաները ընկնում են ուրիշ գյուղերի փողոցները»[3]:

Հաջորդ օրը, հունիսի 15-ին, նույն քրդերը հարձակվում են Պաղլուի հարևան Մեղդի գյուղի վրա և նոր սպանություններ կատարում: Գյուղը թալանվում ու հրդեհվում է, իսկ բնակիչները ցրվում են տարբեր կողմերի վրա[4]:

Կացությունն անտանելի էր նաև Մուշ քաղաքում: Իշխանությունը քրդերին, թուրքերին և նույնիսկ զորքին դրդում էր կոտորած առաջ բերել:

[1] «Հայրենիք» (Բոստոն), N 33(423), 17 օգոստոսի 1907թ.:
[2] Տե՛ս «Դրոշակ», N 6-7(183-184), հունիս-հուլիս, 1907, էջ 85:
[3] Տե՛ս նույն տեղում, N 8 (185), օգոստոս, 1907, էջ 117:
[4] Տե՛ս նույն տեղում:

Երկյուղալի չչուկներից դրդված՝ հայերը տներն էին քաշվել: Ութ օր հետո, իշխանության ճնշումներով, հայերը հարկադրված բացեցին խանութները, բայց սոսկումով սպասում էին, թե ինչ է լինելու:

1907-ի հունիսի 20-ին, ժամը 2-ին, մոտ 500 զինվոր, առանց հրացանների, զինված ատրճանակներով և դաշույններով, հանկարծ լցվում են շուկա, որտեղից հայերը փախուստ են տալիս: Թուրքերը հասցնում են դաշունահարել մի քանիսին[1]:

Թուրքերը հաջորդ օրերին լարված պատրաստություններ էին տեսնում հայոց թաղերի վրա հարձակվելու համար: Մզկիթներն ու թուրքերի խանութները լցված էին զենքերով: Հայերի երկյուղն աննկարագրելի էր: Այդ պայմաններում ինքնապաշտպանության մասին խոսք լինել չէր կարող[2]:

Բանտերը լցված էին հարյուրավոր անմեղ մարդկանցով:

Զրկված լինելով իրենց աննկուն պաշտպանի հովանավորությունից՝ Դուրան-Բարձրավանդակից և Մշո դաշտից 50 հազար մարդ դիմեց Կ.Պոլսի ռուսական դեսպանին և ռուս հյուպատոսներին՝ Ռուսաստան գաղթելու համար[3]:

Մայր առած կողոպուտների և սպանությունների առթիվ Կ.Պոլիս հղվեցին բողոքի հեռագրեր, որոնցում նկարագրվում էին գործած չարագործությունները և կառավարությունից խնդրվում էր միջամտություն:

Այդ բողոքները ջրելու նպատակով Մուշի մյութեսարեֆի հրամանով տեղի առաջնորդական տեղապահ Էլլիտիրլիյան Կորյուն վարդապետը և Ղևոնդ քահանան ներկայանում են նրան: Մյութեսարրֆը նրանց առաջարկում է Պոլիս ուղարկելու համար ստորագրել իր կողմից նախապես պատրաստած հեռագրի հետևյալ տեքստը.

«Քանի-քանի տարիներ ի վեր կայսերական գավառների խաղաղությունը վրդովող, հայ երկրագործ ժողովուրդը կեղեքող ու սպանող, միամիտ ժողովրդին ռուսահպատակության հրավիրող և ստիպող, հայ աղջիկներին առևանգող, ժողովրդին Ամերիկա գաղթելու միակ պատճառ հանդիսացող Գևորգ Չաուշ ասված ավազակին ու իր ընկերների կյանքը ջնջված լինելով, կայսերական գավառները, սուլթանի խաղաղասեր ու հայրական խնամքի ներքո սկսել են բարվոք կացության վերադառնալ: Վաճառականությունը և երկրագործությունը նախանձելի վիճակում են: Հայ ժողովուրդը հոժարակամ աղոթում է օսմանյան քաջարի զորքերին արևշատություն, որ շատ իմաստուն և խելացի կերպով, առանց որևէ մեկի կյանքին, ունեցվածքին և ստացվածքին մնաս հասցնելու, միայն փութացին աշխարհից վերացնելու ավազակների կյանքը...»[4]:

Երբ մյութեսարրֆը կարդում է հեռագրի տեքստը և առաջնորդական փոխանորդին մեկնելով առաջարկում ստորագրել, սա գրպանից անմիջապես

[1] «Դրոշակ», N 6-7(183-184), հունիս-հուլիս, 1907, էջ 116:
[2] Նույն տեղում:
[3] «Հայրենիք» (Բոստոն), N 33 (423), 17 օգոստոսի 1907թ.:
[4] «Դրոշակ», N 10 (187), հոկտեմբեր, 1907, էջ 145:

հանում է կնիքը և կնքում տեքստը:

Շուտով Մուշի հայերին հայտնի է դառնում հոգևորականների ստոր արարքը: Սասնո և Դաշտի կանայք հավաքվելով՝ անեծքի տարափի տակ են առնում վարդապետին, ապա հարձակվում են նրա վրա և վռնդում առաջնորդարանից: Սա ապաստանում է որբանոցում և այնտեղ մնում մի քանի օր, մինչև որ Բաղեշի կուսակալի հավանությամբ նրան Կարին փոխադրելու հրաման է տրվում:

Գևորգ Չաուշի նահատակությունից հետո Դուրան-Բարձրավանդակում ֆիդայական խմբերի ղեկավարներ էին մնացել երկու հոգի՝ Սոլուվի կռվից կենդանի մնացած ամենահին ու փորձված հայդուկը՝ Սպաղանաց քաջ Տոնո Մակարը և Ռուբեն (Մինաս) Տեր-Մինասյանը: Իրադարձությունների բերումով Ռուբենը դարձել էր նաև Տարոնի հեղափոխականների փաստացի ղեկավարը:

ՎԵՐՋԻՆ ԿՌԻՎԸ

Գևորգ Չաուշի մահից երեք ամիս անց տեղի է ունենում Փեթարի կռիվը: Դա ոչ միայն Դուրան-Բարձրավանդակի, այլև ամբողջ Արևմտահայաստանի վերջին ֆիդայական կռիվն էր:

Հուլիսի վերջին Ռուբենը լուր էր ստացել, որ Մշո Նոր Նահանգապետը, մի արյունարբու հրեշ, հրաման է արձակել «գետնի տակից էլ լինի» գտնել և իրեն հանձնել Գևորգի կնոջը՝ Եղսային, ու նրա մեկ տարեկան ծծկեր երեխային՝ Վարդգեսին: Նահանգապետը նաև կարգադրել էր բնաջնջել այն գյուղը, որի բնակիչները փորձ կանեին թաքցնել Գևորգի կնոջն ու երեխային: Ահաբեկված այդ կարգադրությունից՝ գյուղացիները հրաժարվում էին նրանց ապաստան տալ: Այնուամենայնիվ, Փեթար գյուղի բնակիչները մահվան սպառնալիքի տակ ընդունել ու թաքցրել էին Եղսային ու իր որդուն:

Իմանալով Գևորգ Չաուշի կնոջ ու մանչուկի տեղը՝ Ռուբեն Տեր-Մինասյանը որոշել էր ֆիդայիների խմբով գնալ Փեթար և նրանց ապահով տեղ տանել: Տոնո Մակարը ընդդիմացել էր, ասելով. «Դուն մեր ազգապետն ես ներկայիս, Տոնո Մակարը ընդդիմացել էր, ասելով. «Դուն մեր ազգապետն ես ներկայիս, պէտք է հոս մնաս. ե՛ս պիտի երթամ փրկելու Եղսոն ու Վարդգէսը. եթէ սպանուիմ, արդէն ծեր եմ. դուն կը մնաս ղեկավար կազմակերպութեան»[1]:

Խմբի ղեկավարությունը ստանձնել էր Մակարը: Ֆիդայիները ճամփա էին ելել և ամբողջ գիշերը քայլելով ու ճեղքելով Սասնո լեռները, անցնելով Շենը-քը, լուսադեմին կանգնել էին Փեթարի գլխին: Ծերունի Մակարը անչափ հոգնել էր ու այլևս ի վիճակի չէր եղել քայլել: Ֆիդայիները նրա հետ իջել էին գյուղ, որպեսզի ցերեկն այնտեղ հանգստանան, իսկ գիշերը հեռանան՝ իրենց հետ տանելով Եղսային ու նրա որդուն:

Տեղեկացած լինելով ֆիդայիների գյուղ մուտք գործելու մասին՝ օսմանյան

[1] **Անդրանիկ Զելեպեան**, Յեղափոխական դէմքեր, Միչիկըն (ԱՄՆ), 1991, էջ 301:

զորամասերը մի քանի հարյուր քրդերի հետ գիշերը պաշարել էին գյուղը: Մակարը հայդուկներին հրամայել էր բարձրանալ լեռը: Սրանցից ոմանք մտածել էին իրենց ձեռքով սպանել Եղսային, որպեսզի թշնամու բաժին չդառնա և չարատավորվի Չաուշի պատիվը, իսկ որդուն հանձնել գյուղացիներից մեկին: Մակարը հայդուկ Առզանց Տիգրանին պատվիրել էր. «Վարդգէսը թող գիւղացիներուն մէջ. ճիժ է, գուցէ փրկուի: Եղսոն նամուս է. պէտք չէ թշնամիին ձեռքը անցնի. զարկ և մեզի հասիր»[1]:

Ֆիդայիները մագլցել էին լեռը, որը շրջապատվել էր, և սկսվել էր կատաղի կռիվ: Երկու տասնյակ քաջերի դիմաց՝ հազարավոր թուրքեր ու քրդեր: Մոտենում էին հակառակորդի նորանոր զորամասեր: Վերջապես մահապարտների ուժերն ու փամփուշտներն սպառվեցին: Պետք էր մի կերպ ճեղքել ու շտապ հեռանալ: Ծերունի Մակարը, սակայն, ուժ չէր ունեցել ոտքերը շարժելու: Ուստի նա, ֆիդայիներին դիմելով, խնդրել էր, որ իրեն սպանեն՝ թշնամու ձեռքը չընկնելու համար: Բայց հայդուկները հրաժարվել էին կատարել նրա խնդրանքը:

Մակարը մեն-մենակ էր եղել, երբ նրա վրա էր հարձակվել թուրքական մի ջոկատ: Քաջ ֆիդային կռվի մեջ էր մտել, գնդակներով գլորել մի քանիսին, բայց ինքն էլ գնդակից ծանր վերք էր ստացել: Երբ մութն ընկել էր, չենքքցի խիզախ մարտիկ Մանուկին թիկնած՝ վիրավոր Տոնո Մակարը հասել էր խոշկանցի քրդերի մոտակա Հասան գյուղը: Խոշկանցիների աշիրեթապետը Մակարի հին «բարեկամ» Ռըզգո աղան էր: Հույս ունենալով, թե «բարեկամ» քրդերն իրեն կպահեն ու կբուժեն, Մակարը մտել էր վրանը և Մանուկին խընդրել հեռանալ ու ազատվել:

Եվ ահա վրանում ծավալվել էր հային բաժին ընկած անթիվ դրամաներից մեկը: Մանուկը դեռ նոր էր հեռացել, երբ քրդերից մեկը կացնի հարված էր իջեցրել Մակարի գլխին: Արյունաշաղախ հայդուկը հավաքել էր վերջին ուժերը և, քաշելով տասնոցը, սպանել էր երեք և վիրավորել երկու քուրդ: Երբ սպառվել էին փամփուշտները, քրդերը նետվել էին ծերունու վրա և դաշույններով ու տապարներով սպանել նրան:

«Ռազմիկ» թերթը Քաջ Տոնո Մակարի նահատակության մասին գրում էր. «...Գերեզմանը Մակարին և գերեզմանները բոլոր անոնց, որ մութին մեջ մեռան, որ արու մահուան մոլուցքը ըմպեցին, մեր երկունքին սկզբնական տագնապներն են, որոնք ա՛լ աւելի զորեղ ինքնավստահությամբ մը կը սպառազինեն մեզ, որոնք ա՛լ ավելի հուր կը տեղան մեր ռազմիկ երակներուն մեջ, ու ա՛լ ավելի կը խտացնեն շարքը բոլոր դժգոհներուն եւ բոլոր բարձր հոգիներուն»[2]:

Մակարի նահատակության պահին Փեթարում Առզանց Տիգրանը Գևորգ Չաուշի մանուկին հանձնել էր մի պառավ կնոջ՝ նրան պատվիրելով երեխային

[1] **Անդրանիկ Զելեպեան**, Յեղափոխական դէմքեր, Միչիկըն (ԱՄՆ), 1991, էջ 302:
[2] **«Ռազմիկ»**, N 191, 6 հոկտեմբերի 1907թ.:

փախցնել ու ազատել Թշնամուց: Ապա փորձել էր սպանել Եղսոյին, բայց ընկրկել էր նրա պաղատանքի առջև: Գիշերը նրանք կարողացել էին փախչել Դաշտ:

Այստեղ մորը միացել էր փրկված երեխան, ու ֆիդայիները նրանց տարել էին Վան*:

Սպաղանաց Մակարի դիակը զորքը հասցրել էր Մուշ, որտեղ ցուցադրել էին ժողովրդին, ապա հանձնել Մուշի հայոց առաջնորդին, որը եկեղեցական ծեսով կազմակերպել էր հերոսի հուղարկավորությունը Ջիգրաշենի գերեզմանոցում:

Անդրանիկը շատ ծանր տարավ նաև Մակարի մահը: Որքա՜ն վտանգներ էին նրանք տեսել միասին, քանի՜-քանի անգամ էին նայել մահվան աչքերին: Այս հաղթանդամ ու անսահման բարի հոգու տեր հայդուկն ասես առասպելական Տորք Անգեղն էր՝ կերտված Սասնո ժայռերից: Հիմա Անդրանիկը ցավով ու կսկիծով էր տանում նրա վախճանը:

Գևորգ Ջաուշն ու Սպաղանաց Տոնո Մակարը Երկրում գտնվող վերջին մեծ հայդուկներն էին: Նրանց մահով փաստորեն փակվել սկսեց հայ ժողովրդի ազատագրական պայքարի պանծալի էջը: Հայդուկային շարժումն արագորեն անկում գնաց: Մնալով առանց արժանի առաջնորդների՝ ֆիդայական խմբերը սկսեցին ցրվել:

1908թ. գարնանը Կորյունը Կովկասից վերադառնում է Տարոն: Գևորգը չկար, նաև նահատակված էին նրա զինակիցներից շատերը, իսկ կենդանի մնացած ֆիդայիները հետապնդումներից խուսափելով՝ ապրում էին թաքստոցներում, մինչև որ մի քանի ամիս հետո տեղի ունեցավ օսմանյան հեղափոխությունը: Երիտթուրքերի կողմից սահմանադրական կարգեր ազդարարելուց հետո հայդուկներից ոմանք վերադարձան շինականի իրենց կյանքին, ուրիշները՝ հեռանալով հարազատ եզերքներից, հաստատվեցին քաղաքներում, շատերը էլ անցան արտասահման: Նրանցից քչերը միայն, որոնք չհավատացին օսմանյան հեղափոխության լոզունգներին և երիտթուրքերի կեղծավոր խոստումներին, զենքը ցած չդրին: Հաստատ մնալով իրենց տեսակետներին, նրանք շարունակում էին ցինված սպասել դեպքերի հետագա զարգացմանը:

* Գևորգ Ջաուշի կնոջն ու զավակին մի կարճ ժամանակ Վանում պահելուց հետո, Վանի շրջանի հայոց փաստացի ղեկավար Արամ Մանուկյանը նրանց Պարսկաստանով ուղարկեց Կովկաս: Ճանապարհին զավակը ցրտահար մեռնում է , իսկ Եղսոն հասնում է Կովկաս և հանձնվում Հ.Յ.դաշնակցության բյուրոյի հոգատարությանը: Օսմանյան հեղափոխությունից հետո նա վերադառնում է Երկիր: Իր հայրական գյուղում Հեղինում էր, երբ սկսվեց 1915-ի եղեռնը: Սասնո ժողովրդի կոտորածի ու աքսորի օրերին Եղսոն առևանգվեց մի քրդի կողմից, և նրա մասին այլևս ոչինչ չիմացվեց (**Մ. Վարանդեան**, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Ա, Փարիզ, 1932, էջ 237):

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Ինչպես ֆրանսիական մեծ հեղափոխությունը ժամանակին ալեկոծեց Եվրոպան և մայրցամաքում սկիզբ դրեց արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների արմատական հեղաբեկումների, այնպես էլ 1905-1907 թթ. ռուսական մեծ հեղափոխությունը հզոր ալիքներով դուրս եկավ կայսրության սահմաններից, տարածվեց ու արձագանք գտավ մերձավոր ու հեռու շատ երկրներում, ցնցեց դրանց պետական, հասարակական-քաղաքական կյանքը, դարձավ արմատական վերափոխումների հզոր ազդակ:

Պետք է նկատել, որ Ռուսաստանին վիճակված էր համարյա նույն դերը կատարել Մերձավոր արևելքի ճակատագրում, ինչ որ 1789-ի և 1848-ի Ֆրանսիան՝ եվրոպական մայրցամաքում:

Անշուշտ, տարբերությունը շատ մեծ էր մահմեդական արևելքի և եվրոպական մայրցամաքի միջև: Ամենամեծը թերևս այն էր, որ մահմեդական աշխարհը հուսահատեցուցիչ դանդաղկոտությամբ էր մարսում նորագույն գաղափարները:

Տարբեր երկրներում սոցիալիստները ռուսական հեղափոխության հետ էին կապում մասնավոր սեփականության ոչնչացումը և հանրային սեփականության հաստատումը: Անիշխանականները դրա մեջ գտնում էին պետության ոչնչացման և դաշնակցային ազատ համայնքների ու մանր, անկախ հասարակությունների սկզբնավորման հնարավորությունը: Լիբերալներն այդ հեղափոխության մեջ տեսնում էին պառլամենտական կարգերի հետագա կատարելագործման ու բարելավման հեռանկարը: Միապետական երկրների առաջադիմական ուժերը համոզված էին, որ այն նպաստելու է սահմանադրական կարգերի հաստատմանը: Գաղութային և կիսագաղութային երկրներում մտածում էին, որ այն հզոր ազդակ է լինելու օտարերկրյա տիրապետությունից ազատագրվելու համար:

Ռուսական հեղափոխության ազդեցության տակ բանվորական ցույցերի ու գործադուլների ալիքը տարածվեց ամբողջ Եվրոպայով:

1905թ. «Արյունոտ կիրակի»-ից հետո զանգվածային ցույցերի դուրս եկան Ռուրի, Բավարիայի, Վյուրտեմբերգի, Սաքսոնիայի, Համբուրգի, Բեռլինի բանվորները: Նույն թվականի ամռանը «Պոտյոմկին» զրահանավի նավաստիների

ապստամբությանը արձագանքեցին գերմանացի ծովայինները: «Ֆրաուենլանդ» հածանավի նավաստիները հրաժարվեցին ենթարկվել հրամանատարներին և բարձրացրին կարմիր դրոշ:

Դասակարգային պայքարն աննախընթաց սրվեց Ավստրո-Հունգարիայում: Երկրի տարբեր քաղաքներում բազմամարդ միտինգներում բանաձևեր էին ընդունվում ի պաշտպանություն ռուսաստանյան մաքառող պրոլետարիատի:

Ազատության համար պայքարի ելած բանվորների ու գյուղացիների նկատմամբ ցարական դաժանություններին ի պատասխան ֆրանսիական աշխատավորները կառավարությունից պահանջեցին խզել հարաբերությունները ռուսական կառավարության հետ: Ի նշան Ռուսաստանի հերոսական պրոլետարիատի հետ համերաշխության՝ գործադուլներ և ցույցեր տեղի ունեցան բազմաթիվ քաղաքներում: 1906թ. մայիսմեկյան հզոր ցույցի ընթացքում Փարիզի բանվորները, ռուսաստանյան բանվոր դասակարգի օրինակով, կառավարությանը ներկայացրին արմատական քաղաքական պահանջներ:

Ռուսական մեծ հեղափոխությունը ողջունեցին և ցարական բռնակալական լուծը տապալելու ելած բանվորներին ու գյուղացիներին միտինգներով ու բողոքներով իրենց համերաշխությունը հայտնեցին Անգլիայի, Իսպանիայի, Բելգիայի, Իտալիայի, Հոլանդիայի, Բուլղարիայի, Ռումինիայի և եվրոպական այլ երկրների աշխատավորները:

Հեղափոխությունը հսկայական նշանակություն ունեցավ Ասիայի ժողովուրդների կյանքում: Դա հզոր ազդակ էր ֆեոդալական կապանքներից և օտար հարստահարիչների ճնշումից ազատագրվելու համար: Դեմոկրատական հեղափոխություն տեղի ունեցավ Եգիպտոսում, դեմոկրատական շարժումներ Չինաստանում, ազգային ազատագրական ապստամբություններ՝ օսմանյան կայսրության արաբական պրովինցիաներում, հակագաղութատիրական զանգվածային ընդվզումներ՝ Եգիպտոսում, Հնդկաստանում, Ինդոնեզիայում, Կորեայում և այլուր:

Ռուսական հեղափոխությունը անմիջական ազդեցություն ունեցավ Կովկասյան փոխարքայությանը սահմանակից երկու երկրների՝ Պարսկաստանի և Թուրքիայի ներքին կյանքի վրա: Ժամանակագրական առումով Ասիայում առաջինն արձագանքեցին Պարսկաստանի դեմոկրատական ուժերը՝ ծնունդ տալով հակամիապետական, հակաիմպերիալիստական հեղափոխությանը:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Դարեր ի վեր Պարսկաստանում կողք կողքի ապրել են տարբեր լեզու ու մշակույթ ունեցող, տարբեր կրոններ դավանող բազմաթիվ ժողովուրդներ: Պարսկաստանը հարազատ է եղել նաև հայերի համար: Նրանք այդ երկրի օրինապահ քաղաքացիներն են եղել, նպաստել են նրա տնտեսության, առևտրի ու

արհեստների զարգացմանը, եվրոպական լուսավորության տարածմանը: Իրանի շահնշահերը բարձր էին գնահատում իրենց երկրում ապրող հայերի մատուցած ծառայությունները, իրենց բարձր հովանավորությամբ ապահովում էին նրանց անվտանգությունը, չէին արգելակում ազգային լեզվի գործածությունը և կրթությունը, դավանաբանական խնդիրները լուծում էին լայնախոհությամբ և ըմբռնումով:

Պարսկահայերը կուլտուրապես գտնվում էին կովկասահայերի անմիջական ազդեցության տակ, իսկ Պարսկահայքը քաղաքակրթական տեսակետով, ըստ էության, կովկասահայկական գավառ էր: Ուսուցիչները շարունակ գալիս էին Կովկասից, գործիչները, առաջնորդները, փոխանորդները՝ նույնպես: Հիմնականում Կովկասից էին ստացվում թերթերն ու գրքերը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԱԳՈՒՄԸ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ: ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Դարավոր խավարի ու տգիտության մեջ խորասուզված Պարսկաստանը ասիական բռնապետության տիպիկ օրինակ էր՝ տիրակալների անվերահսկելի ու սանձարձակ իշխանությամբ: 20-րդ դար թևակոխած Պարսկաստանն իր 10 միլիոն բնակչությամբ շարունակում էր ապրել ֆեոդալական միջնադարի օրենքներով: Աշխատավոր ժողովուրդը, անմռունչ ու անձայն, տվայտում էր մեծ ու փոքր ձրիակեր հարստահարիչների՝ տգետ ու մոլեռանդ իսլամ կղերի, խաների, միրզաների, կալվածատերերի, ամեն տեսակ ընչաքաղց պաշտոնյաների ձեռքին: Ժողովրդական անծայր աղքատության ու թշվառության կողքին ցոփ ու շվայտ կյանք էին վարում հասարակության վերնախավը կազմող անհագ տզրուկները[1]:

Արտադրողական ուժերի խոր անկումը զուգակցվել էր վարչական մեքենայի անզորությանը, և երկիրը մատնվել էր անիշխանության ու քաոսի: Երբեմնի հզոր Իրանն իր արիացի ժողովրդով շղթայակապ ընկել ու հոգեվարք էր ապրում:

Շուրջ 25 տարի թագավորած **Նասր էդ Դին** շահն (1848-1896) իր հաստատակամությամբ, այնուամենայնիվ, կարողացել էր ինչ-որ չափով դանդաղեցնել երկրի տնտեսական անկումը, բայց պատմական ժամանակաշրջանը Պարսկաստանի թե՛ ղեկավար շրջանների և թե՛ ժողովրդի առջև դրել էր սպառնական դիլեմաներ, որոնք պատասխանների էին սպասում:

Կյանքն առաջադրել էր այնպիսի արմատական խնդիրներ, որոնք վերաբերում էին և՛ պետական կազմին, և՛ քաղաքական ու ֆինանսական վիճակին,

[1] Տե՛ս «Հոսանք» (Թիֆլիս), N 51, 1 փետրվարի 1907թ., N 64, 17 փետրվարի 1907թ.:

և՛ երկրի անվտանգության հարցին: Երկրում ամբարված էին բազում կարիքների ու պահանջների զսպված սաղմեր, որոնք անխուսափելիորեն պետք է զարգանային և հանդես գային ուժգին արտահայտությամբ՝ հենց որ պայմանները դրա համար նպաստավոր դառնային:

Ազատագրական շարժման առաջին նշաններն ի հայտ եկան դեռևս 1899 թվականից: Գոյություն ունեցող օրենքներից դժգոհ ժողովուրդը շահ Նասր էդ Դինից սկսեց պահանջել օրենքների վերաքննում: Երկրում բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտության մասին առաջին անգամ սկսեցին խոսել նաև մի քանի պետական անձինք:

Իրանի հետամնաց կացության մեջ էական նշանակություն ունեցավ քաղաքական երկու գործիչների պաշտոնավարությունը Նասր էդ Դին շահի պալատումսաղրազամ (վարչապետ) Ամինը-Դովլեն և հայազգի Մելքոն խանը: Վերջինս շահի անձնական քարտուղարն էր, թարգմանիչը, նաև՝ խորհրդականը: Զանազան ռափթներով նրանք փորձում էին ազդել շահի քաղաքական հայացքների վրա և նրան դրդել որոշ բարեփոխումների[1]:

Նասր էդ Դին շահն այլ կարծիքի էր, այն է՝ տնտեսական ու ֆինանսական ծանր ճգնաժամ ապրող Պարսկաստանը կարող է ուղղակի փլուզվել, եթե բարենորոգումները տանեն դեպի կենտրոնական իշխանության հետագա թուլացման:

Բայց սաղրազամն ու շահի խորհրդականը համառ էին: Սրանց ներշնչմամբ շահը մի շարք ուղևորություններ կատարեց Եվրոպա (1873, 1878, 1889 թթ.)[2], ուր ականատես եղավ նախանձելի կարգ ու սարքի, լուսավորության ու քաղաքակրթության բարձր աստիճանի և, վերադառնալով երկիր, տրամադրվեց որոշ բարեփոխումներ կատարել[3]: Դրան նպաստում էր հաջորդ սաղրազամը՝ վարչակառավարման մեծ փորձ ունեցող, հմուտ դիվանագետ Աթաբեկ Ազամը (Ամին էս Սոլթանն):

Այդ ուղևորությունները իրենց շռայլություններով անչափ ծանր էին նստում երկրի առանց այն էլ աղքատ բյուջեի վրա: Առաջին անգամ Նասր էդ Դինը Եվրոպա էր մեկնել մի հսկա շքախմբով: Միայն Վիեննայում նա մնացել էր մի քանի ամիս: Այդ պահից սկսվել էին ղաջարների թագավորական ընտանիքի անդամների անթիվ ճանապարհորդությունները Եվրոպա: Նրանց ֆինանսավորման համար երկրի ներքին ռեսուրսներն այլևս չէին բավականացնում[4]:

1896թ. մայիսի 1-ին ահաբեկչի գնդակից զոհվում է Նասր էդ Դին շահը, և գահ է բարձրանում նրա որդին՝ **Մուզաֆֆեր էդ Դինը**: Սրա գահակալության

[1] Տե՛ս Ե. Էլմար, Եփրեմ, Թեհրան, 1964, էջ 14-15:
[2] Տե՛ս "**История Ирана**", изд. Московского университета, Москва, 1977, էջ 263:
[3] Տե՛ս Ե. Էլմար, Եփրեմ, էջ 15:
[4] Տե՛ս З. А. **Арабаджян**, Иран. Власть, реформы, революции (XIX-XX в.в.), изд."Наука", Москва, 1991, էջ 30:

տարիները եղան տնտեսական և պետական քայքայման ժամանակաշրջան[1]:

Զուրկ լինելով իր հոր կազմակերպչական ունակությունները, նոր շահը միաժամանակ բնավորությամբ չափից ավելի մեղմ էր, զիջող: Դրան ավելանում էր նրա առողջական ոչ բարվոք վիճակը: Քայքայված առողջությունը վերականգնելու համար գահակալության 12 տարիներին իր հոր օրինակով նա երեք անգամ բազմամարդ շքախմբով գնացել էր Եվրոպա և ամեն անգամ մնացել ամիսներ շարունակ: Միայն այդ ճանապարհորդությունները պետական գանձարանից կլանել էին 36 միլիոն ռուբլի[2]:

Իր գահակալության առաջին իսկ ամիսներից Մուզաֆֆեր էդ Դինն ընկավ տգետ և ընչաքաղց կամարիլիայի ձեռքը, որը, գլխավորապես բաղկացած լինելով Թավրիզի թուրքերից, ի չարն էր գործ դնում բարի ու զիջող շահի վստահությունը:

Երկիրը մնացել էր կաշառակեր պաշտոնյաների ձեռքին[3]: Օրինակ՝ մայրաքաղաք Թեհրանում պրինց Էյն ուդ Դովլեն միայն քաղաքի սպանդանոցներից օրական վերցնում էր 1000 թուման կաշառք[4]: Շահական պալատում անձնական կրքեր էին բորբոքվում, նախարարները հին հաշիվներ էին մաքրում իրարից: Նահանգապետերը ռափթը բաց չէին թողնում ընդգծելու իրենց ինքնուրույնությունը: Օրինակ՝ պրինց Զիլլի էս Սալթանեին, որը 40 տարի Սպահանի փոխարքան էր և ուներ 2000 գյուղ, իրեն լիովին անկախ էր զգում Թեհրանից[5]: Իրենց այդպես էին պահում նաև ուրիշ խոշոր պաշտոնյա -հողատերեր[6]:

Անդրադառնալով այդ վիճակին՝ «Շեփոր» թերթը գրում էր. «Պետության կառավարիչները՝ մինիստրները, նահանգապետերը և մյուս բարձրաստիճան պաշտոնյաները, առանց բացառության, անկիրթ ու տգետ անհատներ են, որոնք միայն զբաղված են զանազան գործարքներով, պաշտոններ գնելով ու վաճառելով: Նրանք ավելի շատ մտահոգված են ոչ թե տերության բարեկարգման, այլ նրանով, թե ինչպես ավելի շատ լցնեն գրպանները»[7]:

Անտանելի վիճակ էր հատկապես Ատրպատականում, որի կառավարիչն էր փոխարքա Մուհամմեդ Ալի Միրզան (Մամեդալի)*: Միաբանվելով անխիղճ

[1] Տե՛ս **Н. М. Лавров**, Турция и Иран в 1870-1918 годах, Москва, 1950, էջ 33:
[2] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237[6], վավ. 323, թ. 19:
[3] Իրանի պետական ապարատի կաշառվածության, նահանգապետերի և մյուս պաշտոնյաների անհագ փողամոլության մասին տե՛ս"Последнее политическое движение в Персии (по персидским газетам)", вып. 2, СПБ, 1907, էջ 49-50:
[4] Տե՛ս **Л. М. Лавров**, Турция и Иран в 1870-1918 годах, стр. 36.
[5] Տե՛ս **Атрпет, Мамед-Али шах**. Современная Персия, Александрополь, 1909, էջ 90:
[6] Տե՛ս **Н. М. Лавров**, Турция и Иран в 1870-1918 годах, էջ 31:
[7] **«Շեփոր»**, N 4, 31 օգոստոսի 1908թ.:
* Սովորույթի համաձայն, պարսից գահաժառանգը, մինչև գահին նստելը, նշանակվում էր Իրանի ամենամեծ, 9 մարզից բաղկացած, և ամենահարուստ նահանգի՝ Ատրպատականի փոխարքա (տե՛ս Атрпет, Мамед-Али шах. Народное движение в крае Льва и Солнца, Александрополь, Типография скоропечатия "Ширак", 1909, էջ 3n 26): Մամեդ Ալի Միրզան Ատրպատականի փոխարքա էր նշանակվել 1896թ. և նույն թվականի աշնանը

վաշխառուների, տգրուկ ու կեղեքիչ կալվածատերերի հետ՝ նա գյուղացիներից բռնագրավում էր հացահատիկը, հավաքում անհամար շտեմարաններում, ապա աշնան վերջերից սկսած սարսափելի թանկ գներով վաճառքի էր հանում քաղցած ժողովրդին[1]: Այդպիսով, մարդկանց դառը քրտինքով վաստակած կոպեկները հավաքելով՝ թագաժառանգը միլիոններ էր դիզում: Խավար ու խեղճ ժողովուրդը ստիպված էր մաքառել սովի դեմ, թեև այլևս անզոր էր դիմադրելու բռնակալի անողոք հարվածին[2]:

Սադրազամ Աթաբեկը մի քանի փորձ արեց սանձահարելու առավել գիշատիչ կաշառակերներից ոմանց, բայց մատնվեց կատարյալ անհաջողության, քանի որ ինքն էլ մեծ կաշառակեր էր. բոլորին հայտնի էր, որ նա օրական միջինը վերցնում էր 8 հազար թուման՝ գլխավորապես Թեհրանի առևտրականներից[3]: Կաշառք էր վերցնում այն դեպքում, երբ նրան էին պատկանում 1200 գյուղի հողերը[4]: Բանը վերջացավ նրանով, որ, ենթարկվելով բյուրոկրատիայի ճնշմանը, Մուզաֆֆեր էդ Դին շահը պաշտոնից հեռացրեց Աթաբեկին, որը, թողնելով երկիրը, հեռացավ Եվրոպա:

Մեծ վեզիր նշանակվեց հիշատակված Էյն էդ Դովլեն: Սա կրթություն էր ստացել եվրոպական համալսարաններում, միաժամանակ ուժեղ անհատականություն էր: Նա Աթաբեկից հետո երկրորդ ազդեցիկ պետական անձն էր և հայտնի էր որպես երկրի գործերին օտար միջամտությունների հետևողական հակառակորդ:

Նոր սադրազամի պաշտոնավարության առաջին ամիսներին իսկ բյուրոկրատիան տեսավ, որ նրա ազատական գաղափարները կարող են երկիրը հրել բարեփոխումների ճանապարհ և դրանով իսկ անբուժելի մնաս հասցնել իր շահերին: Սակայն Էյն էդ Դովլեն այն մարդը չէր, որ անցներ ժողովրդի կողմը և դեմ գնար իր դասակարգի շահերին:

Այդ ամենը համընկավ ռուս-ճապոնական պատերազմին և Ռուսաստանի ազատագրական շարժմանը, որն իր զորեղ ազդեցության մեջ էր առել նաև Պարսկաստանը: Այս պայմաններում ոչ շահ Մուզաֆֆեր էդ Դինը, ոչ նրա պետական պաշտոնեությունը այլևս ի վիճակի չէին երկիրը կառավարել նախկինի պես:

Ճիշտ է, պետական պաշտոնյաների կազմում կային ազնիվ մարդիկ, նույնիսկ կրթված ու քաղաքագետ անձնավորություններ, որոնք զգալով երկրի մոտալուտ անկումը, աշխատում էին աղետի առաջն առնել, բայց նմանները քիչ ազդեցություն ունեին և չէին կարողանում դարման անել քայքայվող

մեկնել էր իր նստավայրը՝ Թավրիզ (նույն տեղում, էջ 25):

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237ᵉ, վավ. 323, թ. 20:

[2] Տե՛ս Н. М. Лавров, Турция и Иран в 1870-1918 годах, стр. 38.

[3] Տե՛ս "Последнее политическое движение в Персии", СПБ, 1906, вып. 1, էջ 5:

[4] Տե՛ս Н. М. Лавров, Турция и Иран в 1870-1918 годах, էջ 31:

հայրենիքին[1]:

Կարելի է ասել, որ 1905թ. Պարսկաստանը թեև ուներ շահ, ուներ կարծես թե նաև կառավարություն, բայց մնացել էր առանց զորքի, առանց զենքի ու ռազմամթերքի, առանց կարգ ու կանոնի և կարգապահության:

Պարսկաստանի այդաստիճան թուլացումը ձեռնտու էր գիշատիչ հզոր պետություններին, որոնք, օգտվելով ստեղծված ծանր ու խառնակ վիճակից, ձգտում էին լիովին գաղութացնել երկիրը և իրենց ձեռքը գցել անբավ հարստությունը:

Պարսկաստանը գաղութացնելու գործում մեծ եռանդ էին դրսևորում հատկապես երկու պետություն՝ Ռուսաստանը և Անգլիան:

Մինչև 20-րդ դարի սկիզբը այդ տեսակետից հաջողակ էր հատկապես Ռուսաստանը:

Մինչև պարսկական հեղափոխական շարժման սկիզբը, Իրանում ռուսական ազդեցությունը մյուս տերությունների համար անմատչելի բարձրության վրա էր: Ռուսաստանի նկատմամբ խորին հարգանքով ու հավատով էին համակված շահը և պալատականները, սադրազամներն իրենց վեզիրներով: Ողջ վերնախավը Ռուսաստանի զորության մեջ էր տեսնում առավել գիշատիչ տերության՝ Անգլիայի ագրեսիվ ոտնձգությունների դեմ հնարավոր պաշտպանությունը, միաժամանակ հուսալով, ներքին խռովություններ առաջանալու դեպքում, նրանից աջակցություն ստանալ գահի դեմ եղած հակառակությունները չեզոքացնելու համար:

Ռուսաստանի նկատմամբ հմայքը խորն էր հատկապես ժողովրդական լայն զանգվածների մեջ: Պարսկաստան, հատկապես նրա հյուսիսային տարածքներ, մտնելու համար ռուսները նույնիսկ կարիք չունեին անձնագիր ունենալ. բավական էր միայն, որ նրանցից ամեն մեկը սահմանային անցակետում տեղեկացներ, թե ինքը «ռուս է», և դա երկիր մտնելու արտոնյալ փաստարկ էր: Եթե Ռուսաստանի նկատմամբ շահի ու կառավարական շրջանների վերաբերմունքը, այնուամենայնիվ, թելադրված էր զանազան հաշիվներով և նույնիսկ երկյուղի ակնածությամբ, ապա Իրանի ժողովրդական լայն զանգվածները ռուսների հանդեպ տածում էին ոչ միայն պարզ համակրանք, այլև անկեղծորեն ուրախ էին նրանց տեսնելու իրենց կողքին:

Միանգամայն պարզ է դառնում, թե ինչու Թեհրանի ռուսաց միսիան բացառիկ ազդեցություն ուներ ոչ միայն պարսից տիրող վերնախավի, այլև ժողովրդական լայն զանգվածների վրա:

Գերազանց տեղեկացված լինելով Ռուսաստանի հանդեպ Իրանի ժողովրդի անվերապահ դրական վերաբերմունքի և դեպի Անգլիան խիստ բացասական տրամադրվածության մասին, Լոնդոնը, այնուամենայնիվ, հույսը չէր կորցնում փոխելու Անգլիայի նկատմամբ պարսից ընդհանուր անցանկալի վերաբեր-

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237ᵉ, վավ. 323, թ.թ. 21-22:

մունքը և դիրքեր նվաճելու Իրանի հողի վրա, թեև նախորդ տասնամյակներին այդ ուղղությամբ կատարած բոլոր փորձերն ավարտվել էին անհաջողությամբ:

Թե՛ իշխանությունները և թե՛ ժողովուրդը միշտ կասկածանքով էին վերաբերվում անգլիացիների ձգտումներին, երկյուղում էին ընկնել նրանց ցանցը, ուստի և առիթը բաց չէին թողնում ոչ միայն մտերմության հակում, այլև նվիրվածություն ցույց տալու դեպի ռուսները:

Այդպիսին էր իրերի դրությունը թե՛ Նասր էդ Դին շահի և թե՛ նրա որդու՝ շահ Մուզաֆֆեր էդ Դինի գահակալության տարիներին:

Առավելապես այս երկու շահերի օրոք Պարսկաստանն ուներ փողի մեծ կարիք: Անգլիական կառավարությունն իր սեփական նախաձեռնությամբ քանիցս Թեհրանին առաջարկել էր փոխառություն տալ, բայց ամեն անգամ մերժվել էին: Դրա փոխարեն փոխառությունների խնդիրը Նասր ու Մուզաֆֆեր շահերը լուծում էին Ռուսաստանում:

Անգլիան նաև քանիցս փորձել էր Թեհրանից իրավունք ստանալ երկաթուղային երթևեկություն զարգացնելու Պարսկաստանում՝ տրամադրելով պահանջվող դրամական միջոցներ և ինժեներատեխնիկական անձնակազմ: Անգլիացիները հատկապես առաջարկում էին երկրի կենտրոնական շրջանները երկաթուղագծերով միացնել հարավի նավահանգիստների հետ: Բայց Լոնդոնից եկած բոլոր այդ առաջարկները նույնպես կտրուկ մերժում էին ստանում: Երկաթուղային կոնցեսիան ի վերջո ստացավ Ռուսաստանը, որը և Պարսկաստանում հիմնեց իր փոխատու բանկը և սկսեց երկաթգծերի շինարարությունը:

Այնպես որ, 20-րդ դարի սկզբին ոչ միայն ցարիզմը ամբողջովին իր ձեռքն էր գցել Պարսկաստանի հյուսիսային շրջանների երկաթուղաշինության կոնցեսիան, վերահսկողություն հաստատել բանկային համակարգի վրա, այլև՝ այդ շրջանների պետական եկամուտների գլխավոր աղբյուրները՝ մաքսային և փոստ-հեռագրական հաստատությունները: Պարսից կառավարությանը բաժին էին ընկնում այդ աղբյուրներից ստացված եկամուտների փշրանքները: Դրանցից ընդամենը 10%-ն էր մտնում պետական գանձարան, մնացած 90%-ը հոսում էր անխիղճ պաշտոնյաների գրպանները[1]:

Բայց ցարիզմը չէր բավարարվում այդ ամենով: Նրա գլխավոր նպատակը Պարսկաստանի զավթումն էր, որը Ռուսաստանին հնարավորություն կտար դուրս գալ Պարսից ծոց, հետևապես՝ Հնդկական օվկիանոս: Դա կնշանակեր նաև վտանգի տակ դնել Մեծ Բրիտանիայի շահերը ոչ միայն Պարսկաստանում, այլև Հնդկաստանում ու ամբողջ Ասիայում: Ահա թե ինչու Անգլիան կենաց և մահու խնդիր էր համարում Պարսկաստանում իր ազդեցության պահպանումը, հետևապես՝ դեպի Հնդկաստան և դեպի ասիական իր մյուս տիրույթները տանող ճանապարհների անվտանգության ապահովումը:

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237[բ], վավ. 323, թ. 19:

Ի վերջո երկու գիշատիչները նախնական համաձայնության էին եկել Պարսկաստանը բաժանել ազդեցության գոտիների՝ հյուսիսը՝ Ռուսաստանին, հարավը՝ Անգլիային: Վերջինս բավարարված էր, քանի որ դեպի Ասիա տանող ճանապարհները մնում էին իր ձեռքում: Ռուսաստանը դժգոհ էր, բայց տվյալ պահին առայժմ ավելին չէր հավակնում, քանի որ հույս ուներ, որ նպաստավոր իրադրության դեպքում ապագայում ի վիճակի կլինի իրականացնելու իր երազանքը:

Պարսկաստանի բաժանումը երկու ազդեցության շրջանների, ի վերջո, պիտի հանգեցներ երկրի անդամահատմանը. Հարավային Պարսկաստանը կմտներ Անգլիայի գաղութային տիրույթների շարքը, իսկ Հյուսիսային Պարսկաստանը կմիացվեր ռուսական կայսրությանը – սա էր ռեալ հեռանկարը:

Այլ խոսքով, հեղափոխության նախօրյակին Իրանը Անգլիայի և Ռուսաստանի կիսագաղութն էր:

Թուլացած ու անտեր երկրի վրա աչք ուներ նաև «հիվանդ մարդը»՝ հարեվան օսմանյան Թուրքիան, որը թեև մի կողմից մտահոգ էր իր եվրոպական և արաբական տիրույթների կորստյան հեռանկարով, բայց միաժամանակ ծրագրեր էր որոճում մի կողմից Ռուսաստանի իսլամ ժողովուրդներին «ազատագրելու» և նրանց հայրենիքները սուլթան-խալիֆի տիրապետությանը ենթարկելու, մյուս կողմից, Պարսկաստանից Ատրպատականը և Թուրքալեզու ուրիշ տարածքներ պոկելու համար:

Կեղեքումների աննախընթաց ծավալները, աղքատությունն ու ստորացումները, երկրի ներքին կյանքին օտար պետությունների անսքող միջամտությունը դժգոհություն առաջ բերեցին ամբողջ երկրով մեկ[1]: Ամեն ինչից երևում էր, որ ուր որ է սկիզբ է առնելու ժողովրդական շարժում Պարսկաստանի քաղաքական կյանքի վրա ճակատագրական հետևանքներով:

Բնականաբար, շահը պետք է ելք փնտրեր ստեղծված վիճակից: Պալատականները և կառավարության անդամները հաճախ էին ունկնդիր լինում միապետի խոսքերին, թե վատ չէր լինի, եթե երկիրը ընդօրինակեր եվրոպական կառավարման ձևեր: Մուզաֆֆեր էդ Դինի այդ խորհրդածությունները շատերի մեջ հույս էր հարուցել, թե հնարավոր է, որ Իրանի միահեծան տերը հրաժարվի ինքնակալական իրավունքների մեծ մասից, քանի որ համոզվել է, որ Պարսկաստանի համար հասել է պառլամենտական կյանքի մեջ մտնելու ժամանակը: Ենթադրվում էր, որ նման զիջումը երկիրը հեռու կպահի հեղափոխության վտանգից, հետևապես՝ այն բուռն ցնցումներից, որոնց ենթակա է լինում ամեն մի երկիր՝ հեղափոխության ժամանակ: Դա հնարավորություն կտար խաղաղ կերպով երկրում մտցնել եվրոպական ռեֆորմներ[2]:

Սակայն ռուսական հեղափոխության ալիքները լայն ծփանքով խուժեցին

[1] Այդ մասին տե՛ս **«Հոսանք»**, N 64, 17 փետրվարի 1907թ.:
[2] Տե՛ս **«Մշակ»**, N 16, 24 հունվարի 1906թ.:

դարերով քնած Պարսկաստանի սահմաններից ներս: Անողոք ժամանակը կատարեց իր դերը:

Առաջինն արթնացավ ի բնե բարի, ուղղախոս, հեզ և բազմադարյան աշխատասեր, համբերող և ուշիմ պարսիկը՝ Ֆարսաստանի, Արաղի, Սեիստանի, Խուզիստանի բնակիչը:

Պարսկաստանի վրա ռուսական հեղափոխության թողած հզոր ազդեցության մի շարք պատճառների թվում առանձնանում էր այն, որ այդ երկրից արտագնա աշխատանքի մեկնած հազարավոր աղքատներ հայրենիք էին վերադառնում արմատական մտքերով:

Մասնավոր սեփականատերերի անսանձ շահագործումը, հարկերը հնչուն դրամով վճարելու պարտադրանքը, կառավարության մեծ ու փոքր ներկայացուցիչների կամայական կեղեքումները, դրանց գումարած՝ մեքենայական արդյունագործության մրցակցության հետևանքով մանր գյուղացիական տնտեսությունների քայքայումը - այդ ամենը արագացնում էին աշխատավոր զանգվածների պրոլետարացման պրոցեսը:

Սեփականազուրկ գյուղացիների մի բավական խոշոր և տարեցտարի աճող մասը, թողնելով տուն, տեղ, ընտանիք, շտապում էր, նախ, Կովկաս, ապա և՝ Ռուսաստան[1]: Միայն Ատրպատականից տարեկան 100 000 մարդ ժամանակավոր արտագնա աշխատանքի էր մեկնում ռուսական կայսրության արդյունաբերական քաղաքները[2]: Կովկասում նրանք հիմնականում աշխատում էին Թիֆլիսի ու Բաթումի գործարաններում, Բաքվի նավթահանքերում: Միայն Բաքվում 1904թ. աշխատում էր 7 հազար իրանցի բանվոր, որը կազմում էր այստեղի ողջ բանվորության 22%-ը[3]: Մեծ թվով իրանցի բանվորներ աշխատում էին Ռուսահայաստանում, մասնավորապես՝ Ղափանի և Ալավերդու պղնձահանքերում: Աշխատանքի եկած իրանցիների թվում կային նաև առևտրականներ և մանր խանութպաններ, որոնք մի քանի տարուց ի վեր աշխատում էին Անդրկովկասում:

Ռուսաստանում և Անդրկովկասում, այդ թվում՝ հակամիապետական ու հակակապիտալիստական պայքարի հարուստ ավանդույթներ ունեցող Ալավերդու և Ղափանի հանքերում ու գործարաններում աշխատող իրանցի բանվորները հնարավորություն էին ունենում շփվելու կազմակերպված պրոլետարիատի հետ, ընկալելու սոցիալ-դեմոկրատիայի լոզունգները, ըմբռնելու դասակարգային կռվի էությունը: Շատ ժամանակ չէր անցնում, որ նրանցից

[1] Տե՛ս «Ձայն», N 2, 8 հոկտեմբերի 1906թ.:

[2] Տե՛ս Н. М. Лавров, Турция и Иран в 1870-1918 годах, էջ 36: Մի այլ աղբյուրի համաձայն՝ Կովկասում և Ռուսաստանում աշխատելու համար Ատրպատականից մեկնում էր 60-70 հազար մշակ (տե՛ս «Կեանք» (Թիֆլիս), N 8, 6 մայիսի 1906թ.):

[3] Տե՛ս М. С. Иванов, Очерк истории Ирана, Госполитиздат, Москва, 1952, էջ 200:

* Պարսկաստանից գաղթած պրոլետարները Կովկասում հայտնի էին համշարի անունով: Նրանց բացարձակ մեծամասնությունը Ատրպատականի թուրքեր էին:

շատերը ոչ միայն մոտիկից ծանոթանային կապիտալի ու աշխատանքի հակամարտություններին, այլև այլադավան բախտակիցների հետ մասնակցեին կապիտալիստական հարստահարման դեմ ուղղված պայքարին:

Պարսկահպատակ պրոլետարները հայրենի օջախի հետ հարաբերությունները ամուր էին պահում: Նրանք իրենց դառը վաստակի մեծ մասը ուղարկում էին հայրենիք, ուր թողել էին կանանց, զավակներին, ծնողներին: Երբեմն-երբեմն նրանք ժամանակավորապես վերադառնում էին իրենց անհայրենիք գյուղերը՝ տեսակցելու յուրայիններին և անձամբ նյութական օժանդակություն բերելու: Արդեն հաղորդակցված կովկասյան հեղափոխական կռվին՝ նրանք իրենց հարազատներին և շրջապատի մարդկանց ծանոթացնում էին նոր մտքերին, տարածում ազատասիրական գաղափարներ, բացատրում, թե Ռուսաստանի աշխատավորները ինչու են կենաց ու մահու կռվի դուրս եկել ցարիզմի ու բուրժուազիայի դեմ և ինչ նպատակներ են հետապնդում, միաժամանակ հանդես էին գալիս որպես շահական ռեժիմի համոզված հակառակորդներ:

Պարսկաստանում սկսված հեղափոխական խմորումների վրա մեծապես ազդեց ռուսական ցարի հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որն ամենուր դիտվում էր իբրև սահմանադրություն: Առաջ եկան արմատական պահանջներ՝ ձեռք բերել ռեֆորմներ, երկրում մտցնել եվրոպական կարգ ու կանոն, սահմանափակել բյուրոկրատիայի, կառավարության և մանավանդ արքունի պալատի կամայականությունները, հասարակ ժողովրդին, հատկապես գյուղացիությանն ազատել դարավոր հարստահարումներից, խաների, հողատերերի և նահանգապետերի ճնշումներից ու կեղեքումներից:

Արդեն 1905թ. դեկտեմբերին Թեհրանի շուրջ 5 հազար բնակիչ բողոքի դուրս եկավ և շահին պահանջ ներկայացրեց երկրում անցկացնել բարենորոգումներ[1]: Ժողովրդական հուզումներն արձագանք գտան Պարսկաստանի ուրիշ խոշոր բնակավայրերում: Միաժամանակ Ատրպատականի քաղաքներում սկսեցին երևան գալ **մուջահեդների** (հեղափոխական արդար գործի մարտիկներ) մասսայական հեղափոխական կազմակերպություններ:

Տարօրինակ էր, բայց իրողություն, որ ռեֆորմների պահանջով հանդես եկավ նաև հոգևորականությունը: Որքան էլ որ նա ֆանատիկ էր, կեղեքիչ, բայց Իրանի պատմության տարբեր փուլերում հանդես էր եկել ժողովրդի պաշտպանությամբ՝ ընդդեմ բռնակալների և անիշխանականության:

Տվյալ ժամանակաշրջանում 1905-1906 թվականներին, Իրանի մուսուլմանական հոգևորականությունը շահական ռեժիմի դեմ ուղղված շարժման գլուխ էր կանգնել հատկապես այն պատճառով, որ նրա տնտեսական և քաղաքական դրությունը խախտվել էր շահի կողմից դատական նոր սիստեմ մտցնելու ջանքերից հետո, որի հետևանքով իրական վտանգ էր առաջացել, որ կտրուկ սահ-

[1] Տե՛ս Г. С. Арутюнян, Иранская революция 1905-1911г.г. и большевики Закавказья, Армгиз, Ереван, 1956, էջ 39:

մանափակվելու են շարիաթական դատարանների լիազորությունները: Նրան մտահոգում էր նաև իրանյան կյանքի և կենցաղի որոշ կողմերի եվրոպականացումը: Հոգևորականությունը հույս ուներ երկրում իր քաղաքական ազդեցությունը ուժեղացնելու միջոցով հասնել դարերով սրբագործված իրավունքների և արտոնությունների վերականգնմանը[1]:

Անդրադառնալով Իրանի մուսուլմանական հոգևորականության «հեղափոխականացման» զարմանալի փաստին, Թիֆլիսում լույս տեսնող անկուսակցական անկախ թերթերից մեկը գրում էր. «Պատմությունը չի հիշում նման գոնե մի քանի դեպք, երբ հոգևորականությունը միացած լիներ ժողովրդին, և ոչ միայն միացած, այլև հանդիսացած լիներ պայքարի ղեկավար: Ընդհակառակը, բոլոր այն տեղերում, ուր ժողովրդական հուզումներ են բռնկվել, հոգևորականությունը միշտ եղել է զորավորների և իշխողների կողքին, միշտ հանդիսացել է նրանց թև ու թիկունքը: Պարսից հոգևորականությունն այս դեպքում մի երջանիկ բացառություն կազմեց: Նա առաջինը գլուխ բարձրացրեց, ժողովրդին պայքարի առաջնորդեց հանուն Մարգարեի, հանուն Շարիաթի, հավասարություն և ազատություն հռչակեց այնտեղ, որտեղ անհիշելի ժամանակներից ի վեր իշխողը բռունցքն էր և տիրող կամքը»[2]:

Եվ ահա այժմ այդ հոգևորականության շարքերում ի հայտ էին եկել զգալի թվով ազատամիտ ու հայրենասեր երիտասարդներ, որոնք եվրոպական լեզուներ իմանալու և եվրոպական թերթեր կարդալու շնորհիվ հաստատապես ըմբռնել էին, թե տվյալ պահին որն է իրենց ազգային պարտքը և պարտականությունը: Նրանք միացան Եվրոպայում կրթություն ստացած և եվրոպական արժեքներին նախանձախնդիր մտավորականներին և համատեղ կանգնեցին երկիրը ստորացուցիչ վիճակից դուրս բերելու համար ծավալվող ժողովրդական շարժման գլուխ:

Երիտասարդ հոգևորականներին հետևեցին նույնիսկ միջին ու բարձր տարիքի պարսիկ հոգևորականներից շատերը, նրանք, ովքեր սովորաբար խեղդում էին ամեն ինքնուրույնություն և անհատական նախաձեռնություն, ճակատագրին էին վերագրում չարն ու բարին, ժողովրդին մրափի մեջ էին պահում դարեր շարունակ: Ահա սրանք նույնպես սկսեցին խոսել ռեֆորմների մասին և այն պահանջել միապետից[3]:

Արդեն երկու-երեք ամիս ի վեր, մի կողմից շահական պալատը և քաղաքական-կրոնական շրջանները, մյուս կողմից մտավորականության զգալի մասը և մուսուլմանական հոգևորականության միջին ու ստորին խավերը բացահայտ կամ խուլ կռվի մեջ էին:

Այդ էտապում Թեհրանում մեծ հռչակ էին ձեռք բերել մուսուլմանական

[1] Տե՛ս Մ. Ս.Иванов, Очерк истории Ирана, էջ 203-204:
[2] «Ուրհանդակ» (Թիֆլիս), N 59, 24 հունվարի 1910թ.:
[3] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237ᵃ, վավ. 323, թ. 18:

մի շարք տաղանդավոր քարոզիչներ, որոնց թվում առանձնանում էր Սեիդ Ջամալ էդ Դին Էսֆահանին: Նրա քարոզներն ուղղված էին և՛ երկիր թափանցող օտար հարստահարիչների, և՛ պարսից շահական ռեժիմի դեմ: Այդ քարոզներն ամեն օր ունկնդրում էին հազարավոր մարդիկ[1]:

Իհարկե, Էսֆահանիի և նրան համախոհ մի քանի ուրիշ բարձրագիրք հոգևորականների քարոզները սվիններով էին ընդունվում պարսիկ և թուրք հոգևորական վերնախավի կողմից: Դա պատահական չէր, քանզի այդ վերնախավի շատ անդամներ ունեին առասպելական հարստություններ և սարսափում էին փողոց դուրս եկած «խուժանից»: Էսֆահանիի կատաղի հակառակորդներից էին, օրինակ, խոշոր հոգևորական գործիչներ, եղբայրներ Միրզա և Ջավիդ Բագիրիները, որոնցից առաջինը սեփականատեր էր 150, իսկ երկրորդը՝ 200 գյուղի[2]:

Այնուամենայնիվ, հոգևորականների քարոզները և մտավորականների տարած եռանդուն աշխատանքն իր արդյունքը տվեց: Պարսկաստանի մայրաքաղաքը սկսեց ծփալ ալեկոծության մեջ: 1905թ. դեկտեմբերի 14-ին հազարավոր ցուցարարներ Թեհրանից ուղևորվեցին մայրաքաղաքից բավական հեռու գտնվող Աբդուլ-Ազիմ մեչեդ՝ ամբողջ ճանապարհին հակակառավարական կոչեր անելով[3]: Հասնելով մեչեդ՝ նրանք նստեցին բեստ*: Արևելյան դարավոր անշարժության սովոր ժողովուրդը «արթնացել էր նիրհից և ձգտում էր ազատվել իրեն կաշկանդող կապանքներից»[4]:

1906թ. սկզբից ազատագրական շարժումը սպառնալից կերպարանք ընդունեց: Էյն էդ Դովլեն փորձեց շարժումը ճնշել Թեհրանում տեղակայված զորքով, բայց դա չհաջողվեց, քանի որ դժգոհությունը համակել էր նաև զորամասերին: 1906թ. հունվարի 12-ին պարսից զորքի առանձին ջոկատներ բացահայտորեն հայտարարեցին, որ եթե հոգևորականության դեմ հանդես գալու որևէ հրաման տրվի, իրենք չեն կատարի[5]:

Այդ պայմաններում շահի պալատը ստիպված գնաց առաջին զիջմանը: Շահը հանդես եկավ հայտարարությամբ՝ խոստանալով հիմնել «ադալյաթխան»-արդարադատության պալատ, որի առջև բոլորը պետք է հավասար լինեն[6]:

1906թ. մարտ-ապրիլ ամիսներին հացի պակասության պատճառով մի քանի քաղաքներում առաջ եկան խլրտումներ և բողոքներ, որոնք, նախ, ուղղվե-

[1] Տե՛ս Р. А. Сеидов, Иранская буржуазия в конце XIX-начале XX века (начальный этап формирования), изд. "Наука", Москва, 1974, էջ 197:
[2] Տե՛ս Н. М. Лавров, Турция и Иран, էջ 31:
[3] Տե՛ս Н. М. Лавров, Турция и Иран, էջ 37:
* Բեստ – Իրանում ընդունված բողոքի ձև, որն արտահայտվում էր նվիրական տեղերում (մեչեդներ, դամբարաններ) կամ օտարերկրյա մեսիաների շենքերում նստելով (նստացույց):
[4] Տե՛ս Ֆ. Էնգելս, Եփրեմ, էջ 37:
[5] Տե՛ս М. С. Иванов, Иранская революция 1905 1911 годов, изд. ИМО, Москва, 1957, էջ 71.
[6] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237ᵃ, վավ. 323, թ. 17:

ցին նահանգապետերի դեմ, ապա, հետզհետե ընդարձակ չափեր ընդունելով, տարածվեցին երկրով մեկ: Աչեկոծվում էին Շիրազը, Իսպահանը, Մեշխեդը և բազմաթիվ այլ քաղաքներ:

Շարժումն առանձնապես զորեղ արտահայտություն գտավ 1906-ի մայիսին: Այդ ամսվա կեսերին Թեհրանում հայտարարվեց բայլվա (գործադուլ), որի ժամանակ փակվեցին բոլոր խանութները, ընդհատվեց աշխատանքային կյանքը քաղաքում: Սկսվեցին մասսայական ցույցերը: Վարչապետ էյն էդ Դովլեն կողմնակից էր հուզումները ճնշել զենքով և այդ նպատակով բազմիցս դիմել էր շահին, իսկ վերջինս որոշակի պատասխան չէր տալիս: Զորքը շարունակ կանգնած էր կառավարության կողմը՝ պատրաստ ճնշելու ընդվզումները: Զինվորականները սկսեցին զենք գործադրել միայն այն ժամանակ, երբ ժողովուրդը, փակվելով մեջիդում, սկսեց քարեր նետել զորքի վրա՝ վիրավորելով նաև զորապետին: Մեջիդի վրա համազարկեր արձակվեցին, որի հետևանքով սպանվեց 2 հոգի: Գազազած ամբոխը, դրան ի պատասխան, դուրս գալով մեջիդից, ավերեց ու կողոպտեց շուկան:

Շարժումը հետզհետե հեղափոխական բնույթ ստացավ: Ցուցարարները պահանջում էին ռեֆորմներ և սաղրազամ էյն էդ Դովլեի պաշտոնաթողությունը: Մուսուլման հոգևորականությունը և մտավորականներն իրենց ըմբոստությունը առաջ տարան մինչև այն աստիճան, որ հուլիսի 19-ին շուրջ 12 հազարանոց պարսիկների մի բազմության գլուխն անցած՝ սկսեցին ապաստան որոնել՝ նստացույց անելու (բեստ մտնելու): Բազմությունն ուղղություն վերցրեց դեպի Թեհրանի ռուսական դեսպանատուն: Դա պատահական չէր, այդպես էլ պետք է լիներ, քանզի, ինչպես արդեն նշվել է, Իրանի ժողովուրդը Ռուսաստանին համարում էր իր բնական դաշնակիցը: Ռուսաստանից պահանջվում էր ընդամենը դիվանագիտական մի փոքր տակտ՝ Պարսկաստանում հաստատած իր գերակշռող դիրքը պահպանելու և ամրապնդելու համար: Բայց ցարական կառավարությունը չկարողացավ այդ տակտը դրսևորել, երբ երկրում բարձրանում էր ժողովրդական շարժումը:

Դեպի ռուսական դեսպանություն գնացող գործադուլավոր բազմությունը մտածում էր այնտեղ գտնել պաշտպանություն ու ապահովություն և այնտեղից շարունակել շահից պահանջել արդարություն ու ազատություն: Ցուցարարները համոզված էին, որ ռուս դեսպանը ուրախությամբ է ընդունելու իրենց, բայց այն, ինչ առաջին պահին տեսան, անհավատալի էր: Դեսպանության դռները ամուր փակված էին: Դա նշանակում էր, որ դեսպանը կտրուկ մերժում է որևէ աջակցություն:

Խորապես զայրացած ու հիասթափված ցուցարարները դիմեցին դեպի իրենց չսիրած երկրի՝ Անգլիայի դեսպանատուն: Վերջինիս համար դա աստվածառաք նվեր էր: Անգլիական դեսպանը ցուցարարներին ընդունեց գրկաբաց, նրանց օթևան տվեց իր ճոխ ապարանքի այգում և հայտարարեց, թե «հյուրերը» կարող են իրենց բոլորովին ապահով զգալ բրիտանական թագի

պաշտպանության ներքո[1]:

Այդ օրն իսկ, ոչ միայն ցուցարարների, այլև Թեհրանի բնակչության լայն խավերում տպավորություն ստեղծվեց, թե անգլիացիները ջերմ կարեկցություն են հանդես բերում իրենց ճակատագրի նկատմամբ[2]:

Շուտով անգլիական դեսպանությունում բեստ նստած բազմության թիվը հասավ 14 հազար մարդու[3]: Այգում խփվեցին բազմաթիվ վրաններ, կազմակերպվեց ընդհանուր խոհանոց և ընդհանուր սնունդ: Բեստ նստածների հետ կապված բոլոր ծախսերն իրենց վրա վերցրին վաճառականները և հարուստ արհեստավորները[4]:

Աջակցություն հայտնելով ցուցարարներին և հանդես գալով որպես բեստ նստածների և շահի միջև բանակցությունների միջնորդ, անգլիացիներն իրոք ունեին իրականացնել ավելի ընդարձակ ծրագիր՝ իրենց ազդեցությունն ամրապնդել Իրանում:

Ռուսական դեսպանության անհեռատես ու տհաս վերաբերմունքի հետևանքով պարսիկների գոհունակ հայացքներն առաջին անգամ ուղղվեցին Անգլիա: Միաժամանակ այդ օրը սկիզբ հանդիսացավ այն խորթությանը, որ ժամանակի ընթացքում աստիճանաբար վերաճեց բացահայտ զինված առճակատման պարսից հեղափոխության և ռուսական հակահեղափոխության միջև: Բնական է, որ իր երկրում ծագած ժողովրդական հեղափոխությունը դաժանորեն ճնշող ռուսական միապետը չէր կարող ատելություն չտածել հարևան Պարսկաստանում թափ առնող ժողովրդական շարժման նկատմամբ և պաշտպան չկանգնել պարսից միապետությանը:

Շարժման ղեկավարները որոշեցին պայքարը շարունակել ժողովրդական ցույցերով և դրանք կազմակերպել նախ և առաջ երկրի մայրաքաղաք Թեհրանում: Ցույցերի նպատակը պիտի լիներ սահմանադրություն ունենալու պահանջը: Դրանց վայրը ընտրվեց Թեհրանը, որովհետև կազմակերպիչները համոզված էին, որ Իրանի միահեծան տերը՝ Մուզաֆֆեր էդ Դին շահը, օտար դեսպանությունների աչքի առաջ ցուցարարների հանդեպ չի համարձակվի դիմել բռնությունների և անմիջապես կշնորհի պահանջվող ֆերմանը:

1906թ. հունիսի վերջերին ժողովրդի և իշխանությունների առճակատումն ընդունեց արյունալի ձևեր: Կառավարությունը տրամադրված էր վճռականորեն, և զորքը հրաման ստացավ ցույցերը ճնշել դաժանորեն:

Հունիսի 29-ին սպանվում են ցուցարարների գլուխն անցած երկու սեյիդներ և մի քանի կանայք: Սպանվում և վիրավորվում է նաև մի քանի կազակ: Ցուցարարներից ոմանք վերցնում են սպանված սեյիդների արյունոտ շորերը,

---

[1] Տե՛ս «Հայրենիք», N 6 (42), հունիս, 1906, էջ 68:
[2] Տե՛ս М. П. Павлович, Очерк истории политической борьбы в Персии, Москва, 1925, էջ 40:
[3] Տե՛ս Ե. Էլմար, Եփրեմ, էջ 37:
[4] Տե՛ս М. С. Иванов, Иранская революция 1905 -1911 годов, էջ 78-79:

ամրացնում ձողերի վրա և բարձրացնում իբրև դրոշներ, որոնց հետևից ձգվում են փողոցային երթերը: Զորքը հրաման է ստանում կրակ բացել շարքերի վրա, բայց զինվորների մեծ մասը հրաժարվում է կատարել հրամանը կամ կրակում է օդում: Մի քանի հազար մարդուց բաղկացած ամբոխը հավաքվում է գլխավոր մեչիդում: Սկսվում են քարոզներ: Ժողովուրդը կրկին ու կրկին պահանջում է պաշտոնից վտարել Էյն էդ Դովլեին, Թեհրանի նահանգապետ Ալա էդ Դովլեին և մի քանի ուրիշ պաշտոնյաների: Տեղի է ունենում նոր ընդհարում, սպանվում և վիրավորվում է մինչև 50 մարդ[1]:

1906թ. հուլիսին Թեհրանում տեղի ունեցան զանգվածային նոր ցույցեր: Ելույթ ունեցողներից ոմանք ժողովրդին ապստամբության կոչ էին անում: Ցուցարարները նորից պահանջում էին պաշտոններից հեռացնել առավել ատելի բյուրոկրատներին: Հենց այստեղ էլ առաջին անգամ դրվեց սահմանադրության հարցը: Տեղի ունեցավ ընդհարում զորքի և ցուցարարների միջև, որի հետևանքով եղան զոհեր:

Զանգվածային ցույցերը Թեհրանում շարունակվեցին օրեր շարունակ: «Աշխարհի ամենաերանելիներից երանելի» միապետը, շվարած ու գլուխը կորցրած, խոստացավ պաշտոնանկ անել վեզիրներից շատերին: Հեռացվեց նրանց մեծ մասը, իրենց աթոռներից զրկվեցին նաև ուրիշ բարձրաստիճան պաշտոնյաներ:

1906թ. հուլիսի 29-ին իր պաշտոնից վերջապես ստիպված հրաժարվեց նաև սադրազամ Էյն էդ Դովլեն[2]: Նրա փոխարեն նշանակվեց լիբերալ շրջաններում ժողովրդականություն վայելող արտաքին գործերի մինիստր Նասրուլլա խան Մուշիր էդ Դովլեն[3]:

Բայց Թեհրանի բնակչությունը դրանով չբավարարվեց և, շարունակելով ցույցերը, կրկին դրեց սահմանադրության հարցը:

Բազմամարդ ժողովրդական նոր ցույցերը Թեհրանում նույնպես հաջողություն ունեցան: Քանի որ դրանք ղեկավարում էր հավատացյալ ժողովրդի վրա հսկայական ազդեցություն ունեցող հոգևորականությունը, կառավարությունը հասկացավ, որ զիջումներն անխուսափելի են:

Ըմբռնելով զանգվածների պահանջի արդարացի լինելը և գիտակցելով իր երկրի շահերը՝ Մուզաֆֆեր էդ Դին շահն ընդառաջ գնաց ժողովրդական պահանջին և խոստացավ սահմանադրություն շնորհել երկրին:

Երբ Պարսկաստանում սկսվեց ազատագրական շարժումը, տեղի հայության առջև, բնականաբար, կանգնեց այն հարցը, թե սկսած շարժման նկատմամբ ինչ դիրք պետք է բռնի ինքը: Իսկ պարսկահայությունը երկրում մի փոքր թիվ էր, ընդամենը 70-80 հազար շունչ՝ ցրված պետության ահագին

[1] Տե՛ս Р. А. Сеидов, Иранская буржуазия в конце XIX-начале XX века (начальный этап формирования), էջ 203:
[2] Տե՛ս "История Ирана", изд. Московского университета, 1977, էջ 271:
[3] Տե՛ս М. С. Иванов, Иранская революция 1905 1911 годов, էջ 80:

տարածքի վրա:

Բնիկ պարսկահայ բնակչությունը, որի գլխով դարեր ի վեր անցել էին անհամար աղետներ ու փորձանքներ, սկզբնական շրջանում ազատագրական շարժման նկատմամբ խիստ վերապահ էր, չեզոք և իրադարձությունների զարգացմանը դիտում էր կողքից: Իր դիտարկումներով ու փորձով նա եկել էր այն համոզման, որ խավարի ու կրոնական մոլեռանդության մեջ խարխափող մուսուլման ժողովուրդն անկարող է ըմբռնել ազատության մասին քարոզները: Նա նաև գիտակցում էր, որ իշխանությունների կամ ընդդիմության կողմն անցնելու պարագային, նրանցից մեկի հաղթանակի կամ պարտության դեպքում, ինքը կարող է դառնալ վրեժխնդրության զոհ, քավության նոխազ: Դա էր հիմնական պատճառը, որ բնիկ պարսկահայերը տրամադրվել էին բռնել խիստ զգուշավոր և խոհեմ ուղղություն:

Բայց այդպես չէին մտածում պարսկահայության ձախ տարրերը և, հատկապես, դրսից եկած սոցիալ-դեմոկրատական գաղափարներով տոգորված հեղափոխական գործիչները: Նրանք գտնում էին, որ մի բուռն հայությունը անպայման պետք է մասնակցի շարժմանը, նրանում ներգործուն դեր կատարի, ավելին, հնարավորության դեպքում տեղ բռնի շարժման ղեկավարների շարքերում:

Կովկասից Պարսկաստան եկած ռուսահայ ձախ գործիչներից ոմանք խոսքից գործի էին անցել. Թեհրանի՝ հուլիսյան առաջին ցույցի մասնակիցների թվում նրանցից արդեն կային մի քանի հոգի:

Պարսկաստանի հնչակյան կազմակերպության մեջ միասնություն չկար շարժմանը հայերի մասնակցության հարցում: Թավրիզի հնչակյանների մի մասը Կովկասի սոցիալ-դեմոկրատների օրինակով կողմ էր հեղափոխության մեջ ընդգրկվելուն, իսկ մեծամասնությունը ս.դ. հնչակյան կուսակցության «Պարսկաստանի մասնաճյուղերու գործադիր Յանձնախումբ»-ի գլխավորությամբ և հնչակյան կենտրոնի լիազոր Վահան Մամիկոնյանի ջանքերով՝ դեմ: Ինչ վերաբերում է դաշնակցության Վրեժի (Թավրիզի) կազմակերպությանը, ապա հեղափոխության զարգացման տվյալ փուլում նա կտրականապես մերժում էր հայերի մասնակցությունը:

Վրեժստանում (Ատրպատական) Հ.Յ.դաշնակցության 1904-1906թթ. գործունեության մասին տեղեկագրում կարդում ենք.

«Պարսկական Սահմանադրության առթիվ տեղի ունեցած շարժմանը մենք չէինք կարող մասնակցել շատ հասկանալի պատճառներով: Հաստատ աղբյուրներից լսում էինք, որ թագաժառանգը և նրա մերձավորներն ուզում էին

* 1905թ. տվյալներով Պարսկաստանի մայրաքաղաքն ուներ 250 հազար բնակիչ, որից 400 տուն հայեր էին՝ ցրված քաղաքի զանազան մասերում: Հայերն ունեին երկու եկեղեցի հարակից ուսումնարաններով: Հայոց տնտեսական վիճակը շատ աննախանձելի էր. բացի մի քանի վաճառականներից և 50-60 արհեստավորներից ու ծառայողներից, մյուսները չունեին հիմնական զբաղմունք (տե՛ս «Նյութեր...», հատ. Դ, էջ 251):

օրդուբադցիների միջոցով ստեղծել հայ-թուրքական կոտորած, դրանով ստիպելու անգլիական կոնսուլին՝ հեռացնելու շարժման պարագլուխներին և համոզելու նրան, որ այդ շարժումը քաղաքական բնույթ չունի, այլ լոկ կովկասյան հայ-թաթարական ընդհարման արձագանք է: Մի թեթև առիթը բավական կը լիներ այդ արյունահեղության համար, և մենք զոհ կարող էինք գնալ պրովոկացիայի: Իբրև առանձին կուսակցություն, մենք չէինք կարող ասպարեզ գալ, որովհետև դաշնակցությունը, պարսիկ մասսայի հասկացողությամբ, հասկացվում էր իսլամի թշնամի: Այդ ուղղությամբ «Հաբլ յուլ Մաթինը» և Աղաևի օրգանը** կատարել են իրենց դերը:*

Որովհետև այդ շարժումն ուներ միայն ազգայնական-կրոնական բնույթ, մեր մասնակցությունն այդպիսի մի շարժման՝ հետադիմական քայլ կը լիներ»[1]:

Իհարկե, հայերը Պարսկաստանում կուլտուրապես ավելի զարգացած էին, հետևապես ուրիշ պատճառների թվում նաև այդ պատճառով, պետք է իրենց գործողություններով նպաստեին Իրանի ժողովրդական մասսաների ազատագրական պայքարին: Անշուշտ, նրանք անպայման համակիրներ էին ժողովրդական շարժմանը, բայց առայժմ, փոքր բացառություններով հանդերձ, խուսափում էին մասնակցել կոնկրետ գործողությունների:

Եվրոպա կատարած ճանապարհորդությունների ժամանակ շահը տեսել ու համոզվել էր, որ հզոր ու բարգավաճ են ոչ թե միապետական-ինքնակալական, այլ սահմանադրական-միապետական կարգեր ունեցող երկրները:

Եվրոպայում Մուզաֆֆեր էդ Դին շահը հաղորդակից էր եղել նաև քաղաքակրթության մի ուրիշ նվաճման՝ նույն երկրի տարբեր ազգերի միջև նոր հարաբերությունների հաստատման հրամայական պահանջին, որի հիմնական բովանդակությունն օրենքի առջև առանց ազգային և կրոնական խտրության՝ տերության բոլոր հպատակների իրավահավասարությունն է:

Փարիզում գտնվելիս շահն ընդունել էր տեղի հայերի պատվիրակությանը, որի կազմում եղել էր նաև նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը: Այդ հանդիպմանը վեհապետն ասել էր, որ հայերը և նմանապես բոլոր քրիստոնյաները Պարսկաստանում հավասար իրավունքներ ունեն մուսուլմանների հետ և անձամբ վայելում են իր հովանավորությունը: Նա հավաստիացրել էր, որ ապագայում նույնպես նրանք վայելելու են պետության վստահությունն ու պաշտպանությունը[2]:

Պարսկահայության մտահոգությունների կենտրոնում Ատրպատականի վիճակն էր, քանզի այստեղ էր կենտրոնացված նրա բացարձակ մեծամասնությունը:

---

* *Խոսքը Կ.Պոլսի փողերով Կալկաթայում (Հնդկաստան) պարբերենով հրատարակվող հայատյաց թերթի մասին է:*

** *Նկատի է առնված Ահմեդ Աղաևի հիմնած հետադեմ «Իրշադ» թերթը:*

[1] **«Նյութեր...»**, *հատ. Դ, էջ 235:*

[2] **«Մշակ»**, *N 26, 11 հունվարի 1907թ.:*

Թեհրանից հետո Թավրիզը արդեն 1906թ. կեսերից գործնականում քաշվել էր սահմանադրական շարժման մեջ: Հուլիս-օգոստոսին Թեհրանի դեպքերի ազդեցության տակ Թավրիզում տեղի էին ունենում գաղտնի ժողովներ և խորհրդակցություններ, որոնց արդյունքում Թավրիզցիները որոշում են հետևել Թեհրանցիների օրինակին և, ի նշան նրանց հետ համերաշխության, բեստ են նստում:*

Ատրպատականի փոխարքա Մամեդ Ալի Միրզան նստացույցը խափանելու համար դիմեց զանազան միջոցների, բայց նրա բոլոր փորձերը վերջացան անարդյունք: Շարժումը գնալով նոր թափ էր առնում:

ԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Եվրոպայում կազմված համոզմունքներն էին, որ շահին դրդեցին հազարավոր տարիներից ի վեր միահեծան կառավարվող Իրանին տալ ժողովրդապետական իրավունքներ: Արդյունքն այն եղավ, որ 1906թ. օգոստոսի 5-ին նա ստորագրեց մի շարք ֆերմաններ՝ «Սահմանադրության մանիֆեստներ» ընդհանուր խորագրի տակ և դրանցով խոստացավ սահմանադրություն շնորհել երկրին[1]:

Իր որոշումով շահնշահը հաստատում էր, որ ինքնակալական միահեծան ռեժիմի գոյությունը երկրում այլևս ժամանակավրեպ է, և անհետաձգելի է ժողովրդական ներկայացուցչության իրագործումը:

Անշուշտ Մուզաֆֆեր էդ Դինը նման համարձակ քայլի էր դիմել ամենից առաջ այն պատճառով, որ, ինչպես նշվեց, հոգևորականության մեծ մասը նույնպես պահանջում էր բարեփոխումներ կամ գոնե դեմ չէր բարեփոխումների: Ժողովրդին սահմանադրություն տալու խոստումը հետևանք էր նաև շահի վարած համբերատար և համեմատաբար ազատական քաղաքականության:

Շահի ստորագրած հրամանները ցնծության ու բուռն ոգևորության ալիք առաջ բերեցին ամբողջ Պարսկաստանում: Ցույցերը տարածվեցին երկրով մեկ՝ այս անգամ որպես շահի նկատմամբ ժողովրդական երախտագիտության արտահայտություն: Խավար, տգետ ու արհամարհված Իրանն իր լուսամիտ շահի մտքերն էր ողջունում և՝ իլավունք ուներ[2]:

Թեհրանի բազմամարդ ցույցերն աներևակայելի արագությամբ նպաստեցին հետամնաց պարսից ժողովրդի մեջ ընդհանուր համերաշխության հաստատմանը:

---

* *1900թ. Թավրիզում բնակվում էր 240 000 մարդ, իսկ 1905-ին՝ 260 հազար, այսինքն՝ արդեն նույնիսկ մի քիչ ավելի, քան Թեհրանում (տե՛ս* Бартольд, С.-Петербург, 1903, *էջ 148):*

[1] *Տե՛ս* **М. С. Иванов**, Очерк истории Ирана, *էջ 203:*

[2] **Մատենադարան**, *կաթողիկոսական դիվան, թղթ. N 237ª, վավ. 323, թ. 22:*

Բայց բոլորը չէին, որ գոհ էին: Իրենց դժգոհությունը չէին թաքցնում խաները, հարստահարիչ գյուղատերերը, բարձր պաշտոնյաները, քուրդ աշիրեթապետերը:

Արթնացավ նաև Իրանի վայրագ, մոլեռանդ, ծույլ ու հեղգ թուրք տարրը՝ Ատրպատականի բնակիչը: Արթնանալով՝ նա նույնպես պահանջեց «մարդկային իրավունքներ», աղաղակելով, որ այսուհետև ինքը նույնպես պետք է դառնա իր բախտի տերը: Սահմանադրական շարժումը հենց սկզբից Իրանի թըրքության մեջ զուգորդվեց, ճիշտ է՝ դեռևս չգիտակցված ու թույլ, կենտրոնախույս ձգտումների հետ:

Շահի խոստումները և տված «սահմանադրական ֆերմանների» լուրերը արագորեն տարածվեցին ամենուր և մեծ զարմանք ու հրճվանք պատճառեցին տարբեր երկրներում գտնվող պարսկահպատակներին, որոնք շտապեցին իրենց շնորհավորանքները և գոհունակությունն արտահայտել «սահմանադրական» կարգեր թևակոխող ժողովրդին և միապետին:

Իր հերթին եվրոպական մամուլը գրում էր, որ շահի զիջումը ապագա սահմանադրության համար կարող է հուսալի հիմք հանդիսանալ, եթե միայն պալատական-կղերական նոր ինտրիգները չխափանեն սկսված գործը:

Ճիշտ է,Մուզաֆֆեր էդ Դինի ֆերմանը դեմոկրատական դրոշմ չէր կրում, քանի որ չէր բխում ժողովրդական խավերից, բայց նկատելով, որ Արևելքի քնահար զանգվածների կյանքում հաճախ մեծ և կարևոր հեղաշրջումները բխել են վերևից, կարելի էր հուսալ, որ շահի որոշումը, իբրև սահմանադրության սկիզբ, Իրանի ժողովուրդների կյանքում կբացեր նոր դուռ ազատության, երկրում քաղաքացիական-սոցիալական տանելի կարգեր հաստատելու համար:

Պարսկական սահմանադրական շարժումը ջերմ արձագանք գտավ նաև հայկական մամուլի էջերում և հասարակական-քաղաքական շրջաններում:

Պարսկաստանի ժողովուրդը էժան և հեշտ գնով, համարյա անարյուն, ընդամենը մի քանի հոգու նահատակությամբ, ձեռք էր բերելու սահմանադրություն, այն դեպքում, երբ ավելի առաջավոր երկրներում դրա համար պահանջվել էին երկար տարիներ, դաժան պայքար ու անհամար զոհեր:

Օրինակը հեռու չէր՝ հարևան Ռուսաստանն էր, ուր շուրջ մեկ և կես տարի բազմամիլիոն ցավատանջ ժողովուրդն արյուն էր թափում, բայց, ըստ էության, ոչնչի չէր հասել: Ռուսաստանում հեղափոխական ու ազատական մամուլը գրում էր, թե միջնադարյա հետամնացության մեջ խարխափող Պարսկաստանն արդեն սահմանադրության մասին հռչակագրեր ունի, և սահմանադրությունը շուտով կմշակվի, իսկ քաղաքակրթված Ռուսաստանը անցնում է տառապանքի ուղիներով, և այդպես էլ նրա համար սահմանադրությունը մնում է երազանք:

Այդ օրերին Թեհրան գնացած և Թիֆլիս վերադարձած հայ առևտրականներից մեկն իր գործընկերոջն ուղարկած նամակում գրում էր.

«... Թող հարազատ որդոց մուգ արյունով ոռոգվի մայր-երկիրը, թող դեռ

ծանր ու դառն երկունքներ կրի արյան ծարավի հողը, միայն թե ցարի բռնակալ ռեժիմը, ոճրագործ բյուրոկրատիան իր պատվանդանի վրա ամուր լինի և նոր արյուններ, նոր վերքեր բացի երկրի սրտում... Դեռ տնքում է Պուշկինի, Տուրգենևի, Տոլստոյի, Գորկու հայրենիքը: Իսկ Պարսկաստանը ցնծում է... Որքան մխիթարական և միևնույն ժամանակ հիասթափեցնող հակապատկերներ»[1]:

Սահմանադրության (Մեջլիսը-Շուրայի Միլլի) մասին լուրը ցնծությամբ ընդունեցին նաև Երևանի պարսիկները, պարսկահպատակ թուրքերն ու հայերը: Տեղի պարսից հյուպատոսը 1906թ. օգոստոսի 3-ին մեծ ընդունելություն կազմակերպեց իր տանը, որի մի մասը այսպես է լուսաբանել «Մշակը».

«Ուրախությունը կատարյալ եղավ, երբ մի խումբ հայեր, շրջապատված հայ զինվորներով, զուռնայով մտան բակ ու սրտագին շնորհավորեցին պարսից ազատությունը, սահմանադրությունը: Ապա պատշգամբ դուրս եկան հյուպատոսը, Երևանի թուրք խաները ու մի քանի հայ և թուրք պատվավոր քաղաքացիք: Սկսվեց ճառերի մի ամբողջ շարք: Ճառերի միտքն ու ցանկությունը, բացի սահմանադրությունը ողջունելը, բոլորն էլ համարյա պտտվում էին հայ-թուրքական ընդհարումների շուրջը, և ցանկություն էր հայտնվում մոռանալ բոլորը, ապրել նախկին եղբայրության սիրով ու հարևանությամբ:

Ապա ելույթ ունեցավ հյուպատոսը, որն իր ճառը վերջացրեց հետևյալ խոսքերով. «Ապրեցեք սիրով ու եղբայրաբար այնպես, ինչպես մեզ մոտ Պարսկաստանում ապրում են հայերն ու թուրքերը՝ մեր ողորմած Շահի իշխանության տակ»[2]:

Նույնպիսի ցանկություն հայտնեցին ելույթ ունեցող հայերը: Թերթը նշում էր. «Սրտաճմլիկ էր տեսնել, թե ինչպես մի քանի ծերունի թուրքեր աղիողորմ արտասվում էին ճառերի ազդեցության տակ ու ախ ու վախ ասում»[3]:

Ընդունելությանը մասնակից հայերից մեկը այսպես էր արտահայտում այդ օրը իր ունեցած հոգեկան ապրումները.

«Մենք, որ պարծենալ գիտենք մեր լուսավորությամբ ու կուլտուրայով և շատ անգամ արհամարհանքի խոր ատելությամբ ենք վերաբերվել դեպի հարևան Պարսկաստանը, այո՛, այն երկիրը, որին մենք անեկդոտների աշխարհ ենք անվանել ու «բախչիների» կառավարություն, նա եկավ ցույց տալու մեզ, որ իրեն և իր լուսամիտ միապետին լավ չենք ճանաչել: Թանկ գնահատելով իր հպատակ զավակների արյունը, շահը պատռեց նրանց գերության քողը, արձակեց շղթայված ձեռքերն ու լեզուն և հրավիրեց մասնակցելու երկրի կառավարման գործին, մշակելով սահմանադիր ժողովրդական օրենքներ»[4]:

Մուզաֆֆեր էդ Դին շահնշահի կողմից իր երկրին սահմանադրություն

---

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237[թ], վավ. 323, թ. 12:
[2] **«Մշակ»**, N 170, 8 օգոստոսի 1906թ.:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

տալու խոստումը օգոստոսի 4-ին հանդիսավորությամբ նշեց Բաթումի պարսկահպատակ հայ և թուրք հասարակությունը:

Քաղաքի Ազիզիե մզկիթում մեծ բազմություն էր հավաքվել, այնտեղ էր նաև պարսիկ հյուպատոսն իր շքախմբով: Մզկիթում կատարված տոնախմբությունից հետո, հյուպատոսի, պարսիկ և թուրք երևելիների մասնակցությամբ, մաղթանք տեղի ունեցավ հայկական եկեղեցում: Մաղթանքից հետո հայր Մելյանն իր ելույթում նշեց, որ շահնշահի կատարած գործը բացառիկ է իր նշանակությամբ, քանզի նա չուզեց թափել հպատակների արյունը, իմաստնությամբ ազատություն տվեց իր ժողովրդին, նրան իրավունք տվեց՝ իր հետ հավասար որոշելու երկրի բախտը: Ելույթ ունեցողը շեշտում էր. «Եվ մենք՝ հայերս, որ պատմության անցյալով և հող ու ջրով ձեզ հետ եղբայրացած ենք, պարսիկ եղբայրնե՛ր, մեր հոգու բոլոր զորությամբ գալիս ենք շնորհավորելու ձեր մեծ օրը»[1]:

Պարսկական սահմանադրության առթիվ Թիֆլիսի պարսից ընդհանուր հյուպատոս Մուֆֆախամ-Սոլթանի նախաձեռնությամբ 1906թ. օգոստոսի 4-ին մաղթանք և հանդես տեղի ունեցավ քաղաքի շիա մուսուլմանների մզկիթում, ուր հավաքվել էին պարսիկներ, թուրքեր, հայեր:

Բացելով հանդեսը, դազին ներկաներին հիշեցրեց, որ իսլամ կրոնը և նրա հիմնադիր Մուհամմեդ մարգարեն միշտ քարոզել են, որ աշխարհիկ գործերում ամեն բան պիտի կատարել խորհրդակցությամբ, ուստի Մուզաֆֆեր էդ Դին շահի կողմից շնորհված ազգային խորհրդարանն ամենևին չի հակասում շարիաթին և իսլամ վարդապետության սկզբունքներին:

Հոգևորականության կատարած գոհաբանական մաղթանքից հետո խոսք վերցրեց Մուֆֆախամ-Սոլթանը և մի համառոտ ճառով դրվատեց շահի կատարած գործը՝ այն համարելով մի բացառիկ երևույթ պարսից պատմության մեջ:

Հյուպատոսից հետո ելույթ ունեցավ «Մոլլա Նասրեդդին» երգիծական թերթի խմբագիրը և կովկասյան թուրքերի անունից գոհունակություն հայտնեց պարսկական սահմանադրության և նրա ստեղծողի նկատմամբ:

Ապա խոսք տրվեց «Մշակ» թերթի խմբագրության ներկայացուցիչ Համբարձում Առաքելյանին, որը ելույթ ունեցավ թուրքերեն: Թիֆլիսի հայության անունից արտահայտելով ջերմագին զգացմունքներ պարսիկ ժողովրդի հանդեպ, նա մասնավորապես ասաց.

«Այսօրվա ձեր ուրախությունը, պարոն հյուպատոս և հարգելի ժողովուրդ, միայն մուսուլմանների, պարսիկների ուրախությունը չէ. դա ընդհանուր ուրախություն է բոլոր այն ազգերի և ցեղերի համար, որոնք ապրում են Իրանում՝ շահերի հովանավորության ներքո: Այդ ազգերի թվում է նաև պարսկահայությունը, որին նույնպես սահմանադրական իրավունքներ են տրված: Իմաստուն ու մարդասեր շահը խորություն չի դնում իր հպատակների միջև: Մեծ է այսօր պարսկահայերի ուրախությունը, և ես համոզված եմ, որ նրանք լիուլի կարդարացնեն շահնշահի ակնկալությունները, ցույց կտան, որ կկարողանան օգտվել սահմանադրական իրավունքներից Մեծն Իրանի բարօրության և բարգավաճման համար»[1]:

Հյուպատոսը Հ. Առաքելյանի ելույթին պատասխանեց այսպիսի խոսքերով. «Ես անչափ զգացված եմ ձեր խոսքերից, պ-րն Առաքելյան, և անկեղծ շնորհակալությունս եմ հայտնում «Մշակ» լրագրին և ձեզ: Ողորմած շահի զգացումները դեպի հայերը հանրածանոթ են. նա, իբրև հայր, խորություն չի դնում իր զավակների միջև, ուստի սահմանադրական իրավունքները հավասարապես տարածել է ամենքի վրա՝ և՛ պարսիկի, և՛ հայի, և՛ հրեայի, և՛ այլոց: Եթե հայերը մինչև այսօր հավատարիմ հպատակներ են եղել, ես համոզված եմ, որ այսուհետև ևս նրանք իրենց օգտակար ծառայությամբ կնպաստեն ընդհանուր հայրենիքի՝ Իրանի բարգավաճմանն ու բարօրությանը»[2]:

Երեկոյան Թիֆլիսի թուրքերի շուկայում ու խանութների առաջ հրավառություն և լուսավորություն տեղի ունեցավ: Խանութներն ու շուկան զարդարված էին գորգերով, շալերով, կերպասներով:

Պարսկական սահմանադրությունը, որ դեռ մշակված չէր, այլ միայն նրա առանձին դրույթներն էին հռչակված, առայժմ հեռու էր սահմանադրության այն ըմբռնումից, որ կար քաղաքակիրթ երկրներում: Եվրոպայում սահմանադրական կարգերը XIX դարում ձեռք էին բերվել հեղափոխական երկարատև պայքարի և բազում զոհերի հետևանքով, և դա տևական պատմական պրոցես էր եղել: Ի տարբերություն դրա՝ սուլթան Աբդուլ Համիդի կողմից Թուրքիային տված Միդհատ փաշայի սահմանադրությունը վիժեց գլխավորապես այն պատճառով, որ ձեռք էր բերվել առանց արյուն թափելու: Թուրքական սահմանադրության գաղափարը հղացել էր մի քանի փաշա, որին անտեղյակ էր ժողովուրդը, ուստի այդ սահմանադրությունը տևական չեղավ, սուլթանն այն խլեց նույն հեշտությամբ, ինչպես տվել էր:

Ինչ վերաբերում էր պարսկական սահմանադրությանը, այն բնավ թուրքականի նման չէր: Սահմանադրություն ձեռք բերելու համար, ճիշտ է, համարյա արյուն չթափվեց, բայց գլխավոր գործող դերակատարը եղավ ժողովուրդը՝ իր տևական ցույցերով և համառ պահանջներով: Չնայած դրան, պարսկական սահմանադրությունը մշտական վտանգի տակ պիտի լիներ, քանի որ, ի վերջո, այն ժողովրդին «շնորհել» էր շահը՝ ըստ իր ըմբռնումների ու ցանկության: Սահմանադրությունը նրա իշխանապետական իրավունքները կրճատում էր այնքանով, որքանով ինքն էր ցանկանում:

Ռեֆորմների կողմնակից ավելի կուլտուրական ուժերը, որոնք ձգտում էին երկրում սահմանադրական կարգ ու կանոն մտցնել, հասկանում էին, որ պետք

---

[1] **«Մշակ»**, N 170, 8 օգոստոսի 1906թ.:

[1] **«Մշակ»**, N 168, 5 օգոստոսի 1906թ.:

[2] Նույն տեղում:

է կարողանալ մեծ հմտությամբ ու տակտով օգտվել հոգևորականության «հեղափոխական» տրամադրություններից, որպեսզի նա խոչընդոտ չհանդիսանա նոր կյանքին, նոր կարգերին, վերանորոգչական սկսվող գործունեությանը:

Իհարկե, նրանք կասկած չունեին, որ հոգևորականությունը հակառակ է լինելու բուն սահմանադրական կարգերին՝ եվրոպական իմաստով, և պահանջելու է, որ սահմանադրությունը հիմնված լինի Ղուրանի օրենսդրության՝ շարիաթի վրա, իսկ շարիաթի օրենսդրությունը և եվրոպական սահմանադրական կյանքը տրամագծորեն միմյանց հակառակ են:

Դա էր հիմնական պատճառներից մեկը, որ հայ հեղափոխական կուսակցությունները՝ և՛ հնչակը, և՛ դաշնակցությունը, սկզբնական շրջանում խիստ վերապահ էին «Սահմանադրական մանիֆեստներին» հախուռն գնահատականներ տալուց: «Դրոշակը » գրում էր, որ Մուզաֆֆեր էդ Դին շահի կողմից Պարսկաստանին սահմանադրություն շնորհելը հետևանք է նրան, որ մի քանի ամսից ի վեր պալատական կյանքը, քաղաքական-կրոնական բարձր շրջանակները, զանազան պաշտոնյա անձինք ենթակա էին խուլ կռվի՝ հանուն անձնական օգուտի կամ գաղափարի: Շահի «այդ զիջումը՝ իրոք կարող է հիմք ծառայել ապագա սահմանադրության, եթե միայն պալատական-կղերական նոր ինտրիգները չխափանեն սկսված գործը: Ճշմարիտ է, սա դեռ սկիզբն է: Նա չի կրում ռամկավարական դրոշմ և չի բխում ժողովրդական հեղափոխության շահերից»: Բայց «Դարավոր ճահիճներն անգամ շարժվում-ալեկոծվում են: Գաղափարի հարաճուն շարժման հավիտենական նշանն է այդ: Եվ ոչ մի ցարիզմ, ինչքան և անբարտավան, ոչ մի սուլթանություն, որքան և մարդակեր, ոչ մի շահ, որքան և հետադեմ, չպիտի կարողանան դիմադրել գաղափարի շարժմանը, որ նույնքան հուժկու է, որքան հեղեղը, նույնքան անդիմադրելի, որքան գլորվող ժայռը ...»[1]:

«Սահմանադրության մանիֆեստների» գնահատման հարցում «Դրոշակի» զգուշավորությունն անտեղի չէր: Հակաեվրոպական, հակաքրիստոնեական տրամադրությունները ոչ միայն դեպի անկում չգնացին, այլև գնալով ավելի ուժեղացան, քանի որ շարունակում էին ուժի մեջ մնալ դրանց հիմնարար պատճառները. անգլիացի, ֆրանսիացի, ռուս, գերմանացի, ամերիկացի գործարարներն ու պաշտոնյաները հարստահարում էին ժողովրդին, միաժամանակ որևէ ջանք չէին գործադրում նպաստելու այդ նույն ժողովրդի կուլտուրական, կրթական, քաղաքական մակարդակի զարգացմանը: Դրա հետևանքով, բնականաբար, առաջ էր եկել բնակչության բուռն դժգոհություն:

Ինչպես տեսնում ենք, Մուզաֆֆեր էդ Դինի «Սահմանադրական մանիֆեստները» խիստ դասակարգային բնույթ ունեին և բնավ նպատակ չունեին վերացնելու երկրի ազնվականական դասը, որի վրա էին խարսխված միապետական կարգերը: «Մանիֆեստների» գլխավոր նպատակը **բացարձակ** միապետության փոխարինումն էր **սահմանադրական** միապետությամբ, այն էլ սահմանափակ ազատությունների պայմաններում: Այդ էր պատճառը, որ շահը, կառավարությունը, նաև «հեղափոխական» հոգևորականությունը երկյուղում էին, որ շարժումը կարող է դուրս գալ ափերից և ուղղվել հենց միապետի ու միապետության դեմ: Նրանք մեծ վտանգ էին տեսնում այն բանում, որ Եվրոպայում և Ռուսաստանում լույս տեսնող պարբերականները, հատկապես հեղափոխական թերթերն ու գրականությունը, որոնք օրինական ճանապարհով ստացվում էին երկրում, իրենց հետ բերում են հակամիապետական գաղափարներ, քարոզում Պարսկաստանում եվրոպական պառլամենտական կարգեր հաստատելու անհրաժեշտությունը: Ահա թե ինչու հատկապես հոգևորականության կողմից շահին առաջարկ ներկայացվեց խիստ գրաքննության ենթարկել դրսից ստացվող գրականությունն ու մամուլը, իսկ առավել ազատամիտ պարբերականների մուտքը երկիր ընդհանրապես արգելել:

Անվստահությունը, բնականաբար, տարածվեց նաև հայ ազգային հեղափոխական կուսակցությունների Պարսկաստանում գործող կազմակերպությունների վրա: Հանձինս նրանց, չափավորները տեսնում էին արմատական սահմանադրականներին ազակցող ուժ:

Հայ ազգային հեղափոխական կազմակերպությունների նկատմամբ վերաբերմունքի դրսևորումներից մեկը Հ.Յ.դաշնակցության պաշտոնական օրգան «Դրոշակի» մուտքի արգելումն էր ամբողջ Պարսկաստանում:

1905թ. ընթացքում Պարսկաստանում «Դրոշակ» թերթից ամսական ստացվել էր միջինը շուրջ 4840 օրինակ, որոնց մեծ մասը զանազան գծերով փոխադրվել էր Ռուսաստան և Թուրքիա: «Դրոշակից» բացի ստացվել էին ուրիշ հեղափոխական թերթեր՝ «Հայրենիք», «Շարժում», «Ռազմիկ», «Революционная Россия» և այլն, ինչպես նաև բրոշյուրներ ու գրքեր[1]:

Փոստի ու մաքսի մինիստրության ընդհանուր գանձարանի կառավարիչը մինիստրի անունից ստորագրել և ենթականերին էր իջեցրել հետևյալ գրությունը.

«Պատիվ ունեմ ձեզ ծանուցանելու, որ կառավարությունն արգելեց մուտքը և տարածումը Պարսկաստանում հայոց «Դրոշակ» լրագրի, որ հայ հեղափոխական կոմիտեի ջանքերով խմբագրվում է Ժնևում»: Այնուհետև հրահանգվում է՝ լրագրի համարները գրավել ու ոչնչացնել՝ ընդունված ձևով կազմելով արձանագրություն: Վերջում շեշտվում էր. «Նույնը վերաբերվում է հայերեն լեզվով այլևայլ հեղափոխական բրոշյուրներին, որոնք տևական ժամանակից ի վեր մտցվում են Պարսկաստան՝ մեծ քանակությամբ: Այդ բրոշյուրները պետք է ենթարկվեն նույն վիճակին, ինչ և «Դրոշակը»:

(Ստորագրություն)»[2]:

---

[1] **«Դրոշակ»**, N 8 (174), օգոստոս, 1906, էջ 127:

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 239:

[2] **«Դրոշակ»**, N 7 (173), հուլիս, 1906, էջ 98:

Այդ հրամանն անսպասելի էր դաշնակցության համար: «Դրոշակի» լույս ընծայման առաջին համարից արգելված էր նրա մուտքը Թուրքիա և Ռուսաստան, քանի որ Թերթի էջերում պարբերաբար տպագրվում էին հոդվածներ՝ ուղղված Թուրքական և ցարական ռեժիմների դեմ: Բայց 16 տարուց ի վեր Թերթը Պարսկաստանի դեմ ոչ մի անգամ հանդես չէր եկել: Հետևապես կասկած էր առաջացել, Թե «Դրոշակի» արգելքի՝ վերևում նշած պատճառից զատ չկա՞ արդյոք մի ուրիշը ևս: Շատ չանցած՝ դաշնակցության մարմինները պարզեցին, որ արգելքը նաև արդյունք է պարսկական կողմի վրա ցարի կառավարության ճնշման: Թեհրանի ռուսաց դեսպանությունը պարսից կառավարությունից կտրուկ պահանջել էր Թերթի արգելքն երկիր[1]:

«Դրոշակը» բռնագրավելու և ոչնչացնելու մասին հրամանը պարսից տեղական իշխանությունները կատարեցին բացառիկ եռանդով: Թավրիզում և Ռուսաստանի հետ սահմանագլխային մյուս քաղաքներում, ուր Թերթը ստացվում էր Անդրկովկասի ու Կասպից ծովի վրայով, 1906-ի հուլիսի 6-ին բռնագրավվեցին ու այրվեցին նրա նախորդ ամսվա (N 6) կապոցները և խմբագրության մյուս բոլոր հրատարակությունները:

Էնզելի քաղաքում Թերթի օրինակների բռնագրավման ու ոչնչացման մասին կազմված արձանագրության մեջ ասված էր.

«Ներկա հուլիսի 13-ին, կեսօրից հետո ժամը 4-ին, ընդհանուր տեսչի արձանագրությամբ և համաձայն մինիստրական հեռագրի, մենք, ներկայությամբ մաքսատան մի քանի պաշտոնյաների, ձեռնարկեցինք Շվեյցարիայից 15-20 հատանոց կապոցներով ստացված և Թեհրանում, Ռեշտում, Էնզելիում, Ջուղայում, Սպահանում, Համադանում, Բալֆրուշում, Շահրուդում և Ղազվինում ապրող զանազան անձանց հասցեներով ուղարկած հայոց «Դրոշակ» Թերթի 1170 օրինակի ոչնչացմանը կրակի միջոցով»[2]:

«Դրոշակի» խմբագրությունը 1906Թ. հուլիսի 27-ին հետևյալ բողոք-հեռագիրն է ուղարկում Թեհրան՝ արտաքին գործերի մինիստրին.

«Փոստի և մաքսի վարչության կարգադրությամբ հուլիսի 3-ից «Դրոշակի», ինչպես և ժնևի մեր այլ հրատարակությունների մուտքը Պարսկաստան արգելված է: Պարսկաստան հասած համարներն արդեն գրավված և այրված են: Մենք Թույլ ենք տալիս մեզ՝ բողոքելու Ձեզ այդ կարգադրության դեմ, որը ոչ մի արդարացում չունի, քանի որ Թերթը երբեք չի զբաղվել Պարսկաստանով և 16 տարուց ի վեր ազատ մուտք ուներ ձեր երկիրը: Մեր կռիվն ուղղված է Թուրք և ռուս կառավարությունների դեմ: Հաստատապես հավատում ենք, որ Ձեր միջամտության շնորհիվ Շահի Կառավարությունը կվերահաստատի մեր

[1] «Դրոշակ», N 7 (173), հուլիս, 1906, էջ 98:
[2] Նույն տեղում, N 8 (174), օգոստոս, 1906, էջ 128:

իրավունքները, իբրև արդարության պահանջ՝ Պարսկաստանի հայերի վերաբերմամբ»[1]:

Ամեն ինչից երևում էր, որ եթե հեղափոխական շարժման հետագա խորացումը հապաղի, ապա փխրուն սահմանադրությունը չի դիմանա երկրի հետադիմական ուժերի գրոհին:

Ահա Թե ինչու շահի ընձեռած սահմանադրության պաշտպանությունը դարձավ օրախնդիր: Այդ տեսակետից պահը հսկայական դեր էր հատկացրել սահմանադրության պաշտպանների ժողովներին:Նման առաջին ժողովը տեղի ունեցավ «Սահմանադրական մանիֆեստների» հռչակումից ընդամենը մեկ ամիս անց, 1906Թ. սեպտեմբերին, Թավրիզում: Այստեղ առաջին անգամ ժողովների մասնակիցներն ընտրվեցին բնակչության կողմից: Ընտրված մարմնի վրա դրվեց քաղաքում սկսված շարժման ղեկավարման պարտականությունը: Դա Իրանի պատմության մեջ բնակչության կողմից ընտրված առաջին մարմինն էր, որով սկիզբ դրվեց ամբողջ երկրում նման ժողովների ստեղծմանը, որոնք շատ կարևոր դեր խաղացին 1905-1911ԹԹ. իրանական հեղափոխության մեջ[2]:

Սահմանադրական շարժումը սկսվելուց մի քանի ամիս անց Պարսկաստանի համարյա ամեն մի քաղաքում, ինչպես նաև շատ գյուղերում գործում էին այդ մշտական ժողովները, որոնք ստացան **անջումեն**՝ անունը: Սկզբնական շրջանում դրանք ունեին միջնադարյան ցեխային կազմակերպությունների բնույթ, բայց երբ սկսեցին ստանձնել օրենսդրական և վարչական ֆունկցիաներ, ըստ էության, վերածվեցին տեղական ինքնակառավարման մարմինների և ձեռք բերեցին հեղափոխական-դեմոկրատական բովանդակություն: Բնականաբար, անհրաժեշտություն առաջացավ անջումեն ուղարկել բնակչության կողմից ընտրված և լիազորություններ ստացած պատգամավորներ: Միաժամանակ սկսեցին ստեղծվել ազգային միլիցիայի՝ **ֆանֆիղաների** կամ ֆիդայիների ջոկատներ, որոնք ենթակա էին անջումեններին:

Կարելի է նկատել, որ անջումենները ստեղծվում էին ռուսական մեծ հեղափոխության ընդերքում ծնունդ առած սովետների օրինակով, ունենալով, իհարկե, ոչ միայն ընդհանրություններ, այլև էական տարբերություններ:

Անջումենը նման չէր ո՛չ տեղական պառլամենտի, ո՛չ ինքնավարության մարմնի, ինչպես ասենք՝ զեմստվոն Ռուսաստանում: Այստեղ չկային տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ. ժողովուրդն անջումենի բոլոր անդամներին համարում էր իր շահերի ներկայացուցիչ: Մինչդեռ անկարելի էր բոլորի շահերի պաշտպանը լինել և, այդպիսով, հասարակության մեջ ստեղծել հավասարակշռություն:

[1] «Դրոշակ», N 8 (174), օգոստոս, 1906, էջ 128:
[2] Տե՛ս **М. С. Иванов**, Иранская революция 1905 1911 годов, էջ 83:
* Անջումեն - բառացի նշանակում է ժողով, ակումբ, իմաստային առումով՝ միություն, միավորում:

Ժողովրդի մեծամասնության անգրագետ լինելու պայմաններում չէր կարող խոսք լինել ընդհանուր, գաղտնի, հավասար ձայնատվության մասին: Անջումենում կարող էին ընտրվել այնպիսի անհատներ, որոնք ժողովրդի մեջ թե՛ փողով և թե՛ այլևայլ հնարքներով դիրք էին ստեղծել: Բնականաբար, այդպես էլ պետք է լիներ, որովհետև չկար ընտրության, գաղտնի քվեարկության սիստեմ: Պատահական չէր, որ այդ իսկ պատճառով անջումենների մեջ ընտրվում էին նաև այնպիսի մարդիկ, որոնք շատ հեռու էին ժողովրդի շահերը պաշտպանելու գաղափարից, չխոսելով արդեն այն մասին, որ անջումենի անդամների մեծ մասը զուրկ էր քաղաքակրթական ամենատարրական հայացքներից:

ՄԵՋԼԻՍԻ ՀՐԱՎԻՐՈՒՄԸ

Սահմանադրական կառավարչաձևի առաջին պայմանը պառլամենտ ունենալն է, ուստի երկրի «տնտեսական և քաղաքական դրությունը բարվոքելու համար» «Սահմանադրության մանիֆեստներ» ընդհանուր խորագրի տակ լույս տեսած Մուզաֆֆեր էդ Դին շահի ֆերմաններից մեկը՝ «Դաս դը խաթթը» վերաբերում էր «Ազգային խորհրդակցական ժողով» («Մեջլիսը-Շուրայը Միլլի») հրավիրելուն[1]:

Սկզբնական շրջանում շահը նկատի էր առել, որ այդ ժողովը կազմված է լինելու նշանավոր 50 անձից[2]: Փաստաթուղթն ազդարարում էր.

«Նորին մեծությունը պատվիրեց կազմել մի ազգային ժողով, որի անդամները ընտրողական ճանապարհով կլինեն արքայազնների, հոգևորականների, բարձր շրջանների, վաճառականների և այլ դասակարգերի միջից: Ազգային ժողովը կգումարվի Թեհրանում և կքննարկի պետական բոլոր կարևոր խնդիրները: Ժողովի յուրաքանչյուր անդամ երկրի վիճակը բարելավելու խնդիրների վերաբերյալ ամենայն ազատությամբ կարող է արտահայտել իր կարծիքը: Ժողովի որոշումները սադրազամի միջոցով կներկայացվեն շահին ի հաստատում և, կայսերական վավերացումն ստանալուց հետո, կստանան օրենքի ուժ»[3]:

Շահի ֆերմանը ցույց էր տալիս, որ՝ 1. Ազգային ժողովը լինելու է լոկ խորհրդակցական մարմին, 2. Ժողովի կազմի մեջ չեն լինելու աշխատավորների ներկայացուցիչներ, 3. Այն գումարվելու է որոշակի նպատակով՝ մշակել հիմնական օրենքներ և պետության վերակազմության ծրագիր, որոնք շահի կողմից կարող են ենթարկվել փոփոխության, կրճատվել և նույնիսկ չհաստատվել[4]:

Ինչպես տեսնում ենք, ֆերմանի համաձայն՝ Ազգային ժողովը լիովին կախման մեջ էր դրվում շահի կամքից և չէր կարող ինքնուրույն վճռել երկրի

[1] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237[բ], վավ. 323, թ. 22:
[2] Տե՛ս «Մշակ», N 6, 12 հունվարի 1906թ.:
[3] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. N 2, վավ. 3[ա], (թերթի կտրոն):
[4] Տե՛ս «Արշալույս», N 27, 5 փետրվարի 1906թ.:

կյանքին վերաբերող շատ թե քիչ կարևոր հարցեր:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ մինչ այդ Պարսկաստանը կառավարվում էր առանց որևէ մնայուն օրենքների: Տիրող միակ օրենքը եղել էր շարիաթը, որից և բխում էին կառավարիչների կամայականությունները: Ուստի այն հանգամանքը, որ սահմանադրության համաձայն հաստատվում էր «ազգային ժողով», որին իրավունք էր վերապահվում մշակել հիմնական օրենքներ՝ դա արդեն մեծ քայլ էր դեպի ժողովրդապետական իրավունքներ և պառլամենտարիզմ:

Պատահական չէ, որ «Ազգային խորհրդակցական ժողովը» կամ, ինչպես ընդունված էր նաև ասել, «Արդարության տունը» եվրոպական մամուլի կողմից ընկալվեց իբրև «պառլամենտ» կամ նրան համազոր օրենսդրական հաստատություն, որին իրավունք էր հատկացված «մասնակցելու» երկրի կառավարմանը, այսինքն՝ մշակելու օրենքներ և ռեֆորմների նախագծեր:

Նախապես մշակվեցին ժամանակավոր կանոններ ընտրություններ կատարելու մասին: 1906թ. սեպտեմբերի 9-ին շահը վավերացրեց ընտրական օրենսգիրքը, որի մեջ շարադրված էին ներկայացուցչական մարմնի ընտրությունների պայմանները:

Ընտրական օրենսգրքի համաձայն՝ Իրանի պառլամենտի մեջ ընտրվելու իրավունք էին ստանում շահզադեները (ազնվականներ), աղալարները (կալվածատերեր), իմաստուններն ու գիտնականները (հոգևորականներ), մեծ վաճառականները, այն մանրավաճառ խանութպանները և արհեստավորները, որոնք խանութի եկամտից տալիս էին ամենամաքսիմալ հարկեր, այն գյուղացիները, որոնք ունեին տարեկան նվազագույնը 1000 թումանի եկամուտ:

Նշված այս կատեգորիաներից ընտրվել կարող էին բոլոր նրանք, որոնց տարիքը պակաս չէր 30-ից և անց չէր 70-ից, որոնք պարսկահպատակ էին, գիտեին պարսկերեն լեզուն ու գրականությունը, նշանավոր էին թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում, ազնիվ էին վարք ու բարքով, ունեին անշարժ սեփականություն: Ընտրական իրավունքից զրկվում էին զինվորականները, սնանկացած վաճառականները, սեփականազուրկ գյուղացիները, բանվորները, համալները, մուրացկանները, վատ վարք ու բարք ունեցողները, քաղաքներից վտարվածները, խռովարարները, օտարահպատակները բոլոր նրանք, ովքեր 30 տարեկանը չէին լրացրել:

Պառլամենտը պիտի բաղկացած լիներ 200 հոգուց: Ընտրական իրավունք ունեցող 11 նահանգներից ամենամեծը Ատրպատականն էր, որին պառլամենտում տրված էր 12 տեղ:

Քանի որ սահմանադրական սկզբունքները դրված էին կրոնական հողի վրա, ուստի ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկված էին հայերը, ինչպես նաև Պարսկաստանի ոչ մահմեդական տարրերը՝ հրեաները, ասորիները, զրադաշտական պարսիկները և մյուս ոչ մահմեդականները:

Այն բանից հետո, երբ հրատարակվեց ընտրական կանոնադրությունը,

պարսիկների, հատկապես պարսիկ մտավորականության շրջանում առաջացավ մի հզոր հոսանք, որի ներկայացուցիչները գտնում էին, որ պետք է ընտրական օրենսգիրքը բարելավել, որ պառլամենտը, որպես ներկայացուցչական ժողով, պետք է լինի ոչ թե իսլամական («իսլամիե»), այլ ժողովրդական («միլլիե»): Դա նշանակում էր, որ հայերը և մյուս ոչ մահմեդական տարրերը նույնպես պետք է ստանային ընտրելու և ընտրվելու իրավունք, ունենային իրենց ներկայացուցիչները պառլամենտում և ընդհանրապես ունենային այն իրավունքները, ինչ ուներ իսլամ ժողովուրդը:

Հակառակ այս պարսիկ առաջավոր մտավորականության, հոգևորականության հետադեմ մասը, առավել ևս իշխանական բյուրոկրատիան հանդես եկան ոչ միայն այլադավաններին իրավունք տալու, այլև ընդհանրապես երկրին սահմանադրություն տալու դեմ:

Չնայած դրան, պատգամավորական ընտրությունները կազմակերպվեցին մեծ եռանդով՝ համաձայն ընտրությունների ժամանակավոր կանոնների[1]:

Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներից հետո հրավիրվեց Պարսկաստանի առաջին **մեջլիսը** (Ազգային ժողով), որի բացումը հանդիսավորապես տեղի ունեցավ 1906թ. հոկտեմբերի 7-ին:

Մեջլիսի ընտրությունների, ապա նրա բացման ընթացքում ծնունդ առավ «Ազգային կուսակցությունը», որի նշանաբանն էր՝ «Պարսկաստանը պարսիկներին»: Կուսակցության պարագլուխները Եվրոպայում կրթություն ստացած երիտասարդ ինտելեկտուալներ էին, արիստոկրատական դասակարգի ներկայացուցիչներ, որոնց գլխավոր նպատակն էր՝ հետ մղել օտար ոտնձգությունները:

Պառլամենտ-մեջլիսի առաջին գործը եղավ երկրի հիմնական օրենքի՝ սահմանադրության մշակման համար հանձնաժողովի ստեղծումը:

Հ.Յ.Դ. համաիրանյան համագումարից հետո դաշնակցության «Վրեժ» կենտրոնական կոմիտեն Ատրպատականից մեջլիսում ընտրված պատգամավորների հետ աշխատանք տարավ, որպեսզի սրանք սահմանադրության մշակման ժամանակ հաշվի առնեն երկրի ոչ մուսուլման համայնքների, այդ թվում հայության շահերը:

Մեջլիսի ստեղծած հանձնախումբը 1906թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին լարված աշխատանք տարավ սահմանադրության նախագծի վրա և այն պատրաստեց ներկայացնելու շահի հաստատմանը:

[1] Այդ մասին տե՛ս **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237*, վավ. 323, թ. 22:

ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ

Բյուրոկրատիան ցանկացած երկրում հանդես է գալիս որպես խոչընդոտ ամեն նորամուծության: Նա սարսափում է, որ պետական կառուցվածքի մեջ որևէ փոփոխություն, ի վերջո, կարող է հասցնել այնպիսի դրության, երբ անհրաժեշտություն կզգացվի վերջակետ դնել իր ընչաքաղց ու գիշատիչ հակումներին, կամայականություններին, բռնություններին ու չահատակություններին: Պարսկական բյուրոկրատիան նույնպես չէր կարող անտարբեր մնալ իրեն սպառնացող վտանգի հանդեպ:

Կալվածատերերը և հարստահարիչ մյուս դասակարգերը, բյուրոկրատիայի հետ միացած, ամեն ջանք թափեցին սահմանադրական շարժումը խոչընդոտելու, երկրում նախկին ռեժիմը լիակատար ծավալով վերականգնելու համար: Նրանց համար օրինակ էր հարևան երկրի՝ Ռուսաստանի բյուրոկրատիայի և ռեակցիոն դասակարգերի պահվածքը, որոնք հեղափոխական ուժերի դեմ անզիջում կռիվ էին մղում հինը անփոփոխ պահելու համար:

Պարսկական հետադեմ ուժերն ամենից առաջ փորձեցին շահին համոզել, թե սահմանադրության պահանջով հանդես են եկել մայրաքաղաքի բնակչության մի մասը միայն, իսկ Թեհրանից դուրս՝ Պարսկաստանի մյուս նահանգներում, բնակչության ամենալայն զանգվածները դրա մասին ընդհանրապես գաղափար չունեն: Դիմելով ամեն տեսակ մեքենայությունների, նրանք լայն գործունեություն ծավալեցին երկրով մեկ: Այդ մեքենայություններից մեկը ուղղակի առնչվում էր Պարսկաստանի հայության հետ:

Օրինակ վերցնելով ռուս բյուրոկրատիայից, Պարսկաստանի բյուրոկրատիան փորձեց երկրում առաջ բերել հայ-պարսկական ընդհարումներ, կազմակերպել հայերի կոտորած, որպեսզի դրանով զբաղեցնի մարդկանց մտքերը և կասեցնի ժողովրդի սահմանադրական շարժումը:

Եվ քանի որ հայության մեծամասնությունն ապրում էր Թավրիզ կենտրոնով Ատրպատականի նահանգում, ուստի հետադիմությունն իր ծրագիրն իրականացնելու համար առաջին հերթին գործունեություն ծավալեց հենց այդտեղ:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ հիմնականում թուրքալեզու բնակչություն ունեցող Ատրպատականի առաջադիմական ուժերը ջերմորեն էին ընդունել սահմանադրություն տալու մասին շահի խոստումը:

Սահմանադրական շարժման մեջ ընդգրկվել էր նաև նահանգի հայությունը: Հայերը նույնպես ժողովներ էին անում, ընդունում որոշումներ, ողջունում շահի կատարած քայլը, պատրաստակամություն հայտնում աջակից լինել նոր կառավարության ձեռնարկումներին:

Սկսված շարժմանը մասնակցում էին ոչ միայն տեղացի, այլև դրսից եկած հայերը, որոնցից շատերը երկիր էին թափանցում իրենց կուսակցությունների հանձնարարականներով:

Անդրկովկասից եկան բավական թվով հայ սոցիալ -դեմոկրատներ՝ գլխավորապես ՌՍԴԲԿ Թիֆլիսի և Բաքվի կազմակերպությունների հանձնարարությամբ: Նրանք, առաջին հերթին, մասնակցություն բերեցին հեղափոխական մարմինների ստեղծմանը Ռեշտում և Գիլանում:

Սահմանադրական շարժմանն սկսեցին մասնակցել նաև «Հնչակ» կուսակցության կովկասյան և իրանյան կազմակերպությունները: Հնչակյանները Թուրքիային սահմանակից Ատրպատականի տարածքներն օգտագործում էին Արևմտյան Հայաստանի հայ բնակչության վրա ազդեցություն գործելու համար:

Պարսկաստանում ծավալվող իրադարձությունները, բնականաբար, չէին կարող իրենց վրա չբևեռել այդ երկրում լայն ցանց ունեցող Հ.Յ.դաշնակցության և նրա տեղական կազմակերպությունների ուշադրությունը: Վաղ թե ուշ դաշնակները պետք է ճշտեին իրենց դիրքը այդ իրադարձությունների նկատմամբ: Տեղական կազմակերպություններում հարցի առաջին իսկ քննարկումները առաջ բերեցին երկու հակառակ տեսակետ: Բջիջների մի մասը դեմ էր սահմանադրական շարժմանը մասնակցելուն, գտնելով, որ դրա հետևանքով կսպառվեն կուսակցության ուժերը, որոնք այնքան անհրաժեշտ են Արևմտյան Հայաստանում իրենց գործունեության համար: Մյուսները պարսկական վերափոխական շարժման մեջ մասնակցություն ունենալը դիտում էին որպես Թուրքիայում հայ ազգային ազատագրական շարժման վրա ազդեցություն գործելու լծակներից մեկը: Վերջիններիս կարծիքով սահմանադրական կարգերի ստեղծումը պետք է մեծապես նպաստեր Թուրքական ռեժիմի փոփոխությանը:

1906թ. աշնան սկզբից Թավրիզյան սահմանադրականների շարժումը գնալով լայն ծավալ ստացավ: Մուհամմեդ Ալիի և գեներալ-նահանգապետի կողմից հնարավոր սադրանքները կանխելու նպատակով Թավրիզցիները ստեղծեցին մի հանձնախումբ՝ առաջին մեջլիսի ընտրությունների վրա հսկողություն սահմանելու համար: Նոյեմբերի սկզբից դեկտեմբերի սկիզբը տեղի ունեցած ընտրություններից հետո այդ հանձնաժողովը ստանձնեց անջումենի դեր և այդ տեսքով շարունակեց իր գործունեությունն այս անգամ որպես նահանգի իշխանությունների վրա վերահսկող մարմին՝ դառնալով Ատրպատականի նահանգային անջումեն («Էնջումենե այլթի»):

Իշխանությունը Թավրիզում փաստորեն բաժանվեց երկու մասի. մի կողմում փոխարքան էր ու գեներալ-նահանգապետը, մյուս կողմում անջումենը, որը կազմված էր բարձր հոգևորականության, առևտրականների, կալվածատերերի ներկայացուցիչներից:

Բայց Ատրպատականի առավել հետադեմ ուժերը տրամադիր չէին հեշտությամբ տեղի տալու: Նրանք գաղտնի ժողովներ էին գումարում, մշակում գործողությունների ծրագրեր, ընտրում դրանց իրականացնողներին, իհարկե, քաջ գիտակցելով, որ հեշտ չի լինելու թումբ ստեղծել սահմանադրական շարժման

առջև: Հենց դա էր պատճառը, որ նրանք նախապատրաստում էին մեծ աղետ՝ հայերի կոտորած նահանգի թուրքերի ձեռքով:

Աշխատության նախորդ գլուխներից մեկում ցույց է տրված, թե ինչպես Բաքվի 1905թ. փետրվարյան դեպքերից հետո Պարսկաստանում հակահայկական շարժում առաջ բերելու առաջին փորձն էր արվել, բայց կառավարության ձեռնարկած կտրուկ միջոցների շնորհիվ այդ փորձը տապալվել էր: Այժմ, 1906թ. ամռանը, հայատյացները հույս ունեին այս անգամ գլուխ բերել այդ դիվային ծրագիրը:

Հունիս ամսին նախ Թավրիզում, ապա Ատրպատականի ուրիշ շրջաններում սադրիչ լուրեր տարածվեցին, թե Նախիջևանում Օրդուբադի մոտերքում, հայերը հանկարծակի հարձակվել են անպաշտպան թուրք գյուղերի վրա, ավերել և բնակիչներին գազանաբար կոտորել: Եվ որպեսզի նահանգի մուսուլման բնակչությանը համոզեն, թե Նախիջևանում իրոք կատարվել է արյունալի հաշվեհարդար, չարամիտները՝ Հաջի Միրզա Քերիմ Խամճուն, Ատրպատականի ամենահարուստ կալվածատեր և վաչխառու Սադրմուլքին և ուրիշներ, իրենց ենթակաների միջոցով հավաքագրեցին Երևանի նահանգից ամիսներ առաջ Ատրպատական գաղթած շուրջ 100 մուսուլման՝ նրանց ներկայացնելով իբրև Օրդուբադի շրջանից հրաշքով փրկվածների:

«Հրաշքով փրկված» այդ «դժբախտների» առջև խնդիր դրվեց՝ գնալ վալիթի (նահանգապետի) մոտ և նրան համոզել, որ Օրդուբադի շրջանում, իրոք, կատարվել են նշված իրադարձությունները:

«Հայերի սրից մի կերպ ազատված» «փախստականները» ներկայանալով նահանգապետին՝ արտասվալից աչքերով նրան նկարագրեցին իրենց «տեսած սարսափները» և թույլտվություն խնդրեցին «Ալլահի անունով» կոտորել «մուսուլմանների ոխերիմ թշնամի հայերին»:

Դիվային այդ ծրագիրը հենց սկզբից ձախողվեց: Նահանգապետը լացակումած «փախստականներին» պատասխանեց, թե հավաստի աղբյուրներից իրեն հայտնի է դարձել, որ հայերը Կովկասում երբեք նախահարձակ չեն եղել, և արյունահեղության մեղավորները միշտ եղել են թուրքերը:Նա հիշեցրեց, որ Մուհամմեդն ամեն անձի իրավունք է տվել դիմադրել և պաշտպանվել՝ եթե վտանգ է սպառնում իր կյանքին: Հայերն էլ պաշտպանվում են և ունեն դրա լիակատար իրավունքը: Վերջում պարսիկ նահանգապետը թուրք «պատգամաբերներին» խստորեն նախազգուշացնելով, ասում է, «եթե նպատակ ունեք Պարսկաստանում ապրել, խորհուրդ կտամ հանգիստ ու խաղաղ լինել, հակառակ դեպքում ստիպված կլինեմ գործադրել ամեն խստություն»[1]:

Ձեռնունայն վերադառնալով նահանգապետի մոտից՝ թուրք «պատգամավորները» ներկայանում են նրանց, ովքեր իրենց ուղարկել էին նահանգապետի մոտ և պատմում իրենց հանդիպման անհաջողության մասին:

---

[1] ***Մատենադարան***, *կաթողիկոսական դիվան, թղթ. N 237*[*], *վավ. 323, թ. 16:*

Այս առաջին անհաջողությունը, սակայն, չի կանգնեցնում չար գործի կազմակերպիչներին: Նրանք ձեռք են բերում զգալի քանակության զենք, զինում նոր մարդկանցով համալրված նշված խմբի անդամներին և սպասում հարմար պահի՝ իրականացնելու համար իրենց մտադրությունը:

Այնուամենայնիվ, հայերի կոտորած կազմակերպել չի հաջողվում: Իշխանությունները բացահայտում են պատրաստվող դավադրությունը և վճռական գործողություններով խափանում այն:

Սթափ մտածող մուսուլմանները՝ հոգևորական թե աշխարհական, այդ օրերին, մի կողմ թողնելով ամեն ինչ, գիշեր-ցերեկ աշխատում էին չարիքի առաջը առնել: Նահանգապետի կարգադրությամբ քարոզիչները մուսուլման ազգաբնակչությանը բացատրում են, թե ովքեր են ծրագրել չարիքը և ինչ նպատակով: Պարսիկները Երևանյան նահանգից գաղթած մուսուլմաններին սպառնում էին ասելով. «Եթե ձեզանից որևէ մեկը հանդգնի մեր հայ եղբայրների դեմ անընդունելի քայլ անել, ապա կպատժվի ամենայն խստությամբ»[1]:

Մուսուլմանների ու հայերի մի համատեղ հավաքում սեյիդներից մեկը մուսուլմաններին ասում էր. «Ես համոզված եմ, որ չեյթանը չի կարող մեր մեջ չար որոմ սերմանել»: Նույն հավաքում հայ ներկայացուցիչը հանդես էր եկել այս պատվական խոսքերով. «Մենք՝ հայերս, լավ գիտենք, թե Պարսկաստանի մեր մուսուլման եղբայրներն ինչպիսի համակրություն և անկեղծ սեր են տածում մեր նկատմամբ: Մենք վստահ ենք, որ այդ հարաբերությունները շարունակվելու և ամրապնդվելու են»[2]:

Պարսիկների լայն շրջանում վաղուց հաստատված էր այն մնայուն կարծիքը, թե հայերն անկեղծորեն նվիրված են Պարսկաստանին, այն համարում են իրենց երկրորդ հայրենիքը, որին հասցրած ամեն մի անհաջողություն ընկալում են որպես մնաս սեփական ազգային շահերին, ուստի և իրենց ուժերի չափով ամեն ինչ անում են կանխելու համար երկրի համար վերահաս ամեն վտանգ:

Պարսիկը վստահում էր հայրենակից հային և հաճախ էր դիմում նրա խորհրդին:

1906թ. օգոստոսին Թավրիզի մուսուլմանների մի մեծ խումբ մտադրվում է սեյիդների գլխավորությամբ շարժվել դեպի տեղի անգլիական հյուպատոսարան և այնտեղից Թեհրանում անգլիական դեսպանի առջև խնդիր բարձրացնել, որպեսզի նա միջամտի շահի առջև՝ խոստացած սահմանադրության գործադրությունը չձգձգելու, այն անհապաղ կյանքի մեջ մտցնելու համար:

Բայց նախքան այդ քայլին դիմելը, սեյիդները դիմում են քաղաքի հայ երևելիներին և խորհուրդ հարցնում: Վերջիններս նրանց հորդորում են չդիմել այդ քայլին: Հայերից մեկն ասում է. «Քանի որ դուք հայերիս համարում եք

[1] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237[4], վավ. 323, թ. 16:
[2] Նույն տեղում, թ. 18[1]:

ձեզ հավատարիմ, առանց քաշվելու ձեր սիրտը բացելով ամեն ինչ հայտնում եք մեզ, ապա բարոյական պարտականությունս եմ համարում հիշեցնելու, որ կեղտոտ շորը պետք է լվանալ տանը: Քանի որ Պարսկաստանի ազգաբնակչությունը գոհ է շահից, բնավ կարիք չկա պահանջով գնալու անգլիացոց մոտ. չէ՞ որ հյուպատոսարան գնալով վիրավորանք ենք հասցնելու մեր շահնշահին: Մենք մեր փորձով գիտենք, որ ուրիշ երկրների միջամտությունը միշտ ծառայել է հենց իրենց՝ այդ երկրների նպատակներին: Երբ նրանք հասնում են իրենց նպատակին, դրանից հետո այլևս ոչինչ չեն ձեռնարկում: Եթե անգլիացիները ձեզ խոստումներ անեն ու խրախուսեն, ապա պիտի մտածել, որ նրանք պետք ունեն Պարսկաստանից որևէ պատառ պոկել: Երբ նրանք իրենց բաժինը կտանեն, մյուս պետությունների ախորժակը նույնպես կբացվի, և նրանք էլ, տարբեր պատրվակներով, իրենց պատառները կտանեն: Այդ դեպքում ի՞նչ կմնա ձեզ: Ես կարծում եմ, որ եթե վճռված է Պարսկաստանին տալ սահմանադրություն, փոխանակ ուրիշի ուղը գնալու, ավելի լավ է ուղղակի գնալ նորին մեծության վալիաթի մոտ, դիմել նրան, բացատրել մեր ցավերը և աղերսել, որ նա վեհապետի մոտ միջնորդի՝ փութացնելու համար շնորհված սահմանադրության գործադրությունը»[1]:

Հանդիպման ժամանակ հայերից մի ուրիշը բարեկամ պարսիկներին խորհուրդ էր տալիս օտարներին դիմելու դեպքում միայն դիմել Թավրիզի ռուսական կոնսուլին կամ Թեհրանի դեսպանին, քանի որ ռուսներն իրենց անկողմնակալությամբ գերադասելի են անգլիացիներից:

Բայց այդ խորհուրդն արձագանք չգտավ սեյիդների մոտ: Նրանցից մեկն ասում էր, որ սկզբում ռուսների նկատմամբ պարսիկներն անկեղծ էին, մեծ համարում և վստահություն ունեին ռուսական պետության նկատմամբ՝ նրան համարելով արդարադատ: Բայց վերջին շրջանում ռուս կառավարության կողմից իր երկրի այլազգիների վայրենի ճնշումները, Կովկասում Թուրք-հայկական կոտորածներ կազմակերպելու մեջ նրա կատարած ամոթալի գործերը փոխել են Պարսկաստանի ժողովրդի վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ: Սահմանադրության համար պարսիկները չեն դիմի ցարական կառավարության աջակցությանը, քանի որ այդ կառավարությունը վերջին երկու տարում անգթորեն թափել է 100 000-ից ավելի անմեղ մարդկանց արյուն: Նման պետության հետ օրինականության և օրենքի մասին խոսելն ավելորդ է:

Ինչ վերաբերում է օսմանյան Թուրքիայի նկատմամբ պարսիկների վերաբերմունքին, ապա սեյիդներից մեկն ասում էր. «Գալով մեր հարևան իսլամ օսմանցի կառավարությանը, սա ռուսականից էլ վատ է: Մեզանում մի ասացվածք կա՝ «Այուննիի տան մեջ կեր և հայի տանը քնիր»: Թեև Թուրքերն իսլամ են, բայց մեր կրոնի թշնամին են: Նրանց ներկա պետության ռեժիմը մերինից վատն է: Վերջին քառորդ դարում սուլթանն իր հպատակներին կոտո-

[1] «Մշակ», N 207, 24 սեպտեմբերի 1906թ.:

րել է տվել հենց այն պատճառով, որ նրանք սահմանադրություն էին ուզում»[1]:

Այսպիսով, քաղաքական թմբիրից արթնացած և իր ազգային շահերն արդեն գիտակցող պարսիկ ժողովուրդն արգելք եղավ բյուրոկրատիայի դավերի ու մեքենայությունների իրագործմանը: Նա միաժամանակ բացահայտորեն իր համակրանքն արտահայտեց Պարսկաստանի խաղաղ ու աշխատասեր հայ հայրենակիցների նկատմամբ:

1906թ. աշնանը Հ.Յ.Դ. Ատրպատականի «Վրեժ» կենտրոնական կոմիտեն Թավրիզում հրավիրել էր դաշնակների համաիրանական համաժողով, որպեսզի, տեղերից բերված տեսակետները հաշվի առնելով, մշակվեր գործունեության ընդհանուր տակտիկա: Համաժողովում կազմակերպությունների ներկայացուցիչների մեծ մասն արտահայտվեց սահմանադրական շարժմանը մասնակցելու օգտին: «Դիլյան» կոմիտեի պատգամավոր Եփրեմ Դավթյանը համաժողովում կարդաց իրենց կազմակերպության որոշումը՝ սահմանադրական շարժմանը ակտիվ մասնակցելու առաջարկով[2]:

Այդ ամիսներին Պարսկաստանի հնչակյան և դաշնակցական կազմակերպությունները, հաշվի առնելով, որ առաջիկայում երկրում սպասվում են բուռն իրադարձություններ, ձեռնարկեցին հաշտության և իրենց ուժերը համատեղելու որոշ փորձեր:

1906թ. դեկտեմբերի 15-ին Հ.Յ.Դ. «Վրեժ» կ.կոմիտեի և հնչակյան կուսակցության Իրանի կազմակերպության գործադիր կոմիտեի ստեղծած հանձնաժողովի միջև տեղի ունեցան բանակցություններ, որից հետո նրանք հանդես եկան համատեղ հայտարարությամբ:

Հայտարարության մեջ նշվում էր, որ հայ ժողովուրդը գերմարդկային ճիգերով, հեղափոխական արյունալի պայքարով փորձում է իր վրայից թոթափել թուրք բռնակալների դժոխային լուծը: «Դժբախտաբար, այդ հերոսական ճիգերն իրենց ցանկալի հետևանքին չհասան մի շարք ծանր հանգամանքների պատճառով, որոնց մեջ աննշան դեր չխաղաց, ցավ է ասել, կռվող ուժերի անհամերաշխությունը: Մարդիկ, որոնք պետք է նույն նպատակի համար համախմբվեին, մարդիկ, որոնք կոչված էին դժբախտ ժողովրդի ցավոտ վերքերը դարմանելու, շատ անգամ, անհամերաշխության հետևանքով, ջլատում էին առանց այն էլ չափազանց փոքր ուժերը և անգիտակցաբար ուժեղացնում թշնամուն ու ասպարեզ տալիս հակահեղափոխական մութ ու խավար ուժերին»:

Այդ անհամերաշխությունն ու պայքարը հայ բողոքող ուժերի միջև, ինչպես արդեն բազմիցս նշվել է, տևել էին ամբողջ տարիներ: Առողջ բանականությունը, սակայն, հրամայաբար պահանջում էր համախմբել ջանքերը՝ ի շահ համազգային նպատակների[3]:

---

[1] **«Մշակ»**, N 207, 24 սեպտեմբերի 1906թ.:
[2] **«Դրոշակ»**, N 4, ապրիլ, 1912, էջ 82-87:
[3] Նույն տեղում, N 1(179), հունվար, 1907, էջ 8:

Զույգ կուսակցությունների տեղական կազմակերպություններն անկեղծորեն ձգտում էին իրենց ուժերը միավորել պարսիկ ժողովրդի ազատագրական պայքարին:

1906թ. դեկտեմբերի 15 թվակիր փաստաթղթի երևան գալը բացառիկ դեպքերից մեկն էր հնչակ-դաշնակ փոխհարաբերությունների մեջ: Ուժերի միավորման ուրիշ փորձեր նույնպես նախկինում եղել էին, որոնք բոլորն էլ վերջացել էին անարդյունք: Արդյո՞ք այս անգամ ձեռք բերված համաձայնությունն ու պայմանավորվածությունը նույնպես նախորդների բախտին էին արժանանալու: Ցույց կտար ժամանակը:

1906թ. դեկտեմբերի վերջերին սահմանադրության մշակված նախագիծը մեջլիսը ներկայացրեց անկողնին գամված Մուզաֆֆեր էդ Դին շահին, որն իր ստորագրությամբ դեկտեմբերի 30-ին հաստատեց այն:

Շատ չանցած, 1907թ. հունվարին, Մուզաֆֆեր էդ Դին շահը կնքեց իր մահկանացուն: Շահի մահվան առթիվ երկրում սուգ հայտարարվեց: Պարսկահայերը բոլոր հիմքերն ունեին միանալու համազգային սգին, քանի որ հանգուցյալ շահն իր հավասարակշռված քաղաքականությամբ և մեղմ բնավորությամբ նպաստել էր նրանց խաղաղ կյանքին ու բարօրությանը:

Պարսկահայերը վերհիշում էին, թե ինչպես 1896թ. թուրքական սուլթան Աբդուլ Համիդը իսլամի պաշտպանության քողի տակ դիմել էր Մուզաֆֆեր էդ Դինի հորը՝ Իրանի Նասր էդ Դին շահին՝ առաջարկելով Պարսկաստանի և Թուրքիայի սահմանամերձ շրջաններում միացյալ ճակատ ստեղծել հայ ազգային ազատագրական շարժման դեմ: Մեծ փորձառություն ու աչալրջություն, անհողդողդ ու հաստատ կամք, նաև փայլուն կրթություն ունեցող շահը կտրականապես մերժել էր սուլթանի առաջարկը, քանի որ երկրի արևմտյան և հյուսիս-արևմտյան մասերում ապրող հայերին և նրանց զինված ջոկատներին կառավարությունը դիտում էր որպես պոտենցիալ ուժ թուրքական հնարավոր ագրեսիայի դեմ: Հետագայում թուրքական սուլթանն այդ առաջարկն արել էր նաև Մուզաֆֆեր էդ Դին շահին, որը նույնպես կտրականապես մերժել էր:

Մուզաֆֆեր էդ Դինի հոգեհանգիստը կատարեցին ոչ միայն պարսկահայերը: Այն կատարվեց հայկական բոլոր կենտրոններում Կովկասում, Ռուսաստանում, արտասահմանում:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԴԱՑՈՒՄԸ

Մուզաֆֆեր էդ Դին շահին փոխարինեց նրա որդին՝ գահաժառանգ Մուհամեդ Ալին (Մամադալին), որը մինչ այդ, ինչպես արդեն նշվել է, փոխարքա էր Ատրպատականում:

Հայրը և որդին հակապատկերներ էին: Հայրը հայացքներով ազատամիտ

էր, բնավորությամբ բարի և թույլ: Որդին հետամնաց քաղաքական հայացքներով մարդ էր, իսկական բռնակալ: Լինելով երիտասարդ և առողջ՝ նա առաջին օրերից իսկ սկսեց գործել մեծ եռանդով:

Անցնելով իշխանության գլուխ՝ Մամադալին տեսավ, որ զաֆարների առասպելական հարստությունից լոկ մի կմախք է մնացել: Գանձարանը կատարյալ դատարկ էր, ներկան՝ տագնապալից, ապագան՝ անորոշ:

Այդ ժամանակվանից սկսվեց սահմանադրությունը և սահմանադրական կարգերը կյանքում կենսագործելու համար մղվող պայքարի շրջանը: Պայքարը շարունակվեց պարսկական հեղափոխության հետագա բոլոր տարիներին, բայց չպսակվեց լիակատար հաղթանակով:

Գահ բարձրանալով՝ Մուհամմեդ Ալին հաստատեց հոր խոստումներն ու հրովարտակը և առաջին մի քանի ամիսներին շարունակեց նրա գործը: Նա իրեն շրջապատեց հավատարիմներով, ապա պալատից հեռացրեց ժողովրդին ատելի մի քանի բարձրաստիճան պաշտոնյաների: 1907թ. մարտին ստիպեց հրաժարական տալ մեծ վեզիրի (մինիստր-նախագահի) և արտաքին գործերի մինիստրի պաշտոնները վարող Ալա էդ Դովլեին և աքսորեց մայրաքաղաքից[1]:

Կրկին մեծ վեզիր նշանակվեց վերը նշված ծերունի Մոշիր էդ Դովլե Նասրուլլահ խանը: Պարսկաստանի ամենավաղեմի և ամենահայտնի ազնվատոհմերից սերված այս գործիչը ազատագրական գաղափարների զարթոնքի հետ հակվել էր դեպի ժողովրդական պահանջները և հարգանք էր վայելում լայն զանգվածների կողմից:

Պարսկաստանում սահմանադրական կարգեր հաստատելու գործում իր հորը՝ Մոշիր էդ Դովլեին, ամեն կերպ աջակցում էր որդին՝ Մոշիր-Մուլքը, որը Մոսկվայի համալսարանն ավարտելուց հետո նշանակվել էր Պետերբուրգում պարսից դեսպան: Հայր և որդի Մոշիրները համարվում էին Պարսկաստանում ռուսական շահերի պաշտպաններ: Լայն կապեր հաստատելով Մոսկվայի և Պետերբուրգի պետական ու հասարակական շրջանների ու մամուլի օրգանների հետ՝ Մոշիր-Մուլքը մեծ ջանքեր էր գործադրում պարսկական սահմանադրական շարժման մասին ռուսական հասարակության մեջ դրական վերաբերմունք ձևավորելու համար:

Շատ չանցած՝ Մոշիր էդ Դովլեն փոխեց իր վերաբերմունքը սահմանադրական շարժման նկատմամբ: Ժողովրդի ազատագրական ձգտումները շատ ավելի բուռն էին, քան սպասում էր նոր սադրազամը: Ուստի շատ շուտով նա սկսեց հակադրվել Ազգային ժողովին: Ի վերջո, նրա և պառլամենտի միջև առաջ եկան լուրջ ընդհարումներ:

Վեճերը հատկապես բուռն բնույթ ստացան այն բանից հետո, երբ պառլամենտը պահանջեց, որ իր առջև պատասխանատու լինեն շահզադեները՝ արքայազն իշխանները, և պարբերաբար հաշվետվություն տան, թե ինչով են իրենք

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237 ᵃ, վավ. 323, թ.25:

զբաղվում[1]: Այդ պահանջի հետ վճռականապես անհամաձայն էր Մոշիր էդ Դովլեն, որը և հրաժարական տվեց:Նրա հետ միասին արձակվեցին մյուս մինիստրները:

Այդ փաստը ցույց տվեց, որ պարսկական հեղափոխությունը մտնում է նոր փուլերի մեջ, գնալով դառնում էր ավելի ժողովրդական՝ ընդլայնելով իր պահանջների շրջանակները: Ազգային ժողովն օրեցօր ուժեղանում և փորձում էր իր ձեռքը վերցնել երկրի կառավարման ղեկը:

Այդ ամենը տեսնում էր ժողովուրդը: Ամբողջ Պարսկաստանը լարված ուշադրությամբ հետևում է պառլամենտի գործունեությանը և գնալով համոզվում, որ այն աստիճանաբար դառնում է իր շահերի պաշտպանը: Ժողովուրդը կանգնեց իր ներկայացուցիչների կողքին և պատրաստվեց պաշտպան կանգնել նրանց՝ կառավարության հնարավոր ոտնձգությունների դեմ:

Թեպետև Ազգային ժողովի հետ ընդհարման արդյունքում մեծ վեզիր Մոշիր էդ Դովլեն պարտվեց, բայց այդ դեպքը ցույց տվեց, որ պարսիկ ժողովուրդը դեռ պատրաստ չէ երկրի վերանորոգման գործն առաջ տանել մեծ մղումով: Պարզ էր դառնում նաև, որ սահմանադրության իրականացման ճանապարհին կանգնելու են երկրի բոլոր հետադեմ ուժերը և իրենց ջանքերը միավորելու են շարժումը խեղդելու համար:

Մոշիր էդ Դովլեն պաշտոնաթող լինելուց հետո երիտասարդ Մուհամմեդ Ալի շահը հրաժարվեց կատարել նոր մեծ վեզիր նշանակելու մեջլիսի առաջարկը և հայտարարեց, որ այսուհետև ինքն է լինելու իր սադրազամը: Դա վկայում էր, որ նա, չկարողանալով հաշտվել ազդարարված սահմանադրական կարգերի հետ, նպատակ ունի հոր «տանուլ տվածը» հետ վերադարձնել:

Հետադիմական ուժերը ողջունեցին շահի այդ քայլը, որը, ըստ էության, նրա առաջին բացահայտ անհամաձայնությունն էր պառլամենտի հետ: Դա նշանակում էր, որ շահն աստիճանաբար անցնում է հետադիմության ճամբարը և բացառված չէ, որ անձամբ ինքն է գլխավորելու պայքարը սահմանադրական շարժման դեմ:

Շահը գուցե չդիմեր նման համարձակ քայլի, եթե իր թիկունքում չզգար ռուսական կառավարության աջակցությունը:

Ռուսական միապետն իր պաշտպանության տակ էր առել պարսից նոր միապետին և չէր թաքցնում իր ատելությունը պարսկական հեղափոխության նկատմամբ: Իր երկրի հեղափոխության ոխերիմ թշնամին չէր կարող թշնամանք չտածել դեպի հարևան երկրի հեղափոխությունը:

Իր իսկ կողմից ստեղծած ծանր վիճակից դուրս գալու ամբողջ հույսը երիտասարդ շահը կապեց անձնական կողմնակի զորագնդի հետ, որի հրամանատարը ռուս զորապետ Լյախովն էր: Առանց սրա, առավել ևս՝ առանց թեհրանի ռուսական դեսպանի հավանության, շահը չէր կատարում որևէ լուրջ քայլ:

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237 ᵃ, վավ. 323, թ.22:

Այդ պահին Մամադալին դեռ մտադիր չէր լիովին խզվել պառլամենտից: Մի կողմից կարծես համակրություն էր ցույց տալիս մեջլիսի (պառլամենտի) նկատմամբ և ընդունում էր անջումենների (տեղական սեյմերի)* գոյությունը, մյուս կողմից, մտմտում էր պետական հարվածի գաղափարի շուրջ:

Նա նշանակեց նոր մինիստրներ: Մեջլիսի պատգամավորները պահանջեցին, որ սրանք իրենց առջև երդում տան, որ հավատարիմ են լինելու սահմանադրությանը: Զգալով, որ ինքը դեռ պատրաստ չէ պառլամենտի հետ բացահայտ ընդհարման, վեհապետը նոր մինիստրներին հրամայեց ներկայանալ մեջլիս և երդում տալ:

Շահը պարզ տեսնում էր, որ մեջլիսին արվող զիջումները շուտով հանգեցվելու են իր իրական իշխանության կորստին, և ինքն, ըստ էության, ենթակա է դառնալու ժողովրդական ներկայացուցչական մարմնին: Ուստի առանց ուշացնելու ձեռնարկեց հակամիջոցներ. 1. Օտար դեսպանությունների ու հյուպատոսարանների պաշտպանության պատրվակով մայրաքաղաք բերվեցին ռուս կազակներ և հնդկա-անգլիական սիփահներ, 2. Պալատն ու գահը պաշտպանելու համար Թեհրան բերվեց բախտիարցի հեծելազորք, որը նույն դերն էր կատարում, ինչ կազակները՝ Ռուսաստանում, 3. Մեջլիսից գաղտնի, փոխառություն կնքեց ռուսական բանկի հետ, դրանով իսկ կատարելով սահմանադրական խախտում, քանի որ, առանց մեջլիսի հաստատման, ոչ մի նոր փոխառություն շահն իրավունք չուներ կնքելու, 4. Հեռագիր ուղարկեց Լոզանում գտնվող նախկին սադրազամ Աթաբեկին՝ նրան հրավիրելով շտապ վերադառնալ Պարսկաստան:

Մեջլիսի պատգամավորները լավ գիտեին, որ Աթաբեկը հենց սկզբից դեմ է եղել սահմանադրական շարժմանը, և համոզված էին, որ նրա գալով կամրապնդվի շահի և նրա կամարիլիայի իշխանությունը: Ահա թե ինչու պառլամենտը, հոգևորականությունը, նույնիսկ պանիսլամական շարժման պարագլուխները երկրով մեկ լայն ագիտացիա սկսեցին Աթաբեկի վերադարձը թույլ չտալու համար: Նրանք Աթաբեկին համարում էին Պարսկաստանի բոլոր աղետների սկզբնապատճառ, մեղադրում էին, որ իր սադրազամության օրերին հսկայական վարկեր ու փոխառություններ է վերցրել Ռուսաստանից և երկիրը տնտեսապես ու ֆինանսապես ենթարկել հյուսիսային հարևանին:

Բայց սահմանադրականների և հոգևորականների ագիտացիան նպատակին չհասավ: Նրանցից շատերը հրաժարվեցին Աթաբեկի դեմ սկսած պայքարից և գտնում էին, որ պետական գործերում ունենալով մեծ փորձառություն, լինելով խելք ու մեծ ընդունակություններ տեր ձեռնհաս անհատ, նա, նորից սադրազամություն ստանձնելով, կարող է Պարսկաստանը դուրս բերել

* Անջումենները, որոնք սկզբնապես հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների ժողովներ էին, աստիճանաբար ձեռք բերելով օրենսդրական ֆունկցիաներ, կատարում էին տեղական սեյմերի դեր:

խառնակ վիճակից, նպաստել երկրում սահմանադրական-պառլամենտական կարգերի ամրապնդմանը, եթե, իհարկե, կարողանա համերաշխորեն գործել մեջլիսի հետ:

Սահմանադրականները նաև հաշվի առան այն, որ արտասահման անցնելուց հետո Աթաբեկն անդադրում ճանապարհորդել էր, եղել էր եվրոպական համարյա բոլոր երկրներում, Ճապոնիայում, Չինաստանում, Ամերիկայում, Աֆրիկայում, ուսումնասիրել դրանց կառավարման ձևերը, ֆինանսական, առևտրական, կրթական համակարգերը, քաղաքական ներքին կայունության կամ անկայունության պատճառները: Ուսումնասիրությունները Աթաբեկին բերել էին այն համոզման, որ վարչական ու պետական ամենալավ ձևն անգլիականն է, այսինքն՝ սահմանադրական միապետությունը, որը և միակ հարմարն է Պարսկաստանի համար: Այս տեսակետը մոտավորապես համընկնում էր երկրի սահմանադրական շարժման նպատակների հետ, որի ղեկավարությունը, ի վերջո, հրաժարվեց Աթաբեկին մերժելու պահանջից:

1907թ. ապրիլի 12-ին Աթաբեկը վերադարձավ Թեհրան, որին ժողովուրդը և կառավարությունը դիմավորեցին մեծ շուքով: Նա երկիրը տեսավ կատարյալ խառնակ վիճակի մեջ. կառավարությունը լիովին վարկաբեկված էր և մեծապես չեզոքացված ներքին գործերից:

Կրկին հաստատվելով մեծ վեզիրի պաշտոնում՝ Աթաբեկը շահից ստացավ մեծ լիազորություններ երկիրը կառավարելու գործում:

Բայց այս անգամ նախկին մեծ վեզիրը չէր: Ամեն քայլափոխի խիստ զգուշավորություն հանդես բերելով՝ նա ընդառաջ էր գնում բյուրոկրատիայի պահանջներին, ամեն ինչ անում նրան հաճելի երևալու համար: Ավելին, նրա մի շարք անհաջող ձեռնարկումները մեծ վնաս հասցրին երկրի տնտեսությանը, ծանրացրին ֆինանսական վիճակը: Աթաբեկը ռուսական բանկի հետ կնքեց երկու փոխառություն, բայց փոխառած միլիոնները ուղղվեցին ոչ թե երկրի վերաշինությանն ու բարգավաճմանը, այլ ծախսվեցին միանգամայն աննպատակ բաների վրա՝ շահի, պնակալեզ պալատականների, շահզադեների, բյուրոկրատների դեպի Եվրոպա կատարած ճանապարհորդությունների վրա, լրացրին պաշտոնյաների գրպանների պարունակությունը:

Երկրում հետևյալ վիճակն էր. եթե մի կողմից շահն ուժեր էր հավաքում հնարավոր պետական հարվածի, մեջլիսը ցրելու և «սանձարձակ մոլլաներին» ուժով ճնշելու համար, ապա, իրենց հերթին, մեջլիսը և սահմանադրական շարժման ղեկավար գործիչները քնած չէին և դիմում էին հակաքայլերի:

Պառլամենտը իրեն արդեն ամուր էր զգում, քանի որ տեղերում կյանքի կոչված նահանգական սեյմերը՝ անջումենները, անվերապահորեն զորավիգ էին ու աջակից նրան: Հենվելով անջումենների զորակցության վրա, մեջլիսը շահից ու կառավարությունից պահանջեց իրեն ճանաչել ոչ միայն իբրև խորհրդակցական մարմին, ինչպես ծրագրված էր առաջ, այլև՝ օրենսդրական: Պառլամենտը ձգտում էր ոչ միայն սահմանափակել շահի ինքնակալական

իրավունքները և միահեծան ռեժիմը, այլև վերահսկել կառավարության գործունեությունը և մինիստրներին պատասխանատու դարձնել իր առաջ: Այլ խոսքով, մեջլիսը գտնում էր, որ ինքը՝ որպես պառլամենտ, լինելու է օրենսդիր և վերահսկող մարմին, այսինքն՝ սահմանելու է օրենքներ և հսկելու է դրանց գործադրությանը[1]:

Այդ հողի վրա ուժգին պայքար սկսվեց պառլամենտի և կառավարության միջև: Վիճաբանությունները օրեր տևեցին, որի արդյունքում, ի վերջո, հաղթող հանդիսացավ մեջլիսը: Երիտասարդ շահը ստիպված էր հետզհետե զիջումների գնալ և պետության կառավարման ընթացքում ընդունել մեջլիսի առաջարկությունները: Իր կամքին հակառակ, նա պաշտոնաթող արեց մի շարք կեղեքիչ նահանգապետերի ու կուսակալների և նրանց պատժեց գործած հանցանքների համար:

Օրինակ՝ պաշտոնից հեռացվեց Սպահանի և ամբողջ Արաղի կուսակալը՝ ահարկու և ամենազոր Զիլլի-Սալթանը, որը Նասր և Մուզաֆֆեր շահերի օրով միահեծան կառավարում էր Պարսկաստանի գրեթե մեկ երրորդ մասը կազմող նշված տարածքները: Նրա շահատակությունների ու դաժանությունների մասին պատմություններ էին շրջում ողջ Իրանում:

Զիլլի-Սալթանի հեռացումն Է՛լ ավելի թևավորեց սահմանադրականներին, քանզի դա ապացույց էր այն բանի, որ շահն այլևս անկարող է հաշվի չնստել մեջլիսի հետ:

Մի շարք ատելի բարձր պաշտոնյաներ փոխելուց հետո մեջլիսը ձեռնարկեց մի ուրիշ կարևոր քայլ:

Երկրում խորացող ժողովրդական շարժումն ուղղված էր ոչ միայն ներքին բարենորոգումների նպատակին, այլև այդ բարենորոգումներին արգելք հանդիսացող և Պարսկաստանի լիակատար գաղութացմանը ձգտող օտարերկրյա իմպերիալիստական երկրների ոտնձգությունների դեմ:

Եվրոպացիների նկատմամբ ատելությունը հատկապես թանձրացել էր Պարսկաստանում հիմնավորված կամ ժամանակավորապես աշխատանքի եկած բելգիացիների շուրջ:

Երկրին մեծ հարված էր Աթաբեկի կողմից Պարսկաստանի համարյա ամբողջ մաքսային, փոստային և ֆինանսական ոլորտները բելգիացիներին հանձնելը: Նախընթաց տարիներին մեծ թվով բելգիացիներ հաստատվել էին Պարսկաստանի զանազան քաղաքներում և հատկապես՝ Թեհրանում: Սրանք ստանում էին բարձր աշխատավարձ և վայելում հատուկ առանձնաշնորհներ, ամեն քայլափոխում չարաշահում իրենց տրված մեծ արտոնությունները, մասնավորապես, Բելգիայից Պարսկաստան էին հրավիրում հայրենակիցների նորանոր խմբեր և նրանց աշխատանքի տեղավորում իրենց ենթակա ոլորտներում: Դրա հետևանքով մեծ թվով պարսիկ պաշտոնյաներ հեռացվում էին աշխատանքից, հետևապես՝ զրկվում ապրուստի միջոցներից:

Ամեն տեղից մեջլիսին բողոքի դիմումներ էին գալիս բելգիացիների դեմ, որոնք երկրում իրենց պահում էին գաղութարարների պես, հաշվի չէին առնում տեղացիների դարերով սրբագործված օրենքները, իրենց ֆինանսական հարստահարման տակ էին գցում տնտեսության նորանոր ոլորտներ: Ավելին, նրանցից ոմանք նույնիսկ հավակնում էին մինիստրական պոստերի, և դա նրանց հաջողվում էր: Օրինակ՝ Նոս անունով մի խորամանկ և ճարպիկ բելգիացի հասարակ մաքսային պաշտոնյայից կարողացել էր դառնալ ողջ Իրանի մաքսերի, փոստի և ֆինանսների մինիստր, այսինքն՝ իր ձեռքն էր վերցրել երկրի տնտեսության գլխավոր լծակները:

Բելգիացիների նկատմամբ ժողովրդի ատելությունը մեղմելու համար Նոսը կարգադրեց մաքսային, փոստային և ֆինանսական ոլորտներում աշխատող հայերին ազատել զբաղեցրած տեղերից և նրանց փոխարեն նշանակել պարսիկների: Մեկ-երկու ամսում հարյուրավոր հայեր զրկվեցին աշխատանքից: Բայց դա չթեթևացրեց Նոսի և բելգիացի մյուս պաշտոնյաների վիճակը:

Մեջլիսը շահի առջև կտրուկ դրեց Նոսին պաշտոնանկ անելու և ընդհանրապես բելգիացի պաշտոնյաներին երկրից արտաքսելու հարցը: Շահը տատանվում էր, համարձակություն չէր դրսևորում գնալու այդ քայլին, պատճառաբանելով, թե դրա հետևանքով կվատթարանան Պարսկաստանի հարաբերությունները ոչ միայն Բելգիայի, այլև նրան բարեկամ եվրոպական երկրների հետ:

Շահի պատճառաբանությունները մեջլիսը համարեց ոչ լուրջ, չհիմնավորված և ամուր կանգնեց իր տեսակետի վրա: Շահը, վերջապես, ստիպված էր ենթարկվել պառլամենտի ճնշմանը: Նոսը հեռացվեց երկրի համար կարևորագույն նշանակություն ունեցող պաշտոնից: Դրան հետևեցին բելգիացիների նոր հեռացումներ: Աշխատանքից արձակված հայերից շատերը վերականգնվեցին իրենց նախկին պաշտոններում:

Պառլամենտի քայլերը ջերմորեն ողջունեցին պարսկահայերը, որոնց մեծ մասի համակրանքն արդեն սահմանադրականների կողմն էր: Նրանք չէին հաշտվում այն մտքի հետ, որ, ուժեր հավաքելով, հետադիմությունը կարող է խափանել շարժման հետագա զարգացումը:

Այդ շրջանում Հ.Ց.Դ. չորրորդ ընդհանուր ժողովը Պարսկաստանի իր մարմինների գործունեության վերաբերյալ ընդունել էր հետևյալ բանաձևը.

«Նկատելով, որ պարսկական ներկա շարժումը կարող է դառնալ ժողովրդական արթնացման բնույթ ունեցող հասարակական խոշոր երևույթ թե՛ Պարսկաստանի, թե՛ Արևելքի համար, և գտնելով, որ դրա տարածվելն ու լայնանալը ցանկալի է թե՛ համամարդկային, թե՛ հայկական տեսակետից, ընդհանուր ժողովը հանձնարարում է Պարսկաստանի դաշնակցական մարմիններին և անհատներին՝ բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման զարգացմանը՝ մտցնելով պարսկական արթնացման մեջ այն ազատագրական, ռամկավա-

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237*, վավ. 323, թ. 22:

բական և աշխատավորական ոգին, որը բխում է դաշնակցության ծրագրից»[1]:

Սակայն պառլամենտը որքան շատ էր խառնվում պետության վարչական գործերին, որքան հաճախ էր վերցնում գործադիր իշխանության ֆունկցիաներ, այնքան ավելի էր հեռանում իր բուն խնդիրներից:

Զբաղվելով պաշտոնյաների զեղծումները բացահայտելով, նրանց փոխելով և նման կարգի մանր-մունր ժամանակավոր պրակտիկ գործերով՝ պառլամենտը չըմբռնեց ազգային կամ ժողովրդական ներկայացուցչության իր միսիան և գնաց սխալ ճանապարհով: Երկիրը սպասում էր օրենքների ստեղծմանը, բայց այդ հիմնական գործը մեջլիսը մի կողմ էր թողել, չըմբռնելով, որ զեղծումների, կամայականությունների և բյուրոկրատական շահատակությունների դեմ կարելի է արդյունավետ պայքարել միայն մնայուն, հաստատուն օրենսդրությամբ, որից զուրկ էր Իրանը:

Անշուշտ այդ ամենի պատճառը այն էր, որ մեջլիսում չկային օրենսդրական, ստեղծագործական հատկություններով օժտված ձեռնհաս գործիչներ: Պառլամենտը գործում էր բազմաթիվ սխալներ՝ չկարողանալով դառնալ ստեղծագործ և կառուցողական ուժ:

Վիճակը բարդանում էր նրանով, որ շահի կառավարությունը նույնպես չուներ հմուտ ղեկավարներ, պետական անձինք, որոնք օժտված լինեին վերանորոգչական ակնառու հատկություններով:

Այդքանից հետո պատահական չէր, որ Իրանն ընկել էր կատարյալ անիշխանության մեջ:

Այս պայմաններում սահմանադրականների և հակասահմանադրականների պայքարը գնալով ավելի ու ավելի կատաղի բնույթ էր ստանում[2]*: Թեհրանում հրատարակվում ու ցրվում էին հակադինաստիական թռուցիկներ: Շատ քաղաքներում բացվել էին ինքնակոչ մեջլիսներ, որոնք անիշխանություն էին սերմանում: Երկու կողմից շարունակ միտինգներ էին կազմակերպվում, մրցկիթներում մեկը մյուսին հակառակ հրապարակային դասախոսություններ էին տալիս, այլ խոսքով՝ երկու կողմն էլ աշխատում էր պրոպագանդայով ավելացնել իր շարքերը: Հուզումները մեծ ծավալ էին ստացել Թավրիզում, իսկ Քիրմանշահում և Շիրազում լիակատար անիշխանություն էր: Ռեշտում հեղափոխական քաղաքացիները գործավորներին ստիպել էին դադարեցնել մաքսատան և հեռագրատան աշխատանքը: Գյուղերում նույնպես անիշխանություն էր. գյուղացիները, քաջալերված սահմանադրությունից, ըմբոստացել էին իրենց տերերի դեմ: Բանը հասել էր նրան, որ գյուղատերերը չէին համարձակվում խոսք բացել գյուղացիներից հողավարձը գանձելու մասին:*

Իրադարձությունների զարգացումը կարծես տանում էր դեպի սահմանադրականների և նրանց քաղաքական հակառակորդների բացահայտ ընդհարման: Ուստի, հաշվի առնելով հնարավոր առճակատումը, կառավարությունը Թեհրանը, Թավրիզը, Սպահանը և այլ քաղաքներ պահում էր զինվորական հսկողության տակ: Մի շարք տեղերում հետադիմությունը ստեղծում էր ռազմականացված ջոկատներ: Լարիստանի կառավարիչը, որը շահի եղբայրն էր, ուղի էր կանգնեցնում ռազմատենչ թափառական ցեղերին և ժողովում լավ զինված զորք:

Սահմանադրականներն, իրենց հերթին, ձեռնարկել էին ժողովրդին զինելու գործը:

Ահա նման իրադրություն էր, երբ մեջլիսը ձեռնամուխ եղավ Մուզաֆֆեր շահի կողմից ստորագրված սահմանադրական դրույթները խմբագրելու և դրանցում փոփոխություններ կատարելու գործին:

Արդեն քանիցս ասվել է, որ Պարսկաստանում շարժման ղեկավարությունը ժողովրդի ներկայացուցիչների ձեռքին չէր, ինչպես Ռուսաստանում: Շարժման մեջ գլխավոր դերերից մեկը կատարում էին համիսլամական կղերական և բուրժուական տարրերը, որոնց միակ պահանջը շահերի և շահզադեների բրոնապետական, միահեծան իշխանությունը սահմանափակելն էր: Բայց ժողովրդի երազանքը միայն դա չէր, այլ նաև՝ տնտեսական, սոցիալական և քաղաքական ազատությունների ձեռքբերումները: Մեջլիսի մշակած սահմանադրական սկզբունքները չէին կարող բավարարել երկրի բնակչության ճնշող մեծամասնությանը:

Մեջլիսում չկային աշխատավոր դասակարգերի ներկայացուցիչներ: Նույն երևույթը կրկնվում էր տեղական պառլամենտների՝ անջումենների մեջ: Գլխավորապես հոգևորականների ղեկավարությամբ շարունակվում էր ուժգին պրոպագանդա եվրոպացիների, նրանց կուլտուրայի դեմ: Դա իր հետևից բերում էր հակաքրիստոնեական տրամադրություններ, որից տուժում էր նաև պարսկահայությունը: Վերջապես, հիմնական օրենսդրությունը («Կանոնի-Էսասի») շոշափում էր շահի ոչ մահմեդական այլացեղ հպատակների, այդ թվում հայության շահերը, որոնց չէր տրվել սահմանադրական և պառլամենտական կյանքին ու գործունեությանը մասնակցելու իրավունք:

Եվ ահա պարսկահայերը, նկատի առնելով, որ մայիսին մեջլիսը անդրադառնալու է սահմանադրական փոփոխությունների հարցին, դիմեցին Էջմիածին, կաթողիկոսին՝ խնդրելով միջամտել Իրանի վեհապետի և մեջլիսի առջև, որպեսզի սահմանադրական բարիքները, առանց ազգային և կրոնական խտրականության, հավասարապես տարածվեն երկրի բոլոր քաղաքացիների, այդ թվում Իրանի բնիկ բնակչության մի մասը կազմող հայերի վրա:

1907թ. մայիսի 10-ին Էջմիածնի կաթողիկոսը հետևյալ հեռագիրն է հղում Թեհրան.

«Նորին Մեծության Պարսկաստանի Շահնշահին, պատճենը՝ Պարսկական Մեջլիսին:

Տեղեկանալով, որ սահմանադրական օրենսդրության վերջնական խմբա-

---

[1] *«Նյութեր... »*, *հատ. Գ, էջ 309-310:*

[2] ***Մատենադարան***, *կաթողիկոսական դիվան, թղթ. N 237*[բ]*, վավ. 323, թ. 22:*

գրությունը տեղի է ունենում, շտապում եմ հույս հայտնել, որ Իրանի բնիկ ազգաբնակչության մի մասը կազմող հայ ժողովուրդը չի զրկվի Սահմանադրության բարիքները վայելելուց: Իբրև հավատարիմ հպատակներ Ձեր նախնիքների, Ձեր Մեծության և իբրև քաղաքացիների մեծն Իրանի, հայերն հիմք ունեն վայելելու նույն հավասար իրավունքները, ինչպես մյուս պարսից հպատակները և քաղաքացիները:

Իբրև հոգևոր Իրանի հայ ժողովրդի, հայցում եմ Ձեր Կայսերական Մեծության պաշտպանությունն ու բարձր արդարությունը և հույս ունեմ, որ Ձեր Մեծությունը, ինչպես և Մեջլիսը ոչ մի խտրություն չէք դնի պարսիկների և հայերի միջև, նկատելով նրանց հավասար իրավանց տեր, իբրև հավատարիմ հպատակներ և մեծն Իրանի հավատարիմ զավակներ:

Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Թեև մեջլիսը անդրադարձավ սահմանադրական փոփոխությունների հարցերին, բայց այդ փոփոխություններն աննշան էին: Պատգամավորները պատրաստ չէին արմատական քայլերի: Սահմանադրական շարժման ղեկավարներն աստիճանաբար փոխվում էր: Բարձրաստիճան հոգևորականությունը քայլ առ քայլ հետ էր կանգնում շարժումից, և սահմանադրական կարգերի հաստատման համար պայքարի ղեկավարությունն աստիճանաբար անցնում էր լիբերալ բուրժուազիայի ձեռքը:

Երկրում ճգնաժամը օր առ օր խորանում էր՝ հանգուցյալ Մուզաֆֆեր էդ Դին շահի բարի կամքին հակառակ: Պարսկաստանում գործերն այնքան էին խճճվել, որ եվրոպական մամուլն արդեն գրում էր ռուսական և անգլիական միջամտության կամ շահի կողմից պետական հարվածի անխուսափելիության մասին:

Բայց Իրանի համար իրական վտանգն առաջին հերթին եկավ հարևան ագրեսիվ երկրից՝ Թուրքիայից:

Սուլթան Համիդը ավելի գործնական էր: Ի ծնե չարագործ, նա չէր կարող հանդուրժել, որ ծայրահեղ թուլացած իսլամական Պարսկաստանը տարվի ազատական հովերով և ձեռք բերի Եվրոպայի համակրանքը, այն դեպքում, երբ իր երկրում խեղդվում է ամեն կենդանի խոսք, իսկ հայկական նահանգները մի ծայրից մյուսը ողողվում են արյունով:

ՏԱՃԿԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ԻՐԱՆԻ ԴԵՄ ԵՎ ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ԴԻՐՔԸ

Օգտվելով ռուս-ճապոնական պատերազմում Ռուսաստանի կրած ծանր պարտությունից, երկրում ծայր առած հեղափոխական շարժումներից, ցարական պետության թուլությունից և Իրանի ներքին խառնակ ու անպաշտպան վիճակից՝ Կ.Պոլսի կառավարությունը որոշեց վերջինիս հասցնել ռազմական ուժգին հարված, ասիական հարևանի հաշվին ընդարձակել իր տիրապետության սահմանները՝ նրանից խլելով թուրքալեզու մարզերը, ինչպես նաև, եթե հաջողվի, վերջնականապես փլուզել երկիրը: Թուրքական զորքերը կենտրոնացան Իրանի սահմաններում հատկապես Ատրպատականի ուղղությամբ[1]:

Դեռևս 1905թ. աշնանը թուրքերը, պատրվակ բռնելով այն, որ Ուրմիայի մաքսատան բելգիացի ընդհանուր կառավարիչը Ուրմիո լճի հարավ-արևմուտքում գտնվող Լայիջան գավառամասում, թուրք-պարսկական սահմանագլխի վրա, մաքսատուն հիմնելիս սխալմամբ շենքը կառուցել էր մի քանի մետր այն կողմ, թուրք իշխանությունները ուղարկում են 25 զինվոր՝ մի սպայի հրամանատարությամբ, որոնք քանդում են մաքսատան նորակառույց շենքը և պարսիկներին վռնդում այդ տարածքից:

Օգտվելով դրանից՝ քուրդ խառնախմբերը սկսում են ասպատակել պարսկական սահմանագլխի վայրերը, ծայր են առնում ալան-թալանը, կողոպուտը, սպանությունները:

Շատ չանցած՝ բոլորովին անսպասելի Լայիջան է գալիս 400 զինվորով և 2 թնդանոթով թուրքական մի զորամաս՝ Մերայալ Իզզեթ բեկի հրամանատարությամբ: Հաստատվելով Պարսկաստանին պատկանող Լայիջանի Փասավա և Շինաբադ գյուղերում զորամասի հրամանատարը այդ գավառամասը հայտարարում է թուրքական: Նույն թվականի վերջերին Լայիջանում զորամասը համալրվում է և, այդպիսով, թուրք զինյալների թիվը հասնում է 1200-ի[2]:

1905թ. վերջերին լուր տարածվեց, թե շուտով սկսվելու է թուրքապարսիկ պատերազմը: Պարսիկ իշխանությունները քաջ գիտակցում էին, որ դա կարող է կործանարար լինել պետության գոյության տեսակետից, քանզի վերջին հարյուրամյակներում երկիրը այնպես թույլ չի եղել, ինչպես 20-րդ դարի սկզբին: Այդ պայմաններում կառավարությունը փորձեց պարզել, թե բազմազգ երկրի ազգային ու կրոնական համայնքները պատերազմի դեպքում ինչպես իրենց կդրսևորեն և ինչպիսի աջակցություն կարող են ցույց տալ պարսիկ զորքին:

Կառավարությունը շոշափեց նաև պարսկահայերի տրամադրությունը: Քանի որ նրանց շրջանում առավել մեծ ազդեցություն ունեցող քաղաքական ուժը Հ.Ց. դաշնակցությունն էր, կառավարությունը նրա տեղի ղեկավարությունից փորձեց իմանալ, թե թուրք-պարսկական պատերազմի դեպքում ինչպիսի դիրք կարող է բռնել կուսակցությունը: Պատասխանը եղավ արագ և հստակ. նման դեպքում Պարսկաստանի հայերը և կովկասահայերը պարսիկ կառավարության տրամադրության տակ կդնեն 20-25 հազար զինվոր[3]:

Սկզբում Հ.Ց.Դ. Վրեժի (Ատրպատականի) կ.կոմիտեն կարծես շահագրգռված էր թուրք-պարսկական պատերազմի ծագմամբ:Նրա անդամների կարծի-

---

[1] *Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237[բ], վավ. 323, թ. 25:*

[2] *«Խարիսխ», N 35, 15 օգոստոսի 1907թ.:*

[3] *Տե՛ս «Հայրենիք» (Բոստոն), N 7(449), 15 փետրվարի 1908թ.:*

քով, դա Թուրք կառավարության ուշադրությունը կբևեռեր ռազմական գործողությունների վրա, որի հետևանքով հայ հեղափոխականները հնարավորություն կստանային Պարսկաստանից ավելի աշխույժ հարաբերություններ ունենալ Թուրքահայաստանի հետ:

1906թ. մայիսի 8-ին Վրեժի կ.կոմիտեն Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյին ուղարկած նամակում գրում էր. «Մեր շրջանի նորություններից մեկն էլ սահմանագծային խնդրով ծագած թրքո-պարսիկ կոնֆլիկտն է, որ մինչև այս րոպեիս էլ դեռ լուծված չի կարելի համարել: Եթե օտար միջամտություններ չլինեն՝ գործը կարող է ընդհարման հասնել երկու հարևան տերությունների միջև: Այդ միջոցին, մենք կարծում ենք, մեր կողմից անտարբեր մնալը առնվազն քնած լինել կը նշանակեր, կնշանակեր նաև և այդպիսի մի հրաշալի պատեհություն ձեռքից բաց թողնել: Չէ՞ր կարելի, արդյոք, այդ պատեհ մոմենտին մի խոշոր արշավախումբ պատրաստել, որ առաջին ազդանշանին խուժեր դեպի Շամ (Վասպուրական: - Հ.Ս.), որ անմիջապես կը միանար նրան և մի հսկա խլրտում կը բարձրացներ շշմած հակառակորդի սրտում, որին արձագանքել կարող էր Լեռնավայրը (Կիլիկիան: - Հ.Ս.)»[1]:

Իրադարձությունների հետագա զարգացման համեմատ, գնալով փոխվեց պատերազմի նպատակահարմարության մասին Վրեժի կ.կոմիտեի տեսակետը:

Մինչ այս, մինչ այն՝ ներքին անցքերը զարգանում են մեծ արագությամբ: 1906թ. գարնան վերջերին Թուրքերը նոր զորքեր են ուղարկում Ուրմիո լճի հարավ-արևմուտքում գտնվող Ուրմիա գավառի մասեր կազմող Մարգավառ, Թաթ, Դաշտ, Սոմա ու Բրադոստ գավառամասերը և բանակում Ուզնիի լեռներում:

Եվ այսպես, շահագործելով ներկայացած չնչին առիթը, Թուրքերը գրավում և իրենց սեփականությունն են հայտարարում Պարսկաստանին պատկանող ամբողջ 6 գավառամաս, որոնց տարածքներն անբերրի հողեր էին ամբողջ Ատրպատականում*:

Երկրի համար ծանր վիճակ էր ստեղծվել, սաստկանում էր ներքին հուզմունքը բոլոր կողմերում, բայց կառավարությունը ուժ չուներ թշնամուն դիմագրավելու: Բանակը փոքրաթիվ էր՝, անվարժ, անկանոն, համարյա զուրկ զինվորական կարգապահությունից, հետևապես՝ լուրջ ու վճռական ռազմական գործողությունների դիմելու համար անընդունակ:

Պարսկահայ նշանավոր դաշնակցական գործիչ Հովսեփ Մովսիսյանը (1866-1936) պատանեկան շրջանին՝ 1930-ական թվերի կեսերին վերաբերող հուշերում այսպես է նկարագրել պարսից զորքի տեսքը իր ծննդավայր Թավրիզում.

«Չեմ հիշում, թե ինչ գործով այդ օրերին մայրս ինձ Ղալա թաղն էր

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 314-315:
[2] Տե՛ս М. С. Иванов, Иранская революция 1905-1911 годов, էջ 211-212:
* 1906թ. տվյալներով երկիրն ուներ շուրջ 100.000 զինվոր (տե՛ս «Նոր կեանք», N 11,10 սեպտեմբերի 1906թ.):

ուղարկել: Տուն վերադառնալիս ընկա պարսից զորքի մեջ, որ անցնում էր նեղ ու փոշոտ փողոցներով: Ի՜նչ զորք. մի խառնիճաղանջ: Հնամաշ ու խունացած «զինվորական հագուստ», նույնքան հին ու ջարդված գլխարկ, ոմանց ոտներին տրեխ կամ պատառոտուն կոշիկներ և կամ հենց ուղղակի բոկոտն: Զինվորներից (սարբազ) ոմանք, առաջները մի էշ գցած, վրան գգգված մի վերմակ, որի ծվենները կախկախված էին ավանակի այս ու այն կողքից, վերմակի վրա ամբարած իրենց չախմախլու և կամ լավագույն պարագային «այնալու» հրացանները՝ քայլում էին հարայհրոցով՝ իրենց ետևից փոշու թանձր ամպեր բարձրացնելով: Շարժուձևի մեջ ո՛չ կարգ, ո՛չ կանոն»[1]:

Կարելի է ենթադրել, որ պարսից զորքը Թուրքական ներխուժման օրերին համարյա նույնն էր, ինչպես նկարագրված է սույն հուշագրության մեջ:

Այս վիճակում կառավարությունը միակ ելքը համարեց մեծ տերություններից աջակցություն ստանալը. նա դիմեց Անգլիայի և Ռուսաստանի կառավարություններին և խնդրեց նրանց արագ միջամտությունը կոնֆլիկտը խաղաղ լուծելու համար: Բայց սպասվող միջամտությունը չկար, իսկ ժողովրդի հուզմունքը գնալով աճում էր, քանզի ականատեսն էր երկրի ապաշնորհ իշխանությունների անկարողությանը և հայրենիքի ստորացմանը:

Կառավարությունը, դրանից հետո, ստիպված էր ինչ-որ քայլերի դիմել: Նա որոշեց, այնուամենայնիվ, զորք ուղարկել սահման, բայց դա ոչ այնքան Թուրքիայի դեմ ցույց անելու համար, որքան իր հպատակների աչքում վարկը ինչ-որ չափով պահպանելու և պարսկական Քուրդստանի աշիրեթների ասպատակությունները զսպելու նպատակով*:

Պարսկական փոքրաթիվ ու անկազմակերպ զորքը հասավ Ուրմիայի արևմտյան մասերը, բայց նրա ներկայությունը քրդերի վրա ոչ մի ազդեցություն չթողեց, և նրանք, մանր ասպատակիչ խմբեր կազմելով, 1906-ի գարնանից սկսեցին ավերի ու թալանի ենթարկել այս անգամ Ուրմիո լճի շրջակա գյուղերը:

Չհանդիպելով դիմադրության՝ քրդերը այնչափ հանդուգն դարձան, որ իրենց ասպատակությունների սահմանը հասցրին Ուրմիա քաղաքի մատույցները:

Պարսից կառավարությունը ապրիլ ամսին ստիպված նորից դիմեց Անգլիայի և Ռուսաստանի կառավարություններին՝ սահմանագլխային խնդրին մի լուծում գտնելու համար: Այս անգամ վերջիններիս կողմից կոնկրետ քայլ արվեց. ստեղծվեց Իրանի, Թուրքիայի, Անգլիայի և Ռուսաստանի ներկայացուցիչներից կազմված մի հանձնախումբ, բայց այն կանոնավոր ընթացք չունեցավ, շուտով ինքնալուծվեց՝ առանց որոշակի եզրակացության գալու: Հանձնախմբի անհաջող ընթացքից հետո տիրեց տևական լռություն:

Թուրքիան իր զորքին սահմանագլխից կանչեց՝ գրված կետերում թողնե-

[1] Ա. Ամուրեան, Յեղափոխական Եփրեմի ոդիսականը, տպ. «Ալիք», Թեհրան, 1972, էջ 22:
[2] Տե՛ս «Արշալոյս», N 33, 14 փետրվարի 1906թ.:

լով զինվորների մի փոքր թիվ: Դա երկար չտևեց. երբեմն նոր զորամասեր էին գալիս, բայց հիշյալ 6 գավառամասերի զանազան կետերում որոշ ժամանակ մնալուց հետո դարձյալ հետ էին քաշվում ու նորից վերադառնում:

Այլ խոսքով, Իրանի այդ հատվածն արդեն ոտքի կոխան էր Թուրքերի համար: Դրության լիակատար տերը զգալով՝ նրանք սկսեցին գրված գավառամասերի գյուղերից հարկեր հավաքել: Դա հեռուն գնացող խաղ էր, որով Թուրքիան միջազգային դիվանագիտությանը և Պարսկաստանին ուզում էր վարժեցնել այն մտքին, որ այդ տարածքներն արդեն պատկանում են իրեն: Եվ, պետք է ասել, որ Թուրքիան համարյա հասնում էր իր նպատակին. եվրոպական մամուլը այլևս դադարեց կոնֆլիկտի մասին գրելուց, իսկ պարսից կառավարությունը այդ հարցի վրա սկսեց նայել անտարբեր աչքերով, քանի որ նրա ուշադրությունը ամբողջովին գրավել էր երկրի հեղափոխական շարժումը: Լայիջանի խնդիրը առժամանակ մոռացվեց:

Քրդերը, օգտվելով առիթից, ավելի ուժեղացրին իրենց ասպատակությունները: Այլևս համբերության բաժակը լցված էր: Ամեն գնով պետք էր թշնամական ասպատակությունների և անարխիայի առաջն առնել: Նախաձեռնությունը եկավ Ուրմիայի անջումենից, որը որոշում ընդունեց և հանձնարարեց տեղական կառավարությանը՝ առանց կենտրոնական կառավարության թույլտվության զորք հավաքել և ուղարկել քրդերի դեմ:

Ուրմիայի անկազմակերպ զորքի ընդհանուր հրամանատար նշանակվեց զինվորական գործիչ Մեջիդ օլ Սալթանե Ամիր Թումանը, որի տրամադրության տակ դրվեցին պետական կանոնավոր զորքերից մի գումարտակ և մի անկանոն զորամաս՝ բաղկացած չարդվլի, կարափափախ, ավշար, մավանացի ցեղերի անդամներից: Սրանց միացան կամավորներ և ֆիդայիներ: Ամբողջ զորքն ուներ 950 հետևակ զինվոր, 470 ձիավոր, 75 թնդանոթաձիգ, 100 կամավոր (թվանգչի) և 45 ֆիդայի (պարսիկ հեղափոխական զինվորներ)[1]:

Զորքի առաջապահ զորամասը, բաղկացած 200 հետևակ զինվորից, 100 ձիավորից և 25 թնդանոթաձիգներից, ունենալով հին սիստեմի մի թնդանոթ, Հեշմաթլ Մյուլքի հրամանատարությամբ ուղղություն է վերցնում դեպի Բարանդուզ գավառամասը և բանակում Շհար-չայ գետի աջ ափին, քաղաքից 18 վերստ հեռավորության վրա:

Հաջորդ օրն իսկ բանակատեղին ենթարկվում է քրդերի հարձակմանը: Մի քանի ժամ տևած կռվի արդյունքում զորամասը տալիս է ավելի քան 40 զոհ, բայց կարողանում է նահանջել և միանալ հիմնական զորքին:

Կարճատև դադարից հետո զորքը լրիվ կազմով, երկու լեռնային թնդանոթով և, առաջապահներ ունենալով ասորի քաջ երիտասարդներից բաղկացած ջոկատներ, Մեջիդ օլ Սալթանեի հրամանատարությամբ առաջ է շարժվում և բանակում Թուրքաց ու պարսից միջև վեճի առարկա դարձած Թարգավառ գավառամասի բարձրավանդակներից մեկում:

1906թ. հուլիսի 19-ի առավոտյան պարսկական զորքի արևմտյան կողմում գտնված լեռների վրա բոլորովին անսպասելի երևում են քրդական աշիրեթներ: Հրամանատարը քրդերի դեմ է ուղարկում մավանացի ու կարափափախ ձիավորներ: Սրանց և քրդերի միջև նոր էր սկսվել հրացանաձգություն, երբ հանկարծ լեռների հետևից հայտնվում է 4 թաբուրից (1600 զինվոր) ու 6 լեռնային թնդանոթից բաղկացած տաճկական մի զորամաս և թնդանոթներով հարվածներ է տեղում պարսից զորքի վրա:

Սկսվում է կռիվը, որը տևում է երեք ժամ: Այդ ընթացքում պարսից հրամանատարը հնարավորություն է ունենում երկու պատգամավորություն ուղարկել Թուրք զորքի հրամանատարի մոտ և բացատրություն պահանջել նրա այդօրինակ գործողությունների համար, չմոռանալով տեղեկացնել, որ իր զորքը եկել է ոչ թե Թուրքերի դեմ կռվելու, այլ քրդերի անկարգությունները զսպելու համար: Թուրք հրամանատարը մերժում է որևէ բացատրություն տալ, միաժամանակ Մեջիդ օլ Սալթանեից պահանջում է երկու ժամվա ընթացքում իր զորամասով հեռանալ կռվի դաշտից:

Անակնկալ հարձակումից հանկարծակիի եկած հրամանատարը զորքին կարգադրում է նահանջել: Բայց հետևակ զինվորները, դեռ նախքան հրաման տալը, Թուրքական թնդանոթների առաջին իսկ հարվածներից հետո, արդեն թողել էին բանակատեղին և փախել տարբեր ուղղություններով: Հետևակին հետևում են զորքի մյուս մասերը: Սարսափահար փախուստի հետևանքով Թուրքերի ձեռքն է անցնում մեծ ավար՝ համարյա ամբողջ ռազմամթերքը, 300-ի չափ վրան իրենց կահավորանքով: Զհաշված վիրավորներին ու կորածներին, պարսից զորքը կռվի դաշտում թողնում է ավելի քան 90 սպանված: Թուրքերի կողմից սպանվել էր ընդամենը երեք հոգի[1]:

Պարսկական զորքին ցրելուց հետո Թուրքերն անցնում են Մավանա, Կուրանա և Բարուլան ասորաբնակ գյուղերը, որոնց զինյալ երիտասարդները պարսից զորքի առաջապահներն էին: Սկսվում են գյուղերի ռմբակոծումները: Ասորի բնակիչները փախչում են, իսկ վրա հասած քուրդ հրոսակախմբերը կողոպտում են ամեն ինչ[2]:

Պարսկական ջարդված զորքի մնացորդները Ուրմիա քաղաք են հասնում երեկոյան դեմ: Նրանց միացել էին բանակատեղից մինչև քաղաք ձգված ճանապարհի վրա գտնված գյուղերի բնակիչներն իրենց ընտանիքներով, անասուններով և ամբողջ շարժական ստացվածքով: Գիշերը քաղաքը սուգի ու սարսափի մեջ էր. անակնկալ հարվածը և վաղվա անորոշությունը միախառնված՝ հոգեկան անտանելի վիճակ էր ստեղծել:

Այնուհետև, շրջանցելով Ուրմիա քաղաքը, տաճկական զորքը, առանց

[1] Տե՛ս «Խարիսխ», N 35, 15 օգոստոսի 1907թ.:

[1] Տե՛ս «Խարիսխ», N 35, 15 օգոստոսի 1907թ.:
[2] Այդ մասին տե՛ս Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237ᴱ, վավ. 323, թ.22:

դիմադրության, առաջ է շարժվում և հաստատվում Ուշնի շրջանի լեռնաբնակ գյուղերում, ինչպես նաև Լայիջանի այն գյուղերում, որոնք մինչ այդ դեռ գրավված չէին:

Այսպիսով, 1906թ. հուլիսի դրությամբ թշնամու ձեռքն էր անցել Ուրմիո լճի հարավարևմտյան ամբողջ լեռնային մասը: Հաջորդ ամիսներին թուրք զորքերն աստիճանաբար գրավում են նաև Ուրմիա քաղաքի մերձակա պարսից գյուղերը, որոնք ընկած էին լճի արևմտյան կողմում Կուլունչի, Քահրիզ, Ըշկայ-Սու, Ջամալավա: Վերջին գյուղում բնակվում էին նաև հայեր և ասորիներ, որոնք առաջին հերթին ենթարկվեցին բռնությունների ու թալանի: Գնալով թուրքերի ագրեսիան ավելի է ընդլայնվում. մտնելով Սոմայի շրջան՝ նրանք գրավում են Ճարա, Գանգազին, Գունի, Խանիկ, Ջինդաշտ և Խտրի-Սու քրդական գյուղերը, ապա, ներխուժելով Սալմաստի գավառ, գրավում են Քորասանի շրջանի սյուննի գյուղերից Եզդիքանդը, Օրբան, Սուլավը և Շաքարյազին[1]:

Սալմաստն Ատրպատականի ամենից հայաշատ գավառն էր, որն ընկած էր Պարսկաստանի հյուսիս-արևմտյան անկյունում, Թուրքիայի սահմանագծի վրա: Գավառի ամբողջ բնակչության թիվը մոտ 40 000 էր՝ բաժանված 75 գյուղերի վրա: Այդ գյուղերում բնակչության թվով առաջին տեղում էին թուրքերը, ապա գալիս էին հայերը, ասորիները, քրդերն ու հրեաները: Հայերի թիվը հասնում էր 10 000-ի՝ կազմելով Սալմաստի բնակչության մեկ քառորդ մասը: Գավառի 75 գյուղերից 23-ում հայեր էին բնակվում, որոնցից զուտ հայաբնակ գյուղեր էին միայն Հաֆթվանը, Ղալասարը, Մահլամը, Սառնան և Փայաջուկը[2]: Հայերը գավառում ունեին 23 եկեղեցի, 12 դպրոց, 5 գրադարան[3]:

Մինչև 1906-ի աշնան կեսերը թուրքերը գրավեցին Սալմաստի բոլոր լեռնային մասերը և օղակեցին դաշտայինը:

1906թ. վերջերին քուրդ հրոսակները, կրկին թուրքիայից անցնելով պարսկական սահմանը և Ուրմիայի ու Սովուջբուլաղի գավառներում միանալով տեղի քրդերին, սկսեցին նոր լայնածավալ ավազակություններ և ավարառություններ: Հարձակվելով գյուղերի վրա՝ նրանք կոտորում էին խաղաղ բնակիչներին, հափշտակում անասուններն ու գույքը:

Այս ասպատակություններից մեկի ժամանակ սպանվել էր մի ամերիկացի միսիոներ: Ամերիկյան կառավարությունը պարսից կառավարությունից խստիվ պահանջեց ձերբակալել և պատժել մարդասպաններին: Վերջինս ստիպված նշված սահմանային շրջան ուղարկեց մի աննշան զորամաս՝ կարգը վերականգնելու համար:

Ընդհարման ժամանակ սպանվեց մի քանի քուրդ, մնացածները փախան ու

[1] Տե՛ս «Հայրենիք», N 6(412), հուլիս, 1960, էջ 69:
[2] Տե՛ս «Արշալույս», N 18, 26 հունվարի 1906թ.:
[3] Տե՛ս «Նյութեր...», հատ. Դ, էջ 267:

վերադարձան թուրքական տարածք: Ավազակներին բռնելու նպատակով զորամասն անցավ սահմանը և, մի փոքր խորանալով թուրքական հողում, հալածեց նրանց, ապա վերադարձավ պարսկական տարածք:

Թուրքական կողմն այդ դեպքը պատրվակ բռնեց, միաժամանակ դիմեց սադրանքի, թե պարսից զորքի հետ սահմանն անցել են նաև թվով 1500 հայ հեղափոխականներ: Հենվելով այդ կեղծիքի վրա՝ թուրք կառավարությունը իր սահմանագլխային զորագնդին հրամայեց անցնել պարսկական սահմանը և Ուրմիայի գավառում տիրել հողի այն տարածությանը, որի վրա կային մի քանի դեռևս չգրավված գյուղեր:

Օկուպանտները գրաված տարածքների կառավարման կենտրոն ընտրեցին Ճարա գյուղը: Այստեղ էին նստում թուրքական զորքերի ընդհանուր հրամանատար հազարապետ Սուլեյման բեյը և շրջանի գայմագամ նշանակված, ազգությամբ քուրդ Զիա բեյը:

Թուրքական զավթիչների գործողություններից տուժում էին ոչ միայն Ատրպատականի Ուրմիայի և Սալմաստի գավառների, այլև ամբողջ Նահանգի հայ բնակիչները: Ուստի պատահական չէ, որ Պարսկաստանի ոչ մի ուրիշ անկյունում վերանորոգչական շարժումն այնպես սերտորեն չէր զուգորդվել թուրք զավթիչների դեմ ծավացած ատելությանը, ինչպես այստեղ՝ Ատրպատականում և նրան հարակից Մակուի խանությունում (նախկին հայկական Արտազ գավառ):

Այս խանությունը, որ գտնվում էր Ատրպատականի հյուսիսարևելյան ծայրի անկյունում, մի փոքր կիսանկախ տիրապետություն էր, որը հյուսիսից սահման ուներ Երևանի նահանգի, իսկ արևմուտքից՝ Վանի վիլայեթի հետ:

Սահմանադրական շարժումն առանձին ուժգնությամբ արտահայտվել էր նաև Մակուի խանությունում: Այդ հանգամանքը մեծ չափով բացատրվում էր Անդրկովկասի հետ նրա հարևանությամբ, ռուս ազատագրական շարժման ազդեցությամբ:

Հեղափոխական տրամադրությամբ համակված Մակուի խանության ազգաբնակչությունը* 1907թ. գարնանը ապստամբություն բարձրացրեց խանի դեմ կամ ավելի ճիշտ՝ ժառանգական նահանգապետ Իգբալ Սոլթանեի դեմ, որը հայտնի էր ազգաբնակչության կեղեքումներով և անսահման բռնակալությամբ: Ապստամբությունն համակրություն գտավ Թավրիզի և Ուրմիայի

* Մակուի բնակիչները բաղկացած էին պարսիկներից, որոնք թվով բռնում էին առաջին տեղը, ապա գալիս էին քրդական ցեղերը (Հայդարանցի, մլանցի, ջալալցի, ֆնըկցի, մորգանցի, պրուկցի, խալքցի և այլք), որոնք թվով երկրորդ տեղն էին, բնակվում էին իրարից անջատ, ապրում վրաններում, զբաղվում միայն անասնապահությամբ: Հայերը Մակու (Արտազ) գավառում աննշան թիվ էին կազմում. Մակու քաղաքում 60-70 տուն, Քիշմիշթափե զուտ հայկական գյուղում 85 տուն, ս.Թադեի վանքի գյուղում 25 տուն, Գրբգպուլաղ խառը բնակչությամբ գյուղում 6 տուն: Հայերը նշված գյուղերում պարապում էին երկրագործությամբ, իսկ Մակու քաղաքում մանրավաճառությամբ և արհեստներով՝ պայտառ, ոսկերիչ, դարբին, հյուսն (տե՛ս «Նյութեր ...», հատ. Դ, էջ 275):

անջումենների կողմից, որոնք իրական ուժ էին դարձել իրենց տարածքներում ձեռքում պահելով իշխանության ղեկը:

Ապստամբների ճնշման տակ խանը ստիպված եղավ հեռանալ պաշտոնից և իշխանությունը հանձնել ազգականներից մեկին, որը սահմանադրական շարժման կողմնակիցներից էր:

Բայց նա չհաշտվեց իշխանության կորստի հետ: Փախչելով Երևանյան նահանգ, Իգբալ Սոլթանեն իր շուրջը համախմբեց այստեղ հաստատված մակուեցի համակիրների ու կողմնակիցների և նրանց ուղարկեց Մակու՝ հեղաշրջում կատարելու համար: Բայց նրա ջանքերը զուր անցան, քանի որ հավաքագրված մարդիկ հրաժարվեցին վտանգել իրենց կյանքը:

Այդ անհաջողությունից հետո Իգբալ Սոլթանեն նահանգից հեռացավ Թուրքիա և անցավ Թուրքական Քուրդիստան: 1907թ. ամռան սկզբին այստեղ նրան հաջողվեց ուժի հանել մի քանի ավազակաբարո քրդական ցեղեր և նրանց գլուխն անցած՝ ասպատակեց Պարսկաստանի սահմանները: Սկզբում նա մտավ Թուրքական զորքերի կողմից գրաված Ուրմիայի գավառ, ապա այստեղից հարձակում գործեց Մակուի խանության վրա: Թուրքական իշխանություններն ամեն ինչով օգնում, աջակցում էին Սոլթանեին: Խանի քրդական ջոկատներին միացել և գործողությունների մեջ էին մտել նաև Թուրք կանոնավոր զորամասեր: Երկու շաբաթվա պաշարումից հետո, օգոստոսի վերջին, Թուրք-քրդական միացյալ ուժերին հաջողվեց գրավել խանության կենտրոն Մակուն: Փաստորեն Մակուի խանությունը նույնպես ընկավ Թուրքիայի ազդեցության տակ:

Այս բռնազավթումների, կողոպուտների և լկտի պահվածքի հանդեպ պարսից կառավարությունը միանգամայն անզոր էր: Պարսկաստանը ի վիճակի չէր զենքով պաշտպանել իր ոտնակոխած իրավունքը: Թուրքերի կողմից հայրենի տարածքների ռազմակալումը խոր ցավ էր պատճառել պարսիկ ժողովրդի ամենալայն խավերին, բայց միաժամանակ նպաստում էր նրա հայրենասիրական ոգու բարձրացմանը: Վտանգը Պարսկաստանի համար այնքան մեծ էր, որ նույնիսկ պարսիկ հոգևորականության այն մասը, որ տարված էր համիսլամական հովերով, պատրաստ էր սրբազան պատերազմ հայտարարել սուլթան խալիֆի և նրա երկրի դեմ:

Թուրքերի ներխուժումը մեծ մտահոգություն էր պատճառել Ատրպատականի ողջ հայությանը, հատկապես սալմաստահայերին:

Ի՞նչ դիրք պետք է բռնեին, ի՞նչ պետք է անեին նրանք, եթե Թուրքերը մտնեին հայկական գյուղերը՝ իրենց անզուսպ պահանջներով:

Ավելի մտահոգիչ էր այն, որ Թուրքերի կողմից գրավված Սուլավ, Եզդիքենդ և Շաքարյազի գյուղերը գտնվում էին Սալմաստից դեպի Խոյ տանող ճանապարհից ոչ շատ հեռու, իսկ այդ ճանապարհով հաճախ էին երթևեկում հայ զինվորներ ու կուսակցական ընկերներ, սուրհանդակներ և Թուրքահայաստան զենք փոխադրողներ:

Պետք է նշել, որ Ատրպատականի, հատկապես Սալմաստի և Ուրմիայի հայերը խեղճ ու կրակ վիճակում չէին. ինքնապաշտպանությունը, կարելի է ասել, բավարար էր, մարտական խմբերը կազմակերպված էին, թե՛ խմբերին և թե՛ հայությանը խիստ հրահանգներ էին տրված, թե ինչ պետք էր անել Թուրքերի հետագա առաջխաղացման դեպքում:

Հ.Յ.դաշնակցության Սալմաստի կազմակերպիչ Ղազար Ղազարյանը (Մարզպետ) հետագայում վերհիշել է, որ այդ մտահոգիչ օրերին Դիլմանի դատավորը իրեն և տեղի աչքի ընկնող երկու ուրիշ դաշնակցական երիտասարդ գործիչների հրավիրել էր իր մոտ՝ «բարեկամաբար խոսելու մի կարևոր խնդրի շուրջ»: Զրույցի ժամանակ պարզվեց, որ պարսից կառավարությունը և ժողովուրդը վախենում են, որ դաշնակցությունը կարող է որոշում ընդունել Ատրպատականում գտնվող իր զինված ուժերով հարձակում գործել Թուրքական զորքի վրա և դրանով է՛լ ավելի բարդացնել խնդիրը: Դատավորը երիտասարդներին պատվիրում է «մի հստակ բան իմանալ» և դաշնակցության ղեկավարությանը փոխանցել վտանգավոր քայլերի չդիմելու իր հորդորը:

Դաշնակցության անունից Ղ. Ղազարյանը հայտնում է, թե իր կուսակցությունն անտարբեր չի մնա միայն այն ժամանակ, եթե Թուրքական զորքերը մտնեն հայկական գյուղերը և հայերին ենթարկեն հալածանքի: Իսկ եթե դա տեղի չունենա, դաշնակցությունը որևէ թշնամական քայլ չի անի, քանի դեռ պարսից կառավարությունը լուռ է[1]:

Երիտասարդները տեղեկացնում են, որ ընդհանուրի կարծիքով, Թուրքերը չեն մտնելու հայկական գյուղերը: Այդ դեպքում, կրկին հաստատում է Ղազարյանը, մենք Թուրքերի դեմ զենքով հանդես գալու պատճառ չենք ունենա:

Հետաքրքիր է, որ այդ խնդիրը լրջորեն զբաղեցնում էր նաև Թուրքական զորքի հրամանատարությանը:

Բնիկ վանեցի Կարապետ Տեր-Աբրահամյանը, որը Հ.Յ.Դ. Սալմաստի կազմակերպության վստահելի ընկերներից էր, դարձել էր գրավված վայրերի Թուրք զորամասերին մթերք մատակարարող կապալառու և, օգտագործելով իր դիրքը, կազմակերպությանը շարունակ հաղորդում էր գաղտնի լուրեր Թուրքերի շարժումների, մտադրությունների, խոսակցությունների մասին: Նա լուր էր բերել, թե Թուրք զորքի հրամանատար Սուլեյման բեյը և գայմագամ Զիա բեյը իր հետ ունեցած զրույցի ժամանակ ասել են, թե իրենք հայերի դեմ ոչ մի թշնամական քայլ չեն անելու, չեն գրավելու հայկական ոչ մի գյուղ: «Մենք խուսափում ենք աղմուկներից, - ավելացրել էին նրանք, - մեզ ցանկալի է խաղաղ կերպով տեղավորվել այն վայրերում, որ մերն ենք համարում: Գիտենք, որ եթե մտնենք հայկական գյուղերը, աղմուկ կը բարձրանա»[2]:

Զիա բեյը Կ. Տեր - Աբրահամյանին խնդրել էր հայերի նկատմամբ իրենց

[1] «Հայրենիք», N 6 (412), հունիս, 1960, էջ 70:
[2] Նույն տեղում, էջ 71:

վերաբերմունքի մասին հայտնի դարձնել դաշնակցության տեղի կոմիտեին: Թուրք հրամանատարությունը կատարեց իր խոստումը, և մինչև օսմանյան հեղափոխությունը որևէ խնդիր չեղավ Ատրպատականի հայության և թուրքերի միջև:

Այսպիսով, առաջացման օրերից Իրանի ժողովրդական հեղափոխական շարժումը զարգանում էր երկրի մի մասի թուրքական օկուպացիայի պայմաններում: 1907թ. կեսերին հայերը հիմնականում կողմնորոշվել էին դեպի շարժումը: Նրանց գերակշիռ մասը շուտով դառնալու էր հեղափոխության ամենաակտիվ ուժերից մեկը:

ՀԱԿԱՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ռուսական մեծ հեղափոխությունը արձագանք ունեցավ նաև Թուրքիայում, թեև ոչ այնպես հզոր ու ոչ այնպես դրամատիկ, ինչպես Պարսկաստանում:

Ռուսաստանում ծայր առած հեղափոխությունը հենց սկզբից մեծ անհանգստություն առաջացրեց Կ.Պոլսում: Ելդզի տիրակալը՝ Աբդուլ Համիդը, քաջ գիտակցում էր, որ այդ հեղափոխությունը չի կարող արձագանք չունենալ հարևան երկրներում, այդ թվում իր տիրակալության մեջ: Նա բոլոր հիմքերն ուներ տագնապելու, քանզի կայսրության մեկ այս մեկ մյուս ծայրամասում հնչում էին հակասուլթանական սպառնալից կանչեր, օրավուր սաստկանում ու ծավալվում էին խռովությունները: Ուստի սուլթանական գրաքննությունը ամենայն ուշադրությամբ հետևում էր, որպեսզի թերթերի էջերում չերևան հաղորդագրություններ Ռուսաստանում ծավալված հեղափոխական մարտերի մասին:

Սակայն ձեռնարկած միջոցները սպասված արդյունքը չէին տալիս: Եվ դա ամենից առաջ այն պատճառով, որ ռուսական դեպքերի մասին ազատ գրում էին արտասահմանում հրատարակվող երիտթուրքական թերթերը, որոնք չնայած բոլոր արգելքներին, թափանցում էին Թուրքիա և գաղտնի տարածվում: Դրանցից հատկապես առանձնանում էր «Ֆերյադը» (կոչ), որը համարյա բոլոր համարներում մանրամասն հաղորդումներ էր տպագրում ռուսական հեղափոխական դեպքերի մասին և դրանք ուղեկցում հակասուլթանական բովանդակությամբ խմբագրականներով[1]*:*

Թեև սուլթանն ամեն կերպ ձգտում էր պահպանել և ամրապնդել status guo-*ն, բայց բոլոր փորձերը զուր էին անցնում, և օրեցօր կնճռոտ խնդիրներին ավելանում էին նորերը:*

[1] *Տե՛ս* **Մ. Ա. Գասպարյան**, Ս.Ֆ. Օրեշկով, Ю.А. Петросян, Очерки истории Турции, изд."Наука", Москва, 1983, *էջ 144:*

Դրությունն անհանգիստ էր հատկապես կայսրության ասիական մասում ***Մերձավոր*** *կամ* ***Արաբական արևելքում:***

Արաբների մեջ սկսված հուզումները ոչ միայն չէին թուլանում ու դադարում, այլև տարեցտարի ավելի ընդարձակվում էին, ստանում սպառնալից կերպարանք:

Ռուսական հեղափոխության ազդեցության տակ ապստամբությունները 1906թ. ընդգրկել էր Արաբական ողջ թերակղզին, Մեսոպոտամիան, Սիրիան և մյուս երկրները[1]*:*

Լիբանանցի արաբ գրող Խալել Սաադեն 1905թ. առանձին գրքույկով լույս էր ընծայել «Ռուսական հեղափոխության գաղտնիքները» վերնագրով մի պատմվածք, որին կցել էր ոչ մեծ առաջաբան, ուր այսպիսի տողեր կան. «Ռուսական հեղափոխությունը, որի բորբոքված կրակը հիմա էլ բոցկլտում է, առաջ է բերելու արմատական փոփոխություններ մարդկային հասարակության մեջ, պատճառ է դառնալու մարդկության մեջ մինչ այժմ չտեսնված առաջադիմության, այնպես, ինչպես 18-րդ դարի ֆրանսիական հեղափոխությունը, որը հարվածելով հանցագործ բռնապետությունները, փշրել էր դեսպոտիզմի երկաթե կապանքները և, մարդկանց տգիտության խավարից դուրս բերելով, առաջնորդել էր դեպի ազատության ասպարեզ»[2]*:*

Մտավոր ու կուլտուրական այն շարժումը, որ դեռ 19-րդ դարի կեսերին սկսվել էր Եգիպտոսի արաբների մեջ, այն շփումները, որ արաբները Միջերկրական ու Կարմիր ծովերի ափերին ունեին եվրոպացիների հետ, արթնացրել էին նրանց գիտակից ուժերին: Արաբն այլևս չէր ուզում մնալ ստրուկի դերում իրենց համար խորթ թուրքական էթնոսի բռնակալական պետության անտանելի լծի տակ: Նա սկսել էր վերհիշել հեռավոր անցած-գնացած դարերի արաբական հզոր պետականությունների վեհությունը, արաբական քաղաքակրթության ծաղկման ժամանակ իր նախնիների մեծագործությունները, ուզում էր աշխարհին ներկայանալ որպես ինքնուրույն կյանքով ապրող ու գործող մի ազգ՝ օսմանյան իշխանություններից անկախ:

Արաբներն արդեն ունեին ուժեղ քաղաքական գործիչներ, որոնք վճռել էին կանգ չառնել ոչ մի արգելքի առջև և շարունակել պայքարը՝ հանուն ազգային վերածնության:

Երբ XIX դարի 90-ականների սկզբներին բռնկվեցին արաբական առաջին հուզումները, Թուրքիայի իշխանությունները դրանք դիտեցին իբրև տեղական անկարգություններ, բայց ահա այժմ պարզվում էր, որ արաբական շարժումները օրեցօր ստանում էին անշրջելի բնույթ:

Ստամբուլի դեմ ապստամբություն էր պարզել և օսմանյան երկար դարերի

[1] *Տե՛ս* **Ե. Կ. Սարգիսյան**, Экспансионистская политика османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, изд. АН Арм. ССР, Ереван, 1962, *էջ 45:*

[2] *Մեջբերված է* "Революция 1905-1907 годов в России и ее всемирно-историческое значение", изд. политической литературы, Москва, 1976, стр. 227.

լուծը դեն նետելու մեծ վճռականություն էր հանդես բերում հատկապես Եմենը, որը 20-րդ դարի սկզբից դարձել էր արաբական ազատագրական շարժման կենտրոնը[1]: Այդ երկրի զինված ցեղերը Մահմուդ և Եահյա ապստամբապետերի գլխավորությամբ մի շարք փայլուն հաղթանակներ էին տարել Թուրքական զորքերի դեմ, նույնիսկ գրավել հռչակավոր Սանա բերդը: Բոլոր տեղացիներին մահվան սպառնալիքով հրաման էր արձակված չհամարձակվել ուտեստ վաճառել Թուրք զորքին կամ որևէ ձևով աջակցել Թուրքերին: Եմենում Թուրքական զորքի հրամանատար Մուշիր Ահմեդ Ֆեյզի փաշան, հուսահատ դրության մեջ ընկած, մեկը մյուսի հետևից դիմումներ էր հղում Կ. Պոլիս և բողոքում անելանելի վիճակից, բայց զուր էին դիմում-խնդրանքները, քանի որ անկարելի էր որևէ սննդամթերք հասցնել՝ ճանապարհները ապստամբների ձեռքին գտնվելու պատճառով:

Թուրք բանակը մատնված էր սովի:

1905-1906թթ. Եմենում Թուրքական զորքերի կրած ջախջախիչ պարտությունները Աբդուլ Համիդը վերագրում էր ոչ թե արաբ ապստամբների համառությանն ու հերոսությանը, այլ իր զորամասերի բարոյալքվածությանը: Նրա հրամանով 1907թ. Եմեն ուղարկվեցին բազմաքանակ ընտիր զորքեր, որոնք նույնպես անցան Ֆեյզի Թուրք փաշայի հրամանի տակ: Այս ռազմական ուժը նույնպես չկարողացավ կատարել իր առջև դրված խնդիրը, կրեց դառը պարտություններ՝ տալով մեծաթիվ զոհեր[2]: Այդ ամենը ծանրակշիռ կերպարանք էր ստացել և սարսափ ձգել Ելդզի վրա:

Եմենի ապստամբությունը արձագանք էր գտնում կայսրության մյուս արաբական պրովինցիաներում[3]: Սովահար արաբ բնակչությունը դիմում էր պայքարի ամենատարբեր ձևերի, այդ թվում տնտեսական սաբոտաժի, ճանապարհների բլոկադայի, նաև՝ պետական ունեցվածքի ոչնչացման կամ կողոպուտի:

Հալեպի բնակչությունը, հացի սղության պատճառով, ինչպես կայսրության ուրիշ քաղաքներում էր արվում, թալանի տվեց վաճառատները և ցորենի ամբարները: Դրանից հետո կողոպուտին մասնակցող արաբ և Թուրք կանայք խումբ-խումբ դիմեցին քաղաքի Հեմիզիե թաղը և պաշարելով կուսակալի քոնաղը, փորձեցին խուժել ներս: Զինվորների բռնություններով հաջողվեց ցրել կանանց ամբոխը: Նույն ժամանակ տղամարդիկ հարձակում գործեցին երկաթուղու կայարանի վրա, ուր մեծաքանակ և այլ ապրանքների հակերով

[1] Տե՛ս **В. И. Шишлькова**, Младотурецкая революция 1908-1909г.г, изд."Наука", Москва,1977, էջ 71-75:

[2] Տե՛ս **Г. З. Алиев**, Турция в период правления младотурок (1908-1918г.г.), изд."Наука", Москва, 1972, էջ 75:

[3] Տե՛ս **Е. К. Саркисян**, Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX в.в., изд. АН Арм. ССР, Ереван, 1972, էջ 222:

բեռնված էին բազմաթիվ վագոններ: Բունտարարները դաշույններով պատռեցին հակերը և սկսեցին կրել դուրս թափված ցորենը:

Հակաթուրքական պայքարում գնալով ավելի ընդգծված նշանակություն էին ձեռք բերում կրոնափիլիսոփայական հարցերի շուրջ արաբների և Թուրքերի միջև ծագած անլուծելի վեճերը: Դրանք զուտ տեսական երկխոսություններ չէին, այլ արաբ-Թուրք հակասությունների խորացմանը նպաստող դավանաբանական բուռն վեճեր:

Սկզբից ի վեր տիրած լինելով Մեքքա և Մեդինե քաղաքներին, Թուրքիայի գահակալները հետագայում նկատվեցին որպես աշխարհի հարյուր միլիոնավոր մահմեդականների ոչ պաշտոնական կրոնապետեր: Դրան մեծապես նըպաստեցին գրված երկրներում Թուրքերի ունեցած քաղաքական ազդեցությունը և զինվորական ուժը: Դրա հետ միասին օսմանյան նախորդ սուլթանները միշտ էլ մի տեսակ վարանումով էին հայտարարել, թե իրենք Մուհամմեդ մարգարեի հաջորդն են՝ նկատի ունենալով, որ իրենք սերված են բոլորովին տարբեր արյունից ու ցեղից:

Սակայն իր գահակալության օրոք Աբդուլ Համիդը, որի ապիկար ու բռնակալ ներքին քաղաքականության պատճառով կայսրությունը կորցրել էր օսմանյան երկրների գրեթե կեսը, կարծես հակակշռելու համար այդ կորուստները, ինչպես աշխատության նախորդ գլուխներից մեկում արդեն խոսք է գնացել, ձեռնարկել էր բարդ ու դժվարին, միաժամանակ վերին աստիճանի վտանգավոր գործ՝ համիսլամության (պանիսլամիզմի) հիմնում:

Իր այդ ծրագիրը իրագործելու համար Համիդը չվարանեց տարբեր մահմեդական երկրներ ուղարկել պրոպագանդիստներ և նրանց միջոցով պաշտոնապես կրկին ու կրկին իր անձը հռչակել խալիֆե, առանց նկատի ունենալու, թե այդ քայլն ինչպես կընդունեն շիա-մահմեդական Պարսկաստանը կամ սյունի-մահմեդական Արաբիան:

Համիսլամության գաղափարախոսության տարածումը սկզբնական շրջանում Թուրքիային բերեց որոշ ֆինանսական օգուտ: Օրինակ՝ Հեջազի երկաթուղու շինարարության կառուցման օգտին կամ վերջին հույն-Թուրքական պատերազմի ժամանակ օսմանյան բանակների համար տարբեր երկրների մահմեդականները կամավոր հանգանակություններ էին կատարել, և հավաքված շռավիելի գումարը դրվել էր սուլթանի տրամադրության տակ:

Բայց դրանք չնչին բաներ էին համեմատած Արաբիայում ծագած ապստամբության հետ, որ, զարմանալի արագությամբ աճելով, դամոկլյան սրի պես կախվել էր կայսրության միասնականության պահպանմանն ուղղված սուլթանական ջանքերի վրա:

Այդ ապստամբության գլխավոր դրդիչ պատճառներից մեկն արաբների արդեն հասունացած գիտակցությունն ու համոզումն էր, թե սուլթանը իրավունք չուներ իրեն ամբողջ մահմեդականության հոգևոր պետ համարելու, քանի որ նա մարգարեի սերնդից չէ: Միաժամանակ ապստամբության ծավալ-

մանը նպաստում էին սուլթանի սանձազերծած պատժամիջոցները, հատկապես վարչական պաշտոններից թե՛ մահմեդական, թե՛ քրիստոնյա արաբների մասսայական վտարումները: Այդ արաբ պաշտոնյաներն, անշուշտ, նախանձախնդիր էին իրենց երկրի շահերին: Դրան գումարվում էր արաբների հին ատելությունը թուրքերի հանդեպ, ինչպես և այն, որ Համիդի կառավարման ամբողջ ժամանակաշրջանում Արաբիան ևս գտնվում էր տնտեսական-վարչական կամայականություններով լի ողբալի վիճակում, ինչպես օսմանյան կայսրության մյուս հարստահարվող երկրները:

Երկու հակառակ կողմերը՝ արաբներն ու թուրքերը, հավակնում էին նույն իրավունքին՝ ունենալ իրենց խալիֆը: Արաբները երազում էին իրականացած տեսնել այդ վաղեմի իդեալը, մշտապես չեշտելով, որ Արաբիան անհիշելի ժամանակներից եղել է արաբներինը, դարեր շարունակ նրանց է պատկանել խալիֆաթը, հետևապես ներկա խալիֆ Համիդի լուծը թոթափելուց հետո Եմենը պետք է հիմնի նոր խալիֆաթ և նրա հովանու տակ միավորի թուրքական տիրապետության տակ գտնվող լայնարձակ Արաբիայի բոլոր ըմբոստ ցեղերին:

1901թ. Եմենի հին թագավորական ցեղի ներկայացուցիչ Սադայի իմամ Էսադ Համիդեդդինը իրեն հայտարարեց խալիֆ: Եմենը ցնծության մեջ էր:

Այն բանից հետո, երբ մահմեդականությունը փաստորեն երկու խալիֆ ունեցավ, Ելդզզում իսկական տագնապ սկսվեց: Խտրություն չդնելով միջոցների միջև՝ թուրք կառավարությունը աննկուն համառությամբ գործադրում էր բոլոր ջանքերը, մի կողմից, արաբական ապստամբությունը ճնշելու համար, մյուս կողմից, է՛լ ավելի լայն ծավալ հաղորդում համիսլամական քարոզչությանը, որի ազդեցության ոլորտում էին նաև Հնդկաստանի տասնյակ միլիոնավոր բնակիչներ՝ հատկապես երկրի արևմտյան նահանգներում: Բավական է ասել, որ հույն-թուրքական հիշյալ պատերազմի միջոցին հաղթանակի հասնելու նպատակով մուսուլմանական աշխարհում հայտարարված դրամահավաքին ամենաառատաձեռն մասնակցություն ունեցան մահմեդական հընդիկները՝ դրանով իսկ արտահայտելով իրենց նվիրվածությունը սուլթան-խալիֆ Աբդուլ Համիդին:

Այդ ամենն անհանգստացնում էր անգլիացիներին: Բրիտանական կառավարությունը խիստ մտահոգված էր Հնդկաստանի ապագայով: Նա չէր կարող ձեռքերը ծալած հանգիստ դիտել, թե ինչ վտանգ է հասունանում գաղութային կայսրության թագի ամենաթանկագին ալմաստի շուրջ: Իսկ այդ վտանգը խիստ իրական էր:

Այս պայմաններում Լոնդոնը նախընտրեց կանգնել Արաբիայի թիկունքում, սկսեց ամեն կերպ քաջալերել ապստամբներին թե՛ խորհուրդներով և թե՛ զենք ու զինամթերք մատակարարելով: Անգլիան մտածում էր Թուրքիայի ընկնելուց հետո Արաբիայից իր համար ստեղծել «մի երկրորդ Եգիպտոս», իր ազդեցության տակ առնել մահմեդականության սիրտը համարվող ուխտատեղիները՝ Մեքքա և Մեդինա սրբազան քաղաքները, դրանով իսկ սուլթան

Համիդին զրկել խալիֆի տիտղոսից: Դա կնպաստեր իր ձեռքում ամուր պահել այն մոգական թելը, որից պետք է կախված լինեին համիսլամության ընթացքն ու շարժումը: Անգլիացիներն այդ դեպքում հնարավորություն կունենային իրենց ազդեցությունը տարածել ընդհանրապես մահմեդական ողջ աշխարհի վրա: Իսկ այդ կնշանակեր ջուրը նետել համիսլամության հետ կապված սուլթան Համիդի ծրագրերը, որոնց իրագործման համար նա երկար տարիներ այնքան մեծ ջանքեր էր գործադրել և գլուխ հոգնեցրել:

Տագնապած էր ոչ միայն Համիդը, այլև՝ Ելդզզը, բարձր դուռը, կայսրության ողջ բարձր պաշտոնեությունը: Վերջինիս ամենամեծ մտահոգություններից մեկը և երկյուղն էր դարձել 1906թ. ամռան սկզբին սուլթանի հիվանդության հանգամանքը՝ մահվան հնարավոր ելքով: Ստամբուլում իրարանցում էր ընկել, քանզի Համիդի շրջապատը գերազանց ըմբռնում էր, որ այդ դեպքում պետությունը կընկներ քաղաքական ալեկոծ հոսանքների մեջ, բարդություններ առաջ կգային կայսրության ողջ տարածքի վրա, թուրքերի ձեռքից կգնար ոչ միայն խալիֆաթը, այլև բազմաթիվ ուրիշ աղետներ կկախվեին կայսրության գլխին: Բացի այդ, պալատական շրջաններում կային միմյանց հակառակ բազմաթիվ հոսանքներ, որոնք մինչ այդ երևան չէին գալիս, բայց որոնք կարող էին հանկարծ հորդանալ և պետության առաջ դնել մի շարք անակնկալներ: Դա միանգամայն իրական հեռանկար էր, քանի որ Աբդուլ Համիդը երկրի կառավարումն ամբողջովին կենտրոնացրել էր իր ձեռքում, ոչընչացրել շրջապատի նախաձեռնությունը և բոլորին դարձրել իր պարզ կամակատարը: Ինչ խոսք, նման պայմաններում սուլթանի վախճանից հետո երկիրը կհայտնվեր անդեկ վիճակում:

Բայց 1906-ի օգոստոսին Համիդը կարողացավ հաղթել իր հիվանդությանը և նույնիսկ սկսեց զբաղվել պետական գործերով, թեև արդեն առողջությունը խախտված էր, և ամեն օր կարելի էր սպասել նրա մահվան լուրին:

Հակաթուրքական ըմբոստությունները չէին դադարում Մակեդոնիայում, որի ժողովուրդը սուլթանից տևականորեն ու համառաբար պահանջում էր կատարել հանձնառությունները և երկրում, վերջապես, բարեփոխումներ կատարել: Բեռլինի վեհաժողովից հետո այնտեղ միշտ անհանգիստ վիճակ էր՝ լուռ բողոքներով և ավելի հաճախ ապստամբական ուժգին պոռթկումներով:

Պետությունները մի շարք փորձեր էին արել այնտեղ բարեփոխումներ մտցնել, բայց քանի որ նրանք աշխատում էին ամեն ինչ անել թուրք պաշտոնյաների միջոցով կամ նրանց անմիջական մասնակցությամբ, ուստի չէր հաջողվում ստեղծել մի այնպիսի դրություն, որի ընթացքում երկրի բնակչությունը խաղաղվեր, հանգիստ ու հանդարտ անձնատուր լիներ իր առօրյա կյանքին և կուլտուրական զարգացման գործին:

Սուլթանական կամարիլիան ոչ միայն մտածել անգամ չէր ուզում բարենորոգումների մասին, այլև պարբերաբար դիմում էր փորձված մեթոդին՝ իրար դեմ գրգռելով Մակեդոնիայում ապրող տարբեր ազգերին, հատկապես կռիվ

բորբոքելով երկրի հույն և բուլղար բնակչության միջև: Այդ կամարիլիան բացարձակապես թև էր տալիս հույն զինված խմբերին, որոնք հարձակումներ էին գործում բուլղար գյուղերի վրա, ավերում և ջարդում խաղաղ բնակիչներին: Սուլթանն այդ շրջանում հույներին աջակցում էր, որովհետև բուլղարները Մակեդոնիայում մեծամասնություն էին կազմում և իրենց թիկունքում մշտապես զգում էին հարևան բուլղարական պետության բարոյական և այլ կարգի աջակցությունը: Բացի այդ, Բուլղարիան չէր թաքցնում իր տերիտորիալ պահանջները Թուրքիայից:

Մակեդոնիայում հույն զինված խմբերի կատարած բռնություններն ու սարսափները ծայրեծայր ցնցել էին ամբողջ Բուլղարիան: Հույների և սուլթանի դեմ վրեժի ու ատելության կոչեր էին լսվում Սոֆիայի և երկրի այլ տեղերի բազմամարդ միտինգներում: Սուլթանը լավ էր հասկանում, որ մակեդոնական շարժումը կարող է մոտ ապագայում նոր թափ ստանալ, որի դեպքում Բուլղարիան չէր կարող չեզոք մնալ և անտարբեր դիտել, թե ցեղակիցները ինչպես են կոտորածների ենթարկվում:

Թուրքական կառավարությունը, սակայն, շարունակում էր անտեսել բուլղարների բորբոքված տրամադրությունները և դրա համար հիմքեր ուներ: Եվրոպական միջամտությունը Մակեդոնիայի գործերում դեռևս սահմանափակվում էր անուժ հիշատակագրերով և տաղտկալի առաջադրություններով: Թեև Ավստրիան և Ռուսաստանը իրենց ձեռքն էին առել մակեդոնական խնդրի լուծումը, բայց նրանց միջև կնքված համաձայնությունն անդամալուծված էր Ռուսաստանում ստեղծված քաղաքական ճգնաժամի և Հեռավոր արևելքում ռուսական զորքերի կրած ջախջախիչ պարտությունների պատճառով:

Կայսրության ոչ թուրք ազգերի հակասուլթանական պայքարում ավելի տևականը և համառը, այնուամենայնիվ, մնում էր **հայկական** ապստամբական շարժումը:

Հայության նկատմամբ՝ որքան էլ տմարդի եղան թուրքական ոճիրները՝ անգութ հալածանքներ ու թալաններ, գազանային կոտորածներ ու հոշոտումներ, որոնցով գերեզման իջան տասնյակ հազարավոր հայեր, որքան էլ սարսափելի էին ավերումներն ու հրդեհները, որոնցով քարուքանդ արվեցին գյուղեր ու ամբողջ գավառներ, դատարկվեցին տարածքներ, այնուամենայնիվ, Հայաստանում չդադարեցին հեղափոխական կազմակերպությունների աշխատանքը, ֆիդայական կռիվները, ժողովրդական ընդվզումները: Չլուծված հայկական հարցը առաջվա պես մնաց սպառնական վիճակում: Հայությունը սպասում էր իր դատի լուծմանը՝ ազատագրվելու համար այն դժոխքից, որի մեջ ընկած էր:

Ռուսաստանում ծավալված ազատագրական կռվի մասին լուրերը ծայրահեղորեն բորբոքել էին թուրքահայոց հետաքրքրությունը հարևան երկրում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: Հատկապես թուրքահայ մտավորականության որոշ մասը հույսեր էր փայփայում, թե Ռուսաստանում ցարական միապետության տապալումը և երկրում դեմոկրատական կարգերի

հաստատումը խթան կհանդիսանան Թուրքիայում բարենորոգումներ անցկացնելուն և կայսրությունն աստիճանաբար քաղաքակիրթ կյանքի հուն մտցնելուն:

Արևմտահայ ազատագրական պայքարի գաղափարախոսներից գրող Արփիար Արփիարյանը բարձր գնահատելով ռուսական հեղափոխության ազատագրական նշանակությունը և հայության փրկությունը կապելով այդ հեղափոխության հաղթանակի հետ՝ գրում էր. «Ինչ որ Ռուսիոյ մեջ կը պատահի, ան մեզի՝ հայերիս, գերազանց աստիճանով կը շահագրգռե, ոչ թե իբր ժամանցի հետաքրքրութեամբ, այլ մեր վրայ ամենահզոր ազդեցությամբ ներգործելու ապահովութեամբ»[1]: Գրողը համոզված էր, որ հեղափոխության հաղթանակը բարօր կյանք կբերի կովկասահայերին, միաժամանակ հավատում էր, թե դա կարող է նպաստել նաև թուրքահայերի ազգային ազատագրությանը: «Կովկասի հայոց առաքինութիւնը պիտի փրկե Թուրքիոյ հայությունն ալ»: Ա. Արփիարյանը ռուսական հեղափոխության ազդեցության տակ գրեց բանվորների կյանքին նվիրված «Ոսկի ապրջան» վիպակը[2] և մի շարք պատմվածքներ ու ակնարկներ[3]:

Հարկ է նշել, որ օսմանյան կայսրության մեջ հակասուլթանական բոլոր երևույթները մինչև 1906 թվականը տեղի էին ունենում միայն այլազգի հարբստահարված ժողովուրդների մոտ: Բայց հիշյալ թվականի սկզբներին նկատելի դարձավ, որ վիճակն աստիճանաբար փոխվում է: «Հիմա գրեթե ստոյգ է որ **Թուրքերն** ալ կսկսին շարժիլ ռուսիոյ յեղափոխութեան ազդեցութեամբ»[4], - գրում էր Ա. Արփիարյանը:

Թուրք ժողովրդի այն մասը, որ սնուցում էր հակակառավարական զգացումներ, բաժանվում էր երեք գլխավոր շերտի:

Առաջին շերտի մեջ այն թուրքերն էին, որոնք բողոքում էին իշխանավորների շահատակությունների դեմ, դրանցից ոմանք էլ դժգոհ էին Կ.Պոլսի կառավարությունից այն բանի համար, որ սա ձեռք չի առնում անհրաժեշտ միջոցներ սանձահարելու շահատակությունների հեղինակներին: Այս շերտի գլուխն էին կանգնած կալվածատերերը, ընդհանրապես հարուստները, որոնք փորձում էին ժողովրդին համոզել, թե աշխատավորների դժբախտության ու թշվառության միակ պատճառն անօրեն պաշտոնյաներն են:

Երկրորդ շերտի մեջ հիմնականում հոգևորականներ էին, թունդ պահպանողականներ և հետադիմական այլ անձինք, որոնք իրենց մեջ քնքշությամբ սնուցանում էին համիսլամական գաղափարներ ու ցնորքներ: Սրանք խիստ դժգոհ էին այն բանի համար, որ, ըստ իրենց, իշխանություններն անհրաժեշտ խստությամբ ու վճռականությամբ չէին պայքարում եվրոպական նորամու-

[1] **«Շիրակ»** (Կահիրե), N 1, 1906, էջ 58:
[2] Տե՛ս **«Շիրակ»**, N 2, 1906, էջ 108-122, N 3, 1906, էջ 130-146:
[3] Տե՛ս օրինակ՝ **«Լուսաբեր»** (Կահիրե), 26 հունվարի, 12 փետրվարի, 2 մարտի 1907թ.:
[4] **«Լուսաբեր»**, N 169, 11 հունվարի 1906թ.:

ծությունների դեմ, դրանց քայքայող ազդեցություններից չէին պաշտպանում թուրքական-մուսուլմանական ավանդույթներն ու սովորությունները:

Երրորդ շերտը բաղկացած էր այն անձանցից, որոնք դժգոհ էին երկրում տիրող բռնապետական հակամարդկային կարգերից: Ըմբոստների այս ոչ մեծաթիվ մասն էր, որ քիչ թե շատ հետևողականությամբ մատը դրել էր բուն վերքին և հանդես էր գալիս սուլթանական ռեժիմի վերափոխման կամ գոնե թուլացման պահանջով:

Բանն այն է, որ այս շերտի գույնը որոշելն անկարելի էր, քանզի Նրա ներսի անձինք չունեին որոշակի քաղաքական հայեցակետ ու աշխարհայացք: «Հեղափոխական» կոչված այս շրջանակի մեջ վխտում էին մութ նկարագրի տեր անհատներ, նաև անբարո մարդիկ, որոնք հեղափոխականի դիմակի տակ մըտադիր էին վրեժ լուծել իրենց անձնական հակառակորդներից:

Այս երրորդ շերտի մեջ, անշուշտ, կար նաև խիստ սահմանափակ թվով մի մաքուր տարր, որը բաղկացած էր գաղափարական նվիրյալներից և նրանցից, ովքեր վերադարձել էին աքսորավայրերից, ուր երկար տարիներ տառապել էին իբրև քաղաքական հանցագործներ:

Դեռևս 1905-ի կեսերից ավանդական «հիվանդ մարդը» սկսել էր ցույց տալ ներքին անհանգստության նշաններ թուրք տարրի մտքում կատարվող խմորումից, որը անխուսափելիորեն տանելու էր դեպի հասարակական ցնցումներ:

Իշխանությունների դեմ դժգոհությունը հատկապես նկատելի էր թուրք գյուղացիության առավել հարստահարված խավերի մոտ: Դժգոհության պատճառներից մեկը տուրքերի ծանրությունն էր, պաշտոնյաների կատարած զեղծումները: Գավառներում հավաքված տուրքերը ուղարկվում էին Կ.Պոլիս, իսկ տեղական պետքերին հատկացվում էր ամենաչնչին մասը միայն:

Նշելով, որ թեև թուրք գյուղացիները Հայաստանի հայերի նման չեն ենթարկվում քրդերի գազանություններին, Մ. Փորթուգալյանի «Արմենիան» անդրադառնում էր նրանց տնտեսական ծանր դրությանը, գրելով. «Մենք չենք ուրանում, որ թուրքական ստոր ռեժիմից կնեղուին նույնպես և հպատակ թուրքերը: ... Ստորին պաշտոնեաները տզրուկի պես կը ծծեն անոնց արյունը, տուրքերու անունովն անոնց տակի փալասն անգամ կը տանին»[1]:

Թուրք ժողովուրդը կամ գոնե զգալի թիվ կազմող նրա մի մասը սկսում էր հասկանալ, որ իր արյուն-քրտինքով վաստակած փողերը ամենևին չեն գործադրվում տնտեսական բարգավաճման և կրթական զարգացման վրա: Նա տեսնում էր, որ ամիսներ շարունակ ռոճիկ չի վճարվում տեղական, հատկապես կրտսեր պաշտոնյաներին, որի հետևանքով սրանք իրենց ապրուստը հոգալու համար անխնա կաշառք են վերցնում, կեղեքում ժողովրդին:

Նվազ դժգոհ չէր սակավաթիվ թուրք մտավորականությունը: Ամենախիստ, անողորմ գրաքննությունը իշխում էր բոլոր հրատարակությունների վրա: Բոլոր լրագրերը՝ թուրք, հայ, հույն, ֆրանսալեզու և այլն, խղճալի վիճակում էին: Օտար երկրներում տեղի ունեցող կարևոր քաղաքական դեպքերի մասին թերթերն իրավունք չունեին գրելու՝ առանց գրաքննության: Եթե մարդու ստացած տեղեկությունների աղբյուրը միայն Կ.Պոլսի լրագրությունն էր, ապա նա չէր կարող իմանալ, որ, օրինակ, Հարևան Ռուսաստանում եղել է հեղափոխություն, գումարվել է երկու դումա, որ Հարևան Պարսկաստանում հրատարակված է սահմանադրություն, գոյություն ունի պարսկական պառլամենտ: Նա չգիտեր, որ Մարոկոյում ֆրանսիացիք ռմբակոծել են Կասաբլանկան և ջարդ տվել արաբներին, չգիտեր նույնիսկ, որ Եմենում թուրք զորքը կռվում է ապստամբ արաբների դեմ:

Թուրք գրականության լավագույն նմուշների վրա, ամենազանազան ոգիներով, դրվում էր արգելք, որի հետևանքով հրապարակը մնում էր միայն գեղարվեստական ցածր մակարդակ ունեցող, բայց սուլթանին և նրա կամարիլային գովերգող «գրականությանը»:

Առաջինը 1906թ. մարտ ամսին հակակառավարական ցույցեր արեցին Գասթեմունիի թուրքերը: Դրանց պատճառը օր օրի մեծացող հարկերն էին, պաշտոնյաների ահավոր չափերի հասնող կաշառակերությունը և մսխումները: Հուզված թուրք ամբոխը Լինչի դատաստանին ենթարկեց իր իսկ ցեղակից աղաներին, որոնք ամբարել էին հացահատիկը, բարձրացրել գինը և ժողովրդին մատնել սովի ճիրաններին[1]:

Ցույցերը և մասսայական բողոքներն այստեղ շարունակվեցին մինչև մայիս ամիսը: Գասթեմունիի դեպքերը մեծ տհաճություն էին պատճառել սուլթանին, որը մինչ այդ իր ժողովրդին դիտում էր որպես համբերության ու խոնարհության օրինակ: Նա մտածում էր, որ եթե իր դեմ սկսեն ընդվզել նաև թուրքերը, ապա դա վերջի սկիզբը կլինի: Ահա թե ինչու Աբդուլ Համիդը որոշեց զիջել և հանգստացնել կրքերը: Հետևանքը այն եղավ, որ Գասթեմունիի բնակչությունը հասավ իր նպատակին: Թուրք բնակչության տուրքերը կրճատվեցին, փոխվեցին վիլայեթի պաշտոնյաներից շատերը, այդ թվում կուսակալը:

Իշխանությունների դեմ Գասթեմունիի թուրք բնակչության ընդվզումն անսպասելի նորություն էր ինչպես Համիդյան վարչակազմի, այնպես էլ հայության և կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդների համար: «Փառք Ալլահին, որ այս անգամ թուրքն էլ կրցավ զգալ տիրող անտանելի դրությունը և արտահայտել իր դժգոհությունը»[2], - գրում էր «Դրոշակը»:

Գասթեմունիի թուրքերի խլրտումները որոշ իմաստով տնտեսական - դասակարգային հակասությունների թույլ արտահայտություններ էին, սոցիալ-

[1] «Արմենիա», 15 նոյեմբերի 1905թ.:

[1] Տե՛ս Ю. А. Петросян, Младотурецкое движение (вторая половина XIX- начало XX в.), изд. "Наука", М., 1971, էջ 223:

[2] «Դրոշակ», N 5 (171), մայիս, 1906, էջ 69:

կան ըմբոստացման համարյա առաջին օրինակը, թեև տակավին ծայրահեղորեն անգիտակից ու անկազմակերպ:

Ավելի համառ ու երկարատև եղավ Էրզրում քաղաքի Թուրքերի հակակառավարական պայքարը, որն սկսվեց 1906թ. ապրիլին և տևեց շուրջ մեկ տարի[1]:

Ինչպես Գասթեմունիի, Էրզրումի Թուրքերի հակակառավարական ելույթների հիմքում նույնպես ընկած էին տնտեսական պատճառներ, և շարժումն ուներ սոցիալական բնույթ[2]:

Դեռ 1905 թվականի կեսերին Պոլսից հրաման էր եկել, որ անհատական տուրք (չախսի վերկիսի) պիտի վճարեն ոչ միայն քրիստոնյաները, այլև մահմեդականները, այդ թվում Թուրքերը: Բայց Թուրք բնակչությունը չէր վճարում պատճառաբանելով, որ մյուս բազմաթիվ տուրքերի հետ այդ տուրքը նույնպես միշտ վճարել են քրիստոնյաները, և նրանք էլ պիտի շարունակեն վճարել: Չնայած Էրզրումի կուսակալ Նազըմ փաշան մեծ ջանքեր գործադրեց, բայց Թուրքերը հրաժարվեցին անհատական տուրք վճարել նաև 1906 թվականի սկզբից[3]:

Ամեն ինչից երևում էր, որ դժգոհություններն ու բողոքները գնալով ընդգրկելու են քաղաքի Թուրք բնակչության նորանոր խավեր: Բանն այն էր, սակայն, որ այդ դժգոհություններն ու բողոքները կարիք ունեին ուղղորդվելու Թուրք որևէ քաղաքական ուժի կողմից, որ դեռևս չէր երևում:

Տվյալ պահին հնարավոր ղեկավարող ուժ կարող էր լինել քիչ թե շատ կազմակերպված «Միություն և Առաջադիմություն» կազմակերպությունը: Դաշնակցության «Երկիր» (Թիֆլիս) թերթը գտնում էր, որ «Երիտասարդ Թուրքերին մնում է թողնել Եվրոպայում իրենց անպտուղ ճամփորդությունները, երկրից հեռու իրենց անօգուտ հրատարակությունները և շտապել գլուխ անցնելու տանջվող ու բողոքող ժողովրդին...»[4]:

Այդ էին պահանջում սուլթանական կարգերին ընդդիմադիր Թուրքերը Կ. Պոլսում, Իզմիրում, Տրապիզոնում, Սեբաստիայում, Էրզրումում, կայսրության ուրիշ քաղաքներում, տարբեր վայրերում տեղակայված բանակային մասերում ու զինված կայազորներում, այսինքն՝ այնտեղ, ուր երևացել էին հակակառավարական ըմբոստության նշաններ:

1906թ. «Միություն և Առաջադիմություն» կոմիտեն իր նստավայրը, վերջապես, արտասահմանից տեղափոխեց Սալոնիկ և ձեռնարկեց ընդհատակյա հեղափոխական բջիջների կազմակերպումը[5]:

---

[1] Էրզրումի 1906-1907թթ. դեպքերի մասին տե՛ս **"Турецкий сборник"**, изд. Восточной литературы, Москва, 1958, էջ 51- 65:
[2] Այդ մասին տես **«Անկախ մամուլ»**, N 1, 1 դեկտեմբերի 1907թ.:
[3] Տե՛ս **«Կովկասի առավոտ»**, N 1, 21 սեպտեմբերի 1907թ.:
[4] **«Երկիր»**, N 16, 18 հոկտեմբերի 1906թ.:
[5] Տե՛ս **А. Ф. Миллер**, Краткая история Турции, ОГИЗ, Госполитиздат, Москва, 1948, էջ 120:

Մարտ ամսի կեսերին քաղաքի Թուրքերն ըմբոստության առաջին նշանները ցույց տվեցին: Հուզումը ղեկավարում էին տեղի մուֆթին և ուրիշ անվանի Թուրքեր:

Այն բանից հետո, երբ կուսակալը սպառնաց ուժ գործադրել, Թուրք բնակչությունը դուրս եկավ բազմամարդ ցույցերի[1]:

Ելույթներից մեկի ժամանակ ցուցարարները սաստիկ գրգռված խուժում են կառավարական պաշտոնատները և ավերում:

Պոլսի բռնապետը, ժողովրդին հանգստացնելու համար, պաշտոնանկ է անում կուսակալին: Բայց երեք-չորս շաբաթ անց սուլթանը, երբ վտանգը համարել էր անցած, նորից կուսակալին վերահաստատում է իր պաշտոնում:

Ժողովուրդը, դրանից զայրացած, ուխտեց մինչև վերջ համախումբ լինել իր ղեկավարների շուրջը և շարունակել պայքարը: Բայց Նազըմ փաշան որոշեց հեշտությամբ տեղի չտալ և այդ նպատակով Թուրքերի շարժմանը տալ հայկական խնդրի կերպարանք, առաջ բերել կոտորած կամ գոնե կողոպուտ՝ հույս ունենալով, որ այս գործում իրեն կաջակցեն «բարեկամ» մեծանուն հայերը[2]:

Բայց դիվային այդ մտադրությունը ձախողվեց: Թուրք բնակչությունը շարունակում էր բողոքները և սպառնում նորից խուժել պետական պաշտոնատները: Տեսնելով, որ բնակչության կրքերը չեն հանդարտվում, սուլթանը Պոլսից Էրզրումի կուսակալին փոխանակում է Դիարբեքիրի կուսակալ Աթա բեյի հետ:

Նոր կուսակալին ժողովուրդն ընդունեց սպասողական դրության մեջ: Առաջին իսկ օրից նա ցույց տվեց իր հայատյացությունը. նախորդ կուսակալի «բարեկամ» պնակալեզ հայ երևելիներին նա արգելեց մասնակցել իր սելամլիքին, նաև հայտարարեց, որ եթե նրանք երբևիցե իր հետ գործ կունենան, պետք է գան սարայ (կառավարական տուն), իսկ իր տուն գալու փորձ անգամ չպիտի անեն:

Զբավարարվելով դրանով՝ նոր կուսակալը գործ դրեց իր ողջ կրոնամոլությունը՝ հայերի դեմ գրգռելով Թուրքերին: Սրանք, բարեբախտաբար, այս անգամ արթուն գտնվեցին և չընկան սադրիչի թակարդը:

Թուրքերը սպասում էին, թե Աթա բեյը ինչ վերաբերմունք է ցույց տալու նոր հարկերի հանդեպ: Կուսակալը անզգուշություն հանդես բերելով՝ նրանց ներկայացուցիչներին հասկացնել էր տվել, որ հարկերը պիտի վճարեն նաև Թուրքերը, գոնե հայերից գանձվելիք հարկերի մեկ քառորդի չափով:

Կուսակալի կարծիքն իմանալուն պես՝ Թուրքերն իրար անցան: Փակելով քաղաքի բոլոր վաճառատները՝ նրանք հայերին առաջարկեցին հետևել իրենց:

1906թ. ապրիլի կեսերին տեղի է ունենում մեծ ցույց, որին մասնակցում են նաև հայերը: Ցուցարարները, չբավարարվելով կուսակալին հեռացնելով, պահանջում են քաղաքից վտարել նաև առավել անտանելի պաշտոնյաներին:

---

[1] Տե՛ս **«Արշալույս»**, N 71, 2 ապրիլի 1906թ.:
[2] Տե՛ս **«Վտակ»**, N 11, 2 դեկտեմբերի 1907թ.:

ցույցի ընթացքում զինվորական հազարապետ Կրպաճ Մուստաֆա էֆենդին զինվորներին հրաման է արձակում կրակել ամբոխի վրա. տեղնուտեղը երկու թուրք սպանվում են, մի քանիսը՝ վիրավորվում:

Գործի քննության համար սուլթանը Երզնկայից Էրզրում է ուղարկում իր սիրելի զորապետներից մեկին՝ 4-րդ բանակի գլխավոր հրամանատար Զեքի փաշային: Քննության արդյունքում հազարապետ Մուստաֆա էֆենդին պաշտոնազրկվում է, այնուհետև սկսվում են ցույցին մասնակցած թուրքերի և հայերի ձերբակալությունները:

Եվ այսպես, թուրքական բանտում հայերի հետ առաջին անգամ հայտնվում են թուրք քաղաքական բանտարկյալներ:

Բռնապետության հաստատուն պատվանդան նկատված մահմեդական ամբոխը հայերի կոտորածների սև օրերին ոչ միայն խուլ էր մնում, այլև կույր գործիք՝ սուլթանի ձեռքում: Այժմ Էրզրումի թուրքերը հրապարակ էին իջել հայերի հետ ձեռք ձեռքի:

Թուրք քաղաքացիներից շատերը գուրգուրանք էին ցուցաբերում դրացի հայերի հանդեպ, նրանց համարում գազան կառավարության անմեղ զոհեր: «Կովկասի առավոտը» (Թիֆլիս) գրում էր, որ թուրքական կառավարությունն ամեն կերպ աշխատում է խոչընդոտներ հարուցել թուրք-հայ նոր ծնվող համերաշխության դեմ, բայց, բարեբախտաբար, ապարդյուն են մնում այդ ջանքերը: «Մահմեդական մասսան, - գրում էր թերթը, - աստիճանաբար գիտակցության է գալիս, և այլևս հեշտ չէ նրան մոլորեցնելը: Կարինի մեր թղթակցի նամակից երևում է, որ թեև կառավարական գործակալները ամեն ճիգ թափում են հայերին ու թուրքերին թշնամացնելու, բայց չի հաջողվում: Թուրքերն, ընդհակառակը, հոգատար եռանդով դիմում են իրենց հարևաններին և նրանց զգուշացնում պատրաստվող դավերից»[1]: «Թուրքագ գարտաշի» (երկրակից եղբայր) բառերը շատերի շուրթերին էին:

Հայկական մամուլը բերկրանքով էր արձանագրում Էրզրումում թուրք ժողովրդի մեջ սկսված հակակառավարական ելույթը՝ այն համարելով թուրք ժողովրդի ապագա լայնածավալ շարժման նախանշաններից մեկը, դեռ թույլ ու դժգույն, բայց արժանի ջերմ քաջալերանքի[2]:

Հ.Յ.դաշնակցության օրգան «Երկիր» (Թիֆլիս) թերթը «Հուզումները Թուրքիայում» վերնագրով հոդվածում գրում էր. «Վիճակվա՞ծ է արդյոք այդ հինավուրց քաղաքին օրրանը և առաջապահը լինել վերածնվող Թուրքիայի: Այդ ցույց կտա ապագան: Ուրախալին, ուշագրավն այն է, որ այսօր թուրք ժողովուրդը դարավոր քնից արթնանալու նշաններ է ցույց տալիս, և, փոխանակ առաջվա պես կառավարական պաշտոնյաների դավերով մոլորության մեջ ընկած՝ հայրենակից ու բախտակից հայ ժողովրդի վրա ձեռք բարձրաց-

[1] Տե՛ս «Կովկասի առավոտ», N 1, 21 սեպտեմբերի 1907թ.:
[2] Նույն տեղում:

նելու, խիզախում է սուլթանական բռնակալության և նրա մեծ ու փոքր արբանյակներին, տգրուկ և վատթար արարածներին կոկորդը բռնելու»[1]:

Հայ մամուլը մշտապես հարց էր տալիս, թե արդյո՞ք երկար է տևելու թուրքերի մեջ սկսված ըմբոստացումը, քանի որ մտավախություն ուներ, որ եթե կայսրության ուրիշ նահանգներ չհետևեն Էրզրումի և Գասթեմունիի օրինակին, ապա Համիդյան ռեժիմը, իր անսահման ճկունության շնորհիվ, շատ շուտով դուրս է գալու կնճռոտ իրավիճակից:

Իրենց հերթին փորձառու գլուխները-թուրք թե հայ - սպիտակ մորուքները չփելով, վատ վախճան էին կանխատեսում ըմբոստ բնակչության և նրա ղեկավարների համար, գտնելով, որ վաղ թե ուշ կառավարությունն իր դաժան զայրույթը թափելու է նրանց գլխին:

Կառավարական բռնություններն ի վիճակի չեղան ահաբեկելու Էրզրումի գրգռված թուրք բնակչությանը: Իշխանությունները կրկին պահանջում էին անհատական տուրքը, թուրքերը կրկին հրաժարվում էին վճարել: Ավելին, վերջիններս շարունակում էին սպառնալիքներ հղել կառավարությանը, դիմում էին նաև գործադուլների, ըմբոստության այլազան ցույցերի[2]:

Էրզրումի նոր դեպքերի կապակցությամբ 1906 թվականի հունիսին Պոլսից այնտեղ ուղարկվեց երկու քննիչ՝ Պետական խորհրդի (Շուրայի դեվլեթի) անդամ Մուստաֆա բեյը և Մուշի նախկին կառավարիչ Հյուսնի բեյը: Երբ սրանք Էրզրում հասնելով ձեռնարկեցին քննության, իրենց կայան ընտրեցին քաղաքի զինվորական վարչության պաշտոնատունը և հարցաքննության համար այնտեղ էին կանչում մարդկանց: Ժողովուրդը զանգվածաբար կրկին ցույցի դուրս եկավ, բողոքեց այդ ընթացքի դեմ և պահանջեց քննությունը կատարել քաղաքապետարանում: Ցուցարարները միաժամանակ սպառնացին, որ ցույցերի առիթով որևէ մեկին ձերբակալելու դեպքում անմիջապես պարզելու են անգլիական դրոշ և ընդունելու բրիտանական հպատակություն, վստահ լինելով, որ «ինկլիզը» իսլամներին ավելի լավ է պաշտպանելու, քան Համիդը:

Քննիչները ստիպված էին տեղի տալ այդ պահանջների առջև: Վերջացնելով իրենց քննությունները՝ նրանք հուլիսի սկզբներին մեկնեցին Կ.Պոլիս և արդյունքները ներկայացրին արդարադատության վարչությանը:

Ստուգումների արդյունքում կառավարությունը սկսեց ավելի կասկածանքով նայել Էրզրումի տարրերին և որոշեց քաղաքի ժանդարմներին փոխարինել ոչ էրզրումցիներով: Այդ նպատակով Պոլսից Տրապիզոնի կուսակալին հրաման իջեցվեց՝ իր ենթակա վիլայեթում մոբիլիզացնել 450 ձիավոր ու հետևակ ժանդարմներ և նրանց ուղարկել Էրզրում: Կուսակալը կատարեց հրամանը, և օգոստոսին պահանջված թվով ժանդարմները մեկնեցին նշանակված տեղը:

[1] «Երկիր», N 16, 18 հոկտեմբերի 1906թ.:
[2] Այդ մասին տե՛ս «Երկիր» (Թիֆլիս), N 17, 20 հոկտեմբերի, N 19, 22 հոկտեմբերի 1906թ.:

1906թ. օգոստոսին Պոլսում, Իզմիրում և Թուրքիայի ուրիշ քաղաքներում տարածվեց թուրքերեն մի կոչ, որի տակ կար «ազատախոհ թուրքերի գորուն կոմիտե» ստորագրությունը: Այդ կոմիտեն կազմակերպվել էր Էրզրումում:

Կոչում ասված էր, որ օսմանցիությունը նվիրական անուն է բոլոր հայրենակիցների համար՝ անկախ նրանց ազգային պատկանելիությունից: «Օսմանցիության դրոշակի տակ 600 տարի ապրեցինք և դեռ պիտի ապրենք»: Թե ինչպե՞ս են ապրել, այդ հարցին կոչը պատասխան չէր տալիս, բայց Համիդի իշխանության երեսուն տարիները համարում էր դժբախտության տարիներ: «Այս անգութ կառավարությունը նույն հայրենիքի եղբայր ցեղերը կոտորել է տալիս նույն ցեղերի միջոցով», իսկ «մենք՝ թուրքերս, ոչ մի վրդովմունք ու ցավ չենք արտահայտում»[1]:

Ի՞նչ անել նման վիճակից ազատվելու համար: «Միակ միջոցն է՝ տապալել բռնակալ կառավարությունը, վերականգնել սահմանադրությունն ու արդարությունը»: Բայց ինչպե՞ս իրականացնել այդ նպատակը, եթե թուրքերն ընդարձակ կայսրության մեջ ցրված լինելով, չեն կարող ընդհանուր շարժում առաջ բերել թշնամի կառավարության դեմ: Կոչի հեղինակները միայն մի ելք էին տեսնում կայսրության բոլոր ազգերի լավագույն որդիների միասնական, համառ պայքարով հասնել երազած կարգերի հաստատմանը: Նրանք գտնում էին, որ թշնամի կառավարության դեմ պայքարող թուրքերի համար օրինակ պետք է ծառայեն Գասթեմունիի և Էրզրումի դեպքերը: Անգութ սուլթան Համիդի գանգի մեջ «Գասթեմունի» և «Էրզրում» բառերը ընկճում են նրան, և նա վախից անհանգստացած է մեծապես: «Իրենց իրավունքների պաշտպանության համար երկու վայրերի բռնած ընթացքը, - նշված էր կոչում, - որևէ քաղաքական նպատակից զուրկ, բայց իրենց շահերի վրա հիմնված հաղթանակ է բռնակալ կառավարության դեմ: Ինչ էլ որ լինի, դեպի նպատակը տանող ամեն մի միջոց մենք օրինավոր և հարգելի ենք համարում: Այս միջոցները, որքան էլ անձնական շահից ծագած լինեն, սակայն, նկատելով, որ շահի գիտակցությունն էլ առաջադիմություն և մարդկային պարտականություն է, մենք սրտանց կցանկանայինք այս առաջադիմությունը, այս գիտակցությունը տեսնել բոլոր նահանգների, գյուղերի և համայնքների մեջ»[2]:

Վերջում ազատախոհ թուրքերը գրում էին. «Այսօր գոչում ենք. կեցցե՛ն գասթեմունցիները, կեցցե՛ն էրզրումցիները: Մենք կուզենայինք այսօր կամ վաղը նույնպես ցնծությամբ աղաղակել՝ կեցցե՛ն գոնիացիները, բաղդադցիները, կեցցե՛ն իզմիրցիները, սելանիկցիները, պուրսացիները, կեցցե՛ն խարբուրդցիները*, դիարբեքիրցիները, կեցցե՛ն պոլսեցիները և, վերջապես, կեցցե՛ն բոլոր օսմանցիները»[3]:

---

[1] «Դրոշակ», N 8 (174), օգոստոս, 1906, էջ 119:
[2] Նույն տեղում:
* Խարբերդցիները:
[3] «Դրոշակ», N 8 (174), օգոստոս, 1906, էջ 122:

Էրզրումի թուրքերը չէին հանդարտվում: 1906թ. աշնանը բողոքների ալիքը նոր ուժով տարածվեց քաղաքով մեկ[1]:

Սեպտեմբերին Պոլսից ցուցում եկավ ձերբակալել Էզրումի ցույցերի 120 կազմակերպիչներին ու ակտիվ գործիչներին և առանց դատավարության աքսորել գանազան տեղեր:

Ոստիկանները ձեռնարկեցին առաջին խմբի ձերբակալումը: Հոկտեմբերի 23-ի գիշերը նրանք մտնում են 10 թուրք երևելիների տները, և փնտրվածներից միայն 5 հոգու գտնելով, նույն գիշերը նրանց ճամփա են հանում Պոլիս:

Ձերբակալվածների մեջ էր նաև ամբողջ Էրզրումի վիլայեթի իսլամ կրոնապետը՝ մուֆթին, որը գիշերն անարգվել էր ոստիկանների կողմից, իսկ ընտանիքի անդամները ենթարկվել էին ծեծի:

Մինչ աքսորյալներին Էրզրումից տանում էին Տրապիզոն՝ Պոլիս ուղարկելու համար, մուֆթուն և նրա ընտանիքին անարգելու լուրը առավոտյան տարածվում է քաղաքով մեկ և կրկնապատկում թուրքերի հուզմունքը: Իմանալով եղելության մասին՝ քաղաքի ընդհատակում գտնվող երիտթուրքական կազմակերպությունը հայտարարում է գործադուլ, միաժամանակ գումարում է գաղտնի ժողով, որտեղ որոշում է ընդունվում բանտարկել նահանգապետին և Պոլիս տարվողներին ամեն գնով ճանապարհից հետ բերել: Նույն օրը քաղաքով մեկ տարածվում է ցույցերի ու գործադուլների ալիքը, ցուցարարները նույնիսկ գրավում են հեռագրատունը:

Քաղաքի առավել ատելի պաշտոնյաները՝ ոստիկանական կոմիսար Ալլայ բեյը, ուրիշ ոստիկաններ և պետական ծառայողներ, զինվորների հսկողությամբ ապաստանում են պահականոցում: Ամբոխը, մի խումբ դաղաչների գլխավորությամբ շարժվում է այնտեղ: Մի փոքր դիմադրությունից հետո զորքը ճամփա է բացում: Ամբոխը խուժում է պահականոց և այնտեղից դուրս բերում ատելի պաշտոնյաներին: Առաջին հերթին մահակի ու կացնի հարվածներով սպանվում է ավագ ոստիկանապետը՝ Ալլայ բեյը: Ամբոխը ուրախության աղաղակներ է բարձրացնում: Երիտթուրք կոմիտեի անդամներից մեկը խուզարկում է սպանվածի գրպանները և հանում մի ցուցակ՝ աքսորի ենթակա 60 թուրքերի անուններով: Գանակոծվում ու արյունլվա են լինում մյուս պաշտոնյաները: Քիչ հետո իմացվում է, որ պահականոցում թաքնված է Ալլայ բեյի որդին՝ ոստիկանական երկրորդ կոմիսարը: Բռնելով, դաղաչները նրան չենքի պատշգամբից նետում են ցած, և վայրի ամբոխը հոշոտում է մարմինը: Սպանվածների բախտին է արժանանում նաև ոստիկաններից մեկը[2]:

Պահականոցում իր գործը վերջացրած համարելով՝ ամբոխը հարձակվում է նահանգապետի տան վրա: Զինվորները հրացանային համազարկերով փակում են ամբոխի ճանապարհը: Հարձակվողները հետ են քաշվում: Տեսնելով

---

[1] Տե՛ս «Արշալույս», N 71, 2 ապրիլի 1906թ.:
[2] Տե՛ս «Վտակ», N 12, 4 դեկտեմբերի 1907թ.:

այդ՝ զինվորները նրանց հետևից գոչում են. «Ինչու՞ եք փախչում. մենք օգում ենք կրակում»: Դա նշանակում էր, որ Նահանգի իշխանությունը զրկվում է նաև զորքի աջակցությունից:

Լսելով զինվորների խոսքերը՝ ամբոխը վերադառնում է ու, չհանդիպելով որևէ դիմադրության, նորից հարձակվում է Նահանգապետի տան վրա: Ռոպեների ընթացքում Նահանգապետին քարշ են տալիս փողոց և, արյունլվա անելուց հետո, ձգում մզկիթի մի անկյուն: Դաղաչները նրան ստիպում են անմիջապես հեռագրել պետք եղած տեղը և ճանապարհից հետ դարձնել աքսորվողներին, ասելով. «Վալի փաշա, եթե աքսորյալները մինչև երեկո չգան, քեզ էլ կոմիսարի պես պիտի սատկացնենք»: Նահանգապետը ստիպված ստորագրում է նոր հրաման, հետ վերցնում ցույցերի կազմակերպիչներին աքսորելու իր նախորդ հրամանը և հեռագրով կարգադրում է աքսորյալներին ճանապարհից վերադարձնել Էրզրում:

Նախքան Նահանգապետի կողմից նոր հրաման տալը, Էրզրումի երիտթուրքական կոմիտեն արդեն զինված ձիավորներ էր ուղարկել աքսորյալների հետևից, որոնք կես ճանապարհին միացել էին լազերին և Աշ-Դալեի մոտերքում համատեղ հարձակվելով զապթիեների վրա՝ նրանց ազատել էին ու բերել քաղաք:

Այդ դեպքից հետո սուլթանը պաշտոնանկ արեց ընդամենը մի քանի ամիս աշխատած Նահանգապետին, ինչպես նաև վիլայեթի զինվորական հրամանատարին և նրանց փոխարեն նշանակեց նորերի:

Ի տարբերություն կայսրության մյուս վայրերի՝ Էրզրումի թուրքերի շրջանում նախկինում էլ դժգոհություններ էին ծագում տեղի կառավարիչներից ազատվելու համար, բողոքի հեռագրեր ու խնդրագրեր էին հղվում Կ.Պոլիս, բայց երբեք չէր պատահել, որ որևէ քաղաքում կամ այլ վայրում թուրքերը գրավեին հեռագրատունը, ծեծ ու ջարդի ենթարկեին կուսակալին, սպանեին կամ գանակոծեին ոստիկանների:

Նման պայմաններում ոչ ոք չգիտեր, թե ուր է հանգելու Էրզրումում ստեղծված լարվածությունը: Այս անգամ դժգոհը հայը, մակեդոնացին կամ արաբը չէին, այլ՝ թուրքը: Դժգոհությունը վաղանցուկ չէր, այլ՝ տևական: Դա կուսակալի կամ որևէ ուրիշ պաշտոնյայի դեմ հակառակություն չէր լոկ, այլ ռեժիմի դեմ ըմբոստացում՝ համառ, բուռն ու կազմակերպված: Իսկ կազմակերպողը հիմնականում քաղաքի երիտթուրքական կոմիտեն էր, որի գիշերային գաղտնի հավաքներն անպակաս էին, ուր խոսում էին, վիճաբանում, որոշումներ ընդունում, ծրագրեր մշակում՝ սկսած պայքարը հաջող վախճանի հասցնելու համար:

Այդ բոլոր իրադարձությունների ժամանակ նույնպես Էրզրումի թուրքերը լավ էին տրամադրված հայերի նկատմամբ, և նրանց միջև անախորժ ոչինչ չեղավ: Քաղաքի իշխանությունները չէին դադարում ճիգեր գործադրել՝ փոխելու շարժման բնույթը և այն ներկայացնելու որպես հայկական: Այդ նպատակով նրանք զանազան դավերով փորձում էին ցանել տարաձայնությունների և պառակտումի սերմեր, թունավորել հետզհետե մտերմական դարձող համերաշխությունը:

Երբ թուրքերը Նահանգապետին ծեծելով տարել էին մզկիթ, զինվորական վարչությունը փորձել էր սադրանքի դիմել: Հրացանաձգության փող հնչեցնելով՝ զինվորական հրամանատարը հայտարարել էր, թե Նահանգապետին ծեծողները և մզկիթ խուժածները հայեր են, որոնք պղծել են մուսուլմանների հավատքի տունը: Թուրք երևելիներն անմիջապես շտապել էին զինվորական պաշտոնատուն և հայտնել, որ մզկիթ մտածները թուրքեր են, որոնց թվում չկա ոչ մի հայ: Հաջողվում է, այդպիսով, թալանի ու ընդհարման առաջն առնել:

Էրզրումի թուրքական շարժումը, քաղաքում տեղի ունեցած դեպքերը ամենուր մահմեդականների շրջանում խոսակցության նյութ էին: Նրանք երկրի ծանր դրությունը միաբերան վերագրում էին անպետք կառավարությանը: Թուրքերից շատերն իրենց ամենօրյա խոսակցության ընթացքում արդարացնում էին հայերին, խոստովանում, որ նրանք կայսրության ոչ թուրք բնակիչներից առաջինն են, որոնք պայքարելով գոյություն ունեցող կարգերի դեմ, փորձում էին բարելավել օսմանյան բոլոր ազգերի, այդ թվում նաև թուրքերի անտանելի կյանքը և այդ տեսակետից ուսուցիչներ են բոլորի համար: Միաժամանակ այդպես մտածող թուրքերը այպանում էին իրենց ապիկարությունը, որ անցած երկու տասնամյակում ցույց էին տվել հայկական շարժման նկատմամբ: Ի դեպ, նրանք դա ասում էին ազատ ու համարձակ, առանց քաշվելու լրտեսներից և ոստիկանությունից[1]:

Կառավարական պաշտոնյաները սարսափահար էին, ոստիկանները չէին համարձակվում փողոց դուրս գալ: Ութ օր քաղաքը կառավարվում էր ժողովրդի ներկայացուցիչների կարգադրություններով, ժողովրդական հսկիչներն ամեն տեղ էին, ոչ մի աղմուկ, ոչ մի անկարգություն: «Մեր քաղաքի պատմության մեջ առասպելական ոսկեդարեան ութօրեակ մըն էր աս...»[2], – Էրզրումից գրում էր Թիֆլիսում հրատարակվող «Վտակ» թերթի թղթակիցը:

Այս բոլոր իրադարձությունների ընթացքում Էրզրումի օտար հյուպատոսները լարված ուշադրությամբ և առանց որևէ միջամտության հետևում էին անցուդարձերին՝ դրանք համարելով զուտ թուրքական ներքին խնդիր: Դա հասկանալի է. այս անգամ կառավարության հակառակորդը ոչ հույնն էր, ոչ բուլղարը, ոչ արաբը և ոչ էլ հայը, որպեսզի սուլթանը տար արյան գետեր հոսեցնելու հրաման: Բողոքողը թուրքն էր: Ուստի կառավարությունը լուելը համարեց խոհեմություն և այդ մարտավարությամբ էլ ձեռնարկեց հուզումներն անաղմուկ մարելու գործը: Այդ ճանապարհին առաջին և ըստ էության միակ քայլը Էրզրումի արդեն վարկաբեկված կուսակալին պաշտոնանկ անելն

[1] Տե՛ս «Կովկասի առավոտ», N 1, 21 սեպտեմբերի 1907թ.:
[2] «Վտակ», N 12, 4 դեկտեմբերի 1907թ.:

էր[1]: Սուլթանը նոր կուսակալ նշանակեց Նուրի բեյին: Ժողովուրդը այս նոր կուսակալին նույնպես ընդունեց սպասողական վիճակում: Բնակչության մեծ մասը համոզված էր, որ իշխանությունները վաղ թե ուշ դիմելու են վրեժխնդրական գործողությունների, ուստի խուսափում էր իր շարքերը և պատրաստվում դիմագրավելու գալիք դեպքերին: «Կամ բոլորս կկոտորվենք, կամ պահանջված տուրքերը չենք տա», - ասում էին Թուրքերը:

Նուրի բեյն իր գործունեությունն սկսեց խաղաղության հորդորներով: Պոլսից հրահանգված էր կարգը վերահաստատել առանց նոր բարդություններ ստեղծելու և եթե հարկ լինի, գնալ պահանջվող զիջումների: Էրզրումը դեռ այդպիսի բան չէր տեսել. ամենալայն լիազորություններով օժտված կուսակալը քիչ թե շատ կարևոր որոշում չէր ընդունում առանց նախապես խորհրդակցելու երիտթուրքերի տեղի կոմիտեի անդամների հետ:

Էրզրումի Թուրքերի հուզումները շարունակվեցին 1907 թվականին[2]: Դրան նպաստեցին մի շարք արտաքին և ներքին հանգամանքներ: Ռուսաստանի և Պարսկաստանի հեղափոխական շարժումներից բացի, Թուրքերի մտքի վրա սկսել էր մեծ ազդեցություն գործել երիտթուրքերի հակասուլթանական պրոպագանդան: Զուտ տնտեսական շարժառիթներով սկված Էրզրումի Թուրքերի հուզումները գարնանը ստացան զուտ քաղաքական կերպարանք: Մարտի 5-22-ը քաղաքում մասսայական ցույցեր ու միտինգներ էին, որ ղեկավարում էր «Ջան վերիր*» կազմակերպությունը[3]: Ժողովուրդն առաջին անգամ սկսել էր խոսել «Կանունը էսասիի» (սահմանադրության), «Միլլիեթ մեջլիսի» (ազգային ժողով) մասին:

Սահմանադրության և հիմնական ռեֆորմների մասին լուրերը գալիս էին Բոսֆորի ափերից: Ռուսաստանի և Պարսկաստանի սահմանադրությունները, որքան էլ անբավարար էին, այնուամենայնիվ, սկսել էին ազդել մտավորական Թուրքերի մտքի վրա, որոնք, թեև թաքուն, բայց շատ եռանդուն կերպով խոսում էին մեծ փոփոխությունների անհրաժեշտության մասին: Նրանցից ոմանք համոզված էին, որ զաղտնի ու ցածր ձայնով չչնջյունը վաղը կարող է դառնալ լուրջ հուզումների սկիզբ՝ անդառնալի դարձնելով պետական վերա-

[1] Տե՛ս «Կովկասի առավոտ», N 14, 5 հոկտեմբերի 1907թ.:

[2] Տե՛ս А. Ф. Миллер, Краткая история Турции, էջ 120:

* Բառացի՝ «ինքն իրեն զոհող»: «Ջան վերիր» ընկերությունը փաստորեն դարձել էր Փոքր Ասիայի Թուրքերի հակակառավարական ելույթների ղեկավար: Դա Թուրք, գլխավորապես առևտրական բուրժուազիայի կազմակերպություն էր, որի կազմում էին նաև հոգևորականներ, ինչպես և զգալի թվով աշխատավորներ: Ընկերությանը հարում էին կրտսեր սպաներ և զինվորներ: «Ջան վերիրը» ամենից առաջ իր առջև խնդիր էր դրել կազմակերպել պայքարը իշխանությունների չարաշահումների դեմ: Ավելին, ընկերությունը Արևելյան Անատոլիայի մի շարք քաղաքներում փաստորեն իր ձեռքն էր վերցրել իշխանությունը և Թուրք բնակչությանը արգելում էր կառավարությանը տալ երկու- երեք տեսակի հարկից ավելի:

[3] Տե՛ս Ю. А. Петросян, Младотурецкое движение (вторая половина XIX-начало XXв.), էջ 221:

նորոգության հարցը:

Բայց այդ հեռանկարը շատերին հույս և ուրախություն չէր ներշնչում: Նրանք հարց էին տալիս՝ իսկ ո՞վ պետք է ղեկավար դեր կատարի նոր կարգերի հաստատման ժամանակ, արդյո՞ք մահմեդական կրոնի սկզբունքներով առաջնորդվող օսմանյան պետերը ի վիճակի կլինեն ընտելանալ եվրոպական քաղաքական կյանքի սկզբունքներին այնքան, որ ժողովրդին թույլ տան ապրել իր ցանկության համաձայն: Իսկ օսմանյան կայսրությունից դուրս ոչ ոք չգիտեր, թե վերջին երեսուն տարում քանի աստիճան է զարգացել ու հասունացել Թուրք մուսուլման մտավորականությունը, և որքան մեծ է նրա կուլտուրական պահանջների ծավալը:

Վերադառնալով Էրզրում, նշենք, որ խորամանկ կուսակալը ուշադրությամբ հետևում էր բոլոր անցուդարձերին, լրտեսների միջոցով ստույգ տեղեկություններ էր հավաքում և համարձակվում էր դրանք, առանց գունազարդելու, հաղորդել Բ. Դռանը՝ միաժամանակ պահանջելով չեղյալ հայտարարել տուրքերի գանձման հրամանը:

Ելդըզը, որ մինչ այդ բնավ չգիտեր կամ ճշգրիտ քիչ բան գիտեր Էրզրումի Թուրքերի շարժման մասին, այժմ լրիվ պատկերացում էր կազմել դրա քաղաքական վտանգավորության վերաբերյալ: Այս անգամ էլ կառավարությունը հանդես բերեց գերագույն զգուշավորություն և հրաժարվեց ընդունել ուղղակի ճակատային հարձակման անցնելու մասին հնչող առաջարկները: Պետք էր համբերող, խաղաղասեր ու ժողովրդասեր ձևանալ: Սուլթանը վախ ուներ, որ հեղափոխական տրամադրությունները Էրզրումից կարող են անցնել կայսրության մյուս նահանգները: Տագնապ էր առաջացնում նաև այն, որ զինվորականությունը հաճախ կանգնում էր պայքարող ժողովրդի կողքին: Համիդին հատկապես սարսափի էր մատնել Թուրքական բանակի և ռազմական նավատորմի 28 սպաների նամակը մահվան ենթարկված ռուս հեղափոխական, լեյտենանտ Շմիդտի քրոջը, ուր նրանք երդվում էին մինչև վերջ, «մինչև արյան վերջին կաթիլը պայքարել հանուն սրբազան ազատության: ... Մենք երդվում ենք նաև, որ բոլոր ուժերով ու միջոցներով ձգտելու ենք Թուրք ժողովրդին ծանոթացնել Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձություններին, որպեսզի ընդհանուր ջանքերով նվաճենք մարդավայել ապրելու իրավունքը»[1]:

Ելդըզը կարող էր հեռու չգնալ, կային ավելի թարմ օրինակներ. զորքը Թուրք բնակչության հարձակումներից չպաշտպանեց ոչ Էրզրումի կուսակալ Աթա բեյին, ոչ էլ պահականոցում ապաստանած ոստիկանապետին:

Վերջապես կուսակալ Նուրի բեյին հաջողվեց Կ.Պոլսից հրաման ստանալ բանտարկված ըմբոստ Թուրքերին ազատ արձակելու, անձնական նոր տուրքերը չեղյալ հայտարարելու մասին: Թուրքերի համար նախատեսված տուրքերը չեղյալ հայտարարվեցին 1907-ի մարտին, այն էլ ոչ միայն Էրզրումի

[1] Տե՛ս А. Д. Новичев, Турция. Краткая история, изд. "Наука", Москва, 1965, էջ 116:

նահանգում, այլև կայսրության մյուս բոլոր նահանգներում: Զարմանալի է, բայց փաստ, որ մի քաղաքի թուրքերի ըմբոստացումով շահել էին ամբողջ կայսրության թուրք բնակիչները:

Նուրի բեյը հույս ուներ, որ իր նահանգի թուրքերն այլևս նոր պահանջներ չեն դնելու և հրաժարվելու են հեղափոխական-քաղաքական շարժումից: Բայց նա սխալվում էր: Երիտթուրքերի հակասուլթանական պրոպագանդան տևականորեն ըմբոստ վիճակում էր պահում Էրզրումի թուրքերին, որոնք ամեն րոպե կարող էին նոր անակնկալներ մատուցել:

Կ.Պոլսի կառավարությունը որոշեց Էրզրումի թուրքերի շարժումը քայքայել ներսից, հասնել այն բանին, որ ժողովրդի աչքում վարկաբեկվեն նրա ղեկավարները: Եվ դա լիովին հաջողվեց նրան:

Շարժման շարքերը, ինչպես ասվեց, միատարր չէին: Պայքարի մեջ էին ընդգրկվել ոչ միայն աշխատավոր թուրքեր, այլև վաճառականներ, վաշխառուներ, նույնիսկ կալվածատերեր: Խորամանկ պաշտոնյաներն իրենց որոգայթը լարեցին հենց շարժման այս թույլ կողմի վրա:

1907թ. հունիս և հուլիս ամիսներին՝ քաղաքի մսագործների և մսացու կենդանի ծախողների (ճամբազ) միջև ծանր վեճեր ծագեցին. կառավարությունը սկսեց հրահրել, և քիչ մնաց, որ մեծ ընդհարում տեղի ունենար ու արյուն թափվեր, մանավանդ որ մսագործների զգալի մասը հայեր էին: Սակայն բանը դրան չհասավ, որովհետև հրապարակ եկավ մի ուրիշ բարդ կնճիռ: Դա հացի խնդիրն էր, որը մոռացության տվեց մսի խնդիրը:

1907թ. հացահատիկի բերքը խիստ պակաս էր: Արդեն օգոստոսի կեսերից ցորենի գինը օրավուր սկսեց բարձրանալ: Ռուժանի միտքը հուզվել էր, և սովամահության երկյուղից հասարակության տականքը ընկել էր սարսափի մեջ: Ցորենի շահադետներից (սպեկուլյանտներից) և գյուղերի վարձակալներից (մյուլթեզիմ) ոմանք ըմբոստների ղեկավարների թվում էին: Բոլորն միանգամայն հարմար էր ամբոխին գրգռելու իրենց մրցակիցների դեմ, միաժամանակ՝ ժողովրդասերի համբավ վաստակելու: Պաշտոնյաների թելադրանքով սրանք թուրք ժողովրդի մեջ տարածեցին 16 շահադետների անունները, որոնցից երեքը հայեր էին, իսկ երկու հոգու հայտարարեցին երիտթուրքական կոմիտեի անդամներ: Ամբոխը դիմում էր Նուրի բեյին՝ պահանջելով իջեցնել հացի գինը, իսկ սա ամեն անգամ իր վրայից նետում էր խնդիրը, միաժամանակ խորհուրդ տալիս սեփական ձեռքով հաշվեհարդար տեսնել շահադետների հետ, չմոռանալով նաև ասել, որ նրանց մեջ ամենաանխիղճ հարստահարողները հայերն են: Ջրերը պղտորվում էին և, օգուտ քաղելով ստեղծված վիճակից, կարելի էր առատ որս անել:

Հիմնականում բեռանակիրներից և աղքատ դասի անչափահասներից բաղկացած թուրք ամբոխը օգոստոսի 26-ին հարձակում է գործում ցորենի պահեստների ու խանութների վրա, թալանում ամեն ինչ: Դրանից հետո, բեռանակիրներից երկու-երեք հոգի, վաճառողներից մեկի տիրոջ՝ Գ. Օհանյանի վզին

պարան կապելով՝ քարշ են տալիս փողոց: Այդտեղ էր հայտնվել այդ ամենը դիտող ոստիկանապետը, նրա օգնականը, թուրք երևելիներ: Ոստիկանապետի «խորհրդով» բեռնակիրները սպանում են Օհանյանին, ապա անարգի են թարկելուց հետո դիակը պտտեցնում փողոցներով և, ի վերջո, հարայ-հրոցով անցնելով պարեկատան մոտով, նետում աղբանոց: Ամբողջ 10 ժամ տևած խռովության ընթացքում իշխանությունների կողմից չի լինում որևէ միջամտություն:

«Հեղափոխությունն» ընկել էր լարված որոգայթի մեջ. «հեղափոխական» ամբոխի ձեռքին ոճրագործի արյուն էր:

Քանի որ ոճրագործության պատճառը եղել էր հացի թանկացումը, ուստի խորամանկ կուսակալը, իբր, խնդիրը պարզելու համար ստեղծում է հանձնախումբ, որի մեջ մտնում են ոխերիմ հավատացյալներ: Հանձնաժողովի կարգադրությամբ հայ կալվածատերերի ու վաճառողների ամբարները լիովին դատարկվում են, բռնագրավվում են ցորենն ու ալյուրը և լցվում թուրք մեծամեծների պահեստները:

Պարզ էր, թե ուր էր հանգելու որոգայթի պարանը. «Հեղափոխությունը», որի լոզունգներից մեկը հայերի հետ համերաշխությունն էր, արդեն պառակտված էր:

1907թ. սեպտեմբերին կուսակալ Նուրի բեյին փոխարինեց մի ալբան ծերուկ՝ Աբդուլ Վեհիբ փաշան:

Խորամանկ նոր կուսակալը տարածեց այն կեղծ լուրը, թե մեծ տերությունների Պոլսո դեսպանները թուրք կառավարությունից պահանջել են խստորեն պատժել հայ վաճառական Գ. Օհանյանի սպանողներին, հակառակ դեպքում, իբր, տերությունները պատրաստ են հավաքել իրենց զորքերը, գրավել օսմանյան ողջ կայսրությունը և այն բաժանել իրենց միջև:

Նախ ձերբակալեցին «շարժման մասնակից» այն բեռնակիրներին, որոնք սպանել էին Օհանյանին, ապա՝ շարժման ղեկավարներին: Ձերբակալվածների թիվը հասավ 200-ի[1]:

Այսպես անփառունակ վիժեց Էրզրումի «Հեղափոխական» շարժումը:

Գասթեմունիի և Էրզրումի թուրքերի շարժմանը արձագանքեցին Տրապիզոնի վիլայեթի թուրքերը:

1906թ. օգոստոսի սկզբներին Տրապիզոնի նահանգում կառավարությունը մոբիլիզացրեց 1400 թուրք երիտասարդի, նրանց առավ զենքի տակ և ուղարկեց Պոլիս: Հասնելով այնտեղ՝ զինվորները տեղեկանում են, որ իրենց ուղարկում են Եմեն՝ միանալու այնտեղի թուրքական ուժերին[2]:

Ապստամբ Եմենում շարունակվում են արյունահեղ կռիվները, թուրքական զորքը նորանոր ծանր պարտություններ էր կրում, և այդ մասին գիտեին բոլոր

[1] Տե՛ս «Վտակ», N 15, 7 դեկտեմբերի 1907թ.:
[2] Տե՛ս «Կովկասի առավոտ», N 10, 2 հոկտեմբերի 1907թ.:

թուրքերը: Տրապիզոնցի զինվորները Պոլսում խռովություն են բարձրացնում և պահանջում իրենց հետ վերադարձնել: Երբ մերժում են ստանում, շարժվում են դեպի Նավահանգիստ, որտեղ դեռ կանգնած էր այն նավը, որ իրենց բերել էր մայրաքաղաք: Մոնելով նավ՝ նրանք նավապետին ստիպում են ուղղություն վերցնել դեպի Տրապիզոն: Իմանալով այդ մասին՝ զայրացած սուլթանը հրամայում է թնդանոթահար անել նավը, բայց այն արդեն դուրս էր եկել բաց ծով:

Նավը հասնում է Տրապիզոն, որտեղ ափ իջած խռովարար զինվորներին շրջապատում է զորքը և նրանց առաջնորդում Էրզրում, որտեղից, այս անգամ արդեն ցամաքով, ուղարկում են Եմեն:

Չնայած ոստիկանական հետապնդումներին, Տրապիզոնի ընդհատակում գործող երիտթուրքական կազմակերպությունը բազմաթիվ հակակառավարական ազդագրեր էր տպագրում, որոնք տարածվում էին ոչ միայն քաղաքում, այլև վիլայեթի գավառներում: Այդ թռուցիկներից մեկը, որը 1906թ. հոկտեմբերի 15-ին ցրվել էր թուրքերի և հայերի թաղերում, հայերին հրավեր էր անում ուժ տալ իսլամ հայրենակիցների ջանքերին և ակտիվ մասնակից լինել նրանց շարժմանը: Կոչը կարդալու համար ձերբակալվեց մի քանի մարդ: Ոստիկանությունն իր լրտեսներով ջանք էր թափում թելի ծայրը գտնելու համար և փորձում էր տրապիզոնցի թուրքերի շարժման մեջ նույնպես որոնել հայկական ազդեցություն[1]:

Տրապիզոն քաղաքի հակակառավարական ելույթներն իրենց բարձրակետին հասան 1907թ. գարնանը:

Զինվորական մյուլազիմ (հիմնապետ), չերքեզ Հալի էֆենդին, որը գտնվում էր երիտթուրքական պրոպագանդայի ազդեցության տակ, 1907թ. մարտի 2-ին ատրճանակի կրակոցներով սպանել էր Տրապիզոնի զինվորական ընդհանուր հրամանատար Ֆերիդ Համդի փաշային և դրա համար կախաղան էր բարձրացվել: Այդ դեպքից հետո վիլայեթի կուսակալ Ռեշատ բեյը վախից մի քանի շաբաթ տնից դուրս չէր գալիս: Իմանալով այդ մասին՝ սուլթանը ավելի բարձր աշխատավարձով նրան նշանակում է Ադրիանուպոլսի նահանգի վալի, իսկ նրան փոխարինում է Զեյվեր բեյը:

Այդ օրերին զգալի իրարանցում էր սկսվել Կիրասունի թուրքերի շրջանում, լուրջ խլրտումներ եղան Սինոպում, Սամսունում, Սվազում, Գոնիայում և Ամասիայում: Թուրքերի տրամադրությունը բոլորովին խաղաղ չէր նաև Իզմիրում[2]:

Կառավարությունն արդեն երկյուղ էր կրում նաև Պոլսի թուրքերից, ուստի պատահական չէ, որ «Հակակառավարական տրամադրություններ դրսևորելու» մեղադրանքով 1906թ. հուլիսի կեսերին սուլթանի հրամանով պետական կարևոր պոստեր զբաղեցնող 6 փաշա մայրաքաղաքից Սամսունի վրայով

[1] Տե՛ս «Կովկասի առավոտ», N 1, 21 սեպտեմբերի 1907թ.:
[2] Տե՛ս Н. М. Лавров, Турция и Иран в 1870-1918 годах, էջ 13:

աքսորվեցին Բաղդադ:

Այդ պառճառով երկրի ամեն կողմում, ամեն հեռավոր անկյունում կարելի էր հանդիպել իսլամ աքսորյալի: Նավերը միշտ Պոլսից արևելյան նահանգներ էին փոխադրում պաշտոնյաների, սպաների, առանձին անհատների, որոնք քշվում էին դեպի երկրի ներսի գավառները:

Համիդյան իշխանությունը, հակառակ իր զգուշավորության, խոշոր սխալ էր գործում կասկածելի մուսուլմաններին աքսորելով գավառները, ուր նրանք մի տեսակ պրոպագանդիստներ էին դառնում ի վնաս կառավարության:

Թուրքերի խռովությունները Էրզրումից ու Տրապիզոնից անցան Վանի և Բիթլիսի վիլայեթները, բայց ավելի կատաղի գրգռումով:

1906թ. ապրիլին Մուշից «Դրոշակին» գրում էին.

«Կարնո մեջ տեղի ունեցած ժողովրդային ցույցերը հոս ալ ազդու տպավորություն թողին: Տարաբախտաբար մանրամասնություններ կը պակսին. կառավարությունը միջոցներ ձեռք առած է, որ լուրը չտարածուի»[1]:

Այդ ձեռնարկած միջոցներն իրենց արդյունքը տվեցին, և դա արտահայտվեց նրանում, որ ամբողջ 1906թ. թուրքերի շրջանում խմորված դժգոհությունները չփոխարկվեցին խռովությունների, և միայն 1907թ. գարնանից սկսած՝ դրանք վերաճեցին որոշ հակակառավարական գործողությունների:

Վանի և Բիթլիսի հայկական վիլայեթներում ավերներ գործող սովը 1907թ. ապրիլից իր մեջ առավ նաև թուրքերին, որոնք սկսեցին բացահայտորեն ընդվզել իշխանությունների դեմ: Սոված թուրքերը այլևս չէին դիմանում տուրքերի շարունակ մեծացող բեռան ծանրությանը և ստիպված դիմում էին զայրալից ցույցերի, պաշտոնյաների ծեծի ու սպանությունների:

Շուտով թուրք-հեղափոխականների պրոկլամացիաներ երևացին Վասպուրականի կենտրոն Վանում: Պատերին փակցված կոչերը ազդարարում էին, որ բոլոր չարիքների սկզբնապատճառը սուլթանական կառավարումն է, ուստի անհրաժեշտ է ձեռք ձեռքի տված կռվել ռեժիմի դեմ[2]:

Վանում թուրքերի հուզումներին միացան հայերը: Քաղաքում և վիլայեթներում կարծես բացվում էր հայ-թուրք գործակցության հուսադրող հեռանկար: Արամը, Իշխանը, Սարգիսը, Կոմսը այստեղ ծրագրված, հետևողական աշխատանք էին տանում թուրք ընդդիմադիրների հետ մերձենալու և համատեղ գործելու համար: Հանդիպումների և բանակցությունների արդյունքում ստեղծվել էր հայ-թուրք մի գաղտնի մարմին, որն անցել էր կոնկրետ գործողությունների: Այդ մարմնի խնդիրներից մեկն առավել ուսելի պաշտոնյաների ահաբեկումն էր:

Թուրքերի մեջ ծագած սոցիալական շարժումն իր ազդեցությունն ունեցավ նաև քրդերի վրա՝ ոչ միայն հասարակ խաշնարածների, այլև՝ աղաների: Աղա-

[1] «Դրոշակ», N 7(173), հուլիս, 1906, էջ 103:
[2] «Ալիք» (Թիֆլիս), N 60, 9 հուլիսի 1906թ.:

ներից ոմանք սկսեցին քայլեր անել հարաբերություններ հաստատելու հայ հեղափոխականների հետ: Նրանք նույնպես գանգատվում էին կառավարության դեմ և վստահություն հայտնում հայերին, ասելով. «Ձեր երկարամյա պայքարը վերջ ի վերջո մեզ համոզեց, որ դուք մեր դեմ ոչինչ չունեք և կռվում եք ընդհանուր բարեկեցության համար»: Նրանց ասելով՝ իրենց մտքերի հեղաշրջման գործում մեծ դեր է կատարում նաև արաբական ապստամբությունը: Հասարակ քրդերի դժգոհությունն ավելի էր խորանում, և նրանց հետ համատեղ գործելու հեռանկարը հայերի համար թվում էր իրագործելի[1]:

Բայց այդպես մտածող քրդերի թիվը չնչին էր: Առաջվա պես նրանց ճնշող մեծամասնությունը հեռու էր հայերի հետ համագործակցելու մտքից, ինչպես և թշնամաբար էր տրամադրված արաբական ապստամբությունների նկատմամբ:

Արաբների ապստամբական ելույթները ճնշելու համար թուրքական կառավարությունն առաջվա պես մեծապես օգտագործում էր ոչ միայն համիդիե գնդերը, այլև քուրդ ցեղապետերի ռազմական ուժը: Այսպես, 1906թ. գարնանը Վանի վիլայեթի Ալշավազի Քյոռ Հյուսեին փաշան մեկնեց զսպելու արաբներին: Բազմաթիվ վայրագություններ կատարելուց հետո նա վերադարձավ մեծ պատիվներով և վերսկսեց հայերի դեմ իր ճնշումներն ու ավազակությունները[2]:

Վանի վիլայեթի թուրքերի հուզումներին հետևեցին Դիարբեքիրի վիլայեթի թուրքերը:

1907թ. օգոստոսին վիլայեթի կենտրոնում Դիարբեքիր քաղաքում մոտ 80 թուրք բանվոր, որոնք աշխատում էին թուրք մեծահարուստի պատկանող մանածագործական ֆաբրիկայում, միմյանց հետ պայմանավորվելով, չգնացին աշխատանքի: Դա առաջին գործադուլն էր, որ ընդհանրապես տեսել էր Դիարբեքիրը: Շուտով աշխատանքը դադարեցրին և ինքնաբերաբար գործադուլին միացան քաղաքի կտորեղենի ներկման մի քանի արհեստանոցների (բոյախչիխանա) բանվորները և տերերից պահանջեցին բարվոքել իրենց ծանր տնտեսական վիճակը:

Սակայն բանվորների մոտ չկար կազմակերպվածություն: Քաղաքում չկար մի ուժ, որը ստանձներ գործադուլային պայքարի ղեկավարումը: Պատահական չէ, որ երբ մի արհեստանոցում գործադուլ էր սկսվում, մյուսում վերսկսվում էր աշխատանքը: Բացակայում էր համատեղ գործելու կամքը և վճռականությունը:

Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ «Վտակ» թերթը գրում էր, որ չնայած քաղաքի աշխատավորների «մաքուր մասը հակակառավարական զգացումներ կը ցուցանե իր մեջ և ըմբոստութեան նշաններ ցոյց տուավ», բայց հազիվ թե որևէ արդյունքի հասնի, քանզի նրան «փորձառությունը կը պակասի»[1]:

Նույն իրողությունը հաստատելով՝ դաշնակցության «Արօր» թերթը գրում էր, թե որքան էլ թույլ է Փոքր Ասիայի ամենից հետամնաց մի վայրում Դիարբեքիրում, ծագած գործադուլը, որքան էլ հեղհեղուկ է բանվորների միասնությունը, բայց և այնպես երևույթը փայլուն ապացույց է, որ շահագործողների ու աշխատավորների հակամարտությունը բռնության կլասիկ երկրում Թուրքիայում, արդեն բողբոջներ են արձակել և հետագա աճի նշաններ են ցույց տալիս[2]:

Կայսրության մի քանի վայրերում թուրքերի ծավալած շարժման ընդերքում 1907թ. ամռանը ծնունդ էր առել (հավանաբար՝ Կ.Պոլսում) «Թուրք հեղափոխականների դաշնություն» անունով կուսակցությունը, որը սկսել էր քարոզել համերաշխություն ու բարեկամություն հայերի և թուրքերի միջև:

Իր ընդունած փաստաթղթերից մեկում կուսակցությունն արդարացնելով թուրքահայության շուրջ 20-ամյա ազատագրական շարժումը՝ միաժամանակ մերժում էր այդ շարժման մեջ հայ ազգային կուսակցությունների դրական դերը՝ նրանց պայքարը դիտելով որպես բացառապես օսմանյան կայսրության քայքայմանը հետամուտ գործունեություն:

Փաստաթղթի ոգով «Թուրք հեղափոխականների դաշնություն» կուսակցությունը հրատարակեց կայսրության ոչ մուսուլմաններին ուղղված մի կոչ, ուր ասված էր. «Ով ոչ մուսուլմաններ, մենք ձեզ հետ ենք, մենք ձեզ հայրենակից ենք ճանաչում: Անկարելի է ուրանալ սուլթան Համիդի՝ ոչ միայն ձեզ, այլև մեզ հասցրած անթիվ դառնությունները: Ահա թե ինչու մեր պարտքն է գործել համատեղ: ... Եթե դուք ազատություն, հավասարություն, արդարություն եք ուզում, աշխատեցեք մեզ հետ, որովհետև եթե մենք բոլորի համար հավասար իրավունք, առաջադիմություն ու խաղաղություն ենք կամենում, դրանք միայն իսլամների համար չեն, այլ բոլոր օսմանցիների, բոլոր քաղաքացիների համար:

... Ով հայրենակիցներ, ինչի՞ եք սպասում, ումի՞ց եք երկյուղում. ազգի դավաճան և կրոնի թշնամի Համիդի՞ց: Ով է նա – վախկոտ ու երկչոտ մի էակ: Մեր հայրենիքի վերքն է նա, մեր պատվի մրուրը, մեր թշնամին:

Մեծ մարգարեի բերանով Աստծո հաղորդած հրամանի համաձայն, կրոնի թշնամի, իսլամներին թշվառության մատնող, նրանց տգիտության մատնող մի նենգ իշխանավորի գլուխը ջախջախելը մեր խնդիրն է: Այդպես է պահանջում մեր շարիաթի օրենքը, և դա ամեն մի հավատացյալի պարտավորությունն է»[3]:

Այս բացառիկ երևույթի առթիվ դաշնակցության «Խարիսխ» թերթը գրում էր. «Ուրախալի է: Բռնության արյունոտ մթնոլորտում լսվող այդ կոչը

[1] **«Դրոշակ»** N 12 (178), դեկտեմբեր, 1906, էջ 181:
[2] Նույն տեղում, N 11 (177), նոյեմբեր, 1906, էջ 166:

[1] **«Վտակ»**, N 50, 5 մարտի 1908թ.:
[2] Տե՛ս **«Արօր»**, N 2, 4 սեպտեմբերի 1907թ.:
[3] **«Խարիսխ»**, N 21, 27 հուլիսի 1907թ.:

և՛ ուրախալի է, և՛ միխթարական, իբրև մի նոր ապացույց Թուրք երիտասարդության արթնացման, իբրև մի նոր նշան, որ հեղափոխական սերմերը արդեն մահմեդական խավերում էլ գցել են իրենց սաղմերը և կամաց-կամաց արձակում են ծիլեր»:

Ռուսական ցարը և նրա կառավարությունը չեղ աչքով ու անհանգստությամբ էին նայում Թուրքիայի Թուրք բնակչության հուզումներին:

Կ.Պոլսում լույս տեսնող հնչակյան «Կոհակ» թերթը տարիներ անց գրում էր.

«Ռուսիան սկսավ կասկածոտ աչքով նայիլ և ամեն կարելի միջոցներով հետապնդել այդ շարժումները: Ռուսական հյուպատոսները Թուրքիոյ մեջ իրենց մասնավոր զեկուցումներով շարունակ տեղյակ կը պահեին Կ.Պոլսոյ ռուսական դեսպանատունը զանազան վայրերու մեջ տեղի ունեցած քաղաքական բնույթ կրող բոլոր խլրտումներուն և շարժումներուն մասին, թարգմանելով նոյն իսկ Ժեոն-Թուրք կազմակերպութեան զանազան կոմիտեներուն հրատարակած թռուցիկ շրջաբերականները»[1]:

Տառապող հայ ժողովուրդը մեծ հույսերով էր դիտում Թուրքերի ըմբոստացումը՝ դրանում որոնելով ահավոր վիճակից դուրս գալու ելքը:

Բայց այստեղ էլ նրան վիճակված էր հուսախաբություն: Նույնիսկ հայերի հետ երկխոսության պահերին Թուրքերի մեջ շարունակում էր դատապարտելի անտարբերությունը հայի ողբերգական դրության հանդեպ:

Գնալով պարզ էր դառնում, որ թուրքական շարժման ծանրությունն ընկնում է ոչ թե Թուրքերի վրա, այլ հայերի գլխին:

Օրինակ, երբ Էրզրումի Թուրքերը մերժեցին տալ անհատական հարկը (չախսի վերկիսին), իշխանությունները նրանց ըմբոստացման դեմ չձեռնարկեցին միջոցներ, բայց դրա փոխարեն շրջակա հայ գյուղերից հավաքվող տուրքերը ավելացրին 60 տոկոսով: Հայերից հարկը հավաքվում էր Թուրք զինվորների ստոր ու անբարոյական բնազդների ուժով, զենքը ուղղելով հայ տղամարդկանց ու կանանց դեմ, մի բան, որ բացառված էր Թուրք տղամարդկանց ու կանանց դեպքում:

Համիդը, մեղմ վերաբերմունք ցույց տալով Թուրքական շարժման հանդեպ, միաժամանակ ամենափոքր առիթով քանդում էր հայ գյուղերը, արյան մեջ խեղդում դիմադրության ամեն փորձ այնտեղ, որտեղ հայը չուներ ինքնապաշտպանության որևէ միջոց: Հետևապես՝ Թուրքերի և քրդերի հուզումները ոչ մի նմանություն չունեին իրավ հեղափոխության հետ:

Այն ժամանակ, երբ հայերը, մակեդոնացիները, արաբները, հույները, դրուզները բարձրաձայն պահանջում էին իրենց կյանքի բարելավում, բուն Թուրք տարրը միայն աննշան պահանջներ էր առաջադրում կառավարությանը:

Թուրք տարրի խլրտումները բացառապես տնտեսական բնույթ ունեին:

[1] «Կոհակ», N 41, 30 (12) հոկտեմբերի 1911թ.:

Թեև Թուրքը նույնպես ճնշված էր ու թշվառ, ինչպես և սուլթանի մյուս հպատակները, բայց նրա այն գիտակցությունը, որ ինքը կայսրության մեջ ամենընտրյալն է և ամենաարտոնյալը, փոխում էր ամեն ինչ: Նա գնահատում էր իր արտոնությունների արժեքը, ուստի շատ շուտ սիրաշահվում էր ազգակից մեծավորներից և հետևությամբ գործիք դառնում օսմանյան ազգասիրության խարդավանքներին ու դավերին:

Կայսրության այլացեղ և այլակրոն հպատակների նկատմամբ անգամ ամենահետին Թուրքի գերակայության գիտակցությունը և այլազան առանձնաշնորհներով օժտված լինելը ողբերգություն էր ոչ միայն այլազգիների, այլև հենց իր՝ Թուրքի համար: Նա քաջ գիտեր, որ ինքը բարոյական ոչ մի իրավունք չունի որևէ հանձնառություն ունենալ՝ պետական գործեր առաջ տանելու համար: Նա քաջ գիտակցում էր նաև, որ իր արտոնյալ վիճակը կարող է պահպանվել միայն զենքի գործադրմամբ:

Անսահման ներողամտություն Թուրքերի և անպատմելի հալածանք հայերի նկատմամբ – սա էր Ելդզի վերաբերմունքը:

Նույնիսկ Թուրքական «հեղափոխական» շարժման օրերին երկու ժողովուրդների միջև եղած վիհը շարունակվում էր լայնանալ: Ամենալուսավոր Թուրքի համար անգամ հայի տանջանքն առաջվա պես ոչինչ էր:

Թուրքերի հոգեբանությանը քաջածանոթ Արիադնա Տիրկովան այսպես էր գրել. «Ասում են, թե Թուրքերը մեղմ ու բարեսիրտ ժողովուրդ են: Բայց [այլազգիների նկատմամբ] երկարատև, դաժան ու անամոթ տիրակալությունը այդ ժողովրդի հոգում կուտակել է դաժանություն և բթություն»[1]:

Էրզրումից «Դրոշակին» գրում էին. «Այսպես է Թուրք հասարակությունը: Իրենց համար եղած ամենափոքր դեպքը մեծ դժգոհության պատճառ կընայ ըլլայ, բայց իրենց աչքին առաջ ամեն օր հարստահարված հային համար ոչ մեկ ցույց, ոչ մեկ բողոք:

Մինչև ե՞րբ այսպես գեավուր հայը ատելության առարկայ պիտի ըլլայ: Ցեղափոխությունն այսպես չըլլար»[2]:

Կյանքը ցույց տվեց, որ Թուրք ժողովուրդը դեռ երկար ճանապարհ պիտի անցներ, որպեսզի արթնանար նրա գիտակցությունը, և նա ըմբռներ իր ցավերի իսկական պատճառները:

[1] **Արիադնա Տիրկովա**, Старая Турция и младотурки. Год в Константинополе, Петербург, 1916, стр. 12.

[2] «Դրոշակ», N 3 (181), մարտ, 1907, էջ 39:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԱԽԱԳԻԾ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍԱՀԱՑ ԽՆԴԻՐ

Հ.Յ.Դաշնակցութեան Գ-րդ Ընդհանուր Ժողովը՝ կայացած 1904թ. սկզբին, ընդունելով մեր կազմակերպութեան մասնակցութեան անհրաժեշտութիւնը կովկասեան յեղափոխական կռիւի մէջ, որոշեց այդ վարել առայժմ ինքնապաշտպանութեան հողի վրայ:

Ներկայ 1905 թ. գումարած Հ.Յ.Դ. Խորհուրդը, նկատելով՝

1) Որ վերջին Ընդհանուր Ժողովից յետոյ Ռուսաստանի եւ մասնաւորապէս Կովկասի յեղափոխական շարժումները ստացել են անսպասելի լայն ծաւալ,

2) Որ բռնապետութիւնը արտաքին թշնամու եւ յեղափոխական ու ընդդիմադիր տարրերի հարուածների տակ զգալապէս թուլացել է,

3) Որ համայն Ռուսաստանի քաղաքական փոփոխութիւնների սկզբում Կովկասը պէտք է բարձրացնէ իր ձայնը,

4) Որ ներկայ պատմական րոպէի ստիպողականութիւնը թոյլ չէ տալիս սպասել նոր ընդհանուր ժողովին՝ Կովկասեան գործունէութեան ծրագիրը մշակելու եւ հաստատելու համար,

5) Որ, բացի այդ, կովկասեան գործունէութեան որոշակի ծրագիրը անհրաժեշտ է կռիւի ներկայ պայմաններում համաձայնութեան գալու համար միւս գործող կուսակցութիւնների հետ.

Որոշեց՝

Կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունէութեան, մշակել ծրագիր՝ համաձայն Կովկասեան Ռայոնական ժողովում արտայայտած տրամադրութեան, ուղարկել կովկասեան դաշնակցական մարմիններին, ժամանակաւորապէս ղեկավարելու այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական մշակումը եւ հաստատումը առաջիկայ Ընդհանուր Ժողովին:

Հրատարակելով ներկայ նախագիծը, առաջարկում ենք դաշնակցական մարմիններին և ընկերներին ուղարկել մեզ իրենց դիտողութիւնները, որպէս զի Ընդհանուր Ժողովը՝ վերջնական վաւերացում տալու համար, ունենայ իր ձեռքի տակ բոլոր տեսակէտների արտայայտութիւնը:

Յունիս, 1905 **Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ**

ՆԱԽԱԳԻԾ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Կովկասեան հայութեան և միապետական կառավարութեան միջև սկսած կռիւը մի բնական, անխուսափելի հետևանք է հայ տարրի առաջադիմութեան և այն վայրենի հալածանքների, որ ցարիզմը երկար տարիներից ի վեր մղում է հայ ժողովրդի, իբրև ուրոյն, կուլտուրական մի համայնքի դէմ:

Հալածողական այդ քաղաքականութիւնը ամենացայտուն յատկանիշն է այժմեան ռուսական բռնապետութեան. – «ռուսացման» անուան տակ նա ճարակում է կայսրութեան բոլոր Մայրերը, նաև Կովկասը:

Կովկասեան բազմաթիւ ցեղերի շարքում հայ տարրին յատկացած է մի բացառիկ վիճակ, – նա ամենից աւելի է ենթակայ գիշատիչ ռէժիմի յարձակումներին. և այդ այն պատճառով. որ հայութիւնը՝ տնտեսական և ընդհանուր կուլտուրական ասպարէզում ցոյց տւած իր թռիչքներով ու մրցման ուժով՝ վաղուց ի վեր դիտւում է իբրև առանձնապէս վտանգաւոր տարր ցարիզմի տիրապետութեան համար Կովկասում:

Քսան տարուց ի վեր ռէակցիայի աւերիչ հողմը անզուսպ կատաղութեամբ փչում է մեր դժբախտ երկրի վրայ, հարւածելով ժողովրդի ամենանուիրական ստացւածքներին, ոչնչացնելով ազգային-հասարակական հիմնարկութիւնները, թունաւորելով մտաւոր ու հոգեկան մթնոլորտը, ցամաքացնելով ժողովրդական աշխատանքի բոլոր աղբիւրները:

Եւ հարւածները մնում էին անպատիժ: Կովկասահայ երիտասարդութիւնը, զբաղւած թիւրքահայոց դատով՝ հնարաւորութիւն չունէր որևէ ձևով հակազդելու այդ բացառիկ օրէնքներին:

Հայ եկեղեցական գոյքերի յափշտակումը, իբրև ուժեղ, ցնցող շարժառիթ, եկաւ խախտելու այդ ձեռնպահութիւնը: Ամբոստութեան ոգին, տասնեակ տարիների ընթացքում խտացած, կենտրոնացած յեղափոխական գիտակից շրջաններում արտայայտւեց ժողովրդական զինւած ու անզէն շարժումների ձևով, 1903 թւի աշնան:

Կեանքը միանգամից փոթորկւեց: Յեղափոխական կազմակերպութիւնը այնուհետև ձեռնարկեց լուրջ, սիստեմատիկ աշխատանքի: Հայկական շարժումը Կովկասի մէջ կարճ ժամանակամիջոցում դարձաւ մի չօշափելի ֆակտոր ամբողջ կայսրութեան ազատագրութեան գործում: Նա այսօր ունի իր զոհերն ու հերոսները, ունի իր յուզիչ մարտիրոսագրութիւնը: Նա առաջ է գնում անդիմադրելի կերպով, ստանում է յարատև, քրոնիկական կերպարանք և դառնում է միշտ աւելի ու աւելի յարձակողական: Բռնկւելով մի այնպիսի ժամանակ, երբ չկար պատերազմ, երբ Պլէվէյի երկաթէ ձեռքով՝ բռնակալութեան մեքենան հասել էր իր վերջին ծայր կատարելագործման, երբ լայնատարած կայսրութեան մէջ գերեզմանական անդորրութիւն էր, մերթ ընդ մերթ ընդհատւած ուսանողական ու բանւորական խաղաղ ցոյցերով կամ տէռորական մասնակի փորձերով՝ նա այժմ խրախուսւում է ազատագրական այն վիթխարի հոսանքից, որ այսօր բռնել է ամբողջ Ռուսաստանը, ամբողջ Լեհաստանը, Ֆինլանդիան, Կովկասը և որ մօտալուտ յաղթանակի խրոխտ գիտակցութեամբ՝ նախագծում է արդէն վաղւան հոյակապ ռամկավարական շէնքը:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որ ստանձնել է հայկական շարժման գլխաւոր պատասխանատուութիւնը, մտնում է սերտ յարաբերութեան մէջ Ռուսաստանում ու Կովկասում գործող յեղափոխական սոցիալիստական կազմակերպութիւնների հետ՝ համերաշխ ուժերով մղելու ընդհանուր ազատագրական գործը և իր քաղաքական ու սոցիալական դաւանանքի հետ՝ առաջադրում է իր գործունէութեան նախագիծը:

Յեղափոխական կուսի միջոցով՝ նա ձգտում է դաշնակցական (ֆեդերատիվ) ռամկավարական մի կազմակերպութեան – ամբողջ Անդրկովկասի համար – ամենալայն տեղական ինքնավարութեամբ: Լինելով բացարձակ հակառակորդ ամէն տեսակ առանձնաշնորհումների, ազգայնական ամէն տեսակ գերիշխանութեան ու ճնշումների, «Դաշնակցութիւնը» համոզուած է, որ միմիայն այդպիսի ռամկավարական կազմակերպութեան մէջ՝ կովկասեան այլատարր, այլակրոն և այլաբարբառ ժողովուրդները կարող են ապահովուած տեսնել իրենց ուրոյն, ազատ ու անարգել առաջադիմութիւնն ու բարգաւաճումը:

Սակայն այդ քաղաքական պահանջի իրագործումը մեր նպատակի մի մասն է միայն: Մեծ, անգնահատելի վաստակ լինելով հասարակական ընդհանուր առաջադիմութեան տեսակէտից՝ նա չէր կարող, այնուամենայնիւ, սպառել «Դաշնակցութեան» բովանդակ ծրագիրը: Կայ տնտեսական անհավասարութեան ուժը, որ քաղաքական ազատ ռէժիմի տակ ևս չպիտի թոյլ տայ աշխատաւոր մարդուն՝ վայելելու իր աշխատանքի բովանդակ արդիւնքը:

Պատմական էվոլիւցիայի եզրակացութիւնն է այդ:

Կար ժամանակ, երբ մարդկութեան առաջադէմ տարրերը հաւատում էին, որ քաղաքական բռնապետութեան լուծը խորտակելով՝ կը տիրէր մարդկանց մէջ կատարեալ ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն: Իրերի ընթացքը դառն հիասթափութիւն բերեց այդպէս մտածողներին:

Քաղաքականապէս ազատուած երկրներում ևս ստրկութեան ռէժիմը յարատևեց, – և տնտեսական անհաւասարութեան ուժն էր դրա պատճառը: Միապետական ֆեոդալիզմն ընկաւ, բայց նրա տեղ բարձրացաւ մի այլ դասակարգ, փողատէր դասակարգը – բուրժուազիան: Կեղեքման մենաշնորհը վայրենի, բիրտ ուժից անցաւ աւելի քաղաքակիրթ ուժին – կապիտալին:

Եւ առաջ եկան արևմտեան հասարակութիւնների մէջ երկու բանակներ – բուրժուազիա և պրոլետարիատ (գործաւոր դասակարգ) – որոնք, թէև միացած ազգի, հայրենիքի ընդհանուր շահերով, բայց միևնոյն ժամանակ տոգորուած էին տնտեսական շահերի հակառակութեամբ: Մինը նրանցից՝ տէր արդիւնագործութեան միջոցների – հողի, դրամի, մեքենաների, միւսը՝ զուրկ սեփականութիւնից: Հակամարտութիւնը երկու դասակարգերի միջև աւելի և աւելի բորբոքւեց, չնորհիւ օր աւուր առաջադիմող արդիւնագործութեան:

Դա մի նոր շրջան էր քաղաքակրթութեան պատմութեան մէջ, որ կոչւում է կապիտալիստական: Կապիտալը, դրամագլուխը միշտ աւելի և աւելի աճում է – մանաւանդ քաղաքային, արդիւնագործական աշխարհում – համեմատաբար փոքրաթիւ արտօնեալների ձեռքում, որոնք յենելով իրենց ծագման, նիւթական ուժի և պետութեան գործօն հովանաւորութեան վրայ՝ ձգտում են յաւերժացնել իրենց դիրքը, իբրև իշխող ու կեղեքող դասակարգի:

Կապիտալիստական արդիւնագործութիւնը, մեծ զարկ տալով քաղաքակրթութեան ընդհանուր առաջադիմութեան, միևնոյն ժամանակ իր ստերային կողմերով – արդիւնաբերութեան անկանոնութեամբ, պարբերական ճգնաժամերով, անաշխատութեան մշտական երևոյթով, բանտրական ուժերի հրէշային շահագործումով և այլն և այլն – այդ բոլոր բացասական յատկութիւններով անդրադառնում է աշխատաւոր դասի նիւթական և ֆիզիքական, մտաւոր ու բարոյական կացութեան վրայ: Արդիւնագործական կեանքի առաջխաղացութեան հետ շեշտւում է ամեն տեղ, քաղաքների ու գիւղերի մէջ, աշխատաւոր դասի քայքայումն ու թշւառութիւնը: Եւ այդպիսով ստեղծւում է վիճակների մի ցայտուն հակապատկեր, մի կողմից մասսային քաղց ու մերկութիւն, միւս կողմից՝ առասպելական հարստութիւններ, պերճանք ու վայելքներ: Այդպէս է ներկայումս քաղաքակիթ աշխարհի ընդհանուր պատկերը:

Այդ վիճակի չէր կարող հարստահարուած բանտրական մասսաների մէջ չարտադրել դժգոհութեան փրկարար հոսանքը: Նա ծնունդ առաւ և արդէն իսկ վերջին դարու երեսնական թւականներից արտայայտւեց խոշոր յուզումներով ու կռիւներով:

Սկսւեց մի նոր տեսակի քաղաքացիական շարժում, – սոցիալական շարժում: Նա անդրադարձաւ ժամանակի մտածող գլուխների մէջ: Ասպարեզ եկան ազնիւ, մարդասէր դէմքեր, որոնք փորձեցին դարմանել հասարակական վտանգաւոր կացութիւնը, կոչ անելով – ապարդիւն, իհարկէ, – հարուստ, ազդեցիկ անհատների մարդասիրական զգացումներին: Սոցիալական խնդրի խաղաղ, անպայքար լուծումն էր առաջարկւում, – անհնարին բան: Սոցիալիզմը իր ուտոպիական շրջանի մէջ էր:

Այնուհետև մին միւսի ետևից երևան եկան տնտեսագէտներ ու սոցիոլոգներ, որոնք լցուած ատելութեամբ դէպի տնտեսական անարդար կարգերը՝ յետ մղեցին խաղաղ ճանապարհը և ջատագովեցին կռիւի սկզբունքը, որով միմիայն կարելի էր լուծել կապիտալի ու աշխատանքի դարաւոր հակառակութեան վիթխարի հարցը: Նրանք յարձակւեցին հասարակութեան հիմքերի վրայ, դատապարտեցին մասնաւոր սեփականութեան հաստատութիւնը, մահացու հարուած տւին կապիտալիստական տնտեսութեան սիստեմին: Նրանք ցոյց տւին, թէ ինչպէս կապիտալիզմը իր պատմական առաքելութիւնը աջողութեամբ կատարելով՝ այժմ իր կատարեալ սնանկութիւնն է յայտարարում: Նա արդէլք է լինում քաղաքակրթած հասարակութիւնների նորմալ, բնականոն առաջադիմութեանը, նա ստրկացնում է ամբողջ դասակարգեր, այլասերում է ամբողջ սերունդներ՝ նետելով նրանց թշւառութեան անդունդը:

Եւ ահա մի շարք տնտեսագէտների, սոցիոլոգների ու փիլիսոփաների երկարամեայ ուղղակի և անուղղակի աշխատանքը, միացած տնտեսական էվոլիւցիայի օրէնքների հետ՝ առաջ բերին ու կազմակերպեցին այն մեծ շարժումը, որ յայտնի է աշխարհին Սոցիալիզմ անունով: Նա հռչակւեց որպէս հակադրութիւն կապիտալիզմի և նրա հետ կապած բոլոր չարիքների: Նա զարգացաւ անսովոր արագութեամբ, նուաճեց թշւառութեան մէջ խրած բանտրական ու գիւղացիական մասսաները, թափանցեց երկրագնդի

բոլոր անկիւնները, ուր մտել է կապիտալը իր կեղեքումներով ու աւերումներով:

Սոցիալիստական շարժումը իր էութեամբ միջազգային է: Բոլոր երկրների աշխատաւոր տարրերը, իբրև միևնոյն կապիտալիզմի զոհեր, իբրև դառն ճակատագրի եղբայրակիցներ, միանում են, ձեռք ձեռքի տալիս և՛ գիտակ իրենց բարձր առաքելութեան, վստահ յաղթանակի վրայ՝ դիմում են կազմակերպած պայքարի ճանապարհով դէպի մի սոցիալական կազմակերպութիւն, ուր չպիտի լինին կեղեքողներ ու կեղեքուողներ, իշխողներ ու հպատակներ, ուր արդիւնաբերութեան միջոցները, դրամագլուխը պիտի լինի համայնական, ուր աշխատանքը, քաղաքակրթութիւնը և նիւթական վայելքները հաւասարապէս բաժին պիտի լինին իւրաքանչիւրին:

Այդ ուղղութեամբ է գնում հասարակական էվոլիւցիան արևմտեան աշխարհում: Տեսնենք, թե ի՞նչ է ներկայացնում մեր իրականութիւնը:

*
* *

Ինդուստրիալիզմի, խոշոր-արդիւնաբերական հոսանքի ալիքները հասան նաև Անդրկովկասին: Նրանք կամաց-կամաց փոխեցին հինաւուրց տնտեսութեան ձեւերը, ուր դասակարգային բաժանումներն ու անհաւասարութիւնը հազիւ նշմարելի էին, ուր պարսից տիրապետութեան արհաւրալի յիշողութիւնները գրեթէ իսպառ մոռացնել էին տալիս մանր-մունր տզրուկների – աղաների ու վաշխառուների – կեղեքումները:

Հայ առևտրական տարրը, որ նախնի վիճակում ևս քաղաքակրթութեան տարածողն էր թէ՛ մեր և թէ՛ հարևան երկրների մէջ՝ զգալի զարկ տուեց ամբողջ կովկասեան արդիւնաբերութեան: Եւրոպական ու ռուսական կապիտալիստներն ևս շահագրգռեցին Կովկասի բնական հարստութիւններով, և համեմատաբար կարճ միջոցում երկիրը դարձաւ ընդարձակ ու արգասաւոր շահագործման վայր:

Մեքենայական խոշոր ինդուստրիայի ներմուծումը, ինչպէս Եւրոպայում ու Ռուսաստանում, այնպէս և մեզ մօտ ունենում է իր անխուսափելի հետևանքները՝ արհեստների անկում և գաղթը դէպի արդիւնաբերական վայրերը:

Որքան աւելի է ծաւալւում արդիւնաբերութիւնը, այնքան աւելի է ընդարձակւում պանդխտութեան հոսանքը, որը առանձնապէս ուժեղանում է ներկայումս շնորհիւ գիւղերի սակաւահողութեան: Այդ վերջինը միշտ աւելի և աւելի շեշտւում է մասնաւորապէս պետական հողերի վրայ ապրող գիւղացիների շրջանում՝ շնորհիւ «ռուսացման» հովերով տարւած կառավարութեան ռէժիմին, որը պահում է ազատ հողերը ռուս գաղթականների համար և նոյնիսկ յաճախ խլում է տեղացու աննչան հողաբաժնից:

Հայ շինականը իր մի թիզ հողով և նահապետական մշակման ձևերով՝ քարշ է տալիս մի կիսաքաղց, յուսահատ գոյութիւն: Աւելացրէք դրան՝ հարկերի ծանրութիւնը, կալւածատէր-աղաների ու վաշխառուների յարաճուն կեղեքումները և այն ժամանակ դիւրին կը լինի ըմբռնել հայ միջին գիւղացու աննախանձելի տնտեսական վիճակը, նրա մշտնջենական մղումը դէպի արդիւնաբերական կենտրոնները, ուր վաստակը

համեմատաբար առատ է, թէև աշխատանքը՝ տաժանելի: Այդ նոյն երևոյթը, ընդհանուր առմամբ, տեղի ունի նաև կովկասեան ուրիշ ազգութիւնների մէջ:

Արդիւնաբերութեան առաջխաղացութեան հետ ծնունդ է առնում Անդրկովկասում եւրոպական մտքով փողատէր դասակարգ՝ բուրժուազիա, որը իւրացնում է կապիտալիստական շահագործման բոլոր ձևերը և որը պիտի աւելի ևս ուժեղանայ վաղուան կարգերի մէջ, երբ կը վերանան միապետութեան կողմից առևտրի ու արդիւնաբերութեան դէմ հանած բազմաթիւ խոչընդոտները:

Ծնունդ է առնում մեծ քաղաքներում և այդ բուրժուազիայի անբաժան ստուերը – պրոլետարիատը, որը – թէև, մեծ մասամբ կազմւած լինելով մանր սեփականատէր գիւղացիներից, կատարելապէս չէ համապատասխանում բառի եւրոպական իմաստին – այնուամենայնիւ իր նիւթական, մտաւոր, կուլտուրական վիճակով շատ աւելի թշւառ է, քան արևմտեան որևէ երկրի պրոլետարիատը: Դրա հետ միասին աշխատաւոր ժողովրդի մեծ զանգւածը մնում է տակաւին գաւառների մէջ, կապւած իր հողին ու խղճուկ տնտեսութեան, ենթակայ այլևայլ հարստահարիչների կամայականութիւններին, նոյնպէս տգէտ, նոյնպէս տանջւած և իրաւազուրկ: Նրա մի զգալի տոկոսը. զրկւած արդէն աշխատանքի անհրաժեշտ սեփական միջոցներից, հարկադրւած է ունևոր դրացիների տրամադրութեան տակ դնել իր ու իր ընտանիքի աշխատող ձեռները և իր բաժին կտոր հողը, եթէ նա դեռ մնացել է:

Մեր հայկական կեանքում անտագոնիզմը հարստահարող և հարստահարւող տարրերի միջև մինչև օրս հրապարակ չէր գալիս զգալի չափերով և չէր էլ կարող գալ: Ցարիզմը՝ ընդհանուր հայութեան դէմ ուղղած իր արշաւանքով միմիայն համերաշխութեան ոգին է արծարծում հայ ազգաբնակութեան բոլոր խաւերի մէջ, և զարգացնելով ընդհանուր ազգայնական կապը՝ առժամապէս նսեմացնում է դասակարգայինը:

Սակայն կռիւը սկսւած է արդէն նաև դասակարգային հողի վրայ, – և բնական հակառակութիւնը հայ աշխատաւոր ընդհանրութեան ու շահագործող փոքրամասնութեան միջև՝ հետզհետէ պիտի սաստկանայ, թէ՛ քաղաքներում և թէ՛ գաւառներում, և նա կը հասնի իր լիակատար զարգացման շրջանին, երբ միապետական ռէժիմը տապալւելով՝ բուրժուազիան, խոշոր սեփականատէր տարրը, իր ձեռքը կ՝առնէ կառավարութեան ղեկը, և ազատ, անկաշկանդ թռիչք կը հաղորդէ արդիւնաբերութեան ու կապիտալիստական շահագործման:

Տնտեսական անհաւասարութեան այդ ուժի դէմ ևս Հ.Յ.Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր աւանդական ոգուն, իբրև էապէս ժողովրդական կուսակցութիւն, պիտի մաքառէ բոլոր պատշաճ միջոցներով, քաղաքական և տնտեսական խնդիրներում նա աշխատաւոր ընդհանրութեան տեսակէտի ու շահերի պաշտպան կը կանգնէ և միաժամանակ կը դաստիարակէ նրան սոցիալիստական իդէալների ոգով, կը պատրաստէ նրան քաղաքական և սոցիալական մեծ պայքարի համար:

Գիւղական աշխարհում «Դաշնակցութիւնը» դիմում է իր պրոպագանդով ազգաբնակութեան այն խաւերին, որոնք իրենց տնտեսական դրութեամբ մատչելի են կազմակերպութեան դաւանած գաղափարներին: Կռիւ մղելով կալւածատէրերի և վաշխառուների դէմ՝ նա պիտի կազմակերպէ իր դրօշակի տակ հողազուրկ և սակաւահող

գիւղացիներին, պիտի ձգտէ ըստ կարելւոյն բարձրացնել նրանց նիւթական ու հոգեկան վիճակը և մերկացնելով մասնաւոր տնտեսութեան բոլոր աննպաստ, բացասական կողմերը, պիտի աշխատէ ժողովրդականացնել համայնական տնտեսութեան ձևերը, պատասխանել գիւղական կեանքին արդիւնաբերող ու սպառող ընկերակցութիւնների արդասաւոր սկզբունքը, որը ճանապարհ է հարթում դէպի ապագայ մեծ համայնական, սոցիալիստական կազմակերպութիւնը:

Մեկնելով նախընթաց հիմնական հայեացքներից և աչքի առջև ունենալով այն կարևոր հանգամանքը, որ հայ տարրերի հետ միասին Անդրկովկասի միւս ժողովուրդներն էլ գտնւում են քաղաքական և տնտեսական համանման պայմաններում և որ, հետևաբար, անդրկովկասեան բոլոր աշխատաւորների հիմնական ձգտումները պէտք է մէկ լինեն, Հ.Յ.Դաշնակցութիւնը առաջադրում է հետևեալ պահանջները.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

1) Դաշնակցական ռամկաւար հանրապետութիւն Անդրկովկասի համար, հիմնւած ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութեան վրայ:

2) Կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերի և կրօնական համայնքների, որոնք մտնում են դաշնակցութեան մէջ: Ոչնչացումն դասակարգային բոլոր առանձնաշնորհումների:

3) Անդրկովկասը կազմում է ազատ Ռուսաստանի անբաժան, դաշնակից մասը, կապւած Ռուսաստանի հետ ընդհանուր պետական ինքնապաշտպանութեան, դրամական սիստէմի ու ընդհանուր քաղաքականութեան խնդիրներում: Նա ուղարկում է վերոյիշեալ սկզբունքներով ընտրւած իր ներկայացուցիչները Ռուսաստանի ընդհանուր պառլամենտին:

4) Անդրկովկասը անկախ է իր բոլոր ներքին խնդիրներում՝ վարչական, տնտեսական և այլն:

5) Անդրկովկասեան Դաշնակցութիւնը ունի իր կենտրօնական պառլամենտը Թիֆլիսում: Բնակչութեան իւրաքանչիւր 25 000-ը ընտրում է մէկ պատգամաւոր: Իւրաքանչիւր անդրկովկասցի, որ անցել է 20 տարին, առանց սեռի խտրութեան, իրաւունք ունի ընտրելու:

6) Պատասխանատու մինիստրական մարմինը վարում է, համաձայն պառլամենտի որոշումների, երկրի վարչական, տնտեսական և կուլտուրական բովանդակ քաղաքականութիւնը:

7) Անհատը և բնակարանը անձեռնմխելի են:

8) Մամուլի, խօսքի, խղճի, դումարումների, բանտրական սինդիկատների և գործադուլների կատարեալ ազատութիւն:

9) Ընդհանուր, պարտադիր և ձրի սկզբնական կրթութիւն մայրենի լեզուով, կատարեալապէս համապատասխան իւրաքանչիւր ազգի կարիքներին և զարգացման: Միջնակարգ դպրոցները – մայրենի լեզուով, մնացած գլխաւոր տեղական լեզուները՝ իբրև անհրաժեշտ առարկաներ: Ռուսերէնը, իբրև ընդհանուր պետական լեզու՝ պարտադիր է:

10)Անդրկովկասեան ռամկավար Դաշնակցութիւնը չէ ճանաչում պետական եկեղեցի: Կրօնը անհատական խղճի գործ է:

11) Անդրկովկասը բաժանւում է գաւառների, որոնք վայելում են ամենալայն տեղական ինքնավարութիւն: Գաւառների սահմանները գծագրելիս՝ ի նկատի պիտի առնել ազգաբնակութեան ցեղագրական և կուլտուրական կազմը (ըստ կարելւոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար):

12) Գաւառների մէջ առանձին համայնքները նոյնպէս վայելում են ինքնավարութիւն՝ զուտ համայնական խնդիրներում: Ազգաբնակութեան կողմից վերը յիշած սկզբունքով ընտրւած գաւառական խորհուրդը իր օրգաններով վարում է գաւառի ներքին գործերը: Նոյնը՝ համայնքի մէջ:

13) Համայնական և գաւառական բոլոր պաշտօնեաների համար պարտադիր է՝ տեղական երկու գլխաւոր լեզուներն իմանալը, իսկ Անդրկով.Դաշնակցութեան ընդհանուր պաշտօնեաների համար՝ երեք գլխաւոր լեզուները:

14) Բոլոր պաշտօնեաները ընտրւում են ժողովրդի կողմից, վերը յիշած ընտրողական սկզբունքով:

15) Գաւառի և Անդր. Դաշնակցութեան բարձրագոյն դատաւորները անկախ են և անփոփոխելի: Նրանց ընտրութեան սկզբունքները որոշում է Անդրկովկասի Սահմանադիր Ժողովը: Դաշնակցական ընդհանուր դատարանի մէջ երեք գլխաւոր լեզուները պարտաւորական են:

16)Անդրկովկասի ինքնապաշտպանութեան սիստէմը ժողովրդական միլիցիան է, ընդհանուր զինաւորումը: Ամեն մի առողջ քաղաքացի պարտաւոր է որոշ ժամանակով ծառայել իբրև միլիցիական: Անդրկովկասի միլիցիան ծառայում է Անդրկովկասի սահմաններում: Նա ենթարկւում է Ռուսաստանի ընդհանուր հրամանատարութեանը և գործադրւում է միմիայն այն դէպքում, երբ ընդհանուր պետութեան կամ Անդրկովկասեան Դաշնակցութեան ազատութեանն ու ամբողջութեանը վտանգ է սպառնում:

17) Անդրկովկասեան սահմանադրութիւնը մասամբ կամ ամբողջութեամբ փոփոխելու որոշումը կարող է կայացնել Անդրկովկասի ինքնավար ժողովուրդը, ընդհանուր քէարկութեամբ և ձայների 2/3-ի առաւելութեամբ: Սահմանադրութիւնը փոփոխելու առաջարկը կարող են անել և որոշ թիւ քաղաքացիներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

1) Հողերի աստիճանական համայնացում:

2) Վերացում անուղղակի հարկերի: Մտցնել պրօգրէսսիւ տուրք եկամտի ու ժառանգութեան վրայ և բոլորովին ազատել դրանից՝ որոշ չափից պակաս մանր եկամուտները:

3) Սահմանել օրէնքով ութժամեայ աշխատանքի օր բանտրների համար:

4) Սահմանել նւազագոյն օրավարձ՝ այլևայլ զբաղմունքների համար՝ քաղաքում և գիւղում:

5) Պետական ապահովագրութիւն դժբախտ պատահարներից, հիւանդութիւնից, ծերութիւնից և անաշխատութիւնից՝ պետութեան և գործատէրերի հաշւով:

6) Ազատութիւն տեղափոխութեան և արհեստների:

7) Աշխատանքի բօրսաներ, որոնք պիտի մասնակցեն բանտրական օրէնսդրութեան մշակմանը:

8) Աշխատանքի օրէնսդրական հովանաւորութիւն, համաձայն գիտական առողջապահութեան պահանջներին:

9) Վերացում գիշերային աշխատանքի, բացի այն գործառնութիւններից, որոնց տեխնիկական բնոյթը թոյլ չի տալիս ընդհատումներ: Անպայման վերացնել գիշերային աշխատանքը կանանց և անչափահասների համար:

10) Արգելել երեխաների աշխատանքը մինչև 15 տարեկան հասակը, իսկ 15-ից մինչև 18 տարեկան հասակում սահմանափակել վեց ժամով:

11) Բանւորական վերատեսչութեան ընտրութիւն:

12) Կիրակնօրեայ լիակատար հանգստութիւն:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա-Դ0 տես Տեր-Մարտիրոսյան Հովհաննես
Աբաշ օղլի Խմայիլ ---------- 53
Աբաջյան Տիգրան (Կայծակ Առաքել) ---- 28, 33, 35, 36, 46, 47, 464
Աբբաս ---------- 53
Աբդուլլա բեկ օղլի Աղաբեկ ---------- 51
Աբդուլ Համիդ II ---------- 103, 174, 331, 364, 366, 385, 406, 428, 429, 432, 437, 445, 490, 584, 585, 671, 685, 694, 704, 706-709, 713, 729
Աբդուլ Վեհիբ փաշա ---------- 725
Աբդուլ օղլի Հասան ---------- 29
Աբեղյան Արտաշես ---------- 181, 187
Աբովյան Խաչատուր ---------- 367
Աբրահամյան Թադևոս ---------- 31
Աղամյան Մեխակ ---------- 299, 322
Աղելխանյան Գ. ---------- 117
Աղելխանով ---------- 549
Ազատյան Հայկ ---------- 323
Աթաբեկ Ազամ ---------- 652, 654, 688, 689
Աթաբեկյան Անուշկա ---------- 32
Աթաբեկյան Լևոն (Ռիխարդ) ---------- 173, 213, 214, 216-218, 220-224, 226-228, 235, 277, 376, 517
Աթաբեկյան Հովսեփ ---------- 347
Աթաբեկյան Միքայել ---------- 98
Աթա բեյ ---------- 715, 723
Աթանեսյան Աշ. ---------- 356
Ալաջաջյան ---------- 498
Ալավերդով Կ. ---------- 288, 289, 308
Ալեքսան վասպուրականցի ---------- 35
Ալեքսան ռուսահայ ---------- 396
Ալեքսան վանեցի զինագործ ---------- 469
Ալեքսանդր II ---------- 103, 373, 534
Ալեքսանդր III ---------- 246, 373
Ալի ---------- 35, 106
Ալի բեյ ---------- 386
Ալիև Կ. ---------- 14
Ալիզռնացի Մքո ---------- 640
Ալի խան ---------- 39
Ալիխանով ---------- 106
Ալիս Շտոն-Բլեկվել Տիա ---------- 438
Ալլահկուլի Ջավադ բեկ ---------- 30, 31
Ալլայ բեյ ---------- 719
Ալոյան Գալուստ (Թորոս) ---------- 463, 468
Ակնունի Է. տես Մալումյան Խաչատուր
Ահարոնյան Ավետիս ---------- 94, 187, 401, 452, 455, 460, 515, 517, 518, 532, 543, 581, 583, 605, 614, 615, 616
Ահմեդ ---------- 639
Աղաև Հասան բեկ ---------- 14
Աղաև Ահմեդ ---------- 85, 666
Աղալար բեկ ---------- 29
Աղախանյան Հովհաննես ---------- 32
Աղամալյան Արտեմ ---------- 159, 311
Աղամալյան Մկրտիչ (Սարհատ) ---------- 463
Աղամալովներ ---------- 292
Աղամով ---------- 292
Աղայան Ծ. Գ. ---------- 292
Աղասարյան Բ. ---------- 98
Աղա-Վասակ ---------- 324
Աղջոյան Մեսրոպ ---------- 644
Աճեմ-Խաչոյան աղա Սարգիս ---------- 121
Ամիրխանյան Հովհ. ---------- 97
Ամիրյան Արսեն (Մրավյան Ա.) --- 204-212, 214, 228, 277, 359, 376, 380
Ամիրյան Թադևոս (Գիժ Թաթոս) - 204, 419
Ամիրյան Գրիգոր ---------- 204
Ամուրյան Ա. ---------- 63, 697
Ամֆիտեատրով Ա. Վ. ---------- 89, 90
Այվազյան Կարո ---------- 499
Անանուն Դավիթ ---------- 182, 217, 246, 250, 251, 269, 270, 380
Անտոնյան Արամ ---------- 643
Աչոտ եպիսկոպոս ---------- 57
Աչրկպոզյան ---------- 399
Աչրկպաչյան Արամ (Գրիգոր) ----- 143, 145, 146, 151
Առաքելյան Արմենակ ---------- 499
Առաքելյան Լ. ---------- 195
Առաքելյան Խաչատուր ---------- 31
Առաքելյան Համբարձում ------- 96, 98, 140, 236, 416, 670, 671
Առյուծ Ավագ ---------- 48
Ասլան հայդուկ ---------- 48
Ասկոլի ---------- 440
Աստվածատրյան Արշ. ---------- 125, 615
Ավագ խդրանցի ---------- 30
Ավագյան Մարտիրոս ---------- 53
Ավելյան Հովսեփ ---------- 413
Ավետիս արևմտահայ մարտիկ ---------- 46
Ավետիսյան Հովհաննես ---------- 499
Ավետիսյան Մարգար ---------- 227
Ավետիսյան Մկրտիչ ---------- 121, 130
Ավետիսյան Վ. Ա. ------- 159, 243, 244, 365
Ավետիսյան Տիգրան ---------- 187
Ավետյան Մ. ---------- 132, 638, 639
Ավո մշեցի ---------- 21, 28, 35, 47, 464
Արամայիս ---------- 52, 53
Արամյան Մ. ---------- 117, 292, 324
Արասխանյան Ավ. ---------- 96
Արարատյան Սարգիս ---------- 187
Արարքցյան Միհրան ---------- 125
Արեչյան Ռուբինա ---------- 585
Արզումանյան Մ. Վ. ---------- 288, 306, 307
Արզուման Ալեքսան (Վահե) ---------- 161
Արզունյան Գրգո ---------- 389
Արծրունի Գրիգոր ---------- 205
Արկոմեդ Ս. Տ. ---------- 360
Արղության Սոֆյա ---------- 416
Արշակ վանեցի ---------- 125
Արսեն արևմտահայ տասնապետ --------- 28

Արաեն տրապիզոնցի դաշնակցական --- 514
Արփիարյան Արփիար -- 160, 583, 605, 711
Արֆենի ---------- 140, 146, 147
Աքսելրոդ ---------- 276

Բաբերդցի Սեպուհ տես Ներսիսյան Արշակ
Բագիրի Միրզա ---------- 661
Բագիրի Ջավիդ ---------- 661
Բաղդասարյան Մկր. ---------- 246
Բաղդասարյան Վարդան ---------- 159, 308
Բաղդատյան Ռոբերտ ---------- 250
Բաղեշցյան Գարեգին ---------- 128
Բաղեշցյան Համազասպ (Սալման) ------ 128, 507, 509, 511-513, 565
Բանվորյան Սեդրակ ---------- 145, 155
Բաշինջաղյան Գևորգ ---------- 666
Բարաթով ---------- 292, 324
Բարժանպի Վ. ---------- 289
Բարսեղ ---------- 210
Բարսեղյան ---------- 514
Բարսեղյան Խ. Հ. ---------- 312
Բարսեղյան Կարապետ ---------- 128
Բդեյան Միսակ ---------- 393, 395, 396, 409-411, 426, 639, 642
Բդեյան Սարգիս ---------- 393, 395, 396, 409-411, 426, 639, 642
Բեբել Ավգուստ ---------- 82, 356, 357, 362, 378, 552, 637
Բեգլար Միրզա-օղլի ---------- 29
Բեկզադյան Ալեքսանդր ---------- 280, 313
Բեկատու ---------- 440
Բենտերյան Ցակոբ ---------- 451
Բեռնշտայն Էդուարդ -------- 362, 456, 458
Բերար Վիկտոր ---------- 77, 452, 453
Բերբերյան Ռուբեն ---------- 180, 376
Բերթելո Մարսելեն - 433, 434, 440-444, 446
Բլքստոն ---------- 447
Բիթ ---------- 446, 447
Բիկընֆիլդ ---------- 430
Բյուխներ Կարլ ---------- 255
Բոգարջյան Ն. ---------- 117
Բոլեո Անատոլ Լբրուա -------- 433, 434, 440
Բոյաջյան Միհրան ---------- 499
Բոսսի ---------- 440
Բորկա Օգյուստ ---------- 433
Բորյան Բագրատ ---------- 280
Բորոյան Սմբատ ---------- 48
Բրայս Ջեյմս ---------- 171, 435, 447
Բրեալ ---------- 440
Բրիան Արիստիդ ---------- 440
Բրուտյան Աբրահամ ---------- 128
Բուլղարացի Գրիգոր ---------- 470
Բուլղարացի Պետո ---------- 17
Բուրժուա Լեոն ---------- 440, 451

Գալաճյան Նշան ---------- 128
Գալե սպարանցի ---------- 640
Գայլ Վահան (Դոլբայյան Մինաս) ------- 230
Գասպար Ա. դաշնակ.
քաղաքական տեսաբան ---------- 224
Գասպարյան Առաքել ---------- 641
Գաստոն Լբրուա ---------- 76
Գաֆավյան Արշակ (Քեռի) ---------- 28, 46, 187, 464, 546, 547
Գեդ Ժյուլ ---------- 362
Գեղամուներ ---------- 292
Գեորգբեգյան ---------- 98
Գևորգ արևմտահայ հայդուկ ------- 37, 464
Գլաղատոն Վ. ---------- 438
Գյուլխանդանյան Աբրահամ (Աբրո) - 58, 59, 173, 242, 245, 471, 473, 624, 625, 472, 473, 514
Գոլիցին Գ. Ս. ---------- 99, 104, 106, 113, 116, 118, 119, 143
Գոլոշչապով ---------- 20, 21, 23-25, 27
Գորե Պետո ---------- 414
Գորկի Մաքսիմ ---------- 669
Գրգորյան Ճերճիս ---------- 451
Գրիգոր ---------- 27
Գրիգորյան Ասիկ ---------- 644
Գրինգմուտ ---------- 792
Գրո ---------- 322
Գույումջյան Նազարեթ ---------- 499
Գուրգեն ---------- 232, 473, 642
Գուրովիչ Մ. Ն. ---------- 101

Դալի-Ալի ---------- 50, 51
Դանիելյան Լ. ---------- 98
Դաշնակցական խեչո --------- 471, 472, 546
Դաշտոյան Ռուբեն ---------- 280, 311, 313
Դավթյան Արշակ ---------- 151, 157
Դավթյան Եփրեմ ---------- 684
Դավո ---------- 128, 132
Դարբինյան Արտակ --------- 122, 123, 129, 131, 132, 231
Դարբինյան Ռուբեն տես Զիլինգարյան Արտաշես
Դերձակյան Օնիկ տես Վռամյան Արշակ
Դիլոն Էմիլ ---------- 627
Դիվո Արմանդ ---------- 433
Դյուկոմոն Էլի ---------- 437, 439
Դոլուխանյան ---------- 381
Դոնդուկով-Կորսակով Ա. Մ. ---------- 78
Դովլե Ալա էդ ---------- 664, 686
Դովլե Ամինը ---------- 652
Դովլե Էյն էդ ---------- 654, 661, 662, 664
Դրո տես Կանայան Դրաստամատ
Դուբինսկի Ի. - Մուխաձե ---------- 310
Դումանյան Ալեքսանդր ---------- 499

Եգանյան Բալասան ---------- 469
Եղիազարով Հուսեին բեկ ---------- 15, 16
Եղուրդյան Կարապետ ---------- 499
Եկարյան Արմենակ ----- 121, 123, 127, 129
Եղիազարյան Ստեփան ---------- 157
Եղիազարով ---------- 324
Եղիշե ---------- 36
Եղսո (Հեղինե) ---------- 646-648
Ենոք ---------- 46
Եվգենյա Կոնստանտինովնա ---------- 600

Երևանցի Պետրոս (Բագրատ Տեր-Հովհաննիսյան) ---------- 468
Երզնկյանց Արամայիս ---------- 312
Երիցյան Պողոս ---------- 499
Երկաթ խմբապետ ---------- 464
Երվանդ զինագործ ---------- 468
Երվանդ ---------- 495
Եփրեմ զինագործ ---------- 468

Զավարյան Սիմոն -------- 43, 187, 190, 235, 292, 327, 513, 515, 517, 519, 521, 532, 578, 583, 584, 605, 614, 615
Զավեն Տիգրան ---------- 416
Զավրիև Յակով (Հակոբ Զավրիյան) ------ 418, 419, 513, 532, 544, 565, 581, 582, 590, 615, 616
Զարդարյան Ռուբեն -------- 187, 188, 444, 445, 513, 515, 522, 526, 528-530, 539, 547, 553
Զարմայր ---------- 214
Զաքարյան Վահան ---------- 514
Զեյվեր բեյ ---------- 726
Զեքի փաշա ---------- 716
Զրմո ---------- 641
Զիա բեյ ---------- 701, 703
Զիլլի էս Սալթանե ---------- 653, 690
Զինովև Իվան Ալեքսեևիչ ---------- 417, 418
Զոլոտարյով ---------- 323, 324
Զոհրաբյան խեչո ---------- 499
Զոհրապ վասպուրականցի զինյալ ------ 470
Զոհրապ Գր. ---------- 382
Զուլումաթ խմբապետ ---------- 464
Զուրաբյան Արշակ ---------- 280, 282

Էլլիոտիրզմյան Կորյուն ---------- 645
Էլիավա Շ. ---------- 304
Էլմար Ց. ---------- 652, 661, 663
Էմիլ Զոլա Ա. ---------- 433
Էմին Հովսեփ ---------- 549
Էյնաթյան Գալուստ ---------- 628
Էնգելս Ֆ. ---------- 256, 332, 333, 335, 341, 342, 346-349, 356, 364, 381
Էնֆիաջյան Ա. ---------- 117
Էսֆահանի Սեիդ Զամալ էդ Դին -------- 661
Էվոյան Սիմոն ---------- 288
Էտուրնել ---------- 433
Էրերա Պոլ ---------- 438
Էրֆուրտ ---------- 333, 342

Ըրզախ ---------- 386

Թագվորյան Պետրոս ---------- 499
Թադևոսյան Արշակ ---------- 235
Թադևոսյան Լևոն ------- 228, 514, 614, 625
Թադևոսյան Ստ. (Սամսոն) --------- 468, 469
Թադևոսյան Տիգրան ---------- 235
Թաթուլ ---------- 473
Թահի փաշա ---------- 405
Թաճտին քուրդ ցեղապետ ---------- 386
Թաղիև Հաջի Զեյնալ Աբդին ---------- 84, 85
Թամամյան Ավետիք ---------- 383
Թավշանջյան Հովհաննես ---------- 161
Թերլեմեզյան Միհրան ---------- 128, 187
Թերլեմեզյան Տիգրան ---------- 128
Թոխմախ խմբապետ ---------- 464
Թոնյան Մկրտիչ ---------- 499
Թորգոմ ------ 232, 463, 464, 468, 473, 475
Թորոսյան Գուրգեն ---------- 499
Թորոսյան Սահակ ---------- 187
Թուխյան Եղիշե (Վահե) ------- 94, 180, 187, 196, 203, 212, 216, 235, 378, 514-517, 521, 522, 526, 530, 531, 534, 543, 549, 552, 558, 559, 571, 572, 573, 577, 581, 582, 605, 614, 615
Թուման ---------- 232
Թումանյան Ա. ---------- 288
Թումանյան Անդրի ---------- 37
Թումանյան Խաչատուր ---------- 37
Թումանյան Հովհաննես բանաստեղծ - 8, 322
Թումանյանց նորաշենցի ---------- 38

Ժապլար ---------- 171
Ժամկոչյան Թագվոր ---------- 499
Ժամհարյան Իսահակ ---------- 204
Ժամհարյան Մարգար ---------- 419
Ժղենտի ---------- 282
Ժորդանիա Նոյ ---------- 346
Ժորես Ժան ---------- 67, 77, 171, 362, 458, 552, 556, 637

Իբրահիմ բեկ ---------- 33
Իգալ Սոլթանե ---------- 701, 702
Ինճիկյան Հովհ. ---------- 366
Իշխան (Վանա կամ Լեռնապարի Իշխան) - 127, 187, 232, 506-509, 512, 513, 518, 532, 542, 551, 564, 600, 727
Իշխանյան Բախշի ---------- 182, 246, 252, 254-256, 265, 270, 273, 277
Իշխանյան Եղիշե ---------- 18
Խախանյան Տ. ---------- 182, 245, 246
Խահակյան Ավ. (Հայ Գուսան) --- 188, 321, 322, 513, 515, 517, 530, 591
Խահակյան Արշակ (Զամալյան Արշակ) - 163, 164, 168, 169, 181, 187, 283, 514, 517, 518, 521, 535, 536, 543, 544, 551, 572, 589-592, 605, 614, 615
Խահակյան Հ. Ա. ---------- 297
Խալանդար բեկ ---------- 30
Խալանդար բեկ ---------- 292
Խմայիլ աղա ---------- 9
Խմայիլով Ալաքպեր ---------- 14
Խրայեբյան Խանգանոս ---------- 37
Իվանյուկով Ի. ---------- 91

Լազյան Գաբրիել ---------- 427
Լազո տես Ղազարյան Հակոբ
Լազարև ---------- 137
Լալայան Իսահակ ---------- 280
Լակոտաշ Ռոդիոն ---------- 51
Լանգլուա Ժ. Պ. ---------- 433

Լավրով ---------- 217
Լարուա ---------- 559
Լենին Վ. Ի. ---------- 139, 140, 142, 148, 149, 181, 204, 264, 265, 330, 332-339, 343, 345, 353, 361, 381
Լեո ---------- 160
Լեփցկի ---------- 8
Լեռն ---------- 468
Լեռն ---------- 624
Լիբկնեխտ Կարլ ---------- 362
Լիբկնեխտ Վիլհելմ ---------- 356, 362, 378
Լիզա ---------- 18
Լյախով ---------- 687
Լյուքսեմբուրգ Ռ. ---------- 335, 362, 363
Լոմբրոզո Չեզարե ---------- 437
Լոնգե Ժան ---------- 446
Լորիա-Մելիքով ---------- 324
Լորան Ժորժ ---------- 448, 449
Լորթո հայդուկ ---------- 48, 125, 126

Խաթանայան Եր. ---------- 407
Խաժակ Գարեգին ---- 93, 94, 173, 180, 187, 196, 197, 212, 224, 290, 378
Խալեյան Ե. Մ. ---------- 312
Խան ---------- 464
Խան Աղամյան Արմենակ ---------- 499
Խանազատ (Խան-Ազատ) Ռուբեն -------- 60, 127, 132, 135, 143-146, 149-154, 156, 157, 180, 376
Խանաղով ---------- 324
Խանլար բեկ ---------- 29
Խանոյան Սերգո (Սարգիս) -------- 280, 310
Խանչյան Աղասի ---------- 121
Խանչյան Լևոնդ ---------- 121
Խաչատրյան Ալ. ---------- 97
Խաչատրյան Սամսոն ---------- 53
Խաչոյան Պողո ---------- 644
Խաչիև Ալ. ---------- 322
Խատիսյան Ալ. ---------- 95, 117
Խատիսյան Կոնստանտին ---------- 468
Խարսա Ցակո ---------- 640
Խեչո արևմտահայ մարտիկ ---------- 46
Խինկայան Թագվոր ---------- 496, 500
Խինկայան Ստեփան ---------- 496, 500
Խոպերիա ---------- 282
Խոջամիրյան Հայկ ---------- 463
Խոջամիրյանց Մինաս ---------- 31
Խրիմյան Մկրտիչ Կաթողիկոս ----- 117, 223, 393, 416, 453
Խրլաղյան ---------- 388
Խուամարյան Աշոտ ---------- 280, 311-313
Խուչպուլյան Հմայակ ---------- 155

Ծաղիկյան Մկրտիչ ---------- 499
Մատուրյան Ալեքսանդր (Ռուբենի) ---- 245, 246, 252, 253, 270, 322
Մատուրով ---------- 292, 381
Մերենց ---------- 140
Միլվանյան Հայկ ---------- 499
Մովսիսյան Ս. տես Սեբաստացի Սաքո

Մուռ Դավո ---------- 48

Կազոյան Արամ ---------- 128
Կալո արևմտահայ զինյալ ---------- 36, 37
Կախանովսկի ---------- 418
Կախոյան Աս. ---------- 285, 286, 288, 330
Կախրեիձե ---------- 282
Կաճարյան Եփրեմ ---------- 145, 151
Կանայան Դրաստամատ (Դրո) -- 28, 35, 187
Կանգուրցի Գեաբո ---------- 125, 126
Կասյան Սարգիս -------- 135-137, 255, 256, 261, 262, 280, 310-313, 371, 376
Կասպարով Վլադիսլավ ---------- 280
Կասումբեկով Խ. ---------- 14
Կարապետյան Գեորգ ---------- 624
Կարապետյան Լևոն ---------- 499
Կարապետյան Հ. Ն. ---------- 135, 246, 256, 310, 312, 313
Կարապետյան Ռուբեն ---------- 151
Կարիեր Էժեն ---------- 433
Կարինյան Արտաշես ---------- 311
Կարճիկյան Խաչատուր ---------- 187
Կարո (Զորյան Արխտակես) ---------- 468
Կարո խարբերդցի ---------- 17
Կարոյան Զաթո ---------- 641
Կաուցկի Կարլ ---------- 216, 362, 378
Կաֆար Միրզա ---------- 299
Կաֆյան Գաբրիել ---------- 143, 149, 416
Կիրակոսյան Գևորգ ---------- 499
Կլարետի ---------- 440
Կլեման Էդուարդ ---------- 438
Կլեմանսո Ա. ---------- 433
Կլեմանսո Ժորժ ---------- 171, 433
Կնյազ ---------- 28
Կնունյանց Բոգդան ---------- 249, 280, 290, 313, 365-367
Կնունյանց Լյուդվիգ ---------- 310, 311
Կոզիկյան Գարեգին (Եսայեմ) ----- 244, 246, 252, 276
Կոկովցև ---------- 118
Կոհիե ---------- 171
Կոմպ Էմիլ ---------- 403
Կոմս տես Փափազյան Վահան
Կոնդակչյան Եղիշե ---------- 121
Կոնդուրով ---------- 327
Կոնստա Էտուրնել ---------- 440, 446-448
Կոնտանսոն Լյուդվիգ ---------- 77, 78
Կոչեն Դենիս ---------- 440
Կոսոյան Հայկակ ---------- 128
Կոստա իտալացի հայասեր ---------- 171
Կոստանյան Նիկոլայ ---------- 311
Կովալև ---------- 14
Կովալևսկի Մաքսիմ ---------- 91, 92
Կոտոյի Հաջի ---------- 48
Կորյուն խմբապետ ---------- 32, 46, 648
Կորյուն վրդ. ---------- 645
Կտիկյան Հայկ ---------- 499
Կրամեր ---------- 249
Կրասիլնիկով Ն. ---------- 117
Կրիմ-Գիրեյ Սուլթան ---------- 101, 106

Կրպաճ Մուստաֆա էֆենդի ---------- 716
Կրուալե ---------- 440
Կրուպսկայա Ն. ---------- 308
Կուզմինսկի ---------- 117
Կուլիկ ---------- 34, 37
Կուլո տափիկցի գեղջկուհի ---------- 389
Կուկունյան Ս. ---------- 164, 514
Կուրղինյան Շ. ---------- 321

Հաթամբեկյան Սաթենիկ ---------- 32
Հախումյան Ս. ---------- 313
Հակոբյան Գասպար ---------- 187
Հակոբյան Հակոբ ---------- 311, 318-321
Հակոբյան Մկրտիչ ---------- 389
Համազասպ (Սրվանձտյան) ---------- 187
Համբարձումյան Կոստյա (Կոստի) --- 17, 18
Համբարձումյան Սաքո ---------- 376
Համբարյան Ա. Ս. ---------- 160, 327
Համբիկ զինագործ ---------- 468
Համփոյան Հովհաննես ---------- 469
Հայրապետյան Աբրահամ ---------- 32
Հայրիկ խմբապետ ---------- 38, 46, 470
Հաջի Գևո ---------- 46, 47
Հաջի էֆենդի ---------- 726
Հաջի Լևոն ---------- 468, 469
Հաջի Միրզա Քերիմ Իմամճուն ---------- 681
Հաջի Սեֆու Ապտը Սահիմե ---------- 644
Հաջի Վալիև ---------- 20
Հասրաթ արևմտահայ մարտիկ ------ 46, 47
Հավե Լուի ---------- 433
Հարիս ---------- 440
Հարիսոն Լոյդ ---------- 438
Հարութ մշեցի հայդուկ ---------- 21
Հարությունյան Հակոբ ---------- 187
Հարությունյան Մարտիրոս ---------- 516
Հարությունյան Մկրտիչ ---------- 499
Հարությունյան Սամսոն --- 96-98, 236, 416
Հարությունյան Տիգրան ---------- 149
Հարությունով Էլո ---------- 14
Հացագործյան Արսեն ---------- 128
Հեչմաթլը Մյուլք ---------- 698
Հերց Ֆրիդրիխ ---------- 216
Հլղաթ ալվարինջեցի ---------- 414
Հմայակ վանեցի զինագործ ---------- 469
Հյուսյան Իգնատիոս ---------- 128
Հյուսյան Հարություն ---------- 127
Հյուսնի բեյ ---------- 396, 717
Հովասափյան Բարսեղ ---------- 641
Հովհաննիսյան Աշոտ -------- 280, 358, 367
Հովհաննիսյան Արխտակես ---------- 499
Հովհաննիսյան Եսայի ---------- 499
Հովհաննիսյան Երվանդ ---------- 499
Հովհաննիսյան Հակոբ ---------- 499
Հովհաննիսյան Մկ. տես Վարանդյան Մկ.
Հովհաննիսյան Սարգիս (Մանուկյան Արամ) ---------- 124, 125, 128, 129, 187, 232, 507-509, 512, 513, 515, 532, 548, 559, 565, 566, 581, 587, 593, 604, 615, 628, 629, 631, 727
Հովսեփ սոլուքցի ---------- 641

Հովսեփյան Արտաշես (Մալխաս) ----- 63-65, 214, 231, 354, 396, 400, 401, 469
Հրայր --------- 36, 233, 473, 490, 506, 620

Ղազանչի Մելո ---------- 125
Ղազարյան Արմենակ տես Հրայր
Ղազարյան Գևորգ (Գևորգ Ջաուշ) - 187, 192, 193, 198, 233, 387, 511-513, 536, 620, 638-640, 642-648
Ղազարյան Հակոբ ---------- 150, 151
Ղազարյան Հովհաննես ---------- 389
Ղազարյան Ղազար ---------- 703
Ղազարյան Ցակո ---------- 644
Ղազարյան Շահեն ---------- 499
Ղաղարյան Օննիկ ---------- 499
Ղալումյաններ ---------- 292
Ղամբարյան Գ. ---------- 97
Ղասաբ Արամ ---------- 46, 47
Ղասչյան Գ. (Արկոմեդ) ---------- 359
Ղևոնդ քահանա ---------- 645
Ղուլյան Լ. ---------- 97
Ղուկաս զինագործ ---------- 468
Ղուկաս բեկ ---------- 27
Ղուկասյան Հ. ---------- 98

Ճիտեճյան Գևորգ ---------- 128
Ճիտեճյան Մկրտիչ ---------- 128

Մ. ---------- 8
Մաղեր Անդրե ---------- 433
Մազմանյան ---------- 494
Մաթեոս հին հեղափոխական ---------- 421
Մալամա ---------- 101
Մալխասյան Ալեքսանդր - 288, 289, 306, 308
Մայան Բաղդասար տես Գուրգեն
Մալումյան Խաչատուր (Ակնունի) ------ 100, 427, 496, 512, 513, 516-522, 525, 526, 532, 534, 545, 573, 574, 581, 589, 591, 592, 604, 605, 614, 615
Մակ-Քոլ ---------- 446, 447
Մահալով ---------- 295
Մահմուտ պին Հասեն ---------- 389
Մամադ Հասան բեկ ---------- 29
Մամիկոնյան Վահան (Մ. Թախթաճյան) ---------- 155, 665
Մամեդ Ալի Միրզա ---------- 667
Մամեդբեկով Ռուստամ խան ---------- 14
Մանանդյան Հակոբ ---------- 442
Մանալյան Զարեհ ---------- 499
Մանթաշյան Ա. ---------- 117, 381
Մանթաշյան Հ. ---------- 322
Մանուկ տափիկցի ---------- 389
Մանուկ չենրքցի ---------- 647
Մանուկ (Արսեն) ---------- 553
Մանուկյան Հմայակ ---------- 128, 187
Մանուչարյան Մ. ---------- 316
Մաշադի Հասան Ղուլի բեկ ---------- 29
Մաշուրյան Ալեքսանդր ------ 514, 517, 525, 530, 532, 581, 591, 592
Մառ Նիկողայոս ---------- 69

Մաչավարիանի ---------- 20, 21
Մատթեոս ---------- 470
Մատթեոս ---------- 499, 502
Մարգար (Երևանցի Թադեոս) ---------- 468
Մարգարյան Մելիք ---------- 151
Մարգարյան Մարտիրոս (Սաֆո) -------- 460, 514, 584
Մարդոյան Զքո ---------- 644
Մարդպետ ---------- 516
Մարդուկեյան Ղևոնդ վարդապետ ------ 161
Մարիամ ---------- 105
Մարտիկյան Սերգո ---------- 159, 311
Մարտիրոսյան Լևոն ---------- 422
Մարտիրոսյան Հայկանուշ ---------- 416
Մարտով ---------- 142, 156, 181
Մարուխյան Ար. ---------- 291, 292
Մարքս Կարլ ------ 216, 256, 292, 332, 333, 335, 341, 342, 346-348, 361, 381
Մեդեմ ---------- 249
Մեդինակայա ---------- 105
Մելիք Աբասով Բահրամ բեկ ---------- 29
Մելիք-Ազարյան Ալեքսանդր -------- 31, 97, 140, 272, 327, 416
Մելիք-Թանգյան Ներսես ---------- 10, 28, 33, 35, 39, 47
Մելիք Նչան ---------- 125
Մելիք-Շահնազարյան Ասլան ---------- 53
Մելիք-Շահնազարյան Գևորգ (Շահեն) -- 213
Մելիք-Շահնազարյան Իլիկո ---------- 18
Մելիք-Շահնազարյաններ ---------- 53
Մելիք-Շաֆիև Հաջիբեկ ---------- 29
Մելիք-Քալանթարյան Ժենյա ---------- 514
Մելիք-Քարամյան Բալա ---------- 32
Մելիք-Քարամյան Բեգլար ---------- 32
Մելիք-Քարամյան Թադևոս ---------- 32
Մելիք-Քարամյան Հարություն զափանցի ---------- 32
Մելիք-Քարամյան Միխայիլ ---------- 32
Մելիք-Քարամյան Ջհանգիր ---------- 32
Մելիքյան Արշավիր ---------- 280
Մելիքյան Հ. ---------- 300
Մելիքյան Մելիք (Դեղուշկա) - 280, 300, 311
Մելիքով Զարդոբի Հասան բեկ ---------- 85
Մեյան Հոգևորական ---------- 670
Մելոյան Ղևոնդ ---------- 128
Մելքոն խան ---------- 652
Մելքոնյան Է. ---------- 420
Մելքոնյան Տաճատ վրդ. ------ 514, 523, 526
Մելքում ---------- 32
Մելքումյան Թարխան ---------- 499
Մեհմանդարով ---------- 23
Մեհմեդ Ալի ---------- 382
Մեհրաբյան Սարգիս (Վարդան) ------ 17, 19, 52, 187, 232, 514, 546
Մենար-Դորեան (տիկ.) ---------- 433
Մենար-Դորեան Պոլ ---------- 433
Մենիկ (Մերենցի դուստրը) գրականագետ ---------- 140
Մերիա Պոլ ---------- 433
Մեջիդ օլ Սալթանե Ամիր Թուման - 698, 699
Մեսսիա ---------- 105
Մեսրոպ սոլուխցի ---------- 639
Մերայալ Իզզեթ բեկ ---------- 695
Մերինգ Ֆ. ---------- 378
Միահիլով Վանչո ---------- 502
Միդհատ փաշա ---------- 671
Միլլեր Ֆրանք ---------- 438
Միլհոն Էդգար ---------- 437
Միլյուկով ---------- 338
Միխայիլ Նիկոլաևիչ (Մեծ իշխան) ------- 103
Միխայլով Կոնստանտին ---------- 328, 329
Միկոյան Անաստաս ---------- 280
Մինախորյան Վահան ---------- 213, 214, 219, 222, 376
Մինաս Նազլուի խաչիկ ---------- 125
Մինասյան Գ. գորիսեցի առևտրական ---- 27
Մինասյան Գրիգոր ---------- 499
Մինասյան Սարգիս (Արամ Աշոտ) ------- 188, 513, 515, 522, 528, 529, 548, 553, 555, 557, 581, 592, 614
Մինջիվանսկի Թեմուր Ջիվանշիր
Աբդուլասամատ Փարաջ ---------- 32, 33
Միսաք հայդուկ ---------- 21
Միսաքյան Տավարշ ---------- 642, 644
Մոտկևիչ ---------- 39
Միրաքյան Մարտիրոս (Բանվոր Շանթ) - 308, 311
Միր-Բաբաև Միր Աբաս ---------- 14
Միրբո Գուստավ ---------- 433
Միրզայան Սահակ ---------- 19, 20, 23
Միրզաբեկյան Գրիգոր ---------- 52
Միրումյան Ս. ---------- 27
Մկրտչյան Մարգար ---------- 38
Մյասնիկյան Ալեքսանդր ---------- 280, 365
Մնացականյան Պետրոս ---------- 159, 310
Մշեցի Հարո ---------- 499
Մոնետա Թեոդոր ---------- 449
Մոնկվեր ---------- 446
Մոշիր էդ Դովլե Նասրուլ-լահ խան ----- 664, 686, 687
Մոշիր Մուլք ---------- 686
Մովսիսյան Հովսեփ ---------- 696
Մովսիսյան Մ. ---------- 98
Մորիսոն ---------- 440
Մոքռուշ ---------- 214
Մռավյան Աբանազ ---------- 159, 211, 280, 306, 308, 311, 313
Մուզզաֆեր էդ Դին ---- 652, 654, 656, 657, 663, 664, 666-670, 672, 676
Մուհամեդ ---------- 106

Մուհամեդ Ալի (Մամադալի) -------- 685-688
Մուհամեդ Ալի Միրզա ---------- 653, 654
Մուղալի Մուրատ ---------- 48
Մուստաֆա ---------- 465
Մուստաֆա բեյ ---------- 717
Մուրադյան Դ. Ա. ---------- 322, 323, 327
Մուֆֆախամ Սոլթանե ---------- 670

Ցակովլև ---------- 627
Ցաղուբյան Լևոն ---------- 308, 311
Ցապոն զարաբաղցի ---------- 30
Ցոթնեղբայրյան Սկրտիչ ---------- 187
Ցուզբաչյան ---------- 245

Նաբի ---------- 50
Նաբոկով ---------- 339
Նադր ---------- 641
Նազարբեկյան Ավետիս ------ 133, 134, 137, 138, 140-143, 145-154, 156, 159, 180, 273, 275, 280, 376
Նազարբեկյան Մարո ---- 133, 140, 147, 376
Նազըմ փաշա ---------- 715
Նաթանյան Միք. ---------- 121
Նալբանդյան Միքայել ---------- 358
Նակաշիձե ---------- 105
Նահապետյան Գրիգոր ---------- 499
Նազի ---------- 27
Նասր էդ Դին շահ - 651, 652, 656, 685, 690
Նավասարդյան Վահան ---------- 199, 592
Նավո ---------- 387
Նատո ---------- 386
Նարինյան Խ. ---------- 629
Նելիդով ---------- 452, 454, 455
Ներսես ---------- 389
Ներսես Աշտարակեցի ---------- 472, 485
Ներսես պատրիարք ---------- 557
Ներսես քահ. ---------- 389
Ներսիսյան Արշակ ---------- 464, 514, 522, 533, 546, 547, 561, 577, 592, 615
Նժդեհ Գարեգին ---------- 485, 494, 498
Նիզամյան Մարգար ---------- 499
Նիկոլ ---------- 470
Նիկոլայ II ---------- 77, 92, 103, 109, 112, 114, 117, 323, 331, 356, 492
Նիկոլայիդիս ---------- 432
Նինուաշվիլի Վ. ---------- 289
Նչան նալբանդ ---------- 125, 127
Նչե սլին Սատո ---------- 389
Նոել Բաքստ Մ. ---------- 446
Նոս ---------- 691
Նորյան Ա. ---------- 404, 407, 427
Նուրի բեյ ---------- 722-725
Նևրուզ ---------- 464, 494

Նալչյան Արամ ---------- 128
Նահբազ ---------- 468
Նահխաթունյան Ավ. --- 187, 514, 517, 518, 525, 535, 536, 542, 543, 551, 571, 572, 581, 589, 590-592, 605, 614
Նահնազար Հովհաննես ---------- 452, 455

Նահվերդյան Դանուշ ---------- 280
Նահրիկյան Հարություն ----- 173, 226, 227, 283, 537-539, 546, 606, 614
Նահուլյան Ստ. -- 142, 148, 149, 204, 211, 257, 262, 280, 287-290, 293-295, 298, 299, 302-305, 307-318, 320, 322, 323, 326, 329, 330, 332, 335, 340, 343-346, 356, 360, 361, 365, 366, 373, 375, 379, 380
Նաղդաղչյան Տիգրան ---------- 499
Նամամ տափիկցի ---------- 389
Նամիլյան Հարություն ---------- 417
Նաչո խմբապետ ---------- 464
Նեյխ Հասան ---------- 627
Նիրինկին ---------- 99-103, 105-109, 116
Նիրինյան Հայրապետ ---------- 54
Նիրվանզադե Ալեքսանդր ---------- 367
Նխալի ---------- 583
Նմիդտ (լեյտ.) ---------- 723
Նվան (եվրոպացի հայասեր) ---------- 446
Նուալի զադե ---------- 85
Նուշանյան Արամ ---------- 151, 152, 159
Նուստով ---------- 289
Նևրեյոն Անդրե ---------- 433

Ոսկանյան Սամսոն ---------- 31
Որսորդ (Գևորգ) ---------- 464, 475

Զարխոչյան Աստուր ---------- 387
Զելեպյան Անդրանիկ ---------- 646, 647
Զելիձե Վլադիմիր ---------- 299, 322
Զերազ Մինաս ---------- 452
Զերնյավսկի ---------- 20, 22, 24
Զիլինգարյան Արտաշես ----- 181, 187, 190, 193, 194, 197, 198, 201, 514
Զիպրիանո Ամիլկար ---------- 490
Զիչինաձե Ն. (Քարթվելով) -------- 345, 346
Զուպանյան Արշակ ---------- 382, 430, 431
Զուստյան Ավո ---------- 641
Զուստուզյան Աղաբեկ ---------- 85

Պալդոչյան Վարդան ---------- 128
Պալյան Երվանդ ---------- 155, 241-243, 245
Պալյան Մուսա ---------- 396
Պանիրյան Հայրապետ ---------- 187
Պապին չիկահողցի ---------- 30, 36, 37
Պասսի Ֆեդերիկ ---------- 437, 440
Պատուր վանեցի ---------- 125
Պարաբելում գերմանացի սոց.-դեմ. ----- 337
Պենլևի Պոլ ---------- 433
Պեոզիկյան Գրիգոր ---------- 121, 132
Պետո ---------- 122, 473
Պետրոս զինագործ ---------- 468, 469
Պետրոս Առաջին ---------- 78
Պետրոսյան Առաքել ---------- 53
Պետրոսյան Պետրոս ---------- 37
Պետրով ռուս. փոխհյուպատոս ---------- 500
Պիճիկյան Գ. ---------- 252
Պլեխանով Գ. Վ. - 137, 266, 273, 276, 359, 362
Պլևե Վ. ---------- 176, 373, 733

Գլքո ---------- 644
Գնի Վահան ---------- 126
Գոբեդոնացև ---------- 118, 119, 181
Գոգոժև Վ. ---------- 88
Գոլմար Ռ. ---------- 286
Գողոս ---------- 468
Գողոսյան (Մկքայելյան) Նիկոլ տես Իշխան
Գողոսյան Գողոս ---------- 498, 501, 502
Գողոս Նուբար փաշա ---------- 420
Գոյահյան Մուրատ (Մեծն Մուրատ) - 143, 155
Գոռոյան Գոռոշ ---------- 280
Գսիշարի Ժան ---------- 433
Գսիշարի (տիկ.) ---------- 433
Գրեսանսե դը Ֆրանսիս --------- 77, 82, 171, 433, 448, 451-453
Գուշկին Ա. Ս. ---------- 322, 669
Գուրիչկևիչ ---------- 181, 338
Գևեն Հ. ---------- 440

Ջանչյան Գ. ---------- 91
Ջափարիձե Գ. (Ալյոշա) ---------- 139, 329
Ջելալյան Թովմաս (Հայկ Արմեն) - 498, 513, 518, 522, 523, 526, 539, 553, 580
Ջեմալ բեկ ---------- 30
Ջիվանշիր Արդուլ Սամատ բեկ --- 29, 32, 36
Ջիվանշիր Թեմուր բեկ ---------- 29, 32, 36
Ջնդի ---------- 386
Ջումշուդ ղարաբաղցի ավազակապետ --- 51
Ջումշուդ դաշնակցական գինագործ ---- 469

Ռահիմ խան ---------- 39
Ռամիշվիլի Ի. ---------- 346
Ռայնոլդ Ջեյմս ---------- 440, 441
Ռաշիդ ---------- 495, 498, 502
Ռեյնակ ---------- 440
Ռեյնոլդ եվր. հայանպաստ գործիչ - 446, 447
Ռեյնոլդց միսիոներ Վանում ---------- 437
Ռեչատ բեյ ---------- 726
Ռոզգո աղա ---------- 647
Ռոկլյու Էլիզե ---------- 433, 434
Ռոդոսլավով ---------- 494
Ռոմանովներ ---------- 118
Ռոմանով Նիկոլայ տես Նիկոլայ II
Ռոստ ---------- 440
Ռոստոմ (Զորյան Ստեփան) - 17, 18, 20, 187, 191, 460, 495, 498, 502, 513, 517, 518, 521, 524, 532, 533, 536, 537, 546, 550-552, 557-559, 574, 575, 581-583, 590, 591, 615, 636, 637
Ռուբինյան Հայկ ---------- 499
Ռուզվելտ ---------- 439-443, 446, 452
Ռուստամ բեկ ---------- 33

Սաադե խալիլ ---------- 705
Սաբահեդդին Մեհմեդ ---------- 442-445
Սաղաթյան Գաբո ---------- 159
Սաղրմուլքի ---------- 681
Սազանդարյան Տիգրան ---------- 45
Սաթենիկ ---------- 54
Սակկի իտալացի ---------- 440
Սահակ կաթողիկոս ---------- 406
Սահակյան Ավետիք (Հայր Աբրահամ) -- 235
Սահակյան Բենիամին ---------- 313
Սահակյան Գեորգ ---------- 311
Սաղիրյան Ալեքսան ---------- 52
Սանդանսկի ---------- 500
Սաչ Ե. ---------- 433
Սապահ-Գյուլյան Բերուզ ---------- 155
Սապահ-Գյուլյան Ստ. -- 144, 150, 152, 153, 155, 156, 159, 180, 490, 491
Սարաֆև գործարանատեր --------- 288, 289
Սարաֆով Բորիս ---------- 495, 501, 573
Սարգիս գինագործ ---------- 468
Սարգսյան Ալեքսան ---------- 44
Սարգսյան Աստվածատուր ---------- 499
Սարգսյան Լ. ---------- 96, 97, 236, 376
Սարգսյան տեր-Բարսեղ ---------- 451
Սարգսյան Կիրակոս ---------- 499
Սարգսյան Մինաս ---------- 159, 311
Սարուխանյան Առաքել ---------- 416
Սասունցվարդի եպիս. ---------- 446
Սափրիաբ բեկ ---------- 30, 31
Սաքո ---------- 151, 187
Սաֆրաստյան Արամ ---------- 127
Սեբաստացի Մուրադ - 28, 29, 33-37, 39, 46, 47, 188, 233, 464, 511, 513, 515, 522, 523, 526, 528, 532, 539, 541, 545-547, 551, 553, 561, 580, 584, 592, 615
Սեիդ Ալի ---------- 405
Սեյդո Գողոս ---------- 47, 48
Սենիոբոս Շ. ֆրանսիացի հայասեր ----- 433
Սեպուհ (Բաբերդցի Արշակ) - 464, 514, 522, 525, 533, 546, 547, 561, 577, 592, 615
Սերենկյուլյան Հովհաննես----------122, 123, 126, 403
Սերոբյան Ցոլո ---------- 644
Սթեդ Ա. ---------- 436, 440
Սիամանթո (Ցարճանյան Ատոմ) ---- 54, 187, 390, 401-403, 456-458
Սիմոնյան Ա. ---------- 327
Սիրունյան Պետրոս ---------- 499
Սլո քուրդ ցեղապետ ---------- 644
Սլոյան Մուշո ---------- 644
Սմբատ խմբապետ ---------- 28, 34
Սմբատ գինագործ ---------- 468
Սյունի Բ. ---------- 233
Սյունիք հնչակյան գործիչ ---------- 150
Սոլաբերի ---------- 430
Սոկոլովսկի Գ. Ն. -------- 288, 289, 326, 330
Սորփեցի Գուրգեն ---------- 46, 47
Սպաղանաց Տոնո Մակար ---------- 646-648
Սպանդարյան Ս. ---------- 280, 293, 294, 310-313, 320, 321, 325, 329
Սպենդիարյան Հ. ---------- 96, 98
Ստալին Ի. ---------- 362
Ստեյնլեն ֆրանսիացի հայասեր --------- 433
Ստեփան արևմտահայ զինյալ ---------- 35
Ստեփանյան դաշնակցական գործիչ ---- 187
Ստեփանյան Խորեն եպիս. ---------- 549

Ստեփանյան Կարապետ -------- 96, 98, 416
Ստեփանյան Ս. բոլշևիկ ---------- 327
Ստեփանյան Ստեփան ---------- 514, 532, 551, 574, 581
Ստիվենսոն Ս. ---------- 446
Ստոլիպին ---------- 373
Ստրաբոն ---------- 104
Սրապիոնյան Սարգիս (Լուկաշին) ------- 280
Սուլեյման բեյ ---------- 701, 703
Սուլթան Համիտ Բ տես Աբդուլ Համիդ II
Սուլթանյան Սիմոն ---------- 159
Սուլթանով ---------- 272, 292
Սուլթանով Աբասկուլի բեկ ---------- 32
Սուլթանով Աբդուլալի ---------- 29
Սուլթանով Ադիլ Բեհբուդ ---------- 32
Սուլթանով Իլդիրիմ բեկ ---------- 10, 29
Սուլթանով Համիդ ---------- 29
Սուլթանով Շամիր բեկ ---------- 29
Սուլթանով Շերալ ---------- 29
Սուլթանով Նազար բեկ ---------- 29
Սուլթանովներ ---------- 28, 33
Սուջյան Արտաշես ---------- 499
Սուվորիններ ---------- 209
Սևերին ֆրանսուհի հայասեր ---------- 433
Սևքարեցի Սաքո -------- 513, 514, 518, 546

Վազգեն (Տերոյան Տիգրան) -------- 126, 473
Վալաղյան Վալադ ---------- 510, 516, 518, 536, 545, 546
Վալիան ---------- 637
Վալի Քելբալայ ---------- 51
Վաղարշակ (Բաղդասարյան Կայծակ) --- 473
Վանդերվելդ ---------- 636, 637
Վանի Արամ նույն Մանուկյան Արամ տես Հովհաննիսյան Սարգիս
Վահան արևմտահայ զինյալ ---------- 37
Վահան զինագործ ---------- 469
Վահան նալբանդ ---------- 125
Վահան Մանուելյան ---------- 233, 473
Վարազդատ թուրքահայ հնչակյան ---- 145
Վարանդյան Միքայել ---------- 10, 19, 28, 33, 35, 39, 40, 47, 50, 76, 79, 116, 180, 210, 231, 235, 263, 362, 460, 492, 515, 517-519, 534, 615, 618
Վարդան վրդ. ---------- 511
Վարդանյան Ա. ---------- 327
Վարդանյան Գրիգոր ---------- 145, 150, 151, 157, 376
Վարդանյան Սերոբ (Փաշա) -------- 164, 473
Վարդգես տես Սերենկյուլյան Հովհաննես
Վարդգես (Գևորգ Զաուշի զավակը) - 646, 647
Վարդե սոլուխցի գեղջկուհի ---------- 641
Վարդ-Պատրիկյան Հակոբ (Վարդո) ---------- 586-588, 602
Վարթյանց Մկրտ. ---------- 324
Վարժապետ արևմտահայ զինյալ ---- 46, 47
Վարժապետ Մարտիրոս ---------- 499
Վարժապետյան Ներսես ---------- 554, 557
Վարուժան Դանիել (Զպուքքյարյան) --- 187, 457, 458
Վեզիրով Ջաֆար բեկ ---------- 23
Վեզիրով Ռասուլ բեկ ---------- 23
Վելիչկոներ ---------- 209
Վեսելովսկի Ցուրի ---------- 90, 91
Վերմիշյան Ս. ---------- 322
Վերմիշյան Քր. ---------- 96-98, 117, 416
Վեքիլով ---------- 292
Վիլլարի Լուիջի -------- 49, 76, 78, 116, 446
Վիվերն ---------- 8
Վիվիանի ---------- 556
Վիտտե ---------- 77
Վորոնցով-Դաշկով Իլլարիոն Իվանովիչ ---------- 99-101, 106, 109-111, 113-119, 305, 323, 416
Վռամյան Ա. - 514, 515, 522, 524, 539, 541, 551, 560, 574, 581, 589, 591, 614
Վրացյան Սիմոն ---------- 181, 187, 510, 514, 515, 517, 519, 527, 530, 566, 578, 585, 586, 591, 592
Վրթոյան Աբրո ---------- 389
Վուիչ ---------- 286

Տաթևյան Վահագն ---------- 513, 523
Տամատ Մահմուդ (փաշա) ---------- 372
Տաշիրյան Սիմոն (Տաշիր) ---------- 145, 151
Տանապետյան Հրաչ ---------- 510
Տեր-Աբրահամյան Կարապետ ---------- 703
Տեր-Գաբրիելյան Սահակ ---------- 280
Տեր-Գրիգորյան Միսաք ---------- 311
Տեր-Դանիելյան Դավիթ տես Անանուն Դավիթ
Տեր-Դանիելյան Միսաք տես Արամայիս
Տեր-Դավթյան ---------- 235
Տեր-Դավթյան Հովսեփ ---------- 514
Տեր-Թովմասյան Հարություն ---------- 127
Տեր-Հակոբյան Գրիգոր ---------- 14
Տեր-Կարապետյան Գեղամ (Մշո Գեղամ) -- 464, 505, 511, 566
Տեր-Հակոբյան Հակոբ ---------- 128
Տեր-Հովհաննիսյան Հովհաննես (Նիկոլ Դուման) ---------- 187, 204, 230, 232, 234, 464, 472, 478-485, 513, 514, 546
Տեր-Հովսեփյան Լևոն ---------- 308
Տեր-Ղազարյան Ղազար (Լեռ) ------ 72, 182, 242, 245, 246
Տեր-Ղազարյան Նարիման ---- 242, 245, 246
Տեր-Մաթևոսյան Նիկոլայ ---------- 37
Տեր-Մարտիրոսյան Արտեմ ---------- 26
Տեր-Մարտիրոսյան Հովհաննես ------ 13, 15, 25, 43
Տեր-Մեսրոպ (քահ.) ---------- 451
Տեր-Մինասյան Ռուբեն ---------- 127, 132, 394, 419, 464, 469, 505-508, 511, 514, 566, 639, 641, 646
Տեր-Մկրտչյան Ստեփան ---------- 235, 514, 515, 559, 614
Տեր-Պետրոսյան Սիմոն (Կամո) ---- 280, 304
Տեր-Պողոսյան Վահրամ ---------- 128
Տեր-Պոյաճյան Վ. ---------- 374, 375
Տեր-Սիմոնյան Ավետիս ---------- 157

Տեր-Սիմոնյան Սիսակ ---------- 151
Տեռքմեջյան Պետրոս ---------- 388
Տերյան Վահան ---------- 290, 368
Տիգրան ագարակցի ---------- 30
Տիգրան գործիչ Վանում ---------- 507
Տիգրան խմբապետ ---------- 583
Տիրկովա Արիադնա ---------- 731
Տոլստոյ Լև ---------- 669
Տոնոյան Մկրտիչ ---------- 641
Տուրբախ ---------- 464
Տուրգենև Իվան ---------- 669

Ռիխարդ տես Աթաբեկյան Լ.

Ցխակայա Մ. ---------- 304, 329

Ութուճյան Գևորգ եպիս. ---------- 452, 455
Ունճյան Արբիկ ---------- 161
Ուշար ---------- 433
Ուսուլ Գրիգոր ---------- 48

Փանահ խան ---------- 11
Փանոսյան Խեչո ---------- 499
Փաշայան Մաքսուդ ---------- 499
Փափազյան Արտաշես ---------- 499
Փափազյան Վահան (Կոմս) ---------- 10, 11, 48, 122-128, 130, 133, 188, 231, 463, 465, 469, 470, 507-509, 727
Փիրյան Բախչի ---------- 38
Փիրուզյան Հ. ---------- 96
Փիրուզյան Սերգո ---------- 299, 322
Փիրումյան Բաշիր բեկ ---------- 53
Փիրումյան Հաթում բեկ ---------- 51, 52
Փիրումյան Շամիր բեկ ---------- 51, 52
Փիրումյան Ջալալ բեկ ---------- 51, 52
Փոխարյան Արմենակ ---------- 127
Փոխիկ խմբապետ ---------- 464, 465
Փորթուգալյան Մկրտիչ ---------- 121, 132, 224, 643, 712
Փոքր Սարգիս ---------- 470

Քազում Շիրաատան ---------- 51
Քազում Քելբալայ ---------- 51
Քաթանյան Ռուբեն ---------- 280
Քաթանյանց գործարանատեր Թիֆլիսում ---------- 468
Քալանթար Ալ. - 44, 55, 94, 96, 98, 236, 416
Քալանթարյան Վաղարշակ ---------- 499
Քալանթարով ---------- 324
Քալաչյան Սարգիս (Ահրիման) --------- 149, 151, 152, 157-159
Քաջ Հովհաննես ---------- 125
Քեշիշյան Միհրան բաբերդցի խմբապետ -------- 230, 235, 464, 578, 579, 580, 583
Քեռսե Բինբաշի ---------- 639-642
Քեռոյան Երվանդ (Սեպուհ) --- 46, 130-132, 188, 231, 232
Քիյառ Պիեռ -------- 77, 171, 433, 446, 447, 450-453, 573, 618
Քյոռ Հյուսեին փաշա ---------- 728
Քոնտակճյան Եղիշե ---------- 121
Քոչեն Տրնիա ---------- 171
Քուրդ Խեչո ---------- 36

Օդաբաշյան (Բարսեղյան) Գրիգոր, Նիկոլ, Սարգիս (Վանա Սարգիս) ---- 124, 129, 187, 460, 507, 508, 532, 614, 727
Օզանյան Անդրանիկ ---------- 36, 49, 164, 188, 233, 427, 460, 461, 470, 473-479, 485, 493-498, 502-505, 511, 513, 515, 519, 522, 546, 547, 587, 588, 592, 620, 643, 648
Օխիկյան Արմենակ ---------- 187
Օհան սոլուխցի ---------- 641
Օհանյան Գ. ---------- 724, 725
Օհանջանյան Համո ------- 235, 460, 514, 519, 524, 525, 528, 532, 534, 551, 574, 577, 579, 581, 582, 584, 585, 605, 614, 615
Օսկան ---------- 37
Օրի Խաբայել ---------- 549
Օրմանյան Մաղաքիա ---------- 428-430
Օրջոնիկիձե Գ. ---------- 318

Ֆազի ---------- 411
Ֆաթեհ ---------- 386
Ֆավր Լեոպոլդ ---------- 437
Ֆեյզի Մուշիր Ահմեդ ---------- 706
Ֆերբերն ---------- 446
Ֆերդինանդ Թագ ---------- 494
Ֆերիդ բեյ ---------- 386, 387, 451
Ֆերիդ Համդի ---------- 726
Ֆերրի Էնրիքո ---------- 82, 171, 552
Ֆիլիպով ---------- 79, 80
Ֆլամարիոն Կ. ---------- 433
Ֆրանգյան Երվանդ ---------- 516
Ֆրանկոպոլո Իլյա ---------- 328, 329
Ֆրանկոպոլո Սպիրիդոն ---------- 328, 329
Ֆրանս Անատոլ --- 171, 403, 433, 452, 453
Ֆրասան Իլզե ---------- 76, 77, 438
Ֆրեյլիխին ---------- 8

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբասթուման ---------- 320
Աբլբուհար ---------- 425
Ագարակ ---------- 32, 38, 45
Ագուլեցոց եկեղեցի ---------- 23
Ադանա ---------- 388, 389, 406
Ադրբեջան ---------- 60
Ադրիանուպոլիս նահանգ ---------- 726
Ազոխ ---------- 53
Աթկրզ ---------- 38
Ալադին ---------- 31, 424
Ալաճա ---------- 627
Ալաչկերտ ---------- 422, 425, 466, 627
Ալավերդի ---------- 281, 282
Ալեքսանդրապոլ (Գյումրի) ---------- 44, 94, 129, 143, 214, 225, 251, 282, 285, 288, 290, 291, 295-297, 300, 302, 305-307, 311, 325, 417, 463, 513, 522, 523, 530, 546, 571, 578, 580, 622, 627, 628
Ալեքսանդրիա ---------- 440
Ալիդարա ---------- 29
Ալիլա ---------- 26
Ալիզամար ---------- 15
Ալիճե ---------- 411
Ալիջան ---------- 15
Ալջավազ ---------- 728
Ալվարինջ ---------- 413
Ախալցխա ---------- 297, 311
Ախալքալաք ---------- 251, 297
Ախթալա ---------- 282
Ախլաթ ---------- 413, 422, 463
Ախլաթյան ---------- 26
Ախման ---------- 644
Ակն ---------- 405
Ակներ ---------- 301
Աղբաբա ---------- 48
Աղդամ ---------- 26, 42, 52
Աղթամար ---------- 470
Աղվանիք ---------- 28, 33
Աղվեսաձոր (Թ.) ---------- 469
Աղքենդ ---------- 31, 34
Ամասիա ---------- 726
ԱՄՆ (Ամերիկա---------- 17, 129, 151, 154, 161, 172, 188, 224, 340, 419, 424, 432, 436, 438, 439-443, 447, 449, 450, 452, 453, 462, 497, 498, 513, 523, 540, 541, 550, 559, 620, 621, 645, 689
Ամբ-Կորվու ---------- 414
Ամստերդամ ---------- 134, 137, 273, 636
Այգեհատ ---------- 324
Այգեստան ---------- 193, 513, 530
Այսրկովկաս տես Անդրկովկաս
Այտրն ---------- 225
Այրում ---------- 295
Անատոլիա ---------- 426, 433
Անգեղակոթ ---------- 27
Անգլիա (Մեծ Բրիտանիա) ---- 79, 156, 331, 342, 349, 350, 354, 405, 430, 432, 435, 440, 441, 448, 449, 450, 453, 490, 650, 655-657, 662, 663, 666, 668, 697, 708
Անգորա ---------- 225
Անդրկովկաս - 12, 13, 39, 41, 46, 54, 56-58, 60-62, 67, 69, 71-75, 80, 81, 83, 88, 92, 97, 101, 102, 104-107, 115, 141, 172, 178, 180, 183-186, 197, 198, 207, 215, 229, 246, 247, 251, 270, 271, 274, 275, 280-282, 284-296, 298, 304, 306, 307, 313, 329, 332, 343, 345, 346, 385, 417, 466, 471, 474, 502, 510, 517, 597, 599, 606, 616, 620, 621, 623, 624, 626, 627, 629, 632, 637, 649, 658, 674, 680, 701, 734, 736-739
Անդրկովկասի Ֆեդերատիվ Հանրապետություն ---------- 185
Անձավ ---------- 463
Աչ-Գալե ---------- 720
Աշխաբադ ---------- 56
Աշղու ---------- 51
Աշոցք ---------- 295
Աշտարակ ---------- 311
Ապահունիք ---------- 466
Ապաղայի դաշտ ---------- 463
Ապարան ---------- 311
Ապենինյան թերակղզի ---------- 437
Ապշերոնյան թերակղզի ---------- 69, 71
Աջրլու ---------- 38
Առնիատ ---------- 424, 425
Առիազուր ---------- 38
Ասիա --------- 361, 434, 440, 650, 656, 657
Ասկերան ---------- 25, 26
Ավազաղբյուր ---------- 424
Ավարայրի դաշտ ---------- 467
Ավետարանաց ---------- 53
Ավստրալիա ---------- 79
Ավստրիա ---- 339, 440, 511, 554, 572, 710
Ավստրո-Հունգարիա ---------- 67, 241, 331, 432, 441, 453, 650
Ատկոն ---------- 425
Ատրպատական --- 129, 188, 466, 469, 513, 514, 625, 629, 653, 657-659, 665, 667, 677-681, 684, 685, 695, 696, 700-704
Արաբական արևելք ---------- 705
Արաբական թերակղզի ---------- 705
Արաբիա ---------- 706
Արածանի գետ ---------- 641
Արաղ ---------- 658, 690
Արարատյան դաշտ ---------- 164
Արաքս ---------- 27, 32, 463, 465
Արդահան ---------- 296, 325, 425
Արևելյան Հայաստան ----- 57, 78, 103, 129, 175, 215, 216, 219, 658

Արևելք ---------- 668, 672, 691
Արևմտյան Եվրոպա - 66, 114, 207, 359, 452
Արևմտյան Հայաստան ------- 103-121, 134, 135, 145, 151-154, 163, 165, 170, 192, 197-200, 206-209, 214, 215, 219, 223-226, 232, 233, 235, 274, 354, 361, 368-371, 378, 380, 381, 383, 385, 417-420, 426, 432, 461, 463, 464, 467, 471, 476, 485, 490, 494, 499, 502, 507, 515, 528, 539, 540-542, 545, 553-558, 560, 568, 569, 570, 571, 579, 590, 592, 593, 599, 600, 606, 609, 621, 622, 625, 628-630, 632, 636, 643, 646, 680, 696, 702
Արևմտյան Վրաստան ---------- 331
Արևմուտք ---------- 442, 456
Արթխոնք ---------- 424
Արիքլու ---------- 27
Արճակ ---------- 386, 463
Արճեշ ---------- 386, 463
Արմավիր ---------- 579
Արտազ ---------- 701
Արտամետ ---------- 387
Արտոնք ---------- 425
Արտրիթ ---------- 424
Արցախ ---------- 39, 51
Աքիա ---------- 394, 399
Աֆրիկա ---------- 689

Բազառիճ ---------- 389
Բազրևանդ ---------- 230
Բաթում ---------- 63, 71, 143, 151, 188, 195, 214, 225, 230, 246, 257, 273, 290, 304, 311, 383, 413, 513-515, 534, 578, 583, 622, 658, 670
Բալախանի ---------- 143
Բալաջարի ---------- 625
Բալկանյան երկրներ ---------- 498, 620
Բալկանյան թերակղզի ---------- 172, 620
Բալկաններ -- 154, 500, 509, 513, 540, 621
Բալֆրուշ ---------- 674
Բաղաբուրջ ---------- 31
Բաղդադ ---------- 225, 727
Բաղեշ ---------- 386, 405, 413, 646
Բաղու ---------- 425
Բայազետ ---------- 325, 389
Բայդաղ ---------- 31
Բաշկալա ---------- 463
Բաշքենդ ---------- 328
Բասեն ---------- 225, 396, 421, 425, 463, 466, 467, 571
Բաստ ---------- 593
Բաստիլիա ---------- 59
Բասուտ գետ ---------- 38
Բավարիա ---------- 649
Բարաբաթում ---------- 30, 31
Բարանդուզ ---------- 698
Բարգուշատ ---------- 29, 38, 39
Բարթազ ---------- 32
Բարթուղիմեոս առաքյալի վանք -- 121, 126
Բարխանդ ---------- 414
Բարձր Հայք ---------- 515
Բարուլան ---------- 699
Բաքու ---------- 5, 7, 34, 39, 41,42, 56, 60, 63, 65-67, 69-71, 74, 75, 77, 80, 82, 83, 85, 86, 90, 92, 101, 105, 113, 138, 139, 141, 143, 151, 157-159, 173, 182, 190, 208, 212-214, 225-227, 229, 233, 235, 242, 244-246, 253, 258, 259, 265-267, 272-275, 282, 283, 304, 307, 310, 313, 327, 366, 417, 471, 472, 485, 513, 514, 517, 537, 622, 624, 625, 658, 680, 681
Բելգիա ------ 331, 438, 440, 441, 448, 449, 636, 650, 690, 691
Բեռլին - 135, 137, 168, 275, 287, 310, 351, 356, 371, 436, 438, 439, 448, 453-455, 517, 554, 557, 563, 571, 649, 709
Բեռն ---------- 437
Բերկրի ---------- 386
Բիբի-Էյբաթ ---------- 143
Բիթլիս ---------- 386, 387, 394, 412-414, 421-423, 425, 426, 451, 727
Բլուր ---------- 15
Բյուրակն ---------- 465, 466
Բողաջղը ---------- 38
Բոստոն -- 64, 404, 407, 419, 438, 490, 619
Բոսֆոր ---------- 722
Բորչալու ------ 15, 282, 284, 286-288, 295, 301, 323, 324, 330, 425
Բրազդան ---------- 696
Բրեստ ---------- 60
Բրյուսել ---------- 348, 432, 545, 633-637
Բուլղարիա -- 129, 132, 134, 140, 148, 172, 354, 452, 493-498, 501, 511, 550, 559, 587, 621, 650, 710
Բունարջիկ ---------- 494

Գայլի Դրունք ---------- 472
Գանգաղին ---------- 700
Գանձակ (Ելիզավետպոլ) --- 5, 9, 12, 18, 23, 43, 50, 56, 68, 80, 113, 187, 193, 213, 272, 311, 417, 513, 530, 532, 622, 628
Գառգառ ---------- 423
Գասթեմունի ------- 713, 714, 717, 718, 725
Գենվազ ---------- 18
Գեյի-Շաբադին ---------- 32
Գևորգյան ճեմարան ---------- 127
Գետաբեկ ---------- 42
Գերմանիա ---------- 79, 221, 339, 347, 349, 350, 354, 356, 432, 440, 441, 449, 453, 456, 541, 572, 636
Գիլան ---------- 680
Գյավաշ ---------- 386, 413
Գյոդակլու ---------- 31, 33
Գյուլլուջա ---------- 15
Գյուտկում ---------- 328
Գոմաձոր ---------- 421
Գոմեր ---------- 425
Գոմս ---------- 414, 424
Գոնիա ---------- 726
Գորիս ---------- 27, 28, 45, 54, 292
Գուգարք ---------- 289
Գունի ---------- 700
Գուրիա ---------- 59, 69, 99, 210, 294, 298

Դաղստան ---------- 107
Դամբրուլաղ (թաղ.) ---------- 13
Դանիա ---------- 79, 440, 441, 449
Դաշբուրուն ---------- 15
Դաշնավ ---------- 32
Դաչտ --------- 387, 404, 424, 506, 646, 696
Դավալու ---------- 463
Դարալագյազ ---------- 48
Դերիկ ---------- 425, 639
Դերջան ---------- 389, 421
Դերսիմ ---------- 405
Դիարբեքիր -------- 422, 423, 715, 728, 729
Դիդուբե ---------- 304
Դիլիջան ---------- 285, 311
Դիլման ---------- 703
Դոնի Ռոստով ---------- 104
Դսեղ ---------- 8
Դրեզդեն ---------- 136, 362
Դրմետ ---------- 425
Դուբնիցա ---------- 498, 500, 501
Դուրան -------- 48, 413, 422, 463, 511, 567
Դուրան-Բարձրավանդակ --------- 192, 193, 226, 422, 464, 465, 505, 508, 511, 513, 566, 567, 630, 638, 644-646

Եգիպտոս ---- 132, 145, 154, 172, 419, 420, 452, 499, 540, 650, 705, 708
Եզդիքենդ ---------- 700, 702
Ելդեզ ---------- 385, 407, 412, 438, 451
Ելիզավետպոլ նահանգ ---------- 105
Եղան ---------- 421
Եմեն ---------- 705, 707, 713, 725, 726
Եվլախ ---------- 17, 39, 42
Եվրոպա -------- 54, 65, 66, 75, 77, 88, 114, 130, 135, 156, 168, 169, 171, 172, 198, 209, 224, 241, 242, 275, 285, 335, 336, 350-352, 361, 362, 368, 371, 378, 404, 419, 430, 431, 433, 436-440, 442-444, 446, 450, 454, 455, 457, 458, 461-463, 470, 491, 492, 495, 513, 514, 529, 554, 555, 567, 570, 571, 599, 618, 620, 621, 649, 652-654, 660, 666, 667, 671, 673, 678, 689, 694, 701, 714, 736
Երանա ---------- 413
Երևան ---------- 5-7, 11-15, 56, 63, 77, 80, 105, 113, 129, 143, 151, 159, 188, 213, 225, 230, 261, 272, 282, 288-290, 293, 295, 297, 301, 305-308, 311, 324, 326, 329, 417, 463, 513, 544, 546, 565, 583, 622, 627-629, 669, 681
Երզնկա ---------- 387, 716
Երկիր ---------- 65, 132, 172, 188, 189, 225, 229, 231-233, 235, 381, 427, 431, 459-476, 485, 486, 505, 507, 508, 520-522, 541, 559, 565
Եփրատ ---------- 638, 640

Զանգեզուր ---------- 10, 11, 26, 27, 39, 40, 42-47, 53, 54, 56, 68, 272, 285, 291, 292, 311, 327, 328, 546
Զանգիլան ---------- 29, 32, 33
Զարսլու ---------- 27
Զաքաթալա ---------- 63
Զաքրլու ---------- 15
Զեյթուն ---------- 133, 164, 388, 398, 428
Զեյվա ---------- 29, 328
Զոնդերքանդ ---------- 341
Զոր ---------- 230

Էլառ ---------- 324
Էլիար ---------- 285
Էմազլու ---------- 32
Էնզելի ---------- 144, 674
Էջմիածին (Վաղարշապատ) ---- 14, 68, 117, 127, 251, 301, 324, 325, 452, 454, 560, 583, 693
Էվլիյար ---------- 15
Էրզրում (Կարին) ------- 164, 225, 387, 389, 391, 393, 394, 411, 421, 425, 426, 428, 638, 646, 714-727, 730, 731

Ըշկա-Սու ---------- 700
Ըստուր ---------- 422

Թագավառ ---------- 698
Թադեի (Թադեոս Առաքյալի) վանք --- 463, 467, 509
Թազա մահլու (թաղ) ---------- 23
Թազաքենդ ---------- 26
Թաթ ---------- 696
Թաղավարդ ---------- 53
Թավրիզ ---------- 17, 143, 144, 193, 466-469, 513, 653, 665, 667, 674, 675, 679-684, 692, 693, 696, 701
Թեհրան ---------- 144, 492, 653-656, 659, 665, 667, 668, 674, 676, 679, 682, 683, 687-691, 693
Թեղուտ ---------- 425
Թեոդոպոլիս ---------- 500
Թելեռին ---------- 31
Թերեք ---------- 514
Թիմար ---------- 463
Թիֆլիս ---------- 5, 8, 11, 15, 17, 18, 39, 43, 50, 54-56, 71, 77, 86, 93, 96, 102, 105, 113, 115, 117, 141-143, 151, 157, 159, 160, 172, 173, 184, 188, 190, 197, 198, 207, 212, 213, 225, 233-235, 244, 246, 252, 253, 259, 260, 263, 265, 270, 272, 275, 286, 288, 291, 294, 299, 300, 302, 306, 308-312, 314, 315-317, 327, 329, 332, 360, 407, 413, 416, 417, 419, 442, 452, 469, 498,

513, 514, 535, 560, 577-580, 583, 600, 603, 622, 625, 658, 660, 668, 670, 671, 680, 714, 715, 721, 738
Թլան ---------- 406
Թուխխանա (Մեծ մեդան շուկա) ---------- 11
Թուրքահայաստան, Թուրքաց Հայաստան, Թուրքական Հայաստան տես Արևմտյան Հայաստան
Թուրքիա -- 14, 74, 75, 103, 104, 106, 112, 114, 135, 138, 143, 144, 146, 149-152, 154, 156, 166, 174, 183, 186-192, 198, 207, 208, 210, 220-224, 226, 227, 235, 335, 351, 353-359, 360-371, 373, 375, 376, 378, 380-384, 390, 391, 396, 397, 412, 417, 418, 420, 421, 425, 431, 436, 438, 441, 444, 445, 448, 449, 451, 453, 455, 459-461, 474, 475, 479, 480, 483, 484, 490, 491, 493, 494, 496, 497, 501, 503, 505, 516, 517, 548, 554, 555, 558, 560-562, 567, 570-575, 590, 593-595, 610, 620, 621, 637, 650, 657, 671, 673, 674, 680, 683, 685, 694, 697, 698, 700, 702, 704-706, 708, 711, 716, 717, 729, 730

Ժնև ----- 73, 144, 148, 172, 174, 180, 183, 241-245, 249, 265, 437, 440, 460, 470, 472, 478, 485, 494, 496, 512, 513, 522, 599, 621, 633, 634, 673, 674
Ժլատ ---------- 187, 513, 514

Իգդիր ---------- 15
Իզմիր ---------- 513, 587, 714, 718
Իմերեթիա ---------- 294
Ինդոնեզիա ---------- 650
Ինջավար ---------- 31
Ինտերլակեն ---------- 144, 145
Իշխու ---------- 421
Իսլանդիա ---------- 79, 342
Իսկանդարբեգլու ---------- 32
Իսպահան ---------- 662
Իսպանիա ---------- 79, 340, 650
Իտալիա ---------- 79, 82, 432, 440, 441, 446, 449, 450, 453, 552, 650
Իրան տես Պարսկաստան
Իրազակ ---------- 425

Լայիշան ---------- 695, 698, 700
Լայպցիգ ---------- 135, 255, 356, 456, 516
Լատինական թաղամաս ---------- 146
Լարիստան ---------- 693
Լեհաստան ---------- 141, 176, 181, 269, 335, 336, 345, 346, 733
Լեռնապար ---------- 127, 462, 506-508, 513, 542, 564
Լեռնավայր ---------- 460, 513
Լիբանան ---------- 154
Լիա ---------- 425
Լիտվա ---------- 346

Լյուցերն ---------- 439
Լոզան ---------- 54, 440, 688
Լոնդոն ---------- 49, 76, 78, 144-146, 297, 329, 347, 374, 435, 436, 446, 448, 449, 545, 655, 656, 708
Լոռի ---------- 8, 287, 300, 311, 324, 330
Լորուտ ---------- 8
Լուիզիանա ---------- 340

Խալաջ ---------- 31, 32
Խալբը ---------- 32
Խալֆալու ---------- 15, 19, 24
Խանաբադ ---------- 25
Խանասոր ---------- 164, 370, 465, 468
Խանբուլաղ լեռ ---------- 9
Խանիկ ---------- 700
Խանլուխլար ---------- 47
Խաչատափ ---------- 32
Խաչան ---------- 463
Խաչեն ---------- 56
Խաչխալդաղ ---------- 641
Խաբբերդ ---------- 172, 405
Խարս ---------- 425
Խըմպզուր ---------- 414
Խիզան ---------- 387, 405, 413
Խլաթ ---------- 405, 413
Խնածախ ---------- 27
Խնձորեսկ ---------- 45
Խնուս ---------- 422, 425, 463, 466
Խոզնավար ---------- 27
Խոյ ---------- 463, 465, 702
Խոշխաբար ---------- 15
Խոջահան ---------- 29, 32
Խորհրդային Հայաստան ----- 121, 159, 420
Խորոնք ---------- 425
Խոփեր ---------- 425
Խրամորդ ---------- 25
Խուզիստան ---------- 658
Խուլդուկ ---------- 387
Խուլթիկ ---------- 414
Խումլար ---------- 421

Ծաթեր ---------- 301
Ծաղկաթ ---------- 421
Ծաղկոտն ---------- 463
Ծանծաղ ---------- 421
Ծավ ---------- 38

«Կազինո դը Սենպիեր» դահլիճ --------- 437
Կալիֆոռնիա ---------- 340
Կահիրե ---------- 420
Կաղզվան ---------- 627
Կասաբյանկա ---------- 713
Կասպից ծով ---------- 674
Կավարտ ---------- 34, 45
Կարակ ---------- 425
Կարակալա ---------- 295
Կարկառ ---------- 386, 387, 413, 460
Կարճկան ---------- 386, 413, 422
Կարմիր ծով ---------- 705

Կարնո դաշտ ---------- 421
Կարս (Ղարս) - 94, 225, 282, 293, 295-297, 300-302, 305, 311, 463, 465, 467, 513-515, 546, 580, 603, 622
Կեմ ---------- 387
Կենք ---------- 394
Կենտրոնական Ռուսաստան ------- 115, 259
Կիլիկիա ------ 161,.388, 406, 460, 513, 696
Կիմանց ---------- 38
Կիպրոս ---------- 436
Կիրասոն ---------- 172, 726
Կլաբան ---------- 146
Կյաչախուլի ---------- 424
Կնյաժևո արվարձան --------- 494, 495, 498
Կոթ ---------- 422
Կոթեր ---------- 421
Կողաթաղ ---------- 642
Կողբ ---------- 15, 48
Կոնդ ---------- 13
Կոնիա ---------- 225
Կոպենհագեն ---------- 637
Կոստանդնուպոլիս (Կ.Պոլիս, Ստամբուլ) - 79, 103, 129, 144, 161, 228, 370, 394, 399, 403, 406, 407, 415, 417, 418, 424, 428, 442, 451, 511, 554, 558, 560, 645, 694, 704, 705, 708, 711-715, 717-720, 722-727, 729, 730
Կովկաս ---------- 5, 6, 8, 9, 17, 25, 48, 54, 58, 59, 63-66, 68, 76-79, 81-88, 93, 94, 97, 99-103, 105-119, 122, 129, 130, 134-136, 141-143, 145, 146, 148-159, 162, 165-167, 170, 172, 173, 175, 176, 178-183, 187, 189, 192, 194, 197-200, 203, 204, 207, 209, 210, 215-220, 224-226, 228, 231-235, 238, 242-244, 247, 257-261, 264, 265, 268, 282, 283, 286, 287, 295, 297, 298, 303-306, 309, 310, 312, 323, 325, 346, 360, 362, 365, 367-369, 374, 379-381, 406, 416, 418, 424-226, 428, 460, 461, 463-468, 479, 494, 495, 498, 503, 508, 509, 516, 520, 521, 525, 527-536, 538-545, 547-550, 552, 559, 561, 566, 569-572, 574, 575, 578, 579, 587, 590, 592-597, 599, 619-621, 628, 629, 632, 634, 648, 651, 658, 665, 681, 683, 685, 732-734, 736
Կորեա ---------- 650
Կրասնովոդսկ ---------- 56
Կրտապազ ---------- 421
Կուբան ---------- 514
Կուլունչի ---------- 700
Կուրանա ---------- 699
Կուրթան ---------- 301, 324

Հաագա (Լահե) - 439, 446, 448-452, 454-456
Հալեպ ---------- 388, 422, 706
Հախմահմադ ---------- 15
Հաղպատ ---------- 287, 324

Հաճն ---------- 388
Համադան ---------- 674
Համբուրգ ---------- 649
Համզաշեխ ---------- 425
Հայ զինվորական դպրոց ----- 493, 498, 499
Հայաստան ---------- 65, 77, 104, 112, 120, 126, 146, 162, 166, 186, 198-200, 219, 222, 223, 269, 281, 282, 284, 285, 290, 291, 292-296, 299, 301, 305, 306, 323-326, 329-331, 346-350, 352, 364, 377, 383, 385, 401, 404, 408, 412, 419, 421-423, 425, 427, 428, 430-432, 434-439, 447, 448, 450, 453-455, 457-459, 463, 471, 484, 490, 492, 496, 497, 529, 548, 553-555, 564, 568, 573, 574, 593, 636, 643, 712
Հայաստանի Հանրապետություն -------- 485
Հայկազյան կենտրոնական վարժարան - 128
Հայոց ձոր ---------- 388, 463
Հայֆա ---------- 396
Հանդ ---------- 32, 38, 39
Հանքեր ---------- 29-31, 33, 38
Հաշիամլու ---------- 26, 27
Հասան ---------- 647
Հասանգալե ---------- 394, 395
Հարավային Պարսկաստան ---------- 657
Հարսնիքար ---------- 421
Հաքարու ---------- 38, 39
Հաֆթվան ---------- 700
Հեմիզիե (թաղ.) ---------- 707
Հեշազ ---------- 707
Հեռավոր Արևելք ---------- 262
Հերգետ ---------- 425
Հին Հանգստարանի թաղ ---------- 20
Հյուսիսային Կովկաս ------ 56, 93, 151, 187, 424, 514, 620
Հյուսիսային Հայաստան ---------- 324
Հյուսիսային Պարսկաստան ---------- 657
Հնդկաստան ---------- 350, 650, 656, 708
Հոլանդիա ---------- 440, 441, 650
Հրանի ---------- 421
Հունաստան ---------- 361
Հուշդամ ---------- 424

Ղազախ ---------- 8, 9, 56
Ղազվին ---------- 674
Ղաթար -------- 31, 33, 35, 37, 38, 285, 328
Ղալաթաղ ---------- 696
Ղալաջուղ ---------- 26, 27
Ղալասար ---------- 467, 469, 700
Ղայմախլու ---------- 9
Ղամարլու ---------- 48, 289
Ղաշղալթախ ---------- 639, 640
Ղաջար ---------- 26
Ղարաբաբա ---------- 32
Ղարաբաղ (Արցախ) - 11, 16, 25, 26, 38-40, 42-45, 51-53, 56, 57, 129, 311, 513, 514
Ղարագոզ ---------- 29
Ղարագյոլ ---------- 31

Ղարաղշլաղ ---------- 19
Ղարաչիման ---------- 30
Ղարաքիլիսա ---------- 290
Ղարս (գյուղ) ---------- 6, 56, 627
Ղափան ----- 29, 30, 32, 33, 38, 39, 41, 42, 53, 56, 285, 326-328, 330, 658
Ղոթուր ---------- 467
Ղոթուրբուլաղ ---------- 295
Ղոյտարա ---------- 32
Ղրիմ ---------- 56, 93, 106, 348, 354
Ղումլուղի թաղ. ---------- 20

Ճալա ---------- 627
Ճապոնիա ---------- 331, 484
Ճարա ---------- 700

Մազրա ---------- 39
Մալաթիա ---------- 394, 397
Մալիքլար ---------- 27
Մակեդոնիա - 354, 435, 439, 573, 709, 710
Մակու ---------- 463, 466, 701, 702
Մահլում ---------- 700
Մամանլու (թաղ.) ---------- 23
Մանազկերտ ---------- 413
Մանիսա ---------- 225
Մավանա ---------- 699
Մավրակ ---------- 627
Մարաղա ---------- 144
Մարաշ ---------- 388, 389
Մարգավառ ---------- 696
Մարիահլիֆե (թաղ.) ---------- 511
Մարմարա ծով ---------- 225
Մարոկկո ---------- 713
Մարսել ---------- 132, 224
Մափրազլու ---------- 32
Մեգրելիա ---------- 294
Մեղինե ---------- 706, 708
Մեծ քաղաք տես Թիֆլիս
Մեհրազլու ---------- 34
Մերձավոր Արևելք ------ 108, 283, 649, 705
Մերձբալթիկա ---------- 301
Մեղդի ---------- 644
Մեղրի ---------- 29, 38, 40
Մեյդան ---------- 13
Մենավոր տես Թադեի վանք նույն Նախավկա վանք
Մեչխեդ ---------- 662
Մեսոպոտամիա ---------- 705
Մերվ ---------- 56
Մետեխի բանտ ---------- 328, 329
Մեքսիկա ---------- 340
Մեքքա ---------- 706, 708
Մթնաձոր ---------- 32
Միլան ---------- 449
Մինարեթ ---------- 129
Մինջիվան ---------- 32
Միջագետք ---------- 461
Միջերկրական ծով ------ 161, 296, 350, 705
Միջին Ասիա ---------- 53
Միրզաջան ---------- 463
Մոկաց գավառ ---------- 423
Մոկա ---------- 386, 413, 422, 460, 513
Մոկունք ---------- 413
Մողես ---------- 45
Մոսկվա ---------- 41, 93, 102, 190, 259, 304-306, 309, 417, 517, 570, 686
Մոսուն ---------- 230, 389
Մոտկան ---------- 413
Մրգաստան ---------- 188, 463, 513, 535
Մուշ, Մշո աշխարհ, Մշո դաշտ ---- 225, 370, 386, 387, 393-395, 404, 410, 412, 413, 418, 419, 422, 424, 428, 513, 521, 567, 568, 631, 638, 638-646, 648, 717, 727
Մուրատխալու ---------- 31

Ցայջի ---------- 15

Նազարավա ---------- 463
Նալբանդ ---------- 187, 513, 514, 470, 592
Նախիջևան (Հին Նախիջևան) - 10, 15, 40, 44, 48, 56, 57, 68, 75, 113, 289, 463, 681
Նախիջևանիկ ---------- 26, 51, 53
Նաճալդև ---------- 304
Նաճարլը ---------- 406
Ներքին Գյավալու ---------- 31
Ներքին Իմազլու ---------- 32
Ներքին Հանդ ---------- 32
Ներքին Ղարաչիման ---------- 31
Նյու Յորք ---------- 161
Նյուվադի ---------- 30
Նորադուզ ---------- 386
Նոր Բայազետ ---------- 251, 289, 301
Նոր Մեքսիկա ---------- 340
Նոր Նախիջևան --- 187, 417, 513, 514, 570
Նորվեգիա ---------- 440
Նուխի ---------- 261

Շաբադին ---------- 38
Շահալի ---------- 285, 306
Շահարջիկ ---------- 36
Շահրուդ ---------- 674
Շամ ---------- 127, 128, 187, 192, 466, 507, 508, 513, 564
Շամախի ---------- 68
Շամբ ---------- 45
Շամլուղ ---------- 282, 284, 285, 322
Շամչադին ---------- 311
Շապին-Գարահիսար ---------- 143, 146
Շատախ ---------- 386, 460, 513
Շարուր ---------- 47
Շաքարլու ---------- 54
Շաքարյազի ---------- 700, 702
Շելլի ---------- 26
Շեյթան-բազար թաղ. ---------- 22, 23
Շենլք ---------- 646
Շիկահող ---------- 32, 38
Շինաբադ ---------- 695
Շինուհայր ---------- 54
Շիշթափա ---------- 295

Շիշկերտ ---------- 38
Շիվանիձոր ---------- 30
Շիրազ ---------- 662, 692
Շիրակ ---------- 151
Շիկեր ---------- 26
Շհար ---------- 13
Շհար-չայ գետ ---------- 698
Շոթանանու ---------- 32
Շոտլանդիա ---------- 79, 342
Շորագյալ ---------- 295, 627
Շվեդիա ---------- 440, 441
Շվեյցարիա ---------- 54, 79, 128, 144, 146, 244, 246, 359, 437, 440, 492, 674
Շտուտգարտ ---------- 347, 636, 637
Շուլավեր ---------- 323, 324
Շուշի --- 6, 7, 11, 16-20, 22, 25-27, 39, 40, 43, 51, 53, 113, 159, 187, 213, 225, 245, 246, 261, 272, 276, 513, 622
Շուշիքենդ ---------- 19
Շուքիար ---------- 27

Ընդնջուր ---------- 425

Զաթինդաղ ---------- 8
Զափնի ---------- 31
Զինաստան ---------- 650, 689
Զլդր ---------- 425
Զխուրի ---------- 425
Զուլլա ---------- 32

Պաթմանի կամուրջ ---------- 423
Պաղեստին ---------- 575
Պալու ---------- 644
Պատիժուան ---------- 421
Պարսից ծոց ---------- 656
Պարսկաստան ---------- 32, 39, 69, 74, 75, 106, 122, 129, 144, 172, 207, 420, 452, 453, 461, 466-468, 479, 494, 509, 566, 579, 600, 620, 625, 629, 650-652, 654-659, 660-669, 671-675, 676-698, 700-702, 704, 706, 713, 722, 726
Պեխ (Բեխ) ---------- 30, 33
Պետերբուրգ (Սանկտ-Պետերբուրգ) ------ 16, 41, 46, 66, 92, 93, 95, 99-103, 108, 110, 118, 164, 190, 207, 259, 289, 302, 325, 327, 418, 419, 560, 570, 632, 686
Պիչերի ---------- 422
Պլովդիվ ---------- 494, 498, 503
Պյատիգորսկ ---------- 41
Պովոլժիե ---------- 94, 301
Պոտրում ---------- 394
Պորտնինո ---------- 336
Պտղիկ ---------- 463
Պուլանըխ ---------- 405, 413, 425

Ջալալօղլի ---------- 301, 323, 324
Ջամալավա ---------- 700
Ջավադ ---------- 51
Ջեբրաիլ ---------- 32
Ջիբլու ---------- 32
Ջիգրաշեն ---------- 648
Ջինդաշտ ---------- 700
Ջիվանշիր ---------- 43, 261
Ջրաբերդ ---------- 465, 466, 513, 514
Ջուֆա ---------- 463
Ջուղա ---------- 674
Ջուման ---------- 32

Ռեյա լեռ ---------- 498
Ռեյա վանք ---------- 498, 500, 502
Ռեչտ ---------- 144, 674, 680, 692
Ռիգա ---------- 365
Ռչտունիք ---------- 423, 513
Ռոդոմետ ---------- 501
Ռոստով ---------- 190, 578, 579
Ռումինիա ---------- 172, 331, 650
Ռուչչուկ ---------- 134, 148, 440
Ռուսական կայսրություն տես Ռուսաստան
Ռուսահայաստան, Ռուսական Հայաստան, Ռուսաց Հայաստան, Կովկասյան Հայաստան տես Արևելյան Հայաստան
Ռուսաստան ----- 5, 6, 8, 46, 56, 61, 65-67, 69, 72, 75, 77, 78, 83, 84, 87-89, 91-97, 99, 102-104, 106, 108, 109, 112, 121, 131, 132, 134-139, 141, 143, 145-148, 150, 152, 154, 157, 159, 167, 168, 171, 174-176, 180-182, 184-186, 189-192, 198, 200, 206, 207, 209, 216, 219, 222, 223, 230, 235, 238, 247, 249, 258, 259, 264-267, 269, 279, 281, 283-285, 287, 288, 293, 294, 296, 298, 299, 301, 303, 304, 317, 331-336, 338-340, 343-345, 348-350, 352, 354, 356, 358-360, 362-365, 367, 371, 372, 375-379, 381, 405, 416-418, 420, 424, 426, 432, 442, 443, 453, 461, 463, 467, 468, 479, 484, 490, 493, 499, 513, 514, 516, 560-563, 570, 571, 572, 575, 592, 599, 604, 610, 618, 621, 623, 634, 645, 649, 650, 654-659, 662, 668, 673-675, 679, 683, 685, 688, 693, 694, 697, 704, 710, 713, 722, 732-734, 736, 738, 739
Ռուր ---------- 649

Սալահլու ---------- 9
Սալդաշ ---------- 34
Սալմաստ ---------- 463, 465, 467, 700-703
Սալոնիկ ---------- 714
Սախալին ---------- 514
Սամսուն ---------- 726
Սայադ-դաշ լեռ ---------- 33
Սանա բերդ ---------- 705
Սանալու ---------- 32
Սանահին ---------- 282
Սանիատ ---------- 424
Սառնա ---------- 700
Սասուն ---------- 162, 164, 187, 207, 210, 218, 370, 385, 394, 408,

412, 413, 418, 422, 424, 428, 434, 463, 464, 470, 472, 479, 490, 493, 503, 506, 516, 521, 546, 547, 567, 568, 618, 620, 625, 643, 646, 648
Սարալու ---------- 32
Սարգսաչեն ---------- 18
Սարիբուլաղ ---------- 9
Սարիղամիշ ---------- 296, 297, 302, 571
Սարուստան (Կովկաս, Ռուսաստան) ---- 192
Սաքսոնիա ---------- 649
Սեբաստիա ---------- 428, 467, 567, 714
Սեխստան ---------- 658
Սեյիդալար ---------- 31
Սիբիր ---------- 94
Սիզնաղ ---------- 31
Սիմ ---------- 593
Սիմֆերոպոլ ---------- 151, 159
Սինոպ ---------- 726
Սիսիան ---------- 26-28, 39, 56, 546
Սիսիմաղան ---------- 285
Սիրիա ---------- 705
Սյուգութլու ---------- 44
Սյունիք ---------- 36, 39, 40, 285
Սնձութ ---------- 424
Սոլուխ ---------- 638-641, 643, 646
Սոմա ---------- 696, 700
Սոս ---------- 26
Սովուջբուլաղ ---------- 700
Սորբ ---------- 422
Սոֆիա - 165, 235, 238, 494, 495, 498, 500, 502, 513, 520, 586, 587, 611, 616, 710
Սպահան ---------- 653, 674, 690, 693
Սպաղանք ---------- 506
Սպայից վարժարան ---------- 496
Սպարկետ ---------- 387, 413, 422
Սվազ ---------- 225, 394, 396, 726
Ստավրոպոլ ---------- 514
Ստոկհոլմ ---------- 307, 308
Սրաչեն ---------- 32, 38
Սուլավ ---------- 700, 702
Սուրալու ---------- 34
Սուրմալու ---------- 6, 13-15, 68, 301
Սևանա լիճ ---------- 94
Սևաքար ---------- 45
Սև ծով ---------- 56, 143, 144, 159, 225
Սև քաղաք տես Բաքու

Վաղարշապատ տես Էջմիածին
Վան ---------- 121-125, 127, 130, 225, 370, 386-388, 394, 396, 412, 413, 421-423, 426, 437, 469, 470, 507, 509, 513, 631, 648, 701, 727, 728
Վան-Վասպուրական ---------- 121, 123, 125, 129, 130, 508
Վառնա ---------- 587
Վասպուրական ---------- 123, 129, 187, 192, 225, 386, 402, 422, 428, 460, 462, 463, 466, 470, 507, 511-513, 516, 564, 566-568, 593, 600, 626, 628, 631, 727
Վարանդա ---------- 8, 18, 52, 56
Վարդաբլուր ---------- 301
Վարդենիս ---------- 425
Վարդո ---------- 463
Վեզուվ ---------- 62
Վերին Գյավալու ---------- 31
Վերին Իմազլու ---------- 32
Վերին Ղարաչիման ---------- 31
Վերին Ղափան ---------- 29
Վերնաշեն ---------- 593
Վերոռն ---------- 448
Վիեննա ---------- 128, 208, 507, 509, 511-513, 515, 519, 530, 535-537, 564, 565, 585, 587, 615, 618, 652
Վիտոչ լեռ ---------- 494
Վլադիկավկազ ---------- 25, 513
Վյուրտեմբերգ ---------- 649
Վոլոգդա ---------- 143
Վրաստան - 58, 95, 141, 188, 271, 283, 301
Վրեժ ---------- 188, 466, 467, 513
Վրեժստան տես Ատրպատական

Տաթև ---------- 10, 28, 39, 47
Տաճկաստան տես Թուրքիա
Տաճկահայաստան, Տաճկական Հայաստան տես Արևմտյան Հայաստան
Տանձաթափա ---------- 32
Տանձավեր ---------- 28, 33
Տանձատափ ---------- 28
Տաչքենդ ---------- 56
Տատրագոմ ---------- 424
Տարազու ---------- 31
Տարոն ---------- 187, 370, 394, 408, 415, 470, 568, 643, 646, 648
Տափիկ ---------- 389
Տեխաս ---------- 340
Տեկոռ ---------- 627
Տիգրանակերտ ---------- 172, 387, 388, 412
Տիրոլ ---------- 509, 512
Տոլբաթլի լեռ ---------- 9
Տոլորս ---------- 26
Տող ---------- 53
Տոմ ---------- 424
Տոմսկ ---------- 288, 306
Տորի ---------- 421
Տրապիզոն ---------- 129, 387, 388, 398, 467, 514, 553, 714, 717, 719, 725-727
Տրիպոլիս ---------- 143, 155
Տուլա ---------- 467
Տուրուբերան ---------- 415

Ցրոնք ---------- 639, 644

Ուելս ---------- 342
Ուզնի ---------- 696
Ուկրաինա ---------- 301
Ուչնի ---------- 700
Ուշանիա ---------- 38, 39
Ուրմիա ---------- 130, 144, 466, 695-703
Ուրմիո լիճ ---------- 695, 697, 700

Փանիկ ---------- 15
Փայաչուկ ---------- 700
Փասավա ---------- 695
Փարիզ ---------- 77, 144-146, 148, 149, 151, 156, 157, 159, 160, 171, 180, 183, 353, 364, 428, 431, 434, 442, 446, 516, 598, 650, 666
Փարիզան ---------- 34
Փեթար ---------- 425, 646, 647
Փելովա վանք ---------- 501, 502
Փիրդավուդան ---------- 38
Փիրջիվան ---------- 32
Փոդորկով ---------- 424
Փոքր Ասիա -------- 172, 366, 444, 455, 729
Փոքր Հայք ---------- 144
Փուլ ---------- 27
Փուրխուտ ---------- 39
Փուրուզլու ---------- 34

Քահրիզ ---------- 700
Քաջարան ---------- 38, 39, 327
Քարազուխ ---------- 25
Քարահունջ ---------- 292
Քարխանա ---------- 31, 32
Քարձոր ---------- 424
Քերիմբեկլու ---------- 32
Քիրմանշահ ---------- 692
Քյաթուկ ---------- 52
Քոլագերան ---------- 282
Քոլլու Ղշլաղ ---------- 32
Քորանի ---------- 700
Քրդիկենց ---------- 39
Քութայիս ---------- 5, 112, 311
Քուրդստան (Քուրդիստան) ------- 697, 702

Օդեսա ---------- 500
Օխչի ---------- 38
Օխչի ձոր ---------- 38
Օխչի գետ ---------- 38
Օսմանյան կայսրություն տես Թուրքիա
Օրբա ---------- 700
Օրղաքլու ---------- 32
Օրդու ---------- 144
Օրդուբադ ---------- 681
Օրյոլ ---------- 467

Ֆարսաստան ---------- 658
Ֆիլիպե ---------- 498, 501
Ֆինլանդիա ---------- 141, 176, 181, 733
Ֆլորիդա ---------- 340
Ֆրանսիա -------- 171, 331, 340, 349, 350, 354, 432, 434, 440, 441, 446, 448-451, 453, 490, 541, 649

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
Թուրք-հայկական ընդհարումների ավարտը և հետևանքները ---------- 5-98
ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
Գոլիցինյան հայահալած քաղաքականությունից հրաժարվելու
ակնհայտ միտումներ ---------- 99-119
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ
Գաղափարական ալեբախումներ և կազմակերպական խառնաշփոթություններ
հայ ազգային կուսակցություններից ներս ---------- 120-278
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ
Հայ սոցիալ-դեմոկրատների գործերը ---------- 279-384
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ
Թուրք-քրդական հարստահարումների սաստկացումը Հայաստանում:
Ինքնապաշտպանության ամրապնդման հրամայականը ---------- 385-509
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ
Հ.Յ.դաշնակցության չորրորդ ընդհանուր ժողովը և ներկուսակցական
ճգնաժամի հաղթահարումը: Անդրկովկասի ամենաուժեղ քաղաքական
կազմակերպությունը ---------- 510-637
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ
Ֆիդայական շարժման մայրամուտը ---------- 638-648
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ
Ռուսական մեծ հեղափոխության արձագանքները Անդրկովկասին սահմանակից
երկրներում և հայերը ----------649-731
ՀԱՎԵԼՎԱԾ ---------- 732-740
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ---------- 741-750
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ---------- 751-759

Գրքի երկրորդ հատորի տպագրությունը
հովանավորել են լոսանջելեսարնակ

ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԸ
և
ԱՐՄԵՆ ԲԱԿԱԼՅԱՆԸ:

◇

Գիրքը տպագրվել է ԳԱԱ տպարանում: